



ՀՐԱՍԱՆԱԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

**ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ-
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

By order of

His Holiness KAREKIN II

Supreme Patriarch and
Catholicos of All Armenians



Library of Armenian Commentaries on the Books of the Holy Bible

Commentaries on the Books of the New Testament

3

HOVHANNES TSORTSORETSI
(XIII-XIV c.)

COMMENTARY
ON THE GOSPEL ACCORDING TO
MATTHEW

Compiled by
Seda Stamboltsyan....

Holy Etchmiadzin - 2008

Աստվածաշնչի գրքերի հայ մեկնությունների
գրադարան

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐՔԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ
(ԺԳ-ԺԳ ղդ.)

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ԱԲԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՄԱՏԹԷԻ

Աշխատասիրությամբ
Ս. Ստամբուլցյանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ – 2008

ՀՏԴ
ԳՄԴ
Յ -

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ
Յ - ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՄԱՏԹԷԻ: Աշխատասիրությամբ՝ Մեղա Ստամբուլցյանի: -Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007.- էջ:

ԳՄԴ

Տպագրվում է մեկենասությամբ՝

ISBN . Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008 թ.

Մատենաշարի գլխավոր խմբագիր՝
ԵԶՆԻԿ ԱՐԺԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Chief editor of the serial publication
ARCHBISHOP YEZNIK PETROSSIAN

ԲՆԱԳՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Հովհաննես Ծործորեցու հեղինակած մեկնության բնագիրը պատրաստել ենք 1825թ. Կոստանդնուպոլսի հրատարակության և ՄՄ մատենադարանի թիվ 2687 ձեռագրի (թերթ 50ա-394բ, 1476 բ.) համեմատությամբ¹, իբրև հիմք վերցնելով տպագիրը, որը, ըստ այն հրատարակության պատրաստողների վկայության, ստեղծվել է մեկից ավելի ձեռագրերի հիման վրա²: Այս նոր բնագիրը կազմելիս նախընտրությունը երբեմն տվել ենք ձեռագրի տարբերակին, ուստի նրանով փոխարինել տպագրում եղածը, իսկ տպագրի տարբերակը ներկայացրել իբրև տարրնթերցում: Տարրնթերցումներում տպագիրը նշանակված է **S** թավ տառանշանով, իսկ ձեռագիրը՝ թավ **Ձ**, և գործածվել են հետևյալ նշանները.] (=փոխ.), < (=չիք), ~ (=շրջ.), + (=ավելացված է):

Բնագրում չակերտների մեջ հանդես եկող աստվածաշնչյան մեջբերումների տեղիները նշված են անմիջապես մեջբերման կողքին՝ փակագծերում, իսկ աստվածաշնչյան ակնարկների տեղիները հանդես են գալիս իբրև ծանոթագրություն՝ տողատակում՝ շեղատառ և առանց «Տես» նշման: «Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ եւ աւետարանչի» պարականոն գրքից բերված մեջբե-

¹ Համեմատությունը կատարել է Ս. Ստամբուլյանը, իսկ բնագրի կազմման սկզբունքները մշակել, բնագիրը կազմել և ծանոթագրել է Ս. Ստամբուլյանը:

² Բանասերների կողմից հնչել են տեսակետներ, թե իբր 1825թ. հրատարակությունն իրականացնողները միտումնավոր կերպով հապավել են այս մեկնության որոշ հատվածներ այն ենթարկելով խմբագրման: Այս մասին մասնավորապես խոսում են հ. Ներսես Տեր-Ներսեսյանը (Պատարագ վասն ննջեցելոց, գլ. 12 «Յովհաննես Երզնկացի-Ծործորեցի». «Բազմավեպ», 1960, մայիս-յունիս, էջ 114-124) և նրան հղելով Լևոն Խաչիկյանը (Աշխատութիւններ, Բ հտ. «Փանծասար» մատենաշար, 1999, էջ 93): Իբրև ապացույց իր տեսակետի՝ հ. Ներսեսը բերում է իր գտած հապավված մի կտոր (քավարանի մասին), որն առկա է եղել իր գործածած 4 ձեռագրերում, բոլորն էլ՝ 16-17-րդ դարերի: Եվ իր քննության իբրև եզրակացություն՝ հ. Ներսեսը գրում է, որ Կ. Պոլսի հրատարակիչներն այդ հատվածը «կտրտեր ու յապաւեր են. ուրեմն այս ցոյց կուտայ՝ որ եղած են շատ կողմնակալ եւ նախապաշարեալ» (նշ. հոդվածը, էջ 120): Սակայն շատ ավելի հին՝ 15-րդ դարի այն ձեռագիրը, որի հետ և կատարել ենք Կ. Պոլսի հրատարակության ներկա համեմատությունը, նույնպես չունի այդ հապավված հատվածը, և համեմատության արդյունքները ցույց են տալիս, որ Կ. Պոլսի հրատարակությունն իրականում կատարվել է չափազանց բարեխղճորեն և այնտեղ կամայական խմբագրություններ բացարձակապես չկան: Եթե նույնիսկ Ծործորեցու սույն մեկնությունը երբևէ իրոք ենթարկվել է խմբագրման, ապա դա տեղի է ունեցել շատ ավելի վաղուց՝ արդեն իսկ 15-րդ դարում կամ դրանից էլ առաջ, և Կ. Պոլսի հրատարակությունն իրականացնողները բարեխղճորեն ներկայացրել են այս մեկնությունն ըստ իրենց հասած վստահելի ձեռագրերի մեծամասնության:

րումների տեղիները նշվել են նույնպես տողատակում և ոչ թե անմիջապես բնագրում:

Հատուկ անունների և մի շարք այլ բառերի կամ քերականական ձևերի ուղղագրությունը միօրինակ է դարձվել, որոշ սխալագրություններ էլ սրբագրվել են, և այս ամենն իր արտացոլումն է գտել տարընթերցումներում: Սակայն կրկնվող ձևերի համար տարընթերցում տվել ենք միայն առաջին անգամ դրանց հանդիպելու դեպքում, և տարընթերցման կողքին փակագծերում և շեղատառ դրել ենք հետևյալ նշումները. (*այսպես է և այլուր*) կամ (*այսպես՝ ամենուր*):

Բառերի ուղղագրությունը միօրինակ դարձնելիս կամ սխալագրությունները սրբագրելիս ընտրել ենք ոչ թե այն ձևը, որը մեզանում այսօր տարածված՝ «ավանդական» ձևն է, այլ որը լեզվաբանորեն առավել ճշգրիտ է: Մա կատարելիս առաջնորդվել ենք այդ բառերի ծագումնաբանությամբ, ուստի հասարակ անունների առավել ճշգրիտ ձևերն ընտրելիս օգտվել ենք Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ից, իսկ հատուկ անունների պարագայում, քանի որ դրանք հիմնականում հունարենից հայերենին անցած ձևեր են, առաջնորդվել ենք հունարենից հայերեն տառադարձության օրենքներով: Օրինակ՝ բնագրում (թե՛ տպագրում, թե՛ ձեռագրում կամ դրանցից միայն մեկում) գործածվում են թե՛ *բանտ*, թե՛ *բանդ* ձևերը, թե՛ *ժայռք*, թե՛ *ժայթք*, *թակարթ-թակարդ* ևն. ընտրվել են առավել ճշգրիտ *բանդ*, *ժայթք*, *թակարդ* ձևերը¹: Այսպես նաև *ափշուփուհը* դարձել է *ասպշուփին*, *մանկաղը՝ մանգաղ*, *ընդանին՝ ընտանի*, *Բեդասյիդան՝ Բեթասյիդա*, բնագրում գործածվող *Հերոդ* և *Հերովդ* զուգահեռ ձևերից ընտրվել է երկրորդը՝ *է-ի է-ով* փոխարինմամբ (*Հերովդ*) ևն: Դարձյալ ճշգրտության սկզբունքից ելնելով՝ բնագրում գործածվող *ընդել*, *գայթազդ(ութիւն)* ձևերը թողնվել են այնպես, ինչպես կան, քանի որ առավել ճշգրիտ են, քան այսօր գործածվող համապատասխան ուղղագրական ձևերը: Բոլոր անհարկի *օ-ագրությունները* սրբագրվել են՝ *օ-ի ո-ով* փոխարինմամբ. օրինակ՝ փարաօն- *փարաուն*, Սիմօն- *Սիմոն*, Թօմաս- *Թոմաս*, սերօբե- *սերոբէ* ևն: Այս կարգի մնացած բոլոր փոփոխությունները, ինչպես արդեն նշեցինք, կարելի է գտնել տողատակում:

Քերականական ձևերից՝

¹ Թագ(չիմ)-թաք(չիմ) զուգահեռ ձևերից երկուսն էլ պահվել են, քանի որ պարզ չէ, թե դրանցից որն է առավել ճշգրիտ. երկուսն էլ գրաբարում տարածված և ընդունելի ձևեր են: Պահպանվել են նաև *հրեայ* և *երբէք* ուղղագրական ձևերը՝ այն նկատառմամբ, որ սրանք միջնադարում տարածված ուղղագրական ձևեր են (չնայած ծագումնաբանօրեն ոչ այնքան ճշգրիտ լինելուն), և մեր բնագրում էլ ամենուր հենց այս ձևերն են հանդես գալիս:

1) *ա*-ով վերջացող հատուկ անունների ուղղական հոլովածևի վերջում եղած *յ*-ն հանվել է. օրինակ՝ *Եւայ- Եւա*.

2) միօրինակ է դարձվել ներկա դերբայի ուղղական և հայցական հոլովածևների ուղղագրությունը. *-օղ* և *-ող* գուգահեռ ձևերից ընտրվել է առաջինը, որը մեր գործածած թե՛ տպագրում, թե՛ ձեռագրում առավել հաճախադեպ է, քան երկրորդ ձևը (հիշեցնենք, որ խոսքը միայն վերոնշյալ հոլովներից է վերաբերում. թեքված ձևերում *օ*-ն շեշտագրկվելով հնչյունափոխվում է *ո*-ի). օրինակ՝ *կարօղ, կարողք, կարօղս*, բայց՝ *կարողի, կարողաց* ևն.

3) սրբագրվել է *ի+ա հողակապ = Ե* հնչյունափոխության *Ե*-ն, եթե հանդես է եկել իբրև *Է*. օրինակ՝ որդեգրութիւն- *որդեգրութիւն*, ալէկոծ- *ալէկոծ* ևն:

Քանի որ տպագրում բնագիրն առավել մեծ պարբերությունների էր բաժանված, կատարել ենք նոր բաժանում՝ համեմատաբար առավել փոքրածավալ պարբերություններով:

Բնագիրը վերակետադրվել է հիմնականում ըստ արևելահայերենի ժամանակակից կետադրական կանոնների: Տերմնական անուններն ու դրանք փոխարինող դերանունները (բացառությամբ ստորադաս նախադասությունը սկսող հարաբերական դերանունների) ներկայացվել են մեծատառով, ինչը հաճախ առավել մեծ հստակություն է մտցնում նախադասությունների մեջ՝ նպաստելով իմաստների առավել ճիշտ ընկալմանը:

Բնագրում մեր կողմից ըստ անհրաժեշտության կատարված հավելումներն առնված են անկյունավոր փակագծերի մեջ՝ []:

Լրումն թերոյն համառօտ տեսութեամբ սրբոյ Աւետարանին՝ որ ըստ Մատթի: Հաւաքեալ նուաստ վարդապետի Յոհաննու¹ Երզնկայեցոյ, որ եւ ասի Ծործորեցի²:

Գերապատիւ եւ բարեհռչակ հայրն մեր ըստ հոգոյ եւ երկրորդ լուսաւորիչն սուրբ Եկեղեցոյ, ի զարմէ եւ ի շնորհէ սրբոյն Գրիգորի փայլեալ, կորովամիտ եւ համեղաբան կաթուղիկոսն հայոց տէր Ներսէս Կլայեցի, աշխատեալ վերլուծութեամբ ի սկիզբն սրբոյ Աւետարանիս գեղեցիկ եւ հանճարեղ բանի, եւ դադարեալ վարդապետութիւն նորա ի մուտս վարդապետութեան Փրկչին՝ յայսմ վայրի, ոչ գիտելով եթէ ո՛ր աղագաւ եղեւ խափանեալ: Վասն որոյ յոյժ ի վարանս մտեալ տագնապէի. զի թէ նա ի խնդրոյ եղբօր իւրոյ Գրիգորիսի վերադիտողի հայրապետական աթոռոյն գրեաց զմեկնութիւնն, որպէս պատմի ի սկիզբն նախերգութեան նորին, եւ ինքն իսկ յետոյ յաջորդեաց զաթոռ կաթուղիկոսութեանն ամս եօթն, ասպա ընդէ՞ր եղեւ թերի մնացեալ աստուածային գործոյս այսորիկ գործառնութիւն, եւ յոյժ հետաքրքիր եղեալ՝ ի ստոյգ պատճառէ հասմանն վրիպեցի, քանզի ոմանք զմահն ասացին խափանումն, եւ այլք՝ զհոգ հայրապետական աթոռոյն, եւ կէսք թէ՛ գրեաց, եւ չէ ի միջի. բայց սոքա ինձ ոչ եղեն հաւանելի: Եւ թէպէտ ոմանք նախքան զմեզ ձեռնարկեցին գրել ի վերայ շարագրութեան նորին, սակայն ոչ էր կարգաւոր որպէս սրբոյն, այլ հատակոտոր արարեալ զբանս³ առաջին մեկնչաց, նաեւ զբնաբանութիւն Աւետարանին արտաքս մերժեալ, ուստի ոչ զայր դիրաւ յիմացումն ընթերցողացն: Յաղագս որոյ ես՝ նուաստս ի Բրիստոս եւ յետինս յորդիս Սիոնի⁴՝ ասիկար ոգիս՝ Յոհան Երզնկայեցի սպասաւոր բանի, բնակեալ ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի՝ ի վանս⁵ Ծործորու կոչեցեալ՝ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, այլեւ ժողովեալ առ մեզ բանասեր անձինք ի յուսումն կրթութեան աստուածաշունչ տառից լսելու-

¹ ՏՁ Յոհաննու

² Ձ Ծործորեցի կոչեցեալ] ասի Ծործորեցի

³ Ձ զբանն

⁴ ՏՁ Սիոնի (այսպէս՝ ամենուր):

⁵ Ձ ձորս

թեան, յորոց յորդորմանէ եւ ի փափագելի¹ խնդրոյ եղեալ ի մտի առնել հաւաքումն մեկնութեան սրբոյ Աւետարանին Մատթէի՝ լնլով գթերի նորին ըստ կարողութեան ինում՝ շահեալ եւ օգտեալ յառաջին սրբոցն: Եւ է զի ի ծագմանէ նշուլից շնորհաց վերասացեալ առնն Աստուծոյ ի միտս մեր՝ դիցուք տեսութիւնս պիտանացոս յանցնիւր տեղի՝ խառնելով զնսեմատեսակ բանիցս տգեղութիւն ընդ շքնադագիւտ եւ լուսատեսակ իմաստիցն պայծառութիւն: Եւ աւանդեցաք մօր մերոյ Սիոնի փարթամութիւն եւ որդոց նորին՝ անխոնջ վաստակասիրաց՝ եւ հրճուանս հոգեւոր խրախուրթեան՝ միանգամայն եւ յառատութիւն մտաց եւ բանի յաւելուած վարկանելով զտաժանումն կաթի քրտանցս մերոց առ ընդարձակութիւն անդնդական խորոց լայնութեան՝ զիտելով, եթէ Պօղոսի շնորհէ վարձս ըստ տնկելոյն եւ Ապողոսի²՝ ըստ ոռոգելոյն³:

Վասն որոյ աղաչեմ զաստուածաբան ընթերցօղս եւ զվայելօղս⁴ յայսմ փոքրատեսիլ եւ չնչին նուիրաց ընծայի՝ որ ի սուրբ Եկեղեցի, վստահութեանս մերում ներօղս լինել, եւ զսխալանս մեր՝ որ աստ ի բառս⁵ եւ ի տեսութիւնս, հարազատ սիրով ուղղել, քանզի բնատրեալ է սեր զբազմութիւն եղբօր յանցանաց ծածկել, եւ զաշխատանս երկանց մերոց՝ ձեր օգտելովն քաւել, եւ զմեզ հանդերձ մերովքն ծնողօք հոգեւորօք եւ մարմնատրօք ի տէրունի բարիսն յիշատակել:

Եւ արդ՝ եղև գրութիւն սորա ի թիւ մարդէղութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի հազար երեք հարիւր եւ տասն եւ վեց, որոյ զօրութեամբն բուռն հարցուք զբանէս. զի Նա, որ զընկղմեալն ի ծով վերաբերեալ կանգնէ եւ զկլեալն ի սրբոս ձկանն ի ցամաք հանել օժանդակէ, զծով սանձէ եւ զալիս դադարեցուցանէ, տացէ եւ մեզ կարողութիւն ի խորութիւն ծովոս անցանել եւ յեզր աւետարանական բանիցս հասանել, որ այժմ խօսի եւ ասէ.

Ամէն ասեմ ձեզ, մինչեւ անցցեն երկինք եւ երկիր, յովտ⁶ մի, որ նշանախեց մի է, ոչ անցցէ յՕրինացն եւ ի Մարգարէից, մինչեւ ամենայն եղիցի (Ե 18)

¹ **ՏՁ** փափաք (այսպէս է և այլուր. մերթ փափաք, մերթ փափագ):

² **Տ** Ապօղոսի, **Ձ** Ապօղի

³ **Ձ** առոգելոյն
 Ա Կոր. Գ Ծ

⁴ **Ձ** վայելօղս

⁵ **Ձ** բառս մեր

⁶ **Ձ** յօտ (այսպէս՝ ամենուր)

Ճշմարտութեամբ հաստատութիւն աստուածային քանիցն նշանակէ, թէ չէ հնար անցանել երկնի եւ երկրի, մինչեւ ամենայն կատարեսցի, որպէս այլուր ասէ. «Դիւրին է երկնի եւ երկրի անցանել, քան յՕրինացն նշանախեսցի միոյ անկանել» (Դուկ. ԺԶ 17), եւ թէ՛ «Երկինք եւ երկիր անցցեն, եւ քանք Իմ մի՛ անցցեն»¹ (Մատթ. ԻԴ 35), որով յայտ առնէ, թէ ի Նմանէ խօսեցան Օրէնքն եւ վասն Նորա առաքեցան մարգարէքն: Իսկ «յովստ» ըստ յունականին է՝ «ձայն» եւ առ մեր «գիր» թարգմանի, քանզի որ փոքր ինչ գրախեսցի է, անհնարին է թէ անկատար մնասցէ մինչ յանցանելն երկնի եւ երկրի, եւ կամ թէ՛ մարդոյ կատարել պարտ է զամենայն, որպէս եւ Ինքն իսկ արար եւ կատարեաց: Բայց զանցանելն երկնի եւ երկրի յիշելով՝ մեծ իմն առակէ, եթէ աշխարհս կերպարանափոխ լինելոց է եւ ոչ յանէութիւն անկանելոց՝ ըստ այսմ օրինակի, զի նորոգին տարերք, եւ երկիր նախ հարթայատակ հաւասարի այրմամբ հրոյ՝ ի բաց դնելով զծանրութիւն եւ զայլայլութիւն եւ զմթութիւն, եւ լինի յստակ իբրեւ զապակի, եւ կամ իբրեւ զքարն կոչեցեալ պիլլօր², որպէս ետես Յովհան³: Իսկ օդ պայծառանայ, եւ ամենայն⁴ ամպոսք խռովութեանց ջնջին, այսպէս հուր եւ ջուր մաքրին եւ զորակութիւնս իրեանց պահեն միայն ըստ զօրութեան եւ ոչ ըստ ներգործութեան, քանզի ցրտութիւն ջրոյ եւ այրեցողութիւն հրոյ բառնին ի տանջանս մեղաւորաց, եւ փայլողութիւն ջրոյ եւ լոյս հրոյ կազմին պսակք արդարոց՝ ըստ Դաւթի. «Չայն Տեառն հատանէ՞ զբոց ի հրոյ» (Մաղմ. ԻԸ 7): Իսկ երկին զի ոչ ունի այլայլումն ըստ էութեանն, այլ միայն անկատարութիւն է նորա շարժումն, վասն որոյ ոչ լինի մաքրութիւն նորա հրով որպէս երկրի, այլ միայն շարժման դադարումն յետ զալարելոյն իբրեւ զմազադաթ⁶, որպէս եւ լուսաւորացդ կայումն՝ արեգական եւ լուսնի, ոմն յարելելս եւ ոմն յարելմուտս, ուր եւ ստեղծան իսկ, եւ միայն պայծառանան եօթնպատիկ՝ ըստ մարգարէութեանն⁷, եւ կանգնին, զի

¹ Գ > իմ մի՛ անցցեն

² Գ պլլօր

³ ՏԳ Յօհան (այսպէս է և այլուր՝ մերթ Յովհան, մերթ Յօհան. Յօհան / Յօհաննէս դարձրել էնք Յովհան / Յովհաննէս): Յայտ. ԻԱ 20

⁴ Տ > ամենայն

⁵ Գ հաստատէ

⁶ Ես. ԼԴ 4

⁷ Ես. Լ 26

լցին զսպասաւորութիւնն, եւ ի դադարել ծնելոցս՝ դադարին եւ նոքա:

Բայց թէ ընդէ՞ր նորոզին՝ ասելի է. նախ՝ զի որպէս պատահեցաւ պղծիլ տարերաց վասն մարդոյն յանցանաց, այսպէս եւ արժանաւորին նորոզման վասն մարդոյն՝ փառաց, որպէս ասէ առաքեալ¹: Երկրորդ՝ վասն սպասաւորութեան մարդկան եւ ծառայութեան՝ հատուցումն առնու զնորոզութիւնն: Երրորդ՝ զի համեմատ փառաւորեալն մարդոյ, որպէս հնար է, առնու եւ զկերպարանս աշխարհ²: Չորրորդ՝ աշխարհ եղեւ, զի իբր հայելեաւ արարածօրս մարդ տեսանիցէ զԱստուած, զոր իւր բնութեամբն տեսանել անկար էր, իսկ ի հանդերձեալն պարտ է զհայելին պայծառացուցանել եւ սրբել, զի ի գեղեցկութենէ արարածոցս առաւել գեղեցկութիւն Արարչին ծանիցի: Եւ այս՝ ոչ ըստ հարկի, թէ զԱստուած ըստ այլ կերպի ոչ կարենք տեսանել, որպէս եւ այժմ, այլ առ ի ցնծութիւն, զի որպէս առաւելու պայծառութիւն իմացականին, այսպէս պայծառանայ եւ տեսութիւն զգայականին:

Որ ոք լուծցէ մի ինչ ի պատուիրանացս յայցանէ ի փոքունց եւ ուսուցէ այնպէս զմարդիկ, «փոքր» կոչեսցի յարքայութեան երկնից (Ե 19)

Յորժամ զանձն ի չար կարծեաց ևոցս ազատեաց, որ քակիչ Օրինացն ասէին, նախասացեալ քանիւն թէ՛ «Ոչ եկի լուծանել զՕրէնս կամ զՄարգարես, այլ լնուլ», ապա ահագին սպառնալիս ոչ պահողացն դնէ եւ ասէ. «Որ ոք լուծցէ մի ինչ ի պատուիրանացս յայցանէ»: Լուծանելն՝ զխափանելն ասէ, քանզի թէ ոք մի ինչ ի պատուիրանացն խափանեսցէ եւ ուսուցէ այնպէս զմարդիկ խափանել՝ չար լեալ եւ չարեաց վարդապետ, փոքր, ասէ, կոչեսցի յարքայութեան, այս է՝ գեհենին լիցի ժառանգ, զի փոքր քան զարքայութիւնն՝ զգեհեանն է իմանալ, քանզի «արքայութիւն» ոչ միայն զփառսն ասէ, այլեւ զյարութիւնն եւ զահագին զալուստն անուանէ: Եւ դարձեալ՝ թէ ոք մի ինչ լուծանէ անձամբ ի յեղեալ պատուիրանացս եւ ուսուցանէ այնպիսի կենօք զճշմարիտն մարդկան, «փոքր» կոչեսցի: Է՞ր վասն. զի զեղիս կեանք քարոզին ոչ տայ հաւատալ աշակերտելոցն ճշմարտութեամբ պատուիրանին: Վասն որոյ հակառակի. թէ ճշմարիտ է, դու ընդէ՞ր ոչ առնես, եւ այսպիսի

¹ Զ > յանցանաց, այսպէս եւ արժանաւորին նորոզման վասն մարդոյն

² Դոմ. Ը 19-22

³ Զ ամենայն աշխարհ

վարուք ոչ միայն զինքն, այլև զՕրէնսն եւս արհամարհել տայ՝ ըստ առաքելոյ. «Որ քարոզես չգողանալ, գողանա՞ս» (Հռոմ. Բ 21): Վասն այսորիկ ասէ «փոքր կոչեսցի յարքայութեան», քանզի ըստ աշխատանացն վարձս առցէ՝ կամ աստ, որպէս մեծատունն՝ զբարեացն փոխարէնս¹, զորս «փոքր» կոչէ վասն անցատրութեանն, եւ կամ անդ, զի զանազան են փառք՝ ըստ առաքելոյ. «Այլ փառք արեգականն, եւ այլ լուսնի եւ աստեղաց» (հմմտ. Ա Կոր. ԺԵ 41), զորս փոքր ասացի ստեղծմանն քան զարեգական, ըստ այսմ կերպի եւ փառք այնպիսոյն լինիցի: Եւ զի այս այսպէս է՝ յաջորդդ հաստատէ, իսկ ըստ անառակ կենացն տուգանս կրէ՝ կամ աստ, կամ անդ: Այլ «մի ինչ» ասելն ահ արկանէ լսողացն. զի թէ վասն միոյն նուազի փառքն, թէ զամենայնն եւ զմեծն լուծանէ, զո՞ր տեղի ժառանգելոց է: Բայց ոմանք զպատուիրան զԻրն ասացին եւ «փոքր» կոչել զայս պատճառ զրեցին, թէ որպէս զԻնքն, որ մեծն էր քան զամենայն ըստ Երզողին², «փոքր» անուանեաց, այսպէս՝ զպատուիրանս Իր, զի խրատեսցէ զմեզ ի չափու կալ, քանզի Նորայն ամենայն օրինակ էր մեզ: Եւ կամ թէ ըստ ժամանակին, որ զՄոսիսին³ մեծ ունէին, եւ ըստ կարծեաց լսողացն այնպէս ձեւացոյց զբանն:

Իսկ որ արասցէ եւ ուսուցէ, նա «մեծ» կոչեսցի յարքայութեան երկնից (Ե 19)

Քանզի պարտիմք ոչ միայն զանձինս շահել, այլև զբազումս, որպէս Ինքն անձին հաճոյ ոչ եղել, այլ բազմաց, վասն որոյ ոչ ասաց թէ՝ «Որ արասցէ՝ մեծ կոչեսցի», այլ թէ՝ որ «ուսուցէ» եւս, որպէս Ինքն առնէր եւ ուսուցանէր: Չի զոր օրինակ ուսուցանելն առանց առնելոյ՝ դատապարտէ, նոյնպէս որ առնիցէ եւ այլոց ոչ ուսուցանիցէ, զփառսն փոքր կացուցանէ, որպէս ասացն: Յաղագս որոյ յերկուս դէմս պարտ է կատարեալ լինել եւ ապա՝ մեծ կոչիլ փառօք յարքայութեան երկնից՝ ըստ արեգականդ փայլման, քանզի «ծազեն,- ասէ,- արդարքն իբրեւ զարեգակն յարքայութեան» (Մատթ. ԺԳ 43), որ է մեծ քան զայլ լուսատրսն՝ զառաւելութիւն փառացն նշանակելով, զոր օրինակաւ ի գիրս Ելիցն «պսակ ոսկե-

¹ Ղուկ. ԺԶ 19-31

² Սաղմ. ԴԵ 4

³ **ՏԶ** զՄոսիսին (այսպէս՝ ամենուր. Մօսու] Մոսու. Մովստ ձևը հազվադեպ է գործածված):

դէն» ասէ հացի սեղանոյն¹, զոր ժառանգեն վարդապետքն յա-
նագս հացի բանին, զոր մատակարարեցին բազմացն:

Բայց ասեմ ձեզ, զի եթէ² ո՛չ առաւելուցու արդարութիւն ձեր առաւել³ քան
զդպրացն եւ զփարիսեցոց⁴, ո՛չ մտանիցէք յարքայութիւն երկնից (Ե 20)

Ըստ կարգի բանիդ՝ առաւելութիւն զառնելն եւ զուսուցանելն
ասէ, քանզի դպիրքն եւ փարիսեցիքն զուսուցանելն ունէին, բայց
զառնելն՝ ո՛չ բնաւ՝ ըստ այնմ. «Յաթոռն Մոսիսի նստան դպիրքն
եւ փարիսեցիքն. զամենայն զոր ինչ ասիցեն ձեզ՝ արարէ՛ք, բայց
ըստ զործոց նոցա մի՛ առնէք, զի ասեն եւ ոչ առնեն, կապեն բե-
ռինս ծանունս եւ դժուարակիրս եւ մատամբ իւրեանց⁵ ոչ կամին
մերձենալ» (հմմտ. Մատթ. ԻԳ 3-4). արդ զի մի՛ այսպիսիք լիցին եւ յար-
քայութենէն տարագիրք լինիցին, ասաց զայս: Եւ դարձեալ՝ առա-
ւելութիւն այլ է այնմ, առ որ զառաւելութիւնն ունի. արդ, ասէ, թէ ոչ
օտարանայք ի կրօնից դպրացն եւ փարիսեցոց, ոչ մտանիցէք
յարքայութիւնն Աստուծոյ: Ուստի յայտ է, թէ նոքա ոչ մտանեն,
որպէս յայլում տեղոջ ասէր թէ՝ «Վա՛յ ձեզ դպրաց եւ փարիսեցոց
կեղծատրաց, զի դուք ոչ մտանէք եւ որք մտանեն՝ չտայք թոյլ
մտանել» (հմմտ. Մատթ. ԻԳ 13), զի թէ նոքա մտանէին իւրեանց արդա-
րութեամբն, զի՞նչ հարկ էր աւելի արդարութիւն ցուցանել եւ ասպս
մտանել եւ ոչ նոցայնօքն միայն: Վասն որոյ պարտիմք քննել, թէ
զո՞ր արդարութիւն ունէին դպիրքն եւ փարիսեցիքն, յորոյ վերայ
յաւելուածս պահանջէ յաշակերտացն Տէրն:

Արդ՝ զնոցա արդարութիւնն Պօղոս ուսուցանէ առ եբրայե-
ցիսն, որք «ոչ կարէին,- ասէ,- ըստ միտս կատարել զպաշտա-
մունսն, բայց միայն կերակրօք եւ ըմպելէօք եւ պէսպէս մկրտու-
թեամբք՝ մարմնոյ արդարութիւնքն, որ մինչ ի ժամանակս ուղղու-
թեանն ի վերայ կային» (Եբր. Թ 9-10): Եւ դարձեալ՝ Տէրն յանդիմանե-
լով ասէր մկրտութիւնս ունել բաժակաց եւ ստոմանաց եւ
պղնձեաց եւ մահճաց⁶. արդ՝ յայսպիսի մարմնական արդարութե-
նէս հրաժարեցուցանէ եւ զհոգեւոր արդարութիւնն քարոզէ, որ է

¹ Եւր ԻԷ 3, Լ 3

² Զ թէ

³ Զ աւելի

⁴ Զ զփարիսեցոցն

⁵ Զ իւրով

⁶ Մարկ. Է 4

հաւասարութիւն հոգւոյն մասանց եւ անուն¹ բովանդակ ամենայն առաքինութեան, որպէս զՅորայ «արդար» գրէ², եւ Պօղոս թէ՛ «Ի վերայ արդարոց օրէնք ոչ կան» (Ա ՏԻԲ. Ա 9), զոր դպիրքն եւ փարիսեցիքն ոչ ունէին զմտաւորն, այլ զմարմնականն: Եւ զի այս այսպէս է՝ զկնի եկեալ բանքդ ցուցանեն, ոչ բարկանալ, որ է անհրաւորութիւն ցասմնատեսակին, ոչ ցանկալ, որ է անհրաւորութիւն ցանկականին, եւ այլն: Բայց ոմանք ասեն, թէ ոչ զվարկպարագի դպիրսն եւ փարիսեցիսն ասէ³, այլ զօրինապահսն, որ ուղղութիւնս ինչ ունէին: Իսկ յաշակերտացն աւելի խնդրէ, զի նոքա ի Հինն, եւ սոքա՝ ի Նորս, նոքա ի ստուերն, եւ սոքա՝ ի ճշմարտութիւնն, նոքա ծառայիցն աշակերտեցան, եւ սոքա՝ Տեառն: Բայց թէ որ զնոցա արդարութիւնն գործէ, «ոչ մտանէ» ոչ ասէ, քանզի նախքան զօրէնսն Քրիստոսի՝ այնպիսի վարուք մտանէին, իսկ յետ Քրիստոսի զայստեանն՝ ոչ. զի որչափ ի բազում զօրութիւնս արժանի եղեն վայելել, բազում ճգնութիւնս յանձին պարտին ցուցանել:

Լուարուք, զի ասացաւ առաջնոցն թէ՛ մի՛ սպանաներ, զի որ սպանանիցէ՛ պարտական լիցի դատաստանի (Ե 21)

Ի տասնբանեան օրինացն, զորս գրեաց Աստուած յերկրորդում տախտակսն քարեղէնս, մի է եւ այս թէ՛ «Մի՛ սպանաներ» (Ե-լից Ի 13), զի հակառակ է գործդ Աստուծոյ: Որ կապեաց անբան շնչովն զբանական հոգին ընդ մարմնոյն թանձրութեան՝ Նմա՛ արժան է լուծանել զկապն եւ դարձեալ բարձրագոյն կապել, որ ասաց թէ՛ «Ե՛ս սպանանեմ եւ Ե՛ս կեցուցանեմ» (Բ Օր. ԼԲ 39), եւ ոչ՝ քում յանդգնութեանդ: Ապա թէ որ ժպրհի անցանել զօրինօք Նորա եւ քակտէ զպահարան հոգւոյն՝ զմարմինն, պարտական ասէ լինել դատաստանի: Քանզի երկու օրինակաւ լինի սպանումն՝ կամայ եւ ակամայ, եւ այս դարձեալ երկակի՝ հոգեւոր եւ մարմնաւոր. հոգեւոր՝ որպէս ատելութիւն, ըստ Յովհաննու թէ՛ «Որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է» (Ա Յովհ. 9 15), եւ մարմնաւոր՝ որպէս գրէ Դաւիթ թէ՛ «Չայր արինահեղ եւ զնենգաւոր պիղծ առնես Դու, Տէր» (Մաղմ. Ե 7): Իսկ կամաւոր սպանութիւն լինի ըստ յեղանակս վեց: Նախ⁴՝ գործով, զի հարկանէ զոք՝ կամ բանի, որ է հրամանաւ, կամ յու-

¹ Տ անհուն

² Յոր Ա 1

³ Զ ասէ եւ փարիսեցիսն] եւ փարիսեցիսն ասէ

⁴ Զ ամենայն

րատով. եւ երկրորդ՝ զի տեսանէ զընկերն մեռեալ ի սովոյ եւ ոչ կերակրէ. երրորդ՝ դեղով, որպէս արք եւ կանայք զտղայս անցուցանեն. չորրորդ՝ ստօք, զի կամին զմահ ուրուք. հինգերորդ՝ զրպարտութեամբ՝ ըստ այնմ. «Լեզուք նոցա որպէս սուր սուսեր» (Սաղմ. 52 5). վեցերորդ՝ որ անդամ մի հատանէ զհարն կամ զայլոց՝ սպանօղ է:

Նոյնպէս եւ ակամայն ունի բաժանմունս, ուստի եւ ակամայիցն որոշեաց քաղաքս սպաստանի, զի զոր ճշդի ստուգեալ դատաւորքն ակամայ գտանեն, զերծուցեալ անդր առաքեսցեն, զի մի՛ առցէ զվրէժ մերձաւոր արեանն¹: Բայց յեղանակաւ իմն եւ ա՛յս մահու² է պարտական՝ յօտարութիւն կալով, որ «առաջին մահ» ասացաւ յիմաստնոցն, մինչ ի վախճան քահանային մեծի³, իսկ զկամաւորն, որով եւ իցէ օրինակաւ սպանօղ, զպարտս արեանն հեղոյ ի վերայ նորա արկանիցեն՝ ըստ այնմ թէ՛ «Որ հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա՝ հեղցի արիւն նորա» (Ծննդ. Թ 6), եւ թէ՛ «Ի սեղանոյ Իմոյ առնուցուս եւ սպանանիցես» (Երբ Իւ 14), զի արեան լիցի, ասէ, պարտական այնպիսին ի դատաստանս ատենից: Եւ արեանն պարտք արեամբ վճարի, եւ դատ⁴ զսեղանագերծիցն եւ զտաճարակապտիցն տայ, վասն զի կողոպտեաց զբանական տաճար Աստուծոյ՝ պատուեալ⁵ անմահ հոգւով⁶, որ յարգոյ է քան զանբան տաճար զարդարեալ ոսկով. վասն այսորիկ երկաթ ոչ հրամայեաց ի շինուած տաճարին հպեցուցանել⁷, այսինքն՝ ի մարդն, որ է տաճար Աստուծոյ: Եւ թեպէտ զենուին քահանայքն ոչխարս եւ արջառս, սակայն զարիւնն Աստուծոյ նուիրէին՝ ուսուցանելով, թէ իբր ի նուիրաց Աստուծոյ՝ պարտ է յայսպիսի իրացս ի բաց հրաժարել, զի թէ յանասնոցն՝ զի՞նչ ասես ի մարդկան արեանէ:

Բայց զի բացարձակ ասաց թէ՛ «դատաստանի», եւ ո՛չ յայտնեաց, թէ ա՛յսմ ատենի թէ ա՛յնմ, զայն եցոյց, թէ պատահի երբէք, զի զերծանի մարդախոշոշ վիրագն յայսմ դատաստանէ կամ կաշառօք եւ կամ ոչ ի ձեռս մատնելով դատաւորաց⁸, ի հանդերձեալ

¹ Թիւք Լե 11-34

² Գ մահուց

³ Թիւք Լե 25

⁴ Գ դատաս

⁵ Գ պատուել

⁶ Գ հոգով (այսպէս է և այլուր, սակայն հազվադեպ):

⁷ Բ Օր. Իէ 5, Դատ. ԺԳ 5, Ա Թագ. Ա 11

⁸ Գ դատաւորաց է

ատենին¹ վաշխիքն տացէ զտուգանս, զի մի՛ նք վստահանայցէ ի փրկութիւն անձին եւ յապիրատութիւնս այս անկանիցի: Իսկ այն, զի ասէ թէ՛ «ասացաւ առաջնոցն», երկու իրս իմաստասիրակս աւանդէ. նախ զայն թէ՛ քանի ժամանակք են յորմէհետե՛² Օրէնքն տուան՝³, եւ դուք ի ներքոյ ծանրութեան Օրինացն տանջիք անտարար, որպէս վարդապետոք, որ զհեղձ աշակերտ յանդիմանէ ըստգտանօք, թէ՛ զայսքան ժամանակս ի սակաւ սիրորայսոյ ծախեցեր եւ ո՛չ կամիս ազատիլ եւ զբարձրագոյն հրամանս ընդունել, եւ երկրորդ՝ զի ոչ յայտնեաց զասացողն, թէպէտ Ինքն էր, այլ խառնիխտուն եղ թէ՛ «ասացաւ», եւ զումմէն ո՛չ յաւել: Չի թէ ասացեալ էր թէ՛ «Ես ասացի», ոչ առնուին յանձն վասն բազմաց պատճառաց. մի՛ զի առժամայն զՆա մարմնով տեսանէին, եւ երկրորդ՝ վասն հակառակ գոյոյ Ինքեան երբեմն զայն դնել յօրէնս եւ երբեմն զայն, եւ թէ՛ ի Հօրէ «ասացաւ», եւ այժմ Ես ասեմ, եւ ոչ այն էր ընդունելի, որպէս թէ ճոխաբանութիւն իմն ցուցանէր ի վերայ Հօր օրէնսդրութեանն զԻր վարդապետութիւնն. վասն այսորիկ անյայտարար ասաց թէ՛ «ասացաւ առաջնոցն»:

Այլ Ես ասեմ ձեզ, եթէ⁴ ամենայն, որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտական լիցի դատաստանի (Ե 22):

«Ես»-դ անուն ի դերանուանցն է եւ իշխանութիւն իմն յայտնէ, քանզի ծանուցանէ, թէ ո՛չ նք յառաջնոցն այսպիսի օրինակաւ բարբառեցաւ, այլ թէ՛ «Այսպէս ասէ Տէր» (Ելք Դ 22, Ը 1, Ա Թագ. Բ 27 եւն), եւ թէ՛ «Բան Տեսնն եղեւ առ իս» (Ա Մն. ԻԲ 8, հմմտ. Ա Թագ. ԺԵ 10, Գ Թագ. Զ 11 եւն), վասն զի նոքա զտէրունիսն պատմէին եւ առ ծառայակիցն խօսէին, իսկ սա զհայրենիսն եւ առ ծառայսն վարդապետէ իշխանաբար եւ ասէ թէ՛ Ես ասեմ ձեզ, որպէս թէ առաջին ասացեալքն ոչ էր կատարեալ, ո՛չ ըստ ասողին, այլ ըստ լսողացն անկատարութեան, վասն այսորիկ Ես զկատարեալն եւ զօգտակարն բարբառիմ, թէ ամենայն, որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց⁵, [պարտական լիցի դատաստանի]:

¹ Ձ > ի հանդերձեալ ատենին

² Ձ յորում հետէ

³ Տ տուաւ

⁴ Ձ թէ

⁵ Ձ > տարապարտուց

Յերկուց իմն էութեանց է գոյացեալ մարդոյս կազմութիւն՝ ի հոգւոյ եւ ի մարմնոյ, եւ երկոքո՛ւմքք եղեւ սխալական յետ դրախտին կենաց, վասն որոյ ճարտարապետ Բժիշկն՝ ստեղծօղն բնութեանս, երկոցունց կազմէ սպեղանիս բժշկութեան, քանզի զմարմնոյն հիւանդութիւն Հին օրինօքն դաստիարակեալ սփոփեաց¹, իսկ զխորհրդոցն յարձակմունս Նոր կտակաւս արգելեալ խափանէ, որպէս զի վերստին լիցի մարդն պատկեր Աստուծոյ: Ուստի զարմատ չարութեանն, որ ի սրտէն բղխէ², հատանէ բանիւս, զի թէ աղբիւր զսիրտն ոչ ունիցի չարեացն, եւ ոչ արտաքին մարմնովն գործակցի, քանզի վարդապետեցար, ասէ, առաջնովքն ոչ սպանանել, այժմ խրատեցիր ոչ բարկանալ, զի ամենայն որ բարկանայ, ասէ, պարտական լիցի:

Բարկութիւնն ախտ մի է, յորժամ եռայ արիւնն՝ որ շուրջ զսրտին է, առ ի փոխարէն տրտմեցուցանել. բայց յորժամ ըստ ինքեան անգործ մնայ, ոչ իւիք մեղանչէ՝ ըստ այնմ. «Բարկանայք եւ մի՛ մեղանչէք» (Մատթ. 7:5): Իսկ թէ՛ յորժամ զկատարէ եւ ի թշնամանս եւ ի սպանութիւնս միտէ, պարտական ասէ լինել նովին դատաստանի, որպէս սպանօղն առաջին: Է՞ր վասն. զի եւ բարկութիւնն մահու չափ մեղք է, որպէս սպանութիւնն: Եւ դարձեալ՝ զի բարկութիւնն իբրեւ զգէն իմն տնկեաց Աստուած ի մարդկայինս բնութիւն՝ վառել մեզ ընդդէմ մեղացն եւ սատանայի, իսկ թէ յստերիւրիցէ զայն եւ առ եղբարս զմարտն դարձուցանէ, այնպիսի իմն առնէ, որպէս թէ յորժամ իւրով զանձն խոցոտէ, վասն այսորիկ «եղբօր իւրում» ասէ. եւ եղբարս ոչ միայն զհամակրօնս պարտ է իմանալ, այլեւ որք հոգւոյ եւ մարմնոյ հաղորդք են բնութեամբ: Բայց կարի իմն գեղեցիկ է եւ յաւելուած բանին թէ՛ «տարապարտուց», քանզի այսու ոչ ամենեւին զբարկութիւնն շիջուցանէ. նախ՝ զի անհնար է ի կարեաց բնաւին ազատանալ, թէպէտեւ կարճել մարթի, եւ երկրորդ՝ զի օգուտ է բարկութիւն, յորժամ ըստ ժամանակին պատշաճի հանդիպի եւ ի տանջանս մեղուցելոցն՝ ախտն շարժիցի, որպէս Պօղոսին՝ առ կորնթացիսն⁴ եւ Տեառն՝ ի վերայ հատավաճառացն⁵ եւ Փենեհէսին¹՝ ի վերայ մոլե-

¹ Ձ դաստիարակեալս փոխեաց] դաստիարակեալ սփոփեաց

² Տ Ձ բղխենն

³ Ձ > թէ

⁴ Ա Կոր. Գ-Ե

⁵ Մատթ. ԻԱ 12

լոցն Բելլիեզովրայ², որք ո՛չ զանձին, այլ զԱստուծոյ եւ զընկերին վրէժն խնդրեցին: Վասն այսորիկ ասաց թէ՛ եղբօրն, եւ այն՝ տարապարտուց, ոչ է արժան բարկանալ, իսկ թէ՛ որ զօրէն զազանի կատաղի ախտիւն, պարտական ասէ լինել բարկութեանն Աստուծոյ, որ յայտնելոց է ի վերայ ամբարշտութեան եւ անիրաւութեան մարդկան: Այլ զհա՞րդ ասէ հրէայն, թէ Նոր կտակս հակառակ է Հնոյն, միթէ ոչ բարկանալն ոչ սպանանելոյն ներհա՞յ գտանի: Ո՛չ, այլ կարի՛ միաբան եւ ո՛չ միայն միաբան, այլեւ խափանօղ սպանութեանն, քանզի թէ ոչ բարկանայ, եւ ոչ սպանանէ՛ իսկ. բայց «զի՞նչ կայ իմ եւ զարտաքինսն դատելոյ» (Ա Կոր. Ե 12), ասէ որ ասացն, զորս ի բաց իբրեւ զմեռեալս թողցուք եւ ի կարգ բանիս մատիցուք:

Եւ որ ասիցէ ցեղբայր իւր «յիմար», պարտաւոր լիցի ատենի:

Առ սակաւ սակաւ յառաքինութեանն աստիճան բարձրացուցանէ զաշակերտեալսն: Նախ ասաց ո՛չ բարկանալ եւ այժմ թէ՛ եւ ո՛չ բանս տգեղ եւ խոցոտիչ առ եղբայրն նետաձիգ առնել, քանզի եւ այս բարկութեան է ծնունդ եւ սերմն սատանայի: Իսկ «յիմար»-ն անմիտ լսի կամ անբան, կամ անզգայ, վասն որոյ ոմանց խիստ թուեցաւ պատուիրանս, թէ ընդ դոյզն բանի՛ այնպիսի պատիժս կրելոց ենք, եւ ոմանց առաւելութեամբ ասացեալ՝ իբրու ահ ինչ արկանելով, բայց ճշմարտապէս ի բանից է արդարանալն եւ կամ դատապարտիլն, քանզի յոքունց մեղաց սկիզբն եւ պատճառ՝ բանն լինի՛ ուրացութեան եւ հայիոյութեան եւ սուտ վկայութեան եւ այլոց, եւ առաւել եւս այսպիսի՛ բանի, որ ցոյի բերանով զեղբայրն արհամարհէ, զի զեղեալն ի նմանութիւն Աստուծոյ՝ անմտացն հաւասարէ, եւ որով իւրք ընդհատենք յանասնոցն՝ զհամացեղն զրկէ: Չի՞նչ քան զայս մեծ անիրաւութիւն կացցէ, որում յիրաւի զգեհեանն սպառնայ, ո՛չ ի կամաց Իւր, որոյ կեանք են ըստ մարգարէի³ եւ արքայութիւն, այլ ի ծուլութենէ եւ յանուղղայ բանից եւ զործոց մե՛րս յօժարութեան:

Եւ որ ասիցէ ցեղբայր իւր «մորոս», պարտաւոր լիցի գեհեն հրոյն:

¹ Տ Փենտէտսին. Զ Փենտէտզին

² Թիւք ԻԵ

³ Սաղմ. ԻԹ 6

Ամենեւի՛ն ի կատարելութիւնս հանէ զհողեղէն բնութիւնս մարդկան, որպէս զի գոր ինչ բնութեամբ ունի Աստուած առաքի-
նութիւնս՝ մարդն ազատ կամօք ստանայցէ եւ նմանօղ Նորա լինի-
ցի: Իսկ «մորոս»-ն բառ է գաւառի, հասարակաբար ասացեալ՝
թշնամանք առ ընտանիս, բայց յեբրայեցի լեզուն «ռակայ» կոչե-
ցաւ, որ մեծ իմն եւ ծանր նախատիւն յայտնէ լսողացն եւ արհա-
մարհանաց տայ ծանօթութիւն, որպէս մեք յորժամ սաստենք ծա-
ռայից եւ կամ վատթար արանց, ըստգտանօք ասենք թէ՝ «Այ դու
ծօլայ, քե՛զ ասեն», վասն որոյ մարդասէրն եւ խաղաղարարն Աս-
տուած զմանունսն եւս կարծէ եւ սիրով առ հոմացեղսն վարել
ստիպէ: Եւ «ատեան» կամ զեբրայեցոցն կոչէ, զի մի՛ ամենեւի՛ն օ-
տար վարդապետութիւնն կարծիցի, վասն այսորիկ անդր առաքէ,
եւ կամ զահագինն բեմ, յորում բանիւ զբան եւ խորհրդով զխոր-
հուրդ հարկանէ եւ գործով զգործ տանջէ: Եւ «զեհեան» զճշտա-
բորբոք եւ զյարակէզ հնոցն անուանէ, որ զառ ի նա անկեալ նիւթն
վատնէ անծախաբար՝ ըստ առաքելոյ. «Այնպէս կացցէ, որպէս թէ
[ի] հուր» (հմմտ. Ա Կոր. Գ 15): Ապա ուրեմն զո՞ր տեղի ժառանգելոց են
թշնամանօղքն եւ հայիոյօղքն Աստուծոյ եւ ուղղափառ հաւատոյ:

**Եթէ մատուցանիցես զպատարագ քո ի վերայ սեղանոյ եւ անդ յիշեսցես,
եթէ եղբայր քո ունի ինչ խէք զքէն** (Ե 23),

**քո՞ղ զպատարագն քո առաջի սեղանոյն, երբ նախ հաշտեա՛ց ընդ եղբոր
քում եւ ապա եկեալ մատուցի՞ր զպատարագն քո** (Ե 24):

Չառաւելութիւն բարերարութեանն այսու բանիւս ծանուցանէ,
բանզի զպաշտօնն Իւր խափանել տայ վասն առ ի յընկերն սիրոյ՝
զհտելով, զի հաշտելն ընդ եղբորն՝ պատարագ Աստուծոյ է: Այլ թէ
ընդէ՞ր ի սեղանոյն առաքէ. զի հնարք խորամանկութեան այս սա-
տանայի է, որ զրգռել տայ առ միմեանս եւ ապա նախքան զպա-
տարագն մոռացումն ապշութեան¹ արկանէ ի վերայ մտաց նորա,
զի մի՛ հաշտեսցի, եւ ի ժամ պատարագին յիշել տայ, զի խղճի
մատուցէ. վասն որոյ ծածկազէտն Աստուած, որ զիտէ զմեքե-
նայս նորա, զերեքկին չարիսն խափանէ՝ ի սեղանոյն առաքելով:
Եւ դարձեալ՝ զսեղանն յիշելով արհաւիրս ձգէ՝ ուսուցանել, թէ
նախ արժան էր մատչել ի հաշտութիւն, իսկ այժմ ոչ ընդունի սե-
ղանն զպատարագն, յորժամ թշնամութիւն ունիցիս: Ուստի ի

¹ **ՏԶ** ակշուրեան (այսպէս է և այլուր. մերթ ապշ, մերթ ակշ):

հարկէ՛ ի միաբանութիւն հաշտութեանն զայցէ՛ վասն երկուց իրաց. նախ¹՝ զի զսէրն ընտրէ լաւագոյն քան զպատարագն, եւ երկրորդ՝ անհնար է, թէ ոչ հաճի, յորժամ հաշտեցան, զի յորժամ ընդ եղբօրն հաշտի, հաշտեսցի եւ Աստուած, վասն այն ասէ. «Երբ հաշտեաց եւ ասպա՛ մատո զպատարագն»: Իսկ զխէթն ո՛չ յաւել թէ յիրաւի իցէ արդեօք կամ յանիրաւի, այլ զինչ պատճառաւ եւ է՛, եւ ո՛չ ասէ՛ դո՛ւ առ նա ունիցիս, այլ նա՛ զքէն, որպէս եւ Տէրն, որ նախքան զմատուցանել պատարագի մարմնոյն ի վերայ սեղանոյ խաչին, հաշտեցաւ ընդ խեթացօղ ազգն հրէից՝ ասելով. «Հայր, թո՛ղ սոցա զմեղս, զի ո՛չ գիտեն զինչ գործեն» (Ղուկ. ԻԳ. 34), եւ ասպա մատոյց զանձն Իւր պատարագ Հօր՝ ի հոտ անուշից:

Բայց զբանս զայս ոմանք առ քահանայսն եւեթ ասեն ասացեալ, որք սեղանոյն են պաշտօնեայք, սակայն ճշմարտապէս՝ հասարակաց ամենեցուն է, քանզի պատարագ ոչ միայն զողջակէզսն է կարծել, որպէս ի Հինն, եւ կամ ի Նորս զմարմնոյ եւ զարեան Տեառն մերոյ ընծայումն, այլեւ զաղօթսն՝ ըստ այնմ. «Պատարագ օրհնութեան փառաւոր առնէ» (Մաղմ. ԽԹ. 23), եւ թէ՛ «Համբարձումն ձեռաց իմոց՝ պատարագ երեկոյի» (Մաղմ. ԾԽ. 2), եւ Պօղոս թէ՛ «Պատրաստեցէք զմարմինս ձեր պատարագ կենդանի՝ զխօսումն պաշտօն ձեր» (Հռոմ. ԺԲ. 1), որպէս զի եւ իշխեսցէ ասել. «Ծոող մեզ զպարտս մեր, զի եւ մեք թողաք մեղուցելոց մերոց»: Իսկ այսմ պատարագի սեղան՝ սիրտն է, յոր ասաց մտանել եւ աղօթել Տէրն:

Լէր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ մնա ի ճանապարհի. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, եւ դատաւորն՝ դահճի, եւ արկանիցիս ի բանդ² (Ե 25):

Ամէ՛ն ասեմ քեզ, ո՛չ ելանիցես անտի, մինչեւ հատուցանիցես զյետին նաքարակիտն (Ե 26):

Կենցաղօգուտ իւրատ մատուցանէ ասացելովքս եւ զնախասացեալ հաշտութիւնն հաստատէ, թէ ընդ ումեք լիցի, ասէ, վէճ հակառակութեան, եւ ոսոխ արձանացի քեզ, զի յափշտակեալ ի քոյոցն յինքն շոպեսցէ, քանզի այս է ոսոխն, եւ բռնաբար ի դատաստան քարշէ, տո՛ւր, ասէ, զհաշիւն մնա, մինչդեռ ի ճանապարհի ես եւ տակաւին հեռի ի դատաւորին ատենէ: Այս է՝ զոր ինչ պահանջէ ի քէն՝ տո՛ւր, զի զայս արարեալ՝ երկու մեծագոյն օ-

¹ Զ մի

² Տ բանտ (այսպէս է և այլուր. մերթ բանդ, մերթ բանտ):

գուտս շահեսցիս. մի՛ զի անձինդ տէր լիցիս եւ ի վիշտս ոչ անկանիցիս, եւ երկրորդ՝ զի ի քե՛ն լինի ուղղութիւնն եւ ոչ ի նորա բռնութենէն, վասն այսորիկ զկշիռ իրաւանց դատաստանին ի քեզ բերցես եւ սակաւ տրօք ի յոտիսէն ազատեսցիս: Ապա թէ ոչ անսաս, ոչ նմա վնասես, այլ քեզ. զի որ առանձինն զքեզ արդար կարծէիր, ի հրապարակ մտեալ՝ անիրաւ գտանիս՝ նորա մատնելովն դատաւորին, եւ դատաւորն՝ դահճին, եւ նա արկանիցէ ի բանդ, եւ ոչ ելանիցես անտի, մինչեւ հատուցանիցես զյետին նաքարակիտն, այսինքն՝ բնաւին աղքատանայցես մինչեւ զյետին դանգն տուգանս տալով՝ զիրաւունս ոտխին, զոր ոչ խորհեցար նախ, եւ զդատաւորին եւ զսպասաւորաց նորին:

Բայց ինձ՝ թուի խորագոյնս իմն իմաստ յայտնել բանիս. «ոտիս» զմարմինս մեր առակէ, որպէս այրին այն, որ մատուցեալ առ անիրաւ դատաւորն՝ դատ պահանջէր յոտիսէ մարմնոյն¹, վասն որոյ խրատ տայ Տէրն հոգւոյս մերոյ, թէ զիրաւունս խորհեաց ընդ ոտխի մարմնոյ բո, որչափ ընթացակից ես նմա յայսմ յաւիտենի, քանզի զայս յայտ առնէ «ի ճանապարհի»-ն: Իսկ «իրաւախտի լինելն» զչափաւոր պիտոյսն մարմնոյն շնորհելն է եւ ոչ պնդագոյն ժուժկայութեամբ ճնշել զմարմինն, քանզի այս անիրաւութիւն է, որպէս ընդդէմ սին՝ զրկելն զհոգին, ապա թէ ոչ՝ անհամբեր եղեալ անչափ ճգնութեանն՝ մարմինն բողոք բառնայ առ անիրաւ դատաւորն՝ ի միտսն, եւ նա գթացեալ ընդ զրկեալ մարմնոյն տկարութիւն՝ հրամայէ դահճաց ոմանց՝ զգայութեանց եւ հոգեկան մասանց, տալ առատութեամբ զծախս մարմնոյն՝ հայել ցանկութեամբ եւ լսել հեշտութեամբ եւ շուայտիլ ազահութեամբ եւ այլ բազմազան մեղաց տեսակօք բերկրիլ շռայլութեամբ: Եւ հեշտութիւնքս այսորիկ, օրինակ իմն դահիճք եղեալք, արկանիցեն զհոգին ի բանդ նսեմութեան ի մէջ անառակ կենացն, յորոց հայցէր Դաւիթ ազատիլ՝ ասելովն. «Հան ի բանդէ զանձն իմ» (Մատթ. ԹԵՄ 8): Եւ ոչ ելանիցէ անտի, մինչեւ հատուցանիցէ զյետին տեսակս մեղաց՝ կատարե[ա]լ մարմնովն, քանզի զբազումս տեսաք այսպիսիս, որ ի հրեշտակական վարուցն ի վերջին թշուառութիւնս անկան, վասն զի ոչ իրաւախտի մատակարար գտան ի մէջ հոգւոյն եւ մարմնոյն:

¹ S > ինձ

² Ղուկ. ԺԸ 2-5

Իսկ ոմանք «ոտխս» զսատանայ ասեն՝ ըստ առաքելոյ թէ՛ «Ռ-տխսն ձեր իբրեւ զառիժ գոչէ» (Ա Պետ. Ե 8), եւ «ճանապարհ» զկեն-
ցադս զայս անուանեն: Արդ՝ հրամայէ տալ զհաշիւն վաղագոյն՝
մինչդեռ իցենք յաշխարհս յայս, ոչ տալ թոյլ ի նորայոցն առ մեզ
երեւել, եւ թէ գտցի՝ զայն խոստովանութեամբ առ ինքն ժայթքել եւ
զգործս բարիս երկնաւոր Դատաւորին առաջի արձանացուցանել,
զի յորժամ ելանիցենք աստի, ոչ լինիցիմք պարտական նմա՝ չար
կամաց նորա հետեւօղ եղեալ: Ապա թէ այսպէս ոչ պատահիցի,
նա, որ այժմ մտերիմ ձեւանայ, յայնժամ ի տեղի դատախազի
արձանանայ՝ թէ ոչ յիմ պատրանացն, այլ իւրով յօժարութեամբ
չարին սպասաւորեաց: Իսկ Դատաւորն հրամայէ հրեշտակաց,
գորս «գահիճս» ասաց, եւ նորա արկանիցեն ի «բանդ» արտաքին
խաւարին, ուր լալ աչացն է եւ կրճտել ատամանց: Եւ ոչ ելանիցես
անտի, ասէ, մինչեւ հատուցես զյետին՝ ոչ միայն զբանիցն, այլեւ
զխորհրդոցն տուգանս, իսկ «մինչ»-ն ոչ սահմանական է, այլ ան-
նեզրական:

Լուարուք, զի ասացաւ՝ մի՛ շնար (Ե 27):

Բայց Ես ասեմ ձեզ, թէ ամենայն, որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ
նմա, անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում (Ե 28):

Ի բնածին ախտիցս մերոցս զվարդապետութիւնն առնէ՝ ի
ցասմանէն եւ ի ցանկութենէն: Եւ զբարկութիւնն, որ ցասմանն էր
անհրաւորին, խափանեաց, եւ զմասունս նորա, որ բանի թշնա-
մանս առնէր ընկերին եւ կամ սրտի խէթ պահէր ընդ հոմացեղին:
Եւ այժմ զցանկութիւնն նահանջէ, որ ուժգնագոյն է քան զբարկու-
թիւնն, քանզի եւ նորա՛, որ ի լերինս միայնանան, ոչ են առանց
ցանկութեան: Բայց դու տե՛ս զյարմարութիւն բանիս, զի ոչ ասաց
թէ՛ «որ հայի ի կին, շնացաւ», զի այս անկար է զնկատումն երե-
սացն արգելոյ, այլ յաւել եւ զ«ցանկութեամբ»-ն, որպէս անդ ոչ զ-
բարկանալն, այլ զ«տարապարտուց»-ն, քանզի հայելն բնական
է, իսկ զննել զկերպարանս տեսելոյն ի սատանայէ է եւ ի մեր չար
յօժարութենէն, որպէս զի այնու զմիտսն յապուշ կրթիցէ եւ գոր-
ծոյն այնուհետեւ զսկիզբն առնիցէ: Եւ զի որպէս ասաց՝ «ոչ եկի
լուծանել զՕրէնս, այլ լնուլ», քանզի ունէր զայս Օրէնքն զընալն
խափանել, իսկ զխորհրդոյն ցանկութիւն ոչ զպեաց՝ թերի գոլով,
վասն որոյ լնուլ զպական՝ Տէրն աղբիւր շնութեան զսրտին ցան-
կութիւնն անուանէ եւ ասէ թէ՛ «շնացաւ անդէն ի սրտի իւրում»: Եւ

յիրաւի՝ քանզի որ ցանկութեամբ հայեցաւ ի կին, իսկոյն մտօքն¹ շաղաշարեցաւ ընդ նմա՝ ըստ մարգարէին թէ՝ «Երդուայ ես սրտի նոցա շնացելոյ եւ աչաց պոռնկեցելոց²» (հմմտ. Եզեկ. 2 9): Եւ զգործն ժամանակն եւ տեղին խափանէ, եւ թէ պատահի ժամանակի եւ տեղոյ, եւ զայն եւս անյապաղ կատարէ, որով ցուցանէ, թէ ոչ միայն գործն, այլեւ յօժարութիւնն է ընդ դատաստանաւ եւ յարքայութենէ ժառանգութեանն³ տարագիր առնէ իբր զշնացօղս: Բանզի զայս գիտէր արդարն Յոք, զի ամենայն օր պատարագ մատուցանէր. «Գուցէ որդիքն իմ,- ասէր,- իմացան ի միտս իրեանց անզգամութիւն ինչ զԱստուծոյ» (հմմտ. Յոք Ա 5). զրէ եւ Սողոմոն⁴ թէ՝ «Խորհրդոց ամբարշտաց հարց եւ փորձ լիցի» (Իմաստ. Ա 9): Բայց թէ ընդէ՞ր շնացողին դատաստան ոչ կարգէ որպէս բարկացողին՝ կամ թէ յայտնի՞ էր ի հինն շնացելոյն պատուհաս, եւ⁵ կամ թէ զկնի՞ խրատէ ի բաց ընկենուլ, իսկ թէ ոչ հատանիցէ, գեհենին ցուցանէ արժանատր:

Եթէ ակն քո աջ զայթազեցուցանէ զքեզ, խլեա՛ զնա եւ ընկեա՛ ի քէն. զի լաւ է քեզ, եթէ մի յանդամոց քոց կորիցէ եւ մի՛ ամենայն մարմինդ քո անկանիցի ի գեհեն (Ե 29):

Եւ եթէ աջ ձեռն քո զայթազեցուցանէ զքեզ, հա՛տ զնա եւ ընկեա՛ ի քէն. զի լաւ է քեզ, եթէ մի յանդամոց քոց կորիցէ եւ մի՛ ամենայն մարմինդ քո անկանիցի ի գեհեն (Ե 30):

Ոմանք ի կարգ քանիս հայելով՝ յաղագս մարմնական անդամոց կարծեցին զասացեալս. քանզի ասաց նախ, թէ որ հայի ցանկութեամբ, շնացող է, եւ այժմ՝ թէ ակն աջ զայթազեցուցանէ զքեզ, հա՛ն⁶ զնա եւ ընկեա՛ ի քէն, որպէս արար սրբուհին Վարդոց⁷, յոր հարեալ երիտասարդ ոմն ցանկութեամբ ընդ աչացն գե-

¹ Զ > մտօքն

² ՏԶ պոռնկեցելոյ

³ Զ ժառանգութենէ

⁴ ՏԶ Սաղօմօն (այսպէս է և այլուր. Սաղօմօն / Սողօմօն / Սաղոմոն / Սողոմօն / Սողովմովն դարձրել ենք Սողոմոն):

⁵ Զ > եւ

⁶ Զ հատ

⁷ Վարդոցն առավելաբար հայտնի է «Վարդենի» անվամբ: «Հայսմավորքները» նրա ապրած ժամանակաշրջանը չեն նշում (հիշատակում են մայ. 5-ին), իսկ ըստ Մ. Չամչյանի՝ ապրել է 15-րդ դարում: Սակայն Մատթեոսի Ավետարանի սույն մեկնության մեջ սրբուհու հիշատակությունը ցույց է տալիս, որ նա կարող էր ամենաուշը 13-14-րդ դարերում ապրած լինել: (Այս մասին տես Մ. Չամչեան, Պատմութիւն հայոց, հտ. Գ, Վնտ. 1786, էջ 443, ինչպէս նաև Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Բ, Պէրոս 1960, կ. 1423, էջ 2059):

դեցկութիւն, եւ հար կկոցայի ոստայնին եւ փորեաց զաչս իւր եւ զգաստացոյց այնու զերիտասարդն մոլեալ: Բայց մեք ի նրբութիւն իմաստիցս հայելով ո՛չ վասն մարմնական անդամոց կարծեմք, զորս յարդարեաց Աստուած ի պէտս իմաստասիրութեան եւ վայելչութեան հնգից սեռականագոյն սեռից, եւ են ծառայք իշխանականին, յոր կողմն եւ վարէ գոսսա. զի թէ վասն անդամոց ինչ էր, ո՛չ միայն զաջն, այլեւ զձախն յիշէր, նաեւ այն, զի թէպէտեւ աստ հատանէր, ի վերստին նորոգմանն առնլոց է եւ ո՛չ կադ¹ ի կեանս մտանելոց², որպէս ասացն: Այլ ճշմարտապէս վասն չարութեանն, որ յանդամս զօրանայ, է բանս, վասն որոյ ըստ երկու յեղանակս իմանամք զասացեալս Տեառն:

Նախ՝ զի ասաց, թէ որ ձգի ցանկութեամբ, շնացող է, այժմ զապաշխարութիւնն առ ընթեր դնէ, թէ յորժամ զայթագղեցուցանէ զքեզ ակնդ յարատ հայեցուածով, եւ կամ ունկնդ՝ չարախօսութեամբ, եւ բերանդ՝ ստութեամբ, եւ ձեռքդ՝ զողութեամբ կամ սպանմամբ, հատ ընկեա՛ զնա ի քէն. ո՛չ զմարմինդ, այլ զգործն, զոր մարմնովդ կատարեցեր՝ ըստ այնմ. «Պատառեցէք զսիրտս եւ մի՛ զհանդերձս» (Յովկէ Բ 13), վասն զի լաւ է քեզ առանց գործոցն անարատ մարմնով ի կեանս մտանել, քան յօրանալ զգայութեամբ առ ժամանակ մի զկնի հեշտալեացն եւ զեհենին լինել ժառանգորդ, որպէս եհատ Պետրոս ո՛չ զանդամս, այլ զգործս անդամոյն՝ ասելով. «Մեք թողաք զամենայն եւ եկաք զկնի Քո» (Մատթ. ԺԹ 27), առ որ ասաց թէ՛ «զկեանսն ժառանգեսցես» (հմմտ. Մատթ. ԺԹ 29):

Եւ դարձեալ՝ թէ որ պատճառ լիցի քեզ մեղանչելոյ, եւ նա յընտանեաց եւ ի սիրելեաց իցէ եւ կամ ի գոյաւոր ընչից եւ այնպիսի իցէ սիրելի իբրեւ զակն աջոյ եւ կամ պատճառ աջողման իբրեւ զձեռն աջոյ, որպիսի էր մեծատանն՝ փարթամութիւնն իւր³, եւ Հերովդէի՝ Հերովդիադա⁴ ընտանի իւր, հա՛տ, ասէ, եւ ընկեա՛ ի քէն, զի լաւ է քեզ առանց սիրելեաց եւ ընչից քոց՝ կենաց լինել ժառանգորդ, քան թէ զկամս նորա կատարել եւ տանջանաց նորին հաղորդել, որպէս արար Ադամ, որ ոչ եհատ զսէրն Եւայի եւ զերծաւ ի մահաբեր թիւնից անիծից⁵, այլ զկնի նորա ընթացաւ եւ այսքան

¹ Զ կալ

² ՏՁ մտանելոյ

³ Մատթ. ԺԹ 16-24

⁴ ՏՁ Գերովի՝ Գերովիադայ (այսպէս է և այլուր. Գերով / Գերովդ դարձրել ենք Գերովդ):

⁵ Զ արկածից

մահուցս եղև մեզ առիթ: Եւ ասելովն թէ «հատ եւ ընկեա՛ զնա ի քէն»՝ զհեռացուցանելն ցուցանէ եւ զի մի՛ դարձեալ յօղեսցի ի քեզ՝ նշանակէ, քանզի հատանելովն զգայթագղեցուցիչն ի քէն՝ երկու իրս պիտանիս գործես՝ զքեզ ի ժանտագործ հարուածոց նորս զերծուցանես եւ զնա ի ծանրութենէ՛ տանջանացն թեթեացուցանես, եւս եւ հեռանալովն ի նմանէ՛ եւ զնա՛ եւս յուղղութիւն կոչես¹:

Բայց ասիցէ որ՝ եթէ այսպէս է, ապա ընդէ՞ր յանդամս մարմնոյ օրինակեաց զբանն: Առ որս զայս ասացուք. թէ կամ գործք աղտեղիք ի ձեռն անդամոցս կատարեալ, եւ յերկարեալ սովորութիւնն՝ բնութիւն ի մեզ հաստատի, եւ կամ թէ որպէս զոյգ աչօք զգոյնս տեսանենք եւ զոյգ ոտիւք զճանապարհն անսխալ առնենք եւ երկու ձեռօք զգործս գործենք, եւ պակասելն ի սոցանէ ի տրտմութիւնս զմեզ ընկղմէ, այսպէս փառք եւ մեծութիւն գոյիցս եւ բարեկամաց մտերմութիւն, յարմարե[ա]լ ի բնութիւնս մեր, գեղեցիկ թուի եւ դժուար առ ի հատանելն, վասն որոյ Տէրն ո՛չ զհատանելն ի սիրելեացն արժանահաւատ քարոզէ, այլ բաղդատե[ա]լ՝ զմիոյն կորուստն քան զերկուցն յաւագոյն ընտրէ:

Ապաքէն ասացաւ, թէ որ արձակէ զկին իւր, տացէ նմա զարձակմանն (Ե 31):

Աստուած ի սկզբանէ արու եւ էգ արար զմարդիկ, եւ միում առն մի ամուսին սահմանեաց՝ պաշտել զմիմեանս, որպէս զի ի ձեռն նոցա մահկանացուս տեսցէ բնութիւն: Իսկ ազգն հրէից ժպիրիք էին եւ յստասիրտք եւ ի պատճառս ատելութեան՝ զկանայս սպանանէին: Արդ՝ զի մի՛ այս լիցի, փոքր այս յանցանօք արձակել հրամայելով, որպէս ունի Երկրորդումն Օրէնք, զմեծն խափանեաց, այսինքն զպանութիւնն. զի թէ զատելի կինն հարկաւ ի տունն հրամայէր ունել, ե՞րբ յնայէր յարիւն կնոջն՝ որ գորդիս եւ զմարգարէս խողխողէին, վասն այտրիկ հրաման ետ Օրէնքն արձակել, բայց ո՛չ առանց թղթի ապահարզանի, զոր «արձակման» ասէ: Է՞ր վասն. զի այս կնոջն ի մխիթարութիւն էր, եւ մի՛ լիցի իշխանութիւն ի նոյն այրն դառնալ, որ արհամարհանօք զիր ետ եւ արձակեաց զնա: Եւ դարձեալ՝ եթէ զայս ոչ էր հրամայեալ, անխտրաբար զմիմեանց կանայս յափշտակէին, եւ յայտնապէս շնութիւնք գործէին, եւ զի մի՛ այս լիցի՝ գրովն կնքեաց: Եւ

¹ Զ կոչեսցես

կամ թէ ասելն «տացէ նմա զարձակմանն»՝ զբաժինս կնոջն յայտ առնէ եւ զտուգանս անարգութեանն, որպէս ետ Արիմելէք Սարայի կնոջն Աբրահամու՝ հազար սատեր ի պատիւ երեսաց նորա, վասն զի անարգեաց զնա¹, որպէս՝ թէ ի կինն ոչ խնայեցէ հանել, յինչսն խնայեցէ եւ ի տուն իւր ունիցի զկինն եւ մի՛ ի սակաւ պատճառս ատելութեանն արձակեցէ զամուսին իւր:

Իսկ առ ի միտս՝ միտքն, օրինակ իմն իբր սերմանօղ ի զգայութեանս, «այր» կոչի, իսկ զգայութիւնն, վասն ընդունակ լինելոյն, «կին» անուանի: Արդ՝ որ արձակէ զմարմինն իւր մահուամբ իւրովի զնալով եւ ինքնամատն լինելով, դատ զսպանողացն տացէ ասէ, նոյնպէս եւ առաջնորդ, որ ի գլուխ ժողովրդեան կարգեալ իցէ եւ արհամարհէ զփրկութիւն նոցա, ընդ սպանօղսն կարգեցի՝ ըստ այնմ. «Զարիւն նոցա ի ձեռաց քոց խնդրեցից» (Եզեկ. 9: 18):

Դարձեալ լսի եւ այսպէս թէ՝ «Որ արձակէ զկին իւր առանց բանի պտռնկութեան». պտռնիկ կոչէ՝ որ երկու ունին կանայս, քանզի այլ է շնութիւն, եւ այլ՝ պտռնկութիւն. պտռնկութիւն է արձակ ընդ արձակ կամ կապեալ ընդ արձակ, իսկ շնութիւն է կապեալ ընդ² կապեալ կամ արձակ ընդ կապեալ: Արդ՝ թէ որ կապեալ է ի կին եւ առնուցու այլ, արժան է, ասէ, արձակել, իսկ թէ որ մի ունիցի կին եւ արձակէ զայն, նա՛ իսկ է պատճառ նորա շնութեանն, վասն զի այս իսկ է շնութիւնն, որպէս ասացաք, ընդ կապեալն խատնակել: Արդ՝ որ ընդ քեզ կապեցաւ, եւ զայն արձակմամբն այլ որ առնու, շնացօղ է, որպէս դու՝ արձակելովն: Կամ ասէ թէ՝ որ զարձակմանն հրաման տայ դատաւոր գոլով, եւ նա՛ շնացօղ է, վասն զի զօրէնսն պատառեաց, եւ ոչ միայն շնացօղ, այլեւ սպանօղ, որպէս ասէ Սիրաքն թէ՝ «Սպանօղ է ընկերի իւրում, որ բաժանէ զկինն նորա» (հմմտ. Սիրաք 1: 9-26):

Բայց Ես ասեմ ձեզ, եթէ ամենայն, որ արձակէ զկին իւր առանց բանի պտռնկութեան, նա՛ տայ նմա շնալ, եւ որ զարձակեալն առնէ, շնայ (Ե 32):

Հեզոց եւ նորոց աշակերտաց՝ բնաւին փակէ զարձակմանն բան, զի մի՛ որ յաղագս ատելութեան իշխեսցէ հանել արտաքս զկին իւր եւ այլ փոխանակ նորա ածել ի տուն, զի այն վասն խստասրտութեան նոցա զրեցաւ, իսկ այժմ՝ զոր Աստուած զուգեաց, ոչ է կար մարդոյ մեկնել, քան թէ Նա, որ կապեացն եւ դար-

¹ Ծննդ. Ի

² Տ առ

ձեռք լուծանել մահուամբ: Վասն այսորիկ ասէ, թէ որ արձակէ զկին իւր, նա՛ տայ նմա շնայ, զի յամենայն կողմանց խնու զճանապարհ արձակմանն, զի այրն թէպէտ այլ կին ոչ առնուցու, սակայն պատժապարտ է, զի շնայ ետ կնոջն ի հանելն: Իսկ թէ այլ որ առնէ զհանեալ կինն՝ զանձն անվտանգ կարծեցեալ, եւ զնա՛ շնացօղ անուանէ, զի ոչ նորա է կինն, այլ որ եհանն: Վասն որոյ առաջին բանին զայրն զգաստացուցանէ եւ երկրորդին՝ զկինն, զի զհտելով կնոջն, թէ ոչ գոյ հնար այլում առն լինել՝ եւ ի հնազանդութիւն առնն կացցէ, եւ այրն, զի մի՛ պատժապարտ կոչեցի ի հանելն, առ կին իւր սիրով զնայցէ: Իսկ ասելովն թէ՝ «առանց բանի պոռնկութեան», յայտ առնէ զպատճառ արձակելոյն եւ չարձակելոյն. զի թէ այս ոչ գուցէ ի միջի, անհնարին է տալ արձակումն: Իսկ թէ լինիցի վկայութեամբ, արձակել արժան է. ընդէ՞ր: Նախ՝ զի ինքն զինքն ի սիրոյ առն իւրոյ բաժանեաց եւ գործով հոմանիս իւր գուգեաց, վասն որոյ եւ բանի եւս բաժանել ի դէպ է, զի մի՛ որդիքն շնութեան զհայրենիս հարազատ որդուցն ժառանգեցեն: Եւ երկրորդ՝ զի մի՛ նախանձեալ առն՝ վրէժս առնէ ի կնոջէն եւ ի սիդեխէն, զի «բուռն է նախանձ առնակնոջ եւ ոչ հանդուրժէ յաւուր բարկութեան», - ասաց Իմաստունն (հմմտ. Առակ. 2 34): Տես եւ զայս, թէ յոպէս միաբանի այս ընդ առաջնոյն, զի որ ոչ հայի յարատ՝ ոչ շնայ, եւ որ ոչ շնայ՝ ոչ արձակէ զկին իւր լինել առն այլում, եւ թէ արձակէ՝ ոչ հրամայէ այլում լինել որչափ կենդանի է կինն, որպէս հրամայէ առաքեալ՝:

Դարձեալ լուարուք, զի ասացաւ առաջնոցն. «Մի՛ երդնուցու սուտ, բայց հատուցես Տեառն զերդմունս քո» (Ե 33):

Ունի տեղիս քննութիւն, թէ ընդէ՞ր ոչ նախ զգողութենէն ճառէ, այլ թողեալ զայն ի բաց՝ ի սուտ երդումն չուէ: Քանզի ասացաք նախ, թէ ոչ զմիանգամ ասացեալսն Օրինօքն վարդապետէ, այլ զպակասն նորին լնու խնդրէ, եւ դարձեալ՝ զի յորժամ չգողանայ, հարկ է թէ եւ երդնո՛ւ իսկ ոչ, եւ որ երդնու ոչ, նա եւ ոչ բնաւ ստե՛ղ զհտիցէ: Բայց զի՞նչ այն թէ՝ «Հատուցես Տեառն զերդմունս քո». այսինքն է՝ արդա՛ր երդնուցու եւ կամ թէ՝ մի՛ յօտարութիւն եւ ի սնոտիսն երդնուցու, որպէս ասացն թէ՝ «Մի՛ առնուցու զանուն Տեառն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց» (Ելք Ի 7), այլ ի Տէր Աս-

¹ Բռնմ. է 3

տուած երկնի եւ Աստուած երկրի, կամ՝ Տեառն նուիրեա զերդումն, որ եւ անզեղ ի նոյն՝ ըստ Դաւթայ¹. այս է՝ հատո Նմա՝ եւ ո՛չ քեզ, որում լծակից է ասելն².

Այլ Ես ասեմ ձեզ ամենեւին մի երդնուլ. մի՛ յերկինս, զի աթոռ է Աստուծոյ (Ե 34),

եւ մի՛ յերկիր, զի պատուանդան է ոտից Նորա, եւ մի՛ յԵրուսաղեմ, զի քաղաք է մեծի Արքայի (Ե 35),

եւ³ մի՛ ի գլուխ քո երդնուցուս, զի ո՛չ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ (Ե 36):

Եռակի իմաստս աւանդէ քննողաց բանիս՝ հրաժարեցուց[ան]ելովն յերդմանէ տարերացս: Նախ՝ զի սովորութիւն ունէին հրէայքն յայսպիսի իրս երդումն հաստատել եւ զայն ո՛չ ինչ գրել, որպէս ի կատարած Աւետարանիս յայտ առնէ՝ ասելով. «Կեղծաւորք, ասէք, թէ որ երդնու ի տաճարն, չէ՛ ինչ, բայց որ երդնու յսկիւն, որ ի տաճարին է, արժան է: Արդ՝ զի՞նչ մեծ է՝ ոսկի՞ն, թէ տաճարն, որ սրբէ զոսկիւն: Եւ որ երդնու ի սեղանն, չէ՛ ինչ, բայց որ երդնու ի պատարագն՝ որ ի վերայ նորա, արժան է: Յիմարք,- ասէ,- զի՞նչ մեծ է՝ պատարագն, եթէ սեղանն, որ սրբէ զպատարագն» (հմմտ. Մատթ. ԻԳ 16-19): Արդ՝ զի զայսպիսի սովորութիւն կարճեցէ ի նոցանէ, ասէ բնաւին մի երդնուլ՝ «մի՛ յերկինս, զի աթոռ է Աստուծոյ», քանզի այսպէս ասաց մարգարէն. «Երկինք աթոռ Իմ են» (Ես. ԿԶ 1), եւ որ երդնու յերկինս, երդնու յԱյն, որ նստի ի վերայ երկնից. նմանապէս «մի՛ յերկիր», քանզի զայս ասաց, թէ երկիրս պատուանդան է ոտից Նորա, եւ որ երդնու յերկիր՝ ընդ նմին եւ զԱստուած ի ներքս յերդումն գրաւէ: Այսպէս եւ՝ որ յԵրուսաղեմ, զի քաղաք է Աստուծոյ, մարգարէն ասաց թէ՛ «Վասն քո խօսեցան փառաւորեալ բանք, քաղաք Աստուծոյ» (հմմտ. Մաթթ. ԶԶ 3): Արդ՝ որ զերդումն ի քաղաքն դնէ եւ զՏէր քաղաքին զկնի յիշէ, եւ մի՛ ի գլուխ քո, ասէ, երդնուցուս, քանզի եւ գլխոյդ տէր ոչ ես, այնչափ՝ մինչ զի մազ մի չկարես ստեղծանել, այլեւ ոչ զստեղծելոյն զգոյնն փոխել, քանզի եւ զերդումն գլխոյդ ի Տէր վերացուցանես: Արդ՝ զի մի՛ սովորեալ քո յերդմնահարութիւն՝ զԱրարիչն ասացելոցս ի ներքս փակես, եւ այն՝ ստութեամբ, վասն որոյ մեծ պղծա-

¹ Սաղմ. 6Թ 4

² Զ ստելն

³ Զ > ԵԼ

գործութիւն է ամենայն ուրեք ի գռեհս եւ ի փողոցս եւ ի վերայ անտեղի եւ անգէտ իրաց՝ զսուրբ անունն՝ հայհոյել կամ ուրանալ եւ կամ վկայ կոչել:

Եւ երկրորդ՝ գրէ առաքեալ թէ՝ «Որ երդնու ապաքէն ի վերագոյնն քան զինքն, զերդումն հաստատէ» (հմմտ. Եբր. 2 16), իսկ ասացեալ տարերքս ոչ միայն ոչ են վեհագոյն քան զմարդ, այլեւ սպասաւորք եւ ծառայք ի Տեառնէ կարգեալ, քանզի զամենայն վասն մարդոյն տեսանենք յարմարեալ՝ ըստ այնմ թէ՝ «Եւ ինքեանք իսկ արարածք ընդունայնութեան հնազանդեցան, ոչ իւրեանց կամաւ, այլ վասն Այնորիկ, որ հնազանդեցոյցն յուսով. քանզի եւ սոքա հեծեն եւ երկնեն՝ ազատութեան մերոյ ակնկալեալ» (հմմտ. Հռոմ. Ը 20-22). արդ՝ ի նուագագոյնսն երդնուլ կարծիք ստութեան է:

Եւ երրորդ՝ երդումն է, թէ որ սահմանաւ ասացէ քան հաւատարմացուցանող զճշմարտութիւնն, արդ՝ կամի զքեզ այնպիսի ճշմարտախօս լինել, զի քան քո ի տեղի երդմանն կարգեսցի, եւ ոչ պէտք ինչ լինիցի երդմամբ հաւանեցուցանել: Բայց ոմանց թուեցաւ զովել զարարածս՝ ոչ տալ թոյլ երդնուլ ի սոսա, այլ զի մի՛ զայս կարծեսցես, վասն այտորիկ ոչ ասաց թէ՛ բարձր են երկինք, եւ կամ՝ յարգոյ է երկիր, եւ պատուական՝ Երուսաղէմ, եւ փառատոր է զլուխ քո, այլ թէ՛ մինն աթոռ է, եւ միսն՝ պատուանդան, եւ Երուսաղէմ՝ քաղաք Աստուծոյ, եւ զլուխ քո՝ ստեղծուած Նորին, զի զմիտս ամենայն ումեք առ Տէր մղիցէ:

Իսկ ասելն թէ՛ «եւ մի՛ ի զլուխ քո երդնուցու», ա՛յլ տեսութիւն ունիմ յայտնել. զի գրէ Պօղոս թէ՛ «Առն ամենայնի զլուխ Քրիստոս է» (Ա Կոր. ԺԱ 3), եւ Մողոմոն թէ՛ «Իմաստնոյն աչք ի զլուխ իւր» (Ժող. Բ 14): Արդ՝ զլուխ ամենայնի Տէրն է, զոր ետես Յակոբ² ի տեսիլ սանդղոցն, վասն որոյ ասէ մի՛ զճշմարտութիւնն ընդ ստութեամբ ձգել, զորոյ խորհուրդս, զոր «հեր» ասէ, ոչ կարես սպիտակացուցանել կամ թխաստիպ առնել, այս է՝ զճաճկեալն ոչ կարես բանալ, զի այն՝ Աստուծոյ է, որպէս ասաց Մոսէս³, եւ զբացեալսն ոչ կարես ամփոփել՝ ըստ այնմ. «Փակէ, եւ ոչ որ է, որ բանայ, բանայ, եւ ոչ որ է, որ փակէ» (հմմտ. Յայտ. 9 7): Այլ խնդիր տարակուսանաց է ի տեղիս, թէ ընդէ՞ր հրաժեշտ տայ բանիս բնաւին մի՛ երդնուլ եւ Ինքն ի բազում տեղիս երդուաւ՝ ըստ այնմ. «Յանձն Իմ երդուայ,-

¹ Տ անուն

² ՏԶ Յակոբ (այսպէս է և այլուր):

³ Բ Օր. ԻԹ 29

ասէ՛ Տէր» (Երեմ. ԽԹ 13), եւ թէ՛ «Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ոչ ստեաց նմա»¹ (Սաղմ. ԾԼԱ 11), եւ դարձեալ թէ՛ «Երդուաւ Տէր եւ ոչ եւս գոջասցի» (Սաղմ. ԾԹ 4): Արդ՝ թէ ընդէ՛ր հրաժարեցուցանէ յերդմանէ՛ ասացաք ի վերոյ. զի մի՛ մարդիկ սովորեալ յերդումն՝ ի ստութիւն անկանհիցին եւ ի սպառնալիս գերանդոյն մատնեսցին² :

Իսկ զայն, թէ ընդէ՛ր Ինքն երդուաւ, ասելի է: Նախ՝ ոչ եթէ երդուաւ Աստուած, այլ զանստտ խոստումն Իւր երդումն անուանեաց, որպէս մեր յորժամ խոստանամք ինչ ումեք, զխոստումն երդմամբ կնքեմք, զի լսողն հաւատասցէ, թէ ճշմարիտ կատարելոց է գործով գոր ասաց բանի: Այսպէս եւ Աստուած անվրէպ առնելոց էր զխոստումն Աբրահամու եւ Դաւթի, բանն «երդումն» անուանեաց: Եւ երկրորդ՝ բազում ինչ է, գոր առնէ Աստուած եւ մարդկան ոչ է ձեռնարկելի, որպէս ծովու սահման եղ ոչ անցանել եւ արեգական՝ ոչ դադարել, եւ կուսի՛ ոչ ծնանել, գոր թէ հնարին մարդիկ, ոչ կարեն առնել, բայց Ինքն զօրէնս բնութեանն քակեաց, որպէս զծովուն պատառելմ³ եւ զարեգականն առ Յեսուա եւ Եզեկիայի զկայումն եւ զյետս նահանջումն⁴, եւ զի՛ կուսէ ծնանիւն, զի մի՛ բնութեան Օրինադիրն ընդ օրինօք բնութեան անկանհիցի: Նոյնպէս եւ երդումն մարդկան ոչ է անկ, քանզի ստութիւն խառնեալ է ի բանս մեր, իսկ Աստուծոյն «ընտիր» է՝ ըստ Երգողին⁵, եւ առանց ստութեան, վասն որոյ Նմա՛ միայն է սեփհական երդնուլն, որ անստտ է յամենայնի եւ զմեզ Իւր հանգունատիպս կամի առնել: Որպէս ասէ.

Այլ եղիցի ձեր բան⁶, այոն՝ այո, եւ ոչն՝ ոչ, զի աւելին քան զայն ի չարէն է (Ե 37):

Այսինքն՝ զհայն՝ հա, եւ զչէն՝ չէ: Դարձեալ՝ «այո» զճշմարիտն ասէ, որ է Աստուած եւ բարին, եւ «ոչ»՝ զսուտն, որ է սատանայ եւ ախտն: Արդ ասէ թէ⁷՝ զճշմարիտն ճշմարիտ ցոյց արդեամբք եւ բանի եւ զսուտն՝ սուտ, իսկ քան զայս աւելի ասել կամ ցուցանել, այսինքն՝ զբարին չար եւ զչարն՝ բարի, վայն է վճիռ՝ ըստ մարգա-

¹ S > նմա

² Մարկ. 7 29

³ Ելք ԺԴ 16-22

⁴ Յեսու Ժ 13, Ես. ԼԸ 8

⁵ Սաղմ. ԺԱ 7

⁶ ք > բան

⁷ ք > թէ

րեին¹, զի չարին է այս ներգործութիւն փոփոխել զգոյս՝ զլոյսն խաւար տալ կարծել եւ զխաւարն՝ լոյս: Եւ կամ՝ «աւելի» զերդումնն ասէ եւ ո՛չ, որպէս ոմանք կարծեցին, զսուտն երդնով: Եւ յիրաւի՝ զերդումն ի չարէն, ասէ, ի սատանայէ է, քանզի նորա են մեքենայք բանիւ զայթագղեցուցանել, որպէս եւ գործով. վասն այտորիկ խրատէ մի՛ միտ դնել չարին վարդապետութեան, որ յերդումն ձգէ եւ նովաւ՝ ի ստութիւն եւ այնու՝ ի դատապարտութիւն:

Լուարոք, զի ասացաւ. «Ակն ընդ ական, եւ ատամն ընդ ատաման» (Ե 38):

Այլ Ես ասեմ ձեզ մի՛ կալ հակառակ չարին (Ե 39):

Իստութեամբ գրեցաւ այս պատուիրան՝ ըստ առաքելոյ թէ՛ «Օրէնքն զբարկութիւն գործեն» (Հոմ. Դ 15), բայց ո՛չ զմիմեանց աչս փորել հրամայելով եւ կամ զատամունսն քակել. այլ զի թէ յընկերն ոչ խնայիցէ յաղագս վրիժուցն խնդրելոյ, զյանդգնութիւն գործոյն խափանէ, զի որպէս արին արեամբ քաւի, այսպէս եւ պակասութիւն անդամոց վնասեալ յունեքէ՝ անդամօք վճարի: Բայց զի ստուգութեամբ նախ դատէր, վասն այտորիկ ասացաւ այս, իսկ յորժամ կատարեցաւ ստուգութիւն Օրինացն տկարութեամբ մերովս մարմնով, որպէս ասէ առաքեալն², եկն եհաս ողորմութեանն օրէնս, որպէս եւ ասէ. «Այլ Ես ասեմ ձեզ մի՛ կալ հակառակ չարին»: Ո՛չ եղբօրն ասէ, այլ չարին, զի յայտ արասցէ, թէ նորա դրդելովն յանդգնի եղբայրն ի գործս անօրէնութեան, ուստի վարժեալ առաքեալ ասէ. «Մի՛ յաղթիր ի չարէն, այլ յաղթեա՛ բարեան չարին» (Հոմ. ԺԲ 21), քանզի չարացեալ ընկերն ստնանեաց քեզ, եւ դու յարուցեալ ի վերայ նորա՝ զփոխարէնն հատուցանես, հաւասար նորին եւ դո՛ւ չարացար. սպա թէ ներիցես, այնու եւ զնա՛ ի մեղմութիւն ածիցես: Իսկ թէ ասիցէ որ՝ չարին ոչ է արժան հակառակել, հակառակել պարտ է, սակայն այլով օրինակաւ՝ յաղագս ընկերին զանձն ի չարչարանս մատնել, որպէս Պօղոս զմարմինն ճնշէր եւ այնու զախոյեանն խոցոտէր, որ ո՛չ յանգոյս մարտնչէր, այլ զկարեւորագոյնսն վիրաւորէր: Ապա թէ վեր վիրի փոխարինես, այդ ո՛չ հակառակութիւն է չարին, այլ միաբանութիւն, զի զնա գրգռելով՝՝ զքեզ վիրաւորեաց, եւ զքեզ զայրացուցանելով՝ զնա

¹ Եւ. Ե 20

² Հոմ. Ը 3-4

³ Զ դրդուելով

տանջեաց եւ ինքն պանծալով ի մէջ երկոցունց՝ զանձն յաղթող քարոզեաց:

Այլ թէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո, դարձոն նմա¹ եւ զմի՛սն (Ե 39):

Չայս խրատ օգտութեան երկոցունց կողմանց աջողակ մատուցանէ. զի հարկանօղն յորժամ տեսանէ զապտակեալն յայնպիսի խոնարհութիւն կրթեալ, մինչ զի ո՛չ ինչ զթշնամանսն համարեալ՝ փութով ի զգաստութիւն զայցէ, թէպէտ քան զգազանս վայրենամիտ ոք իցէ, եւ ո՛չ երբէք ի միտոյն ապտակ միտիցէ, այլեւ առաջնովն եւս զանձն ըստգտանէ², իսկ ապտակեալն մի՛ ինչ ի հարկէ՝ համբերող կարծիցի, այլ զերկրորդն մատուցանելով՝ ժուժկալութիւն նորա կամատր ծանիցի, եւ ո՛չ յառաջին հարուածն ստրջացող երեւեսցի³: Այլ այսու ոչ միայն զապտակն, այլ զբոլոր թշնամանս առանց յխակալութեան ընդունել ուսուցանէ:

Իսկ առ ի միտս՝ «ծնօտ» է գործի բանի, եւ եթէ ոք տնտեսօրէն սպասատրիցէ բանիւ վարդապետութեան բազմաց, զի ժողովորդ շահիցի, եւ յումեքէ ի չարաց եղելոց եպերանս կրէ բանին՝ տգէտ եւ գեղջուկ զնա կոչելով իբր զՊօղոս⁴, մի՛ յետս վազեսցէ ի քարոզութենէն, այլ միսանգամ զվարդապետութիւն իւր գիտութեամբ հանդերձ յառաջ ածիցէ՝ վարուցն օժանդակութեամբ, որպէս պարծէր Պօղոս. «Թէպէտ տգէտ եմ բանիւ, այլ ո՛չ գիտութեամբ» (Բ Կոր. ԺԱ 6): Իսկ զի՞նչ յայտնէ «աջ»-ն առ ճառն. զանչափ հնազանդութիւնն դնէ, զի թէ աջոյն համբերեաց, առաւել եւս՝ ձախտն: Բայց այլաբանաբար պճնել զբանս եւ ճոռոմ արուեստի խօսել «աջ» թուի ախմարացն, վասն որոյ ասաց՝ մատոն նմա ո՛չ զձախն, այլ «զմի՛սն», քանզի ճշմարտապէս «աջ»՝ գիտութիւն մտացն է, որպէս Պօղոսին, եւ ո՛չ պերճութիւն բանին, որպէս Արիստոտելին:

Եւ որ կամիցի ոք դատել եւ առնուլ զշապիկս քո, թող ի նա եւ զբաճկո՛ն քո (Ե 40):

Կամի զմեզ անոխակալս եւ կատարեալս լինել, ո՛չ միայն ի հարկանել, այլեւ յընչիցն եւ ի հանդերձիցն զերծանել: Բայց տես, զի ո՛չ որ ոք պատահէ տաճիկ՝ ասէ, այլ որ դատէ եւ յատեան զքեզ

¹ Զ > նմա

² Տ ստոգտանէ (այսպէս է և այլուր. մերթ ստոգտ, մերթ ըստոգտ):

³ Զ երեւիցի

⁴ Գործք Դ 13

մղիցէ եւ աշխատութիւնս հասուցանէ: Իսկ տեսակ բանիս թուի ինձ սխալ գոլ ի թարգմանչաց կամ ի գրչաց, քանզի բաճկոն վերինն է եւ շապիկ]ք՝ ներքինն, որպէս ասէ Ղուկաս թէ՝ «Եւ որ հանէ ի քէն զբաճկոն քո, մի՛ արգելուր ի նմանէ եւ զշապիկս» (Ղուկ. 2 29): Կամ թէ՛ այսու գառաւել համբերութիւն ուսուցանէ. թէ ոք ոչ հաւանի վերնոյն, այլ հակառակելոյ աղագաւ զներքինն հանէ, եւ այնմ եւս համբերեալ: Կամ թէ՛ պայծառագոյն ներքինն պատահէ, վասն այն տազնապէ: Այլ որք վիճաբար ընդդէմ գայցեն, թէ զիա՞րդ, մի՞ թէ մե՞րկ պարտիմք շրջել, առ նոսա գայս ասասցուք: Նախ՝ զի թէ կամօք այսպիսի օրինացս հնազանդէաք, ո՛չ բնաւին մերկանայաք, զի արհաւիրք ազոմանն երկիւղի անկանէր ի վերայ բռնաւորին ի հրամանաց Տեառն պահպանութիւնն, եւ ո՛չ մերձենայր ի մեզ, թո՞ղ թէ մերկացուցանել իշխէր, եւ կամ թէ բաճկոնաւն բաւականանայր: Եւ երկրորդ՝ թէպէտ գազանաբարոյ ոք պատահէր, զի այնչափ յանդգնէր, սակայն բազումք գտանէին, որ գայսպիսի զգօնացեալն ոչ միայն հանդերձիւ, այլեւ մարմնովք իւրեանց պարուրէին, որպէս Յովսէփ եւ Նիկողիմոս զՏեառն մարմինն եւ հաւատացեալքն զվկայիցն ծածկէին: Եւ երրորդ՝ թէ եւ մերկ եւս հանդիպի շրջել, եւ ոչ այն գարշանք ինչ, զի Ադամ մերկ շրջէր եւ ոչ ամաչէր, եւ Եսայի՛՝ մերկ եւ բոկ², եւ Մարկոս սակաւ ինչ կտաւօք սփածանէր, զոր յընթացն էթող եւ փախեաւ մերկ³, եւ Պօղոս պարծի թէ՛ «Մերկ շրջէաք» (հմմտ Բ Կոր. ԺԱ 27), զի այս գովութեան է պատճառ եւ ո՛չ պարսաւանաց, որպէս թէ բնաւին գերկրաւորս նշկահեալ եւ երկնայնոյն կենաց տենչացեալ, յորում ոչ են պէտք ծածկութից եւ հայթայթանաց արուեստից:

Իսկ առ ի միտս՝ երկու են վարք՝ հոգեկանք եւ մարմնականք, եւ եղանակաւ իմն ծածկեն զմեզ, որպէս հանդերձ՝ զմարմինս: Արդ՝ ասէ՛ թէ ոք հանէ ի քէն զվերինը, զոր «բաճկոն» ասէ, այս է՝ սկսանի գայթազել յերեւելի վարս կենաց քոց, որպէս Հեղի յաղօթսն Աննայի, զի ետես զնա շառագունեալ, կարծեաց, թէ արբեալ է, թող ի նա եւ զներքին շապիկս, այսինքն՝ բա՛ց զծածկեալ առաքինութիւնս քո եւ յայտնեա՛ նմա, զի գայթազեալն շինեսցի դարձեալ, որպէս յայտնեաց Աննա թէ՛ «Ձերմն սիրովն Աստուծոյ եմ արբեալ եւ վշտօք զգածեալ եւ ո՛չ զինեաւ, որպէս կարծես», զոր

¹ Տ Եսայիաս

² Ես. Ի 2

³ Մարկ. ԺԴ 51

իմացեալ Հեղի՝ օրհնեաց, որ նախ բամբասեաց¹: Բայց ի վերայ բանիս յարմարութեան՝ այսպէս է կարծելի գայլաբանութիւնս, քանզի ասէ. «Որ կամիցի առնուլ զշապիկս, թող ի նա եւ զբաճկոն», այսինքն՝ թէ որ զներքին խորհուրդս յափշտակել ջանայցէ եւ յուրացութիւն հաւատոյ եւ ի զագրութիւն անմաքուր գործոց² արկանիցէ, թող ի նա զարտաքին հանդերձս՝ զմարմնական ինչս եւ զփարթամութիւնս եւ զմարմինդ եւս, եւ զհոգիդ եւ զներքին ստացուածս քո անկապուտ պահեսցես:

Եւ³ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, երբ ընդ նմա եւ երկուս (Ե 41):

Բնաւին իսկ զայն ուսուցանէ, զի մի՛ տացուք պատճառս այնոցիկ, որ զպատճառսն կամիցին. ըստ առաքելոյ՝ «Թէ՛ հնար իցէ, ընդ ամենայն մարդոյ զխաղաղութիւն կալջիք» (Հռոմ. ԺԲ 18), զի թերեւս գայլափառսն շահիջիք: Վասն որոյ յերկարեցուցանէ զձգունսն՝ ոչ միայն յապտակն եւ ի մերկանալն համբերել, այլ թէ՛ն զմարմինդ եւս յերկունս վաստակոց մալիցէ, եւ այն՝ ի զուր, որպէս ասէ թէ՛ «տարապարհակ վարիցէ», այսինքն՝ դատափետէ եւ ձգձգէ եւ բեռն ի վերայ ուսոց դնելով վարէ: Իսկ մղոնն «Ֆարսանկն» է, զոր ձիրնթաց մի ոմանք անուանեն, եւ այլք՝ ձայնահաս, եւ կէսք՝ քարրնկէց, եւ ոմանք՝ նետաձիգ մի, բայց ճշմարտապէս ասպարէզն է, որ է երկոտասան հազար քայլ՝ ըստ երկրաչափական արուեստին: Արդ՝ ասէ, թէ վարիցէ զքեզ մղոն մի, դու երբ ընդ նմա եւ երկուս, եւ տեսեալ նորա զհնազանդութիւն քո՝ փութով յողորթութիւն եկեսցէ: Բայց զհնազանդութիւնս զայս՝ միայն վասն նիւթական տանջանաց առաջի դնէ եւ ոչ վասն հաւատոյ, զի թէ վասն հաւատոյ լիցի բռնադատութիւնն եւ կամ անմաքուր գործոյ, յայնժամ բողոքել պարտ է, թէ Աստուծոյ առաւել՝ հնազանդել արժան է, քան թէ մարդկան⁴:

Որում խնդրէ ի քե՛ն՝ տո՛ւր, եւ որ կամի փոխ առնուլ ի քե՛ն՝ մի՛ դարձուցաներ զերեսս (Ե 42):

¹ Ա Թագ. Ա 9-18

² Տ գործոյ

³ Զ > ԵԼ

⁴ Գործք Ե 29

Մի՛, ասէ, զանազանութիւն առնէր ի մէջ խնդրողաց, այլ ո՛ր եւ իցէ եւ կարօտ կենօք առ անկարօտդ դիմէ, լի՛ց զբաղձանս նորա, նմանապէս եւ զփոխն: Բայց «մի՛ դարձուցանէր զերեսս» երկակի է. կամ թէ՛ մի՛ յորաստ լինել խնդրողին զինչ եւ պահանջէ, զի Աստուած վասն այն կարգեաց մատակարար ընչից Իւրոց, զի զՆորայսն՝ Նորայոցն բաշխեսցես, որպէս Յորն եւ Արրահամն, ապա թէ ոչ՝ եւ զքե՛զ նովինք փորձեսցէ. եւ կամ՝ թէպէտ ոչ տայցես, մի՛ ընդ տեսանելն նորա՝ զերեսդ թիրեցես, զի նա ընդ չտայն ոչ այնքան վշտանայ, որքան ընդ դժոխսանալդ, զոր տեսեալ Աստուծոյ՝ ոչ ներէ: Եւ զբանս մի՛ որ միայն ի վերայ ընչից նիւթականաց առնուցու, այլեւ ի վերայ խրատու եւ բանի եւ սակաւ մի օթեվանի եւ քաղցր ձայնի: Իսկ զփոխն տալ՝ ոչ զվաշխիւք շնորհելն ասէ, զի այս առանց օրինաց ի վաշխասիրացն լինի, այլ զանակնունելին՝ զոր Աստուծոյ տայցես եւ ի հանդերձեալն տոկոսիւքն հանդերձ ի Նմանէ՛ ընկալցիս, որպէս ամուլն Աննա ետ զՍամուէլ փոխ Տեառն՝ եւ՝ ծնաւ այլ եւս եօթն՝¹, եւ «այր արդար ողորմի եւ տայ փոխ» (Առակ. ԺԳ. 12)՝ զրեալ է:

Լուիցեն նորա եւ զգաստասցի՛ն, որք զայլոց յափշտակիցեն եւ զայն շռայլութեամբ ի պոռնկանոցս՝ վատնիցեն եւ կրկին զանձինս գեհեհին ժառանգորդս արասցեն: Բայց փոքրագոյն թուի այս պատուիրան քան զնախկին ասացեալսն, այլ դու մի՛ ինչ զարմասցիս, թէ ընդ մեծամեծս եւ զմանունսն խառնէ, զի որպէս ի շինուածս տանց ճարտարապետք արհեստին ոչ միայն զմեծագոյն վեմսն ի հիմունս կառուցանեն, այլ յաւտ եւ զխիճսն մանունս ընդ եղեալ վիմունսն հաստատեն եւ այնու ապարանս արքունական յարուցանեն, այսպէս եւ Տէրն առնէ:

Լուարուք ապաքէն, զի ասացաւ. «Միրեսցես զընկեր քո եւ առեսցես զքշնամին քո» (Ե 43):

Այս յաղագս այնորիկ գրեցաւ, զի ընդհանուր ազգք քանանացոց, յորոց միջի հանդերձեալ էր բնակիլ Իսրայէլ, ընդ կռապաշտութեամբ էին եւ թշնամութիւն ունէին ընդ նոսա վասն երկ-

¹ Զ որ

² Զ > ընկալցիս, որպէս ամուլն Աննա ետ զՍամուէլ փոխ Տեառն

³ Զ եւ երկու

⁴ Ա Թագ. Ա-Բ 21

⁵ Զ պոռնկանոցն

րին, զոր ի նոցանէ յափշտակեցին: Արդ՝ թէ միաբանութիւն սիրոյ հրամայեալ էր ընդ նոսա դնել, դիւրաւ սովորութեամբ նոցին կրթեալ էին եւ ի կռամոլութիւնն խնորեալ, զի թէ բազում անգամ զգուշացոյց ոչ դնել դաշինս ուխտի ընդ նոսա եւ կամ խնամութիւնս, նոքա խտտորեցան ի կուռս, զի՞նչ հանդերձեալ էին գործել, եթէ կապակցութիւն սիրոյ առ նոսա էր հաւասարել: Վասն որոյ սիրել զհոմացեղսն հրամայեաց անձին չափ՝ ի մի կրօնս զնոսա հաստատելով, իսկ առ այլազգիսն թշնամութիւն ունել խրատեաց եւ այսու ի դից նոցա որոշեաց:

Եւ դարձեալ՝ զմարգարէսն կոչէ «ընկեր», որք ի տոհմէ նոցա զօրացեալք Հոգով՝ յանդիմանէին եւ յողորմութիւն օրինացն զխտորեալսն վերստին ածէին, զոր սիրել հրամայէ, այս է՝ բանից նոցա հպատակ լինել եւ ատել զթշնամիս՝ զսուտ մարգարէսն, որք ի սկզբանէ թշնամոյն, որ ի ձեռն օձին եղաւ, ընդ նմա զգածեալք՝ ի ճշմարտութենէն թիրէին: Զորս ոչ առին ի միտ կուրացեալքն մտօք, այլ յողորմական բանից ստոցն պատրեալ հաւանցան, որպէս ասէ Եսայիաս թէ՝ «Ժողովուրդ Իմ, որ երանենդ զձեզ, խռովեցուցանեն» (Իմմտ. Ես. 4 12), եւ բանք ճշմարտիցն յաչս նոցա անգոսնեալ արհամարհեցան վասն զնոսին առանց ակնառութեան յանդիմանելոյ, քանզի ոչ իմացան, թէ «լաւ է վեր բարեկամի, քան զկամակոր համբոյր թշնամոյ» (Առակ. ԻԷ 6):

Եւ դարձեալ՝ «ընկեր» Յիսուս Զրիստոս անուանէ զԻնքն, որ եղև հաւասար ընկեր նոցունց՝ ըստ մաղթանացն Դաւթի թէ՝ «Տէրն յընկերել ինձ փութայ» (Իմմտ. Մաղթ. ԿԹ 2), որ եկն եւ եղև մարդ եւ որդի մարդոյ՝ ի զաւակէն Աբրահամու, որպէս գրեցաւ ի Հինն¹, սիրել զՆա եւ զթագաւորութիւն Նորա խնդրել եւ ոչ զկայսեր, որ հանդերձեալ էր զթշնամոյ գործ առ նոսա գործել՝ ջրուելով զնոսա յամենայն ազգս:

Այլ Ես ասեմ ձեզ. սիրեցէ՛ք զթշնամիս ձեր, օրհնեցէ՛ք զանիծիչս ձեր, բարի՛ արարէք ատելեաց ձերոց եւ աղօթս արարէք ի վերայ այնոցիկ, որ լկենն զձեզ եւ հալածեն (Ե 44):

Զի մի՛ որ անկար համարեացի զասացեալս, թէ զիա՞րդ հնար է զթշնամիս սիրել, ասէ՝ Ես ասեմ ձեզ, այսինքն՝ զի նախ թշնամութիւն ունէր արարածս առ Արարիչն, վասն այսորիկ ոչ կարէին

¹ Ծննդ. ԻԲ 18

մարդիկ առ միմեանս զհանգամանս սիրոյն առ թշնամիսն տնօրինել, իսկ այժմ բարձի, ասէ, զթշնամութիւնն մահուամբ մարմնոյ Իմոյ, որպէս ասէ առաքեալ. «Մինչ թշնամիքն էաք, հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդոյ Նորա» (Հռմ. Ե 10). արդ՝ որպէս Նա զձեզ սիրեաց, որ թշնամիք էիք Նորա, այսպէս եւ դուք զթշնամիս ձեր սիրեցէք:

Բայց զո՞ Յիսուս¹ կոչէ թշնամիս. որք կենաց մերոց դրժիչք են ըստ ամենայն վնասուց, թշնամիք են մեր եւ ասին, զոր ներել հրամայէ: Իսկ զօրինակ սիրոյն առ թշնամիսն Պօղոս ուսուցանէ, քանզի զանագան են սիրոյն աստիճանք՝ առ Աստուած եւ առ ընկերն եւ առ կինն եւ առ թշնամին, զի զԱստուած յամենայն սրտէ եւ անձնէ հրամայէ սիրել, եւ զընկերն՝ անձին չափ, իսկ զկինն խնամել իբրեւ զուրիշ: Բայց թշնամոյն այսպէս ասէ. «Թէ քաղցեալ իցէ՝ հա՛ց տուր նմա, եւ թէ ծարաւի է՝ ջուր» (Հռմ. ԺԲ 20), նաեւ ըստ հոգեւոր սիրոյ՝ քանի ջանալ յուղղութիւն ածել, որպէս զի «զայս արարեալ՝ զկայծակունս հրոյն», զոր եկն Քրիստոս արկանել յերկիր, վառեցես ի միտս նորա, զոր «զլուխ» ասէ², այսինքն՝ ի սէր քո շարժես եւ զթշնամութիւնն՝ որ առ քեզ, բնաւին խափանես: Նաեւ ըստ այլում յեղանակի պարտիմք սիրել զթշնամիս. զի թէ բնական է անասնոց սիրել զերախտաւորս իրեանց, ո՞ այլ ոք մեզ այնպիսի երախտագործ, որպէս զթշնամիս մեր, զի երանութեանց լինին առիթ՝ ըստ այնմ. «Երանի՛ է ձեզ, յորժամ նախատիցեն [զ]ձեզ՝... եւ ասիցեն զամենայն բան չար..., ցնծացէք..., զի վարձք ձեր բազում են յերկինս»⁴ (Մատթ. Ե 11-12):

«Օրհնեցէ՛ք զանիժիչս ձեր»: Չայս դարձեալ Պօղոս ասէ. «Անիծէին, օրհնէաք, հայիոյէին, աղաչէաք, բամբաստէին, յանձն առնուաք» (հմմտ. Ա Կոր. Դ 12-13). քանզի նորա անօթ եղեալ չարին՝ եւ բանս յուտականս իբր զնետ լի դառնութեամբ առ քեզ առաքէ, իսկ լուեալ զօրհնութիւնս ի բերանոյ քումմէ՝ շառագունէ եւ առաջին տղեղ բանիւքն զանձն ըստգտանէ: Կամ թէ՛ անէծք նոցա ի ձեռն՝ ժուժկալութեան ձերոյ եւ օրհնութեան՝ պտուղս ձեզ ընձեռէ կենաց եւ փառաց:

¹ Ձ զո՞րս] զո՞ Յիսուս

² Հռմ. ԺԲ 20

³ Տ > ձեզ

⁴ Ձ ձեզ] ձեր բազում են յերկինս

⁵ Տ ձեռս

«Բարի՛ արարէք ատելեաց ձերոց»: Ատելութիւն ըստ երկու յեղանակս լինի ի մարդիկ. կամ՝ զի շուայտեալ կենօք մոզգայլին ոմանք եւ ի պարկեշտ կենաց եւ ի բանից առաքինեաց յանդիմանին, ըստ որում յատելուն ատել, որպէս Հերովդէս՝ զՅովհաննէս, եւ Աքաաբ¹՝ զմեծն Հեղիաս², քանզի այսպէս գրեալ է թէ՛ «Ատեցին ի դրունս զյանդիմանիչն» (Ամոկս Ե 10), զոր ասէ՛ բարի՛ արարէք, այսինքն առ սակաւ սակաւ սիովելով յուղղութիւն ածէք: Եւ կամ թէ՛ ի բանսարկութենէ ոմանց՝ որ զեղբայր առ եղբայր չարախօսէ եւ զատելութիւնն ի սիրտ նորա տնկէ, վասն որոյ խրատէ թէ՛ բարի՛ արարէք ատելեաց ձերոց բանիք գովելով՝ ըստ այնմ. «Խօսեցարո՛ք, եղբարք, ընդ ատելիս ձեր» (Ես. ԿԶ 5) եւ պատուասիրաբար առատութեան սեղանոյ հաղորդեցուցանելով, որպէս զի ի վարուցքոց իմացեալ՝ սուտ գոլ կարծէ զչարախօսն եւ ի բաց եղեալ զախտ ատելութեանն՝ սիրով առ քեզ կապեսցի:

«Եւ աղօթս արարէք ի վերայ այնոցիկ, որ լլկեն զձեզ եւ հալածեն»: Զգլուխ ամենայն բարութեանց, որ կատարումն է մարդոյ, ի յաւարտ բանիցս դնէ, զի ո՛չ ասաց միայն թէ՛ սիրեա կամ օրհնեա կամ բարի արա, այլ թէ՛ եւ աղօթս մատո, որ մտաց է գործ, զի բազումք թէպէտ մարմնոյն կերպարանօք ցուցանեն սիրոյ հանգամանս, սակայն մտօք զանճառելիսն բարբառին: Վասն այսորիկ կամեցաւ եւ զմտացն ախտ փարատել. աղօթեա,³ ասէ, այսպէս առ Աստուած. «Մի՛ համարիր նոցա զմեղս զայն» կամ թէ՛ «Ի զգաստութիւն յայնց բարուց փոփոխեա զնոսա»: Իսկ լլկիչ եւ հալածիչ զկրօնիցս մերոց հակառակսն ասէ, որք կեղեքեն զկեանս մեր դառնութեամբ եւ ասպա ի հայրենեաց մերոց արտալածեալ վարեն, որպէս արար Նաբոքոդոնոսոր զԻսրայէլ, զորս խրատեաց Դանիէլ աղօթել վասն կենաց նորա⁴, զի ի լինել խաղաղութեան նորա՝ լիցի, ասէ, եւ ձե՛զ խաղաղութիւն, եւ նա զաղօթս քո լուեալ՝ ի չարութենէն զզօնացեալ մեղմանայ:

Ձի եղիջիք որդիք Հօր ձերոյ, որ յերկինսն է, զի զարեգակն Իւր ծագէ ի վերայ չարաց եւ բարեաց եւ ածէ անճրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց (Ե 45):

¹ Զ Աքաաբ (այսպէս է և այլուր թե՛ Զ-ում, թէ՛ Տ-ում)

² Զ Հեղիու

Գ Թագ. ԺԷ-ԺԹ

³ Զ աղօթ

⁴ Դան. Ա -Դ

Կամի բանիս թեթևացուցանել գյառաջասացեալ օրէնսդ, զի մի՛ ծանր թուեսցի քեզ, թէպէտ ունիս ապացոյց զգօրագլուխն հաւատոյ զկատարիչն Յիսուս, այլ ասէ, թէ եւ Հա՛յրն երկնաւոր յարժամ զմեծագոյն նախախնամութիւնսն եւ զարմանալիս առնէ գործով, զի եւ արեգակն ծագէ եւ ամ ըստ ամէ զգօղ պարգեւէ, եւ զայս որպէս բարեաց եւ արդարոց արժանաւորաց, ա՛յսպէս չարաց եւ մեղաւորաց անարժանից: Ապա դու մի՛ ի փոքրագոյնսն վերջանալ՝ զթշնամիս սիրել եւ կամ զօրհնութիւնս բանիս՝ անիծողացն ընձեռել, զի այնու յինիջիք որդիք հարազատք Հօրն երկնաւորի, որ «ծնաւ զձեզ վերստին ի յոյսն կենդանի» (հմմտ. Ա Պետ. Ա 3): Բայց բարի եւ արդար եւ չար եւ մեղաւոր՝ զմարդիկ ո՛չ բնութեամբ ասէ, այլ յօժարութեամբ, զի թէ բնութեամբ ամենեքեան չարք եւ կամ բարիք, զի բնութիւնն զընդհանուր տեսակն գրաւէ, իսկ թէ յօժարութեամբ՝ ոմանք այնպէս եւ ոմանք այսպէս: Այլ զարեգականն ծագելն եւ զանձրեւոյն ածելն՝ ոմանք զգալիս ասացին մատակարարել ի Տեառնէ հակառակացն դասուց, իսկ մեք զհմանալին ասենք՝ զՌդդոյ առաքումն ի Հօրէ ծննդեամբ յաշխարհ եւ զՀոգւոյն բաշխումն՝ ըստ այնմ. «Ծագեցից երկիրդաժաց Իմոց արեգակն արդարութեան» (հմմտ. Մատ. Դ 2), եւ՝ «Ահա այր, եւ Ծագումն անուռ նորա» (Ձաք. 2 12), եւ թէ՝ «Հեղից յաւորս յետինս ի Հոգւոյ Իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ» (հմմտ. Յովէլ Բ 28): Քանզի այսոցիկ ծաւալումն զուգապէս շնորհեցաւ արդարոց եւ մեղաւորաց՝ ըստ այնմ. «Ոչ եկի կոչել զարդարս միայն, այլեւ՝ զմեղաւորս յապաշխարութիւն» (Մատթ. Թ 13):

Եւ դարձեալ՝ «բարի» զիրեշտակսն անուանէ եւ «չար»՝ զատանայ, զի եւ նոցա՛ զհմանալի շնորհս նախախնամութեան ընձեռել. հրեշտակացն՝ բարետրապէս շարժմամբ ի ձեռն վերնոցն մինչ ի խոնարհագոյնսն ի բարին անյեղապէս պահելով, իսկ դիւաց չարաց՝ այն զի յեութեան մնան եւ ի բնութիւնն կան, ի նախախնամութենէն Աստուծոյ պահին: Իսկ արդարս եւ մեղաւորս զմարդիկ ասէ, զի որք օրինօքն արդարացան՝ արդարս կոչէ, եւ որք ըստ անձնիշխան կամացն ի մեղս գլորեցան՝ մեղաւորս յորջորջէ: Արդ՝ սոցա եւս առնէ բարի՝ կամ աստ եւ կամ ի հանդերձեալն. արդարոց՝ աստ եւ անդ՝ ըստ այնմ. «Չհարիւրապատիկն աստ եւ ի հանդերձեալն՝ զմշտնջենաւորն» (հմմտ. Մարկ. Ժ 30), եւ մեղաւորաց՝ աստ

¹ Զ այլ

միայն կամ յօգուտ այլոց, որպէս ցանկ այգւոյ. եւ կամ լնլով փարթամութեամբն եւ ներելովն՝ յապաշխարութիւն ածէ, եւ կամ սակաւ բարեացն փոխարէն առնէ, որպէս մեծատանն¹, որպէս ասէ թէ՛ «Ծագէ զարեգակն ի վերայ չարաց եւ բարեաց եւ ածէ զանձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց»:

Եւ դարձեալ՝ «արեգակն» զնախախնամական տեսչութիւնն ասէ՛ ըստ այնմ. «Ծագեա գողորմութիւնս» (Մատթ. ԼԵ 11), իսկ «անձրեւ»՝ զփորձութիւնն, իբր այն՝ «Անձրեւ հեռացաւ եւ զնաց» (հմմտ. Երզ. Բ 11), եւ թէ՛ «Իջին անձրեւք» (Մատթ. Է 25): Արդ՝ առնէ զայս Աստուած, զի բարեաց հաղորդս գործէ զչարս որպէս զբարիս՝ հոգեւորաց կամ մարմնաւորաց յայսմ կենցաղի. բարեացն՝ վասն արժանաւորութեանն եւ կամ վասն առ ի յառաքինութիւնն յորդորման, զի փութայ ի բարիս աճմամբ առ ընթեր զվարձն տեսանելով, իսկ չարեացն՝ վասն առատութեանն, միանգամայն զի եւ անպատասխանիք մնասցեն ի ժամանակի դատաստանին, կամ ի մեծագոյն չարեաց զսպէ՛ բարեացն տրօք: Այսպէս եւ զփորձութիւնն կրեն մեղաւորք ի հատուցումն նոցին, որպէս բազումք կրեցին առ Նոյի զջրհեղեղն, եւ սողմացիք եւ փարաւոն² եւ քանանացիք եւ այլք բազումք, միանգամայն եւ ի թեթեւութիւն հանդերձեալ տանջանաց: Դարձեալ՝ զի մի՛ կարծեսցեն ամենեւին ոչ գոլ հատուցումն չարեաց, իսկ թէ ամենեքեան ոչ կրեն, զի մի՛ աշխարհ սպառնեսցի եւ կամ ամենեւին աստ գոլ կարծեն զդատաստանին իրաւունս, կրեն եւ արդարք՝ կամ զի առաւել մաքրեսցին ի սակաւ ինչ մարմնատեսակ տղմային իրաց, որպէս զԼազարոսն զայն³, եւ կամ զի առաքինութիւն նոցա հրապարակատես լիցի, որպէս Յոբայն եւ Աբրահամուն, կամ զի մի՛ ծուլացին եւ կամ հպարտացին, որպէս Պօղոս եւ Պետրոս: Կամ՝ ի խրատ մեղաւորաց, զի մի՛ կարի չարք լինիցին՝ տեսանելով զարդարն հազիւ կացեալ, իսկ մեղաւորն եւ ամբարիշտն ո՞ր զտանիցի, որպէս ասացաւ⁴ եւ՝ «Թէ ընդ փայտ դալար այն անցանէ, ընդ չորն զի՞նչ լինիցի» (հմմտ. Ղուկ. ԻԳ 31): Կամ՝ մեծաց վարձուց պատճառ լինիցի[ն] եկեալ փորձութիւնքն, որպէս առաքելոցն, կամ զգօրութիւն Իւր ցուցանէ թանձրամտացն, թէ կարօղ էր փրկել, յայտ է՝ յորժամ ի միջոյ չարեացն

¹ Ղուկ. ԺԶ 25

² ՏՁ փարաւօն (այսպէս՝ ամենուր):

³ Ղուկ. ԺԶ 19-31

⁴ Առակ. ԺԱ 31

յետոյ հրաշիւք զերծուցանէ: Կամ՝ խրատէ, զի տանջանօքն զսպեսցին յաւելորդաց, կամ զփափագանս մեր փորձէ, եթէ զչարիցի՞նք ի նեղութիւնս, թէ՞ յօժարութեամբ համբերենք վտանգիցն: Կամ՝ աստ դատելով ի Տեառնէ խրատիմք, զի «մի՛ ընդ աշխարհի դատապարտեսցուք» (Ա Կոր. ԺԱ 32), որպէս ասէ առաքեալ: Կամ՝ վասն այլոց մեղաց կրեն փորձանս, որպէս ոմն իմաստուն տեսեալ մանուկ ստամբակ՝ զմանկածուն եհար:

Չի եթէ սիրիցէք զայնոսիկ, որ սիրենն զձեզ, զի՞նչ վարձք իցեն. ո՞չ ասաքէն եւ մաքսաւորք զնոյն գործեն (Ե 46):

Եւ եթէ տայցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց, զի՞նչ աւելի առնէք. ո՞չ ասաքէն մաքսաւորք եւ մեղաւորք զնոյն գործեն (Ե 47):

Չանագանութիւն դնէ ի մէջ աշակերտացն եւ այլափառացն, զի եթէ զնոցայն, ասէ, գործէք՝ զսիրելիս սիրելով եւ բարեկամաց միայն ողջոյն տալով, զի՞նչ երախտիս ունիք յայդմ հատուցանել եւ կամ աշակերտ Ինձ անուանիլ, քանզի այդ հասարակաց է՝ հեթանոսաց եւ մաքսաւորաց՝ փոխ տալով եւ սիրելով զմիմեանս, զի առցեն անդրէն զկշիռն. իսկ դու զթշնամիս սիրելով եւ զատելիս պատուելով Աստուծոյ յիցիս հաւասար: Արդ՝ զայս ասելով ո՞չ եթէ ի սիրելեացն սիրոյ հրաժարեցուցանէ, զի յայն բնութիւնն քարշէ, իսկ զթշնամիս սիրել օրէնքն բռնադատէ եւ հասարակաց կրօնից գեր ի վերոյ կացուցանէ: Եւ զմաքսաւորսն՝ յիշելով՝ զաշակերտսն կսկծեցուցանէ, զի թէ զսիրելիս սիրել նոցա հաղորդէ, իսկ յորժամ եւ զայս ոչ առնիցենք, որո՞ւմ իմիք նմանեցուցանէ: Վասն որոյ կնքէ զբանս եւ ասէ.

Արդ եղերո՞ւք դուք՝² կատարեալք, որպէս եւ Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է (Ե 48):

Կատարելութեան անուն ասի ի վերայ այնոցիկ, որ բնաւին իւրիք ոչ են պակաս՝ ըստ այնմ թէ՝ «Ամենայն ինչ կատարեալ է» (Յովհ. ԺԹ 30): Արդ՝ վասն զի երկու տեսակս բանի եղաւ առաջի, մին՝ բնութեան, եւ միւսն՝ բռնադատութեան, զի սիրել զսիրելիս՝ ամենեցունց է, սակայն կիսակատար եւ թերի գտանի, իսկ սիրել զթշնամիս՝ կատարելոց է, որով Աստուծոյ նմանի, որ զարեգակն եւ

¹ ՏԶ զմաքսաւորքն

² Զ > դուք

զանձրեւ հասարակաց բաշխէ. վասն այսորիկ ասաց թէ՝ «Եղերուք կատարեալք, որպէս եւ Հայրն ձեր երկնատր կատարեալ է»։ Բայց զհտեղ արժան է, թէ կատարելութիւն երկակի ասի, զի Աստուած ըստ այլ իմն յեղանակի ունի զկատարելութիւնն, եւ մարդ ի ձեռն ասացելոցս այլ ազգ կատարի, քանզի Աստուած ասի կատարեալ՝ ոչ միայն ըստ ինքնակատար գոլոյն եւ բոլորովին միատեսակապէս կատարեալ՝ անթերի գոլով ի պակասութենէ, այլեւ ըստ այսմ՝ զի կատարեալ վերաստեղծեաց զերկին եւ զերկիր, զիմանայիս եւ զզգայիս, եւ ի կատարելութենէ Իւրմէ շնորհաց միշտ ի յեղեալքս ծաւալէ եւ ի նոյնութիւն անյեղապէս պահէ, վասն որոյ ըստ ներգործական գորութեանն՝ եւ Ինքն կատարեալ ի կատարելոցս անուանի։ Եւ դարձեալ՝ կատարեալ, որպէս անաճելի՝ եւ անեղծանելի եւ միշտ կատարեալ։ Եւ դարձեալ՝ զի զներկայն եւ զանցեալն եւ զհանդերձեալն միապէս զհտէ, որ է յոյժ կատարելութիւն։

Եւ դարձեալ՝ կատարելութիւն ըստ երիս յեղանակս ասի՝ բնութեամբ, շնորհօք եւ փառօք, եւ է Աստուած բնութեամբ կատարեալ, եւ շնորհօք եւ փառօք։ Իսկ այլ արարածք թէպէտ բնութեամբ կատարեալք են, բայց ոչ շնորհօք եւ փառօք, իսկ մարդիկ ի նուագութենէ ի գերունակութիւն ելանելով՝ կատարեալ ասին ըստ հասակին եւ կամ ըստ ուսմանն շնորհին՝ ըստ առաքելոյ թէ՝ «Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս» (Ա Կոր. Բ 6)։ Արդ՝ ըստ այսմ յեղանակի զաշակերտսն կատարեալս անուանէ եւ Հօրն հաւասարէ, եւ ոչ՝ զոր նա ունի ըստ յառաջ ասացելոցն օրինակի. վասն որոյ ասաց թէ՝ դուք եղերուք, եւ Նա է՝ իսկ թէ կատարեալք, եւ Նա կատարեալ, զմեր բազմայօղութիւնն եւ զՆորա անգնելի պարգոթիւնն զոյ նշանակէ, միանգամայն եւ է-իւն զանցեալն եւ զներկայն եւ զապառնին գուշակէ։ Իսկ զերկինս Տէրն յիշելով՝ զմիտս մարդկան զարթուցանէ եւ գոյսն մեր ի վեր անդր հաստատէ։ Եւ դարձեալ՝ իբրեւ զերկնատրն յերուք կատարեալ եւ ոչ իբրեւ զերկրատր հարս, զի սոքա ոչ են ի հայրութիւնն կատարեալ, այլ նախ որդի եւ յետոյ հայր, իսկ Նա միշտ հայր եւ կատարեալ հայր։

¹ Զ անճառելի

ԳԼՈՒԽ Զ

Զգո՛յ՛ լերուք ողորմութեան ձերում՝ մի՛ առնել առաջի մարդկան, որպէս թէ ի ցոյց ինչ նոցա. գուցէ եւ վարձս ոչ ընդունիցիք ի Հօրէն ձերմէ, որ յերկինս է (Զ 1):

Յետ զաշակերտսն ի զագաթն առաքիւնութեան վարժելոյ՝ զգուշացուցանէ ի զեղծագործ իրէ, որ զվարձս նոցին խանգարէ. եւ ասեմ զախտէ փառասիրութեանն եւ զհպարտութեանն, զոր նախ ոչ ծանոյց, զի ոչ ունէր պէտս, քանզի այսպիսի ախտ յառաքիւնացեալսն զօրանայ եւ ո՛չ ի շռայլեալսն: Վասն որոյ մերձ ողորմութեանն եւ աղօթիցն եւ պահոցն դնէ, զի զայնպիսիսն յաւէտ մաշէ, որպէս զսնապարծ փարիսեցիսն զայն, որ ի ժամ աղօթիցն փքացեալ զուղղութիւն իւր հրապարակագոյժ առնէր¹: Եւ զի անօրագոյն է այս կիրք, որ զօրէն գողոց եւ զայլոց սպրդեալ ի վերայ հոգւոյն որդեկի հասանէ եւ զամբոցս շինուածոց նորա քակեալ յատակէ, վասն այսորիկ ասէ թէ՝ զգո՛յ՛ լերուք ողորմութեան, որպէս եւ Պօղոս ասէր թէ՝ «Զգո՛յ՛ լերուք ի շանց անտի» (Փիլպ. Գ 2): Եւ Տէրն ի բազում տեղիս զգուշացուցանէ, այսինքն՝ զգաստ եւ սթափ լերուք. կամ յողորմութիւն յառնելն, որպէս զի միշտ առնիցէք, զի մի՛ մեծագոյն այս առաքիւնութիւն մոռացմամբ ախտին ծածկիցի, որով Աստուած անուանի: Եւ «ձերում» ասելն՝ կամ յարդար վաստակոց ասէ լինել զտուրսն, կամ վասն ձեր է տալն եւ ո՛չ վասն Իմ. եւ յախտէ փառասիրութեանն ի յառնել ողորմութիւն, զի առանց ոտնաձայնի մտանէ, որպէս ձեր զգալուստ նորա ճանաչել՝ կարօղք լինիջիք զնա ի բաց հերքել: Եւ զօրինակ ի բաց հերքելոյն ախտիս այսորիկ ծանուցանէ. մի՛ առնել, ասէ, առաջի մարդկան, այլ Աստուծոյ եւ ի փառս Նորա: Բայց զի անհնար է յամենայն ժամ եւ ամենայն ուրեք այնպիսի առնել, մինչ զի ծածուկ ի մարդկանէ լինիցի, եւ զայն եւս տարակոյս լուծանէ՝ ասելովն «որպէս թէ ի ցոյց ինչ նոցա», այսինքն՝ ո՛չ զգաղտ գործելն խնդրեմ եւ կամ զառ աչս ախտի բաժանելն, քանզի հնար է առնել առաջի մարդկան եւ ո՛չ ի ցոյցս, եւ տալ ի ծածուկ եւ առնել ի ցոյցս, յորժամ ի միտսն զանձն գովէ եւ պսակէ եւ կամ յայտնէ զգործեալն, այլ

¹ Ղուկ. ԺԸ 10-14

² S > թէ

զմիտան քո եւ զիրացն, որ գործիցին, խնդրեմ զպայման կամօք առնելեացն եւ ո՛չ իրացն վճարմամբ:

«Գուցէ եւ վարձս ոչ ընդունիցիք ի Հօրէն ձերմէ, որ յերկինս է»: Ստո՛յգ, ասէ, ի գո՛ր լինի տուրքն ձեր. քանզի զայս յայտնէ «գուցէ»-ն: Իսկ զշաղկապն դնելով թէ՛ «եւ վարձս ոչ ընդունիցիք», ցուցանէ, թէ ոչ միայն ի ստացուածոցն զրկիք, այլ եւ ի վարձուցն անմասն գտանիք, եւ ոչ միայն ի վարձուցն զրկիցիք, այլ եւ ի Հօրէն, որ վարձուցն է հատուցանող, տարամերժեալ ելանէք, քանզի ըստ ժամանակին դնէ զայս եւ ըստ լսողացն տկարութեան, որ զՀայր մեծ կարծէին:

Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի՛ հարկաներ փող առաջի քո, որպէս կեղծաւորքն առնեն ի ժողովուրդս եւ ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին ի մարդկանէ: Ամէ՛ն ասեմ ձեզ, ա՛յն իսկ են վարձք նոցա¹ (Ձ 2):

Չվշտակիցն լինել ընկերին՝ ողորմութիւն ուսաք ի Գրոց. արդ՝ յորժամ զայս առնես, ասէ, մի՛ փող հարկաներ առաջի քո: Չբազում սնոտի պարծանս նոցա յորջորջմամբ փողոյն հեզնէ եւ ձաղէ, որ իբր զազդեցութիւն փողոյ գողորմութիւն իւրեանց ամենայն ումեք ծանուցանեն: Դարձեալ՝ յաղագս այլ իմն պատճառի զփողն յիշէ. զի որպէս ձայն փողոյ անյօդ է եւ ցնդական, այսպէս եւ ողորմութիւնն, յորժամ հրատարակես, յօդք բախեալ՝ լուծանի եւ ոչինչ լինի, զորս «կեղծաւորս» կոչէ յիրաւի: Չի դէմս ողորմութեան ցուցանեն եւ զբարս իւրեանց անագորոյնս² եւ տմարդիս³ քարոզեն, զի ո՛չ զայն վասն ընկերին վշտի առնիցեն, այլ զի ինքեանք ի սնոտի փառսն վայելեսցեն, վասն որոյ զորս կամին՝ զայն վարձս նոցա վճռեալ հատուցանէ, թէ ճշմարիտ ասեմ ձեզ, ա՛յն իսկ են վարձք նոցա՝ ըստ այնմ թէ՛ «Ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ» (Լուկ. ԺԹ՝ 22):

Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի՛ զիտասցէ ձախ քո զինչ գործ աջ քո (Ձ 3):

Նախ՝ առաւելութեամբ վարի եւ ո՛չ եթէ զձեռաց ինչ ակնարկիցէ, զի եթէ հնար է եւ ձեռացոյ, որ մատակարար լինի տրոցն, փոյթ յանձին ունիցիք ոչ իմանալ, եւ ո՛չ որպէս ոմանք ասացին՝ ի չա-

¹ Ձ ձեր

² Ձ անագորոյն

³ Տ տմարդիկս

րաց ոմանց թագուցանել¹, զի յամենեցունց լռելեայն գործել հրամայեաց: Եւ երկրորդ՝ զաջոյդ գործն ասէ ծախոյդ մի՛ շնորհել, այսինքն՝ ձախ ձեռօքդ զտուրսն ընձեռել, զոր աջովդ պարտիս առնել, զի կարծիք բերէ առնողացն, թէ ի հարկէ եւ ոչ յօժարութեամբ մատակարարես: Եւ երրորդ՝ աջ զողորմութիւնն եւ ձախ զփառասիրութիւնն ծանեաք. արդ՝ խրատէ, թէ մի՛ գիտասցէ ախտ փառասիրութեանն զողորմութեանն շնորհ, քանզի «գիտենալ» զախտանալն ասէ: Եւ չորրորդ՝ աջ կոչէ զհոգեւորն եւ ձախ՝ զմարմնաւորն՝ ըստ այնմ. «Սիրտ իմաստնոյ յաջակողմն իւր, եւ սիրտ անմտի ի ձախակողմն իւր» (Ժող. Ժ 2): Արդ՝ յորժամ ի բաղձանս սիրոյն Աստուծոյ յարածզել միտքն նկրտի, զհաճոյս կամաց նորա առնելով օրինօք մատուցեալ, յայնժամ ոչ ձախ մարմինն հակառակ լինի օրինաց մտաց, այլ հոգւոյն կամաց նուաճելով զինքն հնազանդէ, եւ տիրեալ հոգին ի վերայ մարմնոյն իբր զմարտարապետ որ՝ զանդամս մարմնոյն ի գործ պիտոյիցն շարժէ, եւ մարմինն ոչ իմանայ զգործ հոգւոյն յաղագս նսեմ կենացն, որպէս եւ ոչ քնար՝ զշարժումն մատանց երաժշտականին՝ ըստ այնմ. «Ոչ գիտէ ծառայն զինչ գործէ տէրն նորա» (Յովն. ԺԵ 15). քայց այս յայնժամ ներգործի, յորժամ ողորմի հոգին խաւարային կենաց մարմնոյն: Իսկ զի՞նչ այն թէ՛ «յորժամ ողորմութիւն առնիցես», այսինքն թէ՛ ոչ ի հարկէ զքեզ ի տուրսն բռնադատեմ, քանզի անձնիշխան ես. ի հարկաւորն ոչ յարամնայական երեւի, այլ յորժամ եւ է՛, զի յօժարութիւնդ քո յողորմութիւնն զքեզ շարժէ. ա՛յս է յեղանակն, որպէս ասացաք: Նսեւ զայն ուսուցանէ, թէ ողորմութեանն ամենայն ժամանակ ժամ է եւ ոչ մի ժամանակ:

Որպէս զի եղիցի ողորմութիւնն քո ի ծածուկ. եւ Հայրն քո, որ տեսանէ ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս (Ձ 4):

Քառակի իրս իմաստից աւանդէ: Նախ՝ զամենատես եւ զկանխագէտ զօրութիւնն Աստուծոյ քարոզէ, քանզի թէպէտ դու ի գաղտնի, ասէ, տայցես, սակայն յայտնի է ոչ հրեշտակաց միայն եւ կամ հրեշտակապետաց, այլեւ Այնմ, որ նստի յերկինս եւ հայի յանդունդս: Եւ երկրորդ՝ թէ եւ կամիս հանդիսաւոր կացուցանել զտուրսն քո, եւ զայն եւս շնորհէ. ոչ առաջի տասանց եւ կամ հա-

¹ Թե՛ ձեռագիրդ, թե՛ տպագիրդ հալսասարապետ գործածում են այս բառի արմատի և՛ թագ ձևը, և՛ թաք: Սույն բնագրում ուղղագրական երկու ձևերն էլ պահպանվել են:

րիւրոց հրապարակել, յորս դու փութաս, այլ առաջի ամենայն տիեզերաց, որ շուրջ զքեւ կայցեն, ազդ արարեալ յայտնապէս՝ զվարձսն հատուցանէ, զի այժմ ի տեսանելն յոլովք այնոքիկ են, որ թեթեամիտ սնապարծ եւ անձնագով զքեզ բամբասեն, իսկ յայնժամ, յորժամ պսակեալս տեսանիցեն, ոչ միայն չպարսաւիցեն, այլեւ ընդ ծածուկ առաքինութիւնն քո զարմանայցեն եւ բազում պատուով յարգեալ փառաւորեն՝ ըստ այնմ թէ՝ «Առանց լռութեան քո» (Երգ 7-1): Եւ երրորդ՝ ոչ զայլ ոք, այլ զՀայր ասէ հատուցանող, յորմէ «ամենայն տուրք բարիք եւ կատարեալ պարգեւք ի Նմանէ իջանեն ի վերուստ» (Յակոբ. Ա 17), այսպէս եւ քեզ ոչ շնորհ, այլ պարտք վարձուց երեւելապէս Նա՛քեզ հատուցանէ: Եւ չորրորդ՝ առ այսոքիւք ի համբերութիւն զքեզ կրթէ, զի ծանիցես, թէ ոչ առժամայն առաքինութեանն բոյս ընծիւղի, այլ յետ բազում ժուժկալութեանց եւ ջանից՝ սերմն ողորմութեանն բազմապատկապէս որայն ընձեռէ՝ ըստ այնմ թէ՝ «Առաքեա զսերմն քո ի վերայ ջրոց» (Խմբ. Ժող. ԺԱ 1), զի ի բազում ժամանակս տացէ զգորութիւնս իւր, միայն թէ ոչ ճշդիւ լինիցի՝ ըստ առաքելոյ¹, քանզի որ առատապէս յաղազս հոգւոյն սերմանէ, զանապականութիւնն ի նմանէ հնձէ՝:

Եւ յորժամ յաղթս կայցես, մի՛ լինիցիս որպէս կեղծաւորքն, զի սիրեն ի ժողովուրդս եւ յանկիւնս հրապարակաց կալ յաղթս, որպէս զի երեւեցին մարդկան: Ամէ՛ն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա (Ձ 5):

Որպէս ինձ թուի՝ դիտաւորութիւն Տեառն վարդապետութեանս յաղազս այսորիկ է, զի զաշակերտսն յախտէ փառասիրութեանն եւ մարդահաճութեանն ազատէ, քանզի յերիս այսորիկ ախտս այս առաւել երեւի քան յայլ առաքինութիւնսն, վասն այսորիկ զգուշացուցանէ Տէր, զի զիտէ, թէ ոչ միայն վարձս ոչ առցէ այնպիսին, այլ «իբր թանձրութիւն հողոյ, զի սփռի ի վերայ երկրի, այնպէս ցրուին ոսկերք մարդահաճոյից»³՝ ըստ մարգարէին (Խմբ. Մաղմ. ԾԲ 6): Եւ ասէ, թէ յորժամ հայցումն ինչ բարեաց յԱստուծոյ հայցիցես, մի՛ լինիցիս որպէս կեղծաւոր դպիրքն եւ փարիսեցիքն, որ ուտէին գտունս այրեաց՝ յերկարելով զաղթս իւրեանց ի ժողովուրդս հրապարակաց, եւ ճշմարտապէս կեղծաւորք, զի յԱստուծոյ պատճառին յաղթս կալ եւ մարդկան շուրջ ամէլ զաչսն նայի-

¹ Բ Կոր. Թ 6

² Ա Կոր. ԺԵ 42-44

³ Տ մարդահաճոյին

ցին, եւ զայն ո՛չ իմանան, թէ զոր աղաչէ որ, պարտ է զամենայն ի բաց թողուլ եւ ի նա՛ միայն կարկառիլ, ապա թէ զնա թողեալ՝ այսր անդր պշնուցու, ունայն ձեռօք ելանէ: Դարձեալ՝ եւ ա՛յլ ըստգտանք զնոցանէ ասէ, զի զաղօթսն ո՛չ յարժանատր տեղոջ, այլ ի մէջ ամբոյսից եւ զռեհաց ժողովելոց ընծայեն, եւ այն՝ ո՛չ պատահմամբ մի անգամ, այլ սիրեն բազում ժամանակս: Է՞ր վասն. որպէս զի երեւեսցին, ասէ, մարդկան, թէ աղօթասէրք իցեն. վասն որոյ չասէ, թէ ոչ առցեն վարձս, այլ թէ ունին: Եւ կամ յունմէ՞ զայն, զոր ցանկացան զգովութիւն մարդկան, եւ յայնցանէ, որոց առաջի ախտի զաղօթսն մատուցին: Իսկ Աստուած զայս ոչ կամէր, այլ Ինքն խորհէր զփոխարէնն շնորհել, բայց որովհետեւ ոչ ախորժեցին նորա, թոյլ ետ ըստ կամս անձանց իրեանց ընթանալ:

Այլ դու յորժամ կայցես յաղօթս¹, մուտ ի սենեակ քո եւ փակեա գորունս քո եւ կաց յաղօթս առ Հայրն քո ի ծածուկ, եւ Հայրն քո, որ տեսանէ ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս (Ձ 6):

Դու, ասէ, որ աշակերտեցար Իմոյ դպրութեանս, այսպիսի գեղեցիկ պայմանաւ աղօթից աղօթեա. մուտ ի սենեակ քո: «Սենեակ» ասենք զտուն պարապոյ, յորում դնենք զոր ինչ յըշտեմարանել խորհիմք, եւ կամ թաքչել, եթէ այն եւս պատահէ՝ ըստ այնմ. «Գնա մուտ ի շտեմարանս քո եւ փակեա գորունս քո» (Իմմտ. Ես. ԻՉ 20), եւ այլոր՝ «Գիտացես,- ասէ,- յորժամ փախիցես սենեկէ ի սենեակ» (Իմմտ. Գ. Թագ. ԻԲ 25): Արդ՝ թէ կամիս զգանձ աղօթից քոց ամփոփել եւ կամ յարկածէ պատերազմողին զգանձն քո ծածկել, այսպէ՛ս աղօթեա. «Մուտ,- ասէ,- ի սենեակ քո»: Ասացաք նախ, թէ ի մարդահաճութենէ կամի ազատել՝ զայս դնէ առաջի, մինչեւ սրբեալ միտքն ո՛չ հայի ի գովութիւնս մարդկան, քանզի գոյ հնար յայլս ուրեք աղօթել եւ մտօք զփառս ի մարդկանէ պահանջել, եւ խորհիլ ականատես բազմաց լինել, որպէս ընդդէմ այսր՝ յարտաքին տեղիս աղօթել եւ ազատ կամօք յայսպիսի ախտէս հրաժարել: Արդ՝ մինչեւ է ուսեալ զարուեստ աղօթիցն, հրամայէ ի սենեկի աղօթել, իսկ յորժամ վարժի եւ ի զբաղմանց ցնորից միտքն պարզի՝ ոչ հայելով ի գովութիւնս մարդկան, այլ յաղօթընկալն միայն յԱստուած՝ ըստ ասացելումն թէ՛ «Որպէս աչք ծառայից ի ձեռս տերանց իրեանց, այնպէս են աչք մեր առ քեզ, Տէր Աս-

¹ Ձ ~ յաղօթս կայցես

տուած մեր» (Մաղմ. ԾԻԲ 2), եւ՝ «Աչք իմ յամենայն ժամ առ Տէր են» (Մաղմ. ԻԳ 15), յայնժամ առաջի ամենայն ժողովրդեանն մատուցէ՝ ըստ Դաւթայ թէ՝ «Չաղօթս իմ Տեառն տաց առաջի ամենայն ժողովրդեան» (Մաղմ. ԾԺԵ 14), եւ Տէր՝ «Ոչ լուցանեն ճրագ եւ դնեն ընդ գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի, ...որպէս զի լուսաւորեսցէ եւ¹ լոյս ձեր առաջի մարդկան, եւ տեսցեն զգործս ձեր բարիս», այսինքն՝ զաղօթս, «եւ փառաւորեսցեն զՀայր ձեր, որ յերկինս է» (Մատթ. Ե 15-16):

Եւ դարձեալ՝ «սենեակ» կոչէ զներքին աչս մտացն, յորս մտանել հրամայէ եւ աղօթել, եւ «փակել զդուրս»՝ զզգայութեանն մատունս, քանզի օրինակաւ իմն դրունք են մտաց, որպէս ասեն Գիրք թէ՝ «Եմուտ մահ ընդ պատուհանն» (Խնմտ. Երեմ. Թ 21), զի որպէս ընդ դուռն քաղաքին զանազանք ոմանք մտանեն, եւ ամենեքեան առանց խառնակութեան ի ներքս ի բակին լինիմ², այսպէս եւ ընդ զզգայութիւնս մարդկան ազգի ազգի գոյնք եւ ձայնք, համք եւ գոլոշիք ի միտսն զեղանին եւ առանց շփոթութեան պահին: Վասն այսորիկ զսոսա «դրունս» անուանէ, զորս փակել³ ասէ ի ժամ աղօթիցն, զի մի՛ նենգաւոր ոք մտցէ եւ աւար զքաղաքն հարկանիցէ եւ զզանձ արքունականս կողոպտիցէ, այլ զսպել ի մարմնական ցանկութեանցն եւ Աստուծոյ միայն լինել եւ մի՛ մարմնոյ կերպարանօք եւ մեծածայն բարբառով բեկբեկել, այլ հանդարտ եւ մեղմ խօսիւք Աստուծոյ խօսակից լինել: Չի գոր օրինակ ի հրապարակս իշխանաց եւ թէ ոք ամբոխիցէ անճահ բարբառով, խրտուցանէ զիշխանն եւ ո՛չ լինի պաղատանք նորա լսելի, ասպա թէ մեղմազոյն եւ ողորդ⁴ ձայնիւ վարեսցի, զմիտս նորա հաճեցուցանէ եւ զունկն նորա ի ներքոյ աղաչանաց իւրոց դնէ, այսպէս եւ դո՛ւ, թէ առնիցես: Քանզի որպէս⁵ աներեւոյթ է Աստուած, ըստ նմին օրինակի եւ զաղօթսն քո կամի՛ ըստ այնմ. «Հոգի է Աստուած, եւ երկրպագուաց Նորա՝ Հոգով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիր պագանել» (Յովն. Դ 24):

Եւ դարձեալ՝ «սենեակ» եթէ զերկինս իմանաս եւ զդրախտն, յորմէ անկար, անդ ասէ մտանել մտօք եւ աղօթել, զի թպէտ

¹ Գ > եւ

² Գ > լինին

³ Գ գոր սփռել] գորս փակել

⁴ ՏԳ ողորդ

⁵ Գ որպէս թէ

մարմնովդ ի վերայ երկրի իցես, սակայն թեթևացեալ մտօք անդր վերացիր, որպէս անառակ որդին այն, որ ասաց թէ՝ «Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո» (Լուկ. ԺԵ 18), զոր տեսեալ Ծածկազէտն զանտես ի մարդկանէ ի միտս զաղօթս քո՝ իբր զանմոռնչ ձայնն Մոսիսի եւ զսակաւ խօսան Եղիայի եւ Աննայի¹, ելցէ եւ քեզ ընդ առաջ՝ հատուցանելով զպտուղ աղօթիցն քոց յայտնապէս ի տես ամենեցուն՝ ասելով թէ՝ «Զի՞ զոչես առ Իս» (Ելք ԺԴ 15), եւ կատարեսցէ զխնդիրն:

Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շատախօսք լինիք իբրեւ զհեթանոսսն, զի համարին, թէ ի բազում խօսից իրեանց լսելի լինիցին (Ձ 7):

Քննութիւն տեղիս պահանջէ, թէ ընդէ՞ր ոչ ասաց «յորժամ նուիրիցէք», այլ թէ՝ «յորժամ յաղօթս կայցէք»: Գիտել պարտ է, զի զանազանութիւն ունին անուանքս. քանզի «նուէր» ասենք զխոստացումն² իրիք բարեպաշտութեան ընծայից՝ նախ քան զպաղատանսն ժամանել, իսկ «աղօթս»՝ զհայցուածս բարեաց եւ յետ նուիրելոյն զհամարձակութիւն ունել, որպէս որ առ իշխան մատուցեալ՝ նախ զաղերս իւր նուիրէ, որով համարձակեալ³՝ զխնդրուածս հայցէ: Եւ արդ՝ ուսաք զինչ նուէր եւ զինչ աղօթք, եւ զի նախ նուէր եւ ապա՛ աղօթք, որպէս նախ սերմն եւ ապա՛ հունձք: Իսկ աշակերտքն զնուէրն այն ինչ կանխաւ ընծայեալ էին, այսինքն՝ զմաքրութիւն մտաց եւ զսրբութիւն մարմնոյ՝ ըստ առաքելոյ. «Ես այսուհետեւ նուիրեալ եմ» (Բ Տիմ. Դ 6), եւ թէ՝ «Նուիրիմ ի վերայ պատարագի պաշտաման ձերոյ» (Փիլպ. Բ 17), վասն այսորիկ ոչ ասաց թէ՝ «նուիրիցէք», այլ թէ՝ «յորժամ յաղօթս կայցէք»: Եւ ժամանակ ոչ սահմանէ, զի ամենայն կեանք մարդոյ ժամանակ է աղօթից՝ ըստ առաքելոյ. «Անդադար աղօթեցէք» (Ա Թես. Ե 17), եւ թէ՝ «Աղօթից ստէ՛պ կացէք» (Հռոմ. ԺԲ 12): Իսկ յաղօթելն, ասէ, մի՛ շատախօսք լինիք իբրեւ զհեթանոսսն]:

Զշատախօսութիւնս ըստ երկու յեղանակս իմանամք. մի՛՝ զայն, որ ի ժամ աղօթիցն յոռի եւ ցոփ մտօք յընդունայն իրս զպաղատանսն ծախէ՝ ճոխութիւնս խնդրելով կամ փառս, կամ թշնամեաց գեր ի վերոյ լինել, ըստ նմանութեան անմիտ մանկանց, որ ոչ ըստ կարողութեանն, այլ ըստ իշխանութեան ազատ մտացն ախորժե-

¹ Ելք Դ 10. Գ Թագ. ԺԵ-ԺԹ, ԻԱ, Դ Թագ. Ա. Ա Թագ. Ա

² խոստումն

³ Տ համարձակել

լով՝ զմտաւ ածեն զանձս կամ թագաւորութիւնս, կամ քաղաքս ըստ անուանց իւրեանց շինեալս, եւ կամ եւս սաստկագոյն՝ յամս ամաց յերիտասարդութեան հասակին մնալ առանց ծերութեան, կամ զերինս բռամբ շարժել, կամ նման աստեղաց փայլել, կամ զերկինս ճանապարհ առնել, որ է անհնարին: Արդ, որ¹ յայտսիկ դեզերին ի մանկանց, շատխօսութիւն անուանենք եւ սնոտի իմաստ, զի թողեալ զժամանակ գործոյն՝ յանօգուտս շաղակրատէ: Այսպէս որ ի ժամանակ աղօթիցն յախտաւոր մտաց շարժմունս ճապարհի, աղճատեալ ոմն է ճշմարտապէս եւ շատախօս, քանզի ոչ զիտէ, թէ զինչ խնդրէ, որպէս որ վասն զերագանցեալ աղբատութեանն եւ վայրաբնակութեան²՝ զխեցեղէն անօթ պատուականագոյն կարծէ, եւ ապա մատուցեալ առ թագաւոր, որ կարօղ է բազում ընչեղութիւն շնորհել, եւ նորա թողեալ գայն՝ կաւեղէն անօթ ի նմանէ հայցէ, ուստի անարգանս կրէ: Նոյնպէս եւ որ անուսումնաբար ոչ ի բարձրութիւնն Աստուծոյ զինքն ամբառնայ եւ ըստ Նորա մեծապարգեւ բնութեանն հայցուածս արժանաւորս խնդրէ, այլ զմարմնականս, որ զօրէն խեցեղէն նիւթոյ դիւրաւ վնասի, ոչ շնորհէ, այլ անարգէ՝ եւս եւ ըստ անմիտ խնդրոյն՝ «շատախօս» կոչէ. մի գա՛յս կարծեն յայտնել զշատախօսութիւնն:

Եւ երկրորդ՝ թուի, թէ յերկարութենէ բանից հրաժարեցուցանէ, որք բազում տունս աղօթից կարգաւ ի բերան առեալ՝ անմտաբար առաջի հեղուն: Բայց ոչ ըստ ժամանակին ասեմ զյերկարութիւնն, այլ ըստ յոյովութեան բանին: Իսկ ժամանակաւ դեզերել պարտ է. զի թէ զանիրաւ դատաւորն այրին թախանձանօթ պաղատանացն էած ի հաւանութիւն³, եւ զբարեկամն ի տարածամ գիշերոյն ննջեալ ի մահիճսն՝ յարոյց ժտութիւնն⁴, որչափ եւս առաւել զՀայրն երկնաւոր շարժէ ի բարետրութիւն դեզերանացն յերկարութիւն: Բայց բանիւ չափաւոր լինել եւ զմաղթանս մտաւոր հնարել յարմար է եւ մի՛ բազմութեամբ բանիցս զլսելիս Աստուծոյ տաղտկացուցանել՝ ըստ այնմ. «Ձի՞նչ շահ է ձեզ յաճախել եւ Ինձ ոչ լսել» (հմմտ. Ես. ԾԸ 4), եւ թէ՛ «Կոխել զգաւիթս Իմ մի՛ յաճախէք» (հմմտ. Ես. Ա 12): Եւ զի զերկուս յեղանակ շատխօսութեանն յաջորդաւոր ցուցանէ:

¹ **g** > որ

² **S** վայրաբնակութեանս

³ Ղուկ. ԺԸ 2-5

⁴ Ղուկ. ԺԱ 5-8

«Մի՛ շատախօս լինիք իբրև զհեթանոսան, զի համարին, թէ ի բազում խօսից իւրեանց լսելի լինիցին»։ Գեղեցկապէս յաւելուածով բանին գլխամարութիւնն մերձ կացոյց։ «Որպէս հեթանոսքն» ասէ, զի յաղագս ասպականացուացն զփոյթ ունել սեփհական այնոցիկ է, որք ո՛չ զհանդերձելոյ յաւիտենին գոյսն յանձինս ամբարենն եւ կամ զդատաստանին երկիրդ, զգեհենին սպառնալիս, եւ կամ զբարեացն վստահութիւն, ըստ առաքելոյ, «որպէս այլքն, որոց ոչ գոյ յոյս» (Ա թԵս. Գ 12), որք զհեշտութիւնս որկորոյ եւ որովայնի աստուածս կարծեն եւ ի բարի մասին վիճակեն։ Նոցա է, ասէ, սովորութիւն զայդպիսիսդ խնդրել, վասն որոյ պարարտացուցանելով զաղօթս յերկարութեամբ բանից՝ կարծեն Աստուծոյ լսել եւ անտեղի կամաց իւրեանց գործակից լինել։

Արդ՝ մի՛ նմանիցէք¹ նոցա, զի գիտէ Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչչեւ ձեր խնդրեալ ինչ իցէ ի Նմանէ (Ձ 8)։

Ձի գորոց նմանութիւնն բերէք, զնոցին պտուղն ըմբոշխնէք՝ «ձեր աղաղակել եւ Ինձ ոչ լսել»։ զի գիտէ, ասէ, Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ։ Արդ՝ թէ գիտէ, ասեն ոմանք, եւ ընդէ՞ր իսկ աղօթեմք։ Նախ զայս ասեմք առ նոսա, թէ աղօթես, ո՛չ զի ուսուցանիցես, այլ զի ի ձեռն աղաչանացն ի խոնարհութիւն ածիցես, որպէս մանուկ, զի ողբայ. ո՛չ թէ ոչ գիտէ մայրն, զի ստինս խնդրէ, այլ զի ի ձեռն կական բառնալոյն արագ ի գթութիւն զմայրն զիջուցանէ։ Եւ երկրորդ՝ թէպէտ դու օտար իմն խնդրես յԱստուծոյ կամացն եւ ի քէն օգտութեան, սակայն Նա գիտէ զինչ օգուտ է քեզ, զայն շնորհէ՝ ըստ առաքելոյ թէ՛ «Գիտես զպէտս մեր եւ զկարիս առաւել քան զոր խնդրեմք եւ իմանամք» (Խմմտ. Եփես. Գ 20), եւ Տէրն թէ՛ «Ո՞ որ հայր, ցոր խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ օ՞ճ տայցէ նմա, եւ կամ թէ հաց՝ միթէ քա՞ր տայցէ նմա» (Մատթ. Է 9-10), այսինքն՝ զի մանուկն յաղագս տխեղծ հասակին տեսեալ օճ՝ ձուկն կարծէ զայն, միթէ տայցէ՞ Հայրն ի ձեռս նորա, եւ կամ քար՝ հաց իմանայ, միթէ շնորհիցէ՞ զայն նմա, զի մին հարկանէ եւ խոցէ, եւ միւսն զլինդսն քանդէ եւ զատամունսն փշրէ. վասն այսորիկ ասէ, թէ գիտէ զինչ պիտոյ է ձեզ։

Եւ արդ՝ այսպէ՛ս կացէք դուք յաղօթս. «Հայր մեր որ յերկինս»² (Ձ 9)։

¹ Ձ նմանէք

² Ձ յերկինս է

Որ ինչ անարժանն էր խնդրոյ՝ յայնմանէ հրաժարեցոյց, իսկ զարժանաւորութիւնն աղօթից ըստ գոյացութեան՝ միանգամայն ըստ որակի եւ ըստ քանակի առաջի դնէ եւ ասէ. «Հայր մեր որ յերկինս»: Բայց գիտել պարտ է նախ, եթէ «հայր» կոչել սեռաբար ըստ երիւս յեղանակս է. մի՛ անձինն Հօր, եւ երկրորդ՝ անձինն Որդւոյ, եւ երրորդ՝ Երրորդութեանն հաւասար:

Արդ՝ մին միայն անձինն Հօր վասն յաւիտենական ճշմարիտ ծննդեանն Որդւոյ. ասէ Եսայի թէ՝ «Չազգատոհմն Նորա ո՞ պատմեցէ» (Ես. ԾԳ 8), եւ Դաւիթ թէ՝ «Յառաջ քան զարուսեակ ծնայ զԲեզ» (Մաղմ. ԾԹ 3), եւ Սողոմոն թէ՝ «Յառաջ քան զամենայն բլուր ծնաւ զիս» (Առակ. Ը 25):

Իսկ երկրորդ՝ միայն անձինն Որդւոյ կոչիլ Հայր, որ փրկութեանն է. Եսայի ասէ. «Դու, Տէր, Հայր մեր եւ Փրկիչ մեր յաւիտենից անուն Զո» (հմմտ. Ես. ԼԳ 22). այս յեղանակ հայրութեան՝ Որդւոյ միայն ասի, զի փրկեցաք մեք մահուամբ Նորա՝ ըստ Տեառն. «Որդի Մարդոյ ո՛չ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել եւ տալ զանձն փրկանս» (Մատթ. Ի 28):

Իսկ երրորդ՝ հաւասար Երրորդութեանն են, ուր եւ գտանին յեղանակք հայրութեան: Առաջին՝ ըստ հրաւիրանացն, որպէս ասէ առաքեալ թէ՝ «Խաղաղութիւն ձեզ ի Հօրէ» (հմմտ. Փիլիմ. 3), որ հրաւիրեաց զձեզ: Երկրորդ՝ ըստ՝ ստեղծմանն՝ ըստ այնմ. «Ո՛չ սա ինքն է Հայր քո, որ ստացաւ զքեզ, արար եւ ստեղծ զքեզ» (հմմտ. Բ Օր. ԼԲ 6): Երրորդ՝ ըստ վերստին ծննդեանն, որպէս գրէ Պետրոս թէ՝ «Օրինեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի» (հմմտ. Ա Պետ. Ա 3), եւ Պօղոս՝ «Առաք զհոգի որդեգրութեանն², որով աղաղակեմք Աբբա Հայր» (Հռմ. Ը 15): Չորրորդ՝ ըստ հաւատոյ ուսման՝ ըստ այնմ թէ՝ «Որք ընկալանն զՆա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ ուրոց հաւատասցեն յանուն Նորա» (Յովհ. Ա 12): Հինգերորդ՝ ըստ փառացն պարգեւաց, որպէս ասէ Պօղոս. «Արդ՝ չես ծառայ, այլ որդի եւ թէ որդի, ասպա եւ ժառանգ Աստուծոյ» (Գաղ. Դ 7):

Արդ՝ երիւս են կոչմունք հայրութեան զյիսաւոր ձեւով, որպէս ասացաք, եւ է առաջինն՝ Հօր միայն, եւ երկրորդն՝ Որդւոյ, եւ երրորդն՝ Երից Անձանցն, վասն զի հաւասար են եւ անբաժանելի

¹ Տ > ըստ

² ՏԶ որդեգրութեանն (այսպէս՝ ամենուր):

գործք Երրորդութեանն, ուստի թուի, թէ եւ առաջիկայս ի հաւասար գլխոյն է, գոր ասէ թէ՝ «Հայր մեր որ յերկինս»: Մեծն Մոսէս, յորժամ ի լերինն Սինէական գՀինն Իսրայէլ առ Աստուած մերձեցուցանէր, երեքօրեայ սրբութեամբք սրբէր եւ ջրով շրջացանութեամբք զնոսին ողողեալ մաքրէր եւ ապա՝ Աստուծոյ ընդ առաջ հանէր, եւ տեսանէին զՆա հրով եւ միգով, փայլատակմամբք եւ փողով, յորմէ զարհուրեալ պակշէին եւ զՄոսէս միջնորդ հայցէին¹: Իսկ մերս² օրինադիր Տէր մեր Յիսուս Քրիստոս, զՆոր Կտակիս սպասատրսն առ Աստուած վերացուցանել կամելով, ո՛չ ի լերինս, այլ յերկինս հանէ եւ ո՛չ ահեղագոյ՜³ բարբառով վարդապետէ, այլ հեզ եւ քաղցր ձայնիւ հանդիպել Հօր՝ աղօթել ուսուցանէ եւ ոչ միայն տեսօղս աստուածային զօրութեանն գործէ, այլ յատուկ հաղորդս եւ ազգակից աստուածային էութեանն առնէ:

«Եւ արդ⁴՝ այսպէ՛ս կացէք յաղօթս. «Հայր մեր որ յերկինս»: Նախ առաջին՝ զամենայն շարժուն եւ զփոփոխելի բնութիւն տարերացս անցանել հրամայէ եւ ի վեր քան զերկինս եւ քան զամարմին զօրութիւնս ելանել եւ մերձ յանշարժն եւ ի կայուն Բնութիւնն հպիլ, յորմէ ամենեքեանս բերին առ անճառելին միացեալ՝ մտաց սլացմամբ, եւ ապա համարձակելով ասել. «Հայր մեր որ յերկինս»: Դարձեալ՝ ի սկզբան աղօթիցս զլսօղսն զարթուցանէ եւ զբնաւին իսկ երախտիսն յիշեցուցանէ, զի որ «Հայրն» կոչիցէ, զմեղացն թողութիւն եւ զտանջանացն դիրութիւն եւ զՄիածնին եղբայրութիւն եւ զՀոգւոյն պարգեւս միով բանիւս ընդ⁵ միտ ածիցէ, քանզի ո՛չ է հնար «հայր» կոչել զԱստուած, եթէ ո՛չ այսմ ամենայն բարութեանց հասեալ իցէ: Եւ դարձեալ՝ որ Հայր դաւանէ զՆա, զինքն ի ներքոյ որդիութեանն սահմանին գրաւէ, իսկ ի սոցա մէջն յիս եւ թշնամութիւն ոչ արմատանայ, եւ թէ լինի ստահակութիւն յորդին, հայր բնական գթովն եւ իմաստութեամբ ներէ եւ այնու միշտ զնա նահանջե[ա]լ պահէ: Այսմ հայրենի կամացս ընդարձակութեան ծանօթ եւ որդի՛ս, վասն որոյ ո՛չ զկապ սիրոյն յուսահատութեամբն խզէ. այլ զի՞նչ. թէ որպէս մանուկ մեղանչէ, դարձեալ դէմ եղեալ՝ զհայրն անուն դաւանէ, եւ նա ներողու-

¹ Ելք ԺԹ

² Տ մեր

³ Գ ահեղագոյն

⁴ Գ ասէ

⁵ Գ > ընդ

թեամբն ի ներքոյ թեոցն ընդգրկեալ պարտութի: Իսկ ի վերայ ծառայիցն ոչ պահի այս սահման սովորութեան, քանզի ոչ ունելով տեսնն էի ծառայի զքնական սիրոյ շաղկապ, վասն որոյ ի միանգամ մեղանշելն զարհուրի, եւ նա պատուհասէ: Բայց Եկեղեցիս Քրիստոսի Աստուծոյ Հօր ոչ է ի կարգ ծառայութեան, այլ յորդեգրութեան՝ ըստ առաքելոյ¹, եւ Տէրն թէ՛ «Հայր Իմ եւ Հայր ձեր» (Յովհ. Ի 17), ուստի եւ ոչ յապստամբելն² մեղօք զարհուրի, այլ զքնական գութն յիշելով՝ աներկիւղ պատկառանօք առ Հայրն դիմեալ ասէ. «Հայր մեր որ յերկինս»:

Բայց ուսուցանէ քննել, թէ զի՞նչ Հօր Աստուծոյ բնութիւնն իցէ. զի՞նչ այլ, քան թէ սրբութիւն, բարութիւն, արդարութիւն, մշտնջենատրութիւն եւ այլ նոյնպիսիք, քանզի այսպէս ուսար ի Գրոց: Արդ՝ եթէ կամիս զՆա Հայր քեզ կարդալ, զՆորին նմանութեանն տիպ՝ հարազատ որդիդ յանձին կերպարանեսցես, որպէս զի լիցի Սուրբն՝ սրբոյդ Հայր, Արդարն՝ արդարոյդ, եւ Բարին՝ բարոյդ, ապա թէ ոչ այսպիսի իցես, այլ աղտեղեալ զմտաց մաքրութիւնդ ունիցիս եւ յանդգնարար զնոյն ձայն բարբառել թէ՛ «Հայր մեր որ յերկինս», երկու սխալանօք սխալես: Նախ³՝ զի ես ոչ աղօթս ասեմ զայդ, այլ լուտանք եւ թշնամանք Աստուծոյ դէմ յանդիման ընծայես, քանզի «Հօրն» ձայն զպատճառն, որ ի Նմանէ գոյացեալն է, յայտնէ, իսկ թէ որ այնպիսի իցէ, մինչ զի չար խղճի մտացն հարեալ իցէ եւ Հայր զԱստուած գոլ ինքեան ասիցէ, ոչ այլ ինչ ինձ թուի, քան թէ ինքեան չարեացն առաջնորդ եւ պատճառ զՆա գոլ բամբասիցէ: Եւ երկրորդ՝ զի ոչ երբէք լսէ, վասն զի չար յօժարութեանդ Բարին ըստ բնութեան հայր լինել ոչ ունի, եւ ոչ մեռելոյդ մեղօք՝ որ Կեանքն է ստուգապէս, քանզի լոյս խաւարի ոչ ընտանենայ, որպէս ասէ առաքեալ⁴, եւ կամ ծառ բարի՝ պտուղ չար առնել⁵, վասն որոյ ձայնէ առ քեզ, թէ ստես եւ ոչ աղօթես, ոչ եմ Ես հայր քեզ, այլ ա՛յլ որք, զորոյ զկերպարանն ունիս յանձին դրոշմեալ՝ սանդարամետականն, քանզի նա է մեղք եւ մեղաց հայր, սուտ եւ ստութեան ծնօղ, որոյ վարուք եւ դո՛ւ ընտանեցեալ ես:

¹ Հռոմ. Ը 15, Գաղ. 7 5-6

² Գ յապստամբելոյն

³ Մի

⁴ Բ Կոր. Զ 14

⁵ Մատթ. է 18

Արդ՝ ուսաք, թե յորժամ հրամայե՛ր Տէր հայր մեզ կոչել զԱստուած, ոչ այլ ինչ, քան թէ բարձրագոյն վարուք զմեզ Նմին ընտանի¹ առնէ եւ ապա համարձակել եւ ասել. «Հայր մեր որ յերկինս»: «Մեր» ասելովն խրատէ ոչ անձանց միայն, այլ հասարակաց եղբարց զաղօթսն մատուցանել, քանզի ոչ ասէ՝ Հայր իմ, այլ թէ՛ Հայր մեր: Նաեւ զթշնամութիւն բառնայ այսուիկ եւ զհպարտութիւն ցածուցանէ, եւ զմայրն ամենայն բարութեանց զտէրն ի մեզ հաստատէ, եւ զթագաւորս եւ զտնանկս հաւասար պատուով ցուցանէ, զի թէ ի մեծամեծսն եւ ի կարեւորսն՝ զոյգ ամենեքեան, եւ ի վերինսն՝ միմեանց հաղորդեալք, ըստ առաքելոյ՝ ոչ ծառայ եւ ոչ ազատ, այլ ամենեքեան մի ենք ի Քրիստոս² ի ձեռն աղօթիցն մատուցման, զի՞նչ ինչ վնաս յերկրաւոր ազնուականութենէս լինիցի. կարծեմ թէ ոչինչ: Իսկ «յերկինս» ասելն ոչ թէ զՆա ի վեր անդ փակիցէ, այլ զայս իմն նշանակաւ ցուցանէ. թեպէտ «լի են փառօք եւ զօրութեամբ երկինք եւ երկիր»՝ ըստ մարգարէին (հմմտ. Ես. 23), եւ «ընդ ամենայն տեղիս է տէրութիւն Նորա» (Սաղմ. 66 22), սակայն ինքնութիւն անհասդ էութեան ի սեփական Քո աթոռ յերկինսդ բազմի՝ ըստ Երզողին. «Տէր յերկինս յաթոռ Իւրում» (Սաղմ. 65 5), եւ այլոր՝ «Նստիս ի քերթէս³ եւ հայիս յանդունդս» (Սաղմ. 72 1), այդանօր լոր զիմս հառաչանք, ուր եւ մարմնակից Եղբայրն մեր Քո Որդիդ ենուտ վասն մեր քահանայ եւ բարեխօս եւ մեզ ուսոյց զսոյն աղօթել: Եւ դարձեալ ցուցանէ, թէ երկնաւոր է Հայրն, որում դու երկրաւորդ արժանաւորեցար որդեգրութեան. եւ դարձեալ՝ զի զմիտս աղօթողին յերկրաւորացս բարձրացուցէ եւ ի վեր անդ յերկնից բնակութիւնն հանիցէ՝ յիշելով զնա իւր զաւառ լինել սեփական, յորմէ հեռացան՝ ըստ անառակին թէ՛ «Հայր, մեղայ յերկինս» (Գով. ԺԵ 21): Արդ՝ ոչ երբէք յիշէր զերկին, եթէ ոչ յիշատակ քո զաւառին առնէր, որպէս զի ուժգնակի զբարեացն փափագ ի քեզ վառիցէ եւ ի ճանապարհն, որ անդ տանիցի, արագ մուծանիցէ:

Սուրբ եղիցի անուն Քո:

Նախ «Հայր» ասաց, զի մի՛ ոք ախտաւոր ըստ մերոյ հարցս նմանութեան կարծեսցէ. ի վերայ բերէ թէ՛ «սուրբ է անուն Քո», այսինքն՝ սրբութեամբ ծնար զմեզ: Նախ՝ արարչութեամբ եւ այժմ՝

¹ ՏՁ ընդանի (թե՛ ձեռագրում, թե՛ տպագրում այս և նույնարմատ բառերը հանդես են գալիս մերթ դ-ով, մերթ տ-ով. ամենուր դ-ն դարձրել ենք տ՝ ընտանի, ընտանութիւն ևն)

² Ա Կոր. ԺԲ 13

³ ՏՁ քերթու (այսպէս է և այլուր):

մկրտութեամբ ի ձեռն Հոգւոյն Սրբոյ եւ ո՛չ հասարակական մտածութեամբ: Դարձեալ՝ այս բան ոչ միայն դասի է առաջին ի հայցուածս, այլեւ զօրութեամբ, քանզի կարգ ընթացից ունի[ն] ամենայն բանք աղօթիցս, որպէս հանդերձեալ ենք ուսանիլ: Չի Աղբիւրն բարեկարգութեան զի ա՛րդ յԻւրն սովորութենէ վրիպէր, ուստի եւ զայս նախ առաջին ուսոյց խնդրել ի Հօրէն՝ զՆորին անուանն սրբութիւն եւ փառաւորութիւն, զի թէպէտ Նա զԻւր փառսն լիով միշտ ունի, այլ կամի, զի եւ մեր խնդրուածովքն փառաւորեսցի: Բայց թէ ոք տարակուսեսցի, թէ զի՞նչ այս առ իմոյ հայցուածոցն պէտս ունի դիտաւորութեան, քանզի եւ այր մի եմ վաճառեալ ընդ մեղօք եւ շուրջ զինեւ ունիմ գունդս թշնամեաց պաշարեալ, հարկ է զաղօթս իմ այնպիսի առնել¹, զի ի մեղացն մաքրիմ եւ ի նոցա որոգայթիցն ազատիմ, որպէս Դաւիթ աղօթէ. «Տո՛ւր ինձ օգնութիւն ի նեղութեան» (հմմտ. Սաղմ. ԾԹ 13), եւ՝ «Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց» (Սաղմ. ԾԸ 2), եւ՝ «Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան² եւ ի մեղաց իմոց սո՛ւրբ արա զիս եւ լուս, եւ քան զձիւն սպիտակացայց» (հմմտ. Ծ 3, 4, 9):

Մեր նորին վարանացն լուծումն զայս արասցուք, թէ մարդկային բնութիւնս տկար է ինքեամբ ստանալ զբարին եւ յաղագս այնորիկ մարտակից զՀայրն կոչէ, զի զբարին ի մեզ ուղղիցէ: Եւ առաջին բարի եւ զլուխ ամենայն բարութեանց այն իսկ է, զի Աստուած ի վարս մեր փառաւորի: Եւ այս թէ ո՛րպէս լինի՝ զնորին ներհակն իմասցուք՝ զնախաձայնութիւն երջանիկ տեսանողին ի մէջ առնլով, քանզի ասէ. «Վա՛յ ձեզ, զի անուն Իմ վասն ձեր հայհոյի ի մէջ հեթանոսաց» (հմմտ. Ես. ԾԲ 5), զի ոմանք հաւատոյն անուամբ պանծան, եւ վարքն հակառակ անուանն տեսանի, զի կամ ազահութեամբ կռապարիշտ է եւ կամ ի տղմի գիճութեան զօրէն խոզի թաւալի: Առ ձեռն պատրաստ է անհաւատիցն զնա ամբաստանել. ո՛չ ի յօժարութիւն նորին կամաց զչարն գործել բամբասեն, այլ որպէս թէ օրէնքն իրեանց զայն գործել վարդապետիցեն: Եւ այսպիսի հայհոյութիւն յԱստուած ելանէ, որ օրինացն է տուիչ, վասն այնորիկ աւաղեսց մարգարէն: Արդ՝ թէ ոք ընդդէմ այս կամաց պարկեշտութեամբ զկեանսն վարիցէ եւ զայն ո՛չ անձամբ, այլ ձեռնտութեամբն Աստուծոյ կարծել կատարիցէ՝ ըստ

¹ Զ լինել

² Զ > ողորմութեան

առաքելոյ թէ՛ «Ո՛չ ես, այլ շնորհքն Աստուծոյ որ ընդ իս» (Ա Կոր. ԺԵ 10), յիրաւի աղօթէ նախ քան զամենայն ոչ լինել ի կեանս իւր պատճառ հայհոյութեանն անուանն Աստուծոյ, որպէս ասէ մարգարէն թէ՛ «ՉՏէր զօրութեանց սո՛րբ արասջիք» (Ես. Ը 13): Չոր տեսեալ զնորա ողջախոհ զնացքն նախ հայհոյիչքն՝ փոխանակ այնր փառաւորեն՝ ըստ այնմ. «Տեսցեն զգործս ձեր բարիս եւ փառաւորեսցեն [զՀայր ձեր որ յերկինս է]» (Մատթ. Ե 16), զոր աստ ասէ. «Սուրբ եղիցի անուն Քո»: Այսինքն՝ Քո գործակցութեամբդ եղեց արդար եւ անարատ, հեռացեալ յամենայն չարաց, որպէս զի տեսեալ զիս՝ Քո անուանդ բարեբանութիւն մատուցանեն: Իսկ «անուն» զհայրութեանն ասէ, որոյ շնորհօքդ որդիացայ, վասն զի Քո օգնութեամբդ զկոչումնդ զայդ ամբողջ պահեմ ի վերայ իմ ի ձեռն վայելչական զործոց, եւ մի՛ դարձեալ խորթ եղեց՝ պղծելով զանուն Քո սուրբ:

«Սուրբ եղիցի,- ասէ,- անուն Քո»: Բայց արդ՝ թուի ինձ, թէ նրբագոյն իմաստս բանիս այսու ծանուցանէ, զորոյ զգիտութիւն խորհրդոյս ո՛չ այլ ուստեք կարենք իմանալ, քան թէ ի նորին Տեառն վարդապետութենէն. թերեւս ընդ միմեանս բաղխելով բանիցս՝ զնորին կայծակն իմաստից կարող լիցուք առ մեզ փայլեցուցանել: Յորժամ աղօթէր Քրիստոս առ Հայր վասն առաքելոցն եւ ընդ նոքօք ամենայն աշխարհի, յաւել եւ զայս առ Հայրն Իւր. «Որպէս զԻս առաքեցեր յաշխարհ, եւ Ես զնոսս առաքեցի եւ ի վերայ նոցա սուրբ առնեմ զանձն Իմ, զի եղիցին եւ նոքա սրբեալք ճշմարտութեամբ» (Յովհ. ԺԷ 18-19), եւ Պօղոս վասն իւր ասէր առ երիցունս եփեսացոցն. «Սուրբ եմ ես յարենէ՛ ձեր, զի ոչ խորշեցայ ի պատմելոյ զօգտակարն» (Գործք Ի 26-27): Արդ՝ սուրբ լինելն Քրիստոսի ի վերայ աշակերտացն այն էր, զոր ուսոյց եւ վարժեաց զնոսս ամենայն իմաստութեամբ, յետ որոյ եւ աղօթեաց նոցին. թէ այնուհետեւ յանցանէին, անձամբ զանձինս դատապարտէին: Այսպէս եւ Պօղոսին, զի թէ ոչ էր զգուշացուցեալ, զարիւն նոցա ի ձեռաց նորա խնդրելոց էր Աստուած, իսկ յետ զգուշացուցանելոյն սրբեցաւ:

Ըստ այսմ խորհրդոյ եւ զաղօթիցս ծանիցուք զիմաստ, քանզի Դո՛ւ, ասէ, Հայր, դէտ ես ի վերայ մեր եւ միշտ տեսանես զարկածս չարին ամենահայեաց աչօքդ՝ զոր սերմանէ ի տկար բնութիւնս, զիտես եւ վասն յանցանացն զՔո պատուհասիցդ որքանութիւն, իսկ մեք նսեմացեալ մտօք ի զբաղումն մարմնոյ՝ ոչ տեսանենք

զնորա նենգութիւնն եւ կամ գՔո դատապարտութիւնն: Վասն որոյ աղաչենք, սրբեա՛ գՔո անունդ ի ժողովրդենէս Քումմէ՛ արենէ՛՝ զարթուցանել զմեզ առ Քո փառացդ սէր եւ պատուհասիդ երկիւղ եւ առ թշնամոյն զաղտնի նետիցն զհտութիւն, եւ պատերազմին տալով զօրութիւն, որպէս Յորայ¹, զի եթէ զայս ունելով մեր՝ մեղանչենք, սո՛րբ լիցի անուն Քո ի վերայ մեր, որպէս Քրիստոսիմ²՝ ի վերայ Յուդային՝ յետ բազում նախախնամութեանն, եւ Քոյդ՝ Հօր Աստուծոյ՝ ի վերայ երբայական տոհմին՝ յետ Օրինացն տուչութեան եւ պարգեւական երկրին: Իսկ «եղիցի» ասելն զայս նշանակէ, թէ ո՛չ այսօր կամ վաղիւն, այլ միշտ եւ հանապազ զայս սովորութիւն հայրական խնամօքդ մատակարարես, եւ կամ թէ՛ ճշմարտապէս կատարեսցես առանց յետս դառնալոյ, զի «եղիցին» ճշմարիտ լսի:

Եկեացէ արքայութիւն Քո (Ձ 10):

Մտերիմ եւ բարեբարոյ որդոց է խնդրուածս այս՝ ո՛չ ընդ երեւելիսս հայել եւ կամ մեծ զանցաւորս համարել, այլ փութալ առ Հայրն եւ Նորա թագաւորութեանն հասանել՝ ըստ առաքելոյ թէ՛ «Անձամբ յանձինս հեծենք, որդեգրութեան ակն ունիմք» (Հոմմ. Ը 23), որպէս ասէ թէ՛ «Եկեացէ արքայութիւն Քո»: Բայց ինձ թուի, թէ առաջին բանին թարգման է եւ մեկնիչ, քանզի ասաց նախ թէ՛ «Սուրբ եղիցի անուն Քո», իսկ թէ որով օրինակաւ այս լինի, յառաջ մատչի եւ ասէ, թէ արքայութեան Քո զայստեամբ ի վերայ մեր, ուստի ցրուին ամենայն բանակք այլազգեաց եւ քայքային զինուորք մեղաց, որ «զօրացեալ են յանդամս մեր³» (հմմտ. Հոմմ. Է 5), եւ մի՛ այլ եւս իշխեսցէ մեղք, եւ նովաւ մահ բռնութեամբ թագաւորեալ ի մահկանացու մարմինս մեր: Այլ թէ որ ասէ՛ միթէ ո՛չ իցէ Աստուած թագաւոր, եւ ո՞ այլ որ, զի աղօթել զայս ուսուցանէ, զիտացէ, զի թէպէտ «թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Աստուած է»՝ ըստ մարգարէին (Մաղմ. ԽԶ 8), բայց աղերսանօք զսոյն խնդրել ո՛չ է վայրապար, քանզի բազումք ի մարդկանէ ուրանան զՆա կամ անգիտութեամբ բնաւին ոչ անուանեն զանուն Նորա, որպէս փարաւոն թէ՛ «ՉՏէր ոչ զիտենմ» (Ելք Ե 2). եւ կամ ի զիտելն՝

¹ ՏՁ Յորայ (այսպէս է և այլուր):

² Ձ քոյին

³ Տ իմ

գործովք հեռանան ի Նմանէ, որպէս բազումք՝ ըստ այնմ. «Մեղքն ձեր որոշեն ի մէջ ձեր [եւ ի մէջ Աստուծոյ]» (Եւ. ԾԹ՝ 2):

Վասն այսորիկ ուսուցանէ յաղօթս ասել, թէ եկեացէ Հոգիդ իմաստութեան եւ հանճարոյ յանձն իմ, քանզի ի յունին՝ փոխանակ ասելոյ «եկեացէ արքայութիւն Քո», ասէ Դուկաս «եկեացէ Հոգի Քո Սուրբ ի վերայ մեր եւ սրբեացէ զմեզ»: Նախ՝ զի Աստուած ցուցանէ զՀոգին ընդ Հօր եւ ընդ Որդոյ սրբիչ մեղաց, եւ ասպա՝ զի Նորա՝ զայն ուսուցէ ինձ զհտել զահաւոր Քո թագաւորութիւնդ եւ զսիրոյդ առ իս զառատութիւն այնպէս, որպէս պարտն է զհտել, եւ որպէս առաջի մարմնական աչաց զնոյն հանապազ ունել, զի մի՛ այլ կամակար մտօք յանցանեմք, որպէս եւ ո՛չ առաջի թագաւորի եւ հանդիսական նորա հրապարակի խայտառակ մերկանալ: Վասն այսորիկ ասաց նախ թէ՝ «Սուրբ եղիցի անուն Քո», եւ այժմ թէ՝ «Եկեացէ արքայութիւն Քո», այսինքն՝ նկատել[ալ] զճշմարիտ արքայութեան պատկեր առաջի տեսողականս մտաց՝ սուրբ պահեմք զանուն Քո մարտր գործովք՝ ըստ այնմ. «Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ, զի մի՛ սասանեցայց» (հմմտ. Սաղմ. ԺԵ 8), քանզի զսոյն եւ յաջորդդ քարոզէ:

Եղիցին կամք Քո որպէս յերկինս՝ եւ յերկրի:

«Կամք» ասելն՝ բազմաւորական է անուն, իսկ Աստուած ոչ է բազում, այլ մի, որպէս ասէ առաքեալ. «Մեզ մի է Աստուած» (Ա Կոր. Ը 6), թէպէտ երեք է ըստ անձանցն՝ Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ: Արդ՝ թէ մի է Աստուած, որպէս ամենայն ոք խոստովանի եւ Գիրք վկայեն, ընդէ՞ր ի վերայ միոյ բնութեանն բազմութիւն կամաց դնէ բանս՝ ասելով «եղիցին կամք Քո»: Չայս տարակուսութիւն կրկնակի դիմօք լուծանել ջանամք: Նախ՝ վասն թերութեան լեզուիս, զի չունիմք եզական անուն կամացն, որպէս բնութեանն, զի գտաք ի լատին բարբառ եզական լինել զբառս զայս եւ ո՛չ բազմաւորական, վասն որոյ հարկեալ թարգմանիչքն վասն ոչ ունելոյ եզակի անուն՝ բազմաւորական եղին: Եւ երկրորդ՝ երկու կամս ծանեաք ի Գրոց ունել Աստուծոյ. առաջին՝ «զբարին, զհաճոյն եւ զկատարեալն»՝ ըստ առաքելոյ (Հոմմ. ԺԲ 2), եւ Դաւիթ թէ՝ «Կեանք են ի կամաց Նորա» (Սաղմ. ԻԹ 6), եւ երկրորդ՝ զտանջեալն՝ ըստ այնմ. «Ոչ կամիմ զմահ մեղաւորին, այլ զդարձն» (հմմտ. Եզեկ. ԺԸ 32), իսկ

¹ Զ ի Նորա

դեղ դառնալոյն չարչարանքն է, որով խրատեալ մարդիկ բարիանան: Արդ՝ աղօթել ուսուցանէ Տէր բանիս, թէ զհաճութիւն կամաց Քոց եւ զկատարելութիւն կենաց, որ բարի է ամենեւին, միշտ ծագեա՛ ի մեզ եւ որպէս զհմանալի տեսչութիւն նախախնամական բարետրութեանցդ երկնաւորացդ բաշխես, այսպէս եւ յերկրաւորքս եղիցի[ն] բարեգարդութեան պարգեւք հոգեկան եւ մարմնական յոփութեանց: Նա՛ թէ եւ տանջես եւս, վասն դարձի՛ եղիցի, եւ այն՝ ի բարեսէր կամաց Քոց սարտուցեալ որդոցս ի խրատ, քանզի ո՛չ իշխենք քննել զանհետագօտեղի իրաւունս դատաստանաց Քոց եւ կամ հայել ի գործս չարչարանաց Քոց, զի մի՛ մածանիցիմք արձան ադի՛ եւ կամ կշտամբիմք բանիւ իբրեւ զՅոր երանելի՞¹, այլ յանձն առնուիմք հնազանդութեամբ որպէս երկնայինքդ: Ձի յորժամ զբանսարկուն տանջեցեր, ոչ իշխեցին հարցաքննել, այլ զգուշութեամբ յերկիւղի կան. այսպէս լիցին, ասէ, եւ երկրաւորքս:

«Եղիցին կամք քո»: Եւ դարձեալ՝ կամք Քո այն էր՝ անմահ մնալ մեզ եւ վայելել ի փառս դրախտին, եւ վասն զի ոչ արարաք՝ զայն, հիւանդացաք մեղօք եւ մահուամբ: Արդ՝ եղիցին կամք Քո ի մեզ որպէս յայնժամ, մինչ յերկինս էաք ի դրախտին, որոց զանմահութիւն ախորժէիր ժառանգել. նմանապէս այժմ, որ ի վերայ երկրի շրջիմք տառապանօք, զնոյն կամաց քաղցրութիւն աղբատացելոցս պարգեւեա՛ վերստին զանմահութիւն շնորհելով: Որպէս որ բարի տեսոն պատահեալ եւ զկամս նորա ի վերայ ինքեան քաղցրացուցեալ, եւ սպա սպստամբեալ ի նմանէ՝ դառնացուցանէ զտէրն, իսկ անագան ուրեմն ի հնազանդութիւն եկեալ՝ զնոյն աղերսէ, թէ որպէս նախքան զսպստամբելն իմ քաղցրութեամբ առ իս վարէիր, առաւել եւս այժմ, որպէս զի իմ յայս վստահացեալ՝ կարացից սպասատրել քեզ: Եւ կամ որպէս հիւանդ առ բժիշկ պաղատի թէ՛ նախ զկամս Քո ոչ արարի պարկեշտութիւն ստանալ ի յոփութենէ կերակրոց, որով յառողջութիւնն մնալի, իսկ այժմ զփորձ հիւանդութեանն առեալ՝ ըստ կամաց Քոց վարեցայց: Սակայն Դու զկամս Քո առ իս՝⁴ այնպէս քաղցրացո այժմ, որ ի

¹ Ծննդ. ժԹ 17, 26

² Յոր ԼԸ-ԽԱ

³ Զ արար

⁴ Զ ~ զկամս Քո առ իս Դու

վերայ երկրի եւ, որպէս յայնժամ, մինչ առ երկնօքն գեղապարեալ ճեմէի:

«Եղիցին,- ասէ,- կամք Քո». այսինքն՝ փրկութիւն իմ, քանզի զայս կամիս դու: Եւ դարձեալ՝ ի լինել կամացոյ Քոց յիս՝ շիջցին բանասարկուին կամք, որում հետեւեալ մահացայ, վասն որոյ ի դեմս մեր աղօթեաց Տէր. «Ո՛չ Իմ կամք, այլ Քոյոյ լիցի» (Գուկ. ԻԲ 42): «Եղիցին,- ասէ,- կամք Քո որպէս յերկինս՝ եւ յերկրի»: Բայց դու աստանօր եկ ինձ զարմացի՛ր ընդ յարմարութիւն բանիցս, քանզի նախ խնդրեաց ի Նմանէ տիրել եւ ասպա զկամս Նորին կատարել, որպէս ի մէջ մարդկան այս սովորութիւն սահմանի պահի, քանզի նախ տիրէ որ ումեք եւ ասպա զկամսն ի վերայ նորին ի գործ արկանէ, եթէ քաղաք շինէ, եթէ ծառայ կերակրէ, եթէ աշակերտ ուսուցանէ: Այսպէս եւ սա նախ ընդ արքայութեամբ Նորա զանձն լինել կարգեաց եւ ասպա որպէս ի սեփական Տեառնէ զտնօրէնութիւն կամացն պահանջէ կատարել, որպէս ասէ թէ՛ «եղիցին կամք Քո», եւ ի վերայ բերէ. «այնպէս, որպէս յերկինս եւ յերկրի»:

Այլ թէ ասիցէ որ՝ զհա՛րոյ կամք Նորա կատարի յերկնայինսն, զի ըստ նմանութեան նոցա եւ մեք կատարեսցուք, ասասցուք, թէ մեք ոչ գիտեմք, բայց «որ էջն յերկնից Որդին Մարդոյ, որ էն յերկինս» (Յովն. Գ 13), որ քաջ գիտակն էր պաշտաման նոցին, ուսոյց զսոյն աղօթել: Քանզի մատեան աշակերտքն առ Տէր թէ՛ «Ուսո՛ մեզ յաղօթս կալ, որպէս ուսոյց Յովհաննէս իւրոց աշակերտացն» (Գուկ. ԺԱ 1), իսկ Նա ո՛չ ըստ նոցա խնդրոյն, այլ որպէս Ինքն գիտէր, այնպէս ուսոյց: Չոր օրինակ՝ ոմանք ի գռեհիկ արանց, գոլով ի հեռաւոր աշխարհէ, անկիրթ հռոմայեցոց¹ սովորութեանն եւ անհմտ արքունական պաղատանն բարեկարգութեան, երթան ի դուռն արքային ողորմութիւն աղերսել եւ ասպա հասեալ անդ[ր]՝ տարակուսին յանձինս՝ ոչ գիտելով, թէ ո՛րպէս մտցեն առաջի թագաւորին եւ կամ թէ զի՛նչ ըստ կամաց արքային ի նմանէ խնդրեսցեն: Եւ մինչդեռ կան յայսմ տարակուսի, պատահեսցէ նոցա որդի թագաւորին որպէս զմի ի հասարակաց զինուորացն, զոր տեսեալ զնա՝ արագեալ փութան առ նա՝ ասելով. «Ո՛վ եղբայր, ուսո՛ մեզ, թէ ո՛րպէս մտցուք առաջի արքայի»: Իսկ նորա բարեմիտ գոլով՝ ոչ անգոսնէ զտմարդութիւնն, այլ սիրով ողորմեալ նոցա՝ պատասխանէ. «Ես ուսուցանեմ ձեզ. յորժամ մտանէք առաջի արքա-

¹ ՏԶ հռոմայեցոց (այսպէս է և այլուր. հռոմ] հռոմ):

յի, երկիր պագէք վաղվաղակի եւ ասացէք ցնա. «Տո՛ր մեզ պատիւ սինկղիտոսութեան, որք առաջին են ի պաղատս քո»¹: Եւ նոքա ոչ զսինկղիտոս անուն գիտեն եւ ոչ զգօրութիւն նորա, ոչ զպաղատն եւ ոչ զդասակարգութիւն նորա, այլ մտեալ առաջի թագաւորին՝ զոր ուսան քան, աղաղակեն վաղվաղակի: Իսկ դասակարգութիւն արքունական սպարանիցն, նայեալ ի բարբառ նոցա, զի օտար է, եւ ի ձայնն, զի շինական է, ի դէմսն, զի գոեհիկ է, եւ ի կերպարանս հանդերձիցն, զի անպաճոյճ է, սքանչաւան յինքեանս. «Ուստի՞ զիտեն սոքա կամ յումմէ՞ ուսան զանուն սինկղիտոսութեան եւ զպատիւ՝ այսպէս օտար գոյով յարքունական սպարանիցս»: Ըստ այնմ օրինակի եւ Տէր մեր անհա՛ս ի հրեշտակաց եւ ի մարդկանէ արար զմարմնատրութեան խորհուրդն, որպէս ասէ Պօղոս¹, առ որ մատեան աշակերտքն ո՛չ իբրեւ յԱստուծոյ, այլ իբրեւ ի Յովհաննէ՝ ուսուցանել զսահմանս աղօթիցն: Իսկ Նա, գթացեալ ի նոսա ամենագութ սիրով, ո՛չ որպէս տանէին յայտնեաց, այլ զերկնային անճառ խաղաղութիւնն աղօթիք ի Հօրէն ուսոյց հայցել:

«Եղիցին,- ասէ,- կամք Քո»: Արդ՝ զայս խնդրելով մեր յԱստուծոյ՝ արդարեւ ոչ գիտենք զգօրութիւն հայցուածոցս, սակայն զերկնայինսն զարհուրեցուցանենք մեծաբանութեամբ² աղօթիցս, զի զոր ոչ գիտէաք զպատիւ նոցա՝ տեղեկացեալ մեզ Քրիստոսի՝ խնդրենք ունել սեփհական, քանզի «կամք» ասելովն՝ զամենայն իջումն շնորհացն Աստուծոյ ընդ քանիս պարունակեաց՝ ունել հաւասար նոցա, այսինքն՝ զի կամացն այլայլութիւն արգելու ի մէջ զփառս նոցա, քանզի առ նոսա ունի զկամս իբրեւ առ կամարարս եւ առ մեզ՝ իբրեւ յանցաւորս՝ ըստ այնմ. «Դու հանապազ ընդ իս ես, եւ ամենայն որ ինչ իմ է՝ քո է» (Ղուկ. ԺԵ 31): Արդ՝ եղեալ այս կամացս ի վերայ յերկրի՝ եղեւ մարդկան Նորայն ամենայն ինչ, որպէս եւ հրեշտակացն:

Գեղեցիկ է եւ յաւելուած քանիս թէ՛ «որպէս յերկինս՝ եւ յերկրի», զոր քննել արժան է: Քանզի ամենայն քանական արարած յերկուս է բաժանեալ՝ ի հրեշտակականն եւ ի մարդկայինն: Արդ՝ հրեշտակականն որոշեալ է յայսպիսի ընդդիմահար մարմնոյս ծանրութենէ եւ ի վերնում կայանին շրջի՝ ի թեթեւագոյնն եւ յաս-

¹ Կող. Ա 26

² Զ մեծագրութեամբ

տուածատեսակ տեղիսն բնակելով, իսկ մարդկայինս, յաղագս մարմնոյս մերոյ առ հողս ազգակցութեան, հարկաւորապէս զերկրայինս զայս ընկալաւ տեղի, սակայն բարոյն եւ լաւագունին ցանկութիւնն հաւասարապէս յերկոսեան հաստատեցաւ բնութեամբ, այսինքն՝ յանձնիշխանութիւնն եւ յամենայն հարկաւորացն ազատութիւն: Բայց վերնականքն¹ մաքրեալք են յամենայն չարութենէ, եւ ամենայն ախտաւոր շարժմունք ի ստորին կեանս շրջին իբր մրուր ինչ եւ կամ տիղմ, յորում մարդկայինս է տեղի, այսորիկ աղագաւ ուսուցանէ Տէր այնպէս ի չարութենէ մերոց կեանացս մաքուրս լինել, եւ ի մեզ անխափան կամքն Աստուծոյ կատարիցի, որպէս ի նոսա, զի «հզօրք են զօրութեամբ, առնեն զբան Նորա եւ լսեն ձայնի պատգամաց Նորա» (հմմտ. Մատթ. ԾԲ 20): Վասն որոյ ո՛չ ասաց թէ՛ «յիս» կամ «ի մեզ» միայն, այլ յամենայն երկրի՝ առ ի քակելոյ մոլորութեանն եւ տնկելոյ ճշմարտութեանն, զի ամենեցուն խնամ² Քե՛զ է յանձին, որ Տէրդ ես եւ ստեղծող նոցին: Այլ թերեւս որ ընդդէմ դնիցէ, թէ զիա՞րդ իցէ կարողութիւն որպէս յանմարմին զօրութիւնս, այսպէս եւ մարմին ժառանգելոցս զմաքրութիւնն լինել՝ բիրտ հոգովք ոգիս մեր վասն մարմնական պիտոյիցս ի խոր ընկղմե[ալ]: Չայս տարակուսանս, որ ի կարգիս բան է, լուծանէ ասելով.

Չհաց մեր հանապազորդ տո՛ր մեզ այսօր (Ձ 11):

Գոն եւ ի մարմնականքս հոգեւոր, զի անկարօ՛տ բնութեանն սակաւապիտոութեամբ հաւասարակից առնէ, քանզի ո՛չ խնդրէ յԱստուծոյ հրեշտակ զհացի մատակարարութիւն, իսկ մարդկայնոցս հայցել հրամայեցաւ վասն ունայնութեան լրման եւ հոսանուտ եւ անցաւոր մարդկային կեանացս բնութեան: Ուստի ո՛չինչ արտաքոյ քան զկարեւորսն հրամայէ հայցել, որով ի հրեշտակական վարուցն ո՛չ լինի նուազեալ: Վասն այսորիկ առ ի պահպանութիւն մարմնական բնութեան՝ խնդրել հրամայեցաւ հացն՝ ասելով ցԱստուած՝ տուր մեզ ո՛չ փափկութիւն կամ իշխանութիւն, կամ երկրի առատութիւն կամ քաղաքաց եւ ազանց պետութիւն, կամ ձիոց եւ արջառոց հոյսս եւ կամ ստրկաց յաճախութիւնս, եւ կամ այլ ինչ նոյնպիսի, որով ի վայր քարշի հոգի յԱստուծոյ, այլ

¹ Ձ վերին կեանքն

² Ձ խնամք

զհացն: Որով ուսուցանէ թէ՛ դադարեցէ՞ք, ո՛վ մարդիկ ի սնտոխաղ պատրեայք, լռեցէ՞ք ի տաժանմանցդ, սակաւ են մարմնոյդ պէտքն, եւ դու զբազում իւիք զբաղեալ ես, որպէս ասաց Տէր առ Մարթա¹: Նոյնպէս եւ աստ՝ զհաց մեր տուր մեզ, այսինքն՝ ի Քէն է իմ կեանքս, ի Քէն եղիցի եւ կելոյս պատճառն, իսկ մերն յարդար վաստակոց, ասէ, զկերակուրն ընդունելով եւ մի՛ յայլոց արտասուաց շահել, կամ զմեր բաւականն, ըստ իմաստնոյն թէ՛ «Կշռեա ինձ զարժանն բաւականութեամբ» (Առակ. Լ 8), եւ Յակոբ թէ՛ «Տացես ինձ հաց ուտելոյ» (հմմտ. Ծննդ. ԻԸ 20), եւ Պօղոս թէ՛ «Ունիմք կերակուր եւ հանդերձ, այնո՛ւ շատասցուք» (Ա Տիմ. 2 8):

Իսկ զի՞նչ «հանապազորդ»-ն է. քանզի զմարդկանէ խօսի, որ մարմին զգեցեալ են, որոց ոչ է մարթ, մինչ աստէն ի մարմնի են, զհրեշտակաց անչարչարութիւնն կրել յանձին, վասն որոյ ըստ որքանութեան մարմնոյս կենդանութեան զհացն խնդրէ եւ զնոյն՝ օր ըստ օրէ: Եւ ո՛չ զայս բաւական համարի, այլեւ զայն եւս յաւելու թէ՛ տո՛ւր մեզ այսօր. զի եւ որք յառաջ հոգովք աշխատին, անհոգս առնէ՛ նշանակելով, թէ առօրեայ են կեանքդ, մի՛ յաղագս անյայտութեան հանդերձելոցն տաժանիլ, զի «շատ է աւուրն չար իւր» (Մատթ. 2 34), որպէս զի ասել, որ զօրն տայ ծագմամբ արեգականն եւ շրջագայութեամբ երկնի եւ բաժանմամբ տունջեան եւ զիշերոյ, նաեւ զաւուրն պէ՛տքն շնորհէ քեզ: Եւ «հաց» ասելով՝ զբովանդակ մարմնոյն պէ՛տս պարունակէ:

«Չհաց մեր հանապազորդ,- ասէ,- տո՛ւր մեզ այսօր»: Դարձեալ՝ հաց խնդրելով՝ ո՛չ զդիրաժախս զայս, այլ զերկնատրն, զոր «հրեշտակաց» կոչեաց Դաւիթ², որ յուտելն ոչ ծախի եւ յըմպելն ոչ նուազի, զկերօղն յագեցուցանէ եւ ինքն յինքեան ամբողջ մնայ: «Չհաց մեր» ասէ, քանզի էր երբեմն եւ մեր հրեշտակական իմաստիցն կերակուր յայնժամ, մինչ ի դրախտին փափկութեան զնոյն կթէաք, ընդ որս խանդացեալ չարն զրկեաց եւ բանջար վայրենի փոխանակ այնր հացի ուտել մեզ պատրաստեաց, զորս դարձեալ Նորոգօղն էիցս եւ վերստին Չուլօղն բնութեանս զնոյն մաղթել ուսուցանէ: «Չհաց մեր» ասէ, որ է իմաստութեանն տարփումն եւ գիտութիւն սիրոյն Տեառն մերոյ ի ձեռն մարմնոյ եւ արեանն հաղորդութեան՝ ըստ այնմ. «Եկայք կերէք ի հացէ Իմմէ» (Առակ. Թ 5), եւ՝

¹ Ղուկ. Ժ 41

² Սաղմ. 71 25

«Կերայ զհաց իմ մեղու իմով» (Երգ Ե 1), եւ թէ՛ «Կշտապինդ վայելեցէք ի հացն երկնային» (Իմմտ. Ես. ԿԶ 11), որ հաստատութիւն է սրտի, զի որք ճաշակեցին, քաղցրացան ի սոյն՝ ըստ երգոյն թէ՛ «Քաղցր են ի քիմս իմ բանք Քո, քան զմեղր բերանոյ իմոյ» (Սաղմ. ԾԺԸ 103), զորս հրաւիրեաց դարձեալ ուտել զհացս զայս ի սեղանն Հօր յարքայութիւնն երկնից, որք երեւեցան ի տեղուջն Աստուծոյ եւ կերան եւ արբին:

«Տո՛ր մեզ,- ասէ,- այսօր»: «Այսօր» զքովանդակ կեանքս կոչէ, յորս պանդխտանամք, ըստ առաքելոյ՝ «մինչդեռ այսօրոյ առաջի կայ» (Եբր. Գ 13): Արդ՝ ասէ, թէ յորժամ ելանենք ի մարմնոյ եւ արտաքս գնանք յաշխարհէ, անաշխատ եւ անխափան վայելենք ի նոյն՝ ըստ երկնատրացոյ լրման, իսկ ցորչափ ենք ի մարմնի, ներհակք բազումք են աստուածային հացիդ ճաշակման, վասն որոյ օժանդակեա՛ այժմ մեզ Քոյին զօրութեամբդ եւ տո՛ր մեզ վայելել այսօր յանձախելի մշտահոս զանձուց իմաստիցդ պարզեւս:

Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց (Զ 12):

Յայսմ բանէ ամաչեսցէ՛ Նաւատիոս, որ զմեծ եւ զանհամեմատ պարզեւս ապաշխարութեանն շնորհի բառնայ ի մարդկանէ՛ ասելով, թէ ապաշխարութիւնն՝ նախ քան զմկրտութիւնն է ընդունելի, իսկ յետ մկրտութեանն՝ ոչ: Աստ ահա որդիացեալք նախ մկրտութեամբ աւագանին, եւ ապա համարձակեցան Հայր կոչել զԱստուած՝ ըստ այսմ թէ՛ «Որք ընկալան զՆա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել. որք ո՛չ յարենէ եւ ո՛չ ի կամաց մարմնոյ, եւ ո՛չ ի կամաց առնն, այլ յԱստուծոյ ծնան» (Յովհ. Ա 12-13): Ապա ուրեմն յետ մկրտութեանն է այս, եւ յետ զբազմապատիկ չարիսն ջնջելոյ՝ մարդասիրեալ դարձեալ տայ զպարզեւս՝ զյանցուցեալսն թողութեան արժանի առնել. զի թէ ո՛չ կամէր զայս, նաեւ ոչ իսկ դներ օրէնս այսպիսի աղօթս մատուցանել թէ՛ «Թող մեզ զպարտիս մեր»: Բայց տես, թէ յորպիսի՛ ծայրս բարեփառութեան հանէ զաղօթօդն. ոչ միայն առաքինութեամբ ընդ Աստուծոյ խօսակցել, այլեւ այլ օրինակ իմն աստուած լինել, զի ո՛չ այլ ումեք է թողուլ զպարտս մեղաց, բայց թէ միայն Աստուծոյ. վասն որոյ զքեզ պատժապարտդ, ասէ, արարի տէր եւ դատաւոր՝ տալով զվճիռ, զի որպէս դու կշռեսցես ծառայակցին, հաւասար այնմ եւ զդատաստանն քո յԻնէն գտանիցես:

Եւ զո՞յս անուանէ պարտս: Նախ՝ զի որոշեցաք ի բուն Տեառնէն եւ առ հակառակորդն յօդեցաք. եւ երկրորդ՝ զկերպարանին օտարութիւն եւ զչար մեղացն ծառայութիւն ընտրեցաք՝ փոխանակ ինքնիշխան ազատութեանն, յորմէ՝ սեղանոյն ի բաց հատումն եւ պատուական ճոխութեանն վատնումն եւ որ այլ սոյնպիսիք, զի¹ Գիրք Սուրբ պարտական պատուհասից զմեզ Աստուծոյ գրեն, ընդ որոյ պարտուց գրաւի ամենայն ոք, թէպէտ ի յոյժ վեհագունիցն եւ յարժանաւորացն իցէ: Չի ո՞ք է սուրբ ի յաղտոյ մեղաց, թէպէտ միօրեայ իցեն կեանք նորա ի վերայ երկրի, թողում ասել զայն, որ ըստ ոգոյն եւ մտաց կամ զգայութեանց զայթազդեալ իցէ, եւ յանաչառ դատաւորին խղճէ կշտամբեալ դատիցի: Արդ՝ այս Աստուծոյն պարտք, իսկ մերն զի՞նչ. սակաւ ինչ դանգուց հաշիւ, կամ անարգանաց բանք, կամ թշնամանաց պատճառք, կամ մարմնական մահուց նենգութիւն, եւ յաղագս այտորիկ վրէժխնդիր լինիցիմք եւ սրտիս այտուցեալ զայրանամք: Չոր ըստգտեալ Տէրն՝ առակաւ յայլում վայրի ասէ, թէ թագաւոր ոմն զժառայս իւր ի դատաստան կոչեալ՝ համար պահանջէր, եւ մատուցեալ ոմն բիւր քանքարուց պարտապան, եւ իբրեւ ոչ ունէր հատուցանել՝ մարդասիրութեան դիպեցաւ, վասն զի առաջի անկեալ մատուցեց, իսկ յետ այնորիկ արտաքս ելեալ՝ զժառայակից զոմն խեղդէր վասն չափաւոր պարտուց, որոյ զայրացեալ Տէրն՝ հրամայեաց դահճացն տանջել, մինչ զարժանաւորն հատուցէ պատուհաս²: Արդ՝ զի մի՛ այս լիցի, ասէ. «Թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք [թողումք մերոց պարտապանաց]»: Չի՞նչ է՝ «որպէս եւ մեք թողումք». կամ թէ՛ յորժամ թողուցուս զպարտս մեր, վարժեալ եւ մեք ի բարերար Տեառնէն իբր յերկնաւոր վարդապետէ՝ եւ մեք մերոցն շնորհեմք, կամ թէ՛ ըստ նմանութեան մեր եւ Դո՛ւ թողուցուս, զի թէ աղքատ[ք]ս յամենայնի եւ անբարիս՝ թողումք զյանցանս ընկերաց մերոց, քանի՞ առաւել ճոխդ եւ բարիդ բնութեամբ՝ թող մեզ, ասէ, զպարտիս:

Հայեաց դարձեալ եւ ընդ կարգ աղօթիցս. զի ո՛չ նախ զմեղս թողուլ ուսոյց եւ ասպա ընդ Աստուած խօսել, որպէս եւ մարդկան է սովորութիւն. քանզի նախ ներումն խնդրեմք ի թագաւորէ եւ ասպա՛ զբարիս հայցեմք: Իսկ սա ո՛չ այնպէս, այլ զհակառակն. նախ

¹ Զ գոր

² Մատթ. ԺԸ 23-34

զպարգեսն խնդրեաց եւ ասպա՛ զներումն՝ զայս ուսուցանելով, զի թէ եւ ի խորս չարեաց հասանեմք, երկրորդ են յանցանքն մեր խաղաղութեանն եւ գթութեանն եւ գերաբույիս՝ մարդասիրութեանն, զոր ունի Աստուած ի վերայ մարդկային բնութեանս՝ ըստ այնմ. «Որպէս զի՛ բազում արարեր զողորմութիւն Քո, Աստուած» (Մատթ. 16 8): Վասն որոյ զկարեւորն եւ զմեծն նախ խնդրեալ աղօթեաց, եւ ասպա յետ զայն ունելոյ՝ դիւրաւ գտցուք ի բարերար կամացն զմարդկապէս գթելոյն զներումն:

«Թող մեզ զպարտիս մեր», - ասէ: Արդարեւ պարտք, զի յայս քան շնորհս վայելեմք հոգուով եւ մարմնով եւ ասպերախտ գտանիմք, որպէս Հինն Իսրայէլ, ուստի յիրաւի պարտապան լինիմք: Բայց ասէ «թող մեզ՝ զպարտիս մեր» է՞ր վասն. զի մարմնաւոր ենք, զի դիւրապատիր կամօքս խաբիմք, զի ընդ խաւար կենցաղոյս շրջիմք, զի ունիմք օրէնս բնականս հակառակ օրինաց մտաց եւ զերօղ յօրէնս մեղաց, վասն այսորիկ ներել պարտ է քեզ եւ շնորհել, իբր բարերար՝ տկարի, կամ ողորմած՝ կարօտելոյ:

«Որպէս եւ մեր թողումք»: Ասիցէ որ եթէ՝ ես հողեղէնս զիա՞րդ կարացից Աստուծոյ նմանել եւ կամ զանձն տարացոյց Նմին ընծայել: Գիտել պարտ է, զի վարդապետ օրինացս Քրիստոս՝ ոչ արտաքոյ բնութեանս, զոր ստեղծ, զմեզ վարժել կրթէր եւ կամ հակառակ օրէնս դնել, քանզի ո՞րք ի մարդկանէ զսէրն ոչ կամի եւ կամ ընդ թշնամութիւնն ոչ դժուարի, քանզի ընտանեւէր եւ բարեւէր բնութեամբ է մարդ: Վասն այսորիկ ասէ՝ զամբարտաւանութիւնդ, որ հակառակ է Աստուծոյ, եւ զթշնամութիւնդ, որ ընդդէմ է բնութեանդ, արտաքս վտարեա ի քէն եւ ասպա մատուցեալ յԻնէն պահանջեսցես՝: Իսկ թէ դու տկարանաս ի բնութեանդ գործ, զիա՞րդ ասպա զԻս յայն բռնադատես, ուր՝ երկրքին ի քո օգուտն կատարին. զի թողուլն ընկերին՝ խաղաղութիւն է մեզ եւ կենաց պատճառ եւ Տեառն օրէն՞, եւ Աստուծոյն, որ վասն մեր թողլոյն թողու, անվախճան կենացն կարապետ լինի. ասպա թէ յայցսանէ վրիպիմք յիսակալութեամբ, անձամբ զանձինս դրժեմք:

¹ զ գերաբույիս
² Տ > մեզ
³ զ պահանջես
⁴ զ որ
⁵ զ տնօրէն] Տեառն օրէն

Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն (Ձ 13):

Կրկին տեսակօք փորձին մարդիկ. ոմանք՝ փարթամութեամբ, եւ այլք՝ աղքատութեամբ, եւ կէսք՝ անդորրութեամբ եւ հանգստեամբ, եւ այլք՝ վշտօք եւ նեղութեամբ, եւ յորովից պատահէ այսպիսեացս ընկղմիլ մեծատանց եւ աղքատաց, յաղագս որոյ փորձ նաւասպետն այսմ ծովու աշխարհի իմաստունն Սողոմոն զայսպիսի պաղատանս ընծայէր Աստուծոյ. «Երկու ինչս խնդրեմ ի Թէն. մի՛ տայցես ինձ մեծութիւն կամ աղքատութիւն, զի մի՛ փարթամացեալ հպարտացայց եւ մոռացայց զԱստուած, կամ աղքատացեալ գողացայց եւ երդուայց սուտ յանուն Աստուծոյ իմոյ, այլ կշռեա ինձ զարժանն բաւականութեամբ» (Խմնտ. Առակ. Լ 7-9). քանզի ի չափու կալ արժանեացն՝ արտաքոյ է եւ փորձութեանցն: Որպէս ասէ թէ՛ «Մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն», եւ ի վերայ բերէ թէ՛ «Փրկեա՛ ի չարէն»: Քանզի զի՞նչ չար քան զհպարտութիւնն է եւ զԱստուծոյ յիշատակին մոռացութիւնն կամ զգողութիւնն եւ զստութիւնն:

«Մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն»: Դարձեալ՝ զխորհատումն բարուց մեր այսու նահանջէ՛ մի՛ իւրովի ի մարտն դիմել, այլ թէ բռնադատիցիմք, ժուժկալութեամբ պի՛նդ կացցուք, եւ թէ ոչ՝ մի՛ փառասիրութեամբ զնոյն ի մեզ ձգեսցուք, որպէս ճենականքն թէ՛ «Ձե՛ս տեղայ ի մեզ փորձութիւն», այլ զիտելով զտկարութիւն մարմնոյ՝ զայս աղօթեսցուք, որպէս յայլում վայրի խրատեաց Տէր. «Յաղօթս կացէք, զի մի՛ մտանիցէք ի փորձութիւն» (Մարկ. ԺԴ 38):

Իսկ «չար» զաստանայ կոչէ, քանզի բազում անուն է եւ ըստ յոգնագան ներգործութեանն ունի զկոչումն, որպէս բանասարկու՛ եւ մամոնայ՛ եւ Բեեղզերուդ՛, նոյնպէս եւ չար, բայց ոչ ի բնէ, քանզի անուղորութեամբ, այլ ոչ բնութեամբ, քանզի բնութեամբն ոչ է չարութիւն, այլ որ ի կամացն յաճախէ, զի չարութիւնն ոչ այլ ինչ է, բայց թէ արտաքոյ օրինացն Աստուծոյ ընթացք եւ վարք: Ուստի անձնիշխան կամօքն ընդվզեալ արտաքս վազեաց ի կամացն Աստուծոյ եւ չարացաւ եւ զբազումս ի նոյն յորդորէ, զոր աղօթեսցուք փրկիլ ի նմանէ, զի եթէ մերկ մարտնչի եւ թէ ի ձեռն ընկերի, եւ զայն եւս խրատէ, թէ ոչ ընկերին պարտիմք զայրանալ, այլ առ ա-

¹ Իմաստ. Բ 24, Յուդա 9, Յայտ. Բ 10, ԺԲ 12, Ի 2

² Մատթ. Զ 24, Ղուկ. ԺԶ 13

³ Մատթ. ԺԲ 24, 27, Ղուկ. ԺԱ 15, Յայտ. ԺԲ 19

մենաչարն զպատճառ կռուոյն դարձուցուք:

«Մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն»:
 Քննել արժան է, թէ ընդէ՞ր ոչ ասաց թէ՛ մի՛ տանիր զմեզ ի մարտ
 պատերազմի, այլ թէ՛ ի փորձութիւն: Չա՛յս կամի յայտ առնել, թէ
 չունի իշխանութիւն անձամբ անձին ընդ մեզ մարտնչել, որպէս
 յայտ է ի Յոբայ իրացն եւ ի խոզիցն գերգեսացոց¹, այլ ի մերոց
 խորհրդոցս առնու զնիւթ պատերազմին՝ ըստ այնմ. «Որում պատ-
 րաստէք զանձինս ի հնազանդութիւն, ծառայէք որում հնազան-
 դիքն՝ եթէ՛ մեղաց եւ եթէ՛ արդարութեան» (հմմտ. Հոմմ. Զ 16), եւ այլուր
 թէ՛ «Իւրաքանչիւր ոք փորձի յիւրոց ցանկութեանցն» (Յակ. Ա 14): Ա-
 պա յայտ է, թէ ի մէ՛նջ առնու զնիւթ փորձութեանն, որպէս յորժամ
 զկերպարանս քաղցի եցոյց Տէրն, եւ ապա մատեաւ փորձիչն².
 գոր եւ միով մասամբ հաւաստեսցուք զասացեալս, քանզի գոյ ի
 մեզ բնական կերակրոց³ կարօտութիւն, զայ նա եւ ըստ այսմ մա-
 սին շարժելով փորձէ զմեզ, որպէս զՏէրն. եթէ հաստատուն գտա-
 նիմք, յետս զնալով ամաչէ, որպէս ի Տեառնէն, ապա թէ թուլա-
 նամք, խառնէ ընդ բնաւորականսն զաւելորդն, որ «քար» ասա-
 ցաւ⁴: Չոր օրինակ զվէմ անշարժ ի ձեռն փոքու նզի փորձենք. եթէ
 սակաւ ինչ շարժի, ակն ունիմք խախտել, ապա թէ կարծրագոյն
 իցէ, անյուսաբար ի բաց գնամք, նոյնպէս եւ սատանայ առնէ:
 Քանզի գունեալ բարեաւն զչարն՝ իբր կարթ կլանել տայ, զի ձգէ
 ցանկութեամբ ի պոռնկութիւն եւ հարկաւոր պիտոյիքն յարժաք-
 սիրութիւն. նմանապէս եւ այլովքն ի ձեռն մերոյ ցանկութեանցս
 փորձիմք: Որով զգուշացուցեալ զմեզ Տէրն՝ խրատեաց աղօթել թէ՛
 «Մի՛ տանիր զմեզ⁵ ի փորձութիւն»: Ո՛չ թէ Աստուած տանի, քանզի
 «Աստուած անփորձ է չարեաց» (Յակ. Ա 13), այլ թէ յոր մեք գնամք
 դաւաճանողին կամօք ի չարն իբր ընդ բարի, Դու, որ գիտես
 զմեղս⁶, մի՛ թողուր ակամայ կամօք զանձինս ի նոյն կործանել:
 Որպէս թէ ոք երկնչի յոմանց, թէ ընդ բարութի⁷ կերակուր խառնեն
 դեղ մահու նմին ի սպանումն, ասիցէ ցոք ի բժշկաց. «Դու, որ ճա-
 նաչես, միշտ ընդ ի՛ս լինիցիս», այսպէս եւ սա, զի կամի ընդ հար-

¹ Յոր Ա 6-12, Մատթ. Ը 28-32

² Մատթ. Դ 2-3

³ Զ կերակրոյ

⁴ Մատթ. Դ 1-4

⁵ Զ > զմեզ

⁶ Զ զմեղք

⁷ Զ բարութի

կատրսն զաւելորդսն մակարդել, Դո՛ւ, ամենահայեաց, մի՛ թողոր¹ փորձիլ նոքօք:

«Այլ փրկեա՛ զմեզ ի չարէն»: Է՞ր վասն. զի թէ մեղաւորք ենք, Դո՛ւ պատուհասեալ ուղղեա, եւ մի՛ ի ձեռաց թշնամոյն, եւ թէ արդար՝ որպէս կամիս ընկալ եւ մի՛ փորձեր², մի գուցէ ըստ տկար նիւթոյս բնութեան՝ անփորձ գտեալ կորիցուք: Չի թէպէտ խրատիմք ո՛չ օտարոտի գրել զեռանդն փորձանաց³, այլ իբրեւ զոսկի փորձեալ հրով պատուական գտցուք⁴, սակայն այս կատարելոցն է, եւ կամ Զո՛ւ օժանդակութեամբդ ի սոյն կարողանալ: Եւ զիտենք, զի Դու զօգուտն մեր տնօրինես մարտին յաղթութեամբ, որով զպսակն բազմացուցանես, այլ ես անձամբ անձին ո՛չ զնոյն պահանջեմ, այլ միշտ զփրկութիւն ունել մաղթեմ. զի փորձ առեալ՝ կարօղ ես փորձանաւորացս փրկիչ լինել, եւ թէ՛ հաւատարիմ ես ո՛չ տալ ի փորձանս առաւել քան զկարն, զի թէ լոյսդ ի խաւարէն հալածեցաւ, խաւարն զի՞նչ կրեսցէ: Վասն որոյ մաղթեմ միշտ զՓրկիչդ՝ փրկել զմեզ ի չարէն:

Դարձեալ՝ «փորձութիւն» զմտաց կիրսն ասէ, իսկ «չար»՝ զներգործութեանն կատարումն: Արդ՝ եթէ որ ի չար գործոցն փրկիլ աղաչէ, զներքին խորհորդսն ի մեղաց սրբեալ մաքրէ, քանզի անտի իբր յաղբերէ բոխսեն զանձեալ չարութիւնքն: Դարձեալ՝ «փորձութիւն» եւ «չար» զմարմնական կենցաղս կոչէ՝ ըստ այնմ թէ՛ «Իբր փորձութիւն են կեանք մարդոյ ի վերայ երկրի» (Յոք Է 1), եւ թէ՛ «Աշխարհս ամենայն ի չարի կայ» (Ա Յովն. Ե 19): Արդ՝ որ որ ի փորձութեանց կենցաղոյս զերծանիլ կամի եւ ի չար պատահմանց սորին ազատիլ խնդրէ, արտաքս ելցէ յաշխարհէս եւ սպանցէ զանդամս երկրաւորս, եւ խոկումն մահու ստանայ, եւ ի խաչ հանիցէ⁵ զմարմինս կարեօք եւ ցանկութեամբ հանդերձ⁶: Բայց այս ո՛չ ամենեցուն է, այլ որոց տուեալ է ի վերուստ, վասն որոյ հրամայէ խնդրել, զի «որ խնդրէ՛ առնու, եւ որ հայցէ՛ զտանէ» (Մատթ. Է 8): Ուստի եւ մեք շարժեալ ի Հոգւոյն՝ յարուցեալ խնդրեսցուք ի Տեառնէ թէ՛ «Մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն» կենցաղոյս, «այլ փրկեա՛ զմեզ» ի չարաչար կրիցս սորին:

¹ Զ թողուլ

² Զ փորձել

³ Ա Պետ. Դ 12

⁴ Ա Կոր. Գ 12-14

⁵ Զ հանց

⁶ Գաղ. Ե 24

Եւ դարձեալ՝ «փորձութիւն» զհոր զեհեննին ասէ՝ ըստ այնմ թէ՝ «Ամենայն ինչ հրով յաղեսցի, եւ ի հոր դատելոց է ամենայն մարմին», - ասաց Եսայի (հմմտ. Ես. 42 16), եւ Պողոս թէ՝ «Հրով փորձելոց է» (հմմտ. Ա Կոր. 9 13): Իսկ օր չար զվերջի օրն ասէ՝ ըստ այնմ. «Զի՞ կայ ձեզ եւ Աւուրն Տեառն» (Ամոս Ե 18), եւ թէ՝ «Յաւոր չարի փրկէ զնա Տէր» (Սաղմ. Խ 2): Ո՛չ եթէ չար է նա բնութեամբ կամ ամենեցուն, այլ զի յայտնիչ է չար գործոց եւ օր հատուցման նորին՝ «չար» ասէ զնա, յորմէ աղօթիք ուսուցանէ փրկել զմեզ, որպէս այլոր ասէր. «Յաղօթս կացօք, զի մի՛ անկանիցիք ի փորձութիւն» (Սաղմ. ԺԴ 38), եւ աստ թէ՝ «Մի՛ տար զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ ի չարէն»¹:

Զի Քո է արքայութիւն եւ գորութիւն եւ փառք յախտեանս:

Այսինքն՝ զի բնարար զթագաւորութիւնդ ունիս, մի՛ տար² իշխանութիւն չարին զժառայքս Քում տէրութեանդ վտանգել, զի թէ տանջանաց արժանաւորք ենք, մատնեցուք ի ձեռս Տեառն եւ մի՛ ի ձեռս թշնամոյն, որ անողորմ վարի, որպէս առ Յորն: Զի թէ Դատիք ի մարդկան փորձանացն հրաժարեաց եւ աղաղակեաց. «Ի ձեռս Տեառն եւ մի՛ ի ձեռս թշնամեաց մատնեցայց» (հմմտ. Բ Թագ. ԻԴ 14), քանի՛ օն հրաժարելի է մեզ ի մախացօղ թշնամոյն եւ անզեղջ փորձանացն, որ բռնութեամբ ոչ կարէ, այլ խաբէութեամբ զինքն իշխան կարծեցուցանէ: Որպէս զի ոչ է պարտ երկնչել ի նմանէ, զի Դու ես արքայ ճշմարիտ եւ կարօղ յամենայնի՝ ըստ երգոյն, մեծ է տէրութիւն թագաւորութեան Քո, եւ մեծ է գորութիւն Քո, եւ ոչ կարօղ է որ ընդդիմանալ Քեզ³, ուստի յախտեանականացն փառաւորիս միշտ վասն ճոխ ինքնակալութեանդ եւ անբովանդակելի գորութեանդ եւ անչափ փառացդ, ըստ որում կրես զամենայն անաշխատ բանի՛ ըստ այնմ. «Օրհնեալ են փառք Տեառն ի տեղոջէ իւրմէ» (Եզեկ. 9 12), եւ թէ՝ «Օրհնեն զՆա ամենայն հրեշտակք Նորա» (հմմտ. Սաղմ. ԾԲ 20), եւ՝ «Լի են փառօք Նորա ամենայն երկիր» (Ես. 2 3):

Եւ դարձեալ՝ «Զի Քո է արքայութիւն եւ գորութիւն եւ փառք յախտեանս»]: Որպէս զի զյաղթօղսն պսակես թագաւորական փառօք եւ զնահատակսն զօրացուցանես ի հանդիսաւոր մրցմունսն եւ զփառաւորիչսն փառաւորես լուսաւոր փառօք իբր

¹ Զ չարէ
² Տ տալ
³ Ա Ան. ԻԹ 11-12

գերեսան Մոսիսի¹, անդրանիկ որդւոյն Քո Ստեփաննոսի² Նախավկային³: «Քո են փառք յաւիտեանս»: Կրկին լսի փառացոյ իրք. քանզի կամ զպայծառութիւն լուսոյն կոչէ «փառս», իբր այն թէ՛ «Բնակեալ է ի լոյս անմատոյց» (Ա Տիմ. 2 16), եւ թէ՛ «Իջին փառքն Աստուծոյ ի վերայ լերինն Սինայ» (Ելք ԻԳ 16). եւ կամ զբազմութիւն զօրացն՝ ըստ այնմ. «Ի բազում զօրս փառք թագաւորի» (Առակ. ԺԳ 28), քանզի «հազարք հազարաց եւ բիրք բիրուց կային առաջի Նորայ» (Խմբ. Դան. Է 10): Եւ գերկոսինս զայս ո՛չ ստացական, այլ բնական ունիս, ասէ, զի Քո են փառք⁴ եւ ում կամիս՝ տաս անխնայ. զիրեշտակս՝ յօգնութիւնս⁵, եւ զլոյսս՝ յիմանայի գիտութեանդ հաղորդութիւն: Իսկ «յաւիտեան»⁶՝ զանցեալն եւ զներկայս եւ զպառնին Գիրք գիտեն «յաւիտեան» կոչել. արդ ասէ, թէ որպէս նախ էիր փառօք զարդարեալ, եւ այժմ իսկ, այսպէս եւ յապագայն անվախճան, զի «Յիսուս Քրիստոս փառաւոր երէկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեան» (Խմբ. Եբր. ԺԳ 8): Որում եւ զմե՛զ արժանաւորեա անճառ փառացոյ՝ լուսով չարչարանաց Որդոյ Քո հաղորդի⁷, որպէս զի եւ փառաց Նորին կցորդեսցուք ի պատիւ եւ ի փառս Քոյդ շնորհի, եւ Քեզ փառք ընդ Որդոյդ ամենակայի եւ Հոգւոյն Սրբոյ հօրի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

Ձի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողէ եւ ձեզ Հայրն ձեր կնաւոր (Ձ 14):

Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, եւ ոչ Հայրն ձեր թողէ ձեզ զյանցանս ձեր (Ձ 15):

Պարզ վարդապետութիւն եւ անտարակոյս խրատ, քանզի կրկնելովս՝ հաստատէ զառաջինն եւ վճիռ տայ համառօտ, որպէս եւ յետ յարութեանն դարձեալ զնոյն հաստատեաց՝ ասելով. «Եթէ զուրուք թողուցուք զյանցանս, թողեալ լիցի եւ ձերն, եւ թէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի եւ ձերն» (Խմբ. Յովհ. Ի 22): Ի սոյն միտս հայի եւ այն թէ՛ «Ձոր արձակիցէք ի յերկրի, եղիցի արձակեալ յերկինս, եւ զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս» (Խմբ. Մատթ. ԺԸ 18). նաեւ այն՝ «Ձի մի՛ ասիցէ ոք, թէ չեմ կարօղ թողուլ զյանցանս ու-

¹ Ելք ԼԴ 29

² Տ Ստեփաննոսի

³ Գործք 2 15

⁴ Ձ փառք յ՝

⁵ Ձ յօգնութիւն

⁶ Ձ յաւիտեան՝

⁷ Ձ հաղորդել

րուք» (հմմտ. Մատթ. Թ 6), ասացաւ թէ՛ ունիք իշխանութիւն յայս: Բայց զի երկդիմի են յանցանք մարդկան՝ առ Աստուած եւ առ մարդիկ, զո՞յս ասէ թողուլ. յայտ է թէ՛ զառ միմեանս սխալանքն՝ ըստ այնմ. «Քանի՞ ցս անգամ, թէ մեղիցէ ինձ եղբայրն իմ, թողից նմա, մինչեւ ցեօ՞թն». եւ Նա ասէ. «Ո՛չ, այլ մինչեւ ցեօթանասնեկին եօթն» (հմմտ. Մատթ. ԺԸ 21-22), զոր անհնար է ի միում աւուր մեղանչել ումեք, իսկ զառ Աստուած յանցանքն ուղղել¹ պարտ է ըստ խրատու կանոնաց եւ պտուղ արժանի ապաշխարութեան պահանջել: Եւ յանցումն ասէ առ ընկերն՝ զարդարակ իրաւունքն կոխել, որոյ ասացաւ անձին չափ սիրել եւ զանձն եւս ի վերայ դնել:

Եւ յորժամ պահիցեք, մի՛ լինիք իբրեւ զկեղծաւորսն տրտմեալք, որ ապականեն զերեսս իրեանց, որպէս զի երեւեսցին մարդկան թէ պահիցեն: Ամէ՛ն ասեն ձեզ, ա՛յն իսկ են վարձք նոցա (Ձ 16):

Յոյովք գտանին ընդ այնպիսի ախտիւք անկեալք, որք ոչ միայն յորժամ պահիցեն, այլեւ յորժամ ոչ պահիցեն, կեղծաւորեալք զնոյն ձեւացուցանեն, որ չար քան զմեղանսն իցէ. եւ յորժամ ի ճշմարտիցն յանդիմանին, պատճառս կարկատեն, «զի մի՛ զայթազդեցուցուք զոք» ասեն: Առ որս ասելի է թէ՛ ո՛վ անմիտ, զաստուածեղէն օրէնս կոխելո՞ւմ զմարդիկ շահիս, որ արգելու ասելով, թէ մի՛ լինիք իբրեւ զկեղծաւոր փարիսեցին տրտմեալք: Եւ ո՛չ այսու բաւականացաւ, այլ ե՛ւս կսկծեցուցանէ. «Որ ապականեն,- ասէ,- զերեսս իրեանց»: «Ապականութիւն երեսաց» կամ զտրտմութիւնն ասէ, զի երեսք հայելի են սրտի. զմտացն ախտն, որ է տրտմութիւնն, ի յերեսս ձգէ, իրօքն զմիտսն ապականէ եւ ձեւովն զերեսս գժդմնեցուցանէ. եւ կամ «ապականութիւն» զեղծումն եւ զխանգարումն երեսացն կոչէ, որք վարժեալք ի չարէն, փառասիրութեանն ախտի աղագաւ, ի ձեռն դեղոց գունատեն զտեսիլ երեսացն: Արդ եթէ սոքա, որք յաղագս պահոց գործեն զայս, ընդ այսպիսի մեծագոյն պատժօք են, նոքա զո՞ր կրեսցեն աղէտս պատուհասի, որք ի ծարոյր եւ ի սնգոյր յաղագս փափկութեան հտպտանաց եւ խտղտումն առնել տեսողացն:

«Ապականեն զերեսս իրեանց, որպէս զի երեւեսցին մարդկան թէ պահիցեն»: Երեւոյթ է տեսիլ առանց էութեան, որպէս ի յօդդ բազում լինին փայլմունք յարեզակնէ եւ կամ ի լուսնոյ, զոր «ծիա-

¹ Ձ ուղղեալ

ծանդ» կոչենք, որոյ էութիւն ոչ գոյ, վասն որոյ դիւրափոփոխ եւ վաղանցուկ իսկ է: Եւ կամ որպէս հարցուկն այն գրէն ի տեսիլ Սամուէլի երեւեցոյց Սաւուդայ¹, այսպէս եւ սոքա, ասէ, զանէն գոյացուցանեն սուտ կերպարանօք, որք կրկինս մեղանչեն. նախ՝ անձանց, եւ ասպա՝ տեսողացն:

«Ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա»: Ո՞ր «այն». զի ի բաց առից զպատրուակ կեղծեաց նոցա եւ խայտառակեցից զնոսա, զի թէպէտ առ վայր մի ստութիւնն յառաջանայ, բայց ոչ ունի բնութիւն մշտնջենաւորիլ՝ ըստ այնմ թէ՝ «Ի կարծեալ դիսն եզիպտացոց Ես արարից՝ զվրէժխնդրութիւն» (հմմտ. Ելք ԺԲ 12): Եւ կամ թէ՝ յԻնէն ոչ վարձս ընդունիցին այնպիսիքն, այլ ի գովողացն միայն. այսպէս զի յանցանելն եւ գովութիւնն լռեսցէ, թուի թէ այսու ձաղէ զնոսա, թէ անցաւորիս են տարփացողք:

Այլ դու յորժամ պահիցես, օ՞՞ զգլուխ քո եւ լուս՝ զերեսս քո (Ձ 17),

զի մի՛ երեւեսցիս մարդկան իբրեւ զպահօք, այլ Հօրն քում ի ծածուկ (Ձ 18):

Ժամանակ ոչ կարգէ պահոց, սակայն հարկաւոր ցուցանէ՝ ըստ այնմ թէ՝ «Ի պահս՝ բազում անգամ» (Բ Կոր. ԺԱ 27). զի գոր օրինակ որ քաղցնուն՝ ժամանակ է կերակրոյ, եւ որք ծարաւին՝ ընպելոյ³, այսպէս եւ յորժամ քաղցնուն արդարութեան կերակրոյն, գոր պահքն քարոզէ, ժամանակ է պահոց՝ ըստ մարգարէին թէ՝ «Սրբեցէք պահս» (Յովէլ Ա 14), իսկ ի պահելն՝ օժանել հրամայէ զգլուխ: Ո՛չ զայս յաղագս այնորիկ ասէ, թէ պարտ է օժանել, զի թէ այս՝ բազում անցանեն յօրէնս, մանաւանդ այնորիկ, որք⁴ յանապատս են. եւ զի թէպէտ գոյր սովորութիւն, այլ ոչ ի պահելն՝ ըստ այնմ թէ՝ «Ծունկք իմ տկարացան ի պահոց, եւ մարմին իմ այլագունեաց յիւղոյ» (Սաղմ. 6Ը 24), եւ թէ՝ «Խոնարհեցուցի պահօք զանձն իմ» (Սաղմ. 4Ը 11). այսպէս եւ Դանիէլ⁵, նաեւ Ինքն Տէրն, որ զքառասուն պահեաց տիւ եւ գիշեր⁶: Այլ վասն այնորիկ ասէ, զի ամենեւին յանձին ունիցիսք թագուցանել զիրսն եւ ուրախութեան կրիւք զեղանիլ եւ զուարթանալ իբրու իւղոյ օծութիւն: Եւ մի՛ երեւեսցի,

¹ Ձ Սաւուդի
Ա Թագ. ԻԸ 3-25

² Տ արարի

³ Ձ ընպելոյ

⁴ Ձ որ

⁵ Դան. Ա 8-16

⁶ Սատթ. 7-2

ասէ, պահքն քո մարդկեղէն փառաց աղագաւ. գուցէ փառք գիտողացն պահոց թափոր արասցեն զքեզ ի վարճուց անտի, այլ ի ծածուկ պահօք Հատուցչին ծածկելոյ՝ հաճոյ լինիցիս: Եւ դարձեալ՝ ուսուցանէ այսու գլեղանակս պահոց. «Օ՛ժ զգլուխս քո եւ լուս՝ զերեսս քո»: Զի իտեալն օժանի եւ լուացեալն մաքրի, որով յուսումն խորհրդոյ կոչէ զքեզ Աստուածն Բան, թէ այն իսկ է պահք ընդունելի, յորժամ զմիտսդ¹, որ ի «գլուխ» առակի, պարարես շնորհօք գիտութեան Նորա եւ զերեսս մտաց լուացես մաքրութեամբ արտասուաց ի յաղտոյ մեղաց՝ ըստ այնմ. «Լոյ՛ժ զկնճիռն անիրաւութեան» (Ես. ԾԸ 6), եւ՝ «Լուացարո՛ւք, սրբեցարո՛ւք» (Ես. Ա 16): Արդ՝ թէ այսպիսի սրբութեամբ² պահեսցես, մերձաւոր լիցիս Օծելոյն Քրիստոսի, զի Նա՝ աստուածութեանն իւղով, եւ դու՝ գիտութեամբ Նորին եւ մաքրութեամբ պահօք:

Եւ Հայրն քո, որ տեսանէ ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս:

«Ծածուկքն՝ Տեսուն Աստուծոյ մերոյ» զրեալ է (Բ Օր. ԻԹ 29), զոր տեսեալ անվրէպ Տեսողն սրտից զծածուկ եղեալ ճգունս պահոց՝ հատուցէ ի լոյս: Նախ՝ մի՛ կարծեսցես, թէ ի քէն եղեալ առաքիւնութիւնդ գաղտնի՝ անյայտ մնացէ, զի աստեղք ի գիշերի առաւել մաքրագոյն ծագեսցեն, քանզի բնութեամբ է այս. ի փառս մարդկան առնել ծածկեսցի, որպէս ասացեալ է, իսկ ի փառս Աստուծոյ կատարել՝ անպատշաճ ունի զթագչելն: Եւ երկրորդ՝ զի հիստ գյաղթութիւն պսակացն քոց: Եւ երրորդ՝ զի Ինքն է պսակիչ: Եւ չորրորդ՝ զի դու մշակ ժրաջան երեսեսցիս՝ կոխօղ մարդկեղէն փառաց:

Սի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց եւ ուտիճ ապականեն, եւ ուր գողը ական հատանեն եւ գողանան (Ձ 19):

Ըստ կարգի ընդելուզման յարմարէ եւ զայս յառաջինսն. քանզի ասաց վասն ողորմութեան եւ աղօթից եւ պահոց, այժմ զլիսաւորէ եւ զնոյն, թէ զասացեալ առաքիւնութիւնսն, որ գանձ է ճշմարտապէս, մի՛ յերկրի գանձէք, այսինքն՝ յաղագս յերկրաւոր փառաց վճարել, զոր ցեց եւ ուտիճ եւ գողը ապականեն: Քանզի յորժամ որ զգործս արդարութեան վասն մարդկան հաճոյից կատար-

¹ ՏԶ զմիտսդ

² Ձ ընդունութեամբ

րէ, զի գովի, բազում անգամ ո՛չ պատահէ նմա այն¹, վասն որոյ մաշարայական² ցաւօք հիւծի, զի բնաւորեալ է ընթացք կենցաղոյս՝ ախտասիրացն յընդդէմն ելանել՝ ըստ այնմ թէ՛ «Ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք» (Յակ. 7 3), եւ՝ «Յանկութիւն մեղաւորաց³ կորիցէ» (Սաղմ. ԾԺԱ 10). զի որքան առաքինանայ, փոխանակ գովութեան դարովանս ընդունի, որով առաւել վշտանայ, զի «ցեց ոսկերաց է սիրտ հոգած⁴» (Առակ. ԺԴ 30): Իսկ «գող» զսատանայ կոչէ, որ անօտրագոյն ախտի նորափառ ամբարհաւածութեամբն, գոր «ական» ասաց, զերկս վաստակոց քոց գողանայ եւ ի ճգանց պահոցն եւ աղօթիցն ունայնացուցանէ, որպէս բազմաց պատահեաց պահողաց իբր փարիսեցոյն: Յաղագս որոյ խրատէ Տէրն՝ մի՛ յերկիր հայիցիս գանձել, զի մի՛ մաշիցիս, եւ մի՛ սնապարծ լիցիս ի գործս քո ամբարտաւանել, զի մի՛ զրկիցիս:

Այլ գանձեցք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց եւ ոչ ուտիճ ապականեն, եւ ոչ գողք ական հատանեն եւ գողանան (Ձ 20):

Չայս եւ Պօղոս ասէ թէ՛ «Մեր առաքինութիւնս յերկինս է» (Փիլս. 9 20), եւ թէ՛ «Չվերի՛նն խորհեցարուք» (Կոր. 9 2). զի վասն երկնային փառացն եղեալ բարիք անապականք են եւ ընդ հրեշտակսն յաւերժացուցիչք:

Չի ուր գանձք ձեր են, անդ եւ սիրտք ձեր եղիցին (Ձ 21):

Թէպէտ այլ վարձք ոչ ունիցիս⁵, ասէ, այդ բաւական է, զի ի վերայ երկրի գոլով՝ ընդ երկնայինսն ճեմես: Եւ «սիրտ» զիշխանականն կոչէ, ուստի ազատեալ միտքդ յերկրայնոցս ճապարմանց՝ առ ազգակիցն իւր միաբանեալ յարի, թեթեւացեալ յուսով երկնայնոցն ի ծանրութենէ բեռանց տաժանելի կրից՝ եւ ստանձնեալ առաքինութեանն զլուծս փոքրոզի բերէ: «Մի՛ գանձեք ձեզ գանձս յերկրի»: Դարձեալ՝ զմարմնական ստացուածոց յայտ առնէ ոչ գանձել ի յերկրի, ո՛չ միայն զթաղելն եւ զխորելն նշանակէ, այլեւ զամենայն ծախս, որ յաղագս երկրայնոցս է, յերկրի գանձել ասէ, այսինքն՝ զշինուածս ապարանից եւ զկազմութիւնս տանց,

¹ Ձ ~ այն նմա

² Ձ մաշարական

³ Ձ մեղաց

⁴ Ձ հոգացած

⁵ Ձ ունիցիք

զպայծառութիւն հանդերձից եւ զկոյտս ջողրաց, անասուն պաճա-
րաց, զի այսոքիկ ամենեքեան փտականք են եւ գողոց դարանա-
կալաց նիւթք եւ զրկութեան պատճառք, որ ի մեծագոյն գողօնս
համարեալ է: Իսկ թէ որ ասիցէ՝ թէպէտ այսոքիկ դիրամաշք են եւ
ի ցեցամեց ուտճաց ասպականին եւ կամ հիւանդութեամբ եւ ցաւօք
ծորին, սակայն ոսկին ազնուանայ ի պահելն եւ աճէ ի խորելն,
նախ գիտասցէ այնպիսին, թէ յոյժ անմտաբար խորհի: Չի զի՞նչ
օգուտ է բազում տաժանմամբ ի հողոյ կղկղել զոսկին եւ դարձեալ
անդրէն ի նոյն խառնակել. եւ երկրորդ՝ զի թէպէտ ցեց ոչ ուտէ,
սակայն բազմաց մախալի լինին եւ գողք ական հատանեն: «Ա-
կան» կամ զգիշերի դրժումն ասէ, զոր հազիւ ակն նկատէ՝ ըստ
այնմ թէ՝ «Գող յական ըմբռնեալ մի՛ սպանանիցի» (հմմտ. Երբ ԻԲ 2),
այսինքն՝ զի ծանիցէ, թէ մարդ է. եւ կամ՝ զի բրջօք գողք ըստ ա-
կան ձեռոյ հատեալ զորմս՝ կողոպտեն զայլոյն: Կամ՝ «ական»
վասն յանկարծութեանն ասէ եւ արագութեան զախտեանն գո-
ղոյն՝ ըստ առաքելոյ թէ՝ «Յական թօթափել ի փող յետին» (Ա Կոր. ԺԵ
52):

«Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս»: Այսինքն՝ թէ երկնչիցիս
ի գողոցն կամ ի ցեցոցն¹, բաշխեալ ի տուրս աղքատաց, որ ոչ
միայն չձախի, այլեւ մեծամեծ յաւելուածս առնու՝ ըստ այնմ թէ՝
«Չոր ինչ արարէք ի փոքրկանցս՝ Ի՛նձ արարէք, եկայք զարքայու-
թիւնն ժառանգեցէք» (հմմտ. Մատթ. ԻԵ 40, 34): «Չի ուր գանձք ձեր են,
անդ եւ սիրտք [ձեր եղիցին]»: Չայս եւ յայլում վայրի ասաց. «Ա-
րարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան, զի յորժամ
պակասիցէ այն, ընկալցին զձեզ ի յարկս յախտենականս» (Գուկ.
Ժ. 9). որ ոչ ընդ գանձելոյն միայն ունի հատուցումն, այլ զի անդրէն
իսկ յերկինս գտանիցի, աստ յուսով եւ մտօք, զոր «սիրտ» ասաց,
եւ ի հանդերձեալն արդեամբք՝ հոգուով եւ մարմնով: Եւ դարձեալ՝
եթէ յերկիր ունիցիս զմիտոյ վասն գանձուց ողորմութեանն, զկնի
երկրայնոցս լուծցիս, իսկ եթէ յերկինս առ Աստուած՝ ընդ Նմա
անմահացեալ մշտնջենատորիս, որ փոխանակ միոյ փոքու սեր-
մանցն՝ բազմապատկեցեալ² որայ փոխանակ տրոցն քոց պար-
գելէ. եւ զի այս այսպէս է, լո՛ւր յաջորդին³:

¹ Գ ցեցոյն

² Գ բազմապատկացեալ

³ Գ զ Ձիեզահոգի եւ զանյաղք փիլիսոփայն զմեծ հեռետորն Յոհաննէս Ծործորեցի,
որ զսուրբ մատեանս մեկնեալ շնորհեաց բանասիրաց մանկանց Սիովմի, յիշես-
ջիք ի Տէր: Ընդ նմին եւ [զ]ստացօղ Աստուածաշունչ սուրբ մատենիս զարի եւ

Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի (Ձ 22):

Ապա թէ ակն քո չար է, ամենայն մարմինդ խաւարին եղիցի (Ձ 23):

Մարմնատիպ քանիս իմաստք այսպիսի է, թէ ըստ օրինակի ճրագի աչքն է լուսատու ամենայն մարմնոյն. քանզի որպէս ճրագն ի վերայ բազմակի գոյով՝ զբոլոր տունն լուսաւորէ, այսպէս եւ ակն ի բարձրագոյն գահ մարմնոյն նստելով՝ զբոլոր շարժմունս մարմնոյն պայծառագոյնս գործէ: Սակայն ներհակաբար. զի ճրագ զմիջոցս¹ տանն լուսաւորէ եւ տեսանել տայ, իսկ աչք զարտաքին երեսս գունաւորէ եւ տեսանէ, թէպէտ ըստ ուղիղ զծի ի միջոց կողմանէ՝ որպէս ճրագն, այսպէս եւ աչքն: Բայց յորժամ առատ լինիցի, այսինքն՝ սրատես եւ յտակահայեաց, յայնժամ բովանդակ մարմինն աչանայ: Իսկ «չար» նախ զըշակնութիւնն ասէ, որ կամ ի ծնէ վատատես իցէ եւ կամ ի դիպմանց իւրիք դրժանաց վնասեալ իցէ, ամենայն մարմնոյն ներգործութիւնք խաւարաւ զգածի[ն], եւ որպէս ի գիշերի՝ զթէ ձեռացն ունմունք եւ ոտիցն շարժմունք: Եւ դարձեալ՝ որքան մարմնով կենդանի իցէ, ասէ, ընդ խաւարի ի կենցաղս շրջի, որով ցուցանէ, թէ յետ մարմնական կենացս լրմանց վնասք պատահմանց ոչ գտանին յանդամս մարմնոց մերոց: Եւ երրորդ՝ չքնաղ իմն օրէնս աստի ուսանիմք, թէ ոչ է չար ի բնութիւն առանձնացեալ ուրեք էութեամբ, այլ չար զպատահմունս կենաց եւ զկիրս մարմնոյս զրելի է, զոր թէ ստուգութեամբ տեղեկանամք, եւ այս եւս բազմաց ի բարիս գոլ պատահեաց, որպէս Յորայ փորձութիւնքն, եւ վատութիւն աչաց՝ խնդութիւնն Իսահակայ², եւ կամ այն, զի փառաց եղեւ պատճառ Որդւոյն Աստուծոյ:

Իսկ արդ՝ եթէ լոյսդ, որ ի քեզ է, խաւար է, խաւարն ո՞րչափ եւս:

Այսինքն՝ աչացդ տեսութիւն վրիպեալ է, որ տեղի է լուսոյ եւ գործիք տեսողական հոգւոյ իբր զօդ կամ զապակի, շօշափելի խաւար մարմնոյդ թանձրութեան ո՞րքան եւս նսեմացեալ լիցի,

զքաց հեռետորն զհեզահոգի եւ ամենայն առաքինութեամբ զարդարեալն զՅովհաննէս զարիի եւ զմեծ ռաբունին զՅանշէնեցին աղաչեմ յիշել ի Տէր: Եւ զգծող սմին զսիրասնունդ զաշակերտն իւր զՄովսէս արեղայն առնել արժանի յիշման: Ի թվին ՏԻԵ: (թ. 81թ)

¹ Ձ զմիջոց

² ԾՆՆդ. ԻԷ 1

յորս ո՛չ ներգործական լուսոյ զօրութիւն ազդել կարօղ է, այլ իբր զվէճ ինչ կարծր կայ ընդարմացեալ: Բայց տեսցուք եւ զմտաւորն. քանզի ասէ. «Ճրագ մարմնոյ ակն է». զոր օրինակ ակն ի մարմնի, նոյնպէս եւ միտք ի յոգի, եւ որպէս աչք զգգայիս ընտրէ, այսպէս եւ միտք զհմանալին որոշէ: Արդ՝ եթէ «առատ» ասէ, այսինքն՝ լուսաւորեալ զհտութեամբն Աստուծոյ, ըստ առաքելոյ՝ «Լուսաւորեսցէ Տէր զաչս սրտից ձերոց՝ զիտել զի՛նչ է յոյս կոչման ձերոյ, եւ զի՛նչ վիճակ ժառանգութեան ձերոյ ընդ սուրբս» (հմմտ. Եփես. Ա 18), եւ զարդարեալ խոհական իմաստութեամբ եւ զուզահասակ դասերօք կուսիցն շնորհաց, յայնժամ լուսաւորեալ լինի եւ մարմինն պէսպէս դեղօք առաքինութեամբ՝ պահօք եւ աղօթիք, խստամբեր ժուժկալութեամբ, բանի պարկեշտութեամբ եւ համեստութեամբ բոլոր զգայութեանցն: Իսկ թէ խաւարաւ անզգամութեամբ չարացեալ եւ այլ եւս ընդդիմականին մասամբք աճեցեալ, բիրապատիկ չարեօք զկեանս մարմնոյն աղջամղջեալ ապականէ, զի որպէս որ զակն աղբեր խնուցու, զպէսպէս ծաղիկս գօսացուցանէ, այսպէս որ զմիտսն խանգարէ, զամենայն կենաց իւրոց զբոյսս պղտորէ:

Արդ՝ զի մի՛ զրկիցիմք ի լուսոյ աստի յայսմանէ, թէպէտ զաշխարհ ամենայն շահիցիմք, որպէս որ զի ոչ տայ զաչս փորել եւ փոխանակ թագաւորութիւն ժառանգել, վասն այտորիկ խրատէ, թէ յորժամ զմիտսդ լուսաւոր ունիցիս, բովանդակ հոգի եւ մարմին լուսաւորեալ է տեսականին լրմամբ եւ զործնականին կատարմամբ, իսկ թէ զմիտսդ մեղանշական արարեալ քո՝ բոլոր հոգի եւ մարմին ընդ խաւար մեղացն յածի[ն]: Ուստի ի վերայ բերէ. «Թէ լոյսդ, որ ի քեզ է¹, խաւար է, խաւարն ո՞րչափ եւս»: Չի թէ թեթեւ բնութիւն լուսաւոր մտացդ ծանրացեալ է ախտիւ, եւ նսենացեալ կեղծեօք² չարութեանն՝ խաւարասէր մարմինդ, քանի՞օն ընդունայնանայ զկնի չարութեանն կոյր եւ ամուլ մնացեալ յանապական եւ լուսաւոր գործոց առաքինութեանց՝ որ բնութեամբ վայրաքարշ է եւ մեղասատ:

Եւ դարձեալ՝ վասն ողորմութեանն խօսի զայս, զի որպէս լապտերի պայծառութիւն, ասէ, իւղոյն առատութիւնն է, այսպէս եւ մտացն լուսաւորութիւն առատ ողորմութիւնն է՝ ըստ այնմ թէ՛

¹ Զ > է

² Զ կեղծօք

«Ձտորս զուարթառատս սիրէ Աստուած» (Բ Կոր. Թ 7), զի ողորմութիւն ոչ միայն զհոգի, այլեւ զմարմին արդարացուցանել զիտէ՝ ըստ այնմ. «Փրկանք առն՝ մեծութիւն իւր» (Առակ. ԺԳ 8): Իսկ թէ չարացեալ ոժորութեամբ, իբր այն եթէ՝ «Դու չա՞ր ես, զի ես առատս եմ» (հմմտ. Մատթ. Ի 15), եւ կամ տուեալ մարդահաճութեամբ, ամենայն մարմինն հոգով եւ մտօք արտաքին խաւարին ժառանգ եղիցի, եւ բաժին նորա ընդ կեղծաւորսն դիցի. որպէս յիմար կուսանքն, զի ոչ ունէին զիւղ ողորմութեանն պայծառացուցիչ անձանց, լապտերք նոցին շիջան եւ յերկնաւոր առագաստին մտի ի բաց փակեցան¹. վասն որոյ ասէ. «Թէ լոյսդ, որ ի քեզ է, խաւար է, խաւարն ո՞րչափ եւս»: Այսինքն՝ թէ տրօք մեղանչես դու, զի լուսատու է, զի արդարացուցիչ է, ո՞րչափ եւս մեղօքն, զի խաւարեցուցիչ է, զի մի կողմն է մեղացն, ըստ որում յանցուցանէ իսկ ողորմութեանն. երկրորդ՝ զի թէ ի փառս Աստուծոյ եղեալ՝ արդարացուցանէ, իսկ թէ ի հաճութիւն մարդոյ տուեալ՝ կուրացուցանէ:

«Ճրագ մարմնոյ ակն է»: Յայտնապէս զառաջնորդս Եկեղեցւոյ «ճրագ» անուանէ՝ ըստ այնմ. «Դո՞ւք էք լոյս աշխարհի: Ո՛չ լուցանեն ճրագ եւ դնեն ընդ գրուանաւ» երկչտութեան, «այլ ի վերայ աշտանակի» համարձակութեան (հմմտ. Մատթ. Ե 14-15): Իսկ «մարմին»՝ զԵկեղեցի սուրբ՝ ըստ առաքելոյ. «Մարմին ի մարմնոյ նորա եւ ոսկր յոսկերաց նորա» (հմմտ. Եփես. Ե 30): Արդ՝ կամի գոսա Բանն առատս լինել օրինօքն Աստուծոյ, զի «պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան մտաց աչաց» (հմմտ. Մաղմ. ԺԸ 9), եւ՝ «Շրթունք քահանային զգուշացին գիտութեան, զի օրէնս պահանջեցեն ի նմանէ» (հմմտ. Մաղ. Բ 7), եւ՝ «Գիտել զօրէնս՝ մտաց առատաց է», - ասէ Մոդոմոն (Առակ. Թ 10): Վասն որոյ պարտ է² ի տուէ եւ ի զիշերի յօրէնս խոկալ³ եւ զդրունս իմաստնոց⁴ պահել, որով լուսաւորեալ պայծառացուցէ զկաթողիկէ սուրբ զԵկեղեցի, որ է մարմին Քրիստոսի՝ կրթելով զզգայարանս ժողովրդեանն ըստ օրինի լուսոյ յընտրութիւն բարոյ եւ չարի, օրինակ միշտ տալով զանձն հաւատացելոց բանիւք եւ⁵ զնացիւք՝ առնել եւ ուսուցանել, եւ իբրեւ զորդիս լուսոյ զբանն կենաց ի յանձին ունելով՝ ջահազգեստեալ պսակ պար-

¹ Մատթ. ԻԵ 1-12

² Զ պարտի] պարտ է

³ Մաղմ. Ա 2

⁴ Առակ. ԻԴ 7

⁵ Զ եւ գործով եւ

ծանաց ստանալով զնոսա յԱւուրն դատաստանի՝ ըստ այնմ.
«Պարծանք մեր դուք էք ի Տէր» (հմմտ. Բ Կոր. Ա 14), եւ թէ՛ «Ահա ես եւ
մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած» (Ես. Ը 18):

Իսկ «եթէ չար է,- ասէ,- ամենայն մարմինդ¹ [խաւարին եղի-
ցի]»: Յիրաւի՛. զի թէ տգէտ ոմն է եւ անհմաստ, զբեկանելն միայն
գիտելով եւ ո՛չ զբժշկելն, զփափկանալն եւ ո՛չ զարածելն, եւ խա-
ւարեալ շռայլութեանն կենօք, որպէս են այժմ յորունք եւ անթիւք,
զամենայն մարմին Եկեղեցոյ կործանեն ի չարիս, ուստի զազա-
նակուր եղեալ հօտն՝ զկնի խաւարասէր իշխանին հետեւին՝
զկամս նորա պաշտելով եւ ցրուեալք զահալիժութեամբ, ըստ
նմանութեան զիշերամարտի, ի պէսպէս մեղացն ծառայութիւն:
Վասն որոյ ասէ. «Թէ յոյսդ, որ ի քեզ է՞, խաւար է, խաւարն
ո՞րչափ եւս»: Քանզի յորժամ նաւապետն՝ ի քուն, եւ ճրագն՝ շի-
ջեալ, եւ զօրավարն՝ գերի, ռամկին ո՞րպիսի յոյս կացցէ ի մէջ խա-
ւարի հողմով ալեկոծեալ³. քանզի բնութիւն է մարդոյ ի յոյով բարի
օրինակացն զսակաւս⁴ շահել եւ ի սակաւ չարէն զբազումս աճե-
ցուցանել: Եւ «խաւար» յիրաւի կոչէ զժողովուրդն, քանզի անհ-
մուտք են օրինացն եւ տգէտք՝ աստուածպաշտութեանն իրաց, այլ
ըստ նմանութեան անասնոյ ի նախատիպդ հայելով ուսանին՝ զոր
ինչ ուսանին, իսկ «կոյր կուրի յորժամ առաջնորդէ, երկոքին ի
խորխորատ անկանիցին» (Մատթ. ԺԵ 14): Վասն որոյ պարտ է զգոյշ
կալ, զի մի՛ այլոց պատճառ լիցուք կորստեան եւ կրկին հատուցա-
նենք տանջանս՝ զանձանց եւ զայլոց, աստ եւ ի հանդերձեալն:

Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին⁵ ատիցէ եւ զմիւսն սիրի-
ցէ, կամ զմին⁶ մեծարիցէ եւ զմիւսն արհամարհիցէ. ո՛չ կարէք Աստուծոյ ծառա-
յել եւ մամոնայի (Չ 24):

Շչմարտասիրացն ոչ միայն զստացուածսն առատ տրիւք
յաղքատս ծախել, այլեւ ամենեւին յընչիցն մերկանալ հրամայէ,
քանզի անհնարին են իրքդ, ասէ, եւ յոյժ ծանրագոյն, վասն զի
յընչիցն յԱստուծոյ ծառայութենէն ելանել հասանէ: Չայս օրինակ
եւ Պօղոս վասն կուսանացն եւ կանամբեացն գրէ թէ՛ «Որ կուսանն

¹ Գ > մարմինդ

² Գ > է

³ ՏԳ ալեկոծեալ (այսպէս՝ ամենուր):

⁴ Գ զսակաւս

⁵ Գ զմինն

⁶ Գ զմինն

է՝ հոգայ զՏեառն, իսկ կանամքին հոգայ զկնոջն, թէ ո՛րպէս հաճոյ լինիցի կնոջ իւրում» (Ա Կոր. Է 32-33), եւ խրատ տայ իբրեւ ողորմելոյ ուրուք: Այսպէս եւ Տէր կամի, զի զինչսն արհամարհենք եւ զտերտ ծառայութիւնն Աստուծոյ սիրենք, ապա թէ՛ երկու վնասս գործէ, զի ծառայ ընչիցն առնէ, որոց տիրելն պարտ էր, եւ ի ծառայութենէն Աստուծոյ հանէ, որում ծառայել արժան էր: Քանզի երկու են եւ ո՛չ մի եւ յոյժ ներհակք միմեանց, որպէս ասէ՝ եթէ միոյն սպասաւորէ, հարկ է զմիսն ատել, եւ թէ զմին մեծարիցէ, եւ միսն ընդ արհամարհանս զայցէ: Բայց զայս ասելով՝ ցուցանէ, թէ դիւրին է փոփոխումն առնուլ եւ ի լաւ անդր գալ, զի մի՛ ոք ասիցէ, թէ մի անգամ ծառայեցի ընչիցն, այլ ո՛չ կարեմ գերծանիլ: Ուստի եւ զկնիքն յետոյ ի վերայ դնէ. «Ո՛չ կարէք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի»: Է՞ր վասն, ասասցէ ոք, զի ո՛չ միաբան հարկս պահանջեն ի ծառայելոցն, այլ ոմն յափշտակել հրամայէ, եւ ոմն՝ մերկանալ, մինն՝ զգաստանալ, իսկ միսն՝ պռոնկել, ոմն՝ շուայտել, եւ միսն՝ համ դնել որկորի, քանզի գոր օրինակ անհնար է միով՝ լեզուաւ հռոմայեցիս եւ ասորիս բարբառել, եւ միով՝ ունկամք ներհակ ձայնս լսել, եւ մին ձեռք երկու արուեստս ներգործել, այսպէս անկար է միով անձամբ եւ կամօք Աստուծոյ եւ մամոնայի ծառայել³, եւ ի⁴ բաժանել զկամսն՝ բաժանեալ է եւ ի պաշտելեացն:

Իսկ թէ ասիցէ ոք՝ յոլովք ապա ընդէ՞ր սովաւ արդարացան, որպէս Յոք եւ Կուռնելիոս եւ Աբրահամ⁵: Նախ զայս ասասցուք. նոքա թէպէտ զինչսն ունէին, սակայն ընչից ծառայք ո՛չ էին, այլ մանաւանդ զինչսն ի պէտս Աստուծոյ ծախէին. զի ո՛չ որ զինչսն ունիցի՝ ազահ է, այլ որ զժողովելն խնդրէ եւ ո՛չ բնաւ զգրուելն: Եւ երկրորդ՝ զասպրեայսն յիշես եւ զ՛ի կախադան⁶ ըմբռնեայսն ո՛չ զմտաւ ածես, զի թէ մին ասպրեցաւ, բազումք⁷ այնոքիկ են, որ կորեան՝ ըստ այնմ. «Դիւրին է մայխոյ ընդ ծակ ասդան անցանել, քան մեծատան յարքայութիւնն Աստուծոյ մտանել» (Մատթ. ԺԹ՝ 24), եւ՝ «Որ ոչ հրաժարիցէ յամենայն ընչից իւրոց, ո՛չ կարէ Իմ աշա-

¹ Զ միոյ

² Զ միոյ

³ Զ ~ ծառայել եւ մամոնայի

⁴ Զ > ի

⁵ Յոք Ա 3, Գործք Ժ 1-2, Ծննդ. ԺԲ 16

⁶ Զ զի] զ՛ի կախադան

⁷ Տ բազում

կերտ լինել» (Դուկ. ԺԴ 33), եւ թէ՛ «Անմիտ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջեն, եւ զոր ժողովեցեր՝ ո՞ւմ լինիցի. այսպէս որ զանձէ անձին եւ ոչ յԱստուած մեծանայցէ» (Դուկ. ԺԲ 20-21):

Իսկ «մամոնայ» զբազմութիւն ընչիցն ասէ եւ կամ զԲանասարկուն, որ «իշխան աշխարհիս» կոչեցաւ, եւ զնոյն Ինքն Տէր կոչէ՛՝ ոչ յաղագս բնութեան իրացն, այլ վասն այնոցիկ, որ ընդ նորին ծառայութեամբ մտանեն եւ զանձն ի սպասու նմին մատուցանեն՝ ըստ այնմ. «Որ առնէ զմեղս, ծառայ է մեղացն» (Յովհ. Ը 34): Նաեւ այլ իմն ուսուցանէ թէ՛ յոյժ ծանր է ընչիցն սպասատրել, եւ զօրէն դժոխաբեր բեռանց զհոգի հանդերձ մարմնովն ճնշէ՛ ըստ այնմ. «Հոգք՝ աշխարհիս եւ պատրանք մեծութեան հեղձուցիչ լինի[ն] մտացն» (հմմտ. Մատթ. ԺԳ 22) եւ ընկղմիչ ի բազում տրտմութեան կրից՝ կամ ընչիցն վրիպմամբ, կամ գործոցն աշխատութեամբ, կամ մտացն խղճի դատմամբ, կամ հանդերձեալ տանջանացն սուկմամբ, մինչ զի ոչ կարէ որ զանձն ի վեր բնաւին բարձրացուցանել: Իսկ Աստուծոյ սիրով ծառայել թեթեւ է եւ դիւրին եւ վերբերիչ, ոչ միայն վասն յուսոյն, այլեւ անդէն իսկ վասն գործոյն զուարթ միշտ եւ ուրախ՝ որպէս ի հեշտալիսն, այսպէս եւ ի վշտալիսն՝ ըստ այնմ. «Ուրախ եմ ի գանս, ի բանդ, ի չարչարանս» (հմմտ. Բ Կոր. Զ 5, Կոր. Ա 24), եւ դարձեալ՝ «Ուրախ եղեն, յորժամ արժանի եղեն վասն Տեառն զան ըմպել» (հմմտ. Գործք Ե 41), եւ թէ՛ «Ո՞վ մեկնէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի՝ նեղութի՞ն, թէ անձկութի՞ն, թէ վի՞շտք, թէ սո՞ր եւ որ այլ սոյնպիսիք» (հմմտ. Հռոմ. Ը 35):

Վասն այդորիկ ասեմ ձեզ. մի՛ հոգայք վասն ոգոց ձերոց՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք, եւ մի՛ վասն մարմնոց ձերոց, թէ զինչ ազանիցիք (Զ 25):

Ընդէ՞ր ոչ ասաց թէ՛ մի՛ հոգայք վասն կերակրոյ եւ մի՛ վասն հանդերձի, այլ թէ վասն ոգոց եւ մարմնոց ձերոց, թէ զինչ ուտիցեն կամ զինչ ազանիցին. քանզի ի նոցանէ ցուցանելոց էր օրինակ, ըստ նմին եւ զբանն կազմէ: Բայց զիտելի է, զի ի բազմութենէ ընչիցն հրաժարեցոյց նախ, զի մի՛ որ կարծիցէ, թէ զոնեայ վասն հարկատր պիտոյիցն, որ է կերակուր եւ հանդերձ, հոգալ արժան է, զի մի՛ մեռցուք, նաեւ յայսմանէ՛ թեթեւացուցանէ: Բայց զի՞նչ է՝ «Վասն այդորիկ ասեմ ձեզ». որպէս թէ ասել՝ ա՛յդ իսկ է

¹ Յովհ. ԺԴ 30

² Տ Դոզ

պատճառ, զի զձեզ յԱստուծոյ ծառայութենէն տարամերժէ, վասն որոյ ասէ. «Մի՛ հոգայք վասն ոգոց ձերոց»: Ո՛չ թէ ոգիք կերակրիցին, քանզի անմարմինք են եւ անկարօտ կերակրոյ եւ ունի[ն] կերակուր յատուկ զբանն Աստուծոյ, այլ զայս կամ ըստ հասարակաց սովորութեան բարբառի, եւ կամ թէպէտ ոչ ուտիցեն հոգիք, սակայն առանց կերակրոյ ո՛չ կարիցեն կեալ ի մարմինս, եւ կամ վասն անասնական շնչոյն ասաց:

«Եւ մի՛ վասն մարմնոց ձերոց, թէ զինչ ազանիցիք»: Կամի յառաջինն հանել զմարդկան վարս, զի մերկ էին Ադամ եւ կինն ի ծածկութից, եւ կենօք անարուեստիք ի մէջ դրախտին շրջէին եւ ո՛չ ամաչէին, իսկ յետ յանցանացն մտին ի կեանքս հայթայթանք արուեստից՝ կարկատուն տերետով զսպել զխայտառականս եւ մաշկեղէն հանդերձի ծածկել զմերկանս, յորոց հոգոց գնորմանց Նորոգօղն բնութեանս ազատէ եւ յայն կեանս նայել զմեզ ուուցանէ: Դարձեալ՝ այսու այլ իմն ակնարկէ, զի ո՛չ ի մշակութենէ գործոց հրաժարեցուցանէ, այլ զհոգն՝ յանձանց մերժէ, զի որ զկարիս² բնութեանն արար, Նա եւ զպակասութիւնն լնու՝ ըստ այնմ. «Ընկեա ի Տէր զհոգս քո՞³, եւ Նա կերակրէ զքեզ⁴» (Սաղմ. ԾԳ. 23), զի քո հոգայովդ առանց վերին խնամոցն՝ զի՞նչ կարիցես առնել: Վասն որոյ յընդունայն հոգոցդ ի բա՛ց կաց, ասէ, եւ մի՛ տաժանիր սնտոի երկամբք, այլ միայն մշակեալ՝ ըստ այնմ. «Ձվաստակս ձեռաց քոց կերիցես» (Սաղմ. ԾԻԷ. 2), եւ զկատարած պտղոյն Նմա ընծայես, որ կարօղ է տալ սերմն սերմանողի եւ հաց ի կերակուր: Իսկ ուղղի այս, յորժամ գոյս մեր առ Աստուած դիցուր՝ ըստ առաքելոյ. «Անձամբ անձին զվճիռ մահու ընկալաք, բայց ո՛չ յանձինս վստահացաք, այլ յԱստուած, որ յարուցանէ զմեռեալս» (հմմտ. Բ Կոր. Ա 9): Եւ գոյնատակն Աստուծոյ ի միտս մեր տրամադրեսցուր, նաեւ այնու, զի միշտ զհաճոյսն Աստուծոյ խորհեսցուր եւ ի պատուիրանս Տեառն ջերմ եւ փոյթ լիցուր անյազ յօժարութեամբ, որովք կարենք պարսպել ի զբաղմանց մարմնաւոր պիտոյից: Եւ զի մի՛ վիատիցէ որ, ասէ.

Ո՞չ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր եւ մարմին՝ քան զհանդերձ:

¹ Ձ զհոգքն

² ՏՁ զկարիք

³ Ձ > քո

⁴ Ձ > զքեզ

Որ զմեծն եւ զպատուականն ետ՝ զհոգին, զփոքր եւ զյոռին զհա՞րդոյ ոչ շնորհիցէ զկերակուրն, որ մարմին մերկ ստեղծ յարգանդէ՝ ըստ Յորայ¹, զծածկոյթ մարմնոյն զհա՞րդոյ ոչ պարզեւէ զհանդերձն. եւ այն զի նախ զպէտս քո պատրաստեաց եւ ապա՝ զքեզ յաշխարհ եմոյծ՝ հոգացեալ վասն քո վաղագոյն, դու ընդէ՞ր, ասէ, տառապիս: Դարձեալ՝ ոգի առաւել քան զկերակուր յաղագս անմահութեան, եւ մարմին առաւել քան զհանդերձ յաղագս ճգնութեան, որով ցուցանէ, թէ առ վայր մի կարօտին այսոցիկ, իսկ յետոյ յանապականութիւնն են² ելանելոց եւ զանմահութիւն զգենլոց, զի որպէս այժմ անկարօտ հոգին յաղագս լծակցութեան մարմնոյ կարօտի կերակրոյ, այսպէս եւ ճգնող մարմինն ազատի ի զգեստոց վասն լուսեղէն փառաց անմահն Հոգւոյ:

Հայեցարուք ի թռչունս երկնից, զի ո՛չ վարեն եւ ո՛չ հնձեն, եւ ո՛չ ժողովեն ի շտեմարանս, եւ Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա: Ո՞չ ապաքէն դուք առաւել էք քան զնոսա (Ձ 26):

Սովորութիւն է Գրոց վասն յամրալսիցն՝ յանշնչիցն եւ յանբանիցն օրինակ առնուլ, որպէս այն. «Հայեցարուք յերկինս ի վեր եւ յերկիր ի խոնարհ» (Խմնտ. Ես. ԾԱ 6), եւ այլուր՝ «Երթ առ մրջիւնն, ո՛վ վատ» (Առակ. 2 6). այսպէս եւ աստ Տէր «Հայեցարուք,- ասէ,- ի թռչունս [երկնից]»: Ո՛չ աչօք, այլ մտօք քննեա եւ ուսիր, զի թէ կարի յետնոցն այնչափ դարմանս տանիցի, ո՞րչափ եւ ձեզ խնամակալ լիցի, եւ թէպէտ նոքա բնութեամբ են յայն, սակայն մարդ անձնիշխանութեամբ կարօղ է զնոյն գործել, քանզի բնութիւն է եւ ի մեզ ինքնիշխանութիւն: Վասն այսորիկ ո՛չ ասաց թէ՛ տեսէք, զի թռչին թռչունք, որ չէր մարթ առնել մեզ³, այլ թէ՛ «ո՛չ վարեն», գոր թէ կամեսցուք, դիրքին է ուղղել. եւ նշանակ՝ Մոսէս եւ Եղիա եւ Յովհաննէս եւ այլք բազումք: Տես եւ զայն, զի ո՛չ ասաց թէ՛ «ոչ վաճառեն եւ ոչ շահին», այլ թէ՛ «ոչ վարեն», զի ցուցցէ, թէ ամենայն աւելորդ է բաց ի մշակութենէն, նաեւ զհոգս մշակութեանն յԱստուած ապաստան առնել պարտ է եւ ո՛չ թէ ոչ մշակել: Սակայն թէ եւ մշակենք ոչ, եւ այնու՛ եւս զիտէ կերակրել Հայրն երկ-

¹ Յոր Ա 21

² Ձ յանապականութենէն] յանապականութիւնն են

³ Ձ ~ մեզ առնել

նաւոր, որպէս զթռչունս եւ զԻսրայէլ յանապատին¹ եւ կամ եօթնէ-
րորդ ամին ինքնաբերութեամբ յերկիրն քանանացոց² :

«Ո՞չ ապաքէն դուք առաւել էք [քան զնոսա]»: Թէ փոքունցն
խնամէ, ասէ, քանի՞օն մեծամեծացոց, եւ թէ զծառայսն դարմանէ՝
ն՞րչափ եւս զտեսարսդ: Իսկ առաւելն՝ զի տիպ Աստուծոյ եղաք եւ
պատկերաւ Բանին պատուեցաք, եւ զի յոյս յարութեան ընկալաք
եւ վերստին անմահութեան կենաց վիճակ կոչեցաք³ :

Իսկ առ ի միտս՝ «թռչունս երկնից» զիրեշտակսն կոչէ՝ ըստ
այնմ. «Մի՛ անիծաներ զթագաւորն ի սենեակս քո» (ինմտ. Ժող. Ժ 20),
քանզի թռչունք թեւաւոր են Նորա եւ հասուցանեն զքանս քո առ
Նա, եւ զի ոչ տաժանին երկրագործական արուեստի, զի անկա-
րիք են բնութիւն ևնցա մարմնական կերակրոյ, սակայն այլ իմն ե-
ղանակաւ վարեն եւ հերկեն հերկս յարդարութիւն, որով կերակրին
յերկնաւորն Հօրէ ըստ նախախնամականն բարետրութեանց լու-
սափայլութեանն բղիսմամբ՝ սկսեալ ի զերագունիցն մինչ ի ստո-
րին էութիւնս, զմայլեալ անճառ իմաստիցն տրիւք եւ ծաւրեալ յա-
ռաջնոցն մեկնողօրէն քննութեամբ՝ երկրորդիցն եւ նուաստ կար-
գացն: Որպէս եւ ասէ թէ՝ «Ո՞չ ապաքէն դուք առաւել էք [քան զնո-
սա]», քանզի մարդ աւելի ունի զմարմնական կերակրոցն կարիք,
քան զիրեղինացն դասս: Արդ՝ եթէ զանկարիսն կերակրէ հոգետր
կերակրօք՝ երկնային հացիւ, ո՞րչափ կարեկից լիցի քաղցի ընդու-
նողացդ՝ մարմնական պարգեւօք:

Իսկ արդ՝ ո՞ ի ձեռք առ հոգալ իւրում յաւելու կարիցէ ի հասակ իւր կան-
գուն մի (Ձ 27):

Տես, թէ ո՞րպէս յայտ արար, զի որպէս զմարմին, ասէ, հոգալ
ոչ կարես յաւելու ի հասակ, նոյնպէս եւ ոչ ի կերակուրսն ժողովե-
լոյ: Իմա եւ զայն, զի զմարմնոյ խօսեցաւ եւ զհոգւոյ, այժմ մարմ-
նոյն միայն դնէ ապացոյց, զի ցուցցէ, թէ հոգին աճումն ոչ առնու
ըստ էութեան, այլ միայն ուսմամբ, նաեւ զայն⁴, թէ չունի պէտս կե-
րակրոյ, այլ միայն խնամոցն Աստուծոյ հոգետր քաշխմանց,
քանզի հոգի անմահ է, իսկ մարմինն՝ մահկանացու, եւ զհոգին
միանգամ ետ, իսկ զմարմինն օր ըստ օրէ զարգացուցանէ: Դար-

¹ Ելք ԺԶ

² Ելք ԻԵ 8-12

³ Ձ > եւ վերստին անմահութեան կենաց վիճակ կոչեցաք

⁴ Ձ զնոյն

ձեռք լսի եւ այսպէս թէ՛ ո՞ իցէ, որ թէպէտ քազում ժամանակս հոգայ զընչից եւ ժողովէ մթերս անչափ, կարիցէ ի բնութիւն իւր յաւելուածս առնել, քանզի մնայ տկար եւ մահկանացու, որպէս եւ է, քանզի գրէ Սողոմոն թէ՛ «Չի՞նչ է առաւելութիւն մարդոյ յորս տաժանի ընդ արեգակամբ» (հմմտ. Ժող. Ա 3):

Եւ վասն հանդերձի զի՞ հոգայք. հայեցարոք ի շուշանն¹ վայրենի՝ ո՞րպէս աճէ, ո՞չ ջանայ եւ ո՞չ նիւթ (Ձ 28):

Ասե՛մ ձեզ, զի եւ ոչ Սողոմոն յամենայն ի վառսն իւրում զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ (Ձ 29):

Ո՛վ ամենայարմար խրատուս եւ լի իմաստասիրական աւանդիցս, որ յոյժ գլուխակն ճարտարիւքն գերազանցէ եւ զարուեստ բարդատութեանն անսխալ պահէ: Քանզի ասաց նախ, թէ ոզի առաւել է քան զկերակուր եւ մարմին քան զհանդերձ, եւ զի կերակուր ի յազոյ սակս էր, առ թռչուն կենդանիսն հայել ուսոյց, իսկ հանդերձ՝ ի մարմնոյ պէտս՝ ո՛չ զսիրամարգս ած ի մէջ կամ զայլ հաս, այլ ի յոյժ նուաստիցն՝ ի ծաղկանց ուսանիլ յօժարեցուցանէ: Եւ նախ ասէ զերկրաչափական յարմարութիւնսն ըստ համեմատութեան կարգել, որպէս ոզի առաւել քան զկերակուր, նոյնպէս եւ մարմին քան զհանդերձ, եւ որպէս կերակուր առ թռչունս, այսպէս եւ հանդերձ առ շուշանս: Եւ երկրորդ՝ հաւանեցուցանելոյ աղազաւ ի ծաղկանց եղ զօրինակն, թէ մի՛ կարի դրոյք ընդ պէսպէս հանդերձից զարդս, զի խոտոյ նման է վայելչութիւնն, մանաւանդ թէ պատուականագոյն եւս է խոտն քան զայնպիսի նկարակերտ պատմութեանն, զոր «վայրենի» ասէ: Չի եւն ծաղիկք, որ մարդկան ձեռք մշակին, իսկ աստ զվայրենին ասէ, թէ «ոչ ջանայ եւ ոչ նիւթ», որպէս զի այսու զիւր հոգաբարձութիւնն ցուցանէ եւ յամենայն աշխատութենէ զմեզ ազատս գրէ, զի հոգալն եւ տատանելն առաւել վաստակս հասուցանէ քան զգործելն:

Ո՛չ աշխատի, ասէ, ո՛չ մանէ եւ ո՛չ ոստայնէ, սակայն այնպիսի պայծառագոյն է, մինչ զի Սողոմոն պարտեցաւ ի գեղ նոցա, ո՛չ միանգամ կամ երկիցս, այլ յամենայն փառս թագաւորութեան իւրոյ, ո՛չ մի օր այնպիսի զարդու զարդարեցաւ եւ ո՛չ թէ ի՞ միոյ ծաղկէ, այլ յամենեցունց համանգամայն: Վասն որոյ ի վերայ բե-

¹ Ձ շուշանս

² Ձ > ի

րէ թէ՛ «ոչ զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ», որպէս զի յայտ առնէ, թէ բնութիւն զունոց ծաղկանց ըստ աստուածաստեղծ շնորհին թէպէտ ի նոսա հայել վարժեցան եւ նոքունք¹ վարել հնարեցան, սակայն ոչ կարացին մարդիկ իրեանց ճարտար արուեստին զներկուած նարօտի երփն երփն զունոցն՝ միոյ յոյժ ի յետին ծաղկանց հաւասարել: Արդ որպէս շուշանաւ զամենայն ծաղիկս յիշէ, այսպէս եւ Սողոմոնի զբոլոր թագաւորութիւնս երկրի եւ զփառս նշանակէ, բայց թէ փորձն բոլոր փափկութեանց Սողոմոն² ոչ եհաս, ապա ո՞ւր յալ ոք:

Իսկ եթէ զխտան ի վայրի, որ այսօր է եւ վաղի ի հնոց արկանի, Աստուած այնպէս զգեցուցանէ, ո՞րչափ եւս առաւել զձեզ, թերահաւատք (Ձ 30):

Յորժամ վասն զեղեցկութեանն ապացոյց զծաղիկն էառ, իսկ այժմ յաղագս անցմանն զխտան ի մէջ բերէ, այսինքն՝ թէ զդիրախամոր խտան, որ այսօրեայ³ ունի զկեալն եւ ի պէտս հրոյ է կազմեալ, Աստուած այնպէս պճնազգեստ արար, քանի՛ զձեզ, թերահաւատք: Չայս ասելով՝ զսէրն Աստուծոյ զեկոյց եւ զպատիւն ծանոյց, որպէս զի ասիցէ՝ զձեզ, զորոց զոգիտ շնորհեաց եւ զմարմինսդ յարդարեաց, վասն որոյ զաշխարհս արար եւ զՕրէնսն ետ եւ զմարգարտսն առաքեաց, նաեւ ի Միածինն Իւր ոչ խնայեաց, այլ վասն ձեր ամենեցուն ի մահ մատնեաց, զհա՞րդ ոչ Նովաւ զամենայն շնորհիցէ: «Թերահաւատք» ասէ յիրաւի՛, քանզի անհաւատութիւնն է պատճառ արգելման խնամոցն Աստուծոյ, զի թողեալ զյոյսն, որոյ ամենեքեան սպասեն, եւ ի մարմին բազկի իրեանց ապաւինին, որք ընդ անէծս գրին, քանզի ոչ հաւատան Աստուծոյ, թէ կարօղ է կերակրել կամ մերկութեան նոցին ծածկոյթ ընձենել⁴, վասն որոյ ասէ «թերահաւատք», որպէս զի զկծեսցին եւ ի հաւանութիւն եկեսցեն:

Բայց քննելի է, զի եթէ հրոյ են ճարակ, ընդէ՞ր ապա այնպէս զեղեցիկ արար զծաղիկս: Նախ՝ զի զիմաստութիւնն Իւր եւ զգորութիւնն ծանուցանէ, որպէս զի ամենայն ուրեք զՆորա փառացն կախիցիսք, ոչ միայն ի մեծամեծսն, այլեւ ի տրպագոյնսն հայե-

¹ Զ նոքունք

² Գ Թագ. 7 21-ժԱ

³ Զ առօրեայ

⁴ Զ ընդձենել

լով լինիմք գովիչ¹ ըստ այնմ. «Տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ» (Ա Վոր. Ա 25): Եւ երկրորդ՝ զառատութիւն աննախանձ շնորհին, որ ոչ միայն բանականաց եւ կենդանեաց շնորհս բազմադիմիս կարկառէ, այլեւ անշնչից եւ յետնոց զարմանազան գեղեցկութիւնս պարզեւէ, որպէս զաղբիւր ի ծովու եւ կամ յապառաժ վայրի բոխեցուցանէ եւ զանձրեւ ի վերայ վիմաց ցօղէ եւ զլուսատեսիլ ակունս եւ զմարգարիտս ի խորս ծովու դնէ, այսպէս զօրութիւն եւ գեղեցկութիւն անճառս՝ արմատոց եւ ծաղկանց շնորհէ: Եւ երրորդ՝ ի խրատ եւ յուսումն օգտութեան կազմեցան նորա, յորս հայելով մեք զգաստանամք հաւատովք, եւ մի՛ քան զանբանսն անբանագոյն եղիցուք:

Իսկ ըստ կարգի այլաբանութեանն այսպիսի է. զի թռչնօրն առ հրեշտակս վերացոյց, իսկ այժմ շուշանաւն, զոր «վայրի» ասէ, զվայրենաբարոյ ազգս եւ զայլակրօնս նշանակէ եւ «շուշան» կոչէ զնոսա վասն փափուկ կենացն եւ բարձր փառացն, որք ոչ աշխատութեամբ զփառս աշխարհի վայելեն, որպէս տեսանենք զազգս բարբարոսաց, զի ունին զաշխարհ եւ զմեծութիւն նորա, իսկ իմաստունքն՝ մտօք, որպէս Յովհաննէս, զոր Սողոմոնի անուամբն կոչէ, ոչ հաղորդեցան փառացն նոցա, որպէս ասաց Տէր վասն նորա թէ՝ «Ձի՞ տէք տեսանել՝ մարդ ի հանդերձ փափկութեա՞ն զարդարեալ. ահաւասիկ որ զփափուկսն զգեցեալ են, ի տունս թագաւորաց են» (Մատթ. ԺԱ 8): Արդ՝ թէ զնոսա, որք խոտք են ըստ մարգարէի՞ն² եւ կենցաղոյս միայն են վայելօղբ եւ ոչ հանդերձելոյն, որպէս ասէ, թէ «այսօր է եւ ի վաղի ի հնոց արկանի», Աստուած այնպէս փարթամացուցանէ եւ տեսրս աշխարհի առնէ, որպէս զՆաբոքոդոնոսոր եւ զայլս բազումս, քանի՞ առաւել զձեզ. միայն թէ հաւատս ունիցիք եւ ոչ երկմտիցէք, որք ոչ միայն զայժմուս, այլեւ զհանդերձեալն ժառանգելոց էք:

Մի՛ այսուհետեւ հոգայցէք եւ ասիցէք. «Ձի՞նչ կերիցուք կամ զի՞նչ արքցուք, կամ զի՞նչ զգեցցուք» (Ձ 31),

զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն (Ձ 32):

Որովհետեւ վարդապետեցայք, ասէ, ի բնական օրինաց եւ ծանեայք զԱստուծոյ զօրութիւն տեսութեանն ի թռչունս եւ ի ծաղիկս, մի՛ այլ տառապիք հոգովք: Նաեւ այսու պատկառեցուցանէ

¹ Ձ գովիչք

² Եւ. Ծ 6

զնոսա, թէ չեն ինչ խիստ եւ ծանր հրամանքս: «Ձի գայդ ամենայն հեթանոսք խնդրեն¹»: գոր օրինակ սիրել² զսիրելիսն՝ հեթանոսաց հաւասարեաց, նոյնպէս եւ աստ, զի յոյժ մորմոքեցուցանէ, քանզի նոքա՝ խնդրեն գայդ, «որոց աստուած որովայն իրեանց եւ փառք՝ ամօթն» (հմմտ. Փիլս. Գ 19), որք յարեալ³ են ի սէր աշխարհիս՝ սերմանեալք ի վիճէ եւ ի կաղնոյ՝ ըստ առակին⁴, յերկիր արմատանալով եւ ի ստորին իրս հայելով՝ ի վերին տեսութենէն եւ ի յարութեանն յուսոյ բլշակնեալք են: Իսկ ձեզ ոչ միայն արժան է քան զդոսս գեր ի վերոյ լինել, այլեւ զդպրօքն եւ զփարիսեցուկքն զանցանել: Բայց զ«զինչ»-ն ասելով ընթերանէ գայնոսիկ, որք ոչ միայն վասն կերակրոյ եւ ընկելոյ հոգան, այլ թէ ո՞րպիսի ձեռով ամոքեալ զկերակուրսն պատրաստեսցեն, եւ կամ զինչ օրինակաւ պարգեալ զըմպելին անուշացուցեն, եւ կամ ո՞րպիսի հնարից ներկուածօք եւ բարակաման կերպասուք զզգեստսն պաճուճեսցեն: Այլ թէ նոքա, որ այսպիսի իրաց միայն հոգ տարան, հեթանոսաց հաւասարեցան, այնոքիկ, որ զբազմութիւն ընչիցն մթերեցին եւ անյազ տենչանօք ի տոկոսիս վաշխից մնացին, յորո՞ւմ պարու դասեսցին. ինձ թուի, թէ զանձեալ չարութեանն սատանայի համեմատեսցին:

Քանզի զհտէ Հայրն ձեր երկնաւոր, թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն:

Ո՛չ Իւր Հայր կոչէ, այլ նոցա՛, զի պատուոյն անուամբ զարթուցանէ զնոսա, եւ թէպէտ Ինքն է արարիչ եւ տուիչ ամենայնի, սակայն չեւ եւս զանձնէն ճառէ: Եւ դարձեալ նոցա կոչէ Հայր, զի յորժամ Ինքեան ասիցէ, մի՛ ինչ ցասնուցուն: Եւ տես, զի ո՛չ «Աստուած» ասէ, այլ «Հայր» եւ «երկնաւոր Հայր», որպէս զի ցուցէ, թէ ո՛չ ժուժիցէ անտես առնել զորդիսն, զի ո՞ր հայր զորդի իւր քաղցեալ տեսանելով՝ ոչ կերակրէ: Վասն որոյ եւ ձե՛զ ոչ է պարտ տատամսել, զի ո՛չ որք ի ճաշ թագաւորի հրաւիրիցին, տարակուսին, թէ զինչ ուտիցեն, եւ կամ յաղբիւր մերձենալով երկբայիցեն, թէ զինչ ըմպիցեն. քանզի «բանայ զձեռն եւ լցուցանէ զամենեսեան» (հմմտ. Մաղմ. ԾԽԴ 16) նախ քան զխնդրելն մեր, ըստ առաքելոյ՝ «զհտէ զպէտս մեր եւ զկարիս առաւել քան զոր խնդրեմք եւ իմա-

¹ Զ > խնդրեն

² Զ ի սիրել

³ Զ հարեալ

⁴ Մատթ. ԺԳ 3-8

նամք» (հմմտ. Եփես. Գ 20), գպլտսն ասէ եւ ոչ գաւելորդն, եւ թէ թոյլ տայ եւ գաւելորդն ստանալ, այն ի փորձութեան սակս է եւ ոչ ի պիտոյից, ուստի հրաժարելի է:

Խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ եւ զարդարութիւն Նորա, եւ այդ ամենայն յաւելցի ձեզ (Ձ 33):

Հոգեկան եւ մարմնական բարեաց զանազանութիւն պատմէ եւ զհոգեւորն նախադասէ մարմնականին վասն պատուականութեանն ըստ այնմ թէ՛ «Տէր օրհնեաց զտէր իմ յոյժ, եւ բարձրացաւ, եւ ետ նմա ոսկի եւ արծաթ, ծառայ եւ աղախին» (Ծննդ. ԲԴ 35): Նախ՝ զաստուածայինն եղ, որ է օրհնութիւն շնորհացն Աստուծոյ, եւ ապա զմարդկայինն, եւ այս յիրաւի՝ զի յերկուց ենք գոյացեալ՝ ի հոգւոյ եւ ի մարմնոյ, եւ երկոքումք¹ կամի զմեզ Աստուած փարթամս լինել. բայց նախ հոգեւորօքն, որք են աստուածայինքն, որ զօրէն իշխանի առաջնորդութեան հասին, իսկ երկրորդ՝ մարմնատրօքս, զի արբանեկութեան վիճակեցան, որք են նիւթք մահկանացոյք: Վասն զի եւ մարմին իսկ երկրորդ է հոգւոյ, որ է կերպարան Աստուծոյ եւ պատճառ մարմնոյս շարժութեան, իսկ մարմին շարժել յառաջին շարժութենէն, զոր ուսուցանէ Տէր զկարգաւորն առնել խնդրուածս:

«Խնդրեցէք նախ զարքայութիւն[ն] Աստուծոյ եւ զարդարութիւն Նորա², եւ այդ ամենայն [յաւելցի ձեզ]»: Այսպիսի խնդիր եւ Սողոմոն խնդրեաց, վասն որոյ եւ գովեցաւ յԱստուծոյ, որում ասաց թէ՛ «Որովհետեւ ոչ խնդրեցեր զմեծութիւն եւ զփառս, եւ ոչ թշնամեաց գեր ի վերոյ լինել, այլ իմաստութիւն, տաց քեզ իմաստութիւն ընդարձակութեան սրտի եւ յաւելից յայն զմեծութիւն եւ զփառս, զոր ոչ խնդրեցեր, որպէս զի ոչ լինիցի նման քեզ յառաջինսն կամ ի վերջինսն» (հմմտ. Գ Թագ. Գ 11-13): Այլ խնդրելն ի հաւատոյն է, եւ առնուլն՝ ի ձեռն խնդրուածոյն՝ ըստ այնմ. «Խնդրեցէք զՏէր եւ հօգորք եղերուք» (Սաղմ. ԾԴ 4), որով զօրացեալ անձն բանական ըղծմամբ սրտի աղօթից՝ միանայ սրբութեամբ ի լոյսն մաքուր՝ հայցելով զարժանաւորն խնդրոյ, եւ է այս արքայութիւն Աստուծոյ եւ արդարութիւն: Բայց տես, զի նախ թեթեւացոյց յաշխարհայնոց հոգոց եւ ասպա ի վերին կեանսն հայել յորդորէ, զի մի՛ կարծեսցեն, ըստ հրէականն կամաց, մարմնաւոր երկրի ժառան-

¹ Զ երկոքումք

² Զ > նորա

գութիւն եւ անցաւոր կենաց թագաւորութիւն տալ, որպէս կարծէին բազումք թագաւորել Նմա յԵրուսաղէմ: Չի ոչ եթէ եղաք, զի զայս ժառանգեցուք, այլ յաղագս անիծիցն աստ տարագրեցաք, իսկ Նորա զանէծսն բարձեալ՝ ի նախնի փառսն հրաւիրէ՝ ըստ այնմ. «Ես եկի, զի զկեանս ձեզ ունիցիք եւ առաւել եւս ունիցիք¹» (Իմմտ. Յովհ. Ժ 10): Եւ դարձեալ՝ ցուցանէ, թէ չէ՛ մեծ երկրաւոր պարգեւս, այլ անցաւոր, իսկ դուք խնդրեցէք, ասէ, զհեռաւորն եւ զմշտնջենաւորն, զի տացի ձեզ մերձաւորս, քանզի ոչ հեռանայ ի քէն անցաւորս, զի չէ՛ արժան վասն այդպիսեացոյ ի խնդրուածս զայ առաջի Աստուծոյ: Այլ որպէս ստուեր զկնի մարմնոյ ի հարկէ ընթանայ, այսպէս յետ զճշմարիտն ունելոյ զայ եւ այդ, եւ կամ զկնի ճշմարտին աշակերտելոյ՝ յաւելուած զայդ համարիչիք:

Բայց զո՞յս կոչէ «արքայութիւն»՝ քննելի է: «Արքայութիւն» կամ զԻնքն ասէ՝ ըստ այնմ թէ՛ «Մերձեալ է արքայութիւն Աստուծոյ» (Մատթ. Գ 17). եւ «գարդարութիւն»՝ Պօղոս ասէ, թէ Նա է արդարութիւն², զոր ասէ խնդրել իբր զպատուական ստացուած եւ ի գտանելն մի՛ այլ ինչ ստանալ քան զՆա՝ ըստ այնմ. «Գտաք ի խնդրելն զՄեսիա ի Նազարեթ» (Իմմտ. Յովհ. Ա 41), եւ թէ՛ «Ծանիցեն զՔեզ միայն ճշմարիտ Աստուած եւ զոր առաքեցեր՝ զՅիսուս Քրիստոս» (Յովհ. ԺԷ 3): Իսկ «խնդրելն» Նորա կենցաղաւորութեանն հետեւելն է եւ արդար կրից Նորին աշակերտելն, եւ «յաւելուած» զՕրէնսն³ ասէ, թէ եւ այն առաջի կայ առ ի գործել, եւ կամ կղկղանք զնոյն համարել՝ ըստ առաքելոյ⁴: Եւ կամ «արքայութիւն» զվերին փառսն կոչէ, զոր յայլում տեղոջ «զոգ Աբրահամու» ասէ⁵, վասն թագաւորական փառացն եւ ինքնիշխան ազատութեան. եւ կամ զթագաւորութիւնն⁶ Աստուծոյ ասէ, որպէս ուսոյց յաղօթսն ասել թէ՛ «Եկեցէ արքայութիւն Քո»: Իսկ «արդարութիւն Նորա» զհաւատոցն ասէ, որ առանց գործոց արդարացուցանէ՝ ըստ այնմ. «Աստուած է, որ արդարացուցանէ, իսկ արդ ո՞վ է, որ դատապարտ առնիցէ» (Հոմմ. Ը 33-34), եւ դարձեալ՝ «Ի լրոյ հաւատոց արդարացայք, թէ ի գործոց Օրինաց, զի ի գործոց օրինաց ոչ արդարանայ ամենայն մարմին» (Իմմտ. Գաղ. Գ 5-11), քանզի «ո՞վ պար-

¹ Զ ունիք

² Ա Կոր. Ա 30

³ ՏՁ զՕրէնքն

⁴ Փիլպ. Գ 8

⁵ Ղուկ. ԺԶ 22

⁶ Զ զթագաւորութիւնս

ծեսցի սիրտ սուրբ ունել» (Առակ. Ի 9), եւ՝ «Թէ ասիցես, թէ արդար եմ, սակայն բերան իմ՝ ամբարշտեսցէ» (Խմբ. Յոր Թ 20): Ապա ուրեմն հաւատովն յԱստուած արդարանայ ամենայն որ ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով զհաշտութիւն ընկալաք արեամբ Նորին:

«Եւ այդ ամենայն յաւելցի ձեզ՝»: Այսինքն՝ յետ հաւատովք արդարանալոյն մխեալ քո ի գործս առաքինութեան՝ յաւելուած փառաց է, ասէ, այդ քեզ եւ մեծագոյն վարձուց առիթ եւ պատճառ, իսկ առ ի միտս՝ կենցաղօգոյս խրատ տայ այնոցիկ, որ լսելն կարեն, քանզի ուսուցանէ, թէ որ յիմաստասիրութեան դպրոցս դեգերի եւ վերին իմաստութեամբն յղիանայ, նա է իսկապէս արքայ եւ տէր ամենեցուն, իսկ անզգամն թէպէտ երկրի եւ ծովու տիրէ, աղքատ է եւ չքաւոր, յորս հայեցեալ արտաքնոցն մանկունք՝ զիմաստունն ասացին միայն թագաւոր, միայն փարթամ, քանզի ի ձեռն կրթութեան տեսականին եւ գործնական վարուց արդարութեանն՝ կարէ եւ զազգս նուաճել եւ բազում աշխարհաց տիրել եւ յաւելուած փառաց առնել, որպէս Դաւիթ եւ Սողոմոն եւ Ադէքսանդր Մակեդոնացի]: Իսկ որք արտաքին փառօք միայն բարձրացան եւ ի ներքին դպրութեանցն օտարք մնացին, նոքա արագ եւ զայս կորուսին, որպէս Ռոբոլամ՝ եւ այլք բազումք, վասն որոյ խրատէ Սողոմոն թէ՝ «Լաւ է իմաստութիւն քան զարծաթ բազում, եւ հանճար՝ քան զոսկի ընտիր» (Խմբ. Առակ. Ը 11): Նաեւ զայն եւս յայտ առնէ, թէ պարտ է նախ Սառայի տիրել՝ ազատին վերնոյն, յորմէ անճառն ծնանի բերկրութիւն մտաց¹, եւ ապա կենակցիլ ընդ Քետտորայ², որ «յաւելուած» լսի, յորմէ յառաջ զան ազգք մահկանացուք³:

Մի՛ այսուհետեւ հոգայցէք վասն վաղուին, զի վաղիւն վասն իւր հոգացի. շատ է ատուրն չար իւր (Չ 34):

Չէ՞, ասէ, քեզ բաւական, զի ի քիրտն երեսաց ուտել հրամայեցար, եւ այլ եւս չարիս եւ հոգս ի վերայ տառապանաց յաւելու, եւ թէ հոգացես, զի՞նչ կարիցես առնել, որ եւ քում անձինդ տէր ոչ

¹ Զ > իմ

² Զ > ձեզ

³ Գ Թագ. ԺԴ

⁴ Ծննդ. ԻԱ 1-6

⁵ Զ Կենտորայ

⁶ Ծննդ. ԻԵ 1-4

ես, քանզի սկիզբն միայն է ի քէն գործոյն, իսկ կատարումն ի տեսչութենէն Աստուծոյ պատահի եւ ոչ ի քէն, վասն որոյ գրովանդակն յԱստուած ապաստան արար: Չայս ասելով՝ ամենեւին ազատս կամի լինել զմեզ¹ ի ցաւոց, զի թէ այսօր վասն վաղուին հոգաս եւ վաղիւն՝ վասն միւսոյ աւուրն, այս յանհուն տանջանս զքեզ մատնէ եւ յանհնիցն ոչ ժողովի շահից օգուտ, վասն որոյ ի վերայ բերէ, թէ բաւական է առաջի աւուրն հոգք եւ չարիք առանձինն, որ ի հոգեկան վշտաց չարչարիք եւ ի մարմնական կարեաց վտանգիք, մի՛ վէրս ի վերայ վիրաց յաւելուցուք: Իսկ «չար» գչարաչար կիրսն ասէ, որք յառաւօտէ մինչեւ ցերեկոյ տաժանին մարդիկ ի գործս անպիտանս:

¹ Զ ~ զմեզ կամի լինել

ԳԼՈՒԽ Է

Մի՛ դատեք, զի մի՛ դատիցիք (Է 1):

Զի որով դատաստանաւ դատիք՝ դատելոց էք, եւ որով չափով չափեք՝ չափեսցի ձեզ (Է 2):

Ըստ հինգ յեղանակս իմանամք զասացեալս: Նախ՝ զի ոչ ի դատելոյ հրաժարեցուցանէ Որ դատաւորս կարգեաց ի հինն եւ ի նորս, այլ ուղիղ դատաստանս պահանջէ՝ ըստ այնմ. «Մի՛ ըստ աչս դատիք», եւ թէ՛ «Դատաստան արդար՝ դատեցարուք» (հմմտ. Յովհ. Է 24), քանզի առ իշխանս է քանս թէ՛ «Մի՛ զանձանց վրէժխնդրէք» (Հոմմ. ԺԲ 19) եւ զօտարին արհամարհէք, զի մի՛ եւ դուք ի նոյն մատնիցիք. այլ որպէս անձանց, այսպէս աղքատաց եւ օրինաց Աստուծոյ ուղիղ եւ իրաւամբք քննելով՝ վրէժխնդիր լինիջիք: Եւ երկրորդ՝ առ հաւասարս ասէ, թէ մի՛ զմիմեանս դատեք¹՝ ըստ առաքելոյ թէ՛ «Դու զի՞ դատես² զեղբայր քո» (Հոմմ. ԺԴ 10), զի զայդ առնելով՝ զիրաւունս Աստուծոյ եւ իշխանաց ի քեզ յափշտակել ջանաս, վասն որոյ դատիս եւ դո՛ւ ըստ քում անիրաւութեանդ եւ անարժան չափոյդ կշռութեան. զի թողեալ զչափ հնազանդութեանդ՝ եւ գեր ի վերոյսն յանդգնեցար հպարտ կամօք, զոր զգուշացուցանէ Պօղոս. «Մի՛ հպարտացեալ, զի մի՛ ի դատաստան սատանայի անկանիցիս» (հմմտ. Ա Տիմ. Գ 6): Եւ երրորդ՝ վասն անյայտութեան իրացն հրամայէ ոչ դատել, քանզի իրք մեր ընդ կարծեօք են անկեալ, ոչ է պարտ երկբայութեամբ այլոց չարիս հասուցանել, զորս խրատէ մի՛ յառաջ քան զժամանակն դատել, մինչեւ եկեսցէ Տէր, որ լուսաւոր առնէ զգաղտնիս խաւարի, եւ յայտնեսցէ զխորհուրդս սրտից, քանզի Աստուծոյ միայն է ոչ ի կարծ դատել՝ ըստ մարգարէին³, իսկ եղական բնութեանդ հաստատուն այցելութեամբ պարտ է քննել եւ ճշգրիտ հասու լինել, զի մի՛ ի տարապարտուց զոք դատեալ՝ անկցիս եւ դո՛ւ ի նմանապէս չարիս: Եւ չորրորդ՝ դատողաց հրամայէ մաքուր լինել ի մեղաց եւ լի իմաստութեամբ, զի երկուքս այտքիկ յոյժ պիտանացու են դատաւորին. մի գուցէ զոր մեղադրեացն՝ զնոյն կրեսցէ՝ ըստ այնմ. «Երանի

¹ Զ դատիք

² Զ դատիս

³ Սաղմ. Թ 9, Դան. Գ 27-31 ևն

որ ոչ դատի զանձն՝ որով զընկերն փորձիցէ» (Հռոմ. ԺԴ 22), զի համարձակութեամբ կարիցէ դատել՝ ազատ գոյով ի յանցանաց, որպէս առաջիկայս ցուցանէ: Ապա թէ ոչ՝ զոր ինչ ասիցէ, զնոյն եւ յիցէ, եւ զոր առնիցէ, զնոյն եւ կրեսցէ՝ կամ ի մարդկանէ, կամ յԱստուծոյ նախախնամութենէն: Եւ հինգերորդ՝ ոչ ճշդիւ հրամայէ քննել զյանցանս ընկերաց, քանզի ո՞րք լինիցի սուրբ ի յաղտոյ մեղաց. զի թէպէտ Աստուած «դատաւոր» զրեալ է¹, այլեւ ողորմած վկայեալ է, եւ թէպէտ «առիւծ» ասի, նախ «գառն» անուանի², վասն որոյ եւ ի նմանութիւն Իւրոյն եւ զմեզ յորորէ՝ ըստ այնմ. «Լից զեղջիրդ³ քո իւղով⁴» (Ա Թագ. ԺԶ 1), այսինքն՝ ընդ խեթկիչ իշխանութիւնդ խառնեա եւ զողորմութեանն իւղ, զի մի՛ պատառոյ միայն լինիցիս, այլեւ սփոփոյ ըստ առաքելոյ՝ «Մաստեա՛, մխիթարեա՛» (Բ Տիմ. Դ 2), եւ թէ՛ «Մատակեսջիք զայնպիսին ի սատակումն մարմնոյ» (հմմտ. Ա Կոր. Ե 5), եւ ի վերայ բերէ թէ՛ «Հաստատեցէք ի նա զսէրն» (հմմտ. Բ Կոր. Բ 8):

Արդ՝ զայս արարեալ քո՝ արդար դատաւոր գտանիցիս, իսկ եթէ ոչ, այլ անիրաւ դատաւորին համատիպ գտանիցիս՝ յԱստուծոյ ոչ երկնչելով եւ ի մարդկանէ ոչ ամաչելով՝ անիրաւութեամբ դատել կամ մինչ ի վերջինսն զննել, զհտասջիր, ասէ, զի եւ դո՛ւ պատահեսցես այնպիսի դատաստանի, քանզի ի քէն էառ սկիզբն անվրէպ պատժոցն, եւ դո՛ւ իսկ ուսուցեր այնպիսի դատել: Ինձ թոյի, թէ այնպիսիք էին հրեայքն, որք մեծամեծ չարութեամբ ներկեալ էին եւ ճշդիւ զայրոցն քննէին՝ ըստ այնմ. «Կապեն բեռնս ծանունս եւ դժուարակիրս» (Մատթ. ԻԳ 6), եւ թէ՛ «Թողէք զծանր Օրինացն եւ զողորմութիւն եւ զդատաստանս», եւ թէ՛ «Զմժղուկն քամէք եւ զուղտն կլանէք» (հմմտ. Մատթ. ԻԳ 23-24), վասն որոյ չափեցաւ նոցա յարդար Դատաւորէն՝ ի կեանս եւ առ յապայ:

Չի՞ տեսանես զշիւղ յական եղբոր քո եւ ի քում ականդ⁶ զգերանդ ոչ տեսանես (Է 3):

Թարգմանեաց զառաջինն եւ իբր սաստիւ իմն վարի թէ՛ է՞ր աղագաւ զայդ առնես, զի նրբագունից այլոց յանցանաց դառնոսոյս

¹ Բ Տիմ. Դ 8, Սաղմ. Թ 8-9 ևն

² Յայտ. Ե 5-6, Յովի. Ա 29 ևն

³ Զ զեղջերոյ

⁴ Զ եղով (այսպէս է և այլուր. եղ] իւղ):

⁵ Ղուկ. ԺԸ 2

⁶ Զ ական

լինիցիս եւ զստուարագոյն մեղս քո անտես ունիցիս, զորս ողբայ մարգարէն թէ՛ «Վա՛յ որք ձգեն երկայն պարանաւ զանօրէնութիւնս իւրեանց» (Ես. Ե 18), քանզի զայս առնելով կրկին յանցանս յանցանես. մի՛ զի զնորա տեսանես զփոքրագոյնն, եւ երկրորդ՝ զի զքոյդ ոչ նկատես զմեծագոյնդ: Արդ՝ եթէ սրատես իցես, հայեաց ի մեծն, զի դիւրին տեսանի, եւ թէ կոյր՝ ծածկեա զնուազն, զի դժուարին երեւի. իսկ դու զհակառակն առնես, որով յայտնապէս ծանուցանի, թէ կամա՛ւ զչարն գործես: Եւ «ակն» զմիտսն կոչէ, իսկ «շիւղ» եւ «գերան» զմեղսն անուանէ՝ ըստ առաքելոյ թէ՛ «փայտ, խոտ, եղէզն» (Ա Վոր. Գ 12): Նաեւ զայն եւս այսու ակնարկէ, թէ յանցանքն կուրացուցիչ է մտաց, որպէս շիւղ¹ եւ գերան՝ աչաց: Այսպիսիք ինձ թուին արտաքինքն, զի յորժամ զվանականսն տեսանիցեն աւելի ինչ հանդերձս ունել եւ կամ սակաւ ինչ պարարտ կերակրօք կերակրիլ, զօրէնսն առաջի դնեն եւ ամբաստան լինին², եւ ինքեանք բիր յափշտակութիւնս յափշտակեն եւ ոչ տեսանեն ոչ զիտելով, թէ անձանց յաւելուն զհորն:

Կամ զիա՞րդ ասես³ ցեղբայր քո. «Թող հանից զշիւղ յականէ քումմէ», եւ ահաւաղիկ ի քում ականդ գերան կայ (Է 4):

Չհիացումն ընդ ցասումն խառնէ, թէ զիա՞րդ իշխեսցես առնել զայդ, եւ երկու իրս ուսուցանէ. առաջինն՝ թէ զիա՞րդ զայլոյ շիւղ տեսանիցես հանել, որովհետեւ դու գերանաւոր կուրացեալ ես, եւ երկրորդ՝ կարի իմն լիրք ես, ասէ, զի թողեալ զքոյն, որ մեծաց եւ բազմաց ունի պէտս օգնականութեան, նորայն⁴ հոգ տանիցիս, որ բաւական է անձամբ ազատել զանձն եւ ոչ է կարօտ քումդ ձեռնտութեան: Իսկ «կայ» ասելովն զհաստատուն լինելն ի մեղսն նշանակէ, վասն որոյ դժուարին է շարժել:

Կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ քումմէ եւ ապա հայեցիս⁵ հանել զշիւղն յականէ երբօր քո (Է 5):

Չայս վարդապետութիւն եւ աւազակն սաստելով ընկերին արար եթէ՛ «Չերկնչի՞ս դու յԱստուծոյ, զի ի նմին պատժի կաս, եւ մեք յիրաւի..., իսկ սա ապիրատ ինչ ոչ գործեաց» (Ղուկ. ԻԳ 40), վասն

¹ Ձ շիւղ (այսպէս է և այլուր. շիւղ] շիւղ):

² Ձ լինիցին

³ Ձ ասիցես

⁴ Ձ նորոյն

⁵ ՏՁ հայեցես

որոյ ի դէպ անուն նմին գրէ՝ «կեղծատր» ասէ: Յիրաւի՛. զի ոչ խնամակալութեան միտք իցեն այնպիսոյն, այլ մարդատեցիկ բարութք զերեսս բարեկամի ցուցանէ եւ զգործ թշնամոյ գործէ: Նաեւ այլ ազգ. զի որ զիրն ծածկել ջանայ եւ զընկերին բանալ փութայ, զի այնու զիրն ծածկեսցէ, կեղծատր իսկ է, զորս խրատէ թէ՛ «Հան նախ զգերանդ [յականէ քումմէ]», զի ոչ միայն ոչ հանես, այլեւ տեսանես իսկ ոչ, եւ զնորայն ոչ միայն տեսանես, այլեւ հանել ժպրհիս. նախ զքոյդ սրբեա զքոր մեղաց եւ ապա այլոց ուղղիչ լինիցիս: Եւ ցուցանէ, թէ վերջամուտ է մեղքն եւ ոչ բնական, այլ սահեալ իբրեւ զշիտ կամ իբրեւ զգերան՝ զտեսութիւն մտացն խանգարէ ի հողմոյ չարին կամ ի քարշելոյ բանասարկոյին:

Սի՛ տայք զսրբութիւն շանց եւ մի՛ արկանէք զմարգարիտ ձեր առաջի խնայ, զի մի՛ առ ոսն կոխիցեն զնոսա եւ դարձեալ երգիծուցանիցեն զձեզ (Է 6):

Ընդէ՞ր ապա ասաց թէ՛ «Չոր լսէք յունկանէ՛ քարոզեսցիք ի վերայ տանեաց» (Մատթ. Ժ 27). արժանատրաց յայտ է ահա՛ ըստ այնմ. «Ձե՛զ ասեմ, որ լսէքդ» (Դուկ. 2 27): Բայց «սրբութիւն» զո՞րս կոչէ. ինձ թուի, թէ զանճառ տնտեսութիւնն, զոր ներգործեաց յաշխարհի աստուածութեանն եւ մարդկութեանն լրմամբ՝ ըստ այնմ թէ՛ «Չոր Հայր սրբեաց եւ առաքեաց յաշխարհ» (Յովհ. Ժ 36), որոյ տիպ յԵկեղեցի մարմինն եւ արիւնն Իւր սրբիչ մեղաց: Նաեւ զվերին փառացն գիտութիւնն «սրբութիւն» եւ «մարգարիտ» անուանէ՛ ըստ այնմ թէ՛ «Սրբութիւն արարեալ մեղաց մերոց» (Եբր. Ա 3), եւ թէ՛ «Նա է սրբութիւն մեր» (հմմտ. Ա Կոր. Ա 30), եւ «զանխօս մարգարիտն»², եւ թէ՛ «Խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս եւ զտեալ մի պատուական մարգարիտ» (Մատթ. ԺԳ 45), զորոյ խորհրդածուս հրաժարեցուցանէ ոչ արտաքս կաքաւեցուցանել յանսրբազանսն:

Իսկ «շուն» զանդարձսն ի չարիս եւ զամենեւին ամբարիշտսն ասէ, եւ «խոզ»՝ զտղմասէր յանցաւորս, որոց ոչ է պիտոյ բանալ զդրունս խորհրդոյ: Է՞ր վասն. քանզի եւս մեղանշականք լինիցին, յորժամ զխորհուրդն ուսանիցին: Չի պարկեշտացն լուեալ՝ առաւել օգտիցին, իսկ անհանճարիցն մոլեալ՝ ի կատաղութիւն զակատին՝ ըստ Իմաստնոյն թէ՛ «Ո՛չ է պիտոյ անզգամին գիտութիւն, զի առաւել եւս վարի անզգամութեամբ» (հմմտ. Առակ. ԺԸ 2), եւ Տէրն թէ՛

¹ Զ > թէ

² Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ և աւետարանչի, Ե

«Ո՛չ է բարոնք առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց» (Մատթ. ԺԵ 26), զի ի տգիտութեանն գորով գէթ պատկառին, իսկ խորհրդոյն տեղեկութեամբ լրբին եւ փոխանակ շահելոյ՝ վնասս գործեն անձանց եւ շնորհին՝ իբր այն. «Ո՛չ արկանեն զհնի նոր ի տիկս հինս, քանզի պատառին, եւ զհնին հեղու, եւ տիկքն կորնչին» (Մատթ. Թ 17): Ահա ա՛յս է ասելն թէ՝ «Դարձեալ երգիծուցանիցեն զձեզ». քանզի «երգիծանելն» պատառեալ լսի: Կամ՝ նախ կեղծաւորին, մինչեւ ուսանին, եւ յետոյ սպա առ ոտն հարեալ եւ յերգ արկեալ կատակեն՝ ըստ այնմ. «Շնչաւոր մարդ ոչ ընդունի, զի յիմարութիւն է նմա» (հմմտ. Ա Կոր. Բ 14). քայց ո՛չ սրբութիւնն առնէ զայս, այլ նոցա խոզութիւնն: Վասն որոյ խրատէ ոչ տալ, այլ որպէս շուն, ասէ, զի բնութեամբ տգէտ է սրբութեան, եւ խոզ՝ մարգարտին պայծառութեան, այնպէս կացցեն ի տգիտութիւնն եւ նոքա, զի մի՛ կոխեսցեն, մինչ ի խնդիր ելանիցեն՝ փափագեալք գիտութեան, որպէս ասէ յաջորդդ: Ապա թէ ցրուես, զիտես, ասէ, զի կրկի՛ն յանցանես. մի՛ զի նորա վնասու պատճառ լինիցիս, եւ երկրորդ՝ զի որպէս քանքարաթաքոյցն¹, այսպէս եւ վայրավատնօրդ, զի խորելն նենգութեամբ եւ ցրուելն շռայլութեամբ՝ ընդ մի համարեալ են, իսկ արժանաւորաց բաշխել՝ զովութեան է ցոյց:

Եւ դարձեալ՝ «սրբութիւն» զօրէնսն կոչէ՝ ըստ այնմ. «Բանք Տեառն սուրբ են» (հմմտ. Մատթ. ԺԱ 7), եւ թէ՝ «Օրէնքն սուրբ են, եւ պատուիրանն՝ սուրբ» (Հոմմ. Է 12), որով մաքրեալք արդարանամք օրինացն լրմամբ. իսկ յանցաւոր գտեալ ընդ սուրբ բանսն Տեառն՝ զԱստուած անարգեմք՝ ըստ առաքելոյ², յորմէ յանցանաց պատահի շնամտացն եւ խոզաբարոյիցն՝ հայհոյչացն եւ չարագործացն՝ արհամարհեալ նախ զՏեառն վարդապետութիւն, որպէս եւ գրեալ է. «Վասն ձեր անուն Իմ հայհոյի ի մէջ հեթանոսաց» (Եւ. ԾԲ 5) շանց, եւ սպա դարձեալ յայնցանէ հեղուն եւ ի մեզ զնախատինս յանդիմանական բանից վասն մերոց ըստգտանաց: Լսի եւ այսպէս. «սրբութիւն» կոչէ զսրբարար շնորհս Աւագանին, եւ «մարգարիտ»՝ զմարմնոյ եւ արեան Տեառն հաղորդութիւնն. արդ՝ զսոսա ասէ մի՛ տալ շանց հեթանոսաց եւ խոզից յանցաւորաց, զի մի՛ առ ոտն կոխիցեն եւ երգիծուցանիցեն զձեզ: Չիա՞րդ. կարծելով թեթեւ զիրսն եւ անարժան զսպասաւորսն, որպէս զինքեանս,

¹ Մատթ. ԻԵ 18

² Հոմմ. Բ 23

զի անարժանութեամբ մերձենան. ա՛յս է ասելն առաքելոյ թէ՛ «Չարին Նորոյ ուխտի խառնակ համարին» (հմմտ. հմմտ. Եբր. Ժ 29), եւ՛ «Վերստին ի խաչ հանիցեն զՈրդին Աստուծոյ» (հմմտ. Եբր. 2 6):

Իսկ առ ի միտս՝ սրբութիւն է վարք աստուածայինք, եւ յար Աստուծոյ կամացն բարեպաշտութեամբ հպատակութիւն ըստ գերազանցութեան բանի, եւ բարեաց միայն կամեցողութիւն: Նոյն եւ մարգարիտ՝ վասն փառացն պայծառութեան, զոր զգուշացուցանէ մի՛ տալ շանց, քանզի բազումք եկեալ յայսպիսի վարուցս սպասատրութիւն եւ թեթեւացեալք յուսով վերին փառացն՝ յաղտաղտուկ ծովու կենցաղոյս խորոց բարձրացան յերկինս եւ արագ անդրէն ընդ կրունկ¹ դարձեալ՝ անկան քան զամենայն անկումն դժոխագոյն: Վասն որոյ ասացաւ. «Լաւ էր նոցա, թէ չէր իսկ ծանուցեալ զարդարութեան ճանապարհն, քան թէ ծանեան եւ յետս կացին՝ եկեալ ի դէպ նոցա ճշմարիտ առակն, թէ շուն դառնայ ի փախած իւր, եւ խոզ լուացեալ ի տիղմն թաւալի» (հմմտ. Բ Պետ. Բ 21-22), որով ծանակ լինի ճիւղաց դիւաց եւ երգիծեալ քամահի յամբարիշտ արանց:

Խնդրեցէ՛ք, եւ տացի՛ ձեզ, հայցեցէ՛ք եւ գտցի՛ք, բախեցէ՛ք, եւ բացցի՛ ձեզ (Է 7):

Չոր ճառեաց նախ զբարձրագոյն իմաստս, ո՛չ այլ իւրք կարէ ոք կատարել, քան թէ աղօթից օգնականութեամբ, զոր անընդհատ մաղթանօք ի տուէ եւ ի զիշերի դեզերի ի դուռն խնամոցն Աստուծոյ: Բայց զի յերիս բաժանեաց ձեւս՝ խնդրել եւ հայցել եւ բախել, յիրաւի՛. զի կամ յԵրրորդութեանն զիտութիւն վերացոյց զմիտս աղօթողին, կամ թէ իրքն այսպէս պահանջեն, քանզի նախ խնդրել պարտ է, այսինքն՝ որոնել, թէ զինչ խնդրիցէ, եւ գտեալ զայն ի ձեռն խնդրոյն՝ ասպա հայցէ զոր ինչ կամեցաւ: Իսկ Նորա յերկարեալ² գտայն, զի ի փափագ շարժիցէ, եւ զի մի՛ դիրաւ գտեալ՝ դիրաւ արհամարհիցէ, բախեա՛, ասէ, այսինքն՝ ժտեա՛ պաղատանօք՝ ըստ այնմ. «Ժտեա՛ ի Տեառնէ զխնդրուածս սրտի քո» (հմմտ. Սաղմ. ԼԶ 4), եւ՛ «Թէ ոչ տացէ վասն բարեկամութեանն, յարուցեալ տացէ վասն ժտութեանն» (հմմտ. Ղուկ. ԺԱ 8), զի մարդիկ ի խնդրելն ձանձրանան, իսկ Աստուած յոչ ժտելն զայրանայ եւ ի

¹ Զ կրունկն

² Զ յերկարել

ժտելն բանայ զգուր իւր եւ լցուցանէ առատութեան կամօք Իւրովք: Եւ զի այս այսպէս է, ինքն բանն երաշխատոր լինի յաւելուածովն:

Ջի ամենայն որ խնդրէ՝ առնու, եւ որ հայցէ՝ գտանէ, եւ որ բախէ՝ բացցի նմա (Է 8):

Մի՛ յամելովն ի տարակուսութիւն անկանհիցիս, ասէ, զի թէպէտ անազան ուրեմն, սակայն առնլոց ես ի դէպ ժամանակի՝ ըստ Երգողին. «Տացէ քեզ Տէր ըստ սրտի քում եւ զամենայն խնդրուածս սրտի քո Նա կատարեսցէ» (հմմտ. Մատթ. ԺԹ 5), եւ թէ՛ «Ջի զոր ինչ¹ խնդրիցէք հաւատովք յաղօթս՝ առնուցուք» (հմմտ. Մատթ. ԻԱ 22), զի պատճառ խնդրելն է եւ հայցելն եւ բախելն², իսկ առնուլն եւ գտանելն եւ բանայն պատրաստ է Աստուծոյ: Բայց զի մի՛ ոք ասիցէ, թէ բազում³ ժամանակս յերկարեցի եւ ոչ առի զխնդիրն, դնէ ի դէպ ասպացոյց, եւ է առակն այսպիսի:

Ո՞ իցէ ի ձեզ մարդ, ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր տայցէ նմա (Է 9):

Եւ՞⁴ կամ խնդրիցէ ձուկն, միթէ՞⁵ օ՞ճ տայցէ նմա⁶ (Է 10):

Երկդիմի մեկնութեամբ լուծումն առնէ առաջնոյն. նախ՝ ասէ՝ անհնարին է, թէ ոչ առնուցուս, զի ո՞ր հայր, յորժամ զորդի իւր ի ժտանս տեսանիցէ, ոչ բնական զթովն նեղեալ ընձեռէ զխնդրելին. իսկ երկրորդ՝ յայն սակս, ասէ, չառնուցու, զի զանօգուտն խնդրէ, զի տեսեալ մանուկ զքար՝ հաց կարծէ, եւ զօճ՝ ձուկն իմանայ, զոր զհտելով հայրն արգելու, զի մի՛ ի կոշտ կերակրոցն լինդքն քանցեսցին, եւ կամ ի թիւնից օճիցն սատակեսցին: Բայց «քար» զարտաքոյ բնութեանն իրս ասէ եւ «օճ»՝ զմարմնական ցանկութեանցն լրմունս, որում անհնարին է յայսմ օժանդակել Աստուծոյ: Իսկ զհոգեւորն՝ հաց եւ ձուկն, զոր յետ յարութեանն ետ աշակերտացն, որ է արքայութիւն եւ արդարութիւն Նորա, հայրական խնամովն, զոր ունի առ որդիսդ, մինչչեւ իցէ քո խնդրեալ՝ ընդ ա-

¹ ջ > ինչ

² Տ բաղխելն

³ Տ > բազում

⁴ ջ > Եւ

⁵ ջ մի

⁶ ջ > նմա

ուսջ բերէ եւ պէսպէս իմանալի կերակրօք կերակրէ զտենչացօղղ արդարութեանն հացի եւ զծարաւիդ գեղոյ փառացն ցանկալի:

Արդ՝ եթէ դուք, որ չարքդ էք, զհստք պարգեսս բարիս տալ որդոց ձերոց, որչափ եւս առաւել Հայրն ձեր, որ յերկինս է, տացէ բարիս այնոցիկ, որ խնդրեն զՆա (Է 11):

Չառաւելութիւն բարոյն ցուցանէ եւ ո՛չ եթէ զմարդկային բնութիւնս խոտէ, զի զմահկանացոս հայր առ Անեղն բաղդատել հայրութիւն՝ «չար» անուանէ: Դուք, ասէ, ի բազմաց գոյացեալքդ ունիք զընտրողութիւնս զայս, զի զբարի պարգեսսն շնորհէք մարմնական ծննդոց ձերոց, զորս մահուն ծնայք, որով զարգացեալ աճեն ի շահս եւ ո՛չ ի վնաս, քանի՞օն եւ ապա Հայրն երկնաւոր, որ բնութեամբ է բարի եւ համեմատ միակի, որ անվրէպ առանց փորձոյ զիտակ է բարոյն, տացէ՞ զհոգեւոր եւ զիմանալի պարգեսս շնորհօք որդիացելոցն, զոր ի յոյսն ծնաւ կենդանի՝ ըստ այնմ. «Ամենայն տուրք բարիք եւ պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի Հօրէն լուսոյ» (Յակ. Ա 17), որպէս զի այնու ի պարզն ժողովեացէ միութիւն եւ աստուածարար մաքրութիւն, միայն թէ առանց երկմտութեան խնդրեցեն ի Նմանէ:

Չամենայն զոր՝² միանգամ կամիջիք, թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս եւ դո՛ւք արարէք նոցա (Է 12):

Նախ աստանօր զայն յայտ առնէ, թէ յոյժ դիրին է առաքինութիւնն եւ ամենեցունց ընտանի եւ ծանօթ, եւ երկրորդ՝ զսահման առաւելութեան բարոյն, զոր ասաց նախ, այսու զեկուցանէ, թէ զոր ինչ միմեանց կամօք առնիցէք բարիս, յԻնքն ընդունի Մարդասէրն՝ ըստ այնմ թէ՛ «Չոր ինչ արարէք միում ի փոքրկանցս յայցսանէ, Ի՛նձ արարէք» (հմմտ. Մատթ. ԻԵ 40): Տես եւ զայն, զի ո՛չ ասաց. «Որպէս կամիս լինել քեզ յԱստուծոյ, այնպէս արասջիք եւ դուք միմեանց», զի մի՛ ոք ասիցէ, թէ անհնարին են իրքդ, զի Նա Աստուած, եւ ես՝ մարդ. վասն որոյ ասէ՝ որչափ կամիս լինել ի ծառայակցէն քեզ բարիս՝ ոչ գողանալ զինչս քո եւ ոչ ցանկալ կնոջ եւ տան քո, եւ լեզուս նորին զովիլ, եւ սէր առանց կեղծարարութեան առ քեզ ցուցանել, հանգոյն այսմ արասցես եւ դո՛ւ նմա, զի թէ չա-

¹ Տ տայ

² Զ որ

րեացն բարիս փոխարինել պարտիւք, քանի՛ առաւել բարեացն, զի մի՛ կրկին տանջիցիսք, մի՛ զի ի նորայսն վայելեցաք, եւ երկրորդ՝ զի ի հատուցումն ապերախտ գտաք: Ահա օրէնք յոյժ թեթեւ եւ արդարութեամբ լի, զոր ոմանք ասեն, թէ զուարթացեալն հոգւով Բառնարաս զայս քարոզէր միշտ՝ ցուցանելով, թէ Քրիստոսի քարոզութիւնն ո՛չ լուծումն էր առաջնոյն, որպէս ոմանք կարծէին, այլ լրումն բնականին, միանգամայն եւ գրաւորականին, որպէս ասէ.

Չի ա՛յս իսկ են Օրէնքն եւ Մարգարէք:

Ո՛վ մարդասիրութեանն Աստուծոյ. զի զոր ինչ ի բնութիւնս մեր տնկեաց, զայն իսկ Օրինօք գրեաց եւ մարգարէիւք քարոզեաց, զի ի պահանջելն մի՛ դժուարեացուք՝ իբրո՞ւ ոչ տուեալ, եւ ի կատարելն մի՛ համբարձցուք՝ իբրո՞ւ նորագոյն ինչ գործեալ: Քանզի Օրէնքն ոչ այլ ինչ են, քան թէ բնական կարգացն երկրորդութիւն, որովք բազումք պայծառացան եւ անգիր օրինօք² յաշխարհի փայլեցին՝ ըստ առաքելոյ թէ՛ «Որք զՕրէնս ոչ ունին, բնութեամբ զՕրինացն գործէին՝ գրեալ ի սիրտս իրեանց» (հմմտ. Հռոմ. Բ 14-15): Եւ դարձեալ՝ զի ի յառնելն ձեր զայս՝ կատարին Օրէնք եւ Մարգարէք՝ իբր այն. «Օրէնք եւ պատուիրանք ի յայն բան բովանդակին՝ սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո» (հմմտ. Մատթ. ԻԲ 39-40), եւ՝ «Սէր ընկերի իւրում չար ոչ առնէ. լրումն Օրինացն սէր է» (Հռոմ. ԺԳ 10):

Մտք ընդ նեղ դուռն. քանի՛ ընդարձակ է դուռն եւ համարձակ ճանապարհն, որ տանի ի կորուստ, եւ բազումք են, որ մտանեն ընդ նա (Է 13):

Քանի՛ անձուկ է դուռնն եւ նեղ՝ ճանապարհն, որ տանի ի կեանս, եւ սակաւք են, որ գտանեն զնա (Է 14):

Արդ՝ եթէ նեղ է դուռն, է՞ր վասն ասաց յայլում տեղոց թէ՛ «Լուծ Իմ քաղցր է, եւ բեռն Իմ՝ փոքրոզի» (Մատթ. ԺԱ 30): Մի՛տ դիր, զի եւ աստանօր զնոյն ցուցանէ, թէ դուռն միայն է նեղ, իսկ վայր ընդարձակ է կեանք, որպէս եւ միսն զդուռն միայն ունի արձակ, իսկ տեղին կորուստ է եւ զեհեան: Եւ դարձեալ՝ անդ «թեթեւ» ասաց յաղագս յուսոյն, որպէս երգէ Դաւիթ թէ՛ «Յոյժ անդորր են

¹ Զ մի] եւ երկրորդ

² Զ օրէնք

ինձ պատուիրանք [Քո]» (Մաղմ. 6ԺԸ 96), եւ Յովհաննէս թէ՛ «Պատուիրանք Նորա չեն ինչ ծանունք» (Ա Յովհ. Ե 3): Իսկ աստ «նեղ» վասն հանդիսի ճգանցն՝ ըստ առաքելոյ թէ՛ «Բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յայն հանգիստն» (հմմտ. Գործ. ԺԳ 21), եւ թէ՛ «Առժամայն նեղութիւնս գյաճախութիւն փառացն գործէ ի մեզ» (հմմտ. Բ Կոր. Դ 17). վասն որոյ մի՛ հայիր ի նեղն, այլ յայն, թէ ո՛ր տանիցի, եւ մի՛ ընդ լայնն, [այլ] թէ ո՛ր վախճան ունիցի:

Եւ «նեղ» այն ասի, զի յամենայն կողմանց ճնշիցի եւ վտանգիցի յելս ճանապարհին՝ ըստ նմանութեան կամրջի ոչ խոտորելով յաջ եւ ոչ յահեակ: Իսկ «լայն»՝ զի ի ճանապարհէն արտաքս ելեալ յընդարձակութեան շրջի՝ մոլորեալ յուղիղ պողոտայէն: Եւ «դուռն» անուանէ յիրաւի, զի իբր ի դրանց արտաքս ելանեմք ի կենցաղոյս՝ թողեալ ի տան աշխարհիս զմթերեալ ընչից բազմութիւնս, նաեւ զվիշտս եւ զնեղութիւնս, յորում ոմանք սակաւ վշտացեալ իբր ի դրան ել՝ կենացն պատահին, եւ ոմանք ի դուռն՝ ժամանակ ընդարձակ կենօք յօրացեալ՝ կորստեան արժանաւորին: Իմա եւ զայն, զի ընդ արձակս, ասէ, բազումք ընթանան յաղազս հեշտութեանն խաբեալք եւ յառաջնորդէ ճանապարհին այլ ոք այլոր զահավիժեալ, յորոյ կատարածն կորուստն է բազմեալ՝ սատանայ՝ ըստ այնմ. «Են ճանապարհք, որ թուին թէ ուղիղ իցեն, բայց ելք նոցա հային յատակս դժոխսց» (հմմտ. Առակ. ԺԶ 25): Իսկ ի նեղն՝ սակաւք՝ վասն դժուարութեան նորք ընթացիցն, զի խաչ կայ առաջի եւ չարչարանք, նահատակութիւնք եւ վաստակք, որոյ առաջնորդ Տէր է հաստատեալն ի գլուխն՝ անմահ կենացն բաշխիչ եւ արքայութեանն երկնից պարգեւիչ:

Արդ՝ թեպէտ այս ըստ պարզ տեսութեան քննեցաւ, բայց ունի խոր ինչ տեսութիւն, զոր ստուգել արժան է, զի մի՛ վրիպիցիմք յընտրողութենէ իրացն, եթէ ո՞ր է նեղ դուռն, որ սակաւուց է գնալի, եւ կամ ընդարձակն, որ բազմաց է կոխելի: Քանզի նեղ ո՛չ է այն միայն¹, յորոյ վերայ գան ցաւագին կիրք եւ տրտմական վտանգք, հիւանդութիւնք եւ աղքատութիւնք, չարչարանք եւ անփառութիւնք, զի բազումք այսպիսի կրիւք տաժանին, սակայն ո՛չ ի կեանս մտանելոց են: Է՞ր. վասն զի այնորժ բաղձանօք ո՛չ զնոյն ընդունին եւ ո՛չ քննութեամբ միշտ ի փառս Աստուծոյ նուիրեն զ՛ի վերայ եկեալ վշտացն բազմութիւն, եւ ո՛չ լծեն ընդ նեղութեանն

¹ Զ ~ միայն այն է

զհամբերութիւնն՝ իբր իմաստունքն, զի ի բազմանալ վշտացն՝ ուրախ են ակնկալութեամբ բարեացն եւ յաճախեն միշտ զգոհութիւնն առ Աստուած՝ մեծ մասն շնորհի վարկանելով զչարչարանսն որ վասն Քրիստոսի՝ ըստ առաքելոյ¹։ Այսպիսիքն թեպէտ գործով ընդ նեղն ընթանան անբանաբար, սակայն կամօք զլայնն ախորժեն, որոց թէ պատահէ՝ յօժարութեամբ ընդունին, վասն որոյ «վախճան նոցա կորուստն է» (Փիլպ. Գ 19), զի առաքիւնութիւն ոչ ի հարկէն է, այլ կամատրն։ Եւ ընդդէմ այսմ՝ եթէ որ փառօք աշխարհիս ճոխացեալ է եւ յառողջութիւն մարմնոյն անվթար իջէ եւ յարտաքին նեղչաց ոչ վտանգիցէ, սակայն յօժար կամօք ոչինչ գրէ զայն, այլ սրտի բերկրանօք եռայ ի սէրն Աստուծոյ եւ վառի ի հոգեւոր կենացն տոփումն՝ չափաւորեալ զանձն ի մէջ անչափութեանն՝ մտածելով զայն, զի մի՛ փափկութեամբն մոռացի Աստուած եւ անգոսնեցի Սիրելին, այնպիսոյն ընթացքն ընդ նեղն է եւ ընդ անձուկն։ Չի թէ պատահեսցէ եւ այն, յօժարութեամբ զիրկս ածէ եւ համբերութեամբ զնոյն կատարէ, որում եւ Աստուած օգնական է գտելոյ նեղութեանցն ապաւինելոցն ի Նա։ Այսպիսեացս կատարածն կեանքն է եւ փառքն անվախճան։ Ապա ուրեմն ճշմարիտ ասացաւ, թէ «սակաւք են, որ գտանեն զնա», քանզի յոյժ նորր է շաւիղ առաքիւնութեան եւ բազում ընտրութեանց պիտոյանայ, որպէս ցուցաւ։

Չգոյ՛ լերութք ի սուտ մարգարէիցն, որ գան առ ձեզ հանդերձիք ոչխարաց եւ ի ներքոյ են գայլք յափշտակօրք։ Ի պտղոյ՛ նոցա ծանիջիք զնոսա (Է 15)։

Նախ՝ ընդ շունս եւ ընդ խոզս ոչ ասաց հաղորդիլ, իսկ այժմ՝ այլ իմն դատողաց նշանակ տայ՝ չար քան զառաջինն, զի նոքա յայտնիք էին եւ սոքա՝ ի ծածուկ, ի նոցանէ հեռանալ հրամայեաց եւ զոսա մեծաւ զգուշութեամբ քննել։ Բայց ո՞յք են, զոր «սուտ մարգարէս» կոչէ. զի զհերձուածողացն ոչ ասէ, զի ի հերձուածողսն բազում անգամ գտանին վարք պարկեշտք, իսկ առ սոսա՝ ոչ բնաւ, որպէս ասէ թէ՝ «Ի գործոց՝ նոցա ծանիջիք զնոսա»։ Ինձ թոի, թէ՛ զսուտ առաքելսն ասէ, զորս Պօղոս «մշակ նենգաւոր» կոչէ (Բ Կոր. ԺԱ 13), զի որպէս մշակ նենգեալ տանուտերաց զայգիսն ապականեն, այսպէս եւ սոքա օղենեօք կերպարանեալք՝ զհօտսն

¹ Ա Պետ. Դ 13-14

² Տ գործոյ

³ Տ > թէ

փողոտեն: Նաեւ զայնոսիկ, որ զկերպարանս առաքինութեան զգեցեալ են, որպէս դպիրքն, եւ ի ներքոյ զեղծ վարուք շրջիցին եւ բազմաց զայթազողութեան եւ պատառման հաւատոյ պատճառք լինիցին: Եւ զի մի՛ որ ասիցէ, թէ որովհետեւ հանդերձիք ոչխարաց զգեստաւորեալք են, զիա՞րդ կարիցենք ճանաչել, ասէ. «Ի պտղոյ՛ նոցա ծանիջիք զնոսա», վաղվադակի՛ խայտառակին, քանզի Ես ընդ նեղն հրամայեցի զնալ, իսկ կեղծաւորքն զայն ոչ կամիցին, ուստի յանդիմանեալ կեղծիք չարութեանն հրատարակին: Բայց ո՛չ վայրապար զգործն «պտուղ» ասէ. այլ զի ցուցցէ, թէ առ արտաքին երեսօքն է գործն, որպէս պտուղ զճղից կախեալ. նաեւ զինաման Իւր յայտնէ, զի իբրեւ զտունկ զմարդիկ դարմանէ: Միանգամայն եւ ակն կալեալ պտղոց փրկաւէտ գործոցն, որով ուրախանայ բանական երկրիս մերոյ Տնկազործն, զի մի՛ ամբաստանիցի փշաբեր գորով, որպէս Իսրայէլ եւ կամ որպէս ասացեալ այժմու կեղծաւորս¹:

Միթէ քաղիցե՞ն ի փշոց խաղող կամ ի տատասկէ թուզ (Է 16):

Առ այնոսիկ, որք ասէին, թէ բազումք յայնցանէ հնարիք ջանան ծածկել զվարս, ասէ, թէ չիք ի նոսա զգօնութիւն եւ ոչ քաղցրութիւն, զի թէպէտ հանդերձս օղենիս ունին, սակայն դիւրին է ճանաչել ի բարուցն, զի հազիւ ուրեք մի ի բազմացն թաքուցանել կարեն՝ ըստ այնմ. «Ո՛չ է կար աղտաղտին տեղոջ² ջուր քաղցր բղիսել» (հմմտ. Յակ. Գ 12): Բայց փշոց քաղղատել զվարս ամբարշտաց ի դէպ է, զի որքան ի մարմնի իցեն փշատեսակ մեղացն գործովք, խոցոտեն զանձինս եւ զբազումս՝ ըստ այնմ. «Անիծիք եւ դառնութեամբ լի է բերան նոցա» (հմմտ. Մաղմ. Թ 28). եւ յետ օրհասական մահուն յանէծս եւ ի հուր մատնին, զի երկիր փշաբեր յանէծս գրեալ է³, եւ թէ՛ «Երթայք յԻնէն, անիծեալք, ի հուրն» (Մատթ. ԻԵ 41): Իսկ բարեպաշտիցն կեանք քաղցրացուցիչ է մտաց անձին եւ բազմաց, եւ զկնի՝ զինի է զմայլեցուցիչ հոգւոց երկնաւորաց եւ երկրաւորաց՝ ըստ այնմ. «Ուրախութիւն է յերկինս վասն ապաշխարողաց» (հմմտ. Ղուկ. ԺԵ 7), թող թէ բնաւին արդարոց:

¹ Գ > Միանգամայն եւ ակն կալեալ.... այժմու կեղծաւորս:

² Գ տեղոյ

³ Եբր. 28

Այսպէս ամենայն ծառ բարի պտուղ բարի առնէ, եւ ծառ չար պտուղ չար առնէ (Է 17):

Ո՛չ կարէ ծառ բարի պտուղ չար առնել, եւ ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել (Է 18):

Ի բնական իրաց հաստատէ գասացեալն. թէպէտ բանիւ արդար¹ ձեւանայ, գործով ոչ կարէ, եւ թէ երեւի, այնչափ երեւի, ցորչափ պտուղ ոչ ունի, իսկ յերեւել պտղոյն յայտնի եւ ծառոյն բնութիւն որպիսի իցէ, քանզի ստուգապէս բարին՝ մշակեալն յերկնատր Հօրէն, գործս բարիս ցուցանէ, իսկ ի չար վերակացուէն արմատացեալն զամբարշտութեան իրս² յառաջ ածէ: Քանզի յոյժ հեռագունիցն ի միմեանց ներհակաց՝ չարին ասեմ եւ բարոյն, ի միում մասին յարմարիլ ոչ ունի բնութիւն, զի զի՞նչ միաբանութիւն է լուսոյ եւ խաւարի կամ արդարութեան եւ անիրաւութեան, այլ իւրաքանչիւր ոք սեռին իւրում հաղորդի: Բայց «ոչ կարելն» ո՛չ է վճիռ անհնար զոլ զփոփոխելն ըստ նմանութեան տնկոց բնութեան, քանզի սա բանական, իսկ նա անբան է, թողում ասել զայն, թէ եւ զանբան բնութիւն տնկոց կարեն մարդիկ ի հաւանութիւն ածել, որպէս³ զթթութիւն նռան քաղցրացուցանեն եւ կամ զդառնութիւն նշի անուշացուցանեն ի ձեռն արուեստին, զի զբեւեկնի ժպերկես, փայտ վարսեալ ոռամբ յարմատս ասացեալ տնկոցդ, փոփոխեն զբնութիւն: Քանի՛ առաւել մարդ անձնիշխան կամօք փոփոխումն առնու՝ հաւանեալ⁴ Գրոց խրատու. «Թողէ՛ք զամբարշտութիւն, զի ապրեսցիք» (հմմտ. Առակ. Թ 6), զի որպէս ի բարոյն ի չարն, այսպէս եւ ի չարէն ի բարին դիւրին են ընթացք, քանզի ո՛չ ասաց Քրիստոս, թէ ոչ կարէ փոխել, այլ թէ որքան ի չարութեանն է, ոչ կարէ գործս բարիս առնել, որպէս որ ի բարութեանն է, ոչ կարէ չարս գործել, եւ ապացոյց այսմ բազումք են, որ փոխեցան: Նաեւ «ոչ կարելն» բազմայեղանակի է ըստ զօրութեան եւ ըստ ամանակի⁵, իսկ աստ ոչ կամելն է, իբր այն. «Ոչ կարաց անդ զօրութիւնս առնել» (հմմտ. Մարկ. 2 5), որ է ոչ կամեցաւ վասն անհաւատութեան նոցա:

¹ Ձ > արդար

² Ձ երկ

³ Ձ որպէս ոք

⁴ Տ հաւանել

⁵ Ձ ժամանակի

Ամենայն ծառ, որ ոչ առնէ պտուղ բարի, հատանի եւ ի հուր արկանի (Է 19):

Ապա ի պտղոյնց անց ծանիջիք զնոսա (Է 20):

Չտեսչութիւն նախախնամութեանն Աստուծոյ այսու զեկուցանէ, թէ այցելու է միշտ արարածոց Իւրոց, եւ որպէս զարժանիսն պատուէ, այսպէս եւ զանարժանսն դատէ: Նա եւ զաննախանձ լինելն Արարչին նշանակէ, որ թէպէտ գիտէ զչարութեանն իրս ի ծննդենէ մինչեւ յեւս մահուն գործել յամբարշտաց, սակայն քաղցրութեանն կամօք ներէ՝ յառաջ գալ եւ ծնանիլ եւ զարգանալ հասակաւ եւ վայելել ի զգալի արարածոցս հրճուանս, որպէս զի կամ դարձցին եւ պիտանիք լինիցին՝ ըստ այնմ. «Ձի՞նչ առնելոց էր այգուոյ Իմում եւ Ես ոչ արարի» (Ես. Ե 4), եւ կամ անդարձ մնացեալ ի նոյն՝ անպատասխանիք դատեսցին: Վասն որոյ յետ բազում ժամանակաց ներելոյ եւ նորա բնաւին ի բարիս ոչ փութացելոյ՝ հատանի, ոչ յԻւրմէն, որ աղբիւրն¹ է բարեաց, այլ կամ յԻւրմէ գործոցն, կամ ի սպասատր զօրացն եւ յաթոռակից իրաւանց Նորա, որպէս եւ հատանէր զծառն զուարթունն սուրբ ի տեսութիւն արքային Նարոքոքոքոնոտրայ²: Նախ ի կենաց մարմնականաց եւ ապա յարքայութեանն փառաց, որ ծանրագոյն է քան զգեհեանն, եւ յետ այնմ՝ ի հուրն մշտնջենաւոր՝ ըստ Յովհաննու թէ՛ «Ահաւասիկ տապար առ արմին ծառոյ կայ. ամենայն ծառ, որ ոչ առնէ զպտուղ բարի, հատանի եւ ի հուր արկանի» (Մատթ. 9: 10): Եւ ապացոյց քեզ հրէիցն ժողով, որք ոչ զգաստացան սպառնալեօքն, հատան ի փառաց թագաւորութեան եւ քահանայութեան եւ անկան ի հուր փորձութեան զերութեան եւ ծառայութեան, եւ ժառանգելոց եւս են զհուրն զեհենին: «Ի պտղոյ նոցա,- ասէ,- ծանիջիք զնոսա»: Յորժամ կնքէ զբանն օրինակաւ, յետ այսորիկ վստահացուցանէ, թէ դիւրին է այսուհետեւ ի գործոցն զնոսա ճանաչել, եթէ ոչ վարկպարագի, այլ յոյժ քննութեամբ միտ դնէք:

Ո՛չ ամենայն, որ ասէ ցԻս՝ Տէ՛ր, Տէ՛ր, մտցէ յարքայութիւն երկնից³, այլ որ առնէ զկամս Հօր իմոյ, որ յերկինսն է (Է 21):

Տակաւին ի նոյն խաղայ⁴ վարդապետութեամբս, զի մի՛ ի կեղծաւորեալ դիմացն խաբեսցին պարզամիտքն: Բայց ասելի է. ո՛վ Տէ՛ր, ո՞չ ասպաքէն ասաց մարգարէն թէ՛ «Ամենայն որ կարդասցէ

¹ Զ աղբերն

² Դան. 7-12

³ Զ յարքայութիւնն Աստուծոյ] յարքայութիւն երկնից

⁴ Տ խաղալ, Զ խաղալ]

զանուն Տեառն՝ կեցցէ» (Յովել Բ 32): Չա՛յս ասէ, թէ կարդայն ի հաւատոցն է, եւ «հաւատն՝ ի լրոյն, եւ լուրն՝ ի բանէն Տեառն» (հմմտ. Հոմ. Ժ 17), զի առնէ զկամս Հօր եւ պահէ զպատուիրանս Նորա՝ ըստ այնմ. «Եթէ սիրէք զԻս, զպատուիրանս Իմ պահեսջիք» (հմմտ. Յովհ. ԺԳ 23), «որպէս Ես զպատուիրանս Նորա առնեմ եւ կամ ի սէր Նորա» (հմմտ. Յովհ. Ե 10): Եւ ա՛յլ ազգ. զի կարդայն զանուն ո՛չ սոսկ¹ բերանով, այլ գործով ի բնութեան ստեղծուածէն ընթեռնուցու իբր ի տախտակ, իսկ անունն Տեառն սուրբ է, իբր այն թէ՛ «Սուրբ է անուն Նորա» (հմմտ. Սաղմ. ԾԺ 9), որպէս զի զնմանութիւն Տեառն յինքն տեսանէ: Այլ զի՞նչ է այն թէ՛ «ասէ ցԻս՝ Տէ՛ր, Տէ՛ր». կամ կրկին անգամ ասելովն ի թախանձանս ածէ զԻս, կամ ստոյգ խոստովանի զԻս Տէր զոյ եւ դատաւոր, կամ թէ՛ «Տէր, Տէր» ասելովն զմարգարէիցն ձայնէ Նմա անուն թէ՛ «Տէ՛ր, Տէ՛ր մեր» (Սաղմ. Ը 2), եւ թէ՛ «Այսպէս ասէ Առնայի Տէր» (Եզեկ. Գ 27, Ե 5, 7 եւն) (որ լսի «Տէր, Տէր»)՝ իբրեւ զոյժ ծանուցեալ ի Նմանէ, բայց ոչ մտցէ, ասէ, յարքայութիւնն Աստուծոյ: Է՞ր վասն. զի նա ոչ է բանից պսակ, այլ գործոց յաղթանակ. արդ եթէ խոստովանողքն զՆա առանց գործոցն չմտանեն, զի՞նչ ասես զհայիոյնացն:

«Այլ որ առնէ զկամս Հօր [Իմոյ, որ յերկինսն է]»: Կամք Հօր՝ են փրկութիւն մարդկան՝ ըստ այնմ. «Ո՛չ կամիմ զմահ մեղաւորին, այլ զդառնայն» (հմմտ. Եզեկ. ԺԸ 32), որպէս զի ի ձեռն հաւատոցն որ յՈրդի, ազատեալք ի մեղաց մկրտութեամբն եւ մարմնոյ՞ եւ արեան Նորին հաղորդութեամբն մաքրեալք՝ լիցին ժառանգք արքայութեանն՝ ըստ այնմ. «Եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ, ոչ մտանէ յարքայութիւնն Աստուծոյ» (Յովհ. Գ 5), եւ՝ «Որ ոչ ուտէ՞ զմարմինն եւ ըմպէ զարիւն Իմ, ոչ ունի կեանս յաիտենականս յանձին իրում» (հմմտ. Յովհ. Զ 54-55), քանզի ա՛յս են կամք Հօր Իմոյ: Բայց տես, զի ո՛չ ասէ «զկամս Իմ», այլ «զկամս Հօր Իմոյ», քանզի այն իսկ էր պատշաճ եւ ընտրեալ յայն ժամու իրաց, նաեւ այն, զի ընդելացոյց զնոսա կոչմամբն Հօր, այժմ Ինքեան անուանէ Հայր՝ նշանակելով, թէ եւ Ինքն երկնային է եւ զի չիք այլ կամք Որդոյ, քան զկամս Հօր:

¹ Զ սոսկ ի
² Զ ի մարմնոյ
³ Զ ուտիցէ

Բագումք ասիցեն ցիս յաւորն յայնմիկ. «Տէ՛ր, Տէ՛ր, ո՞չ յանուն Քո մարգարէացաք, եւ յանուն Քո դէս հանաք, եւ յանուն Քո զօրութիւնս բագումս արարաք» (Է 22):

Նախ՝ մեղմով զԻնքն դատաւոր ցուցանէ, զի մի՛ կարծիցի նուաստ զոյ քան զՀայր վասն ասիցն թէ՛ «Որ առնէ զկամս Հօր Իմոյ». աստ յայտնեաց թէ՛ «ցԻ՛ս ասեն», եւ թէ՛ «ի բա՛ց գնացէք», որ ստոյգ դատաւորի է անկ, քանզի մի է իսկապէս աստուածութեամբն ընդ Հօր: Եւ երկրորդ՝ ուսուցանէ, թէ հարց եւ փորձ լինելոց է ամենեցուն ըստ բանից եւ գործոց եւ խորհրդոց մարդկան: Բայց ո՞չք են այսոքիկ՝ քննելի է. ինձ թուի՝ այսոքիկ են, որք հաւատս ցուցին առանց գործոց, որոց զգուշացոյց նախ Նա, եւ Յակոբոս բամբասէ թէ՛ «Զի՞նչ օգուտ է, եթէ որ հաւատս ունիցի եւ գործս ոչ ունիցի, զի հաւատք առանց գործոց դատարկ է» (հմմտ. Յակ. Բ 14, 17), որպէս եւ ընդդէմ այսմ՝ գործք առանց հաւատոց, որպէս յորժամ ի պատճառս փառաց լիցի եւ կամ բնութեամբ վարիցի, նոյնպէս եւ աստ, զորոց վճիռ դնէ թէ՛ ո՛չ միայն հաւատովք, այլ թէ եւ այնքան զօրացան ի հաւատս, մինչ զի նշանս մեծամեծս արարին եւ գործս¹ բարոք ոչ ունէին, ոչինչ օգտեցան²: Չայս գիտացեալ Պօղոսի³՝ ասէր. «Թէ ունիմ հաւատս զլերինս փոփոխելոյ եւ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց եւ մատնիցեմ զմարմինս իմ յայրումն հրոյ, եւ սէր ոչ ունիցիս⁴՝ ոչինչ եմ» (հմմտ. Ա Կոր. ԺԳ 2-3), եւ Տէրն թէ՛ «Ընդ այն մի՛ խնդայք, զի եւ դեւք հնազանդին ձեզ» (հմմտ. Դով. Ժ 20), որպէս զի ցուցէ, թէ առաքիւնութիւն ամենայնի յաղթել կարէ: Եւ զի ո՛չ ընդունայն պարծեցան ի դատաստանին ժամանակ, յայտնի է ահա, զի ասեն. «Ո՞չ յանուն Քո մարգարէացաք եւ յանուն Քո դէս հանաք»: Այս կարի դատապարտէ զնոսա եւ ո՛չ եթէ փրկէ, քանզի յինքեանց գործոց ո՛չ ունին ծանօթանայ, ի Նորա անուանէ՛ն տան զնշանսն: Դարձեալ եւ այն, զի թէ ո՛չ էին ծանուցեալ զՆա, զո՛ր տեղի ներելոյ, իսկ այժմ այնքան ծանօթացան, մինչ զի շնորհ ընկալան, եւ առ Շնորհատուն ասպերախտ գտան: Նաեւ ա՛յլ ազգ. զի թէ անուամբն Քրիստոսի⁵ յայնքան սքանչելիս բարձրացան, զի՞նչ ասիցես, թէ եւ յերթիւն գործոցն հետեւեալք

¹ ՏԶ գործք

² Զ օգտին

³ Զ Պօղոս

⁴ Զ ունիմ

⁵ Զ Յիսուսի

էին. ինձ թուի, թէ մեծամեծս քան զՆա գործեցեալ էին, որպէս Ինքն ասաց¹ :

Բայց թէ ասիցէ որ՝ ասպա ընդէ՞ր ետ շնորհս. նախ՝ զառաւելութիւն շնորհացն յայտ առնէ, զի ի գալստեանն Տեառն բազումք յանարժանիցն ընկալան շնորհս, որպէս զի յաճախութեամբ շնորհացն՝ յայտնի լիցի մուտ Նորա յաշխարհ, գոր օրինակ ի ծագմանէ արեգականն ոչ միայն կենդանիք, այլեւ անշունչք պայծառանան, եւ ի մտից ինքնակալաց եւ յոյժ աղքատք փարթամանան: Եւ երկրորդ՝ շնորհն այնորիկ է, որ գպարգեսն շնորհէ, եւ ոչ թէ անձանց նոցա, որով պարտ էր ընդոստնուլ եւ զգաստանալ եւ զշնորհաց Տուողին պահել զհրաման. իսկ նոքա զընդդէմն արարին, յորմէ դատեցան: Եւ երրորդ՝ զի ի ժամանակին, յորում զշնորհսն ընկալան եւ զնշանսն առնէին, ոչ անօրէն էին, այլ յետոյ՛ մոլորեալ, որպէս Յուդա եւ այլք բազումք, որք առեալ զքանքար շնորհացն՝ ծրարեցին ի վարշամակի հեշտասիրութեան, յորոց հրամայեաց առնուլ եւ զբաժին նոցա՝ ընդ անհաւատս դնել³ :

Եւ յայնժամ ասացից ցնոսա եթէ՝ «Ո՛չ երբէք զիտէի զձեզ (Է 23):

Յայտնէ գպատճառ դատապարտութեանն, թէ ոչ փառք եւ ոչ ուժգնութիւն մարմնոյ եւ ոչ բազմութիւն ընչից կարեն համեմատ գոլ առաքիւնութեանն ստացուածոց, որով ճանաչին յԱստուծոյ, նաեւ ոչ նշանք, քանզի յայս խորհուրդ ծանօթութեան դիմաց առաքելոցն՝ ոչ զմեռելոց յարութիւն եւ ոչ զդիւացն հալածումն եղ, այլ զսիրոյն առաւելութիւն: Է՞ր վասն. քանզի Աստուած Ինքն գործ է բողոքովին, զի կամքն գործ է, եւ բանն՝ գործ, վասն այսորիկ նմանեալն զնմանն ճանաչէ, որպէս գրէ Պօղոս. «Այնքան ծանեաք, որքան ծանուցաք ի Նմանէ» (հմմտ. Գաղ. 7-9), եւ թէ՛ «Ո՛չ օգնեն ինչք յաւոր բարկութեան, այլ արդարութիւն փրկէ ի մահուանէ» (Առակ. ԺԱ 4): Եւ դարձեալ՝ զի մի՛ կարծեսցեն, թէ ի խաբս ինչ ընկալան զշնորհս, ասէ, թէ նախ քան զծնանելն ձեր ոչ երբէք զիտէի զձեզ Ինձ կամարար, բայց ետու զշնորհս, զի առանց պատճառի դատիցիք: Նաեւ այլ ազգ. զնշանս հրաշիցն ի ձէնջ, ասէ, ոչ յԻմ փառս զիտեն եղեալ, այլ ձերոյ ախտիցն լրումն եւ հաճութեան մարդկան կատարումն, յորոց եւ զվարձս իսկ ընկալայք:

¹ Յովհ. ԺԴ 12

² Տ նորա

³ Մատթ. ԻԵ 14-30, Ղուկ. ԺԹ 12-28

Ի բա՛ց կացեք յԻնէն ամենեքեան, ոյք գործէիք զանօրէնութիւն»:

Չյանդգնութիւն սոցա Դուկաս ընդարձակս ճառէ, քանզի անգամ մի ի բաց վարեալք յաղագս անօրէնութեան գործոցն՝ նորա սկսան ծանօթութիւն տալ թէ՛ «Ի հրապարակս մեր¹ ուսուցեր, եւ կերաք առաջի Քո» (հմմտ. Դուկ. ԺԳ 26), եւ շնորհս ի Քէն ընկալաք. զի կարծէին, թէ որպէս յայս կենցաղի լրբութեամբ քաղաքավարեցան, նոյնպէս եւ անդ յառաջանալ կարեն: Որոց կրկնէ սաստիւ. «Ի բա՛ց գնացէք»՝ զմարգարէականն ի կիր առեալ զբանն², որ վասն ութերեկի աներեկ աւուրն՝ ի վաղնջուց ժամանակաց սպառնացաւ նոցա, եւ նոքա ոչ օգտեցան, որպէս թէ յասել՝ դո՛ւք իսկ անօրէն գործովք որոշեցայք յինէն³, արդ զոր ինչ անձամբ ընտրեցէք, զնոյն արդեամբք ժառանգեցէք: Բայց ո՞ր գնացին. յայտ է, թէ ի կորուստն անգիտ՝ ըստ այնմ. «Ոյք հեռի արարին զանձինս իրեանց ի Քէն, կորիցեն, սատակեցին⁴ ամենեքեան, ոյք ապստամբ եղեն⁵» (հմմտ. Սաղմ. ՀԲ 27):

Ամենայն, որ լսէ զբանս Իմ զայսուսիկ եւ առնէ զսոսա⁶, մնանեցէ առն իմաստնոյ, որ շինեաց զտուն իւր ի վերայ վիմի (Է 24):

Իջին անձրեք, եւ⁷ խաղացին զետք, շնչեցին հողմք եւ բախեցին զտունն, եւ ո՛չ կործանեցաւ, քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր (Է 25):

Յոյժ յարմար զկնիք բանիցս ի զլուխ վարդապետութեանս եղ՝ յաղագս երկուց⁸ պատճառի: Նախ⁹՝ զի ցուցցէ, թէ ո՛չ լսելիք օրինացն են արդարացեալք, այլ առնելիքն: Եւ երկրորդ՝ թէ ո՛չ միայն հաւատքն ապրեցուցանել կարեն, որպէս ասաց նախ, այլ գործքն, յորոյ հաստատութիւն կազմեաց զբանս: Բայց թէպէտ օրինակ դնէ, սակայն նովիմք զճշմարտութիւնն յայտնէ. «իմաստուն» անուանէ զնոսա, որք յստակ հայեցուածովք զառաջիկայն անվրէպ տեսանեն, որպիսիքն էին նահապետքն եւ մարգարէքն, առաքեալքն եւ հետեւօրք նոցին: Իսկ «տուն» զառաքինութեան յարկն

¹ Զ > մեր

² Եւ. ԾԲ 11

³ Տ ի յինէն

⁴ Զ եւ սատակեցին

⁵ Տ ապստամբ

⁶ Զ զնոսա

⁷ Զ > եւ

⁸ Տ բաց

⁹ Զ մի

կոչէ՝ ըստ այնմ թէ՝ «Գերանք տանց մերոց նոճք» (հմմտ. Երզ Ա 16), եւ «վէմ»՝ զհաւատոյն հաստատութիւն եւ զյուսոյն աներկբայութիւն եւ զԻւրոյ վարդապետութեանն ամբողջութիւն: Արդ՝ եթէ հաստատուն հաւատով զբարոք գործոց բուռն հարկանէ եւ ի վերայ հիման հաւատոյն զոսկի եւ զարծաթ եւ զականս պատուականս պատկանէ, նման է ճշմարիտ Իմաստնոյն, որ յԱստուծոյ Հօրէ եղել մեզ իմաստութիւն¹ եւ կոչեցաւ վասն մեր Որդի մարդոյ, որ նախ շինեաց ուղործութեամբ զաշխարհ ի վերայ վիմի հաստատնոյ զօրութեամբ բանի Իւրոյ՝ ըստ այնմ. «Ո՞արկ զվէմ անկեան ի դմա» (Յոր ԼԸ 6). եւ դարձեալ՝ զԵկեղեցի սուրբ՝ ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից՝ անյաղթելի գոյով դրանց դժոխաց:

«Իջին,- ասէ,- անձրեւ, խաղացին գետք»²: Այսու գաղափարաւ զփորձութիւն չարին գուշակէ՝ ըստ այնմ. «Անձրեւ հեռացաւ» (հմմտ. Երզ Բ 11), եւ թէ՝ «Փրկեա՛ զիս ի ջուրց բազմաց» (Սաղմ. ԾԽԳ 7), որով ցուցանէ, թէ ոչ միայն յանարժանսն մատչի փորձութեամբ, այլեւ յարժանատրսն մաքառի, որպէս առ Յոր, եւ կամ առ նոյն ինքն Բանն, քանզի թոյլ տայ Աստուած պատերազմիլ ընդ իմաստուն ճարտարապետ շինողացն: Քանզի ա՛յս է «իջին»՝ վասն բազում իրաց. մի՛ զի առաքինութիւն նոցա հրատարակի, եւ երկրորդ՝ բարոք պատերազմին նահատակութեամբ՝ պսակքն բազմանան, եւ երրորդ՝ գործով տկարութիւն չարին խայտառակի եւ տգիտութիւն նորա յանդիմանի: Իսկ «անձրեւ» եւ «գետ» եւ «հողմ»՝ զազգի ազգի տարափս մարտին, զոր լեզունեան բազմութիւնքն մերկ ընդ մերկ հոգեկան մարտիս եւ կամ մարմնական պատերազմաւ ի վերայ տեղալով՝ վտանգեն զարդարն, որպէս զի զտուն առաքինութեան խարխալել կարասցեն, քանզի յոյժ ցաւ է նոցա. բայց ոչ կարեն կործանել, թէպէտ «բախեցին», այսինքն՝ զայթազդեցուցանել: Է՞ր վասն. քանզի ասէ թէ՝ «Ի վերայ վիմի հաստատեալ էր», այսինքն՝ զի յոյս նոցա յերկինս է՝ ըստ առաքելոյ թէ՝ «Մեր առաքինութիւն յերկինս է» (Փիլպ. Գ 20), վասն այսորիկ բազում վշտաց համբերօղ եղեալ եւ իբր զծաղիկ զնեղութիւնս յանձինս կրեալ անդ՝ եղ եւ մնան որպէս զվէմ յեզր ծովու հաստատեալ ի յալեաց ժամու, մանաւանդ թէ՝ զնոսին իսկ խոցոտեն. զի որ զանդամանդ հարկանէ, ինքն հարեալ լիցի, եւ որ զարդարն վտանգէ, ինքն

¹ Ա Կոր. Ա 30

² Տ խաղացին՝

չարչարի՝ ըստ այնմ թէ՛ «Որ նզովէ գրեզ՝ նզովեալ է» (հմմտ. Ծննդ. ԻԷ 29):

Եւ ամենայն, որ լսէ զքանս Իմ զայսոսիկ եւ ոչ առնէ զսոսս, նմանեսցէ առն յիմարի, որ շինեաց զտուն իւր ի վերայ աւագոյ (Է 26):

Իջին անձրեւք, յարեան գեւոք, շնչեցին հողմք, հարին զտունն, եւ անկաւ, եւ էր կործանումն նորա մեծ յոյժ» (Է 27):

Տարակուսիլ¹ արժան է, եթէ ընդէ՞ր ի սկիզբն վարդապետութեանս ասաց թէ՛ «Որ ասիցէ ցեղբայր իւր «յիմար», պարտաւոր լիցի դատաստանի» (հմմտ. Մատթ. Ե 22), իսկ աստ զշինող աւագահիմն տանն «յիմար» կոչէ: Գիտել պարտ է, զի անդ առ հաւասարս էր բանն եւ կամ զվայրապար ասելն արգել՝ ոչ ի հասարակաց գրուցատրութիւնս զմիմեանս ձաղել, իսկ աստ՝ առ անհաւասարս, զի եթէ որ ի կարգի վարդապետութեան գոլով՝ եւ զարժանաւոր զպատուիրանն ծանօթիցն յայտնէ, իսկ նոքա ծանրալուր եղեալ՝ ոչ առնուն ի միտ, յիրաւի իբրեւ սաստիւ իմն վարելով «յիմար» կոչէ՝ ըստ այնմ. «Տակաւին եւ որ՞իք անմիտք էք» (հմմտ. Մարկ. Է 18), եւ Պօղոս՝ «Ո՛ր անմիտ գաղատացիք» (Գաղ. Գ 1): Այսպէս եւ Տէրն, յետ բազմօրինակ ուսումն վարդապետութեանն ջամբելոյ եւ նոցա ի խօլութեանն մնալոյ, յիմարի բաղդատեաց: Եւ ա՛յլ ազգ. զի յորժամ լինի որք, կոչել պարտ է, որպէս կուրին «կոյր» ասել, քանզի ոչ ես կոչեմ, այլ ինքն է եղեալ, իսկ յորժամ ոչ է, ոչ է պարտ ձաղանօք կոչել: Եւ բարոք ասաց. քանզի ո՞րք քան զայն անմտագոյն կայցէ, որ ի վերայ աւագոյ զտունն շինիցէ, զի զվաստակսն ծախիցէ եւ ի հանգիստն ոչ վայելիցէ², նաեւ պատիժս ընդ այնր կրեսցէ:

Բայց թէ ո՞րք են այսոքիկ. նախ՝ ինձ թուի, թէ այնոքիկ են, որ սակաւահաւատք իցեն եւ շինեն կրկին շինուածս. ոմանք՝ զգողութիւն եւ զպոռնկութիւն եւ զյափշտակութիւն եւ զգաստումն բարկութեան եւ զայլ հանգունատիպ չարութիւնս՝ փայտ, խոտ եւ եղէզն շինեալ ի վերայ կիսակատար հաւատոյն³, որք բազում աշխատութիւն եւ տառապանս հասուցանեն ի շինելն եւ ոչ միայն ոչ օգտին, այլեւ վնասին: Չի ի շնչել հողմոց արկածից պատժոց՝ անկանին ի ցաւս եւ ի հիւանդութիւնս եւ յայլ փորձութիւնս՝ ըստ ա-

¹ Զ տարակուսել

² Զ վայելեսցէ

³ Ա Կոր. Գ 12

նաքելոյ թէ՛ «Վասն այնորիկ են ի ձեզ բազում հիւանդք եւ ախտաժէտք» (Ա Կոր. ԺԱ 30), եւ ի բազմանալ ցաւոցն, զոր «զեն» ասաց, ծանրացեալ մեղօք հոչակելի մահուամբ կործանին, որպէս սողմնացիքն¹ եւ Նոյեան դարուն մարդիկն² եւ նոքա, որ զաւագահիմն ամբարտակն կանգնեցին³, եւ այլք բազումք՝ ըստ այնմ թէ՛ «Կորիցէ յիշատակ նոցա աղաղակաւ» (հմմտ. Սաղմ. Թ 7), եւ թէ՛ «Որ սերմանէ ի մարմին, անտի⁴ հնձէ զապականութիւն» (Գաղ. 2 8):

Եւ ոմանք դարձեալ՝ շինեն շինուածս առաքիւնութեան, այլ ի վերայ աւագոյ, զի յոյս նոցա ոչ է յերկինս ամրացեալ, այլ զերկրաւորս եւեթ խորհին եւ վասն փառաց եւ գովութեան մարդկան յայն յօժարին, եւ կամ ակն առեալ երեսաց ոմանց՝ չարիս կատարեն, որք ի փորձութեանց սաղբելոյ չարին, որ իջանեն զան իբրեւ զագռաւ ի վերայ զիշուց, նախ ի յուսահատութիւն ձգեն եւ ապա յայն զօրացուցեալ՝ ամենեւին կործանեն, որպէս զԱդամ՝ ըստ այնմ. «Լեառն որ փլանելոց է՝ փլցի, եւ վէմ հնասցի ի տեղոջէ իւրմէ, զբարինս ողորկեսցեն ջուրք, ողորկեսցեն ջուրք զդաշտս քանձութեան երկրի» (Յոր ԺԴ 18-19), եւ կամ որպէս զՅուդասս եւ զայլս բազումս՝ յանհաւատութիւն, քանզի ոչ ունէին հաւատս կատարեալ հոգով՝ ծուծկալեալ փորձութեանց, վասն այնորիկ անկան քան զամենայն անկումն մեծագոյն, որ չեն բնաւին կանգնելոց, զի ուրացան զՔրիստոս եւ զառաժեալ չարեօք մնացին ի նոյնութիւն:

Եւ դարձեալ՝ երկրորդ անգամ զնոսա անուանէ «յիմար», որք ամենեւին անհաւատք են եւ ոչ հաւատացին զալստեան Որդոյն Աստուծոյ, զի որպէս լոյս զաչս լուսաւորէ, այսպէս եւ հաւատք զմիտս պայծառացուցանէ, զորս ոչ ընկալան որդիքն կրճատելոց եւ այլք բազումք, որք մնացին ի խաւար յիմարութեանն՝ ըստ այնմ. «Կուրացոյց Աստուած զաչս անհաւատիցն եւ ապշեցոյց⁵ զսիրտս նոցա, զի մի՛ տեսցեն աչօք եւ դարձցին եւ բժշկեցից զնոսա» (Յովհ. ԺԲ 40, հմմտ. Ես. 2 10): Չորս վասն համանման գոլոյն՝ միոյ յիմարի նմանեցուցանէ, որք թեպէտ շինեն գործս բարիս, սէր առ ընկերս եւ ողորմութիւն առ աղքատս եւ իրաւունք առնեն ի դատաստանի գրկելոց, սակայն ի բազմանալ փորձութեանց ծովու աշ-

¹ Ծննդ. ԺԸ

² Ծննդ. Է

³ Ծննդ. ԺԱ 1-9

⁴ Զ անդի

⁵ ՏԶ ափշեցոյց

խարհիս եւ յառնել զետօրէն արկածից յաւորս նեռին, յորժամ դարձցին ամպք զկնի անձրեաց, եւ ի բախելոյ հողմոյ հրամանին Աստուծոյ զգգալի տուն աշխարհիս՝ խաւարեալ արեգական եւ լուսնի, եւ թօթափիլ աստեղաց եւ շարժիլ զօրութեանց երկնից¹, ոչինչ օգտիցին յընդունայն գործոցն, յորժամ հաւատս ոչ ունիցին, որպէս նախ ասացաք: Է՞ր վասն. զի գործք օրինակ իմն նման է մեռեալ մարմնոյ, որ հոգի ոչ ունիցի, եւ սա ի սեղան ոչ ելանիցէ, որպէս եւ յորժամ հաւատ միայն լինիցի, եւ սա մեռանիցի. քանզի մինն միշտ մեռեալ է, իսկ միսն յետոյ մեռանիցի, ուստի անընդունելիք իցեն երկոքին. վասն այսորիկ միշտ մեռեալն տարածանի իբրեւ մեղաստէր՝ զօրէն կապարի յատակս ծովու, պատրաստեալ նոցին ի Տեառնէ կործանումն ահագին՝ «մե՛ծ յոյժ»: «Մե՛ծ» վասն հանդերձեալ հատուցմանց, զի առաջի ամենեցուն դատեսցին, եւ «յոյժ»՝ զի ոչ հաւատացին յՈրդի, ի ներքոյ բարկութեան Նորա մնասցեն անվախճան², քանզի զայս նշանակէ «յոյժ»-ն՝ ըստ այնմ. «Կործանումն արանց անօրինաց չար է» (Առակ. Ա 18), որպէս թէ ասել՝ ծանր եւ անվախճան տանջին:

Եւ իբրեւ կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, զարմանալին ժողովորդքն ընդ վարդապետութիւն Նորա (Է 28),

Չի իբրեւ իշխանութեամբ ուսուցանէր եւ ոչ որպէս դպիրքն (Է 29):

Թէպէտ տաղտկալ պարտ էր ընդ ծանրագոյն բանս եւ ընդ բարձրութիւն հրամանացն, նա աւանիկ հրճուեալ ընդ զարմանս զային եւ ոչ բնաւ զլռելն կամէին, քանզի ճշմարտապէս «ձայն Տեառն ձայն է զօրութեան»՝ ըստ մարգարէին (հմմտ. Սաղմ. ԻԸ 4), որով զօրացեալ կատարեցան միտք նոցա յուսումն Նորա, որք եւ ոչ զհեռանալն ախորժէին, քանզի զայս յայտնէ թէ՛ «Իբրեւ կատարեաց Յիսուս զամենայն³ զբանս զայսոսիկ, զարմանալին ժողովորդքն [ընդ վարդապետութիւն Նորա]»: Նախ՝ վասն կատարեալ իմաստաստէր բանիցն: Եւ երկրորդ՝ վասն իշխանութեան խօսիցն, զի ոչ յայլ ոք հանէր զբանն, որպէս Մոսէս եւ այլ մարգարէքն եւ դպիրքն, այլ ստեպ զօրէնսն դնելոյ ասէր. «Ես ասեմ ձեզ» (Մատթ. Ե 22, 28, 32 եւն), եւ թէ՛ «Բազումք ի յՕրն դատաստանի ասենցիս» (հմմտ. Մատթ. Է 22), որոց խոռովել պարտ էր, սակայն հաւանեալ

¹ Մատթ. ԻԴ 29, Մարկ. ԺԳ 24-25, Յայտ. Զ 12-14, Ես. ԼԴ 4, Յովել Բ 10, Գ 15

² Յովի. Գ 36

³ > զամենայն

գարմանային վասն զճճարիտն քարքառելոյ: Եւ երրորդ՝ զի զոր ինչ ասեր՝ առնէր, եւ ոչ որպէս դպիրքն, զի ասէին եւ ոչ առնէին, որոց ծանրատաղտուկ թուէր բանն, իսկ Սորայս՝ գարմանալի:

Իսկ առ ի միտս՝ յորժամ կատարեաց Յիսուս յերկրի գնարդեղութեանն խորհուրդ՝ լնլով զամենայն բանս մարգարէիցն, եւ վերանայր յերկինս, գարմացեալ դասք վերին Սիոնի եւ ճճարիտ ժողովուրդքն երկնի թէ՛ «Այս ո՞վ է, որ դիմեալ գայ յԵդոմայ՝» (Ես. ԿԳ 1), զոր առ միմեանս ասէին. «Համբարձէք, իշխանք, զդրունս ձեր ի վեր» (Սաղմ. ԻԳ 7), իսկ Նորա իշխանութեամբ ուսուցեալ զխորհուրդ իրին. «Ես խօսիմ գարդարութիւն եւ պատմեմ զիրաւունս փրկութեան» (Ես. ԿԳ 1), որք մինչեւ ցայն վայր դպիրք երկնային իմաստիցն անտեղեակք էին:

¹ ՏԶ յԵդոմայ (այսպէս է և այլուր. Եդոմ] Եդոմ. Եդովմ ձևը հազվադեպ է գործածված):

ԳԼՈՒԽ Ը

Այլ իբրև էջ ի լեռնէ անտի, գնացին զկնի Նորա ժողովուրդք բազումք (Ը 1):

Յորժամ սկիզբն վարդապետութեանս արար, ի լեռնն ել յաղագս երից պատճառաց¹. մի՞ զի յապահով եղեալ ականջք լսողացն՝ դիւրաւ տպաւորեսցեն ի միտս զասացեալ վարդապետութիւնն. եւ երկրորդ՝ զի գիտասցեն, թէ Նա նոյն ինքն է, որ զՕրէնսն ի Սինէական լերիւնն ետ՝ գրեալ մատամբ Նորին ի տախտակս քարեղէնս², որ³ այժմ զՆոր Կտակս գրէ բանիւ ի սիրտս նոցա. եւ երրորդ՝ զի բարձրութեամբ լերիւնն զիմաստիցն բարձրութիւնն նշանակէ, որով զմիտս նոցա յերկիւնս ձգէ: Իսկ այժմ իջանելով՝ հանգիստ նոցա գործէ, քանզի ոչ կարեն միտք միշտ աստուածային բանիցն ընդունակ լինել՝ լծեալ ընդ մարմնոյ հողեղինի, վասն որոյ թոյլ տայ զուսեալսն որոճալ խոկմամբ ի շահեկանութիւն անձանց: Իսկ զի ասէ. «Գնացին զկնի⁴ Նորա ժողովուրդք բազումք»⁵, ո՛չ ի դպրացն եւ ի փարիսեցոցն, այլ նոքա, որք անսացին ճշմարիտ վարդապետութեանն եւ վառեցան ի սէր բանից Նորա մտացն հաւանութեամբ, զի կրկին եւս շահեսցին՝ կամ ի բանից եւ⁶ կամ ի հրաշից:

Իսկ առ ի միտս՝ «լեռնն» իմանամք զերկիւնս վասն բարձր եւ անվանելի գոլոյն, ուստի էջ Բանն Հօր ի յարգանդ Կուսին՝ առնլով մարմին՝ ըստ այնմ. «Ոչ որ ել յերկիւնս, եթէ ոչ որ էջն յերկնից Որդին Մարդոյ» (Յովհ. Գ 13). ո՛չ տեղական փոփոխումն, այլ ի բարձրութենէ ի նուաստութիւն՝ ըստ առաքելոյ. «Ոչինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ, այլ զանձն ունայնացոյց» (Փիլիպ. Բ 6-7). այս է «էջ»-ն, որոյ գնացին զկնի ժողովուրդք բազումք: Նախ՝ երկնային ժողովուրդքն ի ծննդեանն, որք «Փառք ի բարձունս» երգէին եւ իջեալ սպասաւորէին տնօրէնութեան Նորին⁷, եւ ասպա յետ յարութեանն որք ի դժոխոց եւ ի գերեզմանաց

¹ Գ պատճառի

² Ելք ԻԴ

³ Գ գոր

⁴ Գ հետ

⁵ Գ > բազումք

⁶ Գ > եւ

⁷ Ղուկ. Բ 13-14

յարեան, յորժամ էջ ի ստորին կողմն երկրի¹, եւ ե՛ս առաւել բազումք, որ զնացին եւ զնան այժմ զհետ Նորա՝ հաւատով եւ յուսով եւ սիրով խաչակից եղեալ Փրկչին, զորոց բազմութիւն ետես Յովհաննէս ի յայտնութեանն, որք կային առաջի Աստուծոյ եւ Գառնին, արկեալ արկանելիս սպիտակ[ս]՝ եւ եկեալ ի վշտաց մեծաց³:

Եւ ահա մատուցեալ բորոտ մի՝ երկիր պագաներ Նմա եւ ասէր. «Տէ՛ր, եթէ կամիս, կարօ՞ղ ես զիս սրբել» (Ը 2):

Մի՛տ դիր աստանօր իմաստութեանն Տեառն, թէ զիա՛րդ պէսպէս շահս յաճախէր մերձաւորացն, զի ի նշանացն ի բանսն զայր եւ դարձեալ ի բանիցն ի նշանսն շրջի, որպէս զի նշանօր զբանն հաւատարիմ առնէ եւ բանին զնշանսն հաստատեսցէ, միանգամայն եւ հաւանեցուցէ զիշխանութեամբ վարդապետութիւնն: Բայց դու տես՝ զառն ճարտարութիւն եւ զհաւատս, զի ո՛չ խափանեաց զվարդապետութիւնն, այլ մնաց դիպօղ ժամանակի՝ պատրաստելոյ զանձն փրկութեան պարգեւին: Նա՛՛ զի եւ իշխէ՛ր իսկ ոչ ի մէջ ամբոխին մտանել, այլ յորժամ էջ ի լեռնէն, մատուցեալ ջերմ հաւատով եւ սերտ սիրով երկիրպագանէր եւ զմտացն աներկեւանութիւնն մարմնոյն խոնարհութեամբ հաստատէր, այլեւ բանին զնոյն կնքէր: Չի ո՛չ ասաց. «Կաց յաղօթս, զի սրբեցայց», եւ ո՛չ թէ՛ «Տէ՛ր, սրբեա՛ զիս», այլ ի Նա՛՛ զիշխանութիւնն ապաստան արար, որպէս զի ասել թէ՛ կարողութեանդ տեղեակ եմ, բայց կամացդ՝ ոչ, զի ցուցցէ, թէ իշխանութիւն՝ կամաց է՞ գործ: Եւ զի հաճոյ թուեցաւ Տեառն, յայտ է, զի ո՛չ խոտեաց, այլ ըստ նորայն կարծեաց՝ զպատասխանն կազմեաց թէ՛ «Կամի՛մ, սրբեաց», քանզի ո՛չ այսպէս Պօղոս, այլ ասէր. «Չի՞՞ պշուցեալ հայիք ընդ մեզ» (հմմտ. Գործ. Գ 12): Այլ քննելի է, թէ վասն է՞ր ասաց. «Թէ՛ կամիս, կարօղ ես»: Նախ՝ ինձ թուի, թէ հրէայ էր այրն եւ ստուգեալ նորա ի քահանայից անտի զՅիսուսէ, թէ հակառակ է Օրինացն եւ թշնամի Գրոց, վասն այնորիկ կարծեաց, թէ ոչ կամի Նա զբժշկութիւն հրէից. եւ երկրորդ՝ զի գիտէր նա, թէ ո՛չ զամենայն մեռեալս կեցուցանէ եւ ո՛չ զամենայն ախտաժէտս բժշկէ, այլ զոր կամի՝ զայն

¹ Մատթ. Ի 52-53, Եփես. Դ 9

² Զ սոյնպէս

³ Յայտ. Է 14

բժշկէ. արդ՝ ես թէպէտ չեմ արժանի, այլ կամքդ միայն բաւական է ի սրբութիւն ինձ:

Չգեաց զձեռն Իւր եւ հասոյց ի նա Յիսուս եւ ասէ. «Կամիմ, սրբեաց»: Եւ վաղվաղակի սրբեցաւ ի նմանէ բորոտութիւնն (Ը 3):

Բորոտին այնպէս բուեցաւ թէ որպէս Եղիսէոս¹, այնպէս պահէ Նա զՕրէնսն, զի ոչ էլ արտաքս առ Նէեման². Վասն որոյ լուծանէ զայս կարծիս՝ մերձենալովն ի նա, զի յայտ արասցէ, թէ Օրէնադրի օրէնք ոչ ինչ³ մեղանչեն եւ թէ չէ՛ Նա հնազանդ Օրինացն, այլ տէ՛ր, որ ոչ միայն չվնասի ի պղծոյն, այլեւ սրբէ՛ եւս զպիղծսն: Դարձեալ՝ զի թէ ոչ էր ձգեալ զձեռն, կարծիք Նմին լինէր, թէ երկեաւ ի բորոտութենէն, եւ թէ մերձենայր՝ արտաքոյ Օրինացն լինէր, եւ այնու բժշկեալն մարմնով վիրատրէր հոգւով: Վասն այսորիկ ձգմամբ ձեռիւնն բժշկեաց զմարմինն՝ ծանուցանելով զաստուածութիւն Իւր, թէ հալածիչ է Նա պղծութեան, եւ ասելով բանիւ թէ՝ «կամիմ, սրբեաց», բժշկեաց եւ զհոգին, որով եցոյց առ Օրէնսն զընտանութիւն: Եւ դարձեալ՝ զի բորոտն առ Տէր մեր զերկոսին եցոյց՝ խնդիրք եւ խիթումն, զի «կարօղ ես» զխնդիրն ծանոյց, իսկ «թէ կամիս» զխիթալն յայտնեաց, վասն որոյ Տէրն երկոցունց փոխանակեաց. սաստ՝ խիթացելոյն, եւ ողորմութիւն՝ աղաչողին, «ձգեաց զձեռն» ողորմութիւն, եւ թէ «կամիմ, սրբեաց»՝ սաստութիւն: Եւ դարձեալ՝ ձգմամբ ձեռիւնն զկարողութիւն յայտնեաց, եւ «կամիմ, սրբեաց» զքաղցրութիւն կամացն նշանակեաց: Ուստի արագ ի հրամանէն արդիւնքն ցուցաւ, որպէս զի ցուցցի, թէ Նա՛ է, որ զանգարդ տեսակս աշխարհի զարդարեաց ձեռով անաշխատ բանիւ՝ ըստ այնմ. «Ասաց, եւ եղեն, հրամայեաց, եւ հաստատեցան» (Մատթ. ԼԲ 9):

Եւ ասէ ցնա Յիսուս. «Ձգո՛յջ լեր, մի՛ ումեք ասիցես» (Ը 4):

Ոմանք ասացին, թէ զի մի՛ զլսացին⁴ ի քահանայիցն քննութիւն բորոտին՝ ասաց ծածկել, բայց յոյժ ստեն, քանզի ասէ զկնի. «Երթ ցոյց զանձն քո քահանային»: Այլ ճշմարտապէս յաղագս երկուց պատճառաց արգել. մի՛ զի մի՛ խրոխտասցի բորոտն պարծանս յանձին բերել, թէ ըստ արժանատրութեան եզիտ զմարտու-

¹ Զ Եղիսիոս

² Դ Թագ. Ե 8-19

³ Զ ինչ ոչ] ոչ ինչ

⁴ Զ իմասցին

թիւն, եւ երկրորդ՝ անմեծարգի կամեցաւ զանձն պահել յաշխարհի՝ ըստ այնմ. «Ոչ խնդրեմ զփառս Իս, այլ զփառս Այնորիկ, որ առաքեացն զԻս» (Յովհ. Ը 50), եւ թէպէտ նա ոչ առնոյր յանձն թաքուցանել զիրսն, սակայն Նա յԻր կողմանէն զգուշութիւն արար յօրինակ եւ ի վարդապետութիւն մեզ:

Այլ երբ ցոյց զանձն քո քահանային եւ մատո զպատարագն, զոր հրամայեաց Մոսէս ի վկայութիւն նոցա»:

Թէպէտ անխտիր վարի Գիրք, զի երբեմն զբոլոր մարդն «անձն» կոչէ եւ երբեմն զբնաւն մարմին, բայց աստ ոչ առանց խորհրդոյ ասէ՝ «Երբ ցոյց զանձն քո». որպէս զի ցուցցէ, թէ վասն մտաց յանցանաց պալար վիրին վերերելէր ի մարմինն, վասն այնորիկ ասաց, թէ տեսանելով զմարմնոյ սրբութիւն՝ զհտասցես եւ զմտացոյ մաքրութիւն, միանգամայն եւ զգուշացուցանելով զբորոտն, զի մի՛ ի նմանապէս մեղանսն անկանիցի՝ ըստ այնմ. «Ահաւասիկ ողջացար, այլ մի՛ եւս մեղանչեր» (Յովհ. Ե 14): Բայց առաքելն առ քահանայն եռակի իմաստս աւանդէ: Նախ՝ զի նոցին ընտրութեամբ հաստատէր այնպիսեացն առողջութիւն ի ձեռն պատարագին մատուցման եւ արեանն սրսկման: Եւ երկրորդ՝ զՕրէնսն կատարէ, զի ոչ ամենայն ուրեք լուծանէր, այլ մերթ զայն առնէր եւ մերթ զայն, զի լուծանելովն զգուշութեամբ ճանապարհ յաւետարանն կազմէր եւ կատարելովն՝ զանամօթ հրէիցն լեզուս պապանձեցուցանէր: Եւ երրորդ՝ զի մի՛ ասիցեն քահանայքն, թէ որպէս զվարդապետութիւնն, այսպէս եւ զքահանայութիւնս յափշտակեաց եւ ինքնաձեռն առանց տաճարի կատարէ, վասն որոյ առաքէ առ նոսա թէ՛ դո՛ւք քննեցէք զսքանչելիս գործոց Իմոց, թէ չեմ կռուօղ ընդ Մոսէս եւ կամ ընդ քահանայսդ:

Իսկ զի՞նչ այն թէ՛ «հրամայեաց Մոսէս ի վկայութիւն»: Կամ «վկայութիւն» զՕրէնսն կոչեաց՝ ըստ այնմ. «Վկայութիւնք Տեառն ճշմարիտ են» (Իմմտ. Սաղմ. ԺԸ 8-10), զի անդ գրեցաւ Օրէնքն բորոտին զննել քահանային եւ պղծել եւ կամ սրբել պատարագաւ եւ քաւել¹, կամ թէ՛ Օրէնքն իսկ վկայ լինէին բորոտին սրբութեան կամ պղծութեան, զի մի՛ այլ ժողովորդն խղճիցի յետ Օրինացն ընդունելութեան: Կամ՝ առ ի վկայութիւն եւ ի² յանդիմանութիւն դատապարտութեան հրէիցն եւ յամբաստանութիւն կշտամբութեան, զի

¹ Ղևտ. ԺԴ

² Զ > ի

զայնքան սքանչելիսն տեսեալ՝ ոչ հաւատացին. արդ եղիցի վկայ, թէ յԻնէն ամենայն ինչ եղեալ կատարեցաւ, թէպէտ ոչ են նոքա ուղղելոց:

Իսկ առ ի միտս՝ բորոտ էր բնութիւնս, որ խայտաբղէտ եղև յետ յանցանացն, որոց բնութիւնն աղաչէր զԱրարիչն իւր՝ կամօք Նորին սրբիլ ի յանցանաց: Իսկ հասուցանել ձեռինն զՈրդոյ զմարմնատութիւնն նշանակէ, զի ձեռն Որդի է Հօր, որ խոնարհեալ եհաս յօգնականութիւն մեզ վշտացելոցս մարմնով Իւրով՝ կամօք գործելով զսրբութիւն մեր խաչին Իւրով: Եւ «զգոյշ լեր» ասելն՝ զի մի՛ յետ սրբութեան Աւագանին ապականեսցէ զկնիք շնորհին մեղօք կամ խրոխտանօք: Եւ ցուցանել զանձն, այսինքն՝ զմիտս, քահանային Քրիստոսի՝ մերկ եւ առանց ծածկութի՛ ըստ առաքելոյ թէ՛ «Բացաւ զիտով տեսանենք զփառս Տեառն՝ նորոգեալք իբրև [ի] Տեառն Հոգւոյ» (հմմտ. Բ Կոր. Գ 18), մատուցանելով զմարմինս մեր պատարագ Տեառն, որոյ Մոսիսին օրինակ էր եւ ստուերագրութիւն՝ առ ի վկայութիւն մտացն մարութեան:

Եւ մտեալ ի Կափառնաում՝ մատեաւ առ Նա հարիւրապետ մի, աղաչէր զՆա (Ը 5)

եւ ասէր. «Տէ՛ր, մանուկ իմ անկեալ կայ ի տան անդամալոյժ՝ չարաչար տանջեալ» (Ը 6):

Յամենայն տեղիս շրջէր, զի զյոյս արքայութեանն ամենայն ուրեք տարածեսցէ, բայց տես, զի յորժամ էջ ի լեռնէն, ընդ առաջ եղև բորոտն, եւ յորժամ ի Կափառնաում եմուտ, մատեաւ հարիւրապետն, եւ ոչ որ ի սոցանէ ի լեռնն ել, ոչ առ ծուլութեան, քանզի ջերմ էին ի հաւատս, այլ զի մի՛ խափան լիցին վարդապետութեան Նորա: Այլ Ղուկաս ասէ, թէ զծերս եւ բարեկամս առաքեաց, որք երթեալ պաշտօնս իմն առնէին թէ՛ «Միրէ զազգս մեր»³, եւ ոչ զիտէին, թէ զիարդ գովէին, քանզի պարտ էր ասել, թէ ինքն կամեցաւ զալ եւ աղաչել, բայց ոչ համարձակեցաւ, մանաւանդ թէ մեք իսկ արգելաք, զի տեսաք զշշուկ վշտի նորա. բայց զայս ոչ ասէին, զի առ նախանձու չկամէին յայտնել զհաւատ առնն, իսկ Մատթէոս ասէ, թէ ինքն չոգաւ: Արդ՝ կամ թէ զանազանք են հարիւրապետքս, կամ թէ նախ զծերսն առաքեաց եւ յորժամ ծանեաւ, թէ

¹ Զ ծածկութիւն

² Զ ստուեր, գրութիւն

³ Ղուկ. է 3-5

գայ ի տուն նորա, ինքն չոգաւ ընդ առաջ եւ աղերսիւ զբանն կազմեաց. «Տէր, մանուկ իմ անկեալ կայ [ի տան անդամալոյժ]»: Ու մանք ասեն, թէ զպատճառ ոչ տանելոյն զմանուկն յայտնէ, թէ զիա՞րդ էր հնար զտաժանեալն¹ մերձ ի մահ՝ քառնալ բերել. բայց ես մեծ հաւատոյ նշանակ ասեմ զայս՝ առաւել քան զայնոցիկ, որք ի ձեռուանէն կախեցին, զի ստոյգ գիտէր, թէ հրամանն միայն բաւական է կանգնել զվշտացեալն, եւ աւելորդ էր ածել առ Նա: Դարձեալ՝ զչարիս պատմելով մանկանն՝ զգութ Նորա ի տունն խոնարհեցուցանել մաղթէ. յայտ ի պատասխանէս է:

Ասէ ցնա Յիսուս. «Ես եկից եւ բժշկեցից ցնա» (Ը 7):

Յիրաւի ասաց Սողոմոն թէ՝ «Տայ շնորիս խոնարհաց» (Առակ. Գ 34), քանզի գոր ոչ այլ ուրեք արար, աստ երեւի արարեալ, քանզի յայլում տեղոջ հաւատս միայն պահանջէր, իսկ աստ ոչ միայն բժշկել խոստանայ, այլեւ ի տուն նորա երթալ: Ինձ թուի, թէ զառաքինութիւն եւ զհաւատ առնն հրատարակել կամի, միանգամայն ուսուցանէ եւ զայն, թէ ոչ այլ ինչ զԱստուած ի մարդ խոնարհեցուցանել կարէ, քան թէ զորձք մաքուրք հանդերձ անկեղծաւոր հաւատով: Իսկ առ ի միտս՝ «Կափառնաւում»-ն թարգմանի ազարակ պանդխտութեան կամ սպանութեան, որ է աշխարհս՝ ըստ Դաւթի թէ՝ «Պանդխտութիւն իմ ընդերկարեաց» (Խմբ. Սաղմ. ԾԺԹ 5), եւ թէ՝ «Պանդխտ եւ նժդեհ²» (Խմբ. Սաղմ. ԼԸ 13): Արդ՝ յորժամ եմուտ Բանն յաշխարհս, մատեան գումարք արդարոցն կատարելոց, որոց հարիրապետն է ապացոյց, որք մաղթանօք պաղատէին առ Տէր վասն բնութեանս: Չի օրինակ իմն արդարքն հարք են մարդկայնոցս՝ զգութ առաջի արկանելով, թէ չարչարեալ մտօք տանջին եւ մարմնով լուծանին մահուամբ, վասն որոյ ասէ. «Ես եկից եւ բժշկեցից [ցնա]»: Եւ զայս՝ յիրաւի. նախ՝ զի «զկամս երկիւղածաց Իւրոց առնէ Տէր, աղօթից [նոցա լսէ]» (Սաղմ. ԾԽԴ 19), եւ երկրորդ՝ զի զհիւանդացեալ մեղօք եւ զչարեօք նեղեալ բնութիւնս ոչ այլ ոք կարաց բժշկել, քան թէ Ինքն զալստեամբն Իւրով՝ ըստ այնն. «Ոչ պատգամաւոր ոք եւ ոչ հրեշտակ, այլ Ինքն Տէր եկեսցէ եւ փրկեսցէ» (Ես. ԿԳ 9):

Պատասխանի ետ հարիրապետն եւ ասէ. «Տէր, չեմ բաւական, եթէ ընդ յարկաւ իմով մտցես, այլ ասա՛ բանի, եւ բժշկեսցի՛ մանուկն իմ (Ը 8):

¹ Գ զտարժանեալն

² ՏՁ նժդեհ

³ Տ այս

Ի քանից աստի յայտնի է, թե ո՛չ փոքրագոյն վասն Նորա էած զմտաւ, այլ յոյժ մեծագոյն՝ առաւել քան զբոլորտին, զի նա ասաց. «Թէ կամիս, կարող ես» (հմմտ. Մատթ. Ը 2), իսկ սա ազատ բարոյք թէ՛ «Ասա՛ քանի, եւ բժշկեսցի՛ մանուկն իմ», քանզի գիտեմ զՔեզ ճշմարտապէս Տէր, որ անաշխատ քանիս զերկին եւ զերկիր արարեր եւ մարդասիրեալ խոնարհութեամբ ի¹ յերկիր իջեր. չիշխեմ ես զհողեղէն յարկ դրանց իմոց քանալ Քեզ, որ ի բնաւքս չեն կարող տանել զանտանելի մեծութիւն Քո, իսկ քան հրամանաց Քոց արդիւնս զործոց վճարէ, որ եւ յի՛ս ցօղեսցես զբժշկութեանդ աղբիւր՝ զցօղ բժշկութեան Քո: Ուսցոյք եւ մե՛ք զայնպիսի խոնարհութիւն զգենույ, յորժամ տակաւին հարիւրապետ իցենք եւ զինուորեալ կայսեր աշխարհակալիս եւ մեծագոյն շնորհաց² կամ աստիճանի պատահեալ, ասասցոյք, թէ ո՛չ եմք արժանի մսեղէն յարկաւ³ ծառայել Քեզ, զի այնու թերեւս զՔրիստոս ընդունիցիմք, որ դարձուցէ ի մեզ զյարկն արդարութեան:

Քանզի եւ ե՛ս այր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինեւ զինուորս. ասեմ սմա՛ ե՛րբ, եւ երբայ, եւ այլում թէ՛ ե՛կ, եւ գայ, եւ ծառայի իմում թէ՛ արա՛ զայս, եւ առնէ» (Ը 9):

Թէպէտ անհանգէտ եմ բախտի միայն, սակայն բնութեամբ հանգիտապատիւ եմ մարդկան եւ ի ներքոյ այլոյ ումեմն զօրավարի կարգեալ, բայց զոր հրամայեմ սակաւ իշխանութեամբս, անվրէպ կատարի, քանի՞ առաւել Դու, որ ոչ ես ընդ իշխանութեամբ ումեք եւ կամ հաւասար մարդկան, այլ տէր եւ արարիչ սոցա առանց աշխատանաց, այլ միայն քանիս հնազանդին Քեզ ախտք եւ հիւանդութիւնք, նաեւ մահ եւս, զի թէ հրամայիցես, եւ վախճան անգամ ոչ իշխե՛ մերձենալ ի մարմին, այլ ի կենացդ խոյս տուեալ փախչի, որպէս ծառայ ի տեսնէ իւրմէ: Տե՛ս աստանօր զհաւատս առնն, թէ ո՛րպէս մարգարէաբար զոր ինչ լինելոց էր յետոյ՝ այժմ յայտնի ծանուցանէ, թէ իշխան է մահու եւ կենաց եւ իջուցանէ ի դժոխս եւ հանէ ի դժոխոց⁴: Նաեւ զինուորացն համեմատութեամբ Տէր զնա երկնային զօրացն առակեաց, որ ըստ հրամանի Նորա վճարեն զամենայն ինչ:

¹ Զ > ի

² Զ շնորհի

³ Զ յարկի

⁴ Իմաստ. ԺԶ 13

Իսկ առ ի միտս՝ նշանակ կատարեալ հոգւոյ է իմաստս, վասն զի ո՛չ զնոյն զինուորս, զոր ի բաց առաքէ, վերստին կոչէ, այլ զայլ ոք, քանզի հաճեալ միտք ընդ օրէնս Աստուծոյ ըստ ներքին մարտոյ եւ տեսանէ այլ օրէնս յանդամս զինեալ հակառակ օրինաց մտաց եւ գերեալ յօրէնս մեղաց¹, ոչ ներէ երկոցունց ի միում վայրի առնուլ բնակութիւն, զի եւ ո՛չ մի հաղորդութիւն է հակառակամարտիցն առ միմեանս՝ ըստ առաքելոյ²: Վասն որոյ զօտարսն ի բաց վարելով, զչարութեանն ասեմ սպասաւորս, բերելով ի ներքս զիմաստութեանն տարփօղս. քանզի ի բաց կալ ի խաւարէ՝ ի հարկէ ի լոյս է, ըստ որում՝ «վառեալ զօրութիւն հոգւոյն զրահիւք արդարութեան եւ վահանաւ յուսոյն զուսեր Հոգւոյն, որ է բանն Աստուծոյ (հմմտ. Եփես. 2 14), ի ձեռին ունելով՝ հերքէ զընդդիմամարտսն, որպէս երջանիկն այն հարսնացեալ հոգին, որ ի բաց մղէր զհիւսիսայինն եւ կոչէր զհարաւայինն³: Չոր տեսեալ ծառայ մարմինն եւ յայնպիսի մտաց երկուցեալ իբր ի տեսանէ՝ նուաճի ընդ իշխանութեամբ հոգւոյն՝ սպասաւորելով առաքինութեան գործոց, որպէս եւ նա ընդ իշխանութեամբ մտաց եւ բողոքովին ընդ վերնոյն կարգեալ իշխանութեամբ, ընդ որս զարմացեալ գովէ Աստուած՝ ըստ այնմ. «Հայեցա՞ր մտօք ընդ ծառայ Իմ ընդ Յոր, զի ոչ զոյ իբրեւ զնա մարդ ի վերայ երկրի» (Յոր Ա 8), որպէս ասէ:

Իբրեւ լուս Յիսուս, զարմացաւ (Ը 10):

Մեծ գովութիւն է այս հարիւրապետին՝ առաւելագոյն հաւատոց նորա նշանակութիւն, քանզի եկն մարմնաւոր խնդրել առողջութիւն, ընկալաւ ի զարմացմանէ Տեառն եւ զհոգեւորն փարթամութիւն: Նաեւ այնու զմերձաւոր ժողովուրդն ի նորա առաքինութեանն նախանձ ձգեալ յորդորէ:

Եւ ասէ ցայնոսիկ, որ զհետն երթային. «Ամէ՛ն ասեմ ձեզ, եւ ոչ յԻսրայէլի՛ այսպիսի հաւատս զտի երբէք:

Չնոսա, որք բարեխօս հարիւրապետին էին, կշտամբեալ ամաչեցուցանէ, զի ո՛չ հաւատացին ի Նա իբրեւ զօտարն, քանզի չէր իսկ հրէայ եւ ոչ տեղեակ Օրինացն հարիւրապետն, սակայն այնպիսի իբր էած զմտաւ, իսկ նոքա ընթերցողք Օրինացն եւ ծանօթք Մարգարէիցն՝ նոյնգունակ ոչ կարացին առ Նա հաւատ ցու-

¹ Դրոմ. է 23

² Բ Կոր. 2 14

³ Երզ 7 16

ցանել: Բայց ասելովն թէ՝ «ոչ գտի երբեք», յոյժ ձաղէ, թէ յելիցն Ե-գիպտոսէ մինչեւ ցայսօր միշտ հետտեալ կացին ի տեսառնակոյս կողմանէ եւ ոչ երբեք կատարեալ հաւատս բերին յանձինս: Այլ են ոմանք, որ զԻսրայէլդ ոչ ի ժողովորդն, այլ ի նահապետն Յակոբ հանեն, որ ընդ Աստուծոյ մարտոցեալ՝ ոչ հաւաստեալ ի վնասէն զերծաւ, այլ զախտ կաղութեան յագդերն ընկալաւ¹: Նաեւ աստուծօր բացափայլագոյն յայտնեաց ի ձեռն հարիւրապետին զմուտս հեթանոսաց, որք հաւատով արդարանալոց էին, եւ զտարագրութիւն ազգին հրէից, որք ի գործսն պարծէին:

Բայց ասեմ ձեզ, զի բազումք յարեւելից եւ յարեւմտից եկեացեն եւ բազմեցին ընդ Աբրահամու եւ ընդ Սահակայ եւ ընդ Յակովբու² յարքայութեան երկնից (Ը 11),

եւ որդիքն արքայութեան³ ելցեն ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց» (Ը 12):

Յետ սքանչելեացն բազում համարձակութեամբ բարբառի եւ տէր զԻնքն արքայութեանն զուշակէ եւ զգոզն Աբրահամու փոխանակ արքայութեանն զրէ⁴. յոլովք «յարեւելից եւ յարեւմտից» ասէ, այսինքն՝ ի բնական եւ ի գրաւոր օրինաց լուսոյ արդարացելոց, նաեւ ի մեղաւորաց եւ յամբարշտաց, փոխանակ հաւատալոյն ի Նա, ժառանգորդք նահապետացն յիցին: Եւ զԱբրահամ յիշելով մորմոքեցուցանէ զնոսա, զի վասն առ հաւասար հաւատովք արդարանալոյն՝ զօտարսն ժողովէ՝ ըստ Սկրտչին ձայնի թէ՝ «Կարօղ է Աստուած ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու» (Մատթ. 9 9), իսկ որդիքն Աբրահամու յաղազս անհաւատութեանն ելցեն ի խաւարն արտաքին: Կրկին միանգամայն եւ երեքկին վիշտ. մի՝ զի օտարք ժառանգեցեն զնոցայն, եւ երկրորդ՝ զի ինքեանք զրկիցին, որոց նախագոյն պատրաստեալ էր փառքն, եւ երրորդ՝ զի ի խաւարն արտաքին առաքին: Արտաքնովն ցուցանէ, զի եւ ներքին գոյ, եւ կամ զի ծանր եւ շօշափելի է խաւարն՝ արտաքոյ մարմնական խաւարիս, զի բնաւին ոչ լուսաւորի լուսով. կամ թէ յեզր արտաքոյ աշխարհիս ժողովեալ մրուրն հրոյ՝ առանց լուսոյ տեղի տանջանաց սատանայի եւ իւրոցն՝ ըստ այնմ թէ՝

¹ Ծննդ. ԼԲ

² Յակոբու

³ Աբրահամու

⁴ Ղուկ. ԺԶ 22

«Ձի՞նչ տեղի խաւարի. տանիցիս զիս ի սահմանս նոցա» (Խմմտ. Յոբ
ԼԸ 19-20):

«Անդ եղիցի լալ եւ կրճել ատամ[անց]»: Յիրաւի՛ այսոքիւք վտանգին, զի սառուցեալք էին ի սիրոյն Աստուծոյ եւ ընկերացն եւ բորբոքեալք չարութեամբ լան ի ծխոյն եւ կափկափին¹ ի ցրտոյն, որք լինին ի տարերացս անարգագոյնքն ժողովեալ ի մի վայր ի տանջանսն մեղաւորացն, քանզի ջերմութիւն հրոյ բաժանեալ ի լուսոյ՝ ճայնի Տեառն ըստ մարգարէին², եւ ցրտութիւն ի ջրոյ եւ խաւարն յօդոյ եւ տիղմ յերկրէ չարչարեն զնոսա, որպէս ասացեալ է նախ: Նաեւ կրճտելով զատամունս իրեանց ի վերայ սրբոցն՝ կրճի[ն] եւ ատամունք նոցա ի հուրն անշէջ վասն այսարնակ լինելոյն:

Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն. «Ե՛րբ, եւ որպէս հաւատացերդ՝ եղիցի քեզ» (Ը 13):

Նախ՝ քանզի վճիռ եհատ հրէիցն, հաւատարմացուցանէ զայն նշանօք, եւ երկրորդ՝ զի մի՛ կարծիցէ որք, թէ պաշտօն առնելոյ վասն էին բանք հարիւրապետին եւ ո՛չ ի սերտ եւ ի հաստատուն բարուց, ամենեցունց յայտնէ զմիտս նորա թէ՛ «Ե՛րբ, եւ որպէս հաւատացերդ» բանիւ ողջանալ մանկանն քո՝ «եղիցի քեզ», եւ վաղվադակի բանքն արդիւնք լինէին՝ վկայք առն հաւատոցն: Եւ երրորդ՝ ցուցանէ զհաւատս նորա կցորդ բժշկութեան Իւրոյ, քանզի զայս յայտնէ թէ՛ «Ե՛րբ, եւ որպէս հաւատացերդ՝ եղիցի քեզ»:

Եւ ողջացաւ մանուկն նորա յաւուր յայնմիկ:

Որպէս դուստր քանանուհոյն, զի ասաց ցնա. «Կի՛ն դու, մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս եւ կամիս» (Մատթ. ԺԵ 28), եւ բժշկեցաւ դուստր նորա ի նմին ժամու, այսպէս եւ հարիւրապետին ոչ միայն բժշկեցաւ, այլեւ «յաւուր յայնմիկ», որպէս զի զժամն եւս եհարց, թէ յորո՛ւմ ժամու ապաքինեաց. «Երէկ,- ասեն,- յեօթներորդ ժամն եթող զնա ջերմն» (Յովհ. Դ 52), յորում հաւատաց վասն նորանշան իրացն՝ ինքն եւ ամենայն տուն իւր:

Եւ եկեալ Յիսուս ի տուն Պետրոսի՝ ետես, զի զոքանչ նորա անկեալ դնէր տապացեալ (Ը 14):

¹ Զ կարկափին

² Սաղմ. ԻԸ 7

Կալալ զձեռանէ նորա, եւ եթող զնա ջերմն. յոտն եկաց եւ պաշտէր զՆա¹
(Ը 15):

Սովորութիւն էր Տեառն մերոյ երբեմն զաստուածութիւնն ծանուցանել եւ երբեմն զմարդկութիւնն, զոր ունէր աննիագարար: Արդ ոչ զնալով ի տուն հարիւրապետին՝ յայտնապէս աստուածութեանն է ցոյց, որ ամենայն ուրեք է եւ զհանդէս գործոց² վճարէ: Իսկ այժմ ի տուն Պետրոսի եկեալ եւ զտապացելոյն ձեռանէ կալեալ իբր զմարդասէր բժիշկ՝ զմարդկային խոնարհութիւնն նշանակէ, որպէս երբեմն ի վերայ այեաց ընթանայր եւ երբեմն նաւու վարէր, զի ցուցանէր, թէ ճշմարիտ Աստուած է եւ ճշմարիտ մարդ: Բայց Մարկոս յաւելու ի յասացեալս, թէ վաղվաղակի եկն ի տուն Սիմոնի եւ թէ աղաչեցին զՆա վասն նորա³, իսկ Մատթէոս համառօտ ասէ, քանզի նա զժամանակն եւս կամի պատմել, իսկ սա՝ զնշանսն միայն: Բայց ի տուն նորա մտանել՝ ինձ թուի վասն կերակուր իմն ընդունելոյ. յայտ յայնմանէ է, զի ասէ. «Յոտն եկաց եւ պաշտէր զՆա». այլ նախ ի Տեառն վայելեցին պարզեւս եւ ապա զՊարզեւատուն կերակրեցին: Իմա ինձ եւ զՊետրոսի ակնածելն, թէ ո՛րպիսի հիւանդ ունէր ի տան, բայց ոչ իշխէր մուծանել զՆա ի տուն, այլ կայր մնայր մինչ զվարդապետութիւնն կատարեսցէ եւ զայլսն բժշկեսցէ, քանզի այսպէս խրատեալ էր ի սկզբանէ՝ մի՛ զանձն մեծարգի քան զբազմաց փրկութիւն համարել: Իսկ յորժամ եմուտ ի տուն Իւրովի, աղաչեցին վասն նորա, եւ բժշկեսց: Նախ՝ զմարդկութիւնն եւ ապա զխոնարհութիւնն ծանուց, քանզի թէ ո՛րպիսի յարկք էին որսորդացն, սակայն ոչ զարշէր երթալ, որպէս զի զքեզ խրատեսցէ կոխօղ լինել մարդկեղէն փառաց: Եւ երկրորդ՝ զգօրութիւն աստուածութեանն ցուցանէ՝ ոչ միայն բժշկութեամբն, այլեւ նորանշան առողջութեամբն, մինչ զի զօրացեալ պաշտէր զնոսա: Քանզի զիտէ ամենայն ոք, զի յետ թողոյ ջերմանն բազում ժամանակք ծախին ախտացելոցն, մինչեւ յառաջինն ելանէ զօրութիւնն, իսկ անդ ամենայնն միանգամայն լինէր: Իսկ զձեռանէ ըմբռնելն՝ զի մի՛ յայլ ումեքէ, այլ ի Նմանէ՝ ծանիցի բժշկութիւնն:

Իբրեւ երեկոյ եղև, մատուցին առ Նա դիւահարս բազումս, եւ եհան զայսսն քանիւ եւ զամենայն հիւանդսն բժշկեսց (Ը 16):

¹ Զ զնոսա

² Զ գործոյ

³ Մարկ. Ա 29

Չի լցցի բանն, որ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի. «Նա զհիւանդութիւնս մեր վերացոյց եւ զգաւս մեր երարձ» (Ը 17):

Ի սքանչելեացն յաճախութենէ բազումք աճէին¹ ի հաւատս, մինչ զի եւ տարածամ ժամուն անցանել ոչ անսային: Այլ հայեաց դու ընդ այն, թէ որպէս ւաւետարանիչքն զբազմօք սքանչելեացն զանց առնեն եւ միոյն պատմութեամբ զյոյն վարունակեն՝ ըստ այնմ. «Ոչ կարէ աշխարհս տանել զգիրսն, որ թէ զրեալ էին» (հմմտ. Յովհ. Իւ 25), եւ զի մի՛ ոք երկմտիցի, աճէ զմարգարէն վկայ, թէ ի վաղնջուց այս² ասացեալ է. «Նա զհիւանդութիւնս մեր վերացոյց եւ զգաւս մեր երարձ» (հմմտ. Ես. ԾԳ. 4): Արդ՝ զայս վասն մեղաց ինձ թոյի ասացեալ մարգարէին, որպէս վկայէ եւ Յովհաննէս թէ՛ «Դա է Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի» (Յովհ. Ա 29): Իսկ թէ ւաւետարանիչս վասն ցաւոցն ճառեաց՝ կամ թէ ըստ իրացն զվկայութիւնն ի մէջ բերեալ ընթեռնու, կամ թէ յայտ առնէ, թէ բազում ցաւք ի մեղաց ոգւոց պատահին:

Տեսեալ Յիսուսի ժողովորդս բազումս զհօրեալ՝ հրամայեաց երթալ յայնկոյս (Ը 18):

Քանզի հարեալք էին ի սէր վարդապետութեան Նորա՝ ըստ այնմ. «Յինէն լուեալ անսային եւ խնդալից լինէին, յորժամ խօսէի ընդ նոսա» (հմմտ. Յոր ԻԹ 22), միանգամայն եւ հրճուեալք ի հրաշս բժշկութեան Նորա եւ ի տես աստուածային գեղոյ Նորա, իբրեւ զի՛ գեղեցիկ էր քան զամենայն որդիս մարդկան³ եւ ընտրեալ ի բիրուց⁴: Չի թէ Մոսիսին փառատրեցաւ⁵, եւ Ստեփանոսին ի հրեշտակի դէմս փոխեցաւ⁶, ապա ի միտ առ, թէ ամենեցունց Տեառն որպիսի դիմօք պարտ էր երեւել, թէպէտ Եսայի «Ոչ զոյր Նորա տեսիլ» ասէր⁷ (Ես. ԾԳ. 2). զայն կամ վասն անճառն փառաց եւ կամ վասն մահուն չարչարանաց, եւ կամ վասն աղքատ եւ զծուծ կերպարանացն, զոր եցոյց աւելի քան զամենեսեան, ասաց: Յաղագս այտորիկ ոչ բնաւ կամէին զհեռանալն ի Նմանէ, որոց հրամայեաց երթալ յայնկոյս ծովուն. ոչ նախ, զի ոչ առնուին յանձն,

¹ Զ յաճախէին

² Տ > այս

³ Սաղմ. ԽԴ 3

⁴ Երգ Ե 10

⁵ Ելք ԼԴ 35

⁶ Գործք Զ 15

⁷ Զ ասէ

այլ յետ սքանչելեացն՝ յաղագս երից իրաց: Նախ՝ զի յանքոյթ վայր ժողովելով զնոսա՝ վարդապետեսցէ նոցա զբանն կենաց. եւ երկրորդ՝ ի հրէիցն նախանձուէ խոյս տայ, զի մի՛ ասիցեն, թէ զբազումս զԻւրեաւ էած, իբր այն թէ՝ «Աշխարհ ամենայն զկնի Նորա զնաց» (Յովն. ԺԲ 19). եւ երրորդ՝ խոնարհութեան չափ ուսուցանէ, մանաւանդ ի ժամու սքանչելեացն, զի առնէր զնշանսն եւ հրաժարէր ի փառաց, զի մի՛ ի ցոյցս ինչ կարծիցեն գործել եւ հիւանդանայցեն մտօք: Իսկ առ ի միտս՝ ի հաղերձեալն կոչեաց ի կեանս, որք մարմինք եղեն Նորա¹ եւ ի Նա յօղեցան հաւատոյն կապով. այս է «զԻւրեաւ»-ն՝ ըստ այնմ. «Օն, արիք զնասցո՛ւք աստի» (Յովն. ԺԴ 31): Եւ «երթալ յայնկոյս»՝ այժմ մտօք՝ ըստ առաքելոյ. «Զվերի՛նն խորհեցարոյք» (Կոր. Գ 2), եւ յետոյ՝ հոգով եւ մարմնով եւ մտօք:

Եւ մատուցեալ դպիր մի՛ ասէ ցՆա. «Վարդապետ, եկից եւ ե՛ս զկնի Քո, յոր վայր եւ երթիցես» (Ը 19):

Այրս այս կրկին ախտիք զգածեալ է. նախ՝ յանդուզն ամբարտաւանութեամբ, զի զարշէր ընդ ժողովրդեանն ի համար մտանել, այլ առանձին իմն պատիւ խնդրէ ընդ Նմա շրջելովն, եւ երկրորդ՝ ազահութեամբ վարակեալ, քանզի ետես զբազումս ի ժողովրդենէն, զի վասն նշանացն եւ վարդապետութեանն դեզերէին առ Նա, կարծեաց, թէ ի նոցանէ ինչս հաւաքեսցէ: Բայց սակայն կեղծատրութեամբ զախտն ծածկեաց բանին թէ՝ «Եկից եւ ե՛ս² զկնի Քո, յոր վայր եւ երթիցես»՝ ի դժուարինս եւ կամ ի դիւրինս: Իսկ Ամենագէտն զկեղծատրութիւն չար բարուցն խայտառակեաց՝ ոչ ի յետս դարձուցանելով, այլ յանդիմանելով երկոցուն ախտիցն՝ ի ճահ պատասխան կազմեաց:

Ասէ ցնա Յիսուս. «Աղուեսուց որջք զոն, եւ թոչնոց երկնից՝ բոյնք³, այլ Որդոյ մարդոյ ո՛չ զոյ՝ ուր դիցէ զգլուխ Իւր (Ը 20):

Այսինքն՝ եթէ ի փառս փութաս սէզ բարութ վիսացեալ, մեք անասնոց անգամ չափ ի կենցաղս պատիւ ոչ ունինք, իսկ թէ զախտս քո ընչիւք յագեցուցանել կամիս, քան զթոչունս աղքատ շրջինք յաշխարհի: Եւ դարձեալ՝ նենգատր խորհրդոց զոն ի քեզ տեղի եւ դադար՝ ուռուցիկ ախտի, իսկ Աստուածութիւնս, որ ի

¹ Դրոմ. ԺԲ 4-5, Ա Կոր. ԺԲ 27, Եփես. Ա 22-23

² Զ > եւ ես

³ Զ > բոյնք

«գլուխ» առակեալ, ոչ բնախն ի քեզ հանգչի, այլ «ի հեզս եւ ի խոնարհս եւ ոյք¹ դողան ի բանից Իմոց» (Եւ. 4:2 2):

Եւ մի ոմն յաշակերտաց Նորա ասէ ցՆա. «Տէր, տո՛ր ինձ հրաման, զի երթայց նախ քաղեցից զհայր իմ» (Ը 21):

Տես՝ զխոնարհութիւն աշակերտին հնազանդութեան², զի յերկուս իրս հպատակ գտաւ. մի՝ զի ոչ առանց հարցման չոգաւ, եւ միս՝ յորժամ արգելաւ, անսաց եւ նախապատիւ քան զմահ հոր իւրոյ զբանն Նորա³ համարեցաւ: Իսկ ասելն թէ՝ «նախ քաղեցից զհայր իմ», ինձ թուի, փորձութիւն էր այս աշակերտին, զի յորժամ յաշակերտութիւն եկն, պատահեաց մեռանիլ հորն, զի զուժի մահու նորին եւ թաղմամբն զրկեալ հեռացի յաշակերտութենէն, զոր զհտացեալ Տէր վանօղն փորձութեան՝ առ Ինքն ձգէ: Քանզի յորժամ զդպիրն մերժեաց, զսա կոչեաց, որպէս ասէ Ղուկաս⁴. զի մի՛ կարծիցի, թէ զբազումս արհամարհէ եւ զոք փրկութեամբ ոչ շահի, զնա, զի ախտիւ գայր, տարագրեաց, իսկ [զ]սա, զի պարզամիտ ոք⁵ էր, առ Ինքն ժողովեաց, որպէս զի այսու զգիտութիւնն Իւր, միանգամայն եւ զգորութիւնն ծանուցանէ, որ ոչ միայն կոչեաց, այլեւ ի հորն թաղմանէ ի բաց ձգեաց եւ զբաղձանս կամաց նորա ի սէր Իւր բեւեռեաց:

Ասէ ցնա Յիսուս. «Ե՛կ զկնի Իմ եւ թոյլ տուր մեռելո՛ցն քաղել զմեռեալս իւրեանց» (Ը 22):

Ո՛չ եթէ արհամարհէ զպատիւ ծնողացն Այն, որ օրէնս եղ եւ Ինքն ելից գործով⁶, այլ զի ցուցցէ, թէ չիք ինչ կարեւոր քան զերկնատուն: Եւ այլ ազգ. հայր քո անթաղ ոչ մնայ, սակայն դու ի կենացն մի՛ հեռանար, զի պատահէ յետ քաղելոյ զհայրն՝ զկտակն քննել եւ զժառանգութիւնն բաժանել, նաեւ բազումք եւս զրգռեն զտեղի հոր քո լցուցանել, եւ այսպէս այիք յայիս խառնին եւ ի խաղաղութեանն նաւահանգստէ զքեզ հեռացուցանեն: «Դու եկ զկնի Իմ եւ թոյլ տուր մեռելո՛ցն քաղել զմեռեալս [իւրեանց]»: Յուցանէ դարձեալ, թէ Նա չէր իսկ մեռեալ եւ ոչ Հայր Նորա, քանզի

¹ Տ որք

² Գ հնազանդութեան աշակերտին] զխոնարհութիւն աշակերտին հնազանդութեան

³ Տ զբանն

⁴ Ղուկ. Թ 59

⁵ Գ > ոք

⁶ Եւք Ի 12, Յովհ. ԺԹ 26-27

անմահ է, որով յայտ իսկ է, թէ յանհաւատից որ էր մեռեալն, իսկ թաղողքն թէպէտ կենդանի էին մարմնով, սակայն մեռեալք էին հոգւով վասն յանցանացն: Նաեւ ըստ այնմ, զի զվճիռ մահու հաստատեալ էր ի վերայ նոցա, որով ի մեռելոյ համարի էին, որպէս Ադամայ ասացաւ թէ՝ «Յորում ատուր ուտիցես, ի նմին ատուր մեռանիցիս» (հսմտ. Ծննդ. Բ 17), եւ թէպէտ ոչ մեռաւ, այլ յետ ինն հարիւր եւ երեսուն ամի, սակայն յաղագս ստոյգ վճռին ի հաշիւ մեռելոյ կարգեալ էր, նոյնպէս եւ աստ ասէ. «Թոյլ տուր մեռելոցն» յօժարութեամբ՝ «թաղել զմեռեալն» բնութեամբ, եւ մեռելոցն զօրութեամբ՝ զսպել զմեռեալն ներգործութեամբ: Իսկ դու «ե՛կ զկնի Իմ» զմեռեալսն կենդանացուցանել, զի որքան օգուտ է ի ձեռն անմահ Բանին վարդապետութեան ի մահուանէ զմարդիկ զերծուցանել, քան թէ զմեռեալ մի թաղել եւ ոչինչ շահել, քանզի ո՛չ է արժան զձեռն մաճով արկանել եւ յետս հայել¹ եւ զհարկաւոր ժամանակս վայրապար ծախել, մանաւանդ յորժամ բազումք իցեն, որ զայն վճարիցեն, յորմէ վարժեալ աշակերտքն ասէին յետոյ. «Ո՛չ է պարտ թողոյ մեզ զբանն եւ պաշտել զսեղանս» (Գործք 2 2): Եւ դարձեալ՝ «ե՛կ զկնի Իմ» ի մահ եւ ի չարչարանս, ի խոնարհութիւն եւ ի հնազանդութիւն, քանզի այս է հետ Լրիստոսի, որով եւ յերկինս՝ ի կեանս եւ յանմահութիւն՝ ըստ այնմ. «Ուր Եսն եմ, անդ եւ պաշտօնեայն Իմ եղիցի» (Յովհ. ԺԲ 26), եւ՝ «Թէ չարչարանացն Նորա հաղորդ եմք, եւ փառացն² հաղորդ լինիցիմք³» (Հոմ. Ը 17):

Եւ իբրեւ եմուտ ի նաւն, զնացին զկնի Նորա աշակերտքն Նորա (Ը 23):

Ղուկաս ոչինչ փոյթ ժամանակին առնէր, այլ միայն թէ՝ «Եղեւ ի միում ատուրց», նմանապէս եւ Մարկոս⁴, իսկ Մատթէոս՝ թէպէտ ո՛չ նոյնպէս, սակայն պահս յայսմ վայրի յարմարէ թէ՝ «Իբրեւ եմուտ ի նաւ»: Չժողովորդն նախ առաքեաց յայնկոյս եւ զաշակերտսն այժմ զկնի տանելով՝ թոյլ տայ ամբոխել ծովուն, զի այնու զվարդապետսն⁵ տիեզերաց կրթէ ի ժուժկալութիւն՝ համբերօղս լինել փորձանաց: Իմա եւ աստ զաշակերտացն մտերմութիւն, թէ

¹ Ղուկ. Թ 62

² փառացն նորա

³ լինելոց եմք

⁴ Ղուկ. Ը 22, Մարկ. Դ 35

⁵ զվարդապետն

որպես ամենայն ուրեք ընթանային, մինչ զի եւ ծովուն երկիւղ ոչ նահանջէր զնոսին:

Եւ ահա շարժումն մեծ եղև ի ծովուն, մինչեւ¹ նախն ծածկել յալեաց անտի, եւ Ինքն ննջէր (Ը 24):

Յանկարծակի, ասէ, մինչ ոչ գոյր ամպային վրդովմունք, հրաման ետ հողմոյն ի ներքուստ կողմանէն եռայ եւ յորձանօք կոհակացն շարժել զերեսս ծովուն, յորմէ նաւն վտանգեալ եւ յալեաց յուզմանէն տատանէր ուժգին. զի յորժամ սաստեցտ, մոլեպէս մըմեալ գազանութիւնք ծովուն հնազանդին, ի միտ առցեն, թէ Նա՛ է արարիչ նորա, որ հրաման ետ ծփալ եւ դարձեալ կակդանալ: Նաեւ յորժամ ի վտանգ փորձութեան մտանիցեն, զյիշատակն ի մտի ունելով ի Նա՛ ապաւինեցին, զի թէպէտ առ ժամանակ մի ներէ, սակայն ելք փորձութեան առնելոց է, զի յորժամ զերծանիցին ի վշտաց ծովուն կամ ի փորձութեանցն, իմասցին զագոյումն բարերարութեան Նորա: «Եւ ինքն ննջէր»: Մարկոս յաւել թէ՛ «ի վերայ բարձի» (Մարկ. 7 38), զի ճշմարիտ զմարդկութիւնն² Իւր յայտ առնիցէ եւ զխոնարհութիւնն ցուցանիցէ եւ զնոյն մեզ օրինակ տացէ: Եւ դարձեալ՝ զի նոքա առաւել երկնչիցին, զի եթէ ոչ էր ննջեալ, թէպէտ յոյժ ամբոյսեալ էր ծովն, աշակերտքն ոչ զարհուրէին: Եւ դարձեալ՝ ննջելով Նորին զգարթնուլն ծովուն իմանայցեն եւ յառնելովն զննջումն ծովուն ծանիցեն, եւ ի միտ առցեն զգօրութիւն Այնմ, որ ոչ ննջէ³:

Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զՆա եւ ասեն. «Տէ՛ր, փրկեա՛ զմեզ, զի կորնչիմք» (Ը 25):

Չայն իսկ նշանակէ, թէ ո՛չ պատշաճ կարծիս զՆմանէ ունէին, զի յառնել եւ սաստել կարի քաջ գիտէին, բայց թէ ննջէր եւ սաստէր՝ զայն ո՛չ իմանային, այլ յիրաւի ի Նա դիմեցին՝ ըստ այնմ. «Տէ՛ր⁴, ի նեղութեան յիշեցաք զՔեզ» (Եւ. Ի. 2 16): Նաեւ զվստահութիւնն եւս յայտ առնէ, թէ որպէս ի քուն գոլով՝ զարթուցանել զՆա

¹ Զ մինչ զի եւ

² Զ մարդկութիւնն

³ Սաղմ. ԾԻ 4

⁴ Զ > Տէր

իշխեցին այնք, որ յաղագս սամարացի կնոջն հարցանել զՆա ոչ իշխեին¹. Ինձ թուի, թէ յաւելուած կատարելութեան ընկալեալ էին:

Եւ ասէ ցնոսա. «Ընդէ՞ր վատասիրոք էք, սակաւահաւատք» (Ը 26):

Ի սաստէ աստի յայտնի եղեւ, թէ յաղագս այտորիկ առանձնացոյց զաշակերտսն, զի մի՛ թերահաւատութիւն նոցա առաջի ժողովրդեանն յայտնեցի, վասն որոյ նախ քան զսաստել ջրոյն՝ զմտաց նոցա յոյզս ցածուցանէ, որպէս զի հաստատեցին եւ մի՛ ի սակաւ ամբոխական կրից տրտմեցին: Միանգամայն եւ ուտուցանէ, թէ զերկիւղ ոչ փորձութեանց ինչ զալուստ առնէ, այլ մտացն տկարութիւն:

Յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոյն եւ ծովուն, եւ եղև խաղաղութիւն մեծ:

Յետ զերկիւղ խռովութեան ի մտաց աշակերտացն փարատելոյ ի ձեռն սաստին, յայնժամ ի ծովն դարձուցանէ եւ իբր արարածոյ Արարչի հնազանդել հրամայէ, եւ իսկոյն մրրիկն յանկարծակի դադարէ, եւ հետք խռովութեան ի ծովն բնաւին ոչ երեւէր: Եւ զայս ոչ զաւագանաւ, որպէս Մոսէս², եւ ոչ տարածմամբ ձեռաց ի յերկինս, այլ միայն բանիւ զստահակ ծովու բռնութիւն խաղաղութեան օրինիւ սանձակոծէր, եւ այն ինչ բարեխառն եւ ջերին օղով զծովն զեղուցանէր, քանզի զայս յայտնէ աւետարանիչն թէ՛ «Եղև խաղաղութիւն մեծ»:

Եւ մարդիկն զարմացան եւ ասէին. «Ո՞րպիսի ոք իցէ Սա, զի եւ³ հողմք եւ ծով հնազանդին Սմա» (Ը 27):

Ոչինչ է այլ զարմացումն, քան թէ նորագոյն եւ անսովոր իրաց տեսութիւն: Արդ՝ զի՞նչ այլ հրաշափառագոյն իր, քան թէ բանիւ զծով⁴ սանձել, վասն որոյ ոչ միայն մտօք⁵ զարմացան, այլեւ հարցմամբ բանի հիացան՝ ըստ այնմ. «Ո՞րպիսի զօրութիւն, քանի՞ նշանս»⁶: Այսպէս եւ սոքա թէ՛ «Ո՞րպիսի ոք իցէ Սա», այսինքն՝ ո՞ր իշխանութիւն է այս կամ զի՞նչ բարերարութիւն, զի

¹ Յովի. 7 27

² Ելք ԺԴ 16

³ Զ > եւ

⁴ Տ զծովն

⁵ Զ ~ մտօք միայն

⁶ Հանգիստ սրբոյն Յովիաննու առաքելոյ եւ աւետարանչի, Ա

բռնութիւն մեծագոյն տարերց ընդ հնազանդութեամբ Սորին նուաճին. միթէ Ա՞յն իցէ, որ զանդնդական ջրոցն բազմութիւն ի խորշ եւ ի գոգս երկրի ժողովեալ խաղաղացոյց¹, կամ առ Նոյի զհամատարած յուզմունս ալեացն ծփանաց՝ հողմով զնստեալ ցամաքեցոյց², կամ որ ի Կարմիր ծովուն զշաչունն ջրոյն եռացման՝ իբրեւ զպարիսպ քարեայ ձուլեալ արձանացոյց³: Եւ զի մարդ տեսանէին, վասն որոյ տարակուսէին, թէ ո՞վ է Սա, զի տեսիլ դիմացն եւ ընկողմանունն մարմնոյն՝ մարդ ցուցանեն, եւ յակարծակի զայիս լռեցուցանել՝ Աստուած երեւեցուցանեն. ո՞րպիսի որ է, ասէին, Սա, զի որպէս աղախին՝ տեսուն, այնպէս ծով եւ հողմն⁴ Սնա հնազանդեցան: Իսկ Նա յայնպիսի վրիպակ կարծեաց ոչինչ զչարէր, այլ ի ձեռն նշանացն զԻնքն Աստուած գոյնոց⁵ վարդապետէր՝ լնլով զմարգարէականն բան, որ ի դէմս Հօր թէ՛ «Ասաց, եւ յարեաւ հողմ, եւ դադարեցին այլիք նորա, եւ դարձոյց զմրրիկն յօդ» (հմմտ. Սաղմ. ԾԶ 25, 29), եւ այլուր թէ՛ «Զօրութեամբ Իւրով հանդարտեցոյց զծով» (Յոբ ԻԶ 12):

Իսկ առ ի միտս՝ «ծով» է կենցաղս՝ ըստ մարգարէին թէ՛ «Այս ծով մեծ» (Սաղմ. ԾԳ 25), եւ այլուր թէ՛ «Հողմք երկնից բախսն զծովս զայս մեծ», իսկ շարժումն՝ զանկումն Ադամայ զահագին եւ զնեժն, մինչ զի ի բազում դարս լսի, նաեւ զկրօնից ի կրօնս փոփոխումն, որպէս զի նաւելոցս ի սմա մարդկան՝ պէսպէս ալեկոծութեամբ փորձիլ եւ մտօք յազգի ազգի աւանդութիւնս տատանիլ: Իսկ «քուն»՝ զերկայնմտութիւնն եւ զներողութիւնն Աստուծոյ բազում ժամանակս, յորս մատուցեալ արդարոցն, որ աշակերտեցան օրինացն Աստուծոյ բնականացն եւ գրաւորականացն, եւ զԱստուծոյ երկայնմտութիւնն մեծաւ ըղձմամբ զարթուցին ի փրկութիւն մարդկան՝ ըստ այնմ. «Զարթիր, ընդէ՞ր ննջես, Տէր» (Սաղմ. ԽԳ 23), եւ թէ՛ «Արի՛, Տէր, եւ փրկեա՛ զիս, Աստուած իմ» (Սաղմ. Գ 7): Ուստի ի հայրական գթոյն յարուցեալ ծոցածին Ծնունդն Հօր եմուտ մարմնով ի ծով կենցաղոյս եւ սաստեաց նախ մարդկայինս բնութեան, թէ ո՛չ այնպիսի ստեղծուած ընկալայք ի բնութեանն կազմածի՝ ալեկոծիլ մեղօք եւ ծփիլ մահուն երկիրդի եւ այլատարազ աւանդու-

¹ Ծննդ. Ա 6-7

² Ծննդ. Ը 1

³ Ելք ԺԴ 29

⁴ Զ հողմ

⁵ Զ > նոցա

թեանն օրինօք՝ ըստ այնմ. «Աստուած զմահ ոչ արար» (Իմաստ. Ա 13), այլ անհաւանութիւն ստունգանելոյ պատուիրանին Աստուծոյ առնէ զձեզ վտարանդիս: Եւ ապա յետ այտորիկ սաստէ եւ «հողմոցն»՝ օղական այսոցն, որպէս ի փորձութեանն, ո՛չ միայն բանի, այլեւ արդարութեանն կրիւք՝ որ ի ծննդենէն մինչեւ ի յարութիւնն, վասն որոյ ցրուեցան եւ յոչինչ եղեն՝ ըստ այնմ. «Յարեաւ Աստուած, եւ ցրուեցան եւ յոչինչ եղեն թշնամիք Նորա» (հմմտ. Մաղմ. ԿԷ 2):

«Եւ եղև խաղաղութիւն մեծ»՝ արեամբ խաչին ի յերկինս եւ ի յերկրի, ո՛չ միայն մարմնոյ, այլեւ հոգւոյ, զի զա՛յս յայտնէ «մեծ»-ն, որպէս հրեշտակքն երգէին¹, քանզի հաշտեցաւ Հայր մահուամբ Որդոյն ընդ² արարածս Իւր, որ «զմիջնորմն ցանկոյն քակեաց եւ արար զերկոսեանն մի» (Եփես. Բ 14), ընդ որս հիացեալ դասք ճշմարիտ բանականացն վերնոցն ի կատարել տնօրէնութեան մեծի խորհրդոյն՝ ասէին. «Իսկ այս ո՞վ է, որ դիմեալ զայ յԵրդմայ... զեղեցիկ պատմութեանօք եւ բուռն զօրութեամբ» (Եւ. ԿԳ 1), սաստեալ իշխանին սանդարամետաց եւ դադարեցուցեալ զծով կենցաղոյս իրաց եւ զբոլոր բնութիւն մարդկան ընդ Իւրեաւ հնազանդեցուցեալ: Ուստի լուեալ ի Նմանէ զարժանատրն պատասխանի՝ լռեցին՝ ուսեալք յԵկեղեցոյ՝ մարմնոյ Նորա, զբազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ, որ ննջեաց զքուն մահուն եւ յարուցեալ՝ «խաղաղութիւն կենաց աւետարանեաց հեռատրաց եւ մերձատրաց» (հմմտ. Եփես. Բ 17):

Եւ իբրեւ անց յայնկոյս՝ յերկիրն զերգեսացոց, պատահեցին Նմա դիւահարք երկու՝ ելեալք³ ի գերեզմանացն, չարաչարք յոյժ, որպէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ (Ը 28):

Յոյժ խնամ տանի աւետարանիչս կարգին եւ ժամանակին եւ սքանչելիս ընդ սքանչելիս խառնէ, զի այնու ցուցանէ զհամբաւ Նորա ամենայն ուրեք տարածեալ, եւ ի հրաշիցն իրաց՝ յոլով ժողովորդ ի Տէր յաւելեալ ի հեթանոսաց: Բայց թէ ընդէ՞ր Ղուկաս եւ Մարկոս մի ասեն զգերգեսացի դիւահարս⁴, իսկ Մատթէոս՝ երկու. յայտ է, թէ երկու էին, իսկ մինն՝ կարի դժնդակագոյն, զորոյ Ղուկաս պատմէ, թէ զշրթայսն կոտորէր եւ զոտնակապսն խզէր, զի թէ

¹ Ղուկ. Բ 14

² Զ > ընդ

³ Զ ելեալ

⁴ Ղուկ. Ը 27, Մարկ. Ե 2

զայն բժշկեաց, կարի՛ քաջ զթեթեւագոյնն. կամ երկիցս անգամ ե-
ղեւ: Իսկ ի գերեզմանս զբնակութիւն առնելն կրկին իմաստս ունի.
մի՛ զի ապականիչ կրօնս ի միտս մարդկան մուծանիցեն, զոր ու-
սեալ ասեն, թէ ոգիք վախճանեցելոցն դեւք լինին, զոր մի՛ լիցի
զմտաւ ածել զայսպիսի բարբանջմունս՝, քանզի «զի՞նչ խօսիս,-
ասեն,- բազումք ի կախարդաց մանկունս փողոտեն, զի ոգիքն յետ
վախճանին ընդ նոսա շրջիցին եւ նոցին գործակից լինիցին»: Եւ
ուստի՞ այս. յայտ է, թէ զբազումս սպանանեն՝ բազումք ասեն:
Իսկ թէ ոգիք սպանանելոցն ընդ նոսա իցեն, զայն ուստի՞ իմա-
ցար. «Դե՛ւք,- ասեն,- պատմեն թէ՛ ես այս անուան ուրուական
եմ», որ է յոյժ խարէութիւն եւ սատանայական մոլորութիւն: Ջի ո՛չ
եթէ ոգի վախճանելոցն՝ աղաղակէ, այլ դեւ կեղծաւորեալ յայնպի-
սի կերպարանս՝ առ ի սովորեցուցանել զայնոսիկ, որ ունկն դնեն
նոցա. զի թէ յայլ մարմին մարթ էր մտանել շնչոյն, եւս առաւել
յիւր մարմինն: Նաեւ ա՛յլ ազգ. զի շունչն, որ վնասեցաւ, իւրում
վնասողին գործակից ոչ լինի, եւ դարձեալ՝ անհնար է, թէ կարիցէ
մարդ զանմարմին գորութիւնն յայլ բնութիւն փոխել, զի թէ առ
մարմին այս ոչ լինիցի, ո՛րչափ անհնարին է զոգոյ բնութիւնն դի-
ւի առնել:

Եւ դարձեալ՝ զի հոգիք, որ ի մարմնոյ քակտիցին, աստէն ո՛չ
մնայցեն, զի թէ արդարք իցեն, ի ձեռին Աստուծոյ են՝ ըստ այնմ.
«Տէր Յիսուս, ընկալ՛ զոգի իմ» (Գործ. Է 58), եւ՝ «Աբրահամ յաւելաւ
առ հարս իւր» (հմմտ. Ծննդ. ԻԵ 8), եւ զՂազարոս ի զոգն Աբրահամու
հանգուցին՝, մանաւանդ տղայոցն, յորժամ մկրտեալք իցեն՝ ըստ
մարգարէին թէ՛ «Իբրեւ զաղաւնիս ձագախառն երամովին զան
առ Իս» (Եւ. Կ 8): Իսկ թէ մեղաւորք՝ եւ նոքա՛ նոյնպէս ի տեղոջ ու-
րեք արգելեալք կան, որպէս ասաց Տէր թէ՛ «Յայսմ գիշերի զոգիդ
ի քէն ի բաց պահանջեն» (Ղուկ. ԺԲ 20), եւ որպէս մեծատունն, զի մե-
ծագոյն աղաչէր, թէ թերեւս հնար լիցի երթալ եւ պատմել զամե-
նայն ինչ, որ անդն գործեցաւ, եւ ո՛չ եղեւ հնար⁴, այլ կան անդր եւ
ահագին Աւուրն սպասեն ի հանգիստս կամ ի տանջանս զոլով:
Արդ՝ զի զայսպիսի չարագոյն աղանդս ուսուցանէին մարդկան
դեւքն, յաղագս այսորիկ ի գերեզմանս արգելեալք կային՝ պաշա-

¹ Զ բարբաջանս

² Զ վախճանեցելոցն

³ Ղուկ. ԺԶ 22

⁴ Ղուկ. ԺԶ 27

րելով զճանապարհս անցաւորաց, զորս խափանել կամեցաւ Տէր, ընդ այն կազմեաց ճանապարհ, որում պատահեալ աղաղակեցին: Եւ երկրորդ՝ նշանակ իսկ էր, թէ որպէս մեռեալ մարմին[ք] ի գերեզմանի դնին, այսպէս եւ հոգիք նոցա մեռեալք էին մեղօք, վասն այնորիկ եւ մարմինք նոցա գերեզմանք եղեն դիւաց՝ ըստ այնմ թէ՛ «Նման էք գերեզմանաց բռելոց» (Մատթ. ԻԳ. 27), կորուսեալ զբանին իմաստ՝ զշարժումն միայն ի դիւաց ունելով, որ ըստ բնական ատելութեանն յիմարեցուցեալ զոգին՝ քարամբք կոծել տային եւ զմարմինն, որպէս ասէ Մարկոս¹, վասն որոյ եկն Տէր այց առնել ստեղծուածոց Իւրոց՝ հոգւոց եւ մարմնոց:

Եւ ահա աղաղակեցին եւ ասեն. «Ձի՞ կայ մեր եւ Քո, Յիսուս², Որդի՛ Աստուծոյ, եկիր տարածամ տանջե՞լ զմեզ» (Ը 29):

Աղաղակն ցուցանէ տանջանս ինչ կսկծագոյնս կրել ի ծածուկ յաստուածայինն զօրութենէ: Եւ դարձեալ՝ զոր նատորքն մարդ խոստովանէին, դեւքն աղաղակելով Որդի Աստուծոյ դաւանեցին, եւ որք ի ծովուն իրաց ոչ իմացան, ի դիւացն լուեալ զարհուրեցան, որք առ երկիրոյ բողոքէին. «Ձի՞ կայ մեր եւ Քո», այսինքն՝ ո՞ անհնազանդ է ի մէջ Քում աստուածութեանդ հրամանաց, մինչ զի ընդ տանջանօք արկանես: Եւ դարձեալ՝ վճիռ հատեալ է մեզ տանջանս կրել ի հանդերձեալն Օր, իսկ Դու յառաջի՛նդ գալուստ տարածամ տանջես. որպէս զի ասել. զի տանջելոց ենք, ստոյգ գիտենք, սակայն այս ոչ է՝ ժամանակ: Քանզի յաղագս անօրէնութեանցն ոչ կարացին ասել թէ՛ ոչ մեղաք, զի զստեղծուածս Նորա պէսպէս կտտանօք կտտէին եւ ի զողօնս իրեանց ըմբռնեցան. համարեցան, թէ չմնայ դատաստանի ժամանակին, վասն այնորիկ աղաչէին: Բայց յասելոցս յայտնի եղեւ, թէ յառաջինն միայն ի փառաց անկաւ, իսկ ի Քրիստոսի գալստեանն բնաւին ի զօրութենէ խափանեցաւ, եւ յերկրորդումն ըստ արդար իրաւանցն վրէժ մնին հատուցաւ: Իմանամք եւ ա՛յլ ազգ զասացեալս. քանզի յաղագս լրբութեանն կազ իմն դնէ ընդ Ստեղծողին իւրոյ թէ՛ «Ձի՞ կայ մեր եւ Քո, Յիսուս, Որդի՛ Աստուծոյ», այսինքն թէ՛ զի՞նչ կայ ի Քոյոցն առ մեզ, զի զտեղին եւ զշնորհս եւ զփառս առեր, եւ մեք բնութեամբ միայն մնացեալ, յաղագս այնորիկ ասպտամբեցաք ի

¹ Մարկ. Ե 5

² Ձ > Յիսուս

³ Ձ > է

Քէն, զի ո՛չ տանջիցիմք. զի հնազանդի՛ցն իւր ունի ոք իշխանութիւն տանջել եւ ո՛չ ապստամբիցն, որով յայտ արարին, թէ կամա՛ւ յիշխանութենէն Աստուծոյ արտաքս ելին, թէպէտ այնու ո՛չ զերծանին¹ ի տանջանացն:

Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից արօտական (Ը 30):

Եւ դեքն աղաչէին զՆա եւ ասէին. «Եթէ հանես զմեզ աստի, հրաման տուր մեզ երթալ յերամակ խոզիցն» (Ը 31):

Ընդէ՞ր աղաչէին. ինձ թուի, թէ զփորձ առին զօրութեան Նորա, զի մի՛ առաքեսցէ յանդունդս՝ պատատէին. զի թէ հրամայեալ էր, ո՛չ այլ ուրեք քան անդ[ր] ընթանային: Եւ երկրորդ՝ վասն այտորիկ ի խոզսն մտանել աղաչէին, զի ի դառնալն նոցա առ տեարս իւրեանց՝ մտցեն ի նոսա, եւ կամ ճաշակելով ի մտոյ նոցա՝ բնակեսցեն ի նոսա: Եւ երրորդ՝ ցուցանեն, թէ յոյժ փոյթ ունին մեծամարտի ընդ մարդկան եւ տանջել զնոսա, ո՛չ միայն ընդ արդարս, որպէս առ Յոր, այլեւ ընդ մեղաւորս, որպէս եւ այժմ խնդրեն: Եւ չորրորդ՝ թէ չունին իշխանութիւն առանց հրամանին Աստուծոյ ի խոզսն անգամ մտանել, թող թէ մարդկան բանականաց տիրել՝ ըստ այնմ. «Չանասունս նորա օրհնեցեր... աղէ արկ զձեռն Քո ի վերայ ստացուածոց նորա» (հմմտ. Յոր Ա 10-11), բայց թէ տիրեն՝ անողորմաբար չարչարեն որպէս զխոզսն: Հինգերորդ՝ զբարս իւրեանց յայտ արարին, թէ տղմասէրք են եւ ապականագործք եւ միշտ մեղօք զմայլին՝ ըստ այնմ թէ՛ «Ուտեն զկերակուր ամբարշտութեան եւ զինեաւ անօրէնութեան արբենան» (Առակ. 7 17):

Եւ ասէ ցնոսա՝ երթա՛յք: Եւ նորա ելեալ զնացին յերամակն խոզից, եւ դիմեաց ամենայն երամակն ի դարէ անտի ի ծովն, եւ մեռան ի ջուրսն² (Ը 32):

Հրամայելովն ո՛չ եթէ զցանկութիւն կամաց նոցա կատարեաց, այլ զի անտի յոլով իրս մատակարարիցէ: Նախ՝ զի մի՛ ստոյգ գիտասցեն զաստուածութիւն Նորա, որպէս եւ ոչ ի փորձութեանն ծանոյց զօրագլխի նոցա եւ ընկղմեաց յաղթութեամբ, այսպէս եւ ոչ զօրաց նորա, զոր հեղձոյց ի ջուրն, վասն այտորիկ ասաց՝ երթա՛յք, զի ի տարակոյս մատնելովն չարչարեսցին: Եւ երկրորդ՝ ընդդէմ եղեւ նոցա իրն, քանզի թոյլ տալովն ի խոզսն մտանել՝

¹ Զ զերծան

² Զ ջուրն

յանդուունդս ծովու եղեն հեղձեայք, զոր ոչ կամէին: Եւ երրորդ՝ զի գերծեայք ի չար բռնատրացն՝ ուսանիցին, թէ ո՛րպիսի չարիս խորհէին զնոցանէ, զի չար անցս ընդ նոսա քան ընդ խոզսն անցուցանէին, եթէ ոչ ի խնամոցն Աստուծոյ արգելեայք էին. որք ի միում նուագի զբնան ջրասոյգ արարին, նոյնպէս եւ զմարդիկ կամին, թէ զօրէին: Եւ չորրորդ՝ ի յառն զգաստութիւն, զի ո՛չ միայն հասարակաց խնամէ Աստուած, այլեւ առանձինն՝ ըստ այնմ թէ՛ «Ձեր եւ ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է» (Մատթ. Ժ 30), որպէս զի ի միտ առնուցու, եթէ ընդ խոզսն զայն գործեցին, ընդ նա, որ բազում ժամանակս յանապատի շրջեցուցանէին, զի՞նչ հանդերձեալ էին առնել, եթէ ոչ ի տեսութենէն Աստուծոյ պահպանեալ լինէր: Եւ հինգերորդ՝ զի այնու բնակիչք աշխարհին ուսանիցին զգօրութիւն Արարչին, զի ուր յայտնի էր անուն Նորա, ոչինչ կարի ցուցանէր նշանս, իսկ որք ոչն զհտէին եւ տակաւին յանմտութեան կային, անդ լուսատրագոյնս եւս փայլէր: Վեցերորդ՝ հեղձուցին զխոզսն ի ծովն, զի ամենայն ուրեք փութան տրտմութիւն անել ի վերայ եւ խնդան ընդ կորուստ մարդկան, որպէս զի այնու զայրացեալ բնակիչք աշխարհին՝ ելցեն եւ հալածեսցեն զՆա ի սահմանաց իրեանց, որ ընդ հակառակն եղեւ նոցա, զի Զրիստոսի վարդապետութիւնն պայծառացաւ, եւ դիւաց չարութիւնն խայտառակեցաւ: Եւ եօթներորդ՝ քանզի օտարատեաց զոլով գերգեսացոցն՝ ոչ ելին ընդ առաջ Նորա, հեղձոյց գերամակ խոզից նոցա՝ զդեւս ի նոսա առաքելով, որպէս զի յակամայ կամս ելցեն արտաքս եւ երկիրպագցեն զօրութեան Նորա, եւ լսիցեն զվարդապետութիւն Նորա:

Եւ խոզարածքն փախեան եւ երթեալ ի քաղաքն՝ պատմեցին զամենայն եւ զիրս դիւահարացն (Ը 33):

Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի (Ը 34):

Խոզարածքն յաղագս այնորիկ փախեան, զի մի՛ եւ ի նոսա՛ մտցեն դեւքն եւ ծովասոյգ արասցեն: Իսկ գերգեսացիքն թէպէտ ոչ կամէին զգալուստ Նորա, սակայն ի հարկէ իրացն բռնադատեայք եւ ի պատմութենէ հրաշիցն ըմբռնեայք՝ զրոհ տուեալ բոլոր բնակիչք քաղաքին՝ ելին մեծապէս պատուով ընդ առաջ Նորա:

Իբրեւ տեսին զՆա, աղաչեցին, զի գնասցէ ի սահմանաց նոցա:

Իբրեւ հասին ստուգութեամբ ի վերայ իրացն, մանաւանդ թէ որպէս լուան ի խոզարածիցն, այնպէս եւ տեսին, հալածեցին ի

գաւառէ իւրեանց զԱյն, որ կարօղ էր հալածել զդեւս յաշխարհէ անտի նոցա, քանզի պակեան բնակիչք երկրին այնորիկ, զի մի՛ երբեմն եւ զնոսա տանջեալ դիօքն ի ծով ամայեցէ: Եւ դարձեալ՝ զի հեշտաստրք էին եւ փափկակեացք, խորշէին ի Նմանէ, զի մի՛ վարդապետութեամբն եւ սքանչելին՝ հրաշիւք՝ զնոսին աշակերտեցէ եւ ի չարեացն ի բաց մերժեցէ՝ ըստ այնմ թէ՝ «Անզգամն ոչ լինի խօսակից իմաստնոցն» (հմմտ. Առակ. ԺԵ 12): Եւ դարձեալ՝ ոմանք վասն երկիրդածութեան ասեն աղաչել զնալ ի սահմանաց նոցա՝ ոչ արժանի համարելով զանձինս մեծամեծ շնորհացն այնոցիկ, որպէս Պետրոս ասէր. «Ի բաց գնա յինէն, Տէր, զի այր մեղաւոր եմ ես» (Գով. Ե 7), եւ հարիրապետն. «Չեմ արժանի, եթէ ընդ յարկաւ իմով մտցես» (Մատթ. Ը 8):

¹ Զ սքանչիցն

ԳԼՈՒԽ Թ

Եւ մտեալ ի նաւ՝ անց յայնկոյս եւ եկն ի քաղաք Իւր (Թ 1):

Ոչ ի հեթանոսս միշտ առնէր զընթացս Իւր, այլ այնչափ միայն, զի նախանձ արկցէ նոցա՝ ըստ այնմ. «Անմիտ ազգաւ զկծեցուցից զնոսա» (Հոմմ. Ժ 19): Իսկ «քաղաք Իւր» զԿափառնաում կոչէ, զի ծնաւ ի Բեթլեհեմ¹ եւ սնաւ ի Նազարեթ² եւ զընակութիւն Իւր միշտ ի Կափառնաում առնէր:

Եւ ահա մատուցին առ Նա անդամալոյծ մի, որ դնէր ի մահիճս (Թ 2):

Անդամալոյծս այլ է, թո՛ղ զայն, որ Յովհաննէս ասէ, զի նա առ առազանաւն անկեալ դնէր յԵրուսաղէմ³, եւ սա ի Կափառնաումն էր. եւ նորա երեսուն եւ ութ ամ էր հիւանդութեանն, իսկ զամանէ ոչինչ այնպէս ճառէ. եւ նա ոչ ունէր զոք օգնական, եւ սորա գոյին խնամակալք, քանզի եւ բարձեալ իսկ մահճօք բերէին, որպէս եւ Մարկոս ասէ, թէ քակեցին զառաստաղն եւ իջուցին առաջի Նորա⁴: Քանզի բազում իսկ տեսողք շուրջ կային, վասն այնորիկ ի վերուստ ի վայր կախեցին, բայց խօսեցան ոչինչ ընդ Նմա, զի զամենայն ինչ ի Նա ապաստան արարին:

Եւ տեսալ Յիսուսի զհաւատս⁵ նոցա՝ ասէ ցանդամալոյծն. «Թողեա՛լ լիցին քեզ մեղք քո»:

Տես սատ, թէ հաւատք այլոց ի յայլս զինչ գործեն, քանզի ի նմանէ ոչ պահանջեաց հաւատս, զի շինուած էր նա խախտուտ, որպէս եւ ոչ ի միամօրէ անտի խնդրեաց, այլ ի հօրէ նորա⁶, եւ ոչ յաղջկանէն, այլ ի մօրէն, զի ասաց թէ՛ «Շունք յագին ի փշրանաց [անկելոց ի սեղանոյ տեսոն իւրեանց]» (Իսմմ. Մատթ. ԺԵ 27). այսպէս եւ աստ: Նաեւ առ այս իւր իսկ ինքեան գոյին հաւատք, ապա թէ ոչ՝ զհա՞րդ յանձն առնոյր կախել զձեղուանէն, վասն այսորիկ ասէ. «Թողեա՛լ լիցին քեզ մեղք քո»: Նախ՝ զաստուածական զօրու-

¹ **ՏԶ** Բեթլեհեմ (այսպէս է և այլուր. Բեթլեհեմ / Բեթլէմ դարձրել ենք Բեթլեհեմ):

² **ՏԶ** Նազարեթ (այսպէս՝ ամենուր):

³ Յովհ. Ե 2-15

⁴ Մարկ. Բ 4

⁵ Զ հաւատ

⁶ Մատթ. ԺԵ 14-21, Թ 14-29, Դուկ. Թ 37-43

թիւնն Իւր¹ ծանուցանէ, թէ եւ անյայտիցն է գիտակ, որպէս եւ յաջորդաւ գտոյն հաստատէ: Եւ երկրորդ՝ թէ ի պատճառս մեղաց ունին ցաւք զմարմինն նորա, վասն այսորիկ նախ զմեղսն թողու, զի եւ մարմինն առողջասցի: Եւ երրորդ՝ հանգիտապատիւ ցուցանէ զԻնքն Ծնողին Իւրում՝ թողով զմեղս: Եւ չորրորդ՝ զի քաւեաց եւ բժշկեաց զնա, քաւեաց զծածուկ մեղս նորա եւ բժշկեաց զյայտնի մարմինն նորա, եւ հաւատարիմ եղև վասն ծածկելոյ մեղաց նորա, թէ Աստուած է ի ծածուկ եւ մարդ է յայտնի՝ վասն արտաքին մարմնոյ նորա, զի առողջացոյց: Եւ հինգերորդ՝ զի ցուցցէ, թէ չէ՛ Նա օտար Օրինացն, քանզի զի՞նչ պարտ էր նա², եւ կամ զո՞ր մեղս նմա թողոյր, եթէ ոչ՝ զՕրինացն, զի պարտական էր նորա:

Եւ ահա³ ոմանք ի դպրացն ասեն ընդ միտս. «Հայհոյէ՛ Դա» (Թ 3):

Ո՛չ ամենեքեան, այլ որք նախանձու վառեալ էին՝ խռովէին, բայց պակուցեալք ի բազում հրաշիցն՝ ոչ յայտնի, այլ ի միտս իւրեանց տրտնջէին եւ զիրն հայհոյութիւն կոչէին եթէ՝ «Ո՞ կարէ թողուլ զմեղս, բայց Աստուած», - ասէին, քանզի այնպէս կարծէին լսողքն, թէ Ինքն զԻւր անձն յարգիցէ. վասն որոյ զայս կարծիս ոչ լուծանէ, այլ իմաստութեամբ հաստատէ, թէ յաղագս այնորիկ թողու, զի Աստուած է:

Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. «Ընդէ՞ր խորհիք դուք չարիս ի սիրտս ձեր (Թ 4):

Յոյժ ծանօթութիւն տայ ճշմարիտ աստուածութեանն՝ ճանաչելով զսիրտս նոցա՝ ըստ մարգարէին եթէ՝ «Դու՛ միայն իմանաս զսիրտս մարդկան» (հմմտ. Գ Թագ. Ը 39), եւ՝ «Որ քննէ զսիրտս եւ զերիկամունս՝ Աստուած է» (Մաղմ. Է 10), եւ Երեմիաս թէ՝ «Ծանր է սիրտ [քան] զամենայն, եւ... մարդ է, եւ ո՞ ծանիցէ զնա» (հմմտ. Երեմ. ԺԷ 9), որով եցոյց, թէ Աստուած է: Ապա եւ այլով իւրք գտոյն հաստատէ եւ ի ձեռն նշանին զնոսին յանդիմանէ, եթէ յայտնի զօրութեամբն եւ ծածուկ թողութեանն հաւատայցէք, զի նոյն իշխանութիւն, որ զախտսն բուժէ, նաեւ զմեղսն հալածէ: Իսկ ասելն թէ՝ «Չի՞ խորհիք չարիս ի սիրտս ձեր», նախ՝ ցուցանէ զչարութիւնն կամացն գոյ, վասն որոյ եւ ընդ դատաստանաւ է, եւ երկրորդ՝ չարութիւն

¹ Գ > իւր

² Տ նմա

³ Գ > ահա

գորտունջն ասէ եւ կամ զայն, զի հայիոյեցին թէ՛ «Ո՞ է Դա», զի որ զԱստուած յաստուածութենէն զրկէ, յոյժ չար է, հաւասար այնն, որ զքարն աստուածացուցանէ:

Ձի՞նչ դիւրին է ասել՝ «Թողեալ լիցին քեզ մե՞ղք քո», թէ՞¹ ասել՝ «Արի՛ եւ շրջեա՛ց» (Թ՝ 5):

Այդ՝ վասն զի չարեօք զգածեալ էին եւ ոչ կամէին զիրսն ի վեր հանել, եւ թէպէտ չկամէին, սակայն զնոյն կազմէին, իսկ Ամենագէտն զնախանձ նոցա հարցմամբս ի կիր արկանէ թէ՛ «Ձի՞նչ դիւրին է», այսինքն՝ ձեզ դիւրին է զմարմին լուծեալ՝ պնդեալ տեսանել եւ ոչ զոգոյ մեղսն թողուլ: Այդ նախանձ իսկ է երկակողմանի. մի՛ առ այրն՝ զի ոչ կամիք փրկութեան նմին հասանել եւ ազատիլ՝ ի պատճառէ իրացն, վասն որոյ հիւանդացեալն է, եւ երկրորդ՝ առ Իս՝ զի մի՛ աստուածութիւնս Իմ հրատարակիցի: Բայց եւ երկոցունց ընդդէմ առնելոց են. նախ զոգոյ զմեղսն թողուլ ախորժեն, որպէս զի լաւագոյն է քան զմարմին, նոյնպէս եւ մեղացն թողութիւն զերագոյն է մարմնոյն պնդութեան, եւ ապա զմարմինն, զի երեւելի մարմնոյն առողջութեամբ եւ աներեւոյթ հոգին առջէ զիր արդեանցն հանդէս, որով եւ իշխանութիւն աստուածութեանս Իմոյ ծանկցի: Եւ այլ ազգ. մարմնոյ բժշկութիւնն, ասէ, ինձ յոյժ դիւրին է քան զմեղաց թողութիւնն, որ է հոգեկան առողջութիւն, բայց զի զմարմինն եւ ներհնուտ բժիշկք բժշկեն եւ բազումք ի սրբոց արանց առողջացուցանեն, այլ Ես զհոգին բժշկել խնդրեն: Է՞ր վասն:

Այլ զի գիտասցիք, եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս» (Թ՝ 6):

Միթէ յերկինս ո՞չ ունիցի. ո՛չ զայս ասէ, այլ թէ յերկինս քաջայայտ է հրեշտակացն առնել զոր կամիմն իշխանաբար, իսկ ազգաց երկրատրաց, առ ի չճանաչելոյ զԻս, տակաւին ոչ է յայտնի, եւ կամիմ, թէ եւ սոցա՛ ծանկցի, թէ Որդի մարդոյ, յոր զայթազդիքս ի ձեզ մարմնոյս, Որդի Աստուծոյ է՝ թողոյ մեղաց պարտատրաց: Բայց դու տե՛ս զիմաստսն, զի ո՛չ ասաց՝ իշխանութիւն ունի Որդին Աստուծոյ յերկրի թողուլ զմեղս, այլ թէ՛ Որդի մարդոյ՛, որով զան-

¹ Զ եթէ

² Զ ազատել

քակ եւ զանորոշ մարդն, որ ընդ Աստուած Բանն էր միատրեալ¹ անշփոթաբար, նշանակեաց, զի որ էառ մարմին, ոչ հրաժարեաց ի մարդոյն եւ «Որդի մարդոյ» ասաց զԻնքն վասն Ադամայ եւ Կուսին, այլեւ զբոլոր մարդկութիւնն զգենլով՝ զբոլորն սրբեցէ:

Յայնժամ ասէ ցանդամալոյծն. «Արի ա՛ն զմահիճս քո եւ ե՛րբ ի տուն քո»:

Որպէս ասացաւ, առ ի հաստատութիւն հոգեկան առողջութեանն կազդորեաց եւ զմարմին, որով եցոյց, թէ Նա՛ է, որ զթոյլ եւ զծանր բնութիւն հողոյ ստեղծեաց խօսուն բանական եւ եղ ի յերկրի եւ կենդանաստեղծէ զլուծեալ սերման զօրութիւն նախախնամական բանի յարգանդ կնոջ հրաշալի իմն գոյացութեամբ, եւ զհողացեալ բնութիւնս կրկին ձուլմամբ ձուլեաց եւ «նորոգելոց է յարութեանն շնորհիւ զխոնարհութիւն մարմնոյ մերոյ՝ կերպարանակից առնել աստուածութեան փառաց Իւրոց» (հմմտ. Փիլյ. Գ 21)² ըստ այնմ թէ՛ «Մշտնջենաւոր է՝ Որ լուծանելոց է զիս յերկրի՝ յարուցանել զմորթ իմ, որ կրեաց զայս ամենայն» (Յոր ԺԹ 25-26) բանի միայնոյ, որպէս ասէ թէ՛²

Եւ՝³ յարուցեալ գնաց ի տուն իւր (Թ՝ 7):

(ի փառս դրախտին)

Իսկ առ ի միտս՝ հոգի մաշեալ ի մեղաց՝ լուծանի ի պնդութենէ արիականն մասինն եւ հեշտացեալ ի յօրացմունս մարմնականս իբր ի մահիճս, որ բարձեալ է ի չորից հիւթոց, իսկ եթէ պատահեսցի բանի խրատու աւետարանական վարդապետութեան՝ եւ հաւատացեալ Ասողիճ՝ թէ՛ «Ասա զմեղս քո, զի արդարացիս» (Եւ. ԽԳ 26), եւ կամ բանին առաքիւնութեամբ խոհականն մասամբ զգաստացի, յայնժամ յարուցեալ կանգնի սպաշխարութեամբ ի մեղաց ախտից՝ ի մահճէ մարմնոյ իւրոյ, եւ երթիցէ ի տուն իւր՝ յիմաստութիւն եւ յարիութիւն, յողջախոհութիւն եւ յարդարութիւն՝ ընդ իւր տանելով եւ զմարմինն՝ ի պէսպէս գործս առաքիւնութեան արձանացուցանել:

Իբրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան եւ փառաւոր առնէին զԱստուած զՏուիչն այնպիսի իշխանութեան՝ մարդկան (Թ՝ 8):

¹ Զ ներմիաւորեալ

² Զ > թէ

³ Զ > եւ

⁴ ՏԶ Ասողէն

Տես, թե որպիսի իրօք հաստատե՞լ զիրան՝ ոչ միայն բարեկամօք, այլև թշնամեօք. բարեկամօք՝ որպէս բորոտիւն եւ հարիրապետիւն, եւ թշնամեօք՝ հայիոյջօքն, որք տեսեալ զնշանսն՝ ի գարմացումն եկին՝ քննելով ի միտս իրեանց, թէ գուցէ որ զայս առնիցէ, Աստուած իցէ, զոր նախ ասեաք՝ հայիոյէ: Եւ այսպէս փառատոր առնէին զԱստուած, զի թէպէտ ոչ կատարելապէս ծանեան, սակայն առ սակաւ սակաւ յառաջ գային ի հաւատս՝ այժմ կարծելով յԱստուծոյ գոյ զՆա եւ գեր քան զամենայն մարդիկ ընկալեալ իշխանութիւն ի վերայ մարդկան ախտից, եւ փոքր ինչ յետոյ՝ Որդի Աստուծոյ:

Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՝ ետես այր մի, զի նստէր ի մաքսաւորութեան, Մատթէոս անուն, եւ ասէ ցնա. «Ե՛կ զկնի Իմ»: Եւ յարուցեալ գնաց զկնի Նորա

(Թ՝ 9):

Յորժամ արար զնշանսն, ո՛չ անդրէն առ զտեղի, զի մի՛ նախանձն բորբոքիցի, այլ խոյս տալովն շնորհէր փոքր ինչ նոցա միսիթարութիւն: Նաեւ յաղագս հարկաւոր իրաց երթայր՝ զի զաշակերտն¹ կոչիցէ, որպէս ասէ, թէ ի յանցանելն կոչէ զՄատթէոս. զի յորժամ սերմանքն բեղմնաւորիցին եւ ըստ մտի իցէ, մշակի պէտս ունիցի: Եւ այս եղև յանցանելոյն, քանզի թէ ոչ էր անցեալ, ոչ էր տեսեալ, եւ թէ ոչ էր տեսեալ, ոչ էր կոչեալ, եւ թէ ոչ էր կոչեալ, ոչ էր զհետ ընթացեալ, ասպա ուրեմն՝ գնալն ի կոչելոյն եղև, եւ կոչելն՝ ի տեսանելոյն, եւ տեսանելն՝ ընդ այն անցանելոյն: Աստի վարժեալ Պօղոս ասէ. «Զիա՞րդ հաւատասցեն, եթէ ոչ լուիցեն, եւ զիա՞րդ լուիցեն, եթէ ոչ քարոզեսցեն, եւ զիա՞րդ քարոզեսցեն, եթէ ոչ առաքեսցին» (Խմմտ. Հոմ. Ժ 14-15). յամօք այնոցիկ, որք ի միում տեղուք նստելով՝ եւ կամիցին զբազումս շահել: Բայց ընդէ՞ր ընդ Պետրոսի եւ ընդ՝ Յովհաննու ոչ կոչեաց³, այլ այժմ. կամ թէ կարգ կոչմանն այնպէս դիպեցաւ, կամ թէ յորժամ իմացաւ, թէ անսալոց են, յայնժամ կոչէ, որպէս զՊօղոս զկնի ամի միոյ՝⁴: Այլ զի՞նչ է թէ՛ «ետես». ոչ զգալի տեսութեամբ միայն, այլ իմանալի աստուածեղէն զօրութեամբն:

Իսկ «նստէր»-ն, այսինքն՝ հեշտացեալ յօրանայր ի մաքսաւոր-

¹ Զ զաշակերտսն

² Զ > ընդ

³ Մատթ. Դ 18-22

⁴ Գործք Թ

րութիւնն իբր ի մահիճս, եւ անտի կոչեաց, որպէս զի այնու՝ Կոչողին զօրութիւնն ծանիցի, քանզի ոչ էր ցածուցեալ կամ մերժեալ յայնպիսի չարութենէ, այլ անդէն իսկ ի միջոյ չարեացն արտաքս կորզեաց, որպէս զՊօղոս՝ զմոյին եւ զկատաղին: Եւ զոր օրինակ տեսեր զԿոչողին զօրութիւն, իմա եւ զկոչեցելոյն հնազանդութիւն, զի ոչ յապաղեաց կամ յերկմիտս եղել, այլ վաղվաղակի թողեալ զամենայն՝ զնաց զկնի Նորա: Որպէս ձկնորսքն զուռկանն եւ զնաւն եւ զհայրն, նոյնպէս եւ սա՛քակէր զանձն յերկրաւոր իրաց եւ չոգաւ զհետ երկնաւոր կոչմանն՝ թողեալ ոչ միայն զշահս մաքսաւորութեանն, այլեւ զվտանգսն անտես արար, որ հանդերձեալ էր զայլ ընտանեաց նորա յիշխանութեանց անտի վասն անկատար զհամար մաքսիցն թողոյ. իբրու վկայ լինել դիպօղ ժամանակին՝ կոչեաց: Նաեւ կոչելովն զՄատթէոս՝ նշանակէ զհաճոյս գոլ յիրաքանչիւր արուեստէ, յորժամ առ Տէր դարձցին միամիտ սրտիւ՝ ըստ այնմ. «Օրէնսզէտ առնէ զնա ի ճանապարհ, յոր եւ հաճեցաւ» (Մատթ. ԻԳ 12), եւ այլուր թէ՛ «Ի ճանապարհի առն զոցէ զնա» (Յոր ԼԳ 11):

Եւ եղև իբրև բազմեալ էր Նա ի տանն, եւ ահա մաքսաւորք եւ մեղաւորք եկեալ եւ բազմեալ էին ընդ Յիսուսի եւ ընդ աշակերտս Նորա (Թ 10):

Ինձ թուի, թէ խոնարհութեամբն Իւրով, զի բազմեցաւ ի տանն նորա, աժ զնա յաշակերտութիւն, նաեւ սեղանակցելով առ նմա՝ մեծաւ պատուով մեծարեաց եւ ի հանդերձեալն՝ վստահութիւն նմին կազմեաց: Իսկ մաքսաւորք եւ մեղաւորք ժողովեալ, որք արուեստակից՝ էին Նորա, կոչեցեալ՝ ի նմանէ տեսանել զԱռն ցածութիւն, միանգամայն եւ զՏեսառն մարդասիրութիւն, որ ոչ խորշեր ի նոցանէ, որպէս դպիրքն եւ փարիսեցիքն, այլ ընդ նոսա ճաշելովն շահէր զնոսա՝ ըստ նմանութեան ճարտար բժշկաց, զի ընդ թարախն զայլով վիրացն՝ ապաքինեն զնոսա յախտէն, վասն որոյ ըստ կարգի բազմեալք էին՝ գլխաւորք ընդ գլխաւորն, իսկ սպասաւորքն ընդ սպասաւորսն, կամ ընդ Յիսուսի աշակերտքն էին բազմեալ, եւ զկնի աշակերտացն՝ նոքա՝ սակս պատուոյ եւ հնազանդութեան: Դարձեալ՝ ուսանիմք, թէ ոք մեղաւոր իցէ եւ զղջա-

¹ Տ կոչման

² Տ արուեստաւորակից

³ Ձ կոչեալ

ցեալ յապաշխարութիւն գայ, ոչ է արտաքոյ կարգի եւ թուոյ Տեառն եւ աշակերտաց Նորա:

Իբրեւ տեսին փարիսեցիքն, ասեմ ցաշակերտս Նորա. «Ընդէ՞ր ընդ մաքսաւորսն եւ ընդ մեղաւորս ուտէ Վարդապետն ձեր» (Թ 11):

Նախ՝ նախանձ ընդ մեղաւորացն փրկութիւն ի միտս իւրեանց բերէին, որ գործ է սատանայի: Եւ երկրորդ՝ ամենեւին զքակտելն ի միմեանց յօժարէին փարիսեցիքն, քանզի ոչ ի հրաշիցն եւ ոչ ի բանիցն պատկառէին, այլ մերթ զՎարդապետն առ աշակերտսն բամբասէին, եւ մերթ զաշակերտսն առ Վարդապետն թէ՛ «Ահաւասիկ աշակերտքն Քո գործեն գոր չէ՛ օրէն գործել ի շարաթու» (Մատթ. ԺԲ 2), եւ այսպիսի մեղմեխանօք որոշել կամէին զգութ Վարդապետին յաշակերտացն, որպէս եւ այժմ զաշակերտացն ի Վարդապետն հնարին, որպէս թէ ասել. «Թէ արդար իցէ Վարդապետն ձեր, ոչ պարտի առ մեղաւորսն ճաշել, իսկ թէ մեղաւոր՝ ոչ է արժան ձեզ Նմին աշակերտել»:

Իսկ Յիսուս իբրեւ լուս, ասէ ցնոսա. «Ո՛չ է պիտոյ բժիշկ կարողաց, այլ հիւանդաց (Թ 12):

Տես սատանօք զբարեմտութիւն աշակերտացն, թէ որպէս յայտնեցին Վարդապետին զքրթմնջիւն նոցա եւ ոչ ծածկեցին կամ ի բաց գնացին ըստ նոցա կամացն, այլ ի մէջ բերելովն ուսանել կամեցան զխորհուրդ իրին: Քանզի զԱյն, որ քան զՕրէնս գեր ի վերոյ էր Նա արդարութեամբ, քաջ գիտէին, բայց թէ ընդէ՞ր ընդ մեղաւորս ուտէր, այնմ տեղեակ ոչ էին: Վասն որոյ անգրական Իմաստութիւնն թէպէտ գիտէր զխորհուրդս նոցա, բայց յորժամ յայտնեցին, ուսուցանէ ոչ միայն զաշակերտսն Իւր, այլեւ զփարիսեցիսն, թէ չմերձենալ յայնպիսիսն անարժանութիւն է մարդասիրութեան Նորա, իսկ մերձենալն ոչ միայն չէ վնաս, այլեւ ուղղութիւն մեծ եւ պէտք կարեւորք, որպէս զի այսու սփոփիցէ զկոչնականսն եւ պատկառեցուցանէ զտմարդի բարս փարիսեցուցն եւ ազատէ ի կարծեաց զմիտս աշակերտաց Իւրոց: Նաեւ զվաղնջուց մարգարէութիւնն ի մէջ բերէ, որ վասն Նորա ասացաւ թէ՛ «Ծագեցից երկիւղածաց Իմոց արեգակն արդարութեան, եւ բժշկութիւն ի թեւս Նորա» (հմմտ. Մատթ. Դ 2), զի որպէս մարմնոյ բժշկութիւն, այսպէս եւ մտաց լուսաւորութիւն:

Երթայք ուսարուք զի՛նչ է՝ «Չողորմութիւն կամիմ եւ ո՛չ զգոհ»¹, զի ո՛չ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս» (Թ՝ 13):

Եռակի ձեռով հաստատէ զբանն. նախ՝ պիտոյիւքն, զի հիւանդք ունին պէտք բժշկի, եւ երկրորդ՝ մարգարեական բանիւն թէ՝ «Չողորմութիւն կամիմ եւ ո՛չ զգոհ»² (Ովտ 2 6), եւ երրորդ՝ գալստեամբ Իրով, զի ո՛չ վասն արդարոց, այլ վասն մեղաւորաց եկի յաշխարհ: Բայց ահագին բարբառովն թէ՝ «Երթայք ուսարուք զի՛նչ է», ցուցանէ անտեղեակս եւ տգէտս զնոսա գոյ մարգարեական տառիցն եւ կարօտս ուսման: Նաեւ զայն, թէ ո՛չ Ինքն արտաքոյ Օրինացն գործիցէ, այլ նոքա՛, զի թէ Ինձ մեղ դնէք, վասն զի զմեղաւորս յողորմութիւն ածեն, ապա եւ Հօր, զի Նա ասաց Ովսէ՛՜ մարգարեիւն թէ՝ «Չողորմութիւն կամիմ եւ ո՛չ զգոհ»⁴, այսինքն՝ քան զգոհ⁵ ի գրկանաց վշտակից լինել ընկերաց՝ կամք են Աստուծոյ. արդ՝ գոր Նա կամի, եւ Ե՛ս: Եւ դարձեալ՝ ցուցանէ, թէ խոտեալ են Հինքն, որ անաչառ դատեր զմեղաւորս, եւ յարգեալ են Նորքս, որ ողորմութեամբ քաւէ զյանցաւորս, եւ զայս մարգարեականն կնքէ բանիւ: Իսկ այն թէ՝ «Ո՛չ եկի կոչել զարդարս»⁶՝ ո՛չ թէ նոքա արդարք էին, այլ հեզնէ զնոսա՝ ըստ այնմ թէ՝ «Ահա Ադամ եղեւ իբրեւ զմի ի Մէնջ» (Ծննդ. 4 22): Բայց ասիցէ ոք, թէ զարդարս ո՛չ կոչեաց. ասացուք, թէ ընդդէմ փարիսեցւոցն ասաց զայս: Նաեւ այլ ազգ. զի ո՛չ գոյր արդար յերկրի՝ ըստ այնմ. «Ո՛չ ոք է արդար եւ ո՛չ մի» (Հռմ. 4 11, հմմտ. Սաղմ. ԺԳ 3), եւ թէ՝ «Ամենեքեան մեղան եւ նուազեցան ի փառացն Աստուծոյ» (Հռմ. 4 23), որով յայտ է, թէ եւ նոքա՛ ընդ մեղօք անկեալ էին, եւ զի այնչափ չգարշի ի մեղաւորաց, մինչ զի վասն նոցա միայն եկն: Բայց զի մի՛ ծուլասցին, յաւելու Ղուկաս զապաշխարութիւնն⁷, որպէս զի ո՛չ նոյնպէս մեղաւորք կացցեն՝ ի շնորհն միայն վստահանալով, այլ զի ի լաւութիւն անդր դառնայցեն: Լսի եւ այսպէս⁸. «Ո՛չ եկի կոչել ո՛չ միայն զարդարս, այլեւ զմեղաւորս»: Նաեւ այսու զուարճացոյց զհրեշտակս, որոց «ուրախութիւն է յերկինս վասն միոյ մեղաւորի, որ⁹ ապաշխարի-

¹ Զ զոհ

² Զ զոհ

³ ՏԶ Յովստ

⁴ Զ զոհ

⁵ Զ զոհ

⁶ Զ զարդարս, այլ՝

⁷ Ղուկ. Ե 32

⁸ Զ այսպէս թէ

⁹ Զ զի

ցէ» (Ղուկ. ԺԵ 7), եւ տրտմեցոյց զԲանասարկուն, զի նուաճեցան ապստամբքն, եւ հնազանդեցան հեթանոսք, եւ արդարացան մեղաւորք, իսկ փարիսեցիքն միայն ամբոխեալ. յայտ յաջորդէ՛ս է:

Յայնժամ մատեան առ Նա աշակերտքն Յովհաննու եւ ասեն. «Ընդէ՞ր մեք եւ փարիսեցիքն պահենք յաճախ, եւ Քո աշակերտքդ ոչ պահեն» (Թ 14):

Նախ զՎարդապետն առ աշակերտսն բամբասեցին եւ այժմ գաշակերտսն առ Վարդապետն: Բայց Ղուկաս գտսա փարիսեցիս ասէ¹, իսկ սա՝ աշակերտք Յովհաննու: Արդ՝ կամ ի փարիսեցւոցն էին աշակերտեալ Յովհաննու, կամ թէ երկոքեան կողմանքն նախանձ ընդդէմ էին աշակերտացն Յիսուսի, որք նուազեալք ի պատասխանոյ՝ առնուին զնոսա ընդ իրեանս որպէս յետոյ զՀերովդիանոսսն: Եւ թէպէտ Յովհաննէս բազում անգամ խրատեր զինքն նուաստ գոյ եւ զՆա զօրագոյն, ոչ հաւանէին, զի կարծէին վասն խոնարհութեան ասել զայն. վասն որոյ այժմու հարցուածոյս՝ անպատասխանիս կարծէին լինել, որով գաշակերտսն Յիսուսի յինքեանս յաւելուցուն: Իսկ միտք հարցուածոյն այսպիսի է. գրեսջիր, թէ Դու իբր զրժիշկ առնիցես զայդ, իսկ աշակերտքն Քո ընդէ՞ր թողեալ զպահս՝ առ սեղանովն ջերանիցին: Այլ թէ ուստի՞ էին ուսեալ տքա զպահսն, յայտ է, թէ ի Յովհաննէ, իսկ փարիսեցիքն՝ յՕրինացն, որպէս ասէր. «Պահեմ երկիցս ի շաբաթոյ» (Ղուկ. ԺԷ 12): Բայց տքա վասն ճոխ համբաւուն Յովհաննու հպարտացեալք՝ զանձինս նախ եղին եւ ապա՝ զփարիսեցիսն, զի համեմատութեամբն զբամբասանս աճեցուցանել կամէին. «Ընդէ՞ր մեք եւ փարիսեցիքն պահենք յաճախ», այսինքն՝ կամ լոյժ եւ զմերս, զի այնու օրինազանց գրէին, եւ կամ հրամայեա պահել Քոյոցդ, որոց ի դէպ պատասխանէ:

Ասէ ցնոսա Յիսուս. «Միթէ մա՞րք ինչ² իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ, մինչ Փեսայն ընդ նոսա իցէ, այլ եկեցեն ատորք, յորժամ բարձցի ի նոցանէ Փեսայն, եւ ապա պահեսցեն» (Թ 15):

Չամենայն ժամանակս, որ եղեւ Տէր մեր յաշխարհի, «առագաստ» անուանեաց եւ զԻնքն «փեսայ» կոչեաց, զի զանճառ խորհուրդն, զոր կատարեաց ի ծննդենէն մինչ ի համբարձումն, այսու

¹ Ղուկ. Ե 30, 33

² Զ > ինչ

անուամբ յայտնեաց: Միանգամայն եւ զքարոզութիւնն Յովհաննու ի յուշ էած թէ՝ «Որ ունի հարսն, նա է փեսայ» (Յովհ. Գ 29), եւ՝ «Բարեկամք փեսային ուրախութեամբ լսեն նմա» (հմմտ. Յովհ. Գ 29), որով զարթոյց զլսողութիւն աշակերտացն Յովհաննու ի քարոզութիւն վարդապետին իրեանց: Նաեւ այլ ազգ. զի նախ բժիշկ եւ այժմ՝ փեսայ, քանզի օրինակաւ¹ իմն եւ փեսայն տրտմութեան է բուժիչ, իսկ պահք սոյ է նշանակ: Ապա ուրեմն ցորքան Փեսայն ընդ նոսա իցէ, ուրախութեան է ժամանակ, մի՛ գտրտմականսն, ասէ, յառաջ բերէք զպահս, զի զայդ մուտն Յովհաննու քարոզեաց՝ հանդերձիւն եւ կերակրովն՝ զմեղս ձեր նշանակելով, որով յապաշխարութիւն կոչէր: Իսկ Ես, զի բարձօղ եմ մեղաց ըստ նորայն ձայնի, ոչ պարտին փեսաւերքս Իմ գտրտմական կիրս զգնուլ, այլ զգնծութեան. բայց ոչ ըստ ինքեան ախտարակաց տրտմականք իցեն պահքն, այլ կամ վասն ժամանակին, որպէս ասացաւ, եւ կամ պահողացն հիւանդամտութեան: Իսկ որք զգաստանալն կամին, կարի յոյժ քաղցր են իրքն, վասն որոյ ի վերայ բերէ թէ՝ «Յորժամ բարձցի, ապա պահես[ցեն]»: Չի ոչ վասն որկորստութեան էին իրքն, այլ տեսչութիւն վասն ժամանակին. իսկ յորժամ այն անցանէ, ասէ, պահեսցեն:

Եւ դարձեալ՝ զի աշակերտքն Յովհաննու մեծագոյն զիրն վարկանէին եւ պահօք վարդապետին իրեանց մեծամտէին, զչարչարանս իր ի մէջ բերէ, զի զնոցա հպարտութիւնն ցածուցանէ. «Յորժամ բարձցի», ասէ, ոչ միայն ի խաչ, այլեւ յերկինս, որ վեհագոյն է քան զպահոց պնդութիւն. բայց զյարութենէն ոչինչ ճառեաց, զի չէր տակաւին ժամանակ զվեհագոյն քան զընութեան իրս ծանուցանել: Եւ դարձեալ՝ զաշակերտսն Իւր զգաստացուցանէ, զի յորժամ լինիցի, մի՛ երկմտիցեն, թէպէտ թախծեալք² տրտմութեամբ մահուն զանձինս պահօք ճնշեսցեն, այլ զմտաւ ածեալ զՆորա կանխասաց վարդապետութիւնն՝ զուարթացին յուսով, որպէս եւ եղեւ իսկ, զի յետ համբառնալոյն պահէին ուրախութեամբ՝ ըստ առաքելոյ. «Ի պահս եւ ի սրբութիւնս» (հմմտ. Բ Կոր. 2 5-6), եւ թէ՝ «Ի պահս՝ բազում անգամ» (Բ Կոր. ԺԱ 27):

Բայց քննելի է, թէ է՞ր վասն զԻնքն «փեսայ» անուանեաց: Նախ՝ վասն մարմնոյն, զի Բանն Աստուած հարսնացոյց զմար-

¹ Զ օրինակ

² ՏԶ թաղծեալք

մինն՝ միատրեյով ընդ Ինքեան ըստ օրինի փեսայի եւ հարսին, եւ եղև յերկուց կատարեալ յեութեանց մի կատարեալ Անճնատրութիւն՝ նոր խառնմամբ եւ անշփոթ միութեամբ, յորոյ երկանց չարչարանաց խաչին ծնաւ ազգ մի ողջոյն միանգամայն: Եւ երկրորդ՝ զի ցուցցէ, թէ նոր Ադամ եղև փոխանակ հնոյն եւ ի կողից Իւր կրկին վտակաց շինեաց զԵկեղեցի, որպէս զԵւա՝ ի կողէն Ադամայ. եւ եթող զՀայր յերկինս եւ զմայրն լալագին առ խաչին եւ չոգաւ զկնի հարսին Եկեղեցոյ ի մահ եւ ի դժոխս, որով վերածեալ՝ միատրեաց հաւատովք առ Ինքն զադամական բնութիւնս՝ ըստ այլնս. «Մոռա՛ զժողովորդ քո..., զի ցանկացաւ Թագաւոր գեղոյ քո» (Մատթ. ԽԳ. 11-12), եւ թէ՛ «Իբրո՞ւ զհարսն զարդո՞ւ զարդարեաց զիս» (Եւ. ԿԱ 10), եւ թէ՛ «Խորհուրդս այս մեծ է՞, բայց ես ասեմ ի Քրիստոս եւ յԵկեղեցի» (Եփես. Ե 32), եւ թէ՛ «Եդ ի գլուխ նորա պսակ ի քարէ պատուականէ» (հմմտ. Մատթ. Ի 4), եւ թէ՛ «Պսակեաց զնա մայր իւր յատուր փեսայութեան եւ ուրախութեան սրտի իւրոյ» (Երզ Գ 11): Եւ երրորդ՝ զանճառ եւ զանչափ սիրոյն նշանակութիւն, զոր արար առ մարդիկ, այսու զադամաբաւ ծանոյց, զի ոչ գոյ ի յերկրի այլ մեծագոյն սիրոյ տարացոյց, քան զսէր հարսին եւ փեսային՝ ըստ այլնս, որ յԵրզսն Սողոմոնեան՝ պատմի, եւ այլոր թէ՛ «Յաւ է սէր քո ինձ քան զսէր կանանց» (հմմտ. Մատթ. Բ Թագ. Ա 26), որպէս Ինքն ասէր թէ՛ «Այսպիսի սէր ոչ ոք կայցի, զի դիցէ զանճն ի վերայ բարեկամաց իւրոց, որպէս Ես անճամբ Իմով դնեմ զանճն Իմ» (հմմտ. Յովհ. ԺԵ 12-14):

Ոչ ոք արկանէ կապերս անթափ ի վերայ հնացեալ ձորձոյ, զի առնու ելանէ զլրութիւն նորա ի հանդերձէն, եւ եւս չար պատառումն լինի (Թ 16):

Չառակս զայս կամ վասն աշակերտացն ասաց, թէ տակաւին չեւ եւս են զօրացեալ, վասն որոյ ըստ սոցա զիջանել պահանջեն պէտքն, զի յորժամ ոք զկարկատանս «անթափ», այս է՝ ոչ լուացեալ, արկանէ ի վերայ հին ձորձոյ, ծանրացեալ նորն ի վերայ հնոյն՝ ընդարձակս պատառէ եւ փոխանակ շահի՝ վնասս գործէ, այսպէս եւ սոքա [զի] ոչ են նորոգեալ հոգով, ոչ է պարտ ծանրատադտուկ լինել զհրամանաւս, զի մի՛ զայթագդեսցին: Եւ կամ «հնացեալ ձորձ» զհրէայսն եւ զփարիսեցիսն կոչէ, որպէս Երե-

¹ Զ գերծեալ

² > է

³ Տ սողոմոնեան. Զ սողոմոնեան

միաս յառիգած առակեաց զփտեալ մեղօք ժողովուրդն¹, զի ո՛չ ընդունին զլուր նորացուցիչ ուսմանս² ատետարանական վարդապետութեան, զի անհաւատութեամբ հնացեալք եւ Հին Օրինօքն ներկեալք՝ ո՛չ ժուժեն զՆորս, այլ չար պատառմամբ պատառին, այս է՝ յորացութիւնս գան: Նաեւ այսու ա՛յլ իմն նշանակէ. թէ նորոգելոց է զմարդն հին՝ զօրութեամբ խաչին, եւ լուծանելոց է զհնութիւն գրոյն՝ նորոգութեամբ Հոգւոյն:

Եւ ո՛չ արկանեն զհնի նոր ի տիկս հինս, ապա թէ ո՛չ տիկքն պատառին, եւ զհնին հեղու, այլ արկանեն զհնի նոր ի տիկս նորս, եւ երկոքին պահին (Թ՝ 17):

Կրկին բերէ ապացոյց ի բնական իրաց. ո՛չ վարկպարագի, այլ կամ ի հաստատութիւն առաջնոյն, եւ կամ առաջնովն զԻր վարդապետութիւնն առակեաց, զոր քարոզեաց անթափ նոր եւ կուսածին մարմնովն, իսկ զինեաւն³ զՀոգւոյն նշանակեաց զՀնորիս՝ նորոգեալ զիտութեամբ Նորին: Քանզի նոր ճնշեալ զհնին, յաղագս եղելոյ ի նա խոնաւութեանն, եռացմամբ օդոյս յի է, որով զգիսատեսակ աղտեղութիւնն արտաքս փրփրէ, իսկ հին եւ պատառատուն տիկքն ոչ կարեն հանդուրժել ուժգնութեան քաղցրոյն, այլ պատառեալ՝ զզինին հեղու[ն]: Այսպէս Հոգւոյն շնորհք ի յողկուզից մարմնոյ Նորա ճնշեալ ի հնձան խաչին, արտաքս եկն զհնի նոր՝ եռացմամբ արեանն կողին, քրայի Հոգւոյն հողմով՝ ըստ առաքելոյ թէ՝ «Հոգւով եռացէք» (Հոմ. ԺԲ 11), որ զմեղս եւ զապականութիւնս մաքրէ այժմ, մինչչեւ են նորացեալ Նովա: Ի վնաս մեծ է սոցա, որով զառ յապայն նշանակէ, թէ նորանալոց են նորոգութեամբ Հոգւոյն ի ձեռն մկրտութեան հրոյն ի սուրբ վերնատանն: Յայնժամ ընդունին եւ երկոքին պահին ի շահ անձանց եւ յօգուտ բազմաց կամ թէ ինքեանց անվնասութեան եւ շնորհին պահպանութեան, զի որպէս զկաւ բրտի ձեւացուցեալ ի կարաս՝ առանց հրոյ ոչ ընդունի զջուր կամ զզինի, այսպէս եւ սոքա, ծնունդք հողածնին Ադամայ յինելով մարմին, առանց վերստին հրոյն մաքրութեան ո՛չ կարողասցին տանել զնորագոյն ուսմանս շնորհ:

Եւ դարձեալ՝ զդպիրսն եւ զփարիսեցիսն ասէ «տիկս հինս» եւ զհամանման հերձուածօդս, որ զԱստուածաշունչ Գրոց վարդա-

¹ Երեմ. ԺԳ 1-11

² Պ ուսման

³ Պ զինով

պետությունս ոչ կարացեալք տանել հաւատով վասն մեծաբոյս աւանդութեանն՝ ինքեանք հեղձանին եւ զՀոգւոյն շնորհս ի դերեւս հանեն, այսինքն՝ սուտս կարծեն, քանզի «յանձն չարարուեստ իմաստութիւն ոչ մտանէ», գրեալ է (Իմաստ. Ա 4), վասն որոյ զգուշացոյց թէ՝ «Մի՛ տայք զսրբութիւն շանց» (Մատթ. Է 6): Իսկ յորժամ հաւատովք սրբեսցին եւ մաքրութեամբ Աւագանին նորասցին, յայնժամ ընդունելով զգիտութիւն Նորին՝ շահեսցին աճմամբ եւ զաւելորդ եղեալ ի նոսա մարմնական ցանկութիւն արտաքս ժայթքեսցեն¹՝ ըստ այնմ թէ՝ «Որ ունի, տացի եւ յաւելցի» (Մատթ. ԻԵ 29), որով իմաստնացեալք Հոգւով՝ յստակ գիտութեամբ լիցին զինի ըմպելի՝ կատարելոց բաւական՝ յուրախութիւն երկնաւորաց եւ երկրաւորաց:

Մինչդեռ Նա զայս խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մատուցեալ երկիր պագաներ Նմա եւ ասէր. «Դուսոր իմ արդ եւս վախճանեցաւ. այլ եկեալ դիցես զձեռն Զո ի վերայ նորա, եւ կեցցէ» (Թ 18):

Դարձեալ ժամանեցին արդիւնքն բանիցն առ ի հաստատութիւն յառաջագոյն ասացելոցն: Բայց իշխանս այս ի ժողովրդապետացն էր՝ Յայրոս անուն, որ մատուցեալ երկրպագութեամբ ադերսէր, որով Տէր եւ Աստուած զՆա ցուցանէր, զի գրեալ էր յՕրէնսն թէ՝ «Տեառն Աստուծոյ քո միայն երկիրպագանիցես» (Խմմտ. Բ Օր. 2 13), որոյ մանուկ միամօր էր երկոտասանամեայ գեղեցիկ յոյժ: Իսկ ասելն թէ՝ «Արդ եւս վախճանեցաւ», եւ Դուկաս թէ՝ «Եկին ոմանք եւ ասեն՝ մի՛ ինչ աշխատ առներ զԴա, զի մեռաւ մանուկն» (Խմմտ. Դուկ. Ը 49), եւ Մարկոս թէ՝ «Մերձ ի մահ» (Մարկ. Ե 23), ոչ երկրանութիւն ինչ է ի սոսա, այլ յորժամ եկն հայրն, մերձ էր ի մահ, եւ վասն ժամանակին յամելոյ եւ երկարութեան ճանապարհին կարծեաց, թէ մեռաւ, որ եւ զկարծիքս զայս եկեալ ոմանք հաստատեցին: Եւ կամ որպէս սովորութիւն է վշտացելոց զկարիսն մեծացուցանել եւ զվիշտս աճեցուցանել, զի հաւանեցուցանեն զաղաչեցեալն, ասաց թէ՝ «Արդ եւս վախճանեցաւ»: Այլ դու տես՝ զքանձրամտութիւն առն, երթալ իսկ ի տունն աղաչէ եւ ձեռն եւս ի վերայ դնել, եւ ոչ² որպէս հարիւրապետն, զի ասէր. «Ասա՛ բանի, եւ բժշկեսցի մանուկն իմ»³: Իսկ Տէր, աճեցուցանել կամելով՝ զքան-

¹ ՏԶ ժայթքեսցեն (այսպէս է և այլուր՝ մերթ ժայթք, մերթ՝ ժայթք):

² ոչ եւս

³ > իմ

չելիսն եւ բարձրացուցանել զնշանսն, յարեալ եւ զնաց, որպէս եւ ասէ:

Յարեալ Յիսուս եւ զնաց զկնի նորա աշակերտօքն հանդերձ (Թ 19):

Բժիշկն հոգւոց եւ մարմնոց առանց ծանրանալոյ չոգալ զկնի, զի զմեռեալն յարուցանէ եւ այնու զկիսակատար սիրտ առն ի կատարելութիւն ածցէ², զի ամենայն ուրեք զփրկութիւն մարդկան հնարէր: Իսկ զաշակերտսն զկնի տանել յաղագս վարժելոյ զնոսա ի բանս եւ ի գործս, բայց Ղուկաս զերիս միայն ասէ, նմանապէս եւ Մարկոս³, իսկ սա խառնիխուռն աշակերտօքն ասէ. կամ զնոսա միայն տարաւ, զի Մատթէոս նոր եկեալ իսկ էր, այսպէս եւ այլքն, վասն այտորիկ զնոսա պատուէր, զի եւ տքա ցանկութեամբ յորդորեալք նմանօրք յիցին առաքիւնութեանց նոցա, որով եւ պատուոյն հաղորդիցին: Եւ կամ զհաւատացեալսն աշակերտս⁴ ասէ յայսմ վայրի, որք յարուցեալ զնացին ի տես սքանչելեացն. ոմանք վասն մեծարանաց առն, որ եկն աղաչել, եւ կէսք ի նոցանէ, զի դեռ թանձրամիտք էին, ո՛չ այնպէս զոգոյն դարմանս, որպէս զմարմնոյն բժշկութիւն խնդրէին, եւ այլք վասն ինքեանց ցաւոցն ստիպեալք՝ զկնի աշակերտացն ընթանային, զոր եւ զամենեսեան⁵ «աշակերտս» անուանէ, բայց յորժամ ի տուն եմուտ, երիւքն միայն առանձնացաւ՝ ըստ Ղուկայ:

Իսկ առ ի միտս՝ մինչ պատուիրեաց Տէր Աստուած Ադամայ եւ ասէ. «Յամենայն ծառոցդ, որ են ի դրախտի այդր, կերիցես, բայց ի միոյն մի՛ ուտիցես⁶» (հմմտ. Ծննդ. Բ 16-17), եւ իսկոյն անձնիշխանութեամբ պերճացեալն Ադամ կերեալ ի պտղոյն եւ մերկացեալ եւ լուեալ զձայն զնալոյ Տեառն թէ՛ «Ո՞ր ես», նորա մատուցեալ երկրպագութեամբ՝ ասէր. «Լուայ զձայն Քո եւ երկեայ»:

Եւ Նա ասէ. «Վասն է՞ր մերկ ես»: Ասէ. «Կինս, զոր ետուր ինձ, ետ ինձ ի ծառոյ անտի եւ կերայ»⁷, զոր աստ «դուստր» ասաց յիրաւի, քանզի ի կողիցն ստեղծեալ՝ օրինակ իմն դուստր էր Ադամայ՝ խնամ տանելով իբր հօր նորա, եւ նա հնազանդ լինելով իբր

¹ Զ կամեցաւ

² Զ ածէ

³ Ղուկ. Ը 51, Մարկ. Ե 37

⁴ Զ զհաւատացեալ աշակերտսն] զհաւատացեալսն աշակերտս

⁵ Զ զամենեսան

⁶ Զ ուտիցէք

⁷ Ծննդ. Գ 9-12

դուստր նմա, գոր ասէ. «Արդ եւս վախճանեցաւ» ճշմարտապէս, զի ասացաւ. «Յորում ատր ուտիցես ի նմանէ, մահու մեռանիցիս» (հմմտ. Ծննդ. Բ 17): Որում աղերսեալ ասէ. «Եկեալ դիցես զձեռն Քո ի վերայ նորա, եւ կեցցէ»: «Չեռն» իմանամք Հօր՝ զՈրդին միածին՝ ըստ այնմ. «Աջ Քո եւ բազուկ Քո» (Մաղմ. ԽԳ 4), եւ թէ՛ «Առաքեալ զձեռն Քո եւ փրկեա՛ զիս» (հմմտ. Մաղմ. ԾԽԳ 7), եւ թէ՛ «Եղբօրորդի իմ յառեաց՝ զձեռն ընդ պատուհանն» (Երգ Ե 4), որ եւ յարեաւ յերկայնմտութենէն եւ եկն եղ ի վերայ Ադամայ եւ Եւայի զմարմինն Իւր մահուամբ, որով եկեաց՝ զյաւիտենական կենդանութիւնն, որպէս ասաց. «Եկի, զի զկեանս ունիցիք» (հմմտ. Յովհ. Ժ 10), եւ թէ՛ «Ես եմ յարութիւն եւ կեանք» (Յովհ. ԺԱ 25): Իսկ «աշակերտ» յայսմ վայրի զհրէշտա կսն իմա, որք սպասատորք եղեն ի ծննդեանն եւ ի խաչելութեանն:

Եւ ահա կին մի՝ տեռատես երկոտասանամեայ, մատուցեալ յետոյ, մերձեցաւ ի դրօշակ հանդերձի Նորա (Թ 20),

քանզի ասէր ի մտի իւրում. «Թէ միայն մերձեանամ ի հանդերձս Նորա, փրկի՛մ» (Թ 21):

Մարկոս ընդարձակս յաղագս կնոջս ճառէ՞, թէ վաճառեալ զամենայն ինչս իւր՝ եւ ո՛չ էր գտեալ յումեքէ հնար բժշկութեան, այլ մանատանդ զայրացեալ, զի որ եհարն, նա առողջացուցանէր, վասն որոյ թողեալ զամենայն՝ ի վերջինն ապաւինի բժիշկ: Բայց ընդէ՞ր յետոյ մերձեցաւ ի դրօշակս եւ ո՛չ համարձակութեամբ յառաջ եկն. թուի վասն ախտին ամօթի, զի թէ որ զամսօրեայ աղտեղութիւն կրէր յանձինս, պիղծ համարեալ էր ըստ Օրինացն՝, ո՞րչափ եւս առաւել նա, որ զայնքան ժամանակս զազրութեամբ արեանն ջերանէր: Եւ դու տե՛ս զհաւատս կնոջն, զի ի տունն ո՛չ կոչեաց, թէպէտ մեծատուն էր, այլ լռելեայն հաւատովն խիզախեալ մերձեանայր եւ ոչինչ երկմտեաց վասն առողջութեանն թէ՛ զերձանի՞մ թէ ոչ, այլ բաւական համարեալ փրկութեանն պատճառ զհպատրութիւն՝ հանդերձի Նորա՝ ընդ միտ ածելով, թէ Որ զերկոտասանամեայ վախճանելոյն զհոգին՝ երթայ յետս դարձու-

¹ Զ յիրեաց

² Տ եկաց

³ Մարկ. Ե 25-26

⁴ Ղևտ. ԺԵ 19-30

⁵ Զ զհպատրութիւն

⁶ Զ զհոգիս

ցանել, կարող է եւ¹ զերկոտասանամեայ ցաւս ընկենուլ ի մարմնոյս աստի եւ ի բաց հատանել:

Իսկ նշանակաւ՝ «կին» է աղանական բնութիւնս վասն առ ի նիւթն միտելոյ եւ իգական ախտի վարակելոյ: Իսկ «տեռատես»՝ վասն սպաժոյժ արեան գալոյ, ըստ մարգարէին, անօրէն սպանութեամբ եւ անբիծ արեանն² մանկանցն հեղմամբ³, եւ ճենճերօք դիւաց գոհիցն խառնակութեամբ, եւ այս՝ երկոտասանամեայ ծառայելով պարբերութեան⁴ կենդանակերպիցդ, յորոց ամբ գոյանան: Նաեւ երկոտասան անդամօք մարմնոյ եւ գուգաթիւ ամսոց ատորքք յօդուածովք⁵ ոսկերաց զկազմութիւն ընդունելոյ՝ զառածելով ի մեղս, որ եւ ծախեալ ի պէտս ցանկութեան զաստուածպաշտութեանն ինչս՝ եղեն չբաւորեալ ըստ անառակին՝ եւ յումեք բժշկութիւն ոչ գտին: Եւ կամ թէ ի պէտս աստուածպաշտութեանն մաշեցան՝ ելանելով յերկինս եւ իջանելով յանդունդս⁷, եւ զԱստուած ոչ գտին, որով բժշկեալ էին, մինչեւ եկն Բանն, յորոյ սքանչելեացն⁸ եւ ի վարդապետութեան բանիցն լրոյ՝ մերձեցեալ ի քղանց հանդերձի մարմնոյ Նորին հաղորդութեամբ յետոյ, այսինքն՝ ի լրման ժամանակի⁹, եւ կամ յետ խորհրդոյն կատարման՝ վստահացեալ սրտի հաւատով երկիւղի մատչիմք ի խորհուրդ մարմնոյ Նորա, որով փրկիմք յառաջին յանցանաց հնոյն Ադամայ եւ յանիծից Օրինացն մեղաց եւ ի կռապաշտութեանն¹⁰ արեանցն բղիսմանց:

Իսկ Յիսուս իբրեւ դարձաւ եւ ետես զնա, ասէ. «Քաջալերեա՛ց, դո՛ւստր, հաւատք քո կեցուցին զքեզ» (Թ՝ 22):

Համառօտ գրէ Մատթէոս զկնոջն պատմութիւնն, իսկ Ղուկաս ասէ թէ՝ «Ո՞վ մերձեցաւ յԻս»: Է՞ր վասն զայն արար: Նախ՝ զի միովն զամենեսեան խրատէ, թէ ո՞րպէս կամ զիա՛րդ մերձենայր որ ի Նա մարմնապէս կամ հոգեպէս՝ զիտէ՛ր Նա, որպէս եւ ասաց

¹ Զ որ

² Զ արեան

³ Սաղմ. ԾԵ 37-38

⁴ Զ տարբերութեան

⁵ Զ յօդուածօք

⁶ Ղուկ. ԺԵ 14

⁷ Սաղմ. ԾԶ 26

⁸ Զ սքանչիցն

⁹ Գաղ. Դ 4

¹⁰ Զ կռապաշտութեան

Պետրոս. «Ժողովուրդդ նեղեն գժեզ», իսկ Նա ասէ թէ՝ «Ոմն մերձեցաւ յԻս»¹, զի այլ է մարմնոյ մերձաւորութիւն, եւ այլ հաւատոյ, զի մարդ՝ ի մարդ, իսկ հաւատ յԱստուած մերձենայ, որով եցոյց, թէ մարդ է եւ Աստուած: Եւ երկրորդ՝ զի մի՛ սքանչելիքն ի բազմաց ծածկեալ լինիցի, այլ ամենեցունց յայտնեսցի: Եւ երրորդ՝ նա ինքն գլխովին, որ բժշկեցաւ մարմնապէս, մի՛ վիրաւորեսցի հոգեպէս, զի թէ բժշկեաց զնա, մարգարէ գիտասցէ, բայց զի ոչ գիտաց նա, երկմտիցի ի Նմանէ, թէ Աստուած ոչ է: Եւ չորրորդ՝ յամելով անդր հարցմամբն եւ յաճախ ընդ կնոջն խօսելով՝ կամեցաւ իսկ մահուն տեղի տալ եւ ասպա ընթանալ ի տուն աղջկանն, զի յայտնի լիցի յարութեանն հանդէս: Եւ ընդէ՞ր Ինքն ոչ յայտնեաց, թէ ո մերձեցաւ. զի վկայեսցէ այն, որ բժշկեցաւ յայտնապէս, զօրութեան Այնմիկ, որ բժշկեաց զնա ծածկապէս: Միանգամայն եւ ոչ փութացաւ Ինքն վկայ լինել անձին Իւրոյ, իբրու զի ի մէջ թշնամեաց կայր, այլ եկաց մնաց, զի լինիցի[ն] զորձք Նորա քարոզ աստուածութեան Նորա, թէ ամենագէտ է: Վասն որոյ յորժամ յառաջ եկն դողութեամբ, ասէ. «Քաջալերեա՛ց, դո՛ւստր». զի զարհուրեցաւ կիսն ի հարցմանէն՝ զերկիւղ սրտին փարատէ եւ «դուստր» ասելովն յարգէ եւ գովէ եւ զխնամս Իւր առ նա ցուցանէ, միանգամայն եւ զհնազանդութիւն ի ձեռն հաւատոյ ի նմանէ պահանջէ. «Հաւատք քո կեցուցին [զքեզ]»: Չի որպէս բժշկութեանն հաւատաց, այսպէս եւ գիտութեանն, վասն որոյ ասէ՝ ի հաւատ[ս]դ վստահացիր, զի դոքա՛ կեցուցին զքեզ ի ցաւոցդ եւ ի զայթազութեանցդ: Նաեւ այսու զգեղծ միտս յուղղութիւն ածիցէ, որք եկեալ ասէին. «Մի՛ ինչ աշխատ առներ զՎարդապետդ, զի մեռաւ դուստրն քո» (Թմմտ. Մարկ. Ե 35). եւ յորժամ ի տունն չոգաւ, ծաղր առնէին, ի դէպ էր եւ հօրն ախտանալ, ուսուցանէ, թէ հաւատք պիտոյ են առ ի կեալ մանկանն քո:

Եւ փրկեցաւ կիսն ի ժամէն յայնմանէ:

Չայս թէպէտ վասն ստոյգ բժշկութեանն եղ ւսետարանիչս, սակայն յայտնապէս ծանուցանէ², թէ ոչ հաւատք առանց զօրութեան եւ ոչ զօրութիւն առանց հաւատոյ կարօղ է ներգործել հրաշս կամ բժշկութիւն ցաւոց ընդունել, զի զոր օրինակ լոյս աչաց ընդ լոյս արեգական խառնեալ՝ բախտ ի վերայ իրաց, որով

¹ Ղուկ. Ը 45-46

² Զ ծանուցանի

ճշգրիտ տիպ նիւթոյն երեւի ի միում ժամու ի թարթափել ական, այսպէս ընդ զօրութիւնն Տեառն միաբանեալ հաւատք կնոջն, որ ակն է մտացն, փրկութիւն եղև հրաշալի եւ դուն ամանակի: Իսկ ըստ մտաւոր տեսութեանն՝ յորժամ կատարեաց զտնօրէնութիւնն եւ դարձաւ առ Հայր, ասաց ցԵկեղեցի. «Քաջալերացարո՛ւք, զի Ես յաղթեցի աշխարհի» (Յովն. ԺԶ 33), եւ՝ «Տուաւ Ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի...», երթայք մկրտեցէք զամենայն հեթանոսս յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ» (մմտ. Մատթ. ԻԸ 18-19): Եւ նոյն հաւատովն որ ի Քրիստոս՝ կեայ Եկեղեցի հաստատեալ ի վերայ վիմի, դուստր վերնոյն Սիոնի՝ «ծնանելով զամենեսեան ի յոյսն կենդանի» (մմտ. Ա Պետ. Ա 3)՝ յարգանդէ մօր Աւագանին երկամբք՝ ըստ առաքելոյ. «Զի ի Յիսուս Քրիստոս ւետարանաւն ես ծնայ զձեզ» (Ա Կոր. Դ 15), եւ թէ՛ «Որդեա կը իմ, զորս վերստին երկնեմ, մինչեւ նկարեացի ի ձեզ Քրիստոս» (Գաղ. Դ 19):

Իբրեւ եկն Յիսուս ի տուն իշխանին եւ ետես զփողարսն եւ ամբոյս յոյժ, ասէ ցնոսա. «Ի բաց գնացէք (Թ՝ 23),

զի ո՛չ եթէ¹ մեռեալ է աղջիկդ, այլ ննջէ» (Թ՝ 24):

Այս եպերանք ժողովրդապետին, զի ո՛չ ունէր կատարեալ հաւատս առ Նա, որպէս կինն, վասն այտորիկ կոծօղք եւ լալականք մտեալ էին ի տուն նորա: Իսկ ասելն «ի բաց գնացէք» երկդիմի իմանի. կամ թէ՛ ի բաց թողէք զայդպիսի հեթանոսական անյուսաբար սովորութիւնդ, եւ կամ թէ՛ արտաքս ելէք: Է՞ր վասն. զի անփառունակ էր կեանք Նորա յաշխարհի, զի մի՛ ասիցեն՝ առաջի բազմութեանն արարեալ, թէ փառս ի նոցանէ խնդրիցէ: «Զի ո՛չ եթէ մեռեալ է աղջիկդ»: Նախ՝ բանի յարուցանէ ի մեղաց զհոգին եւ ասպարդեամբք՝ ի մահուանէ զմարմինն: Եւ երկրորդ՝ նշանակէ ո՛չ այլ շունչ արտաքոյ ւժել ի մարմինն, այլ զի՛րն, զի որպէս ննջեալն իր հոգւովն յառնէ, այսպէս եւ սա: Եւ երրորդ՝ զթեթեութիւն եւ զդիրութիւն իրացն ծանուցանէ, զի որպէս որ զննջեալ զարթուցանէ, այսպէս եւ Ես զմեռեալդ յարուցանեմ: Եւ չորրորդ՝ վասն զի մահ մեղաց է ծնունդ, իսկ նա երկրտասան ամաց գոլով՝ տակաւին անմեղ էր, վասն այտորիկ ո՛չ ասաց, թէ մեռեալ է, այլ՝ «ննջէ»: Եւ հինգերորդ՝ զի ասացին, թէ մեռաւ, եւ Նա ասաց թէ՛ ո՛չ, այլ ննջէ՛, զզօրութիւնն միանգամայն եւ զամենատես բնութիւնն

¹ Զ թէ

ծանոյց. զի կամ զգօրութիւնն խոստովանին, յորժամ յառնէ, զի ինքեանք ասացին, թէ մեռաւ. իսկ թէ ժխտեն զմահն, զգիտութիւնն յանձն առցեն, զի նոքա մերձ գոլով ասէին, թէ մեռաւ, իսկ Նա ի հեռի ասէ թէ՝ ոչ, այլ ննջէ՛, զի ստուգապէս մեռեալ էր. այլ զի Կեանքն առ ընթեր էր, ննջել ասէ նմա:

Եւ ծաղր առնէին զՆա:

Յիրաւի՛. զի ամենայն, որ զճշմարտութիւնն բարբառի, ի տգիտացն առ վայր մի կատակեալ լինի, որպէս Ղովտ, յորժամ զկիզումն քաղաքին ազդէր, ի փեսայիցն ծաղր լինէր¹, եւ որպէս մեք յորժամ վասն հրեշտակահաւասար կենացն ճառեմք, յանհաւատիցն ըստգտեալ այպանիմք, քանզի պատրուակ առեալ զնիւթոյն թանձրութիւն եւ անհաւատութեանն վարագորաւ² կաշկանդեալ՝ ոչ հաւատան անտեսիցն՝ ըստ այնմ թէ՛ «Ժոտան են բանք ճշմարտի» (Յոր 2 25), եւ թէ՛ «Այր արդար եղել ի կատականս» (հմմտ. Յոր Թ 23), բայց ի ճշմարտութենէ իրացն յետոյ կշտամբեալ յանդիմանին, որպէս բարեկամքն Յորայ՛³: Նաեւ այլ իմն ընդ միտ ածելով աւետարանիչս՝ գրեաց զայս. որպէս զի ստուգապէս մեռեալ էր աղջիկն, ինքեանք իսկ անհաւատ լինէին վասն յարութեանն, զի յորժամ յարիցէ, ըմբերանեցին եւ մի՛ բարուրս պատճառանաց ի Նա հպեցուցեն:

Եւ իբրեւ ել ամբոխն ի բաց, եմուտ, կալաւ զճեռանէ նորա, եւ յարեաւ աղջիկն (Թ 25):

Թէպէտ զամբոխն արտաքս եհան վասն ասացեալ պատճառին, սակայն զհայր մանկանն եւ զմայր առ Ինքեան պահեաց, զի մի՛ ասիցեն՝ այլ ազգ ինչ յարոյց զմանուկն եւ ոչ հրամանաւ միայն: Վասն որոյ, ասէ, «կալաւ զճեռանէ նորա», իբրեւ ի քնոյ զարթուցեալ յարոյց եւ ետ ցհայրն եւ ասաց տալ նմա ուտել: Ոչ միայն յարոյց, այլեւ առողջացո՛յց միանգամայն. զի մի՛ առաջօք զյարութիւնն կարծիցեն, կերակրոյն տալով հաստատեաց:

Եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն (Թ 26):

¹ Ծննդ. ԺԹ 14

² Չ վարագորիւ

³ Յոր ԽԲ 7-8

Հրամայեաց Ինքն ոչ ումեք ասել, բայց համբաւ հրաշիցն ոչ առնոյր զտեղի, այլ տարածէր՝ ըստ այնմ. «Ոչ կարէ քաղաք թագչել, որ ի վերայ լերինն կայցէ» (Մատթ. Ե 14): Բայց ինձ հիանալ զայ ընդ կարգ այլաբանութեան յեղանակիս, քանզի յորժամ եկն Յիսուս ի տուն իշխանին աշխարհիս այսորիկ մարմնով, ետես զյուսահատութիւն որ վասն յարութեան սերմանեալ յաշխարհս, որ մեծագոյն կոծովք զանձինս ցտէին եւ զհերս խզէին՝ վարժեալք ի չարէն, քարոզեաց զյարութիւնն բազմիմաստ եւ յոգնատեսակ բանի եւ իրօք՝ ասելով թէ՝ «Որ հաւատայ յԻս, թէպէտ եւ մեռանի՝ կեցցէ» (Յովհ. ԺԱ 25): Մահ քուն է համարեալ յԱռաջին զայստենէն¹ մինչեւ յԵրկրորդն զայուստ՝ ըստ այնմ. «Ննջեցին եւ ի քուն մտին» (հմմտ. Մատթ. ԻԵ 5):

Իսկ ոմանք անուպայք ոչ լուան վարդապետութեան Աւետարանին, զորոց առաքեալ գրէ. «Զիա՞րդ ասեն ոմանք ի ձէնջ, եթէ յարութիւն մեռելոց չիք... միթէ որ ննջեցին ի Քրիստոս՝ կորեա՞ն արդեօք» (Ա Կոր. ԺԵ 12, 18), եւ թէ՝ «Ոչ կամիմ վասն ննջեցելոցն թէ տրտմնեցիք, որպէս եւ այլքն, որոց ոչ գոյ յոյս» (Ա Թես. Դ 12), որք քամահեալ ծիծաղէին, բայց «յորժամ ել ամբոխն ի բաց», այսինքն՝ լրումն աղամածին² բնութեանս, ըստ թոռոյ սահմանի Արարչին մարդկութեանս յանկ ելեալ կատարի, տղայօք եւ երիտասարդօք, արամբք եւ կանամբք, ըստ ամբոխի օրինի, յայնժամ միսսնգամ մտանէ Անդրանիկն յաշխարհ՝ ըստ առաքելոյ. «Ինքնին Տէր ի ձայն հրեշտակապետին ի փող յետին, եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն» (հմմտ. Ա Թես. Դ 15): Եւ «ամենեքեան», զորս գերեզմանն կրեալ է, զօրէն աղջկան «լուիցեն ձայնի Որդոյն Աստուծոյ եւ եկեացեն արտաքս» (Յովհ. Ե 28-29): ներգործութեամբ իբր ձեռօք: Եւ ցնդեալքն ի հող եւ յանկերպութիւն նիւթոյ տարածեալք՝ յարուցեալ կանգնեցցին եւ զարթուցեալ ցնծացեն, ուստի համբաւն ճշմարտի առ ամենայն որ, մանաւանդ յերկիրն յայն, որ հեզոց է ժառանգութիւն³, որով խառնեալք հողեղէնքս ընդ հրեղէնսն՝ «յամենայն ժամ ընդ Տեառն լինելով» (հմմտ. Ա Թես. Դ 16): Իսկ ցհայրն տալն է զթագաւորութիւնն ի ձեռս Աստուծոյ եւ Հօր⁴, եւ՝ «Ահաւասիկ ես եւ մանկունք իմ, զոր ետ ինձ» (Ես. Ը 18), որոց տայ ուտել ի

¹ Զ զայստենէս

² Զ աղամայական

³ Սաղմ. ԼԶ 11, Մատթ. Ե 5

⁴ Ա Կոր. ԺԵ 24

սեղանն Հօր զնոր գիտությունն յետ յարութեանն, որք օրհնեն զՓրկիչն հանդերձ Հարբ եւ Հոգւով յաիտեանս յաիտենից. ամէն:

Եւ միչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն Նորա կոյրք երկու, աղա-
ղակէին եւ ասէին. «Ողորմեաց մեզ, Որդի՛ Դաւթի» (Թ 27):

Նշան ընդ նշանս խառնէ, զի հաւատք աճեսցին առ մարդիկ: Բայց թէ ընդէ՞ր զհետ Իւր յապաղէ աղաղակել. առ ի խրատ մեզ՝ ի բաց առնել յանձանց զառ ի բազմաց փառատրութիւնն, որպէս Ինքն: Բանզի մօտ ի տունն իսկ էին, յորում ամբոխն էր, հեռացոյց եւ առանձնացոյց ի տան ուրեք եւ ասպա՛ բժշկեաց, եւ այս յայտ ի պատուիրելոյն է թէ՛ «Մի՛ որ գիտասցէ» (Մատթ. Թ 30): Նաեւ այսու զիդձ հաւատոց անցա բաղձացուցանէ, որով վառեալ կոյր կենօք առանց ձանձրանալոյ զկնի ընթանային¹՝ ի յանդիմանութիւն հրէիցն, զի սոքա աչօք կափուցելովք ի լսելոյ եւեթ հաւատային, եւ նոքա աչօք բացօք զսքանչելիսն տեսեալ՝ ընդ հակառակս ելանէին: Տես եւ զայն, զի ո՛չ վայրապար մերձեցան, այլեւ մեծաւ ձայնիւ աղաղակէին, եւ ո՛չ զայլ ինչ, այլ զողորմութիւն յՈրդոյն Դաւթ պահանջէին. «Ողորմեաց մեզ, Որդի՛ Դաւթի»: Արդ՝ կամ աղերսիւ «Որդի Դաւթի» կոչէին, զի պատուական իսկ համարեալ էր նոցա անունն, որպէս եւ այլ մարգարէքն, յորժամ զբազաւոր զոք պատուել կամէին, յայն անուն կոչէին, եւ կամ զողորմութիւն Դաւթի հօր Նորին որ առ կոյրսն եւ կաղսն²՝ յՈրդոյ Նորին խնդրէին:

Եւ իբրեւ եկն ի տուն, մատեան առ Նա կոյրքն (Թ 28):

Առանց յետս դառնալոյ զայնքան յերկարութիւն ճանապարհին մինչ ի տունն երթային եւ նովին պաղատանօք մատեան առնաջի:

Եւ ասէ ցնոսա Յիսուս. «Հաւատա՞յք, եթէ կարօղ եմ առնել ձեզ զայր»:

Հարցմամբս աղաչանաց մնայ եւ ասպա՛ բժշկէ, զի մի՛ կարծիցի, թէ առ պարծանս ընդ առաջ երթայցէ սքանչելեօքն: Նաեւ ա՛յլ ազգ. զի ցուցցէ, թէ արժանի էին բժշկութեան, որպէս եւ առ ընթեր չարչարանացն դարձեալ հրաշագործէր՝ ի կորանս հրէիցն եւ ի

¹ Զ ընթացան

² Բ Թագ. Թ

հաստատութիւն առաքելոցն: Եւ դարձեալ՝ զի «Որդի Դաւթի» կոչէին, հանէ ի բարձրագոյն ուսումն, եթէ զինչ պարտ է իմանալ զՆմանէ, հաւատա՞յք, աւէ, որպէս յԱստուած եւ ոչ թէ հաւատա՞յք, թէ կարող եմ բարեխօսել առ Հայր եւ կամ աղաչել զԱստուած, այլ թէ Ես իսկ կարող եմ իբրեւ զԱրարիչ բանալ զաշս ձեր:

Ասեմ ցՆա. «Այո՛, Տէ՛ր» (Թ 29):

Տես, զի ոչ «Որդի Դաւթի» կոչեցին, այլ ի հարցմանէն զօրացեալք՝ ի բարձրագոյնսն վերացան եւ Տէ՛ր զՆա Դաւթի խոստովանեցին:

Յայնժամ մերձեցաւ յաշս նոցա եւ աւէ. «Ըստ հաւատոց՝ ձերոց եղիցի ձեզ»:

Մերձենալովն զԻնքն զոլ բժիշկ ցուցանէ, իսկ «ըստ հաւատոց՝ ձերոց եղիցի»՝ կցորդս զնոսա բժշկութեանն առնէ, նաեւ վկայս, թէ ոչ պաշտօն ինչ առնելոյ վասն բանքն էին, այլ հաւատոյ խնդրուածք ի սրտէ:

Եւ բացան աչք նոցա:

Ոչ միայն մարմնոյն հրճուիլ ի լոյս զգալեացս, այլեւ մտացն ցնծալ ի լոյս իմանալեացն՝ ըստ այնմ. «Ի դատաստան եկի յաշխարհս յայս, զի որք ոչն տեսանեն՝ տեսցեն, եւ որք տեսանեն՝ կուրացին» (Յովն. Թ 39):

Եւ սաստեաց նոցա Յիսուս եւ աւէ. «Զգո՛յ՛ կացէք, մի՛ ոք զիտասցէ» (Թ 30):

Զանմեծարգութիւն անձինն պատուէ այսու: Նաեւ զնոսա խրատէ սաստիւն մի՛ պանծալ յանձին արժանաւորութիւն, որով հպարտացեալ՝ զիտակակից լիցի սատանայ, եւ վերստին կործանիք յանհաւատութեանն կուրութիւն, զի որպէս խոնարհութիւն զգուշութեամբ բարձրացուցանէ, այսպէս եւ մեծամտութիւն զբարձրացեալն կործանէ:

Եւ նոքա ելեալ՝ համբաւեցին զՆա ընդ ամենայն երկիրն ընդ այն (Թ 31):

Տես, թէ ո՞րպէս ի սաստէն զգաստացան, քանզի ոչ զանձինս, այլ զՆա՛ իսկ աւետարանէին եւ սքանչելեացն հոշակիչք լինէին. եւ զի՞նչ աւէին, քան թէ զայս, թէ Յիսուս Քրիստոս Որդի Դաւթի՛ վրկիչ Իսրայէլի, եկեալ է յաշխարհ: Եւ դարձեալ՝ սոցա ասաց թէ՛

«Մի՛ նք գիտասցէ», իսկ այլուր թէ՛ «Երթ պատմեա՛ զփառս Աստուծոյ» (հմմտ. Ղուկ. Թ 60). չէ՛ ինչ հակառակ, այլ խրատե՛, զի մեք զանձինս մի՛ յարգեսցուք, եւ թէ այլք յարգեսցեն, մի՛ յանձն առցուք, ապա թէ ի փառս Աստուծոյ իցեն իրքն, ստիպեալ զամենեսեան ի նոյն յորդորեսցուք:

Եւ յելանելն նոցա արտաքս՝ ահա մատուցին առ Նա այր մի համր դիւահար (Թ 32):

Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն (Թ 33):

Յայնժամ համբաւ սքանչելեացն տարածեցաւ, եւ¹ յամենայն կողմանց ի բժշկութիւն առ Նա փութային, իսկ Նա ո՛չ միայն զմարմին, այլեւ վարդապետական բանիւ զոգիսն ապաքինէր, որպէս կոյրքն, զի առողջացեալք մարմնով եւ զօրացեալք հոգով ելին արտաքս, եւ ահա զայլ ոմն մատուցին՝ համր եւ դիւահար: Ո՛չ եթէ ի բնէ էր ախտն այն, այլ ի դիւին վնասակարութենէ, որպէս զի մի՛ լուիցէ եւ կամ խօսեսցի եւ հաւատասցէ, քանզի կապեալ էր զլեզու նորա, վասն որոյ եւ այլք իսկ մատուցին, քանզի չէր կարօղ անձամբ աղաչել: Ուստի ո՛չ պահանջեաց հաւատս, այլ վաղվաղակի բժշկեաց, եւ նա սկսաւ խօսել եւ օրհնել զԱստուած եւ զՏուօղմ² պարգեաց, որով յայտնի եղեւ, թէ Նա Ինքն³ է արարիչ մարդկան, որ ստեղծեալ ի հողոյ՝ եղ զնա յերկրի խօսուն բանական:

Եւ զարմացան ժողովուրդքն եւ ասեն թէ՛ «Եւ ո՛չ երբէք երեւեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի»:

Պարզամիտքն վասն անյաղթ հրաշիցն ի զարմանս եկին եւ զարժանաւոր զովութիւնն Նմա մատուցին, եւ ի մարդկան հաւասարութենէ զՆա ի բաց տարեալ՝ Աստուած ուրեմն կարծեցին: Յայտ յայնմանէ է, զի ասացին, թէ «ո՛չ երբէք երեւեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի», այսինքն՝ ոչ միայն քան զնոսա, որ յայնժամ էին, այլ իրր հմուտ գոյով պատմութեանցն՝ քան զառաջին հրաշսն մեծ համարէին՝ զՄովսիսին եւ զԵղիային, զի ո՛չ միայն բժշկէր, այլեւ զանհնարինսն, որոմ ակն ոչ ոք ունէր, եւ վաղվաղակի եւ դիւրաւ վասն այնորիկ հիանային:

¹ Զ > եւ

² Զ գտուօղէն

³ Զ > ինքն

Իսկ փարիսեցիքն ասէին թէ՝ «Իշխանան դիւա՛ց հանէ Դա գղես» (Թ 34):

Թէպէտ կարի յոյժ անմտաբար ասացին, սակայն խարդաւունեալ նենգութեամբ զգարմանս ժողովրդեանն յայլ կողմն դարձուցին, առ որս ասելի է, թէ ո՛վ յիմարք, զիա՞րդ հնար է դիւի գղեսս հանել, զի նա ժողովել սովոր է զհօրսն եւ ո՛չ օցտել: Նաեւ ա՛յլ ազգ. զի սա ոչ միայն գղեսս հանէ, այլեւ զբոբոտս սրբէ, եւ զմեռեալս յարուցանէ, եւ զծով սանձէ, եւ զմեղս բողոս, եւ զարքայութիւնն աւետարանէ, եւ առ Հայր մերձեցուցանէ, զոր ոչ երբէք ախորժեն դեք առնել, այլ զնորին հակառակն: Չի յԱստուծոյ հանեն եւ ի կուռսն մերձեցուցանեն, եւ ի կենաց մերժեն եւ առ մահ ածեն, եւ բարի բնաւին ումեք ոչ առնեն, այլ ի չարն յօժարեցուցանեն: Բայց զի նոքա նախանձու լցեալք եւ չարութեամբ բորբոքեալք՝ զհակառակն ասէին եւ ոչ ամաչէին:

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս եւ ընդ գեօղս, ուսուցանէր ի ժողովորդս նոցա եւ քարոզէր զաւետարանն արքայութեան, եւ բժշկէր զամենայն ախտս եւ զամենայն հիւանդութիւնս ի ժողովրդեանն (Թ 35):

Տե՛ս աստ զհեզութիւն Տեառն մերոյ, զի ոչ միայն չպատժեաց զանհաւատսն, այլեւ ոչ դոյզն բանի սաստեաց՝ առ ի խրատ եւ ի յուսումն մեզ, թէ պարտ է զչարախօսն ո՛չ զանիք տանջել, այլ երախտեօք պատուել եւ ի բարի առնելոյ ո՛չ դադարել, վասն որոյ ասէ. «Շրջէր ընդ քաղաքս»: Քանզի վասն ամենեցուն փրկութեան եկեալ էր յաշխարհ, յամենայն տեղիս երթայր, ո՛չ ի քաղաքաց վասն բազմապատիկ մեղաց նոցա խորշէր եւ կամ ի փափուկ կենացն պատրեալ լինէր, եւ ո՛չ ի փոքրկութենէ զիղից՝¹ վասն մեծամտութեան զԻնքն ի բաց որոշէր, այլ «ընդ ամենայնի ամենայն լինէր, զի զբազումս շահէր» (հմմտ. Ա Կոր. Թ 19, 22): Եւ այն հետիոտս, որպէս ասէ, շրջէր, ո՛չ վասն պատուոյ կամ ազահութեան, որպէս այժմու քաղաքս, այլ ուսուցանելոյ աղագաւ, զի ի ժողովրդանոցսն մտեալ՝ մեկնէր զՕրէնսն եւ յեղափոխելով ի Նորս շրջէր, յորոյ վերայ յաւելոյր զարքայութիւնն երկնից աւետարանել եւ ի մարմնական փառաց եւ ի ժառանգութեանց երկրաւոր իրաց ուսուցանէր ի բաց հրաժարել: Եւ այսմ կնիք հաստատութեան՝ զսքանչելիսն յաճախէր եւ զբժշկութիւնսն առատացուցանէր, զոր աւետարանիչս

¹ Զ գեղից

նչ բաւականացաւ առ ի պատմել զքարոզութիւն բանիցն եւ կամ զգանազանութիւն բժշկութեան ախտիցն, այլ միայն թէ՛ «ուսուցանէր զաւետարանն արքայութեան», որով զհոգիս նոցա բուժէր եւ նշանօքն զմարմինս առողջացուցանէր եւ այսպէս տէր զԻնքն հոգւոց եւ մարմնոց գոլ քարոզէր:

Եւ տեսեալ զժողովորդսն՝ զթացաւ ի նոսա, զի էին աշխատեալք եւ ցրուեալք իբրեւ զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ (Թ՝ 36):

Աստ յատուկ զիշխանան հրէից ամբաստանէ՝ զդպիրսն եւ զփարիսէցիսն, զի հովիւք էին եւ զգայլոց գործս՝ գործէին, զի ոչ միայն ուղղութիւն չցուցանէին, այլեւ զայլոց եւս յառաջադիմութիւն խանգարէին: Քանզի յորժամ նոքա վասն նշանին զարմանային, սոքա ընդդէմ դարձեալ՝ «Իշխանաւն դիւաց հանէ Դա գղես» բամբաստէին (Մատթ. Թ՝ 34) եւ զկորուստ ժողովրդեանն ոչ ցաւէին, զորոց եւ Ամովս պախարակէ՝: Վասն որոյ Հովիւն քաջ տեսեալ զհօտս Իւր ոչ այժմ, այլ նախքան զյախտեանս աստուածէն՝ զորութեամբն՝ զթացաւ՝ արարչական կամօք եւ վասն նոցա իսկ մարմին զգեցաւ, որպէս ասէ. «Ո՛չ ուրեք առաքեցայ, եթէ ոչ՝ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի» (Մատթ. ԺԵ՝ 24): «Զի էին, - ասէ, - աշխատեալք եւ ցրուեալք»: Երկակի է իմաստ բանիս. կամ յանուղղայ զնացից հովուացն վշտացեալ մտօք որպէս Ղովտ՝ զԻւր սուրբ հոգին նոցա անօրէն զնացիւքն տանջէր, եւ այսպէս ի բաց կացեալք ի նոցանէ՝ անտերունչ շրջէին եւ կամ «աշխատեալք» մեղօք իբր բեռամբ իմն ծանու դատեալ լինէին ի մտացն խղճէ եւ «ցրուեալք» յաստուածպաշտութեանն լրմանց, զի թէ արդարութիւն ժողովիչ է առ Աստուած եւ միացուցիչ, ասպա ուրեմն մեղքն՝ ցրուիչ եւ որոշիչ՝ ըստ այնմ. «Մե՛ղք ձեր որոշեն ի մէջ Իմ եւ ի մէջ ձեր» (Ես. ԾԹ՝ 2), վասն որոյ ասէ՝ ցրուեալք յայրս եւ ի ծերպս վիմաց՝ տառապէին եւ բաժինք զայլոց եւ աղուեսուց լինէին⁴: «Իբրեւ զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ»». ցուցանէ, թէ բնութեամբ անմեղք

¹ ՏՁ գործք

² Այստեղ հեղինակը հավանաբար շփոթմամբ է տալիս Ամովսի անունը, ում գրքում հոգևոր հովիվներին ուղղված պախարակումներ չկան: Ամովսի փոխարեն պիտի հիշատակվեր թերևս Եզեկիել մարգարեն (Եզեկ. ԼԴ՝ 1-6) կամ Երեմիան (Երեմ. ԻԳ՝ 1-4):

³ Ձ գթացեալ

⁴ Սաղմ. 4Բ՝ 11

էին, այլ յառաջնորդաց ոչ վարժեալք զայն կրէին, յորս գթացեալ՝ առաջնորդս կարգէ:

Յայնժամ ասէ ցաշակերտսն Իւր. «Հունձք բազում են, եւ մշակք՝ սակաւ» (Թ 37):

Արդ աղաչեցէք զՏէր հնձոց, զի հանցէ մշակս ի հունձս Իւր» (Թ 38):

Որպէս անդ ի ստեղծմանն նախ գթագաւորութեանն ճոխութիւն պատրաստեաց եւ ասպա զմարդն թագաւոր ի ներքս կացոյց, այսպէս եւ աստ յերկրորդ արարչութեանս զնոյն տնօրինէ, որպէս զի ցուցցէ, թէ Նա, որ զաշխարհս արար, նոյն Ինքն է, որ այժմ կրկին նորոգէ, քանզի նախ զգօնացոյց զմարդիկ վարդապետութեամբ Իրով եւ սքանչելեօք եւ այժմ գթագաւորեալսն ի Մաղիմ հովիւս եւ վերակացուս նոցին կարգէ: «Հունձք բազում են, - ասէ, - եւ մշակք՝ սակաւ»: Չարքայութեան որդիս ասէ «հունձս», որպէս եւ այլոր ասաց. «Ամբարձէք զաչս ձեր եւ տեսէք զարտորայս, զի սպիտակացեալ են եւ ի հունձս հասեալ» (Յովն. 7 35), որք բազմապատկեցեալ որայք հաւատովք եւ գործովք՝ յշտեմարանս վերին հաւաքին, իսկ «մշակք»՝ զերկրտասան առաքեալսն, որպէս յայլում տեղոց «փոքրիկ» անուանէր «հօտ»¹:

Բայց զի՞նչ է այս. ոչխարին հովիւ է պիտոյ եւ ոչ հնձօղ: Այսպէս իմա. զի հովիւն եւ առաջնորդն օրինակ իմն մշակ է ժողովրդեանն եւ տաժօղ եւ դարմանօղ, յորժամ յԱստուծոյ կարգեալ իցէ, եւ մշակ ոչ այլ ազգ, այլ հնձօղ, քանզի պիտոյանայ երբեմն եւ այսմ, յորժամ զչարութեան գործս հատանէ բանին մանգաղաւ² եւ երկեցուցանօղ սպառնալեօք: Եւ դարձեալ՝ զի ծանր իմն է գործ վերակացութեան, զի մի՛ մեծամտեալ հպարտասցին բոլորովին զինքեանս կարծել պատճառ փրկութեան, վասն այտորիկ զայս դնէ, զի զաշակերտսն յօժարեցուցանէ թէ՛ ոչ ի սերմանել առաքեմ զձեզ, այլ ի հնձել՝ ըստ այնմ թէ՛ «Այլք վաստակեցին, եւ դուք ի վաստակս նոցա մտէք» (Յովն. 7 38), այսինքն թէ՛ մեծ³ ջանն եւ դժուարութիւնն անցեալ իսկ է, յորս արտասուէին սերմանօղքն, եւ այժմ հեշտալին կայ առաջի՝ ցնծութեամբ ժողովեալն, ոչ զօտարին, այլ զԻմ ինքեան սերմանեալն:

«Արդ աղաչեցէք զՏէր հնձոցն». կամ՝ աղաչեցին, եւ ոչ գրեցաւ: Բայց ընդէ՞ր ասէ աղաչել գոր Ինքն տալոց էր. զի ցուցցէ, եթէ

¹ Դուկ. ԺԲ 32

² ՏՁ մանկաղ

³ Ձ ի մեծ

առանց մաղթանաց ո՛չ որ պարզեւս առնու յԱստուծոյ, զի մի՛ կորուսցէ, քանզի դիւրաւ գտանելին դիւրաւ արհամարհելի է, իսկ աշխատութեամբ ստացեալն եւ պահի՛ եւս, միանգամայն եւ վարձուք պատուի, զի վասն մեր է աղաչելն եւ ո՛չ վասն Նորա, որպէս եւ զսիրելն ասաց: Եւ կամ՝ զի սկիզբն էր իրացն, նախ քան զմաղթելն նոցա ետ, որպէս զի յուշ ածիցէ զՅովհաննու վարդապետութիւնն՝ զհեծանոցին եւ զկալին եւ զցորենին եւ զյարդին¹, թէ Ինքն է մշակ եւ տէր հնձոցն: «Ձի հանցէ մշակս ի հունձս Իւր», այսինքն՝ չափ հնձոցն մշակս բազմացուցէ՝ կամ թուով, կամ՝ զօրութեամբ եւ շնորհօք, եւ զի Ինքն է տուօղ, տացէ² զձեռնադրութիւն ըստ յաջորդիդ:

¹ Մատթ. 9 12

² Տ տայ

ԳԼՈՒԽ Ժ

Եւ կոչեցեալ առ Ինքն զերկոտասանեսին աշակերտսն Իւր՝ ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա եւ բժշկել զամենայն ցաւս եւ զամենայն հիւանդութիւնս (Ժ 1):

Ծածկաբար զշնորհաբաշխութիւնն «կոչումն» ասէ, յորմէ ամենայն կոչեցեալ կոչի եւ ասարեալ ասարի, քանզի կոչեաց յերկրատր սպաշտամանց ի սպասատրութիւն երկնային ուսմանց՝ առ Ինքն հաւաքել զազգս եւ զազինս. բայց նախ զնոսա մերձեցոյց առ Ինքն եւ ասպա նորօր՝ զամենեսեան: Եւ դու միտ դիր, թէ զհարդ ի դէպ ժամանակի կոչեաց յառաքելութիւն, զի ոչ ի սկզբանն առաքեաց, այլ յորժամ յաճախ շրջեցան ընդ Նմա եւ առին զչափ եւ զհանդէս զօրութեան Նորա, զի նախ յաշակերտութիւն կոչեաց եւ այժմ՝ յառաքելութիւն, որոց տայ իշխանութիւն ի վերայ դիւաց եւ ախտից, քանզի թէպէտ «չեւ էր Հոգի, զի Յիսուս չեւ էր փառատրեալ» (Յովհ. Է 39) խաչին եւ բարձեալ զանէծս Ադամայ, սակայն մասնատր շնորհս ընձեռէ, զի զԻւր իշխանութիւնն ցուցանիցէ, թէ սեփական ունիցի, վասն այնորիկ նոցին պարգեւէ:

Դարձեալ սկիզբն առնէ բաշխման Հոգւոյն շնորհաց, զոր կորոյս Ադամն առաջին, եւ բարձաւ ի մարդկանէ վասն լինելոյ նոցա մարմին՝, այժմ վերստին ընծայէ, բայց ըստ կարգի եւ յարմարութեան եւ ընդունողացն պատեհութեան, զի որպէս նախ բնական շնորհօք իբր զտղայ պճնեալ զարդարեաց զբնութիւնս Ադամայ եւ ասպա յառաջանալով ի սոյն՝ զօրէն երիտասարդի զրատրականաւն աճեցոյց, իսկ յայր կատարեալ ժամանեալ՝ Աւետարանաւն պայծառացոյց, այսպէս եւ աստ. նախ քան զխաչն իշխանութիւն ի վերայ այսոց, իսկ յետ խաչին փչմամբ եբաց զմիտս իմանալ զԳիրս², իսկ յաւոր Պենտէկոստէին կատարեալ եութեամբ Հոգւոյն իջմամբ, որպէս Եկեղեցի լրմամբ Նորոյ կտակի աւետարանին փայլմամբ: Դարձեալ՝ զի ի քահանայութիւն կոչէ զնոսա, նախ զդպրութեանն տայ աստիճան՝ իշխանութիւն ունել ի վերայ այսոց եւ բառնալոյ ցաւոց, իսկ յետ յարութեանն ձեռնադրէ ի

¹ Ծննդ. 23

² Ղուկ. ԻԴ 45

սարկաւագութիւն եւ ի Պենտէկոստէին ի պատրիարքութիւն¹, յորմէ վարժեալ Եկեղեցի՝ այսպէս տնօրինէ զսպասաւորս իւր ըստ կարգի տալ զշնորհաբաշխութիւնն:

Բայց քննելի է, թէ ընդէ՞ր երկոտասանս միայն կոչեաց զյխատորս յառաքելութիւն եւ ո՛չ աւելի կամ նուազ: Արդ՝ բազում ունի խորհուրդ թիւ երկոտասանիդ, այլ մեզ չափաւորն է սիրելի, զոր սակաւութ ծանուցուք. նախ՝ ըստ օրինակին, եւ երկրորդ՝ ըստ գորութեան թոյլն, եւ երրորդ՝ ըստ խորհրդոյն: Ըստ օրինակին՝ զի տարի երկոտասան ամսօք առնու զկատարումն, եւ արեգակն նոյնչափ կենդանատեսակօք վարի, եւ երկոտասան ժամ է ւարդ եւ զիշերոյ ի հասարակածիդ զուգօրէին, եւ զուգաթիւ մասամբ բաժանեալ է երկիր, եւ կազմուած անդամոց մարմնոյս բնութեան: Եւ երկոտասանք էին որդիքն Յակոբայ², որք ի նոյնքան ցեղս որոշեցան, եւ աղբիւրքն յԵլիմ եւ վտակքն ի վիմէն բղխեալ հաւասարաթիւ³, եւ նոյնքան քարիւ շինեաց Մոսէս սեղան⁴ եւ յեզր Յորդանանու կանգնեաց Յեսու արձան⁵ եւ յայսչափ վիճակս բաժանեաց զերկիրն պարզեւական⁶: Եւ երկոտասան իշխան զխորանն նաւակատեօք պատուեցին⁷, եւ երկոտասանք էին ակունք ի վերայ վակասին⁸, եւ նոյնքան թիւ արանց, որ զերկիրն լրտեսեցին⁹: Եւ թեք սերորէիցն¹⁰ երկոտասան՝ ի տեսութիւն մարգարէին¹¹, եւ նոյնքան դասք հրեշտակաց, որպէս ոմանք ասացին ըստ Տեառն ձայնին¹²: Եւ տաճարին դրունք այսչափ էին, զոր ետես Եզեկիէլ, եւ Յովհան՝ ի յայտնութիւն Բանիւն¹³, եւ երկոտասան էին մարգարէքն: Եւ նոյնքան թոյլ Սողոմոն զեզինսն կարգեաց, յորոյ վերայ էր ծովն պղնձի¹⁴, եւ երկոտասանամեայ թագաւորեալ իմաստնացաւ¹⁵ եւ Դանիէլ մարգարէացաւ¹, եւ երկոտասանամեայ Յիսուս ի

¹ ՏՁ պատրիարքութիւն

² Ծննդ. ԼԵ 22, ԽԹ 28

³ Ելք ժԵ 27, Թիւք ԼԳ 9

⁴ Ելք ԻԴ 4

⁵ Յեսու Դ 3-20

⁶ Յեսու ժԸ 10 - ԻԱ 42

⁷ Թիւք Ա 44

⁸ Ելք ԻԸ 21

⁹ ԲՕր. Ա 23

¹⁰ ՏՁ սերորէիցն (այսպէս է և այլուր. սերօբէ] սերօբէ):

¹¹ Ես. 2 2

¹² Գուցե Մատթ. ԻԶ 53

¹³ Եզեկ. ԽԸ 31, Յայտ. ԻԱ 21

¹⁴ ԳԹագ. Է 25

¹⁵ ԳԹագ. Բ 12

ի Տաճարին ընդ վարդապետսն խօսէր²: Ահա ըստ այսչափ օրինակի երկոտասան կոչեցան առաքելալքն ի Տեառնէ, զոր թէ որ կամեսցի, դիրին է համեմատել եւ զօրինակաւ եղեալսն առ սոսա ստուգել:

Եւ դարձեալ՝ տեսցուք զգօրութիւն թուոյն. զի թիւդ այդ հինգանկիւնի է, եւ գոյանայ յերից, մէկ, հինգ, երկոտասան, որ նշանակէ զերկոտասան առաքելալքն³, որ զհնգեկի զգայութեամբ գոյաորեալքս յԵրիս Անճնաւորութեանն եւ ի Սի Աստուածութեանն պաշտօն վերածեցին: Նաեւ զի երկոտասան թիւդ, ըստ թուական արուեստին, ի գերակատար թուոցն է, որոյ մասունքն բաղադրեալ ծնանին զվեշտասանն, քանզի մասունք սորա՝ վեց եւ չորս եւ երեք եւ երկու եւ մէկ, լինին տասն եւ վեց, որ օրինակ գոյ գերազանցութեան սրբոց առաքելոցն, որք ի հողեղէն բնութենէս գոյով՝ գերակատար առաքիւնութեամբ քան զհրեղէնսն գերազանցեցին: Նորա եւ քարինք սուրբք գոյով հաստատեալ ի վերայ վիմի, յորոց խորհուրդ դնենք երկոտասան վէմս ի հիմունս եկեղեցոյ: Ասասցուք եւ զխորհուրդն, քանզի տասն էին հին պատուիրանքն, իսկ երկու նոր կտակարանքս՝ հաւատ եւ գործ, որոց սպասաւորք եւ քարոզք եղեն առաքելալքն: Եւ դարձեալ՝ զի երկոտասան՝ ութն է եւ չորս. ութն՝ ութն դարուն խորհուրդ, յորում յութերորդի ատուր եւ Տէրն յարեաւ, իսկ չորսն՝ չորս կողմն տիեզերաց, որոց քարոզեցին զյաւիտենական կեանսն ընդունել:

Եւ առաքելոցն երկոտասանից՝ էին անուանք⁴ այսոքիկ (Ժ 2):

Ձի թէպէտ ամենայն իր առանց անուան մերձ է յանգոյթիւն եւ անուամբ առնու զկատարումն, սակայն անուն երկրորդ է ստորադրութեան իրի, վասն այսորիկ նախ կոչմամբն ծնաւ զնոսա շնորհօք եւ այժմ զանուանս նոցա յորջորջէ: Եւ դարձեալ՝ զի անուն ո՛չ բնութեամբ է, այլ շարադրութեամբ, սակայն համառօտ սահման է բնութեան, վասն որոյ ասէ թէ՝ «Առաքելոցն անուանքն այսոքիկ էին»⁵, այսինքն՝ էութեանց նոցին նշանակիչ եւ զործոց նոցին բացայայտիչ՝ ըստ այնմ. «Ձինչ եւ անուանեաց Ադամ՝ այն

¹ Օրինակն աստվածաշնչային չէ:

² Ղուկ. Բ 42-47

³ ՏՁ առաքելալքն

⁴ Ձ ~ անուանք երկոտասանից էին

⁵ Տ են

անուն է նորա» (Ծճճդ. Բ 19), քանզի յարմար բախեցաւ. այսպէս եւ սոցայս, քանզի մարգարէաբար եղաւ, քանզի յերից է կոչումն անուան` յիրէն եւ ի ձայնէն եւ ի գործոյն:

Առաջինն՝ Սիմոն¹, անուանեալն Պետրոս, եւ Անդրէաս եղբայր նորա:

Թէպէտ ամենեքեան զլիսաւորք էին, սակայն զՊետրոս նոցին զլուխ կարգէ, եւ ոչ միայն նոցա, այլեւ զառանց եւ ոչխարաց եւ խոյոց հովիւ ընտրէ: Բայց քանզի է առաջին, որ դասիւ է, եւ է` որ զօրութեամբ, իսկ սա երկոքունք պատարուն զոլով` դասիւ յաղագս ծերագոյն հասակին, եւ զօրութեամբ` վասն ջերմեռանդ սիրոյն եւ խիզախ հաւատոյն, վասն որոյ յարգելով զառաքինութեան կոչումն տայ, քանզի նախ «Սիմոն» ի ծնողաց, որ լսի «հնազանդ» կամ «տրտում լուր», եւ «Պետրոս»` ի շնորհաց, որ թարգմանի «վէմ» կամ «ճանաչող», կամ «ծանուցեալ», կամ «արձակող», կամ «ոտք բոկացեալ»: Իսկ Անդրէաս, որ լսի «պատասխանող կերակրոյ» կամ «գեղեցիկ պատկեր», կամ «գեղեցկութիւն», կամ «յազգէ սիրեցեալ», բաւական համարի յազգականութենէն յորջորջել եւ ասել «եղբայր նորա», այսինքն` հանգէտ առաքինութեանն Պետրոսի եւ ծննդեանն եւ քարոզութեանն եւ մահուանն եւս` կցորդեալ խաչի: Բանզի տքա ամոլք զոլով հաւատոյ եւ իշխանք ազգաց, յազգէ Նեփթադիմայ, որք բարձեալ զլուծ չարչարանաց խաչին եւ քարոզութեան Աւետարանին` եւ ձգեցին արօրով Բանին զսերմն հաւատոյ ի սիրտս դաշտաց բանական ազգաց մարդկային:

Պետրոս նախ հաստատեաց զառաջին խորանն յԱնտիոք եւ կոչեաց զհաւատացեալսն քրիստոնէայս, եւ շրջեալ քարոզեաց ի Գալիլէա, ի Պոնտոս եւ յամենայն Կապպադովկիա, յետոյ յԻտալիա եւ սպա ի Հռոմ, եւ անդ եղեւ զամս քսան եւ հինգ եւ գրեաց զերկու թուղթն կաթուղիկէից, եւ ի Ներոնէ խաչեալ զլիսիվայր յառաջ քան զերիս կաղանդացն յուլիս ամսոյ` եւ թաղի ի նմին² քաղաքի: Իսկ Անդրէաս` ի Բեթսայիդա³ քաղաքէ, նախ աշակերտեալ Յովհաննու եւ սպա կոչեցեալ ի Տեառնէ` զնաց զհետ Նորա, եւ յետ յարութեանն Քրիստոսի զնաց ի քարոզութիւն եւ քարոզեաց

¹ ՏՁ Սիմոն (այսպէս` ամենուր):

² Ձ նոյն

³ ՏՁ Բեթսայիդա (այսպէս` ամենուր):

շնագլխաց¹ ազգին եւ մարդակերացն², եւ ապա ի Նիկիա եւ ի Նիկոմիդեա: Եւ ապա զնաց ի սաբաստացոց քաղաքն մեծ, ուր բնակ ափսարացոց եւ Փարիս զետ, ուր եւ ներքսագոյն եթեովպացիք բնակէին, եւ յետոյ խաչեցաւ ի պարտեզս քայեցոց՝ յԵգիպտէ դատաւորէ յերեսուն նոյեմբեր ամսոյ, եւ անդ եղաւ մարմինն նորա:

Յակոբոս Չերեղեայ եւ Յովհաննէս եղբայր նորա (Ժ 3):

Չսոսա հարբն նշանակէ, ինձ թուի՝ բարեբարոյ գոյով հորն. յայտ յայնմանէ է, զի յորժամ թողին զնաւն եւ զհայրն, ոչինչ զշարեցաւ: Նա՛ զի եւ գոյր ա՛յլ Յակոբոս, վասն այսորիկ զսա Չերեղեաւ ծանուցանէ, որ է «կրթօղ»: Բայց ո՛չ ըստ պատուի դնէ, զի Յովհաննէս ոչ միայն քան զայսն, այլեւ քան զեղբայրն մեծ իցէ. յայտ ի համարձակութենէն էր, զի զլանջօքն Տեառն անկանէր եւ «Տէր, ո՞վ իցէ» հարցանէր (Յովհ. ԺԳ 25): Մակայն աստ վասն հնազանդութեանն յետոյ դասէ, քանզի «Յովհաննէս»-ը «հնազանդութիւն» թարգմանի կամ «Տեառն շնորհք», կամ «որով է շնորհք», գորոց զստոյգ պատիւն փոփոխմամբ անուանցն Մարկոս ասէ թէ՛ «Եղ նոցա անուանս Բաներեզէս, որ է Որդիք որոտման» (Մարկ. Գ 17), յազգէ Չարուղոնի: Եւ Յակոբոս չոգաւ քարոզել ի Սպանիա եւ դարձաւ յԵրուսաղէմ, եւ սպանաւ ի Հերովդէէ ի Կեսարիա պաղեստինացոց՝ յուլիս ամսոյ ի քսան եւ չորս, եւ մարմինն նորա արկաւ ի ծով, եւ եհան զնա ի վիճակն իւր: Իսկ Յովհաննէս սիրելի աշակերտն Տեառն, որ գրեաց զԱւետարանն եւ զաստուածական տեսիլն, եւ զերիս թողթսն կաթողիկեայց³, յետ ննջման Կուսին զնաց յԵփեսոս եւ կործանեաց զկուռսն Արտեմիդեայ: Եւ Դոմետիանոս կայսրն արքորեաց զնա ի Պատմոս կղզին, եւ անդ քարոզեալ դարձոյց զամենեսեան: Եւ հրամանաւ Ներուսասայ դարձաւ յԵփեսոս եւ զբազումս դարձոյց: Եւ լեալ ամաց հարիւր եւ տասն եւ եօթն՝ ննջեաց անդ յաւուր կիրակէի⁴ եւ յետ երից արուրց փոխեցաւ ի տեղի հրաշից՝ ըստ Տեառն թէ՛ «Ես կամիմ, թէ կացցէ դա, մինչեւ Ես գամ» (Յովհ. ԻԱ 23):

¹ Տ շնագլխաց

² Չ ~ եւ մարդակերացն ազգին

³ Չ կաթողիկեայց

⁴ Չ կիրակէի

Փիլիպպոս եւ Բարթողոմէոս¹ :

Չսոցա տեղին եւ կամ զազգն ոչ ցուցանէ, զի կամ ո՛չ ունէին ազգականք եւ կամ եկք էին օտարականք, այլ «Փիլիպպոս» թարգմանի «քերան ջահից» կամ «քերան ձեռաց», կամ «քերան հմայութեան», յազգէ Ասերայ ի Բեթսայիդա քաղաքէ Անդրեայ եւ Պետրոսի² : Քարոզեաց զԱւետարանն ի Փոփոզիա եւ նահատակութեամբ վերափոխեալ յԵրապոլիս³ ի մայիս ամսոյ ի⁴ մէկ՝ եւ դնի անդ մարմին նորա: Իսկ Բարթողոմէոս, որ թարգմանի «գարմ ստոյգ Աստուծոյ» կամ «որդի կախողի զջոր», կամ «որդի կախեալ զիս», ի ցեղէն Իսաքարայ՝ յԱգաւիթ գեղջէ, քարոզեաց զԱւետարանն Մատթէոսի՝ հնդկաց եւ պարթեւաց, եւ եկեալ ի Հայս՝ խաչեցաւ ի Սանատրուկ արքայէ, եւ հանաւ մորթ նորա, եւ թաղեցաւ յՈւրբանոս քաղաք, յօգոստոս ամսոյ ի քսան եւ չորս:

Թովմաս եւ Մատթէոս մաքսաւոր:

Ղուկաս ո՛չ այսպէս, այլ նախակարգէ զՄատթէոս քան զԹովմաս⁵՝ ոչ միայն վասն հասակին, այլեւ վասն Աւետարանին գրութեան. բայց աստ զինքն յետոյ դնէ եւ վասն խոնարհութեան «մաքսաւոր» անուանէ՝ առ ի խրատ մեզ, զի յորժամ ի պատիւ կոչիցինք, զչափ անձանց մերոց զիտասցուք եւ զառաջին վարսն մի՛ մոռասցուք: Թովմաս, որ ասի Երկուորեակ⁶ կամ «անհաս խորութիւն», ի ցեղէն Յուդայ, քարոզեաց պարթեւաց եւ մարաց եւ պարսից եւ հնդկաց, եւ կատարի ի Բալամիդէս քաղաքի ի Սշդեհէ արքայէ՝ աշտէի խոցեալ ի դեկտեմբեր ամսոյ ի քսան եւ մէկ, եւ բերաւ նշխար ի Հայս: Իսկ Մատթէոս աւետարանիչ, որ ասի «երգ կենաց» կամ «պարգեւ խրատու», յազգէն Իսաքարայ՝ ի Նազարեթ, երբայնցի լեզուաւ գրեաց զԱւետարանն Երուսաղէմի Եկեղեցոյն, եւ քարոզեաց զՔրիստոս ի բազում գաւառս, եւ հասեալ ի Չմիւռին⁷ քաղաք մարդակերաց՝ դարձոյց զթագաւորն, եւ կատարեցաւ հրով ի սեպտեմբեր ամսոյ ի քսան:

Յակոբոս Ալիեայ եւ Ղերէոս, որ անուանեցան Թաղէոս:

¹ Տ Բարթողոմէոս Չ Բարթոլոմէոս (այսպէս է և այլուր. բոլոր ձևերը դարձրել ենք Բարթողոմէոս):

² Յովհ. Ա 44

³ Երապոլիս

⁴ Չ > ի

⁵ Տ Չ Թովմաս (այսպէս է և այլուր):

⁶ Չ երկուորեակ

⁷ Չ Չմիւռին

ՉՅակորբոսս զայս ոմանք մաքսատրոս ասեն կոչեալ ի Տեառնէ որպէս զՄատթէոս, զոր ի կարգի կոչմանն Մարկոս եւ Ղուկաս Ղեւի Ալփեայ գրեն¹, զի կամ երկանուն էր, կամ անուն նորա Ղեւի² Ալփեայ որդի, եւ կամ նախ Ղեւի³ եւ յետոյ Յակորբոս կոչեցաւ, եւ կամ յազգէ Ղեւեայ էր: Բայց մեք ստուգեցաք ի բազմաց զսա որդի զոյ Ալփեոսի, եղբայր Յուդայ Թադէոսի եւ Սիմոնի եւ Ուսէի, զոր ոմանք «Յակոր փոքրիկ» ասեն, եւ է սա «եղբայր Տեառն» կոչեցեալ յառաքելոցն, զոր ոմանք որդիք ասեն զսոսա Յովսէփայ, որ Աստուածահայրն⁴ անուանեցաւ: Բայց յոյժ ստեն, զի ոչ գտանեմք ի զիրս որդիս Յովսէփայ կոչել, թէպէտ եղբարս⁵ Տեառն ասեն վասն ընտանութեանն⁶: Քանզի Յովսէփ կուսան զորով՝ Կուսին խօսնայր անուանեցաւ, եւ թէ որ զբանն Եսայեայ ի մէջ բերցէ թէ՛ «Տաց զսա առն, որ գիտիցէ դպրութիւն» (հմմտ. Ես. ԲԹ 11), զայս ասասցուք, թէ ոչ ի չէզոքացն էր Յովսէփ, այլ ի կատարեալ արանց: Եւ սա առաջին եպիսկոպոս կարգեցաւ յԵրուսաղէմ⁷ յառաքելոցն, զոր ոմանք ի թիւ երկոտասանիցն զսա ոչ դասեն՝ ոչ զիտելով, թէ երեքին եղբարքն Տեառն յերկոտասանսն կարգեցան, որ եւ աստ զրեաց առ հեթանոսաց եկեղեցիս «ի բաց կալ ի զոհելոյ եւ ի պոռնկութենէ եւ ի հեղձուցելոյ եւ յարենէ» (հմմտ. Գործք ԺԵ 29), զորս այժմ Մատթէոս ըստ կարգի թուէ: Եւ կացեալ եպիսկոպոս յԵրուսաղէմ պարկեշտ կրօնիք ըստ օրինի նազորացոցն⁸, որ եւ «արդար» անուանեցաւ եւ զրեաց զթուղթն կաթողիկէից, զոր հանեալ հրէայքն ի թեւս տաճարին եւ ասեն. «Ո՞ր է դուռն Յիսուսի», եւ նա ասէ բարձր ձայնիւ. «Չի՞ հարցանէք վասն Յիսուսի, Նա նստեալ է ընդ աջմէ Հօր եւ զալոց է դատել զաշխարհ»: Եւ բազումք հաւատացին, եւ դպիրքն ընկեցին զնա յաշտարակէ Տաճարին եւ սկսան քարկոծել, եւ մի ոմն թափչաւ եհար զգլուխն, եւ կատարեցաւ ի հոկտեմբեր ամսոյ ի քսան երեք:

Իսկ Ղեբէոս⁹, որ անուանեցաւն Թադէոս, եղբայր է սա Յակորբայ Ալփեայ, զոր Ղուկաս Յուդա Յակորբեան անուանէ յերկոսին

¹ Մարկ. Բ 14, Գ 18, Ղուկ. Ե 27, Զ 15

² Ղ Լեւի

³ Ղ Լեւի

⁴ Ս աստուածահայր

⁵ Տ եղբայր

⁶ Մատթ. ԺԲ 46, ԺԳ 55, Գործք Ա 14

⁷ Ղ Երուսաղէմ աշխարհ

⁸ ՏՂ Նազորացոցն

⁹ Ղ Լեբէոս (այսպէս՝ ամենուր):

շարադրությունս իւր¹, եւ սա եւ Մարկոս [զ]Ղեբէնս Թաղէնս անուանեն², զի ըստ բազում արդեանցն էառ եւ զճայն կոչմանցն: Եւ կոչի Յուդա, որ է «խոստովանութիւն հաւատոյ» եւ «փառաց երկնատրին տարփացեալ», եւ Թաղէնս, որ է «ընկալ զիշխան» կամ «շնորհաց առատութիւն», կամ ըստ լատին բառին՝ «թա»՝ մեծ, եւ «ղէնս»՝ Աստուած, այսինքն՝ մեծ Աստուծոյն որդեգրեալ: Իսկ Ղեբէնս ասի «սիրտ» եւ «հոգի», որ է պահօղ սրտի՝ Հոգւոյն շնորհօք, կամ Ղեբէնս՝ «խեղեփի մատն» ընդ Յակոբայ, որ նախ Յուդա ի ծնողաց եւ յետոյ Թաղէնս, զի մի՛ խառնակիցի ընդ մատնիչն: Կոչեցաւ եւ «եղբայր Տեանն» եւ գրեաց զթողթն կաթուղիկէից³ որ յիւր անուն, եւ քարոզեաց ի Միջագետս եւ ի Հայս, եւ բժշկեաց զԱրգար թագաւոր հայոց եւ ասորոց, եւ լուսաւորեաց զԷառն Կորդուաց⁴ բազում հրաշիք, եւ եկեալ առ Սանատրուկ արքայ հայոց՝ զդուստր թագաւորին զտուրքն Սանդուխտ հարսնացոյց Քրիստոսի, եւ ի նմանէ կատարեցաւ յԱրտագ գաւառի, ի Շաւարշան քաղաքի, ի հոկտեմբեր ամսոյ ի քսան երեք: Եւ եղաւ ի նմին տեղոջ, ուր կատարեցաւ, ի վիմամիջի միոջ հրաշիք, եւ յետոյ յայտնեցաւ Կիրակոսի միոյ ճգնաւորի, եւ շինեցաւ եկեղեցի յանուն նորա եւ կոչի այժմ «Թաղէնս առաքեալ»:

Իսկ են ոմանք, որ ասեն, թէ Յուդա Յակոբեանն յՈրմի կատարեցաւ. զիտասցէ այնպիսին, զի այն, որ Յուդայ Յակոբեանն⁵ ասի, յոյժ սուտ է. այլ կամ եկեղեցի յանուն նորա շինեալ անդ, եւ կամ Յուդա միայն աշակերտ Բարթողոմէոսի առաքելոյ յեօթանասնիցն, որպէս ունի պատմութիւնն, եւ գտանես յանուանս եօթանասնիցն: Նա՛ կատարեցաւ անդ, յորում սխալեալ ոմանք ի հոմանունութիւն անուանն՝ զՅուդայն «Յուդա Յակոբեան»⁶ կոչեցին, քանզի ճշմարտապէս այսպէս է, որպէս գրեցաւ. է սա եղբայր Տեանն եւ եղեալ զյիսաւոր եօթանասնիցն:

Միմովն Կանանացի եւ Յուդա Իսկարիովուացի, որ եւ մատնեացն զՆա (Ժ

4):

¹ Ղուկ. 2 16, Գործք Ա 13

² Մատթ. Ժ 3, Մարկ. Գ 18

³ Գ կաթուղիկէից

⁴ Գ Կորդուաց

⁵ Գ Յակոբայն

⁶ Գ Յակովբայն

Եղբայր է սա Թադէի եւ Յակոբայ ընտանեացն Տեառն, զոր «Նախանձայոյզ» անուանէ Ղուկաս յերկակի շարադրութիւնս իւր, որ մեկնի «տրտում լուր» կամ «եղեալ», կամ «հնազանդութիւն»: Եւ յիրաւի՝ զի նախ ընդ լուրն Տեառն տրտմէր, իսկ յետոյ եղեալ հիմն Եկեղեցոյ՝ հնազանդեցաւ Տեառն, զորմէ ոմանք ասեն, թէ վրէժխնդիր էր Տեառն, եւ այլք թէ՛ նախանձ ընդդէմ, քանզի «Կանա» նախանձ լսի, թէպէտ ոմանք գտեղին կոչեն: Եւ ի տրա հարսանիսն չոգաւ Տէրն ի Կանա գալիլեացոց եւ զջորն զհնի արար, որով կորզեաց զսա յաշակերտութիւն, վասն որոյ «կանանացի» ասէ զսա, քանզի զոմանս ի հարց¹ եւ զոմանս ի բնակութենէն անուանէ, որով զյատկութիւն նոցին ցուցանէ: Այլք ասեն, թէ Սիմոնս այս Եփրեմեան էր, եւ ոչ փոխեաց զանուն նորա Տէրն վասն Պետրոսի, իսկ այլք ոմանք զՆաթանայէլ ասեն զսա՝ որ առ թզենեան Տէրն տեսեալ², ի մանկակոտոր սրոյն զերծեալ, որ եւ դաւանեաց զՏէրն Աստուածորդի եւ Թագաւոր Իսրայէլի, եւ զովեցաւ ի Տեառնէ «արդարեւ իսրայէլացի» (Յովհ. Ա 47): Բայց ինձ նախասացեալն յարմարագոյն թուի, իսկ եւ զՅուդա մատնիչն ի քաղաքէն ծանուցանէ, զի ի Յուդայէ Յակոբեան³ զատուցանէ: Բայց դու տես եւ զհեզութիւն աւետարանչիս, զի ոչ ասաց «Ժանդն եւ ամենաժանդ թշուառականն, որ արժանացաւ ի կարգ սրբազան զնդին մտանել, եւ Վարդապետին եւ Կոչողին դաւաճանիչ եղել», այլ միայն թէ՛ «Յուդա Իսկարիովուացի, որ եւ մատնեացն զՆա»:

Ձնոսա երկրոտասանեսին առաքեաց Յիսուս, պատուիրեաց նոցա եւ ասէ (Ժ 5):

Շոխացուցանէ աւետարանիչս, թէ զնոսա, զորս կոչեաց եւ մեծարեաց իշխանութեանն շնորհօք, զի թէպէտ ոմանք աղքատք էին եւ ձկնորսք, սակայն յետ կոչմանն փարթամացոյց եւ արդարացոյց՝ ըստ առաքելոյ թէ՛ «Ձորս կոչեաց, զնոսին եւ արդարացոյց, եւ զորս արդարացոյց, զնոսին եւ փառաւոր արար» (Հոռն. Ը 30). զնոսա առաքեաց յի՞նչ պէտս. զի քարոզեցեն առանց վարձու եւ փրկեցեն զմարդիկ ի մեղաց, որպէս ինքն Յիսուս Փրկիչ: Եւ դարձեալ՝ զի ուսուցեն բանիւ եւ հաստատեցեն զայն նշանօք, եւ չարչարեցին իբրեւ զՆա եւ պատկեր լիցին աստուածութեան

¹ Գ հարց ցուցանէ

² Յովհ. Ա 45-50

³ Գ Յակոբայն

փառաց Նորա: Եւ պատուիրեաց եւ ասէ, իբր բարեկամաց եւ սիրելեաց, զարժանաւոր պատուիրանս՝ ըստ այնմ թէ՛ «Գուք բարեկամք Իմ էք...., զի զոր լուայ ի Հօրէ՛ ծանուցի ձեզ» (Յովհ. ԺԵ 14-15), քանզի յետ հասարակաց պատուիրանացն՝ այժմ բարձրագոյն պատուէր վարդապետացն դնէ եւ ի նոցայնոցն բնաւին առ սոսա ոչ յիշատակէ, զի զայն անթերի ունէին, այլ այլ իմն մեծագոյն, եւ է այսպիսի.

Ի ճանապարհս հեթանոսաց մի՛ երթայցէք եւ ի քաղաք սամարացոց մի՛ մտանիցէք (Ժ 5):

Այլ երթայք առաւել առ ոչխարսն կորուսեալս տանն Իսրայէլի (Ժ 6):

Նախ անյիշաչարութիւն ուսուցանէ աշակերտացն, զի թէպէտ, ասէ, թշնամանեցին զԻս եւ «դիւահար» կոչեցին, սակայն այնքան ազատ եմ ի նախանձուէ, զի զերեսս ի նոցանէ ոչ դարձուցանեմ եւ ոչ յայլոց արգելում միայն, այլեւ ընդ ճանապարհս, որ ընդ նոսա տանիցի, ոչ հրամայեմ ընթանալ ընդ այն: Եւ երկրորդ՝ խնու գրեթեանս հրէիցն, զի մի՛ ասիցեն թէ՛ «Առ անթլփատս չոզան եւ ընդ հակառակս Օրինաց մերոց՝ առ սամարացիսն ընթացան, վասն այսորիկ ոչ հաւատացաք», եւ իրաւունս համարիցին զփախչելն, յաղազս որոյ թողու գդիւրընկալսն եւ առ դժուարընկալսն առաքէ, զի զխնամս Իւր որ առ նոսա՝ յայտ առնիցէ: Եւ «ոչխարս կորուսեալս» ասէ, զի զմիտս նոցա յանկուցանէ եւ ներելոյ եւ թողութեան պատճառս կազմէ, որպէս զի մի՛ յուսահատեալ ի բաց անկանիցին, այլ դարձցին եւ բժշկեցին: Իսկ եթէ ոչ դառնայցեն, ինքեանք կորստեան անձանց պատճառ լինիցին, որպէս յորժամ ասէին. «Ձեզ բանս այս փրկութիւն առաքեցաւ. որովհետեւ ոչ ընդունիք՝ դառնամք ի հեթանոսս» (Իմմտ. Գործք ԺԳ 26, 46): Եւ երրորդ՝ զառաքեալսն զգաստացուցանէ, թէ զկորուսեալսն բազում գուն դնելով՝ ջանից պարտ է ստանալ, մինչ զի հնարիք եւ տաժանական կրիք զնոսա գտանելով ի ճշմարտութեան փարախսն հաւաքիցէք:

Իսկ առ ի միտս՝ ի վարս հեթանոսական սովորութեանցն մի՛ կոխիցէք եւ ի թակարդս՝ չարին մի՛ որս եղեալ ըմբռնիցիք, քանզի «սամարիա»-յն որս լսի. այլ առաւել զգօն եւ հանդարտ կենօք, մարտր եւ ողջակիզելի ոչխար գոլով, աստուածատե՛ս լիջիք, եւ զի

¹ Զ > դնելով

² Տ թակարթս (այսպէս է և այլուր. մերթ թակարթ, մերթ թակարդ):

յայտնանէ վրիպեալս¹ գտանիջիք եւ ի թիւ եւ ի կարգ զպակասեալն եւ զթիրեալն արձանացուցիք:

Եւ իբրեւ երթայցէք, քարոզեցէք եւ ասացէք, թէ մերձեալ է արքայութիւն երկնից (Ժ 7):

Տեսանէ՞ս գառաբերութեանն պատիւ, թէ ո՞րքան փարթամացան քան զառաջինսն, զի ոչինչ երեւելի կամ մարմնատր քարոզել հրամայէ, որպէս Մոսէս եւ այլ մարգարէքն, որք երկրի ժառանգութիւն եւ անցատր կենաց բարութիւն խոստանային, այլ նոր իմն եւ չքնաղ զերկնից² բարութիւնսն եւ որ ինչ անդ երանութիւնքն են՝ անտարանէին: Եւ դարձեալ՝ «արքայութիւն» զԻնքն անուանէ, որոց ասէ թէ՛՝ «ասացէք»։ մի՛ անհնարս թուի ձեզ եւ կամ ի վարանս տարակուսի մատնիցիք յաղագս դժուարութեան երկնից զպատեանն, այլ աւանիկ Արքայն երկնից մերձ է առ ձեզ մարմնատր զայստեանք, ուստի հաւատով ի Նա յարակցեալ՝ յերկինս ճեմիք, թէպէտ մարմնով ի վերայ երկրի տաղաւարիք, նաեւ զհանդերձեալն Օր «արքայութեանն» անուամբ յիշեցուցանէ, թէ մերձեալ է դատաստանին ժամանակ եւ հատուցման, առ Նա՛ փութացիք, զի մի՛ կշտամբեալ գտանիցիք: Բայց «քարոզեցէք»-ն համարձակութիւն տայ նոցա, թէ ոչ ի ծածուկ, այլ յայտնի եւ հանդիսատր բանի՛ ասացէք, զի զերկիւղ տկարութեանն բարձի շնորհաբաշխութեանն տրիւք: Եւ զի մի՛ ասիցեն. «Եթէ ոչ լուիցեն, զի՞նչ ասացուք», ասէ՛ ի գործ ածէք զնշանսն առ ի հաստատութիւն բանին, որպէս Ես, վասն որոյ ի վերայ բերէ.

Ջիւանդս բժշկեցէ՛ք, զբորոտս սրբեցէ՛ք, զդէս հանէ՛ք (Ժ 8):

Չոր ինչ Ինքն արար բանիւ, զայն նոցա աւանդէ, բայց ի փոքունց սկսեալ՝ զհրաշսն աճեցուցանէ ի բարձրագոյնսն, զի հիւանդութիւն դիւրաբժշկելի իմն է եւ բազմաց ձեռնհաս, իսկ բորոտութիւնն՝ դժուարաբուժելի ախտ, սակայն ոչ անհնար: Բայց այսահարութիւնն՝ անբժշկելի եւ Աստուծոյ ձեռինն կարօտ, զորոց ամենեցունց զօրութիւնս առատապէս շնորհեաց, քանզի զգլխատրս յիշելով՝ եւ զմաստնսն եւս թուէ, վասն զի բազմադիմիք են հիւանդութիւնք եւ այսահարութիւնք. բայց ոչ հրաման տայ թէ՛ բժշկե-

¹ Տ վրիպեալսն

² Զ զերկնի

³ Տ > թէ

ցէք, քանզի այն տուա՛ւ նախ, այլ՝ որպէս թէ կարօ՛ղ էք՝ այնպէս ձեւացուցանէ: Դարձեալ՝ ո՛չ զմարմնաւոր ախտս միայն ասէ, այլև զհոգեւորս, քանզի կրկին են հիւանդութիւնք՝ որպէս մարմնոյ, այսպէս եւ մտաց, նոյնպէս եւ այլքն, քանզի հիւանդութիւն է հոգւոյ՝ զայթազդել յաստուածային նախախնամութեանն իմաստս եւ տկարանալ մտօք ընդ արդարութեան իրաւունս:

Եւ բորոտութիւն է մտաց կեղծաւորեալ չարութիւն, որ բորբոսեալ նեխութեան վիրօք մորմնքի եւ ի ներքուստ կծեալ ի խղճէ մտացն դատի: Եւ կամ՝ նշան հերձուածողացն, զոր Օրէնքն բաժանեաց ի գլուխ եւ ի մօրուս, ի մարմին եւ ի մորթ, ի սպի յայրեցած եւ յայլ գոյնս, ի հանդերձս¹ եւ ի տուն, եւ պղծել հրամայեաց եւ ըստ օրինի սրբել², որ է օրինակ բոր գլխոյն, յորժամ խօսիցի հայիոյութեամբ հերձուած յԱստուած, որպէս Սաբէլ եւ Արիոս, որոց թպէտ հակառակ էր աղանդն, բայց հաւասար էր ամբարշտութիւնն, այսպէս եւ ի Գլուխն մեր Քրիստոս, որպէս Նեստոր եւ Եւտիքէս: Իսկ մօրուաց³ բոր՝ որք առաքելոց կամ սրբոց անպատուութիւն ղնեն եւ կամ հերձուածս խօսին զրպարտութեամբ, զի որպէս մօրուսն⁴ փառք է մարդոյ, այսպէս եւ սուրբքն՝ մարմնոյ Եկեղեցւոյ Քրիստոսի: Իսկ ի մարմին բորոտութիւն է, որք զսուրբ Եկեղեցի բամբասեն եւ հակառակին հրամանաց նորա, դարձեալ՝ որք կարծեն զհոգի, թէ ծնունդ է մարմնոյ եւ մահկանացու, որպէս Արիստոտել ասաց: Իսկ մորթոյ բոր է, որք ոչ խոստովանին յարութիւն, որպէս սաղուկեցիքն, իսկ սպի՝ յորս⁵ յետ ծանօթութեան հաւատոյ երեւի նշան առաջին մոլորութեանն կամ հին անհաւատութիւնն ուսմանն կամ գործոցն: Իսկ այրեցած է ի բոր, որք արգելուցուն ի յամուսնանալոյ եւ մեկնեցեն ի կերակրոց, զոր արար Աստուած ի վայելս մարդկան, որպէս մանիքեցիք եւ այլք, որ է սուտ ապաշխարութիւն՝ խարեալք իրեանց խղճի մտօքն իբրեւ հրացեալ երկաթով:

Իսկ կարմիրն եւ սպիտակն եւ սեւուն եւ խարտեաշ գոյնն մեղաց է նշանակութիւն. կարմիրն՝ սպանութեան կամ բարկութեան, սպիտակն՝ կեղծաւորութեան եւ սնափառութեան, իսկ սեւուն՝

¹ Զ հանդերձ

² Ղևտ. ԺԳ-ԺԴ

³ Տ մորուաց. Զ մուրուաց

⁴ ՏԶ մորուսն

⁵ Զ որք

կռապաշտութեան եւ ճենճերոյ ծխոցն, իսկ խարտեաշն՝ ստութեան լեզուի: Իսկ բոր ի տուն եւ յաման եւ ի հանդերձ եւ յառէջ¹ եւ ի թեզան. տունն նշանակէ զժողովս հերձուածողաց, իսկ աման՝ զյատուկ մեղս մարդոյ, իսկ հանդերձ՝ զմեղս որ արտաքոյ մարմնոյ է, իսկ առէջն՝ զմեղս որ ի հոգի է, իսկ թեզան²՝ որ ի զգայութիւն մարմնոյն լինի: Եւ սոքա սրբին պատարագօք, որ է սիրտ սուրբ եւ հոգի խոնարհ³, եւ եօթնօրեայ մաքրութիւնն՝ զեօթնարփի շնորհս Հոգւոյն եւ զեօթն խորհրդոյն զօրութիւն: Եւ ի բանակէ արտաքսելն յԵկեղեցոյ զորոշելն յայտնէ, պատառել⁴ հանդերձին եւ բանալ զլիտոյն զպատառումն սրտին եւ զյայտնապէս խոստովանութիւնն նշանակէ, իսկ կապել բերանոյն զլռելն ի մեղացն եւ ի հերձուածոյն օրինակէ:

Իսկ այսահարութիւն է, յորժամ որ սէզ բարութ փքանայ եւ յաղագս բարոյ ինչ գործոյ իրիք նորափառ ամբարհաւածութեամբն զոփայ՝ զամբարտաւանութեան այսն բովանդակ յանձին կրելով, զորս զամենեսեան բժշկել հրամայէ, բանիւ վարդապետութեան զմտաւորն ախտ փարատել, որպէս եւ արարին, եւ առ հաւատ այնմ՝ սքանչելագործ հրաշիւք զմարմինս նոցա բուժել:

Չրի առէք եւ ձրի՛ սուր:

Նախ՝ զի մի՛ հպարտասցին անձանց կարծել զայսպիսի ուղղութիւնս, ասէ, թէ ո՛չ վարձու⁵ վարձեցայք, այլ զԻմ ինքեան շնորհոյ ձրի յԻնէն առէք, ձրի եւ ձերոց ընդունելեացն շնորհեցէք, քանզի չիք ինչ զինս շնորհացն արժանաւորս գտանել, միայն հաւատս ամբիծ: Եւ դարձեալ՝ յազահութենէ խորշեցուցանէ, զի մի՛ մտօք անգամ յախտ ընչասիրութեանն անկանիցին, վասն զի քան զնշանսն առնել՝ յայնպիսի իրս սրբութիւն մտաց ստանալ պատուականագոյն է, յորմէ վարժեալ Պետրոս ասէր թէ՛ «Արձաթ քո ընդ քե՛զ լիցի ի կորուստ» (Գործք Ը 20), եւ Պօղոս թէ՛ «Վկայութիւնք մտաց մերոց այս են» (Խմմտ. Բ Կոր. Ա 12), «զի լաւ է ինձ մեռանել, քան զպարծանս իմ ընդունայն համարել» (Խմմտ. Ա Կոր. Թ 15), եւ զի այս այսպէս է՝ յաջորդօրդ կնքէ:

¹ ՏՁ յառէջ (այսպէս է և այլուր. առէջ] առէջ):

² Ձ ի թեզան

³ Սաղմ. Ծ 19

⁴ ՏՁ ի պատառել

⁵ Ձ վարձուք

Մի՛ ստանայք ոսկի եւ մի՛ արծաթ, եւ մի՛ պղինձ ի գօտիս ձեր՝¹ (Ժ 9):

Յորժամ զշնորհսն յիշատակեաց, ի նուաստիցն ի բարձրագոյնսն չուեաց, իսկ յորժամ վասն նիւթոցն՝ յազնուոյն ի վատթարն իջանէ, այսինքն՝ յոսկւոյն ի պղինձն, զի մի՛ միայն լաւացն, այլ եւ ոչ անարգացն հոգ տանիցին: Նաեւ այլ ազգ. զի որ ի հոգեւոր շնորհսն փոքրագոյն է, որ է հիւանդութեանց լուծումն, քան զյոյժ գեղեցիկսն ի մարմնականացն ազնուագոյն է՝ ըստ այնմ. «Ամենայն, որ ինչ պատուականագոյն է, չարժէ զնա» (Առակ. 4 15), եւ թէ՛ «Ոչ բարձցի ընդ ոսկւոյն Սոփերայ» (Յոր ԻԸ 16): Բայց է՞ր վասն զայս հրամայէ: Նախ՝ «զի արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւնն է» (Ա Տիմ. 2 10), զի նա զԱքար ի կենացն պակասեցոյց² եւ զԳէեզի բորոտութեամբ լցոյց³, եւ զամենայն ժողովուրդն յանպատին յանցոյց, եւ զՅուդաս մատնիչ ձեւացոյց: Եւ երկրորդ՝ զի մի՛ որ կարծիցէ զնոցանէ վաճառականս զոլ եւ կամ լուծափոխս, պղինձ ընդ ինքեան շրջեցուցանել եւ ոչ քարոզս, վասն այսորիկ ոչ ասաց թէ՛ մի՛ խնդրէք, այլ՝ թէ մո՛տ եւս լինիցի առնոյ, մի՛ ստանայք, այլ իբր ի թունաբեր օձից ի բաց փախնուցուք. զայս պատուէր ճշմարտապէս կատարեն ազգին հոռմայեցոց կարգաւորք եւ քարոզք: Եւ երրորդ՝ զի ազատ յամենայն հոգոց լինիցին եւ բանին եւեթ ստէպ կայցեն: Եւ չորրորդ՝ առ ի ցոյց հանդիսի զօրութեան Իւրոյ, որպէս յետոյ ասէր թէ՛ «Կարօտացա՞յք իմիք», եւ նոքա ասեն՝ ո՛չ (Իմմտ. Գուկ. ԻԲ 35-36): Եւ հինգերորդ՝ փոխանակ ոսկւոյ անապական իմաստութեամբն⁴ պսակեաց եւ փոխանակ արծաթոյ մաքուր եւ պարզ բանիւք վառեաց, եւ փոխանակ ժահատեսակ պղնձոյ զգանկութիւնս նոցա յերկինս բեւեռեաց եւ աստուածատիպ առաքինութեամբն հրեշտակաց հաւասարեաց. արդ՝ իբրու զի տքա էին, ի յանցաւորացս նիւթոյ հրաժարիլ⁵ վարժեաց:

Մի՛ պարկ ի ճանապարհի (Ժ 10):

Ձի մի՛ որ ասացէ զձեզ մուրացիկ զոլ եւ կամ պատրօղ ի վաճառս իբր փերեզակ⁶: Իսկ առ ի միտս՝ ի ճանապարհս կենցաղոյս մի՛ պարարէք զպարկ մարմնոց ձերոց՝ ըստ առաքելոյ թէ՛ «Մարմ-

¹ Զ > ձեր

² Յեսու է

³ Դ Թագ. Ե

⁴ Զ իմաստութեամբ

⁵ Զ հրաժարեալ

⁶ Զ փերեզիկ

նոյ խնամ մի՛ տանիք ի ցանկութիւնս¹» (Հոմմ. ԺԳ 14): Եւ դարձեալ՝ ի չարչարանաց մի՛ անխայէք զմարմինս, որք ի նպատակ վերին կոչմանն ընթանայք, որպէս եւ ոմն յարտաքնոցն ասէր. «Հարէք զպարկս Անաքսարքայ»:

Եւ մի՛ երկուս հանդերձ:

Ամենայն տիեզերաց առաքելոց էր զնոսա վարդապետս, իբրեւ հրեշտակս ի մարմնի կազմեալ յարդարէ, զի թէ հասարակաց ասացաւ այս, զի՞նչ ասիցեն զուսուցչապետացն, որպէս զի թեթեւ եւ ազատ լինիցին յամենայն երկրաւոր իրաց: Իսկ առ ի միտս՝ կրկին կերպարանօք իբր հանդերձի մի՛ կերպարանիք առ աչս մարդկան հաճոյացեալք² եւ ի ներքուստ չարութեամբ յղիացեալք³, այլ զբարին միայն որպէս առաջի Աստուծոյ, այնպէս եւ առաջի մարդկան խորհեսջիք, զի եւ նոքին իսկ միաբանութիւն ոչ ունին առ իրեարս, որպէս լոյս եւ խաւար: Եւ դարձեալ՝ ասացաւ Օրինօրն ո՛չ այլեւայլ հանդերձս ազանել եւ ո՛չ զբամբակ ընդ ասր խառնել⁴, որ է զերկրաւոր եւ զընչաւոր իմաստս արտաքին վարժիցն ընդ ճշմարիտ գիտութիւն Գառինն անմահի ո՛չ յօղի միաբանել եւ կամ բնաւին նոցին ուսմանցն ծառայել:

Մի՛ կօշիկ:

Չի մի՛ որ ասացէ զձեզ զինուորս կամ ձիոյ սպասաւորս. «այլ ազանել հողաթափս»՝ ըստ Մարկոսի (Մարկ. 2 9), զի այսուիկ եղիցին վարձք պատուիրանաց նոցա: Դարձեալ՝ ի փառս Մոսիսի հանէ զաշակերտսն, որպէս ասացաւ առ նա թէ՛ «Լոյժ զկօշիկս յոտից քոց, զի տեղիդ սուրբ է» (հմմտ. Ելք 9 5), քանզի նա զոսկերս արդարոյն կրէր ընդ իւր⁵, եւ սոքա զմարմին արդարացուցիչ ամենայն մարմնոց բարձեալ բերէին ընդ ինքեանսն, եւ որպէս նա անուամբ երից տանցն⁶ հաշտեցոյց զԱստուած ընդ որդիսն Յակոբայ՝ հանելով յանապատն, այսպէս եւ սոքա զամենայն ազգս Ադամայ բարձրացուցին յերկինս անուամբ Եռանձնեայ Աստուածութեանն:

¹ Զ փորձութիւնս

² Զ հաճոյացեալ

³ Զ յղիացեալ

⁴ Բ Օր. ԻԲ 11, Ղևտ. ԺԹ 19

⁵ Ելք ԺԳ 19

⁶ Զ տանն

Ելք 4 6

Իսկ առ ի միտս՝ մեռեալ մորթ է կօշիկ, որով վարժէ զաշակերտս ճշմարտութեանն զմեռելութիւն ախտից ոչ զգեւնույ, այլ մերկ եւ անհինչ, որպէս զի գեղեցիկ լիցին ոտք ատետարանչացն¹: Նաեւ այսու ի կանանց հրաժարեցուցանէ, զի որք ի սպասաւորութիւն անմահ Հացին մերձենան, արժան է ի բաց կալ ի կնոջէ, զի զՏեառն հոգացէ: Իսկ եթէ որ ընդդէմ բերցէ, թէ ընդէ՞ր սպա ի Պասեքին ուտելն կօշիկ ազանել հրամայեաց², զիտասցէ, զի «հինն էանց, եւ արդ ամենայն նոր է» (Բ Կոր. Ե 17), սպա թէ ոչ՝ թլփատեսցի եւ շարաթ պահեսցէ, եւ խտրութիւն կերակրոց արասցէ: Եւ այլ ազգ. զի որք ի մէջ Եգիպտոսի աշխարհի շրջիցին եւ հասարակ կենօք վարին, զի մի՛ յօձից ցանկութեանց խայթեալք լիցին, հրամայէ կանայս առնել, իսկ առաջնորդաց յԱստուծոյ տեսութիւն բարձրացելոց ոչ է արժան, քանզի ի Հինն ասացաւ օրինակաւ ի բանս եւ ի գործս լուծանել զկօշիկս յոտիցն Մոսիսի, իսկ ի բանս՝ զմեղր եւ զխմորեալ ոչ մերձեցուցանել ի սեղանն, թէպէտ յընծայս առաւ³, որ նշանակէ զայս, զի արդար ամուսնութիւն, որ քաղցր է յաղագս հեշտութեանն եւ խմորեալ վասն աճմանն, ընդունելի է յԵկեղեցի եւ յօրհնութիւնս գրեալ է, սակայն ի Սեղան մերձենալ եւ պատարագել՝ անարժան ցուցաւ: Այլ եւ ի Նորս կրկնեցաւ ոչ ազանել կօշիկս եւ ի սրբոցն անվրէպ կատարեցաւ՝ սկսեալ յառաքելոցն Տեառն մինչ ի թոռունս սուրբ Լուսաւորչին հայոց Գրիգորի, զի որք ոչ ունէին կանայս, ոչ առին, եւ որք ունէին, յետ սպասաւորութեան աստիճանին հրաժարեցին: Յայտ է ահա, սպա ուրեմն ամաչեսցեն որք ի կարգ երիցութեան զան եւ զՔրիստոս պատարագեն, եւ կանանց եւ մանկանց ծառայեն:

Մի՛ ցուպ:

Վասն զի ոչ առ հօտս կատաղիս ելին նոքա արածել, որպէս Մոսէս⁴, այլ առ հեզս, զի Նորին զօրութեամբն զգօնացան հօտքն: Բայց տես, զի ուր հօտն ի վերայ հովուին մոլեցաւ, թողաւ ցուպն եւ բարձաւ սուտերն. եւ աստ, զի հօտն ի խաղաղութեան են, ոչ ցուպ, այլ «գաւազան» հրամայէ առնուլ ըստ Մարկոսի (Մարկ. 2 8)՝ նիշ ուղղութեան եւ տիպ խոնարհութեան, զի մի՛ բեկանիցեն, այլ

¹ Ես. ԾԲ 7

² Ելք ԺԲ 11

³ Ղևտ. Բ 11-12

⁴ Ելք 9 1

հովուեսցեն եւ արածեսցեն: Այլ Ղուկաս ասէ՝ «մի՛ գաւազան» (Գով. Թ 3). կամ զոր սա «ցուպ» ասաց, նա «գաւազան» կոչեաց, կամ յետ հաւատոյն եւ ոչ գաւազանի կարօտանան: Եւ դարձեալ՝ «մի՛ ցուպ», զի մի՛ հակառակօրս եւ կրօնօրս զձեզ բանբասեսցեն՝ ըստ այնմ. «Ծառայի Տեառն ո՛չ է պարտ կրուել» (Բ Տիմ. Բ 24), եւ՝ «Թէ՛ որ հակառակի, մեք այնպիսի սովորութիւն ոչ ունինք, եւ ոչ եկեղեցիքն Աստուծոյ» (Ա Կոր. ԺԱ 16): Դարձեալ՝ ընդէ՞ր ասպա ասաց ի Չատկին ուտելն թէ՛ «ցուպ ի ձեռս ձեր» (Ելք ԺԲ 11), եւ աստ թէ՛ «մի՛ ցուպ», զի անդ հասարակաց ժողովրդեանն էր օրէնք, զի մի՛ գայթազդեսցին, յորժամ ուտիցեն զգառն Աստուծոյ՝ լսելով մարմին եւ արիւն, իսկ աստ առաջնորդաց է պատուէրս, որք զեր ի վերոյ քան զգայթազդութիւնս են, եւ ուղղիչ այլոց գայթազդութեանց ի ձեռն գաւազանին, վասն այն ասաց՝ «մի՛ ցուպ»:

Ձի արժանի՛ է մշակն կերակրոյ իւրոյ:

Մխիթարէ այսու. զի մի՛ ասիցեն, թէ ուստի՞ զկարեւոր պէտսն¹ վճարիցենք, ասէ թէ՛ յաշակերտելոցն՝ յաղագս շահի երկոցունց կողմանց. սոքա՛ զի մի՛ մեծամտեսցեն առ աշակերտսն, թէ զամենայն ինչ շնորհեցին եւ ի նոցանէ ոչինչ առին, եւ նոքա՛ զի մի՛ անջատել զանձինս կարծիցեն ի վարդապետացն վասն ոչ պատրաստելոյ զպիտոյս նոցին: Եւ դարձեալ՝ զի մի՛ ասիցեն՝ մուրողութեամբ հրամայես մեզ կեալ, եւ ամօք զիրսն համարիցին, վասն այսորիկ իբր զպարտք իմն ցուցանէ զկերակրելն, քանզի գոսսա «մշակս» կոչէ եւ գտորսն «վարձս» անուանէ՝ ըստ առաքելոյ. «Շա՞տ իցէ, թէ մեք² զհոգեւորն սերմանեցաք եւ ի ձէնջ զմարմնատրն հնձիցենք» (Ա Կոր. Թ 11): Իսկ առ ի միտս՝ որք զայգի պատուիրանացն Աստուծոյ մշակեն, հոգեւոր եւ երկնային շնորհացն արժանի լինին, եւ կերակրին հոգիք հանդերձ մարմնովն:

Յոր քաղաք մտանիցէք կամ ի զեղ, հարցանիցէք, թէ ո՞ է ի նմա արժանի, եւ անդ լինիջիք մինչեւ ելանիցէք անտի (Ժ 11):

Մարզէ զնոսա բանիւս, թէ հարկ է ամենայն ուրեք հասանել ձեզ, բայց յորում տեղոջ ժամանիցէք, նախ զարժանաւոր ասպնջականն հայցեսջիք, քանզի գոն ի մարդկանէ բնութեամբ բարուք լաւագոյնք եւ վատթարագոյնք, առ լաւսն, ասէ, յարակցեալ ազա-

¹ ՏՁ պէտսն

² Ձ մեք ի ձեզ

նիջիք եւ անտի մի՛ փոխիցիք: Քանզի թէպէտ ասացի, թէ արժան է մշակն կերակրոյ, ո՛չ եթէ զամենայն դուռն բացի ձեզ, այլ զի անդ բազում ճշդիւ գնայցէք յետ մշակութեան արեւտարանին քարոզութեան, եւ այն իսկ ի փառս դիպեցի ձեզ: Եւ դարձեալ՝ մի՛ ելանիցէք անտի, զի մի՛ զհիւրընկալն տրտմեցուցանիցէք եւ որկորստեան կարծիս յանձինս ձեր կարկատէք:

Եւ իբրեւ մտանիցէք ի տունն, ողջո՛յն տաջիք նմա եւ ասասջիք. «Ողջո՛յն տանս այսմիկ» (Ժ 12):

Ձի նահատակ աստուածպաշտութեան եւ քարոզ ամենայն ուրեք առաքէր, վասն այսորիկ տենչալիս գոտսա ամենեցուն ի ձեռն ողջունին առնէր, զի մի՛ դուք վասն առաջնորդութեանդ ի բազմաց ողջոյն խնդրիցէք, այլ նախ դո՛ւք տուք՝ զնոսա պատուելով ի յուսումն նոցա: Եւ երկրորդ՝ զի ողջոյն ինքն է Տէր մեր՝ ըստ առաքելոյ. «Նա է խաղաղութիւն մեր» (Եփես. Բ 14), արդ կամի, զի նախ Ինքն մտեալ բազմեցի, որպէս առ Մարիամն, եւ ապա զկնի աշակերտքն լուծանիցին: Եւ երրորդ՝ իբր զկարապետ առաքէ հաւատացելոցն, զի արասցէ խաղաղութիւն եւ պատրաստեցէ ճանապարհ մտի Նորա, եւ ապա եկեալ զկնի որոշեցէ զԻւրն, որոյ օրինակ կարգեալ գայր յամենայն դարս՝ պատմեալ՝ զհտութեամբ եւ քարոզեալ՝ անուամբ եւ այժմ կատարեալ՝ ճշմարտութեամբ: Եւ չորրորդ՝ զի ի գալ զգալի լուսոյ՝ գործեն արարածք՝ տալով միմեանց զողջոյնս սիրոյ, որով բառնի թշնամութիւն եւ ցածնու պատերազմ եւ ծանօթանան առ իրեարս: Նկարագրութիւն լիցի այս նորոյ աշխարհի, զի ի ճշմարիտ ծագման Արեգականն արդարութեան¹, ի ձեռն ողջունի քարոզութեան սուրբ առաքելոցն, բարձաւ մոլութիւն կռապաշտութեանն, եւ խափանեցաւ պատերազմ մեղաց ընդ Աստուածութեանն, եւ ճանաչեցին զԱրարիչն իւրեանց արարածքս եւ առ Նա մերձեցան: Եւ հինգերորդ՝ զոր օրինակ ողջոյն ձայնի, ելեալ ի տուողէն, երթայ առ լսողն եւ անընդհատ է առ ասողն, այսպէս եւ Հայր յաղագս ինքնութեանն առ ամենայն ոք է եւ յամենայնէ անխառն առ Ինքն դառնայ, նոյնպէս եւ Որդի իբրու

¹ Զ պատմել

² Զ քարոզել

³ Զ կատարել

⁴ Մատ. Դ 2

էր առ Հօր՝ ըստ Յովհաննոս¹, եւ երեւեցաւ առ մեզ եւ ընդ ամենայնի ամենայն եղեւ, սակայն առ Հօրէ կատարեալ եւ անբաժանաբար. զայս խորհուրդ նկարէ ողջունին:

Եթէ իցէ տունն արժանի, եկեսցէ ողջոյնն ձեր ի վերայ նորա, ապա թէ ո՛չ իցէ արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի (Ժ 13):

Ասաց նախ, թէ յոր քաղաք մտանիցէք, հարցջիք, թէ ո՛ւ է արժանի, անդ ազանիջիք: Զի մի՛ ստիցեն ո՞ր գիտէ զարժանաւորն, զի «մարդ յերեսս հայի, եւ Աստուած՝ ի սիրտս» (Ա Թագ. ԺՁ 7), այժմ ծանօթութիւն տայ, զի յարժանաւորսն, ասէ, սփռի ողջոյնն ձեր իբրեւ² զլոյս արեգական, զի ոչ միայն ողջոյն է, այլեւ օրհնութիւն, եւ պայծառանան նովաւ լսողքն, որպէս էակքս ամենայն, իսկ որք բանի միայն ընդունին եւ չեն տպաւորեալ անձինք նոցա յանդամս նորա, փոխի ողջոյնն ձեր իբրեւ զճանազայթս³ արեգականն յաշխարհէ, եւ նոքա խաւարեալ մեղօք՝ ի նսնմութեան մնան, զի առ ձեզ զժողովեալ լուսոյ ողջունին ազդեսցէ վասն անարժանութեան նոցա:

Եւ որ ոչ ընկալցի զձեզ եւ ոչ լուիցէ բանից ձերոց, իբրեւ ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ, թօթափեսջիք զփոշին յոտից ձերոց (Ժ 14):

Ո՛չ յորժամ պատիւ չդնիցեն ձեզ արարէք զայս՝ ասէ, այլ յորժամ ոչ լուիցեն բանից ձերոց, քանզի ոչ ընդունելոյն նշան ոչ լսել բանիցն է, բայց զի մի՛ անձանց, այլ բանին լինիջիք վրէժխնդիր, «թօթափեսջիք,- ասէ,- զփոշին յոտից ձերոց»: Նախ՝ զի ցուցցեն, թէ բնաւին ի նոցանէ ինչս ոչ առին, այլեւ զփոշին անգամ ի նոսա թափեցին, որ նշանակէր թէ ի ցանկութենէ ընչից ազատք են⁴, զի մի՛ ստիցեն, թէ արժաթ խնդրէին, վասն այնորիկ ոչ լուսք: Եւ երկրորդ՝ առ ի վկայութիւն կոխելոյ ձեր զճանապարհս նոցա եւ նոքա երանելի հիւրութեան ձերոյ արժանաւորք ոչ եղեն, զի մի՛ ստիցեն, թէ առ մեզ ոչ մտին: Եւ երրորդ՝ զի յայտ արասցէ, թէ վրէժ խնդրելոց է ի նոցանէ եւ իբր զփոշի հոսելոց է զնոսա հողմով ի վերայ երեսաց երկրի՝ ըստ մարգարէին⁵՝ աստ՝ զերութեամբ, եւ անդ՝ ի

¹ Յովհ. Ա 2

² Զ իբր

³ ՏԶ զճանազայթք

⁴ Զ > են

⁵ Սաղմ. Ա 4

հուրն առաքմամբ: Եւ չորրորդ՝ թէ ստուգագոյն քննութիւն առնելոց է նոցա՝ մանրագունիցն եւ նրբագունիցն:

Իսկ առ ի միտս՝ քարոզ որ յորժամ շրջիցի քարոզել ի քաղաքս եւ ի գետոս, եւ ոչ օգտեալ ի քարոզութեանցն լսողքն, բայց քարոզին պատահէ ի վարս կենացն սակաւ ինչ փոշետեսակ յանցումաց դիպումս՝ ծուլութեան կամ կերակրոյ յփութիւն, նոքին իսկ անհաւան ժողովորդն դատ տայցեն վասն մեղաց վարդապետին եւ տեսարք յանցանաց նորին լինիցին, եւ նա ազատ զնասցէ ի տեղի իւր. ապա թէ հաւանեսցին, Աստուած քաւէ: Եւ դարձեալ՝ ի մարմնատրէ հոգետոս խրատէ լինել, որպէս Մոսէս զփոշին ցանեալ յօդս՝ մուն եղել¹, այսպէս ի ցանկութենէ մարմնատր մտաց ներելեաց, զոր ոտքն նշանակէր², կենդանանալ ասէ հոգուով եւ յօդս թռչիլ, զի սովորութիւն է Գրոց զփոշին ներելի մեղաց առնուլ օրինակ, որպէս զի զտիղմ՝ մահու չափին եւ զոտսն՝՝ կամաց գուշակ:

Ամէն ասեմ ձեզ, դիւրագոյն լիցի երկրին սողովմացոց եւ գոմորացոց յԱտորն դատաստանի, քան քաղաքին այնմիկ (Ժ 15):

Կամ թէ՛ տակաւին ցուցանէ դատաստան զոյ Սողոմայ ի հանդերձեալն Օր, սակայն քան զսոցայս դիւրագոյն, զի որպէս փառքն զանագան, այսպէս եւ տանջանքն: Կամ թէ Օր դատաստանի զօր տանջանաց սողոմացոցն ասէ, որ ընդ ծագել արեւուն տեղեաց Տէր հուր եւ ծծումբ ի Տեառնէ յերկնից⁴ եւ այրեաց զքաղաքսն⁵: Այս թեթեւ լիցի, ասէ, առ անհաւանիցն դատաստան, որ ի ծագման ճշմարիտ Արեգականն հալածին ի հուրն անշէջ զկնի սատանայի. զի սոցայս՝ անցաւոր, եւ նոցայն՝ մշտնջենաւոր, եւ սոցայս՝ մարմնոց միայն, իսկ նոցայն՝ հոգւոց եւ մարմնոց: Բայց է՞ր վասն այնքան ծանրագոյն. զի անդ հրեշտակք եկին եւ ոչինչ նշանս արարին, այլ մանաւանդ զտեսօղսն կուրացուցին եւ զՍողոմ զլիտովին նշան արարին, իսկ աստ զմեռեալս նոցա յարուցին եւ զկոյրս լուսաւորեցին. եւ անդ զհրեշտակսն անարգեցին, եւ աստ՝ զԱստուած բոլորովին, զի «որ զձեզ անարգէ՝ զԻս անարգէ»

¹ Ելք Ը 17

² Զ նշանակէ

³ ՏԶ զոտքն

⁴ Զ Տէր ի Տեառնէ հուր եւ ծծումբ] Տէր հուր եւ ծծումբ ի Տեառնէ յերկնից

⁵ Ծննդ. ժԹ

(Լուկ. Ժ 16), վասն այսորիկ ընդարձակագոյն լիցի երկրին Սողոմայ քան սոցա: Քննելի է եւ այն, թէ ընդէ՞ր գտտա ոչ ի կենցաղս խրատե որպէս զՍողոմ, այլ Մեծի Աւուրն պահէ: Նախ՝ զի թերեւս զղջացեալ դարձցին եւ փրկեցցին: Եւ երկրորդ՝ զի նոքա մարմնատր յանցեան, մարմնականօք տանջեցան հրով, իսկ սոքա՝ ի հոգեւորն եւ յաստուածայինսն, ի հոգեւոր կեանսն մշտնջենատրապէս չարչարեցցին: Եւ երրորդ՝ զի մի՛ կարծիցեն, թէ ամենեցունց հատուցումն աստ է, այլ գոյ եւ այլ իմն քննութիւն ահագին քան զայս՝ որպէս տանջանաց, այսպէս եւ փառաց:

Ահաւասիկ Ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց (Ժ 16):

Յորժամ վասն կարեւորացն արար զնոսա վստախս եւ նշանագործութեանցն հանդիսի վառեաց, եւ իբրեւ զանդամանդեայ զանձինս նոցա գործեաց, ապա այժմ՝ զչարչարանաց եւ զպատերազմաց դնէ առաջի եւ նոր իմն ցուցանէ զօրինակ կռուոյն, զի մերկ եւ առանց զինուոց բազմաց՝ պատառողաց գայլոց հերքողք լինիցին: Եւ ոչ միայն հերքիցէք եւ ի նոցանէ անվնաս մնասցիք, այլեւ զնոսա եւս զգաստացուցանէք, որ է մեծ զարմանք եւ մխիթարութիւն անճառ, զի երկոտասան այր թուով ի մէջ բազում գայլոց շրջել եւ ի փորձանաց նոցին ոչ զանգիտել. որով երիս իրս ազդէ: Նախ՝ զգօրութիւնն Իւր ծանուցանէ թէ՛ զսակաւ ոչխարսդ ի մէջ այնքան գայլոց կարօ՞ղ եմ պահել, վասն որոյ ասէ. «Ես առաքեմ»: Եւ երկրորդ՝ զդժուարութիւնն յառաջագոյն ասելով՝ զգուշացուցանէ, զի մի՛ կարծիցեն, թէ ի հեշտութեան են կեանք մեր եւ յետոյ դժնդակագունիցն դիպեալ կրից՝ տրտմեցցին: Եւ երրորդ՝ հեգութիւն ուսուցանէ աշակերտացն, զի յորժամ գայլքն, ասէ, վառիցին, ո՛չ գօրս կազմել ձեզ եւ հեծեալս ժողովել, այլ ըստ նմանութեան օղեաց զգօնութեամբ միայն յաղթել, այսինքն՝ մեռանել եւ չարչարողացն գեր ի վերոյ լինել:

Եղերոք այսուհետեւ խորագէտք իբրեւ զօճս եւ միամիտք իբրեւ զաղաւնիս:

Ի քարոզութիւն առաքելով՝ այսպէս հրամայէ, զի մի՛ վասն «ոչխար» ասելոյն՝ անմտութեամբ շրջեցցին, այլ բազում իմաստութեամբ հմուտք լինիցին՝ առ ի հաւանեցուցանել զլսօղսն: Եւ դարձեալ՝ զի մի՛ յուսահատեալք ասիցեն թէ՛ որովհետեւ այնչափ այլիք շուրջ զմեօք ծփիցին, զիա՞րդ կարասցուք ուշաբերել կամ այնքան

ճգանցն ընդդէմ յառնել, քանզի զի՞նչ գործէ այնքան խորամանկութիւնն ի մէջ բազում գայլոցն, եւ կամ աղաւնոյ բարձրաթռչութիւնն ի մէջ այնչափ բազէից խուճապելոց, անասունքն, ասէ, եւ ոչինչ, բայց դուք եթէ կամիք, կարօ՞ղ էք եւ բազում ինչս վճարէք: Չի ո՛չ օձս առնեն զձեզ կամ աղաւնիս, այլ իբրեւ՝ զօձս եւ զաղաւնիս, զի թողեալ զնենգութիւն օձին՝ առէք զհմաստութիւն նորին, եւ ի բաց ձգեցէք զաղաւնոյն անմտութիւն եւ ընկալարուք զպարզամտութիւն, յորոց խառնմանէ կազմի մի իմն գեղեցիկ առաքինութիւն, որով բազմաց յաղթել կարիցէք:

Եւ դարձեալ՝ խորհրդեամբք եւ հնարի վարդապետութիւն տնտեսել լսողացն, զի որպէս անդ օձն գերեսս ընտրեաց գլխորահաւանս եւ գեղեցիկ եւ կակուղ խօսիւք ի բաց հեռացոյց յԱստուծոյ եւ ի մեղս էած զԵւա, այսպէս եւ դուք երեսօք եւ ժամանակօք զբանն դատաստանի ըստ տեղոյն յօրինեցէք եւ վերստին զմարդիկ առ Աստուած ածէք: Եւ իբր զաղաւնի միամիտ՝ ո՛չ ի դրժողացն վնասուէ ձանձրանալ եւ ի բարեգործութեանցն խոյս տալ, այլ միամտութեամբ սպասատրել եւ զշարութիւն գերծողացն ոչինչ գրել՝ վրէժ ի նոցանէ առնելով կամ նենգութիւն առ նոսա պահելով, որպէս եւ առաքեալն խրատէ թէ՝ «Չբարիս գործել մի՛ ձանձրանայք» (Բ Թես. 4 13), եւ թէ՝ «Յաղթեա բարեա՛ն չարին» (Հռոմ. ԺԲ 21):

Եւ դարձեալ՝ բարք են օձի զամենայն մարմինն կոտորել, բայց զգլուխն զգուշութեամբ պահել, նոյնպէս եւ դուք՝ զինչս եւ զստացուածս եւ զմարմինսդ եւս մատնել, այլ զգլուխն, որ է հաւատն յԻս՝ արմատ ամենայն բարեգործութեան, զօրէն աղաւնոյ միամիտ զոլով առ Իս՝ ամբողջ պահեցէք: Եւ դարձեալ՝ զոր օրինակ օձ զհնութիւն խորխի փոխելով նորանայ, այսպէս եւ դուք ուսուցէք մարդկան զհնութիւն մեղացն Ադամայ մերկանայ, տարեկանի Տեառն ընդունելութեամբ¹, Աւագանին մկրտութեամբ եւ նորոգութեամբ շնորհացն պայծառանայ, զոր Հոգին հովանաւորէ ըստ նմանութեան աղաւնոյ: Եւ դարձեալ՝ եղերուք խորագէտք առ օձաբարոյ արտաքինսն եւ պարզամիտ առ անմեղ եւ միամիտ աղաւնիսն, որպէս եղեւ Պօղոս առաքեալ. «Խորագէտ էի, խելօք [կալայ զձեզ]» (Բ Կոր. ԺԲ 16), եւ թէ՝ «Իբրեւ² տղայոց ի Զրիստոս կաթն ջամբեցի» (Ա Կոր. 4 2):

¹ Ղևտ. ԻԵ 11, Ղուկ. 7 19

² S > իբրեւ

Ջգո՛յշ լինիջիք ի մարդկանէ, զի մատնեացեն զձեզ յատեանս եւ ի ժողովորդս իրեանց տանջեացեն¹ զձեզ (Ժ 17):

Որք երկրաւորք են եւ զերկրաւորս խորհին, միշտ ընդ ձեզ մաքառելոց են, վասն որոյ զգո՛յշ կացէք, այսինքն՝ զգաստ, կամ ոչ յարակցելով նոցա՝ ոչ մատնողացն միայն, այլ որք գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց: Եւ կամ թէ յորժամ հակառակիցին՝ մատնելով յատեանս, հաստատուն կացէք եւ զուարթ՝ ոչ հատուցանելով չարչարողացն չար, այլ ժուժկալութեամբ գեր ի վերոյ տանջանացն լինել եւ այնու նշան յաղթութեան կանգնել: Կամ զի պատահելոց էր, զգուշացուցանէ նախ. իսկ «ժողովորդ»՝ զհրէիցն ասէ եւ «ատեան» զդպրացն եւ զքահանայիցն կոչէ: Բայց առ ի միտս՝ խոյս տալ հրամայէ ի դիւաց խորհրդակցութենէ, որ պատրանօք զչարն գունելով բարի ձեռացուցանեն եւ ի թակարդս կորստեան իրեանց ձգեն: Եւ յետ այնր ի խղճէ մտացն դատեն, մանաւանդ ի ձեռն մեղացն անաչառ ատենին Աստուծոյ մատնեն, թէ բնութեամբ եւ յօժարութեամբ եւ ո՛չ ի նոցա պատրանացն գործեցաք զչարիս, որով ժողովրդեանն իրեանց դիւաց տանջանաց հաղորդս զմեզ արասցեն: Վասն որոյ մեծի արթնութեան պէտք են, զի մի՛ այսպիսի ախտիւք հնարեալ զմեզ ընթռնեացեն:

Եւ առաջի դատաւորաց եւ թագաւորաց տանիցեն զձեզ վասն Իմ, ի վկայութիւն նոցա եւ հեթանոսաց (Ժ 18):

Թէպէտ առ սակաւ սակաւ մեծացուցանէ զվշտացն բազմութիւն, զի ցուցանիցէ, թէ առ ամենայն հեթանոսս առաքելոց է զնոսա քարոզ, եւ ամենայն բնակիչք երկրի մարտնչելոց են ընդ նոսա, ազգք եւ դատաւորք, իշխանք եւ թագաւորք: Մակայն նոքա հաճեալք հաւանութեամբ յանձն առնուին, զի ո՛չ միայն յառաքինութիւնս անձանց, այլ ընդ իմաստութիւն եւ զօրութիւն Վարդապետին վստահանային: Բայց զի՞նչ է՝ «ի վկայութիւն նոցա եւ հեթանոսաց». վկայութիւն նոցա զդատապարտութիւնն ասէ, բայց ո՛չ եթէ նոքա զայս կամէին եւ կամ ընդ տանջանս նոցա ուրախ լինէին, այլ մխիթարութիւն մատուցանէ, զի վասն Քրիստոսի չարչարել՝ կարի իսկ մեծ իցէ, մանաւանդ յորժամ ամենայն ուրեք մօտ առ նոսա է. զի զոր յառաջագոյն գիտէ, կանխաւ գուշակէ, յաղագս ո-

¹ Զ տանջիցեն

² Զ չարչարեալ

րոյ ասէ՝ «վասն Իմ» եւ ոչ վասն այլ իրիք վնասու: Իսկ ըստ երկրորդ կարգին՝ այսպիսի է. քանզի խաբեն եւ այսպիսի՝ խաբանօք զմարդիկ դեւքն՝ ձգելով զմեզ առաջի քննութեան ատենի մտաց եւ հոգոց, զոր դատաւոր եւ թագաւոր ասաց վասն Իմ, այսինքն թէ՝ Աստուած զչարութիւնն իսկ բնութեամբ եղեալ է ի կազմուածս ձեր՝ խանդալով ընդ փրկութիւնն: Վասն որոյ այն, ասէ, լիցի յանդիմանութիւն նոցա հաւանողացն եւ հեթանոսաց՝ դիւաց պատրոնաց, զի բազումք նովին բնութեամբ գոյով՝ արդարք երեւեցան:

Այլ յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հոգայցէք, թէ ո՞րպէս կամ զինչ խօսիցիք, զի տացի՝ ձեզ ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք (Ժ 19):

Ձի ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիքն, այլ Հոգի¹ Հօր ձերոյ խօսեսցի ի՞ ձեզ (Ժ 20):

Ձի մի՛ ստիցեն յորժամ այսպիսի իրք հանդերձեալ է լինել՝ մեք զհա՞րդ կարասցուք խօսել կամ պատասխանել, յԻնքն վստահացուցանէ եւ ի Հայր, որպէս յորժամ վասն կերակրոյն ասէր՝ մի՛ հոգայցէք, նոյնպէս եւ այժմ վասն պատասխանի տալոյն, որով ցուցանէ միշտ զՀանդիսադիրն հանդիսակից գոյ նոցին: Իսկ ասելն թէ՝ «տացի ձեզ ի ժամուն յայնմիկ», եւ յայլում տեղոջ թէ՝ «Ես տաց ձեզ բերան եւ իմաստութիւն» (Դուկ. ԻԱ 15), եւ թէ՝ «Հոգին Հօր ձերոյ խօսեսցի ընդ ձեզ» (Իմմտ. Մատթ. Ժ 20), նախ՝ ի մարգարէից պատիւն հանէ՝ ըստ այնմ. «Տէր Տէր տայ ինձ լեզու խրատու» (Ես. Ծ 4), եւ թէ՝ «Յերեսաց Նորա գիտութիւն եւ հանճար» (Առակ. Բ 6), որով եւ ճգնութեան նոցին հաղորդս լինել ուսուցանէ յամենայն ժամ եւ միշտ: Եւ երկրորդ՝ զհաւասարութիւնն Իւր առ Հայր քարոզէ, քանզի որպէս Հայր մարգարէիք զԻնքն ծանոյց Հոգւով, այսպէս եւ զՈրդի նովին Հոգւով՝ ըստ այնմ. «Ոչ որ ասէ Տէր զՅիսուս, եթէ ոչ Հոգւովն Մրբով» (Ա Կոր. ԺԲ 3): Քանզի յայս միշտ յորդորէր զնոսին Հոգին՝ Տէր եւ Որդի Աստուծոյ զՆա ի մէջ ատենիցն խոստովանել եւ զանձինս քրիստոնեայս անուանել, եւ այս կամք Հօր էր, զի որպէս Նա զանուն Հօր յայտնեաց ի յերկրի³, այսպէս եւ Հայր զանուն Որդոյ ծանոյց աշխարհի՝ Հոգւովն:

Իսկ առ ի միտս՝ ի շնորհացն Աստուծոյ բաւական պատասխանի ունիմք այժմ իսկ ընդդէմ դիւացն զնդին, նաեւ ի հանդեր-

¹ Գ Հոգին

² Գ ընդ

³ Յովհ. Ժ 26

ձեռք ժամու ատենին զհոգի շնորհաց նախահորն մեր Ադամայ, զի ի պատկեր Ստեղծչին հաստատեցաւ եւ փառօք պատուեցաւ, եւ դրախտին բարեաց վայելօղ եղաւ, եւ ո՛չ, որպէս նոքա ասեն, բնութեամբ զչարն ի մեզ գոյացեալ, այլ ի նոցին պատրանացն ներգործութենէ ծնունդ առեալ:

Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, եւ հայր՝ զորդի, եւ յարիցեն որդիք ի վերայ հարց եւ սպանանիցեն զնոսա (Ժ 21):

Չյոյժ դժուարագոյն վիշտս այժմ ի մէջ բերէ, յորժամ ի գորութիւն Հոգւոյն վստահ արար: Եւ դարձեալ՝ զի մի՛ ասիցեն, թէ որովհետեւ այսպիսի աղմկի պատճառ լինելոց ենք իբրեւ զեղեռնագործ ոք, պարտ է մեզ փախչել, մխիթարութիւն տայ այսու, թէ այնքան բողբոջելոց է քարոզութեանն գորութիւն, մինչ զի զբնութիւնն արհամարհել եւ զազատողն ուրանալ հասանիցէ, եւ զբանն պատուական համարել քան զամենայն: Չի թէ բնութեանն բնութիւն չկարիցէ կամագիտ լինել բանին, զի՞նչ այլ ինչ յաղթել կարիցէ, որով զամենեսեան ըմբռնիցէք զթշնամիս եւ զընտանիս, զի այնքան ջերմութեամբ առ ձեզ անկանիցին, մինչ զի զմահ յազգականաց կրեալ՝ ոչինչ համարիցին:

Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն անուան Իմոյ (Ժ 22):

Թէպէտ այսպիսի է ախտս այս, մինչ զի զանդամանդ շարժել կարէ, քանզի լաւ համարի մարդ զծանրագոյն նեղութիւնս յանձին ունել, քան յամենեցունց ատեցեալ լինել, բայց եւ զայս եւս մխիթարեաց թէ՛ «վասն անուան Իմոյ». զի յորժամ զհտիցեն, թէ ի փառս Նորա է, թեթեւ բերիցեն զվիշտս, զի լաւ է յԱստուծոյ սիրիլ եւ ի մարդկանէ ատիլ, քան ամենեցունց սիրելի լինել եւ յԱստուծոյ աչաց ելանել: Եւ դարձեալ՝ Ինքեան եւ Հօր հաւասարս գործեաց զնոսա՝ ըստ այնմ. «Չի ատեցին զԻս եւ զՀայր Իմ տարապարտուց» (հմմտ. Յովհ. ԺԵ 25): Իսկ առ մտաւորն դիպումն՝ պարտ է մատնութեամբ մտաց զճգնութիւն մարմնոյ մահուչափ յանձն առնուլ եւ ո՛չ տալ հայիտութիւն անուանն Աստուծոյ՝ զչարիս ի Նմանէ գոյացեալ ասել կամ բնութիւն առանձին ստեղծեալ: Թէպէտ ատելիք լինիմք դիւաց, սակայն զբարի անունն ոչ ուրանամք, թէ բարի է եւ բարեաց ստեղծող, եւ որպէս զՅոր՝ բազում վշտաց համբերենք, զի ընդ Նմին թագաւորենք. զի որպէս դժուարին է հոգւոյ պատերազմ քան զմարմնոյ, այսպէս մեծագոյն է եւ փառքն նորա, զոր ի ձեռն

համբերութեանն կատարեալ գործոյն՝ կեանք զհոգեւոր եւ զերկնային կեանսն իսպառ անվախճան, որպէս եւ ասէ.

Իսկ որ համբերեացէ իսպառ, նա կեցցէ:

Չայս յայտ առնէ, թէ ո՛չ ի Նմանէ միայն առնուլ յօժարեցին, այլեւ յանձանց եւս նպաստ յուղղութիւնսն լինիցին. զի թէպէտ բերք վշտացն իբր զտարափս ի վերայ եկեացեն, համբերութիւնն միայն բաւական է վանել եւ անարատ ի մէջ վշտացն ապրեցուցանել: Իսկ «իսպառ» ասելն՝ քանզի սովոր են բազումք յառաջագոյն պնդել եւ յետոյ թուլանալ, զի մի՛ այն լիցի, զվախճանն, ասէ, խնդրեմ. քանզի զի՞նչ օգուտ իցէ սերմանց բուսոյն բարոք գոլ եւ յետոյ խամրանալ: Եւ դարձեալ՝ վասն այնորիկ յաճախ խնդրէ զհամբերութիւնն, զի մի՛ ապիցեն, թէ ամենայն ինչ ի Նմանէ էր, չեն ինչ զարմանք, թէ այնպիսիք եղեն: Եւ զի այս այսպէս է, մի՛տ դիր ասացելոցս, թէ ո՞րպէս վերուստ ի վայր կէս Նորա են եւ կէսն՝ աշակերտացն, զի շնորհս տալ Նորա էր, եւ ինչս ոչ ստանալ՝ նոցա, զամենեցունց դուռն բանալ՝ Նորա էր, եւ աւելի իրս ոչ պահանջել՝ նոցա, ողջունին շնորհ Նորա էր, բայց զարժանաւորն խնդրել ասպնջական՝ նոցա, տանջել զչընդունօղս Նորա էր, իսկ հեզս լինել իբրեւ զոչխար եւ չբամբասել՝՝ նոցա, այսպէս ամբողջ ի մէջ վշտացն կեցուցանել Նորա էր, բայց իսպառ համբերել՝ նոցա:

Եւ յորժամ հալածեացեն զձեզ ի քաղաքիս յայսմիկ, փախիջիք յա՛յլ, եւ եթէ յայսմանէ՝² հալածիցեն զձեզ, փախիջիք ի մի՛ւսն (Ժ 23):

Նախ ի մերձաւորն սկսան քարոզել եւ ապա ի հեռաւորն, վասն որոյ ասէ՝ յորժամ յայս քաղաքիս հալածեացեն, յա՛յլ փախիջիք, այսինքն՝ մի՛ ընդդիմադարձ լինիք, այլ փախիջիք: Քանզի դեռ սկիզբն էր, մեղմով ըստ նոցա զիջանէ, բայց ո՛չ նախ, այլ յորժամ հալածեացեն՝ խուսեսջիք եւ ո՛չ հեռագոյն ուրեք ձգիցիք, այլ անդրէն յԻսրայէլի քաղաքս անկանիջիք եւ ո՛չ ի հեթանոսաց՝ վասն ասացեալ պատճառին: Ահա եւ յայսմ վայրի ո՛չ միայն ի շնորհսն ապաստան առնէ, այլ ի նոցա նպաստաւորութիւնն, զի յորժամ երկնչիք, փախիջիք՝ ասէ: Եւ դարձեալ՝ զայս ո՛չ վասն յետին հալածանացն ասէ, այլ որ յառաջ քան զիսաչն պատահելոց էր. զի թէ ոչ փախուցեալք էին, որպէս յաւուրս Ստեփանոսի Նա-

¹ Զ զբամբասել

² Զ յայսմանէ

խավկային, ամենեքեան ի չարչարանս ըմբռնեալք էին եւ մեռեալք, եւ թէ ի վերայ ամենայն դարուց ձգեալ էր զբանս, ոչ որ վկայեալ էր վասն անուան Նորա, այլ նախ փախչել ետ, զի զօրասցին եւ մահուամբ Նորա քաջալերեսցին, իսկ յետոյ ընդդէմ յառնել, զի վկայեսցեն եւ պատկեսցին. քանզի բազումք եւս յառաջին փախուցելոցն յետոյ վկայք եղեն եւ պատարագ գոհութեան զանձինս իրեանց մատուցին: Եւ դարձեալ՝ իշխանութիւն մեծ ետ նոցա, զի մի՛ համարձակեսցին իշխանութեամբն իրեանց մատչել առ նոսա, որպէս յորժամ ընդ Նմա էին, ասէին. «Կամի՞ս, զի ասասցուք, եւ իջցէ հոր եւ կորուսցէ զնոսա¹», եւ Նա ոչ էառ² յանձն՝ ասելով. «Ո՛չ գիտէք, թէ որոյ հոգւոյ էք» (Գով. Թ 54, 55). նոյնպէս եւ աստ՝ առ ի խոնարհութիւն եւ ի հեզութիւն կրթեաց թէ՛ յորժամ հալածեսցեն, փախիջիք:

Ամէն ասեմ ձեզ, ո՛չ սպառեսցիք զքաղաքս Իսրայէլի, մինչեւ եկեսցէ Ռոբի մարդոյ:

Այս շնորհաց Նորա օգնականութիւն, զի ո՛չ անցուցանէ զվիշտսն, այլ զօրավիզն լինի ի ճգունս, քանզի ո՛չ կատարիջիք զքաղաքս Իսրայէլի, ասէ, եւ ժամանեալ անցանիջիք ընդ Պաղեստինէ, մինչ Ես եկեալ հասանիցեմ առ ձեզ: Քանզի միայն տեսանել նոցա զՆա՝ բաւական էր մխիթարութիւն, զի մի՛ ասիցեն, թէ յորժամ սպառեսցուք զքաղաքս Իսրայէլի, զի՞նչ արասցուք: Եւ կամ թէ զալոց էր առ նոսա յետ յարութեանն, եւ յետ երից աւուրց հասանելոց էր առ նոսա զօրութիւն Նորա, զի Նա Ինքն է զալուստ Նորա: Իսկ առ ի միտս՝ «քաղաքս Իսրայէլի» իմանամք զքաղաքս Քրիստոսի, քանզի Քրիստոս «Իսրայէլ» կոչեցաւ ի մարգարէէն. «Իսրայէլ ընտրեալ Իմ» (Ես. ԽԵ 4), - ասէ: Չայս Իսրայէլի քաղաքս, որ է ամենայն բնակիչք երկրի, զի «Տեառն է երկիր լրիւ իւրով» (Մաղմ. ԻԳ 1), ո՛չ կարել սպառել լուսաւոր վարդապետութեամբ ամենայն դասք աշակերտելոցն, մինչեւ եկեսցէ Նա, կամ թէ ո՛չ սպառին քաղաքք Իսրայէլի, որ է Եկեղեցի սուրբ, մինչեւ յԵրկրորդն զալուստ՝ ըստ այնմ. «Ո՛չ անցցէ ազգս այս» (Մատթ. ԻԳ 34):

¹ Զ զոսսա

² Զ > էառ

Ո՛չ է աշակերտ առաել քան զվարդապետ, եւ ո՛չ ծառայ՝ քան զտէր իւր (Ժ 24):

Շատ է աշակերտին, եթէ եղիցի իբրեւ զվարդապետ իւր, եւ ծառային՝ իբրեւ զտէր իւր¹ (Ժ 25):

Նախ զայն յայտ առնէ, թէ մինչ յաշակերտութեան է, անհնարին է լինել լաւագոյն քան զվարդապետ իւր, եւ կամ ծառայն յորժամ ի ծառայութեան կայցէ՝ լինիցի² իբրեւ զտէր իւր, եւ թէ դուն ուրեք պատահէ, հիացումն բերէ՝ ըստ Սողոմոնի. «Ծառայ եթէ քազաւորեսցէ, եւ աղախին եթէ հանցէ զտիկին» (հմմտ. Առակ. Լ 22-23): Իսկ աստ հասարակաց ասէ, վասն որոյ ի վերայ բերէ. «Շատ է աշակերտին, եթէ եղիցի իբրեւ զվարդապետ իւր, եւ ծառային՝ իբրեւ զտէր իւր»³, այսինքն՝ հալածանօք ձերուք եւ չարչարանօք՝ Վարդապետիս եւ Տեառնս կցորդելով բաւական է ձեզ ի մխիթարութիւն, զի չէք դուք լաւագոյն քան զԻս: Եւ դարձեալ՝ զայս ասելով՝ Տէր եւ Արարիչ եւ Ուսուցիչ զԻնքն ամենեցուն քարոզէ եւ այսու հնազանդութիւն ի նոցանէ պահանջէ: Եւ դարձեալ՝ խոնարհութիւն ուսուցանէ, զի մի՛ յետ ժուժկալութեանն հպարտասցին, այլ այնպէս համբերութեամբ վշտացն տարցին եւ զանձինս ի չափու պահեսցեն, որով Վարդապետին նմանօր լիցին՝ ըստ Ղուկայ թէ՛ «Կատարելութիւն է աշակերտի, յորժամ լիցի իբրեւ զվարդապետ իւր» (հմմտ. Ղուկ. 2 40), եւ Ինքն Տէր յայլում տեղուք թէ՛ «Յորժամ զամենայն կատարիցէք, ասասջիք թէ՛ ծառայք անպիտան ենք» (Ղուկ. ԺԷ 10):

Եթէ զՏաճարն Բէկեղեբու կոչեցին, ո՛րչափ եւս առաել զընտանիս Նորա:

Ո՛չ ասէ՝ թշնամանեցին, այլ զլուխ թշնամանացն ասացին, եւ այն՝ զտան աշխարհիս Տէրն եւ զտաճարին, ո՞րչափ եւս առաել զընտանիս: «Ընտանիս» կոչէ զնոսա վասն ազգակցութեանն եւ սիրոյն՝ ըստ այնմ. «Դուք բարեկամք Իմ էք» (Յովհ. ԺԵ 14), զի թէ զԻս այսպէս բամբասեցին, ապա եւ զձեզ թէ «կախարդ» եւ «մոլորեցուցիչս» ասեն, մի՛ ընդ այն դժուարիք, զի ձայն միայն է եւ ո՛չ իր⁴: Եւ դարձեալ՝ զանոխակալ բարս Իւր յայտ առնէ, որ ներեաց այն-

¹ Զ > Շատ է աշակերտին.... իբրեւ զՏէր իւր

² Տ լիցի

³ Զ > իբրեւ զտէր իւր

⁴ Զ իրք

քան յանցատրացն, զի ուսուցէ մի՛ անձին վրէժխնդիր լինել, այլ Տեսան եւ օրինաց Նորա:

Մի՛ այսուհետեւ երկնչիցիք ի նոցանէ (Ժ 26):

Որովհետեւ զօրինակ կոռոյն ուսայք՝ հեզութեամբ եւ համբերութեամբ յաղթել թշնամեաց, մի՛ բնաւին երկիրս կրէք ի բասրական բանիցն զօրանալ ի վերայ ձեր:

Չի ոչինչ է ի ծածուկ, որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի:

Առ վայր մի միտ դիք, ասէ, եւ ներեցէ՛ք, քանզի ժամանակն յայտնէ զծածկեալսն, զգրպարտութիւն նոցա յանդիմանէ եւ զծածուկ եղեալ ի նոսա կեղծարարութիւնս չարախօսացն խայտառակէ, եւ զձեր գաղտնի առաքինութիւնդ իբրեւ զարեգակն պայծառագոյն փայլեցուցանէ, որով երախտաւոր նոցին եւ փրկիչ երեւիջիք: Եւ դարձեալ՝ լուսաւոր առնէ Տէր զգաղտնիս սրտի խաւարի եւ զծածուկ գործս մարդկան յայտնէ գալստեամբ Իրով՝ ածելով զկնքեալ եւ զպահեալ գանձ բարկութեան ի վերայ ամբարշտութեան մարդկան՝ արդար տրիւքն հատուցմամբ, զի որք աստ ի ծածուկ ունին, անդ յայտնեալ հրատարակեսցին բարիքն եւ չարիքն, փառք եւ պատիւ բարերարացն եւ նեղութիւն եւ անձկութիւն չարարացն:

Չոր ասեմ ձեզ ի խաւարի, ասացէք ի լոյս, եւ գոր լսէք յունկանէ, քարոզեցէք¹ ի վերայ տանեաց (Ժ 27):

Թէպէտ չէր ի տեղոջ խաւարի, յորժամ զայսպիսի բանն խօսէր, եւ կամ թէ ընդ ունկն՝ շշնջէր, այլ զի միայն ընդ նոսա խօսէր եւ ի փոքր անկեան ուրեք վարդապետեր, «խաւար» եւ «ունկն» անուանեաց, առ այնչափ համարձակութիւնն, որ լինելոց էր յետոյ. իսկ «լոյս» եւ «տուն»՝ զբարձր ձայնի քարոզելն եւ զառանց խորշելոյ եւ զանգիտելոյ աւետարանելն նշանակէ: Եւ դարձեալ՝ զառաւելութիւն նոցա ցուցանէ, զի ի սկզբանէ, ասէ, Ես անձամբ ցուցի փոքր եւ նուազ, իսկ զեւս առաւելն՝² ձեօ՛ք վճարել հանդերձեալ եմ, քանզի Նա ի Հրէաստանի եւ սակաւ, իսկ նոքա՝ յամենայն աշխարհի եւ մեծամեծս: Եւ դարձեալ՝ գոր ինչ Ես առակաւ ուսուցա-

¹ Զ քարոզեսցիք

² ՏՁ յունկն

³ Տ առաւելին

նեն քարոզացո, դուք զայն մեկնողորէն քարզմանեսջիք առ բազումս: Եւ դարձեալ՝ զոր ինչ ասեմ ի խաւարասէր տանս հրէից, ասասջիք ի լոյս հեթանոսաց: Եւ զոր ինչ լուայք ունկամք յանկիւնս Պաղեստինի¹, քարոզեսջիք ընդ տուն աշխարհիս: Դարձեալ՝ զոր ծածուկ ընդ ձեզ խօսեցայ, լուսաւորելոցն ասացէք, եւ զոր լսեցիք՝ ասացէք, եւ ոչ՝ զորս ոչ լուայք:

Եւ մի՛ երկնչիցիք յայնցանէ, որ սպանանեն զմարմին եւ զոգի ոչ կարեն սպանանել (Ժ 28):

Դարձեալ աճեցուցանէ զվիշտս՝ ոչ միայն ոչ երկնչել ի բամբաստողացն, ասէ, այլեւ ոչ ի մահոց եւս ի վերայ եկելոց, զի ամենայն ուրեք հակառական զհակառակն կազմէ. զի որպէս անդ յաղթել հեգութեամբ՝ չարախօսացն ուսոյց, այսպէս եւ աստ մահուամբ գեր ի վերոյ լինել սպանողացն կենաց ձեւացոյց, քանզի ոչ ասաց՝ մի՛ երկնչիք, զի գերծուցից, այլ՝ զօրացուցից զմահ կոխել՝ ոչ զհասարակաց միայն, այլեւ զբռնաւորաց, եւ այնու ժառանգ լինել կենաց: Բայց զի՞նչ է, զի սպանանիցեն զմարմին եւ զոգի՝ ոչ. ցուցանէ, թէ մարմնոց ունին իշխանութիւն՝ որ բնութեամբ մահկանացուն, եւ զոգի, թէպէտ եւ կամին, ոչ կարեն մահացուցանել, այլ միայն յաստի կենացս եւ ի զգայութեանցս ի բաց տանել, սակայն փառացն ձերոց ոչ կարիցեն յաղթել: Նաեւ այլ ազգ. զի հոգի անմահ գոլով՝ ոչ երբէք մեռանի, ի բազում իրաց յայտ է: Նախ՝ զի պատկեր է Աստուծոյ, եւ Աստուած անմահ է: Երկրորդ՝ Գիրք վկայեն՝ ըստ այնմ թէ՝ «Յոյս նոցա լի է անմահութեամբ» (Իմաստ. Գ 4): Երրորդ՝ միտք տեսանէ, զի թէ մեռանէր հոգի, ոչ որ երկնչէր ի մեռեալ մարմնոյ Նորա, որպէս ոչ երկնչիք ի մեռեալ մարմնոյ անասնոյ. ասպա ուրեմն գոյ իմն կենդանի զօրութիւն, վասն այսորիկ երկնչիմք ի մեռեալ մարմնոյ մարդոյ: Չորրորդ՝ զի ամենայն սպանութիւն² ի հակառակութենէ լինի, իսկ հոգւոյ գոյացութիւն ոչ ինչ հակառակի, բայց եթէ մեղանչէ, քանզի մեղքն³ է մահ հոգւոյ, զի «որ արասցէ զմեղս՝ նոյն եւ մեռցի» (Եզեկ. ԺԸ 4, 20), արդ ազատ գոլով ձեր ի յանցանաց՝ մահ բնաւին ձեզ ոչ

¹ ՏՁ Պաղեստինէ

² Տ ապականութիւն

³ Ձ մեղք

տիրէ՝ ըստ առաքելոյ¹, վասն զի ոչ կարեն ստնանել ձեզ մեղօք բռնաւորքն, որով յայտ առնէ, թէ կատարեալք եղեն ի բարիս:

Այլ երկերուք² դուք առաւել³ յԱյնմանէ, որ կարօղն է զոգի եւ զմարմին կորուսանել ի գեհեհի:

Նախ ցուցանէ, թէ տէր հոգւոց եւ մարմնոց Աստուած է, յորմէ երկնչել արժան է, որ կարօղ է զհոգի հանդերձ մարմնով կորուսանել ի գեհեհի, այսինքն՝ դառն տանջանօք տանջել ի միասին, եւ ոչ եթէ կորնչի ակնկալութեամբ չարի արարողին, քանզի այս է երկիրոյ յաղագս ահագին վախճանին: Եւ դարձեալ՝ մահուամբ զյարութիւնն աւետարանէ, զի որք աստ մեռանին, կենդանանան ի փառս, իսկ որք աստ խնայեն զմարմին, կորուսելոց են ի գեհեհին: Դարձեալ՝ զի ասաց, թէ ստնանեն ձեզ մեղօք բռնաւորքն, զի մի՛ կարծիցես, թէ յանձնիշխանութենէ զրկեաց, ի վերայ բերէ թէ՛ երկնչիջիք ի մեղացն, զի երկիրոյ խորշի ոք ի չարէ, զի նա՛ է, որ կորուսանէ զհոգի հանդերձ մարմնովն ի գեհեհանն: Եւ զի մի՛ կարծիցեն, թէ իբր ի ձեռաց թողեալ՝ կրեսցեն զվիշտս, դնէ ապացոյց:

Ո՞չ ապաքէն երկու ճնճողուք դանգի միոջ վաճառին, եւ մի ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց Հօր ձերոյ (Ժ 29):

Չայս յայտ առնէ, թէ զի՞նչ նուաստագոյն քան զճնճողուկս կայցէ, սակայն եւ նոքա՛ ոչ ըմբռնին առանց Աստուծոյ գիտելոյ. ոչ զայն ասէ, թէ Աստուած ածէ զորոզայթն, այլ թէ չիք ինչ որ լինիցի յերկրի եւ ի Նմանէ թագչիցի: Արդ՝ եթէ զդիրավաճառս, որ իբրեւ⁴ զբանջար վաճառին յաղագս տկարութեանն, ոչ լինին որսացեալ առանց Հօր ձերոյ, ո՞րչափ եւս առաւել վերակացու է մեծաց եւ փոքունց հաւատացելոց, քանզի որպէս վասն կենաց հոգայ՝ ըստ այնմ թէ՛ «Հայեցարուք ի թռչունս» (Մատթ. 2 26), այսպէս եւ վասն մահու զօգտակարն տնօրինէ: Բայց ընդէ՞ր Ղուկաս «հինգ ձագա՞» սսէ «երկու դանգաց» վաճառին (Ղուկ. ԺԲ 6), իսկ սա՛ «երկու ճնճողուկ դանգի միոջ», կամ թէ զոն քան զճնճողուկս փոքրագոյն ձագք, զի այնպէս վաճառին, եւ կամ զտեղեացն զանազանութիւն

¹ Գորմ. 2 1-11

² Գ երկնչիջիք

³ Գ > առաւել

⁴ Գ իբր

⁵ Գ ձագ

ասէ եւ զժամանակացն. զի յոմն տեղի երկու ճնճողուկ միում դանգի, իսկ յայլումն՝ հինգն. բայց վաճառի, այսպէս եւ ըստ ժամանակի: Դարձեալ աստ զհոգոց անմահութիւն քարոզէ եւ երկու ճնճողուկ զհոգի եւ զմարմին կոչէ, զի թէպէտ դիւրաւ մարդ ի մարդկանէ սպանանի, սակայն մինն յերկիր ոչ անկանի, այս է՝ հոգին, եւ միսն՝ մարմինն, թէպէտ անկանի, ոչ առանց տեսչութեան Աստուծոյ անկանի: Եւ դարձեալ՝ յառնելոց է՝ իբրեւ զճնճողուկ թռչելով յօդս:

Այլ ձեր եւ ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է (Ժ 30):

Չյանձանձանս¹ բազմացուցանէ, զի ոչ միայն զճնճողուկս խնամէ, այլեւ զհերս, որ պակասագոյն է քան զնա յաղագս անգգայութեանն, եւ թուէ իբր զբազմութիւն աստեղաց եւ զշիթս անձրեաց, այսպէս եւ զհերս արժանատրաց: Բայց ոչ եթէ համարեալ հաշուի, այլ զստոյզ գիտութիւնն ցուցանէ, եւ թուէ ոչ զբազմութիւնն, այլ զպատուականութիւնն: Արդ՝ եթէ զհերսդ թուէ, վասն անձանցդ զիա՞րդ անփոյթ առնէ: Եւ դարձեալ՝ միտք, որ ի «գլուխ» առակեալ է, հերս ունի զանազան՝ զխորհուրդս եւ զգործս: Արդ՝ ասէ՝ ոչ միայն մեծամեծքն եւ յայտնիքն, այլեւ յոյժ նուազքն եւ ծածուկքն ի բազմաց՝ թուեալ են առաջի Աստուծոյ, որ զանտեսն տեսանէ եւ ի գիրս յիշատակաց Իւրոց գրէ, եւ հատուցանէ փոխարէնս բազմապատիկս եւ զանազանս, զի որպէս յանցատրացն «զյետին բնիոնն» պահանջէ², այսպէս եւ արդարոց զբուն յետինս պասկէ: Եւ դարձեալ՝ քաջալերէ, թէ զձեզ, որ իսկ հեր էք Գլխոյս՝ «մեռեալք աշխարհիս»՝ ըստ առաքելոյ (հմմտ. Հոմմ. 2 2), կարգեալ էք թուով յառաջինսն՝ ըստ այնմ թէ՝ «Անուանք ձեր գրեալ են յերկինս» (Ղուկ. Ժ 20):

Եւ արդ՝ մի՛ երկնչիք, զի լաւ էք քան զբազում ճնճողուկս (Ժ 31):

Որ զծածուկս սրտից նոցա տեսանէր, ետես, զի զահի հարեալք էին, վասն որոյ այտորիկ կրկնէ թէ՛ մի՛ երկնչիք, թէպէտ տիրեն ձեզ մեղք, զի մարմնոց միայն տիրեն, իսկ Նա՛ մեծացն՝ հոգոց եւ մարմնոց, յորմէ պակնուլ արժան է: Եւ կամ թէ՛ մի՛ երկնչիք՝ իբրեւ ի Նորա խնամոց ի բաց զերծեալք, քանզի յոյժ սիրէ զձեզ

¹ Զ գյանձանս

² Ղուկ. ԺԲ 59

իբր հայր գորդի եւ լաւ համարի զձեզ քան զճնճողուկս միայնացեալ ի տանիս՝ թափեալ յորոգայթից որսողաց, եւ պատրաստել ձեզ տունս¹ ի յերկինս: Եւ դարձեալ՝ ճնճողուկ զհասարակաց կենաց սպասաւորս ասէ՝ զարս եւ զկանայս, որք ոչ առանց խնամոց Նորա անկանին յերկիր մահուամբ, թէպէտ ոչ են պատարագաց եւ սեղանոյ արժանաւորք իբրեւ զտատրակս եւ զաղանիս, իսկ դուք լաւագոյնք էք քան զնոսա յաղագս պատարագելոյ զանձինս եւ ի սեղանն Հօր բազմելոյ:

Ամենայն, որ խոստովանեցի յԻս առաջի մարդկան, խոստովանեցի եւ Ես զնմանէ առաջի Հօր Իմոյ, որ յերկինսն է² (Ժ 32):

Նախ զայն ուսուցանէ, թէ ոչ զի անբանաբար մեռանիջիք՝ վարձս ըմբռնիսնէք, այլ դաւանութեամբ հաւատոյ՛, զի վասն Իմ եւ ոչ վասն այլ իրիք մահն իցէ, որով պատուական գտանիջիք՝ ըստ երգոյն՝: Եւ երկրորդ՝ ասելովն թէ՝ «յԻս խոստովանեցի», ցուցանէ, թէ եւ այն ոչ անձին զօրութեամբ, այլ ի վերին շնորհացն կազմի՝ ըստ այնմ. «Մարմին եւ արիւն ոչ յայտնեաց, այլ Հայր Իմ» (Մատթ. Ժ2 17), եւ այլուր եթէ՝ «Ոչ որ կարէ զալ առ Իս, եթէ ոչ Հայրն Իմ ձգեսցէ զնա» (Յովհ. 2 44), յորոյ ազդմանէ վկայեսցէ զԻս Որդի Աստուծոյ գոլ առաջի մարդկան, որպէս զի եւ Ես խոստովանեցի զնա առաջի Աստուծոյ եւ հրեշտակաց՝ Իմ գոլ զնա աշակերտ եւ հաւատացեալ: Եւ երրորդ՝ յայտնապէս աստ Որդի Աստուծոյ գոլ զԻնքն ուսուցանէ՝ ասելովն «առաջի Հօր Իմոյ, որ յերկինսն է», եւ յաղագս բարձրագոյն վարդապետութեանն զհրեշտակս առ մարդիկ համենատէ եւ զՀօր փառս առ թագաւորութիւնս մարդկան գերահրաշ քարոզէ: Եւ չորրորդ՝ ոչ զմտացն, այլ զբերանոյն պահանջէ, զի ի համարձակութիւն կրթիցէ եւ զառաւել գութ եւ զսէր նոցին բորբոքիցէ, եւ բարձրագոյնս եւ փառաւորս առնիցէ: Եւ հինգերորդ՝ զանճառ միութիւն ուսուցանէ, զի ոչ ասաց թէ՝ որ խոստովանեցի զծածկեալ աստուածութիւնս Որդի Աստուծոյ, զի յաղագս այնորիկ ոչ ումեք գոյր տարակուսանք, այլ վասն մարմնոյն էր կարծիք, վասն այսորիկ ասաց թէ՝ «յԻս», զի ցուցցէ, թէ յետ խառնմանն մի են: Մանաւանդ թէ եւ մեր դաւանութիւնքն զոյգ որպէս յաստուածութիւնն, այսպէս եւ ի մարդկութիւնն հաւասար գոլ

¹ Տ տուն

² Զ յերկինս] յերկինսն է

³ Սաղմ. ԵժԵ 15

աստուածութեանն, բայց¹ յեութեանցն յատկութենէ, զի անշփոք մնացին եւ անապական յետ նոր եւ չքնաղ միատրութեանն, որպէս զի երեւելեան մարմնով միանձնատրութիւն եւ մի Որդի Աստուծոյ եւ Կուսին դաւանի եւ երկրպագի:

Եւ որ ուրացի զԻս առաջի մարդկան, ուրացայց եւ Ես զնա առաջի Հօր Իմոյ, որ յերկինս է (Ժ 33):

Աստ ո՛չ ասաց թէ՛ «յԻս», այլ թէ՛ «զԻս», զի յորժամ ունայն յիցի որ ի պարզեւացն Աստուծոյ, յայնժամ ուրանայ, բայց թէ ասիցէ որ. «Ապա նորա զի՞ մեղ իցէ, որովհետեւ թողու ի ձեռաց», ասացուք, թէ թողոյն պատճառ ինքն եղել եւ ո՛չ Նա, որպէս Յուդա, զի Նորա բազում անգամ խնամարկեալ ձեռնարկեաց, եւ նա ուրացեալ ի բաց հետտեաց: Բայց ուրացութիւն է ի Տեառնէ, որպէս Պետրոսին թէ՛ «Ո՛չ գիտեմ զայրն» (Մատթ. ԻԶ 72), կամ մարդ սոսկ զՆա խոստովանել եւ կամ առաջօք երեւել, որպէս առ Աբրահամա², եւ ո՛չ ստոյգ մարմին առեալ: Այլեւ ուրացութիւն է Քրիստոսի՝ զմարմինն անսկիզբն ասել, կամ զԲանն սկիզբն ի Կուսէն ունել, եւ կամ գործովք յօրինաց Նորա հրաժարել: Իսկ Տեառն այն իսկ է, զի ասաց. «Ո՛չ գիտեմ զձեզ» (Գով. ԺԳ 25). ո՛չ եթէ ծածկեալ էին ի Նմանէ, այլ զի ո՛չ կամի խոստովանութեամբ գիտել զնոսա: Կամ զատելն եւ զտաղտկալն ի նոցանէ՝ ուրանալ դնէ՝ ըստ այնմ. «Ո՛րք առնէին զուրացութիւնս՝ ատեցի» (Մատթ. Թ 3): Եւ դարձեալ՝ ո՛չ միայն զաշակերտսն բարեօքն յորդորէ, այլեւ տրտմականօքն դրդէ, զի կամ բարեացն ցանկացին եւ կամ վասն տրտմականացն խորշեսցին, քանզի մեծ տրտմութիւն է, յորժամ ի տեսութենէ Հօրն ի բաց ընկեսցին, զի այս է «առաջի Հօր»-ն, այլեւ յայսմ վայրի զլեզուն ըստգտանէ:

Սի՛ համարիք, եթէ եկի արկանել խաղաղութիւն³ յերկիր. ո՛չ եկի արկանել խաղաղութիւն⁴, այլ սո՛ւր (Ժ 34):

Ըստ կրկին գոյոյ մարդկայինս բնութեան՝ ի հոգւոյ եւ ի մարմնոյ, այսպէս եւ կրկին կենօք սխալեցաք՝ նախ խորհրդով ի մեղս եւ ապա մարմնով ի գործս անօրէնութեան, որով պատերազմ առ

¹ Զ բաց

² Ծննդ. ԺԷ 1, ԺԸ 1

³ Զ ~ խաղաղութիւն արկանել

⁴ Զ խաղաղութիւն երկրի

Արարիչն կազմեցաք: Իսկ խաղաղարարն բնութեանս Որդին Աստուծոյ յորժամ եկն, ըստ կարգի վերստին ուղղեաց¹: Նախ Հոգւոյ առ Աստուած ածելով հաւատովք եւ յետոյ մարմնոյ յարութեամբն, վասն այտորիկ ասէ, թէ մի՛ կարծէք մարմնական արկանել խաղաղութիւն եւ երկրային, որ լինի ի սիրոյ զբաղմանց աշխարհիս, զոր ունին աւագակք եւ շնացողք առ իրեարս, քանզի այդ իսկ եղծեաց գերկնայինն: Ո՛չ զայդ խաղաղութիւն արկանեն, այլ զԻմն, որպէս ասէր. «Ձխաղաղութիւն զԻմ տամ ձեզ, զխաղաղութիւն զԻմ թողում ձեզ» (Յովհ. ԺԴ 27), եւ Պողոս թէ՛ «Նա է խաղաղութիւն մեր, որ արար արեամբ խաչին զխաղաղութիւն յերկինս եւ յերկրի՝ զմիջնորմն ցանկոյն քակելով» (հմմտ. Եփես. Բ 14), որպէս ի ծնանելն հրեշտակք գոչէին. «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն» (Դմկ. Բ 14). եւ առ ի հաստատութիւն այս խաղաղութեանս՝ արկանեն յերկիր սուր, որով խաղաղանան մարդիկ առ Աստուած:

Բայց ասացէ որ արդեօք՝ սրով զհա՞րդ խաղաղութիւն լինի: Ասացուք, թէ որպէս թագաւոր, յորժամ հնազանդեալք նորա ապստամբին եւ ի վերայ յառնել ջանան տերանց՝ իւրաքանչիւր զիր կամս առնելով, այնուհետեւ սուր ի գործ ածէ, որով թշնամութիւնն բառնի եւ ապստամբեալքն նուաճին ընդ միահեծան իշխանութեանն հնազանդութեամբ, այսպէս ի ճշմարիտ Թագաւորէն ցրուեալք պատրանօք Բանսարկոյին եւ յազգի ազգի պաշտամունս եւ ի գործս չարութեան ըմբռնեալք, եւ խորհրդովք մարմնոյ եւ սիրոյ աշխարհիս թշնամիք գտեալ Աստուծոյ՝ սրով բանի Իւրոյ, որ բաժանէ զլաւն ի վատթարէն, ժողովէ ի մի աստուածպաշտութեան հաւատս, որով արդարացեալք՝ խաղաղութիւն ունիցին առ Աստուած ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Քանզի բժիշկ յայնժամ բուժէ զմարմին, յորժամ զփուտսն հանիցէ, եւ զօրավար՝ յորժամ զանդէպ գումարեալսն ցրիցէ, որպէս առ աշտարակաւն², եւ ապա լիցի խոր խաղաղութիւն ի բաժանեալ փտից անհաւատիցն: Եւ դարձեալ՝ զաշակերտսն մխիթարէ. զի մի՛ կարծեսցեն զհնքեանս զոլ նիւթ խոռվութեանն, ասէ՛ Ե՛ս եմ, որ կազմեմ զայն այնպէս, քանզի յայն իսկ եկեալ ստիպեմ, զի յորժամ իրքն լինիցի[ն], մի՛ յանկարծադէպ զիտացեալ խոռվեսցին: Եւ զի մի՛ որ ա-

¹ Զ ուղղէ

² Ծննդ. ԺԱ 8

սիցէ, թէ հրապուրելով հաւանեցոյց զնոսա եւ զդժուարինսն թաքոյց, վասն այտորիկ զահագինս բարբառի, զի ոչ միայն բարեկամք եւ զաւստայինք մարտիցին, եւ սակաւ ինչ թայրաթոտք զմիմեամբք անկանիցին, այլ կարի հարազատք եւ ազգայինք եւ բուն ընտանիք, յոր առաւել՝ Նորա զօրութիւնն ծանիցի: Չի որպէս յայլսն հակառակաւ զհակառակն առնէ, այսպէս եւ աստ պատերազմաւ զխաղաղութիւնն հաստատէ, որպէս ասէ.

Քանզի եկի քակել զայր ի հօրէ իւրմէ՝¹ եւ զդուստր՝ ի մօրէ, եւ զհարսն՝ ի սկեսրէ իւրմէ (Ժ 35):

Չմտացն բաժինն ասէ, զի ոչ ի հաւատն հաւասար խոնարհին. զի մինն որոշի ի Նմանէ, եւ մինն պաշտէ գՔրիստոս, քանզի ստիպէ զնոսա սէրն Քրիստոսի յաղթել ախտատր սիրոյն: Դարձեալ՝ զմարգարէութիւնն Միքիայ ընթեռնու յականջս նոցա. զի մի՛ կարծիցեն յԻնքենէ սկսանել զայս, ասէ, վաղ ուրեմն կանխեսց մարգարէն թէ՛ «Որդի անարգէ զհայր, եւ դուստր յարիցէ ի վերայ մօր, եւ նու՛ ի վերայ սկեսրի» (Միք. Է 6)²: Իսկ եթէ ասաց օրինօքն պատուել զհայր որդոյ եւ զմայր դստեր, ոչ եթէ այնմ ինչ հակառակ է այս, քանզի այնպիսեսց հարց հրամայեսց հնազանդ յինել, որք յաստուածպաշտութիւնն շինիցին ինչ վնասակար, ապա թէ զամենայն պատիւ յանձինս ձգել ձեռնարկեն, նոցա ոչ է պարտ անսալ. զայս եւ դուստր առ մօր եւ հարսն առ սկեսր իմա: Բայց աստ վեց թուէ, իսկ Ղուկաս ասէ. «Եղիցին հինգ ի տան միում բաժանեալք. երեք՝ յերկուց, եւ երկուք՝ յերից» (Ղուկ. ԺԲ 52). ոչ է երկրանութիւն ի սոսա, քանզի զայն, որ մօր «դուստր» ասէ, զնոյն եւ այլում սկեսեր «հարսն» անուանէ:

Իսկ առ ի միտս՝ «հայր» եւ «մայր» եւ «սկեսուր»՝ զհինն ասէ եւ զստուերականն զառամացեալ տկարութեամբ՝ ըստ առաքելոյ. «Որ հնանայ, մերձ է յապականութիւն» (հմմտ. Եբր. Ը 13), իսկ «որդի» եւ «դուստր» եւ «հարսն»՝ զնորս եւ զառժամայնս, որք քակեցան ի ստուերականացն՝ առոյգացեալք, մկրտութեամբ Աւագանին որդիացեալք Հօրն երկնատրի, դուստր գոլով վերին Միոնի եւ հարսն անմահ Փեսային Յիսուսի, ծառայելով նորոգութեամբ Հոգւոյն եւ ոչ հնութեամբ գրոյն:

¹ Զ > իւրմէ

² Զ + եւ թշնամիք առն ընդանիք իւր:

Եւ թշնամիք առն՝ ընտանիք իւր (Ժ 36):

Ի բազում բարեացն, զոր առթեաց, մեծագոյն հնազանդութիւնս պահանջէ՝ արհամարհել¹ զազգատոհմ եւ զհայր եւ զմայր, եւ թշնամիս նոցին լինել վասն առ Նա աշակերտութեանն, որով գեր ի վերոյ ելանիցեն մարմնական ընտանութեանն եւ աշխարհական իրաց: Եւ դարձեալ՝ հրեայք, որք ընտանիք էին Քրիստոսի, ոչ միայն վասն աստուածպաշտութեանն եւ մարգարեից հմտութեան, այլեւ վասն ազգակցութեանն՝ ըստ այնմ թէ՛ «Մարմին իմ ի նոցանէ է» (Ոկտ. Թ 12), եւ Պօղոս՝ «Յորոց Քրիստոս ըստ մարմնոյ» (Հռոմ. Թ 5), որ այր եղել ի նոցանէ կատարեալ բնութեամբ՝ մարդացեալ հոգով եւ մարմնով եւ մտօք, հակառակք եղեն վարդապետութեան Նորա, մանաւանդ քահանայապետք եւ դպիրք՝ ընտանիք տան Նորա, եւ զօրէն թշնամոյ դժբեցին՝ ըստ այնմ. «Կապեցուք զարդարն, զի դժպիհի եղել մեզ» (Ես. 4 10), եւ տակաւին կան ի նոյն թշնամութեանն: Իսկ առ ի միտս՝ ախտք բնականք, որք են ցանկութիւն, հեշտութիւն, երկիրդ, տրտմութիւն, սրտմտութիւն, բարկութիւն, նաեւ զգայութիւնք եւս, ընտանիք գոլով, ընդ թշնամիս միաբանեալ վնասեն զմեզ:

Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զԻս, չէ՛ Ինձ արժանի: Եւ որ սիրէ զուսոր կամ զդուսոր առաւել քան զԻս, չէ՛ Ինձ արժանի (Ժ 37):

Թէ զիա՞րդ սրով քակեաց, ասէ՝ քանզի² սէրն ի ծնօղսն երկրորդ է առ Աստուած սիրոյն, ըստ որում յՕրէնսն գրեցաւ³, վասն այսորիկ ո՛չ ասէ չսիրել զծնօղսն, այլ «առաւել քան զԻս», որով ցուցանէ զանձն ճշմարիտ Որդի Ծնողին: Եւ դարձեալ՝ զհրեայսն յանդիմանէ, որ որդի⁴ Աբրահամու զանձինս վարկանէին եւ զգործս նորա ոչ գործէին, զի Աբրահամ ո՛չ միայն ի տանէ ել եւ յազգէ եւ հետեւեցաւ խոստմանն Աստուծոյ, այլեւ զսէրն Աստուծոյ յաղթօղ բնութեան սիրոյն երեւեցոյց, որով զմիամօր որդին մատուցանէր պատարագ Աստուծոյ⁵. արդ՝ որ ո՛չ նոյնզունակ խոնարհեսցի, ո՛չ է սիրելի Աստուծոյ եւ կամ որդի Աբրահամու՝ հօրն

¹ Տ արհամարհեալ

² Զ > Թէ զիա՞րդ սրով... քանզի

³ Եւր Ի 1-7, 12

⁴ Զ որդիս

⁵ Ծնող. ԻԲ

հաւատոյ¹: Եւ դարձեալ՝ վարժէ՛ զաշակերտսն զամենայն ի խոնարհ թողուլ, ո՛չ միայն զինչս եւ զստացուածս, այլեւ զազգատոհմ եւ զհոգիս եւս, եւ նախամեծար զտէրն Քրիստոսի առնել, զի ըստ Նորա սիրոյն արժանաւոր աշակերտ երեւեսցիս, որ զհետ սիրոյ քո չոգաւ մահուամբ, եւ ո՛չ անարժան² կոչմամբ միայն առանց ներգործութեան, զի որ ի ձէնջ աշակերտելոց են, զազգատոհմ արհամարհեալ են, վարդապետացոյ ո՞րպիսի ինչ պարտ է լինել:

Եւ դարձեալ՝ ուսումն իմն յայտնէ, թէ՛ որ ասէ զկին եւ գորդիս, զոսկի կամ զկերակուր առաւել սիրէ քան զԻս, չէ՛ արժանաւոր աստուածապաշտ, այլ այն իսկ է աստուած նորա, զոր սիրեացն՝ ըստ առաքելոյ. «Որոց աստուած որովայնն իւրեանց, եւ փառք՝ ամօթն իւրեանց» (Փիլիպ. Գ 19): Վասն որոյ պարտ է զգուշանալ եւ ո՛չ պատուել զտուեալն առաւել քան զՏուօղն, զի այս է սկիզբն մեղաց եւ անօրէնութեան, քանզի եւ ինքն իսկ մեղք է: Եւ դարձեալ՝ զայս ասելով գորդիսն առաքիւնիս կատարէ եւ զհարս խափանիչս ցածուցանէ, զի մի՛ ինչ ժտեսցին խափանել գորդիսն եւ կամ զհարս: Բայց զի մի՛ դժկամակ լինիցին ծնօղքն, յարէ ի նոյն թէ՛ «եւ զանձն եւս ոչ ստիցէ», թէպէտ մտերիմ է նմա, «ո՛չ կարէ Իմ աշակերտ լինել» (հմմտ. Դուկ. ԺԴ 26):

Եւ որ ոչ առնու զխաչ իւր եւ գայ զկնի Իմ, չէ՛ Ինձ արժանի (Ժ 38):

Նշանակէ ի մահ եւ ի պատերազմ տալ զանձն եւ յարիւն մտանել. եւ ո՛չ վայրապար ի մահ, այլ ի բռնութեան, եւ ո՛չ միայն ի բռնութեան, այլեւ ի նախատանաց եւս: Եւ դարձեալ՝ զի որ զխաչ իւր յուս առնուցու, զմահ իւր զուշակէ, այսպէս եթէ՛ որ զչարչարանս մարմնոյ ոչ առնուցու յանձն եւ զհեշտութիւնս մեռուցանէ ի մարմինն՝ ըստ առաքելոյ՝ «խաչեալ աշխարհի» (հմմտ. Գաղ. Զ 14), եւ զայս ոչ ի յայոց հարկեալ, այլ իւր կամաւ եւ յօժարութեամբ ստանձնեալ որպէս զԻս, ո՛չ կարէ Իմ աշակերտ լինել³: Բայց դու տես, զի զԻւրն չարչարանս տակաւին ոչ ճառէ, այլ մեղմով նոցա-յիւքն ընդելացուցանէ եւ յետոյ յայտնապէս զԻւրն ի մէջ բերէ:

Որ գտանէ զանձն իւր, կորուսցէ զնա, եւ որ կորուսցէ զանձն իւր վասն Իմ, գտցէ զնա (Ժ 39):

¹ Դրոմ. Դ 11

² Զ արժան

³ Զ լինել աշակերտ

Ո՛վ անհնարին իրացս, զի կորուստ եւ զհիտ՝ ի միում անձին լինիցի, որ է այսպէ՛ս. որ կամի զանձն իւր ի հեշտութեան եւ ի հանդարտութեան մնալ եւ ոչ ի հայածանս եւ ի տանջանս անկանել, այնպիսին կորուսցէ զնա ի գեհեանն՝ ի յախտենական փառացն գրկեալ՝ ըստ այնմ. «Որ սիրէ զմեղս, ատէ զանձն իւր» (Մատթ. Ժ 6), իսկ որ կորուսցէ մահուամբ կամ վտանգիւ եւ տրտմութեամբ ճզնեալ վասն Նորա, ի կեանս¹ յախտենականս գտանէ զնա: Դարձեալ՝ ցուցանէ, թէ ինքն անձին է պատճառ կորստեան եւ զհիտի. արդ՝ որ զներկայ կեանս գտանէ, կորոյս ոչ միայն զինքն, այլեւ զկեանս զայս, զի անցաւոր է, իսկ որ կորոյս ոչ միայն զինքն, այլեւ զկեանս, ոչ ի պատճառս այլոյ, այլ յԻմ փառս, զոցէ ոչ զանձն եւեթ, այլեւ զկեանսն անվախճան՝ բազմապատիկ հատուցմամբ առ Աստուծոյ եւ յԱստուծոյ:

Որ ընդունի զձեզ, զԻս ընդունի, եւ որ զԻս ընդունի, ընդունի զԱռաքիչն Իս (Ժ 40):

Պարզեաց զվարդապետութիւնն², զի մի՛ կարծիցեն ի Հօրէ հեռացուցանել եւ առ Ինքն ձգել, զՆա սիրել եւ վասն Նորա մեռանել, եւ այն ընդդիմութիւն թուէր առ Հայր: Ասէ՛ որպէս Ես զձեզ առաքեմ, այսպէս եւ Հայր՝ զԻս. արդ որ զձեր վարդապետութիւնն ընդունի, զԻմն ընդունի, եւ որ զԻմն ընդունի, զԱռաքիչն³ Իս ընդունի, որպէս զի զպատիւն առ Հայր ձգիցէ եւ այնու զնոսա զԻւրեաւ ածիցէ եւ մի՛ զվարդապետութիւնն ցուցանիցէ: Եւ դարձեալ՝ զասպնջականսն⁴ առաւել քան զհիւրս մեծագոյն պատուոյ արժանի առնէ, եթէ ստուգութեամբ ընդունիցին, զի զի՞նչ այսմ կայցէ զուզական, յորժամ Հօր եւ Որդոյ լինիցին ասպնջական, միանգամայն եւ զաշակերտսն մխիթարէ ի նոսա զոյ Հայր եւ Որդի, որք ընկալեալ լիցին ընդունողացն:

Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի, զվարձս մարգարէի առցէ: Եւ որ ընդունի զարդար յանուն արդարոյ, զվարձս արդարոյ առցէ (Ժ 41):

Յառաջագոյն սպառնացաւ ոչ ընդունողացն, իսկ այժմ հանգիստս եւ բարութիւնս խոստանայ ընդունողացն եւ զնոսա իսկ

¹ Զ կեանսն

² Զ վարդապետութիւնս

³ Զ առաքիչն

⁴ Զ ասպնջականն

պանծացուցանէ անուանցս յորջորջմամբ՝ «մարգարէ» եւ «արդար» կոչելով: Բայց զի՞նչ է, զի ոչ ասաց թէ՛ «ընդունի զմարգարէ եւ զարդար», այլ թէ՛ «յանուն մարգարէի» եւ «յանուն արդարոյ»: Այս իսկ է. յորժամ ոչ վասն աշխարհիս ինչ իրաց պաշտպանութեան եւ ոչ վասն մարդկեղէն փառաց անցատրաց ընդունիցի, այլ զի մարգարէն է կամ արդարն, զվարձս նոցին առցէ: Եւ թէ չիցէ արդար կամ մարգարէ, սակայն նա յանուն նոցին ընդունի, նմանապէս եւ փառացն մարգարէիցն եւ արդարոցն արժանատրեսցի, եւ թէ արդար եւ մարգարէ իցէ ստոյգ, եւս զերապատիւ իցէ: Եւ դարձեալ՝ որ ընդունի զմարգարէ եւ զարդար, որպէս պարտ է ընդունել, այսինքն՝ հպատակ կալ բանից նոցա, քարոզողացն շնորհաց այնպիսին ժառանգ լիցի: Եւ դարձեալ՝ որ ընդունի զարդար յանուն Տեառն արդարացեալ եւ զմարգարէ՛ յանուն Տեառն մարգարէացեալ, վարձս զնոցին առցէ:

Եւ որ արբուցէ միում ի փոքրկանցս յայցսանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն յանուն աշակերտի, ամէ՛ն ասեմ ձեզ, ոչ կորուցէ զվարձս իւր (Ժ 42):

Տես, զի զայս ամենայն վասն աշակերտացն ընդունելեացն առնէ, զի ոչ միայն մեծամեծացն ասէ, այլեւ յոյժ փոքունցն, քանզի զի՞նչ փոքր քան զբաժակաւ ջուր, ուստի ծախք ինչ ոչ լինիցին, սակայն եւ ընդ այն ոչ անվարձս ելցէ, բայց յորժամ ի փառս նորա լինիցի եւ յանուն Տեառն աշակերտի արասցէ, իբր թէ քրիստոնեայ իցէ եւ Տեառն ծառայ, թէպէտ յաչս մարդկան փոքր կարծիցի, բազմապատիկ փոխարէնս առնու՝ արտաքոյ պապակի մեծատանն լինել¹ եւ շնորհօք Հոգւոյն զեղանիլ:

Իսկ առ ի միտս՝ յորժամ որ զպատրեալ անձինս եւ զկարօտս յառաքինութենէ եւ ի ճշմարիտ գիտութենէ տեսանէ եւ ըստ չափոյ՝ ընդունողացն տարողութեան արբուցանէ բանիւ վարդապետութեան, վարձս մեծամեծս առցէ. զո՞ր. զայն, զոր ասաց Երեմիաս. «Թէ հանցես զպատուականն յանարգէն, բերան Իմ կոչեսցիս» (Երեմ. ԺԵ 19): Բանզի «ջուր ցուրտ»՝ ճշմարիտ վարդապետութեանն³ ասպացոյց, եւ մի բաժակ ասէ եւ ոչ երկու կամ երիս, զի թէպէտ զա-

¹ Զ լինի

² Զ չափու

³ Զ վարդապետութեան

նազան են եղանակք բանի, սակայն միոյ Հոգւոյ են քղխմունք շնորհի ՝ ըստ առաքելոյ¹:

¹ Ա Կոր. ԺԲ 4

Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զպատուէր երկոտասանից աշակերտացն Իւրոց, զնաց անտի քարոզել եւ ուսուցանել ի քաղաքս նոցա (ԺԱ 1):

Յորժամ ոչ միայն զբանսն, այլև զնոսա բանի կատարեաց եւ առաքեաց երկու երկու ի քարոզութիւն, այնուհետև մեկուսի առնէ զանձն՝ տալ նոցա տեղի եւ ժամանակ առնելոյ զոր ինչ հրամայեացն, քանզի մինչդեռ Նա մօտ էր եւ բժշկէր, ոչ որ յօժարէր առ նոսա մերձենալ: Տես եւ զայն, զի թէպէտ զնոսա առաքեաց, ոչ բաւական համարեցաւ զնոցայն եւ դուր ետ անձինն, այլ ի յայլ կողմն շրջեալ քարոզէր եւ ուսուցանէր ըստ քաղաքաց քաղաքաց, զոր աւետարանիչս անկարացաւ ընդ գրով արկանել, թէ յորում տեղուք եւ կամ զինչ քարոզեաց, այլ միայն քարոզէր, ասէ, ի քաղաքս եւ ուսուցանէր:

Իսկ Յովհաննէս իբրև լուսի ի բանդին զգործսն Քրիստոսի, առաքեաց ի ձեռն աշակերտաց իւրոց (ԺԱ 2)

եւ ասէ ցՆա. «Դ՛ու՞ ես, որ զալոցն ես, եթէ այլո՞ւմ ակն կալցուք» (ԺԱ 3):

Չնախանձ աշակերտացն Յովհաննու յայտ առնէ աւետարանիչս եւ ոչ թէ Յովհաննէս երկմտեաց վասն Նորա. զի որ յառաջ քան զնշանսն զհտէր զՆա եւ անդստին Հոգուվն յորովայնէ ծաննեաւ զՆա¹, եւ ի Հօրէ իսկ լուսի զՆմանէ², եւ զՀոգին հանգուցեալ ետես ի վերայ Նորա եւ առաջի ամենեցունց վկայեաց թէ՝ «Մա՛ է բարձօղ մեղաց եւ Որդի Աստուծոյ, եւ ես չեմ արժանի բառնալ զկօշիկս Նորա»³, զիա՞րդ դարձեալ երկմտէր: Միթէ խաբէութի՞ւն էր այն ամենայն, եւ ո՞վ որ, որ սակաւ հանճարոյ հասեալ իցէ, այսպիսի գործս գործիցէ, թող թէ Յովհաննէս: Այլ զի խրտչէին ի Քրիստոսէ աշակերտքն Յովհաննու եւ լոկ մարդ կարծէին զՅիսուս, եւ զՅովհաննէս՝ մեծ ոմն քան զմարդիկ, եւ այն իսկ լինէր արգել ոչ յարելոյ առ Յիսուս: Եւ Յովհաննէս թէպէտ բազում անգամ զինքն նուաստ ասէր եւ աղաչէր եւ ուսուցանէր եւ առաքէր առ Յիսուս, ոչ այնու կարէր հաւանեցուցանել զնոսա, վասն զի դժուարահաւանք էին եւ կարծէին, թէ առ խոնարհութեան ասիցէ զայն, եւ առաւել եւս բուեռէին ընդ սէր նորա: Եւ թէ լռէր եւ ոչ այն

¹ Դուկ. Ա 44

² Յովհ. Ե 33

³ Յովհ. Ա 29, Մատթ. Գ 11, 16

ինչ գործեր, ա՛յլ մեծագոյն վնաս կասկածէր լինել՝ յետ մահու նորա պատճառ գոյ օտարոտի կրօնից եւ հեռանալոյ նոցա ի Քրիստոսէ:

Վասն այսորիկ թէպէտ յառաջ կամէր եւ ոչ կարէր, սակայն յորժամ մերձեցաւ վախճան նորա, զի յառաջեսցէ քան զՓրկիչն ի մեռեալս, որպէս եւ ծննդեամբ ի կենդանիքս, փութայ ածել զնոսա յուրորթին: Տի՛ նա եւ դիպօղ ժամանակի սպասեաց. յորժամ լուաւ յաշակերտաց իւրոց, թէ մեծագոյն հրաշս գործէ Յիսուս, առաքեաց զնոսա, ո՛չ զամենեսեան, այլ երկուս ոմանս, զորս զիտէր, թէ առաւել քան զայլսն հաւանագոյնք էին, որպէս զի երթեալ արդեամբք զիտասցեն, թէ ո՛րչափ ընդհատ իցէ ի Քրիստոսէ Յովհաննէս, քանզի Յովհաննէս նշանս ինչ ո՛չ արար վասն այսր պատճառի. «Դո՞ւ ես, որ զայոցն ես», ըստ մարգարէիցն պիտառութեանցն, «եթէ այլո՛ւմ ակն կայցուք»: Չայս ասաց վասն աշակերտացն, զի որպէս Տէրն վասն ժողովրդեանս, ասէ, «առնեն, զի հաւատասցեն» (Յովհ. ԺԱ 42), այսպէս եւ Յովհաննէս հարցմամբս զառաջինսն կնքէ զոր քարոզեացն, զոր ոմանք լուան յաշակերտաց նորա եւ զնացին զհետ Յիսուսի, իսկ զմնացեալսն հնարիս այսու այժմ ուղղէ, որպէս զի երթեալ տեսցեն զնշանսն եւ հաւատասցեն Նմա:

Դարձեալ՝ ոմանք ասեն, եթէ զիտէր Յովհաննէս, թէ Նա էր Քրիստոսն, բայց ոչ զիտէր, թէ վասն մարդկան մեռանելոց էր, վասն այնորիկ հարցանէր թէ՛ «Դո՞ւ ես, որ ի դժոխս գայոց ես»: Սակայն այս ո՛չ թոյի ինձ ի դէպ, քանզի նաեւ զա՛յն եւս քաջ զիտէր, որպէս ասէր թէ՛ «Դու առ ի՞ս գաս» (Մատթ. Գ 14), եւ այլոր՝ «Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի» (Յովհ. Ա 29)՝ խաչին, եւ թէ՛ «Մկրտէ զձեզ Հոգւով» (հմմտ. Մատթ. Գ 11), զյարութենէն ճառեաց, ասպա թէ ոչ՝ զիա՞րդ էր առաւել քան զայլ մարգարէս՝ ըստ Տեառն¹, զի այլքն զչարչարանսն ծանուցին, զորոց ոչ է հարկ երկրորդել, իսկ ի սմանէ ծածկէր: Նաեւ ա՛յլ ազգ. ընդէ՞ր ոչ ասաց թէ՛ «Դո՞ւ ես, որ զայոցն ես ի դժոխս», այլ միայն պարզաբար թէ՛ «Դո՞ւ ես, որ զայոցն ես», այսինքն թէ՛ յերկրի կարասպետեցի եւ երթամ ի դժոխս, արդ՝ Դո՞ւ զայցես անդր, թէ զա՛յլ ոք առաքեսցես:

¹ Մատթ. ԺԱ 9

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. «Գնացէք պատմեցէ՛ք Յովհաննու գոր լուայք եւ տեսէք (ԺԱ 4):

Գիտաց Յիսուս զմիտսն Յովհաննու, վասն այտրիկ ո՛չ ասաց թէ՛ Ես եմ, եւ ո՛չ թէ՛ չեմ, այլ յիրացն առնէ հաւատարիմ: Քանզի յորժամ մերձեցան նորա ի հարցանել, վաղվաղակի բժշկեաց զբազումս՝ վկայ հաւատարիմ լինել մտացն Յովհաննու, զի թէ գոր գործենս՝ բանիցն Յովհաննու չվկայեն, ապա սո՛ւտ ուրեմն է քարոզութիւն նորա, ապա թէ ստոյգ իցեն վկայութիւնք նորա՝ զօրագոյն իմն զոյ քան զնա, պարտիք ո՛չ ձայնին, այլ գործոյն աշակերտել:

Կոյրք տեսանեն, կաղք զնան, բորոտք սրբին, եւ խուրք լսեն, եւ մեռեալք յառնեն (ԺԱ 5):

Այսու լնու զմարգարտութիւնն Եսայեայ թէ՛ «Աչք կուրաց բացցին, եւ ականջք խլից լուիցեն, եւ կաղն վազէ իբրեւ զեղջերու» (Ես. ԼԵ 5-6), եւ այլն, բայց դու կրկին իմաստի՛ք զբանս իմա: Թէպէտ ի նուագին սկսանելով ի բարձրագոյնսն հանէ զսքանչելիսն եւ ի վախճանին իբր կնիք ասաց զայս թէ՛ «մեռեալք յառնեն»՝ ոչ միայն ի մեղաց ի յարդարութիւն, այլեւ ի մահուանէ յանմահութիւն, զի նա է զլուխ ամենայն բարութեանց Միածնին, որով ծանոյց ոչ միայն թէ՛ Ես իսկ եմ, այլ թէ՛ եւ վասն որոյ՛ եկեալ եմ. զի մեղքն որ յԱդամայ՝ ի մարդիկ տարածեցաւ, եւ նովաւ մահ Իննել լուծանի, որպէս զի առհաւատչէի մասնականաց յարութեամբս հաւատասցիք եւ հասարակաց յարութեանն:

Եւ աղբատք ատետարանին:

Մի ա՛յս է ի հրաշիցն, զի աղբատք եւ տգէտք ատետարանիչ երկնից բարեացն կարգեալք են. զնոսա ասէր, զորս առաքեալ էր ի քարոզութիւն, քանզի յայնժամ տնօրինեցաւ զայրուստ նոցա, զի մի՛ եւ աշակերտքն Տեառն երկմտիցին: Եւ դարձեալ՝ ի չինն փարթամութիւնն էր ատետարանեալ եւ մարմնական երկրի ժառանգութիւն՝ ի Մոսիսէ եւ յայլոց մարգարեիցն, իսկ այժմ աղբատտութիւնն քարոզեալ զովի՛ ըստ այնմ. «Երանի աղբատաց հոգւով, զի նոցա է արքայութիւնն երկնից» (Մատթ. Ե 3), որով զգորութիւնն Իւր ծանուցանէ, զի աղբատտութեամբ զփարթամութիւնն շնորհէ: Եւ դար-

ձեռքը՝ աղքատությունն ի մեղաց ատետարանի, որպէս զի եկեալ է Բարձիչն մեղաց՝ ըստ վարդապետին ձերոյ քարոզութեանն¹ :

Եւ երանեալ է՝ որ ոչ գայթազդեսցի յԻս» (ԺԱ 6):

Այսու եցոյց, եթէ զծածուկս նոցա զհտէ եւ մեղմով յայտ ածէ զմտաց նոցա երկեւանն: Քանզի գայթազդեալ էին ի Նա, զախտ մտաց նոցա ծանոյց, եւ վասն որոյ առաքեալ էր Յովհաննէս, ուսոյց թէ՝ Ես եմ, սակայն ծածկաբար, զի ոչ առնէր զայլ որ վկայս նոցա կշտամբութեանն, այլ զնոսա միայն, որ զհտէին՝ ածելով զնոսա զԻւրեալ եւ հաղորդս առնել երանութեանն, որպէս զայլ աշակերտսն:

Եւ իբրեւ նոքա զնացին, սկսաւ Յիսուս ասել ցժողովորդսն² զՅովհաննէս (ԺԱ 7):

Նոցա պէտքն վճարեցան, եւ հաստատեալք ի նշանացն՝ զնացին: Որ առժամայն սքանչելագործեցան, պարտ էր այնուհետեւ զժողովորդոց միտսն բժշկել, որ ի հարցանելոյն Յովհաննէսու բազում ինչ անդէպս կարծէին, քանզի ոչ զհտէին որպիսի մտօք առաքեալ³ զաշակերտսն, միթէ կռիւ ինչ կայցէ՞ ընդ Յիսուսի, միթէ չիցէ՞ Սա, որ զալոցն էր, միթէ ի բանդի՞ն զանգիտեաց, կամ թէ վայրապա՞ր ինչ խօսեցաւ զառաջինն: Չայս եւ որ տոյնպիսիս ածէին զմտաւ, վասն որոյ յողորմութիւն ածէ զնոսա: Բայց տես՝ իբրեւ զնացին աշակերտքն Յովհաննէսու, ապա սկսաւ խօսել առ ժողովորդն, զի մի՛ կարծիցեն ժողովորդքն, թէ ողորք զայրն, որպէս զի նա դարձեալ ստուգէ, թէ Նա՞ իցէ Բրիստոսն, եւ զիտելով զմիտս ամենեցուն՝ հաստատէ զկարծիսն:

«Ձի՞նչ ելէք տեսանել յանապատին՝ եղէ՞զն շարժուն ի հողմոյ:

Վասն Յովհաննէսու պատասխանի առնէ, թէ ոչ շրջեցաւ յառաջին կարծեացն, քանզի ոչ եթէ ցոյսի որ էր եւ ծանծաղամիտ⁴, այլ այր համեստ եւ հաստատուն, ապա թէ ոչ՝ դուք «զի՞նչ ելէք տեսանել», յորժամ մկրտէր Յովհաննէս յանապատն Յորդանանու. թողեալ զտունս եւ զքաղաքս՝ եւ զրոհ տուեալ անդր ընթանայիք,

¹ Յովհ. Ա 29

² Զ ժողովորդն

³ Զ առաքել

⁴ Տ ծանծաղամիտ

քանզի ոչ այնպիսի յօժարութեամբ ելանէիք, եթէ ոչ մեծ եւ սքանչելի եւ հաստատուն խորհրդով ակն ունէիք տեսանել զայրն: «Եղէ՞զն,- ասէ,- շարժուն [ի հողմոյ]»: Այսինքն՝ թեթեւ ոք եւ վաղահաստ՞ուկ, որ երբեմն զայս ասեն եւ երբեմն զայն եւ ոչ երբէք կան ի հաստատութեան. եւ ոչ երբէք երկնչէր ի նեղութեանց: Կամ թէ որպէս եղէզն ի տղմուտ վայրս ծնանի, նոյնպէս եւ նա՞ մեղաց եւ անօրէնութեան իցէր ծնունդ, զի զսուտս բարբառէր: Ոչ, այլ ատենաց էր ծնունդ եւ ամբոյ յորթիւն եւ մաքուր արգանդի բերք, ոչ զսուտս խօսեցաւ եւ կամ յաներեւոյթ հողմոյ շարժեալ խարբալեաց զքարոզութիւնն՝ երբեմն «Գառն Աստուծոյ» անուանելով եւ երբեմն «Դո՞ւ ես, որ զալոց ես»՝ զայթազդելով յԻս. այլ վասն աշակերտացն զայթազդութեան, զոր լուեալ եւ տեսեալ՝ ի բաց ձգեցին զկարծիսն եւ երանութեամբն հաստատեցան:

Այլ զի՞նչ ելէք տեսանել. մա՞րդ ի հանդերձս փափկութեան զարդարեալ: Ահաւանիկ որ զփափուկսն զգեցեալ են՝ ի տունս թագաւորաց են (ԺԱ 8):

Դուք ձեզէ՛ն վկայէք առ նա ընթանալովն զնորա հաստատուն բարուցն: Բայց թէ ասէք, թէ հաստատուն էր յառաջ, իսկ յետոյ թուլացեալ՝ զանձն փափկութեան մատնեաց, քանզի ի մարդկանէ կէսք ի բնէ են այսպիսի, եւ կէսք յետոյ եղանին, այլ Յովհաննէս ոչ ի բնէ եւ ոչ յետոյ եղեւ այնպէս. վկայ պատմութեանն եւ անապատն եւ կերակուրն եւ բանդն: Չի թէ զփափուկսն զգենուլ կամէր, ոչ յանապատն, այլ ի սենեակս թագաւորաց բնակէր, եւ դուք եթէ զփափկակեացս խնդրէիք տեսանել, ոչ անդր, այլ յապարանս թագաւորաց երթայիք, ասպա ուրեմն ոչ փոփոխական ոք էր եւ ոչ յանցաւոր, այլ զոր ինչ խօսեցաւ, ի նոյն անշարժ եկաց, եւ այս յայտ է, զի մարգարէ էր, որպէս ասէ:

Այլ զի՞նչ ելէք տեսանել. մարգարէ՞. այո՛, ասեմ ձեզ, եւ առանէ՛ ես քան զմարգարէ (ԺԱ 9):

Ոչ յամենայն կողմանց ըմբերանէ զնոսա, այլ եթէ իբր զմարգարէ ելէք տեսանել, այսինքն՝ յառաջատես, որպէս հայր նորին ասաց յունկն ձեր. «Դո՛ւ մանուկ, մարգարէ Բարձրելոյն կոչեսցիր» (Դմկ. Ա 76), եւ հրեշտակն թէ՛ «Եկեցդէ հոգով զօրութեամբ Եղիայի» (Դմկ. Ա 17), ասպա ընդէ՞ր զայթազդիք ի հարցուած նորա, զի ոչ վասն իւր, այլ վասն աշակերտացն, որպէս ասացաւ, քանզի մարգարէ ոչ զիտէ այլեւայլ բարբառս արձակել, այլ զմի եւ

զնոյն¹, որպէս ասէ թէ՝ «Այո՛, ասեմ ձեզ, եւ² առաւել էս քան զմարգարէյ», այսինքն՝ ճշմարիտ մարգարէ եւ առաւել քան զմարգարէ: Ծշմարիտ, զի թէ Յովհաննէս նշանս ոչ արար, բայց զամենայն, զոր ինչ ասաց, ճշմարիտ խօսեցաւ³: Եւ «առաւել»՝ նախ զի հուպ էր զալստեան Թագաւորին, զի զոր ինչ մարգարէքն մարգարէացան, նա ետես եւ վկայեաց, թէ Մա՛ւ է՝ ըստ նմանութեան թագաւորաց. որք մերձ կան առ նմին եւ զթագն բարձեալ ունիցին, առաւել պատուականագոյնք են, այսպէս եւ Յովհաննէս առ զալստեամբն Տեառն ձի արկեալ վարէր: Եւ երկրորդ՝ զի եւ յորովայնի մարգարէացաւ խայտալով եւ երկրպագելով: Եւ երրորդ՝ ոչ բանիւ միայն հանգոյն այլ մարգարէիցն խօսեցաւ, այլեւ մկրտել արժանի եղել զՏէրն ծառայն: Եւ չորրորդ՝ յաջորդդ ասէ:

Զի նա՛ է, վասն որոյ գրեալն է. «Ահա Ես առաքեմ զհրեշտակ Իմ առաջի երեսաց Քոց, որ պատրաստեսցէ զճանապարհս Քո առաջի Քո» (ԺԱ 10):

Այնքան առաւել էր, զի ոչ միայն մարգարէքն վասն Բանին, այլեւ վասն ձայնին մարգարէացան, քանզի եւ նա ինքն մարգարէս ունէր, որպէս գրեալդ, եւ այլուր թէ՝ «Ձայն բարբառոյ յանապատի» (Ես. Խ 3): Եւ «հրեշտակ»՝ կամ վարուքն յանապատին, որպէս հրեշտակք ի յերկին, կամ նախընթացութեամբն ոչ միայն յերկրի առ կենդանիս⁴ առաքեալ իբր հրեշտակ, այլեւ ի դժոխս առ մեռեալսն մուտ կազմելով եւ ճանապարհ՝ երկնաւոր Արքային. ո՛չ ի հեռուստ, այլ առաջի մտի Նորա յաշխարհ՝ մկրտութեամբն յապաշխարութիւն եւ վարդապետութեամբն ահացուցանող տապարաւ բանի⁵, յորս բազմեալ հանգեաւ Թագաւորն Հոգւով եւ ջրով:

Ամէն ասեմ ձեզ, չէ՛ յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս Սկրտիչ: Բայց փոքրիկն յարքայութեան երկնից մեծ է քան զնա (ԺԱ 11):

Որ ի սերմանէ առն ծնեալ է, ասէ, եւ մարգարէական փառօք բարձրացեալ իբր Մոսէս, Եղիսէոս, Դաւիթ, Եսայիաս, չեն մեծ քան զսա, այլ հանգոյն որ ասացէ տրա, եւ կամ թէ չեն հաւա-

¹ Զ նոյն

² Զ > եւ

³ Յովհ. Ժ 41-42

⁴ Զ կենդանիս

⁵ Մատթ. Գ 10

սար սմին. այլ սա մեծ քան զամենայն է՞ր վասն: Նախ՝ զի մարգարէ ունէր, որպէս ասացաւ, զոր ոչ զոք յայլոցն գտանեմք ունել: Եւ երկրորդ՝ վասն Տեառնս վճռին, զի ասէ, թէ չէ յարուցեալ նման սմին մեծ ի ծնունդս կանանց. թէպէտ եւ ատետօք եղեալ իսկ է իբր զԻսահակ եւ զՍամփսոն եւ զՍամուէլ, զի՞նչ ասես զմարմնատրացն¹ մեծացն: Եւ երրորդ՝ զմեծութիւն սորին յիրացն ծանիր՝ հայելով ի սեղանն, ի բարուցն բարձրութիւնն, զի նոր իմն ճանապարհաւ վարեցաւ յօրհնութիւն. եւ յաղօթս ծախելով զամենայն ժամանակս՝ ընդ Աստուծոյ խօսակցելով՝ ոչ խորտկօք կերակրէր եւ ոչ ի մահիծս հանգչէր, ոչ ընդ յարկաւ մտանէր կամ ընդ հրապարակս շրջէր, միանգամայն սաստիկ էր եւ հեզ եւ առ թագաւորս՝ համարձակ, թողից ասել զծնունդն, որ զհօրն կապեաց զլեզուն եւ արձակեաց². յաղագս այսորիկ ասէ թէ՝ «չէ յարուցեալ»:

Բայց զի մի՛ առաւելութիւն զովութեանն յոռութիւն ծնանիցի՝ պատուականագոյն քան զՔրիստոս զնա համարելով, ի վերայ բերէ թէ՝ «Փոքրիկն յարքայութեան երկնից մեծ է քան զնա»:
«Փոքրիկ» զԻնքն ասէ ըստ Դաւթի. «Փոքր էի ես յեղբարս իմ» (Սաղմ. արտաքոյ թուոց 1): Նախ՝ ըստ տիոցն, զի փոքր էր քան զՅովհաննէս. երկրորդ՝ ըստ բազմաց կարծեացն, զի «հիսսան որդի» ասէին (Մատթ. ԺԳ 55). երրորդ՝ զի «կերօղ եւ արբեցօղ» կոչէին (Մատթ. ԺԱ 19). չորրորդ՝ վասն չարչարանաց մահուն, զի գիտեմք զՅիսուս փոքր մի խոնարհեալ՝ ըստ առաքելոյ³, Նա, ասէ, ի կեանսն յաւիտենականսն եւ ի հոգեւոր եւ յերկնային բարիսն մեծ քան զնա, վասն զի Ինքն է տուիչ պարգեւացն այնորիկ եւ ստեղծիչ նորա: Բայց մի՛ ոք կարծեսցէ ըստ համեմատութեան Յովհաննու մեծութեանն զոլ զփոքրիկն մեծութիւն, այլ որպէս տեսնն առ ծառայ կամ Արարչի առ արարած: Իսկ աստ ըստ տկարութեան լսողացն զիջուցանէ, քանզի յայնժամ ժողովուրդն հարեալ էին ի Յովհաննէս:

Եւ դարձեալ՝ ասէին ոմանք, թէ փոքրիկն ի հաւատացելոցս յարքայութեանն երկնից մեծ է քան զնա. այլ մեզ քա՛ւ լիցի զայս կարծել, զի որ թշնամանէ զգինուոր արքային, նա զթագաւորն գլխովին ոչ ընդունի: Այլ կամեցաւ այսու զառաւելութիւն շնորհաց

¹ Գ զմարմնատրաց

² Ղուկ. Ա 20, 64

³ Եբր. Բ 7, 9

Իւրոց յայտ առնել, թէ գորպիսի իմաստ¹ հանդերձեաց աշակերտաց Իւրոց, քանզի գիտութիւնս այս, որ տուաւ ի ձեռն Յովհաննու, ոչ համենատի գիտութեան փոքրկանն, որ յայտնելոց է յարքայութեան Նորա՝ ըստ այնմ. «Փոքր ի շատէ գիտեմք եւ փոքր ի շատէ մարգարեանամք, եւ իբրեւ ընդ հայելի տեսանեմք, բայց յորժամ եկեսցէ կատարումն, փոքր ի շատէս խափանեսցի» (Ա Կոր. ԺԳ 9-10), եւ մեծին ընդունակ լինիցիմք:

Եւ դարձեալ՝ «արքայութիւն» է Տեառն գալուստն. արդ վերջին քարոզքն, որք Հոգւովն մկրտեցին, մեծ են քան զՅովհաննու մկրտութիւնն որ ի ջուր, զի եւ նոքա զՅովհաննու մկրտեալսն մկրտեցին, թէպէտ նա զայն արեամք մկրտեցաւ ի Հերովդէէ: Եւ դարձեալ՝ ի փոքունց փառաց հաւատացելոցն ի Նա, որք ծնան ոչ ի կանանց, այլ մկրտութեամք Աւագանին, եւ որդիացան Աստուծոյ, որ յայտնելոց է յարքայութեան Աստուծոյ, մեծագոյն է քան զփառսն Յովհաննու, զոր ունէր ի կենցաղս՝ ըստ այնմ. «Յորժամ Կեանքն ձեր յայտնեսցի, յայնժամ եւ դուք ընդ Նմին յայտնեսցիք փառօք» (Իսմն. Կող. Գ 4), քանզի ամենայն փառք մարմնականաց առ այն բաղդատեալ՝ իբրեւ գոչինչ համարիցին: Եւ դարձեալ՝ մեծութիւնն Յովհաննու ոչ եթէ բնութեան նորա էր, այլ Այնր, որ մեծացոյց զնա, իսկ որ փոքրիկն է ի մարդկանէ բնութեամբն իւրով, եթէ կամիցի կամօք իւրովք զգործ արքայութեան գործել որպէս Յովհաննէս, մեծ է քան զնա, քանզի այսու յոյս դնէ մեղաւորաց, զի Յովհաննէս ամենեւին արդար էր, իսկ փոքրիկ ոք յանցաւոր եթէ դարձցի եւ զբարիս գործիցէ եւ ուրախացուցանէ զհրեշտակս, յոյժ մեծ իցէ եւ զարմանալի քան զնա:

Եւ դարձեալ՝ զի ինն են դասք հրեղինաց՝ յերիս քահանայապետութիւնս անջատեալք. որ յետինքն են ի նոցանէ՝ «հրեշտակք անուանեալք», մեծ են քան զՅովհաննէս, զի թէ Յիսուս փոքր ինչ խոնարհեալ է քան զհրեշտակս՝ ըստ երգոյն², զի՞նչ ասես զՅովհաննէս: Եւ դարձեալ՝ ի ծնունդս կանանց մեծ քան³ զՅովհաննէս, վասն զի արու պատուականագոյն է քան զէգ, բայց յաստուածայինսն եւ ի հոգեւորս, յորս ոչ իցէ արուի զանազանութիւն, փոքր⁴ աստուածայինն մեծ թոյի քան զՅովհաննէս, որպէս եւ ինքն երկր-

¹ Գ իմաստս

² Սաղմ. Ը 6

³ Գ > քան

⁴ Գ փոքրիկն

պագեաց՝ ոչ միայն ծնելոյն, այլև ծնողին, քանզի ասաց այսպէս մայրն թէ՝ «Ուստի՞ իցէ ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս» (Ղուկ. Ա 43): Նաև յաղօթսն այսպէս կարգեալ է վասն սրբուհոյ՝ Աստուածածնին եւ Յովհաննու Կարապետին:

Բայց յաւորցն Յովհաննու Սկրտչի մինչեւ ցայժմ արքայութիւնն երկնից բռնադատի, եւ բռունք յափշտակեն զնա (ԺԱ 12):

Յառաջինն դառնայ կարգ եւ Յովհաննու բանիցն լինի ջատագով, եւ յայտ առնէ, թէ եկեալ իսկ է, վասն այսորիկ զամենեւին առ Իս հաւաքէր: Իսկ «յաւորց անտի» ասելն ոչ եթէ ժամանակ դնէ, այլ ի պայծառ եւ ի լուսաւոր քարոզութենէ՝ նորա, որ իբրև զծրագ յայտնի ճառագայթէր, զբազումս ճեպով յԻս դարձուցանէր, եւ բազումք յափշտակել ջանան՝ փութով մերձենալ առ Իս: Եւ դարձեալ՝ խրատեցան մարդիկ քարոզութեամբն Յովհաննու յապաշխարութիւն՝ փախչելով ի բարկութենէն, որ զայրցն է², եւ խիստ եւ անձուկ ճանապարհաւ նեղելով զանձինս՝ տանջանաց արժանատրքն եւ բռնաբարելով զմարմինն եւ զցանկութիւնն ի բաց հատանելով՝ յափշտակեն զարքայութիւնն՝ ըստ Իմաստնոյն թէ՝ «Բռունք ինեւ ունին զերկիր» (Առակ. Ը 16): Դարձեալ՝ ուսուցանէ, թէ որ բնութեամբ է ողորմած, կամ հեզ, կամ խոնարհ, կամ սակաւապէտ, ոչ է զովելի եւ ոչ ժառանգէ զարքայութիւնն, զի ակամայ եւ անասնական է, այլ որ նեղէ զբնութիւնն եւ զկամսն բռնաբարէ, նա յափշտակէ զարքայութիւնն: Եւ դարձեալ՝ բռնատրք եւ յափշտակօղբ մկրտեալք ի մկրտութիւնն Յովհաննու՝ արքայութեան եղեն որդիք, ըստ որում կարգ եղ բանի՝ զինուորացն եւ մաքսատրացն: Եւ դարձեալ՝ պոռնիկք եւ սպանօղբ, եւ գողք, եւ մաքսատրք բռնադատեցին զԱստուած հաւատովքն, քանզի բռնադատի կամօք եւ յաղթի մարդասիրութեամբն³:

Քանզի ամենայն Օրէնք եւ մարգարէք մինչեւ ցՅովհաննեւ մարգարեացան (ԺԱ 13):

Եւ այսու եւս ցուցանէ եկեալ զԻնքն՝ յայտ առնելով զպատճառս Օրինացն տուչութեան եւ մարգարէիցն առաքման, որպէս զի գուշակելով զգալուստ Իս՝ առ սակաւ սակաւ ընդելացուցա-

¹ Զ սրբոյ

² Մատթ. 4 7, Ղուկ. 4 7

³ Զ մարդասիրութեանն

նէին զձեզ՝ առ Իս ամէլով, որով կանխագիտական զօրութիւնն Աստուծոյ ճանաչեալ լինէր, եւ ըստ կամացն Հօր ներմարդութիւնս Իմ քարոզէր: Արդ՝ եթէ մինչեւ ցՅովհաննէս ասացին եւ առ նա եկեալ՝ լռեցին մարգարէքն եւ դադարեցին, ապա ուրեմն Ես եմ, որ գալոցն էի, եւ մի՛ ալլում սպասեալ ակն ունիջիք, քանզի եւ Յովհաննէս զԻս մատամբ ցուցանէր Գառն Աստուծոյ գոլ՝ եկեալ ի լրումն մարգարէիցն պիտառութիւն: Եւ դարձեալ՝ որպէս Յովհաննէս ձայն Բանին, այսպէս եւ ամենայն Օրէնքն եւ մարգարէքն զօրէն ձայնի ազդէին զգալուստ Իմ: Իսկ ի յայտնել Բանին՝ լռեալ կայցեն ձայնք Օրինացն եւ մարգարէիցն եւ Բանն յառաջեսցի, որպէս ինքն ասէր. «Նմա պարտ է աճել եւ ինձ մեղմանալ» (հմմտ. Յովհ. Գ. 30): Բայց ի դէպ էր ասել թէ՛ որովհետեւ եկեալ իսկ ես, ո՞ր է Եղիա, որպէս յալլում տեղոջ ասէին թէ՛ «Եղիայի՛ նախ պարտ է գալ» (Մատթ. ԺԷ. 10): Եւ զայս եւս կազմէ:

Եւ թէ՛ կամիք ընդունել, նա՛ է Եղիա, որ գալոցն է (ԺԱ 14):

Զի՞նչ է՝ «թէ կամիք», այսինքն՝ զի բռնադատեալ եւ հարկաւորեալ օրէնքն ո՛չ է յարամնայական, մանաւանդ եւ անվարձ իսկ, իսկ կամօք ընդունել հաստատուն է, միանգամայն եւ վարձաւոր: Եւ դարձեալ՝ եթէ ի բաց դնէք զնախանձն, որ կուրութիւն է մտացն, եւ միտ դնիցէք քննութեամբ իրացն գործելեաց, նա՛ է Եղիա, քանզի երկոքին զնոյն սպասաւորութիւն ընկալան եւ կարապետք եղեն զալստեանն Տեառն. որպէս նա երկրորդին², այսպէս եւ սա՛ առաջնոյն: Յայտ ի հանդերձէն է եւ ի բնակութենէն, զի որպէս նա ի Բռոռաթու հեղեղատին³, այսպէս եւ սա՛ յանապատին, եւ որպէս նա մաշկեկաւ, այսպէս եւ սա, ապա ուրեմն՝ վասն զի մի գոլով գործոյն եւ կենացն՝ միաւորեաց զնոսա: Բայց մի՛ ոք արտաքնոցն հետեւելով՝ փոփոխումն հոգոց ասիցէ, իբր թէ զհոգի Եղիայի Թեզրացոյ ունէր Յովհաննէս, քանզի զայս Եկեղեցի ոչ ընդունի, այլ զՀոգին Սուրբ, զոր ունէր Եղիա, էր նովին շնորհաց Հոգով եւ սա՛ յանապատի:

Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ (ԺԱ 15):

¹ Զ եթէ

² Մաղ. Դ 5

³ Գ Թագ. ԺԷ 5

Յուցանէ, թէ իմաստութեան պէտք են առ այն, զի գիտասցէ, թէ զիարդ եկեալն Եղիա նման է այնմ, «որ գալոցն է» ըստ մարգարէին¹: Եւ դարձեալ՝ թէ որք ոչ իմանայ եւ կարօտ է լսելոյ եւ ուսման, հարցցէ եւ լուիցէ գորպէսն եւ ուսցի վասն Յովհաննու, զոր «Եղիա» ասացի: Բայց նորա ոչ եթէ ոչ իշխեցին հարցանել, որ զբազում անօգուտ բանս հարցանէին, այլ զի ոչ կամեցան ուսանել, վասն այնորիկ ոչ հարցին, այլ անընդոստ կացին մնացին, որպէս ասէ.

Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս. նման է մանկտոյ, որ նստիցին ի հրապարակս², կարդայցեն զընկերս իւրեանց (ԺԱ 16)

եւ ասիցեն. «Փողս հարաք ձեզ, եւ ո՛չ կաքաւեցէք, ողբացաք ձեզ³, եւ ո՛չ կոծեցարուք» (ԺԱ 17):

Ողբականս արձակէ ձայնս թէ՛ ո՞ւմ բաղդատեցից զմեռեալս մտօք, եւ զի մի՛ յընտանի տեսակէն մարդկայինս կերպի արտաքս հանցէ, ասէ. «Նման է մանկտոյ», ոչ պարզամտութեամբ, այլ յիմարութեամբ, որք նախատեն զիւրեանց նմանիս, որ ոչ սզակից լինին եւ ոչ ուրախակից, զորս «ժանդս» կոչեն եւ «նենգաժոտս», այսպէս եւ ազգս այս ոչ Քրիստոսի ուրախացան, որ երարձ զմեղս նոցա եւ յառազաստ փեսայի զկեանս Իւր բաղդատեաց, ոչ հանդերձի Յովհաննու տրտմեցան, որ վասն յանցանացն նոցա կրէր զմեռելութիւն նոցա:

Եկն Յովհաննէս, ոչ ուտէր եւ ոչ ըմպէր, եւ ասեն. «Դեւ գոյ ի նմա» (ԺԱ 18):

Եկն Որդի մարդոյ, ուտէ եւ ըմպէ, եւ ասեն. «Ահա այր կերօղ եւ արբեցօղ, բարեկամ մաքսաւորաց եւ մեղաւորաց» (ԺԱ 19):

Յովհաննէս խիստ վարս եցոյց, եւ նորա ոչ անսացին խստամբերութեան պահոց նորա, այլ պարսաւէին թէ՛ «Դեւ գոյ ի նմա», զի անմարմինքն, ասէին, անկարօտք են կերակրոյ: Իսկ Որդին Աստուծոյ, որ եղեւ Որդի մարդոյ, դիւրին ճանապարհաւ եկն՝ զբարիս ցուցանելով, զի այնու որսասցէ զնոսա, նորա եւ զՆա եւս ըստգտանէին թէ՛ «կերօղ եւ արբեցօղ», որով յայտնի եղեւ, թէ կամա՛ խտորեալք էին եւ վասն անօրէնութեան գործոցն, զոր սիրէին, ոչ գային ի ճշմարտութիւնն, այլ պատճառս կարկատէին:

¹ Մաղաք. 75

² Գ հրապարակի

³ Գ > եւ ոչ կաքաւեցէք, ողբացաք ձեզ

Բայց ոչ եթե զանազան ճանապարհօրն զանազան ուսումն մուծին, այլ զմի եւ զնոյն, զոր օրինակ յորժամ կամիցին որսալ զգազան ինչ, ընդ երկու ճանապարհս ելանեն եւ հանդիպին միմեանց ի միում կրճի, զի ուստի եւ հնար իցէ, արկցեն ի գառազեղն, այսպէս Յովհաննէս եւ Տէրն, սակայն նոքա ոչ զգօնացան, վասն որոյ ասէ.

Եւ արդարացաւ իմաստութիւն յորդոց իւրոց»:

Այսինքն՝ թէպէտ չհաւանեցան, սակայն մեղադրել ոչ կարեն, զի զոր ինչ խնամարկութեանն անկ էր՝ կատարեցին, վասն որոյ Իմաստութիւնն Աստուծոյ Հօր, որ հնարիւ նեղ եւ արձակ ճանապարհաւ կամեցաւ զնոսա շահել ի Տեառն ընթացից եւ Յովհաննոս քարոզութենէն, արդար ցուցաւ: Եւ դարձեալ՝ Իմաստութիւնն Հօր Որդի արդար գտաւ առ նոսա յորդոց առաքելոցն եւ ի նշանաց հրաշիցն, քանզի նախ առ նոսա եկն եւ հրաշս գործեաց եւ առ նոսա զաշակերտսն առաքեաց, եւ նոքա¹ հետտեալ ի բաց կացին: Եւ դարձեալ՝ որք յորդոցն կրճատելոց դարձան առ Տէր եւ եղեն որդիք Նորա՝ մկրտութեամբ Աւագանին, որպէս առաքեալքն եւ այլք բազումք, արդարացուցին² զԻմաստութիւնն Աստուծոյ, եւ տանջանաց արժանիս գոյ զնոսա, զի թէ կամեցեալ էին, ամենեքեան իսկ հաւատացեալ էին: Կամ թէ իմաստուն որդիքն արդարացան, որք հրաւիրանաւն կոչեցան, քանզի զիմաստունսն «որդիս» ասէ:

Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն, յորս եղեն բազում զօրութիւնք Նորա, եւ ոչ ապաշխարեցին (ԺԱ 20):

Յետ բազում ժամանակացն եւ զկնի բազում հնարիցն նշանացն եւ բանից՝ ապա պախարակէ եւ հէզս եւ թշուառականս կոչէ, որպէս զի թերեւս այնու երկուցեալ զգաստացին, քանզի են բազումք, որք ոչ այնչափ ի նշանաց եւ ի խրատական բանից լաւանան, որչափ յեպերական խօսից: Վասն որոյ եւ զայս եւս ի կիր էարկ առ նոսա, որք բազում շնորհաց ընդունակք եղեալ էին եւ մոռացողք եղեն, զորս նախատէ: Եւ տես, զի ապաշխարութիւնն միայն բաւական էր առ ի փրկութիւն, եւ նոքա ոչ կամեցան:

¹ Զ > նոքա

² Զ արդար ցուցին

Վա՛յ քեզ, Քորագին, վա՛յ քեզ, Բեթսայիդա, զի եթէ ի Տիրոս եւ ի Սիդովն եղեալ էին զօրութիւնքն, որ ի ձեզ եղեն, վաղո՛ւ եւս արդեօք խորզով եւ մոխրով ապաշխարեալ էր (ԺԱ 21):

Մոքա քաղաք էին երբայեցոցն, յորս մուտ եւ ել արար Յիսուս¹, եւ բազում վարդապետութիւնս եցոյց եւ նշանս ի կողմն գալիլեացոց, բայց ոչ հաւատացին, վասն որոյ եւ զանունսն եւս յիշատակէ՝ Քորագին, որ է «աստ խորհուրդ իմ», եւ Բեթսայիդա, որ է «տուն մթին» կամ «տուն որտղաց», քանզի խորհելով զերկրատորս եւ զնսեն եւ զբոզակաց կեանս սիրելով՝ ոչ հետեւեցան երկնատրին: Եւ այն, զի որտորքն մարդկան լուծք գլխատորք առաքելոցն, եւ Փիլիպպոս ի նոցանէ էր, զի մի՛ կարծեսցէ որ զնոսա բնութեամբ չար գոյ, այլ յօժարութեամբ, որ եւ տեսեալ զանվրէպ կորուստն նոցա՝ աւաղէ, ոչ միայն զգրումն նոցա հռոմայեցուվքն, այլեւ զահագին հրոյն եւ զարտաքին խաւարին ծանրութիւն, որք անձամբ ձգեցին յինքեանս, որպէս եւ ասէ՝ «վա՛յ քեզ», որպէս թէ զայնպիսի վայն դո՛ւ ի քեզ ձգեցեր եւ ո՛չ Ես: «Ձի եթէ՛ ի Տիրոս եւ ի Սիդովն եղեալ էին զօրութիւնքն]...»: Չոցա կորուստն Եզեկիէլ պատմէ՛՝ ուսուցանելով, թէ զառաջինսն յաղագս այնորիկ տանջէ, զի յետինքն զգաստացին. արդ՝ որովհետեւ ոչ խրատեցայք նոցին կրիքն, ոչ միայն վասն ձեր, այլեւ վասն նոցա տանջոյիք, քանզի թէ ի Ծուր եւ ի Ծայդան եղեալ էին նշանք, որպէս առ ձեզ են, ոչ էին կործանեալ, այլ հաւանութեամբ նշանացն ապրեալք լինէին:

Բայց ասե՛ն ձեզ, դիւրագոյն լիցի երկրին Տիրոսի եւ Սիդովնի յԱւորն դատաստանի, քան ձեզ (ԺԱ 22):

Չանազանութիւն եւ որոշումն տանջանաց նշանակէ այսու. զի որպէս ի մարմնական ցաւս թէպէտ զմի եւ զնոյն վէրս ունիցին աչաց եւ կամ գլխոյ, սակայն աւելի եւ կամ պակաս են հեծութիւնքն՝ եւ կսկիծն, այսպէս եւ անդ, վասն զի նոքա ոչ տեսին նշանս, այլ դուք՝ բազում եւ անթիւ, նոքա մարմնով վշտացան, այլ դուք՝ հոգով եւ մարմնով:

¹ Զ Զրիստոս

² Զ թէ

³ Եզեկ. ԻԶ-ԻԸ

⁴ Զ հեռութիւնքն

Եւ դո՛ւ, Կափառնաւոմ, մի՛ մինչեւ յերկինս բարձրասցիս, այլ մինչեւ ի դժոխս իջցես (ԺԱ 23):

«Կափառնաւոմ» քարզմանի «ազարակ պանդխտութեան» կամ «սպանութեան», յորս բազում ժամանակս պանդխտեալ անդ Տէրն՝ սպանանել խորհէին, եւ քանզի արք ամբարտաւանք եւ բարձրասիրտք էին եւ կամ յամբազոյն տեղոջ բնակէին, ասէ, ո՛չ կարես գերծանիլ, յորժամ պատիժքն հասանիցեն՝ ըստ այնմ. «Եթէ յանձաւս դիցես զբոյն քո, եւ անտի՛ իջուցից զքեզ» (հմմտ. Աբդիու 4): Եւ պատճառ՝ չարութիւն քո եւ անդարձութիւն, զի ո՛չ հաւատացեր յԱյն, որ եկն բարձրացուցանել զքեզ յերկինս, այլ զկամս իշխանին սանդարամետաց առնելով՝ առ նա՛ հաւաքեսցիս ի դժոխս:

Չի եթէ ի Սողոմ եղեալ էին զօրութիւնքն, որ եղեն ի քեզ, ապաքէն կային եւս մինչեւ ցայսօր:

Յուցանէ մեծազոյն զոյ զչարիս սոցա, քան զչարիսն նոցա, եւ առաւել զխնամարկութիւն սոցա, քան զՍողոմայ. յայտ ի նշանացն է եւ ի զօրութեանցն. բայց ո՛չ հաւատացին, վասն որոյ ասէ.

Բայց ասե՛ն ձեզ, եթէ երկրին սողովմացոց դիրագոյն լիցի յԱւուրն դատաստանի, քան ձեզ» (ԺԱ 24):

Անդ ձգելով զպատիժն՝ յապաշխարութիւն ածէ, ապա թէ ոչ կամիցին, թեթեւագոյն, ասէ, լիցին տանջանք կորացելոց եւ ամլացելոցն ի բարեաց՝ որք¹ նախ քան զձեզ յԱւուրն դատաստանի, քանզի նոքա զծառայսն ո՛չ ընկալեալ արհամարհեցին, իսկ որքա զՏէրն ոչ միայն ոչ ընկալան, այլեւ սպանանել յանդգնէին, յաղազս այտորիկ ընդարձակագոյն ասացեալ է յառաջագոյն: Այլ խրատեսցուք եւ մեք, զի ո՛չ միայն անհաւատիցն, այլեւ մե՛զ պատրաստեալ է նոյն տանջանք, եթէ ոչ լինիցինք ասպնջականք հիւրոցն, յորժամ առ մեզ մտանիցեն:

Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս եւ ասէ (ԺԱ 25):

Յորժամ զվճիռն եհատ անհաւատիցն եւ զկորուստ նոցա յայտնեաց կանխազէտ զօրութեամբն, զոհանայ զՀօրէ՛ ոչ ընդ կորուստ նոցա խնդալով, այլ ընդ գիւտ անմեղացն բերկրելով: Բայց ո՞ւմ ետ պատասխանի՝ խնդրելի է. զայս Դուկաս ուսուցանէ, թէ «ի նմին ժամու ցնծացաւ Յիսուս Հոգուով» (Դուկ. Ժ 21), քանզի ամենայն ուրեք Հոգին գործակից էր ի տնօրէնութիւնն, յորժամ ետես,

¹ Տ որ

զի «դարձան եօթանասունքն խնդութեամբ եւ ասացին թէ՛ Տէր, եւ դէ՛ք հնազանդին մեզ յանուն Բո» (Գով. Ժ 17): Ծանեաւ Հօր կամք գոյ զայն Հոգւովն, վասն որոյ Հօր կամացն պատասխանի արարեալ՝ ասէ.

«Գոհանամ զԲէն, Հա՛յր, Տէ՛ր երկնի եւ երկրի:

Ո՛վ ճոխ եւ հրաշալի աստուածարանութեանս, գոր ո՛չ ի ձեռն ումեք, այլ Ի՛նքն իսկ առանց միջնորդի ուսուցանէ Հայր գոյ զԱստուած Ինքեան բնութեանն, որ նախ քան զյաւիտեանս ծնեալ իսկ էր ի Նմանէ՝ ըստ այնմ. «Յառաջ քան զարուսեակ ծնայ զԲեզ» (Սաղմ. ԾԹ 3)՝ անախտ եւ անժամանակ՝ անապական ծննդեամբ: Եւ ապա ըստ կարգի յարարչութիւնն զայ թէ՛ «Տէր երկնի եւ երկրի»՝ զսկզբունսն յիշելով ըստ Մոսիսի թէ՛ «Ստեղծ Աստուած զերկին եւ զերկիր» (Ծննդ. Ա 1), որով զմասունսն ամենայն ի ներքս պարունակէ: Եւ ո՛չ միայն ստեղծիչ, այլեւ տէր եւ դատաւոր երկնի եւ երկրի, հրեշտակաց եւ մարդկան, հոգւոց եւ մարմնոց, կենդանեաց եւ մեռելոց, արդարոց եւ մեղաւորաց գոյ ուսուցանէ:

Բայց տեսցոր զի՞նչ է գոհանալն եւ ապա թէ՛ ընդէ՞ր գոհանայ: Արդ՝ գոհութիւն է շնորհակալութիւն յառեալ բարիս եւ կամ ի հրաշից ներգործութիւնս՝ ըստ Դաւթայ¹. «Գոհացայց զԲէն, Տէ՛ր» (Սաղմ. Թ 2), որ է խոստովանութեամբ յայտնելն զՀայր: Իսկ գոհանայ ո՛չ վասն Իւր, որ եւ զամենայն առնէր, այլ վասն աշակերտացն, որով փութացաւ ածել զնոսա ի հաւատս. զի գոր օրինակ յաղօթս կալով եւ բարեխօս լինելով՝ զբազում սէրն ցուցանէր, այսպէս եւ աստ գոհութեամբս զխնամարկութեանն² տածումն եւ զպաշտպանութեանն փրկութիւն յայտ առնէ, թէ ո՛րպիսի իրաց արժանի եղեն հաւատացեալ աշակերտքն: Նախ՝ ի խրատ եւ յուսումն մեզ, զի ի վերայ յաջողման ընկերացն պարտ է գոհանալ եւ ո՛չ յաչադանօք վշտանալ: Եւ երկրորդ՝ զի ցուցէ զՀայր մեծ եւ սքանչելի եւ զԻնքն հաւասար Նմա, որովք ի Նորա զիտութիւնն ձգէր զամենեսեան, իսկ որք անկան, ո՛չ ի Նմանէ միայն, այլեւ ի Հօրէ՛ հեռացան: Եւ երրորդ՝ զի բազում ինչ խօսեցաւ եւ գործեաց, զի մի՛ թուեսցի առանց Հօր գործակցութեան առնել զայն, գոհա-

¹ Գ Դաւթի

² Տ զխնամարկութեան

նայ զՆմանէ: Եւ չորրորդ՝ զդէմս մեր զգենլով զոհանայ, զի յիմաստնոցն ծածկեցաւ եւ տղայոցն յայտնեցաւ, որ է մեծ զարմանք եւ զոհութեան արժանատր, որպէս ասէ.

Զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի զիտնոց եւ յայտնեցեր տղայոց:

Չայս ասելով՝ մի՛ կարծիցես, թէ զԱստուած ինչ պարտական առնիցէ, այլ որպէս Պօղոս ասէ թէ՝ «Մատնեաց զնոսա ի միտս անփորձս» (հմմտ. Հոմմ. Ա 28), եւ թէ՝ «Կտրացոյց զմիտս նոցա» (հմմտ. Յովհ. ԺԲ 40), ոչ զԱստուած պատճառ դնիցէ, այլ զնոսա՛, նոյնպէս եւ աստ զներելն եւ զթոյլ տալն իմա: Իսկ զի՞նչ ծածկեցաւ ի նոցանէ. յայտ է՝ հաւատք Տեառն մեր եւ զործք մարդեղութեան Նորա: Է՞ր վասն. զի զիրեանց արդարութիւնն խնդրեն կացուցանել եւ արդարութեանն Աստուծոյ ոչ հնազանդեցան, որ է Բրիստոս՝ ըստ առաքելոյ՝: «Ծածկեցեր,- ասէ,- յիմաստնոց»: «Իմաստունս» զդպիրսն եւ զփարիսեցիսն ասէ հեզներով, կամ զի Օրինօքն պանծային, կամ զի խորամանկք էին եւ հակառակէին ընդդէմ հաւատոց Նորա՝ ասելով, թէ նշանք ընդէ՞ր եղեն յայն նիշ քաղաքի եւ ոչ յայս: Կամ զարտաքին փիլիսոփայսն ասէ իմաստունս, որք ոչ տեղեկացան աստուածութեան Նորա՝ բազմամասն զիտութեամբ իմաստից իրեանց՝ ըստ Պօղոսի. «Չանձինս իմաստունս ունէին՝ յիմարեցան» (Հոմմ. Ա 22): Իսկ «տղայս» զառաքեալսն կոչէ՝ ըստ առաքելոյ թէ՝ «Յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ» (Ա Կոր. Ա 25), եւ դարձեալ՝ ինքեանք ասէին, թէ արք տգէտք եւ առանց դպրութեան են², եւ խօսին զմեծամեծս Աստուծոյ: Կամ՝ զգեղջուկս եւ զտգէտս աշխարհի, զանմեղս եւ զպարզամիտս, որք հաւատոյն յայտնութեամբ միացան ի Նա, որով ցուցանի, թէ հաւատն է բացայայտիչ խորոցն Աստուծոյ եւ ոչ զիտութիւն մարդկեղէն խորհրդոց՝ ըստ այնմ. «Յայտնութիւն³ բանից Բոց լուսատրէ եւ իմաստուն առնէ զտղայս» (Մատթ. ԵԺԸ 130):

Այո՛, Հայր, զի ա՛յսպէս հաճոյ եղիւ առաջի Բոյ (ԺԱ 26):

Չայս թախանձանօք իմն ասէ, թէ ա՛յս իսկ են կամք Բո, զի յիմաստնոց ծածկեցեր⁴ եւ անմեղաց յայտնեցեր¹, որպէս զի մի՛

¹ Ա Կոր. Ա 30

² Գործք Դ 13

³ Յայտնութեան

⁴ ծածկեր

մարդիկ պարծեսցին յիմաստութիւնս իւրեանց, այլ ի Հօրդ զօրութիւն: Եւ դարձեալ՝ զոր ինչ Դու կամեցար, Ես զնոյն արդեամբք վճարեցի, որով միութիւնն յաւետ քարոզի՝ ճշմարիտ Հայր ճշմարիտ Որդոյ Միածնի:

Ամենայն ինչ տուաւ Ինձ ի Հօրէ Իմմէ (ԺԱ 27):

Աստ յայտնապէս ցուցանէ, թէ ո՛չ է Ինքն զրկեալ յայնպիսի յուղորթնէ եւ չկարիցէ ինչ առնել՝ ծածկել կամ յայտնել: Եւ դարձեալ՝ զմիակամութիւնն յայտնէ, զի մի՛ երկու աստուածս անծինս համարիցիս, այլ որպէս Որդի ի Հօրէ ունի զհայրենիսն, այսպէս եւ զբնութեանն հաւասարութիւն: Կամ թէ յաղագս մարմնոյն ասաց զայս, զի զոր ինչ ըստ աստուածութեանն ունէր, ընկալաւ զամենայն եւ ըստ մարմնոյն տնօրինաբար վասն մեր անդատին² յղորթեանն. զիմաստութիւն՝ զի զօտար իմաստութիւնն խափանեցէ, եւ զզօրութիւն՝ զի զանօրէնութիւնն հալածեցէ, եւ զճշմարտութիւն՝ զի զստութիւնն կորուցէ, քանզի Ինքն էր ամենայն եւ տուաւ վասն մեր ամենեցուն եւ ի մահ մատնեալ վարեցաւ:

Եւ ոչ որ ճանաչէ զՈրդի, եթէ ոչ Հայր, եւ ո՛չ զՀայր որ ճանաչէ, եթէ ոչ Որդի եւ ում Որդին կամիցի յայտնել:

Չի՞ զարմանայք, ասէ, թէ Տէր եմ ամենեցուն, այլ եւ ա՛յլ իմն մեծ ունիմ քան զայս, զի զՀայր գիտեմ եւ ի Նորին էութենէն եմ: Եւ այս յիրաւի՛. զի ո՞վ ճանաչէ զմիտս, եթէ ոչ քանն, որ ելանէ ի նմանէ, եւ ո՞ զքանն, եթէ ոչ միտքն, որ³ յառաջ ածէ եւ զեր ի վերոյ է քան զամենայն: Եւ դարձեալ՝ ո՛չ զայն ասէ, թէ ամենեքեան իսկ չգիտէին զՆա, այլ թէ ստոյգ գիտութեանն, որպէս Եսն⁴ գիտեմ, այլ որ ո՛չ գիտէ: Այսպէս եւ զՈրդոյ իմա, զի ամենեքեան գիտէին զՆա, բայց ո՛չ այնպէս, որպէս Հայր, որում եւ վկայեաց թէ՛ «Դու ես Որդի Իմ սիրելի» (Մարկ. Ա 11): Քանզի տեսանելն միայն ոչ է ճանաչելն, զի եւ լուսաւորք եւ քարինք եւ արմատք երեւին, այլ ո՛չ ճանաչիւն: Չի որպէս որք զակն լուսատու տեսանեն, ոմանք այնպէս, որպէս մանկունք, սակայն ոչ գիտեն, թէ զինչ է, այլ քար կարծեն, իսկ կէսք ճանաչեն, բայց ո՛չ զբնութիւն եւ զպատիւն գի-

¹ Զ յայտնէր

² Զ անդրստին

³ ՏԶ զոր

⁴ Զ որպէսն] որպէս եսն

տեն, իսկ յոյժ հմուտքն զբնութիւն եւ զարժանատրութիւն եւս քարոզեն. այսպէս զՀայր եւ զՈրդի ոմանք բնաւին ոչ գիտեն, որպէս անհաւատքն, իսկ այլք ճանաչեն հաւատովք, որպէս հաւատացեալքն, բայց ոչ են գիտակ բնութեանն, իսկ ստոյգ գիտութիւնն Որդոյ առ Հայր է, եւ Հօր՝ առ Որդի եւ որոց Նորա յայտնեցեն Հոգւովն:

Բայց նորա ոչ այնպէս գիտացին, զի «թէ էր ծանուցեալ, ոչ արդեօք ի խաչ հանէին¹» (Ա Կոր. Բ 8), եւ թէ՛ «Թո՛ղ սոցա, զի ո՛չ գիտեն զինչ գործեն» (Գուկ. ԻԳ 34), որով յայտ լինի, թէ բնութիւնն Աստուծոյ անհաս է՝ ըստ այնմ. «Ո՛չ որ կարէ տեսանել զերեսս Իմ եւ ապրել» (հմմտ. Ելք ԼԳ 20), «բայց միայն Որդին Միածին որ ի ծոց Հօր՝ Նա՛ ետես եւ պատմեաց մեզ» (հմմտ. Յովհ. Ա 18), որպէս ասէ. «ու՛մ Որդին կամիցի յայտնել»՝ իբր զՈրդի գիտակակից Հօր էութեան՝ ըստ այնմ. «Յայտնեցի զանուն [Քո]» (Յովհ. ԺԷ 6): Այսպէս եւ զՈրդոյ՝ «եթէ ոչ Հայր»՝ ըստ այնմ. «Մարմին եւ արիւն ոչ յայտնեաց, այլ Հայր Իմ որ յերկինս» (Մատթ. ԺԶ 17): Եւ դարձեալ՝ ո՛չ ամենեցուն, այլ որոց կամ եղեւ՝ ծանուցաւ Աստուած վասն կամաց Իւրոց, եւ Որդի՝ վասն գործոց Իւրոց, յորժամ զհանդէս զօրութեան Նորա առին Հոգւովն, ոչ միայն յԻնքեան նշանաց, այլ զի անուամբ Նորա մեծամեծ զօրութիւնս կատարեցին:

Եկայք առ Իս, ամենայն վաստակեալք եւ բեռնաորք, եւ Ես հանգուցից զձեզ (ԺԱ 28):

Յորդորական ձայնիւս ո՛չ զայս անուն եւ զայն, այլ զամենեսեան կոչէ, յորժամ ծանոյց զԻւրն էութիւն գիտակ գոյ Հօրն էութեան: «Եկայք առ Իս», ասէ, որք ի հոգս եւ ի տրտմութիւնս եւ ի մեղս վշտացեալ էք՝ ո՛չ ի վրէժխնդրութեան պահանջումն, այլ ի մեղաց ջնջումն², ո՛չ յԻմ փառաց լրումն, այլ ի ձեր փրկութեան կատարումն, վասն որոյ ասէ. «Ես հանգուցից զձեզ»: Ուստի՞ յայտ է ի մեղաց վաստակոցն բեռանց, քանզի օրինակ իմն մեղքն իբր զբեռն³ ծանր է եւ վայրաքարշ, որ ճնշէ զմիտս եւ զմարմին՝ ըստ մարգարէին թէ՛ «Անօրէնութիւնք իմ որպէս բեռն ծանրացան ի վերայ իմ» (Մաղմ. ԼԷ 5), եւ այլ ոմն «կշիռ կապարեայ» եւ

¹ Զ ~ հանէին ի խաչ

² Զ ննջումն

³ Զ բեռն

«չափ կապարեայ» գնոսա անուանեաց¹, յորմէ հանգոյց՝ յԻնքն առնելով զմեր սխալանս, զԻւր արդարութիւնն տալով մեզ: Եւ դարձեալ՝ ոչ միայն կեցուցից ի մեղաց, այլեւ հանգստեան արժանատրեցուցից, ասէ, որք զայք առ Իս յարակցեալք հաւատովք², վաստակեալ մարմնով եւ ծանրացեալ հոգւով:

Առէք զլուծ Իմ ի ձեզ եւ ուսարո՛ք յԻնէն, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ (ԺԱ 29):

Զգաղափար հանգուցելոյն յայտ առնէ թէ՛ «Առէք զլուծ Իմ ի ձեզ», եւ «լուծ» զհեզութիւն եւ զխոնարհութիւն կոչէ, գոր, ասէ, ուսարո՛ք յԻնէն: Քանզի որպէս եզն հեզութեամբ եւ խոնարհութեամբ լծարարձ եղեալ՝ ամառնային վաստակօք հանգչի ի ձմեռնային ժամանակի, այսպէս դուք հեզ եւ հանդարտ զգօնութեամբ եւ սրտի խոնարհութեամբ զլուծ օրինաց Իմոց բառնալով՝ թեթեւասօջիք ի մեղաց, որով ի հանդերձեալ Օր ձմեռայնին, որ ոչ է գործոյ, այլ հատուցման ժամանակ, հանգստեան արժանատր լինիջիք: Եւ այս օրինակ զԻ՛ս ընկալարուք, զի ա՛յս իսկ է գործ վարդապետի՝ զանձն ապացոյց տալ իրացն հանդիսի, որպէս զի դիրքնկալ լիցի: Եւ դարձեալ՝ մի՛ կարծիցես նուաղել ինչ, յորժամ խոնարհ եւ հեզ լինիցիս՝ ոչ միտելով զկնի մեղաց եւ կամ ոչ առնուլ զվրէժս ի չարչարողացն, այլ յԻ՛ս հայեցօջիք եւ յԻ՛մմէ վարդապետութենէ՛ն ուսանիջիր, թէ որքան բարի է հեզութիւն եւ խոնարհութիւն, զի «որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի» (Մատթ. Ի 9 12), եւ՝ «Երանի՛ հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր» (Մատթ. Ե 5) վերին, քանզի Դաւիթ այնու պանծացաւ³, եւ Մոսէս ծառայ Աստուծոյ նովին վկայեցաւ⁴: Զի գոր օրինակ որք յատակս երկրի իջանեն, զոսկին արտաքս բերեն, այսպէս եւ որք զխոնարհութիւն զգենուն, զոսկեղենիկ առաքինութիւնն ցուցանեն յանձինս՝ զՏեառն պատմուծանս: Իսկ ասելն թէ՛ «սրտի», զի բազումք մարմնովք խոնարհ ձեւանան եւ մտօք վերամբարձեալք են, զորս խոտէ, այլ «զխոնարհս հոգւով կեցուցանէ» (Մաղմ. Լ 9 20), եւ «զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարիէ» (Մաղմ. Ծ 19):

¹ Զաք. Ե 7

² Գ յարակցեալ հաւատօք] յարակցեալք հաւատովք

³ Մաղմ. ԾԼԱ 1

⁴ Թիւք ԺԲ 3

Եւ գոցիք հանգիստ անձանց ձերոց :

Երկու շնորհս խոստանայ. մի՝ զի ոչ այլում, այլ քան ամենեցուն քե՛զ հանգիստ առնիցես, եւ երկրորդ՝ նախքան զհանդերձեալն աստէ՛ն իսկ պսակ պարծանաց կազմես՝ ոչ ըստ չափոյ քումդ վաստակոց, այլ անակնունելի բիրապատիկ փառօք՝ ըստ զիտի օրինի:

Չի լուծ Իմ քաղցր է, եւ բեռն Իմ՝ փոքրոգի» (ԺԱ 30):

Չայս յայն սակս վերաբերէ, զի «լուծ» ասացի, մի՛ կարծիցես դժուարին գոյ, եւ «բեռն» անուանեցի, մի՛ զանգիտիցես ծանրագոյն լինել, այլ քաղցր է եւ թեթեւ յաղագս յուսոյ խոստացեալ բարեացն՝ ըստ առաքելոյ թէ՛ «Չեն արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն, որ յայտնելոց է ի մեզ» (Հոմ. Ը 18), եւ թէ՛ «Չոր ակն ոչ ետես՝ պատրաստեաց Աստուած սիրելեաց Իւրոց» (հմմտ. Ա Կոր. Բ 9): Եւ թէ բանիցս ոչ հաւատասցես, տես զերեսս մարտիրոսացն, թէ ո՞րպէս լուրջ դիմօք զբազմատեսակ հնարս տանջանացն իբր զծաղիկս հաւաքէին եւ յուսով անմահ կենաց պրկեալք՝ ի տապակի կային իբր հովանացեալ ի մէջ շուշանի: Եթէ յայլում տեղոց «նեղ» ասաց, զայն վասն թուլիցն եւ ծուլիցն ասաց, իսկ արեացն յոյժ թեթեւ թուի եւ քաղցր: Եւ դարձեալ՝ զի առաքինութեանն կատարօք քաղցրանան ի գործելն եւ օրինակ իմն թեթեւացեալ՝ վերամբարձ լինին մտօք, այժմ ըստ նմանութեան առաքելոյ յերրորդ երկինս յափշտակեալ¹ հոգւով եւ մարմնով եւ մտօք՝ Եռանձնեայ Աստուածութեանն եղեալ երկրպագօք եւ անճառ բանից Նորա ընդունօք, եւ ի հանդերձեալն ամպօք ընդ առաջ Տեսնն յօդս²:

¹ Բ Կոր. ԺԲ 2

² Ա Թես. Դ 16

ԳԼՈՒԽ ԺԲ

Յայնժամ գնաց Յիսուս ընդ արտորայսն նոցա ի շաբաթու, եւ աշակերտքն Նորա քաղցեան եւ սկսան հասկ կորզել եւ ուտել (ԺԲ 1):

Ղուկաս «ի շաբաթու երկրորդում առաջնոյն» ասէ (Ղուկ. 2 1). քանզի կրկին դատարկութիւն նոցա լինէր, յորժամ ի բուն շաբաթն մտանէին, որ է ամն ողջոյն շաբաթ ըստ Օրինացն¹, եւ օրն՝ շաբաթ, եւ կամ՝ տօն եւ շաբաթ, կամ՝ յետ առաջին շաբաթին, որ է Պասեքն, երկրորդ շաբաթին եղև գալն², զոր մեք այժմ Նոր կիրակէ³ անուանենք: Բայց թէ ընդէ՞ր ընդ անդաստանս ամէր զնոսա. զի զշաբաթն կամէր լուծանել, այլ ո՛չ առանց պատճառանաց, որպէս զի զՕրէնսն դադարեցուցէ եւ զնոսա մի՛ զայրացուցէ, եւ որպէս յայլում տեղոց զՀայր դնէր պատճառ, յորժամ Ինքն լուծանէր թէ՛ «Հայր Իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ Ես գործեն» (Յովհ. Ե 17), քանզի ոչ էր արժան յարարածոց ապացուցանել՝ ի հրեշտակաց կամ ի մարդկանէ, իսկ աստ զքաղց աշակերտացն դնէ եւ զԴաւիթ ի մէջ բերէ, եւ մարդկան զմարդ վկայ կացուցանէ, զի ի բանբասանաց զնոսա ազատեսցէ: «Եւ սկսան,- ասէ,- հասկ կորզել եւ ուտել»: Այսու ցուցանէ, թէ հրաժարեալ էին աշակերտքն յամենայն կենցաղական իրաց եւ սովամահ եղեալ հանապազ՝ ո՛չ ի բաց ի Վարդապետէն հեռանային, քանզի ի կարի ստիպեալ սովուն յայն մտաբերեցին: Տես եւ զայն, թէ ո՛րպէս տեղեակք եւ հլու Օրինացն էին, զոր ասաց թէ՛ «Յորժամ յանդաստան ունէք մտանիցես, մի՛ մանգաղ յոճ արկանիցես, այլ հասկ կորզեսցես» (հմմտ. Բ Օր. ԻԳ 25):

Իսկ առ ի միտս՝ զի «շաբաթ» հանգիստ լսի, որպէս ասաց յառաջագոյն. «Եկա՛յք, աշխատեալք, եւ Ես հանգուցից զձեզ» (հմմտ. Մատթ. ԺԱ 28), այժմ զնոյն տնօրինէ ընդ արտորայս նոցա անցանելով՝ նշանակ գոլ փրկեալ հոգւոց՝ ըստ այնմ. «Ամբարձէք զաչս ձեր եւ տեսէք զարտորայսդ, զի սպիտակացեալ են եւ ի հունձս հասեալ» (Յովհ. Դ 35), եւ թէ՛ «Հունձք բազումք⁴ են» (Մատթ. Թ 37), որոց

¹ Ելք ԻԳ 10-11, Ղևտ. ԻԵ 1-7

² Զ ~ եղև գալն շաբաթին

³ Զ կիրակէ

⁴ Զ բազում

փրկութեան աշակերտքն բաղձացեալ ըստ նմանութեան Տեառն՝ սկսան կորզել ի մեղաց եւ հանգուցանել ի յանցանաց եւ կերակուր ախորժ եւ կամակ՝ անձանց եւ Տեառն իւրեանց ընծայել, ցորեան երիտասարդաց յըշտեմարանս երկնից հաւաքել:

Փարիսեցիքն իբրեւ տեսին, ասեն ցՆա. «Ահաւասիկ աշակերտքն Քո գործեն, զոր ոչ է արժան գործել ի շաբաթու» (ԺԲ 2):

Է՞ր վասն աստ ոչ զայրանային, այլ դոյզն ինչ մեղադրէին, իսկ յորժամ զձեռն զօսացեալ պարզեաց, սաստիկ իմն զազանանային¹: Ինձ թուի՝ յորում տեղոջ ո՛չ Ինքն գործէր եւ կամ մեծամեծ նշանս առնէր, հանդարտէին փոքր մի, իսկ ուր մեծամեծս ինչ տեսանէին ի Նմանէ եղեալ, առաւել խռովէին եւ սպանանել խորհէին, քանզի թշնամիք մարդկան փրկութեան էին: Բայց աստ յաղագս երկուց իրաց բամբաստէին զաշակերտսն: Նախ՝ զի շաբաթ էր, որոց դատարկանալ Օրէնքն հրամայէր², իսկ նոքա հասկ կորզէին եւ ընդ ափ շփեալ ուտէին: Եւ երկրորդ՝ զի օրէն էր նախ քահանայիցն մատուցանել յարմտեացն եւ ապա ժողովրդեանն մերձենալ, զի մի՛ պղծեսցին³, իսկ անդ տակաւին չեւ էին ընծայեալ քահանայիցն, վասն որոյ անարժանութիւն ասեն զիրն զոյ աշակերտացն: Յայս տիպ առցես զնոր փարիսեցոցն հակառակութիւն՝ զսուտ առաքելոցն եւ զհերձուածողացն, որք խափանել ջանային զհաւատացելոցն բազմութիւն՝ ըստ առաքելոյ թէ՛ «Աղէք սանդղոսս դարբին բազում հակառակութիւնս արար ինձ» (հմմտ. Բ Տիմ. 7. 14):

Եւ Նա ասէ ցնոսա. «Ո՞չ իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արար Դաւիթ, յորժամ քաղցեան եւ որ ընդ նմայն էին (ԺԲ 3):

Ձիարդ եմուտ ի տունն Աստուծոյ եւ եկեր զհաց զառաջաւորութեանն, զոր ոչ էր օրէն նմա ուտել եւ ոչ՝ որոց ընդ նմայն էին (ԺԲ 4):

Ի դէպ խորամանկ բարուցն պատասխան առնէ եւ ո՛չ զայլ ոք, որ զերախայրիսն եկեր, այլ զԴաւիթ ի մէջ բերէ⁴, քանզի յոյժ մեծ էին փառք մարգարէին, որով ցածուցանէր զմիտս նոցա, քանզի քահանայիցն էր պատիւն, որպէս գրեալ է ի Յուդիթն թէ՛

¹ Զ զազանային

² Ելք Ի 10

³ Ղևտ. ԻԳ 10-14

⁴ Ա Թագ. ԻԱ 2-6

«Սկսան ուտել զայն, զոր ոչ էր օրէն ուտել, բայց միայն քահանայիցն» (Յուդիթ ԺԱ 12), իսկ Դաւիթ թէպէտ մարգարտ էր, այլ ոչ քահանայ, բայց յորժամ քաղցեալ, եկեր եւ ոչ մեղադրեցաւ: Եւ զի մի՛ յոյս ասիցէ, թէ Դաւիթ զի քահանայ ոչ էր, սակայն օծումն շնորհաց ունէր թագաւորութեան, միանգամայն եւ մարգարտութեան, եւ ի վերայ բերէ թէ՛ «եւ որ ընդ նմայն էին», որպէս զի ասիցէ՝ գոգջիր զնա արժանատր գոյ, իսկ մանկտի՞ն զինչ, որ ոչ նմա օրէն էր¹, թող թէ որոց ընդ նմայն էին՝ ուտել, արդ՝ ի ձերոց Օրինացդ իմասջիք նոյնգունակ եւ աստ լեալ, մանաւանդ թէ ե՛ս առաւել:

Դարձեալ՝ տես եւ զայն, զի ոչ զթագաւորութիւնն յիշէ զԴաւիթի, քանզի եւ Ինքն յայնմ ազգէ էր, ծածկէ զայն եւ զքաղցն միայն ի մէջ բերէ եւ յընթերցուածոյն ծանուցանէ, որպէս զի ցուցցէ, թէ տգէտ էք իրացն պատմութեան, թող թէ խորհրդոյն. զոր եւ Մարկոս ասէ թէ՛ «առ Արիաթարաւ քահանայիւ» (Մարկ. Բ 26), քանզի նա, որ քահանայն էր, սպասաւորեաց եւ ետ նոցա ուտել: Արդ՝ թէպէտ դոքա չեն համեմատ Դաւիթի, բայց յորժամ մեծն եւ անուանին եւ լոյծ վասն բնական հարկին, ասպա ուրեմն սոքա ազատ են ի մեղադրանաց: Եւ զի մի՛ ասիցեն, թէ Դաւիթ զշաբաթս ոչ ելոյծ, ասէ զբուն լուծումն շաբաթուն:

Կամ թէ չիցէ՞ ընթերցեալ յՕրէնս, զի ի շաբաթս քահանայքն ի Տաճարին պղծեն զշաբաթն եւ անմեղք են (ԺԲ 5):

Ո՛վ մեծի իմաստութեանն Տեառն, թէ որպէս կրկին հարցուածոց՝ նոցա կրկին պատասխանս յՕրինացն կազմեաց. նախ՝ վասն երախայրիցն, զի չեւ էր մատուցեալ քահանայիցն, եւ երկրորդ՝ վասն շաբաթուն լուծման: Արդ՝ առաջնոյն զԴաւիթ եդ ապացոյց, որով ընթերանեալ լռեցին, եւ երկրորդին զքահանայսն ածէ ի մէջ, զի ոչ աշխարհական ոք եւ կամ արտաքոյ Տաճարին, այլ քահանայքն եւ ի Տաճարին լուծանէին զշաբաթն եւ ոչ բամբասեալք լինէին: Բայց թէ ո՞րպէս լուծանէին. կամ թէ զբլիատութիւնն առնէին ի շաբաթու, քանզի ծնանելով մանկունք ի շաբաթու՝ եւ յաւորն ութերորդի ըստ Օրինացն բլիատէին քահանայքն ի Տաճարին, զի թէ զծնունդն ի հարկէ կարծէին, սակայն բլիատութիւնն յօժարութեամբ գործեալ լինէին. քանզի բլիատութիւնն

¹ Զ էին

² Զ հարցուածոյ

յԱբրահամու սկսեալ՝ լուծանէր զշաբաթն Մոսիսի¹, որպէս այլուր ասաց թէ՝ «Թշխատութիւն առնու մարդ ի շաբաթու, զի մի՛ Օրէնքն Մոսիսի լուծցին» (Յովն. Է 23): Քանզի ո՛չ ի Մոսիսէ էր, այլ ի հարց անտի, քանզի զթշխատութիւնն առաւել պատուէին քան զշաբաթն՝ իբր երէց եւ պատճառ կենաց մարդկան, քանզի որ ոչ թշխատեալ լինէր յաւուրն ութերորդի, սատակեալ լինէր ի ժողովրդեանն: Արդ՝ զայս առնէին քահանայքն ըստ Օրինացն եւ անմեղք էին: Եւ կամ՝ զպատարագաց մատուցումն ասէ լուծումն շաբաթուն, քանզի թէպէտ ի մարմնական գործոց դատարկանային ժողովուրդքն, բայց քահանայքն փայտս կոտորէին եւ խարոյկ լուցանէին, եւ զողջակէզսն այրէին, եւ զճարպն եւ զարիւնն ի սեղանն հանէին՝ իբր զգործ հասարակաց գործեալ ի շաբաթու, եւ ազատք ի պատճոց էին: Այսպէս եւ սոքա՛, ասէ, զի թերաքամ ստուերն զճշմարտութիւնս նշանակէ. բայց զի մի՛ սսիցեն, թէ սոքա չեն քահանայք, ի վերայ բերէ.

Բայց ասե՛ն ձեզ, զի մեծ քան զՏաճարն է աստ (ԺԲ 6):

Այսինքն՝ Տէր քահանայութեանն եւ Տաճարի՛ն աստ է, ճշմարտութիւնն եւ ո՛չ օրինակն: Եւ արդ՝ զի ծանուցաւ քանն, վաղվադակի ծածկեաց եւ ի ներելն դարձոյց: Եւ դարձեալ՝ մեծ քան զգործ Տաճարին, որ էր պատարագացն մատուցումն, է աստ, այսինքն՝ ողորմութեանն վճարումն, որպէս ասէ.

Եթէ զիտէիք զի՛նչ է՝ «Չողորմութիւն կամիմ եւ ո՛չ զգոհ»², ասպա ո՛չ դատապարտէիք դուք զանպարտսն (ԺԲ 7):

Նախ՝ զի Օրինացն արտաքոյ ընթանայք: Եւ երկրորդ՝ զի զօրինատրսն դատապարտէք, որ է մեծ յանցանք: Բայց դու տես զյարմարութիւն բանին, թէ ո՛րպէս եղ, զի յառաջագոյն զԴաւիթ ած օրինակ եւ ասպա զքահանայսն, այժմ մարգարէական բանին կնքէ թէ՛ կարծէք, ասէ, անմեղք գոյ քահանայիցն՝ վասն պատարագացն մատուցման գոյ, ողորմութիւնն իսկ մեծագոյն է քան զպատարագս, եւ ընդ այն հաճի Աստուած, որպէս ասաց մարգարէին³, եւ այն աստ լեալ կատարի՝ զքաղցեալսդ կերակրելով. արդ՝ եթէ տեղեակք էիք մարգարէական դպրութեանն, ո՛չ մեղադ-

¹ Ծննդ. ժէ 10-14

² Զ գոհ

³ Ովսէ 2 6

րէիք արանցդ անմեղաց: Յետ այսորիկ ա՛յլ իմն յանձնէ դնէ պատճառս:

Ձի տէ՛ր է շաբաթու Որդի մարդոյ» (ԺԲ 8):

Նախ, ըստ Մարկոսի, զհասարակաց մարդկանէ ասէ թէ՛ «Շաբաթ վասն մարդոյ՝ եղև եւ ո՛չ մարդ վասն շաբաթու» (Մարկ. Բ 27), ասպա ուրեմն զվասն իւր եղեալն ի յիւր պէտս փոփոխել ո՛չ է արտաքոյ իրաւանց: Եւ երկրորդ՝ Որդի մարդոյ զԻնքն անուանեաց՝ ըստ մարգարէին. «Որդի՛ մարդոյ, դէտ կացուցի զքեզ» (Եզեկ. 4 17). եւ արդ՝ զի Տէր է ամենայնի, իշխանաբար զոր ինչ կամի, զործէ ի շաբաթու, զի որպէս դեւք եւ ախտք Նմին հնազանդին, այսպէս եւ աւուրք փոփոխել ի դատարկութենէ յառաքինութիւն, քանզի ի չարեաց հրամայեցի դատարկանալ եւ ո՛չ ի բարեաց: Բայց թէ ասիցէ որ՝ ասպա ընդէ՞ր զկրկտաքաղն քարկոծել ետ ի շաբաթու¹, զիտասցէ, զի այն սկիզբն էր Օրինացն, որով վարժեցան մարդիկ մինչ ի կատարեալ օրէնսն՝ զօրէն մանկան դաստիարակաւ կրթեալ: Իսկ յորժամ եկն լրումն ժամանակին, խափանէ զտղայութիւնն եւ զերկնային հանգիստն խոկալ հրամայէ, զի փութասցուք ամենեքեան մտանել անդր, որպէս Ինքն յաւուր շաբաթու իջեալ ի զերեզման հանգստեան՝ վերածեաց զհոգիսն, զորոց զյիշատակ հանգստեան արդարոցն՝ այժմ Եկեղեցի տօնէ զմարտիրոսացն սրբոց ի շաբաթու, որոց տէր փառաց Ինքն է: Նաեւ ա՛յլ ազգ. զի փայտ քաղել մեղաց է զուշակ՝ ըստ առաքելոյ², եւ զշաբաթ յայն սակս եղ, զի զմեղս մի՛ զործեսցեն, որպէս «ուրեմն որ մեղանչէ, նոյն եւ մեռցի» (Եզեկ. ԺԸ 4, 20), քանզի օրէնքն հոգեւոր են եւ հոգեւորապէ՛ս պարտ է իմանալ զասացեալսն:

Եւ գնացեալ անտի Յիսուս՝ եկն ի ժողովորդսն նոցա (ԺԲ 9):

Եւ անդ էր այր մի, որոյ ձեռն իւր զօսացեալ էր (ԺԲ 10):

Յայտ է՝ ի յանդաստանացն ի ժողովորդանոցն չոգաւ ի Կափառնատում քաղաքի՝ կամ նոյն օրին, կամ յայլում շաբաթու ըստ Ղուկայ³, որպէս զի հրաշիւք բժշկութեան վշտացելոյն զասացեալ վարդապետութիւնսն հաստատեսցէ, եւ զիրաւունս աշակերտացն ի զլուխ հանցէ, ուստի եւ զայրն տնօրինեաց անդ: Բայց այլ աւե-

¹ Թիւք ԺԵ 32-36

² Ա Կոր. 9 12

³ Ղուկ. 2 6

տարանհիշքն ասեն թէ՛ «կացոյց զայրն ի մէջ»¹, որպէս զի տեսլեամք երեսացն ակն ածիցեն եւ ի չարեաց իրեանց ցածնուցուն: Այլ քանզի մարդատեացք էին, միանգամայն եւ աստուածատեացք, լաւ համարէին փառացն Քրիստոսի պակասել, քան զայրն բժշկեալ տեսանել, ընդ Քրիստոսի հակառակել եւ ընդ այլոց բարիս դժկամակ լինել:

Հարցին ցՆա եւ ասեն, եթէ պա՞րտ իցէ ի շարաթու բժշկել, զի չարախօսեսցեն զՆմանէ:

Հարցին ո՛չ թէ ուսցին, այլ զի մեղմեխանօք հարցուածոյն ի բժշկութենէն արգելցեն, եւ կամ՝ թէ բժշկէ, չարախօսեսցեն լուծիչ գոլ Օրինացն, ոչ միայն աշակերտքն, այլեւ Ինքն իսկ զլիտվին: Իսկ Մարդասէրն եւ Ներօղն զգործն կատարէր եւ հարցուածոյն պատասխանի առնէր, զի ցուցցէ զիւր հեզութիւնն եւ զնոցա անմարդութիւնն:

Եւ Նա ասէ ցնոսա. «Ո՞վ իցէ ի ձեռն մարդ, որոյ իցէ ոչխար մի եւ անկանիցի այն ի խորխորատ ի շարաթու, միթէ ո՞չ ունիցի եւ յարուցանիցէ զնա (ԺԲ 11):

Նախ զյանդգնութիւն նոցա օրինակաւս յանդիմանէ թէ՛ զոր դուք առնիցէք, ընդէ՞ր զայլս բամբասիցէք, որպէս զի մի՛ ի մեղադրութիւն օրինազանցութեանն զրգռիցեն: Եւ երկրորդ՝ զազահութիւն բարուց նոցա խայտառակէ, զի ընչասէ՛րք առաւել էին քան մարդասէրք, զի վասն միոյ ոչխարի անկելոյ հոգս տանէին ի շարաթու եւ ողջոյն իսկ մարդ բժշկել ո՛չ կամէին: Եւ երրորդ՝ զԻնքն հովի գոլ ցուցանէ բարի, եւ [ի] բազմացն, որ անդ կային ընկղմեալք ի խորխորատ մեղաց, զմինն միայն պատահել առողջութեան եւ հանգստեան, իսկ զայլսն՝ կորստեան եւ դատապարտութեան:

Իսկ արդ՝ ո՞րչափ եւս առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ է ի շարաթու բարիս գործել» (ԺԲ 12):

Չանազանութիւն բանականի եւ անբանի ուսուցանէ, որպէս զի զներգործութիւն բարեաց առ բանականսն գեր ի վերոյ անբանիցն կացուցանէ եւ ի ձեռն պատկերին եղեալ մարդասիրութիւնն առ Սկզբնատիպն վերացուցանէ, վասն որոյ ի վերայ բերէ թէ՛

¹ Մարկ. 9 3, Ղուկ. 2 8

«պարտ է ի շարաթու բարիս գործել», եւ մանաւանդ առ բանականս: Բայց դու միտ դիր, թէ զիարդ յաճախ կուտէ պատասխանիս վասն շարաթուն լուծանելոյ, երբեմն իբրեւ զմարդ թէ՛ «Թշխատութիւն առնու մարդ ի շարաթու» (Յովհ. է 23), եւ երբեմն իբրեւ զԱստուած թէ՛ «Հայր Իմ գործէ տալով արեւ եւ անձրեւ, եւ Ես գործեմ» (հմմտ. Յովհ. է 17, Մատթ. է 45), որպէս զի յօժարեցուցանէ ի շարեաց դադար առնուլ եւ ո՛չ ի բարեաց, վասն զի «շարաթ» հանգիստ լսի, իսկ բարին է հանգուցիչ ստաց եւ խորհրդոց, հոգոց եւ մարմնոց, զորս պարտ է գործել:

Յայնժամ ասէ ցայրն¹. «Ձգեա՛ զձեռն քո», եւ սա ձգեաց, եւ եղև ողջ իբրև զմիսն (ԺԲ 13):

Մարկոս ասէ թէ՛ «Հայեցաւ զնոքօք լի ցասմամբ» (Մարկ. 9 5), որպէս զի այնու ձգեսցէ զնոսս առ Ինքն, եւ ո՛չ եղեն այնպէս ազնուականք, որոց զայրացեալ վասն կուրութեան սրտից նոցա՝ մխեցաւ ի գործն եւ ասէ. «Ձգեա՛ զձեռն քո», եւ նա «ձգեաց, եւ եղև ողջ իբրև զմիսն»: Ձգմամբ ձեռին վշտացելոյն՝ հաղորդս էառ սքանչելեացն, որով արագ ի բանէն ընկալաւ զառողջութիւնն ի ձեռն հաւատոյն. բայց նոքա ո՛չ զգաստացան, այլ սպանանել խորհէին, որպէս ասէ:

Իսկ առ ի միտս՝ «ձեռն» իմանամք զմարդկային բանականացս դասս՝ ձեռք Աստուծոյ ստեղծեալ ըստ Յորաբ², եւ գօսացեալ պատրանօք չարիմ³՝ մարմնոյ մեռելութեամբ եւ հոգւոյ մեռաց մահուամբ, յորս եկեալ Փրկիչն աշխարհաց բժշկել, ընդ որ զչարեալ⁴ Բանասարկուն դիօք իւրովք զշարաթս պատճառելով՝ զմեղս եւ զանօրէնութիւն հանգիստ ինքեան եւ մարդկան գրելով: Որում⁵ սաստեաց եւ ուսոյց մարդկան ձգել զձեռն առ Աստուած՝ ըստ այնմ. «Ձգեմ զձեռն իմ յԱստուած բարձրեալ» (Ծննդ. ԺԳ 22), յԱբրահամէ սկսեալ աստուածպաշտութիւն եւ մինչ ի լրումն տնօրէնութեան Որդւոյն Աստուծոյ կատարեալ, որով ողջացեալ եղև իբրև զմիսն: Կամ՝ իբր զհրեշտակս զԱբրահիչն ճանաչելով եւ զօրհնութիւնս⁶ աղօթից տարածմամբ ձեռաց Նմա ընծայելով,

¹ Գ > ցայրն

² Յոր Ժ 8

³ Գ չարչարին

⁴ Գ որս չարչարել] որ զչարեալ

⁵ Գ որով

⁶ Գ օրհնութիւն

վասն որոյ եւ ոչխար անուանեցաւ անկեալ, որ ելեալ¹ խառնեցաւ յաննողարիցն հօտս: Եւ կամ անմահացեալ մարմնով՝ յուսով յարութեանն, որպէս զհոգի, զոր ձեռն «միւս» ասէ, քանզի երկոքին արարօղք են եւ կրօղք բարեաց՝ հոգի եւ մարմին, մանաւանդ յորժամ Քրիստոսիւ առողջացան:

Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս՝ խորհուրդ արարին զՆմանէ, թէ ո՛րպէս կորուսցեն զՆա (ԺԲ 14):

Ոչինչ վնասեալք ի Նմանէ՝ մահ Նմին մտաբերէին, քանզի այնպիսի իմն չար է քէնն եւ նախանձն, զի ոչ միայն ընդ օտարսն, այլեւ ընդ ընտանիս մարտնչի: Իսկ զի ասէ, թէ արտաքս ելին՝ յաղագս պարզամտացն, զի որք հաւանեալք էին նշանաց եւ վարդապետութեան Նորա, ոչ միայն չառնուին յանձն զխորհրդակցութիւն նոցին, այլեւ հակառակէին եւս: Եւ դարձեալ՝ ելանելովն արտաքս զառանց Օրինաց գործն նոցա յայտ առնէ, քանզի գրեալ էր. «Յարիւն անպարտ զձեռն քո մի՛ մխեսցես» (Խմն. Բ Օր. ԺԹ 10), որով եւ արտաքսեցան ինքեանք յՕրինացն եւ ի շնորհացն Աստուծոյ:

Եւ Յիսուս իբրեւ զիտաց, մեկնեցաւ անտի (ԺԲ 15):

Նախ՝ զամենատես զօրութիւնն Տեառն յայտ առնէ, եւ ապա՝ զհեզութիւնն եւ զխոնարհութիւնն, զի խոյս տալովն՝ հոգի ետ կլանել նոցա եւ զնախանձն շիջուցանել. եւ երրորդ՝ զի ոչ էր տակաւին ժամանակ մեռանելոյ, որպէս զի յորժամ մեռանիցի, կամաւոր զմահն Նորա ուսանիցիմք եւ ոչ բռնադատեալ ի հարկէ: Բայց ամաչեսցեն յայսմ վայրի այնոքիկ, որք ասեն, թէ պարտ է նշանս առնել, զի հաւատացեն, քանզի յայտ եղեւ, թէ զանհաւան միտս³ եւ ոչ նշանք կակղացուցանել կարեն, որպէս եւ ոչ զփարատնին՝ Մոսէս⁴, ապա ուրեմն զո՛ր մեղադիր աշակերտացն լինէին:

Եւ գնացին զհետ Նորա ժողովորդք բազումք, եւ բժշկեաց զամենեստան:

Թէպէտ նոքա զչարէին, բայց Նա ի ժողովորդեանն դարմանոյ ոչ երբէք դադարէր, այլ միշտ խնամով բժշկէր, զի լաւ համարէր

¹ Զ ելեալն

² Տ տալով

³ ՏՁ միտք

⁴ Ելք Է-ԺԴ

գրագմաց օգուտ, քան զնոցա ռիսերիման¹ : Բայց դու գրժշկութիւնն կրկին իմա՝ բանիւ եւ գործով, թէպէտ ատետարանիչն զանց արարեալ ոչ պատմեաց :

Եւ սաստեաց նոցա Յիսուս, զի մի՛ յայտնեացեն զՆմանէ ումեք (ԺԲ 16):

Ոչ միայն առանց շահուց գրարիս նոցա առթեր, այլեւ զանձին գովութիւն ի բաց մերժեր, քանզի են² բազումք, թէպէտ ոչ վասն ազահութեան, այլ գոնեայ զի փառաւորեսցին ի մարդկանէ՝ առնեն գրարիս. իսկ Նա յերկոցունցն հրաժարեր, միանգամայն եւ զնախանձ փարիսեցոցն այնու մխիթարեր, զի զանձն ի ծածով պահէր. առ ի խրատ վարդապետութեան մեզ, զի զառաքինութեան ոսոս մի՛ կոծոպեսցուք սնափառ ախտիւ մարդկան գովութեամբ եւ համբաւուն տարածմամբ :

Չի լցցի որ սասցան ի ձեռն Եսայեայ մարգարէի (ԺԲ 17).

«Ահա մանուկ Իմ, գոր ընտրեցի, եւ սիրելի Իմ, ընդ որ հաճեցաւ անձն Իմ (ԺԲ 18):

Չայս յայն սակս վերաբերէ ատետարանիչս, զի մի՛ խռովեսցիս³ ընդ գործս նոցա՝ իբր ընդ նոր ինչ կատաղութիւն. ասէ՝ զայս ամենայն յառաջագոյն բանն տեսանողին գուշակեաց⁴, թէ ոչ է հակառակ Հօր կամ Օրինացն, որպէս նոքա կարծէին, այլ յոյժ հաճեալ ի գործս նորա եւ յախորժ կամ վկայեալ ոչ միայն ընտրեալ ի բիրտուց «Մանուկ» Ծնողին, այլեւ «Սիրելի», եւ ոչ միայն սիրելի, այլեւ հաճեալ անձամբ ընդ գործս Նորա՝ ըստ այնմ. «Դա է Որդի Իմ հարազատ սիրելի, ընդ որ հաճեցայ» (հմմտ. Մատթ. 9. 17):

Եղից զՈզի Իմ ի վերայ նորա, եւ իրաւունս հեթանոսաց պատմեացէ :

Չոր բնութեամբ ունէր՝ ըստ այնմ. «Չի ոչ չափով տայ Աստուած զՀոզին» (Յովհ. 9. 34) Որդոյ, վասն զի ոչ տայ եւ ոչ չափէ, ընկալաւ ի Հօրէ տնօրէնութեամբ ի Յորդանան աղաւնակերպ իջմամբ՝ ըստ այնմ թէ՝ «Օժ գրեզ Աստուած Աստուած քո իողով ուրախութեամբ առաւել քան զընկերս քո» (Մատթ. ԽԴ. 8), որով պատմեաց զիրաւունս հեթանոսաց՝ կոչելով մարգարէիւն ի հաւատս, եւ

¹ Զ քանզի նոցա ռիսեր ի միտսն] քան զնոցա ռիսերիման

² Տ էին

³ Զ խռովեսցին

⁴ Ես. ԽԲ 1-4

արդարացոյց շնորհօք իրաւանց Իւրոց, վասն զի պատրանօք եւ ո՛չ բնութեամբ մեղանչէաք, հեղուլ ի մեզ զշնորհս Հոգւոյն: Եւ դարձեալ՝ «հեթանոսս» գղեւս ասէ, զորոց իրաւունս դատաստանաց պատմեաց թէ՛ «Իշխան աշխարհիս դատապարտեալ է եւ ընկեացի արտաքս» (հմմտ. Յովհ. ԺԲ 31), եւ՝ «Յաղթեցի աշխարհի» (Յովհ. ԺՁ 33): Եւ դարձեալ՝ զիրաւունս Օրինաց, զոր հրէիցն եղ զմարմնականսն, յորժամ անարժանք եղեն, եհան՝ ի նոցանէ եւ պատմեաց հեթանոսաց զօրէնս Հոգւոյն: Եւ դարձեալ՝ զհանդերձեալս դատաստանաց իրաւունք զոր ոչ զհտէին՝ յայտնեաց հեթանոսաց, եւ այնու իբր սանձաւ իւիբ նուաճեաց զմիտս մեր:

Ո՛չ հակառակեցի եւ ո՛չ աղաղակեցէ, եւ ոչ ոք լուիցէ ի հրապարակս զբարբառ նորա (ԺԲ 19):

Չհեզութիւն Նորա յայտ արարեալ քարոզէ, զի զնոսա կամէր բժշկել, բայց քանզի նոքա մերժեցին, Նա ո՛չ առ այն ինչ դիմադարձ լինէր: Եւ դարձեալ՝ զչարչարանացն Նորա զուշակէ, քանզի խորհեցան կորուսանել զՆա՝ ասէ, մարգարտիւն այդ ծանուցաւ, թէ ո՛չ հակառակեցի՝ ըստ այնմ. «Եղէ ես որպէս մարդ, որ ոչ խօսի» (հմմտ. Սաղմ. ԼԷ 15):

Չեղէզն ջախջախեալ ո՛չ վշշրեցէ եւ զպատրոյկն առկայծեալ ո՛չ շիջուցէ (ԺԲ 20):

Չնախկին ասացեալ հեզութիւնն մեկնէ, քանզի դիւրին էր Նմա զնոսա իբր զեղէզն ո՛չ ողջ, այլ բախեալ², բեկանել եւ խորտակել, այս է՝ զիշխանութիւն նոցա բառնալ՝ ըստ այնմ թէ՛ «Ի ջախջախս եզիպտացի՞ն յուսացեալ իցես» (հմմտ. Ես. ԼՁ 6), բայց ո՛չ երեկ՝ մնալով դարձի եւ ասպաշխարութեան: Իսկ «պատրոյկ առկայծեալ» զորորքեալ ցասումն քահանայութեան նոցա նշանակէ, զորս կարօղ էր շիջուցանել, բայց ներեաց, զի երկայնամտութիւն Նորա ցուցցի, եւ նոքա իրաւամբ տանջեցին յետ յաղթութեան խաչին՝ ի ձեռն հռոմայեցւոցն, որք բեկան, եւ շիջան թագաւորութիւն եւ քահանայութիւն: Եւ դարձեալ՝ «եղէզն խորտակեալ» ժողովուրդն հրէից էր, զոր ո՛չ երեկ, այլ ողջացոյց, իսկ «պատրոյկ» Օրէնքն էր ի յանց եկեալ, զոր ո՛չ շիջոյց, այլ ելից³ եւ կա-

¹ ՏՁ եհան

² Ձ պահել

³ ՏՁ ելից

տարեաց: Եւ դարձեալ՝ «եղէզն» եւ «պատրոյկ» տղայութիւնն է Տեառն մերում վասն տկար բնութեան մարմնոյն, զոր զգեցաւ ի մէնջ, զոր թէպէտ կամեցաւ Հերովդէս սպանանել եւ ժողովորդն քարկոծել, սակայն ո՛չ կարացին բեկանել եւ շիջուցանել:

Եւ դարձեալ՝ «եղէզն» եւ «պատրոյկ», որպէս ասացաւ, զհրէայսն ասէ, որք ցրուեցան գերութեամբ ջախջախեալք եւ նուազեալք ծառայութեամբ, զորս ո՛չ փշրէ եւ շիջուցանէ ամենեւին յաշխարհէ, քանզի ո՛չ է արժան սպանանել եւ կամ զմեռեալ մեռուցանել եւ յաւելոյ վէրս ի վէրս՝ ըստ այնմ թէ՝ «Ո՛չ եւս յաւելից լուտալ գերկիր» (հմմտ. Ծննդ. Ը 21): Այլ ներէ ջախջախելոցն եւ առկայ-ծելոցն, մինչեւ հաւատասցեն ի Նա ի լրման կենցաղոյս յաւորս նեռինն, ըստ տեսլեանն Յովհաննոս՝ յիրաքանչիւր ցեղից երկոտասան հազարս կնքեալ¹, քանզի զայս հաստատէ յաջորդը թէ՝ «[մինչեւ] հանցէ ի գլուխ զյաղթութիւն», զի հաւատովք տիրեսցէ որոց իրաւունք էր նախ հաւատալ, իսկ զմնացեալսն յետոյ բեկցէ եւ շիջուցանէ: Եւ դարձեալ՝ «ջախջախէ՛ եղէզն» զմարմինս մեր առակէ, որ բեկաւ մահուամբ ի ձեռն մեղացն. զայս ո՛չ փշրեաց Տէրն, այս է՝ ամենեւին ո՛չ ոչնչացոյց³, այլ դարձեալ կազդուրեաց յարութեանն յուսով՝ ըստ նմանութեան մարմնոյ փառաց Իւր⁴՝ եղեալ «առաջին պտուղ ննջեցելոց» (Ա Կոր. ԺԵ 20): Իսկ «պատրոյկ» զյանցանս հոգւոյ նշանակէ, զոր ո՛չ շիջոյց՝ թոյլ տալով խաւարիլ մեղօք, այլ վառեաց լուսով Աստուածութեան ճրագի՝ որպէս զԻւրն, այսպէս եւ զմերս՝ արդարութեանն օրինիւ եւ ողորմութեանն իւղով:

Իսկ առ ի միտս՝ «ջախջախեալ եղէզն»՝ կարծեմ, որ արատաւ իւրք առնիցէ զպատուիրանս Աստուծոյ, զոր բեկանել⁵ եւ կտրել ո՛չ է արժան, այլ բժշկել տէրունական բանին թէ՝ «Մի՛ առնէք ի ցոյցս մարդկան» (հմմտ. Մատթ. 2 1), եւ մի՛ ըստ գրգռութեան եւ փառասիրութեան, այլ գործել զամենայն ինչ առանց տրտնջման ի փառս Աստուծոյ: Եւ «պատրոյկ առկայծեալ»՝ յորժամ որ առնէ զպատուիրանս Աստուծոյ եւ ո՛չ ցանկութեամբ եւ բորբոքմամբ սիրոյ, այլ պղերգութեամբ եւ յուլութեամբ, զոր ո՛չ է արժան շիջուցա-

¹ Յայտ. Է 4-8

² Զ ի ջախջախ

³ Զ ընչացոյց

⁴ Փիլպ. Գ 21

⁵ Զ ի բեկանել

նել, այսինքն՝ խափանել, այլ վառել յիշմամբ դատաստանին Աստուծոյ:

Մինչեւ հանցէ ի յաղթութիւն գդատաստանն:

Յորժամ զԻւրն ամենայն կատարիցէ՝ զմարդկան փրկութիւն խաչին, ապա վրէժխնդրութիւն արասցէ, քանզի յետ արդարութեան իրաւանցն, զորս «դատաստանս» կոչէ, եւ չթողոյ պատճառս յանդգնութեան նոցա՝ անհնարին պատժօք պատժէ զնոսա: Եւ դարձեալ՝ զստութիւն մարդկան խայտառակէ, թէ ոչ ունի ճշմարտութիւնն մարդկան իրաւունք, այլ ընդունայն կարծեօք լի է՝ ըստ մարգարէին թէ՝ «Ընդէ՞ր սիրէք զնանրութիւն» (Մաղմ. 7: 3): Չկնի զԻւրն դատաստան յաղթօղ ցուցանէ, եւ զեր ի վերոյ մարդկան իրաւանց արձանացուցանել՝ ըստ այնմ. «Եղիցի Աստուած ճշմարիտ, եւ ամենայն մարդ՝ սուտ» (Հռմ. 9: 4), «որպէս զի արդար եղիցիս ի բանս Բո եւ յաղթօղ ի դատելն» (Մաղմ. 5: 6): Եւ դարձեալ՝ իրաւամբք դատաստանի յաղթեաց սատանայի եւ ոչ բռնութեամբ, խաչի եւ անմեղ մահուամբ, որով եռօրեայ յարուցեալ զարթեալ ի վերայ խաւարասէր իշխանին:

Եւ յանուն նորա հեթանոսք յուսացին» (ԺԲ 21):

Չտարագրութիւն հրէիցն ի բացուստ մարգարէն զուշակեաց եւ կանուխ դուռն հաւատոյ երաց հեթանոսաց՝ ըստ նահապետին տեսութեան¹, ապա ուրեմն կամօք Հօ՛ր եղեւ այս. քանզի Նա՛ զմարգարէն առաքեաց, որոյ հաւատացեալ հեթանոսք՝ ընկալան զԱւետարանին վարդապետութիւն եւ յանունն Բրիստոսի յուսալով՝ մկրտութեամբ Աւագանին ազատեցան ի մեղաց հնոյն Ադամայ: Նոյնպէս եւ այժմ նովին անուամբ, յորս յուսամք, փրկիմք ի դիւաց եւ ակն ունիմք զերծանիլ ի տանջանաց:

Յայնժամ մատուցաւ առ Նա դիւահար մի կոյր եւ համբ, եւ բժշկեաց զնա, որպէս զի համբն եւ կոյրն խօսիցի² եւ տեսանիցէ (ԺԲ 22):

Միշտ զսքանչելիսն բանիցն հետեւեցուցանէ, որպէս զի միմեամբք զիրեարս հաստատէ, որպէս ասացեալ է: Բայց դու տես զդժնդակութիւն չարին, զի զերկոսեան մուտսն խցեալ իսկ էր, որ-

¹ Ծննդ. ԽԹ 10

² Զ խօսեացի

պէս զի մի՛ տեսանիցէ եւ հաւատասցէ, զորս երաց Քրիստոս, որով ետես եւ հաւատաց ի Նա: Դարձեալ՝ իրք դիւահարին առակ էր հնոյ ժողովարանին՝ ըստ մարգարէին թէ՛ «Թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, եւ ականջօք իրեանց ծանունս լուան, եւ զաչս իրեանց կափուցին, զի մի՛ տեսցեն աչօք...», եւ դարձցին, եւ բժշկեցից զնոսա» (Ես. 2 10): Ապա ուրեմն մոլեգնեալք էին ինքեանք եւ ոչ Նա, ծանրագոյն քան զախտաժէտս զայս, որք ոչ ընկալան զհոգեւոր բժշկութիւն, որպէս սա՝ զմարմնաւորն՝ յօրինակ հաւատացելոց հեթանոսաց, որք կոյրք էին ի ճշմարտութենէն, զի տեսին եւ հաւատացին:

Չարմացան ամենայն¹ ժողովուրդքն եւ ասէին². «Միթէ Սա՞ իցէ Քրիստոսն՝ Որդի Դաւթի» (ԺԲ 23):

Ընդ հրաշիցն իրս պակուցեալ՝ կարծեցին ի գլուխ ելեալ զմարգարէիցն պիտառութիւնս վասն Քրիստոսի, որ ծնանելոց էր յազգէ Դաւթի, քանզի գիտէին զՆա³ ի ցեղէն Դաւթի ծնեալ, եւ ի ձեռն սքանչիցն ի միտս եկեալ՝ «Քրիստոսն» ասացին, որ է օծեալ: Ապա ուրեմն մի՛ պատճառեցէ հրէայն ոչ ծանուցեալ, քանզի աւանիկ ինքեանք իսկ վկայեցին Քրիստոս զՆա գոյ:

Բայց փարիսեցիքն իբրև լուան, ասեն. «Ոչ իւրք հանէ Դա զդէս, եթ ոչ Բենեդեբուդա իշխանան դիւաց» (ԺԲ 24):

Թէպէտ զմարգարէն վկայ ած, թէ Հայր եղ զՈգի Իւր ի վերայ Նորա, սակայն ոչ զգաստացան, այլ որպէս յառաջագոյն ասացաւ, իբր զդէս չարս՝ միշտ ընդ մարդկան փրկութիւն խանդային եւ ընդ ընկերին բարիս կսկծէին, քանզի այնպիսի իմն է նախանձն, զի յորժամ զոք ի վիշտս տեսանէ, յանգչի եւ զայոց թշուառութիւն փառս իւր համարի, իսկ զբարիս ընկերացն հիքութիւն անձին վարկանի, որպէս այժմու փարիսեցիքս: Չի գոր ժողովուրդն «Քրիստոս» եւ «Որդի Դաւթի» ասէին, նորա բամբաստին. բայց [զի] ոչ կարէին աղարտել զսքանչելիսն, յայտնապէս անագդակելով՝ ի Սքանչելագործն զպարսաւն դարձուցանէին, թէ դիւաւ հանէ Դա զդէս, քանզի Բենեդեբուդն իշխան դիւաց ասի կամ հայր ճանճից, զորս ճշմարտութեան բանիւն յանդիմանեալ կոչ-

¹ Գ > ամենայն

² Գ ասեն

³ Տ > զնա

կոճէ՛ իբր քարի զմոլեզին եւ զկատաղի զագանս սաստիւ իմն վարելով:

Իբրեւ գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. «Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի, եւ ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ¹ (ԺԲ 25):

Է՞ր վասն հանգոյն այսմ բամբասանաց եւ յառաջագոյն բամբասեցին, սակայն ոչինչ պատասխանեաց, եւ աստ սաստեալ իմն երեւի. զի տացէ նոցա պատճառս՝ ի բազում նշանաց իմանալ զգորութիւն Նորա եւ ուսանել զմեծութիւն վարդապետութեան Նորա. իսկ յորժամ ի նոյն յաճախեցին, ասպա սաստէ: Եւ նախ զաստուածութիւնն Իւր ցուցանէ, որով զծածուկս սրտից նոցա ի մէջ բերէ, զի ոչ հրապարակախօս լինէին, այլ ի միտս իւրեանց յածէին, եւ Նա յայտ արար, թէ ոչ է այս գործ դիւստարի գղեսս հանել եւ զմիտս ճանաչել: Եւ երկրորդ՝ հեգութիւն մեզ ուսուցանէ, թէ ոչ է պարտ զանձին վրէժ առնուլ, թէպէտ ասացեալքն այնպիսի լինիցին, զորս ոչ գտանենք յանձնս մեր, քանզի նախանձն ոչ զայն ինչ խնդրէ, թէ զինչ բամբասիցէ, այլ զի բամբասէ՛. վասն որոյ ոչ է պարտ խռովել, այլ միայն բանի յանդիմանել եւ յուղորութիւն ածել, որպէս Տէրն: Քանզի ասէ. «Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի»: Ի ծանօթ իրաց բերէ օրինակս, քանզի թագաւորութիւն, որ զօրագոյն է քան զամենայն մարդկան իրս, սակայն յորժամ ընդ անձին կռուիցի, կորնչիցի, ասպա զի՞ ասեսս զքաղաքէ կամ զտանէ, զի ոչ այնչափ ինչ արտաքին պատերազմունք կարեն վնասս գործել, որպէս զընտանեացն, յորոց Դաւիթ աղօթէր զերծանիլ. «Փրկեա՛ զանձն իմ ի մերձաւորաց» (Խմմտ. Սաղմ. ԾԴ 19), քանզի յոյժ ծանրագոյն է կռիւն ընդ ազգականի՞ եւ կործանիչ եւ քակտիչ լինի՞ թագաւորութեանց եւ տանց, եւ քաղաքաց: Նաեւ օրինակաւս՝ զիշխանութիւն Գոռոզին ծանոյց, եւ «քաղաք» նմին՝ զկենցաղս, եւ «տուն» նորա՝ զկամարարս անուանեաց, որք քակտեալ բաժանեցան եւ այլ ոչ կարիցեն կեալ ի կարգի իւրեանց:

¹ Գ կայցէ

² Գ ազգականի] ընդ ազգական

³ Գ > լինի

Եւ թէ սատանայ զսատանայ հանէ, յանձն իւր բաժանեցաւ. արդ զիա՞րդ կացցէ քազաորութիւն նորա (ԺԲ 26):

Եթէ Ես դեւս ունիմ, ասէ, եւ այնու զդեւս հանեն, որպէս դուք բաջադէք, ուրեմն մարտ պատերազմի է ի մէջ դիւացն, ապա կորեաւ եւ եղծաւ զօրութիւն նորա: Եւ տես, զի ո՛չ ասաց, թէ սատանայ զդեւս հանէ, այլ թէ սատանայ՝ զսատանայ՝ յայտ արարեալ զկարի միաբանութիւն նոցա ի կորուստ մարդկան: Արդ՝ եթէ իբրեւ զմի անձն գոյով բաժանեցաւ յանձնէ իւրմէ, ապա տկարացաւ եւ կորստական եղեւ, զիա՞րդ կարիցէ զայլս հանել. յոյժ ուրեմն ծաղու արժանի են բանքդ ձեր:

Եւ եթէ Ես Բենեդեբուդաւ հանեն զդեւս, որդիքն ձեր ի՞նչ հանիցեն. վասն այնորիկ նոքա՞ եղիցին ձեր դատաորք (ԺԲ 27):

Հայեա՛ց աստ ընդ հեզութիւն Նորա, զի ո՛չ ասաց՝ «աշակերտքն Իմ» կամ «առաքեալքն», այլ «որդիքն ձեր», եւ գոր ասէն՝ այսպիսի՛ ինչ է: Եթէ կամիցիք դառնալ առ որդիս ձեր, բազում գտանէք պատճառս ի բանից աստի օգտութեան ընտրութեամբ մտաց ձերոց, ապա թէ հետտեալ կայցէք, չգտանէք ինչ պատճառս զրպարտութեան, քանզի թէ իշխանն դիւաց յԻս է, որպէս ասէք, նոքա որո՞վ հանեն զդեւս. ապա ուրեմն յայտ է, թէ ստէք ի նոցանէ յանդիմանեալ, զի ո՛չ ունին զիշխանն դիւաց եւ հանեն զդեւս: Նաեւ ա՛յլ ազգ. քանզի ահա որդիքն ձեր զնոյն առնեն՝ անուամբ Իմով հանելով զդեւս. եթէ այդպէս է, որպէս ասէք, ապա զորդիսն ձեր ընդէ՞ր ոչ նոյնգունակ բամբաստէք, քանզի առաւել նոքա՛, որք յԻնէն առին զիշխանութիւն, այդպիսի լինիցին: Արդ՝ եթէ զնոսա թողեալ՝ Ինձ մեղադրէք, յայտ է, թէ նախանձու աղազաւ բամբաստէք, քանզի ո՛չ ընդ իրս, այլ ընդ դէմս կռուիք, վասն այդորիկ նոքա՛ իսկ դատելոց են զձեզ, յորժամ ի ձէնջ իցեն առաքեալքն եւ զդոյն զմտաւ ոչ ածիցեն: Կամ զնոցանէ ասէ, որք որդիք էին նոցա եւ դիւօք հանէին, որպիսիք էին որդիքն Սկեւեայ, որպէս ոմանք ասեն:

Ապա եթէ Հոգով Աստուծոյ հանեն Ես զդեւս, ուրեմն հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ (ԺԲ 28):

Ղուկաս ասէ եթէ՝ «մատամբ Աստուծոյ» (Ղուկ. ԺԱ 20)՝ յայտ արարեալ նախ՝ թէ ի նոյն էութենէ է Հոգին, եւ ապա՝ եթէ մեծի զօրութեան պէտք են հանել զդեւս եւ ո՛չ դոյզն ինչ շնորհաց: Իսկ

«արքայություն» զԻւր առաջին գալուստն ասէ, որ երարձ գթագատրութիւն մահու, այսինքն՝ թէ պարտ էր ձեզ ցնծալ, զի մեծամեծքն, որք ի մարգարէիցն գուշակեցան թէ՛ «Եղից զՈգի Իմ ի վերայ նորա» (Եւ. ԽԲ 1), եւ այլն¹ եւս, եկին հասին, իսկ դուք զհակառակն գործէք. ոչ միայն չընդունիք զհասեալ բարիս, այլ բամբաստէք եւս եւ բիծս կարկատէք եւ դժկամակ լինիք ընդ ձեր փրկութիւնդ, քանզի Որդին Աստուծոյ եկն եհաս, որպէս ասէ թէ՛ «Հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ»: Կամ թէ՛ «արքայություն» գղատողական իշխանութիւնն Աստուծոյ ասէ, քանզի թէ՛ Հոգուով հանեն, ապա ի ներքոյ բարկութեանն Աստուծոյ անհրաժեշտ մատնեալ էք, զի զՀոգւոյն գործս թշնամոյն շնորհէք, որում յոյժ ընդել էք մարգարէիքն հոգւոյն. վասն որոյ ինքն իսկ բոլոր թագաւորութիւնն Հօր վրէժխնդիր է այդորիկ:

Կամ զհա՞րդ կարէ ոք մտանել ի տուն հօրի եւ զգործիսն նորա յափշտակել, եթէ ոչ նախ կապիցէ² զհօրն եւ ապա գտունն նորա յափշտակիցէ (ԺԲ 29):

Ամենայն իրօք զբանն հաստատէ, զի թերեւս զնոսա որսասցէ, քանզի այսպիսի՛ ինչ ասէ, թէ չէ՛ մարթ սատանայի զսատանայ հանել, որպէս ասացաւ, եւ չէ՛ հնար այլ ազգ զնա հանել, եթէ ոչ նախ նորա իսկ յաղթիցէ, քանզի այնչափ ինչ ասէ չառնում զօրավիզն զսատանայ, մինչ զի պատերազմ եւս տամ ընդ նմա եւ կապեն եւ ապա զկազմած նորին յափշտակեն: Բայց «հօր» զսատանայ անուանէ կամ յաղագս անմարմին գոլոյն՝ ըստ այնմ թէ՛ «Թշնամիք իմ հօրացեալք են» (Իմմտ. Մաղմ. ԿԸ 5), եւ կամ թէ ի ծուլութենէ մերմէ զառաջինն զօրացաւ նա, զոր եւ կապեաց խաչին՝ ոչ միայն զղեւ³, այլեւ զգօրագլուխն՝ զիշխանն դիւաց: Քանզի մարգարէութիւն իմն է բանս, որ ոչ միայն զղեւս հանէ, այլեւ զամենայն տիեզերաց զմոլորութիւնս փարատէ: Իսկ «գործիք» եւ «տուն» զդիւքս ի մարդկանէ եւ զկախարդասարս եւ զչարս ասէ, յորմէ յափշտակեաց Քրիստոս իշխանութեամբ Իւրով ի ձեռն հաւատոցն՝ ըստ այնմ թէ՛ «Չարքայութիւնն բռունք յափշտակեն» (Մատթ. ԺԱ 12), քանզի զոր օրինակ իմաստուն բժիշկ զարմատս ցաւոցն կտրէ, զի մարմինքն առողջասցին, այսպէս Նա զպատճառս չարեացն նախ կապեաց՝ զիշխանն զուռնափայ՝ բանիւ, եւ ապա

¹ Զ այլ

² Զ կապեցտ

³ Զ զղեւս հանէ

զմարդիկ տուն եւ տաճար բնակութեան Իւրոյ պատրաստեաց՝
ըստ առաքելոյ. «Որոյ տունն մե՛ք իսկ ենք» (Եբր. 9 6):

Որ ո՛չ ընդ Իս է, հակառակ Իմ է, եւ որ ո՛չ ժողովէ ընդ Իս, ցրուէ (ԺԲ 30):

Չամենեւին անմիաբանութիւնն եւ զթշնամութիւնն, որ ընդ սատանայ ունէր, զրէ բանիւս, քանզի Ես կամիմ, ասէ¹, առ Աստուած մերձեցուցանել եւ առաքինութիւն ուսուցանել եւ արքայութիւն ընձեռել, իսկ սատանայ եւ դեւք՝ զնորին հակառակն: Արդ «որ ոչ ժողովէ ընդ Իս» զմարդիկ, զիա՞րդ ընդ Իս իցէ եւ կամ Ինձ գործակից լինել կարիցէ, որ ոչ միայն ոչ ժողովէ, այլեւ զժողովեալսն ցրուէ: Քանզի Ես եկի զցրուեալ որդիսն Ադամայ ժողովել ի մի կրօնս սատուածպաշտութեան, իսկ նա ցրուէ ի զանազան պաշտօնս կռամողութեան, ապա ուրեմն հակառակ Իմ է եւ ո՛չ է ընդ Իս: Դարձեալ՝ որ որ ժողովէ բանիւ ճշմարտութեամբ Քրիստոսի, նա ո՛չ կորուսանէ, այլ առ Տէր ածէ, իսկ որ առանց բանի եւ իմաստութեան լուսոյ ժողովէ, այնպիսին ո՛չ է ընդ Տեառն, այլ ցրող վարդապետութեան Նորա: Դարձեալ՝ որ ոչ միանայ ընդ Իս հաւատովք, նա ինքն սատանայ է, եւ որ ոչ ժողովէ ընդ² Իս գործովք, ցրուէ նա ընդ դեւս զանձն իւր, քանզի կոչի եւ սատանայ Դիապօլուս, որ է «ցրուեալ»:

Վասն այդորիկ ասեմ ձեզ. ամենայն մեղք եւ հայիոյթիւնք թողցին մարդկան, բայց զՀոգւոյն հայիոյթիւն մի՛ թողցի (ԺԲ 31):

Ըստ երկու դէմս յանցանեն մարդիկ՝ զիտութեամբ եւ անզիտութեամբ: Արդ՝ որ տգիտութեամբ մեղանչէ վասն գունելոյ զչարն բարեաւ եւ կամ պատրեալ յումեքէ, եթէ առ Աստուած կամ առ մարդիկ, յորժամ զգասցի եւ ի զղջումն եկեսցէ, թողութիւն գտանէ: Բայց որ զիտութեամբ յանցանէ ի բանս, նմանապէս եւ ի գործս եւ մանաւանդ յաստուածային շնորհացն առատութիւնս, յոյժ դժուարաւ թողութեան պատահէ, զի հաճեալ է յօժարութեամբ ընդ յանցանս՝ իբր ի բարեգործութիւն, յաղազս այսորիկ ո՛չ դիմէ ի մեղայն: Բայց զայս յաղազս անձին Իւրոյ ասէր, որ նախ քան զիսաչն «մողորեցուցիչ» ասէին³ եւ հակառակ Աստուծոյ եւ Օրինացն, յայնց ո՛չ պահանջի ի ձէնջ վրէժս, եթէ հաւատայցէք, զի

¹ Զ > ասէ

² Զ առ

³ Մատթ. ԻԷ 63

խաչին որպէս զքնան, այսպէս եւ զայդ քաւեն: Այլ որ ինչ զՀոգւոյն Սրբոյ խօսեցայք, առանց ներելոյ է այն ձեզ, զի կամաւ զլացայք¹ զՀոգիս Հոգւոյն:

Լսի եւ այսպէս թէ՛ ամենայն մեղք որ ի ծուլութենէ մտաց եւ մարմնոյ պատահեալ ումեք՝ յանցանէ, եւ կամ զգրկօղսն հայհոյէ, գտանէ թողութիւն այնպիսին, յորժամ զգաստասցի, իսկ որ առ Հոգիաբաշխն եւ երախտագործն ապաշնորհ լինիցի եւ հայհոյէ՛ տես, անհնարին յանցանք են, մի՛ թողցի նմա. զայս իմա արարածոյ առ Արարիչ եւ ծառայի առ տէր, նմանապէս եւ զայլսն: Եւ դարձեալ՝ զանոխակալութիւնն ցուցանէ, զի վասն անձին բասրանաց ոչ վրէժ խնդրէր, իսկ վասն Հոգւոյն նախանձայոյ՞ լինէր, որպէս երբեմն վասն տանն Հօր՝ խարազան չուանեայ առնէր եւ արտաքս մերժէր², իսկ յորժամ «սամարացի» ասէին Նմա³, լռեալ ներէր՝ առ ի խրատ եւ յուսումն մեզ:

Եւ որ ոք ասիցէ բան զՌոբոյ մարդոյ, թողցի նմա, բայց որ զՀոգւոյն Սրբոյ ասիցէ, մի՛ թողցի նմա, մի՛ յայսմ աշխարհի եւ մի՛ ի հանդերձելումն (ԺԲ 32):

Կրկնելով՝ զառաջինն ստուգէ, եւ նախ՝ զոր ասէն՝ այսպիսի ինչ է: Գրեւջիք յԻնէն զայթագղել⁴ վասն մտապատ լինելոյ մարդկեղէն մարմնոյս. միթէ վասն Հոգւոյն պատճառ ինչ ունիցի՞ք թէ՛ ոչ զիտեմք զՆա: Քանզի յայտնապէս զիտէին, բայց իբր առ անձանօթս յանդգնէին, քանզի թէպէտ զՆա այնպիսի չհամարէին, սակայն զգործս պարտ էր Հոգւոյն համարել վասն տեղեկութեանն ի մարգարէիցն եւ ի հրաշիցն: Ապա ուրեմն որ ասիցէ բան իբր զՌոբոյ մարդոյ, ներումն ունի, որպէս բազումք, եւ ի վերջոյ՝ զլուխն առաքելոցն⁵, իսկ որ զՀոգին Աստուծոյ «իշխան դիւաց» կոչիցէ, յաղագս յայտնութեանն անհրաժեշտ դատաստան ունի աստ եւ անդ, վասն որոյ ասէ. «Մի՛ թողցի նմա, մի՛ յայսմ աշխարհի եւ մի՛ ի հանդերձելումն»: Քանզի են ոմանք, որ աստ տանջին եւ անդ, որպէս սոքա եւ սողոմացիք ի պաշարման քաղաքին, իսկ անդ՝ յանլուծանելի գեհեանն. եւ են՝ որ անդ միայն, որպէս մեծատունն⁶, եւ են՝ որ աստ, որպէս պոռնկեալն ի Կորնթոս¹, եւ են՝ որ

¹ ՏԶ զլուացայք

² Յովի. Բ 15

³ Յովի. Ը 48

⁴ Զ գայթագղեալ

⁵ Սատթ. ԻԶ 69-75

⁶ Ղուկ. ԺԶ 19-31

ն'չ աստ եւ ն'չ անդ, որպէս նախահարք եւ առաքեալք եւ մարգարէք, զի թէպէտ փորձեցան, ն'չ վասն տանջանաց, այլ վասն պատերազմաց քաջութեան եւ առաքինութեան յայտնութեան, որպէս Յոբ եւ Ղազարոս: Քանզի դիւաց հաղորդս արարին զՆա, ընդ դե'ս բաժին առցեն նոքա՝ զրկեալք ի շնորհաց Նորա եւ դիւացեալք, քանզի դեւք՝ «[Գիտե՛մք զՔեզ] ով ես, սո՛րբդ Աստուծոյ» խոստովանէին (Մարկ. Ա 24), իսկ նոքա «Այս պիղծ գոյ ի Նմա» ասէին (Մարկ. Գ 30), վասն որոյ զանէծս դիւաց ընդունէին. զի դեւք ն'չ աստ ունին քաւութիւն եւ ն'չ անդ, թէպէտեւ ասպաշխարեն, որպէս եւ Յուդաս ի տարադէպ ժամո՛ւ²:

Եւ երկրորդ՝ որ ի մարմին եւ յարին Տեառն, զոր աւանդեաց յԵկեղեցի, անարժանութեամբ գործոյ մատիցի որ եւ յետոյ զղջացեալ ասպաշխարէ, թողցէ նմա յաղագս մարդասիրութեանն, որչափ ի կենցաղս է, իսկ որ ադանդ ի կատարեալ Սուրբ Երրորդութեանն անձնաւորութիւն մուծանիցէ եւ «արարած» եւ «ծառայ» եւ «պաշտօնատար» զՀոգին Սուրբ ասիցէ, իբր պիղծն Մակեդոն հայիոյէ զԱրարիչն: Քանզի Միոյն հայիոյութիւնն յԵրիսն ելանէ յաղագս մի գոլոյ ըստ բնութեանն, մանաւանդ թէ զՀայր եւ զՈրդի անկենդան դաւանէ այնպիսին՝ Հոգւոյն հայիոյութեամբ, ոչ գտանէ նա թողութիւն՝ ի բաց ճեղքելով զինքն ի ճշմարիտ խոստովանութենէ Սուրբ Երրորդութեանն, որ ծանր է քան զամենայն տանջանս՝ ըստ այնմ. «Որք հեռի արարին զանձինս իրեանց ի Քէն, կորիցենն» (Մաղմ. ՀԲ 27):

Եւ երրորդ՝ եթէ որ զեղբայր իւր ի փոյթ գործոյ տեսանիցէ՝ ի սէր, յերկայնմտութիւն, ի քաղցրութիւն, ի բարոք նախանձ, «սնապարծ» եւ «բարկացօղ» եւ «փառասէր» զնա կոչիցէ, զպտուղս Հոգւոյն՝ հակառակորդին համբաւելով, այնպիսին հայհոյօղ է Հոգւոյն Աստուծոյ, վասն որոյ ն'չ գտանէ թողութիւն, որպէս եւ դպիրքն եւ փարիսեցիքն:

Եւ չորրորդ՝ զայլեւայլ ձեւս արարողութեան ազգաց քրիստոնէից ուղղափառաց եթէ որ վասն անընդելութեանն³ տեսեալ եւ կամ լուեալ՝ պախարակէ, զՀոգին Սուրբ բամբասէ, քանզի Հոգւոյն է շնորհ, որ ի զանազան ազգս եւ յԵկեղեցիս, ըստ ազգի ազգի նիւթոյն ներգործէ զկատարելութիւն խորհրդոյն, զի որպէս ի

¹ Ա Կոր. Ե 1-5

² Մատթ. ԻԷ 4

³ Զ ընդելութեանն

Հինն զանբանիցն արիւնն ի մոխիր երնջուցն խառնեալ եւ սրսկեալ մշտկաւ զոպայիւ՝ մաքրութիւն գործէր ժողովրդեանն շնորհօք Հոգւոյն Աստուծոյ¹, նոյնպէս եւ այժմ պէսպէս իրօք ի ճշմարտութիւնս ձեռնադրութեամբ եւ այլատարազ աւանդութեամբ յազգս եւ յազիւնս զնոյն կատարէ զօրութիւն ի ձեռն հաւատոյն՝ ըստ առաքելոյ²: Արդ՝ որ անդուռն բերանով նախատէ զաւանդութիւն ազգի՝ տկար զՀոգւոյն զօրութիւն կարծելով եւ նիւթոյ կարօտ, յանհրաժեշտ դատաստան բարկութեանն Աստուծոյ մատնի այնպիսին մարմնով եւ հոգով յանվախճան տանջանսն. վասն որոյ աղաչե՛ս, եղբա՛րք, մի՛ զմիմեանս նախատէք ի յշինչ պէտս բանակոյի լինելով:

Եւ դարձեալ³՝ պարզաբար վասն յիշոցաց ասէ, որք հայհոյեն զմիմեանս քրիստոնեայք՝ ոչ գիտելով, թէ զՀոգին հայհոյեն, քանզի որք ի Քրիստոս մկրտեալ են եւ զՀոգին առեալ եւ մարմին Քրիստոսի եղեալ, զոր ինչ եւ ասէ ոք մարդոյ կենդանոյ եւ կամ մեռելոյ, ի Հոգին է հայհոյութիւն եւ անթողի մեղք: Բայց գոյ ի տեղիս տարակուսանս, եթէ զիա՞րդ ոչ թողցէ զմեղս, յորժամ ապաշխարիցէ ոք, եւ այն, զի ասաց. «Ո՛չ կամիմ զմահ մեղաւորին, այլ զդարձն» (հմմտ. Եզեկ. ԺԸ 32), մանաւանդ թէ նոքա, որ զայն բան ասացին, բազումք ի նոցանէ ապաշխարեցին հաւատովք եւ արդարացան: Արդ՝ կամ թէ ո՛չ թողու Դատաւորն, զի ցուցցէ, եթէ ո՛րչափ ծանր է յանցանքս այս. եւ թէ թողուցու, յայտ արասցէ, թէ ո՛րչափ է բարերարութիւն Նորա: Եւ դարձեալ՝ եթէ ոչ թողու, եթէ ապաշխարեցեն, այլ զի որ զդէն հայհոյութեան զգենու, յափշտակեալ է զմիտս նորա եւ ոչ տայ թոյլ դառնալ յապաշխարութիւն, վասն որոյ կանխատես զօրութեամբն զիտացեալ զանդարձութիւն նոցա՝ ասաց զայս, եւ քանզի վասն այտորիկ ո՛չ թողցի անդ, զի եւ ոչ անտ, զի որ աստ կապի, եւ անդ, եւ որ աստ արձակի, եւ անդ:

Դարձեալ⁴՝ «Որ զՀոգին Սուրբ հայհոյէ, մի՛ թողցի նմա, մի՛ յայսմ աշխարհի եւ մի՛ ի [հանդերձելումն]»: Հայհոյօղ Սուրբ Հոգւոյն նոքա են, որ անգեղջ մեռանին մեղօք՝ ոչինչ համարելով զՀոգւոյն վարդապետութիւն, որ խրատէ դառնալ ի մեղաց: Արդ՝

¹ Թիւք ԺԹ

² Ա՛ Կոր. ԺԲ 11

³ Զ > Եւ դարձեալ.... եւ որ աստ արձակի, եւ անդ:

⁴ Զ > Դարձեալ.... որ է ընդդէմ Դոգւոյն Սրբոյ:

այսպիսիքս յորժամ մեռանին, թողութիւն ո՛չ ունին յայսմ աշխարհի, զի ո՛չ խոստովանեցան: Եւ ցուցանէ, թէ զոն մեղք, որ լինի աստ թողութիւն եւ անդ. եւ ո՞ր են այս. որ խոստովանին եւ ապաշխարեն, աստ առնուն թողութիւն, եւ որք խոստովանին միայն եւ մեռանին անապաշխար, ի ձեռն աղօթից եւ պատարագաց որ կատարի յեկեղեցի՝ առնուն թողութիւն, որպէս ասացաք: Դարձեալ՝ թէպէտ ամենայն մեղք ընդդէմ Աստուծոյ է, որ Երիս է եւ Մի, սակայն յատկապէս ասի ոմն Հօր, ոմն՝ Որդոյ, եւ ոմն՝ Հոգւոյն Սրբոյ, քանզի ի Հայր ոք մեղանչէ տկարութեամբ եւ յՈրդի՝ տգիտութեամբ, վասն զի Հայր իշխանութիւն է, եւ Որդի՝ իմաստութիւն: Արդ՝ ընդդէմ իշխանութեանն՝ տկարութեամբ, եւ ընդդէմ իմաստութեանն՝ տգիտութեամբ ոք մեղանչէ, եւ թէպէտ մեղք է, բայց թողութիւն ունի, զի պատճառ ոմն գտկարութիւնն ունի եւ ոմն՝ գտգիտութիւնն: Իսկ ի Հոգին Սուրբ մեղանչէ ոք նենգութեամբ, յորժամ կարէ եւ գիտէ հակառակել չարեաց, բայց նենգութեամբ միայն զայն ընտրեաց, եւ բարութեամբ զչարն գործէ, անթողի՝ ասաց զայսպիսիս Քրիստոս: Դարձեալ՝ անթողի ասէ, զի ո՛չ երբէք ընթեռնումք ի Գրոց, եթէ թողեալ իցէ, որպէս Մելքիսեդեկ «անհայր» եւ «անմայր» ասի¹, ո՛չ եթէ ոչ ունէր, այլ զի ո՛չ գրեցաւ: Դարձեալ՝ զի հակառակի աղբեր թողութեանն, որ է Հոգին Սուրբ: Դարձեալ՝ վասն անկարութեան մարդոյ, զի հազիւ կարէ ոք պատրաստել առ ի յընդունել զշնորհս՝ վասն ծանրութեան մեղացն, որ է ընդդէմ Հոգւոյն Սրբոյ:

Դարձեալ՝ «մի՛ թողցի» ասելն երկակի է. երբեմն թէ ո՛չ թողեալ լինի, որպէս մեղք հրեշտակաց եւ կորուսելոց մարդկան անթողի, եւ երբեմն ըստ այսմ է անթողի, զի ո՛չ ունի պատեհութիւն յինքեան թողուլ, թէպէտ ըստ Աստուծոյ պատեհութեանն ամենայն մեղք թողի: Բայց ամենայն մեղք մահու չափ անթողի է, զի հակառակին շնորհացն, որ թողուն զմեղս, եւ այս լինի վասն վեց եղանակի, որք տեսակք մեղաց ի Հոգին Սուրբ. առաջինն՝ անյուստութիւն, երկրորդ՝ լրբութիւն, երրորդ՝ ճանաչել զճշմարտութիւն եւ հակառակել, չորրորդ՝ նախանձ եղբայրական սիրոյ, հինգերորդ՝ խստասրտութիւն, վեցերորդ՝ անապաշաւ մեռանել: Իսկ պատճառ թուոցս այս է, զի թողութեան երեք են դէմք՝ ո՛վ թողու, եւ ո՛ւմ թողու, եւ վասն որոյ թողու: Եւ այն, որ թողու, երկու են՝ ողորմու-

¹ Եբր. է 3

թիւն եւ արդարութիւն. ողորմութիւնն՝ ձրի, եւ արդարութիւնն՝ ըստ գործելոց. եւ ընդդէմ սոցա է անյուսութիւնն եւ լրբութիւնն: Դարձեալ՝ որում թողու՝ երկու են՝ զեղջ վասն գործոցն եւ զգուշութիւն առաջիկային. ընդդէմ առաջնոյն խստասրտութիւնն է, եւ ընդդէմ երկրորդին՝ անապաշխարութիւնն: Դարձեալ՝ ըստ այնմ, վասն որոյ թողութիւն լինին, երկու են՝՝ զիտութիւն ճշմարտութեան եւ սէր բարութեան. ընդդէմ առաջնոյն է հակառակութիւնն, եւ ընդդէմ երկրորդին՝ նախանձ առ շնորհաց աղբիւրն: Այս է վասն որոյ ասէ թէ՝ «Մի՛ թողցի նմա, մի՛ յայսմ աշխարհի եւ մի՛ ի հանդերձելումն»:

Կամ արարէք զծառն բարի եւ զպտուղ նորա՝ բարի, կամ արարէք զծառն չար եւ զպտուղ նորա՝ չար. քանզի ի պտղոյ՝ անտի ծառն ճանաչի (ԺԲ 33):

Դարձեալ՝ այլ ազգ յանդիմանէ զնոսա, որով յուղորթիւն ածիցէ. եւ է այսպիսի՝ բանն թէ՝ ո՛չ ոք ի ձէնջ պարսաւեաց զբժշկութիւնն, թէ չար գործք են զդէս հալածել եւ զմարդիկ ազատել: Թէ՛ պէտ եւ կարի յանդուզն էին, սակայն զայս ո՛չ ասէին, այլ զՆշանագործն բամբաստէին, վասն որոյ ասէ՝ զի թէպէտ ծառն է պատճառ պտղոյն, սակայն ի պտղոյն ծառն ճանաչի: Արդ եթէ զպտուղն գովէք, արժան է եւ զծառն գովել, յորմէ պտուղն ծնանիցի, իսկ եթէ զծառն բամբաստէք, եւ զպտուղն եւս պարսաւեցէք: Բայց այժմ դուք զհակառակն առնէք. զգործսն ո՛չ կարէք խոտել, որ պտուղն է, եւ զբամբասանս զծառովն շփէք: Դարձեալ՝ «ծառ բարի» զԻնքն անուանէ՝ ըստ Դաւթի, եւ «պտուղ բարի»՝ զգործս բարիս, որ «ի ժամու տացէ»², իսկ «ծառ չար» զսատանայ կոչէ եւ «պտուղ չար»՝ զգործս չարութեան: Արդ՝ որ ըստ Տեառն կենցաղավարի, զի առնէ եւ ուսուցանէ, ճշմարտապէս ծառ բարի է եւ պտուղ բարի առնէ՝ հաւասարելով Տեառն, իսկ որ չարութեամբ կեայ եւ չարեաց լինի վարդապետ, ծառ չար է ի չարն արմատացեալ գործովք իւրովք: Եւ դարձեալ՝ զմարգարէին ասէ թէ՝ «Մինչէ ցե՞րք յերկուս ոտս կաղայք՝ ծառայելով Տեառն եւ Ակկարոնի» (հմմտ. Գ Թագ. ԺԸ 21), զի թէ Հոգւոյն Սրբոյ էք աշակերտք, պտղաբերեցէք զբարիս, եւ թէ հակառակորդին՝ մի՛ կեղծաւորիք բանիւն զուղիղն խօսիլ եւ գործով զներհակն առնել, քանզի ասէ Աստուած

¹ Գ > Դարձեալ՝ մի՛ թողցի ասելն երկակի է... Դարձեալ՝ ըստ այնմ, վասն որոյ թողութիւն լինին, երկու են

² Սաղմ. Ա 3

մեղաւորին. «Դու ընդէ՞ր բնաւ պատմես զարդարութիւն կամ առնուս զուխտ Իմ ի բերա[ն քո]» (Մատթ. 10:16). քայց դու տես, զի յերկոսին կողմանս ունի իշխանութիւն մարդ, վասն այսորիկ ասէ զայս արարէք կամ զայն՝ ըստ այնմ. «Եղի առաջի զկեանս եւ զմահ» (ինմտ. Միրաք ԺԵ 17-18):

Ծնունդք իժից, զհա՞րդ կարիցէք¹ բարիս խօսել, որ² չարքդ էք, քանզի ի³ յաւելուածոյ սրտի խօսի բերանն (ԺԲ 34):

Չայս եւ Յովհաննէ՛ս ասաց, որք եկեալ առ նա խորամանկութեամբ ջանային խափանել զմկրտութիւն նորա⁴. նոյնպէս եւ աստ Տէրն՝ զի ցուցցէ, թէ Նա՛ է, վասն որոյ Յովհաննէս քարոզէր, քանզի նորա որպէս երբեմն նմա հակառակէին, եւ այժմ զՍորա՛նշանսն պախարակէին: Չորս մերժէ յազգականութենէն Աբրահամու, որով պարծէին, եւ ծնունդ ասէ զնոսա չարագոյն զազանին, որ ի յղանայն զհայրն եւ ի ծնանելն զմայրն սպանանէ, որպէս նորա հեռացեալք յԱստուծոյ եւ յՕրինացն արտաքս ելեալք եւ զմարգարէսն սպանեալք՝ լցեալ ցասմամբ ըստ նմանութեան անիծաբեր օձին եւ դառնութեամբ բարուց, որպէս ասացաւ առ Եզեկիէլ թէ՛ «Ի մէջ կարճաց բնակեալ ես...., զի տուն դառնացողաց են» (Եզեկ. Բ 6):

Եւ դարձեալ՝ «իժ» զսատանայ անուանէ՛ ըստ Դաւթի. «Ի վերայ իժի զնասցես դու» (ինմտ. Մատթ. 2 13). արդ՝ սատանայի էք, ասէ, ծնունդք⁵՝ առաջին մարդասպանին՝ ըստ այնմ թէ՛ «Ի հօրէ սատանայէ էք» (Յովհ. Ը 44), զի հայրն ձեր զառաջինն Ադամ եսպան, իսկ դուք զերկրորդս խորհիք սպանանել՝ նախ քանի եւ ասպ գործով, քանզի չարութեամբ սրտի զգածեալ՝ զհա՞րդ կարէք բարիս արտաբերել: Վասն զի կարգ է բնութեան, զոր ի ներքս ի միտս բղխէ՛ զայն բերանն արտաքս թորացուցանէ որպէս կարաս, նաեւ ո՛չ այնչափ, որչափ ի միտսն, զի զորս արտաքնոյն խօսի, յաւելուածք են ներքին շտեմարանին, զի զբազում չարութիւնն պատկառելով ո՛չ առաջի դնէ լեզուն: Իսկ ի սիրտն զոք ի մարդկանէ ո՛չ ունի վկայ դժնդակացն. որչափ կամի, ծնանի զչարիս, եւ թեպէտ

¹ Գ կարէք

² Գ որք

³ Գ > ի

⁴ Յովհ. Ա 25

⁵ Գ ծնունդ

Աստուած տեսանէ, սակայն ո՛չ երկնչի՝ ըստ այնմ. «Ասաց անօրէնն ի միտս, թէ չիք երկիրդ Աստուծոյ առաջի աչաց նորա» (հմմտ. Սաղմ. ԼԵ 2): Վասն որոյ եւ գյաւելուածն թափէ, զի զոր օրինակ որոց դալուկն զսրտիւն գայցէ, զառաջինն ի ներքս առնուլ զմադասն ջանան, իսկ յորժամ շարժի, արտաքս ընկենու մադձս դառինս, նոյնպէս եւ որ չար խորհրդովք լի իցեն՝ առ ի չժուժալ չարացն՝ միշտ գայլս բամբասեցին: Եւ դարձեալ՝ այսու զաստուածութիւնն ծանոյց, որ զիտէր զժածուկս սրտից նոցա՝ ո՛չ միայն զչարեացն, այլեւ զբարեացն այսպէս լինել, որպէս ասէ.

Մարդ բարի ի բարի զանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս, եւ մարդ չար ի չար զանձուց սրտի իւրոյ հանէ զչարիս (ԺԲ 35):

Մարդ բարի եւ մարդ չար՝ ո՛չ ըստ բնութեան, այլ ըստ յօժարութեան, զի թէ բնութեամբ՝ հարկ էր ամենեցունց կամ բարիս գոյ, կամ չարս, զի բնութեամբն յամենայն տեսակսն հաւասար է, որպէս եւ յայլ կենդանիսդ: Իսկ մարդ անձնիշխան կամօք ընտրէ զչար եւ զբարի, եւ մտացն յառաջախոհութեամբ, զոր «սիրտ» ասէ, ժողովէ զոր ինչ եւ կամի՝ զմթերեալ բազմութիւն զանձուց, եւ զայն առ սակաւ սակաւ ի ձեռն ձայնական զորձեաց՝ սպասարարութեամբ լեզուի եւ բերանոյ, պատմէ մարդկան, որք իբր ի հայելուոջ՝ ի ձեռն բանին զսիրտն ճանաչեն՝ իբր ի սակաւ հացից զշեղջս եւ ի բաժակէ զինուոյ՝ զհնձանս, զլաւս եւ կամ զյոռիս: Եւ դարձեալ՝ ցուցանէ զձնունդս բարի[ս] ի մտաց բազում երկամբք յառաջացեալ, ըստ օրինի ոսկեհանաց¹, որք յոլով տաժանմամբ կղկղեն ի հողոյ զգուտն եւ զմաքուրն, որպէս բարիքն, իսկ չարքն իբրեւ զկապար ժողովեալ եւ դժնդակ կրիւք երկնեալ՝ յղանան զցաւս եւ ծնանին զանօրէնութիւնս²: Եւ դարձեալ՝ զմտածութիւնս ամենայն ի Քրիստոս՝ ի փառս Աստուծոյ առաքինութեամբ եղեալ, «զանձ բարի» կոչէ, իսկ զմտածութիւնս չարեաց՝ ի պարձանս սատանայի զորձեալ, «զանձ չարեաց» անուանէ, որք ընտանի իւրաքանչիւր ոք արտաքս զան ի բանս եւ ի գործս՝ բարիքն եւ չարիքն:

Բայց ասեմ ձեզ, թէ ընդ ամենայն դատարկ բանի, զոր խօսիցին մարդիկ, տացեն համար յԱւուրն դատաստանի (ԺԲ 36):

¹ ՏՁ ոսկեհանաց

² Սաղմ. Է 15

Այսու սակաւ ինչ թեթեւացուցանէ, թէ ո՛չ դուք միայն, այլ ամենայն ազգ մարդկան նովին ախտիւ վարակեալ՝ դատելոց են, որպէս զի զնոսա մխիթարէ եւ զխրատն հասարակաց կարգիցէ: Բայց զո՞յս անուանէ «դատարկ բան». յորժամ ըստ իրացն որ առաջի կայցէ՝ ո՛չ խօսեցցի որք, դատարկ է. եւ կամ սուտ խօսեցցի, զի զոր ինչ ասաց, չէ՛ր այնպիսի. կամ զրպարտիցէ զորք, կամ ծաղրածու եւ խեղկատակ բանս խօսիցի: Եւ դարձեալ՝ որ¹ ինչ բան եւ իցէ, թէպէտեւ բարի իցէ եւ ոչ ի շահս հոգեւոր² օգտութեան տացէ, դատարկաբանութիւն է ճշմարիտ, ընդ որոց, ասէ, համարս տայ. ո՛չ վասն զի բարի խօսեցաւ, այլ զի օգտութիւն ոչ եղեւ շտղացն՝ դատի: Եւ դարձեալ՝ ուսուցանէ՝ խորհրդոց եւ բանից եւ զործոց, որով մեղանչեն մարդիկ, ունին համարս տալ Դատաւորին, քանզի բան զխորհրդոյն³ խօսի, որպէս ասաց նախ. արդ՝ եթէ բան եւ խորհուրդ դատին, զի՞նչ ասիցես զզործոցն: Եւ դարձեալ՝ դատարկ բան է խօսք անհիմաստ եւ իրք անօգուտք, եւ խորհուրդ անհաստատուն, եւ փոյթ վախճան ո՛չ ունելով, որք դատին. է՞ր վասն. զի թողեալ զժամանակ զործոյ՝ յընդունայնս ծախեն՝ ըստ Սողոմոնի⁴, եւ սնոտեաց հետեւին:

Ձի ի բանից քոց արդարասցիս եւ ի բանից քոց պարտաւորեցիս» (ԺԲ 37):

Չիրատունս Ատենին այնորիկ ուսուցանէ մեղմով, զի թէպէտ բազում սուտ վկայք զքէն վկայեն, ասէ, ոչինչ վնասեն քեզ, այլ որովք դո՛ւ տայցես վճիռ, Դատաւորն զայն վճարէ՝ ըստ այնմ թէ՛ «Որպէս լսեմն՝ դատենմ» (Յովի. Ե 30), եւ թէ՛ «Ի բերանոյ քումմէ՛ դատեցայց զքեզ» (Ղուկ. ԺԹ 22), եւ Դաւիթ թէ՛ «Յետ այտորիկ բերանօք իրեանց հաճեցցին» (Սաղմ. ԽԸ 14): Վասն որոյ ո՛չ է պարտ երկնչել չարախօսեցելոցն, այլ չարախօսացն, զի ո՛չ բռնադատին տալ պատասխանի որք չարաչարն լուան, այլ նորա, որք չարաչարն խօսեցան:

Եւ դարձեալ՝ բան արդարացուցիչ՝ հաւատոյն բան՝ ըստ մարգարէին. «Բան մի հակիրճ եւ համառօտ արասցէ Տէր» (Ես. Ժ 23), եւ այլուր թէ՛ «Մերձ է բանն ի բերան քո» (հմմտ. Բ Օր. Լ 14)՝ «սրտի հաւատալ եւ բերանով խոստովանել ի փրկութիւն, որով արդարա-

¹ Ձ զոր

² Տ հոգեւորս

³ Ձ զխորհրդոցն

⁴ Ժող. Գ

նամք» (հմմտ. Հոմ. Ժ 10), որպես աւագակն եւ մաքսատրն եւ գաղատացիքն¹: Իսկ պարտաւորիլ նովին բանիս՝ այն, որ ոչ հաւատաց Որդոյ, «բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա» (Յովհ. Գ 36), որպէս հրէայք եւ հերձուածողք եւ փարիսեցին այն մեծամիտ²՝ ըստ այնմ. «Կեանք եւ մահ ի ձեռն լեզուի» (Առակ. ԺԸ 21): Եւ դարձեալ՝ զի անասունքդ ոչ ունին արդարութիւն փառաց կամ պարտաւորութիւն տանջանաց, այլ մարդ վասն բանին զօրութեան, որով անձնիշխան կամօք գործելով զբարիս՝ արդարանամք, կամ նովինք խորհրդով սպասաւորելով չարի՝ պարտաւորինք յայնմ ատենի: Եւ յիրաւի՛ այս. զի մեղք իշխանին՝ չափ ժողովրդեանն էր, յայտ է ի պատարագացն. նոյնպէս եւ բանն իշխան է:

Յայնժամ պատասխանի ետուն Նմա ոմանք ի դպրացն եւ ի փարիսեցոց եւ ասեն. «Վարդապետ, կամինք նշան ինչ տեսանել ի Քէն» (ԺԲ 38):

Կարի՛ յի է անմտութեամբ խնդիրն նոցա, քանզի յետ այնչափ նշանացն, իբրու թէ չէր ինչ բնաւ լեալ, ասէին. «Կամինք ի Քէն նշան ինչ տեսանել», ընդ որս զարմանայ աւետարանիչս թէ՛ «յայնժամ»: Ե՞րբ. յորժամ խոնարհել պարտ էր ի բանիցն, յորժամ սքանչանալ արժան էր եւ տեղի տալ ի զործոցն, յայնժամ ի չարեացն ոչ դադարէին: Բայց ո՛չ ամենեքեան, այլ «ոմանք»՝ ասէ, որք նախանձու վառեալ էին եւ կեղծաւորութեամբ «վարդապետ» կոչէին՝ ըստ հասարակաց ժողովրդեանն. «Կամինք,- ասեն,- նշան ինչ տեսանել», զոր Դուկաս ասէ՝ «յերկնից խնդրէին» (Դուկ. ԺԱ 16) կամ տալ հաց որպէս յանապատին³, կամ արգելով զարեգակն եւ զլուսին, որպէս զՅեսուայն եւ զԵգեկիային⁴, եւ կամ կարկտիս եւ խաւարաւ տանջել զայլազգիս, որպէս Մոսէս՝ զեգիպտացիս⁵, կամ որոտումն լինել, որպէս Շմուելին⁶, եւ այլ սոյնպիսիս, որ պատմի ի Գիրս:

Նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. «Ազգ չար եւ շնացող նշան խնդրէ, եւ նշան մի՛ տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի (ԺԲ 39):

¹ Դուկ. ԺԸ 10-14, ԻԳ 39-43, Գործք Ժ2 6, Գաղ. Դ 13-14

² Դուկ. ԻԳ 39-43

³ Ելք Ժ2

⁴ Յեսու Ժ 12-14, Դ Թագ. Ի 8-11

⁵ Ելք Թ-Ժ

⁶ Ա Թագ. Է 10

Քննելի է, թէ ընդէ՞ր ոչ ետ նշան. նախ՝ զիտէ՞ր, զի ոչ հաւատային, թէպէտ մեծամեծս տեսանէին, եւ երկրորդ՝ զի խորհտանօք խնդրեցին եւ փորձի թէ՝ «Կամիմք նշան ինչ տեսանել», որով զանհաւատութիւնն իրեանց ծանուցին, զի նշանք անհաւատից վասն են, վասն որոյ ասէ թէ՝ «Ազգ չար եւ շնացող նշան խնդրէ»։ ԶԴաւթին ի մէջ բերէ եւ զայլոց մարգարէիցն՝ ըստ այնմ. «Ազգ չար եւ դառնացող» (Սաղմ. 4: 8), եւ թէ՝ «Շնայր Երուսաղէմ ընդ քարի եւ ընդ փայտի» (հմմտ. Երեմ. 4: 9), որպէս թէ ասել՝ զի՞նչ զարմանք իցեն, թէ առ Իննեւ զայսպիսի գործս ցուցանէք, որ անծանօթս թուիմ ձեզ, ուր եւ առ Հարբն այնչափ զփորձ առեալ զօրութեան Նորա՝ զնոյն գործէիք, զի թողեալ զՆա՝ առ դեւս ընթանայիք եւ հոմանիս անծանց ստանայիք, եւ միշտ առ երախտագործսն անարժանս լինէիք, որ է վերջին չարութիւն:

Եւ դարձեալ՝ «շնացողս» կոչելով զմօտաւոր անհաւատութիւն յայտ առնէ, որով ցուցանէ զանձն հաւասար Հօր, եւ զնոսա, եթէ ոչ հաւատասցեն ի Նա, ընդ շունս համարեալք են՝ ըստ այնմ թէ՝ «Շրջեցին որպէս շունք սովեալք» (հմմտ. Սաղմ. 59: 7), որ նախ որդիք էին: Վասն որոյ ասէ. «Նշան մի՛ տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի»։ Նշան ետ, բայց ոչ զոր խնդրեցին, քանզի նոքա ի վերուստ, այլ Նա ի ներքուստ ետ, զի ի բարձանց լուեալ ոչ հաւատացին, քանզի ի վախճան հասեալ էին, որպէս զի ասիցէ թէ՝ բիրտոց բիրս երախտիս ցուցի ձեզ, եւ ոչ կամեցայք երկիրպագանել զօրութեան Իմոյ. արդ՝ յորժամ քաղաքս հիմն ի վեր յատակեացի, եւ բարձրաշէնք պարիսպք եւ ասպարանքդ տապալեացին, եւ Տաճարն աւերեացի, եւ դուք թափառական¹ յերկիր շրջիցիք յետ խաչին, յայնժամ ծանիջիք զգօրութիւն Իմ, թէ Ես եմ: Եւ դարձեալ՝ զի նշանն Յոնանոմ² յերկոցունց կողմանց նշան եղեւ նինուէացոցն, զի թէ արհամարհեցեն, իջցեն ի դժոխս իբրեւ զնա, եւ թէ զղջացին, կեցցեն ի մահուանէ, այսպէս եւ Տէր մեր եղեւ «ի զլորումն եւ ի կանգնումն» (Դմկ. Բ 34), զի կամ կեցցեն անուամբ Նորա, կամ մեռանին մահուամբ Նորա:

Եւ դարձեալ՝ զի որպէս ի խորոց ել Յոնան եւ նշան ոչ ետ նինուէացոցն, այլ ինքն նշան եղեւ նոցա՝ քարոզելով ասպաշխարու-

¹ Զ թափառականք

² Տ Յօնանու Զ Յունանու (այսպէս՝ համարյա ամենուր, բացառութեամբ աստվածաշնչային մեջբերումների, ուր՝ Յովնան). Տ Յօնան (հազվադեպ՝ Յունան) Զ Յունան (դարձրել ենք Յոնան):

թիւն, զի թէ հաւատասցեն՝ կեցցեն, եւ թէ ոչ՝ կործանեսցին, այսպէս եւ Տէր մեր ետ նշան գյարութիւն Իւր, զի թէ հաւատասցեն, ի դժոխոց ապրեսցին, որպէս զՅոնան ի պորտոյ ձկանն, եւ թէ ոչ՝ գերեալք ցրուեսցին: Եւ դարձեալ՝ զի գիտէր, թէ ոչ են հաւատալոց, առակաւ յայտնեաց զկորուստ նոցա, վասն որոյ թողեալ զթագաւորս եւ զմարգարէս վկայս Իւր՝ եւ եկն առ նինուէացիսն, որք նշան ոչ տեսին, այլ նշան եղեն, զի ի վախճանի դատապարտեսցեն (որպէս ասելոց է) զայնոսիկ, որ յետ բազում նշանացն, զոր տեսին, ուրացեալ ի բաց կացին յԱրարչէն նշանաց:

Զի որպէս էր Յովնան ի վոր կիտին գերիս տիս եւ գերիս գիշերս (ԺԲ 40):

Յոյժ չքնաղ իմն աստ զՅոնան պանծացուցանէ քան զայլ մարգարէս, զի նոքա բանիւ, իսկ սա գործով զխորհուրդ թաղմանն եւ յարութեանն տպաւորեաց, վասն որոյ սակաւ ինչ ընդարձակութիւն տացուք բանիս եւ զուարճանամք ազնուական մտօք խորհրդոյս քննութեան: Եւ արդ՝ վասն զի առաքեցաւ Յոնան քարոզ հեթանոսաց՝ ըստ ոչ սովորութեան մարգարէիցն, վասն այսր պատճառի, զի յորժամ յանդիմանէին զԻսրայէլ մարգարէքն հնազանդել օրինացն Աստուծոյ՝ սպառնալով սով եւ գերութիւն, զի թերեւս կակղասցին, ժողովուրդքն հարցանէին թէ՝ վասն է՞ր գերիմք, եւ ի մարգարէիցն ուսեալք¹, թէ վասն մեղաց եւ կռապաշտութեան, եւ ժողովուրդքն ասէին թէ՝ որք գերենն, չարագործք են քան զմեզ: Իսկ նոքա պատասխանեալ ասէին թէ՝ զձեզ ընտրեաց Աստուած յամենայն ազգաց բազում նշանօք՝ ըստ այնմ թէ՝ «Եգիտ զամենայն ճանապարհս իմաստութեան եւ ետ զնա Յակոբայ ծառայի Իւրոյ» (Բարուք 4 37), եւ թէ՝ «Ո՛չ այսպէս արար ամենայն ազգաց Տէր» (Սաղմ. ԾԽԷ 20)՝ պատուեալ քահանայութեամք եւ թագաւորութեամք եւ Օրինօք, եւ զոհիւք եւ տաճարօք, զորս թուէ Եսայի՝ «յաղագս այգւոյն սիրեցելոյ»², եւ դուք ի մեղս դարձայք, վասն այսորիկ վրէժ պահանջէ: Իսկ հեթանոսաց [զի] եւ ոչ մի ինչ այսպէս ոչ արար, ոչինչ խնդրէ ի նոցանէ որպէս տարագրեալք³ ի խնամոց Նորա, զի թէ սակաւ ինչ խնամս ցուցանէ ի նոսա, նոքա առաւել եւս հնազանդեսցին քան զձեզ:

¹ Զ ուսեալ

² Ես. Ե 1-7

³ Զ տարագրեալ

Եւ զի նորա այսմ ոչ հաւատային, առաքէ քարոզ Նինուէի զՅոնան, որ յայնժամ զիշխանութիւն քաղաքաց ունէր, եւ այն՝ բանիւ՝ առանց նշանի: Իսկ Յոնան հրաժարէր, նախ՝ զի ոչ կամէր պղծել զսուրբ մարգարէութիւնն՝ հեթանոսաց տալ՝ ըստ այնմ. «Ոչ է բարոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց» (Մատթ. ԺԵ 26), եւ երկրորդ՝ զի հայեցաւ յարուեստ իւր, ի մարգարէութիւնն ասեմ, զի ստէին բանք նորա, զոր ասացեալ Մոսիսի սպանանել զայնպիսին¹, վասն որոյ փախստական լինէր, զոր ըմբռնեալ Աստուծոյ վիճակաւ՝ մատնեաց ի ձեռս ոսոխաց եւ նորօք բանդեաց ի փոր կիտին, որով զգաստացաւ: Եւ յետ երից ատուրց ասպեալ աղօթիք՝ չոգաւ քարոզ Նինուէի եւ ասրեցոյց զամբարշտեալ քաղաքն՝ ոչ ստելով մարգարէութեանն. քանզի էր քարոզութիւն նորա յետ երից ատուրց կործանիլ քաղաքին, որ եւ եղև իսկ, քանզի արդարեւ կործանեցան ի չար բարուցն եւ յաստուածպաշտութեանն շինութիւն կանգնեցան:

Արդ՝ այս խորհուրդ նկարագրութեան մեծ եղև Ադամայ եւ Քրիստոսի, զոր այժմ Տէրն ի մէջ առեալ՝ ասէ. «Ձի որպէս էր Յովնան ի փոր կիտին զերիս տիւս եւ զերիս զիշերս»: Վասն զի մարդն առաջին՝ ախտիւ աստուածանալոյն ոչ իմացաւ զապստամբութիւնն իւր, որպէս եւ ոչ Յոնան՝ զփախուստ իւր, թէ ոչ կարիցէ արտաքոյ լինել իշխանութեանն Աստուծոյ, եւ որպէս Ադամ ոչ հաւատաց պատուիրանին՝ «Թէ ուտիցես, մեռցիս» (հմմտ. Ծննդ. Բ 17), այսպէս եւ Յոնան. «Թէ ելանեմ յերկինս, Դու անդ ես, եւ թէ իջանեմ...»²: Եւ որպէս Յոնանու թոյլ ետ մխել ի ծով եւ ծփիլ ալեօք, եւ մտանել ի պորտ ձկանն, զի խրատեսցի, այսպէս եւ Ադամայ ներեաց ալեկոծիլ մեղօք, եւ կլանել մահուն, եւ իջանիլ ի դժոխս: Եւ այս թէպէտ ի պատժոյ սակս էր երկոցուն, սակայն պատիւ մեծագոյն էր Յոնանու, զի ետես զսքանչելիս ծովուն, զոր պատմէ յաղօթս իւր³, իսկ Ադամայ՝ զի հարկ արար Արարչին իւրոյ մեռանիլ մարմնով վասն նորա:

Ըստ նմանութեան Յոնանու՝ եւ Տէր մեր առաքեցաւ քարոզ աշխարհի դառնալ ի չարեաց, իսկ Նա հրաժարէր յառաջ քան զմուտն ի դժոխս, զի պատուիրէր ի ճանապարհս հեթանոսաց ոչ

¹ Թիք ԻԱ, ԻԵ, ԼԱ ևն

² Այս խոսքը շփոթմամբ է վերագրված Յովնան մարգարեին: Վերցված է ԵԼԸ սարմոսից (համար 8):

³ Յովն. Բ 2-10

զնայ¹: Եւ որպէս Յոնանն՝ ի ծով, եւ ամբոխեալ նաւորոքն ի ծովէն՝ ընկեցին վիճակն², որ ել ի վերայ³ Յոնանու, եւ յընկենուլ զնա ի ծով ի փոր ձկանն, դադարեաց խռովութիւնն, այսպէս եւ Տէր մեր ի կենցաղս ալեկոծեալ, եւ ետես զաշխարհ⁴ ամբոխեալ ի մեղաց, որք ի տարակոյս մատնեալ, թէ ո՞ լիցի մեզ փրկութիւն, եւ ել վիճակն Տեառն մերոյ անպարտին մահու, զի մեռցի, եւ սպրեացին Նովաւ տիեզերք՝ ըստ այնմ թէ՛ «Լաւ է միոյն մեռանիլ... եւ մի՛ ամենայն ազգս կորիցէ» (Յովհ. ԺԱ 50):

Որպէս նոխազն յանապատին⁵, որ եւ զենաւ վասն բարկութեանն Աստուծոյ եւ ազատեաց զմեզ յանապատ՝ յերկինս, եւ իջմամբ ի գերեզման եւ ի դժոխս՝ խափանեցաւ թշնամութիւնն ըստ առաքելոյ⁶, եւ որպէս ձուկն ոչ կարաց ապականել զՅոնան, այսպէս եւ վիշապաճեւն մահ զՏէր մեր ոչ կարաց ըմբռնել՝ ըստ այնմ. «Ո՛չ թողաւ Ոգի Նորա ի դժոխս, եւ մարմին Նորա ո՛չ ետես զապականութիւն» (Գործ. Բ 31): Եւ որպէս ել Յոնան ի ցամաք՝ քարոզել նիւնուէացոց, այսպէս եւ Տէր մեր եռօրեայ յարուցեալ իբր զանիծ՝ Ինքեամբ առաքեաց զաշակերտսն քարոզել հեթանոսաց՝ կարթ⁷ իմն⁸ արարեալ զվիշապն՝ ըստ Յորայ մարգարէութեանն⁹, եւ խաղացեալ նովաւ իբր ձագու, զի զազանն ապականիչ այլ կենդանեաց՝ եղև տեղի զբոսանաց Յոնանու, այսպէս եւ մահ լուծիչ մարդկան՝ եղև զբոսանք¹⁰ քազմոցի ուրախութեան երկնաւոր Արքային, զոր իբրեւ զոչինչ արարեալ կոխեաց զնա: Միա զայս ամենայն խորհուրդ ի կիր առեալ՝ յիշատակէ [զ]Յոնան: «Չի որպէս էր Յովնան ի փոր կիտին գերիս տիւս եւ գերիս գիշերս,

նոյնպէս եղիցի եւ Որդի մարդոյ [ի սիրտ երկրի]:

Ընդէ՞ր ոչ ասէ՛ թէ որպէս էր Յոնան ի փոր կիտին¹¹ գերիս ատուրս, նոյնպէս եւ Որդի մարդոյ ի սիրտ երկրի¹²: Այս Գրոց սովո-

¹ Մատթ. Ժ 5

² Զ վիճակն

³ Զ > որ ել ի վերայ

⁴ Զ աշխարհս

⁵ Ղևտ. Թ 9

⁶ Եփես. Բ 14-16

⁷ Տ կարթ

⁸ Զ իբնս

⁹ Յոր Խ 20

¹⁰ Զ զբոսանք

¹¹ Զ ի սիրտ երկրի] ի փոր կիտին

¹² Զ > ի սիրտ երկրի

րութիւն է, զի երբեմն զտիւն եւ զգիշերն մի օր ասէ, իբր այն թէ՛ «Եղիցի օր մի» (հմմտ. Ծննդ. Ա 5), եւ մեք զամիսն երեսուն օր ասենք: Եւ երբեմն առանձինն դնէ՝ ըստ այնմ թէ՛ «Եղեւ անձրեւ զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր» (Ծննդ. Է 12), եւ՝ «Մոսէս ի լերինն եկաց զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր» (Ելք ԻԴ 18): Բայց ոչ առանց խորհրդոյ զայս առնեն, զի Նոյին վասն արանց եւ կանանց եղեւ ջրհեղեղն, զոր տիւն եւ գիշերն՝ նշանակեն, իսկ Մոսիսին՝ զի զՕրէնսն ի պէտս հոգոց եւ մարմնոց ընկալաւ, քանզի հոգին լոյս ասի, իսկ մարմինն խաւար անուանի՝ ըստ այնմ. «Թէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար է, խաւարն ո՞րչափ եւս» (Մատթ. Է 23): Նմանապէս եւ աստ յերկուս զօրն բաժանելն խորհուրդ մեծապէս ունի, քանզի առ ճանին՝ գիշերն նշան կորստեան նիւնուէացոցն, եւ տիւն՝ փրկութեան աստրոցն, այսպէս եւ Տեառն մուտն ի գերեզման՝ հրէիցն կորուստ թաղման, եւ յարութիւն Նորա՝ նշան հեթանոսաց փրկութեան: Այլեւ մահ Նորա՝ արդարոց եւ մեղաւորաց, կենդանեաց եւ մեռելոց եւ արանց եւ կանանց փրկութիւն, զոր տեսեալ հրեայքն զնշանս զայս՝ զարմասցին, թէ Նա է, որ երբեմն կոչեաց զհրէայսն եւ տարագրեաց զհեթանոսս, այժմ կոչէ զհեթանոսս եւ մերժէ զհրէայս, որոյ օրինակն ի Յոնան նշանակեցաւ, որպէս ասէ:

Բայց զի՞նչ է թէ՛ «նոյնպէս եղիցի»³ եւ Որդի մարդոյ ի սիրտ երկրի»: ՉԵրուսաղէմ ասէ «սիրտ», զի իբր սիրտ ի մէջ կենդանոյ, այսպէս եւ նա՝ ի մէջ երից մասանց աշխարհի՝ Երուսիոյ եւ Լիբիոյ եւ Ասիոյ: Եւ կամ «սիրտ» վասն կենդանական զօրութեանն ասէ, որ է աստուածպաշտութիւնն, քանզի անդ ի Հինն եւ ի Նորս ծաղկեցաւ՝ ըստ այնմ. «Ի Սիոնէ ելցեն օրէնք, եւ բան Տեառն՝ յԵրուսաղէմէ» (Ես. Բ 3): Եւ դարձեալ՝ ուր Աբել⁴ թաղեցաւ՝ «բերան» երկրի կոչեցաւ⁵, իսկ ուր Տէր մեր՝ «սիրտ երկրի» անուանեցաւ, քանզի արդարոցն մահուամբ պատմեցաւ մահն Տեառն մերոյ, որով մեռեալքս կենդանացաք, յորմէ վերինքն ուսան՝ ասելով թէ՛ «Սրտացուցեր զմեզ, քոյր⁶ մեր հարսն» (Երգ Դ 9): Դարձեալ՝ որպէս սիրտն յառաջ գոյանայ եւ յետոյ մեռանի, այսպէս եւ Երուսաղէմ

¹ Տ տիւ եւ գիշեր] տիւն եւ գիշերն

² Զ > է

³ Զ > եղիցի

⁴ ՏԶ Աբել

⁵ Ծննդ. Դ 11

⁶ Զ մայր

նախ գոյացաւ յաստուածպաշտութիւն եւ յետոյ քակելոց¹ է յաւուրս նեռինն, վասն այն «սիրտ» զնա կոչէ: Եւ դարձեալ՝ ոչ ասաց «յերկիր», այլ «ի սիրտ երկրի», զգերեզմանէն եւ զթաղմանէն յայտնապէս ծանոյց. եւ զյարութիւնն ոչ ճառեաց, զի մի՛ ծաղր առնիցեն, սակայն գրեթէ զնոյն ասաց, զի ծանիցեն, թէ յառաջագոյն գիտէր:

Եւ դարձեալ՝ «Էր Յոնան,- ասէ,- ի փոր կիտին», այսինքն՝ կենդանի, «այսպէս եւ Որդի մարդոյ ի սիրտ երկրի» անապական եւ անմահ՝ ըստ այնմ. «Ես ննջեմ, եւ սիրտ իմ արթուն է» (Երգ Ե 2): Եւ դարձեալ՝ զի որպէս յերիս օրս ոչ ճաշակեաց կերակուր կիտոսն, զի մի՛ հեղձցի մարգարէն, այսպէս եւ յիջանել Տեառն մերոյ ի գերեզման՝ ոչ զօրեաց մահ կլանել զոք, զի թէ մեռեալք յառնէին, զի՞նչ հարկ էր կենդանեացն մեռանել յայնքան ատուրս եւ առ յապայ, զի որք այժմ մեռանին, ոչ մահ, այլ քուն ասացեալ է ի Գրոց²:

Արդ՝ տարակուսեն ոմանք վասն երից ատուրցն, քանզի ասէ. «Ձի որպէս էր Յովնան ի փոր կիտին գերիս տիւս եւ գերիս գիշերս»: Արդ՝ նախ զայս ասեն ոմանք, թէ ի հինգշաբաթոջ երեկոյին, յորում քաշխեաց զմարմինն առաքելոցն, թաղեցաւ յերկրեղէն սիրտ նոցա, ուստի լինի երեք տիւ եւ երեք գիշեր: Եւ երկրորդ՝ այլք ոմանք զմիջեալ ուրբաթուն խաւարմամբ լուսաւորացն ի կիր առեալ՝ լնուն գերիս տիւս եւ գերիս գիշերն. բայց այս ոչ է ուղիղ, զի տակաւին ոչ էր եղեալ ի սիրտ երկրի: Եւ երրորդ՝ մեծն Դիոնէսիոս³ հետեւեօղն Պօղոսի ընդ տիւս եւ ընդ գիշերն երիս համարի, այսպէս թէ Որդի մարդոյ ի սիրտ երկրի լինի գերիս տիւս եւ գերիս գիշերս, որ ճշմարիտ գտանի, քանզի գիշեր ուրբաթուն եւ տիւ շաբաթուն եւ միւս գիշերն, յորում յարեաւ ի կիրակէի⁴, երեք է: Եւ չորրորդ՝ զի Մատթէոս զԱւետարանն երբայեցոցն գրեաց, վասն որոյ եւ երբայականին հետեւեցաւ սովորութեան, քանզի նոքա սկիզբն ատուրն գերեկոյն դնեն, նաեւ հասարակաց սովորութիւն գտին եւ զգիշերն օր մի համարեալ, որպէս ասաց Մոսէս⁵. արդ՝ գոր ինչ գործ եւ լինի, եւ յորում ժամանակի եւ լինի, եթէ ի տիւս եւ

¹ Զ քակտելոց

² Յոր ԺԴ 12, երեւ. ԾԱ 39, 57

³ Իմա Դիոնէսիոս Արեոպագացին:

⁴ Զ կիրակէի

⁵ ԾՆՆդ. Ա 5

եթե ի գիշերն, ո՛չ բաժանեն, այլ ասեն՝ այս անուն օր եղև այս ինչ. «Եւ այժմ երեք օր է, յորմեկնտէ այն գործեցաւ», որպէս ասէր Կղէովպասս (Գով. ԻԴ 21): Արդ՝ ըստ այսմ յարացուցի առնլով գտցես զերիս տիւն եւ զերիս գիշերն ի թաղմանն Տեառն, զի թաղեցաւ յուրբաթու¹ յինն ժամուն, որ եւ գիշերն անցեալ էր՝ այն, յոր զգառն եկեր, արդ այն գիշերն եւ իւր տիւն, յոր թաղեցաւ Տէրն, որ է ուրբաթն՝ օր մի, եւ մի՛ այլ գիշերն եւ իւր լոյսն, որ է շաբաթն՝ օր երկու, եւ միւս գիշերն, յորում յարեաւ, եւ իւր տիւն՝ երեք օր:

Եւ հինգերորդ՝ վասն զի արագեաց ի փրկութիւն մեր², պակասեցոյց զժամանակն, որպէս առ Նոյի հարիւր քսան ամ ասաց գալ ջրհեղեղին եւ զքսանն վասն յաճախութեան չարեացն պակասեցոյց, այսպէս եւ ի ծառայութիւնն Եգիպտոսի՝ չորս հարիւր երեսուն³, երկերիւրն բաւականացաւ. նոյնպէս եւ աստ, որպէս զի քակիչ է բնութեան եւ լուծիչ Ինքեան եղեալ օրինացն յաղագս տէրութեանն: Եւ վեցերորդ՝ որ է յոյժ ճշմարիտ, քանզի զՅոնանու իրս ո՛չ վասն ատուրցն էառ ի կիր, այլ վասն գործոցն եւ խորհրդոցն, զորս արար եւ կատարեաց, որպէս ասացաւ յառաջագոյն: Եւ եօթներորդ՝ վասն այնորիկ ասաց զերեք օրն, որպէս զի նոքա այնու իմասցին զյարութիւնն, ուստի ասէին ց՝Պիղատոս. «Մոլորեցուցիչն այն ասէր թէ՛ յետ երից ատուրց յառնեն» (հմմտ. Մատթ. ԻԷ 63), վասն որոյ եւ անձամբ իսկ դատապարտեցան հրէայքն, որպէս ասէ յաջորդդ:

Արք նինուէացիք յարիցեն ի Դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ եւ դատապարտեսցեն զսա, զի զղջացան ի քարոզութեանն Յովնանու⁴. եւ արդ ասաւիկ մեծ քան զՅովնան⁵ է աստ (ԺԲ 41):

Ընդ Իւրոյ յարութեանն եւ զհամօրէն յարութիւնն ատետարանէ, ընդ որս եւ նինուէացիք դատելոյ պարտական առնեն զազգն հրէից, զի զղջացեալ բոլոր քաղաքն թագաւորօք եւ իշխանօք, ծերօք եւ երիտասարդօք, արամբք եւ կանամբք, մանկամբք եւ տղայօք եւ անբան անասնօք բուրձ զգեցան եւ պահս կարդացին եւ զամենայն հեշտութիւն սիրելութեան կենցաղոյս արհամարհեցին, որով ասարեցան, իսկ տքա՛ ոչ: Եւ այն, զի անդ ծառայն, եւ աստ՝

¹ Զ յուրբաթուն

² Զ մեզ

³ Տ էջատակի ծնթ. (*Ըստ աղիւսակի ժամանակագրութեան Կուռն")

⁴ ՏԶ Յոնանու

⁵ ՏԶ զՅոնան

Տէրն, որպէս ասէ թէ՛ «մեծ քան զՅոնան», քանզի զգայուստն Յոնանու ոչ որ քարոզեաց յառաջ, իսկ զՄա՛ բազում մարգարէք. նա կորուստ քարոզեաց, եւ Մա փրկութիւն աւետարանեաց. նա նշան ոչ արար, իսկ Մա՛ բազում նշանս. նա ի կիտէն ել, եւ Մա՛ ի գերեզմանէն, սակայն ո՛չ հաւատացին հանգոյն հեթանոսաց, ապա ուրեմն յիրաւի՛ դատին:

Դշխոյն հարաւոյ յարիցէ ի Դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ եւ դատապարտեսցէ զսա, զի եկն ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի. եւ ահա մեծ քան զՍողոմոնն է աստ (ԺԲ 42):

Յամենայն կողմանց ծանրացուցանէ զվտանգն. է՞ր վասն. զի մի՛ ասիցեն, թէ ոչ լուսք եւ ոչ տեղեկացաք, ուստի անհրաժեշտ դատին: «Դշխոյն հարաւոյ յարի[ցէ]...»: Այս քան զառաջինն առաւելագոյն է, զի Յոնան առ նոսա չոգաւ, եւ տիկինն հարաւոյ առ Սողոմոնն եկն¹, եւ այն զի կին մարդ էր եւ խուժադուժ, եւ այլազգի, եւ կարի իսկ հեռաւոր, որում ոչ սպառնալիք ի վերայ կային, այլ սակս տենչանաց իմաստութեան միայն: «Եւ ահա մեծ քան զՍողոմոնն է աստ»²: Յիրաւի՛. զի նա վասն փայտից եւ ծառոց խօսեցաւ, եւ Ես՛ զանճառ իրաց եւ զահագին խորհրդոց. Սողոմոնն բանի միայն հաւանեցոյց, եւ Ես՛ բանիւ եւ գործով. անդ կինն առ թագաւորն եկն, եւ աստ Տէրն գլխովին՝ առ ծառայս Իւր³. նա ի ծագաց երկրէ յարեաւ, եւ Ես յերկնից ընդ քաղաքս շրջիմ. Սողոմոնն մարդ միայն, եւ Ես՛ Աստուած եւ մարդ. նա օրինակ Ինճ, եւ Ես՛ ճշմարտութիւն Նորա: Սակայն ոչ որ հաւանի. վասն որոյ կինն այն յառնելոց է ոտիս ձեզ յԱւուրն դատաստանի, ո՛չ դատաւոր, այլ դատելոյ պարտակա՛ն միայն առնօղ:

Եւ դարձեալ՝ դշխոյին զհեթանոսաց Եկեղեցիս օրինակէ, որ սեւացեալ մեղօք՝ ի ծագաց երկրէ կռապաշտութեան լուեալ⁴ եւ ոչ տեսեալ զիմաստութիւնն Հօր զճշմարիտ Սողոմոնն⁵՝ եկն յերկրպագութիւն Նորին՝ ըստ այնմ. «Մոռա՛ զժողովուրդ քո», «եւ դուստր ծուրայ երկիրպագցէ սմա» (Մաղմ. ԽԳ 11, 13), եւ՝ «Հնդիկք յառաջագոյն ձեռնտու լիցին առ Աստուած» (Մաղմ. ԿԷ 32), եւ ժողովուրդ

¹ Գ Թագ. Ժ 1-10

² Զ > է աստ

³ Տ > իւր

⁴ Զ լսեալ

⁵ Զ Սողոմոնին

հնդկաց եղիցի անդ, որք դատապարտեսցեն զհրէայսն՝ զտեսօղս հրաշից Նորա եւ զլսօղս վարդապետութեան Նորա, յԱւուրն դատաստանի, յորում մեծանայ փառք Սողոմոնին քան զաստիս, զի փառօր եւ հրեշտակօք սրբովք դատեսցէ զնոսա: Նաեւ նշանակէ այսու զհանդերձեալ՝ կենաց յարութիւն եւ իւրաքանչիւր գործոց քննութիւն եւ հատուցումն, յորում զճշմարիտ Իմաստութիւնն ժառանգեն սուրբքն:

Այլ յորժամ այսն պիղծ ելանիցէ ի մարդոյ, շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ եւ ոչ գտանէ (ԺԲ 43):

Յայնժամ ասէ. «Դարձայց ի տուն իմ, ուստի ելին»: Եւ եկեալ գտանէ պարապորդ, մաքրեալ եւ յարդարեալ (ԺԲ 44):

Յայնժամ երթայ եւ առնու ընդ իւր եօթն այլ այսս չարագոյնս քան զինքն եւ մտեալ բնակէ անդ, եւ լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն: Այսպէս եղիցի եւ ազգիս այսմիկ չարի» (ԺԲ 45):

Նախ զայն յայտ առնէ, թէ ոչ յայնմ աշխարհի միայն, այլ եւ աստէն՝ իսկ կրեն զանհնարին պատիժս, եւ զոր ասէն՝ այսպիսի՝ ինչ է թէ՛ զոր օրինակ դիւահարք, յորժամ բուժիցին յախտէն եւ ի ծուլութիւն անկանիցին, եւս չար ձգեն յանձինս զմոլեգնութիւնս, քանզի յայնժամ ասաց զբանս զայս, որք եկեալ էին բժշկիլ յայտոց պղծոց եւ ընդ Նմա շրջէին, որպէս Մագդաղենացին, յորմէ եօթն դեւն ելեալ էր², եւ Յոհաննա³ եւ Շուշան, նոյնպէս եւ ձեզ լինիցի: Քանզի զառաջինն իսկ դիւի կալեալ էր զձեզ, յորժամ կոոց երկիրպագանէիք եւ զորդիս դիւաց զոհէիք, եւ կարի իսկ զմոլութիւնն յաճախէիք, սակայն ոչ թողի զձեզ, այլ հանի զդեւսն մարգարէիքն եւ անձամբ եկեալ կամեցայ սրբել զձեզ առաւել, իսկ դուք ոչ կամեցայք, այլ անդրէն ի չարիս ձեր դարձայք: Եւ ի վերայ մարգարէիցն արեան եւ յԻ՛նն իսկ ձեռնամուխ լինիք, վասն այրորիկ անտանելի կրէք պատուհաս՝ ծանր քան զառաջինն՝ զՏիտոսին եւ զՎեսպիանոսին, որ դժուարագոյն է քան զԵզրիպտոսին եւ զԲաբիլոնին⁴ եւ զԱնտիոքայն՝ յաղագս անդարձութեանն: Եւ երկրորդ՝ քանզի նշան խնդրեցին, ասէ թէ՛ զի՞նչ օգուտ է բժշկել զձեզ, իբրո՞ւ ոչ էք հաւատացեալ, զի թէ յետ բժշկութեանն երկմ-

¹ Զ հանդերձեալ

² Զ էին

Ղուկ. Ը 2

³ Յոհաննայ, Զ Յոհաննայ

⁴ ՏԶ զԲաբիլոնին (այսպէս՝ ամենուր. Բաբիլոն] Բաբիլոն):

տիք, չար եւս քան զառաջինն լինիցի ձեզ, որոց օրինակէ մարդոյ միոյ զամենայն Իսրայէլ, մինչ կային ի ծառայութիւնն փարաւոնի, յորս բնակեալ էր այսն պիղծ, եւ ազատելով բժշկեաց զնոսա՝ ըստ այնմ. «Առաքեաց զբան Իր եւ բժշկեաց» (Սաղմ. ԾԶ 20), եւ «անցոյց զնոսա ընդ ծովն» (հմմտ. Սաղմ. ՀԷ 13), զի սրբեսցին, եւ «ոչ կամեցան»՝ ըստ առաքելոյ (Գործք Է 39), եւ «մերժեաց յերեսաց նոցա» (Սաղմ. ՀԷ 55) զեօթն ազգն հանդերձ դիօք իւրովք եւ «ետ զերկիրն նոցա ի ժառանգութիւն» (Սաղմ. ԾԼԵ 21): Եւ նորա ո՛չ կային ի բաց ի չարեաց իրեանց, այլ ի ժամանակի հաւատոցն հետեցին եւ ուրացան զՆա, վասն որոյ ասէ. «Երթեալ շրջի ընդ անջրդին տեղիս» ի հեթանոսս, որք ցամաք էին յաստուածպաշտութենէ եւ ոչ գտին հանգիստ, զի տեսին զնոսա ծովացեալ շնորհօք Աւագանին՝ ըստ այնմ. «Ետու զքեզ յուխտ ազգի եւ ի լոյս հեթանոսաց» (հմմտ. Ես. ԽԹ 8), եւ՝ «Յանուն Նորա հեթանոսք յուսացին» (Ես. ԽԲ 4). զի «եղև անապատն ի ճահիճս ցորոց» (հմմտ. Սաղմ. ԾԶ 35)՝ ընկելով զջուր կենդանի Հոգւոյն, որ խաղայ ի կեանս յաիտենից, ուստի դարձաւ ի հրէայսն, որք անջրդի մնացին յաստուածային մկրտութեանն հոսմանէ:

Եւ գտանէ յարդարեալ զպարապորդ զհոգիս նոցա ի բարեաց ունակութենէ եւ հանգչի ի նոսա եօթն չար այտովք, զոր ասաց Երեմիա, թէ յղացաւ եւ ծնաւ եօթն որթն յանապատին¹, եւ երկու զԲորովամայն² ի Դան եւ ի Բեթէլ³, եւ զչորեքդիմի պատկերն Մանասէի⁴: Եւ լինի նոցա յետինն չար քան զառաջինն, քանզի զայն Ինքն Քրիստոս քաւեաց, զի ոչ եթէ դարձեալ միսանգամ զայ բուժել զցաւս ձրի հաւատովք միայն, զի որ մեռաւ, միանգամ մեռաւ յանարգութիւն մեղաց նոցա, այլ ի դատաստան եւ ի հատուցումն, որպէս ասէ. «Այսպէս եղիցի եւ ազգիս այսմիկ չարի», որպէս ասացի: Այս է վճիռն, քանզի զմեղս նոցա մարգարէիքն ի Բաբելոն ձգեցի՝ ըստ այնմ. «Որ հարիւրամեանն մեռանիցի, անիծեալ եւ մեղաւոր կոչեսցի» (Ես. ԿԵ 20), եւ զմնացեալն Ես եկի քաւել: Արդ՝ որովհետեւ ո՛չ հաւատացին նախանձու լցեալ, չգտանեն թողութիւն յայսմ կենցաղի, այլ նախանձ հրոյն, որ մաշիցէ զնոսա դժնդակ

¹ Երեմ. ԺԵ 9

² Բորովոմայն. Տ զԲորովամայն

³ Գ Թագ. ԺԲ 28-29

⁴ Բ Սն. ԼԳ 1-10

քան զառաջին վտանգս, զի այն մարմնական միայն եւ վախճանական, իսկ այս՝ հոգեկան եւ մարմնական եւ անվախճան:

Իսկ առ ի միտս՝ յորժամ ելանէ դէւն պիղծ ի մարդոյ՝ մի ի յութից չարագոյն խորհրդոցն՝ որկորստութիւնն, քանզի նախ բունանայ յամենայն կենդանիս, մանաւանդ ի մարդս փափկակեացս, եւ շնորհօքն Աստուծոյ զերծանի Գրովք դաստիարակեալ, թէ խափանելիք են, ըստ առաքելոյ, կերակուր եւ պորտ¹, եւ շրջի ընդ այլ մեղուցեալ հոգիս, որք բազում ախտիք վարակեալ իցեն, ցամաք զոլով ի շնորհաց Հոգւոյն, ոչ ունելով հաւատս կամ գործս, յորում ոչ գտանէ հանգիստ վասն լեզեռնաց² դիւաց ի նոսա զեղելոց եւ բոլորովին դիւացելոց, դառնայ ի տունն առաջին, քանզի սովորութիւն է խորհրդոցն ոչ միանգամ, այլ բազում անգամ ի վերայ դիմել մտաց՝ ըստ Դաւթի. «Բազում անգամ բնակեաց անձն իմ ընդ այնոսիկ, ոչք ատէին զողջոյն» (Սաղմ. ԾԺԹ 6): Եթէ զոցէ զնա ըստ առաջին կամացն պատրաստեալ եւ դարձեալ փափկութեան եւ որովայնի հոգ տարեալ, ոչ խրատեալ ի Տեառնէ թէ՛ «Մի՛ հոգայք զինչ ուտիցէք» (Իմմտ. Մատթ. 2 25), յայնժամ մտանէ ոչ ինքն միայն որկրամոլութիւնն, այլ բերեալ ընդ իւր եօթն այլ եւս չարագոյն այսս՝ զպոռնկութիւնն, զարծաթսիրութիւնն, զտրտմութիւնն, զբարկութիւնն, զճանճրութիւնն, զհպարտութիւնն, զնորափառ ամբարհաւածութիւնն:

Եւ ընդէ՞ր չարագոյն. զի ամբարտաւանութիւնն եւ բարկութիւնն եւ սրտմտութիւնն եւ ճանճրութիւնն յոյժ չար են քան զորկրամոլութիւնն եւ զպոռնկութիւնն, զի ոչ զմարմինն, այլ զհոգւոյն դրեակ քակեն: Եւ «զինիցի յետինն չար քան զառաջինն», զի որ ի միոյն ոչ կարաց զերծանիլ ժուժկալութեամբ կրօնիք ի մարմնական խահից, զիա՞րդ ի բազմացն եւ ի դժնդակագունիցն, որ յանկարծակի արագ անօտրաբար ի վերայ հասանեն եւ ըմբռնեն զոգիս՝ զերելով յօրէնս մեղաց: Եւ թշուառականն այն միտք որչափ յառաջնումն քրքրեցաւ վասն միոյն թեթեւութեան, յերկրորդումն կծկի վասն ծանրութեան ախտիցն, կամ թէ յառաջ յոյս ունէր թէ՛ մկրտութեամբ քալիմ³, իսկ յետ մկրտութեանն մեղանչել չար է քան զառաջինն, զի ապաշխարութեամբ եւ տաժանմամբ արտատուաց սրբի: Կամ թէ յակամայ մեղաց դիրաւ մաքրի որ խոստո-

¹ Ա Կոր. 2 13

² ՏԶ լեզեռնաց

³ Զ քալենմ

վանութեամբ, ապա թէ կամաւ որ ի մեղս զառաժի, չար է քան զառաջինն, զի կամաւ զմեղս գործելն եւ սիրով՝ առանց զղջման մնայ, եւ անզեղջն յատակս դժոխոցն երթայ, վասն այսորիկ չար է քան զառաջինն, զի անվախճան է եւ անեզր:

Մինչդեռ Նա ընդ ժողովուրդսն խօսէր, ահա Մայր Նորա եւ եղբարք Նորա կային արտաքոյ եւ խնդրէին խօսել ընդ Նմա (ԺԲ 46):

Նախ քան զխաչն ո՛չ որ մեծամեծս իմանայր զմմանէ, եւ ո՛չ Մայրն եւ եղբարքն, վասն որոյ ասէ անետարանիչս, թէ յայնմ ժամու եկին, «մինչդեռ Նա¹ ընդ ժողովուրդսն խօսէր», որով զոռոգութիւն հպարտութեան նոցա իմանի. քանզի պարտ էր եւ նոցա՝ մտանել առ ժողովուրդսն, ապա թէ ոչ՝ անսալ մինչեւ կատարեսցէ զխօսելն եւ ապա՝ մատչել, այլ նոքա եկեալ՝ արտաքս կոչէին, զի առաջի ամենեցուն զպարծանսն ցուցանիցեն, թէ ո՛րպիսի իշխանութեամբ հրաման տայ մայրն որդոյն եւ կամ եղբարքն: Բայց «մայր» զԿոյսն Մարիամ ասէ, եւ «եղբարք»՝ զորդիսն Յովսէփայ, որպէս ասեն ոմանք. այլ որպէս Քրիստոս ո՛չ ստուգապէս որդի Յովսէփայ, այլ անուամբ միայն, այսպէս եւ նոքա՝ կոչմամբ եւ ո՛չ ճշմարիտ եղբարք Նորա: Բայց մեք ստուգեցաք, զի որպէս Մարիամ կոյս է, այսպէս եւ Յովսէփ, եւ սոքա՝ որդիք Ալփեոսի՝ ընտանի Տեառն մերոյ, զորս եղբարս ասէ՝ ըստ Գրոց սովորութեան՝ ըստ այնմ. «Ա՛րք, եղբա՛րք էք, ընդէ՞ր զրկէք զմիմեանս» (Գործք Է 26), եւ զԴովտ եղբայր իւր ասէր Աբրահամ², եւ թէ՛ «Պատմեցից զանուն քո եղբարց իմոց»՝ Դաւիթ երգէ (Մաղմ. ԻԱ 23): Եւ զի այս այսպէս է, վասն այսորիկ ոչ երբէք գտանենք ի Գիբս գոտսա որդիս Յովսէփայ ասացեալ³, այլ միայն զՅիսուս որդի Յովսէփայ, եւ գոտսա՝ եղբարս Յիսուսի:

Եւ ասէ ոմն ցՆա. «Ահա Մայր Քո եւ եղբարք Քո կան արտաքոյ եւ խնդրեն խօսել ընդ Քեզ» (ԺԲ 47):

Ինձ թուի՝ վասն զի բազումք էին ժողովեալ եւ յի էր տունն ամբոխիւ, վասն այնորիկ զայլ որ առաքեցին եւ ո՛չ ինքեանք յօժարեցան մտանել առանց հրամանի: Եւ դարձեալ՝ քանզի հրէայքն

¹ Զ > մա

² Զ ~ Աբրահամ ասէր
Ծննդ. ԺԳ 8

³ Տ լեալ

նախատեին եւ «հիւսան որդի» ասեին¹, սոքա եկեալ ի նշանս կոչէին, զի զանկածութիւն ազգին ի բաց քերիցեն յանձանցն, զորս ոչ էառ յանձն առ այն ժամու, զի մի՛ մեծամտեսցին. այլ² զամենեսեան³ կեցուցանել եկեալ էր, զիա՞րդ զԻւրսն կորուսանէր:

Նա պատասխանի ետ այնմիկ, որ ասացն ցՆա, եւ ասէ. «Ո՞վ է Իմ մայր, կամ ո՞վ եմ Իմ եղբարք» (ԺԲ 48):

Չայս ասելով՝ ո՛չ ամօք ինչ համարի զմայրն կամ թէ ուրանայ զծնօղն, զի թէ այսպէս էր, ապա ո՛չ էր բնակեալ ի⁴ յարզանդ նորա, եւ թէ ուրանայր, յայնժամ ի դէպ էր, յորժամ նոքայն նախատեին: Բայց Նա այնքան հնազանդ էր մօրն, զի եւ ի խաչին իսկ յանձնէր սիրելի աշակերտիմ⁵. այլ զայն ինչ յայտ առնէ, թէ չի՞ք ինչ Նմա յայնմանէ, թէ ոչ զամենայն պատշաճսն առնիցէ:

Եւ ձգեալ զձեռն Իւր յաշակերտսն՝ ասէ. «Ահա՛ մայր Իմ եւ եղբարք Իմ (ԺԲ 49):

Չի որ առնիցէ զկամս Հօր Իմոյ, որ յերկինսն է, նա է Իմ եղբայր եւ քոյր եւ մայր» (ԺԲ 50):

Նախ զաշակերտսն հաստատէ ի սէր Իւր՝ ասելի գութ առ նոսա քան առ ծնօղն ցուցանել՝ ձգմամբ ձեռիմն: Եւ երկրորդ՝ զնոսա եւս կամի ածել յաշակերտութիւն, քանզի եւ եղբարքն իսկ չէին հաւատացեալ ի Նա: Եւ երրորդ՝ նախամեծար զառաքինութիւնն համարի քան զբնութիւնն, զի մի՛ այլ ոք յազգականութիւն ապաստան լինելով՝ ծուլացի, զի թէ մօրն ո՛չ օգուտ գործէ, զի՞նչ ասես այլոց. այլ մի՛ միայն է ազնուականութիւն. յորժամ ոք զկամս Աստուծոյ առնիցէ, որ է փրկութիւն ինքեան, որպէս արդարքն Նոյ եւ Յոբ ո՛չ ի հաւուց, այլ յառաքինութեանց ազգաբանեցան: Եւ չորրորդ՝ խրատէ զեղբարսն եւ զայլս եւս, թէ ո՛չ միայն ըստ մարմնոյ եղբայր եմ նոցա, այլեւ Տէր, եւ Որդի Հօրն երկնատրի. ապա ուրեմն սաստն այն յօգուտ եղի Մօրն եւ եղբարցն եւ բազմացն: Եւ հինգերորդ՝ խրախոյս տայ ամենեցուն, զի ոքք կամացն Աստուծոյ կատարողք լինիցին, որպէս զԻնքն, զի ասէր. «Ես զկամս Հօր

¹ Մատթ. ԺԳ 55

² Զ զի

³ Զ զամենեսին

⁴ Զ > ի

⁵ Յովհ. ԺԹ 26-27

Իմոյ առնեմ» (Խմմտ. Յովհ. Դ. 34), ի փառս մայրութեան եւ եղբայրութեան ելանիցեն:

ԳԼՈՒԽ ԺԳ

Յարուր յայնմիկ ելեալ Յիսուս ի տանէն՝ նստէր առ ծովեզերն (ԺԳ 1):

Եւ ժողովեցան առ Նա ժողովուրդք բազումք (ԺԳ 2):

Միշտ կարգին եւ ժամանակին հոգ տանի աւետարանիչս Մատթէոս, որ է յատուկ սորա, իսկ այլքն՝ միայն բանիցն զօրութեան, քանզի յորժամ զարմացոյց, ասէ, եւ արար զոր խնդրէին ծնօղն եւ եղբարքն, որպէս ի հարսանիսն, թէպէտ նախ զսնաւիառութիւնն բժշկեաց, որպէս անդ, եւ յետոյ զպատշաճ պատիւն մատոյց ծնողին, ասպա ելեալ ի տանէն՝ առ ծովեզերն բազմէր, որպէս զի ամենեքեան անդր յընդարձակ վայրի հաւաքեալ՝ շահեսցին ի վարդապետութենէն, միանգամայն եւ զծովեզերեայսն որսասցէ, զոր տեսեալ ժողովեցան առ Նա բազումք: Իսկ առ ի միտս՝ յաղագս բազում մարդասիրութեանն ելեալ ի տանէն՝ հայրենի սեփհական աթոռոյն, յաներեւութէն ասեմ, պայծառ եւ անմատչելի լուսոյն ծայրութեամբ, զոր օրն նշանակէ, անփոյթ արարեալ Իւրոյ բնութեանն իմանալոյն եւ երկնաւորին՝ եւ նստաւ առ ծովեզեր կենցաղական մարմնոյս՝ յեզր կալով ծփական ալեաց ամբոխից մտաց եւ մարմնոյ մեղաց, որով բազում ժողովուրդք հրէից եւ հեթանոսաց ած առ Ինքն ի ձեռն հաւատոցն:

Մինչեւ մտանէլ Նմա ի նաւն եւ նստել, եւ ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերքն:

Յաղագս այնորիկ ի նաւ մտանէր, զի մի՛ զոք ի թիկանց թողուցու, այլ զամենեսեան ի դիմի կացուցէ եւ առանց խափանածուի զվարդապետութիւնն ամենեցունց պատմեցէ: Իսկ մտաւորաբար՝ մտեալ ի մարմին մահկանացու, եւ զի մի՛ թափանցումն միայն կարծեսցես, ասէ՝ «նստեալ», որ զյոյժ միութեամբ հանգչելն ցուցանէ, եւ նովաւ ի ծով աշխարհի անվնաս մնացեալ: Եւ ո՛չ միայն այս, այլեւ ցածոյց մարմնովն զալեկոծութիւն ի մարդկանէ, որով էաժ զմարդիկ յեզր ծովու կենցաղոյս՝ ազատելով ի մահուանէ եւ առնելով անմահս եւ անապականս:

Եւ խօսէր ընդ նոսա բազումս առակօք եւ ասէր (ԺԳ 3):

¹ Տ տանէ

Յորժամ ի լերինն ուսուցանէր, ոչ առակօք, քանզի անդ տխմարքն եւեթ էին եւ ռամիկքն, իսկ աստ դպիրք եւ փարիսեցիք խառն եկեալ էին: Եւ դարձեալ՝ զի ցուցցէ, թէ ի լրումն եկեալ իսկ են տառք մարգարտիցն, մանաւանդ Դաւթեան, զի ասէր. «Բացից առակաւ գրերան իմ» (Մատթ. Հէ 2): Իսկ առ ի միտս՝ յերկինս գոլով՝ իմանալաբար զիմանալիսն ուսուցանէր, իսկ ի յերկիր իջեալ եւ ի ծով աշխարհի մխեալ՝ մարմնականացս մարմնատիպ բանիւ օրինակաւ վարդապետէր:

«Ահա ել սերմանահան սերմանել (ԺԳ 4):

«Ահա»-յն գյանկարծակի երեւումն Իւր ի յերկրի նշանակէ՝ ըստ այնմ. «Ահա այր, եւ Ծագումն անուն նորա» (Ձաք. 2 12): Իսկ «ել»-ն՝ ոչ ի տեղոջէ ի տեղի, որ յամենայնի է եւ զամենայն լնու, այլ զխնամով եւ զտեսչութեամբ մարմնագգեցութիւնն օրինակէ, մինչ զի ի ծածուկ գոլով ի ծոցն Հօր՝ ցուցաւ մեզ, քանզի մեք չկարեաք մտանել առ Նա՝ վասն մեղաց պարսպին, Ինքն իւրովի ելեալ եկն առ մեզ: Եւ դարձեալ՝ «ել» ասելովն ցուցանէ, թէ նախ ծննդեամբ ելեալ էր ի Հօրէ եւ այժմ մարմնով ել ի Կուսէն՝ ըստ այնմ. «Ելի ի Հօրէ եւ եկի յաշխարհ» (Յովհ. ԺԶ 28), զի որ միանգամ ել ի Հօրէ, Նա երկրորդ անգամ եկն յաշխարհ. եւ ոչ Հայր, որ ոչ յումեք է, եւ ոչ Հոգին, որ թեպէտ ելումն է ի Հօրէ, այլ բղիսմամբ¹ եւ ոչ ծննդեամբ, զի² Հոգին ըստ անձինն բղիսումն³ միայն ի Հօրէ է եւ ոչ⁴ յՈրդոյ: Եւ պատճառն՝ զի միայն Հայր առաքէ եւ ոչ առաքի, քանզի Հայր ոչ յումեք է, վասն այսորիկ ոչ յումեքէ առաքեալ ասի ի Գիրս, իսկ Որդի զի ի Հօրէ ծնանի եւ տայ Հոգոյ, վասն այսորիկ առաքի ի Հօրէ եւ առաքէ զՀոգի:

Իսկ թէ որ ասիցէ, թէ եւ Հոգի զՈրդի առաքէ՝ ըստ այնմ. «Տէր Տէր առաքեաց զիս եւ Հոգի Նորա» (Եւ. ԽԸ 16), ապա ուրեմն եւ Որդի ի Հոգոյ է, առ այս ասեմք լուծումն, թէ զայս առաքումն Որդոյ ի Հոգոյն ըստ մարդկութեանն ասէ մարգարէն, իսկ ըստ աստուածութեանն՝ Հոգի որպէս ի Հօրէ, այսպէս եւ յՈրդոյ առաքումն⁵, վասն այսորիկ եւ առաքումն հաւասար ասի ի Հօրէ եւ յՈրդոյ:

¹ Գ բխմամբ

² Գ թէ

³ Գ ոչ] ըստ անձինն բղիսումն

⁴ Գ այլ եւ] եւ ոչ

⁵ Գ > այսպէս եւ յՈրդոյ առաքումն

Բայց աստ զՈրդոյ միայն ասէ, քանզի ելումն է ծննդեամբ ի Հօրէ. վասն այսորիկ եւ ըստ մարմնոյն ասէ թէ՛ «ել սերմանահան», իսկ «սերմանահան» զԻնքն անուանէ, որ զսերմն բարի վարդապետութեանն հանէ ի բնական բարութենէն եւ սերմանէ յերկիր, քանզի զնախ սերմանեալ բարին զօսացոյց թշնամին, յաղագս որոյ կրկին ել սերմանել:

Եւ «անդաստան», յորում սերմն անկանի, են հոգիք բանականաց, միանգամայն եւ զայն ցուցանէ, թէ սերման է ժամանակ, իսկ որայն ի հանդերձեալն բարդի: Եւ դարձեալ՝ ել ի խաչ եւ յերկինս եւ զսերմն Հոգոյն շնորհաց պէսպէս նորոգութեամբ սերմանեաց առաքելովքն՝ ըստ այնմ. «Ել ի բարձունս եւ զերկեաց զգերութիւն¹», բաշխեաց աւար որդոց մարդկան» (հմմտ. Սաղմ. ԿԷ 19), եւ որ ելն՝ ի վերոյ ել քան զամենայն երկինս, զի լցցէ զամենայն: Եւ դարձեալ՝ ի գերեզմանէ եւ ի դժոխոց հանեալ զկապեալսն քաջութեամբ Իրրով՝ ըստ նմանութեան արեւու, զի «ելանէ յառազաստէ»², եւ սերմանեաց ի հոգիս մեր զյոյս յարութեան, զի «սերմանի մարմին շնչաւոր, եւ յառնէ մարմին հոգեւոր» (Ա Կոր. ԺԵ 44):

Եւ ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ, եւ եկն թռչուն երկնից եւ եկեր զնա:

Ըստ զանազան բարուց ժողովելոցն յարմարեաց զառակս, քանզի սերմն մի է, եւ Սերմանահանն՝ մի, եւ երկիրն՝ մի, սակայն արմտիքն ի չորս բաժանեցան, եւ այս ո՛չ ի Սերմանողէն, այլ յերկրէն, այսինքն՝ յանհնազանդ հոգոցն: Բայց ընդէ՞ր ոչ ասաց, թէ զկէսն ընկալան կարծրասիրտքն եւ կորուսին, եւ զոմանս մեծատունքն եւ հեղձուցին, եւ զայլս յոյլքն եւ աղաւաղեցին. ո՛չ կամեցաւ առ այժմ կսկծեցուցանել, զի մի՛ վհատիցին, այլ թոյլ տայ անձամբ զանձն յանդիմանել ի ձեռն առակին: Եւ թէ ասիցէ որ՝ զի՞նչ ի դէպ էր ի ճանապարհին, կամ յապառաժին, կամ ի մէջ փշոցն սերմանել: Նախ՝ զի որ սերմանէն՝ ո՛չ ընտրէ զերկիրն, այլ իսառնիխտուն սերմանէ, զի առատութիւն սերմանողին ցուցցի, եւ պատճառն հատանիցի: Եւ երկրորդ՝ երկրի չէ ի դէպ, բայց ոգոց մարդկան եւ վարդապետութեան կարգի յարմար է եւ առաւել զովելի, զի որպէս զանձրեւ եւ զարեւ՝ չարաց եւ բարեաց³, այսպէս եւ

¹ Զ > եւ գեր

² Սաղմ. ԺԸ 6

³ Մատթ. Ե 45

զայս, քանզի խօսումն երկիր վասն ընդունակ գոլոյ ընդդիմակաց կրից՝ մարթ է քարին պարարտ լինել եւ ճանապարհին չլինել կոխան եւ փշաքերն ծաղիկս վերընծիւղել. եւ թէ ոչ փոփոխին, ոչ սերմանողին է վնաս, այլ ընդունողացն: Իսկ թէ ոք ընդդէմ բերցէ, թէ ընդէ՞ր ասաց. «Գինի նոր ի տիկս նորս արկանելի է եւ ոչ ի հինս, զի երկոքին պահին» (հմմտ. Մատթ. Թ 17), իսկ աստ ի ճանապարհին եւ յապառաժին գտերմն կորուսանէ, ասացուք, թէ այն շնորհացն է, որ յետ վարդապետութեանն նորանայ եւ ընդունի, իսկ այս սկիզբն վարդապետութեանն, որպէս ասէ թէ՝ «ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ»:

Արդ՝ զայս թէպէտ Տէրն լուսաւոր եւ յայտնի մեկնէ ի կարգի իւրում, սակայն ի տեղուքս զայս ասացուք, թէ սոքա են հոգիք զրկողացն, որպէս այն, որ զմի քանքարն էառ¹ եւ անարգեաց գտուիչն նորա², զի ոչ կակղացաւ ընդունել գտերմանիս նորա եւ աճեցուցանել տոհմականօք, այլ եղև կոխան ամենայն չարեաց, դիւաց եւ ախտից եւ մեղաց, քանզի ոչ մի է ճանապարհ կորստեան, այլ բազումք: Վասն որոյ թռչունն օդոյդ չարն՝ գտերմն ուման եւս քաղեաց ի սրտէ նորա, ոչ բռնութեամբ, քանզի աւասիկ ի դրունս լսելեաց մերձ էր ձայն աւետարանին, որպէս հաստ ցորենոյ ի վերայ երեսաց երկրի, այլ զի ոչ ամփոփեաց յարգանդ սրտի իւրոյ գտերմն, որ անկաւ ի նա, գործով ետ ուտել զնա, այսինքն՝ մոռացմամբ ծածկեաց զնա:

Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում, եւ վաղվաղակի բուսաւ առ³ ի չգոյէ հիւթոյ երկրին (ԺԳ 5):

Ի ծագել արեւու տապացաւ, եւ զի ոչ գոյին արմատք, չորացաւ (ԺԳ 6):

Աստ զմարդասիրութիւնն յայտնապէս ցուցանէ, զի թէպէտ ոչ էր հանդերձեալ կակղանալ խստութիւն Նորա, սակայն ոչ խնայեաց ի սերմն Իւր, որպէս այնոքիկ, որ յաշակերտութենէ յետս դարձան՝ ասելով թէ՝ «Խիստ է բանդ, ո՞ կարէ լսել դմա» (Յովի. 2 61): Նման Յուդայի, որ լուսաւ գրան Նորա եւ վաղվաղակի ծաղկեցաւ սքանչելեօք Նորա, եւ ի ժամանակի փորձութեանն եղև անպտուղ, քանզի զբանն գործով ոչ արմատացոյց ի սիրտ իւր, վասն այսորիկ զօսացոյց զնա սատանայ յառաքելական պտղոյն:

¹ Զ առ

² Մատթ. Ե 14-30

³ Զ եւ առ

Վասն զի արժան է եւ յանձանց մերոց նպաստ լինել սերման բանին հիւքոյ առաքինութեամբ, զի ի ծագել խորշակին նեղութեանց եւ վշտաց՝ ներողութեամբն Աստուծոյ յաժել փորձողին, մի՛ գայթազդեալ վրիպիցիսք ի հաւատոցն, որպէս բազումք, քանզի չեն ընդ մի համար տկարքն եւ զօրաւորքն, յորժամ վիշտք ի վերայ հասանիցեն, այլ ոմն ժուժկալէ, իսկ ոմն գթէ:

Եւ այլն անկաւ ի մէջ փշոց, եւ ելին փուշքն եւ հեղձուցին զնա (ԺԳ 7):

Թէպէտ զգօրութիւն իւրեանց փշոյ եւ տատասկի ետուն, սակայն Վարդապետն յայտնեաց զսէր Իւր սերմանել եւ ի նոսա՛ յօժարութեամբ, որպէս զի անպատասխանիք լինիցին: Եւ զի մի՛ որ սահցէ, թէ ի մէջ փշոյն զիա՞րք բուսանէր, ասէ՝ «հեղձուցին» եւ ո՛չ թէ «հեղձաւ», քանզի կամաւ մատնեցին զսերմն մեղաց եւ ապականութեանց եւ ոժտութեանց¹: Քանզի աւանիկ ընչեղն յորժամ առ Տէրն եկն եւ եցոյց զվարս ի մանկութենէ իւրմէ՝ երկիր գէր եւ պարարտ, սակայն փուշս բուսուցեալ, սրբել կամեցաւ. «Թէ կամիս կատարեալ լինել, վաճառեա զինչս քո» (Մատթ. ԺԹ 21): Եւ նա ո՛չ կամեցաւ, այլ զնաց խոժոռեալ դիմօք իբրեւ զփուշս, վասն որոյ ասաց. «Այդպիսեացդ դժուարին է յարքայութիւնն մտանել» (հմմտ. Մատթ. ԺԹ 23), այլ հրոյ ճարակ լինիցին, եթէ ոչ սրբեսցին, քանզի կամօք թոյլ ետուն փշոցն ծածկել զբանն եւ անպտուղ առնել, վասն որոյ ո՛չ փշոցն բռնութեանն, այլ նոցա ծուլութեանն է մեղադրանքն:

Եւ այլն անկաւ յերկիր բարի եւ տայր պտուղ. էր՝ որ հարիւրաւոր, եւ էր՝ որ վաթսնաւոր, եւ էր՝ որ երեսնաւոր (ԺԳ 8):

Սոքա այնոքիկ են, որ զանդաստան մտաց իւրեանց գործեցին ստուգութեամբ, որպէս նոքա, որ «թողին զամենայն եւ զնացին զհետ Նորա» (հմմտ. Մատթ. ԺԹ 27): Այլեւ ցուցանէ, թէ սակաւ են վաստակքն, եւ բազում են փառքն, միանգամայն ուսուցանէ եւ զայն, թէ սակաւք են, որ ապրելոց իցեն: Բայց «հարիւրաւոր» եւ «վաթսնաւոր» եւ «երեսնաւոր» նախ զնոսա ասէ, որ յերեք հասակս բարեգործք եղեն՝ ի մանկութիւն, յերիտասարդութիւն եւ ի ծերութիւն: Եւ երկրորդ՝ յերիս ժամանակս հաւատացին. ոմանք՝ ի մանկութիւն եւ ընդունելիք եղեն, կէսք՝ ի կատարեալ այրութիւն

¹ Տ ըրժողութեանց Զ ըրժողութեանց

[եւ] արժանատրք գտան, եւ այլք ի ծերութեանն աշակերտեցան եւ հաճոյացան: Եւ երրորդ՝ հարիւրաւն զկատարելոցն ընտրութիւնն ասէ, որք ի վերայ հաւատոյն եւ գործոյն՝ եւ արեամբ մարտիրոսացան. եւ «վաթսնատրք»՝ զնոսա, որք կոչեցան ի հանդէս եւ ետուն զմարմինս իւրեանց ի չարչարանս վասն Տեառն, բայց ի մահն, յոր փութային, ոչ ժամանեցին, այլ արձակեալք ի բռնաւորաց՝ կացին¹ մնացին բարուք մինչ ի վախճան. իսկ «երեսնատրք»՝ որք ընտրեցան յաշակերտութիւնն Քրիստոսի, եւ ոչ ժամանակ հալածանաց յարեաւ ի վերայ նոցա, այլ բարի վաստակօք իւրեանց պասկեցան՝ իբրեւ զերկիր պտղօք զարդարեալ: Եւ չորրորդ՝ որք բնական օրինօքն արդարացան, երեսնատրք են, եւ որ գրաւորականաւն՝ վաթսնատրք, իսկ [որք] աւետարանաւն՝ նեղ եւ անձուկ ճանապարհաւն ընթացան եւ ոչ միայն զմարմին, այլեւ զմիտս մաքրեցին՝ հարիւրատրք:

Եւ հինգերորդ՝ որք զհոգիս առաքիւնութեամբ խոհականին զարդարեցին, հարիւրատրք են, եւ որք զբանն ճշմարտախօսութեամբ պայծառացուցին՝ վաթսնատրք, իսկ որք զմարմինս² անբիծ³ քաղաքավարութեամբ պահեցին՝ երեսնատրք: Արդ՝ եթէ մի այր զամենեսեան արար ըստ Դաւթի՝ «զնայ անբիծ, գործէ զարդարութիւն, խօսի զճշմարտութիւն» (Մատթ. ԺԳ 2), զերեսին փառսն ժառանգէ՝ զհոգւոյն, զբանին եւ զմարմնոյն, իսկ եթէ զանազան արք, զանազանապէս փառաբանեցին: Վեցերորդ՝ ոչ զանտի փառսն ասէ, այլ զաստիս. արդ՝ որ «զամենայնն եթող եւ զնաց զկնի Նորա, զկին եւ զորդիս եւ զքորս եւ զագարակս, զհարիւրապատիկն աստ առցէ եւ զկեանսն յաիտենականս ժառանգեցէ» (հմմտ. Մատթ. ԺԹ 29), որք են աստ տօնախմբութիւնք, որպէս սրբոցն եւ նշխարաց նոցին սքանչելագործութիւնք, իսկ անդ՝ երկնից արքայութիւնն: Եւ որք զկէս ընչից իւրեանց բաշխեցին եւ մասանցն ծառայեցին իբրեւ հարկաւոր պիտոյից, նոքա վաթսնատրքն՝ յիշատակեալք եւ զովեալք ի կենցաղս ի բարիս եւ անդ եւս փառաց արժանատրեալք ըստ գոյիցն: Իսկ որք⁴ արդար վաստակօք կենցաղավարին, ոչ զայլոյ ուրուք յափշտակելով, այլ իւրեանց ընչիւքն շատանան եւ զայլ եւս օրէնսն կատարեն, երեսնատրք են,

¹ Տ եւ կացին

² Զ մարմին

³ ՏԶ անբիծ (այսպէս է և այլուր):

⁴ Զ որ

որք ի մարմնական կեանս յղփանան առատութեամբ ի պարգեւացն Աստուծոյ եւ անդ եւս հանգիստ գտանեն:

Եւ եօթներորդ` որք զերկինս ժառանգեն, հարիւրաւորք են` ըստ առաքելոյ. «Յոգիս արդարոց արանց կատարելոց յԵկեղեցիս անդրանկաց գրելոցն յերկինս» (հմմտ. Եբր. ԺԲ 23), որք են առաքեալք եւ մարգարէք, եւ կուսանք հոգւով եւ մարմնով, եւ մարտիրոսք, եւ վարդապետք քարոզօրք: Իսկ որք զդրախտն` վաթսնաւորք, եւ են նահապետք եւ հայրապետք եւ արդարք: Իսկ որք զերկիրս դրախտացեալ` երեսնաւորք, հաւատացեալ եւ սրբազան ժողովորդք եւ ուղղափառ Եկեղեցիք քրիստոնէից առանց աղանդոյ, քանզի որպէս աստիճանքն եւ գործքն զանազան, այսպէս եւ փառքն զանազան` ըստ առաքելոյ¹: Եւ ութերորդ` երեսնաւորք, որք ծառայական երկիրոյի պաշտեցին զԱստուած, իսկ վաթսնաւոր` որք վասն վարձուց մշակեցին յայգի աստուածային օրինացն, իսկ հարիւրաւորք որդիական սիրով կատարիչք եղեն կամաց երկնաւոր Հօրն: Իններորդ` կուսանաց պարգեւի պտուղ հարիւրապատիկ, եւ այս երկնային է, զոր նշանակէ հարիւրաւորն, իսկ այրեաց պարգեւի² պտուղ վաթսնաւոր, զի այսպիսիքս կրթեն զինքեանս ի գործ ողորմութեան: Իսկ ամուսնացելոց պարգեւի պտուղ երեսնաւոր, զի սոցա բաւական է լնով գտասն պատուիրանն հաւատով Սուրբ Երրորդութեանն, զի երեք տասն` երեսուն է, ըստ որում եւ զմեզ` զաշխատօղբս եւ զօգտօղս³ եւ զլսօղս³` մասին արժանի արասցէ սրբոցն ի լոյս:

Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ» (ԺԳ 9):

Ամենեքեան ունէին լսելիս, բայց զներքինն` ոչ, զոր մարգարէն ըղձացաւ առնուլ. «Յաւել ինձ ունկն ի լսել» (Ես. Ծ 4): Ուստի յայտ է, թէ հաւատոյ էին պէտք առ ընդունել զիմաստս առակին, եւ քննութեան հանճարոյ` առանց խորամանկութեան սրտի, զորս ոչ ունէին դպիրքն եւ փարիսեցիքն եւ ունէին պարզամիտ աշակերտքն, զի թէպէտ ոչ իմացան, այլ հարցմամբն լուեալ տեղեկացան, որպէս եւ⁴ ասէ.

¹ Ա Կոր. ԺԵ 41

² Գ պարգեւ

³ Գ զօգտողք եւ զլսողք] զօգտօղս եւ զլսօղս

⁴ Գ > եւ

Եւ մատուցեալ աշակերտքն՝ ասեմ ցՆա. «Ընդէ՞ր առակօք խօսիս ընդ նոսա» (ԺԳ 10):

Նախ՝ զի ցանկութիւն ունէին՝ ուսման առակին, վասն այնորիկ հարցին, եւ այն ի դէպ ժամանակի «առանձինն», որպէս ասէ Մարկոս², եւ ոչ առաջի ամենեցուն, որպէս Մայրն եւ եղբարք Նորա, քանզի խրատեցան անդ: Եւ երկրորդ՝ զի գութ խնամոց³ ունէին առ ժողովուրդն, զի նախ զնոցայն խնդրէին եւ ասպա՛ զանձանց, վասն այնորիկ ասացին թէ՛ «Ընդէ՞ր առակօք խօսիս ընդ նոսա» եւ ոչ թէ՛ «ընդ մեզ», որպէս եւ այլուր ցուցանէին թէ՛ «Արձակեա՛ զժողովուրդդ» (Մատթ. ԺԳ 15), եւ թէ՛ «Գիտե՛ս, զի զայթազդեցին ոմանք» (հմմտ. Մատթ. ԺԵ 12):

Նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. «Քանզի ձե՛զ տուեալ է զիտել զխորհուրդս արքայութեանն երկնից եւ նոցա չէ՛ տուեալ (ԺԳ 11):

Չայս ասելով՝ ոչ թէ հարկ ինչ կամ վիճակ մուծանիցէ առանձինն հասեալ նոցա, այլ զի տքա ազատք էին ի չարեաց, եւ նոքա՛ չարեօք յղիացեալ, իսկ «յանձն չարարուեստ իմաստութիւն⁴ ոչ մտանէ», - ասէ Մողոմոն (Իմաստ. Ա 4): Եւ դարձեալ՝ ցուցանէ, թէ պարզեք են իրքն, եւ ի վերուստ տուեալ՝ շնորհքն, բայց ոչ թէ պարզեք են՝ զանձնիշխանութիւնն բառնայ, այլ ըստ արժանեացն շնորհէ՛ ըստ այնմ. «Ողորմեցայց՝ որում ողորմեցայց» (Եբ 1.9 19): Յայտ ի յաջորդէս է, զի ասէ, որպէս զի մի՛ նոքա վիատիցին եւ տքա ծուլասցին:

Չի ոյր գուցէ, տացի նմա եւ յաւելցի, եւ ոյր ոչն գուցէ, եւ գոր ունիցին՝ բարձցի ի նմանէ (ԺԳ 12):

Այսինքն՝ թէ յորժամ յօժարութիւն՝ ոք եւ փոյթ յանձին ունիցի, տացի նմա ամենայն ինչ յաստուածակոյս կողմանէ անտի, իսկ յորժամ յայնցանէ թափուր իցէ ոք եւ ոչ լինիցի նպաստ յանձնէ, ասպա եւ ոչ յԱստուծոյ ինչ տացի նմա, որպէս ասէ թէ՛ «գոր ունիցի՛ բարձցի ի նմանէ»՝ ոչ յԱստուծոյ ի բաց բառնալով, այլ նորա զիր անձն չառնելով արժանի: Բարոք ասաց եւ զայն թէ՛ «գոր

¹ Գ > ունէին

² Մարկ. 7 10

³ Տ խնամոյ

⁴ Գ իմաստութեան

⁵ Տ յօժարութեամբ

կարծէն թէ ունիցի», որպէս թէ եւ զայն իսկ ոչ ունի: Եւ դարձեալ՝ զի ոյր զուցէ պտտող բարեաց, տացի նմա լսել զառակաւոր իմաստս Հոգւով, եւ ոյր ոչ զուցէ, եւ զլսելն եւս բարձից ի նմանէ, զի մի՛ իմասցի՝ ըստ այնմ. «Ամենայն ուռ, որ ոչ բերէ պտտող, կտրէ զնա» (հմմտ. Յովհ. ԺԵ 2), եւ՝ «Ամենայն տունկ, զոր ոչ տնկեաց Հայր Ին», այլ չարն, «խլեցի» (Մատթ. ԺԵ 13): Եւ դարձեալ՝ ոյր իցեն գործք արդարութեան, տաց նմա զփոխարէն ի հանդերձեայն եւ յաւելուածս փառաց շնորհեցից, իսկ ոյր ոչ են առաքինութիւնք, եւ զոր ունիցի շնորհք յԻնէն՝ առից ի նմանէ՝ ըստ այնմ. «Կտրեցէ՛ք զդա ընդ մէջ» (հմմտ. Մատթ. ԻԴ 51):

Վասն այնորիկ առակօք խօսիմ ընդ նոսա, զի տեսանեն՝ եւ ո՛չ տեսանեն, եւ լսեն՝ եւ ո՛չ լսեն եւ ո՛չ առնուն ի միտ (ԺԳ 13):

Եթէ չտեսանէին, ապա պարտ էր զաչս նոցա բանալ, իսկ եթէ բնութեանն չէր կորութիւնն, այլ կամացն եւ անձնիշխանութեանն, զայն զի՞նչ հարկ էր առնել: Վասն այնորիկ ո՛չ ասաց լոկ, թէ չտեսանեն, այլ թէ՝ «տեսանեն՝ եւ ո՛չ տեսանեն», քանզի տեսանէին զդէս հանեալ եւ ասէին. «Բեռդ զերուդաւ հանէ» (հմմտ. Դուկ. ԺԱ 15), եւ լսէին, զի առ Աստուած մերձեցուցանէր եւ բազում միաբանութիւն խօսէր զԻւր ընդ Աստուծոյ, ասէին թէ՝ «Չէ՛ դա յԱստուծոյ» (հմմտ. Յովհ. Թ 16): Կամ թէ տեսող ասեն զինքեանս Օրինօքն եւ կոյրք են, եւ լսեն զբանս մարգարեիցն եւ ո՛չ առնուն ի միտ զԵկեալն, զոր մարգարէքն զուշակեցին՝ ըստ այնմ. «Ի դատաստան եկի յաշխարհս, զի որք ոչ տեսանենն՝ տեսցեն¹, եւ որք տեսանենն՝ կորասցին» (Յովհ. Թ 39). եւ զի մի՛ ոք կարծիցէ թշնամանք միայն զիրն, ամէ զմարգարէն վկայ:

Եւ կատարի առ նոսա մարգարէութիւնն Եսայեայ, որ ասէ. «Լսելով լուիջիք եւ մի՛ իմասցիք եւ տեսանելով տեսցիք եւ մի՛ տեսցիք» (ԺԳ 14):

Ձի քանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, եւ ականջօք իրեանց ծանունս լուան եւ զաչս իրեանց կափուցին (ԺԳ 15):

Լի հաւաստութեամբ անբաստանէ զնոցանէ մարգարէն՝ ասէ, քանզի չասաց թէ՝ «չտեսանէք», այլ թէ՝ «տեսանէք՝ եւ ո՛չ տեսանէք», այսինքն՝ մարմնով միայն եւ ո՛չ հոգով: Կամ տեսեալ՝ չտեսանիցէք, քանզի անձամբ իսկ զանձանց խցին զականջս եւ կա-

¹ Զ > որք ոչ տեսանենն՝ տեսցեն

փուցին զաչս, եւ թանձրացուցին զսիրտս իւրեանց, որպէս վահան կամ սալ դարբնի, եւ ոչ միայն չլսել կամէին, այլեւ «ծանունս» լսէին, այսինքն՝ դժուարանային ի լուրն: Եւ զայս է՞ր վասն:

Ձի մի՛ երբէք տեսցեն աչօք, եւ ականջօքն լուիցեն, եւ սրտիւքն իմասցին, եւ դարձցին, եւ բժշկեցից գնասա»:

Այսինքն՝ զի մի՛ դարձցին, եւ թողցի յանախութիւն չարեաց նոցա, որով յայտ է, թէ կամաւ եւ յօժարութեամբ սրտի խուսափեցին, քանզի թէ կամեցեալ էին, մարթ էր դառնալ եւ բժշկութիւն ընդունել ի ձեռն ապաշխարութեան:

Բայց ձեր երանի՛ է աչացդ, զի տեսանեն, եւ ականջացդ ձերոց, զի լսեն (ԺԳ 16):

Ո՛չ զմարմնատր տեսանելեացս եւ զլսելեացս ասէ, այլ զհոգւոյն աչացն եւ զսրտին լսելեացն, քանզի երեւելի աչօք եւ փարիսեցիքն եւ հրեայքն տեսին զՔրիստոս եւ զձայն Նորա լուան, բայց ո՛չ հաւատացին: Այս ուրեմն երանէ զաչս եւ զականջս, զի այնպէս տեսանէին զՔրիստոս՝ իբրեւ զՈրդի Աստուծոյ, եւ որպէս պատշաճ էր լսել որպէս Որդւոյն Աստուծոյ՝ ա՛յնպէս լսէին, վասն զի հրեայք էին տքա՝ սնեալ ընդ նոսա, բայց ո՛չ վնասեցան ի մարգարէութենէն, զի զարմատս բարեաց յանձին ունէին: Ոմանք զայս վասն յարութեան եւ դատաստանի ասեն խօսել ընդ նոսա եւ երանել, զի տեսանեն հայրական փառօք եկեալ յերկնից եւ լսեն զլուրն երանատէտ: Այլ ինձ ի դէպ առաջինն թուի:

Ամէ՛ն ասեմ ձեզ, զի բազում մարգարէք եւ արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէք եւ ո՛չ տեսին, եւ լսել զոր լսէք եւ ո՛չ լուան (ԺԳ 17):

Եւ այս զհա՞րդ իցէ, զի ոչ միայն հրեայք ոչ տեսին, այլեւ արդարք: Գիտելի է, զի երկակի տեսութիւն է ի մեզ եւ լսելութիւն՝ ներքին եւ արտաքին: Արդ՝ զոր արդարքն ըղձացան տեսանել մարմնով՝ ըստ Դաւթի թէ՛ «Փափագէ անձն իմ ի գաւիթս Քո» (Սաղմ. 2Գ 3), զի «երեւեցայց երեսացդ Աստուծոյ» (Սաղմ. 10Ա 3), զայն ո՛չ ետես, այլ հոգւով, յայտ է ահա՝ «Յուցեր ինձ զճանապարհս Քո՛ կենաց, լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց Քոց» (Սաղմ. ԺԵ 11), եւ թէ՛ «Արահամ ցանկացաւ տեսանել զօր Իմ, ետես եւ ուրախ եղի» (Յովն. Ը

¹ S > pn

56), եւ՝ «Տեսաք մեք զնա, եւ ոչ գոյր նորա տեսիլ», - ասէ Եսայի (Ես. ԾԳ 2), այսինքն՝ հոգւով: Թէպէտ տեսիլ մարմնոյ Նորա տակաւին ոչ էր ի միջի, իսկ հրէայքն մարմնով միայն տեսին եւ ոչ հոգւով, բայց սոքա՝ հոգւով եւ մարմնով՝ հոգւոյն տեսութեամբ քան զհրէայսն զերազանցեցին եւ մարմնոյն լսելութեամբ արդարոցն վերագոյն եղեն, յաղագս այնորիկ երանեցան: Եւ դարձեալ՝ ցուցանէ զՀնոյն միաբանութիւն ընդ Նորոյս, թէ ոչ միայն տեսանէին զհանդերձեալսն, զոր Քրիստոս կատարեաց, այլեւ խօսէին վասն Նորա եւ ցանկային՝ ըստ այնմ. «Ետես Եսայի զփառս Նորա եւ խօսեցաւ վասն Նորա» (հմմտ. Յովհ. ԺԲ 41):

Եւ արդ՝ լուարո՛ք դուք զառակ սերմանացանին (ԺԳ 18):

Այսինքն՝ իմացայք զառակաւոր իմաստս, որ այլ իրս ասելով՝ ա՛յլ իմն ծանուցանէ. կամ թէ՛ կամիք ուսանել զառակաւոր բանսն. կամ՝ լսեցէ՛ք դուք արժանաւորքդ, որք տեսանէք եւ լսէք եւ ի միտ առնուք:

Յամենայնէ, որ լսէ զբանն արքայութեան եւ ոչ առնու ի միտ, զայ չարն եւ յափշտակէ զսերմանեալն ի սիրտ նորա. այն է, որ առ ճանապարհան սերմանեցաւ (ԺԳ 19):

Սկսանի՛ մեկնել լուսաւոր վարդապետութեամբ զառակն եւ «բան արքայութեան» զԱւետարանն ասէ, որ ոչ մարմնական բարի, այլ հոգեւոր եւ աստուածային: Քարոզէ երկնից թագաւորութեանն ժառանգս լինել աշակերտելոցն հաւատով, բայց «լսել» եւ «ոչ առնուլ ի միտ»՝ որպէս հրէայքն, որք ոչ բացին զառագաստ սրտին եւ ծածկեցին յօժարութեամբ զսերմն բանին, եւ միշտ յիշատակօք չզգուշացան, վասն այնորիկ յափշտակեաց սատանայ՝ ոչ բռնութեամբ, այլ հաւանութեամբ անձնիշխսան մտացն ի մոռացօնս էած աստուածեղէն բանիցն՝ կոխսան լինելով ախտիցն:

Եւ որ յապառաժին սերմանեցաւ, այն է, որ իբրեւ լսէ զբանն եւ վաղվաղակի խնդրութեամբ ընդունի զնա (ԺԳ 20):

Բայց քանզի ոչ ունի արմատս յինքեան, այլ առ ժամանակ մի է՝² ի լինել նեղութեան եւ հալածանաց վասն բանին, վաղվաղակի գայթազղին³ (ԺԳ 21):

¹ Զ սկսաւ

² Զ > է

³ Զ գայթազղեաց

Ի հրաշիցն պակուցեալ կամ խոստմանցն տենչացեալ՝ ենուտ յունկանն խնդութեամբ եւ ընկալաւ զբանն, բայց զգործն ոչ հետեւեցոյց արժանատր բանին, այլ առ ժամանակ մի շնորհօք փայլեաց, իսկ յորժամ հալածուին եղեւ, զի ընտիրքն երեւեսցին եւ հալածիչքն յանդիմանեսցին, նա պարտասեալ յանդիմանեցաւ: Բայց այսմ ոչ եթէ խորշակ փորձութեանն եղեւ պատճառ, այլ վասն զի չունէր արմատս, որպէս ասաց, վասն այնորիկ ցամաքեցան սերմանիքն:

Իսկ որ ի մէջ փշոցն սերմանեցաւ, այն է, որ իբրեւ լսէ զբանն, եւ հոգք աշխարհիս եւ պատրանք մեծութեան հեղձուցանեն զբանն, եւ լինի անպտուղ (ԺԳ 22):

«Փուշ» զկծեցուցիչ սէր աշխարհիս ասէ՝ ըստ այնմ. «Փուշ բուսուցէ քեզ երկիր» (հմմտ. Ծննդ. Գ 18). արդ՝ որ ի սէր աշխարհիս հարեալք են եւ ջանան Տեառն ծառայել, ոչ կարեն, քանզի «ոչ կարէք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի» (Մատթ. 2 24): Վասն այնորիկ ասէ, թէ այն է, որ լսէ զբանն եւ կամիցի առնել, սակայն ոչ աշխարհս, այլ «հոգք աշխարհիս», եւ ոչ մեծութիւնն, այլ «պատրանք մեծութեանն», քանզի ամենայն մեծութիւնք պատրանք եւեթ են եւ ոչ հաստատուն իրք, զօրացեալ ի վերայ բանին՝ հեղձուցանեն եւ առ սակաւ սակաւ ոսացուցեալ՝ զօսացուցանեն: Եւ այս ոչ ի փշոցն բռնութենէ, այլ ի մտացն ծուլութենէ, զոր թէ արհամարհեսցուք, դիւրաւ զբանն բեղմնատրեալ աճեցուցուք: Արդ՝ երեք մասունքն արտաքս ելին. ճանապարհ եղեալքն մեղաց եւ ի հաւատս եկեալ, եւ մեռեալքն առանց գործոց, եւ ընչաւէտ մեծատունքն: Իսկ որք շահեալ օգտեցան, ասէ եւ զայն:

Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ, այն է, որ իբրեւ լսէ զբանն եւ ի միտ առնու, եւ տայ զպտուղ. է՝ որ հարիւր, եւ է՝ որ վաթսուն, եւ է՝ որ երեսուն» (ԺԳ 23):

Աստ ուսուցանէ, թէ ոչ ի սերմանողէն կամ ի սերմէն, այլ յընդունօղ երկրէն զանազան եղեն սերմանքն, եւ ոչ միայն ասացեալ առաջինքն, այլեւ պարարտ երկիրն զունակ զունակ կերպարանս ցուցին՝ հարիւր եւ վաթսուն եւ երեսուն: Չի ստուգապէս իմասցիս, թէ ոչ բնութեան գործ է այն, այլ մտաց. կամ՝ զի երեք դասք ար-

¹ S > ոսացուցեալ

տաքս ելին, եմուտ մին¹ փոխանակ երիցն՝ երեք աստիճանօք հա-
ւասարեալ, ո՛չ թուոյն զուգութեամբ, այլ փառացն բազմութեամբ:
Եւ դարձեալ՝ յայսմ տեղոջ զմարդասիրութիւնն եւ զհեզութիւնն
Իւր յայտ առնէ, քանզի ո՛չ ասաց՝ որ հարիւր չառնիցէ, խոտան է,
այլ թէ՛ եւ որ² զվաթսուն եւ զերեսուն առնիցէ, ընդունելի է, որով
դիւրին կազմեաց փրկութեան ճանապարհ, որպէս զի թէ կուսու-
թեամբ եւ անընչութեամբ ոչ կարիցես ընթանալ դու, ամուսնու-
թեամբ եւ անընչութեամբ ընթացիր, եւ թէ ո՛չ այնու, ընդ Քրիստոս-
սի բաժանելով զինչսն՝ արժանատր լինիջիր³ երրորդի մասինն:
Եւ այս առակ յայտսիկ աւարտեցաւ:

Այլ առակ արկ առ նոսա եւ ասէ. «Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն,
որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում (ԺԳ 24):

Նախ՝ երեւելիքս ծանօթ քարոզք են աներեւութիցն՝ ըստ առա-
քելոյ⁴, վասն այտորիկ ընդել եւ զգալի օրինակօք զիմանալիսն
տպաւորէ՝ նման եւ յարմար բաղդատութեամբ. «Նմանեցաւ ար-
քայութիւնն երկնից՝ առն...»: «Այր» յաղագս ներգործական զօ-
րութեանն զԱստուած անուանէ՝ զսերմանօղն ամենայն բարեաց
յանդաստան աշխարհի բանական բնութեանս, որ Իւր է ազա-
րակ՝ ստեղծուածք եւ գործք ձեռաց, որով ծանուցանէ, թէ Աս-
տուած բարի է բնութեամբ եւ բարեաց պարզելօղ, չարի եւ ո՛չ ի-
միք՝ ըստ այնմ թէ՛՝ «Բարի է Իսրայէլի Աստուած» (Մաղմ. 4Բ 1), եւ թէ՛
«Արար զամենայն, եւ ահա բարի են» (հմմտ. Ծննդ. Ա 31): Բայց ո՛չ զա-
մենայն բարեացն մասունս ետ գործով, այլ զսերմն միայն զօրու-
թեամբ ի մեզ տնկելով, որպէս զի պատուիրանացն, որ ետ մեզ յե-
տոյ, Նորին զօրութեամբ գործոց յառաջագոյն առաք, զի կատա-
րեսցուք եւ մի՛ պակաս ցուցցուք առօրք զբարիս քան զՏուողին
սերմանիս: Եւ երկրորդ՝ զհերձուածողացն ժողովս յառաջագոյն
ազդէ եւ «այր» զԻնքն անուանէ՝ կատարեալ աստուածութեամբ եւ
մարդկութեամբ մարդն Յիսուս Քրիստոս Արքայն երկնից Եկե-
ղեցոյ, որ սերմանեաց զսերմն ուղղափառ հաւատոյ յագարակ Ե-
կեղեցոյ, զոր ստացաւ անբիծ եւ անարատ արեամբն Իւրով՝ ըստ

¹ Գ մինն

² Գ ~ եւ որ թէ

³ Գ լինիջիր

⁴ Դոմմ. Ա 20

⁵ Գ > թէ

այնմ. «Դու ես վեմ»՝ հանդերձ դաւանութեամբդ, «եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի Իմ» (Մատթ. ԺԶ 18):

Եւ ի քուն լինել մարդկան՝ եկն թշնամի նորա եւ ցանեաց ի վերայ որոնն ի մէջ ցորենոյն եւ զնաց (ԺԳ 25):

Ի ննջել մարդկային բնութեանս ծուլութեամբ՝ եկն Բանասարկուն, որ թշնամի Աստուծոյ է եւ ասի, եւ խառնեաց զմեղս ի մէջ բարեացն՝ գունելով եւ՝ բարոյն կերպարանօք զչարն, որով պատրեաց, եւ զնաց ծածկեաց զանձն, որպէս թէ չէ բնաւին ինքն պատճառ մեղացն: Եւ այս ե՞րբ. ո՛չ յառաջագոյն, այլ յորժամ ետես, թէ պտուղս բեղմնատրս ցուցին, ոմն՝ հարիւր եւ ոմն՝ վաթսուն եւ ոմն՝ երեսուն, քանզի ո՛չ անդ ժողի, որ ոչ են բարեօք փարթամացեալ: Բայց ասիցէ որք, թէ որք ննջեցին, զի՞նչ ընդհատ է յառաջնոցն, որք յասպառաժին կամ ի ճանապարհին սերմանեցան: Ասասցուք բազում իրօք, զի նոքա անդէն ի սկզբանն յափշտակեցան՝ չեւ եւս արմատս հաստատեալ, բայց ըստ բազում մեքենայիւք ջանացաւ խանգարել, որով խրատիմք, թէ միշտ զգուշութեան պէտք են արթուն լինել, զի մի՛ յորոմանցն ապականիցիմք:

Եւ դարձեալ՝ տազնապ կախէ այսու զպարանոցէ իշխանացն, որոց հաւատացեալ իցեն զպահպանութիւն անդաստանաց, նաեւ հնազանդելոցն՝ ըստ այնմ. «Արածեա զոչխարսդ Իմ» (Յովհ. ԻԱ 16), եւ թէ՛ «Արածեցէք որ ի ձեզ զհօտսդ» (Ա Պետ. Ե 2), եւ թէ՛ «Նոքա տքնին վասն ոգւոց ձերոց» (Եբր. ԺԳ 17), որք դատարկացեալ ի գործոց եւ [յ]անփոյթ առնելոյ զհօտից՝ որպէս հովիւք հնոյ ժողովարանին, խարդախանօք թշնամին եմոյծ աղանդ հերձուածողօք յԵկեղեցի: Չորոմն» ասաց ընդդէմ ճշմարտութեանն, որպէս զսուտ մարգարէսն եւ զսուտ առաքեալսն եւ զդերաքրիստոսն հակառակ Քրիստոսի, այսպէս եւ զհերձուածօղսն ներհակ վարդապետաց, բայց ո՛չ ի բռնութենէ, այլ ի հովուացն անգործութենէ, որք սպրդեալ զաղտագողի գորոմն անիրաւ հերձուածոյն ցանեցին ի մէջ ուղղափառ սերման հաւատոյն: Քանզի ո՛չ զայլ ինչ սերմն մեղաց եւ կամ չար գործոց, այլ գորոմն, որ նման էր ցորենոյն՝ զչարափառութիւն սնափառ ախտիւ վարակեալ. եւ ին-

¹ Զ > եւ

քեանք բարձեալ ի կենաց գնացին, բայց աղանդն մնաց յԵկեղեցի ի¹ յիշատակ չարեաց նոցին:

Եւ իբրեւ բուսաւ խոտն եւ արար պտուղ, ապա երեւեցաւ եւ որոմն (ԺԳ 26):

Յիրաւի յաճման հասակին եւ ի կատարեալ զգայութեանցն ախտ չարութեանն գործոց, ցանկութեամբն հանդերձ, երեսի յարտալով ի մարմինն: Եւ դարձեալ՝ հերձուածողքն զառաջինն թագուցանէին զանձինս եւ յորժամ մեծարանաց արժանի լինէին եւ փառս ընդունէին, քանզի այս է «խոտ»-ն, յայնժամ համարձակեալ՝ զթոյնս հեղուին:

Մատուցեալ ծառայք տանուտեառնն ասեն ցնա. «Տէր, ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում, արդ ուստի՞ ունիցի զորոմն» (ԺԳ 27):

Աստ զխնամակալութիւն սրբոց հրեշտակացն նշանակէ, միանգամայն եւ վկայս ցուցանէ աստուածութեանն, զի զբարին սերմանեաց յագարակի աշխարհի, եւ առ այսու եւ զայն եւս, թէ ուսման են կարօտ եւ սիրողք: Եւ դարձեալ՝ առաքելոցն է ասացուածս, որք ի տանէ Տեառն Եկեղեցոյ ուսեալ զհաւատս ուղղափառս՝ սերմանեցին յԵկեղեցի, ուստի եւ զնեռինն ծանեան իրս եւ ծանուցին յառնել ի վերջին ժամանակին:

Եւ նա ասէ ցնոսա². «Այր թշնամի արար զայն» (ԺԳ 28):

Յուցանէ, թէ ո՛չ է Աստուծոյ, այլ այլոյ ումենն թշնամոյ՝ արարուած չարութիւն, եւ ճշմարտապէս թշնամի ո՛չ միայն բնութեանս, այլեւ Աստուծոյ, քանզի սկիզբն դրժութեանն ո՛չ յայնմանէ ինչ է, զի ի մեզն³ մեղանչեաց, այլ զի եւ կամացն Աստուծոյ հակառակել իշխեաց: Եւ դարձեալ՝ յայտնապէս զհերձուածողսն «թշնամի» ասէ, զի որք սուտ խօսեցան՝ խաբեալք յարգանդէ եւ օտարացեալք ի մօրէ Աւագանէ, թշնամիք են Աստուծոյ, զի զուղիղ բանն խաբարեալ եղծին եւ զչար հերձուածս հաստատեցին:

Ասեն ցնա ծառայքն. «Կամի՞ս, զի երթիցուք քաղեսցուք զայն ի բաց»:

Ո՛վ երանելի հպատակութեան ծառայիցն, զի ո՛չ վայրապար հայցէին հրաման, այլ զկամացն պէտս կատարէին, քանզի թէ-

¹ Զ > ի

² Զ > ցնոսա

³ Զ մեղն

պէտ հոգիք են հարկաւորք ի սպասատրութիւն առաքեալք¹, բայց ոչ առանց կամացն Աստուծոյ ներգործեն ինչ՝ ըստ մարգարէին²: Միանգամայն եւ գտադոկայն նոցա ի չարեացն նշանակէ, որ եւ հայցեն, զի սուրբ սերմանքն ոչ կորնչիցին, եւ որոմունքն ըստ արժանեացն դատիցին: Եւ դարձեալ՝ արդարոց աղօթիւք ոչ բառնայ Աստուած զաղանդ չարափառացն, որպէս յորժամ ասէին. «Կամի՞ս, զի իջուցուք հուր», եւ Նա ասէ՝ ոչ (հմմտ. Ղուկ. Թ 54), որպէս եւ ոչ զաստանայ եւ կամ զցանկութիւնս ի մարմնոց եւ զհալածիչս յաշխարհէ, զի փորձքն երեւեսցին, եւ աղանդասարքն իրաւամբք պատուհասեսցին, զայնքան ժամանակս տեղի տուեալ զղջման, եւ նոքա ոչ ապաշխարեցին, որպէս եւ ի հնումն ասէր. «Ոչ ի միում ամի բարձից զագգն, զի մի՛ զագանքն բազմասցին» (հմմտ. Ելք ԻԳ 29):

Եւ նա ասէ ցնոսա. «Մի՛, զուցէ մինչ քաղիցէք զորմն, եւ զցորեա՛նն ընդ նմին ի բաց խիցէք (ԺԳ 29):

Նախ հրաժարեցուցանէ, զի խափանելով զփորձութիւն դիւստի՝ դադարէ եւ բարեգործութիւնն, զի յաղագս մարտի օդային այսոցդ՝ զօրանան ճգունք բարեպաշտիցն, եւ հանդիսանան զործք արգասատրք ընդդէմ չարին: Եւ երկրորդ՝ զսպանութիւնսն կարծէ այսու. մի՛ զի մի՛ ցորենոյն մեղանչիցեն, եւ միս՝ զի կրելոց են որոմունքն զանհնարին պատիժս, որք զանբժշկելին ախտացան, զի թէ զէնս կազմիցէք, ասէ, կոտորել զհերետիկոսս կամ բառնայ զհալածիչս, հարկ լինի եւ զոմանս ի սրբոցն ընդ նոսա կոտորել:

Թո՛յլ տուք երկոցունց³ աճել ի միասին մինչեւ ի հունձս (ԺԳ 30):

Անսասջիք, ասէ, դէպ ժամանակի, զի բազումք ի նոցանէ ցորեան լինելոց են, որ այժմ որոմունքն են, զի մարթ է դառնալ եւ լինել պիտանացուս, եթէ կամիցին: Իսկ զի՞նչ այն թէ՛ «երկոցունց աճել ի միասին», այսինքն՝ կատարիլ բարեացն բարեօք իրեանց եւ չարեացն չարեօք իրեանց, կամ միմեանց պիտոյանան ի կենցաղս, որպէս հատ ցորենոյ՝ փեճեկին իւրոյ: Բայց քանզի կամի խլել զորոմունսն, սակայն վասն անգիտութեան հնձողացն այժմ ոչ կամի: Ուստի՞ սասցեալ է⁴ արդեօք, թէ հրեշտակք ոչ գիտեն¹

¹ Եբր. Ա 14

² Սաղմ. ԾԲ 20

³ Զ երկոցունցդ

⁴ Զ սասցէ] սասցեալ է

զտանջանաց արժանիսն. ասացուք՝ ո՛չ, յայտ ի մարգարութենէ՛ն է. «Յորոյ վերայ նշանն է,- ասէ,- մի՛ մերձենայցէք» (Եզեկ. Թ՝ 6), եւ յելսն Եզիպտոսի զսենս դրանց երբայեցոց օծանել ետ արեամբ², զի մի՛ մտցէ սատակիչն, քանզի յորժամ յայտնէ եւ զոր յայտնէ՝ զայն զհտեն, որպէս ասելոց է թէ՛ «Ասացից ցինձօղսն ի կատարածի»: Եւ թէ ասէ որ՝ ընդէ՞ր ոչ այժմ յայտնէ, նախ՝ որպէս ասացաւ, զի զղջասցին, եւ երկրորդ՝ զի ուսուցէ, թէ ո՛չ ամենեցունց վրէժխնդրութիւնն աստ է, այլ մասնատրաց՝ ի խրատ այլոց, այլ անդ բնաւից կատարեալն հատուցմունք:

Եւ ի ժամանակի հնձոց ասացից ցինձօղսն. «Քաղեցէք նախ զորմնդ եւ կապեցէք զայդ խրճունս առ ի յայրել, եւ զգորեանն ժողովեցէք ի շտեմարանս ին՝»:

Յայտնապէս զԻնքն դատարոր գոյ ցուցանէ՝ ըստ Յովհաննու ձայնին³, եւ Տէր փառաց եւ տանջանաց, բայց «ժամանակ հնձոց» կամ զհրաքանչիւր ելս մահուն ասէ եւ զպատուհասին ժամանակն, յորում լրացեալ մեղօք տանջին ի հրեշտակաց տանջողաց՝ ըստ այնմ. «Առաքեաց ի նոսա տանջանս ի ձեռն հրեշտակի չարի» (Մատթ. ՀԷ 49), եւ կամ՝ զկատարած աշխարհիս, որպէս Ինքն ասէ⁴, որք քաղեն զորոմունսն յաւոր նեղինն, իբր այն՝ «Որ քաղէ զոգիս իշխանաց» (Մատթ. ՀԵ 13): Եւ դարձեալ՝ քաղեն ի նոցանէ զմասնատր բարութիւնս, որպէս զի ամենեւին այրելիքն մնացեն, եւ կապեն խրճունս զգօղունսն առ ի յայրել յաւիտենական գեհեանն՝ ըստ այնմ. «Կապեցէք զդորա ձեռս եւ զոտս» (Մատթ. ԻԲ 13), եւ թէ՛ «Ի զործս ձեռաց իւրեանց⁵ կապեսցին մեղատորք» (Մատթ. Թ՝ 17), այսինքն՝ անգերծանելի գոլ ի տանջանսն՝ իբր զկապեալ շղթայի համագումար ի միասին ըստ խրճան օրինի, քանզի մինչ ի⁶ ցորեանն իցէ որոմն, խնայել պարտ է, զի թերեւս դարձցի, եւ զի մի՛ կոխիցի ցորեանն, իսկ յորժամ անգեղջ մնայցէ եւ քաղիցի, այնուհետեւ ո՛չ ունիցի անխայրմն:

¹ Զ > թէ հրեշտակք ոչ զհտեն

² Ելք ԺԲ 21-23

³ Մատթ. Գ 12

⁴ Մատթ. ԺԳ 39

⁵ Զ > իւրեանց

⁶ Զ մօտ ի] ի

Բայց ընդէ՞ր նախ գործուն առաջին. զի մի՛ կարծիցեն, թէ եւ ցորեանն ընդ նոսին ժողովիցի. վասն որոյ եւ ասէ թէ՝ «եւ¹ զցորեանն ժողովեցէք ի շտեմարանս ին»՝ յարքայութիւնն վերին, որ պատրաստեալ է ի սկզբանէ նոցին, որք հաց սուրբ գտան եւ կերակուր Աստուծոյ եւ մարդկան եղեն: Եւ երկրորդ՝ զի ըստ կարգի այնպէս հանդիպելոց է, զի նախ մեղաւորք յայրումն առաքին, եւ ասպա արդարքն նման Տեառն փառաւորին: Լսի եւ այսպէս թէ՝ բարձէք զմեղսդ յաշխարհէ եւ կասեցէք ի գլուխս սատանայի, որ պատճառ եղեւ նորին՝ բորբոքիլ հրով զեհենին՝ ըստ այնմ. «Պակասեսցին մեղաւորք յերկրէ, եւ ամբարիշտք մի՛ եւս գոցին ի նմա²» (Սաղմ. 64 35), եւ արդարքն զերծեալք ի պատրանաց նորա՝ ժողովին ընդ հրեշտակս եւ օրհնեն զԱստուած յաւիտեան:

Այլ առակ արկ առ նոսա եւ ասէ. «Նման է արքայութիւնն երկնից հատոյ մանանխոյ, զոր առեալ մարդոյ՝ սերմանեաց յագարակի իւրում (ԺԳ 31):

Որ փոքր է քան զամենայն սերմանիս, եւ յորժամ աճիցէ, մեծ է քան զամենայն բանջարս, եւ լինի ծառ, մինչեւ զայ թռչնոց երկնից եւ հանգչել յոսոս նորա (ԺԳ 32):

Որք բնախօսեցին, ասեն զմանանխոյ անփտելի ունելով բնութիւն, եւ յորում տեղոջ անկանի՝ բուսանի, եւ կատարեալ է ըստ ձեւոյն եւ ձճեաց անուտելի, եւ զօրաւոր ըստ որակին: Արդ՝ ըստ այսմ զաղափարի՝ «հատ մանանխոյ» զԻնքն անուանէ՝ անփուտ գոլ ըստ աստուածութեանն եւ մարդկութեանն, որ սերմանեալ ի մարդկային բնութիւնս՝ «բուսաւ յերկրէ»՝ ըստ մարգարէին³, կատարեալ լրմամբ՝ աստուածութեամբ եւ մարդկութեամբ, զօրաւոր հրաշիւք եւ անարատ ի մեղաց, զի ուտիճն մեղսասէր ո՛չ կարաց կամագիտ լինել Նորա: «Որ փոքր է [քան զամենայն սերմանիս]». կամ զի ի դոյզն եւ յաղբատ աղջկանէ ծնաւ ի յայրի, եւ կամ ըստ կարծեաց հրէիցն, եւ կամ զի փոքրկացաւ՝ առեալ զկերպարանս ծառայի, նաեւ ըստ մահունն եւս: Իսկ յորժամ աճեաց Անաճելին բնութեամբ ըստ մարմնոյ, որպէս ասացեալ է, թէ «աճէր հասակաւ» (հմմտ. Նուկ. Բ 52), եւ կամ ի ձեռն սքանչելեացն մեծացաւ եւ փառաւորեցաւ քան զամենայն մարդ՝ սերմանեալ ի մարդկանէ, զթագաւորս ասեն եւ զմարգարէս, եւ եղեւ ծառ կենաց ի խաչին,

¹ Զ > եւ

² Զ սմա

³ Սաղմ. 27 12

մինչ ձգել առ Ինքն տնօրինարար զթռչունն սուրբ երկնային՝ զՀոգին աղանակերպ իջեալ հանգուցեալ ի վերայ գլխոյ Նորա¹, զոր «ոստ» ասաց, քանզի ոչ ըստ աստուածութեանն, այլ ըստ մարդկութեանն ընկալաւ տնօրինարար:

Եւ դարձեալ՝ զքարոզութիւն ատարարանին, որ ի սկզբանն ի ձեռն առաքելոցն ի հատ մանանխոյ առակէ, իբր այն զի ասէ. «Մի՛ երկնչիր, հօ՛ւտ փոքրիկ» (Ղուկ. ԺԲ 32), քանզի իբրեւ զտերմն զՀոգին շնորհաց առին, որով աճեցեալ եղեւ ծառ մեծ, զի թագաւորեաց ատարարանն մինչ ի ծագս երկրի՝ ըստ այնմ. «Ըստ ամենայն երկիր ել բարբառ նոցա, եւ մինչեւ ի ծագս [աշխարհի եւ խօսք նոցա]» (Սաղմ. ԺԸ 5), որով առաւել գտաւ քան զամենայն բան մարդկային, որ ճարակ տուաւ բնութեանս մերոյ, մինչ զալ հոգոց մարգարէից եւ արդարոց եւ թռչնոց զօրութեանց երկնից եւ հանգչել ի քարոզութիւնս առաքելոցն, որք մեծացան բանիւ Նորա: Որպէս թէ լցան² իղձք բաղձանաց առաջին արդարոց, եւ հանգեան ի տառապանաց, զոր վասն բնութեանս կրէին: Եւ կամ՝ թռչունք հեթանոսք աշխատեալք մարմնով եւ հոգով յօդս եւ ի ծովու՝ ընդ հովանեաւ ատարարանին մտին եւ հանգեան ի մեղացն բեռանց՝ ըստ այնմ. «Եկայք առ Իս, ամենայն աշխատեալք եւ բեռնատրք, եւ Ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 28):

Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ. «Նման է արքայութիւնն երկնից խմորոյ, զոր առեալ կնոջ՝ թագոյց ի գրիս երիս ալեր, մինչեւ ամենայն խմորեցաւ»³ (ԺԳ 33):

Կրկին իմաստ եւ ա՛յս առակ ընձեռէ. նախ՝ զմարմինն Իւր «խմոր» անուանէ, որ ծնեալ ի ձեռն կնոջ՝ խառնեաց ի զանգուած տանն Աղանայ՝ հոգւոյ եւ մարմնոյ եւ մտաց, մինչեւ ամենայնն անմահացաւ յուսով յարութեանն՝ լինելով «առաջին պտուղ ննջեցելոց» (Ա Կոր. ԺԵ 20), կամ՝ Եկեղեցի ի ձեռն հաւատոյն, որ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ, մկրտեալ յանուն Նորին: Եւ կամ «կին» զհոգի մարդոյ ասէ, զի թէպէտ բնութիւնն⁴ արու է յաղագս ներգործութեանն, բայց յԱստուծոյ առնլով սերմանս բարոյ՝ կարօղ է եւ գրիս երիս՝ զերիս մասունս հոգւոյն՝ զբանն, զգաստմն եւ զգանկութիւն, նաեւ զերիս մասունս ժամանակիս՝ զանցեալն եւ զներ-

¹ Զ իւրոյ

² ՏՁ լցաւ

³ Զ ~ խմորեցաւ ամենայն

⁴ Տ թէ ըստ բնութեանն] թէպէտ բնութիւնն

կայն եւ զապառնին: Արդ՝ որ յերիս մասունս հոգւոյ, յերիս հատուածս՝ ժամանակաց եւ ի հասակս ընկալաւ հաւատով եւ երկիրի եւ սիրով զմարմինն Տեառն հաղորդութեամբ՝ ըստ այնմ. «Ի ծոց իմ քազուցի զբանս Քո, որպէս զի մի՛ մեղայց Քեզ՝» (հմմտ. Մաղմ. ԾԺԸ 11), այնպիսին բոլոր զինքն աստուածատեսակս գործելով լուսատրեւ եւ մարմին եւ ոսկր Նմին լինիցի: Եւ երկրորդ՝ զվարդապետութիւնն առակէ ի խմոր՝ յաղագս ձգողական զօրութեանն, քանզի որպէս խմորն զբազում ալիւրն, զոր «երեք»-ն նշանակէ, յիւր զօրութիւնն շրջէ, նոյնպէս եւ դուք զամենայն աշխարհս՝ զԱսիա եւ զԼիբիա եւ զԵրոսայիս, դարձուցանէք ըստ բնութեան խմորոյ սահմանի, զի որպէս այն, նոյնպէս եւ այդմ մարթ է լինել: Բայց յորժամ խառնիցի խմորն: Նոյնպէս եւ դուք յորժամ միջամուխ լինիցիք պատերազմողաց ձերոց, յայնժամ յաղթիցէք նոցա, որպէս եւ եղև իսկ, զի մի ի միոյ խմորեալ՝ զբազումս յիմաստս իրեանց փոխեցին զօրութեամբ նորին: Չսակաւն ի բազում աճեցոյց, զի զոր օրինակ հուր վառեալ զբազում անտառս բորբոքէ, նոյնպէս եւ նոքա, խմորեալք ի Տեառնէ, զբազում աշխարհս խմորեցին առ ի յամօթ մեզ, զի այսքան վարդապետք այժմ զմնացեալն ի նոցանէ՝ ոչ կարենք դարձուցանել: Եւ դու մի՛ ինչ զարմասցիս, թէ զարքայութիւնն երկնից մանանխոյ եւ խմորոյ բաղդատէ, քանզի ընդ ախմարս եւ ընդ տգէտս խօսէր, քանզի այնչափ անտեղեակք էին, զի մեկնութեան կարօտանային, բայց այնու առաւել յորդորէին:

Այլ վարանելի է ի տեղոջս, թէ է՞ր աղագաս զմի եւ զնոյն էութիւնն նիւթոյ Գիրք սովորեցին ի լաւից եւ յոռեաց առնուլ սպացոյց, իբր այն՝ «Ահա այր, եւ Ծագումն անուն նորա» (Չաք. 2 12), եւ թէ՛ «Ծագեցից երկիրաժաց Իմոց արեգակն արդարութեան» (հմմտ. Մաղմ. Գ 2), եւ թէ՛ «Երեւեցաւ մեզ արեգակն ի բարձանց» (հմմտ. Դուկ. Ա 78). իսկ ընդդիմակին թէ՛ «Արեգակն ի տուէ քեզ մի՛ մեղիցէ» (Մաղմ. ԾԻ 6), եւ թէ՛ «Ծագեաց արեւ հանդերձ խորշակաւ» (Յակոբ. Ա 11): Եւ դարձեալ՝ «Խաւարեցին աստեղք զիշերոյն այնորիկ» (Յոք Գ 9), եւ թէ՛ «Ես եմ աստղ առաւօտուն» (հմմտ. Յայտ. ԻԲ 16): Եւ դարձեալ՝ «Ելեր բազմեցար իբրեւ զառիծ յանձնապատանէ» (հմմտ. Ծճնդ. ԽԹ 9), եւ ի տեսիլ կենդանեացն՝ դէմք միոյ դէմք առիծու լծեալ ի կառս Աստուծոյ, եւ ներհակին թէ՛ «Ոսոխն ձեր սատանայ իբրեւ զառիծ

¹ Գ հատածս

² Գ > Քեզ

³ Գ զնոցանէ] ի նոցանէ

գոչէ» (Ա ՊԵՆ. Ե 8) եւ «դարանանայ իբրեւ գառիւծ ի մորուջ իրում» (հմմտ. Սաղմ. Թ 30): Եւ դարձեալ՝ «Գետք յորովայնէ նորա բոխեսցեն» (Յովհ. Է 38), եւ՝ «Աղբիր ի տանէ Տեառն ելցէ» (Յովկէ Գ 19), եւ՝ «Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ» (Սաղմ. ԽԵ 5), եւ թէ՛ «Մի՛ ընկուզցեն զիս պտոյտք ջրոց» (Սաղմ. ԿԸ 16), եւ՝ «Շրջանք գետոց պաշարեցին զիս» (հմմտ. Սաղմ. ՉԷ 18), եւ՝ «Ապրեցո զիս ի ջուրց բազմաց» (Սաղմ. ԾԽԳ 7): Եւ դարձեալ՝ «Որպէս զի: քաղցր են ի քիմս իմ բանք Քո, քան զմեղր բերանոյ [իմոյ]» (Սաղմ. ԾԺԸ 103), եւ՝ «Կերայ զիս իմ մեղու իմով» (Երգ Ե 1), եւ թէ՛ «Մեղր կաթէ ի շրթանց կնոջ պոռնկի» (Առակ. Ե 3), եւ՝ «Քաղցր բանիք պատրեն զսիրտ անմեղաց» (հմմտ. Հռմ. ԺԶ 18): Եւ դարձեալ՝ «Ծագեաց մեզ Տէր եղջիր ի Դաւիթ» (հմմտ. Սաղմ. ԾԼԱ 17), եւ՝ «Բարձր եղիցի եղջիր արդարոյ» (Սաղմ. ՀԳ 11), եւ թէ՛ «Զեղջիրս մեղաւորաց փշրեսցես» (Սաղմ. ՀԳ 11), եւ՝ «Մի՛ բարձրացուցանէք¹ ի բարձունս գեղջիրս ձեր» (հմմտ. Սաղմ. ՀԳ 5): Եւ դարձեալ՝ «Դնեն ի հիմունս Միռնի վէմ ընտիր» (հմմտ. Ես. ԻԸ 16), եւ թէ՛ «Քար գայթաղութեան եւ քար զլորման» (Հռմ. Թ 33), եւ այլ սոյնպիսիք յոլովք եւ անթիք: Նոյնպէս եւ աստ. «Նման է արքայութիւնն երկնից խմորոյ», եւ թէ՛ «Զգո՛յ՛ լերուք ի խմորոյ սաղուկեցոցն» (Մատթ. ԺԶ 6), եւ թէ՛ «Մի՛ ի խմորն հին եւ մի՛ ի խմորն չարութեան, այլ յանխմորն ստուգութեան եւ ճշմարտութեան» (Ա Կոր. Ե 8):

Արդ՝ տարակոյսս յայտոսիկ: Իսկ լուծումն ճշմարիտ²՝ ճշմարտախոսիցն է յայտնի, բայց որքան մերս դատի նուաստ տեսութիւն, ըստ երկուս եղանակս իմանամք: Նախ՝ զի ամենայն էութիւն արարածական երկրիմի ունի զօրութիւն՝ լաւագոյն եւ վատթարագոյն. արդ՝ ըստ լաւ կողմանն՝ լաւիցն առնուն սպացոյց, եւ ըստ յոռոյն՝ վատթարագունիցն, զոր եւ մի ի բազմացն յիշեսցուք: Քանզի ահա ոճ ըստ թունիցն դառնագոյն է եւ մահաբեր, իսկ զի եւ ի նմանէ հանեն բժիշկք, որք զթիրակէքն կազմեն, որով զթոյնս նորա բժշկեն: Նոյնպէս եւ արեգակն, զի ըստ լուսոյն պայծառութեան՝ ազնուագոյն է եւ պատճառ խնդութեան, իսկ ըստ տապոյն՝ կիզիչ է եւ ցամաքեցուցիչ, նոյնպէս եւ ամենայն ինչ: Եւ երկրորդ՝ Աստուած բնութեամբ բարի է, քանզի զանեղութիւնն ունի, իսկ մարդիկ՝ ստացմամբ, վասն զի եղականք են, զի որպէս յառաջին

¹ Զ բարձրէք

² Զ ճշմարիտն

գոյացութեանն յանութենէ ի լինելութիւն եկն փոփոխմամբ, այսպէս եւ այլայլութիւն միշտ կրէ եւ ի բարոյն ի չարն միտէ, ուստի Փայտ գիտութեան բարոյ եւ չարի ի Գրոց անուանեցաւ¹ :

Եւ արդ՝ քանզի ի գլուխ արարածոցս ստեղծաւ եւ աշխարհի գլուխ կարգեցաւ եւ ընդունայնացաւ, ընդ նմին եւ արարածքս հնազանդեցան²՝ ըստ առաքելոյ թէ՛ «Ընդունայնութեան արարածք հնազանդեցան, ոչ իրեանց կամաւ, այլ վասն Այնորիկ, որ հնազանդեցոյցն յուսով» (Հոմմ. Ը 20): Եւ արդ՝ որպէս մարդն երբեմն ի չարն դիմէ եւ երբեմն ի բարին՝ վասն ասացեալ պատճառին, այսպէս եւ էակքս երբեմն ի չարն յիշին³ եւ երբեմն ի բարին՝ փոփոխական գոլով, որպէս եւ մարդն, մինչ հողովմամբ կենցաղոյս դարձեալ ի կատարելութիւն բարոյն ելանիցեն, որպէս ասէ Պօղոս թէ՛ «Եւ ինքեանք իսկ արարածք հեծեն եւ երկնեն մինչեւ ցայժմ, զի ազատեսցին ի ծառայութենէ ապականութեան յազատութիւն փառացն Որդոյն Աստուծոյ» (հմմտ. Հոմմ. Ը 21-22), եւ Դաւիթ թէ՛ «Տեսից գերկինս՝ զգործս մատանց Քոց, զլուսին եւ զաստեղս» (Սաղմ. Ը 4) հաստատեալ նորոգմամբ եւ ոչ փոփոխեալ, որպէս այժմ:

Բայց եթէ ոք ասիցէ, թէ յետ ի բարին ելանելոյ դարձեալ ի չարն թաւալիցի, ասացուք թէ՛ ոչ, զի կամ զչարին փորձ դժնդակութեան առեալ՝ ոչ տենչայ նմին, այլ միշտ ի բարին յաւերժանալով ինքն՝ գլուխն աշխարհի, եւ ընդ նմին՝ աշխարհ ամենայն, եւ կամ բնաւ կատարի ի բարին լրմամբ, մինչ զի ոչ կարէ դառնալ ի չարն, որպէս եւ են այժմ հրեշտակք անշարժ ի չարիսն, իբր զքարն պիլօր⁴ ի ջրոյ եռացեալ: Եւ ասեմ զայս ոչ բարձումն անձնիշխան կամացն, այլ ընդունելութիւն բարոյն՝ լրմամբ մտացն. ահա այս է պատճառն, [զի] զմիոյ նիւթոյ էութիւն բարոյ եւ չարի առնուլ ասպացոյց Գիրք սովորեցին:

Չայս ամենայն⁵ խօսեցաւ Յիսուս առակօք⁶ ընդ ժողովրդեանն եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա (ԺԳ 34):

Մարկոս ասէ, թէ վասն այնորիկ խօսէր առակօք, որպէս զի կարողացին լսել⁷, գոնէ թէ ոչ զհմաստս բանին, սակայն զճառս

¹ Ծննդ. Բ 17

² ՏԶ արարածքս

³ ՏԶ յիշեն

⁴ Զ պիլօր

⁵ Զ > ամենայն

⁶ Զ ~ առակօք Յիսուս

⁷ Մարկ. Դ 33

պատմութեանն իմանային: Իսկ ասելն թէ՝ «առանց առակի ոչինչ խօսէր», ոչ յամենայն ժամ, այլ յայնժամ միայն, ոչ վասն այնորիկ, զի մի՛ իմանայցեն, այլ որպէս զի ի հարցումն շարժեցէ զնոսա. բայց նոքա ոչինչ ընդոստեան, թէպէտ տանջանս ահագինս սպառնացաւ նոցա առակօքն:

Չի լցցի ասացեալն ի մարգարէն. «Բացից առակօք զբերան իմ եւ բղխցից զծածկեալսն ի սկզբանէ աշխարհի» (ԺԳ 35):

Թէպէտ նոքա ոչինչ հարցին, սակայն ւաւետարանիչս զմարգարէն վկայ ածէ, թէ ոչ օտարս ինչ, այլ զկանխասացութիւն տեսանողին կատարէ¹, որ զվարդապետութիւն Տեառն առակաւոր ասաց լինել: Ապա ուրեմն լցեալ են տառք մարգարէիցն՝ ի կատարումն եկեալ բանին, զոր բղխէր Հոգւով առակաւոր վարդապետութեամբ՝ որ ինչ ծածկեալ էր ի սկզբանէ արարածոց մինչ ի կատարած աշխարհի. նախ գալստեանն Իրոյ խորհուրդ եւ ապա փառք արդարոց եւ տանջանք մեղաւորացն, որ թէպէտ սուղ յայտնեալ էր, բայց կատարեալ ի Տեառնէ ծանուցաւ:

Յայնժամ թողեալ Յիսուսի զժողովուրդսն՝ եկն ի տուն (ԺԳ 36):

Կրկին իրօք նախախնամէ Աստուած զաշխարհ՝ կամ բարութեամբ, կամ բարկութեամբ. եւ յորժամ մարդիկ այսու ոչ զգաստանան, այնուհետեւ թողու ի խնամոց Իրոց, որպէս զհինն Իսրայէլ. «Թողի,- ասէ,- զնոսա զնալ զհետ կամաց սրտից իւրեանց» (Մաղմ. 2 13): Այսպէս եւ Տէրն առակաւ կամէր զգաստացուցանել զնոսա, իսկ նոքա ոչ հարցին, որով զգաստանային, վասն որոյ թողեալ զնոսա արտաքս ի վարդապետութենէն Իւրմէ՝ «եկն ի տուն»: Եւ «տուն» է զիտութիւն Տեառն բազմացեալ², որ յԱւետարանսն է ասացեալ վասն Նորա, զոր ինչ արար եւ զոր ինչ գործեաց: Եւ դարձեալ՝ զի ոչ ոք ի ժողովրդենէն զկնի եկն, յայտ է, զի դպիրքն եւ փարիսեցիքն էին, որք ոչ վասն այլ իրաց եկեալ էին, այլ զի բանս ինչ կարիցեն հանել ի Նմանէ, եւ իբրեւ ոչ կարացին հանել, քանզի ոչ իմացան զասացեալն, թողին զՆա եւ զնացին, եւ Նա թողեալ զնոսա՝ եկն ի տուն, զի ուսուցէ զտենչացօղս ումանն, որպէս ասէ: Կամ զՏաճարն ասէ «տուն»:

¹ Մաղմ. 7է 2

² Զ բազմեալ

Մատեան առ Նա աշակերտքն Իւր եւ ասեմ. «Մեկնեա՛ մեզ զառակս որոմանցն ազարակի»:

Ամենայն ուրեք ուսանել խնդրեն, բայց ո՛չ իշխէին հարցանել. աստ ուստի՞ համարձակութիւն առին: Ինձ թուի՝ յայնմանէ, զի ասաց. «Ձե՛զ տուեալ է զիտել զխորհուրդս արքայութեանն, իսկ նոցա չէ տուեալ» (Մատթ. ԺԳ 11), վասն այնորիկ հարցանեն. բայց առանձինն, յորժամ ի տուն եկն, եւ ո՛չ առաջի բազմութեանն, զի մի՛ ի նախանձ գոք գրգռեսցեն, այլ զՏեառն պահեսցեն զօրէնս: Բայց քննելի է, թէ ընդէ՞ր զմանանխոյն եւ զխմորոյն թողեալ զառակ՝ զորոմանցն հարցանէին: Կամ թէ հարցին, եւ ոչ գրեցան, կամ թէ զայն իբր զյայտնիս թողեալ եւ զայս իբր ւելի զօրութիւնս ունել հարցանէին, վասն որոյ եւ ոչ սաստեաց, այլ վերստին լնու զասացեալն՝ յամօթ առնելով զնոսա, որք ոչ հարցին, զի կամաւ չախորժէին:

Նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. «Որ սերմանէ սերմն բարի, է Որդի մարդոյ (ԺԳ 37),

Եւ ազարակն աշխարհս է. սերմն բարի նոքա են, որ որդիքն արքայութեան են (ԺԳ 38):

Աշակերտացն բացայայտէ զասացեալ առակն՝ լուսաւոր եւ հակիրճ բանիւ, քանզի Նա, որ մարգարէիւքն սերմանէր ըստ աստուածութեանն զաստուածպաշտութիւնն, աստ դարձեալ մարդկութեամբն զաւետարանին վարդապետութիւն՝ վասն ի բարիս անուանեալ՝ զփոքրկութիւն եւ զնուաստութիւն առ դրախտն եւ առ վերին կեանսն համեմատելով: Եւ որք ընկալան զվարդապետութիւն Տեառն, եղեն բարի սերմանք, այսինքն՝ բարեգործք, նաեւ սերմանօղբ ի յայլս, քանզի իբրեւ սերմն օրինակեալ է կենցաղոյս առաքինութիւնք վասն յաճախութեան բազմապատիկ պտղոյ որային եւ մշտնջենաւոր պսակին, որք ժառանգք լինելոց են արքայութեանն վերին:

Իսկ որոմն որդիք չարին են:

Նոքա, որք առին զվարդապետութիւն չարին, որպէս հրէայք եւ հերձուածօղբ եւ անհաւատ հեթանոսք, որք զկամս նորին պաշ-

տելով՝ չար գործով¹ ծնունդք եւ որդիք եղեն նմին, այսինքն՝ ժառանգք հրոյ գեհեհին:

Եւ թշնամին, որ վարեաց զայն, սատանայ է (ԺԳ 39):

Ուսուցանէ, թէ եւ նա՛ կերպարանի ըստ ճշմարիտ մշակացն ձեռոյ եւ պատառէ զսիրտ մարդկան արօրի չարութեանն՝ սերմանելով զխորհուրդս չարեաց, որ եւ աճեցեալք գործովք՝ երեւի որոմնն, որով զթշնամութիւնն կացուցանէ՝ ոչ միայն առ մարդ, այլ եւ առ Աստուած՝ զբարի սերմանս Նորա խանգարելով: Նաեւ ա՛յլ ազգ. զի որ զմեղս յղանայ եւ վճարէ գործով, թշնամի Աստուծոյ է եւ հակառակ կամաց Նորա՝ ըստ առաքելոյ²:

Եւ հունձք կատարած աշխարհիս է:

Ընդէ՞ր յառաջագոյն, յորժամ զաշակերտսն առաքէր, ասաց. «Հունձք բազումք են, եւ մշակք՝ սակաւ, աղաչեցէք զՏէր հնձոցն, զի հանցէ մշակս ի հունձս Իւր» (Մատթ. Թ 37-38), եւ թէ՛ «Ամբարձէք զաչս ձեր եւ տեսէք զարտորայս, զի սպիտակացեալ են եւ ի հունձս հասեալ» (Յովհ. Դ 35), իսկ աստ զկատարած աշխարհիս դարձեալ «հունձ» ասէ: Արդ՝ կամ երկդիմի է հունձ մեղաց եւ կենաց, զառաջինն ի մեղաց հատին մանգաղաւ բանին առաքեալքն եւ մուծին յշտեմարանս Եկեղեցւոյ զհաւատացեալսն, եւ զյարդն³ սպառնական բանի արտաքս հոսեցին, իսկ յերկրորդումն հրեշտակք ի կենաց հնձեն եւ ի վերինն Սիոն ժողովեն, քանզի որպէս զալուստն կրկին, այսպէս եւ հունձն: Եւ կամ թէ՛ այն վճիռ էր փառաց եւ տանջանաց, իսկ այս՝ պտուղ ունկնդրութեան՝ արդեամբք եւ ներգործութեամբ բարի սերմանցն եւ որոմանցն:

Եւ հնձօղքն հրեշտակք են:

Առաջնոյն՝ մարգարէքն սերմանօղք եւ առաքեալքն՝ հնձօղք, իսկ վերջնոյն սերմանօղ՝ Որդին Մարդոյ, եւ հնձօղք՝ սպասաւորք Նորին հրեշտակք երկնային, որպէս Յովհան ի յայտնութեանն ետես զհարուածս եօթն սկաւառակացն, որով կատարած արարին յախտենիս⁴:

¹ Զ գործօք

² Յակրք. Դ 4

³ Զ զյարդսն

⁴ Յայտ. ԺԵ 7

Որպես ժողովի որոմնն եւ ի հուր արկանի, այնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս (ԺԳ 40):

Առաքեացէ Որդի մարդոյ զհրեշտակս Իւր, եւ ժողովեացեն յարքայութենէ նորա զամենայն գայթազողութիւնս եւ զայնոսիկ, ոչք գործեն զանօրէնութիւն (ԺԳ 41),

եւ արկցեն զնոսս ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց (ԺԳ 42):

Նախ ցուցանէ, թէ ճշմարիտ հատուցմունքն ի հանդերձեալն են: Եւ դարձեալ՝ զբարերարութիւն Իւր յայտ առնէ, զի յորժամ գտերմն բարի սերմանէր, անձամբ առնէր, իսկ յորժամ վասն տանջանացն պատմէ, զհրեշտակս, ասէ, առաքէ: Եւ միւս եւս. զի յորժամ սերմանէ, յագարակի Իւրում սերմանէ, եւ յորժամ ժողովէ, յարքայութենէ Իւրմէ ժողովէ. յայտ ուրեմն է, թէ այս աշխարհս եւ այն՝ Նորա է, որով ուսուցանէ, թէ ամենեքեան յառնելոց են, թէ պէտ ոմանք՝ ի կեանս եւ ոմանք՝ ի դատաստանս: Եւ դարձեալ՝ արքայութիւն է Տեառն՝ Եկեղեցի սուրբ եւ բանք աստուածայինք, իսկ գայթազողութիւնք՝ աղանդք եւ հերձուածք, որք մտին յԵկեղեցի՝ թոյլ տալովն Աստուծոյ, եւ յետոյ ընտրին: Եւ դարձեալ՝ որ գայթազեցուցանէ եւ որ գայթազի եւ գործէ զանօրէնութիւն՝ երկոքին տանջին, բայց ոչ ամենայն գայթազեցուցանող, այլ որ ի մեղս գայթազեցուցանէ. ասպա թէ ոչ՝ ընդէ՞ր ասաց Տէրն թէ՝ «Որ գաղթազեղոց է՝ գայթազեցի», զի է երիս տեղի, որ թէպէտ գայթազեցուցանեն, ոչ տանջին գայթազեցուցիչքն, այլ գայթազեալքն միայն:

Եւ դարձեալ՝ որ պատահմամբ անկանի ի մեղս, սակայն այլ ոչ զղջացի, իսկ կամաւորքն, որք են անօրէնութեան գործողքն, առ հասարակ չարչարին: Եւ դարձեալ՝ սատանայ եւ կամարարքն նորին, որպէս ասաց Տէրն. կամ «գայթազողութիւն» զանհաւատ կռապաշտսն ասէ, որպէս յՕրէնսն «գայթ» կոչեաց զգործս այլազգեացն¹, եւ «անօրէն», որք յՕրէնս յանցեան, ի մի տեղի տանջեցին ի դժոխս, թէպէտեւ զանազանութիւն լինի: «Արկցեն,- ասէ,- ի հնոց հրոյ, անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց», ըստ այնմ՝ «Արկցեն զնա ի լիճ հրոյն» (հմմտ. Յայտ. ԺԹ 20), եւ թէ՝ «Սատակեացէ Տէր Յիսուս Հոգւով բերանոյ Իւրոյ» (Բ Թես. Բ 8) եւ այրմամբ շրթանց Իւրոց: Իսկ յաղագս լալոյն եւ կրճելոյն ատամանց ասացեալ է, բայց աստ այսչափ, զի ի ժամանակի յանդի-

¹ Եւր ԻԳ 33, ԼԴ 12

մանութեանն գտաւ արհամարհող գործոց բարեաց, յԱստուծոյ ճշմարտէ յանդիմանեալ՝ ինքն զինքն տանջէ եւ կրճտէ զատամունս իւր, վասն զի զբարիս սերմանցն եւ զճշմարիտ գիտութեանն զգործն ո՛չ ծասքեաց ատամամբք իրոպք ի կենցաղս, անդ դատարկ գոլով ծնօտին՝ կրճէ զատամունս, նաեւ ի դառնագոյն վշտացն եւս:

Յայնժամ արդարքն ծագեցին¹ իբրեւ զարեգակն յարքայութեան երկնից: Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ (ԺԳ 43):

Կրկին տանջանք լինի[ն] մեղատորացն. նախ՝ զի ինքեանք հրոյ եւ կրճել ատամանց մատնին, եւ երկրորդ՝ զի տեսանելով զփառս արդարոցն՝ առաւել չարչարին, եւ այն, զի ձեռնահաս գոյր հասանել եւ ոչ հասին: Բայց ծագմունք արդարոցն ո՛չ այսչափ միայն, այլ բազմապատիկ քան զծագումն սորա. այլ զի պայծառագոյն քան զսա աստղ ոչ ունէաք, վասն այսորիկ ի մերոց ծանօթիցն տայ մեզ օրինակ, սպա թէ ոչ՝ արեգակն եօթնպատիկ է լինելոց ըստ մարգարէին², զի՞նչ ասես զարդարոցն: Եւ այսու զանբաւ պայծառութիւնն եւ զհամարձակութիւնն եւ զզեղեցկութիւնն իմա, զոր վայելելոց են արդարքն ի հանդերձեալ յաւիտենին՝ փոխանակ աստի նեղութեանցս: Եւ զի այս այսպէս է, ի վերայ բերէ թէ՛ «Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ»: Այսինքն՝ մի՛ կարծել անմահանալ զնոսա իբր զանբան անմահոյ, այլ փառօք ճոխութեամբ ի կամարս երկնից բարձրացին, զորս չարչարողքն տեսեալ՝ պատկառեցին, կամ իբր³ շրտեալ աչք ի բոլորակածիր արեգական ճառագայթէ:

Բայց տարակուսելի է, թէ է՞ր վասն առաքեալն ասէ, թէ արդարքն յափշտակին ընդ առաջ Տեառն⁴, իսկ աստ՝ նախ մեղատորքն մատնին ի տանջանս, եւ սպա արդարքն իբր զարեգակն ծագեն: Գիտելի է, զի արդարոցն յերկինս պատրաստեալ է բնակութիւն, իսկ յորժամ ժամանակ գալստեանն եկեացէ, իջանէ յերկնից փառօքն Հօր, եւ արդարքն առեալ զմարմինս իւրեանց՝ ելանեն ընդ առաջ Տեառն յօդս, եւ նոքօք իջեալ յերկիր Տէրն՝ բեմ կազմէ եւ տայ զվճիռ մեղատորացն՝ ըստ այնմ. «Կոչեացէ զերկինս

¹ Զ ~ ծագեցին արդարքն

² Ես. Լ 26

³ Զ ~ իբր կամ

⁴ Ա թես. 7 16

ի վերուստ եւ զերկիր՝ ի դատել զժողովուրդ Իւր» (Սաղմ. ԽԹ 4): Յայնժամ իբրեւ այր թագաւոր յառնէ Իւրովք բարեկամօքն եւ տանի զնոսա յերանութեան հանգիստն՝ պսակել լուսեղէն փառօք որպէս զարեգակն, քանզի այրեցողական զօրութիւն հրոյն եւ աղջամղջիւնն, որով ամենայն յաղին, տանջանք պատրաստեցան մեղաւորացն, եւ լոյսն՝ պսակք արդարոցն, զօրութեամբ ձայնի Տեառն բաժանեալ ի հրոյն լոյս բոցոյն՝ ըստ մարգարտիւն՝:

Դարձեալ՝ նման է արքայութիւնն երկնից զանձի ծածկելոյ յազարակի, զոր գտեալ մարդոյ՝ թագոյց եւ ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի եւ զնէ զազարակն զայն (ԺԳ 44):

Ըստ պէսպէս ներգործութեան իրացն առակս յօդէ եւ նովաւ զհմանային ծանուցանէ, զոր օրինակ ասէ ազարակի որ պատահեալ, որ զգանձ ունիցի յինքն ծածկեալ, զամենայն զգոյս իւր տայ եւ զազարակն զայն ստանայ: Նոյնպէս «ազարակ» է Քրիստոսի մարմնինն, զոր յերկրեղինացս էառ, եւ «զանձ ծածկեալ»՝ աստուածութիւնն, զոր գտին ի ձեռն հաւատոց հրէայք եւ հեթանոսք եւ զամենայն մարմնականացս բարօրութիւնն ետուն: Եւ կամ զհաւատն իսկ, զի այն է մերն ամենայն, եւ զնա, որ բաւական է ամենայնի, փոխանակ առին, եւ զայս խնդութեամբ՝ ըստ առաքելոյ. «Ձյափշտակութիւն ընչից ձերոց խնդութեամբ ընկալարոք» (Եբր. Ժ 34), եւ՝ «Ուրախ եմք ի չարչարանս որ վասն Տեառն» (հմմտ. Կող. Ա 24). ասէ եւ Յովհանն. «Եդեր յոգւոջ իմում մի՛ ինչ պատուական ստացուած համարիլ քան զԲեզ»²:

Եւ դարձեալ՝ «ազարակ» է տառք մարգարտից, որ ունի[ն] զանազանութիւն տնկոց ի բառսն, յորում ամենայն զանձք իմաստութեան եւ զիտութեան ծածկեալ կան՝ զզօրութիւն³ մտացն եւ ի ծածուկ ունելով՝ ըստ այնմ. «Դնէ ի խորս զգանձս⁴ Իւր» (Սաղմ. ԼԲ 7), զոր գտեալ որ աշխատասէր ընթերցմամբ եւ Հոգւոյն ընդունելութեամբ՝ թագուցանէ ի միտս՝ ըստ այնմ. «Մի՛ տայք զսրբութիւն շանց եւ մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց⁵» (Մատթ. Է 6): Ուստի եւ անճառ խնդութեամբ լնանի միտք աշխատողին, եւ

¹ Սաղմ. ԻԸ 7

² Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ եւ աւետարանչի, Ը

³ Ձ զսրութիւն

⁴ Տ զգանձ

⁵ Ձ խոզից

արհամարհեալ զփառս աշխարհի եւ բարեաւ մնալ ասացեալ մարմնական հանգստի՝ ի Գիրս Սուրբ տաժանի, որ զգանձն երկնային իմաստից խորհրդեանն Բրիստոսի յամանս խեցեղէն ժողովեալ հաւաքէ ի Հին եւ ի Նոր Կտակարանաց: Դարձեալ՝ «ագարակ» աշխարհս է, եւ «զանձ ծածկեալ յագարակի» աշխարհի՝ է գործք բարիք, որ զարքայութիւնն ժառանգեցուցանէ: Եւ «ծածկեալ»՝ զի պարտ է զգործս բարիս ոչ ի փառս մարդկան գործել՝ ըստ Տեառն¹, այլ ի ծածուկ Հօր հատուցանողին, որպէս ասէ թէ՝ «գտեալ թագոյց», եւ խնդայ ընդ գիտ գործոցն, զոր եզիտ ի բանիցն Աստուծոյ՝ ըստ Դաւթայ թէ՝ «Յնծացայ ես ի բանս Քո, որպէս այն, որ գտանէ աւար բագում» (Մատթ. ԵԺԸ 162), եւ յանճառ խնդութենէն լցեալ՝ հրաժարէ յաշխարհէս եւ ուրանայ զանձն, եւ ստանայ սովաւ զծածկեալ կեանսն:

Դարձեալ՝ մնան է արքայութիւնն երկնից առն վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս զեղեցիկս (ԺԳ 45)

Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց² զամենայն ինչ զոր ունէր³ եւ զնեաց զայն մարգարիտ (ԺԳ 46):

Չոր օրինակ անդ հատ մանանխոյ եւ խմորն սակաւ ինչ զանազանութիւն ի միմեանց ունէին, նոյնպէս եւ աստ զանձն եւ մարգարիտն, զի զնոսա վասն զօրութեան քարոզութեանն յօղեաց առակ, թէ յաղթելոց է ամենայն տիեզերաց, զի տարածի իբր զմանանէս եւ ձգի իբր զխմոր, իսկ զոսա՝ թէ շահաբեր է իբր զգանձ եւ պատուական է որպէս մարգարիտ: Ըստ որում իմանամք, թէ զոր «զանձ» ասաց, զնոյն եւ «մարգարիտ» ասէ եւ «զեղեցիկք», քանզի բագում տեսակք են մարգարտաց՝ հնդկայիցն եւ պարսկականն եւ որ յԱրեւմտեան ծովուն եւ յովկիանոս լինի: Բայց աստ ոչ վասն զգալի, այլ իմանալի անխօս մարգարտին ճառէ, զոր «զեղեցիկ» ասէ՝ ըստ այնմ թէ՝ «Ընտրեալ է ի բիրտոց» (Երզ Ե 10), եւ՝ «Գեղեցիկ է նա տեսանելով քան զամենայն որդիս մարդկան» (Մատթ. ԵԴ 3), վասն որոյ վաճառականն խնդրէ նախ, եւ ասպա՝ զոր ինչ ունի՝ տայ եւ զնէ զայն մարգարիտ: Այսինքն՝ արթուն եւ զգոյշ լինի գիտի⁴ մարգարտին եւ հրաժարէ յերկրաւոր խորհրդոց եւ ի

¹ Մատթ. Զ 1-4

² Զ վաճառէ

³ Զ որ ինչ ունի] ինչ զոր ունէր

⁴ Զ գիտ

ցանկութեանց, որով ստացանի մարգարիտն այն, քանզի գոր օրինակ որ զմարգարիտն ունիցի, ինքն գիտէ, թէ մեծանալոց է, եւ բազմաց չէ յայտ, նոյնպէս եւ որ զՔրիստոս եւ զքարոզութիւն¹ Նորա ունի, գիտէ, թէ փառաւորելոց է, իսկ անհաւատքն ոչ զՆա գիտեն եւ ոչ զմեծութիւն Նորա ի միտ առնուցուն:

Քննելի է եւ այն, թէ ընդ²ր ասաց մի զմարգարիտն: Նախ՝ զի մի է ճշմարտութիւնն եւ ոչ ի բազումս ճեղքեալ, որպէս չարն: Եւ երկրորդ՝ «զի մի է Աստուած եւ մի՝ միջնորդն Աստուծոյ եւ մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս» (Ա ՏԻՄ. Բ 5), որ թէպէտ զմարդկային բնութիւնս զգեցաւ՝ խառնելով ընդ աստուածութեանն, սակայն մի Որդի Աստուծոյ եւ Կուսին ասի՝ անապական գոլով եւ լուսատեսիլ մարմնական էութեանն՝ վասն առ Բանն անշփոթ միութեամբ ըստ օրինի մարգարտի գունոյ եւ մարմնոյ:

Դարձեալ՝ նման է արքայութիւն² երկնից ոռկանի արկելոյ ի ծով եւ յամենայն ազգաց ժողովելոյ (ԺԳ 47),

գոր, իբրեւ լցաւ, հանեալ ի ցամաք՝ եւ նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս եւ զխտուանն ի բաց ընկեցին (ԺԳ 48):

Որ նախ քան զայս առակք էին կոչման հեթանոսաց ի հաւատս եւ վարդապետութեան ւաւետարանին էին ապացոյցք, իսկ այս առ հանդերձեալն հայի ընտրութիւն, որ ոչ հաւատոց, այլ գործոց է քննութիւն: Վասն որոյ յետ ոռկանի ւաւետարանին արկելոյ ի ծով աշխարհիս եւ յամենայն ազգաց հրէից եւ հեթանոսաց ժողովելոյ ի հաւատս, եւ կամ զբազմադիմի յօժարութիւնս մարդկան ի մի վայր հաւաքելոյ եւ լնլոյ կենցաղոյս, միանգամայն եւ զհեթանոսաց Եկեղեցի, յայնժամ այլ իմն ահագին ընտրութիւն լինելոց է համեստ եւ հաստատ ատենիւ. զստուգապէս բարիս, որք սկսան զհաւատս եւ կատարեցին գործով, յամանս արքայութեանն ժողովել եւ խտանիցն բացընկեցիկ լինել, որք եկին ի հաւատս եւ ուրացան եւ կամ գործովք ընկղմեցան:

Այնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք եւ մեկնեցեն զչարս ի միջոյ արդարոց (ԺԳ 49)

¹ Զ զարդարութիւն

² Զ արքայութիւնն

և արկեցն գնոսա ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց» (ԺԳ 50):

Չայս առակ առանց հարցանելոյ Ինքն մեկնէ եւ մասամբ գամենայն յայտ առնէ եւ բացերեւակի գտանջանս ցուցանէ, զի մի՛ յորժամ բացընկեցիկ լինիցին, անպարտական զկորուստն համարեսցին: Դարձեալ՝ ուսուցանէ, թէ յայսմ կենցաղի ո՛չ է խտրոց արդարոց ի մեղատրաց, քանզի իրաւունքն Աստուծոյ ո՛չ որոշեալ բաժանէ գնոսա ի միմեանց. մի՛ զի թերես զղջասցին, եւ երկրորդ՝ զի պիտանացու են աշխարհիս իբր ցանկ այգւոյ եւ կամ տերեւ խաղողոյ: Իսկ յորժամ դարձուցանէ զիրաւունս յարդարութիւն, յայնժամ զուտ ընտրութեամբ տրոհէ ո՛չ միայն զմարդ ի մարդոյ, այլեւ զխորհուրդ ի խորհրդոյ եւ զարժանատրն հատուցանէ դատաստանի՝ ըստ իրաքանչիւր զնացիցն¹ նոցա:

Ասէ ցնոսա Յիսուս. «Իմացարո՞ւք զայս ամենայն»: Ասեն ցՆա. «Այո՛, Տէր» (ԺԳ 51):

Մասց յառաջագոյն. «Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեանն» (Մատթ. ԺԳ 11), եւ թէ՛ «Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ» (Մատթ. ԺԱ 15, ԺԳ 9), այժմ հարցմամբս ստուգէ, թէ զոր ընկալան՝ ունիցի՞ն ի մտի. ասեն. «Այո՛, Տէր», վասն որոյ զովէ գնոսա եւ ասէ:

Եւ Նա ասէ ցնոսա. «Վասն այսորիկ ամենայն դպիր աշակերտեալ արքայութեան երկնից՝ նման է առն տանուտեառն, որ հանէ ի գանձէ իրմէ գնոր եւ զիին» (ԺԳ 52):

Չայս եւ Սողոմոն ասէ թէ՛ «Նոր առ հնովն, զոր ետ ինձ մայր իմ, եւ զանձեալ պահեցի քեզ» (հմմտ. Երգ Է 13), քանզի այս իսկ է զորժ իմաստուն տանուտեառն եւ սեփհական փարթամի, զի հինն ի նորն հասուցանէ եւ զնորն առ հնովն զեղու, որոյ հաւասարեալ՝ նմանեցուցանէ զարքայութիւնն երկնից աշակերտեալ դպրի, զի հանցէ ի Հին Մատենէն եւ ի Նոր Կտակէն՝ յառաքելական գրոց եւ ի մարգարեական տառից, զգալստեան Տեառն խորհուրդ եւ զհանդերձեալ Դատաստանին օրինակ, զոր պէսպէս առակօք ծանոյց յառաջագոյն ճշմարիտ Տէրն տան աշխարհիս այսորիկ, որոյ նմանեցան եւ առաքեալքն Տեառն: Վասն որոյ ասէր թէ՛ «Ա-

¹ Զ գնացին

նաքեցից ձեզ իմաստունս եւ դպիրս» (հմմտ. Մատթ. ԻԳ 34, Բ ՄԵ. ԼԶ 15-16), որպէս զի որք աստուածեղէն Գրոց ոչ իցեն տեղեակք, ոչ երբէք լինելոց են տանուտեարք, եւ ոչ դպիրք, քանզի ոչ յանձանց ունիցին եւ ոչ յայոց առնուցուն, այլ անփոյթ արարեալ՝ սովամահք լինիցին, որպէս եղեն հերձուածողքն եւ հրէայքն: Լուիցեն՝ որ Գրոց ընթերցուածոց փոյթ ոչ ունիցին, թէ որչափ վնաս անձանց իրեանց կատարիցեն:

Եւ դարձեալ՝ ոչ խոտէ զՀինն, այլ գովէ եւ «գանձ» կոչէ, քանզի Նորս ծածկեալ կայր ի Հինն՝ իբր զգանձ յագարակի, վասն որոյ որք զՆորս ոչ ունիցին՝ եւ ոչ զՀինն բոլորովին, քանզի սոքա երկոքեան ընդ միմեանս կապեալք են եւ յարմարեալք: Վասն այնորիկ ասաց թէ՝ «հանէ ի գանձէ զնոր եւ զհին», այսինքն՝ ի գրոյն ի Հոգին ելանէ եւ Հոգով զգիրն ճանաչէ եւ լինի ազատեալ՝ ոչ միայն ի ծառայութենէ, այլեւ յաղքատութենէ, եւ անարատ գիտութեամբ Տեսնն պայծառացեալ՝ երկնային բարեացն վերակոչեսցի տանուտէր՝ եղեալ գիտուն հնոյ արարչութեանն եւ վերստին նորոգութեանն, միանգամայն եւ հինաւորց Աստուածութեանն¹ եւ նորածին Մանկանն:

Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զառակս զայսոսիկ, փոխեցաւ անտի (ԺԳ 53):

Եւ եկեալ ի գաւառ Իւր՝ ուսուցանէր զնոսս ի ժողովրդեանն նոցա (ԺԳ 54):

Այսինքն՝ ոչ միայն զիսոսս առակաւորս, այլեւ իբրև կատարեալապէս զմիտս առակացն ծանոյց աշակերտացն Իւրոց, փոխեցաւ անտի, զի ամենայն ուրեք կամէր սերմանել զբանն: Բայց զո՞յս ասէ «գաւառ Իւր»՝ զԿափառնատն², եթէ զԲեթլեհեմ. քանզի լռեաց անտարանիչս զանուն տեղոյն: Արդ՝ կամ զամենայն Հրէաստան, յորում անպատուեցաւ, «գաւառ Իւր անուանէ», կամ զՆազարէթ ասէ, քանզի ոչ իսկ անդ արար զօրութիւնս բազումս, իսկ ի² Կափառնատն արար նշանս, որպէս ասէին. «Չոր արարեր ի Կափառնատն, արա եւ աստ ի Քում գաւառի» (Ղուկ. Դ 23): «Ուսուցանէր,- ասէ,- զնոսս³ ի ժողովրդեանն նոցա», այն, զի ետուն զիր զԵսայեայ մարգարէի, եւ յարեաւ ընթեռնուլ⁴, քանզի ի ժողովր-

¹ Դան. Է 9, 13, 22

² Զ > ի

³ Զ ~ զնոսս, ասէ

⁴ Ղուկ. Դ 17

դանոցսն ճեպէր եւ յիշխանաց անտի զանձն պահէր, զի մի՛ ի նախանձ գրգռեցէ զնոսա եւ դատապարտութիւն կուտեսցէ ի նոսա՝ վասն անհաւատութեան նոցա: Չի ոչ միայն վարդապետէր, այլ եւ նշանս մեծամեծս դնէր առաջի նոցա, վասն որոյ եւ զարմանային, որպէս ասէ:

Մինչեւ զարմանալ նոցա եւ ասել. «Մնա ուստի՞ իցէ այս իմաստութիւն եւ զօրութիւնք» (ԺԳ. 54)

Ո՞չ Մա է հիսսանն որդի (ԺԳ. 55):

Որպէս ամենայն ուրեք, այսպէս եւ աստ ահաբեկ եղեալ ի մեծութենէ սքանչիցն եւ ոչ կարացեալ ի սիրոս իւրեանց ամփոփել զոր տեսին, այլ իբր ի հարկէ արտաբերէին ասել, թէ ուստի՞ իցէ Մնա այս անպատում եւ հանճարայեղ վարդապետութիւն եւ կամ անճառ եւ ահագին հրաշագործօղ զօրութիւն, զոր դիւրին էր ի միտ առնուլ, թէ աստուածական է, բայց ոչ կամէին, քանզի նախանձամիտ էին: Եւ զի այլ ուստեք պարսաւել ոչ կարէին, Յովսէփաւ խոտել հնարէին, որ հայրն կարծիր, թէպէտեւ այնու եւս յանդիմանեալ լինէին: Բանզի յառաջնոց ժամանակացն բազում օրինակս ունին՝ յաննշան արանց ծնեալ որդիս առաքինիս, որպէս Մոսէս եւ Դաւիթ, եւ Յեսու, եւ Ամովս. որում պարտ էր երկիրպագանել, զի այնպիսի ծնողաց գոլով որդի¹, որպէս կարծէին, զայնպիսի բանս խօսի, եւ իմանալ, թէ ոչ ի մարդկան ինչ կրթութենէ, այլ յաստուածեղէն շնորհացն բղխէր վարդապետութիւնքն եւ անհամեմատ սքանչելիքն:

Ո՞չ մայր Սորա կոչի Մարիամ, եւ եղբարք Սորա՝ Յակովբոս եւ Յովսէս² եւ Միմովն եւ Յուբա (ԺԳ. 55):

Եւ քորք Սորա ո՞չ ամենեքեան առ մեզ են: Եւ արդ ուստի՞ է Մնա այս ամենայն» (ԺԳ. 56):

Եւ զայթազդէին ի Նա (ԺԳ. 57):

Տեսանէ՞ս, զի ի Նազարեթ խօսէր. բայց այն զի՞նչ արգել լինէր նոցա յորդորել ի հաւատս. այլ զի չար է նախանձ եւ անձամբ անձին վնաս առնէ հանապազ: Բայց զի՞նչ է՝ «զայթազդէին ի Նա». ինձ թուի, թէ զօրութեամբ իիք դիւականաւ ուսուցանել Նմա եւ նշանս առնել եւ ոչ Հոգուով Աստուծոյ, զի թէ Հոգուով Աստուծոյ

¹ Զ ~ որդի գոլով

² Զ Յովհաննէս

կարծէին, ոչ երբէք անպատուէին: Այլ զայս փարիսեցիքն ասէին, իսկ պարզամիտ ժողովուրդքն, որք զարմանային ի գործսն, լուեալ զայթազդէին, քանզի ախմարք էին: Իսկ յաղագս եղբարցն Տեսնն ասացեալ է յառաջագոյն:

Եւ Յիսուս ասէ ցնոսա. «Չիք մարգարէ անարգ, եթէ ոչ յիրում գաւառի եւ յիրում տան»:

Յայտնապէս ոչ խայտառակէ զնոսա, բայց գրեթէ այնպէս ձեւացուցանէ, թէ հին է այդ սովորութիւն ձեր՝ անարգել միշտ գաւառքեալսն յԱստուծոյ, քանզի ոչ Անաթոլթ ընկալաւ զԵրեմիա¹, եւ ոչ Թեգրէ՝ զԵղիա², եւ ոչ Աբելմայուլա³՝ զԵղիսէն⁴, եւ ոչ Արիմաթեմ՝ զՍամուէլ⁵, եւ ոչ ժողովուրդն՝ զՄոսէս, եւ ոչ հրէայքն՝ զՏէր մեր, վասն այսորիկ եւ ոչ Պօղոս ի Տարսոն քարոզէր, եւ ոչ առաքեալք՝ ի Հրէաստան: Քանզի որ յընտանեացն անարգանս կրէին, ի յօտարաց մեծապէս պատիւս ընդունէին, յաղագս այսորիկ ասաց, թէ չէ՛ մարգարէութիւն անարգանաց պատճառ, այլ գովութեան եւ յարգելոյ, բայց թէ յիրոց ազգաց՝ վասն նախանձու, զի որք զհաւասար պատիւն ոչ առին յաղագս անարժանութեան ընդ պատուեալսն, յաչաղին:

Աստուած Ադամայ երիս շնորհս ետ. թագաւորութիւն՝ զի ասաց. «Տիրեցէ՛ք ամենայնի» (հմմտ. Ծննդ. Ա 28), եւ քահանայութիւն՝ զի անուանս եդ⁶, եւ մարգարէութիւն՝ զի մարգարէացաւ վասն կնոջն⁷, իսկ յետ յանցմանն կորուսին եւ զշնորհսն՝ ըստ այնմ. «Մի՛ մնասցէ Հոգի Իմ ի դոսա» (հմմտ. Ծննդ. 2 3): Վասն այսորիկ եղեւ Տէր մեր երկրորդ Ադամ, զի վերստին զշնորհս զայս հեղցէ ի մարդիկ, եւ կոչեցաւ Թագաւոր եւ Քահանայ եւ Մարգարէ. «Թագաւորեացէ ի վերայ տանն Յակոբայ» (Դուկ. Ա 32), եւ թէ՛ «Դու ես քահանայ յաիտենից» (Սաղմ. ԾԹ 4), եւ թէ՛ «Մարգարէ յարուցէ ձեզ Տէր Աստուած ձեր» (հմմտ. Բ Օր. ԺԸ 15): Եւ զի թագաւոր էր, ասաց. «Յաղթեցի աշխարհի» (Յովհ. Ժ 2 33) եւ կապեաց զհզօրն, եւ իբր զքահանայ մատոյց զպատարագն եւ եդ անուանս առաքելոցն, եւ որպէս

¹ Երեմ. Ա 1, ԺԱ 21

² Գ Թագ. ԺԷ 1, Ժ

³ ՏՁ Աբելմայուլա

⁴ Գ Թագ. ԺԹ 16

⁵ Ա Թագ. Ա

⁶ Ծննդ. Բ 20

⁷ Ծննդ. Բ 23

զմարգարե խօսեցաւ վասն աւերմանն Երուսաղէմի՝ եւ կատարածի աշխարհի, եւ ետ զշնորհս զայս ի մարդիկ, ըստ որում ասաց թէ՝ «Չիք¹ մարգարե անարգ, եթէ ոչ յիրում զաւառի [եւ յիրում տան]»: Եւ զի զմինն յիշէ յերից շնորհացն՝ զմարգարէութիւնն, եւ զերկոսին ոչ յիշեաց՝ զի թագաւոր գոյր եւ քահանայ, հակառակէին, իսկ զմարգարէութիւնն յիշեաց, զի կամ մարգարե ոչ գոյր, եւ թէ գոյին, որպէս Յովհաննէս, ոչ հակառակէին, զի ոգիք մարգարէից՝ մարգարէից հնազանդին: Եւ ասէ, թէ չէ՛ մարգարե անարգ, այսինքն՝ Աստուած անզեղջ է ի տալն զշնորհս, ոչ խոտէ գոք, բայց եթէ որ ծուլութեամբ իրով կորուսանէ, որպէս Սաւուղ՝ զմարգարէութիւնն², եւ Ռորոսմ՝ զթագաւորութիւնն³, եւ քահանայքն՝ զքահանայութիւնն: Քանզի յիրմէ մտաց եւ ի զգայութենէ անարգի շնորհն, վասն այտորիկ ասէ թէ՝ «Չիք⁵ մարգարե անարգ, եթէ ոչ յիրում զաւառի եւ յիրում տան»:

Եւ ոչ արար անդ զօրութիւնս բազումս վասն անհաւատութեան նոցա (ԺԳ 58):

Ոչ վասն Իւր տկարութեանն, այլ վասն նոցա չարութեանն եւ անհաւատութեանն: Իսկ անհաւատութիւն զայն ասէ, զի չէին նշանօք հաւատալոց ի Նա, վասն այն ոչ արար նշանս, եւ ոչ եթէ անհաւատք էին, զի նշանք անհաւատի՛ց վասն են: Բայց զի՞նչ է՝ «Ոչ արար անդ⁶ զօրութիւնս բազումս», որով յայտ է, թէ սակաւ ինչ արար: Նախ՝ բազում ոչ արար, զի քան զանձին մեծարանս՝ զնոցա օգուտն հնարէր, զի մի՛ էւս քան զէւս աճեցուցանէ զտանջանս նոցա, եւ սակաւ նշանս արար, զի մի՛ ասիցեն, թէ թշնամի եղև եղբարց եւ ընտանեաց, վասն այնորիկ ոչ հաւատացաք: Եւ երկրորդ՝ արար եւ արգել, զի միովն զԻւր զօրութիւնն լնուցու եւ միսովն կարի զնոսս դատապարտիցէ:

¹ Զ ոչ է

² Ա Թագ. ԺԵ-ԺԶ

³ Զ Ռորովան

⁴ Գ Թագ. ԺԲ

⁵ Զ ոչ

⁶ Զ > անդ

ԳԼՈՒԽ ԺԳ

Յայնմ ժամանակի լուսա Հերովդէս չորրորդապետ զլուր¹ Յիսուսի (ԺԳ-1):

Քննելի է նախ, թէ ընդէ՞ր ոչ յառաջագոյն պատմեաց արեւտարանիչս գիրսն՝ որ վասն Յովհաննու, այլ այժմ, յորժամ համբաւն տարածեցաւ: Գիտելի է, զի ամենեւին խօսք ևնցա վասն Քրիստոսի էր, եւ ո՛չ զայլ ինչ՝ պատուականագոյն համարէին պատմել եւ թէ պատճառաւ իւրք զուներէ յիշէին, սակայն զվախճան քանիցն դարձեալ ի Նա առնէին: Նոյնպէս եւ այժմ ո՛չ զՅովհաննու իրս ի մէջ ածէր, եթէ ոչ՝ վասն Քրիստոսի ցուցանել կամէր, վասն որոյ ասէ. «Յայնմ ժամանակի...»: Ո՛չ վայրապար զժամանակն դնէ, այլ զի ուսանիցիս զհպարտութիւն իշխանին եւ զծուլութիւն, զի ո՛չ յառաջնումն կամեցաւ լսել զլուր Նորա, այլ յետ քազում ժամանակաց, զի այնպիսի՝ են իշխանք, զգածեալք ի մեծութենէն՝ անագան ուսանին զհարկատր ինչ իրս՝ վասն կարի անփոյթ առնելոյն:

«Լուսա,- ասէ,- Հերովդէս չորրորդապետ»: Ո՛չ է սա այն Հերովդէս, որ զմանկունսն կոտորեաց, այլ որդի նորա, քանզի Հերովդէսն այն էր որդի Անթիպատրեայ Ասկաղոնացոյ՝³, որ ի սպանել իշխանութեանցն հրէից ըստ մարգարէութեանն Յակոբայ՝⁴, առաջին ի հեթանոսաց կալաւ զթագաւորութիւն ի վերայ ազգին, յորում ժամանակի ծնաւ Քրիստոս: Որ եւ էառ չորս կանայս եւ ի չորրորդ կնոջէն ծնաւ զՀերովդէսս զայս եւ զՓիլիպպոս զեղբայր նորա, զոր ոմանք ասեն, թէ վասն այնորիկ չորրորդապետ ասէ: Բայց մեք ստուգութեամբ քննեցաք, զի ծնաւ չորս որդիս՝ զԱրքեղայոս⁵, զԼիսիմասս, զՀերովդէս եւ զՓիլիպպոս, եւ յետ վախճանի իւրոյ, բաժանեալ զիշխանութիւն իւր չորից որդւոց իւրոց, զԱրքեղայոս կացոյց թագաւոր ի Հրէաստանի, որոյ վախճանեալ՝ էառ զտեղի նորա Պիղատոս Պոնտացի: Իսկ երկրորդ բաժնի՝ արելեւնացոց կողմանն, Լիսիմասս տիրեաց, եւ երրորդին՝ իտուրացոց

¹ Գ զլուրն

² Գ որ

³ Գ ասկաղոնացոյ

⁴ Ծննդ. ԽԹ

⁵ Գ Արքեղայոս

եւ տրաքոնացոց աշխարհին՝ Փիլիպպոս, եւ չորրորդին՝ գալիլեացոց գաւառին՝ Հերովդէս: Ուստի գոտսա չորրորդապետս գրէ Ղուկաս¹, զի միոյ ի չորից մասանց պետ եղեալ իշխէին, որպէս ասէ. «Լուսա Հերովդէս չորրորդապետ զլուր Յիսուսի», այսինքն՝ զլուր գործոց եւ վարուցն Յիսուսի:

Եւ ասէ ցծառայս իւր. «Նա է Յովհաննէս Մկրտիչ, նա յարեալ ի մեռելոց, եւ վասն այնորիկ գորութիւնք լինին նովա» (ԺԳ. 2):

Տես, թէ որպիսի ինչ է առաքիւնութիւն, զի յետ վախճանելոյն Յովհաննոս՝ երկնչէր ի նմանէ եւ առ ահին՝ վասն յարութեանն ճարտարախօսէր, վասն այսորիկ ո՛չ ամենեցուն, այլ՝ սեփհական ծառայիցն յայտնեալ իշխեաց: Սակայն զինուորական կարծիք էին այս, զի բազումք յարեան ի մեռելոց եւ ո՛չ այնպիսի ինչ գործ գործեցին, նաեւ ոչ ինքն Յովհաննէս, յորժամ կենդանի էր: Եւ դարձեալ՝ ոմանք ասեն, եթէ պանծանաց իմն եւ երկիւղի էին բանքն, քանզի այնպիսի են անիմաստիցն ոգիքն, զի ընդ ախտս մտացն եւ այլ իմն կարծիս խառնեն, քանզի թէպէտ չառնուին յանձն, թէ Յովհաննէս իցէ, սակայն նա խորխտանօք իմն եւ գոռալով ասէ թէ՝ «Չոր եսն սպանի, նա յարեալ ի մեռելոց», մանաւանդ թէ առ երկիւղի՝ իսկ: Եւ դարձեալ՝ որպէս Ղուկասս ասէ թէ՝ «Ի ժողովրդենէն ոմանք Եղիա եւ այլք Երեմիա ասէին, եւ կէսք՝ թէ մարգարէ որ յառաջին մարգարէիցն յարեալ» (Խմն. Ղուկ. Թ 19), իսկ սա իբր իմաստուն քան զամենեսեան ասէր, թէ Յովհաննէս իցէ, «եւ վասն այնորիկ գորութիւնք լինին նովա», յայտ է՝ ի հաւատացեալս, քանզի «որ ունիցի՝ տացի եւ յաւելցի» (Մատթ. ԺԳ. 12), իսկ անկարանայ յանհաւատս, թէպէտեւ ո՛չ ի բազումս:

Քանզի Հերովդէս կալաւ զՅովհաննէս, կապեաց զնա եւ եղ ի բանդի՝ վասն Հերովդիադայ՝ կնոջ Փիլիպպոսի եղբոր իւրոյ³ (ԺԴ. 3):

Ո՛վ հեզութեան հոգւոյ արեսարանչիս, զի թէպէտ ո՛չ իբր զթշնամւոյ ամբաստանէ, այլ որպէս զպատմութիւն արձանացուցանէ, բայց գրեթէ կրկին եւ երեքկին չարիս ի վերայ նորա գրէ: Նախ՝ զի զայնպիսի այրն ո՛չ վեհերեաց ըմբռնել եւ ասպա կապեաց շղթայիւք. եւ այնու ո՛չ բաւականացաւ, այլեւ ի բանդ եղ, եւ

¹ Ղուկ. Գ 19, Թ 7

² Տ այս

³ Տ նորա

այն՝ վասն կնոջ միոյ լկտոյ: Քանզի այնպիսի է չարութիւնն, յորժամ ոչ է ի գլուխ ելեալ, ոչ տայ գոժնդակութիւն իմանալ, որպէս եւ ոչ հրէիցն, իսկ յորժամ կատարէ, ապա ստրջանայ, զի յառաջագոյն կապեաց եւ եսպան եւ յետոյ ասէր, թէ Յովհաննէս է այն, վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ: Եւ այս ընդդիմակաց զօրութեանն է հնարք, որ նախ զՀերովդէս շարժեաց ի վերայ Յովհաննո՝ զիտացեալ, զի յառաջընթաց է Ռոդոյն Աստուծոյ, եւ ապա՝ զՅուդա եւ զքահանայապետսն ի վերայ Յիսուսի: «Վասն Հերովդիսայ՝ կնոջ Փիլիպպոսի եղբոր իւրոյ՝»¹: քանզի առեալ զկինն՝ ընդ նմին գրաւեաց եւ զաշխարհն նորա, վասն որոյ յանդիմանեալ լինէր յարդարոյն, որպէս ասէ:

Չի ասէր ցնա Յովհաննէս. «Չէ՛ արժան քեզ ունել զդա» (ԺԴ 4):

Ընդէ՞ր ոչ զկինն, այլ զայրն յանդիմանէր. քանզի այրն ճոխագոյն էր քան զկինն եւ բռնութեամբ վարէր: Եւ դարձեալ՝ զի թէպէտ գոյր յՕրէնսն Մոսիսի առնուլ զկին եղբոր վախճանեցելոյ եւ անգաւակի, իսկ զսա, քանզի կենդանի էր եղբայրն եւ կամ զի գաւակ գոյր, յանդիմանէ: Եւ դարձեալ՝ քեզ, ասէ, չէ՛ արժան ունել զդա, զի օրինակ իմն քանոն եւ սահման է թագաւորն աշխարհի, որոյ օրինակաւ ամենեքեան վարին, իսկ դու ի տարօրէնութեանդ գոյով՝ զամենեսեան թիրես, որով ոչ միայն վասն անձինդ, այլեւ վասն հնազանդելոց անօրէնութեանն զդատն տայցես:

Եւ կամէր զնա սպանանել, բայց երկնչէր ի ժողովրդենէ անտի, քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա (ԺԴ 5):

Կարի յանդուզն եւ չարադէս որ էր, զի վասն յանդիմանութեանն, որ հեզութեամբ եւ մեղմագոյն խրատէր՝ ոչ վասն իւր, այլ վասն նորա օգտի, սպանանել խորհէր զՍկրտիչն: «Բայց երկնչէր, - ասէ, - ի ժողովրդենէ անտի»¹: ոչ յԱստուծոյ, որ վրէժխնդիր էր արեանց արդարոց, այլ ի ժողովրդենէն, քանզի այնպիսի՝ են զեղծագործքն՝ միշտ ակնառութեամբ վարիլ եւ զերեսս մարդկան զերագոյն դնել երեսացն Աստուծոյ, որպէս հրէայքն ոչ յՕրինացն եւ յԱստուծոյ պատկառէին՝ ոչ սպանանել զՅիսուս, այլ ի ժողովրդենէն: «Քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա»¹: յիրաւի՝ իբրեւ զմարգարէ, ոչ միայն վասն մկրտութեանն, այլեւ վասն ճշմարտա-

¹ ՏԶ նորա

խօսութեանն, որ է յատուկ մարգարտի, քանզի թէպէտ նշանս ոչ արար Յովհաննէս, բայց զամենայն, զոր ինչ խօսեցաւ, ճշմարիտ խօսեցաւ, վասն որոյ պատուեալ լինէր յաչս ժողովրդեանն:

Եւ իբրեւ եղեն ծնունդք Հերովդի, կաքաւեաց դուստրն Հերովդիայ ի մեջ բազմականին, եւ հաճոյ թուեցաւ Հերովդի (ԺԴ 6):

Սովորութիւն էր առաջնոցն զօր ծննդոց իւրեանց¹ պատուել. նոյնպէս եւ սա. բայց խնջոյք տրա լի եղեւ բազում անօրէնութեամբ՝ դիւական կայթմամբ, քանզի խորամանկութեան խորհրդով հնարեցաւ զայն: Որովհետեւ երկնչէր ի ժողովրդենէն թարց պատճառանաջ² սպանանել զՅովհաննէս, որպէս զի դուստրն Հերովդիայ կաքաւեացէ, եւ նա հաճեցի եւ երդնուցու եւ սպանցէ զՍկրտիչն: Բայց դու տես, թէ ո՞րքան չարիս ի մի վայր ածեալ եղեւ. նախ՝ զի կաքաւեաց եւ հաճոյ թուեցաւ, յորմէ տաղտկանալ արժան էր: Եւ երկրորդ՝ զի զմահ մարգարտին պարգեւ խնդրեաց վարձս անօրէն գործոյն՝ զանօրէն սպանութիւնն: Եւ երրորդ՝ զի տեսողքն եւս անմիտք էին: Եւ չորրորդ՝ տէր խրախութեանն չարագոյն քան զամենեսեան: Եւ հինգերորդ՝ ժամն՝ տարաժամ, եւ վայրն եւ խաղն՝ լկտի: Եւ վեցերորդ՝ լրբութիւն բոզին, զի զոր վասն անօրէն հարսանեացն պարտ էր թաքչել յաղագս նախատանաց մօրն, նա շռայլեալ մտօք կաքաւէր, եւ որում ի սենեկէն չէր պարտ ելանել, ի մեջ բազմականացն իբրեւ զանառակ ճեմէր:

Ուստի եւ երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ եւ խնդրեացէ (ԺԴ 7):

Մարկոս ասէ՝ երդուաւ նմա տալ մինչեւ ցկէս թագաւորութեան իւրոյ³, քանզի յոյժ շամբուշ եւ անմիտ ոք էր, զի կրկին սխալանօք սխալեցաւ. մի՞ զի զաղջիկ մի լկտի իշխան անօրէն պարգեւին առնէր, եւ երկրորդ՝ զի զանձն ընդ երդմամբ փակէր: Այլ որպէս ասացի, խորամանկութեամբ արար զայն, ասպա թէ ոչ՝ թէ զաչս նորա փորել⁴ պահանջեալ էր կամ զորդի նորա ի մահ ածել, տուեալ իսկ էր յօժարութեամբ եւ ոչ բնաւ, որով ցուցանի, թէ զիտութեամբ արար: Յայտ իսկ է ի բնագրէ աստի, զի ասէ, թէ խրատեալ էր նա ի մօրէն, իսկ մայր նորա՝ ի սիդեխէ իւրմէ. արդ՝ զայս վասն այնու-

¹ Զ իւրոց

² Զ պատճառի

³ Մարկ. Զ 23

⁴ Զ փորեալ

րիկ ասեմ, զի մի՛ որ ասիցէ, թէ զի՞նչ մեղք էին նմա, քանզի եր-
րուեալ էր, որ եւ խափանել արժան էր զերդրումն, եթէ ոչ կամօք ե-
ղեալ էր խոտորումն:

Եւ նա յառաջագոյն խրատեալ¹ ի մօրէ իւրմէ՝ «Տո՛ւր ինձ,- ասէ,- այսր ի
վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու Սկրտչի» (ԺԴ 8):

Յայսմ վայրի սկիզբն եւ ճարտարապետ անօրէն գործոյն եւ
աղջկանն լրբութեան եւ անօրէն իշխանին յիմարութեան զՀերով-
դիա ասէ, սակայն ոչինչ ընդհատ ի մօրն չարեացն եւ դատերն ե-
րեւի, քանզի չար սերմանցն եղեւ կատարօղ, քան որումն շնորհա-
կայն պարտ էր լինել: Չի զվրէժ թշնամանաց նորա խնդրէր մար-
գարէն, քանզի ըստ Օրինացն մեծ թշնամանք էին որդոց, եթէ
մարք² ընդ տայգերաց ամուսնանայցեն³, իսկ սա գործակից եւս
լինէր, եւ գորոգայթն կազմէր, եւ զսատանայական պարզեւսն
հայցէր: «Տո՛ւր ինձ,- ասէ,- այսր ի վերայ սկտեղ զգլուխն Յով-
հաննու Սկրտչի»: Տեսանե՞ս զհերատուկն յանդգնեալ, գոր ամե-
նեւին իսկ կլեալ էր սատանայի, զի զպատիւ մարգարէին չակնա-
ծէ ասել եւ ոչ թագուցանել պատկառի, այլ իբրեւ զխորտիկ ինչ
նուիրական՝ զերանելի գլուխ Սկրտչին սկտեղը առաջի խնդրէր
բերել: Ո՛չ ասաց թէ՝ «Աստ տոր ածել եւ սպանանել», քանզի եւ ի
վախճանին ժամն կասկածէր եւ չկարէր համարձակութեանն ժու-
ժալ եւ հանդարտել ահագին բարբառոյ յանդիմանութեանն.
«Տո՛ւր ինձ,- ասէ,- զի ցանկամ զայն լեզու լռեալ տեսանել»: Եւ ո՛չ
զիտէր անմիտն, թէ լռութեամբ մարգարէին՝ չարութիւն նորա յոյժ
հռչակելոց էր, այլ ի յանդիմանութենէն ազատիլ փութայր եւ ոտն-
հար լինել եւ վաշ եւ յայ կարդալ:

Եւ տրտմեցաւ թագաւորն, բայց վասն երդմանցն եւ բարձակցացն՝ հրա-
մայեաց տալ նմա (ԺԴ 9):

Իբրեւ ետես չար աչօք զգործն, ապա տրտմեցաւ, թեպէտ
ինքն իսկ բանդեալ էր զՅովհաննէս: Կամ կեղծատրութեամբ, որ-
պէս ասացաւ, կամ թէ այնպիսի իսկ է առաքինութիւն, զի զարմա-
նայի թուի եւ արժանի զովելոյ, եւ այն ի մէջ անարժանիցն. վասն
որոյ տրտմէր: Բայց զի մի՛ ստախօս կարծիցի եւ ուխտադրուժ, եւ

¹ Զ խրատեալ էր

² Զ մարքի

³ Ղևտ. ԺԸ 16

արհամարհանս ի նախարարացն կրեսցէ, հրամայեաց տալ, որպէս Յեփթայի՝ զդուստր իւր¹: Սակայն նա՝ Աստուծոյ, իսկ սա՝ աղջկան միոյ, որ է յոյժ անմտութիւն, քանզի պարտ էր ի կարեւոր չարեացն երկնչել եւ ոչ վասն սուտ երդմանցն, որ առ բազմականսն, յարիւն արդար ձեռնամուխ լինել եւ անօրէն սպանութեանն այնչափ վկայս բազմութեան կուտել:

Եւ առաքեաց գլխատեաց զՅովհաննէս ի բանդի (ԺԳ 10):

Յորում աուր ինքն ի խաւարչուտ արգելանէն ապրեալ եղև եւ ի լոյս զգալի արարածոցս եկև, յորմէ պարտ էր գոհանալ զխնամոցն Աստուծոյ եւ զբազում կապեալս արձակել, որով եւ ինքն արձակեցաւ, նա զհակառակն արար. զի զքշուառական միտս նորա կապեաց սատանայ, եւ յարդար արիւնն անօրէն հրամանօքն յանդգնեցաւ: Առ որ² ասելի է. ո՛վ Հերովդէս, զի՞նչ գործես դու, ընդէ՞ր տաս զգլուխ արդար՝ պարտաւոր կողին: Այլ քանզի այն, որ յաղթեաց Ադամայ ի ձեռն կողին, որ ընդ նմա իսկ ամուսնացաւ, նոյն յաղթեաց Հերովդէի ի ձեռն կողին, որ նմա շաղաշարեցաւ:

Եւ բերաւ զլուխն նորա սկտեղբ եւ տուաւ աղջկանն, եւ տարաւ առ մայր իւր (ԺԳ 11):

Չզլուխն, որ պսակելոյ եւ բարձրագոյն քարոզելոյ արժանի էր, կառափնատեալ ի մէջ բազմականացն բերէին եւ զդիւաց նշանն յառաջագոյն կանգնէին: Բայց այս եղև, զի անոխակալութիւնն Աստուծոյ եւ ներողութիւնն քարոզեսցի, քանզի անսայր եւ ոչ արձակէր փայլատակունս ի վերուստ եւ զլկտի աչսն եւ զյանդգնեալ երեսսն խարշատէր, եւ զբոլոր զբազմականսն կենդանոյն այրէր: Եւ կամ պատառիլ երկրի՝ եւ զհակառակսն ճշմարիտ քարոզին առ հասարակ կլանէր եւ զարդարն պսակէր եւ այլոց, որ յետոյ զուր չարչարիցին, միսիթարութիւն մատուցանէր: Այլ զայս ոչ արար, մանաւանդ թէ՛ զընդդէմն, որպէս Ինքն ի վերայ խաչահանուացն աղօթէր: «Եւ տուաւ,- ասէ³, - աղջկանն». տուաւ պատճառ դատապարտութեանն՝ յաւակնեալ լրբին, որ իբրեւ զճրագ եղաւ ի վերայ սկտեղ, եւ ընդ ամենայն ազգս լուցաւ եւ

¹ Դատ. ԺԱ 29-40

² Գ որս

³ Գ > ասէ

խայտառակեաց զշնութիւն սպանողաց առ յապայ ժամանակի: Եւ դարձեալ՝ մահն նորա տուաւ օժիտս լկտութեան, որ խայտառով ծնաւ եւ կաքաւելով կատարեցաւ տատրակն անապատի: «Եւ նա տարաւ,- ասէ,- առ մայր իւր»՝ զհամբաւ մահուն Յովհաննու եւ կամ զգլուխն՝ հուր լուցեալ տանն Հերովդիադայ¹, քանզի եւ ինքն այնպիսի մահուամբ, ասեն ոմանք թէ ի ձեռն սառին, բարձաւ ի կենաց, վասն զի կաքաւէր ի վերայ սառին, եւ խրեալ ոտք նորա՝ եհատ սառն զպարանոց նորա՝ ի վրէժխնդրութիւն նորա եւ ի խրատ ամենայն յանցաւորաց:

Եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ բարձին զմարմինն եւ թաղեցին եւ եկեալ պատմեցին Յիսուսի (ԺԳ 12):

Կենօքն զնոսա աշակերտեաց եւ մահուամբն՝ Վարդապետին տիեզերաց աւանդեաց, բայց նախ եկեալ աշակերտքն բարձին պատուով զմարմին նորա եւ ամփոփեցին եւ սակաւ սակաւ ընտանեցեալ Յիսուսի՝ զիրսն որ գործեցան՝ պատմեցին: Եւ զամենայն թողին եւ առ Նա դիմեցին. եւ այն ի վշտացն եւ յառաջին պատասխանեացն յարդարէր, որով լցաւ մարգարէութիւնն Յովհաննու թէ՝ «Նմա պարտ է աճել եւ ինձ մեղմանալ» (Յովհ. Գ 30):

Եւ² իբրեւ լուա Յիսուս, զնաց անտի նաու յանապատ տեղի առանձինն (ԺԳ 13):

Ընդէ՞ր նախ քան զպատմելն ոչ զնաց ի տեղտօղէն, թէպէտեւ գիտէր յառաջագոյն: Քանզի ամենայն իրօք զտնտեսութիւնն ճշմարտել կամէր, վասն այնորիկ յորժամ մատնեցաւ Յովհաննէս եւ յորժամ սպանաւ, եւ յորժամ լուան հրէայքն, թէ զբազումս աշակերտէ, խոյս տայ, քանզի բազում ինչ մարդկօրէն կամի մատակարարել. զի չեւ էր ժամանակ մերկանալ զաստուածութեանն փառս: Վասն զի գիտէր զհնարսն սատանայի, որ ջանայր զմարդեղութեանն խորհուրդ Նորա խափանել, ուստի եւ աշակերտացն պատուիրէր մի՛ ումեք ասել, թէ Նա է Բրիստոսն, մինչեւ Որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ³: Վասն այսորիկ ոչ ի քաղաք ուրեք, ասէ, զնաց, այլ յանապատ տեղիս. եւ ի նաւ մտանէ, զի մի՛ ոք թախանձիցէ երթալ զհետ Նորա: Իսկ առ ի միտս՝ յետ մահուանն

¹ Տ Զերօդիադայ, Չ Զերովդիալ]

² Չ > ԵԼ

³ Մատթ. ԺՁ 20, ԺԷ 9

Յովհաննու, որ է ի սպառել մարգարէիցն, զնաց Բանն ի հեթանոսս, որք անապատ էին ի բարեաց, եւ աշակերտեաց զբազումս նաւու¹ մարմնոյ Իւրոյ:

Իբրև լուան ժողովորդքն, զնացին զհետ Նորա հետի ի քաղաքաց անտի:

Քանզի բեւեռեալ էին ի սէր Նորա, ընդ Նմա երթային հետիոտս, ուստի եւ ոչ ի մահուանէն Յովհաննու երկիրս կրեցին, քանզի այնպիսի է գութն եւ սէրն, զի ամենայնի յաղթ եւ զամենայն դանդաղանս ի բաց փարատէ. վասն որոյ եւ զհատուցումն անդէն առնուին, որպէս ասէ.

Եւ իբրև ել, ետես ժողովորդ բազում, զքացաւ ի նոսա եւ բժշկեաց զհիւանդս նոցա (ԺԴ 14):

Յայտ է՝ ի նաւէ անտի, քանզի յառաջեցին քան զՆա ժողովորդքն ցամաքան, վասն որոյ զքացաւ ըստ բնական բարերարութեանն, քանզի թէպէտ բազում էր փոյթ հպատակութեան նոցա եւ սիրոյ, սակայն երախտիք Նորա զանցուցանէին զամենեքումբբ: Վասն որոյ եւ պատճառ այսպիսի բժշկութեան զողորմութիւնն դնէ՝ բժշկելով զբազումս եւ հաւատս ոչ պահանջելով, քանզի զհետ երթալն եւ զքաղաքսն թողուլն հաւատոց նոցա էր գուշակ, վասն որոյ «բժշկեաց,- ասէ,- զհիւանդս նոցա»՝ ըստ մտացն տգիտութեան եւ ըստ մարմնոցն տկարութեան՝ բանիւ եւ արդեամբբ:

Իբրև ընդ երեկս եղև, մատեան առ Նա աշակերտքն եւ ասնն. «Տեղիս անապատ է, եւ օրս՝ տարածամեալ, արձակեա՛ զժողովորդդ, զի երթիցեն շուրջ ի շէնսն², զնեցեն իւրեանց կերակուրս»³ (ԺԴ 15):

Կամք էր Տեառն մերոյ կերակրել զնոսա. որպէս զհոգիս նոցա՝ բանիւ, այսպէս եւ զմարմինսն՝ հացիւ: Բայց ոչ անձամբ ինչ առնէ, այլ անսայ աղաչելոյ, զի մի՛ կարծիցեն, թէ ընդ առաջ երթայցէ սքանչելեացն. այլ յորժամ կոչիցի՝ քանզի ամենայն ուրեք զայս առնէր: Վասն որոյ իբրև երեկոյ եղև, մատեան⁴ աշակերտքն: Որպէս ասացի, մինչեւ ցերեկոյն վարդապետութեամբն զհոգիս

¹ Զ նաւով

² Զ շէնսդ

³ Զ կերակուր

⁴ Տ մատեանն

նոցա բժշկեաց, իսկ մարմնատր առողջութեան՝ նոցա ոչինչ արար փոյթ, քանզի իւրաքանչիւր ոք յախտաժէտացն կարիս ցաւոց ըստ անձին ունէր, եւ թէ բժշկեալ էին, ինքեանք իսկ խնդրէին զտեղի օթեվանացն: Իսկ աշակերտքն թէպէտ վասն հացի յուշ արարին թէ՛ «Արձակեա զժողովորդսր», այլեւ զբժշկութիւն ցաւոցն հայցէին, վասն որոյ ըստ հարցմանց նոցա տայ զպատասխանին:

Եւ ասէ Յիսուս. «Ոչինչ պիտոյ է դոցա երթալ, դո՛ւք տուք դոցա ուտել» (ԺԳ 16):

Ո՛վ մեծի՞ մարդասիրութեանն. ասէ. «Ոչինչ է պիտոյ դոցա երթալ», որպէս թէ ասել՝ զբարձրագոյնն ջամբեցաք, յաղագս նուստազունիցն ոչինչ է պէտք այլ ուրեք առաքել, «դո՛ւք տուք դոցա ուտել»: Ո՛չ ասաց եթէ՛ Ես տաց, այլ թէ՛ դո՛ւք, քանզի դեռես իբր ընդ մարդ հայէին. բայց նոքա առ այն ոչինչ ընդոստնուին, այլ տակաւին իբրեւ ընդ մարդ խօսէին:

Եւ նոքա ասեն ցՆա. «Ոչինչ ունիմք աստ, բայց հինգ նկանակ եւ երկուս ձկունս» (ԺԳ 17):

Յաղագս այտորիկ ասաց թէ՛ «Դուք տուք դոցա ուտել», զի նոքա բերանօք իւրեանց վկայէին թէ՛ «Ոչինչ ունիմք աստ». որպէս զի մեծասցի հրաշքն, եւ ոչ միայն ժողովորդքն, այլեւ աշակերտքն օգտիցին: Եւ դարձեալ՝ թէպէտ նշանակէ, թէ ապշեալ էին սիրտք նոցա եւ ընդ երկիր քարշէին եւ յասացելոցն ոչինչ իմանալին, այլ զի զյաճախութիւն խորտկացն արհամարհեալ էին, զի երկուտասան այր յանապատին հինգ նկանակ եւ երկու ձկունս ունէին, զի այնպէս անփոյթ արարեալ էին զմարմնականացն եւ հոգեւորին եւեթ պատկառ կային, վասն որոյ եւ յայն ոչ խնայեցին, զոր եւ Յովհաննէս «զարեղէն» ասէ³, առ ի յուսումն մեզ, թէ առաքելոցն եւ մարգարէիցն սեղանքն այսպիսիք էին: Ապա այնուհետեւ զԻւր զօրութիւնն յայտ առնէ. առ ժամայն զամենայն հիւանդսն բժշկէր եւ աշակերտացն բերել հրամայէր զնկանակսն⁴,

¹ Զ առողջութեամբ

² Զ մեծ

³ Յովհ. Զ 9

⁴ Զ զնկանակն

զի յետ բժշկութեանն կերակուր պիտոյ էր, զի մի՛ լուծցին ի ճանապարհի:

Եւ ասէ ցնոսա. «Բերէ՛ք այսր զայն» (ԺԳ. 18):

Ձի թէպէտ տեղիս անապատ է, սակայն Որ զամենայն կերակրէ՝ աստ է, եւ թէ տարածամ է օրս, այլ չէ՛ ընդ ժամանակաւ Որ ընդ սոսա խօսի:

Եւ հրամայեաց բազմեցուցանել զժողովուրդն ի վերայ խոտոյ (ԺԳ. 19):

Նախ զօրութեամբ զհրաշսն եցոյց եւ ասպա՝ արդեամբք, քանզի նստուցանելն իբրեւ ի սեղանի՝ յակճիռս ետ կալ ամենեցուն, եթէ կերակրելոց է զնոսա: Եւ երկրորդ՝ ի վերայ խոտոյ բազմեցուցանելովն վարժեաց, թէ ո՛չ երկնառաք մանանայի որպէս զհին ժողովուրդն յանապատին կերակրէ, այլ հացի, որ յերկրէ ելանէ եւ ի խոտոյ գոյանայ: Եւ երրորդ՝ զառօրեայ կեանսն կերողացն ուտոյց, թէ որք մարմնական հացի միայն են կարօտք, իբրեւ զխոտ ցամաքելոց են՝ ըստ երգոյն թէ՝ «Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր» (Մաղմ. ճԲ 15), եւ թէ՝ «Յամաքեցաւ խոտն» (Ես. Խ 7), սակայն «բան Տեառն մնայ յաիտեան» (հմմտ. Մաղմ. ԼԲ 11), որպէս զի ոչ միայն հացի, այլեւ բանի լինիցին փափագօղ:

Եւ առեալ զհինգ նկանակն եւ զերկուս ձկունս՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց եւ երեկ:

Ընդէ՞ր հայեցաւ յերկինս՝ ասիցէ որ: Նախ՝ զի պարտ էր Նմա հաւատարիմ լինել, թէ Հօր զուգական է եւ ի Նմանէ է ծնեալ. վասն այսորիկ ի փոքունսն ընդ երկինս նայի եւ զմեծամեծսն իշխանութեամբ առնէ, զի ուսանիցիս, թէ զԾնօղն պատուեսցէ, որպէս որդոյ է պատշաճ: Քանզի յորժամ զմեղսն եթող եւ զդրախտն երաց աւագակին եւ բազում անգամ զհին օրէնսն ելոյծ եւ զայնչափ մեռեալս յարոյց, եւ զծովն կապեաց եւ զծածուկս փարիսեցոցն յայտնեաց, եւ զաչս կուրին ստեղծ, որ Աստուծոյ միայն է գործ, ո՛չ երբէք երեւի, թէ աղօթիւք առնէր: Եւ յորժամ զնկանակն աճեցուցանէր, որ փոքր էր քան զամենայն, ընդ երկինս նայէր. զի՞նչ այլ ինչ քան զայս ուտուցանէ, թէ համազոյգ Ծնողին իցէ: Եւ երկրորդ՝ խրատէ մի՛ մատչել ի սեղանն, այլ նախ յերկինս հայել եւ գոհանալ զԱստուծոյ, որ զկերակուրն շնորհեաց, եւ ասպա՝ ճաշակել՝ բեկանելով զհացն: Բայց տարակուսելի

է, թէ ընդէ՞ր ոչ յոչնչէ արար. զի զՄարկիոնի եւ զայլոց բերանսն կապեցէ, որք օտար համարէին ի Նմանէ զարարածս, գործով յայտ առնէ, թէ ամենայն երեսելիքս Նորա ստեղծուածք են:

Եւ դարձեալ՝ զի մի՛ առաջօք կարծիցեն զհրաշսն, ի սակաւ հացիցն զբազումսն աճեցոյց եւ ո՛չ յոչնչէ գոյացոյց, զի յական թօթափել զայն ինչ, զոր տասն ամիսք հազիւհազ¹ վաստակօք եւ աշխատութեամբ ծնանին, տասն մատունքն Նորա վաղվաղակի արարին: Քանզի եդ զձեռն² Իւր ի ներքոյ հացին իբրեւ զերկիր եւ խօսեցաւ ի վերայ իբրեւ զորոտումն եւ ի շարժել շրթանցն ցանեաց իբր զանձրեւ, եւ շոգ ի բերանոյ Նորա եղեւ ի տեղի արեւու: Եւ պսակեալ կատարեաց սրբութեամբ նուրբ ժամուն եւ ետ կերակուր ըղձայի ամենեցուն, վասն որոյ ի ստուգութիւն իրացն օրհնեաց, ասէ, եւ երեկ, զի իմասցիս, թէ յօրհնելոյն սակաւն զբազմութիւն ծնանէր ըստ օրհնութեանն առաջնոյ, զի ասէր. «Աճեցէք եւ բազմացարուք եւ լցէք զերկիր» (Ծննդ. Ա 28) որ ի ծով եւ ի ցամաք³: Որպէս զի մի՛ կարծիցէ որ, թէ ի մօտաւոր գիւղիցն բերին կարգեցին զսեղանն, այլ յօրհնութենէ Նորա աճեցան անդ յանապատի, որպէս զամուլ կանայս, եւ զի որք ասէին. «Միթէ կարիցէ՞ պատրաստել սեղան յանապատի» (Սաղմ. ՀԷ 19), զայն եկեալ ցուցանէր արդեամբք:

Եւ ետ ցաշակերտսն զնկանակսն, եւ աշակերտքն՝ ժողովրդոցն⁴:

Նախ սպասաւորօք վարեցաւ, որպէս օրէն է թագաւորաց: Եւ երկրորդ՝ յայսպիսի սքանչելեաց ետ իշխանութիւն, զոր ոչ տեսեալ էին երբէք եւ ոչ արարեալ, հրամայեաց եւ նոցա առնել, թէ տեղի եւ⁵ ժամանակ պահանջեցէ: Եւ երրորդ՝ տալով ցաշակերտսն զնկանակսն՝ հաղորդս արար զնոսա սքանչելեացն՝ պատուելով զնոսա, քանզի զայս հանդէս չեւ էին առեալ, թէպէտ յայլոց նշանաց ունէին զօրինակ: Եւ չորրորդ՝ [զի] մի՛ մոռացին զհրաշսն, որոյ անձամբ իւրեանց սպասաւորեցին: Եւ հինգերորդ՝ զի ի բարեացն փոյթ մի՛ միայն յօժարեցին, այլ եւ գործով վճարեալ կատարեցեն: Վեցերորդ՝ սակաւապիտութեան լինել ընկեր

¹ Գ հազիւ

² Գ զձեռնս

³ Գ ցամաքի

⁴ Գ ժողովրդեանն

⁵ Գ կան

ուսուցանե՛ տալ զհա՛ցն միայն ի նոսա, որպէս եւ Ռեբեկա ետ զհացն ի ձեռն Յակոբայ¹, եւ Ինքն Տէր «զհաց մեր տուր մեզ» հրամայեաց աղօթել:

Եօթներորդ՝ առ ի միտսն՝ Ինքն է հացն կենդանի յերկնից ի-ջեալ², զոր աւանդեաց աշակերտացն եւ նոքօք՝ հաւատացելոցն՝ կատարել զյիշատակ Նորա մինչեւ ի կատարած աշխարհի՝ ըստ այնմ. «Չայս արարէք առ Իմոյ յիշատակի» (Դմկ. ԻԲ 19), եւ՝ «Քա-նիցս անգամ զհացս զայս ուտիցէք, զմահ Տեառն պատմեցէք, մինչեւ եկեսցէ Նա» (Խմմտ. Ա Կոր. ԺԱ 26): Բայց քանզի զհինգ նկա-նակն ետ ցաշակերտսն, եւ այլն ի ձեռն նոցա ածեաց, որչափ որ պիտոյ էր բազմութեանն, քանզի իբրեւ մատեաւ Շմաւոն³ առնուլ, կարծեաց, թէ իւր բաւական իցէ, եւ անքն լի բազկօք իւրովք տա-նէր, եւ ի ձեռաց իւրոց ոչ պակասէր. նոյնպէս եւ այլոցն, որպէս զի մի՛ հեռ⁴ ի մէջ նոցա անկանիցի. քանզի ամենեքեան բաշխէին ժողովրդոցն⁵, ոչ միայն երկոտասանքն, այլեւ եօթանասունքն:

Կերան ամենեքեան եւ յագեցան, եւ բարձին զնշխարս կոտորոցն երկո-տասան սակառի լի (ԺԴ 20):

Ոչ այնքան⁶ ունէին որովայնք նոցա, որչափ էին ի շալակս նո-ցա, քանզի չափով ունէին որովայնք նոցա, եւ առանց չափոյ էին բարձեալ շալակք նոցա, վասն զի անոյշ էր հացն քան զմանա-նայն յանապատին: Վասն այնորիկ կերան յագ եւ բարձին եւս, նա՛ քանզի եւ մանանայն այգուց այգուց անապական⁷, եւ նա որ-քան յերկարէր, անուշանայր⁸: Իսկ զմնացեալ կոտորսն բարձին երկոտասան սակառի, քանզի կշռեաց Արուեստատորն զքաղց հինգ հազարացն, եւ յաղթեցին նմա թիւ երկոտասան սակառացն: Առ ամենայն արուեստագէտս ցանկութիւն կարօտելոցն բազմա-գոյն է քան զգօրութիւն արուեստագիտացն, զի ոչ ըստ տենչա-նաց նոցա կարեն վճարել արուեստագէտքն. բայց Աստուծոյն ա-ռաւելագոյն է արարչութիւն Նորա քան զկարօտելոցն ցանկու-թիւն, որպէս ամենայն ուրեք, նոյնպէս եւ աստ:

¹ Ծննդ. ԻԴ 33

² Յովհ. 2 35-51

³ ՏՁ Շմաւօն (այսպէս՝ ամենուր)

⁴ Զ հեռի

⁵ Զ ժողովրդոց

⁶ Զ > այնքան

⁷ Ելք Ժ2

⁸ Զ անուշանայր

Եւ դարձեալ՝ երկոտասան սակառի յաւել զնշխարն, զի եւ Յուդա ընդ նոսա բառնայցէ: Դարձեալ՝ եւ այս ի ճշմարտութիւն նշանին, զի մի՛ առաջօր կարծեսցեն, յորժամ զմի կամ զերկու օր զնշխարեալ կոտորսն պահեսցեն, հաւատասցեն, թէ ոչ է նա տեսիլ ընդունայն: Իսկ սակառիքն, ոմանք ասեն, թէ պաշար բարձեալ էին, իսկ այլք թէ՛ որով զհիւանդսն էին բերեալ, եւ ողջացան, նորօք եւ զմնացորդ հացին բարձին. որ է նշանակ սա կառուցեալ մարմնոյ՝ գոյացեալ յերկոտասան անդամոց, եւ ըստանձնեալ բառնայ զգործս առաքիւնութեան: Ոչ զամենայնն, քանզի հոգւոյն է զօրութիւն զկատարեալն գործել, այլ զնշխարս մնացորդաց հոգւոյն վարուց. միանգամայն եւ հաղորդի կենդանարարն հացի:

Եւ որք կերանն՝ էին արք իբրեւ¹ հինգ հազար, թող զկանայս եւ զմանկտի (ԺԳ-21):

Չարմացմամբ զթիւ հազարացն գրէ աւետարանիչս, թէ ի հինգ հացիցն հինգ հազար արքն կերան եւ յագեցան, եւ յաւելլաւ եւս: Բայց մեծ գովութիւն էր այս ժողովրդեանն, զի կանամբք եւ մանկտեօք եկեալ դեգերէին առ Նմա:

Եւ ստիպեաց² վաղվաղակի զաշակերտսն մտանել ի նաւ եւ յառաջել յայնկոյս, մինչ Ինքն զժողովուրդսն արձակիցէ (ԺԳ-22):

Յորժամ մեծ ինչ գործս գործէր, մեկուսի առնէր զանձն ի ժողովրդեանն եւ յաշակերտացն, զի զմեզ ուսուցանիցէ մի՛ ի բազմաց փառս ինչ խնդրել անձանց եւ մի՛ այնր³ զհետ երթալ: Այլ ասելովն թէ՛ «ստիպեաց զաշակերտսն»՝ զհպատակութիւն աշակերտացն յայտ առնէ, յորմէ եւ մեք ուսանիցիմք պատկառ կալ Քրիստոսի, ոչ միայն վասն երեսելի պարգեւացն, զի մի՛ նախատիցիմք, որպէս հրեայքն, եթէ՛ «Խնդրէք զԻս՝ ոչ զի նշանս ինչ տեսէք, այլ զի կերայք ի հացէ անտի⁴ եւ յագեցարուք» (Յովհ. 2 26), այլեւ հոգեւորացն, որպէս աշակերտքն Տեառն: «Յառաջել յայնկոյս, մինչ Ինքն զժողովուրդսն⁵ արձակիցէ». քանզի ժողովուրդքն անքակ

¹ Զ ~ իբրեւ արք

² Զ ստիպեալ

³ Զ այսր

⁴ Զ անդի

⁵ Զ զժողովուրդն

կամէին լինել ի Նմանէ, վասն այնորիկ զնոսա պատճառանօք ժողովոյն արձակեաց յառաջագոյն, որպէս զի նոքա երթիցեն:

Եւ իբրեւ արձակեաց զժողովուրդսն, ել ի լեառն առանձինն կալ յաղօթս:

Դարձեալ՝ եւ այսու զմեզ խրատէ մի՛ միշտ ընդ ժողովուրդն խառնիլ եւ մի՛ ցանկ¹ ի բազմութենէն փախչիլ, այլ երկոքումքք ի դէպ ժամանակի վարիլ օգտակար է անձին եւ բազմաց: Բայց քննելի է եւ այն, թէ է՞ր վասն ի լեառն ելանէ. որպէս զի զմեզ ուսուցէ, եթէ բարոք է անապատն եւ միայնութիւնն, յորժամ աղօթս կամիցիմք մատուցանել, վասն այսորիկ յանապատ երթայր եւ ի լեառն ելանէր եւ զգիշերն ի գլուխ յաղօթս հանէր, զի ժամանակաւն եւ տեղեաւն զանխռովութեան միտս ստասցուք եւ ի ծփանաց ալեաց կենցաղոյս իրաց² զանձինս մեր արտաքս կացուցուք եւ մտօք յերկինս, զոր «լեառն» նշանակէ, ելցուք: Գիտելի է եւ այն, զի որք գ-Քրիստոս յերկուս բաժանեն, որք են նեստորականքն եւ համախոհք նոցին, ասեն, թէ արարածական բնութիւնն աղօթէր. զի թէ այս, ապա ուրեմն եւ որդիք երկուք եւ երկու անձն, զորս նզովէ Կաթողիկէ Եկեղեցի: Այլ Բանն մարմին եղել եւ միաւորեալ ի մարմնի անշփոթաբար, որ զնոյն պատիւ եւ զգօրութիւն կանխազիտութեան ընկալաւ ի Բանէն՝ վասն հաղորդութեան ընդ աստուածային անձնաւորութեան, Նորա են բարձրագոյնքն եւ նուաստագոյնքն, զոր Թոմաս «Տէր եւ Աստուած» կոչէր³: Քանզի զաստուածայինն մարդկաբար եւ զմարդկայինսն աստուածաբար կատարէր, յորոց մի է եւ աղօթելն, որոյ էր եւ մարմինն՝ յաղագս անճառ միաւորութեանն եւ անշփոթ խառնմանն:

Եւ իբրեւ ընդ երեկս եղև, անդ էր միայն (ԺԴ 23):

Եւ նաւն մեկնեալ էր ի ցամաքէն բազում ասպարիսօք՝ ծփեալ յալեացն, քանզի ընդդէմ էր հողմն (ԺԴ 24):

Չի Աստուծոյ բարի է միայնութիւնն, քանզի ոչ է ի բազմաց բարդեալ, ըստ որում այլայլմամբ ամբոխեն զմիմեանս, այլ մի եւ քան զամենայն միակ բարձրագոյն. եւ թէպէտ մարդացաւ, սա-

¹ ՏԶ ցանգ

² Զ ի բաց

³ Յովհ. Ի 28

կայն մի է եւ յետ մարդեղութեանն՝ ըստ այնմ. «Միայնն, մինն»¹, եւ զայս ասեմ ըստ² բնութեանն եւ³ ըստ անձնատրութեանն: Եւ նաւն, ասէ, մեկնեալ ի ցամաքէն՝ ծփէին յալեացն իբրեւ⁴ զառաջինն. այլ յայնժամ թէպէտ վշտանային, ընդ նոսա էր ի նաւին, իսկ այժմ առանձինն ինքեանք միայն, զի առ սակաւ սակաւ մեղմով ի մեծամեծսն կրթէր զնոսա՝ ժուժկալ լինել նեղութեանց: Քանզի Ինքն ի բաց գնաց եւ նոցա ի մէջ ծովուն ետ ծփիլ, մանաւանդ թէ Ինքն իսկ հրաման ետ հողմոյն յուզիլ, զի մի՛ այլ ուստեք ակն ունիցին յուսոյ փրկութեան: Նաեւ հողմն նշանակ էր ընդդիմակ զօրութեանցն, որք ի ծովու աշխարհիս փորձելոց էին զնոսա:

Եւ ի չորրորդում պահու գիշերոյն եկն առ նոսա Յիսուս՝ զնալով ի վերայ ծովուն (ԺԴ. 25):

Ընդէ՞ր ոչ վաղվաղակի. զի խրատեսցէ զնոսա մի՛ արագ խնդրել դիւրութիւն ի վշտացն, այլ յամել եւ տանել առաքինութեամբ փորձանացն: Իսկ զի՞ զթիւ պահուցն ասէ. քանզի արուեստիւ ցուցական ժամուց գիտակ լինին նաւավարքն, մանաւանդ Հոգւոյն յայտնութեամբ: Բայց զի «պահ» ասէ եւ ոչ «ժամ», յորմէ առեալ ոմանք ասեն, թէ երեք ժամքն պահ մի ասին, եւ լինի երկուտասան ժամ գիշերոյն չորս պահ: Ուստի յայտ է, թէ յառաւօտու պահուն երեւեցաւ նոցա Յիսուս՝ զնալով ի վերայ ծովուն նովին մարմնովն, որով աղօթէրն:

Իբրեւ տեսին զՆա աշակերտքն, զի զնայր ի վերայ ծովուն, խռովեցան եւ ասեն, թէ առաջօք ինչ իցէ, եւ առ ահին աղաղակեցին (ԺԴ. 26):

Մինչդեռ նստէին նոքա ի նաւի անդ հողմակոծեալք ի ծովէն, կրկին խռովեցան եւ ի Տեառն երեւմանէն, զի առ աչս երեւոյթ կարծեցին: Եւ զի հաստատ գիտէին զՆմանէ, թէ ծանրութիւն մարմնոյ է՞ զգեցեալ, որ դժուար է զնալ ի վերայ ջուրց, ապա ուրեմն ո՛չ անմտութեամբ զարհուրեցան ընդ⁶ իրսն, որ տեսին մարմնոյ զնալ ի վերայ ալեաց ծովու: Մակայն ո՛չ զանձն յայտնեաց, մինչեւ զաղաղակ բարձին թէ՛ ո՞րք ես, եւ կամ զՅիսուս

¹ Զանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ եւ աւետարանչի, Բ

² Զ ոչ ըստ

³ Զ այլ

⁴ Զ իբր

⁵ Զ > է

⁶ Զ զի

կարդալով յօգնականութիւն անձանց. զի յաճախութեամբ զարհուրանացն խրատեսցին ժուժկալս լինել եւ ցանկասցին գալստեան Նորա:

Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա Յիսուս եւ ասէ. «Քաջալերացարո՛ք, Ես եմ, մի՛ երկնչիք» (ԺԴ 27):

Այսինքն՝ մարմնատրն, զոր դուք իսկ տեսէք. եւ քանզի յերեսացն չճանաչէին, զի զհշեր էր, եւ ոչ ի նորանշան զնացիցն արագապէս բարբառովն յայտնէ զանձն, որով զերկիւղն կազդորեաց, որպէս զի ի ծով աշխարհիս ի Նա վստահանալով՝ ո՛չ յումեքէ երկիցեն՝ ըստ այնմ. «Տէր է իմ օգնական, եւ ես ոչ երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ» (Մաթմ. ԾԺԷ 6):

Պատասխանի ետ Նմա Պետրոս եւ ասէ. «Տէ՛ր, եթէ Դու ես, հրամայեա ինձ գալ առ Քեզ ի վերայ ջրոյս»¹ (ԺԴ 28):

Եւ Նա ասէ՝ եկ (ԺԴ 29):

Պետրոս հասու եղև, թէ վասն մարմնոյն ասաց թէ՛ Ես եմ, աստ՝ թէ այդպէս իցէ, եւ ե՛ս մարմին զգեցեալ եմ, եթէ զնացից եւ ես ի վերայ ջուրցս, զիտացից, թէ եւ Դու՛ն նովին մարմնովն, զոր եսն զիտեմ, զնացեր: Բայց դու տես զջերմութիւն սիրոյն, զոր ունէր առ Նա, զի ո՛չ ասաց՝ աղաչեա կամ յաղօթս կաց, այլ թէ՛ հրամայեա՛, ուստի իմանամք, թէ ո՛չ ի ցոյց կամ ի պարծանս, այլ վասն սիրոյ միայն եւ ի ստուգութիւն իրացն յայտնութեան: Իսկ ասելն թէ՛ «գալ առ Քեզ», ոչ այնչափ խնդրէր, զի ի վերայ ջուրցն զնայր, քան թէ առ Նա ընթանայր, խնդալից լինէր: «Եւ Նա ասէ՛ եկ». քանի միայն, որ զերկինս ձգեաց, եւ զծով յատակընթացս Պետրոսի գործեաց. բայց զարմացիր ընդ հաւատս Պետրոսի, զի յանձն առեալ զնաց, որպէս ասէ.

Եւ իջեալ ի նաւն Պետրոս՝ զնաց ի վերայ ջուրցն եւ եկն առ Յիսուս:

Չոյժ՝ զօրութիւն Տեառն նկարագրէ, զի ոչ միայն Ինքն ընթանայր, այլեւ այլոց զնալ հրամայէր, նաեւ զխիզախելն Պետրոսի գուշակէ եւ զցանկութիւն սիրոյն, զոր առ Նա ունէր՝ նշանակէ: Իսկ առ ի միտս՝ ո՛չ որ մերձաւոր լինի Քրիստոսի, եթէ ոչ ի մարմ-

¹ Զ ջրոցս

² Զ զի յոյժ

նային եւ յախտաւոր ծննդեան¹, զոր «նաւ» ասաց, իջեալ խոնարհի առ հոգեւոր ջրոյն ծնունդն, որով յերկինս գրի եւ արքայութեանն ժառանգ լինի:

Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեալ (ԺՂ 30):

Մեծին յաղթեաց, զի գնաց ի վերայ, իսկ ի հողմոյն երկեալ, քանզի այնպիսի է մարդկային բնութիւնս. բազում անգամ ի մեծամեծս առաքինանայ եւ ի փոքունս զեղծանի, որպէս Եղիա՝ ի Յեզարել², եւ Մոսէս՝ յեզիպտացոյն³, եւ Դաւիթ՝ ի Բերսաբէէ⁴: Նոյնպէս եւ սա, մինչ սաստկացեալ էր այիքն, էջ եւ ընդդէմ հողմոյն չկարաց գորել, եւ այն զի մօտ էր Քրիստոս. յորմէ ուսանիմք, թէ չէ՛ ինչ օգուտ մօտ լինել Քրիստոսի, եթէ հաւատով չիցէ որ մօտ: Եւ դարձեալ՝ զի զանազանութիւն լիցի ի մէջ Վարդապետին եւ աշակերտին եւ այլոց աշակերտացն մխիթարութիւն, զի թէ յերկուցն վերայ ըմբոստացան, ո՞րչափ եւս առաւել անդ, զի չե՛ն եւս առեալ էին զՀոգին:

Եւ իբրեւ սկսաւ ընկղմել, աղաղակեաց եւ ասէ. «Տէ՛ր, փրկեա՛ զիս»:

Չի առաջինն փորձ առեալ էր զՆորա զօրութիւնն, զի լռեցոյց զայիսն, վասն այնորիկ եւ էջ իսկ, ուստի յորժամ սկսաւ ընկղմիլ, զաղաղակ եքարձ եթէ՛ փրկեա՛ ի յընկղմանէ աստի: Բայց զովութիւն է այս առաքելոյն, զի ի սկիզբն փորձութեանն առ Նա դիմեաց:

Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց⁵ զձեռն Իւր, կալաւ զնա եւ ասէ. «Թերահաւա՛տ, ընդէ՞ր երկմտեցեր» (ԺՂ 31):

Ընդէ՞ր արդեօք հողմոյն ոչ սաստեաց դադարել, այլ Ինքնին ձեռն ձգեաց եւ բուռն եհար զնմանէ. զի Պետրոսի հաւատոց պէտք էին, զի յորժամ մերն կասիցի, Աստուծոյն ի թիկունս հասանիցէ: Եւ ցուցանէ, թէ ոչ հողմոյն ինչ բռնութիւն, այլ նորա թերահաւատութիւնն առնէր զընկղմիլն⁶, զի թէ ի հաւատոցն չէր տկարացեալ, եւ հողմոյն կարէր դիւրաւ ընդդիմանալ: Վասն այնորիկ

¹ Տ ի ծննդեանն

² Գ Թագ. ԺԹ 1-4

³ Ելք Բ

⁴ Բ Թագ. ԺԱ

⁵ Զ ~ ձգեաց Յիսուս

⁶ Զ զընկղմելն

թեպետ բուռն եհար զնմանէ, հողմոյն տակաւին շնչել տայր, զի յայտ արասցէ, թէ չկարէ ինչ հողմն վնասել, յորժամ հաւատքն հաստատուն իցեն: Իսկ երկմտելն Պետրոսի ոչ այլ ինչ էր, քան թէ կարծելն ո՛չ ի Նորա զօրութենէն, այլ յանձին առաքիւնութենէ վճարէ զիրն, վասն որոյ զաստն ընկալաւ, կամ թէ ո՛չ իցէ Նա, այլ երեսոյթ ինչ առաջօր երեւեալ:

Եւ իբրեւ ելին ի նաւն, հանդարտեաց հողմն (ԺԳ 32):

Չի լցցի ասացեալն ի մարգարէէն թէ՛ «Դու տիրես զօրութեանց ծովու եւ զխոտվութիւն ալեաց նորա Դո՛ւ ցածուցանես» (Մատթ. 2Ը 10), եւ թէ՛ «Տեսին զՔեզ ջուրք եւ երկեան, եւ խորք խոտվեցան» (Մատթ. 22 17), եւ՝ «Շաւիղք Քո ի ջուրս բազումս, եւ հետք Քո ոչ եւս երեւին» (Մատթ. 22 20): Իսկ առ ի միտս՝ ծովն աշխարհս էր, որ հանդարտելոց էր քարոզութեամբ առաքելոցն, յորմէհետէ մուտ եւ էլ արար Տէր մեր Յիսուս Քրիստոս: Եւ դադարելոց էին¹ հողմոցն յուզմունք՝ Բանսարկուին փորձութիւնք եւ վարդապետութիւնք:

Եւ որ ի նաւին էին, մատնան երկիրպագին Նմա եւ ասեն. «Արդարե՛ւ Որդի Աստուծոյ ես Դու» (ԺԳ 33):

Յառաջնումն ասէին. «Ո՞րք իցէ այրս այս, զի եւ հողմք եւ ծով հնազանդին Սմա» (հմմտ. Մատթ. Ը 2 7), իսկ աստ՝ ո՛չ այսպէս, այլ խոտտովան եղեն բանի իւրեանց, թէ արդարեւ Որդի Աստուծոյ է Նա. եւ ո՛չ միայն բանի, այլեւ իրօք զերկրպագութիւնն, որ Աստուծոյ էր անկ, Նմա մատուցին: Եւ այսպէս մեղմով ի բարձրագոյնս հանէ զնոսա՝ զնալով ի վերայ ծովուն եւ այլում հրամայելով զնոյն առնել, եւ զտազնապեալն ապրեցուցանել, եւ զհողմն դադարեցուցանել, յաճախէին այնուհետեւ հաւատքն Որդի Աստուծոյ զՆա դաւանել: Յորոց դարովեալ լինի Արիոս, զի հակառակ եղեւ աստուածային ծննդեանն:

Եւ անցեալ եկին ի ցամաք ի Գեմնեսարէք (ԺԳ 34):

Եւ իբրեւ ծանեան զՆա արք տեղոյն այնորիկ, առաքեցին ընդ ամենայն գաւառն եւ ածին առ Նա զամենայն հիւանդս (ԺԳ 35):

¹ ՏԶ էր

Եւ աղաչէին զՆա, զի գոնէ միայն ի քղանցս հանդերձի Նորա մերձեցին. եւ որք միանգամ մերձեցանն¹, փրկեցան (ԺԳ 36):

Ո՛չ իբրեւ զառաջինն զային եւ ի տունս ձգէին եւ հրամանս բանից խնդրէին, այլ կարի ի բարձրագոյնսն ելին եւ մեծ հաւատովք յափշտակեցին զբժշկութիւն, քանզի տեռատեսն² ուսոյց զամենեսեան ցածնուլ: Բայց ասելն՝ «Իբրեւ ծանեան զՆա արք տեղւոյն»՝ ցուցանէ, թէ յետ բազում ժամանակաց եկն անդր, եւ ժամանակին յերկարութիւն ոչ միայն ո՛չ ջրեաց զհաւատն, այլեւ յաճախութիւն եւ նորոգս գործեաց, որպէս զի մերձենալով ի ստորոտ հանդերձի Նորա՝ փրկեալք լինէին յիրաքանչիւր ցաւոց իւրեանց³: Իսկ տեղին, յորում այս եղև, Գեննեսարէթ է, որ թարգմանի պարտեզ իշխանաց՝ յերկիրն Հրէաստանի:

¹ Զ մերձեցան

² Մատթ. Թ 20-22

³ Զ իւրոց

ԳԼՈՒԽ ԺԵ

Յայնժամ մատեան առ Յիսուս՝ որ յԵրուսաղեմէ փարիսեցիքն եւ դպիրք եւ ասնն (ԺԵ 1).

«Ընդէ՞ր աշակերտքն Քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն, զի ոչ լուանան զձեռս, յորժամ հաց ուտեն» (ԺԵ 2):

Ե՞րբ մատեան. յորժամ քիւրուց քիւրս նշանս գործեաց, յորժամ զհիւանդս բժշկեաց՝ մերձենալով միայն ի քղանցս հանդերձի Նորա, զոր նշանակէ աւետարանիչս զժամանակն, զի ցուցցէ զանչափ զօրութիւն Նորա: Բայց զի՞նչ է՝ «յԵրուսաղեմէ փարիսեցիքն» ասէ. քանզի ընդ երկոտասան ազգն բաժանեալք էին դպիրքն եւ փարիսեցիքն, այլ որ զմայրաքաղաքն ունէին, աւելի քան զայլսն դժնդակք էին, զի որչափ առաւել քան զայլսն ի պարզեւսն վայելէին, նոյնչափ ի հպարտութիւնն ածէին: Վասն այնորիկ յիմարեալք ի հարցուածոցն ըմբռնին, քանզի ո՛չ ասացին, թէ անցանեն զՕրինօքն Մոսիսի, այլ թէ՝ զտուչութեամբ ծերոցն: Ուստի յայտ է, թէ բազում ինչ նորամուտս արարին քահանայքն. թէպէտ բազում ահիւ եւ սպառնալով պատուիրեալ էր մի՛ առաւելլով ինչ եւ մի՛ հատանել¹, այլ նոքա ո՛չ սակաւ նորածես ինչ առնէին: Այսպիսի ինչ, թէ ո՛չ է պարտ անլուայ ձեռօք հաց ուտել, որպէս ինքեանք մտեալ ի հրապարակէ՝ բռնալիր լուանային, եւ մկրտութիւնս բաժակաց եւ պղնձեաց եւ ստոմանաց եւ մահճաց իմանային: Որ եւ յոյժ ծաղու իրքն լի էին, քանզի յորժամ ազատանալ պարտ էր նոցա ի խտրանացն՝ վասն հասանելոյ ժամանակին, նոքա յայնժամ առաւել ընդ խտրանօք զանձինս կապէին, որպէս թէ օրինադիրք իցեն, այնպէս ձեւանային, «անցանեն,- ասէ,- զաւանդութեամբ ծերոցն»: Որ քան զԱստուծոյ առաւել ի դէպ թուէր, զայն ի մէջ ածէին, որպէս զի այնու առաւել իմն զՆա կամէին ցատուցանել, զի թէ անզոսնեացէ ինչ զնոսա, անձամբ անձին տացէ զպատճառս չարախօսութեան:

Բայց պարտ է քննել, թէ ընդէ՞ր աշակերտքն անլուայ ձեռօք ուտէին: Չայս՝ ո՛չ առ հեստել ինչ, այլ անփոյթ աւելորդացն առնէին եւ կարեւորացն եւեթ պատկառ կային, զի ո՛չ լուանալոյ եւ ո՛չ

¹ Զ հատանել
Բ Օր. 72

անյուանալոյ օրէնս անձանց դնէին, այլ որպէս դէպն պահանջէր, նոյնպէս յերկոսեան վայելէին:

Նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. «Իսկ դուք ընդէ՞ր անցանք զպատուիրանան Աստուծոյ՝ վասն ձերոյ աւանդութեանն¹ (ԺԵ 3):

Կրկին մեղադրանօք մեղադրէ նոցա. նախ՝ զի Աստուծոյ ոչ անսային, եւ ասպա՝ զոր ինչ առնէին, մարդկան վասն առնէին. զի թէ նոքա զմարդկան օրէնս անցեալ՝ ըստգտեալ եղեն ի ձէնջ, քանի՛ աւելի դուք, զի զԱստուծոյն կոխիցէք, քանզի այդ իսկ կորուսանէ զձեզ, զի զձերոցն առնէք եւ ոչ զԱստուծոյ: Բայց ոչ ասաց «վասն ձերոց աւանդութեանն», այլ վասն «ձերոյ»², զի անտաղտուկ առնիցէ զբանն:

Չի Աստուած ասաց. «Պատուեա զհայր քո եւ զմայր (ԺԵ 4),

եւ որ բամբասէ զհայր կամ զմայր, մահու վախճանեսցի» (ԺԵ 5):

Նախ զՕրէնսն ընթեռնու, զի անտի իսկ յայտ առնիցէ, թէ յոյժ կամք են Օրինացն պատուել զհայր եւ զմայր, քանզի բերանով Իրով իսկ ասաց Աստուած. «Պատուեա զհայր քո եւ³ զմայր, եւ երկարակեաց լինիցիս» (հմմտ. Ելք Ի 12): Այլ Նորա թողեալ զպարգեսս պատուելեացն՝ զահագին պատիժ չպատու[ել]եացն դնէ թէ՛ «Որ չարախօսէ զհօրէ կամ զմօրէ, մահու վախճանեսցի» (Ելք ԻԱ 17), քանզի նոքա զաշակերտսն անօրէնս ցուցին, յայտ առնէ թէ՛ դո՛ւք էք անօրէնութեամբ լի եւ մահուց արժանի, զի թէ որ բամբասէ քանի, պատժելոց է, ո՞րչափ եւս առաւել դուք, որ արդեամբ իսկ թշնամանէք, եւ ոչ միայն դուք, այլեւ զայլս ուսուցանէք. որպէս զի երկեցուցանէ եւ զԻրեաւ անէ:

Եւ դուք ասէք. «Որ ասիցէ ցհայր իր կամ ցմայր իր, թէ պատարագ է, զոր յինէն օգտիցիս, եւ ոչ պատուիցէ զհայր իր կամ զմայր իր», եւ խոտէք զբանն Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեանն (ԺԵ 6):

«Դո՛ւք» ասէ եւ ոչ Աստուած. զոր ասէն՝ այսպիսի է. աստուածպաշտութեան պատճառանօք ուսուցին որդոց արհամարհել զհարս, քանզի թէ ոք ի հարց կամ ի մարց ասէին ցորդիս իւրեանց. «Տուր ինձ ոչխարիկ մի» կամ «որթիկ մի», կամ այլ ինչ

¹ Գ աւանդութեանդ

² Գ ձերոց

³ Գ > մինչև ժԵ 10-11 համարների մեկնության Ինձ թուի թէ բառերը

այսպիսի, ասեին թե՛ «Այդ Աստուծոյ պատարագ է, զոր յինէն օգտեալ խնդրիցես, եւ չէ հնար, թէ առնուցուս»: Ուստի կրկին չարիք լինէին. մի՛ զի ոչ Աստուծոյ մատուցանէին, եւ միւս՝ զծնօղսն զրկէին զործով՝ պատարագացն անուամբ, քանզի զհայրն եւ զմայրն վասն Աստուծոյ թշնամանէին եւ զԱստուած վասն հարցն եւ մարցն անարգանացն խոտէին: Վասն որոյ ասէ թե՛ «խոտէք զբանն Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեանն», որ եւ ոչ բնաւ իսկ են օրէնք, քանզի ի մարդկանէ եղան, զոր եւ աւանդութիւն կոչէ, իսկ զԱստուծոյն բան՝ սահմանիչ երկնի եւ երկրի: Լսի եւ այսպէս թե՛ «Պատարագ է՝ զոր յինէն օգտիցիս», քանզի էին ոմանք ծնունդք՝ հպարտք եւ սէզք, զի զանձինս իրեանց իմաստունս ունէին եւ զծնօղսն խրատէին՝ ասելով թե՛ «Չոր ի բանից իմոց օգտիցիս, այդ հաճոյ է Աստուծոյ իբր զպատարագ», ասէ, թէ անպատուութիւն է ծնողաց, զի նա՛ վարդապետ քո է, եւ դու ի նմանէ՛ ունիս որպէս զբնութիւնդ, այսպէս եւ զվարժդ. քանզի զայդ առնելով՝ խոտես զբանն, որ ուսոյց պատուել զհայր եւ զմայր:

Կեղծաւորք, բարոք մարգարեացաւ ի վերայ ձեր Եսայի եւ ասէ (ԺԵ 7).

«Ժողովորդս այս շրթամբք պատուէ զԻս եւ սրտիք իրեանց հեռացեալ մեկուսի են յԻնէն (ԺԵ 8):

Չո՛ր պաշտեն զԻս. ուսուցանեն վարդապետութիւնս՝ զմարդկան պատուիրեալս» (ԺԵ 9):

Կեղծաւոր է ստուգապէս, որ ասէ զայլ իրս եւ զործէ զընդդէմն, որպէս սոքա օրինաւորք զանձինս կարծէին եւ աստուածապաշտք անուանէին եւ ընդ հակառակս ելանէին: Եւ զի մի՛ ըմբոստասցին չլինել այնպիսի, մարգարեական բանիւն կնքէ, թէ կանխատես հաստատութեամբ զչարութիւն ձեր խօսէր Եսայիաս¹: Նաեւ նոքօք զԱնձն միաբանեցուցանէ Աստուծոյ. «Չո՛ր պաշտեն զԻս», - ասէ. այսինքն՝ սուտ աստուածապաշտ կոչին կամ թէ չգտանեն վարձս՝ վասն շրթամբք պատուելոյն զԻս, որովհետեւ խորհրդովք եւ զործովք հեռացեալք են յԻնէն: «Ուսուցանեն վարդապետութիւնս՝ զմարդկան պատուիրեալս». զԱստուծոյն արհամարհեն, ասէ, եւ զիրեանցն հաստատել կամին՝ ըստ առաքելոյ թե՛ «Ձիրեանց արդարութիւնն կամին կացուցանել» (հմմտ. Հռոմ. Ժ 3):

¹ Ես. ԻԹ 13

Ապա յայն սակս պահեն զԻմն, զի զիրեանցն պահեսցեն, որով երեւի մարդասպաշտս զոլ զնոսս եւ ոչ աստուածասպաշտս:

Եւ կոչեցեալ առ Ինքն զժողովորդսն՝ ասէ ցնոսս. «Լուարուք եւ ի մի՛տ առեք» (ԺԵ 10).

ոչ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ ի բերանոյ, ա՛յն պղծէ զմարդ» (ԺԵ 11):

Իբրեւ վիրատրեաց զնոսս զԻր վճիռն տալով եւ ի մարգարէին անբաստանութենէ, այլ ընդ նոսս ոչինչ խօսի, քանզի չէին գալոց յուղղութիւն, ի ժողովորդն դարձուցանէ զբանն եւ բարձրագոյն օրէնս լի ամենայն զգաստութեամբ առաջի դնէ: Եւ նախ մտադիրս եւ ուշակալս առնէ՝ ասելով. «Լուարուք եւ ի մի՛տ առեք», այսինքն՝ խելամո՛տ լերուք, զի թէ նոցա, որ անդէպս լուծանէին զՕրէնսն, անձնատուր վարդասպետութեամբ լսէիք, ապա եւս առաւել Ինձ պարտ է լսել, որ ի դէպ ժամանակի ի բարձրագոյն առաքինութիւնս հանեն: «Ո՛չ որ ինչ մտանէ ընդ բերան՝ [պղծէ զմարդ]». ի բուն իրս իջեալ՝ օրէնս դնէ եւ վճիռս հատանէ. բայց նոքա իբրեւ լուան զայս, ոչինչ ընդդէմ դառնային, թէ Աստուած այնչափ պատուէր ետ վասն կերակրոյ խտրանաց, եւ Դու այլ իմն օրինադրես: Ինձ թուի, թէ՛ կամ զի կարի պապանձեցոյց զվարիսեցիսն եւ զենգութիւն նոցա յայտնեաց, վասն այնորիկ հաւանեցան, եւ կամ թէ ոչ յայտնի զկերակրոցն ճառեաց, այլ թէ որ մտանէ ի բերանն², ոչ պղծէ զմարդ, զոր վասն անլուայ ձեռօք ուտելոյն կարծեցին, թէպէտ Տէրն յայտնի վասն կերակրոցն ասաց: Իսկ թէ յետոյ ասէ, թէ անլուայ ձեռօք ուտել ոչ պղծէ զմարդ, յաղազս այնորիկ ասաց, զի մի՛ դիմադարձութիւն ինչ լինիցի:

Բայց քննելի է զբանս Տեառն, թէ զիա՞րդ ամենայն ինչ, որ ի բերանն մտանէ, ոչ պղծէ զմարդ, քանզի բազում կերակուրք են, որք ոչ միայն պղծեն, այլեւ սպանանեն եւս, եւ ընդդէմ այսր՝ քանզի զիտենք, զի ուտեն ոմանք հաց միայն եւ պղծին: Նախ զայս ասենք. թէպէտ ստուգապէս վասն կերակրոց է բանս, բայց վասն ընտրելոցն եւ օգտակարացն, զորս Օրէնքն եւ բնութիւնք մարդկան բազում փորձանօք փորձեցին, որք ոչ ունին զօրութիւն պղծելոյ կամ վնասելոյ, թէպէտ բարուց ոմանց զազիրք երեւին,

¹ Զ արունակվում է այստեղից

² Զ ընդ բերան] ի բերանն

բայց որք ուտեն առանց խղճմտանաց, ըստ առաքելոյ, սուրբ է¹, որպէս ոմանք զնապաստակ ուտեն եւ այլք՝ զխոզենիս, զորս² Օրէնքն խտրէին զերկոսին³. Բայց յորժամ ի տեսլենէ կտաւոցն Պետրոսի վարժեցան ուտել եւ ի Տեառն բանիցս, ուտեն եւ ոչինչ վնասին, նոյնպէս եւ այլքն ամենեքեան: Եւ երկրորդ՝ ոչ հարկաւ եղ զայս Տէրն, այլ կշռեալ⁴, զի յորովայն մտեալ կերակուրսն եւ զամփոփեալսն⁵, ընդ արտաքս եկեալ չարութիւնսն, որ ի սրտէն բղխեն եւ զբազումս խոցոտեն եւ զանձինս, այսպէս ասաց: Քանզի պղծելն ոչ ծածկելն է, այլ բանալն, որպէս սովորութիւն է զանփորձսն ամուսնութեան սուրբ ասել եւ զփորձեալսն՝ պղծեալ, քանզի յայտնեաց զառականս իւր: Իսկ որք հացի միայն պղծին, զի ցանկութեամբ ուտեն, ասացուք, թէ այն իսկ է, զոր Տէրն ասաց, թէ որ ի սրտէն ելանէ, այն պղծ է զմարդ, յորոց մի է եւ ցանկութիւն եւ որկրամոլութիւն, քանզի ի սրտէն բղխէ եւ պղծէ:

Յայնժամ մատուցեալ աշակերտացն Նորա՝ ասեն ցՆա. «Գիտե՞ս, զի փարիսեցիքն իբրեւ լուան զբանն, զայթազդեցին» (ԺԵ 12):

Ընդէ՞ր զայս ասացին աշակերտքն. քանզի լուեալ էին ի Տեառնէ թէ՛ «Վա՛յ որ զայթազդեցուցանէ զմի որ...» (հմմտ. Մատթ. ԺԸ 6-7), եւ փարիսեցիքն, քանզի մարմնականք էին եւ մարմնոյ խտրանաց եւեթ հոգ տանէին, վասն որոյ զայթազդեցին: Կարծեցին աշակերտքն, թէ զԻւր եղեալ օրէնս լուծանէ, իսկ Քրիստոս ոչինչ յարդարեաց զզայթազդութիւնն, քանզի զիտէ արհամարհել զզայթազդութիւն եւ չարհամարհել, յորժամ տեղին կամ երեսն պահանջէ: Որպէս յորժամ ասէր առ Պետրոս. «Երթ ի ծով եւ ընկեա կարթ, զի մի՛ զայթազդեցուցուք զնոսա» (հմմտ. Մատթ. ԺԷ 26), եւ աստ արհամարհէ եւ «կոյրս» զնոսա ասէ, զի ուսուցէ, թէ ընտրութեան պէտք են զայթազդեցուցանել եւ կամ ոչ: Եւ դարձեալ՝ վասն այնորիկ հարցին, զի ոչ ընդ նոսա միայն⁶ տրտմեցան, այլ զի եւ ինքեանք փոքր մի խռովեցան, թէպէտ յիւրեանց դէմս չկարացին ասել զայս, զորս գիտացեալ Տէրն՝ պատասխանեաց:

¹ Հռոմ. ԺԴ 20

² Տ զոր

³ Ղեստ. ԺԱ 5-8

⁴ Զ կշռել

⁵ ՏԶ զանփոփեալսն

⁶ Զ ~ միայն ընդ նոսա

Նա պատասխանի ետ նոցա եւ ասէ. «Ամենայն տունկ, գոր ոչ տնկեաց Հայր Իմ երկնաւոր, խլեսցի (ԺԵ 13):

Թէպէտ ոմանք, որք զմանիքեցոցն ախտանան, զՕրինացն ասեն, բայց ճշմարտապէս վասն հաւատոցն որ առ Նա եւ պատուիրանաց գործոցն ասաց զայս՝ ըստ այնմ. «Ո՛չ որ կարէ զայ առ Իս, եթէ ոչ Հայրն Իմ ձգեսցէ զնա առ Իս» (հմմտ. Յովհ. 2 44), եւ նոքա, զի ոչ տնկեցան հաւատովք յԻս՝ ուրք եղեալ Որթոյս, խլեսցին՝ նախ ի կենաց եւ ի շնորհաց եւ ասպա ի յախտենական փառացն: Եւ դարձեալ՝ Աստուած բարի է եւ զմարդն ի բարին ստեղծ, իսկ որ զչարն գործէ, ո՛չ է նա յԱստուծոյ տնկեալ, վասն որոյ խլեսցի ի գործոց իւրոց եւ ի բարին արմատացի:

Թ՞Ո՛յլ տուք զնոսա. կոյրք են, կուրաց առաջնորդք. կոյր կուրի յորժամ առաջնորդէ, սխալէ, եւ երկոքին ի խորխորատ անկանին» (ԺԵ 14):

Տես, թէ որպէս զՕրէնսն ի բամբասանաց ազատէ եւ առ փարիսեցիսն զբանն շրջէ, որպէս զի ժողովուրդքն ճեղքիցին ի նոցանէ եւ մի՛ ընդ նոսա ի խորխորատ անկանիցին: Քանզի անհնարին աղէտք իցեն, յորժամ ինքն կոյր իցէ եւ զայլ ոմն կոյր առաջնորդ ունիցի. կրկին եւ երեքկին վնասիցի: Չի թէ առանց առաջնորդի շրջիցի, սխալի, զի՞նչ ասես, յորժամ առաջնորդն եւս կոյր իցէ, եւ ի նա վստահանայցէ, քանզի զառ անձին զգուշութիւնն բնաւին կորուսանէ: Բայց զի՞նչ է՝ «Թ՞ոյլ տուք զնոսա». այսինքն՝ անկանիլ, զայթազդիլ, զի որ զայթազդելոցն է՝ զայթազդեսցի¹: Է՞ր վասն. զի զՅարուցանօղն արհամարհեն եւ զԼուսաւորիչն պախարակեն, վասն որոյ ո՛չ զանձանց միայն վրէժս տան կորուտեամբ, այլեւ որոց առաջնորդեցին՝ կորուսանեն, որով դատին:

Պատասխանի ետ նմա Պետրոս եւ ասէ. «Մեկնեա՛ մեզ զառակս զայս» (ԺԵ 15):

Նախ՝ զի ջերմ² եւ կազմ էր ամենայն ուրեք ի հարցմունսն: Եւ երկրորդ՝ ցուցանէ հարցմամբն, թէ մտօքն խոռովեալ իսկ էր, զի թէ յետ Հոգւոյն ընդունելութեան ասէր. «Քա՛ւ լիցի, Տէր, զի պիղծ կերակուր ամենեւին ոչ եմուտ ի բերան իմ» (հմմտ. Գործք Ժ 14), զի՞նչ ասես այժմ: Բայց ո՛չ յայտնապէս ասաց թէ՛ ես զայթազդեցայ, այլ

¹ Յայտ. ԻԲ 11

² Չ ջերմն

թէ՝ մեկնութիւն պիտոյ է, որով երկեւան մտացն փարատէր: Եւ զի գայթազդեալ իսկ էր, յայտ ի պատուհասէս է:

Ասէ Յիսուս. «Տակաւին եւ որ՞ք անմիտք էք (ԺԵ 16)

եւ ո՞չ իմանայք, եթէ ամենայն, որ մտանէ ի բերան, յորովայն երթայ եւ արտաքս ելանէ (ԺԵ 17):

Յետ այսչափ խրատուցս եւ վարդապետութեան՝ տակաւին իբր զժողովորդսն անմտութեամբ վարիք եւ անիմայ, զօրէն տղայոց ի մէջ ուսմանցս դանդաջէք, ո՞չ զիտէք, եթէ ըստ Օրինացն եւս որչափ ի ներքս յորովայնն է[ր] կերակուրն, պղծէր զմարդ¹, եւ յորժամ արտաքս ելանէր, այնուհետեւ ոչինչ բանք էին: Քանզի երեկոյն հրամայէր լուանալ եւ սուրբ լինել, զի ըստ չափոյ ժամանակին՝ կերակրոցն ելանելոյ զվճիռն տայր. քանի՛ առաւել այժմ, որ նորոգութեամբ Իմով սրբեցի զամենայն: Կամ թէ՝ կերակուր, զինչ եւ ուտէ մարդ, ի յորովայն մտեալ, բնական ջերմութեամբն հալի եւ այլայլի՝ ոչինչ ունելով զանազանութիւն սուրբն եւ պիղծն. ապա ուրեմն ամենայնն մի է, յորժամ հաւասարապէս այլայլի եւ արտաքս ժայթքի:

Իսկ որ ելանէ ի բերանոյ, ի սրտէ անտի գայ, եւ ա՛յն պղծէ զմարդ (ԺԵ 18):

Տես, թէ որպէս սաստիկ իմն բարբառի եւ ի հասարակաց բնութենէ զբանն յարդարէ, զի որքան ի սիրտն է, ասէ, պղծէ եւ յորժամ արտաքս գայ, զանձն եւ զայլս ապականէ: Չչար խորհորդսն ասէ, յորս հրեայքն կարի եւս միտէին: Բայց տարակուսեսցի որք, եթէ զհա՞րդ այսպիսիքս պղծեն. ասասցուք, թէ սոքա ըստ Օրինացն պղծութիւն համարեալ էին՝ շնութիւնք եւ սպանութիւնք եւ ցանկութիւնք եւ այլք: Արդ՝ որքան ի ներքս ի սրտի սենեկին ունիցին, զօրութեամբ պիղծք էին, եւ յորժամ արտաքս բերէին զործովք եւ արդեամբք. վասն որոյ ո՞չ յիրացն յանդիմանէ, այլ յորովայնէն եւ ի սրտէն, եւ ի ներքս մտելոյն եւ յելանելոյն:

Ձի ի սրտէ ելանեն խորհուրդք չարք՝ սպանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք (ԺԵ 19):

Այս ամենայն է, որ պղծէ զմարդ (ԺԵ 20):

Այսք ամենեքեան խոտելիք էին յՕրինացն եւ հրաժարեցուցեալք, եւ արմատ եւ աղբիւր կատարելութեան զործոցն, որով

¹ Ձ զմարդն

զհոգին հանդերձ մարմնով պղծեն, զսիրտն ունին, որ է հոգւոյն իմացքն եւ մտաւորական տեսութիւնն, յորս յօժարութեամբ բաղձանօք տռփայ ասացելոցս եւ խոտորեալ յՕրինացն խրատտութենէ՝ պղծի աստ օրինագանցութեամբ՝ յԵկեղեցւոյ արտաքս ընկենլով, եւ անդ՝ իբր զխոտան եւ զանմաքուր կենդանիս՝ յարքայութենէն: Վասն որոյ հիացմամբ դնէ, թէ այս ամենայն է, որ զբանականս մարդ առնէ իբր զպիղծ զազանս՝ ատելի եւ տաղտկալի Աստուծոյ եւ մարդկան եւ հրեշտակաց սրբոց: Բայց զսեռսն ասելով՝ նոքօք եւ զտեսակսն ի կիր արկանէ, վասն որոյ եւ բազմաւորական դնէ՝ սպանութիւնք եւ այլն, քանզի զնախանձելն եւ զքինայն եւ զնենգելն սպանութիւնս ասէ, այսպէս իմա եւ զայլսն:

Այլ անլուայ ձեռք ուտել ոչ պղծէ զմարդ:

Ձի չեւ եւս հանդարտէին լսել՝ զոր ինչ ինքեանք կամէին եւ զործէին, խաղաղէ զբանն, զի մի՛ վնասեսցին՝ ասելով, թէ անլուայ ձեռք ուտել ոչ պղծէ զմարդ. յորմէ եւ մեզ ուսանել արժան է, թէ զինչ է, որ պղծէ, եւ ի բաց փախիցուք, քանզի տեսանենք յեկեղեցւոջ զայսպիսի հրեական սովորութիւն, զի սուրբ հանդերձից եւ զձեռս եւ զբերանն լուանալոյ պատկառ կան, յորժամ ի սուրբ Խորհուրդն մերձենան, եւ զհոգի սրբել ի յասացեալ պղծութեանցն եւ Աստուծոյ յանդիման կացուցանել՝ չունիցին փոյթ յանձին: Արդ՝ զայս ասելով ոչ արգելուցում զձեռս եւ զբերան ի լուանալոյ, բայց ոչ ջրով միայն, այլեւ առաքիւնութեամբ լուացուք: Ձի ախտ բերանոյն՝ չարախօսութիւն եւ հայհոյութիւն եւ բամբասանք եւ տրտունջ եւ ստութիւն եւ երդմնագանցութիւն եւ զրպարտութիւն եւ՝ ճառք զարշելիք, խեղկատակութիւնք եւ այլք, քանզի «մահ եւ կեանք ի ձեռն լեզուի» (Առակ. ԺԸ 21), եւ արդարանալ եւ պարտաւորիլ: Իսկ ձեռաց՝ զողութիւն եւ զրկութիւն եւ յափշտակութիւն եւ անզորութիւն եւ արեանհեղութիւն եւ հարուածք եւ այլ սոյնպիսիք, զոր աղաչեմ լուանալ յայսպիսի ախտից, զի մի՛ պղծեսցուք:

Եւ ելեալ անտի Յիսուսի՝ զնաց ի կողմանս Տիբուսի եւ Սիդոնի՝² (ԺԵ 21):

Սովորութիւն էր այս Տեառն, զի յորժամ զնեծամենծս խօսէր եւ զկատարեալ օրէնս, խոյս տայր ի տեղուջէն, զի մի՛ հակառակու-

¹ ՏՁ ի

² ՏՁ Սիդոնի (այսպէս է և այլուր):

թիւն ինչ լինիցի: Եւ դարձեալ՝ ի կողմանս յայտոսիկ գնալով՝ դուռն բանայ հեթանոսաց հաւատոյ, զի ո՛չ եթէ հրէից միայն իցէ Աստուած, այլեւ հեթանոսաց: Բայց զի մի՛ ինքն լիցի պատճառ, այլ հրէիցն անընդունակութիւնն եւ հաւատքն հեթանոսաց, վասն որոյ ասէ Մարկոս, եթէ «եմուտ ի տուն եւ ոչ կամէր յայտնել զանձն, եւ ո՛չ կարաց ծածկել» (հմմտ. Մարկ. է 24), քանզի անարժան համարէր զնոսա Իւրոյ մարդասիրութեանն. բայց յորժամ ետես զհաւատս նոցա, ընկալաւ: Դարձեալ՝ ի հաստատութիւն Իւրոյ բանիցն չոգաւ անդ, զի ասաց թէ՛ «Դիւրագոյն լիցի Տիրոսի եւ Սիդոնի յԱտուրն դատաստանի, քան ձեզ» (Մատթ. ԺԱ 22), եւ միանգամ ի կողմանս յայնոսիկ գնալով՝ զքանանացին աշակերտեաց: Իսկ զայնքան ժամանակս ի միջի նոցա լինելով՝ եւ ո՛չ երբէք շահեցան:

Եւ ահա կին մի քանանացի, ի սահմանաց անտի նոցա ելեալ, աղաղակէր եւ ասէր. «Ողորմեաց ինձ, Տէր, Որդի՛ Դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի» (ԺԵ 22):

Ամբաստան լինի զկնոջէն աւետարանիչս նախ, որպէս զի սքանչելիքն յայտնի լիցի, եւ Նա եւս քան զեւս բարձրագոյն քարոզեսցի. «Ահա կին մի,- ասէ,- քանանացի»: Չքանանացին յիշելով՝ զազգն անօրինաց ի մէջ անձ, որ զօրէնս բնութեանն ի հիմանէ տապալեցին, որով զզօրութիւն զայստեանն Քրիստոսի ծանուցանէ: Եւ դարձեալ՝ զի որք ընկեցիկ եղեն յերկրէն, զի մի՛ զհրէայսն խոտորեցուցանեն, նոքա այնչափ զգաստացեալ՝ քան զհրէայսն ի հաւատս գեր ի վերոյ եղեն: «Ի սահմանաց անտի նոցա ելեալ». տես զհաւատս նորա, զի ո՛չ իշխեաց յԵրուսաղէմ ելանել, քանզի կասկածէր եւ չհամարէր զանձն արժանի. եւ յայտ ի փութոյ անտի է, զի յորժամ ի կողմանս յայնոսիկ եկն Տէրն, ելեալ աղաղակէր. «Ողորմեաց ինձ, Տէր, Որդի՛ Դաւթի»: Քանզի նա սաղմոսանուագ երգովք զայսն¹ ի Սաուղայ ի բաց հալածէր², զնոյն ողորմութիւն եւ յՈրդոյ նորին պահանջեմ. ինձ, ասէ, ողորմեաց, «դուստր իմ չարաչար այսահարի»: Այսինքն՝ նա անզգայացեալ է ի ցաւոցն, եւ ամենայն վարանք զինեւ են, որ իմանամս. եւ այսպիսի երկիրաձութեամբ աղաղակէր զկնի թախծեալ սրտիւ, մինչ զի զբազումս յաղաղակն կուտէր:

¹ Տ զայսսն

² Ա Թագ. ԺԶ 23

Բայց են ոմանք, որ յայլասացի կիրս շրջեն զասացեալս, թէ յորժամ ել ի Հօրէ Բանն եւ եկն յաշխարհ, ապա եւ Եկեղեցի հեթանոսաց ել ի սահմանաց իւրոց եւ իշխեաց զալ եւ մերձենալ ի Նա՝ ըստ այնմ. «Մոռա՛ զժողովորդ քո եւ զտուն հօր քո, զի ցանկացաւ թագաւոր զեղոյ քո]» (Սաղմ. ԽԴ 11-12): Չի թէ մնացեալ էր ի սահմանս իւր, ո՛չ կարէր աղաղակել առ Տէր եւ ողորմութիւն խնդրել, քանզի վասն ողորմութեան հեթանոսք փառաւոր առնեն զԱստուած, որոց՝ ծնունդն՝ ի ճենճերս դիւացն մոլերով՝ չարաչար այսահարէր եւ ի ձեռն Բանին զայստեան՝ ողորմութիւն զտանէր:

Եւ Նա ո՛չ ետ նմա պատասխանի (ԺԵ 23):

Չո՞ որ ոչ խոնարհեցուցանէին վիշտք կնոջն եւ պաղատանքն, զի վասն միոյ դատեր միամօր եղելոյ եւ մատնելոյ ի ցաւս՝ աղաղակէր եւ ո՛չ արժանի զանձն համարէր, այլ ողորմութիւն միայն զտանել ժտէր եւ պատասխանոյ անգամ արժանի ոչ լինէր: Բայց ներէր Տէր, զի զփափագ նորին յորդորէր եւ իրաւամբք փրկութիւն հեթանոսաց յարդարէր, զի որոց յաճախ տայր զշնորհս, արհամարհէին, եւ յորոց արգելոյր, խնամով խնդրէին. եւ զի այս այսպէս է, յաջորդս ցուցանէ, զի եւ աշակերտքն իսկ յաղաչանս մատեան:

Եւ մատուցեալ աշակերտքն Նորա՝ աղաչէին զՆա եւ ասէին. «Արձակեա՛ զնա, զի աղաղակէ զհետ մեր»:

Թերեւս բազումք ի լսողացն զայթազդէին, սակայն կինն ոչ զայթազդէր: Եւ զի՞նչ ասացից ի լսողացն. այլեւ աշակերտքն ածին այսպիսի զմտաւ, այլ թէպէտեւ խռովեցան, բայց ո՛չ իշխէին յայտնել, այլ միայն աղաչանօք ասէին թէ՛՝ արձակեա՛, այսինքն՝ արա՛ զխնդրուածս նորա, զի ո՛չ զկնի այլ ուրուք, այլ մէր զաղաղակ թախանձանացն առնէ:

Նա պատասխանի ետ եւ ասէ. «Ո՛չ ուրեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի» (ԺԵ 24):

Նախ ցուցանէ, թէ Ինքն է հովիւն առաջին, որ հովուէրն զԻսրայէլ անքուն ակամբ³, որ եւ այժմ եկն՝ այց առնել մոլորելոցն: Եւ

¹ ՏԶ որոյ

² Զ ծնունդն

³ Սաղմ. ԳԹ 2, ԾԻ 4

երկրորդ՝ գտնելն որ առ Իսրայել է՝ ուսուցանել եւ գլորումն ուխտից հարցն յիշեցուցանել, զի մի՛ ասիցեն, թէ վասն այնորիկ ոչ հաւատացաք, զի նախ առ մեզ ոչ եկն: Եւ երրորդ՝ զկիմն յորդորագոյնս գործէ, զի որպէս մեր սովորութիւն է, յորժամ կամիցիմք գոք ի հաւանութիւն անել, այլ ընդ այլոյ զբանն խօսիմք, նոյնպէս եւ Քրիստոս արար: Քանզի գո՞յր ուրոք զջիւս ոչ հատանէին այնպիսի բանքն, որ եւ բարեխօսքն յորժամ լսէին զայն, չէ՛ հնար իրացոյ լինելոյ՝ ասէին. իսկ նա լռեա՞ց կամ կասեցա՞ւ երբէք ի յօժարութենէն. ոչ, այլ ե՛ւս քան զեւս ժողով եւ ընդ բանին ժտանսն եւ զարդիւնսն խառնէր: Իսկ առ ի միտս՝ տուն Իսրայելի ոչ ըստ մարմնոյ արդեօք, այլ ըստ հոգւոյ, վասն որոյ ի սփիռս հեթանոսաց տարածեաց զփրկութիւնն առ մոլորեալ հոգիս Իսրայելի՝ տեսողի զԱստուած:

Եւ նա մատուցեալ երկիր պագանէր Նմա եւ ասէր. «Տէ՛ր, օգնեա՛ ինձ» (ԺԵ 25):

Յորժամ իմացաւ, թէ ոչինչ կարեն զամագիտ¹ լինել բարեխօսքն, զամօթն յետ ընկեաց եւ լրբէր զգեղեցիկ լրբութիւնն. յառաջագոյն ոչ իշխէր առաջի կայ, բայց միայն աղաղակէր, եւ յորժամ ի դէպ էր նմա հեռանալ, քանզի անյոյս եղեւ, յայնժամ հուպ զայր եւ երկիր պագանէր եւ ասէր. «Տէ՛ր, օգնեա՛ ինձ»: Չի՞նչ գործես, ո՛վ կին, միթէ աւելի՞՞ համարձակութիւն ունիցիս եւ մեծ գորութիւն. ոչ, ասէ, այլ ամօթովս լի եմ, սակայն զլրբութիւնս փոխանակ խնդրուածոց առաջի եղից, զի թերեւս խոնարհեսցի ի ժողովիսն իմ: Եւ այդ զի՞նչ օգուտ իցէ. ոչ լուար քեզէն, զի ասէր. «Ո՛չ ուրեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայելի»: Չայդ լուայ, ասէ, բայց Նա Տէր է. վասն որոյ չասաց թէ՛ «աղաչեա» կամ «խնդրեա», այլ թէ՛ «օգնեա՛ ինձ»: Իսկ Քրիստոս եւ ոչ զայն բաւական համարեցաւ, այլ տակաւին ձիզս արկեալ զտարակուսանսն՝

Պատասխանի ետ նմա եւ ասէ. «Ո՛չ է բարոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց» (ԺԵ 26):

«Հաց» զվարդապետութիւնն եւ զբժշկութիւնն կոչեաց եւ «մանկունս»՝ զԻսրայել՝ ըստ այնմ. «Տղայ էր Իսրայել, եւ Ես սիրե-

¹ Տ կամագիտ

ցի զնա» (Ուզե՛ ԺԱ 1), որ քան զշունս կատաղիք եղեն յետոյ: Իսկ «շունս»՝ զհեթանոսս յաղագս յրբութեանն, միանգամայն եւ զօրինաւոր աստուածպաշտութեամբն զանց առնելոյ եւ ի կուռսն մոլեւորոյ զօրէն շանց՝ ըստ այնմ. «Շնայր ընդ քարի եւ ընդ փայտի» (Երեմ. 9 9): Եւ երրորդ՝ զայս ասելով՝ տիրասէրս կամի զնոսս լինել, որպէս շան է սովորութիւն: Չոր եւ իմացեալ կնոջն զառակաւոր բանսն՝ յորորազոյն եղիւ՝ ասելով.

Եւ նա ասէ. «Այո՛, Տէր, քանզի եւ շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ տեանն իրեանց» (ԺԵ 27):

Յորժամ արժանի արար պատասխանոյն, յայնժամ իբր Տեառն բանիցն յօղէ զջատագովութիւնն: Եթէ շուն իցեն, ապա չեն օտար, զի մանկանցն կարեւոր պէտք են կերակրելոյ, զայն ճարտար գիտեն, բայց եւ ինձ՝ շանս, զփշրանս քաղել, այսինքն՝ հաղորդել նշխարաց նոցա, չէ՛ ինչ արգել: Բայց դու ընդ հաւատս կնոջն եւ ընդ խոնարհութիւնն, միանգամայն եւ ընդ իմաստութիւնն զարմացիր, զի Յիսուս ասէր՝ չէ՛ բարոք, եւ նա ասէ՝ այո՛, Տէր. որպէս զի լցցի բանն Տեառն թէ՛ «Բռունք յափշտակեն զնա» (Մատթ. ԺԱ 12), որ հաւատոյ է գործ: Եւ Տէրն «շունս» կոչէր, եւ նա զբարս շանց առաջի դնէր, որ է յոյժ խոնարհութիւն, եւ Քրիստոս «մանկունս» զհրէայսն անուանէր, եւ նա տեարս յորջորջէր, որ է իմաստութիւն, տարացոյց եւ աննախանձ բարոց, զի այնպէս ոչ ցաւ էին նմա այլոց յարգանքն, զի չէր մեծամիտ իբր զհրէայսն, զի ասէին. «Չաւակ Աբրահամու ենք եւ ոչ ոմեք ծառայեցաք» (Յովհ. Ը 33), վասն որոյ յիրաւի՛ ասէր Քրիստոս թէ՛ «Ի դատաստան եկի յաշխարհս յայս» (Յովհ. Թ 39): Չի կինն իմաստութիւն ստացաւ, եւ հաւատս եւ խոնարհութիւն, որպէս ասացաւ, եւ այն զի թշնամանեցաւ, եւ նոքա պատուեալք եւ բժշկեալք՝ օտարք եղեն ի հաւատոցն Աբրահամու, եւ սա եմուտ ընդ որդիութեամբ Հօրն մերոյ, որպէս ասէ:

Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. «Ո՛վ կին դու, մեծ են հաւատք քո. եղիցի քեզ, որպէս եւ կամիս» (ԺԵ 28):

Չոր մեք ասացաք ի տեսութեան, զնոյն յայտնէ Տէրն վկայութեամբ, ուստի եւ հիացականս դնէ թէ՛ «Ո՛վ կին դու, մեծ են հաւատք քո». քանզի աղաղակէր զկնի, եւ Նա ոչ ետ նմա պատասխանի. թշնամանեաց խօսիք, եւ նա ոչ արգելաւ. յարգեաց զԻս-

րայել, եւ նա ոչ նախանձեցաւ, որով յայտնի եղեւ հաւատք նորա, եւ այսպիսի քանիքս պատկեցաւ թէ՛ «Մեծ են հաւատք քո. եղիցի քեզ, որպէս եւ կամիս»։ քանզի այդպիսի հաւատք ա՛յլ եւս մեծամեծ գործ կարօղ է վճարել, թող թէ զմանուկ քո բժշկել։ Եւ դարձեալ՝ հաղորդ էառ զկամս նորա բժշկութեան դատեր նորա, որպէս թէ ասել՝ ո՛չ Ես միայն, այլեւ հաւատք կամաց քոց ապաքինէ զնա։ Բայց «եղիցին» այս հանգոյն է այնմ քանի, որ ասաց. «Եղիցի յոյս, եւ եղեւ յոյս» (Ծննդ. Ա 3)՝ ըստ յաջորդիս, որ ասէ.

Եւ բժշկեցաւ դուստրն նորա ի նմին ժամու։

Յոյժ գորատոր են իրք հաւատոյն, զի մերձ յաստուածական գորութիւնն հանէ զստացօղն, քանզի ասաց թէ՛ «Եղիցի քեզ, որպէս եւ կամիս», եւ կամք նորա էր դատերն բժշկութիւն, եւ այն առ ժամայն արդիւնք եղեւ, որով ցուցաւ, թէ ո՛չ ողորանաց քանք էին, այլ հաւատոցն պայծառութիւն։

Եւ զնացեալ անտի Յիսուսի՝ եկն ի ծովեզրն գալիլեացոց եւ ելեալ ի լեառն՝ նստէր անդ (ԺԵ 29)։

Ո՛չ միշտ զհեթանոսօքն գայր, զի մի՛ տայցէ պատճառս այնոցիկ, որ զպատճառս կամիցին, այլ սուղ ինչ յայտնէր նոցա, զի նախանձ արկցէ ժողովրդեանն հրէից։ Վասն այնորիկ զնացեալ անտի եկն ի Գալիլեա եւ ելեալ առանձինն նստէր ի լեառն, որպէս զի առ Նա հաւաքեցին. քանզի երբեմն Ինքն շրջէր եւ երբեմն մնացեալ նստէր, զի առ Նա եկեցեն, զի բարեպաշտութիւն նոցա ո՛չ ի հարկէ, այլ կամաւ լինիցի։ Եւ կամ վասն աղօթից առանձնաւայր ի լեառն, որպէս յայլում ժամանակի, քանզի առաքինութիւնն կրկին է՝ աստուածսիրութիւն եւ մարդասիրութիւն, որ եւ յօրինակ եւ յուսումն մեզ՝ զերկոսին միշտ ի կիր արկանէր Տէրն. ի ձեռն աղօթից՝ զաստուածսիրութիւնն, եւ ի ձեռն վարդապետութեանն եւ բժշկութեանն՝ զմարդասիրութիւնն։

Մատեան առ Նա ժողովուրդք բազումք, որ ունէին ընդ իւրեանս՝¹ կադս, կոյրս, համերս, միակողմանիս եւ այլս բազումս, եւ ընկեցին զնոսա առ ոտս Նորա, եւ բժշկեաց զնոսա (ԺԵ 30)։

¹ Զ ինքեանս

Ոչ այնքան ի սիրոյ Նորա ստիպեալք գային, որքան¹ ի բազմատեսակ ցաւոցն դրդեալք յօժարէին, քանզի զբազում մարմինս թոնձս եւ կիսամենս բերեալ՝ ընկեցին զնոսա առաջի Նորա իբր առ կենաց տուօղ եւ ցաւոց լուծօղ: Վասն որոյ ոչ ի հանդերձս ետ մերձենալ եւ ոչ հաւատս ինչ պահանջեաց, այլ ի լեառն տանելն եւ առ ոտսն ընկենուլն քաւական համարեցաւ ի բժշկութեան իրս: Բայց թէ ասիցէ որ, թէ զքանանացին ընդէ՞ր ոչ այնպէս արագ բժշկեաց, այլ բազում թախանձանօք թախանձեաց, միթէ սոքա լա՞րք էին քան զնա, ասասցո՞ւք՝ ոչ, այլ զի նա կարի հաւատացեալ էր, կամեցաւ զհաւատս նորա յայտնել, քանզի հեթանոս էր փիւնիկ յազգէ ասորի, իսկ սոքա հրէայք էին, յԻւր կողմանէն շնորհս բժշկութեան ետ նոցա:

Մինչեւ զարմանալ ժողովրդոցն, որ տեսանէին, զի համերքն խօսէին, կաղքն գնային, միակողմանիքն բժշկէին, կոյրք տեսանէին եւ փառաւոր առնէին զԱստուած Իսրայէլի (ԺԵ 31):

Չարմանալ ժողովրդոցն ոչ վասն հրաշիցն միայն էր, այլեւ վասն բանիւ բժշկութեանն, զի իշխանութեամբ առնէր, որպէս զվարդապետութիւնն. եւ ոչ այս միայն, այլ զի եւ զհորաքանչիւր զանկսն յարմար շնորհէր եւ զփառս առ Հայր վերաբերէր, զոր տեսեալ եւ լուեալ՝ ի փառս Աստուծոյն Իսրայէլի վերաբերէին զեղեալն: Եւ կամ թէ՛ կարծէին զՆա Աստուած գոյ Իսրայէլի, զոր եւ փառաւորէին իսկ, քանզի Աստուծոյ՛ միայն է զայնպիսիսն վճարել:

Եւ կոչեցեալ առ Ինքն Յիսուսի զաշակերտսն՝ ասէ. «Գթամ ի ժողովուրդդ, զի արդ երեք ատուրք են, զի կան առ Իս եւ ոչ ունին զինչ ուտիցեն. եւ արձակել զդոսա նօթիս չկամիմ, զուցէ նքթիցեն զճանապարհայն» (ԺԵ 32):

Այլ է այս նշան, թող զառաջինն, քանզի յառաջագոյն յաղազս հինգ հազարացն աշակերտքն աղաչէին զՆա, իսկ այժմ յաղազս չորս հազարացն յԻնքենէ առնէ առանց ուրուք աղաչելոյ: Եւ անդ աշակերտքն ասացին թէ՛ «Արձակեա՛ զժողովուրդսդ», եւ աստ՝ ոչ, այլ Ինքն կոչեցեալ զաշակերտսն՝ ասէ. «Գթամ ի ժողովուրդդ, զի արդ երեք ատուրք են, եւ կան առ Իս»: Կամ թէ ինքեանք ազնուագոյնք էին քան զառաջինն եւ կամ զնոսա տեսա-

¹ Զ որք

նեին ոչինչ կարի զգածեայս վասն քաղցին, քանզի ի բժշկութիւն եկեալ էին եւ ոչ իշխէին հաց խնդրել: Բայց Նա գթութեամբն դարմանէ. «Եւ ոչ ունին¹ զինչ ուտիցեն», զի մի՛ որ ասիցէ, թէ պաշարաւ իսկ կազմ եկեալ էին, որպէս զի ասիցէ, եթէ ունէին, եւ այն ծախեալ էր այժմ գերիս ատուրս առ նոսա լինելովն: Վասն այսորիկ եւ Ինքն ոչ յառաջագոյն արար, այլ յորժամ պէտքն պահանջէին, զի յօժարութեամբ ընդունիցին գերախտիսն: Իսկ ասելն՝ «Արձակել գոռսս նօթիս չկամիմ, գուցէ նքթիցեն զճանապարհայն»։ «չկամիմ» ասելովն զիշխանութիւն Իւր յայտ առնէ, եթէ կարող էր կերակրել զնոսա. եւ «նքթելովն զճանապարհայն» ցուցանէ, թէ ի հեռի վայրաց եկեալ էին առ Նա, եւ չկայր ինչ այնուհետեւ, որով զպէտսն վճարէին, եթէ լուծեալք ի Խնամողէն էին:

Ասեն ցՆա աշակերտքն. «Իսկ արդ մեզ յանապատի աստ ուտի՞ իցէ այնչափ հաց, մինչ յազեցուցանել զայսչափ ժողովորդ» (ԺԵ 33):

Նախ քան զառուսն Հոգոյն թերակատարք էին աշակերտքն. յայտ յայսմանէ է, քանզի վասն այնորիկ ասաց թէ՛ «Արձակել գոռսս նօթիս չկամիմ», զի մտադիրս առնիցէ զնոսա եւ մատչել ուտուցանէ՝ աղաչել թէ՛ արա՛ հաց եւ տո՛ւր դոցա յուտել, որպէս եւ յայնժամ: Այլ ոչ այնպէս ինչ զմտաւ ամէն, քանզի մոռացեալք էին զառաջին սքանչելիսն, եւ այն, զի զնոսա սպասատրս արար հացին եւ նոցա բառնալ ետ զսակառիսն: Յաղագս այսորիկ որպէս անդ զանապատն, այսպէս եւ աստ պատճառէին եւ ի բազմութիւն ժողովրդեանն հայէին եւ ի վարանս մտանէին թէ՛ «Ուտի՞ իցէ այսչափ հաց, մինչ յազեցուցանել զայսչափ ժողովորդ»։ Իսկ զի՞նչ Տէրն:

Եւ ասէ ցնոսա Յիսուս. «Քանի՞ նկանակ ունիք»: Եւ նոքա ասեն. «Եօթն, եւ սակաւ ձկունս» (ԺԵ 34)²:

Չայս հարցուած յաղագս այնորիկ ի մէջ բերէ, զի զառաջին նշանսն յիշեցուցանէ, որով սակաւ ինչ զգաստացան: Քանզի թէպէտ ասացին թէ՛ «եօթն նկանակ եւ սակաւ ձկունս», սակայն ոչ յաւելին որպէս անդ, թէ զի՞նչ իցէ այն առ այսչափ մարդիկս, զի թէպէտ ոչ ամենեւին ի կատարեալ բարձրագոյնսն հասանէին,

¹ Զ ունիցին

² Զ + եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ի վերայ գետնոյ

սակայն առ սակաւ սակաւ յառաջադէմ լինէին: Եւ տես զմիւս եւս զգաստութիւնն, թէ ո՞րչափ ի վերոյ էին քան զպէտոս որովայնի, զի զերիս ատուրս յանապատին դեզերեայք՝ եօթն նկանակս ունէին եւ սեղանոյ բնաւ փոյթ ոչ առնէին:

Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ի վերայ գետնոյ (ԺԵ 35):

Ձի կերակրոյ պատրաստիցեն զանձինս եւ զի զԿերակրիչն ճանաչիցեն կարօղ գոլ հաւասար առաջնոյն կերակրել զնոսա: Իսկ ի վերայ գետնոյ բազմիլն՝ նախ՝ զի զանագան է յառաջնոյն տեղեալն եւ ժամանակաւն, զի տեղին գետին էր, եւ ժամանակն՝ աշուն, իսկ անդ՝ խոտ եւ զարուն: Եւ երկրորդ՝ զի «զիտասցեն զստեղծուածս իւրեանց եւ յիշեն, թէ հող ենք» (հմմտ. Սաղմ. ԾԲ 14):

Եւ առեալ զեօթն նկանակսն եւ զձկունսն՝ զոհացաւ եւ երեկ եւ ետ ցաշակերտսն, եւ նոքա՝ ժողովրդեանն (ԺԵ 36):

Չեղանակ առաջնոյն եւ յայսմ սքանչելոջ պահէ, զի ի միտ առցեն առանց կարծեաց, թէ նոյն Նա է, որ զառաջինն արար եւ զերկրորդս հրաշագործէ: Եւ դարձեալ՝ ուսուցանէ, թէ աղօթք եւ օրհնութիւնք են, որ կերակրեն զմարդ, եւ ոչ բազմութիւնք մթերեալ արմտեաց՝ ըստ այնմ. «Ո՛չ եթէ արարք արմտեաց կերակրեն, այլ Քո բանդ, Տէ՛ր» (Իմաստ. ԺՁ 26), եւ թէ՛ «Օրհնեցից զհաց քո եւ զջուր քո» (Ելք ԻԳ 25), քանզի որք զօրհնութիւնն Աստուծոյ ոչ ունին, ուտեն եւ ոչ յագին, եւ որք նովաւ վարին, ի սակաւուցն յագին, որպէս ասէ.

Կերան ամենեքեան եւ յագեցան եւ բարձին զնշխարս կոտորոցն եօթն զամբիղ լի (ԺԵ 37):

Հաւասարապէս կերան եւ կշիռ ամենեքեան յագեցան, բայց զրաւն ոչ հանգոյն առաջնոյն լինէր, զի անդ ի հինգ հազարացն երկոտասան սակառի յաւելաւ, եւ աստ ի չորից հազարացն՝ եօթն զամբիղ¹: Կամ զայն իցէ ասել, թէ զամբիղքն մեծագոյնք էին քան զսակառիսն, եւ կամ զի մի՛ յորժամ հասարակ նշխարքն լինիցին, ի մոռացօնս եկեցեն հրաշիցն, այլագունակ կերպարանօք զարթուցանէ յիշել զնոսա: Վասն այնորիկ անդ ըստ աշակերտացն կշռէ զթիւ սակառացն, եւ աստ՝ ըստ նկանակացն զփիւրի-

¹ Զ զամբիղ (այսպէս է և այլուր):

դասյն, զի եւ այսո՛ր զանբաւ զօրութիւնն եւ գղիւրագործ իշխանութիւնն յայտ առնիցէ, եթէ կարող է Նա յամենայնի, որպէս եւ կամի:

Եւ որք կերանն, էին իբրեւ արք չորք հազարք, թող զկանայս եւ զմանկտի (ժԵ 38):

Դարձեալ՝ եւ զթիւն դնէ աւետարանիչս, որպէս զի եւ ամենեւին զատուցանէ յառաջին սքանչելեացն, զի անդ ի հինգ նկանակացն հինգ հազարքն յագեցան, եւ աստ յեօթանցն՝ չորք հազարքն հանդերձ կանամբք եւ մանկտեօք:

Իբրեւ արձակեաց զժողովորդսն, ել ի նաւ եւ եկն ի սահմանս Մագդաղեայ (ժԵ 39):

Ձի ո՛չ այլ ինչ ի նշանացն այնչափ ստիպէր զնոսա զհետ երթալ Նորա, որպէս հացին նշանն, եւ ո՛չ զհետ երթալ միայն, այլեւ յափշտակել եւս եւ թագաւոր առնել: Եւ անդ զի մի՛ ապստամբութեան կարծիս տացէ, յորժամ զհացին նշանն յաճախիցէ, թողու զնոսա եւ ի բաց գնայ. ո՛չ հետիոտս ուրեք, զի մի՛ զկնի երթայցեն, այլ ի նաւ մտանէ, որպէս զի ի հարկէ հեռասցի ի ժողովրդենէն:

ԳԼՈՒԽ ԺՁ

Եւ մատուցեալ փարիսեցիքն եւ սադուկեցիք՝ փորձելով խնդրէին ի Նմանե՞ն¹ նշան յերկնից ցուցանել նոցա (ԺՁ 1):

Սոքա թէպէտ հակառակ միմեանց էին աղանդով, զի փարիսեցիքն առանձնականք էին եւ հրեշտակ եւ հոգի եւ յարութիւն խոստովանէին, իսկ սադուկեցիքն զմի ի սոցանէ ոչ ընդունէին, բայց ի փորձել զՏէրն միաբանեցան, որպէս եւ այժմ հեթանոսաց մանկունք եւ հերձուածողաց՝ հակառակ ունին հերձուածս, բայց միաբանին պատրել զուղղափառս՝ ըստ այնմ թէ՛ «Ժողովեցան վասն Տեսոն եւ վասն օծելոյ Նորա» (Մատթ. Բ 2): Արդ՝ մատեան խնդրել նշան յերկնից ցուցանել նոցա, քանզի զոր յերկրի առնէր, որպէս զհացին եւ զայլսն, այնմ ոչ հաւատացին, այլ առաջօք կարծէին, վասն որոյ յերկնից խնդրէին՝ ոչ սակս հաւատալոյ, այլ փորձելոյ: Եւ դարձեալ՝ նշան յերկնից խնդրէին, զի զհամբաւն լսէին, թէ Քրիստոսն է, իսկ զգալուստ Նորա ի Դանիէլէ ծանուցեալ թէ՛ «Ընդ ամպս երկնից իբրեւ Որդի մարդոյ զայ» (Դան. Է 13), վասն որոյ զառաջինս երկրորդ զալուստ կարծէին, որք մատուցեալ՝ զերկրորդին նշանն, յորժամ յերկնից եկեսցէ, այժմ հայցէին: Եւ զի՞նչ էր այն. կամ զարեգակն յընթացից կասեցուցանել, կամ զլուսին պաշարել, կամ փայլատակունս յերկնից իջուցանել, կամ օդոց փոփոխել, եւ կամ այլ ինչ նոյնպիսի. եւ առ այն զի՞նչ Տէրն:

Նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա (ԺՁ 2).

«Ազգ չար եւ շնացող նշան խնդրէ, եւ նշան մի՛ տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի» (ԺՁ 3):

Եւ եթող զնոսա եւ զնաց (ԺՁ 4):

Յերկնից խնդրէք նշան, բայց Ես յերկրէ առնեմ զայն, որպէս այն, զի ասէր. «Կեղծաւորք, զերեսս երկնի եւ երկրի գիտէք փորձել, իսկ զժամանակս զայս ընդէ՞ր ոչ փորձէք» (Ղուկ. ԺԲ 56), զի զոր օրինակ յերկինս այլ նշան ձմերայնոյ՞ է եւ այլ ջերոյ, եւ ոչ որ իցէ,

¹ Զ > ի նմանէ

² Տ ձմերայնոյ

որ տեսանից է գնշան ձմերայնոյ¹, ջերոյ² ակն ունիցի, եւ ոչ ի ջերմն ժամանակի՝ ձմերայնոյ: Նոյնպէս եւ առ Իս պարտիք իմանալ, եթէ այլ ժամանակ է այժմու գալստեանս, եւ այլ՝ հանդերձելոյն. այժմ երկրաւոր նշանաց են պէտք, վասն զի յերկրիս եմ, եւ երկնիցն այլում ժամանակի են պահեալ: Այժմ իբր զբժիշկ եկի եւ յետոյ՝ իբր զդատաւոր, այժմ լռելեայն եւ յայնժամ՝ աշխարհատեսիլ յայտնութեամբ, զի զերկինս գալարիցեմ եւ զարեգակն խաւարեցուցանեմ, եւ լուսնի չտամ ծագել, եւ ապա զօրութիւնք երկնից շարժիցին, եւ փայլակն յանկարծակի երեւեցի ի գալստեանն: Այլ այժմ չե՛ւ եւս իցէ այնց³ նշանաց ժամանակ, քանզի եկի մեռանել եւ ի սիրտ երկրի մտանել, որպէս զՅոնան մարգարէ⁴:

«Եւ եթող,- ասէ,- զնոսա եւ զնաց»: Տես զխորամանկութիւն բարուց նոցա, զի ոչինչ հարցին, թէպէտեւ զմարգարէն ճարտար գիտէին: Պարտ էր հարցանել, թէ զի՞նչ իցէ բանն, զոր ասաց. այլ որպէս վերագոյն ասացի, ոչ եթէ ուսանելոյ ինչ ցանկութեամբ, այլ փորձութեամբ խնդրէին զայն, վասն այնորիկ եւ Նա թողոյր զնոսա եւ զնայր, որպէս փեսայ, զի տեսանէ զհարսն շնացեալ, նոյնպէս եւ Նա զքաղաքն հաւատարիմ զՍիոն պռռնիկ եղեալ⁵՝ թողու ի խնամոց Իրոց ի բաց:

Գնացին եւ աշակերտքն յայնկոյս եւ մոռացան առնուլ հաց (ԺԶ 5):

Քանզի քաղցրացեալք էին ի լուր վարդապետութեան Նորա, ամենայն ուրեք զկնի երթային ստիպմամբ այնքան, մինչ զի զմարմնական⁶ պիտոյիցն ոչինչ հոգային, վասն որոյ ասէ. «Մոռացան առնուլ հաց». միանգամայն եւ զՀացտուն ընդ ինքեանս ունէին, կարծէին ամենայն ուրեք առնել զայն: Այլեւ օգտաբար եղեւ այն, զի յորժամ վասն հացի յիշատակ արասցեն, յանդիմանեցին վասն հրէական խտրութեանցն, զորս ի միտս իրեանց ունէին: Իսկ առ ի միտս՝ յայնկոյս աշակերտացն զնալն է ի մարմնաւորացս ի հոգեւորն փոխումն⁷, որով ի մոռացոնս եկին երկրա-

¹ Տ ձմերայնոյ

² ՏՁ ի ջերոյ

³ Զ այնր

⁴ Յովն. Բ 1

⁵ Ես. Ա 21

⁶ Զ վասն զմարմնական

⁷ Տ փոփոխումն

տր իրացս՝ ըստ առաքելոյ. «Ձյետոյսն մոռացեալ եմ եւ յառաջակայսն¹ նկրտեալ» (Փիլպ. Գ 13):

Ասէ ցնոսա Յիսուս. «Տեսէք եւ զգո՛յ՜ լերուք ի խմորոյ սաղմկեցոցն եւ փարիսեցոց» (ԺՁ 6):

Ընդէ՞ր ոչ յայտնապէս ասաց թէ՛ զգոյ՜ լերուք ի վարդապետութենէն. այլ զի քաջ ունիցին ի մտի գլխատակ իրացն խմորովն, քանզի գիտէր իսկ, եթէ մոռացան: Եւ դարձեալ՝ ո՛չ այլ իրաց համեմատեաց զուսումն նոցա, քան թէ խմորոյ, քանզի աղանդք օտարոտիք յոյժ ձգողական զօրութիւն ունին, մինչ զի զյոյժ իմաստունսն, թող թէ զպարզամիտսն, պատրել կարեն² եւ առ ինքեանս³ յօղել իբր զխմոր:

Նոքա խորհէին ընդ միմեանս եւ ասէին թէ՛ հաց ոչ բարձաք (ԺՁ 7):

Կարի պարզամիտք եւ անմեղք էին, զի զոր վասն աղանդոյ ասաց, նոքա վասն հացի կարծեցին, բայց ոչ իշխեցին ի վեր հանել, վասն որոյ եւ Տէրն վայրասպար մեղադրել չհամարէր ի դէպ, այլ ի նոցանէ առնուլ պատճառս եւ ասպա՛ սաստել, զի յորժամ զխորհորդս նոցա ի մէջ բերիցէ եւ ասպա՛ սաստեսցէ, զի մի՛ ըմբոստանայցեն:

Գիտաց Յիսուս եւ ասէ. «Ձի՞ խորհիք ի միտս ձեր, թերահաւատք, եթէ հաց ոչ ունիք» (ԺՁ 8):

Տակաւին չիմանա՞յք եւ ո՞չ յիշէք զհինգ նկանակն ի հինգ հազարսն, եւ քանի՞ սակառի բարձէք (ԺՁ 9):

Եւ ոչ զեօթն նկանակն ի չորս հազարսն, եւ քանի՞ զամբիղս բարձէք (ԺՁ 10):

Արդ զիա՞րդ ոչ իմանայք, եթէ ո՛չ վասն հացի ասացի ձեզ զգոյ՜ լինել ի խմորոյ փարիսեցոցն եւ սաղմկեցոց» (ԺՁ 11):

Աստ յոյժ սաստիւ իմն մեղադրէ, զոր ոչ երեւի այլ ուրեք արարեալ. է՞ր վասն. մի՛ զի զկերակրոցն հոգն մերժիցէ, եւ ասպա՛ զխտրանաց իմաստսն: Վասն այտրիկ անդ ասաց թէ՛ «Ո՞չ առնոյք ի միտ» (հմմտ. Մատթ. ԺԵ 17), եւ աստ «թերահաւատս» կոչէ, քանզի ո՛չ ամենայն ուրեք զգօնութիւն լաւ ինչ է, այլ երբեմն եւ

¹ Զ յառաջիկայսն

² Զ կարէ

³ Զ ինքն

զսաստն յաճախէ, զի պէսպէս իրօք զփրկութիւն հոգւոց նոցա յարդարեսցէ: Ուստի եւ ի ձեռն սաստին երկուս իրս յուշ արկանէ: Նախ՝ զմոռացեալ սքանչելիսն ծանուցանէ զկրկինն: Եւ երկրորդ՝ ոչ ի հացէ այլափառացն զգոյշ կալ ուսուցանէ, այլ յաղանդոյ, քանզի ուսոյց վասն կերակրոցն, թէ ոչ պղծէ զմարդ, այլ յորովայն երթայ եւ արտաքս ելանէ, իսկ հերձուածք եւ հայիոյութիւնք ի սրտէն ելեալ՝ պղծեն զսասցօղն եւ զլսօղն:

Յայնժամ ի միտ առին, եթէ ոչ սասց զգուշանալ ի խմորոյ, այլ յաղանդոյ փարիսեցոցն եւ սաղուկեցոց¹ (ԺԶ 12):

Տեսանէ՞ս, եթէ² ո՞րպիսի օգուտս գործեաց սաստն, զի թէպէտ Ինքն ոչ մեկնեաց, այլ նորա իմացան, զի ի հրեական խտրութեանցն ազատեաց զնոսա եւ զհոգսն կարի մտադիրս գործեաց եւ ի թերահաւատութենէն ապրեցոյց: Յորմէ ուսանել պարտ է եւ մեզ մի՛ յաղագս կերակրոյ վիատիլ եւ վասն քաղցի հոգալ, այլ անփոյթ առնել զայս ամենայն եւ ի Նա յուսալ, որ տայ կերակուր ամենեցուն ի ժամո՞՞ ոչ միայն զմարմնատրն, այլեւ զհոգեւորն եւ զերկնային զվարդապետութիւնն անձառ, եւ զմարմինն անապական՝ զկեցուցիչն հոգւոց եւ մարմնոց՝ ըստ այնմ. «Ձեաց երկնից ետ նոցա, զհաց հրեշտակաց կերան մարդիկ, եւ իջոյց ի նոսա կերակուր ի յիութիւն» (Մատթ. ՀԷ 24-25), որով յազեալք՝ փառս վերառաքեմք Նմին հանդերձ Հարբ եւ Ամենասուրբ Հոգւով, այժմ եւ միշտ եւ յա[ւիտեանս. ամէն]:

Եւ ելեալ Յիսուս ի կողմանս Փիլիպպեայ Կեսարեայն (ԺԶ 13):

Յորժամ հանդերձեալ էր խորհրդոյ իմիք զաշակերտսն խորհրդազէտս առնել, առանձնանայր ի տեղուք ուրեք, որպէս եւ աստանօր ելանէր ի շէնս Փիլիպպեայ Կեսարեանն՝ ըստ Մարկոսի⁴, քանզի կրկին խորհուրդ կամէր նոցա բացայայտել. նախ՝ զանձնէ թէ զո՞ ոք կարծեն. եւ երկրորդ՝ առ ի հաստատութիւն դաւանութեանն՝ զաստուածային փառացն երեւումն: Այլ քննելի է, թէ ուստի՞ զայր կամ յո՞ երթայր. յայտ է՝ յերկրէն Մագդաղեայ, ուր երկիցս անգամ զհացն աճեցոյց, վասն որոյ կամէին թազաւորե-

¹ Զ սաղուկեցոցն

² Զ թէ

³ Մատթ. ԵԳ 27

⁴ Մարկ. Ը 27

ցուցանել, ուստի ել եւ եկն ի կողմանս Փիլիպպեայ Կեսա[րեայն]¹ եւ հանդերձեալ էր ցուցանել զփառս ի Թաբոր² եւ ելանել յԵրուսաղէմ: Բայց թէ ընդէ՞ր զշինիչ քաղաքին յիշէ թէ՛ Փիլիպպեայ Կեսարիա, քանզի էր եւ ա՛յլ Կեսարիա, իբր Նէու եւ Գամրաց, եւ կամ Ստրատոնեան, որ կայ ի վերայ ծովուն Ովկիանու, վասն այնորիկ զայս որոշէ: Իսկ զՓիլիպպոսս զայս ոմանք զեղբայրն ասեն Հերովդէի, եւ այլք՝ զհայրն Աղէքսանդրու Մակեդոնացոյ, յորմէ շինեալ էր այս քաղաք յանուն նորա, յորս չոգաւ Տէրն: Բայց աւելի կարծիս եղբորն Հերովդէի գոյ, զի նախ կոչէր քաղաք Պեննադայ, եւ նա շինեաց եւ կոչեաց շէնս Փիլիպպեայ:

Հարցանէր ցաշակերտսն եւ ասէր. «Չո՞ք ասեն զԻնէն մարդիկն, թէ իցէ Ռոդի մարդոյ»:

Որպէս ասացի, մեկուսի տարեալ հարցանէր, զի յորժամ ապահով իցեն ի կասկածանացն հրէից, համարձակ լիցին ասել զամենայն ինչ, որ ի միտսն կացցեն: Այլ ընդէ՞ր ոչ նախ զնոցա մտացն կարծիս հարցանէր եւ ասպա՛ զբազմացն. զի յառաջագոյն զնոցայն ասիցեն եւ ասպա՛ զհորեանցն ի մէջ բերիցեն, որով ի բարձրագոյնս ելանէին իմաստս: Քանզի վասն այսորիկ եւ ոչ իսկ զբան քարոզութեանն հարցանէր, այլ յորժամ յոլով նշանս արար եւ բազում բարձրագոյն կրօնս խօսեցաւ եւ առ Հայր զմիաբանութիւնն յոլով վկայութեամբք ծանոյց:

Տես եւ զայն, զի ոչ ասաց թէ՛ «Չո՞ք ասեն զԻնէն»³ դպիրքն եւ փարիսեցիքն, այլ թէ՛ պարզամիտ ժողովուրդք ռամիկքն: Ո՛չ եթէ ոչ գիտէր զինչ ասէին նոքա, այլ զի եւ աշակերտքն նոցա մտաց կարծեացն վկայք լինիցին եւ գուշակք, որ թեպէտ կարի խոնարհագոյն քան զարժանն կարծէին, բայց ի չարեաց ազատք էին: Քննելի է եւ այն, թէ է՞ր աղագաւ ոչ ասաց թէ՛ «Չո՞ք ասեն զԻնէն», թէ իցեն», այլ թէ՛ «զՌոդոյ մարդոյ»: Այսու զտեսչութիւնն յայտ առնէ, զի թեպէտ բանքն վասն աստուածութեանն էին, այլ զնոյն Ռոդի մարդոյ ասաց վասն անճառ միաւորութեանն որ ի մարմնի, որպէս ի բազում տեղիս. «Տեսանիցէք»⁵ զՌոդի մարդոյ, զի

¹ Գ > Կեսա[րեայն]

² Թափօր Գ Թաբօր (այսպէս է և այլուր):

³ Գ զիսնէն

⁴ Գ զիսնէն

⁵ Գ Տեսանէք

ելանիցէ ուր էր գառաջինն» (Յովհ. 2 63), եւ թէ՛ «Ո՛չ որ ել յերկինս, ե-
թէ ոչ որ էջն յերկնից՝ Որդին մարդոյ, որ էն յերկինս» (Յովհ. 9 13): Եւ
դարձեալ՝ զի մարմինն եղև խարխիս առ Բանին գիտութիւն,
վասն այտորիկ ասէ՝ ո՛չ վասն գաղտնեացն հարցանեն, այլ որ ե-
րեւիմս ձեզ՝ ասացէք Ինձ, զի հաւաստեցից՝ ձեզ եւ վասն ծածկե-
լոցն:

Եւ նորա ասեն. «Ոմն՝ զՅովհաննէս Սկրտիչ, եւ այլք՝ զԵղիա, եւ կէսք՝ զԵ-
րեմիա կամ զմի որ ի մարգարէիցն» (ԺԶ 14):

Զճշմարիտն, որ ինչ լուեալ էին, ասացին, թէ ոմանք վասն նո-
րոզ մկրտութեանն եւ քարոզութեան՝ Յովհաննու բաղդատեն, որ-
պէս Հերովդէս թէ՛ «Նա է Յովհաննէս Սկրտիչ», եւ այլք վասն նա-
խանձուն, զի խարազան արարեալ չուանեայ հանէր զվաճա-
ռօղսն ի Տաճարէն, Եղիա ասացին, իսկ կէսք յաղագս մաքրու-
թեանն եւ սուրբ կենացն՝ Երեմիայի նմանեցուցին, եւ ոմանք վասն
ճշմարտասպատում բանիցն՝ մարգարէիցն հաւաստեցին, քանզի
զարմացումն պէս պէս զործոց Նորա ծնան ի տեսանելիս նոցա
զազգի ազգի արանցն նմանութիւն: Բայց ո՛չ էին արժանի պա-
տուոյ բանք նոցա, զի ո՛չ եղեն բաւական տեսողք նշանաց Նորա,
ուստի եւ ո՛չ հաւասար թարգմանեցին զմեծութիւն Նորա, վասն ո-
րոյ եւ ոչ զովէ զնոսա, այլ անհաւան եղեալ նոցա ասիցն՝ յաշա-
կերտսն դարձուցանէ:

Ասէ ցնոսա Յիսուս². «Իսկ դուք զո՞՞ք³ որ ասէք զԻնէն⁴, թէ իցեն» (ԺԶ 15):

«Դուք»-ն ասել նշանակիչ է, զի հարցուածոցն կերպարանօք
միտս մեծամեծս ստասցին եւ մի՛ ի նմին խոնարհութեան կաց-
ցեն⁵, որպէս բազումքն: Վասն որոյ ասէ՝ դուք, որ յայնքան
նշանսն վայելեցիք, որ զանձառ բանսն լուայք, որ այսքան ժամա-
նակս զկնի Իմ շրջեցայք⁶, զի զօրութիւն շնորհաց Հոգւոյն ի ձեռն
Իմ առիք, զո՞՞ք որ ասէք զԻնէն⁷, թէ իցեն: Բայց թէ ընդէ՞ր Ինքն ոչ
զանձնէ վկայէ, թէ ո՞րք իցէ, այլ ի նոսա հարցանէ՝ զի կամի ո՛չ

¹ Ձ հաւատացից

² Ձ > Յիսուս

³ Ձ զո՞՞ք

⁴ Ձ զիցեն

⁵ Ձ կայցեն

⁶ Տ > որ այսքան ժամանակս զկնի իմ շրջեցայք

⁷ Ձ զիցեն

զԻնքն վասն Իւր վկայել բանիւ, այլ ի ձեռն գործոցն ի նոցա վկայութեանցն հաստատրիմ լինել եւ ասպա ի հաստատութիւն նոցա բանիցն զԻնքն ծանուցանել: Քանզի ոչ այս միայն, այլեւ ամենայն աստուածայինքն այսպիսիք են, զի զսկիզբն բարեաց ի մերմէ յօժարութենէս առնուցու, իսկ զկատարած փառացն իբր կնիք ինքնատարտ ի Վարդապետէն¹ է:

Պատասխանի ետ Միմովն Պետրոս եւ ասէ. «Դու եւ Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ կենդանոյ» (ԺԶ 16):

Չեռնեքէց լինի ի պատասխանիսն Շմաւոն գլուխ՝ վասն Գլխոյն աստուածաբանութեան, զի մի՛ այլ ոք ախմարաբար զանյարմարն բարբառիցի եւ յիշատակ չարեաց թողու յաշխարհի. քանզի տակաւին սկիզբն էր իրացն, եւ իբր սահման եւ քանոն մնալոց էր յայն ժամու ասացեալքն վերջնոցն, վասն այնորիկ զճմարիտն բարբառեցաւ Ճշմարտութեանն աշակերտն թէ՛ «Դու եւ Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ կենդանոյ»: Այսինքն՝ օծեալն, որ ի մարգարէիցն պիտառեցաւ թէ՛ «Հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս» (Ողբ 7 20)՝ գոլով ի կենդանոյն Հօր բնութենէ հարազատ Որդի՛ յառաջ քան զարուսեակ ծնեալ², եւ այժմ առեալ մարմին վասն փրկութեան աշխարհի, զոր մի Որդի եւ մի Քրիստոս անճառ ներմարդութեամբ խոստովանեցաւ ի յերկրի: Նաեւ յօդիւն դնելով թէ՛ «Քրիստոսն», զայն նշանակէ, թէ զոր ակն ունէաք, թէ Մեսիա գալոց է, Դու՛ եղեր լրումն յուսացելոյն, իսկ «կենդանի» զՀայրն անուանելն առանձին իմն աստուածաբանութիւն է՝ որոշելով ի մենելոտի աստուածոցն, որք կործանելոց են:

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. «Երանի՛ է քեզ, Միմո՛ն, որդի՛ Յովնանու, զի մարմին եւ արի՛ն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր Իմ, որ յերկինս է (ԺԶ 17):

Որովհետեւ զԻս, ասէ, որ երեւիմս՝ յառաջ քան զյաւիտեանս իմացար, եւ որ տեսանիմս՝ Աստուած ի սկզբանէ անուանեցեր, ընկալ եւ դո՛ւ զերանական բարբառոյն զպատիւն՝ ուսուցանելով, թէ որ յաստուածածանօթութիւնն մերձենան, զերանութիւնն են³ ժառանգելոց, բայց զայս ոչ առանց Հօր՝ ըստ այնմ թէ՛ «Ոչ ոք կարէ զայ առ Իս, եթէ ոչ Հայրն Իմ ձգեսցէ զնա առ Իս» (հմմտ. Յովն. 2

¹ Զ վարդապետն

² Սաղմ. ԵԹ 3

³ Զ > են

44): Քանզի թէ ոչ է ճշմարտապէս դաւանութիւն դաւանեալ, ապա ոչ է վերին յայտնութեանն գործ եղեալ, եւ թէ իբր զմի ի բազմացն զՆմանէ էր կարծեալ, եւ ոչ բնաւին երանութեանն էր արժանատրեալ, քանզի եւ Նաթանայէլ յառաջագոյն ասաց թէ՝ «Ռաբբի, Դու եւ Ռոդի Աստուծոյ» (Յովհ. Ա 49), եւ որք ի նաւին էին՝ զսոյն ասացին¹, բայց ոչ երանեցան, քանզի ոչ էր դաւանութիւն նոցա հանգոյն դաւանութեանն Պետրոսի. վասն այսորիկ ասէ. «Երանի՛ է քեզ, Սիմոն, որդի՛ Յովնանո»։ Չորն անունն ի մէջ բերէ, որպէս թէ ասել. գոր օրինակ դու քարոզեցեր զՀայր Իմ, եւ Ես յանուանէ կոչեցից զձեռոյն քո, միանգամայն եւ զայն² ուսուցանէ թէ՛ որպէս դու Յոնանու որդի ես՝ ի նորին բնութենէ ծնեալ, նոյնպէս եւ Ես Իմոյ Հօրն ծնունդ եմ՝ ի նորին բնութենէ յառաջ եկեալ։

«Չի մարմին եւ արին,- ասէ,- ոչ յայտնեաց քեզ»։ Չի մի՛ կարծեսցէ յիւրմէ հօրէն գոյ զայնպիսի գիտութիւնն առեալ, զի թէպէտ զգոյութիւնն ունէր, այլ ոչ զգիտութիւնն, զի անհնար է գերկնային վարդապետութիւնն ի մարմնականաց ուսանել, այլ յերկնատրն ի Հօրէ, յորմէ եւ նա շնորհօք ընկալաւ։ Եւ դարձեալ՝ զի մի՛ կարծիք ինչ լինիցի բազմաց, թէ զի կարի քաջ սիրէր զՔրիստոս, սիրոյ եւ հպատակութեան էին բանք դաւանութեանն, յորմէ եւ երանութիւնն՝ անդրադարձութիւն նմին, ասէ, զի թէպէտ Պետրոս էր, որ խօսէր, այլ Հայր էր, որ դրդէր. զի մի՛ կարծիս ինչ մարդկեղէն, այլ աստուածական կրօնս զբանն համարիցիս։ Ապա ուրեմն եւ երանութեանն եւս արժանատր էր, զի որպէս բանն նմին, այսպէս եւ երանութիւնն նորին ի վերուստ։

Եւ Ես քեզ ասեմ, զի դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զԵկեղեցի Իմ, եւ դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն (ԺՁ 18)։

Քառակի իրս աւանդէ այսու բանիւ. նախ՝ զԻնքն Հօր հաւասար ցուցանէ իշխանութեամբ վարելով թէ՛ գոր օրինակ Հայր Իմ ետ քեզ ճանաչել զԻս, նոյնպէս եւ Ես զքեզ դնեմ վէմ հաւատոյ՝ ի քէն առնելով զսկիզբն. զի ոչ ասէ թէ՛ առնեմ, այլ թէ՛ «Դու ես վէմ»։ Եւ երկրորդ՝ ի վերայ այդր դաւանութեան հաւատոյ, գոր դու դաւանեցեր, շինեցից զԵկեղեցի Իմ, որ է կրկին. մի՛ ի³ քարանց եւ ի փայտից շինեալն, եւ միւս՝ որ ի հաւատոց միաբանութենէ շինեալ

¹ Մատթ. ԺԴ 33

² Զ զայն եւ զայս

³ Զ զի ի

ժողովուրդը ի վերայ հիմանն Տեառն եւ առաքելոց Նորա, որպէս ասէ Պօղոս. «Հիմն այլ ոք ոչ կարէ դնել, քան զեղեալն, որ է Յիսուս Բրիստոս» (Ա Կոր. Գ 11), եւ թէ՛ «Ես իբր ճարտարապետ հիմն եղի» (Կոր. Ա Կոր. Գ 10), զոր աստ «վէմ» ասէ, յորոյ վերայ զԵկեղեցի շինէ՝ ուսուցանելով, թէ բազումք են հաւատալոց նովին հաւատով, որով յորդորէ զմիտս նորա յանձն առնուլ զգործս հովուութեան: Եւ երրորդ՝ զհաւատն զայն ոչ խախտել կարասցեն դժոխացն դրունք, որք են փորձութիւնք, որպէս եւ ոչ զվէմ յեզր ծովու՝ այլեկոծութիւնք, ապա ո՞րչափ եւս առաւել զԻս, վասն որոյ մի՛ ինչ խռովիջիք, յորժամ լսիցէք, թէ մատնելոց եմ եւ ի խաչ ելանելոց: Եւ դու տես աստ զգործութիւն Տեառն, զի զայր մի ձկնորս քան զամենայն վէմս կարծրագոյն եւ հաստատագոյն արար, զի թէպէտեւ ամենայն աշխարհք ի վերայ յառնիցեն, ոչ կարեն զամագիտ լինել:

Եւ չորրորդ՝ զմարգարէիցն պարգեւս առաքելոցն խոստանայ, զի որպէս Հայր Գերեմիա ասէր թէ՛ «Եդի զքեզ իբրեւ զսին երկաթի եւ իբր զպարիսպ պղնձի» (Կննտ. Երեմ. Ա 18), սակայն զնա՝ միում ազգի, իսկ Ռոդի զսա՝ ամենայն աշխարհի անվանելի՛: Եւ յիրաւի՛. զի զոր Նա շինէ, ո՞ կարէ քակել, եւ զոր Նա կործանէ, ո՞ կարէ կանգնել: Կամեցաւ ասորեստանեայն քակել զտաճարն զՀինեալն յԱստուծոյ, քակեցաւ թագաւորութիւն նորա, եւ Աքաաք շինել յօժարեցաւ զԵրիքով, կործանեցաւ արքայութիւն նորա², նոյնպէս եւ զԵկեղեցի զՀինեալն յՌոդոյ ոչ ոք կարիցէ յաղթահարել զնա, քանզի հիմն նորա բաւական է յաղթօղ լինել դրանց դժոխաց, որպէս ասէ թէ՛ «Դրունք դժոխաց զնա մի՛ յաղթահարեացեն»։ Չի որպէս դուռն արքայութեան Բրիստոս է, զի Նովաւ մտանեն ի նա, այսպէս եւ դուռն դժոխաց սատանայ է եւ սպասաւորք նորա, որ են կամարարքն³ եւ հերձուածօղքն⁴ եւ հալածիչքն⁵ եւ չար բռնաւորքն⁶, զի նոքօք մտանեն ի խաւարն արտաքին:

Եւ տաց քեզ զփականս արքայութեան երկնից (ԺՁ 19):

¹ Տ անուանելի

² Գ Թագ. ԺՁ 34: Հավանաբար հեղինակը կամ արտագրողը շփոթմամբ «Աքաաք» է գրել «Աքիելի» փոխարեն:

³ Զ կամարարք

⁴ Զ հերձուածօղք

⁵ Զ հալածիչք

⁶ Զ բռնաւորք

Դարձեալ՝ եւ աստանօր իշխանութեամբ իմն վարի, զի ոչ ասէ թէ՛ աղաչեցից զՀայր, այլ թէ՛ Ես տաց, զի զգուգապատուութիւնն՝ եւ զմիակամութիւնն Իւր ընդ Հօր յայտ առնէ: Այլեւ ի հաւասարութիւն ձգէ զՊետրոս, զի բանայ զերկինս ապաշխարողաց եւ հաւատացելոց եւ փակէ անհաւատից եւ մեղուցելոց: Իսկ «փականք երկնից» նախ մկրտութիւնն է՝ ըստ այնմ՝ «Եթէ ոչ որ ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայ[ութիւն Աստուծոյ]» (Յովն. 4: 5): Եւ երկրորդ՝ վարդապետութիւնն: Եւ երրորդ՝ խաչն եւ չարչարանքն, որպէս աւագակին եղեւ², զի զոր Ադամ հեշտութեամբ փակեաց, Նա խաչիւ երաց: Եւ չորրորդ՝ աղօթք եւ այլ առաքիւնութիւնք հանդերձ հաւատով եւ յուսով, զոր զգեցաւ Պետրոս յետ ուրացութեանն: Եւ հինգերորդ՝ կապելն եւ արձակելն, զոր ի կարգիս ասէ: Իսկ առ ի միտս՝ «արքայութիւն» Քրիստոս է եւ վարդապետութիւն Նորա, եւ «ղրունք» սուրբքն են, որովք մտանենք ի Նա եւ ի զիտութիւն Նորա:

Եւ զոր միանգամ կապեացս յերկրի, եղիցի կապեալ յերկինս, եւ զոր արձակեացս յերկրի, եղիցի արձակեալ յերկինս:

Կարի իմն ի բարձրագոյն պատիւ հանէ զՊետրոս, քանզի բարձրագոյնս իմացաւ զՆմանէ, որով զանձն յայտնէ, թէ Որդի է Աստուծոյ. երկրորդ՝ խոստմամբքս այսոքիւք, որ միայն Աստուծոյ է առանձինն զմեղս թողուլ եւ զԵկեղեցի անշարժ պահել ի մէջ այնչափ բազում ալեաց ի վերայ յարուցելոց: Եւ դարձեալ՝ թող զասացեալս, այլ իմն կրկին շնորհ ընձեռէ՝ զբարերարելն եւ զպատժելն, որպէս Եղիսէի՝ զկրկին հոգին Եղիայի³, քանզի կապել⁴ զսատանայ ետ իշխանութիւն եւ արձակել զհեթանոսս, եւ այն՝ յերկինս եւ յերկրի, որպէս կապեաց զԱնանիաս եւ արձակեաց զՏարիթայմ⁵, որ է բացումն:

Յայնժամ սաստեաց աշակերտացն, զի մի՛ ումեք ասիցեն, թէ Նա է Քրիստոսն (ԺՁ 20):

¹ Զ գուգապատուութիւնն

² Ղուկ. ԻԳ 32-43

³ Դ Թագ. Բ 9

⁴ Զ կապեալ

⁵ Գործք Ե, Թ

Նախ զանարգամեծար բարս Իւր ուսուցանէր աշակերտացն, զի յորժամ զմեծամեծսն յայտնէր, զանձն ծածկել ախորժէր, զի մի՛ փառաց կարծեսցեն զայն յայտնել, այլ ճշմարտութեանն ա-
նազաւ ի միտ առցեն: Եւ երկրորդ՝ զի տակաւին առաջի կային չարչարանացն իրք, եթէ յառաջագոյն յայտնապէս քարոզեալ էին զաստուածութիւն Նորա, եւ ի վերայ հասեալ, թէ Որդի է Աստու-
ծոյ, եւ դարձեալ՝ ի խաչին տեսեալ եւ յերեսս թուք առեալ, ո՞րչափ
ինչ բազումք ախտանային: Չի թէ մինչ ի նշանսն վայելէին, ի լսե-
լոյն միանգամայն զայթազդեցին, եւ ոչ միայն նոքա, այլեւ զլիսա-
տորն Պետրոս, զի՞նչ ասել զբազմացն: Իսկ յորժամ զայթազդեցու-
ցիչքն ի միջոյ բարձցին, եւ խաչին եւ այլոց չարչարանացն չափքն
կատարեսցին, եւ լցցին հանդէս մարդէորութեան Նորա՝
ըստ մարգարէիցն պիտառութեան, որք վասն Քրիստոսի խօսե-
ցան, եւ չիցէ ինչ ի միջի, որ խափանեսցէ եւ պիտորեսցէ զյստակ
հաւատս որ ի Նա, յայնժամ ծանուցեալ զՆա Քրիստոս՝ անշարժ
կացցեն ի հաւատս Նորա: Չի տունկ, որ հաստատեսցի, միան-
գամայն եւ արմատս առնուցու, եւ յետոյ խլէ որ եւ դարձեալ տնկէ,
հազի թէ միսանգամ առնուցու: Նոյնպէս եւ որ ի Նա հաւատքն.
եթէ նախ հաստատեսցին եւ ապա յողորդեսցին, հազի եթէ կաց-
ցեն յակաստանի. իսկ եթէ միանգամ հաստատեսցի եւ անշարժ
կայցէ, այնուհետեւ եւ ի վեր եւս զայցէ յաճումն եւ բազմանայցէ,
որպէս եւ եղեւն իսկ: Վասն այսորիկ սաստեաց, զի մի՛ ումեք
յայտնեսցեն:

Յայնմհետև սկսաւ Յիսուս¹ ցուցանել աշակերտացն, թէ պարտ է Նմա եր-
թալ յԵրուսաղէմ եւ բազում չարչարանս չարչարել եւ անարգել² ի քահանայա-
պետից եւ ի դպրաց եւ ի ծերոց ժողովրդեանն, եւ սպանանել եւ յերիւր
յառնել (ԺՁ 21):

Ե՞րբ. յորմէհետև մեծացոյց ի նոսա զաւանդն եւ հաստա-
տեաց զկրօնս աստուածածան կրթութեան³ եւ սկիզբն արար
մտին հեթանոսաց, սկսաւ յայտնել զչարչարանացն իրս: Սակայն
նոքա եւ ոչ այնպէս իմացան, զի «էր,- ասէ,- ծածկեալ ի նոցանէ
բանն» (Կով. ԺԸ 34), վասն որոյ ոչ միայն զչարչարանացն, այլեւ
զփառաց յարութեանն, զի բանայցէ զմիտս նոցա, նաեւ զայն, թէ

¹ Գ > Յիսուս

² Գ > եւ անարգել

³ Գ կրութեան

որպես կամ որով օրինակօք եւ կամ զի՞նչ խորհուրդն իցէ: Բայց ո՛չ բնաւ ի միտ առին եւ ո՛չ զյառնելն¹ անգամ իմացան, զի լաւ համարէին, թէ բնաւ իսկ ոչ մեռանիցի: Վասն այնորիկ իբրեւ այլքն խռովեցան եւ տարակուսեցան, Պետրոս ջերմաջերմ գոլով միայն համարձակի: Եւ դարձեալ՝ զկամաւորն ցուցցէ մահ՝ յայտնութեամբ չարչարանացն, բայց առ այն ժամ նոքա ոչինչ իմացան, այլ հակառակէին:

Եւ առեալ զՆա մեկուսի Պետրոսի՝ սկսաւ կազել ընդ Նմա եւ ասել. «Քա՛ւ լիցի Քեզ, Տէ՛ր, մի՛ եղիցի քեզ այդ» (ԺՁ 22):

Չի՞նչ է այս. զի այն, որ այնպիսի յայտնութեան արժանատր եղել եւ երանութիւն ընկալաւ, զիա՞րդ վաղվադակի յերկնտութիւն անկեալ սխալէր: Նախ՝ զի երկեաւ ի չարչարանացն, թէպէտ բազում անգամ լուեալ էր. զի թէ Որ զչարչարանսն կրէր, զարհուրէր մերձ առ խաչին, զի՞նչ ասես զնա: Եւ երկրորդ՝ զի թէպէտ դաւանեաց զՆա Որդի Աստուծոյ՝ Հօր յայտնութեամբ, սակայն խորհրդոյ խաչին եւ յարութեանն ո՛չ եղել ակահ², քանզի ոչ յայտնեցաւ նմա, այլ ծածկեցաւ, որպէս³ ասէ բանն⁴: Վասն այնորիկ կազէր, սակայն կադ ի կադս, եւ առանձինն ասէ. «Քա՛ւ լիցի Քեզ, Տէ՛ր». կամ թէ կարծէր, թէ Հայր քաւիչ լիցի Քրիստոսի, զի մի՛ չարչարեցի, եւ կամ թէ՝ «Քաւ լիցի Քեզ, Տէ՛ր»-ն «Մի՛ եղիցի Քեզ այդ» թարգմանի: Իսկ Յիսուս զի՞նչ:

Եւ Նա դարձեալ ի Պետրոս՝ ասէ. «Երբ յե՛տս Իմ, սատանայ՝, գայթազութիւն Իմ ես, զի ո՛չ խորհիս դու զԱստուծոյսն, այլ զմարդկան» (ԺՁ 23):

Սաստիկ իմն պատուհասակո՞ծ առնէ զնա, զի ցուցցէ, թէ կամատրաբար զայ ի չարչարանս, նաեւ զայն եւս ծանուցանէ, թէ այդ հակառակորդին են կամք, զի մի՛ չարչարիցիմ, որ զփրկութիւն մարդկան յաչադէ: Վասն այտորիկ ո՛չ ասաց թէ՝ սատանայ խօսեցաւ ի քեզ, այլ թէ՝ «Երբ յետս Իմ, սատանայ», այսինքն՝ հակառակ սատուածային կամացն, որպէս զի այսու եւ զայլսն ահաբեկ առնէր եւ զնա յողորութիւն ածէր: «Գայթազութիւն Իմ ես». այսինքն՝ որպէս օճիւն՝ Եւայի, այսպէս եւ քեւ Ինձ լինի: «Չի ո՛չ

¹ Ձ գայտնելն

² Տ ակեահ

³ Ձ այսպէս

⁴ Ղուկ. Թ 45, ԺԸ 34

խորհիս դու զԱստուծոյսն, այլ զմարդկան»։ քանզի նա մարդկեղէն եւ երկրաւոր խորհրդով զիրսն քննէր, որով անպատշաճ զՆորա չարչարանսն համարէր, ասէ՝ ո՛չ ինձ ի դէպ են չարչարանքդ։ Այդ ո՛չ է ըստ աստուածական մտացն, զի թէ լուեալ էր քո զճառս բանիցն ասացելոց, ապա ի մարմնաւոր անմտութենէն պարտ էիր յափրանալ, քանզի ո՛չ ուսար, թէ վասն է՞ր եղեւ գալուստ Իմ, այլ որպէս եղէ մանուկ եւ եղայ ի մտոր եւ ուրախ արարի զծնունդս Ադամայ, այնպէս պարտ է Ինձ իջանել ի դժոխս եւ մխիթարել զմեռեալսն, որ յաիտենից ակն ունէին եւ ցանկային Իմոյ գալուտեանս՝ ըստ այնմ. «Աբրահամ ցանկացաւ տեսանել զօր Իմ, ետես եւ ուրախ եղեւ» (հմմտ. Յովհ. Ը 56), քանզի այս խորհուրդ Աստուծոյ է, զոր յայտնեաց մարգարէից Իրոց սրբոց՝ փրկել զմարդիկ խաչի Իմով, իսկ քոյդ՝ մարդկան, որ ընդ հակառակս Ինձ ելանէ։

Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտսն Իւր. «Եթէ ոք կամիցի¹ զկնի Իմ գալ, ուրացի զանձն եւ առցէ զխաչ իւր եւ եկեաց զկնի Իմ (ԺԶ 24)։

Յորժամ աստեաց Պետրոսի եւ կամեցաւ առաւել ցուցանել զյոռութիւն բանիցն, որ ի Պետրոսէ ասացան, եւ զշահն, որ ի չարչարանացն լինելոց էր, ասէ՝ դու ասես թէ՝ «Մի՛ լիցի Քեզ այդ», բայց Ես ասեմ քեզ, եթէ ոչ միայն զԻս արգելլովդ կորնչիցիս, այլ եւ դու ոչ կարիցես ապրել, եթէ ոչ պատրաստ լինիցիս միշտ մեռանել։ Եւ զայս ո՛չ հարկաւ ի վերայ դնէ, այլ յանձնիշխան կամսն ասպատան առնէ, քանզի ասէ թէ՝ «Որ կամիցի գալ զկնի Իմ», ի բարիս կոչեմ եւ ո՛չ ի չարիս, ի լաւութիւնս եւ ո՛չ ի տանջանս։ Ձի զոր² հարկաւ ստիպեն, բազում անգամ յետս կայ, իսկ զոր անձինն առնէ³ յօժարութեամբ, զկնի Կոչողին ձգիցի, զի քան զբռնութիւն ողորջանքն զօրագոյնք իցեն. եւ որ ոսկի կամիցի բաշխել, ո՛չ զոք բռնադատիցէ, ո՞րչափ եւս առաւել առ երկնաւոր բարեացն բաշխումն։ Բայց զի մի՛ կարծիցեն⁴ բաւական գոլ զայն, որ յայնժամ ող անկեալ զկնի ընթանային, ասէ՝ բազում վաստակոց են պէտք եւ յողով ճգանց, եթէ այդ իցէ եւ եթէ կին, եթէ իշխան եւ եթէ ընդ իշխանութեամբ, որ ընդ այն ճանապարհ եկեացէ, ուրացի՛ զանձն։ Այն իսկ է, զի ոչ խնայիցէ ի մարմինս իւր. թէպէտ տանջեացեն,

¹ Զ կամի

² Զ որ] զի զոր

³ Տ առնէ Տէր

⁴ Զ կարծեն

կամ հալածեցեն, կամ այրեցեն իսկ, մի՛ խնայեցուք, այլ որպէս թէ զայլ ուրուք մարմին տանջիցեն կամ հալածեցեն, այնպէս սրտառու լիցի եւ չգրիցէ՝ ինչ:

Եւ դարձեալ՝ զհին մարդն մերկանալով՝ ուրացութիւն է անձին, որպէս զի կարող լիցի ասել. «Կենդանի եմ ո՛չ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս» (հմմտ. Գաղ. Բ 20): Այլեւ զկամացն պաշտօն եթէ որ ի բաց թողուցու, զի մի՛ ինքնասէր առաւել քան աստուածասէր իցէ, ուրանալ է զանձն: Եւ ո՛չ միայն այս, ասէ, այլեւ «առցէ զխաչ իր»։ Այսու ուսուցանէ, թէ մինչ ցորչափ է ուրացութիւն անձին, զի զնախատանաց եւ զանիծից մահ յանձն առնու եւ զայն միշտ ընդ իր բարձեալ շրջեցուցանէ՝ զնմանութիւն չարչարանաց մահուն Տեառն յանձնու բերելով, որպէս զի եւ կեանք Նորին ի մեզ բազաւորեցեն², եւ առաքինի ժուժկալութեամբ զհետ հոտոյ իսրոց³ Նորա ընթացուք⁴ բերկրանօք հանդերձ, որպէս Տէրն «բաժակ» կոչեաց⁵, եւ Պօղոս՝ «Ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, եւ ես՝ աշխարհի» (Գաղ. 2 14), եւ թէ՛ «Զաւ լիցի պարծել յայլ ինչ⁶, բայց միայն ի խաչակից լինելն Քրիստոսի» (հմմտ. Գաղ. 2 14):

Եւ դարձեալ՝ ասելովն «եկեցէ զկնի Իմ»՝ այլ իմն իմաստս աւանդէ, քանզի բազում չարչարանք կրեն աւագակք եւ գերեզմանակրկիտք եւ կախարդք եւ գողք, գոր եւ խաչեն իսկ, արդ զի մի՛ կարծիցեն, թէ չարչարանքն միայն բաւական իցեն, յաւել զպատճառ չարչարանացն, զի զայն ամենայն վասն Նորա զհետ երթալոյն առնիցեն եւ զամենայն վիշտս վասն Նորա կրիցեն, որպէս յորժամ ասէր. «Եթէ նախատիցեն զձեզ վասն Իմ, երանելի էք» (հմմտ. Մատթ. Ե 11):

Ձի որ կամիցի զանձն իւր կեցուցանել, կորուցէ զնա, եւ որ կորուցէ զանձն իւր վասն Իմ, գտցէ զնա (ԺՁ 25):

Որք զփրկութիւն խնդրեն առ ի վշտաց ճողոպրել, զայն կորուստ կոչէ, եւ որ վասն Նորա վիշտք եւ կորուստք՝ զայն զհիտ եւ փրկութիւն անուանէ: Բայց կեանս եւ կորուստ աստ եւ անդ լուեալ՝ մի՛ որ հասարակ ինչ կարծիցէ զայնր կենաց եւ զայս, ասէ,

¹ Ձ չկրիցէ

² Բ Կոր. 7 9-11

³ Ձ եղոց

⁴ Երզ Ա 3

⁵ Մատթ. Ի 22, ԻՁ 39

⁶ Ձ ~ ինչ յայլ

թէ այնչափ միջոց է ընդ այն եւ ընդ այս, որպէս ընդ կորուստն եւ ընդ գիտն: Վասն որոյ որք աստ գտանեն զանձինս յանցաւոր կեանս ի փառս եւ ի պատիւս, ի մշտնջենաւորն կորուսանելոց են ի դժոխս եւ ի տանջանս, եւ որք աստ կորուսանեն ի չարչարանս եւ ի մահ, անդ յաւիտենականս գտանելոց են ի կեանս եւ ի հանգիստս: Վասն որոյ յիմարք են, որք զապականացուէս բունն հարեալ ունիցին եւ ի մնացական ժառանգութենէն զրկիցին, քանզի այս ոչ մնայ, եւ անտի ելանիցէ, որպէս ասէ.

Ձի՞նչ օգտիցի մարդ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի եւ զանձն իւր տուժեսցի (ԺՁ 26):

Չոր ասէն՝ այսպիսի է, թէ զի՞նչ օգուտ իցէ մարդոյ, յորժամ աւսիցէ որ նմա թէ՛ եկ սպանից զքեզ եւ արարից զքեզ տէր ամենայն աշխարհի: Եւ կամ զի՞նչ շահիցէ, յորժամ որ զժառայն իւր ի փառս վայելել տեսանիցէ եւ զինքն ի վիշտս մաշեալ, զի՞նչ օգուտ գործեսցէ նորա տէրութիւնն իւր: Եւ կամ զի՞նչ գործիցէ օգուտ հայր, յորժամ խնայիցէ յորդի եւ կորուսանէ զնա, եւ կամ զօրավար՝ զօրս յորժամ ի քաղաքին պահէ եւ զբոլոր քաղաքացիսն առ հասարակ կորուսանէ: Նոյնպէս եւ վասն ոգւոյն հաշուեսցիր, քանզի յորժամ մարմինդ պարարի եւ մեծութիւն ընչից շահեսցիս, հոգիդ տուժեալ է, վասն զի ո՛չ այլ ինչ սպանանէ զհոգին, որպէս մարմնոյ փափկութիւնն: Բայց «աշխարհ» ո՛չ գերկին եւ գերկիր ասէ, այլ զիրս աշխարհիս անուանէ, զշահօ՞ղ սմին, որոյ ո՛չ աշխարհս խաչեալ է, եւ ոչ¹ նա՝ աշխարհի, որով վնասի հոգին:

Կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ:

Այս ա՛յն իսկ է, զոր Պօղոս ասէ թէ՛՝ «Չորս ոչ արժէ՞ աշխարհ» (Եբր. ԺԱ 38), քանզի ամենայն աշխարհի հանդերձ գոյիւք իւրովք ո՛չ են զինք ոգւոյ միոյ, քանզի ինչս ընդ ընչից մարթ է ստանալ եւ տուն ընդ տան եւ գերդաստան ընդ գերդաստանի, այլ հոգի ընդ հոգւոյ տալ ո՛չ է հնար: Չի «եղբայր ոչ փրկէ եւ ոչ փրկէ մարդ, եւ ոչ տայ որ զգինս փրկանաց անձին իւրոյ» (Խմն. Մաղմ. ԽԸ 8-9), թէպէտեւ տէր աշխարհի իցէ եւ զամենայն աշխարհ ընդ բռամբ ունիցի: Որպէս ասեն զԴարեհէ, թէ կամեցաւ ըմբռնել զհոգին իւր

¹ Ձ > ոչ

² Ձ > թէ

³ Ձ արժան է

եւ ոչ կարաց. եւ զի՞նչ ասես զհոգւոյն, ուր եւ զմարմինն նոյնպէս է տեսանել. թէպէտեւ թագ ի գլուխ ունիցի եւ անբուժելի ցաւօք ախտացեալ լինի, ոչ կարէ զառողջութիւնն զնել, որպէս եւ ոչ Ոգիա՛ եւ Աղբիանոս կայսր, վասն որոյ պարտ է հոգւոյն դարման տանել եւ ի մարմինն ոչ խնայել:

Եւ դարձեալ՝ զի մի հոգի ունիւ՞, եթէ զայն՞ կորուսանիցես, որ պատճառ է կենդանութեան մարմնոյդ, այլ ուստի՞ կարիցես ստանալ, մանաւանդ յանլուծանելի տանջանսն, որ անցեալ է ժամանակն թողութեան, զի թէ աստ կորուսանէ որք, զոյ հնար գտանել ապաշխարութեամբ, իսկ անդ անհնար է, քանզի «ոչ օգնեսցեն ինչք յաւոր բարկութեան, այլ արդարութիւն փրկէ ի մահուանէ»

(Առակ. ԺԱ 4):

Զի գալոց է Որդի մարդոյ փառօք Հօր Իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք Իւրովք, եւ յայնժամ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւր (ԺԶ 27):

Նախ՝ ի քաջալերութիւն Պետրոսի զայս ի մէջ բերէ, թէ ընդէ՞ր երկնչիս, ո՛վ Պետրէ, յորժամ զմահուանէդ լսիցես, զի տեսանելոց ես զԻս փառօք Հօր Իւրոյ: Արդ՝ եթէ Ես ի փառս, ապա եւ դո՛ւ ի փառաւորութեան, զի ոչ յայսմ աշխարհի միայն են կեանք ձեր, այլ յառաելագոյնն փոխելոց էք: Եւ «փառք Հօր» կամ զպայծառութիւնն լուսոյն ասէ, կամ զհրեշտակացն քազմութիւն, զի «ի քազում զօրս փառք թագաւորի» (Առակ. ԺԴ 28), եւ զայ ոչ ի փրկել, այլ ի դատել, զի զառաջինն լռելեայն եկն ի փրկել, իսկ զերկրորդն՝ յայտնապէս՝ ի դատել՝ ըստ այնմ. «Գայ, եւ զայ Նա ի դատել զերկիր» (Սաղմ. ԴԵ 13): Քանզի եւ զօրօք իսկ զայ, որ եւ վկայք են գործոց մարդկան, վասն որոյ ասէ. «Հատուցանէ իւրաքանչիւր՝ ըստ գործս իւր». այսու զատեանն յիշեցուցանէ եւ զանհրաժեշտ բեմն եւ զդատաստանն անվրէպ: Բայց «ըստ գործս» ասելն ոչ միայն զտանջանս չարեացն յուշ առնէ, այլեւ զպարգեւացն եւ զպսակացն բարեացն եւ արժանատրացն, որ բաշխէ ըստ վաստակոցն արդարութեան՝ ոմանց զկեանս եւ ոմանց զպատիժս: Այլեւ «իւրաքանչիւր» ասելն նշանակէ, թէ որպէս փառքն զանազան, այսպէս

¹ Բ Մն. ԻԶ 21

² Պ ունիցիս

³ Պ զայդ

⁴ Պ հատուցանել] հատուցանէ իւրաքանչիւր

եւ տանջանք, զի ըստ գործոցն կշռէ զերկոսին՝ ըստ Դատքի. «Հատուցանէ ըստ գործս իւր» (հմմտ. Սաղմ. ԿԱ 13), որ է յոյժ արդարութիւն:

Եւ երկրորդ՝ բնութենակից զԻնքն Հօր քարոզէ, զի եթէ փառօրն Հօր եկեացէ, ապա յայտ ուրեմն է, թէ եւ յէութիւնն իսկ մի են, զի միում բնութեանն ո՛չ այլեայլ փառք են, որպէս եւ ընդդէմն, զի ո՛չ այլեայլ բնութեանն մի փառք լինիցի: Արդ՝ աստ մի է փառք, յայտ է, թէ եւ բնութիւնն մի է, քանզի ո՛չ ասաց, թէ զայոց է ըստ նմանութեան փառացն Հօր, այլ թէ՛ փառօրն Հօր, որպէս զի ամենեւին զմիութիւնն ցուցանէ: Եւ երրորդ՝ զի Որդի մարդոյ, ասէ, զայոց է փառօր Հօր, որպէս զի մի՛ մարմնոյն ինչ բանքն կարծիք լինիցի, քանզի հաստատէ, թէ ստուգապէս նա՛ է, որ առաւ ի զանգուածոյս¹ Ադամայ, եւ Աստուած հաւասարեալ ընդ առողին, որ միացաւ, որ եւ դատաւոր լինելոց է Որդին Մարդոյ, եւ դաւանի համարձակութեամբ վասն առ Բանն միութեան², առանց շփոթութեան ստուգապէս Որդի Աստուծոյ, Դատաւոր կենդանեաց եւ մենելոց, գորոյ օրինակ փառացն թերաքամ տեսլեամբ աշակերտացն ծանուցանէ, որպէս ասէ ըստ կարգի.

Ամէ՛ն ասեմ ձեզ, զի իցեն ոմանք ի սոցանէ, որ աստ կան, որք ոչ ճաշակեցեն զմահ, մինչեւ տեսանիցեն³ զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ Իւրով» (ԺՁ 28):

Բազում ինչ զվշտաց եւ զչարչարանաց ճառեաց եւ մահու յանձն առնուլ սաստկապէս աշակերտացն հրաման ետ, եւ այնպէս յաշխարհի աստ հուպ կայր, եւ բարիքն յուսով եւ ակն ունելով էր, կամեցաւ այժմ աչօք նոցա ստուգել եւ ցուցանել, թէ ո՛րպիսի ինչ իցէ փառքն, որ հանդերձեալ իցէ զալ, որպէս մարթ էր տեսանել նոցա աստէն յայսմ կենցաղի: Զի մի՛ միայն ընդ Տեառն, այլեւ ոչ ընդ մահս իրեանց տրտմեցիկն, մանաւանդ Պետրոս, որ կարի ի խոր խոցեալ⁴ էր, յորժամ զփոխարէն վշտացն՝ զփառսն զգեղաղէշ լուսով տեսանիցեն:

Բայց դու տես եւ զայն, զի թէպէտ ասաց, թէ հատուցանէ ըստ գործս իւր, յորժամ փառօրն Հօր գայցէ, ոչ միայն զարքայութիւնն՝ արդարոց, այլեւ զգեհեանն՝ մեղաւորաց, եւ պարտ էր զերկոցունց

¹ Զ զանկուածոյս

² Զ միացեալ

³ Զ տեսցեն

⁴ Զ խոցոտեալ

օրինակն ի մէջ ածել, իսկ Նա զարքայութեանն ցուցանէ զտիպ եւ զդժոխսոցն ոչինչ յուշ առնէ: Է՞ր վասն. զի թէ թանձրամիտք էին լեալ, հարկ էր եւ զայն իսկ ցուցանել, այլ քանզի ընտիրք¹ եւ հաւանօղք էին, հրեշտակօքն յորդորէ զնոսա, իսկ յորժամ տեղին պահանջէ, եւ զգեհեննէն յիշէ, իբր որ զհարիւր դահեկանն պահանջէր՝ յուշ արար, եւ կամ որ զաղտեղի հանդերձն էր զգեցեալ²: Եւ աստ չգոյին ինչ այնպիսի պէտք, միայն զարքայութենէն ճառէ, եւ զայս ոչ միայն բանիւ, այլեւ արդեամբք ցուցանէ:

«Ամէն ամէն ասեմ ձեզ, զի իցեն ոմանք ի սոցանէ, որ աստ կան, որք ոչ ճաշակեցեն զմահի»: Յաղագս ստուգութեան տեսլեանն, զոր հանդերձեալ էր ցուցանել, զայս բառ ի մէջ առնու, որ թարգմանի «ճշմարիտ». կամ «եղիցի» ձեզ, զոր ասելոցս³ եմ, եւ ոչ այլ ումեք. եւ կրկնելն զ«ամէն»-ն՝ վասն բանիցն եւ արդեանցն եղ, զի որպէս բանն ճշմարիտ, այսպէս եւ գործն, զոր ցուցանելոց էր: «Ձի իցեն ոմանք ի սոցանէ, որ աստ կան». գոյքն ոչ ազդեաց, զի մի՛ տրտմեցին այլքն, բայց նախ զՊետրոսէ եւ զՅովհաննոս եւ զՅակոբայ ակնարկէ, որք տեսանելոց էին զփառս արքայութեանն, վասն որոյ ոչ ասաց թէ՛ ամենեքեան, որ աստ կան, այլ թէ՛ «ի սոցանէ»:

Բայց ասիցէ որ, թէ զի՞նչ հանդերձեալ էին լինել յայնքան ատորս, մինչ զի ասէ թէ՛ «ոչ ճաշակեցեն [զմահի]»: Ասացուք, թէ մահուն փորձ առ ամենայն որ մերձ է՝ ըստ Ինքեան Տեառն ասելոյն թէ՛ «Իբրեւ զորոզայթ հասանիցէ» (Ղուկ. ԻԱ 35), եւ այլուր թէ՛ «Ձեր ժամանակ յամենայն ժամ պատրաստ է» (Յովհ. Է 56), քանզի բազում անգամ պատահմունք կենցաղոյս ըմբռնեն զմեզ ի մահ՝ կամ ի վախից մղիլ, կամ ի ջրոյ հեղձանիլ, կամ ի հուր մատնիլ, կամ շարժմամբ կամ սրով կամ յանկարծակի ջերմամբ վտանգիլ, եւ այլ սոյնպիսեօք: Վասն այնորիկ զայնպիսի երկիւղս⁴ փարատէ թէ՛ «Իցեն ոմանք ի սոցանէ, որ աստ կան, որք ոչ ճաշակեցեն զմահ, մինչեւ տեսա[նիցեն զՌոդի Մարդոյ]»⁵, որով եւ ցուցանէ, թէ տէր է կենաց եւ մահու եւ Ինքն էր, որ յաւել Եզեկիայ կեանս զհնգետասան ամ⁶, եւ Ինքն է, որ պահէ զԵնովք¹ եւ զԵղիա կեն-

¹ Զ ընդիրք

² Մատթ. ԺԸ 23-35, ԻԲ 2-14

³ Տ ասացելոց

⁴ Զ երկիւղս (այսպէս է և այլուր. երկիւղ կամ երկեղ] երկիւղ):

⁵ Զ > զմահ, մինչեւ տեսա[նիցեն]

⁶ Դ Թագ. Ի 6

դանի ի մարմնի², որ եւ զԱնձնէն ասէ. «Ունիմ իշխանութիւն դնել զնա եւ իշխանութիւն վերստին առնուլ զնա» (Յովհ. Ժ 18), որպէս եւ արարն իսկ անճառելի մահուամբն եւ հրաշալի յարութեամբն ինքնիշխան զօրութեամբն Իւրով³:

Եւ երկրորդ՝ զհաւատացելոցն նշանակէ, որք տակաւին լինիցին յերկրի, յորժամ զալուստն մերձենայցէ՝ ըստ այնմ. «Ո՛չ անցցէ ազգս այս, մինչեւ ամենայն եղիցի: Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք Իմ ո՛չ անցանիցեն» (Մատթ. ԻԴ 34-35): Եւ երրորդ՝ զկենդանիսն ասէ, որք աստ յաշխարհի լինին, որ թարց զմահուն ճաշակ առնոյ⁴՝ վերափոխեալ նորոգիւմ⁵ ի Տեառն զալստեանն՝ ըստ առաքելոյ. «Մեք, որ կենդանիքս մնացեալ իցենք ի զալստեան Տեառն, ո՛չ ժամանենք ննջեցելոց, այլ յափշտակեցուք ամպօք ընդ առաջ Տեառն» (հմմտ. Ա Թես. Դ 14, 16), եւ՝ «Տեսանիցեն զՈրդի մարդոյ ամպօք եկեալ» (հմմտ. Մատթ. ԻԶ 64)՝ ըստ հրեշտակին թէ՛ «Այս Յիսուս, որ վերացաւ ի ձէնց յերկինս, սոյնպէս եկեսցէ, զոր օրինակ տեսէք զՆա երթեալ յերկինս» (Գործք Ա 11)՝ հանդերձ մարմնովն, զոր ի ձէնց էառ:

Իսկ «արքայութիւն» զթագաւորութիւնս երկնից ասէ, որով տիրէ ամենայն ազգաց՝ ըստ Դանիէլի տեսութեանն⁶, եւ թագաւորէ ամենայն հեթանոսաց, վասն որոյ ասէ «Իւրով», որ է բնական փառօրն եւ սեփհական թագաւորութեամբն՝ աստուածութեամբն, ասեմ, տեսլեամբ: Չի ո՛չ է հանապազ նուաստանալոյ ժամանակ, այլ յետ այտորիկ յայտնելոց է զանձն սքանչելի եւ ահաւոր երեւմամբ ծագելով ի յերկնից, յորժամ զամենայն արարածս ի մի վայր հաւաքէ ի դատաստան իբրեւ զԱրարիչ եւ զՏէր՝ հարցաքննութիւն առնելով ծառայից եւ ստեղծուածոց Իւրոց:

¹ ՏԶ գեճովս

² Ծննդ. Ե 24, Դ Թագ. Բ 1-12

³ Չ > Որով եւ ցուցանէ... զօրութեամբն իւրով:

⁴ Տ առնելոյ

⁵ Չ նորին

⁶ Դան. Է 14

ԳԼՈՒԽ ԺԷ

Եւ յետ վեց ատուր առնու ընդ Իւր¹ Յիսուս զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս զեղբայր նորա (ԺԷ 1):

Հարցաքննելի է, զի թէ յետ վեց ատուր հանդերձեալ էր զփառսն ցուցանելոց, ապա ընդէ՞ր յառաջագոյն ասաց թէ՛ «Են ումանք ի սոցանէ, որք մի՛ ճաշակեսցեն զմահ, մինչեւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ»։ զի տեղեկագոյնք եւ կիրթք տեսլեանն լինիցին այնու, զի կանուխն ասիցէ, եւ թուով ատուրցն յաճախագոյնս կարօտանայցեն եւ զհոգն ի մտի ունիցին։ Իսկ անդստին յառաջնումն ատուրն ոչ եհան, զի մի՛ մարդկօրէն ինչ ախտանայցեն այլ աշակերտքն, քանզի ամենեքեան իսկ ցանկային երթալ զհետ՝ տեսանել զօրինակ փառացն, վասն այտորիկ անսաց զվեց օր, զի հանդարտութիւն ստացան այլքն։ Եւ ապա «յետ վեց ատուր առնու ընդ Իւր² Յիսուս զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս»։ Միւս ատետարանիչն յետ ութ ատուր ասէ³, ոչ իբր հակառակ սմա, այլ կարի՛ միաբան, զի մին՝ զայն օր, յորում զբանն ասաց եւ յորում եհան զնոսա ի լեառն, թուէ, իսկ միւսն՝ զվեց օրն, որ ի միջի իցէ երկուցն, միայն ասէ։ Եւ արդ՝ թէպէտ այս այսպէս է, սակայն ոչ առանց խորհրդոյ՝ ոմն վեց եւ ոմն ութ գրէ զաւուրսն, այլ զի վեցին զվեց դարու խորհուրդ⁴ զառաջին զալստեան նշանակէ, յորում զվեցօրեայ եղեալ մարդկայինս բնութիւն՝ ի տիպ տիրական, եւ վեց շարժմամբ յանցուցեալ՝ դարձեալ նորոգեաց այցելութեամբ Իւրով ի վեցերորդ ատուրն ի վեց ժամուն։ Իսկ ութն՝ զօրինակ ութերորդի դարուն, յորում հանգուցանելոց է զամենայն վաստակաւորս յախտենական միաշարաթուն, յորում եւ Ինքն յարեալ։

«Եւ յետ վեց ատուր առնու ընդ Իւր⁶ Յիսուս զՊետրոս եւ [զՅակովբոս եւ զՅովհաննէս զեղբայր նորա]»։ Միտ դիր ատետարանիչս խոնարհութեան, թէ զհարդ ոչ թագուցանէ զայնոսիկ, որ քան

¹ Զ > ընդ Իւր

² Զ > ընդ Իւր

³ Ղուկ. Թ 28

⁴ Զ խորհուրդն

⁵ Զ մարդկային բնութիւնս] մարդկայինս բնութիւն

⁶ Զ > ընդ Իւր

զնա նախամեծարք եղեն ի Քրիստոսէ ի բազում տեղիս՝ Պետրոս եւ Յակոբոս եւ Յովհաննէս, զի այնպիսի ազատ էին ի նախանձուէ եւ ի սնապարծ փառաց զունդն սրբոց: Բայց թէ ընդէ՞ր զնոսս միայն առնուցու. զի թէ զամենեսեան առնոյր, եւ Յուդաս ընդ նոսս գտանէր՝ օտարացեայն ի շնորհացն Աստուծոյ եւ ի փառաց Նորա, որ եւ չէր իսկ արժան վայելել յարքայութեան Նորա: Եւ թէ ասիցէ որ՝ տակաւին չէր մատնիչ եղեալ, արդ՝ թէպէտ յամենեցունց ծածուկ էր, սակայն Տեառն յայտնի էր չարութիւն սրտի նորա, վասն այսորիկ զերկոտասանսն ոչ տարաւ ընդ Իւր, իսկ թէ զայլսն առեալ էր եւ զսա վասն անարժանութեանն թողոյր, բաւական պատճառ լինէր նմա առ ի մատնութիւնն, զորս թողեալ զայլսն պահապան նմին՝ իբր զազանի, «առնու ընդ Իւր Յիսուս՝ զՊետրոս եւ զՅակոբոս եւ զՅովհաննէս»:

Եւ զսոսս ոչ վարկպարագի, այլ զի քան զայլսն առաւելագոյնք էին. Պետրոս՝ ի սիրելոյն զՆա եւ ի ջերմ հաւատոյն, յայտ է ի բազում տեղիս, եւ Յովհաննէս՝ զի ի Նմանէ կարի իսկ սիրիւր, որ եւ զլանջօքն իսկ անկալ², եւ Յակոբոս՝ ի պատասխանոյն թէ՝ «Կարօղ ենք ըմպել զբաժակն» (հմմտ. Մատթ. Ի 22), որք ոչ միայն բանիւ, այլեւ զործով իսկ կատարեցին, զոր յառաջագոյն կալան ի յանձին: Բանզի վասն այսորիկ եւ մերձ առ խաչին սոքա լինէին, յորժամ առանձնացեալ աղօթէր, զի մի՛ զայթազդեսցին ի չարչարանս Նորա, որք տեսօղք եղեալ էին փառաց Նորա, այլեւ ի միտ առցեն զյորդորումն մարգարէիցն, որք վասն ելիցն յԵրուսաղէմ խօսէին, եւ իմասցին, թէ կամատրաբար՝ եկն ի չարչարանս եւ ոչ ի հարկէ:

Եւ դարձեալ՝ զերիսն միայն հանէ, զի ցուցցէ, թէ Նա Ինքն է, որ մինչ յերկինս՝ զալոց զարարչութեանն խորհուրդս եւ զանճառ նախախնամութեանն պարզես ի ձեռն երից դասապետութեանցն առաջին քահանայապետութեանցն՝ սերորէից եւ քերորէից եւ աթոռոց, որք անընդմիջաբար հաղորդին լուսափայլութեան րդիմանց եւ բարետրապէս շարժմամբ անցուցանեն ի ներքինս եւ նոքօք՝ յամենայն արարածս: Այսպէս եւ յորժամ յերկրի մարմին զգեցաւ, զնոյն սահման անյեղափոխ պահեաց՝ զմարդեղութեանն խորհուրդ եւ զերկրորդ զալստեանն օրինակ նոցա յայտնելով իբր

¹ Գ > ընդ Իւր Յիսուս

² Յովհ. ԺԳ 25

յոյժ մերձատրաց եւ հուպ եղելոց առ վերնոցն մաքրութիւնս՝ Պետրոսի եւ Յովհաննու եւ Յակոբայ, եւ նոքօք՝ հետետողաց նոցին եւ սրբազան հաւատացելոց ի Զրիստոս:

Եւ հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն:

«Լեառն բարձր» ոմանք զդրախտն ասեն, քանզի բարձր է քան զաշխարհ՝ հաւասար լուսնական զնդին եւ առանձին պատեալ քերոքէիք եւ բոցեղէն սրով զատեալ ի հողեղինացս բնութենէ, որում եւ ե՛ս դաշնակից գոմ: Քանզի յարութեանն էր տեսիլն ապացոյց, եւ յարութեանն ո՛չ այլ ինչ է, քան թէ առաջին փառացն կանգնումն, վասն որոյ անդ տարեալ՝ եցոյց աշակերտացն զխորհուրդ յարութեանն: Իսկ ոմանք զՍիոն ասեն «լեառն», յորում Դաւիթ զամբոցն շինեաց, զոր եւ Պետրոս ի սոյն տեսութեան պատմութիւն՝ «սուրբ լեառն» անուանէ, թէ՛ «Ընդ Նմա իսկ էաք ի սուրբ լեռինն» (Բ Պետ. Ա 18)՝ ըստ Դաւթի թէ՛ «Հիմունք Նորա ի լեառն սուրբ Նորա» (Սաղմ. 22 2), յորում հիմնարկելոց էր զխորհուրդ Վերին Սիոնին: Իսկ կէսք զՍինեականն ասեն անուանէ զազաթն, որ է բարձր եւ առանձինն, յորում զՕրէնսն ընկալան եւ երեսքն Մոսիսի՝ պայծառացան¹, որ յայտնապէս զայսր պայծառութեան խորհուրդ նկարէր, նաեւ յայնմ վայրի թաղեցաւ իսկ Մոսէս², եւ անդր փախստական չոգաւ Հեղիաս³, զորս կոչեաց դարձեալ եւ եցոյց զփառս Աստուածութեանն: Բայց հասարակաց բանն զԹաբոր ասեն, եւ վկայ առեալ զբան մարգարէին թէ՛ «Թաբոր եւ Հերմոն⁴ յանուն Զո ցնծացեն» (Սաղմ. 22 13)՝ ասէ եւ Պետրոս թէ՛ «Ունիմք հաստատագոյն զբանս մարգարէական, որում եթէ անսայցէք, բարուք առնէք» (Բ Պետ. Ա 19):

Արդ՝ հանէ զնոսա մարմնով ի լեառն եւ մտօք յանճառ իմաստս զիտութեան բարձրացուցանէ. է՞ր վասն. նախ՝ զի աներկիւղս ի հրէիցն արասցէ, զի մի՛ տեսութեանցն ի մոռացօնս եկեցցեն՝ առանձնացուցանէ յապահով տեղի: Եւ երկրորդ՝ զի զոր վերին ազդմամբն Պետրոս դաւանեաց, եւ Որդի յայտնեաց թէ՛ «Ո՛չ մարմին եւ արիւն, այլ Հայր Իմ որ յերկինս՝ ի քեզ ազդեաց» (Թմմն.

¹ Զ Մօսեսի

² Ելք Լ 7 29

³ Ըստ Աստվածաշնչի (Բ Օր. Լ 7 6)՝ «թաղեցին զնա ի Գալի մերձ ի տունն Փոզովրայ. եւ ոչ ոք զիտաց զգերեզման նորա մինչեւ ցայսօր»:

⁴ Գ Թագ. ԺԹ 3-8

⁵ ՏԶ Յերմօն

Մատթ. ԺԶ 17), հանէ ի լեառն, զի եւ ականջօք իւրովք լուիցէ ի Հօրէ, զոր ինչ բերանով իւրով վկայեաց: Եւ երրորդ՝ զի ցուցցէ զփառս աստուածութեան Իւրոյ յառաջ քան զյարութիւնն, զի յորժամ ի մեռելոց յարիցէ, ծանիցեն, թէ ոչ վասն վաստակոց էառ զփառս, այսինքն՝ վասն խաչին, այլ ունէր զնա յառաջ քան զխաչն՝ ըստ այլնն. «Հայր¹, փառաւորեա՛ զԻս առ ի Քէն փառօք, զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի» (Յովհ. ԺԷ 5): Եւ չորրորդ՝ զի տեսցեն զվկայելչութիւն փառացն, վասն որոյ հրամայեաց նոցա հանդիսանալ: Եւ հինգերորդ՝ Մոսիսի² հաւասարէ, զի որպէս զնա եհան ի լեառն Սինեական եւ ետ զՕրէնսն գրաւորական ի տախտակս քարեղէնս՝ զպատժականն, սոյն օրինակ զՆորոյ կտակիս պաշտօնեայն ի լեառն Թարորական ոչ միգով պատեալ, այլ փառօք երեւեալ՝ գրելով զօրէնս Հոգւոյն ի սիրտս³ նոցա՝ զշնորհականն: Իսկ «առանձինն»՝ կամ զտեղին ասէ անբոյթ, յորում ուշ ունէին տեսլեանն, կամ զնոսա առանձինն յայլոցն:

Եւ այլակերպեցաւ առաջի նոցա, եւ լուսաւորեցան երեսք Նորա իբրեւ զարեգակն, եւ հանդերձ[ք] Նորա եղեն⁴ սպիտակ իբրեւ զլոյս (ԺԷ 2):

Փոխեաց զկերպարանս յերեսաց Իւրոց, մինչչեւ մեռեալ իսկ էր, զի տեսցեն զգեղ երեսաց Նորա՝ ըստ Դաւթայ⁵, եւ մի՛ երկմտեսցեն յետ փոխելոյ յերեսաց Նորա՝ ի մահու Նորա նուագեալ՝ ըստ Եսայեայ⁶: Եւ դարձեալ՝ զի որք խաչակից լինին հանդիսի Նորա, փոխելոց են ի կերպարանս լուսոյ երեսաց՝ ըստ առաքելոյ՝ «կերպարանակից առնել զմարմին խոնարհութեան մերոյ՝ ըստ նմանութեան մարմնոյ փառաց Իւրոց» (հմմտ. Փիլպ. Գ 21), եւ ըստ Յովհաննու թէ՛ «Նման Նմա լինելոց ենք» (Ա Յովհ. Գ 2), քանզի «տեսար զփառս Նորա՝ զփառս իբրեւ զՄիածնի առ ի Հօրէ՝ լի շնորհօք եւ ճշմարտութեամբ» (Յովհ. Ա 14): «Եւ այլակերպեցաւ,- ասէ,- առաջի նոցա, եւ լուսաւորեցան երեսք Նորա իբրեւ զարեգակն»՝ առաւել քան զՄոսիսին, զի նորայն՝ արտաքուստ, իսկ Տեառն ի ներքուստ յաստուածութենէն էր արտափայլումն:

¹ Զ > Զայր

² Զ Մօսեսի

³ Զ սիրտ

⁴ Զ > եղեն

⁵ Սաղմ. ԼԵ 10

⁶ Ես. ԾԳ 2

Բայց «իբրևի զարեգակն» ասելն՝ ոչ այնչափ միայն, այլ եւս առաւել, մինչ զի յաղթել զլէր զլոյս արեգականն՝ պայծառութիւն երեսաց Նորա, բայց զի ոչ զոյ յէքս այլ իմն մեծագոյն լուսոյ սաստկութիւն, յաղագս այտորիկ արեգականն բաղդատէ: Նաեւ ոչ վայրապար երեսք Նորա իբրևի զարեգակն լուսատրեալ, զի Արդարութեան Արեգակն գոլով՝ այրէր զգործս խաւարին եւ փարատէր զմութ զիշեր¹ տգիտութեան եւ կռապաշտութեան, եւ պայծառացուցանելով զմարդիկ ի գործս աստուածային: Եւ դարձեալ՝ զաստուածութեան երեսն եցոյց, զի ծանիցեն, թէ ի վեր է քան զչարչարանս եւ կամատրաբար կրէ վասն մերոյ փրկութեան: Դարձեալ՝ խնդրէին ուսանել, թէ ո՞րպէս զայ յերկնից, եցոյց զօրինակն: Այլեւ յետ յարութեանն հանդերձեալ էին տեսանել զՆա, աստ եցոյց, զի զիտասցեն, թէ Նա է, որ յարեաւ, եւ ոչ այլ ոք, եւ հաւատասցեն, թէ եւ «արդարքն ծագելոց են իբրևի զարեգակն յարքայութեան» (Մատթ. ԺԳ. 43): Դարձեալ՝ եցոյց զփառս Ադամայ անմեղութեանն ի դէմս Իւր, զի իբր զարեգակն փայլէր ի դրախտին:

«Եւ հանդերձ[ք] Նորա եղեն² սպիտակ իբրևի զլոյս»: Մարկոս ասէ թէ՝ «Թափիչք երկրի ոչ կարեն այնպէս սպիտակացուցանել» (Մարկ. Թ. 2), այսինքն՝ թէպէտ ոմանք զանձինս թափեն ի մեղաց, սակայն ոչ կարեն կենդանացուցանել, որպէս զի զիտասցեն, թէ Նա, որ փոխեաց զհանդերձս Իւր, նոյն է, որ կենդանացուցանէ զմարմին Իւր, զոր զգեցեալն էր, եւ ապա զմերս ի յարութեանն, զի որ ետ նմա զհոգին եւ զփառս անմատոյց, կարող է կեցուցանել զնա ի մահու անդ, որպէս մարմին ճաշակէ զնա: Իսկ նշանակաբար՝ այլակերպիլն Տեառն զՕրինացն փոխումն ցուցանէր՝ զհինն ի նորս եւ զատուերն ի լոյս ածելով, եւ երեսացն Նորա պայծառութիւն իբր զարեգակն՝ զաւետարանին վարդապետութիւն եւ զառաքելական աստուածաբանութիւնն զուշակէր, յորում մեկնին միտք բառիցն լուսապայծառ վերլուծութեամբ: Իսկ հանդերձք իբր զլոյս լինելն՝ զնորածնելոց Աւագանին մկրտութեամբ զմաքրութիւնն, որով սպիտակացեալ պայծառացան յառաջին աղտեղութեանցն եւ եղեն հանդերձք Տեառն մերոյ՝ ըստ մարգարէին. «Կենդանի եմ Ես,- ասէ Տէր,- թէ զձեզ զամենեսեան իբրևի

¹ Գ զիշերին

² Գ > եղեն

զհանդերձ մի զգեցայց» (հմմտ. Ես. ԽԹ 18), զորս ետես Յովհանն՝ արկեալ զհնքեամբ արկանելիս սպիտակս¹ :

Եւ ահա երեսեցան անցա Մոսէս եւ Եղիա, որ խօսեին ընդ Նմա (ԺԷ 3):

«Ահա» ասելն յանկարծութեան նշանակ է, զի ի փառաւորել երեսաց Նորա յերեւել մարգարէիցն՝ իսկոյն վկայեցին, թէ սա է, որ ի Սինայ լուսոյ փայլատակմամբ երեսեցաւ² եւ առ Եղիայի ի սիք³ նորբ ծանուցաւ⁴, նոյնպէս եւ այժմ առաջի առաքելոցն այլակերպեցաւ, եւ ոչ սոսկ երեւումն, որպէս Սամուելին առաջի Սամուէլին⁵, այլ ստուգութեամբ եկաւորութիւն՝ ի հրամանէ Տեառն անդր ժամանեալք: Այլ ընդէ՞ր յետ փառաւորելոյն երեսեցան Մոսէս եւ Եղիա⁶ եւ ոչ նախ քան զփառսն, եւ կամ է՞ր վասն երեսեցան յետ փառացն. զի ցուցցէ, թէ ի հանդերձեալն է յայտնելոց վայելչութիւնք արդարոց՝ ըստ այնմ թէ՛ «Յորժամ Քրիստոս յայտնեսցի՝ կեանքն ձեր, յայնժամ եւ դուք ընդ Նմին յայտնեսցիք փառօք» (Կող. Գ 4):

Բայց թէ ընդէ՞ր ա՞ծ զՄոսէս եւ զԵղիաս⁷ խօսակից լինել Ինքեան, բազումս ունիմք ասել պատճառս: Նախ այն իսկ՝ զի ի ժողովրդոցն ոմանք ասեին զՔրիստոսէ, թէ Եղիա է, եւ ոմանք թէ՛՝ Երեմիա կամ մի որ ի մարգարէիցն⁹, ա՞ծ կացոյց զմարգարէսն ի լեառնն զգլխաւորսն, զի տեսանիցեն ո՞րչափ միջոցն է ընդ ծառայսն եւ ընդ Տէրն, ուստի ծանիցեն, թէ յիրաւի գովեցաւ Պետրոս: Եւ երկրորդ՝ զի բամբաստին զՆա, թէ զՕրինօքն անցանիցէ, եւ կարծէին, թէ զփառս Հօր, որ չէ Նմա անկ, յանձն խորիցէ, եւ թէ՛ «Դու մարդ ես եւ զանձն Քո աստուած առնես» (Յովհ. Ժ 33), եցոյց Մոսիսի եւ Եղիայի, թէ առ նախանձու են բամբասանքն: Չի թէ զՕրէնսն անցանէր եւ կամ զփառս Հօր յափշտակէր, Մոսէս, որ զՕրէնսն ետ, եւ Եղիա, որ վրէժխնդիր Աստուծոյ փառացն լինէր, չառնուին յանձն ողորել զայր մի օրինազանց եւ հակառակ

¹ Զ որպէս] սպիտակս
Յայտ. Զ 11
² Ելք ԺԹ
³ Տ սիգ
⁴ Գ Թագ. ԺԹ 12
⁵ Ա Թագ. ԻԸ
⁶ Զ Յղիա
⁷ Զ զՅղիաս
⁸ Տ > թէ
⁹ Մատթ. ԺԶ 13-14

հարցն կրօնից, եւ կամ վկայել զմմանէ, եթէ ոչ ստոյգ գիտէին, եթէ Որդի Աստուծոյ է Նա: Եւ երրորդ՝ զի ուսանիցիս, թէ Տէր է Նա կենդանեաց եւ մեռելոց եւ զվերինս եւ զներքինս առ հասարակ ընդ իշխանութեամբ ունի, ուստի զմինն ի կենդանեաց եւ զմիսն ի մեռելոց ածէ ի մէջ: Եւ չորրորդ՝ զի եկն ոչ միայն զկենդանիս փրկել, այլեւ գոծոյսային հոգիսն ազատել, արդ՝ Եղիայի վերնոց եւ ներքնոց քանականաց ետ ւաւետիս փրկել զմարդիկ զալստեամբ Իրոյ, որոց փրկութիւնն խնդութիւն էր վերնոցն, եւ ւաւերել գոծոյսս մահուամբ Իրոյ, զոր Մոսիսի ծանոյց՝ վերբերելով ի դժոխոց:

Եւ հինգերորդ՝ զի խրատեսցէ զաշակերտսն լինել հեզ իբրեւ զՄոսէս, զի ասէր. «Եթէ թողուս նոցա՝ թո՛ղ, ապա թէ ոչ՝ եւ զի՛ս ջնջեա ի դպրութենէդ, յոր գրեցեր» (Ելք ԼԲ 32), եւ դարձեալ՝ նախանձայոյց լինել իբրեւ զԵղիա եւ սաստիկ, զի գերիս ամս սովով տանջեաց զանարժան ժողովուրդն¹: Եւ վեցերորդ՝ առաքինութիւնն ի նոցանէ պահանջէր, որպէս Մոսէս եւ Եղիա յիւրեանց ժամանակն ցուցին, քանզի ասաց թէ՝ «Որ կամիցի զալ զկնի Իմ, առցէ զիսաչն եւ եկեսցէ զհետ Իմ» (Իմմտ. Մատթ. ԺՁ 24): Արդ զի մի՛ վիատիցին, մխիթարութիւն մատուցանէ մարգարէիքն եւ ցուցանէ զնոսս փառօք, թէ ոչ միշտ ի վիշտս կայցեն, այլ անցանելոց են պատերազմունքն, եւ յետ չարչարանացն ի փառս եւ ի հանգիստս ժամանելոց, որպէս մարգարէքն, որ թէպէտ չարչարեցան, ոմն ի փարատնէ եւ ոմն յԱքաաբէ, այլ չարչարանքն այնոցիկ՝ փառաց եղեն պատճառք: Եւ եօթներորդ՝ զի անստացուածութիւն նոցա քարոզեաց. զի մի՛ ծանր համարիցին, երեր զՄոսէս, զի լաւ համարէր զնախատինսն Քրիստոսի, քան զբազմութիւն զանձուցն եգիպտացոց, եւ զոսկերս արդարոյն միայն կրէր² եւ Հեղիաս մաշկեկաւ բաւականանայր³, եւ այն զի ի հնումն էին: Եւ ութերորդ՝ յայտնեաց Եկեղեցոյ, թէ ոչ Որդոյ միայն են փառք յարքայութեան Իրոյ, այլեւ կուսից եւ ողջախոհ ամուսնացելոց ուրախանալ ետ ի փառս աստուածութեան Իրոյ՝ ի խորհուրդ Եկեղեցոյ, որ ունի զկոյսս եւ զպարկեշտ ամուսնացեալ, որպէս անդ Մոսէս եւ Պետրոս, եւ Եղիա եւ որդիքն Չերեղեայ:

¹ Գ Թագ. ԺԷ 1, ԺԸ 1-2

² Ելք ԺԳ 19

³ Գ Թագ. ԺԹ 13, 19, Դ Թագ. Բ

Եւ իններորդ՝ վերածէ զՄոսէս զօրավար բանակին երբայեց-
 ւոց եւ զԵղիա անապատաբնակ, զի ծանիցուք, թէ արուեստք աշ-
 խարհականք ոչ կարեն զմեզ տարագիր առնել յԱստուծոյ, միայն
 թէ ըստ կամաց Նորա զընթացս մեր կատարեսցուք: Տասներորդ՝
 զՄոսէս եւ զԵղիա միաբանեաց ընդ առաքեալսն, զի Հնոյն եւ Նո-
 րոյս միաբանութիւն արասցէ՝ փառաւորս գոյ զերկոքեանն՝ ըստ
 առաքելոյ, զի թէ «պաշտօն դատապարտութեանն փառօք,
 որչափ եւս առաւել պաշտօն արդարութեանն եղիցի փառօք» (Բ
 Կոր. Գ 9): Մետասաներորդ՝ զի խնդրեցին Մոսէս եւ Եղիա տեսանել
 զՆա, եւ զի ոչ էր ժամանակ, զի արասցէ զայս նոցա, պահեաց
 զխնդիրն ժամանակի գալստեան Իւրոյ, զի յորժամ տեսցեն զՆա
 մարմնով, վկայեսցեն եթէ Աստուած է. զի զոր ոչ բաւէին տեսանել
 առանց մարմնոյ, տեսին մարմնով, եւ լցաւ իղձ բաղձանաց նոցա,
 զոր ցանկային տեսանել զՆա՝ ըստ այնմ. «Չկամս երկիրաձագ¹
 Իւրոց առնէ» (Մատթ. ԾԵԴ 19): Եւ երկուտասաներորդ՝ զի ուսուցէ զնո-
 սա, թէ ոչ է այլ, Նա է, որ զՄոսէս յԵգիպտոս առաքեաց եւ հրա-
 ման ետ Եղիայի, նոյն սա է, որ այժմ հրամանօք Իւրովք կոչեաց,
 զորս լուեալ ի մարգարեիցն՝ մի Աստուած տուիչ օրինաց Հնոյն եւ
 Նորոյս խոստովանեսցի:

Երեքտասաներորդ՝ զի տեսին խորհուրդ էր յարութեանն, ած
 զերկոսին, զի հաւատարիմ լիցի յարութիւնն եւ վախճան կատա-
 րածին, թէ որք մեռեալք են՝ իբրեւ զՄոսէս յառնեն, եւ որք կենդա-
 նիք են՝ իբրեւ զԵղիա թոչին: Չորեքտասաներորդ՝ զի Մոսէս Օրի-
 նացն էր խորհուրդ եւ Եղիա՝ մարգարեիցն, որք տեսին զփառս
 Նորա, որով հաւատամք, թէ Օրինօք եւ մարգարեիք քարոզեցաւ
 խորհուրդ խաչի Նորա, որ փառք է Եկեղեցոյ սրբոյ: Հնգտասա-
 ներորդ՝ զի խնդրեցին որդիքն Չերեղեայ փառս՝ մի յաջմէ եւ մի
 յահեկէ, եւ Նա ասաց. «Ոչ է Իմ տալ, այլ որոց տուեալ է ի Հօրէ»
 (Մատթ. Ի 23), վասն այսորիկ երեւեցաւ Մոսէս յաջմէ եւ Եղիա յահեկէ,
 զի տեսցեն թէ նախ չարչարանացն հաղորդիլ² պարտ է որպէս նո-
 քա եւ ասպա՝ փառացն: Վեցտասաներորդ³՝ զի գիտասցէ Պետրոս,
 թէ յերկնէ հրեշտակք եւ յերկրէ արդարք սպասեն եւ ակն ունին
 մահուան Նորա, վասն այնորիկ Եղիա յերկնից եւ Մոսէս յերկրէ:
 Եւ եօթներտասաներորդ՝ զի յերկուց եւ յերից վկայից հաստատ է ա-

¹ Գ երկիրաձագ

² Գ հաղորդել

³ Գ Վեցտասաներորդ

մենայն բան¹, որպես վկայեցին երեք ի ներքուստ եւ երկու ի վերուստ, որք վկայեցին աստուածութեան Նորա:

Քննելի է եւ այն, թէ ուստի² ճանաչեցին առաքեալքն զմարգարէսն. ոմանք ասեն, թէ զպատկերս նոցա ունէին³ գործեալ ի տախտակի, եւ այլք թէ՛ վասն զի զիտէին, թէ Մոսէս թոթովախօս էր եւ ծանրալեզու, եւ Եղիա այր թաւ եւ զիսաւոր՝ հանդերձ մաշկեկաւ, որոյ օրինակաւ տեսեալ ճանաչեցին. եւ կէսք թէ՛ զիտացին աշակերտքն զՄոսէս եւ զԵղիա, որպէս զիտաց Յովհաննէս զՏէր մեր՝ ասելով. «Ահա Գառն Աստուծոյ» (Յովհ. Ա 29), յայտ է՝ Հոգւով: Բայց ինձ թոյի, թէ յարութեան էր օրինակ իրն, եւ ի յարութեանն հանդերձեալ ենք ճանաչել զմիմեանս, որպէս մեծատունն զԱրրահամ՝ զայր մի, որ ի³ վաղնջուց իսկ մեռեալ էր:

«Եւ ահա երեւեցան,- ասէ,- նոցա Մոսէս եւ Եղիա, որ խօսէին ընդ Նմա»: Չի՞նչ խօսէին. յայտ է՝ զելիցն, զոր կատարելոց էր յԵրուսաղէմ, այսինքն՝ զչարչարանացն եւ զխաչէն, զոր փառս միշտ կոչեն զիրք, որք եկեալ մարգարէքն յորդորէին, որում առաքեալքն կազէին: Վասն որոյ եւ Ինքն ասէր թէ՛ «հոգիս յօժար է»՝ մարգարէքն, քանզի Հոգւովն խօսեցան, «եւ մարմինս՝ տկար» (Մատթ. ԻՉ 41)՝ առաքեալքն, զի «չեւ էր Հոգի, քանզի Յիսուս չեւ էր փառաւորեալ» (Յովհ. Է 39): Վասն որոյ մարգարէքն աղերս արկանէին Նմա՝ կատարել զփրկութիւնն ամենայն մարդկան, որով պատառելոց էր զգիր պարտեացն Ադամայ, զոր լուեալ հաւանեցան առաքեալքն, եւ եղեւ այնուհետեւ մարգարէիցն եւ առաքելոցն միաւորութիւն, որպէս այժմ յԵկեղեցի համաձայնին մարգարէիցն մարգարէութիւնք եւ առաքելոցն վարդապետութիւնք, քանզի երկոքին դասք ընդ Նմա խօսէին եւ զՆորայն վարդապետեն:

Պատասխանի ետ Պետրոս եւ ասէ ցՅիսուս. «Տէր, բարո՛ք է մեզ աստ լինել (ԺԷ 4):

Քանզի լուաւ ի մարգարէիցն, որք վասն ելիցն յԵրուսաղէմ խօսէին, մանաւանդ ի Տեառնէ, զի ելցէ անդ եւ չարչարեսցի, տակաւին կասկածն ի մտի կայր եւ հոգայր եւ երկնչէր վասն Նորա, այլ յետ ազատելոյն ոչ իշխէր հակառակել, բայց այլովք բանիւք յերկիւղէն գրեթէ զնոյն ակնարկէր, վասն որոյ ասէ. «Բարոք է

¹ Բ Օր. ԺԷ 6, ԺԹ 15

² Գ նոցուն էին] նոցա ունէին

³ Գ > ի

մեզ աստ լինել»։ Եւ դարձեալ՝ զի զիտէր զնախանձ դպրացն եւ փարիսեցոցն եւ զխուճապ հրէիցն, եւ անդ ի զգուշութեան կայր յաղագս հեռաւորութեան վայրացն եւ ամբողջութեան տեղուջն, կամէր զի հանապազ անդ լինիցին, եւ թէ յանդգնիցին, ասէ, հրէայքն եւ աստ ցուցանել զհակառակութիւն իւրեանց, Մոսէս առ մեզ է եւ Եղիա՝ հուպ, ոմն յԵզրիպտոս տանջեաց զխստասիրտսն, եւ ոմն հոր իջոյց եւ զյիսունսն այրեաց¹, չարչարեացն եւ զնոսա։ Եւ զայս ոչ այնքան յաղագս անձին զանգիտութեան քան թէ յաղագս Վարդապետին սիրոյ։ Եւ զի այս այսպէս է, յայտ է ի մահուան ժամանակին, զի ասէր. «Ընդ Քեզ պատրաստ եմ ի մեռանել» (հմմտ. Դով. ԻԲ 33), եւ ի մէջ այնքան ամբողջիցն զանձն ի մահ մատնէր եւ զունկն ծառային ի բաց հատանէր, զի այնպէս ոչ անձինն սպաս ունէր, այլ ի վերայ Տեառն իւրոյ դողայր։

«Բարութք է,- ասէ,- մեզ աստ լինել»։ Դարձեալ՝ հաճոյ թուեցաւ ընդ Մոսիսի եւ ընդ Եղիայի բնակել, քանզի բուրեաց հոտ դրախտին անմահութեան ի քիմս նորա, եւ ետես զփառս Նորա՝ փոխանակ անարգանաց Նորա, յոյժ ուրախ եղեալ՝ ասէր ըզմամբ. «Բարութք է մեզ աստ լինել»։ Իսկ նշանակաւ՝ այսպիսի է. զի ոմանք ասացին ոչ լինել յարութիւն, իսկ յորժամ ի ճշմարտիցն յանդիմանեցան, որք հաստատեցին ի բնական քննութենէ, թէ մարդոյս բնութիւն փոփոխական, քանզի յանէից ի յետիւն եկաք եւ անտի անձնիշխան կամօք ի չարն խտորեցաք, նոյնպէս եւ փոփոխմամբ դարձեալ ի բարին ելցուք, առ որս ասեն՝ թէ այդպիսի է, ասպա եւ անտի դարձեալ ի չարն թաւալեցուք, զորս ըմբերանէ այժմ առաքեալս թէ՛ «Բարութք է մեզ աստ լինել», այսինքն՝ թէ զչարին փորձ առաք, այժմ զայն ախորժենք, զի ի բարին յաւելուցուք եւ մի՛ դարձեալ ի չարն թեւակոխեցուք։

Եթէ կամիս, արասցուք երիս տաղաւարս. մի՛ Քեզ, եւ մի՛ Մոսիսի, եւ մի՛ Եղիայի»։

Չառաջինն ի մտի ունէր, զի մի՛ դարձեալ պատուհասակո՞ծ լիցի ընդդիմանալովն. ասէ. «Եթէ կամիս, արասցուք երիս տաղաւարս»։ Չի՞նչ խօսիս, ո՛վ Պետրէ, ո՞չ սակաւ ինչ յառաջ մեկնեցեր զԴա ի ծառայիցն, արդ զիա՞րդ միսսանգամ ընդ ծառայս համարիս, եթէ՛ երեցունց ձեզ կազմեցուք երիս տաղաւարս, եւ երեքին

¹ Ելք Է-ԺԴ, ԴԹագ. Ա 9-10

մեք սպասատրեսցուք վեհիցդ: Բայց քանզի անկատարք էին յառաջ քան զխաչն, զի թեպէտ յայտնեաց նմա Հայր, այլ ո՛չ միշտ առ իւր ունէր զյայտնութիւնն, զի յահէն տազնապէս էր. ո՛չ միայն յայնմանէ, զոր ասացին, այլեւ յահագին տեսնէն եւ ի սաստիկ լուսոյ ճառագայթիցն: Վասն որոյ Մարկոս եւ Դուկաս ասեն թէ՝ «Ոչ գիտէր զի՞նչ խօսէր» (Մարկ. Թ՝ 5, Դուկ. Թ՝ 33): Արդ՝ թեպէտ այս այսպէս էր, սակայն գիտութիւն նա մեծ քարքառեցաւ ի տգիտութեան իրում, զի երից տաղաւարացն յօրինմամբ՝ զերից Անձնաւորութեանցն՝ ծանոյց զխորհուրդ, քանզի Երրորդութիւնն անդ յայտնեցաւ. Հայր՝ վկայութեամբն, եւ Որդի՝ պայծառակերպութեամբն, եւ Հոգի՝ անպեղէն հովանաւորութեամբն, որպէս զի ծանեան երեքն զերիս անձինս Աստուածութեանն, եւ պատմեսցեն զգալուստ Նորա, թէ վասն է՛ր եղև, միանգամայն եւ տաղաւար յարդարեսցեն² Երրորդութեանն՝ զհոգի, զմիտս եւ զմարմին: Իսկ այլք տաղաւար զերիս խորհուրդսն ասեն, զոր աւանդութեամբ պահեսք. զմին՝ յանուն Տեառն՝ զԾննդեանն, եւ զմինն՝ ի Մոսիսի՝ զԱդոնիացսն, եւ զմինն՝ յԵղիայի՝ զԱյլակերպութեանն:

Եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լուսաւոր հովանի եղև ի վերայ նոցա (ԺԷ 5):

Պետրոս ձեռագործ տաղաւար յօրինէր, իսկ Հայր ի վերուստ զանձեռագործն տնօրինէր, զի զիտասցէ, թէ ոչ ունի³ պէտս մարմնական տաղաւարի: Բայց թէ ընդէ՞ր ամպօք երեւէր, եւ զի՞նչ լուսաւոր ամպն: Սովորութիւն է Աստուծոյ ամենայն ուրեք ամպօք երեւել՝ ըստ այնմ. «Ամպ եւ մեզ շուրջ է զՆովաւ» (Մաղմ. ԴՁ 2), եւ՝ «Եդ յամպս զզնացս Իւր» (հմմտ. Մաղմ. ԾԳ 3), եւ՝ «Նստեալ ի վերայ թեթեւ ամպոյ» (Ես. ԺԹ 1). եւ ամպ մեծ ի կառսն ետես Եզեկիէլ⁴, եւ Որդի մարդոյ գայ ընդ ամպս՝ երկնից⁵, եթէ յաղագս անճառութեանն եւ թէ վասն ծննդական⁷ եւ սննդական գոլոյն, եւ զիմանալի անձրեւի իբրեւ⁸ զգօղ բժշկական շնորհելոյ, եւ եթէ յաղագս երագութեանն ամենայն ուրեք ժամանելոյ: Իսկ աստ լուսաւոր, զի յորժամ

¹ Զ անձնաւորութեանն

² Զ յորդորեսցեն

³ Զ > ունի

⁴ Եզեկ. Ա 4

⁵ Զ ամբս

⁶ Մատթ. ԻՁ 64

⁷ Զ ծնչական

⁸ Զ իբր

սպառնալիս ինչ բարբառեր, խաւարային ամպօք երեւեր՝ ըստ Դաթի. «Խաւարային ջուրք մինչեւ յամպս օդոց» (Մատթ. ԺԷ 12), եւ եմուտ Մոսէս յամպն եւ ի մէզն: Այլ աստ ոչ երկեցուցանել կամէր, այլ ուսուցանել, վասն այսորիկ ամպն՝ լուսաւոր, եւ ձայնն՝ ոչ սպառնական, այլ հեշտական: Եւ դարձեալ՝ ամպ լուսաւոր, որպէս ասացի, զՀոգին Սուրբ նշանակէ՝ առ ի լուսաւորել զմիտս նոցա եւ ծանուցանել, թէ «Նա է լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհ» (հմմտ. Յովհ. Ա 9), կամ զմարմինն Տեառն ամպ՝ լուսաւոր՝ պայծառացեալ աստուածութեանն լուսով՝ ըստ երգոյն թէ՝ «Առ մահիծս մեր հովանաւոր» (հմմտ. Երգ Ա 15), որ հանգոյց եւ զովացոյց ի տապոյ մեղաց եւ ի ծանրութեանց բեռանց, որ զան յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս:

Չայն եղև յամպոյն եւ ասէ. «Դա է Որդի Իմ սիրելի, ընդ որ հաճեցայ. Դմա՛ լուարոք»:

Պէտպէս տեսութիւնս եւ ձայնի վկայութիւնս յաղագս Պետրոսի եղև, որ ընդ հակառակս չարչարանացն Տեառն ելանէր, վասն այսորիկ նախ Ինքն փառաւորեցաւ, զի մի՛ կարծեսցեն զմահն ի հարկէ, կամ պակասութիւն լինել փառաց Նորին, եւ ասպա մարգարէքն եկեալ՝ ի նոյն յորդորեցին, եւ այժմ մեծն քան զամենեսին եւ արժանին հաւատարմութեան վկայն Հայր ի վերուստ յամպոյն բարբառ արձակէր: Եւ թէ է՞ր «յամպոյն» ասացեալ է. քանզի ոչ Ինքն խօսէր եւ ոչ Մոսէս եւ ոչ Եղիա, այլ Հայր յամպոյն, որպէս ասէ: Եւ թէ զի՞նչ էր բարբառն. «Դա է Որդի Իմ սիրելի...»: Նախ՝ զի հաւատասցեն աշակերտքն, թէ Նա է իսկապէս Որդին Աստուծոյ, մանաւանդ Պետրոս, զի գոր նախ դաւանեաց Հօր յայտնութեամբ, յետոյ ընդ երկրաւորացս զիջանէր թէ՝ «Քա՛ւ լիցի Քեզ, Տէ՛ր» (Մատթ. ԺԶ 22), եւ զՏէրն ընդ ծառայսն կարգէր ի համար տաղաւարացն, վասն որոյ խորհրդակից առնէ Հայր զխորհրդակիցսն Որդոյ, զի ուսցին ի Հօրէ եւ մի՛ մոռացին գոր ցանկ լսելն յՈրդոյ եւ մոռանային: Եւ երկրորդ՝ լսեցին զայս ձայն առաքեալքն, զի յորժամ քահանայապետն երդմամբ ուսանել կամէր թէ՝ «Դո՞ւ ես Որդի Օրհնէլոյն» (հմմտ. Մարկ. ԺԴ 61), եւ Պիղատոս հարցանէր թէ՝ «Դո՞ւ ես թագաւորն» (Մատթ. ԻԷ 11), հաւանեցուցանելն առաքեալքն զժողովորդն թէ՝ զայս բարբառ մեք իսկ լուաք, որ ընդ

¹ Զ ամբ

Նմա իսկ էաք ի սուրբ լերինն, թէ դա է Որդի Իմ սիրելի ընտրեալ՝ սերտ եւ ստոյգ Որդի, ընդ որ հաճեցայ: Ոչ միայն որդի եւ սիրելի, այլեւ հաճեալ եմ ամենայնիւ ընդ գործս Նորա եւ հանգուցեալ եմ ի բանս Նորա յաղագս գուգական եւ համեմատ եւ միաբան գոյն, եւ զկամս Իմ առնելոյն: «Դմա՛ լուարուք»: այսինքն՝ թէ ի խաչ կամի ելանել եւ թէ զինչ եւ արասցէ, մի՛ ինչ ընդդէմ դառնայցէք, զի որ Որդոյ լսէ, զՀայր պատուէ:

«Դա է Որդի Իմ սիրելի, ընդ որ հաճեցայ. Դմա՛ լուարուք»: Դարձեալ՝ գտյն վկայութիւն եւ երբեմն ի Յորդանիս¹ հայրականն ձայն դաւանեաց², քանզի մինչեւ ցայն ժամ ծածուկ էր ի մարդկանէ, եւ հանդերձեալ էր յետ մկրտութեանն նշանս կատարել, վայելչաբար Հայր տայր զվկայութիւնն առ յապա խորհրդոյն Տեառն, թէ՛ հաճութեամբ Նորա եւ սիրով կատարի: Նաեւ յաղագս Յովհաննու եւս, զի զնա մեծ կարծէին՝ որդի գոյով քահանայապետի, հրաշիւք ծնեալ, առ որս առաքեցին. «Դո՞ւ ես, որ գալոցն ես, թէ այլում ակն կալցուք» (Մատթ. ԺԱ 3): Արդ՝ եկն բարբառն եւ էջ Հոգին, զի զՈրդին Իւր հռչակելի արասցէ. այսոցիկ աղագաւ անդր վկայեաց: Իսկ աստ զի կրկնեաց վասն դաւանութեանն Պետրոսի՝ ի հաստատութիւն եւ ընդդիմութեան խորհրդոց նորա ի լուծումն, որ հակաճառէր ի ճառս խաչին, իբրո՞ւ թէ ասել առ նա՝ մի՛ հակառակիր, ո՛վ Պետրէ, ընդդէմ աշխարհի փրկութեան, եւ մի՛ ներհակ լինիր մահկանացու ազգիդ մարդկան⁴ կենդանութեան, քանզի ո՛չ դա առաւել քո իցէ սիրելի, քան թէ Իմ, զի Իմոյ ծոցոյս է ծնունդ եւ հայրական⁵ սրտիս է բղխումն: Եւ մի՛ զԻս նուաստ քան զԱբրահամ եւ առանց գթոյ ցուցանել, զի աւանիկ նա ի միածինն իւր եւ ի միամօր սիրելին եւ յաւետեացն ծնունդ ոչ խնայեաց վասն Իմ⁶. արդ՝ մի՛ յետնեցայց ի սիրոյ նորա, որ յառաջեաց պարտական արար զԻս. այդ ոչ է մտերմութիւն Իմ, այլ թշնամութիւն: Եւ այլ սոյնպիսիս միով ձայնիս բարբառեցաւ առ նա՝ արգելով զնա, որ խափանել խորհէր զհամաշխարհական փրկութիւնն:

Բայց դու տես ինձ աստանօր զճշմարիտ աստուածաբանութիւնս, զի յորժամ Հայր լիցի աստուածաբանօղ եւ յաղագս Որդոյ

¹ Իմա՛ Յորդանան:

² Մատթ. Գ 17, Մարկ. Ա 11

³ Զ ~ թէ Տեառն

⁴ Զ > մարդկան

⁵ Զ այրական

⁶ Ծննդ. ԻԲ 1-14

աստուածաբանէ, զի՞նչ պարտ իցէ ասել. զի որպէս Որդի զՀայր յայտնեաց, այսպէս եւ զՈրդի՝ Հայր՝ ասելով. «Դա՛ է Որդի Իմ սիրելի», եւ ոչ «որ ի դմա». զաստուածութիւնն հանդերձ մարմնովն մի Որդի Իւր դաւանեաց եւ Որդի ասէ յաղագս համագոյութեանն, զի ի բնութենէ Հօր է եւ սիրելի. քանզի սիրոյն է ծնունդ, յիրաւի սիրելի լինի, որպէս թէ ասէ՝ սիրեմ զԲանդ Իմ մարմնացեալ, որ է հաւատարիմ Որդի Իմ եւ Աստուած, «ընդ որ հաճեցայ»: Զի բազում եղեն որդիք սիրելիք շնորհօք կոչեցեալ՝ ըստ այնմ. «Որդի անդրանիկ է Իմ Իսրայէլ» (Ելք 4:22), եւ՝ «Ես սիրեցի զնա» (Ուխտէ ԺԱ 1), բայց յետոյ ասաստամբ գտան, եւ ոչ հաճեցաւ ի նոսա, իսկ ընդ սա, ասէ, հաճեցայ, այսինքն՝ ընդ կատարումն խորհրդոյն, որ ի Դմանէ փրկագործի ազգի մարդկան, մանաւանդ թէ ի Դա հաճեցաւ կամք Իմ, որ ի սկզբանն բարկացաւ յաղագս յանցանացն Ադամայ: «Դա է Որդի Իմ սիրելի»: Դարձեալ՝ զի բազում անգամ Ինքն զանձն Որդի Աստուծոյ ասաց, եւ հրէայքն վէմս առեալ քարկոծէին թէ՝ «Դու մարդ ես լուծիչ օրինացն եւ զանձն քո Աստուած առնես» (հմմտ. Յովի. Ժ 33), եկն ձայնն եւ վկայեաց թէ՝ Որդի է Իմ սիրելի եւ ոչ հակառակ, որպէս դուք կարծէք:

Իբրեւ լուան աշակերտքն, անկան ի վերայ երեսաց իրեանց եւ երկեան յոյժ (ԺԷ 6):

Զիս՞րդ իբրեւ լուան զբարբառն, զարհուրեցան, քանզի աւանիկ եւ յառաջագոյն եկեալ էր այնպիսի բարբառ ի Յորդանան, որպէս ասացի: Եւ մերձ առ խաչին, յորժամ ժողովորդքն ասէին, թէ որոտումն եղև, եւ ոչ ոք թմբրեցաւ, եւ աստ թէ՝ «անկան»: Նախ՝ զի յանապատին էին եւ յանկոխ տեղուք, եւ յամենայն կողմանց յաճախէին փոխումն երեսացն Տեառն եւ սաստիկ լոյսն եւ ամպոյն տարածումն եւ ձայնն եւս, վասն որոյ անկան յերկիր, իսկ անդ ոչ այսչափ երկիրդ, այլ միայն ձայն, համայն եւ ժողովորդքն առ ընթեր էին: Եւ երկրորդ՝ երկրպագութիւն տեսեանն եւ ձայնին մատուցին: Եւ երրորդ՝ զի մարմնական եւ եղական բնութիւնս ոչ տանի զանմարմին եւ զարարչական դէմս Հօրն, զի թէ Դանիէլ ի տեսիլ հրեշտակին գունատէր, եւ Եզեկիէլ ի վերայ երեսաց անկանէր¹, զի՞նչ ասես այժմ, քանզի Հայր հանդերձ Հոգով եւ Որդով անդ յայտնեալ երեւէր: Եւ չորրորդ՝ զի անկատարք էին՝

¹ Դան. է 28, Եզեկ. Բ 1, Գ 23

տունկը եղեալ ծննդեանն Յիսուսի Քրիստոսի, ի ձայնէն, որ յերկնից գայր օրոյ նման, զարհուրէին: Իսկ յորժամ ուռք եղեն որթոյ յարութեանն Տեառն, ոչ կրէին զայս, յորժամ ուժգին սաստիկ՝ հողմոյ նման հնչեաց ի վերնատունն Հոգին Սուրբ:

Եւ մատուցեալ Յիսուս բունն եհար զնոցանէ եւ ասէ. «Յոսն կացէք եւ մի՛ երկնչիք» (ԺԷ 7):

Չի մի՛ կարի ահն զարհուրեցուցանիցէ, եւ յիշատակ իրացն ի մտացն շարժեցին, վասն այնորիկ փարատէ գերկիւղն արդեամբք եւ բանիւ, բանզի գոր ձայն Հօր ընկէց ի խոնարհ, ձեռն Որդոյ կանգնեաց կացոյց ի հաստատութեան: Իսկ Ղուկաս ասէ, թէ Պետրոս եւ որ ընդ նմայն էին՝ ծանրացեալք իբր ի քնոյ՝ կամ ի քաղցր եւ յանուշահոտ բուրմանէն զմայլեալք կամ ի տեսլենէն պակուցեալք եղեն, զի յորում ժամու պարտ էր հսկել, նոքա պակեան, որով յայտ եղեւ, թէ ոչ կարեն հանդարտել տեսութեանն նախքան զչարչարանօք կրթելն իբր խեցեղէն անօթ քրայիւ, զի չարչարանացն կցորդ եւ ասպա փառացն հաղորդ լիցին, վասն այտորիկ ասաց թէ՝ «մի՛ երկնչիք»: Իսկ նշանակաւ՝ անկումն նոցա զանկումն Ադամայ ցուցանէ, որ ի Հօր ձայնէն անկաւ թէ՝ «Յորում ատր ուտիցէք, մահու մեռա[նիցիք]» (Ծննդ. Բ 17), իսկ Որդի՝ Չեռն Հօր, բունն հարեալ զմարմին նորա, դարձեալ վերստին կանգնեաց:

Ամբարձին զաչս իրեանց եւ ոչ գոք տեսին, բայց միայն զՅիսուս (ԺԷ 8):

Չի որպէս ի Յորդանան զատեաց որոշեաց զՆա ի Յովհաննէ՝ աղաւնակերպ Հոգւոյն իջումն, այսպէս եւ աստ՝ միայնութիւնն, զի յայտ լիցի, թէ ոչ վասն միոյ ուրուք յերկնից եկն բարբառն, այլ վասն միոյն Քրիստոսի: Եւ դարձեալ՝ անհետ եղեն Մոսէս եւ Եղիա, զի Հոգին, որ ած զԵղիա եւ կանգնեաց կացոյց զՄոսէս, յետ վճարելոյ բանից նոցա յափշտակեաց զնոսա ի նոյն տեղի, զի ոչ էր պիտոյ, թէ ուսցին վասն Որդոյ՝ գոր կանխաւ ստուգեալ էին, այլ զի ուսցին աշակերտքն, որ ոչ գիտէին, թէ վասն էր եղեւ գալուստ² Նորա: Եւ դարձեալ՝ զնացին նոքա, զի մի՛ զբաղնուցուն ի բանս ճառից նոցա, այլ ուշ ունիցին բարբառոյն Հօր, եւ մի՛ խառ-

¹ Ղուկ. Թ 32

² Գ կորուստ

նեսցին խօսք Տեառն ընդ ծառայիցն եւ պղտորեսցին միտք նոցա, եւ մոռասցին որ վասն ելիցն յԵրուսաղէմ ի Հօրէ եւ ի մարգարէիցն ասացան, վասն այտորիկ մնաց միայն Յիսուս, զի լցցէ զասացեալն նոցա:

Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա Յիսուս եւ ասէ. «Մի՛ ումեք ասիցէք զտեսիլդ զայդ¹, մինչեւ Որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ» (ԺԷ 9):

Չի թէ սաստեաց աշակերտացն թէ՛ մի՛ ումեք ասիցէք թէ նա է Քրիստոսն, զի՞նչ ասիցես զայնպիսի չքնաղ երեսունն առ այն ժամ ոչ յայտնել: Չի որչափ մեծամեծս որ իմանայր կամ պատմէր զՆմանէ, այնչափ առաւել դժուարընկալ լինէր յայնժամ բազմաց յաղագս խաչին զայթագորութեան, իսկ յորժամ յարիցէ եւ Հոգւոյն արժանատրեսցին, այնուհետեւ ընդունելի լինէր եւ քան զինչիւն փողոյ՝ իրքն աղաղակէին: Եւ դարձեալ՝ զիտէր, թէ ոչ հաւատան նոցա, այլ իբրեւ զմոլեկան համարին թէ՛ ուստի՞ զիտէք դուք զԵղիա, եւ որ ի վերայ գերեզմանին Մոսիսի ոչ եկաց, եւ լինէր այնուհետեւ հայիոյութիւն, վասն այնորիկ ասաց՝ մնացէք դուք մինչեւ ընդունիցիք զօրութիւն կացուցանել զմեռեալս, եւ պատառեսցին գերեզմանք, եւ ելցեն արտաքս արդարքն հին եւ նոր եւ եկեսցեն յԵրուսաղէմ քաղաք Թագաւորին մեծի, ապա այնուհետեւ հաւատան եւ նոքա, թէ Այն, որ յարոյց զնոսա, նոյն յարոյց եւ զՄոսէս. եւ թէ մեռեալք լուան եւ եկին, որչափ կենդանին Եղիա: Չորս խրատէ պահել ոչ միշտ, այլ իւրում ժամանակին յայտնութեանն եւ մի՛ տարածամ քարոզել զանուն Նորա, զի այս ժամանակ չարչարանաց է, եւ ապա՛ յայտնի տէրութիւն Նորա յարութեամբն, որով եւ յարութեան խորհրդոյն դիրաւ հաւատասցեն:

Արդ՝ երանելի են առաքեալքն, մանաւանդ երեքին, որք այսպիսի² գեղասպանժ լուսոյն մաքրութեամբ վայելչացան եւ ընդ ամպովն մտեալ յարկակիցք եղեն Տեառն, եւ զհամօրէն յարութեանն խորհուրդ աստէն վարժեցան: Այլ թէ կամիմք, եւ մեք տեսանեմք զՔրիստոս. ոչ որպէս նոքա յայնժամ, այլ ե՛ւս լուսաւորագոյն, զի անդ թերաքամ եւ կիսաքաց արար զպայծառութիւնն՝ խնայելով ի նոսա, իսկ յետոյ ակներեւ յայտնի եկեսցէ, ոչ միայն Մոսիսի եւ

¹ Զ > զայդ

² Զ այնպիսի

Եղիայի, այլև անեզրական փառքն Հօր եւ հրեշտակօք բազմօք, ոչ հովանաւոր ամպով գլխածածկեալ երեւիցի, այլ երկինք իսկ բողբոջին գալարին: Չոր օրինակ դատաւորք, յորժամ հրապարակաւ ատեան առնիցեն սպասաւորօքն, զսրահակսն ի բաց ձգեն յերեսացն, զի ամենեքեան տեսցեն, նոյնպէս եւ Նա յորժամ յաթոռ դատողական նստցի, ամենայն բնութիւնք մարդկան ի Նա հայեսցին, եւ Ինքն անձամբ առնէ պատասխանի նոցին՝ ցոմանս ասելով. «Եկայք, օրհնեալք Հօր Իմոյ, ժառանգե[ցէք]...», եւ կիտոցն թէ՛ «Երթա՛յք ի հուրն, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա» (Մատթ. ԻԵ 34, 41), յորմէ փրկեցէ զհաւատացեալս անուան Իւրոյ Քրիստոսն մեր եւ Աստուած եւ արժանացուցէ աջակողմեան դասուն վայելել ի ճշմարիտ երեսումն փառաց աստուածութեան Իւրոյ¹, որում վայել է ամենայն փառք այժմ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Հարցին ցՆա աշակերտքն եւ ասեն. «Ձիա՞րդ դպիրքն ասեն², եթէ Եղիայի նախ պարտ է գալ» (ԺԷ 10):

Չայս ոչ թէ ի Գրոց գիտէին, այլ տարածեալ էր բանն ի մէջ ժողովրդեանն, որպէս եւ Քրիստոսի գալստեանն համբաւ, վասն որոյ եւ սամարացին ասէր թէ՛ «Մեսիա գալոց է. յորժամ եկեցէ նա, պատմեցէ մեզ զամենայն» (Յովհ. Դ 25), եւ նոքա զՅովհաննէս հարցանէին. «Միթէ դու Եղիա՞ն ես, կամ մարգարէն» (հմմտ. Յովհ. Ա 21). քանզի համբաւն երկոցունց զոյր, եւ մեկնութիւնն ոչ ի դէպ ինչ ելանէր: Վասն զի Գիրք երկու գալուստ գՔրիստոսի ասեն, մի՛ զառաջինն, եւ միւս՝ զերկրորդն, որպէս Պօղոս ասէ զառաջնոյն թէ՛ «Երեւեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան» (Տիմ. Բ 11)՝ որ խրատէն զմեզ, եւ զերկրորդէն թէ՛ «Այն կայցուք երանելի յուսոյն եւ յայտնութեան փառաց Միածնին Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Տիմ. Բ 13): Նմանապէս եւ մարգարէքն գուշակէին, որպէս Դաւիթ զառաջին գալստենէն թէ՛ «Իջցէ որպէս զանձրեւ ի վերայ զեղման» (Սաղմ. ՀԱ 6), իսկ զերկրորդէն՝ «Աստուած աստուծոց Տէր խօսեցաւ», «կոչեաց զերկինս ի վերուստ եւ զերկիր՝ ի դասել զժողովուրդ Իւր», եւ «հուր առաջի բորբոքեցի, եւ յերինք որպէս մոմ հալեցին» (հմմտ. Սաղմ. ԽԹ 1, 4, 3): Այսպէս եւ Դա-

¹ Զ նորա

² Զ ~ ասեն դպիրքն

նիւղ զտնտեսութեանն թէ՛ «Վէմն հատաւ առանց ձեռին եւ փշրեաց զպատկերն, եւ եղեւ լեառն մեծ եւ ելից զամենայն երկիր» (հմմտ. Դան. Բ 34-35), իսկ զդատաստանին թէ՛ «Իբր Որդի մարդոյ զայր ընդ ամսս երկնից», եւ «զետք հրոյ յորդեալ ելանեն առաջի Նորա» (Դան. Է 13, 10):

Եւ յարմարեալ ընդ ասացեալս՝ ասեն զՅովհաննէս առաջնոյն կարապետ, որպէս Եսայի ասէ. «Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհս Տեառն եւ ուղիդ արարէք զշաւիղս նորա» (Ես. Խ 3), իսկ զԵղիա՝ երկրորդին՝ ըստ Մադաքիայ թէ՛ «Ահա առաքեմ առ ձեզ զԵղիա Թեգրացի..., զուցէ եկեալ հարկանիցեմ զերկիր միանգամայն» (Մադ. Դ 5-6): Արդ՝ զայս ընդ միմեանս խառնեալ դպիրքն՝ թիւրէին զմիտս ժողովրդեանն, զի զերկրորդ զալստենէն յուշ առնէին եւ ասէին, եթէ սա է Քրիստոսն, ապա՝ «Եղիայի նախ պարտ է զալ»: Յայս սակս յորժամ իջանէին ի լեռնէն՝ տեսեալ զփառսն Տեառն եւ զԵղիա ընդ Նմին երեսեալ փառօք, ի միտս եկեալ դպրացն բանից՝ հարցին, զի ուսցին, թէ սուտ ուսուցանեն զժողովուրդն եւ թակարդ՝ յօղեն ոչ հաւատալ ի Քրիստոս, եթէ ճշմարիտ այնպէս իցէ իրն:

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. «Եղիա զայ՛ եւ հաստատեցէ՛ զամենայն (ԺԷ 11):

Ո՛չ ասաց, թէ սուտ ասեն դպիրքն, քանզի մարգարէն զգալուստ նորա ասացեալ էր, այլ թէ՛ զայ յիրում ժամանակին՝ նախ քան զերկրորդ զալուստն, եւ հաստատեցէ զամենայն ասացեալս ի մարգարէէն, «զսիրտս հարց առ որդիս» (Մադ. Դ 6), այսինքն՝ զմիտս հրէից հարց՝ առ քարոզութիւնս որդոց առաքելոցն՝ հաւատալ ի Քրիստոս, զի մի՛ հարկանիցին ի զալստենէ նորա, որպէս ետես Յովհաննէս զհարիւր եւ զքառասուն եւ չորս հազարսն յազգէն հրէից կնքեալս վասն Քրիստոսի՝ վարդապետութեամբն Եղիայի, կամ որք ի սուտ նշանաց դերաքրիստոսին դրդուեալք՝ զալստեամբն Եղիայի դարձեալ հաստատին:

Այլ ասեմ ձեզ, զի՞ Եղիա եկեալ իսկ է (ԺԷ 12):

Զի՞նչ է այս, զի ասաց թէ «զայ», եւ այժմ թէ՛ «եկեալ իսկ է»: Ոչինչ գոյ աստ ընդդիմութիւն, քանզի «զայ»՝ զմարգարէին ասաց,

¹ Զ թակ

² Յայտ. Է 4, ԺԴ 1-5

³ Տ զի եւ

իսկ թե «եկեալ է»՝ զԻւրն, որպէս թէ ասէ՝ ըստ գալստեանս կարգի եւ գալուստ մարգարէիցն եղիցի. զի թէ գառաջին գալստեանս սպասաւորն խնդրես, նա եկեալ իսկ է, այս է՝ Յովհաննէս, իսկ թէ զերկրորդին, յորժամ այն գալուստն մերձի, եւ Թեզրացին եկեսցէ: Բայց թէ ընդէ՞ր զՅովհաննէս Եղիա ասաց, թէ եկեալ իսկ է: Նախ՝ զի զնոյն վարս ունէր յանապատի բնակելով եւ մաշկեկաւ շատանալով որպէս Եղիա: Եւ երկրորդ՝ զի զնոյն գործ ունէր սպասաւորութեան, զի որպէս նա երկրորդին լինելոց է կարապետ, նոյնպէս եւ սա առաջնոյն եղեւ՝ համարձակ գորով իբրեւ զնա: Վասն այսորիկ Եղիա կոչեաց եւ միաբան նմին՝ ծանոյց՝ ըստ հրեշտակին թէ՝ «Եկեսցէ զօրութեամբ հոգւով Եղիայի» (Գով. Ա 17), այսինքն՝ ոչ բնութեամբ Եղիայի, այլ զօրութեամբ՝ շնորհաց նորին ընդունակութեամբ, վասն այսորիկ ասաց թէ՝ «Եղիա եկեալ իսկ է», եւ կամ յաղագս մերձաւոր գորոյ երկրորդի գալստեանն, յորում Եղիա գայցէ, ասաց գայս:

Եւ ոչ ծանեան զնա, այլ արարին ընդ նա՝ գոր ինչ կամեցան:

Արդ՝ եթէ ոչ ծանեան, ապա ուրեմն ոչ են մեղադրելիք, քանզի թէպէտ ոչ ծանեան զնա Եղիա գոյ եւ հաւասար նորին սպասաւոր առաջին գալստեան Փրկչին, սակայն զիտէին իսկ, զի աւետեաց էր ծնունդ եւ անդատին յորովայնէ Հոգւով լցեալ եւ յանապատի սնեալ եւ ի փափկութեանց կենցաղոյս ամենեւին հրաժարեալ, գոր պարտ էր ըստ այսմ պատուել: Իսկ նոքա ոչ միայն ոչ պատուեցին, այլ արարին ընդ նմա գոր ինչ կամեցան, որպէս եւ ասէ. վասն այսորիկ են աններելիք: Եւ զի՞նչ արարին ընդ նմա. ի բանդ արկին, թշնամանեցին, սպանին, բերին զգլուխն սկտեղբ առաջի ի բազմականսն, քանզի գայս կամէին՝ բառնալ գյանդիմանիչն, որպէս Աբաար եւ Եզաբէլ՝ զԵղիա, գոր խանգարիչ կոչէին²:

Նոյնպէս եւ Ռոդի մարդոյ չարչարելոց է ի նոցանէ:

Յորժամ ասաց զՅովհաննուն, յարէ ի նոյն եւ զԻւրն, զի ցուցցէ, թէ յանիրաս չարչարի՝ գոր ինչ կրէ ի հրէից, որպէս Յովհաննէս, որպէս զի մխիթարեսցին. միանգամայն եւ զկամաւորն ցուցանէ, զի ոչ ասաց թէ՝ գոր ինչ արարին ընդ նմա՝ առնեն եւ ընդ Իս, այլ թէ՝ չարչարելոց է ի նոցանէ: Դարձեալ՝ ուսուցանէ զնոսա

¹ Զ նմա

² Գ Թագ. ԺԸ 17

մի՛ վհատիլ յորժամ վշտաց պատահեսցին, զի թէ Յովհաննէս սպանաւ եւ Տէրն Յովհաննու ի նոցանէ չարչարելոց է, ապա ուրեմն ոչինչ մեծ են իրքդ, յորժամ մեզ հաւասար վշտանայցէք: Նաեւ այսու զխակամտութիւն եւ զխստասրտութիւն ազգին նշանակէ, զի այնպիսի ժպիրիք էին, մինչ զի զարդարսն առանց վնասու քազում մահուց պարտաւորս առնէին՝ ըստ մարգարէին¹:

Յայնժամ ի միտ առին աշակերտքն, թէ վասն Յովհաննու Սկրտչի՝ ասաց ցնոսա (ԺԷ 13):

Թէպէտ դպիրքն ոչ ասէին զայս, եւ ոչ Գիրք յայտնապէս, այլ քանզի մտադիրք ասացելոցն եղեն, վաղվաղակի ի միտ առին, քանզի ի վաղուց հետէ լուեալ էին, թէ Եղիա զալոց է, եւ Քրիստոս ասաց, թէ եկն: Նոքա հաւանեալք յեկից իրացն՝ ծանեան եւ ի միտ առին, այսինքն է՝ հաւատացին, թէ ճշմարիտ այնպէս է, որպէս ասէ, քանզի կարի իմն հաւանական միտս ունէին առաքեալքն: Չի անհաւանութիւնն յերկուց իրաց գոյանայ՝ կամ ի տգիտութենէ, կամ ի վէս եւ յամբարտաւան քարուց, զոր շնորհօքն Աստուծոյ ուղղեալ էին զայս. ընդդէմ հպարտութեանն զհեզութիւնն եւ զխոնարհութիւնն՝ ի Տեառնէ վարժեալք, եւ զտգիտութիւնն՝ ճշմարիտ ուսմանն հպատակութեամբ: Վասն այսորիկ յորժամ լուան զուղիղն, աշակերտեցան յօժարութեամբ՝ ի՞ յանդիմանութիւն եւ յամօթ հակառակողացն ուղիղ վարդապետութեան:

Եւ իբրեւ եկին ի ժողովորդն, մատեաւ այր մի, ի ծունր իջանէր եւ ասէր. «Տէ՛ր, ողորմեա՛ց որդոյ իմում³» (ԺԷ 14):

Թէպէտ ի լերինն զփառսն Տեառն աշակերտքն տեսին, սակայն զչարչարանսն լսելով վշտանային, վասն որոյ ի սքանչելիս զայ, զի մխիթարեսցին՝ իմացեալ, թէ ո՛չ ի հարկէ, այլ կամա՛ւ մեռանի. քանզի միշտ զայս առնէ. յորժամ զչարչարանացն ճառէ եւ կամ զմեծագոյն իրաց, ի հրաշս մատչի. որպէս ասէ, թէ «իբրեւ եկին ի ժողովորդն, մատեաւ այր մի»: Կարի իմն անհաւատութեան ախտի վարակեալ թո՛ի այրս այս. յայտ ի քանիցն Մարկոսի է. «Թէ կարօղ ես, օգնեա՛ մեզ, Տէ՛ր» (Մարկ. Թ 21), եւ թէ՛ «Օգնեա՛ անհաւատութեանս իմոյ» (Մարկ. Թ 23): Բայց ստիպեալ ի գոյ որդ-

¹ Սաղմ. 79 21

² Զ > ի

³ Զ իմոյ

տյն՝ զձեւ մաղթողի զգեցաւ. ոչ միայն բանիւ զվշտակցութիւնն խնդրէ, այլեւ երկրպագութեամբն ողորէր եւ յիրաւի ասէր թէ՝ «Ողորմեա՛ որդւոյ իմոյ»։ Նախ՝ զի նա ի ցաւոցն տանջէր, եւ երկրորդ՝ զսէր եւ զհաւատ հիւանդին լաւագոյն կարծէր առ բժիշկն քան զհօրն։

Ձի լուսնոտի եւ չարաչար հիւանդանայ, բազում անգամ անկանի ի հուր եւ երբէք՝ ի ջուր։

Տե՛ս աստ զչարութիւն դիւիւն եւ զտեսչութիւն խնամոց Արարչին. զդիւիւն՝ զի հնարեալ զայս չարն՝ ոչ միայն զայրն տանջէր, այլեւ զտեսօղսն ի հիւանդութիւն մատնէր, զի յընծայութեան կամ ի պակասութեան լուսնի լլկելով եւ ի հուր եւ ի ջուր ձգելով՝ զարարածս Աստուծոյ ի հայհոյութիւն բերէր, որպէս զի ի լուսնոյն աստիւն կամ ի հրոյն եւ ի ջրոյն, եւ այսպէս հայհոյեալ՝ հոգւով հիւանդանային, եւ կամ զնոյն ինքն ի հուր եւ ի ջուր ձգեալ՝ մարմնով հեղձուցանէր։ Իսկ տեսչութիւնն Աստուծոյ՝ այնու, զի յայն ժամանակս ոչ ակն ածէր սպանանել զնա, եթէ ոչ խնամօքն Աստուծոյ պահեալ էր այրն, քանզի միշտ ի հուր ձգէր եւ ի ջուր, բայց Աստուած ոչ տայր թոյլ նմին մեղանչել։ Բայց թէ ասիցէ որ՝ եթէ ոչ էր լուսնական, ընդէ՞ր «լուսնոտ» անուանեաց, եւ կամ աւետարանիչն է՞ր վասն զրեաց։ Գիտասցէ, թէ ոչինչ է խոտկութիւն ի տեղտոջս, քանզի¹ զհօր դիւահարի են բանքս, եւ աւետարանիչն ըստ բազմաց սովորութեան զանունն զրեաց. քանզի, որպէս ասացաք, ի նորանալ կամ ի հնանալ լուսնին շարժէր², որ չէ իսկ բնաւին ի լուսնոյն զայս կարծել, զոր մարդիկ սովորեալ այնպէս կոչէին։ «Ձի լուսնոտի,- ասէ,- եւ չարաչար հիւանդանայ»։ քանզի ծանր լլկելովն ճնշեալ զմարմինն չարչարէր եւ սպա խելագարեալ յապշութիւն ձգէր, որով մոլեալ զանձն հրոյ եւ ջրոյ տայր՝ երբեմն ի տան եւ երբեմն արտաքս։

Եւ մատուցի զնա աշակերտացն Քոց, եւ ոչ կարացին բժշկել³» (ԺԷ 15)։

Ի մի՛տ առ դարձեալ զնորա դժգոհութիւնն⁴, թէ զհա՛րդ առաջի ժողովրդոցն խոտէր զաշակերտսն (թէպէտ Տէրն ազատէ զնոսս

¹ Զ քան

² Զ շարժել

³ Զ հանել

⁴ ՏԶ տժգոհութիւնն

եւ կարի նմա մեղադիր լինի, քանզի կարծէր զՆմանէ Բէեղգերու-
դաւ իշխանաւ դիւաց հանել զդէս). իսկ աշակերտքն Քո չեւ եւս
են տակաւին կատարեալ յարուեստ վարդապետութեան Քո,
վասն այտորիկ ոչ կարացին հանել: Այլ նա թէպէտ զամենեսեան
աղարտեաց, բայց ոմանք յաշակերտացն տկարացան, այլ ոչ ա-
մենեքեան, քանզի սիւնքն չէին անդ ուրեք մօտ: Այլ քննելի է, թէ
ընդէ՞ր ոչ կարացին հանել աշակերտքն. զի թէ որ զանհաւատու-
թիւնն հօրն ասիցէ պատճառ՝ զտանեմք ի Գիրս, զի սրբոցն սրբու-
թիւնն միայն բաւական եղեւ հրաշս գործել, որպէս առ Եղիսէի, զի
որք զմեռեալն տանէին եւ տեսեալ զհէնս ասորոցն՝ փախեան, զի
ոչ յարուցանել՝ տանէին, այլ ի թաղել, իսկ մեռեալ մարմինն ոչ
զգայր հաւատալ, բայց մարմնոյն Եղիսէի սրբութիւնն յարոյց
զմեռեալն²: Իսկ թէ որպէս ոմանք ասեն, թէ նախանձաբեկ եղեալ
էին առաքեալքն վասն ոչ լինելոյ ընդ երիսն ի լերինն Թաբորա-
կան, եւ ոչ յայս զայ յարմարական, եթէ հօր դիւահարին լեալ էր
հաւատոյ զօրութիւն, զի յերկուց կողմանց պարտ է լինել արժա-
նատրութիւն, որով հրաշք ներգործի: Բայց ինձ թուի, թէ նոքա
ծուլացեալք էին, եւ սոքա՝ անհաւատութեամբ զգածեալք, վասն
այտորիկ ոչ կարացին հանել, եւ այս յայտ ի կարգէս է, զի զերկու-
սինն յանդիմանէ:

**Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ. «Ո՛վ ազգ անհաւատ եւ թիւր, մինչեւ
ցե՞րք իցեմ ընդ ձեզ, մինչեւ յե՞րք³ անսայցեմ ձեզ. ա՛՞՞՞՞ զնա առ Իս»** (ԺԷ 16):

Ո՛չ ի նորա դէմս միայն ձգէ զբանն, զի մի՛ վհատիցի, այլ առ
ամենայն հրէայսն, զի թերեւս զայթազղեալ էին բազումք, որ
անդն կային: «Ո՛վ ազգ», - ասէ. հիանայ ընդ անհաւատութիւնն,
որպէս այլուր ասէր. «Ո՛վ անմիտք եւ հեղգասիրտք՝ ի հաւատալ
ամենայնի⁴, զոր խօսեցան մարգարէքն» (Դմկ. ԻԴ 25), ոչ միայն հա-
ւատալն թերի, այլեւ թիրեալք ի գործոյ օրինացն՝ ըստ այնմ. «Չի
ազգ մի թիւր են» (Բ Օր. ԼԲ 20) եւ որդիք անհաւանք⁵: «Մինչեւ ցե՞րք⁶
իցեմ ընդ ձեզ, մինչեւ յե՞րք⁷ անսայցեմ ձեզ». ցասմամբ բարբառի,

¹ Զ յարուցեալ

² Դ Թագ. ԺԳ

³ Զ ցե՞րք

⁴ ՏՏ յամենայնի

⁵ Զ անհաւատք

⁶ Զ յե՞րք

⁷ Զ ցե՞րք

որպես թե ասել՝ այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, եւ ոչ ուղղեցայք, այսուհետեւ ոչ ներեմ անհաւատութեան ձերոյ: Կամ թէ զմարգարէին ասէ. «Յազեալ եմ ձեօք» (Ես. Ա 14) եւ տաղտկացեալ եմ ազգադ այդոիկ¹, մինչ զի մեկուսանայն ի ձէնջ ախորժելի, եւ խաչ եւ չարչարանս կրել փափագելի է Ինձ, քան ընդ ձեզ շրջել եւ քաղաքակից ձերոյ թիրութեանդ լինել: «Աժ,- ասէ,- զնա առ Իս»: այսու ի յոյս հաշտական ածէ հաւատալ ի Նա, թէ առնէ բուժումն չարչարանացն. զի թէ ոչ բժշկէր, եւ ոչ բնաւին իսկ կոչէր:

Եւ սաստեաց ի նա Յիսուս, եւ ել ի նմանէ դեւն, եւ բժշկեցաւ մանուկն ի ժամէն յայնմանէ (ԺԷ 17):

Ղուկաս ասէ. «Մինչդեռ մատչէր, զարկոյց զնա դեւն» (Ղուկ. Թ 42), ոչ առ ի ցոյց՝ ժողովրդեանն առաջի թոյլ ետ լլկել եւ ապա սաստեաց, այլ վասն հօրն, զի ծանիցէ, թէ ի կոչելոյն այնպէս խռովեցաւ, հաստատեսցի ի հաւատս վասն նշանին, զոր բանի իբրեւ զԱստուած բժշկելոց էր՝ ըստ Մարկոսի թէ՛ «Ես քեզ ասեմ, խոյլ այս, ել ի դմանէ եւ այլ մի՛ մտանիցես ի դա» (հմմտ. Մարկ. Թ 24): Բանզի խորհէր ընդ կրունկ դառնալ, ասաց զայս, որով յայտ արար, թէ եւ զխորհորդս դիւաց ճանաչէ, եւ զոր ինչ խորհին մարդիկն՝ քաջ զհտէ, յայտ է թէ Աստուած է, որում խոյլ այսք հնազանդէին, եւ մարդիկ բանականք հետեալ կային: «Բժշկեցաւ,- ասէ,- մանուկն ի ժամէն յայնմանէ»: նախ հոգւով, զի վասն մեղաց էր հիւանդութիւնն, եւ ապա մարմնով ի չարչարանացն՝ յայնժամ եւ առ յապայ:

Յայնժամ մատեան աշակերտքն առանձինն եւ ասեմ ցՅիսուս. «Մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա» (ԺԷ 18):

Ի ծուփ տարակուսի մատնեցան աշակերտքն, յորժամ ասաց այրն, թէ ոչ կարացին հանել. վասն այսորիկ յորժամ բժշկեաց, մատեան հարցանել զպատճառս անկարութեանն, քանզի կասկածէին, թէ զուցէ կորուսին զշնորհն², զոր հաւատացաւ նոցա՝ իշխանութիւն ի վերայ այսոց պղծոց: Իսկ առանձին հարցանելն՝ ոչ ամաչել ինչ. քանզի գործն վճարեալ էր եւ նոքա յանդիմանեալ,

¹ Զ այդորիկ

² Տ զշնորհացն

աւելորդ էր այնուհետեւ ամօթն. այլ վասն զի սովորութիւն էր նոցա՝ յորժամ զմեծամեծ իրաց հարցանէին, ի ծածուկ հարցանէին:

Եւ Նա ասէ ցնոսա. «Վասն թերահաւատութեան ձերոյ (ԺԷ 19):

Ո՛չ այնչափ կշտամբէ զսոսա, որպէս զազգն հրէից, զի զնոսա «անհաւատս» եւ «թիրս» կոչեաց, իսկ զսոսա «թերահաւատս» միայն, որպէս եւ երբեմն Պետրոսի ասէր. «Թերահաւատ, ընդէ՞ր երկմտեցեր» (Մատթ. ԺԳ 31): Արդ՝ «թերահաւատ» զսոսա կոչէ վասն ծուլութեանն, որպէս ասացաւ, եւ տրտնջման, որպէս զի ցուցցէ, թէ գործոցն նուազութիւն եւ զհաւատն պակասեցուցանէ, զի ոչ հաւատայ, թէ զոր ինչ գործեմս՝ տեսանէ Աստուած, ուստի եւ ի սխալանս զայ եւ այնու ոչ ի վստահացելոցն միայն, այլեւ յառեալ պարզեւացն զրկի: Այլ սոքա ո՛չ ի բողոքն, այլ ի մասնաւորն յանցաւոր, վասն այսորիկ «թերահաւատ» ասաց, զորս ի վերայ բերէ.

Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ, ասաջիք լերինս այսմիկ՝ փոխեաց աստի անոթ¹, եւ փոխեսցի:

«Հաւատ» աստ զնշանացն միայն ասէ եւ ո՛չ զհաւանութեանն, զոր բողոք եւ կատարեալ եւ առանց թերութեան ունել հրամայէ: Եւ այս ի ձեռն գործոցն լինի, զի յորժամ զգործքն լրմամբ ունիցի, եւ ի հաւատս անթերի գտանի: Կամ այլ ազգ. մանանխոյն զանչափ զօրութիւնն Իւր ծանուցանէ, զի թէպէտ անձամբ փոքր ինչ կարծիցի մանանխոյն, սակայն զօրութեամբ քան զամենայն ինչ սաստիկ է. նոյնպէս փոքր ինչ ի սերտ եւ յանադանդ հաւատոց բազում հրաշս կարէ գործել զօրութեամբ նորա, մինչ զի զլերինս փոփոխէ, որպէս ասաց: Բայց թէ ասիցէ որ՝ ե՞րբ ուրեք լերինս փոխեցիմ² նոքա, եւ յայտ է, զի զայսպիսի հաւատ զզեցան, ասացուք, թէ եւ այլ մեծամեծս արարին, եւ բիւր մեռեալս յարուցին. եւ թէ զայս ոչ արարին, զոնեայ պէտքն ոչ պահանջեցին, եւ կամ թէ արարին, եւ ոչ գրեցաւ, որպէս այլք բազումք ի նշանացն: Եւ այլ ազգ. զի ոչ ասաց թէ՝ փոխեցէք զլերինս, այլ՝ թէ ասէք, լինի, եւ զի ոչ կամեցան՝ եւ ո՛չ ասացին:

Եւ դարձեալ՝ մանանխոյ ըստ որակին ազդոյ է, բայց յորժամ աղացեալ մանրի, առաւել տայ զզօրութիւն: Այսպէս եւ հաւատ

¹ S այդր

² S զլերինս փոփոխեցին] լերինս փոխեցին

բոլոր, թեպետ յոյժ զօրաւոր է, բայց յորժամ բեկեալ սրտիւ եւ խոնարհ վարուք վարի, առաւել իմն հրաշս գործէ, որպէս գրեալ է ի վարս հարանց¹, թէ մատուցին այսահար մի ծերոյ միոյ բժշկել, եւ նա սաստեաց ելանել ի նմանէ: Ասէ դիւահարն ցծերն. «Հարցից զքեզ բան մի յԱւետարանէն, զոր թէ սասացես, ելանեն. ո՞րք իցեն օղիքն կամ այծիքն»: Ասէ ծերն. «Այծն ես եմ, զօղիսն ոչ գիտեմ», եւ իսկոյն ի խոնարհ բանից ծերոյն հալածեցաւ: Չոր եւ սատ Տէրն հրամայէ. թէ ունիցիք հաւատ հանդերձ խոնարհութեամբ, սասացիք լերիւնդ: Թուի ինձ, թէ «լեառն» զլուսնական այսն կոչեաց, զոր Ինքն հանդերձ խոզիւքն ի ծովն հեղձոյց՝ ըստ այնմ թէ՛ «Խոռովեցան լերիւնք ի զօրութենէ Նորա» (Մատթ. ԽԵ 4). արդ՝ զայս արարին բազում անգամ առաքեալքն, որպէս պատմի ի «Գործս առաքելոցն»:

Եւ ոչինչ անհնարին լինիցի ձեզ:

Եւս յառաջեցուցանէ. թէ ի մարդկանէ սատուածք լինիցիք, զի որ ինչ մարդկան անհնարինքն՝ Աստուծոյ հնարաւորք են, նմանապէս լինիցի եւ ձեզ: Տես սատ զՀոգւոյն զօրութիւն, զի որք հատոյ մանանխոյ չափ հաւատս ոչ ունէին նախ, այնքան յորդեաց, մինչ զի աղբերք² եւ գետք հաւատոց ի նոցանէ բղխեցին՝ ըստ Տեառն թէ՛ «Որ հաւատայ յԻս, որպէս ասեն Գիդք, գետք յորովայնէ նորա բղխեսցեն» (Յովհ. Է 38), որք ոչ միայն ի ձեռն հաւատոցն հրաշս գործեցին, այլեւ տկար մարմնով զպէսպէս կտտանս մահու յանձն առին. ա՛յս³ է «անհնարին»-ն, զորս նորա հնարաւորս ցուցին:

Բայց այս ազգ ո՛չ իւիք⁴ ելանէ, եթէ ոչ աղօթիք եւ պահօք» (ԺԷ 20):

Ոչ միայն զլուսնականացն ասէ, այլեւ զամենայն բոլոր դիւաց: Այլ զպահս եւ զաղօթս յիշելով՝ գիտութիւն իմն խորհրդական աւանդէ, թէ յորո՛ց պատճառաց այսահարութիւն լինի: Քանզի յերկուց զոլով մարդ՝ ի հոգւոյ եւ ի մարմնոյ, արդ՝ որքան հոգւով ի ձեռն բանական պաշտաման աղօթից առ Աստուած միացեալ է եւ զմարմինն ժուժկալութեամբ պահոց հոգւոյն գործակից ունի, ան-

¹ Զ հարանցն

² Տ աղբիւրք

³ Զ այլ

⁴ Զ > իւիք

կար է դիւաց բնակութիւն զնա առնել, զի այսպիսիքս ոչ միայն յանձնէ հերքեն, այլեւ յայլոց հալածեն: Իսկ յորժամ հեռանայ յԱստուծոյ խօսակցութենէն եւ զանձն փափկութեան տայ, այնուհետեւ տեղի այսոցն լինի. որպէս որ ի լուսոյ զանձն որոշեալ՝ ի հարկէ խաւարաւ ըմբռնի, կամ յառողջութենէ՝ զրկեալ՝ ընդ հիւանդութեամբ է, այսպէս եւ սա ի բարոյն մերձադրութենէ հեռացեալ, որում Դաւիթ ըղձայ², առ չարին կորստեամբ կայ: Եւ թէ ոմանք³ զերկիւղն եւ զցնորմունսն ասեն պատճառ, նոյն է եւ այս. զի որքան յԱստուած մերձ է, առանց երկիւղի է, եւ յորժամ ծուլութեամբ եւ մեղօք որոշի յԱստուծոյ, երկիւղի պակնուցու, որպէս որ զի ի տեսնէ իւրմէ ապստամբէ եւ կամ յրնկերէ զատուցանի, երկնչի եւ ի հակառակացն ըմբռնեալ լինի: Արդ՝ զայս դնէ պատճառ Տէր եւ ասէ. եթէ որ աղօթօղ է եւ պահօղ, ոչ բնաւ ի նոցունց տիրեալ լինի, եւ թէ որ պղերգութեամբ մատնի, դարձեալ նովին զինուք ազատիլ կարէ:

Իսկ եթէ⁴ ասիցէ որ՝ ապա ընդէ՞ր բազումք ի սրբոցն առանց պահոց զդեւս հալածեցին, ասասցուք, թէ այն յԱստուծոյ զօրութենէն է, եւ մի կամ երկուք ուրեք պատահեցան, իսկ աստ յոյժ պահոց պնդութեան եւ աղօթից ձեռնտութեան պէտք են բժշկողաց, մանաւանդ որք բժշկեալն լինին, որպէս զբազումս ի փորձոյ տեսաք արարեալ եւ ի չարէն բժշկութիւն գտեալ: Վասն զի պահք ցածութիւն յանձինս զանձէ, որ ընդդէմ է հպարտութեան, եւ հրեշտակ ի մարմնի յարդարէ, որով ընդ անմարմինսն պատերազմի եւ յաղթէ: Այսպէս եւ աղօթք յոյժ զօրաւոր են առ ի յօգնութիւն՝ ըստ առաքելոյ⁵, քանզի ոչինչ է այլ⁶ աղօթք, բայց յաղթութիւն ի վերայ չարեաց, որպէս ուսոյց Տէրն աղօթել. «Փրկեա՛ զմեզ ի չարէն»:

Այսքիկ ըստ տեղոյն ասացան, բայց թէ եւ խորհուրդ ի բանէս պահանջես՝ այսպիսի է. «ժողով» անուանէ զբանականացս ազգ, իսկ զալ Աստուծոյ ի ժողովուրդն՝ զարարչութիւնն եւ զնախախնամութիւնն ասէ: Վասն որոյ յորժամ ընկալան զայն⁷ արդարքն, մատեան աղօթիւք ողորմութիւն խնդրել բնութեանս, որք

¹ Զ յաջողութենէ

² Սաղմ. 7Բ 28

³ Զ որ քան

⁴ Զ թէ

⁵ Յակոբ. Ե 16

⁶ Տ այլ է] այլ

⁷ Զ այս

որդիք էին նոցա եւ մոլորեալ յԱրարչէն՝ ի մանկութենէ պաշտէին զարարածս եւ ընդ տարերք աշխարհի ի ծառայութիւն կային, որպէս ասէ. «զի լուսնոտի եւ չարաչար հիւանդանայ»: Զի ոմանք զլուսին եւ այլք զհուր եւ կէսք զջուր պաշտէին, եւ այս բազմապատիկ հիւանդութիւն յոգիս նոցա տրամադրէր: Իսկ ասելն «մատուցի զնա¹ աշակերտացն Քոց, եւ ոչ կարացին բժշկել²»՝ զդպրաց Օրինացն ասէ, որք ընթեռնուին զՕրէնս եւ ոչ կարէին արդարացուցանել զմարդիկ եւ ի դիւանդ կռապաշտութեանցն ազատել: Վասն որոյ ասէ. «Ո՛վ ազգ անհաւատ եւ թիւր». յիրաւի՛ անհաւատ, զի ոչ պահեցին զաւանդ փառաց դրախտին, որ հաւատացաւ նոցա, այլ թիւրեալ ի բանական ստեղծուածոյն՝ արտաքս էլին օրինազանցութեամբն՝ ըստ մարգարէին թէ՛ «իբրեւ յորմոյ թիւրելոյ» (Մատթ. ԿԱ 4), եւ Սողոմոն դարձեալ թէ՛ «Թիւրեալն ոչ կարացէ կայութիւն³ ընդունել» (հմմտ. Ժող. Ա 15): Յետ որոյ ոչ եթող ի խնամոց, այլ պէսպէս այցելութեամբ ընդ մարդկան եղել եւ երկայնամտեաց, որպէս ասէ. «Մինչեւ ցե՞րք իցեմ⁴ ընդ ձեզ, մինչեւ յե՞րբ⁵ անսայցեմ ձեզ, ած,- ասէ,- զնա առ Իս»: Այս զմարդկային բնութեանս զգենուլն նշանակէ, որով հարկեալ յաղօթից արդարոցն՝ էած զնեզ առ Ինքն եւ սաստեալ կռապաշտութեանն՝ երարձ, որպէս ի սկիզբն ծննդեան յԵգիպտոս զնալով՝ փշրեաց զձեռագործս եգիպտացոց Վէմն հատեալ առանց ձեռին⁶:

«Եւ բժշկեցաւ մանուկն⁷ ի ժամէն յայնմանէ» (Մատթ. ԺԷ 17): Քանզի յորմէհետէ զգեցաւ զմարմին, բժշկեաց «զբեկումն դստեր ժողովրդեան Իմոյ» (հմմտ. Եւ. Լ 26): Յորմէ նախանձեալ աշակերտք հին Օրինացն, որք զիրեանց արդարութիւնն կամէին կացուցանել եւ Օրինօքն արդարանալ մարմնոց ասէին, հարցանէին թէ՛ մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զմարդիկ առ Աստուած՝ եւ բժշկել ի մեղաց, ասէ՛ վասն թերահաւատութեան ձերոյ: Արդ՝ թերահաւատութիւն է՝ նախ՝ զի զՀայր միայն զիտէին, եւ երկրորդ՝ զի Օրինօքն արդարանալ կարծէին, որպէս ասացաք, եւ այսու ոչ միայն զայլս, այլեւ ոչ անձանց օգնել կարէին. յայտ է՝ զի եւ ինքեանք

¹ Զ > զնա

² Զ հանել

³ Զ կազմութիւն

⁴ Զ յե՞րբ եղէց] ցե՞րք իցեմ

⁵ Զ եւ] մինչեւ յե՞րբ

⁶ Դան. Բ 34

⁷ Զ > մանուկն

պատարագաց քառութեան կարօտանային: Վասն որոյ ասէ. «Թէ ունիցիք հաւատս իբրեւ զհատ մանանխոյ, զլերինս փոփոխեցիք», այսինքն՝ ի Հայր եւ յՈրդի եւ ի Սուրբ Հոգին կատարեալ դասանութիւն, զոր յԱւագանն ընդունիք, եւ ոչ ի գործոց, այլ ի լրոյ հաւատոցն արդարանայք¹, որպէս գրէ Պօղոս. «Արդարացեալք ի հաւատոց անտի՛ խաղաղութիւն կայցուք առ Աստուած» (Հռմ. Ե 1), փոփոխէք զհպարտացեալ լերինսն եւ ժառանգէք զնոցա տեղին, եւ որ անհնարին թոյի ձեզ երկնաքաղաքացի լինել, այսու օրինակաւ հնարաւոր լինի: Բայց զի մի՛ ի հաւատն միայն վստահացեալ՝ ծուլանայցեն, ասէ՝ մարդկայինս ազգ ոչ այլ իւր կարէ ելանել յերկինս, եթէ ոչ աղօթիւք եւ պահօք, զի «հաւատք առանց գործոց մեռեալ են» (Յակ. Բ 20), իսկ հանդերձ գործովք կենդանի գոյ հաւատոյն՝ զմարմնեղէն բնութիւնս յերկինս բարձրացուցանէ, որպէս զԵդիա պահօղ եւ աղօթօղ²:

Եւ մինչդեռ շրջինն նոքա ի Գալիլեա, ասէ ցնոսա Յիսուս. «Մատնելոց է Որդի մարդոյ ի ձեռս մարդկան (ԺԷ 21),

եւ սպանցեն զՆա, եւ յերիբ ատուր յարիցէ»: Եւ տրտմեցան յոյժ (ԺԷ 22):

Ընդէ՞ր ցանկ զչարչարանացն ճառէ: Կամ թէ ի Գալիլեա շրջէին, զի մի՛ ասիցեն, թէ տուայտիմք աստ՝ զայս ի մեջ բերէ, զի յորժամ լսէին զայս, բնաւ իսկ եւ զԵրուսաղէմ տեսանել ոչ կամէին, եւ կամ թէ նախ ասաց զչարչարանացն եւ ի սքանչելիսն մատեաւ եւ այժմ դարձեալ կրկնէ, զի մխիթարեսցին, թէ կամա՛ւ զայ եւ ոչ ի հարկէ ի չարչարանս. վասն որոյ ոչ միայն զչարչարանս, այլեւ զօրինակ մահուն եւ զյարութիւնն եւս, որ յետ յերիբ ատուր լինելոց էր, առ ընթեր դնէ: Բայց նոքա ոչ ունէին ժոյժ լսել զայն կամ տեսանել, վասն որոյ ոչ սակաւ տրտմեցան, այլ յոյժ, զի կարի իմն զային զՎարդապետան, քանզի զմահն լսէին եւ զշահն, որ ի նմանէ լինելոց էր, ոչ իմանային:

Իբրեւ եկին նոքա ի Կափառնաում, մատեան որք զերկրամեանն պահանջէին առ Պետրոս եւ ասեն³. «Վարդապետն ձեր ո՞չ տայ զերկրամեանն», եւ նա ասէ՝ այո՛ (ԺԷ 23):

¹ Գաղ. Բ 16

² ԴԹագ. Բ 1-12

³ Զ ասէին

Յորժամ զանդրանիկսն եզիպտացոց կոտորեաց Աստուած եւ զհարայելացոցն պահեաց, յայնժամ ասաց. «Իմ է ամենայն անդրանիկն իսրայելացոցն» (Թիւք 4 13), բայց յետոյ զթացեալ ի ծնօղսն՝ փոխանակեաց ընդ ցեղին Ղեւեայ, եւ զի պակաս գտան դեւտացիքն քան զանդրանիկսն Իսրայելի, հրամայեաց տալ յամի դեւտացոցն սիկդ մի արծաթոյ, որ է երկու դրամ, ամենայն անդրանկացն իսրայելացոցն¹: Եւ զի Քրիստոս անդրանիկ էր՝ զհտէին, եկին պահանջել եւ ի Նմանէ: Ոչ յայլում տեղոջ, այլ յորժամ ի Կափառնաւում եկն, որ Իւր իսկ քաղաք կարծէր լինել, քանզի ըստ քաղաքի քաղաքի առանձինն պահանջէին, որպէս զաշխարհագիրն: Բայց ոչ առ Քրիստոս եկին, քանզի թէպէտ զպատշաճ կարծիս՝ որ զՆմանէ, ոչ զհտէին, սակայն ի վարդապետական պատուոյն եւ ի հրաշիցն զործոց ակն ածէին, այլ առ Պետրոս մատեան իբր զգլխաւոր առաքելոցն², եւ զի ինքն իսկ անդրանիկ էր, եւ ասեն. «Վարդապետն ձեր ոչ հարկիցի զդիւրարքմայն»: Ոչ սաստիւ, այլ մեղմով հարցանէին, եթէ ոչ տայ զերկդրամեանն, եւ նա ասէ՝ այո: Չի՞նչ զործէ զայս Պետրոս, քանզի ո՞րպէս զհտէր, թէ տալոց էր զհարկն, զի ասաց, թէ տայ, եւ Տեառն ոչ յայտնեաց: Ինձ թուի, թէ ակնաձէր վասն այսպիսի դոյզն իրաց ասել ցՆա եւ կամ կազել ընդ պահանջօղսն, այլ կամեցաւ յանձնէ վճարել, վասն որոյ Հեզն, որ զամենայն ինչ զիտէ, յառաջէ եւ ասէ:

Եւ իբրեւ եմուտ ի տուն, յառաջեաց քան զնա Յիսուս եւ ասէ. «Ձիա՞րդ թուի քեզ, Սիմոն, թագաւորք ազգաց յումմէ՞ առնուն³ զհարկս կամ զհասն՝ յորդո՞ց իւրեանց, թէ յօտարաց» (ԺԷ 24):

Թուի թէ եւ զՊետրոս կազդուրել կամի թէ՛ չէ՛ Ինձ արժան հարկս տալ, որպէս դու իրաւ համարեցար, վասն որոյ եւ դատաւոր զնա նստոյց. եւ զայս հաստատէ ոչ միայն հարցմամբն, այլեւ յառաջելովն քան զնորա ասելն եւ կամ զայլոյ ոմեք ծանուցանել: Նաեւ համարձակութիւն տայ Պետրոսի ասել, քանզի դանդաղէր եւ ամաչէր յիրացն. «Ձիա՞րդ թուի քեզ. թագաւորք ազգաց, - ասէ, - յումմէ՞ առնուցուն զհարկս, կամ քահանայք⁴՝ զհասն», այսինքն՝

¹ Ելք ԺԲ, ԺԳ, ԻԲ, Թիւք Գ, Ը, ԺԸ

² Զ աշակերտացն

³ Զ առնուցուն

⁴ Տ քահանայքն

զի թէպէտ յստեղծմանն հաւասարք ստեղծան մարդիկ՝ ամենեքեան թագաւորք գորով, բայց յետ յանցմանն ոմանք բռնացեալ տիրեցին բազմաց եւ հարկս տան հարկանել, արդ՝ նոյն բռնաւորքն՝ յունմէ՞ պահանջեն զհարկն՝ յորդո՞ց, թէ յօտարաց:

Եւ իբրեւ սասց թէ՝ յօտարաց, սաւ ցնա Յիսուս. «Ապա ուրեմն ազատ են որդիքն (ԺԷ 25):

Քանզի եկին նոքա հարկս խնդրել, որպէս զի բարուրս գտանիցեն ի վերայ Նորա, որպէս զի թէ ոչ տացէ, ապստամբօղ զՆա յՕրինացն ասիցեն, եւ եթէ տացէ, համարիցին զՆա իբրեւ զօտար մի: Արդ՝ զսոցա կարծիս խափանեաց հարցմամբն, քանզի զանձնէ եցոյց, թէ չէ օտար, այլ ազատ է, եւ զնոցանէ առաւել անիրատւութիւն խորհին, քան զթագաւորս եւ զբռնաւորս ազգաց, զի թէ, որպէս սասցեր, նոքա յօտարաց, իսկ սոքա յազատաց, կարի իմն անիրաւք են, եւ Որդի եմ ո՛չ երկրաւոր թագաւորի, այլ երկնաւորին: Եւ դարձեալ՝ զի դէտացիք էին՝ որ զհասն պահանջէին, եկին փորձել զՆա. զի թէպէտ վարդապետ զիտէին, սակայն քահանայ ոչ կարծէին: Իսկ Տէրն յայտնապէս ո՛չ եցոյց զԻնքն քահանայ գոյ, այլ օրինակաւն ծանոյց. քանզի դէտացիքն ոչ տան հարկս, զի ազատք էին, քանզի թագաւորք երբայեցոցն զքահանայսն ոչ հարկեցուցանէին, այլ ազատս պահէին: Ասաց եւ զԻնքն ազատս գոյ, որով եցոյց, թէ եւ քահանայ է: Եւ իբրեւ հաստատեաց զբանն դատաստանաւ, ապա սաւ.

Բայց զի մի՛ գայթաղեցուցուք զնոսա, երբ ի ծով եւ ընկեա կարթ, եւ գառաջին ձուկն, որ ելանիցէ, առ եւ բաց զբերան նորա, եւ գտանիցես սատեր. եւ զայն առեալ՝ տացես նոցա ընդ Իմ եւ ընդ քո» (ԺԷ 26):

Թէպէտ տայ զհարկն, բայց ո՛չ վայրապար հրամայէ տայ, այլ նախ ցուցանէ, թէ չէ պարտ տայ, եւ ապա տայ, զի միովն նոքա չգայթաղեցին, եւ միւսովն սոքա չվնասեցին. զի ո՛չ իբրեւ զպարտական տայ, այլ զի զնոցա անմտութիւնն ածիցէ յուղորութիւն: Նաեւ տալովն զանձառ զօրութիւնն ծանոյց, զի ո՛չ ի քսակէ, այլ ի ծովէ իբրեւ զամենայնի Աստուած հրամայեաց տայ, որում եւ երբեմն սաստեաց իսկ², եւ Պետրոսի ի վերայ ալեացն ետ

¹ Զ բռնաւորքս

² Մատթ. Ը 26

զնայ¹: Նոյնպէս եւ աստ ի ծովէ տայ, եւ չէ փոքր սքանչելիք յայնպիսի խորոց զճուկն սատերաւն արտաքս ածել, քանզի կրկին եւ երեքկին² սքանչելիք է, զի ի ծովէ եւ ի ձկանէ եւ յառաջին ձկանէն, քանզի կարթն մին ըմբռնէ, որ ամենեւին զաստուածական զօրութիւնն յայտ առնէ, որ ծովուն եւս հրամայեաց հարկատու լինել եւ հնազանդ: «Մի՛ գայթաղեցուցուք զնոսա»: այսինքն՝ բանբասել զմէնջ, թէ օրինազանցք են, քանզի յորում տեղուջ վասն այլոց եւ կամ վասն հոգեւորացն էր բանք, ոչինչ փոյթ առնէր գայթաղութեան նոցին, այլ ասէր. «Թո՛յլ տուք, կոյրք են, կուրաց առաջնորդ» (Մատթ. ԺԵ 14), իսկ յորժամ վասն անձինն եւ մարմնական իրաց՝ զգուշանայր յոյժ առ ի խրատ մեզ:

«Առեայ,- ասէ,- տացես³ նոցա ընդ Իմ եւ ընդ քո»: Քանզի եւ Պետրոս անդրանիկ էր, պատուէ զնա այսու: Բայց դու տես զխոնարհութիւն մտացն Պետրոսի եւ զկատարեալ հաւատս նորա եւ զարմացի՛ր ընդ խոնարհութիւնն⁴. զի Մարկոս աշակերտ նորա ոչ գրեաց զայս, որ բարգաւաճանք էր նմա, իսկ զուրանալն եւ զայլսն գրեաց: Իսկ ընդ հաւատս՝ զի իր այնպիսի յանձն էառ վճարել, որ կարի իսկ դժուարինք էին, վասն որոյ եւ հատուցումն հաւատոցն նորա զայն ետ, զի ընդ Իւր յարեաց ի տալ հարկին, եւ քանզի յանձնեաց նոցա, զի Պետրոս տացէ, իբրու առ նա զցանցս երթալ ընկենուլ, ընդ նմա երթային եւ նոքա, ոմանք իբր ի սքանչելիս, եւ կէսք առ ի յանգոսնել: Եւ իբրեւ եհան նա զճուկն, որ ունէր զսատերն ի բերանի իւրում, զոր ոմանք ստեղծեալ ասեն եւ այլք՝ զգրիչն արծաթի Սիմէոնի ծերոյ, որ թարգմանիչ էր զկնի Եօթանասնիցն ի Փարան կղզի յաւուրս Պտղոմեայ արքայի առասպելին, պահեաց անհալ՝ նկարելով ի նմա պատկեր արքունի, որ նշանակէր զանմահ թագաւորութիւնն Բրիստոսի: Չայն յորժամ տեսին, ամաչեցին ամբարտաւանքն, որ ոչ համարեցան զՆա ղեւտացի, որում ծովն եւ ճուկն եւ արծաթն վկայեցին, թէ թագաւոր է Նա եւ քահանայ:

Եւ դարձեալ՝ «Առեայ՝ տացես նոցա ընդ Իմ եւ ընդ քո» ա՛յս է. զի սատերն կայսերական է, կայսեր՝ հատո, որպէս ասացն, իսկ զքեզ Ինձ վասն տուր, որպէս զԻս վասն քո ետու, քանզի Իմս՝ քեզ

¹ Մատթ. ԺԴ 28-29

² Զ երեքին

³ Զ ~ տացես, ասէ

⁴ Տ զխոնարհութիւնն] ընդ խոնարհութիւնն

միայն է, իսկ քոյդ՝ վասն Իմ սիրոյ եւ ի քո փառս: Իսկ առ ի միտս՝ ծով աշխարհս է¹, եւ կարթ՝ առաքելական քարոզութիւնն, եւ ձուկն՝ մարդիկ տղմասէրք, եւ արծաթ՝ բանին նշանակ, որ ի գալն ի հաւատս առաջին գայս ետուն, թէ Յիսուս է Որդի Աստուծոյ, եւ առաքելաւքն՝ քարոզք Նորին, ա՛յս ընծայ եղեւ Աստուծոյ Հօր: Այլեւ տայ հարկս կամաւորապէս, որպէս զի զիս ի հարկից մեղացն ազատեսցէ, զի որպէս նուաստութեամբն բարձրացոյց եւ անարգութեամբն փառաւորեաց եւ մահուամբն կեցոյց, այսպէս եւ հարկս տալովն ի ծանրութենէ հարկացն Օրինացն եւ մեղացն զերծուցեալ ապրեցոյց, զի մի՛ այլ լուիցուք, ըստ Յորայ, զձայն հարկահանի²:

¹ Գ > է

² Յոր Գ 18

ԳԼՈՒԽ ԺԸ

Յայնմ աուր մատեան աշակերտքն առ Յիսուս եւ ասեմ. «Ո՞վ իցէ ի մէնջ մեծ յարքայութեանն երկնից» (ԺԸ 1):

Մարդկօրէն իմն ախտացան առաքեալքն, քանզի զայս նշանակէ աւետարանիչն՝ ասելով թէ՝ «յայնմ աուր», յորժամ քան զամենեսեան զՊետրոս պատուեաց: Չի Յակոբայ եւ Յովհաննու ընկեր էր, եւ անդրանիկ եւ նորա, այլ ո՛չ վասն նոցա այսպէս արար ինչ: Եւ քանզի զախտն յայտնի ասել ամաչէին թէ՝ «Ընդէ՞ր զՊետրոս քան զմեզ պատուեցեր», եւ կամ թէ՝ «Նա քան զմեզ մե՞ծ իցէ», այլ խառնիխումն հարցանէին թէ՝ «Ո՞վ մեծ իցէ»: Չի յորժամ զերիսն ի միասին տեսանէին քան զայլսն պատուեալ¹, ոչինչ դժկամակ լինէին, իսկ յորժամ միմն միայն կրթեցաւ ի պատիւն, ապա դժուարին: Եւ ո՛չ ընդ այս միայն, այլեւ բազում նախանձ ի միտս մթերեալ ունէին եւ յայնժամ բորբոքեցան, քանզի լուան, զի ասաց թէ՝ «Քեզ տաց զփականս», եւ՝ «Երանի է քեզ, Սիմոն, որդի՛ Յոնանու» (Մատթ. ԺԶ 19, 17), եւ աստ թէ՝ «Տուր ընդ Իմ եւ ընդ քո», եւ այլ եւս զամենայն համարձակութիւն նորա, զոր տեսանէին, կսկծէին եւ զչարէին, վասն այսորիկ հարցին թէ՝ «Ո՞վ իցէ ի մէնջ մեծ ի թագաւորութեանն Քում յերկինս»:

Եւ կոչեցեալ առ Ինքն² Յիսուս մանուկ մի՝ կացոյց զնա ի մէջ նոցա (ԺԸ 2)

եւ ասէ. «Ամէ՛ն ասեմ ձեզ, եթէ ո՛չ դարձօք եւ եղիօք իբրեւ զմանկտի, ո՛չ մտանիցէք յարքայութիւնն երկնից (ԺԸ 3):

Ո՛չ քանի միայն կամի զգաստացուցանել, այլեւ օրինակաւն թախանձեցուցանել. դուք, ասէ, զայն քննէք, թէ ո՞վ մեծ իցէ, եւ վասն զահերիցութեանն հակառակիք³, քայց Ես զճշմարիտն ասեմ ձեզ՝ թէ ո՛չ քան զամենեսեան խոնարհագոյն լինիօք, եւ ոչ զդրունս արքայութեանն արժանի լինիք տեսանել: Եւ յիրաւի՛ զմանուկն ի մէջ կացուցանէ. զի ի տեսլենէ երեսացն պատկառեցուցանէ եւ առ բնութեանն ուղղութիւնն ածէ, եւ զեկամուտ չարութիւնն արտաքս հանէ, եւ զհաւասարութիւն սիրել առ ամենեսեան

¹ Զ պատուեալս

² Զ > առ Ինքն

³ Զ գահիրիցութեանն զակատիք] գահերիցութեանն հակառակիք

մինչ առ նուագս, զի այսպիսի են մանկունք: Եւ ցուցանէ, թէ եւ յօժարութեամբ զայս առնել կարողութիւն է: Բայց մի՛ նք տարակուսեսցի, թէ որ ծերն իցէ՝ զիա՞րդ դարձցի եւ իբրեւ զմանուկ լինիցի, որպէս Նիկողիմոս կարծեաց, այլ զի զվարս եւ զբարս մանկան զգենուցու, թէպէտ կատարեալ այր իցէ, որ է կրկին առաքինութիւն զայնպիսի վարս ունել եւ չհպարտանալ. քանզի մանուկն խոնարհ է եւ անմեղ եւ ի նախանձուէ սուրբ եւ ի ցանկութեանց ազատ, միամիտ եւ պարզաբարոյ, զի թէպէտ թշնամանիցի՝ ոչ տրտմի, եւ թէ մեծարիցի՝ ոչ փքանայ: Արդ՝ որ այսպէս յամենայն արատոյ ազատ լինիցին, յիրաւի զարքայութիւնն երկնից ժառանգեն, որպէս մանկունքն, որ ընդ Նմա յանկողնի հանգչին՝ օրհներգութիւն զոլով Տեառն ըստ Դաւթայ¹, քանզի ամենեքեան, որք միտս ունին կատարեալս եւ առ չարութիւնն տղայք են, ստուգապէս մանկունք են եւ արքայութեանն ժառանգք:

Իսկ թէ ոք ասիցէ, թէ այդ այդպէս իցէ, ապա ուրեմն այժմ տհաս մանկունք, որք ոչ չարութեան եւ կամ առաքինութեան ընդունակք են եւ յափշտակին ի գրկաց մարց զինչ եւ է յեղանակաւ, եւ նոքա յարքայութիւնն են, ասասցութ, թէ մկրտեալք են՝ այո՛, զի հոգւով՝ պարտիքն Ադամայ լուծաւ վերստին ծննդեամբն, եւ մարմնով՝ տակաւին անմեղք են, որպէս մանկունքն Բեթլեհեմի յարքայութիւնն են. զի նոքա թէպէտ ոչ ջրով, այլ արեամբ մկրտեցան: Յայտ է ահա, նոյնպէս եւ ամենայն ոք, զի թէպէտ մարմինն տխեղծ է, հոգին կատարեալ է, եւ ի յարութեանն կատարեալ առնու եւ զմարմինն, եւ թէպէտ ընդ կատարեալ մշակսն չփառաւորին, սակայն ընդ միջինսն պսակին՝ ըստ տեղոյ եւ փառաց պատրաստելոյ առ ի Հօրէ, որպէս տեսչութիւնն Աստուծոյ զիտէ, զի թէ ոչ զնոսա փառաց արժանաւորէր, եւ ոչ զսոսա այնպիսի մանկանց հաւասարեցուցանէր, որպէս ասէ.

Արդ՝ որ խոնարհեցուցանէ² զանձն իբրեւ զմանուկս զայս, նա՛ է մեծ յարքայութեան³ երկնից (ԺԸ 4):

Չանագանութիւն դնէ խոնարհութեան եւ խոնարհեցուցութեան⁴, քանզի ոչ մի եւ նոյն խոնարհ լինել եւ կամ յայլմէ խոնար-

¹ Սաղմ. ԵժԲ 1

² Գ խոնարհեցուցէ

³ Գ յարքայութեանն

⁴ Գ խոնարհեցութեան

հիլ. քանզի որ զինքն խոնարհեցուցանէ՝ կամաւորութեամբ է, այն-պիսին,- ասէ,- բարձրասցի եւ մեծ կոչեսցի, իսկ որ յայլմէ խոնարհի եւ տառապի կամ ի նախատանաց ուրուք, այտքիկ ո՛չ խոնարհութիւնք, այլ ի հարկէ հնազանդութիւնք, իսկ Տէր գլօժարութեամբն պահանջէ, որպէս Ինքն կամաւորութեամբ խոնարհեցաւ, վասն որոյ ասէր թէ՝ «Փոքրիկն մեծ է յարքայութեան երկ[նից]»:

Եւ որ ոք ընկալցի մանուկ մի այսպիսի յանուն Իմ, զԻ՛ս ընդունի (ԺԸ 5):

Ոչ միայն այսպիսի լինիցիք, առնուցուք վարձս մեծամեծս, այլեւ թէ զայլս զայսպիսիս պատուիցէք¹ վասն Իմ, եւ վասն նոցա պատուոյն զարքայութիւնն երկնից փոխարէն ընդունիցիք՝ ըստ այնմ թէ՝ «Որ արբուցէ բաժակ մի ջուր ցուրտ յանուն աշակերտի, ոչ կորուցէ զվարձս իւր» (հմմտ. Մատթ. Ժ 42): Իսկ «մանուկ» աստ զքամահեալն ի բազմաց ասէ, որ ընդունի «յանուն Իմ», այսինքն՝ վասն օրինաց Իմոց եւ կամ թէ վասն անուան Իմոյ ի վերայ նորա կոչելոյ, զի քրիստոնէայ ասի, «զԻ՛ս ընդունի»: Ո՛վ մարդասիրութեանս, զի զնոցա ընդունելութիւնն Ի՛ր համարի, որպէս ասէր թէ՝ «Չոր ինչ փոքրկանցս արարէք, Ի՛նձ արարէք» (հմմտ. Մատթ. ԻԵ 40): Եւ կամ այլ ազգ. զի որպէս Ինքն մանուկ խոնարհ կոչեցաւ, եւ ի Նմա լրումն աստուածութեանն բնակեաց, արդ՝ որ զնոյն լինելն խորհի, եւ նա՛ բոլորովին ընդունի որ երկնի եւ երկրի անտանելի է՝ ըստ այնմ. «Յո՞ հանգեայց, եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս» (Ես. Կ,2 2):

Եւ որ ոք զայթազդեցուցէ զմի ի փոքրկանցս յայցանէ յԻս հաւատացե-լոց, լաւ է նմա, թէ կախիցի երկան իշոյ զպարանոց² նորա, եւ ընկղմեսցի ի խորս ծովու (ԺԸ 6):

Չոր օրինակ, ասէ, որ պատուիցէ զայնպիսիսն վասն Իմ, մեծ առնուցու պատիւ, սոյնպէս եւ որ արհամարհիցէ, զանհնարին տանջանս տանջի: Իսկ զայթազդեցուցանելն լինի կամ բանի, կամ գործով, որպէս Պօղոս հրաժարեցուցանէ. «Թէ զայթազդեցուցեր զեղբայրն, ո՛չ եւս սիրով զնացեր» (հմմտ. Հռոմ. ԺԳ 13-15): Արդ՝ գործով է, որպէս ասէ դարձեալ. «Թէ զայթազդի եղբայրն իմ, ո՛չ կերայց միս յախտեան» (հմմտ. Ա Կոր. Ը 13), եւ այլ սոյնպիսիք: Իսկ բանին՝ երկակի է. կամ յորդորական բանի ի թակարդս մեղաց,

¹ Զ պատուեցէք

² Տ ընդ պարանոց] զպարանոց

իրր այն՝ «Եկ ընդ մեզ կցորդ լեր արեանն» (Առակ. Ա 11), եւ կամ զթշնամանս գայթազդութիւն կոչէ: Եւ դու մի՛ գարմանար ընդ այս, քանզի բազում անգամ կարճամիտք ի դոյզն ինչ արհամարհանաց գայթազդին, քանզի «փոքր» գտկարն ի հաւատս կոչէ եւ կամ որ փոքրկացոյց զինքն վասն արքայութեանն. վասն այսորիկ աստ, թէ անհնարինս տանջին: Եւ զի գերկանիցն օրինակս ի մէջ բերէ եւ զծովուն, ոչ եթէ զայն կրեն պատուհաս, այլ թէ՛ «լաւ էր նմա» աստ, իրր թէ այլ տանջանք չար կան եւ պահին առաւել քան զայս, թէպէտեւ այս չար թուի: Եւ զայս աստ, զի արմատաքի խլէ զհպարտութիւնն:

Վա՛յ աշխարհի գայթազդութեանց. հարկ է զալ գայթազդութեանց, բայց վա՛յ մարդոյն այնմիկ, յոյր ձեռն գայցէ գայթազդութիւն (ԺԸ 7):

Չեղուկս զայս կամ գայթազդեցուցացն աստ, որք աշխարհասէրք են եւ գայթազդութիւնս բազմաց դնեն, այս է՝ արգել եւ խափան ուղիղ ճանապարհին լինել: Արդ վայ աստ նոցա յիւրեանց գայթազդեցուցիչ գործոցն եւ ի բանիցն, քանզի նախ ասաց՝ լաւ էր, թէ երկան իշոյ կախեալ էր զպարանոցէ նորա, եւ այժմ ի վերայ բերէ թէ՛ ոչ այնու վճարի, այլ վայ կայ առաջի եւ անէծս՝ ըստ օձին օրինակի¹, որպէս զի այսու արթունս եղիցին եւ մի՛ գոք գայթազդեցուցեն, զի ոչ միայն դժուարի ընդ իրսն, այլեւ գողբսն յառաջագոյն ճատէ: Կամ թէ զնոսին իսկ զգայթազդեալսն ողբայ, զի ոչ միայն կործանիչքն տանջին, աստ, այլեւ կործանեալքն, քանզի ոչ միայն որ գործեն զչարն, ասաց առաքեալ, այլեւ «որք կամակից լինին գործելեացն»՝ տացեն վրէժս՝:

Բայց մի՛ ոք ասիցէ, թէ որովհետեւ հարկ է զալ գայթազդութեան, ընդէ՞ր տայցէ եղուկ՝ որում պարտ էր ձեռն տալ եւ օգնել, զի ա՛յս բժշկի է, իսկ այն՝ դոյզն ուրուք: Գիտասցէ, թէ որպէս հիւանդ, որ ի բազում դարմանս վայելեալ իցէ եւ ոչ կայ ի պատուէր բժշկին, զայնպիսին աշխարէ բժիշկն, թէ վայ եղունկ այս անուան, զի իւրով ծուլութեամբն եւս քան զեւս գայրացուցանէ զգաւս, քանզի եւ ա՛յս տեսակ է բժշկութեան, նոյնպէս եւ Տէր արար. զի բազումք լաւութեամբ ոչ խրատեցան, այլ յորժամ աշխարեցան, յայնժամ օգտեցան: Այլ զհարկ ասելն մի՛ ոք կարծիցէ, թէ որով-

¹ Ծննդ. Գ 14-15

² Յոռն. Ա 32

հետևի հարկ է գալն, զհա՞րդ փախիցուք. քանզի գալ գայթազդու-
թեանն հարկ է. ըստ Ղուկայ՝ «Ոչ է մարթ չգալ գայթազդութեանն»
(Ղուկ. ԺԷ 1)՝ վասն սխալոտ եւ նիւթական բնութեանս եւ սատանայի
նախանձարեկութեանն. այլ կորնչիլն ոչ է հարկ, քանզի ոչ եթէ
զանձնիշխան ազատութիւնն բառնայ եւ ընդ հարկաւ զվարս եւ
զգնացս լծէ, այլ որ ինչ լինելոցն է՝ յառաջագոյն ասէ: Արդ՝ ոչ եթէ
կանխաճառութիւն Նորա գայթազդութիւնս յառաջ ածիցէ, այլ զի
լինելոց էր, նախագոյն գուշակեաց, որպէս զի Նորա կանխագի-
տութիւնն ցուցցի ըստ առաքելոյ¹, եւ մարդիկ զգուշացեալ ապ-
րեսցին:

Եթէ ձեռն քո կամ ոտն գայթազդեցուցանէ զքեզ, հա՛տ գնա եւ ընկեա՛ ի
քէն: Լաւ իցէ² քեզ միաձեռանի կամ կադ մտանել ի կեանս, քան երկուս ձեռս եւ
երկուս ոտս ունել եւ անկանել ի հուրն յախտենից³ (ԺԸ 8):

Եւ եթէ ակն քո գայթազդեցուցանէ զքեզ, խլեա՛ զնա եւ ընկեա՛ ի քէն: Լաւ
իցէ քեզ⁴ միականի մտանել ի կեանս, քան երկուս աչս ունել եւ անկանել ի գե-
հեն⁵ հրոյն (ԺԸ 9):

Միանգամ ասացեալ է զայս եւ այժմ դարձեալ կրկնէ առ ի
հաստատութիւն, այլեւ ուսուցանէ, եթէ զհա՞րդ ապրիցին ի գայ-
թազդեցուցչացն: Բայց զիտելի է, զի ո՛չ գմարմնական անդամոց
ասէ, այլ վասն կարեւորաց եւ մերձատրաց, որ իբրեւ զանդամս
ունիցիմք, եւ չարեաց նոցա հաղորդիմք, քան զոր չիք ինչ վնասա-
կարագոյն: Չի զոր հարկն առնել ոչ կարէ զայս, բարեկամ բազում
անգամ առնէ զընդդիմակն, զոր կտրել հրամայէ, եթէ չարեաց լի-
նիցի գործօնեայ: Չի թէ յանդամս չխնայեմք, յորժամ զիտեմք թէ
անբժշկելի են, այլ հատանեմք, զի մի՛ զայլ մարմինն ապականի-
ցէ, զի՞նչ ասես զսիրելեաց, յորժամ փուտք իցեն, որպէս ասէր Պո-
ղոս. «Բարձէ՛ք զչարն» (Ա Կոր. Ե 13), զի մի՛ սակաւ խմորն զամենայն
զանգուածն խմորէ, եւ կամ յայս օրինակէ զչար վարս մարմնոյ,
զոր Պողոս «անդամ երկրատր» անուանէ⁶: Քանզի գործք մարդ-
կան կրկնակի են, զոր «ձեռք» կոչէ. ոմանք ըստ կամացն Աստու-
ծոյ, եւ կէսք՝ ընդդէմ Նորա, նոյնպէս եւ գնացքն: Արդ՝ որ զերկո-

¹ Եփես. Ա 9

² Զ է

³ Զ յախտենական

⁴ Զ > քեզ

⁵ Զ գեհեան

⁶ Կոր. Գ 5

սեան գործսն գործէ եւ գերկոսին զնացսն զնայ, որպէս զԱդամ, որ զչարին եւ զբարոյն ճաշակն էառ, ճշմարտապէս գեհենին է արժանաւոր, իսկ որ զմինն ի սոցանէ՝ զհաճոյն Աստուծոյ եւ զբարին, այնպիսին արքայութեանն է ժառանգաւոր: Իսկ յաղագս կադ եւ միականի ի կեանս մտանելոյն ասացեալ է, բայց ինձ թուի, թէ զայս զայթագղելոցն ասաց, զի մի՛ վասն սիրելեացն կամաց զայթագղեսցին, իսկ առաջիկայիս զգայթագղեցուցիչսն վարժէ:

Ջգոյ՛ջ լերուք, մի՛ արհամարհիցէք զմի ի փոքրկանցս յայսցանէ (ԺԸ 10):

Երբեմն սպառնալէօքն երկեցուցանէ, երբեմն երեսօքն պատկառեցուցանէ: Բայց «փոքունս» ո՛չ զհասակն ասիցէ, այլ զայնուսիկ, որ ի բազմաց փոքունք կարծին վասն աղքատութեանն եւ խոնարհութեանն եւ անձանօթ գոյոյ՛ ի մարդկանէ, եւ ծանուցեալք Աստուծոյ: Եւ թէ ծանուցեալք Աստուծոյ են, ապա ընդէ՞ր փոքունս ասէ. կամ ըստ կարծեաց բազմաց, որպէս ասացաք, կամ ըստ վարուցն, զի այնպէս ախորժեն կեալ, զի մեծամեծքն ոչ արհամարհին, այլ փոքունքն քամահին: Ջի՞նչ է արհամարհելն. նախատել, խոտել, ընդ խեղկատակութեամբ արկանել, վասն որոյ զգուշացուցանէ, զի մի՛ ոք սոգիտարար արհամարհիցէ եւ աստուածամարտ գտանիցի, որպէս հրէայքն՝ զՏէր մեր, եւ բռնաւորքն՝ զսուրբս ամենայն, ուստի եւ ինքեանք արհամարհեալք եղեն՝ ըստ այնմ. «Որ արհամարհէ զիւիք, արհամարհեսցի ի նմանէ» (Առակ. ԺԳ 13):

Ասե՛ն ձեզ, զի հրեշտակք նոցա յերկինս հանապազ տեսանեն զերեսս Հօր Իմոյ, որ յերկինս է:

Այսինքն՝ աղօթք նոցա, զի նախքան զզնալն նոցա առ Տէր՝ իբր կարապետ զաղօթս իւրեանց բանական պաշտամամբ առ Տէր առաքեն եւ Նմին խօսակից լինին: Իսկ հանապազ տեսանելն զերեսս Հօրն՝ այս զարիութիւն սրբոցն ցուցանէ, որ միշտ անխոնջ վաստակօք եւ յարակայ աղօթիցն ճգամբք առ Տէր վերակնեն՝ ըստ այնմ. «Ես արդարութեամբ երեւեցայց երեսաց Քոց» (Սաղմ. ԺԶ 15): Կամ տեսանել զերեսս ի տեսչութիւն խնամոցն Աստուծոյ՝ զվայելելն ասէ սրբոցն, իբր այն՝ «Տեսից զբարութիւն Երուսաղէմի» (հմմտ. Սաղմ. ԾԻԷ 5), այս է՝ ստացայց՝ ըստ այնմ. «Աչք Նորա ի

¹ Զ գոլ

տնանկա հային» (Մաղմ. Թ 29), եւ՝ «Վասն տառապանաց աղքատին յարեայց» (Մաղմ. ԺԱ 6), որպէս զի այսու խորշին գայթազդեցուցիչքն՝ զԱստուած զիտելով այցելու նոցին: Կամ երես Հօր՝ Որդի՝ ըստ Դաւթի. «Լուսով երեսաց Քոց տեսանենք զլոյս» (Մաղմ. ԼԵ 10), որում արժանատրքն միշտ տեսեանն Նորա հաղորդ են՝ ճաշակելով զմարմին եւ զարիւն Նորա՝ ըստ այնմ. «Ճաշակեցէք եւ տեսէք, զի քաղցր է Տէր» (Մաղմ. ԼԳ 9): Եւ յայսմ կարգի՝ երկինք եկեղեցի է, եւ հրեշտակք՝ քահանայքն՝ սպասատրք խորհրդոյ Նորա:

Դարձեալ յայտ առնէ, զի եւ հրեշտակք շրջին ընդ սուրբս աւնենայն՝ ըստ Պօղոսի թէ՝ «Պարտ է շուք դնել վասն հրեշտակաց» (հմմտ. Ա Կոր. ԺԱ 10), եւ թէ՝ «Բանակք հրեշտակաց Տեսոն շուրջ են զերկիւղածովք [Իւրովք]» (Մաղմ. ԼԳ 8), եւ՝ «Կացոյց սահմանս ազգաց ըստ թուոյ հրեշտակաց...» (հմմտ. Բ Օր. ԼԲ 8), որով յայտ առնէ զկարի համարձակութիւն եւ զբազում պատիւն սրբոցն: Բայց զերեսս Աստուծոյ, որ է բնութեանն տիպ, անհնար է տեսանել հրեշտակացն, որպէս ծածկել թեոց սերովբէիցն գուշակէին, այլ առնելն եւ զիտել զկամս Աստուծոյ՝ Աստուծոյ երեսացն տեսանել աւսի. կամ զփառացն նշանակէ: Իսկ հանապազն՝ զի առ Նա են միշտ՝ ըստ այնմ. «Դու հանապազ ընդ իս ես» (Գով. ԺԵ 31): Իմա եւ զայն, զի զփոքունս հրեշտակք պահպանեն, իսկ կատարեալքն ի Տեսոնէ պահպանին՝ ըստ Դաւթի. «Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ, զի է ընդ աջմէ իմմէ, զի մի՛ սասանեցայց» (Մաղմ. ԺԵ 8), եւ թէ՝ «Առ նմա եղէց ի՛ նեղութեան» (Մաղմ. Գ 15):

Ձի եկն Որդի մարդոյ կեցուցանել² զկորուսեալն (ԺԸ 11):

Նշանակէ այսու միտս զերագոյն քան զառաջինն, զի ոչ միայն հրեշտակք պահեն, այլեւ Հօր առաքելն զՈրդի եւ նմին իսկ զալուստն Որդոյ ի չարչարանս խաչի ոչ վասն այլ իրի է, այլ կեցուցանել զտկարն՝ ըստ առաքելոյ, զի ասէ. «Վասն որոյ Քրիստոսն մեռաւ» (Ա Կոր. Ը 11): Որով յայտ առնէ, թէ ոչ է բաւական փրկութիւն միայն զանձինս կեցուցանել, ապա թէ ոչ՝ եւ զինքն իսկ կորուսանիցէ, այլ վայել է եւ զանկեալսն կանգնել, քանզի դովաւ անձին փրկութիւնն արձանացի:

¹ Ձ եղիցի] եղէց ի

² Ձ խնդրել եւ կեցուցանել

Զիա՞րդ թուի ձեզ, եթե¹ լինիցի մարդոյ հարիւր ոչխար, եւ մոլորիցի մի ի նոցանէ, ո՞չ թողուցու զիննսուն եւ զինն ոչխարն ի լերինս եւ երթայցէ խնդրիցէ զմոլորեալն (ԺԸ 12):

Ընդեղ² օրինակասու ցուցանէ ոչ վայրասպար լինել զԻւրն գալուստ, այլ կարի յարմար եւ³ մոլորելոյն հարկի, որպէս զի յորդորէ զմեզ ըստ նմին օրինակի խնամ տանել տկար եղբարց, քանզի եւ զհովիւն ոչ կարէ խաղաղացուցանել⁴ բազմացն զիւտ վասն միոյն կորստեան: Այսպէս եւ դու մի՛ գոք արհամարհիցես, թէ այս անուն հողագործ է, կամ այն անուն՝ դարբին, այլ խոնարհութեամբ դարման տանել այնպիսեացն եւ առաւել փոյթ վասն մոլորելոցն ունել, քան փրկելոցն, քանզի փրկեալքն ամրացեալք են ի հաւատն իբր ի լերինս, իսկ մոլորեալն յածի եւ գազանակուր լինի, վասն այսորիկ պարտի խնդրել: Բայց ի հարիւր ոչխար առակեաց զբանականութեանս լրումն՝ զհրեշտակաց եւ զմարդկան, զի անմեղք եւ անմահ կենդանիք յԱստուծոյ ստեղծան, իսկ մինն մոլորեալ եղել յանմեղութենէն, միանգամայն եւ յանմահութենէն, որով համեմատ վերին բանականացն էր, եւ պակասեաց ի կատարեալ թոյն՝ ըստ Սողոմոնի թէ՛ «Պակասեալն ոչ կարէ ի թիւ անկանիլ» (Ժող. Ա 15), զի որպէս ոչխար ի գաւթէ պակասի, եւ Ադամ՝ ի դրախտին փառաց, վասն այնորիկ մի ասէ: Ուստի զթացեալ Արարիչն ի խնդիր ել՝ թողեալ անմոլար զինն դասս հրեշտակացն, զոր իննսուն եւ իննիւն նշանակեաց, ի լերինս, այսինքն՝ յերկինս, եւ եկն ի մահ վասն միոյ մոլորելոյն: Նաեւ այսու այլ իմն յայտ առնէ, թէ որպէս մին առ հարիւրն ունի զանազանութիւն, այսպէս մարդկային բնութիւնս առ հրեշտակացն բազմութիւն, քանզի հազարաց հազարք են եւ բիւրուց բիւրք են: Եւ որպէս ի դրամոցն թիւ մի ի տասանցն էր, որով զնոյն բանական պատկեր ունել ցուցանէր, այսպէս եւ յոչխարացն մի ոչխար էր, որ զնմանութիւն անմահութեանն յանձին բերէր:

Եւ եթէ լինիցի գտանել զնա, ամէ՛ն ասեմ ձեզ, զի ուրախ լինի ի վերայ նորա առաւել քան ի վերայ իննսուն եւ ինուոցն⁵, որ չիցեն մոլորեալ (ԺԸ 13):

¹ Զ թէ

² Զ ընտրել

³ Զ այլ

⁴ Զ խաղաղեցուցանել

⁵ ՏԶ յինուոցն

Տակաւին յօրինակն գայ. բայց դու ինձ զճնարտութիւնն իմա, քանզի զ«եթէ» բառդ ոչ եթէ ըստ կարծեացն դնէ, որ ճնարտապէսն գտաւ, այլ գայն յայտ առնէ, եթէ ոչ հարկիւ եւ բռնութեամբ է ազատութիւնն մեր, այլ կամօք եւ յօժարութեամբ, յորժամ Նա այց առնիցէ, եւ մեք ի գիտն եկեացուք: Քանզի լինի եւ այն, զի Նա խնդրիցէ, եւ մեք ապստամբեալ ի բաց հետտիմք, բայց յորժամ գտանիցինք, կարի իմն ուրախացուցանենք զՆա, որով յայտ է, թէ կորուսանելովն տրտմեցուցանենք: Արդ՝ եթէ ուրախանայ Տէր յարարածս Իւր ըստ երգոյն¹ այնքան, մինչ զի ի վերայ ուսոց բառնայ՝ ըստ Ղուկա՞, ապա դու ընդէ՞ր տրտմիցիս: Եւ թէ ընդէ՞ր ի վերայ գտանելոցն առաւել ուրախանայ, քան ի վերայ անմոլարիցն: Ըստ սովորութեան վարի, զի ուրախութիւնն զկնի տրտմութեանն է, զի տրտմեցան ընդ մեղս մարդկան, ուրախանան, յորժամ ապաշխարեն մարդիկ՝ ըստ այնմ. «Պարտ է ուրախանալ, զի եղբայրս այս մեռեալ էր եւ եկ[ե]աց, կորուսեալ էր եւ գտաւ» (Ղուկ. ԺԵ 32): Արդ՝ եթէ ի մեղս գոլով մեր՝ տրտմին նորա, իբր այն՝ «Զիջացայ, զի արարի զմարդն» (հմմտ. Ծննդ. 2 7), քանի՛ առաւել պարտ է տրտմութիւն զգենուլ մեզ ի մեղս գոլով եւ յապաշխարութիւնն փութալ:

Այսպէս ոչ են կամք առաջի Հօր Իմոյ, որ յերկինս է, եթէ կորիցէ մի ի փոքրկանցս յայցանէ (ԺԸ 14):

Կամ թէ՛ գայս առաջին կամք ասէ Հօր, զի ոչ կամի բնաւին զկորնչիլն՝ ըստ այնմ թէ՛ «Ոչ խնդայ Աստուած ի կորուստ կենդանեաց» (Իմաստ. Ա 13), եւ այս երկրորդ՝ ի մեղացն դառնալ եւ զՆա ուրախացուցանել: Կամ թէ՛ ոչ են կամք Հօր Իմոյ, թէ ոք ի մեղս լինիցի եւ նովաւ զկորուստն ժառանգէ, այլ զդառնալն եւ զփրկութիւնն՝ ըստ այնմ. «Ոչ կամիմ զմահ մեղատորին, այլ զդառնալ նորա ի չար ճանապարհէն եւ զկեալն» (Եզեկ. ԺԸ 32): Բայց այսու ամենայնիւ զնոսա, որք հանդերձեալ են յերկինս ելանել, մանուկ լինելովն՝ զամբարտաւանութիւնն առ ոտն հարկանել եւ առ զայթազդեցուցիչսն արթունս լինել:

Եթէ մեղիցէ քեզ եղբայր³ քո, երբ յանդիմանեա՛ զնա, յորժամ դու եւ նա միայն իցէք: Եթէ լուիցէ քեզ, շահեցար զեղբայրն քո (ԺԸ 15):

¹ Սաղմ. 69 31

² Ղուկ. ԺԵ 5

³ Զ եղբայրն

Քանզի կարի իսկ ձգեաց զբանն առ այնոսիկ, որ գայթազդեցուցանեն, եւ ամենայն ուստեք երկեցոյց, զի մի՛ այնու ինչ ծուլանայցեն գայթազդեալքն՝ յայն ապաստան լինելով, եւ յայլ եւս չարիս կործանեսցին եւ միշտ դարմանոց ակն ունիցին, եւ ի՛ յուրօրինս անկանիցին, ասաց զայս: Իսկ մեղանչել զգայթազդեցուցանելն ասէ եւ զվիրաւորելն զրկանօք կամ եպերանօք, քանզի ոչ եթէ եղբայրն, այլ թշնամին նովաւ ընդ քեզ մենամարտի, զոր զիտելով՝ «երթ յանդիմանեա»: Այսինքն՝ առանց ամբաստանութեան յիշելոյ նմա գյանցանսն եւ ասա նմա զոր ինչ կրեցերն ի նմանէ: Եւ ընդէ՞ր ոչ գտրտմեցուցիչն, այլ գտրտմեալն առ նա յդէ. քանզի վնասակարն չկարէ վաղվաղակի գալ ի հաւանութիւն, զի ակն կորեալ եւ զամօթի հարեալ է եւ թմրութեամբ՝ ցասմանն արբեալ, զնա, որ առողջն է, առ ախտացեալն առաքէ: Նաեւ այն՝ զի նմա առաւել անսայ որ մեղաւն, քան այլոյ, եւ երեսս առնէ նմա, զոր տրտմեցոյց, զի յորժամ տեսանէ զնա, որ վրէժ խնդրելոցն էր, նոյն պատճառ փրկութեան լինի, առաւել զայ ի հաւանութիւն:

Իսկ ասելն թէ՝ «յորժամ դու եւ նա միայն իցէք»՝ զի մի՛ բազմացն վկայութեամբ ծանրագոյն լիցի յանդիմանութիւնն, եւ եւս քան զեւս ի յանդոնութիւն կրթեսցի եւ ոչ գայցէ յուղղութիւն, կամ թէ յորժամ դու եւ նա միայն զիտիցէք զկոթիւն: Եւ այն զի՞նչ՝ «Եթէ լուիցէ քեզ, շահեցար զեղբայրն քո»: այսինքն՝ թէ ըստգտանիցէ զինքն եւ ունիցի յանձն զվնասն, թէ արդարեւ մեղաւ, շահեցար, ասէ, զնա: Յայտ առնէ այսու, թէ թշնամութիւնն երկոցունց վնաս էր, եւ այս՝ երկոցունց օգուտ, զի մինն զեղբայրն շահեցաւ, եւ միւսն զկեանսն եզիտ, զի ո՛չ ասաց՝ թէ լուաւ, շահեցաւ զանձն, այլ թէ՛ դո՛ւ զնա շահեցար, այսինքն՝ քո աշխատութեանն սերմն՝ պտուղ եւ շահ զնորա փրկութիւնն գործեաց:

Ապա թէ ո՛չ լուիցէ քեզ, առ ընդ քեզ մի եւս կամ երկուս, զի ի բերանոյ երկուց եւ յերից վկայից հաստատեսցի ամենայն բան (ԺԸ 16):

Տե՛ս զխնամակալութիւնն, զի ասէ, թէ որչափ նա անսաստ իցէ եւ ստահակ իցէ, ե՛ւս առաւել քեզ պարտ է ի բժշկութիւնն փութալ եւ ոչ ի ցասումն կամ ի բարկութիւն, քանզի եւ բժիշկ, յորժամ տեսանիցէ զախտ ինչ զայրացեալ, ոչ թողու եւ ի բաց զնայ, այլ յայնժամ առաւել իմն պատրաստի առ ի հնարս: Սոյնպէս եւ աստ

¹ Զ > ի

² Զ թմրութեան

հրամայե՛ք առնել, քանզի միայն, ասե՛ք, տկարագոյն երեսեցա՛ր, լիջի՛ր յաւելուածովն զօրագոյն, զի բաւական են երկոքին զյանցուցեալն յանդիմանել բանիւ եւ հաստատել ի բարիս: Կամ թե՛ երկուք ըստ Օրինացն բաւական վկայք են¹, զի դու զքոյն զամենայն արարեր եւ ոչ թողեր ինչ, որ քեզ պատշաճ էր առնել: Ինձ թուի հաւասար գոյ վարդապետութիւնս այս² մարգարէին իրաց. զի ասաց ցնա Աստուած թե՛ «Որդի՛ մարդոյ, դէտ կացուցի զքեզ բողոքել ժողովրդեանն, զի թէ լուիցեն, զանձն քո եւ զնոսա ապրեցուցեր, ապա թէ ոչ՝ անօրէնն յանօրէնութեան իւրում մեռցի, եւ դու զանձն քո փրկեցեր» (հմմտ. Եզեկ. 9. 17-19), բայց այսքան եւեթ ունի զանազանութիւն, զի անդ միանգամ եւ բազմաց հրամայեաց բողոքել, իսկ աստ երկուց³ եւ երիցս միայն⁴, որպէս ասե՛ք.

Իսկ եթէ եւ⁵ նոցա ոչ լուիցէ, ասասջի՛ր յեկեղեցուջ, ապա թէ եւ եկեղեցոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրեւ զհեթանոսն եւ զմաքսաւոր (ԺԸ 17):

Ոչ եթէ զտրտմեցելոյն օգուտն միայն խնդրէ, այլեւ զտրտմեցուցչին, ապա թէ ոչ՝ չհրամայէր եօթանասնիցս եօթն թողուլ ապաշխարողին եւ ոչ այնքան բժիշկս կացուցանել, որք բժշկիցեն զնա յախտէն, այլ յառաջնումն իսկ ի բաց թողոյր առանց ուղղութեան: Նա աւանիկ ո՛չ միանգամ, այլ երկուս եւ երիս վարդապետս հրամայե՛ կացուցանել, որպէս զի ի բազմաց երեսացն պատկառեսցի, եւ զոր ինչ յարբեցութեանն զործեաց, զայն ի զգաստութեանն ուղղեսցէ խմբակցութեամբ բազմացն: Ապա թէ եւ այնմ խեռիցէ, «եղիցի քեզ իբրեւ զհեթանոսն եւ զմաքսաւոր»: Այնուհետեւ չէ՛ հնար, ասե՛ք, բժշկութեան. եւ դու տես, զի ո՛չ ասե՛ք, թէ դո՛ւ արարեր զնա հեթանոս կամ մաքսաւոր, այլ թէ ինքն եղեւ յաչս քո: Եւ զի ամենայն ուրեք մեծամեծ չարեաց օրինակ զհեթանոսն⁶ եւ զմաքսաւորն բերէ ի մէջ, ո՛չ վայրապար, այլ զի յայտ առնէ, թէ անյոյսք են իբրեւ զնոսա եւ ըստգտեալք եւ դատապարտեալք, որով մխիթարէ զզրկեալն: Կամ թէ վասն հրաժեշտ տալոյն ասե՛ք զայս, թէ ի բաց կաց ի նմանէ իբր ի հեթանոսաց կամ ի մաքսաւորաց՝ ըստ առաքելոյ թե՛ «Յետ միանգամ եւ երկիցս

¹ Բ Օր. ԺԷ 6

² Զ զայս

³ Զ երկուս

⁴ Զ միոյն

⁵ Զ > եւ

⁶ Զ զհեթանոսն

խրատելոյ հրաժարեսցի՛ր» (Տիմ. Գ 10), զի մի՛ ընդ այնպիսին բնակելոյ առնուցուս զխեղդ ոգոյ նորա՝ ըստ Սողոմոնի¹ :

Ամէ՛ն ասեմ ձեզ, զի² զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս, եւ զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս (ԺԸ 18):

Չայս Պետրոսի ասաց նախ, եւ աստ երկրորդէ, զի մի՛ նմա միայն, այլեւ ամենեցուն զիշխանութիւնս զայս տուեալ է, եւ որք յաջորդ նոցա կարգեալք են յԵկեղեցի: Քանզի ասաց՝ թէ Եկեղեցւոյն ոչ լուիցէ, զպատիժս կապանաց հեղէք ի վերայ նորա, ոչ յԵկեղեցւոյն, այս է՝ յառաջնորդացն, այլ ի նմանէ, որ կոչեաց զնա ի հաշտութիւն, եւ եղիցի նորա կապանքն ոչ յերկրի միայն, այլեւ յերկինս, որպէս թէ անլոյծ լիցին: Ապա ուրեմն յանհնարին պատիժս պատժելոց են այնպիսիքն, թերեւս զի զգաստասցի այնու՝ զհտելով զինքն արտաքս անկեալ յԵկեղեցւոյ աստի եւ յարքայութենէն երկնից: Քանզի ոչ որ իշխէ արձակել զայլոյ կապեալ, մինչեւ զոչասցի եւ ի նմանէ արձակեսցի: Բայց զի՞նչ է կապանքն: Գիտելի է, զի մեղքն շղթայք իմն են կապանաց՝ ըստ մարգարէին. «Ի զործս ձեռաց իւրեանց կապեսցին մեղաւորք» (Սաղմ. Թ 17). արդ՝ որ ոչ կամի ի մեղացն որոշիլ, ի կապանս է, վասն այսորիկ ասաց կնքել վկայիք, զի լինիցի կապեալ եւ յերկինս: Այսպէս եւ որ թողու զմեղս, արձակեցաւ ի մեղացն, հրամայէ արձակս լինել նմա եւ յերկնից բարիս՝ ըստ այնմ, որ այլոր ասէր. «Թէ զուրուք թողուցուք, թողեալ լիցի, եւ թէ ունիցիք, կալեալ լիցի» (հմմտ. Յովհ. Ի 23), վասն զի կրկին ընկալան շնորհս ըստ Եղիսէի³՝ զպատժականն համայն եւ զշնորհականն:

Դարձեալ ասեմ ձեզ. եթէ երկու ի ձէնց միաբանիցեն յերկրի վասն ամենայն իրաց, զինչ եւ խնորհիցեն⁴, եղիցի նոցա ի Հօրէ Իմմէ, որ յերկինս է (ԺԸ 19):

«Դարձեալ» բառդ երկակի լսի. կամ թէ կրկնեալ ի վերայ առաջնոյն՝ առ ի հաստատութիւն ասացելոցն, եւ կամ թէ ըստ այլ իմն յեղանակի՝ «Ասեմ ձեզ. եթէ երկու ի ձէնց միաբանիցեն յերկրի»: Ասաց նախ թէ՝ «զոր կապէք յերկրի, կապեալ է յերկինս», այժմ զո՞յս ասէ երկու: Ոմանք զկազմ առաքիւնիսն ասեն, որ հա-

¹ Առակ. ԻԲ 24-25

² Զ > զի

³ ԴԹԱԳ. Բ 10

⁴ Տ խնորհեսցեն

ւատուլ եւ սիրուլ միաբանին ի յանցաւորին վրէժխնդրութիւն կապանօք կամ ի գղջացելոյն շնորհս արձականօք, եղիցի նոցա այն: Եւ կէսք գյանդիմանօղն եւ գյանդիմանեալն ասեն, զի թէ որ յանդիմանի, գղջասցի յոգի եւ եկեսցէ ըստ մտաց յանդիմանողին, գորինչ խնդրեսցեն թողութիւն վասն մեղանացն՝ տացի նոցա ի մարդասիրէն Աստուծոյ. ապա թէ ոչ լուիցէ՝ ոչ թողասցի, եւ այս մեծ յոյս փրկութեան է, զի գթնամութիւնն լուծանէ եւ առ միմեանս ժողովէ, եւ ոչ միայն ի տանջանացն զերծուցանէ, այլեւ պարգևօք լնու:

Բայց ունի տեղիդ վարանս տարակուսի, թէ զիս¹դ բազումք խնդրեցին, եւ նոքին սուրբք, եւ ոչ առին: Գիտելի է, զի բազում պատճառք գոն ի միջի՝ լսելութեան եւ անլսելութեան: Նախ՝ զի ոչ գոր կամիմքն՝ խնդրեմք՝ ըստ առաքելոյ թէ՝ «Չոր կամքն յաղօթս, որպէս արժան է, ոչ գիտեմք» (Հռոմ. Ը 26), որպէս զի բազում մտածութեամբ պարտիմք ըստ կամացն Աստուծոյ առնել զխնդրուածն, որպէս Տէր «Ո՛չ Իմ կամք,- ասէր,- այլ Քոյդ լիցի» (Գով. ԻԲ 42): Եւ երկրորդ՝ յերկարութիւն աղօթիցն՝ ըստ Տեառն. «Թէ ոչ տացէ վասն բարեկամութեանն, յարուցեալ տացէ վասն ժողովեանն» (Գով. ԺԱ 8), եւ թէ՝ «Ժտեա՛ ի Տեառնէ, եւ Նա տացէ քեզ՝ զխնդրուածս [սրտի քո]» (Մատթ. ԼԶ 4): Եւ երրորդ՝ ուղղութեան խնամամութիւն՝ ըստ առաքելոյ թէ՝ «Չսուրբ ձեռս համբառնայցէք ի վեր» (Կմմտ. Ա Տիմ. Բ 8), ապա թէ ոչ՝ «Դարձուցեալ զերեսս Իմ ի ձէնջ, զի ձեռք ձեր լի են արեամբ» (Կմմտ. Ես. Ա 15). եւ այս ոչ միայն սպանողացն եւ զրկողացն, այլեւ առաջնորդաց ոմանց, որք ոչ զգործ դիտի գործեն, արեան պարտական են բազմաց, զի որչափ արտաքոյ ապաշխարութեան են ի մեղս զառաձեալ, անընդունելի են աղօթք նոցա: Եւ չորրորդ՝ ոչ անարժան² իրս խնդրել կամ թշնամեաց կորուստ, որոց հրամայեցաւ աղօթս առնել, եւ կամ մարմնական փառս ի յոփութիւնս եւ այլ սոյնպիսիս, որպէս Դաւթի պատահեցաւ, զի շինել գտունն Աստուծոյ արգելաւ, թէպէտ ոչ վասն իր անարժանութեանն, այլ վասն խնդրոյն անպատշաճութեան³:

Եւ հինգերորդ՝ յաղագս որոյ աղօթեն՝ պարտին թողուլ զչարիս, ապա թէ հնազանդեալքն ի նոյն մեղս իցեն, ոչ լուիցէ, որպէս

¹ Զ > եւ Նա տացէ քեզ

² Զ արժան

³ Ա Մն. ԻԲ 8

եւ ոչ Երեմիայի՝ վասն խստութեան ժողովրդեանն: Եւ վեցերորդ՝ նախքան գրատաստան բարկութեանն Աստուծոյ վրէժխնդրութեանն՝ արժան է առնել զխնդրուածս եւ ոչ ի ժամանակի դատաստանի, որպէս յիմար կուսանքն, որոց ոչ լուաւ¹: Եւ եօթներորդ՝ զիտել զմատակարարութիւն իրին, եթէ է փորձութիւն, զի ի շահ անձանց ստացողաց տնտեսիցի, եւ ոչ խնդրել ազատութիւն, ապա թէ ոչ՝ ոչ լսիցէ, որպէս եւ ոչ Պողոսի տուաւ եւ Յորայ: Չի միոյն տուեալ խայթ մարմնոյն սատան՝ կռփել զնա, որ փառք էր նմին, զի զօրութիւնն Աստուծոյ ի տկարութեան նորին կատարէր², եւ միւսոյն առաքիւնութիւնն հրապարակագոյժ լինէր, եւ թշնամին խայտառակէր, եւ նոքա գայս ոչ զիտէին: Արդ՝ այսպիսեացս համբերութիւն պիտոյ է խնդրել եւ ոչ աղօթիւք ազատիլ, քանզի որ ասացելոցս յեղանակաւ մատչի ի խնդրուածս, հասանէ խնդրոյն՝ ի մարդասէր Տեառնէն պարգեւեալ, որպէս միաբանեցան Մոսէս եւ Ահարոն, Յեսու եւ Փենեհէս³, Սամուէլ եւ Դաւիթ, եւ երկու երկու աշակերտքն Տեառն, այլեւ Պետրոս եւ Յովհաննէս ի բժշկութիւն կաղին. զամենայն գոր ինչ խնդրեցին, կատարեցաւ ի ձեռս նոցա, որպէս ասէ թէ՝ «Եղիցի նոցա ի Հօրէ Իմմէ, որ յերկինս է»: Եցոյց այսու, թէ կարօղ է եւ Ինքն շնորհել, բայց կամի պանծալի զպատիւն ցուցանել:

Իսկ առ ի միտս՝ հոգի եւ մարմին, զի մարմին հնազանդի վեհին, եւ վեհն տիրեսցէ նուաստին. այս է միաբանութիւն: Այլեւ տեսականն եւ գործնականն, զի տեսանէ յաղագս գործելոյ եւ գործէ յաղագս ուսանելոյ, կամ առնելն եւ ուսուցանելն, կամ հաւատք եւ գործք, կամ աստուածսիրութիւն եւ մարդասիրութիւն: Դարձեալ՝ երկու Կտակարանք, որք միաբանեցան ի փրկութիւն մարդկան, որ եղև ի վերուստ:

Չի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն Իմ, անդ եմ Ես ի մէջ նոցա

(ԺԸ 20):

Տե՛ս ի պարկեշտութիւնն⁴. քանզի ասաց նախ՝ «Եթէ երկու միաբանիցին, եղիցի ի Հօրէ Իմմէ գոր ինչ եւ խնդրեսցեն», զի մի՛ զանազանութիւն իմասցիս, կնքեաց յաջորդիս թէ՝ «Ես եմ ի մէջ

¹ Մատթ. ԻԵ 1-13

² Բ Կոր. ԺԲ 7-9

³ ՏՁ Փենեհէս

⁴ ՏՁ պարկեշտութեանն

նոցա»։ Իսկ «ժողով» գառաջի միաբանությունն իմա եւ ոչ զ'ի տեղոջ հաւաքումն։ Դարձեալ՝ զխնամս Իւր յայտ առնէ, թէ այցելու է Քրիստոս հօտից Իւրոց, զի ոչ միայն ի ժողովս մեծագոյնս լինիցի, որ է Եկեղեցի մարմին Նորա եւ կատարեալ դրոշմ Քրիստոսի, այլ՝ թէ մի եւ կամ երկու իցեն ժողովեալ, է եւ առ նոսա, այսինքն՝ շնորհաց հովանի Նորա ի վերայ նոցա, որպէս զի մի՛ տրտմեսցին միանձունք, այլ այսու միսիթարեսցին։ Բայց զի՞նչ է յանուն Նորին ժողովելն. քանզի բազումք ժողովին ըստ այլեայլ պատճառաց. ոմանք յաւազակութիւն, ոմանք յարբեցութիւն եւ յայլս սոյնպիսիս, այլ Նա ոչ է ի միջի նոցա, քանզի ոչ է չարեաց պատճառ Աստուած, այլ բարեաց։ Այս է յանուն Նորին ժողովելն, որք ի բարիսն խորհին, քանզի բարի է Աստուած։ Եւ այլ ազգ. եթէ որ զԻս ի պատճառս ընկերին նախամեծար սիրիցէ, ընդ նմին լինիցիմ՝ ասէ. ոմն վասն զի սիրի՝ սիրէ, կամ օգնական եղել նմա՝ պատուէ, այս ոչ է վասն անուան Նորա, այլ որ զՆա սիրէ եւ պատուէ՝ զոր ինչ ընկերին առնիցէ՝ ըստ այնմ. «Որ արբուցէ բաժակ մի ջուր յանուն Իմ, թէ այս Քրիստոսի է, ոչ կորուցէ զվարձս իւր»

(*հմմտ. Մատթ. Ժ 42*):

Եւ դարձեալ՝ զի որք յանուն ուրուք ժողովին, պարտին զիտել եւ զմիտս ժողովողին, թէ յի՞նչ պէտս կոչեալ՝ են, եւ առ նա զինքեանս հաստատեն, որպէս զի զհաճոյս նորա առնելով՝ շնորհս ի նմանէ գտանիցեն։ Որպէս որք ի հունձս կոչեցին, արժան է ըստ այնմ զանձինս պատրաստել, որպէս զի վարձս եւ կերակուրս ի տանուտեստնէն ընդունիցին, նոյնպէս եւ որք յանուն Տեսուն ժողովին յաղօթս կամ ի քննութիւն բանի, պարտին արժանի զնալ կոչմանն, յոր կոչեցան, ամենայն հեզութեամբ եւ խոնարհութեամբ փութալ պահել զմիաբանութիւնն յօղիւ Հոգւոյն, մի մարմին եւ մի հոգի ի մի յոյս կոչմանն՝ ըստ Ինքեան ասելոյն. «Թէ սիրէք զԻս, զպատուիրանս Իմ պահեսցիք, եւ Ես եւ Հայր՝ եկեսցուք եւ օրեվանս առ նմա ար[ասցուք]» (*հմմտ. Յովի. ԺԳ 23*): Արդ՝ որպէս ի պատուիրանաց պահելոյն օրեվան լինի Քրիստոսի եւ Հօր Նորա, այսպէս յանուն Նորա ժողովեալքն ի կամս Նորա պատրաստեսցեն զանձինս, անդ է ի մէջ նոցա՝ հանդերձ Հարք եւ ամենասուրբ Հոգւով, որպէս ի լերինն Թաբոր՝³։ Չի մարգարէքն երկու եւ երեքին

¹ Զ ժողովեալ

² Զ այր Իմ

³ Մատթ. ԺԷ 1-8

առաքելալքն ըստ կամաց Նորին ժողովեալ՝ արտափայլեաց ի մէջ նոցա զաստուածութեանն փառս եւ մաքրեաց զնոսա զեղապանծ լուսոյն վայելչութեամբ, այլեւ Հօր ձայնիւ եւ Հոգւոյն հովանատրութեամբ: Այսպէս եւ¹ բազում սրբոց երեսեցաւ եւ լցոյց զնոսա անճառելի շնորհօք, զոր «մէջ»-ն նշանակէ, քանզի զօրէն սնձոյ կապեաց զնոսա առ Ինքն եւ առ միմեանս եւ ետ նոցա զօրութիւն կենդանութեան, որպէս սիրտ մարմնոյ, որ միջին է կենդանոյ: Ապա թէ ոչ արժանի կոչմանն եւ ոչ առ կամս Նորա ժողովեալք, թէպէտ ի միասին ժողովեալ՝ յանուն Տեառն կարծեսցեն, լսեն. «Զի՞ ասէք ցԻս՝ Տէ՛ր, Տէ՛ր, եւ զոր ասեսն՝ ոչ առնէք» (Ղուկ. 2:46):

Իսկ առ ի միտս՝ կամս այս բաղիիսական է կամ տարալուծական: Տարալուծական՝ ըստ այսմ՝ երկու Հին եւ Նոր Կտակարանք, եւ երեք՝ հոգի եւ միտք եւ մարմին, յորժամ միաբանին, գոցեն զԱստուած: Դարձեալ՝ երկու՝ հոգի եւ մարմին, իսկ² երեք՝ երեք հասակք եւ երեք ժամանակք, յորում զուգեալ առ միմեանս՝ գտանէ զԱստուած: Իսկ բաղիիսական այսպէս. երկու եւ երեք հինգ լինի՝ նշանակ զոլ հինգ զգայութեանցս, յորոց երկուքն իմաստասիրականք են, եւ երեքն ախնթորագոյնք են. յորժամ ժողով սոցա յարտաքին ճապաղմանց համեստութեամբ լինիցի, զգայութիւն է աստուածային՝ ըստ առակացն³, եւ Տերամբ վարիլ ըստ Պօղոսի թէ՛ «Զփորձ խնդրէք զԲրիստոսի, որ ինեւս ընդ ձեզ խօսի» (Բ Կոր. ԺԳ 3), եւ՝ «Թէ հանցես զպատուականն յանարգէն, բերան Տեառն կոչեսցիս» (հմմտ. երեսն. ԺԵ 19): Դարձեալ՝ հինգ տէրմոնական տօնքն, որք ժողովինք յանուն Նորա ի պատիւ Նմին. երկու՝ Ծնունդն եւ Սկրտութիւնն, եւ երեք՝ Չարչարանքն հանդերձ Թաղմամբն եւ Յարութիւնն եւ Համբարձումն. արդ՝ որ յերկուս յայս եւ յերիս զոր ասացիս⁴՝ համախմբի տօնակցութեամբ, Ինքն ճշմարտապէս է ի միջի նոցա, որպէս թէ նոր լինի ընդ մեզ ամացն շրջագայութեամբ մինչ ի կատարած աշխարհի՝ ըստ Ինքեան ասիցն⁵:

Յայնժամ մատեաւ առ Նա Պետրոս եւ ասէ. «Տէ՛ր, քանի՞ցս անգամ, թէ մեղիցէ ինձ եղբայրն ին, եւ թողից նմա. մինչեւ ցեօ՞թն անգամ» (ԺԸ 21):

¹ Զ ի

² Տ եւ իսկ

³ Առակ. Լ

⁴ ՏԶ ասաց ցիս] ասացիս

⁵ Մատթ. ԻԸ 20

Ասէ ցնա Յիսուս. «Ո՛չ ասեմք քեզ, թէ մինչեւ յեօթն անգամ, այլ մինչեւ յեօթանասներկին եօթն» (ԺԸ 22)¹:

Լուսաւ ի Տեառնէ. «Թէ մեղիցէ քեզ եղբայրն, երկիցս եւ երիցս յանդիմանեա, եւ թէ ոչ լուիցէ քեզ, եղիցի իբրեւ զհեթանոսն եւ զմաքսաւոր», եւ զի զայն ուսաւ, մատչի եւ զայս ուսանել, եթէ որ միշտ յանդիմանի եւ միշտ զղջանայ, քանի՞ցս անգամ թողից նմա, բաւական է եօթնիցս: Ընդէ՞ր «եօթն» ասաց. քանզի ի վեց ստեղծեալ զաշխարհ եւ յեօթն հանգեաւ², որ չափ է կենցաղոյս, զի եօթամբ³ շրջի, եւ եօթն զգայութեամբ մեղանչեմք, կամեցաւ ուսանել Պետրոս, թէ մեղիցէ եղբայրն ինձ զամենայն աւուրս կենաց իւրոց, որ է [յ]եօթներորդումս, եւ դարձեալ ապաշխարիցէ, թողի՞ց նմա: Առ որս ասէ Տէր. ո՛չ միայն ի ներկայ յախտենիս թողցես, այլեւ ի հանդերձելումն, որ երկայնագոյն է քան զայս, զոր «եօթանասներկին եօթն» ասէ:

Եւ այլ ազգ. զի զիտէր, թէ Օրէնքն թողուն մարդկան զեօթանեցունց գործեցեալ յանցանս, քանզի զյարութիւն ոչ զիտէր նախքան զգայութեան Տեառն, որ ունէր զյարութեանն օր, վասն այսորիկ Դաւիթ եօթն անգամ օրհնէր⁴, քանզի ընդ Օրինացն ծառայութեամբ կայր, որպէս ասէր. «Որդի աղախնոյ Քո եմ» (հմմտ. Սաղմ. ԾԺԵ 16): Օրինացն եւ ո՛չ վերինն Երուսաղէմի ծնելոցն ազատին: Արդ՝ հարցանէ, թէ թողուլ զյանցանս ընկերացն՝ որպէս Օրէնքն հրամայեն, թէ՞ առաւել եւս ինչ, իսկ Տէրն բազմապատիկ առնէր զշնորհսն քան զՕրէնսն, զի ուսանիցիս, թէ ո՛րչափ զանազանութիւն է ի մէջ շնորհացն եւ Օրինացն: Եւ դարձեալ՝ Պետրոս հայեցաւ ի սպանութեան պատուհասն, որ ծանրագոյն եւ դժնդակ էր իբր Կայենին, զի եօթն վրէժս խնդրեցաւ, կամէր ուսանել զխորհուրդ Եկեղեցոյ, թէ հրամայիցէ՞ Տէր ի մկրտութեանն թողուլ զսպանութեանն պատուհաս: Իսկ Տէր զի՞նչ առնէ. ո՛չ զԿայենին եօթնիցն ի մկրտութեանն, ասէ, թողցես, այլեւ զԼամեքին եօթանասներկին եօթն⁵, որով եցոյց, թէ եկեալ բարձօղն մեղաց, զի զԿայենին՝ ջուրն երարձ, իսկ զԼամեքայն՝ Ինքն՝ ըստ Գուկայ ազգա-

¹ Գ > Ասէ ցնա Յիսուս... եօթն (ԺԸ 22)

² Ծննդ. Բ 2

³ ՏԳ եօթեամբ

⁴ Սաղմ. ԾԺԸ 164

⁵ Ծննդ. Դ 15, 24

բանութեանն¹, վասն որոյ եւ զմեզ հաւասար արար Ինքեան մարդասիրութեանն:

Բայց ոչ վայրապար եղաւ եւ այն՝ «թէ մեղիցէ ինձ». քանզի յԱստուած մեղանչել անհնարին չարիք են՝ ըստ այնմ թէ՛ «Մարդ յորժամ մարդոյ մեղանչէ, աղաչեցեն զԱստուած, եւ հաշտեցի, իսկ յորժամ յԱստուած մեղանչիցեն, զո՞ աղաչիցեն», քանզի յԱստուած մեղանչելն հպարտութեան է ախտ, որպէս բանասարկուն եւ հերձուածօղքն ունէին եւ անդարձ ի նոյն մնացին: Եւ զի զայս ուսաւ անթողի լինել՝ ըստ այնմ թէ՛ «Որ զՀոգին Սուրբ հայիռյէ, մի՛ թողցի նմա, մի՛ յայսմ աշխարհի եւ մի՛ ի հանդերձելումն» (հմմտ. Մատթ. ԺԲ 32), վասն այսորիկ զառ միմեանս սխալանս ի մէջ բերէ եւ իբր խորխտանօք կարծէր մեծ ինչ ասել, թէ՛ «մինչեւ ցեօ՞քն անգամ», իսկ Նա ասէ՛ ոչ մինչեւ յեօթն, այլ մինչեւ յեօթանասնեկին եօթն: Չի դու իբր զաղքատ հայցէիր կատարած թողութեան², իսկ Ես իբրեւ զԱստուած մեծապարզեւ շնորհեմ եւ անթիւ զշնորհս ցուցանեմ: Քանզի ոչ թիւ եր, այլ զանչափն այսու յայտնեաց. թէպէտ յեօթանցն ոչ ի բաց եկաց, այլ զնոյն բազմապատկեաց, քանզի որպէս բիրն՝ զբազումն, այսպէս եւ եօթն ըստ երբայեցուցն³ զյոյնն ճանակէ, որ անհնար է յանցանել ումեք ի միում ատոր զայս ամենայն: Հանգոյն այսմ գրէ եւ Պօղոս թէ՛ «Արեգակն ի վերայ բարկութեան ձերոյ մի՛ մտցէ» (Եփես. Դ 26), զի բարկութիւն բարեկամացն համայն եւ թշնամեացն վնասակար է, եւ ի նմանէ վառեալ բորբոքի ամենայն չարիք, յաղազս որոյ դարձցուք ի բարկութենէ անտի, զի մի՛ կնքեցէ ի վերայ մեր վկայն ի կատարել անդ զօրն, եւ մատնիմք խաւարին: Արդ՝ վասն այսորիկ ասաց՝ ոչ մինչեւ յեօթն, այլ մինչեւ յեօթանասնեկին եօթն, եւ զի մի՛ ծանր թուեցի, առակ յաւելու, թէ պարտ է թողուլ զյանցանս միմեանց:

Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ կամեցաւ համար առնուլ ի մէջ ծառայից իւրոց (ԺԸ 23):

Բաղդատութեամբս ուսուցանէ, թէ իւրաքանչիւր ոք հանդերձեալ է հաշիւ տալ զորձոց իւրոց, մասնաւոր՝ յայսմ աշխարհի, եւ ընդհանուր՝ յորժամ բեն դնի եւ դատաստան կազմի: Եւ երկրորդ՝ յիշեցուցանէ, թէ ոչ միայն դատաւոր է, այլեւ ստեղծող՝ որ իբր

¹ Ղուկ. Գ 36

² Թողութեանն

³ Երբայեցուցն

զծառայս ստացաւ զսոսա արարչութեամբ՝ ըստ մարգարէին թէ՝ «Ամենայն¹ ծառայք Քո են» (Սաղմ. ԵԺԸ 91), եւ սոքա զբիր երախտիսն առեալ՝ ապստամբեցին, ուստի եւ ի համար կոչին՝ ըստ տիրական իշխանութեան դատաստանին: Եւ երրորդ՝ ոչ վայրապար թագաւորի նմանեցուցանէ զարքայութիւնն երկնից, այլ զի ցուցցէ, թէ թագաւոր ստեղծաւ մարդն ի պատկեր Նորին, եւ թէպէտ յանցեաւ, սակայն նոյն ցանկութեամբն վառեալ՝ թագ եղին ոմանք եւ տիրեցին բազմաց: Եւ չորրորդ՝ զգօրութիւն Իւր յայտ առնէ, թէ յորում ժամանակի կամի, կարօղ է քննութիւն պահանջել՝ թէ՛ յայսմ կենցաղի, թէ՛ ի հանդերձեալն:

Եւ իբրեւ սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտապան մի բիր քանքառոյ (ԺԸ 24):

Տաղանդն «քանքար» ասի՝ ըստ երրայեցոցն, որ է հարիր եւ քսան եւ չորս լիտր եւ ըստ կշռոյ՝ ինն հազար դահեկան: Արդ՝ ասէ. «Մատուցաւ առ նա պարտապան մի». ուստի՞ յայտ է. ի հրեշտակաց, որ միջնորդ եւ վկայք են գործոց մարդկան, որպէս բարեաց, նոյնպէս եւ չարեաց: Կամ ի գործոց իւրոց ցուցաւ, քանզի քանքարն առ բարիսն բարի է եւ առ չարսն՝ չար²՝ ըստ ծանրութեան կշռոյ կապարի, որպէս ետեսն Չաքարիաս³, երգէ եւ Դաւիթ թէ՝ «Անօրէնութիւնք իմ... որպէս բռնն ծանր ծանրացան ի վերայ իմ» (Սաղմ. ԼԷ 5): Քանզի որպէս հարիրն, այսպէս եւ բիրն զկատարելութիւն մեղացն նշանակէ: Բայց տեսցուք եւ զպարտսն, քանզի փոխատու Աստուած է, որ ի պատկեր անապականութեան Իւրոյ գոյացոյց զմարդն եւ զթագաւորութիւնն Իւր իբր զկնիք եղ ստեղծուածին, եւ զԻւր⁴ բարութեանն սերմանս, առ նմին եւ զգօրութիւն գործոյն, զոր քանքարն նշանակէ, յաւել յայս եւ զայլ եւս զերախտիսն, զի զամենայն երեւելիս վասն մեր ստեղծ՝ զերկին, զերկիր, զերկրային, զծովային, զօդային, զլուսաւորս, զդրախտն եւ զայլ եւս բարիս, զոր Օրինօք եւ նախ քան զՕրէնսն շնորհեաց⁵: Յետ այսր եւ զՈրդին միածինն ետ, որով որդիս արար վերստին ծննդեամբն, զՀոգին հեղլով՝ զմեղս շնորհեաց եւ բիր բարութիւնս

¹ Տ ամենեքեան

² Չ չարքն՝ չարիք] չարսն՝ չար

³ Չաք. Ե 7-8

⁴ Չ բիր

⁵ Չ շնորհաց

տալ խոստացաւ, յաղագս որոյ պարտ էր վասն Նորա զօրհանապագ մեռանել, իսկ Նա ո՛չ զայս, այլ գոհորինն պահանջեաց, զանոխակայութիւնն ասեմ: Այլ մեք ոչ միայն զայս ոչ առնենք, այլև յաւելումք մեղս ի վերայ մեղաց, զի յորժամ մարդ տեսանենք, ցածնումք ի մեղաց, իսկ Աստուած տեսանէ միշտ, եւ մեք ոչ դադարենք, եւ զի տակաւին վայելենք ի բարիսն, որով առաւել սաստկանան մեղք եւ ծանրանան պարտք: Ահա այսոքիկ են քանքար պարտուցն:

Իբրեւ ոչ ունէր հատուցանել, հրամայեաց զնա վաճառել տէրն նորա եւ զկին նորա, եւ գորդիս¹ եւ զամենայն, որ զինչ եւ ունիցի, եւ հատուցանել (ԺԸ 25):

Կամ ըստ հաւատոցն գործ ցուցանել ոչ ունէր, կամ զբոլոր գոյս տալ ըստ իմաստուն վաճառականիմ² եւ զԱրարիչն ճանաչել, զոր Տէր կամէր՝ ո՛չ առնէր: Եւ այլ ազգ. հրամայելն վաճառել ո՛չ յանագորոյն եւ յանողորմ մտաց է, օն անոր ի բաց տար, այլ զարհուրեցուցանէ սպառնալեօք, զի յաղաչանս ածիցէ եւ զԻւր մարդասիրութիւնն ցուցանէ, զի թէ զայն կամէր, յորժամ աղաչեացն, չանսայր եւ ո՛չ զայնքան պարտսն շնորհէր: Իսկ թէ որ աւսիցէ. ընդէ՞ր ոչ յառաջ քան զհամարսն եթող նմա զպարտսն. ասասցուք՝ ցուցանել կամեցաւ, թէ յորչափ պարտուց արար զնա ազատ: Բայց զի՞նչ վաճառելն իցէ. ինձ թոի՞ բառնալ ի կենաց հրամայէ զկին եւ գորդիս եւ ի պէսպէս փորձութիւնս եւ յաղատութիւնս ձգել, որպէս բազմաց պատահէ ըստ թզենոյն առակի³, քանզի այս է հատուցումն մեղաց, որ ասէ մարգարէն թէ՝ «Ընկալաք ի ձեռանէ Տեառն զհատուցումն» (Խմբո. Ես. Խ 2), զի թերեւս զգաստասցի, որպէս եղեւն, քանզի յաղաչանս եկն:

Եւ անկեալ ծառայն երկիր պագանէր նմա եւ ասէր. «Երկայնամիտ լերաւ իս, եւ զամենայն հատուցից քեզ» (ԺԸ 26):

Թուի այսու ի հաւատս գոլ նշանակէ, եւ գործոց մաքրութիւն ստանալ մարթեր ի ձեռն երկայնամտութեանն՝ ըստ մշակին օրինի, քանզի որպէս այլք այլոց, այսպէս եւ իւրաքանչիւր որ անձին իւրոյ մշակ է, զոր աղաչանօք ի հաւանութիւն ածէ: Քանզի բնատ-

¹ Զ գորդիս նորա

² Սատք. ԺԳ 45-46

³ Ղուկ. ԺԳ 6-9

րեալ է այս՝ ի նեղութեան յիշել զԱստուած եւ ներումն յերկայնմտութենէ՝ Նորա խնդրել, որոյ տիպ՝ բիւր քանքարոյ պարտականիս՝ հեթանոսք եղեն, թէ կամիս ընդարձակութիւն տալ բանիս:

Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա եւ զփոխն¹ եթող նմա (ԺԸ 27):

Ծառայն մի ինչ խնդրեաց՝ երկայնմտութիւն, իսկ նա երկու մեծ իմն շնորհէ. մարդասիրութեամբ զպարտսն թողու եւ ի կապանաց արձակէ: Եւ զայս յառաջնումն կամէր, բայց զի մի՛ Իւր միայն լինիցի ձիրն, այլ զի եւ նա եւս նպաստ լիցի աղաչանօք եւ մի՛ առանց պսակելոյ զնասցէ, թէպէտ Իւր էր ամենայն: Յայտ ի զթութենէն է, քանզի այսպիսի է մարդասիրութիւն Նորա. ի միոյ ձայնէ թախանձանաց բազում անգամ հրաժարէ ի տանջանաց, որպէս պոռնկին եւ մաքսաւորին եւ աւագակին եւ այլոց բազմաց, յորմէ եւ մեք վարժիմք, զի թէպէտ եօթանասուն անգամ թողուցումք, իբր զկաթ մի ջրոյ առ ծով մի մեծ հաշուիցիմք՝ մերձ դնելով զգթութիւն Նորա:

Եւ ելեալ ծառայն՝ եգիտ զմի ի ծառայակցաց իւրոց, որ պարտ էր նմա հարիւր դահեկան, եւ կալեալ զնա՝ խեղդէր եւ ասէր. «Հատո՛ ինձ գոր պարտիս» (ԺԸ 28):

Ո՛չ յետ բազում ժամանակի, այլ անդէն մինչդեռ զերախտիսն ի ձեռին ունէր, ի չարիս վարէր պարգեւան, քանզի եգիտ, ասէ, զմի ի ծառայակցացն եւ խեղդէր, զի ո՛չ զբանսն յիշէր, որով ինքն ապրեցաւ, եւ ո՛չ զնաւահանգիստն, որով փրկեցաւ: Այլ² զայն ամենայն խստութեամբ³ եւ ազահութեամբ⁴ եւ ռիսակալութեամբ⁵ սրտին մոռացեալ՝ քան զգազանս վայրենագոյն լեալ՝ խեղդէր զծառայակիցն⁶ յաղազս հարիւր դահեկանի, այսինքն՝ վասն փոքունց սխալանաց միմեանց, որ յաչս մարդկան մեծագոյն թուի ըստ հարիւրին: Չի կամ դժբումն ընչից է, կամ բամբասանք լեզուի, կամ հարուած ձեռին եւ այլ սոյնպիսիք, գոր ոչ կամիմք նե-

¹ Զ զփողն

² Տ > այլ

³ Զ խստութեան

⁴ Զ ազահութեան

⁵ Զ ռիսակալութեան

⁶ Զ ծառայակիցսն

րել միմեանց՝ ըստ առաքելոյ¹, այլ ծանրացուցանենք զվիշտն՝ չար փոխանակ չարի չափելով:

Արդ՝ անկեալ ծառայակցին առ ոտս նորա՝ աղաչէր զնա եւ ասէր. «Երկայ-
նամի՛ն լեր առ իս, եւ հատուցից քեզ» (ԺԸ 29):

Եւ նա ոչ կամէր, այլ չոգաւ արկ զնա ի բանդ, մինչեւ հատուցէ զպարտսն
(ԺԸ 30):

Չոր ինչ ինքն տեսոն արար, ի ծառայէն նմին պատահեցաւ եղեալ, բայց նա ոչ զգաստացաւ, եւ այն, զի յոյովս ունէր զանազանութիւն, զի անդ գտէր աղաչէր եւ աստ առ ծառայակիցն մաղթէր: Ինքն ի տեսնէ մարդասիրութիւն գտեալ եւ առ ընկերն խստութիւն ցուցեալ, նորայն բիւր տաղանդ եւ սորայն հարիւր դահեկան, եւ սա ժամանակ միայն խնդրէր, իսկ նա զկատարեալ թողութիւնն առնոյր, վասն որոյ արժանի է գանի, զի զոր ետեսն՝ չվարդապետեցաւ, եւ զոր ոչ ետես՝ արար, որպէս ասէ. «Չոգաւ,- ասէ,- արկ զնա ի բանդ»: Ինձ թուի՝ զկապանաց եւ զբանադրանաց որոշումն նշանակէ, որ վասն սակաւ յանցանաց եղբարց՝ զանճառելի նզովս արտաքս ժայթքեն անդուռն բերանով անգուրթ ի մարդկանէ, եւ բազումք այն են, որ նովիմք կապանօք վախճանին եւ ոչ առնեն թողութիւն:

Իբրեւ տեսին ծառայակիցքն նորա որ ինչ եղեւն, տրամեցան յոյժ եւ եկեալ ցուցին տեսոն իւրեանց զամենայն, որ ինչ եղեւն (ԺԸ 31):

Մարդկան անգամ չէին հաճոյ իրքն, թող թէ Աստուծոյ, քանզի վշտակից լինին այնպիսեացն արք չափաւորք եւ բողոքեն առ Աստուած, կամ վասն սակաւ պարտուցն, զորս ոչ շնորհեն, այլ խեղդեն, կամ վասն նզովիցն, որպէս ասացաւ: Դարձեալ՝ թէ որ զհրեշտակս ասիցէ ծառայակից մեզ, ո՛չ իւրք ի ճշմարտութենէն սխալէ, քանզի հոգիք են հարկաւորք՝ առաքեալք ի սպասաւորութիւն՝ ըստ առաքելոյ², եւ ընդ այսպիսի իրս մարդկան տրտմին՝ որք ի դարձն եւ ի փրկութիւնն ուրախանան եւ ցուցանեն Տեսոն իւրեանց զեղեալն՝ ըստ Կուռնելեայ³ իրացն⁴: Ոչ թէ Աստուած ոչ զհտէ, քան ի իցի, այլ զի ձեռով բանիս ի ձեռն նոցա պաշտպանութեան զստու-

¹ Կող. Գ 13

² Եբր. Ա 14

³ Կուռնիելի

⁴ Գործք Ժ

գոյթին իրացն կամի նշանակել եւ սոցին վկայութեամբ հաստատուն ցուցանէ զեղեալն, քանզի նոցին միջնորդութեամբ՝ խորհրդոց եւ բանից եւ գործոց ամենայնի քննութիւն լինի:

Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր՝ եւ ասէ. «Ծառայ չար, զամենայն պարտսն թողի քեզ, վասն զի աղաչեցեր զիս (ԺԸ 32):

Իսկ արդ ո՞չ էր պարտ եւ քե՛զ ողորմել ծառայակցին քում, որպէս եւ ես քեզ ողորմեցայ» (ԺԸ 33):

Յորժամ վկայիքն կնքեցաւ, յայնժամ կոչեաց՝ առ ի վարդապետութիւն մեզ: Բայց կոչելն կամ Գրոց դաստիարակութիւնն է, որով զամենեսեան առ ճշմարտութիւնն կոչէ եւ յԱստուծոյ հաճոյութիւնն, կամ օրհասական մահն, որով ի կենացս արտահանէ՝ ըստ երգոյն՝ «Դարձ, անձն իմ, ի հանգիստ քո, զի Տէր կոչեաց զքեզ» (Խննտ. Սաղմ. ԾԺԳ 7): Այլ դու տես դարձեալ զհեզութիւնն, զի թէպէտ կոչեաց, ո՛չ ըստ՝ իշխանութեանն դատ տայ, այլ իրաւունս դնէ, թէպէտ հանելոց էր զպարգեւն, մանաւանդ թէ ո՛չ Նա իցէ, որ հանիցէ, այլ որ առն՝ անդրէն դարձուցանէ: Դարձեալ՝ կոչեաց ո՛չ ի հարցումն, այլ ի գանս եւ ի ձաղանս, որպէս ասէ. «Ծառայ չար»²: Յորժամ զԻւր պարտսն պահանջէր՝ զքիւր քանքարն, ո՛չ այսպիսի անուամբ կոչեաց, իսկ յորժամ զընկերն տազնապեաց, այսպիսի անուամբ անուանէ, քանզի վասն մեր վրէժխնդիր լինի եւ զմերն զամենայն Իւր համարի, որպէս զբարիսն, այսպէս եւ զչարիսն: «Ծառայ չար»՝ ո՛չ բնութեամբ, այլ յօժարութեամբ. յայտ յաջորդէս է, զի զայնքան պարտսն թողի քեզ, ասէ, եւ դու ոչ կամեցար զսակաւն շնորհել, եւ այն՝ ծառայակցին, ապա ուրեմն յիրաւի ասաց այլուր թէ՝ «Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն» (Մատթ. Ե 7):

Եւ քարկացեալ տէրն նորա՝ մատնեաց զնա դահճաց, մինչէս հատուցէ զամենայն զպարտսն (ԺԸ 34):

Յայսմանէ ուսանիմք, թէ շնորհ եւ ողորմութիւն միանգամ է, իսկ յետ այնորիկ ի նոյն չարիս գտեալ՝ նախանձ հրոյն է որ ուտէ զհակառակորդն՝ ըստ սրբոյն Յովհաննու թէ՝ «Գիտացեալ զՆա, ի Նմանէ ողորմութիւն գտեալ՝ նոյնպէս վարիք, եւ զառաջինն ես

¹ S > ըստ

² Q չար, ասէ

համարեցի ձեզ, եւ ոչ ընկալջիք զողորմութիւն ի Նմանէ»¹: Վասն որոյ յետ գթութեանն ետես զնա յանգթութիւն վարակեալ, բարկացաւ նմին՝ ոչ ըստ բնութեան, որ անախտանալին է, այլ ըստ տպաւորութեան ձեւանայ, որպէս զի զանձանց մերոց յանցանս ծանիցուք, թէ ո՞րքան ծանրագոյնք են, մինչ զի զԱնբարկանալին ի բարկութիւն շարժէ:

«Մատնեաց,- ասէ,- զնա՞ դահճաց», այսինքն՝ սպասաւոր հրեշտակաց, որք «հնձօղք» անուանեցան եւ չար գործոց մարդկան դատիչ եւ կշտամբիչ, կամ բանսարկուին կամաց, որ ի սկզբանէ մարդասպանն է³: Նոցին բարկութեան տանջանացն եւ զսա մատնեալ հաւասարեաց՝ ըստ այնմ. «Երթայք ի հուրն, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա» (հմմտ. Մատթ. ԻԵ 41), զի երախտեօքն չեղել պիտանի, զէք տանջանօքն զգաստացի: «Մինչեւ հատուցէ,- ասէ,- զամենայն զպարտսն»: «Մինչեւ»-դ⁴ ոչ ժամանակական է, այլ յաւիտենական, իբր այն՝ «Ոչ ելցէ անտի, մինչեւ հատուցանիցէ զյետին բնիոնն» (հմմտ. Դով. ԺԲ 59), այսինքն՝ զբիր պարտս քանքարացն՝ զերախտեացն համայն եւ զմեղացն, զխորհրդոց եւ զբանից եւ զգործոց, նաեւ զճառայակցացն խոշտանկանաց պատիժս:

Նոյնպէս եւ Հայր Իմ, որ յերկինս է, արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբոր Իւրում ի սրտից ձերոց զյանցանս նոցա» (ԺԸ 35):

Պարզեաց զառակն, թէ յաղագս որոյ իրաց⁵ արկ առաջի, որպէս զի իւրաքանչիւր ոք ի մէնջ թողուցումք ընկերին զյանցանս նոցա զբազմապատիկսն եւ զանչափսն, քանզի ոչ օտարի, այլ եղբորն թողուցումք, որպէս զի մի՛ երկնառաք բարկութեանն մատնիցինք: Բայց զի՞նչ է թէ՛ «Հայր Իմ, որ յերկինս է»: Թուի, թէ ոչ արժանի համարեցաւ զայնպիսի մարդատեացսն որդի Աստուծոյ կոչել եւ ասել «Հայր ձեր», այլ թէ՛ «Հայր Իմ», զի որդի հարազատ զնմանութիւն հօրն բերէ, զի ողորմածն՝ ողորմածին որդի, եւ բարին՝ բարոյն: Իսկ ասելն՝ «ի սրտից ձերոց զյանցանս նոցա»՝ զի մի՛ յետ թողութեանն բանիւ՝ չարայուշ լինիցինք մտօք որպէս բա-

¹ Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ եւ աւետարանչի, Գ

² Զ > զնա

³ Յովհ. Ը 44

⁴ Զ մինչդ

⁵ Զ ի բաց

գումք, այլ ի սրտե թողուցումք: Նախ զհարն, զի սիրտն է աղբիւր ամենայն չարեաց, որպէս զի առանց ըստգտանաց լինիցի, որով համարձակ առ Աստուած մատչիմք՝ ըստ Յովհաննու¹, եւ ապա զընկերացն, որպէս զի Նա զմերն թողցէ զքիւրապատիկն եւ զծանրագոյնն: Տես եւ այսպէս. թագաւոր զԱստուած՝ ըստ Դաւթի. «Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Աստուած է» (հմմտ. Սաղմ. ԽԶ 3), բայց որչափ խնամէ զմարդ, իբրեւ զհայր է, իսկ յորժամ սկիզբն դատման առնէ, որպէս զթագաւոր է եւ արքայ երկնից, զի զարքայութեանն նմանութիւն աստ դատողութեամբն ցուցանէ: Իսկ պարտական բիր քանքարոյ՝ հոգի, զի անձնիշխան կամօք աղբիւր է չարեաց, եւ ծառայակից՝ մարմինն, եւ այսպէս ըստ կարգի կազմեա զբանդ, եթէ կամիցիս:

¹ Ա Յովհ. 9 21

ԳԼՈՒԽ ԺԹ

Եւ եղև, իբրև կատարեաց Յիսուս զբանս զայսոսիկ, փոխեցաւ ի Գալիլէ եւ եկն ի սահմանս Հրէաստանի յայնկոյս Յորդանանու (ԺԹ 1):

Յաղագս յաճախ նախանձու նոցա՝ ստեպ խոյս տայր ի Հրէաստանէ եւ առ զալիլեացոյվքն շրջէր, բայց արդ հուպ գայ, քանզի ժամանակ չարչարանացն մերձեալ էր, եւ ոչ եւս յԵրուսաղէմ ելանէ, այլ ի սահմանս Հրէաստանի մօտ յԵրուսաղէմ, ուր Յովհաննէս քարոզէր, որպէս զի զվկայութիւնն Յովհաննու յուշ ածիցէ:

Եւ զնացին զհետ Նորա ժողովորոյք բազումք, եւ բժշկեաց զնոսա անդ (ԺԹ 2):

Ոչ միշտ ի վարդապետութիւնն յամէ եւ ոչ հանապազ ի նշանագործութիւնն, այլ երբեմն զայն եւ երբեմն զայս առնիցէ, զի նշանօքն վարդապետութիւնն հաւատարիմ լիցի, եւ վարդապետութեամբն շահս նշանացն յաճախիցէ եւ երկոքումք¹ հնարս փրկութեան եւ առաջնորդ աստուածգիտութեան որք այնմ պատկառ կային, գործիցէ: Բայց դու միտ դիր այնմ, թէ զհարդ զբազում ժողովորոցն բժշկութիւն միով բանիւ զանց առնեն աւետարանիչքն թէ՛ զբազումս բժշկեաց, զի անպարծութիւն եւ անանձն յարգութիւն ուսուցեն: Այլ բժշկութիւնն բազմաց օգուտ լինէր, զի բժշկելոցն անձանց երախտիս առնէր, եւ նոցա ախտիցն բժշկութիւն այլոց պատճառ աստուածգիտութեան պատահէր, բաց ի փարիսեցոցն, որ ոչ օգտէին, այլ առաւել զայրանային եւ մատչէին առ Նա փորձել, եւ քանզի գործոցն բիժ ոչ կարէին կարկատել, այլ իմն առասպել առաջի արկանէին:

Իսկ նշանակաւ՝ իմաստք բանիցս այսպիսի է. քանզի «Գալիլեա» թարգմանի յայտնութիւն, իսկ «Հրէաստան» աստուածապաշտից գաւառ, կամ խոստովանութիւն, ուստի իմանամք, թէ յորժամ կատարեալ Բանն Հօր յայտնեցաւ Աստուած մարմնով յերկրի յԵրուսաղէմ քաղաքի, բազում ժողովորոյք ի հրէից եւ ի հեթանոսաց զնացին զհետ Նորա հաւատով, այլեւ չարչարանօք խաչի,

¹ Զ երկոքումք

եւ բժշկեցան յառաջին հիւանդութեանցն մեղաց եւ յանիծից Օրինաց: Եւ այլ ազգ. զի յորժամ կատարեաց զտնօրէնութիւնն եւ փոխեցաւ յերկինս, որ ճշմարիտ գաւառ է աստուածապաշտից հրեշտակաց, եւ մնացին ի սահմանս անմահութեանն յայնկոյս Յորդանանու, քանզի մկրտութեամբն անդ ելանենք ըստ Տեառն ջրով եւ Հոգով¹, յայնժամ ժողովորդք բազումք գնացին զհետ Նորա ըստ այնմ. «Համբարձաւ Աստուած օրհնութեամբ» (Սաղմ. 102 6), եւ բժշկեաց զնոսա ի կարծեացն թէ՛ «Այս ո՞վ է, որ դիմեալ գայ յԵրով[մայ]»՝ ասելով թէ՛ «Ես խօսիմ զարդարութիւն եւ պատմեմ զիրաւունս» (հմմտ. Ես. 49 1):

Եւ մատուցեալ առ Նա փարիսեցիքն՝ փորձէին զՆա եւ ասէին, եթէ արժա՞ն իցէ ումեք արձակել զկին իւր ըստ ամենայն վնասու (ԺԹ 3):

Ո՛վ անմտութեանն, զի կարծէին, թէ այնպիսի իրօքն² լռեցուցանել կարիցեն, քանզի յանդուզն եւ անամօթ է չարութիւն եւ նախանձ. թէպէտ բազում անգամ ըմբերանիցէ բազմապատիկ, միւսանգամ ընդդէմ դառնայ: Բայց դու տես զկերպարանս հարցուածոց չարագործութեանն, զի կամեցան յերկուց կողմանց փակել, որպէս զի թէ ասիցէ օրէն է արձակել, ընդդէմ բերիցեն զայն, որ ի Նմանէ լուան, եւ ասիցեն թէ՛ մինչեւ ցայժմ զիա՞րդ այլ իմն դմին հակառակ խօսէիր, եւ թէ զնոյն բանս ասիցէ, որ յառաջագոյն էր խօսեցեալ, ընդ հակառակս հանիցեն զՆա Մոսիսի: Կամ փորձէին զՆա՞ կարծելով, թէ զմի յերկուց պատասխանէ, կամ ոչինչ իւրիք պարտ է լուծանել զամուսնութիւն: Արդ՝ զհարցանելն, թէ պա՞րտ է արձակել զկին իւր³ ըստ ամենայն վնասու, զայս նշանակէ՛ թէ լեզուանի իցէ կամ տգեղ, կամ պղերզ կամ այլ այսպիսի: Արդ զի՞նչ տացէ պատասխանի:

Պատասխանի ետ նոցա եւ ասէ. «Չիցէ՞ ընթերցեալ ձեր, թէ Որ հաստատեացն ի սկզբանէ, արու եւ էգ արար զնոսա եւ ասէ՞⁴ (ԺԹ 4):

Տես զիմաստութիւն Փրկչին, միանգամայն եւ զհեզութիւնն, զի թէպէտ այլ իմն կերպարանօք տգէտս եցոյց զնոսա աստուածային բանիցն, սակայն ո՛չ վաղվաղակի ասաց թէ՛ չէ օրէն, զի մի՛

¹ Յովհ. 9 5

² զ իրօք

³ զ > զկին իւր

⁴ զ > եւ ասէ

խռովեսցին, այլ նախ քան զվճիռն օրինակաւ¹ զնոյն յայտ արար, թէ Հօրն Իւրոյ նոյն հրաման է եւ չիւնի հակառակ Մոսիսի, այլ կարի միաբան: Եւ տես, զի ո՛չ միայն յարարչութենէն վճռեալ հաստատեալ, այլեւ ի հրամանէն, քանզի ո՛չ ասաց, թէ արար մի այր եւ մի կիւն միայն, այլ հրամայեաց միում առն ընդ միում կնոջ ամուսնանալ, զի թէ հնար էր զմին թողուլ եւ զմիւսն ընդ նորա ածել, յորժամ զմի այրն արար, ապա բազում կանայս առնէր: Եւ այսպէս արարչական օրինակաւ զօրինադրութիւնն յայտ արար՝ միում առն ընդ միում կնոջ բնակել հանապազ, եւ մի՛ երբէք քակել, քանզի ի միոյ արմատոյ այնպէս եղեն, որպէս ասացն թէ՝ «Որ արարն արու եւ էգ արար զնոսա եւ ասէ»:

Վասն այսորիկ թողցէ այր զհայր եւ զմայր եւ երբիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկոքեան² ի մարմին մի» (ԺԹ 5):

Չյոյժ միաբանութիւնն այսու նշանակէ, քանզի ո՛չ վայրապար յարի այր ի կիւն, այլ զհայր եւ զմայր ժուժայ թողուլ եւ ընդ կնոջն մածնուլ, մինչ զի մի մարմին, որպէս ասացն, որպէս թէ ընդ միմեանս բուռեսցին եւ անբակ մնացեն: Եւ առ ի հաստատութիւն քանիս՝ զԱդամայ ասացեալ մարգարէութիւնս Աստուծոյ դնէ՝ խրատելով զնոսա, թէ Աստուած իսկ ուտոյց Ադամայ ասել զայս³:

Ապա ուրեմն ո՛չ են երկու, այլ մի մարմին (ԺԹ 6):

Չիւն Օրէնսն ընթերցաւ եւ ի քանիցն եւ յարդեանցն հաստատարիմ եցոյց զՏուիչն, ապա այնուիտեւ Ինքն մեկնէ եւ օրէնս դնէ, թէ «ոչ են երկու, այլ մի մարմին», այսինքն թէ՛ որպէս զմի մարմին կտրել կարի անպատշաճ է, նոյնպէս եւ ի կնոջն մեկնել զայր՝ մեծ անօրէնութիւն է: Ապա ուրեմն մի բնութիւն է առն եւ կնոջն ո՛չ անձամբ, այլ յօժարութեամբ եւ սիրոյն կցորդութեամբ, առնն իբրեւ իշխանի, եւ կնոջն՝ հնազանդելոյ հաստատապէս:

Արդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ»:

Իբրեւ ահագին արար զամբաստանութիւն նոցա արարչութեամբն եւ հրամանաւն եւ մարգարէութեամբն եւ հաստատեաց օրէնս, ո՛չ ասաց թէ՛ մի՛ քակիցէք եւ մեկնիցէք ի միմեանց, այլ թէ՛ «զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ», որ զնոյն նշանակէ,

¹ Զ օրինական

² Զ երկոքին

³ Ծանոյ. Բ 24

թէ արու եւ էգ արար զնոսա: Որպէս թէ ասիցէ՛ որք յանդգնին մեկնել մինչ ի մահ, Աստուծոյ հրամանին կան հակառակ, որպէս գրէ Պօղոս թէ՛ «Կին կապեալ է ցորչափ ժամանակս կենդանի է այր նորա, ապա թէ ննջիցէ այր նորա, ազատ է՝ ում կամիցի ամուսնանալ» (Ա Կոր. Է 39): Զի որպէս հոգի եւ մարմին մի եղեալ՝ մահն որոշէ հրամանաւն Աստուծոյ, իսկ որք ժպրհին լուծանել զկապ միութեանն, գոր Նոյն կապեաց, արիւնահեղ է եւ ասի, այսպէս եւ զգուգեալսն Աստուծոյ զայր եւ զկին թէ՛ որ մեկնիցէ, ընդ սպանօղսն հաշուիցի: Զի թէ զՄոսէս յառաջ բերցես, ես՝ զՏէրն Մոսիսի, քանզի Աստուած զուգեաց, եւ այս երիցագոյն ինձ թուի քան զՕրէնսն, թէպէտ յինէն նորրնձայ կարծիցի:

Այլ դիտեա ինձ զգօրութիւն քանիս, թէ ո՞րքան օրինակաւ պնդեաց ոչ առնել բաժանումն ի մէջ առն եւ կնոջ: Նախ թէ՛ մի մարմին է, եւ զմի մարմինն յերկուս հատանել՝ երկոցունց է մահ, թէ եւ հաշմ իցէ այրն կամ կինն, կամ ուրուկ, կամ դիւահար, զի ոչ զուրուկ մարմին, յորժամ այսպիսի ցաւով տազնապի, հատանենք եւ ի բաց ընկեանմք: Եւ երկրորդ՝ թէ Աստուած զուգեաց, եւ դու, մարդ, բաժանօղ, հայեա՛ց, ասէ, ի բնութիւնն, զի Արարիչ եւ արարած, Նա շինէ, եւ դու քակես: Եւ երրորդ՝ յօրինակէն պատկառի, զի որ զկին բաժանէ, գրէ թէ զԵկեղեցի ի Քրիստոս որոշէ, որպէս Սաբէլ եւ Արիոս եւ կամ չար թագաւորքն, որք բռնութեամբ յուրացութիւնս ձգէին: Արդ նոցա՛ հաւասարի բաժանօղն, զի այր եւ կին Եկեղեցոյ օրինակ է, որպէս ասէ Պօղոս թէ՛ «Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս եւ յԵկեղեցի» (Եփես. Ե 32): Զի որպէս անդ ի կողիցն Ադամայ շինեցաւ Եւա՛՝ «մարմին ի մարմնոյ նորա եւ ոսկր յոսկերաց նորա» (Խմբտ. Ծճնդ. Բ 23), սոյնպէս եւ Եկեղեցի ի կողէ երկրորդն Ադամայ եղեւ հարսն Քրիստոսի՝ ըստ Յովհաննու թէ՛ «Որ ունի հարսն՝ նա է փեսայ» (Յովհ. Գ 29): Վասն որոյ թողեալ զՀայրն յերկինս եւ զմայրն մերձ խաչին՝ չոգաւ ի մահ եւ ի դժոխս եւ շինեաց Իւր մարմին եւ դշխոյ պանծալի գաւորք զԵկեղեցի՝ ըստ առաքելոյ. «Դուք մարմին Քրիստոսի էք» (Ա Կոր. ԺԲ 27), եւ Ինքն թէ՛ «Որ ուտէ զմարմին Իմ եւ ըմպէ զարիւն Իմ, նա յԻս բնակեացէ՛, եւ Ես՝ ի նա» (Յովհ. Զ 57): Ո՛չ երկու, այլ մի՛ ճշմարտապէս՝ ըստ օրինի

¹ ՏԶ Եւայ (այսպէս է և այլուր)

² Զ բնակէ

Իւր մարմնոյն ներմիութեամբ, թէպէտ արու եւ էգ. քանզի արու ըստ մարգարէութեանն եւ ըստ տարետոր պատերիւն յաղագս ն

Իսկ թէ որ ասիցէ՝ զիա՞րդ մի լինիմք մարմին ըստ Տեառն մարմնոյն, ասացուք չնգուովն Սրբով՝ ըստ առաքելոյ. «Թէ որ զՀոգին Քրիստոսի չունի, սա չէ Նորա» (Հոմ. Ը 9), քանզի մարմինն Քրիստոսի ո՛չ ի մարդկային սերմանէ է յայտ է ահա, այլ ի Հոգւոյն սրբութենէ՝ ըստ հրեշտակին առ Կոյսն արեւտեաց թէ՛ «Որ ի Նմայն ծնեալ է, ի Հոգւոյն Սրբոյ է» (Մատթ. Ա 20): Այսպէս մեք ընդունելութեամբ Հոգւոյն յաւագանն մաքրութեամբ, Մարմնոյ եւ Արեանն հաղորդութեամբ՝ լինիմք մարմին Քրիստոսի, ապա թէ որ զայս ոչ ունիցի, չէ՛ Նորա մարմին, որպէս ասաց Պօղոս: Վասն որոյ ի վերայ բերէ՝ թէ Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ, այսինքն՝ զՀօր կամաւ եղեալ միութիւնս Եկեղեցւոյ առ Բանն եւ Բանին առ մարմինն Իւր մի՛ որ իշխեսցէ որոշել զՆորայն աղանդատոր բանիւք բաժանել իբր Նեստոր եւ համախոհք նորին: Իսկ զԵկեղեցւոյ՝ կամ զայլ որ զայթազդեցուցանել եւ յուրացութիւն ձգել, եւ կամ զանձն անօրէն զործովք աղտեղացուցանել եւ ի նմանէ որոշել՝ ըստ առաքելոյ թէ՛ «Առեալ զանդամս Քրիստոսի՝ առնիցենք անդամս պտոնկի, քա՛ւ լիցի» (Ա Կոր. 2 15), քանզի այս հերձուածողաց է փորձանք, զոր զաղափարաւ «փարիսեցիս» կոչեաց, յորմէ արժան է խորշել եւ աստուածային բանիւք պապանձեցուցանել:

Լսի բանս եւ բնականաբար ի վերայ մարդոյ ուրուք, որպէս սակաւ մի ծանուցաք, զի ի սկզբանէ արու եւ էգ եղեւ մարդն, այսինքն՝ հոգի եւ մարմին, զոր ոչ է պարտ ումեք քակել, ոչ զինքն իւրովի երթալով եւ կամամահ լինելով, եւ կամ ի ջուր ընկենլով եւ ի վախից մղելով, եւ ոչ զայս՝ զինչ եւ է օրինակաւ՝ սրով կամ դեղով կամ այլ սոյնպիսի իրօք, զի այս բանսարկուիւն է զործ, որ ի սկզբանէ մարդասպանն է¹, եւ կամարարաց նորին: Սկսեալ յԱբելէ մինչեւ ի վերջին սպանօղսն խնդրեսցի արիւն նոցա ի ձեռաց նոցա. զի թէ իրաւամբք սպանին, ի կարգի դահճի եղիցին, եւ թէ անիրաւութեամբ՝ արիւնահեղք եւ պղծագործք կոչեսցին, որք ոչ հասարակեսցեն զոյս՝ ըստ մարգարէի², այլ զխաւարն ահագին:

Ասեն ցՆա. «Իսկ Մովսէս ընդէ՞ր պատուիրեաց մեզ տալ թուրք մեկնելոյ եւ արձակելոյ» (ԺԹ 7):

¹ Յովի. Ը 44

² Սաղմ. ԾԴ 24

Տե՛ս դարձեալ զնոցա անմտութիւնն. ընդ որս պարտ էր զարմանալ ընդ իմաստութիւնն, նոքա զայն թողեալ ի պատերազմ մտանէին ասելով, թէ Մոսէս զիա՞րդ պատուիրեաց, զոր ո՛չ նոցա Նմա, այլ Նմա՛ նոցա էր տալ պատասխանի: Բայց սակայն չստ թէ՛ «Յայդմանէ Ես ազատ եմ», այլեւ զայն ե՛ս լուծանէ: Իսկ թէ ընդէ՞ր զՄոսէս ի մէջ բերէին, զոր ոչ երբէք արարին, ինձ թուի, թէ այնու կամէին կուտել զամբոխն ի վերայ Նորա, քանզի անխտիր էին իրքն ի մէջ հրէիցն, եւ գրեթէ ամենեքեան զնոյն գործէին, վասն այտորիկ ի Մոսէս յեցեալ անկան: Վասն թղթոյն ասացեալ է.

Ասէ ցնոսա. «Մովսէս վասն խստասրտութեան՝ ձերոյ հրամայեաց¹ ձեզ արձակել զկանայս ձեր, այլ ի սկզբանէ ո՛չ եղև այնպէս (ԺԹ 8):

Այսու Օրինացն անհնազանդ զնոսա ցուցանէ եւ զՄոսէս եւ զՕրէնսն ի բամբասանաց ազատէ, քանզի խստասիրտ գոյով ձեր, ասէ, իբրև զփարատն եւ տկար ի գործս Օրինացն՝ կարեկից եղև ձեզ Մոսէս եւ այդմ ներումն շնորհեաց, որպէս եւ ի Նորս գրեցաւ. «Յաղագս պտռնկութեան իւրաքանչիւր որ զիւր կին կալցի» (Ա Կոր. Է 2): Այսպէս եւ նա, զի մի՛ մեծագոյն վնաս լինիցի, այսինքն է սպանութիւն ի պատճառս ատելութեան, կնոջն արձակման հրաման ետ, ապա թէ ոչ՝ «ի սկզբանէ ո՛չ եղև այնպէս», իբր թէ արդեամբք զայսպիսի օրէնքս եղ Աստուած ի սկզբանն, որպէս ցուցաւ, զի թէ օգտակարք ոչ էին, եւ ոչ այնպիսի ինչ հաստատէր Աստուած եւ կամ հրաման տայր. ապա ուրեմն դուք լուծանէք եւ ի Մոսէս ձգէք:

Բայց Ես ասեմ ձեզ, զի ամենայն, որ արձակեսցէ զկին իւր, եւ ո՛չ վասն պտռնկութեան, եւ առնիցէ այլ, շնայ, եւ որ զարձակեալն առնէ, շնայ» (ԺԹ 9):

Յորժամ զնոսա ընթերանեաց եւ ճշմարիտ եցոյց զՕրէնսն եւ զհնքեանս՝ յանցաւոր, ապա ճոխութեամբ օրէնս դնէ, ո՛չ այլազգ, այլ զԻւրն հաստատելով զնախկինն, զի որպէս վասն կերակրոցն եւ շաքաթուն յամօթ արար, ապա ի վերայ բերէ թէ՛ «ո՛չ որ ի բերանն մտանէ՝ այն պղծէ զմարդն» (Մատթ. ԺԵ 11), եւ «ի շաքաթու օրէն է բարիս գործել» (Մատթ. ԺԲ 12), նոյնպէս եւ աստ առնէ: Բայց աշակերտքն որպէս անդ խոռվեցան, նոյնպէս եւ աստ, որպէս ասէ: Այլ

¹ Զ ասաց

մեկնությունն թղթոյն տուեալ է յառաջագոյն ընդարձակս, զի մի՛ զմիմեանց կանայս յափշտակիցեն եւ դարձեալ յառաջին կանայս դառնայցեն եւ այսպէս յաճախ շնութիւն գործիցեն:

Դարձեալ՝ իմա զբանդ եւ ի վերայ սպանողաց, որք զՕրէնսն օժանդակ առնուն, թէ «Ակն ընդ ական, եւ արիւն ընդ արեան» (հմմտ. Գեւտ. ԻԴ 20-21) գրեալ է: Առ որս տայ Նորս Շնորհ պատասխանի, թէ այն վասն խստասրտիցն ասացաւ, որք ոչ ժուժային վասն մերձաւորի արեանն. լաւ համարեցաւ զմին մատնել, քան թէ մինչ ի կատարած ազգ ընդ ազգ նախանձախնդիր լինել: Իսկ յառաջագոյն ո՛չ այնպէս, քանզի անմահ ստեղծաւ եւ մահուան ընդունակ եղել: Արդ՝ որ ինչ նախն էր, եւ ա՛յժմ հաստատէ՛ ըստ այնմ. «Ո՛չ գիտէք որոյ հոգոյ էք» (Գուկ. Թ՝ 55): Իսկ արձակել զկին եւ առնել այլ՝ զաղանդաւորսն ասէ, որք մարմնափոփոխութիւն ասացին, զորս «շնացօղս» կոչէ, զի որ զայս ասէ, չարագոյն է քան զկրօնապաշտութիւնն:

Ասեն ցՆա¹ աշակերտքն Իւր. «Եթէ այդպէս ինչ վնաս² իցէ ընդ այր եւ ընդ կին, լաւ է չամուսնանալ» (ԺԹ՝ 10):

Քանզի խոռովեցան, յորժամ լուան զկինն ամենայն չարութեամբ լցեալ ի ներքս արգելոյ եւ ընդ անհաշտ զազանին (որպէս ասաց ոմն) միաբանութիւն ունել, վասն զի հարցեալ ոմն թէ՛ ո՞ր զազան առաւել խաճանէ, եւ նորա ասացեալ ընտանի զազանն կինն, եւ այլ ոմն թէ՛ վասն առաւել չարութեանն ծնօղքն բաժինս տան եւ արձակեն: Եւ դարձեալ ոմն շինէր տուն եւ դնէր հիմն զաղիսն, եւ շինէր զքարն ի վերայ աղիսին, զոր տեսեալ ումնմն եհարց թէ՛ զիա՞րդ է շինուածդ, մտաբախ ոմն ես, իսկ նորա ծիծաղեալ ասէ թէ՛ հանդերձեալ եմ կին առնուլ, եւ նա եկեալ շրջէ զտունս, եւ ուղղի որմն: Արդ՝ զայսպիսի ծանրութիւն գիտելով աշակերտացն ասացին. «Եթէ այդպէս ինչ վնաս իցէ³ ընդ այր եւ ընդ կին», կամ թէ՛ վասն առաւել միութեանն, որում անհնար է բաժանումն, կամ թէ պատճառս առցէ եւ ի վերայ հանիցէ զկինն, եւ այդ մեծ անօրէնութիւն է, ապա ուրեմն «լաւ է չամուսնանալ»: Այսինքն թեթեւագոյն⁴ է մանաւանդ ընդ բնութեան ցանկութեանն

¹ Զ > ցնա

² Զ ~ վնաս ինչ

³ Զ է

⁴ Զ թէ լաւագոյն

կռուել, քան ընդ կնոջ չարի բնակել եւ կամ արձակել եւ մեղս գործել:

Եւ Նա ստէ ցնոսա. «Ո՛չ ամենեքեան բաւական են այդմ բանի, այլ որոց տուեալ է (ԺԹ 11):

Ո՛չ ասաց՝ այո՛, թեթեւ է չամուսնանալն, զի մի՛ օրէնք իրքն կարծիցին, այլ գրեթէ զնոյն ստէ թէ՛ «Ո՛չ ամենեքեան բաւական են այդմ բանի»: Այսու յարգէ եւ ցուցանէ, եթէ կարի մեծ է, զի յօժարեսցին եւ մի՛ հարկաւորեսցին: Քանզի վասն կուսութեան ճանել ծանր թուէր, ի բռնութենէ այսց օրինաց ի ցանկութիւն միայն յորդորէ՝ ըստ առաքելոյ թէ՛ «Հրաման ի Տեառնէ վասն կուսութեան ոչ ունիմ, այլ խրատ տամ» (հմմտ. Ա Կոր. Է 25), նոյնպէս եւ Տէր՝ զի ցուցցէ, թէ գոյ հնար ապրել կուսութեամբ: Բայց զի՞նչ է թէ՛ «որոց տուեալ է»: Ո՛չ վիճակաւ կարծիցես գտալն եւ ի հարկէ, այլ զի ցուցցէ, թէ մեծ պատերազմ է եւ վերին օգնականութեանն պէտք ունի: Եւ ա՛յլ ազգ. զի որ առնու՝ պարտ է խնդրելով առնուլ, ապա ուրեմն պարտ է եւ պահողին զկուսութիւն եւ աղօթիք օժանդակութիւն խնդրել եւ ըստ հաճոյիցն Աստուծոյ վարիլ¹: Այսոցիկ է տուեալ:

Չի են ներքինիք, որ յորովայնէ մօր իւրեանց ծնան այնպէս, եւ են ներքինիք, որ ի մարդկանէ եղեն ներքինիք, եւ են ներքինիք, որ զանձինս իւրեանց² արարին ներքինիս վասն արքայութեան երկնից: Որ կարօղն է տանել, տարցի՛»

(ԺԹ 12):

Ասաց յառաջագոյն թէ՛ «որոց տուեալ է». զի մի՛ կարծիցես, թէ որ յախտէն յայնմանէ ազատք են, ի վերո՛ւստ զշնորհսն ունիցին, վասն որոյ յերիս բաժանէ՝ զոմանս յորովայնէ, եւ զկէսս ի մարդկանէ, եւ զայսս վասն արքայութեանն, որ յուսալով յԱստուած՝ զօգնականութիւնն ի Նմանէ առնուն, որպէս ասացաւ: Եւ դարձեալ զի կամի զվարս առաքիւնութեանն կազմել եւ ի ցանկութիւն կուսութեանն յորդորել, ստէ զայս՝ գրեթէ ի բնէ³ այնպէս էիր, զի՞նչ գործէիր, զի ի վայելելոյ ցանկութեան⁴ զրկեալ գտանէիր եւ վարձս ընդ այնր ոչ առնուիր: Ապա թէ այդպէս իցէ, զոհանալ պարտիս

¹ Զ վարել

² Զ > իւրեանց

³ Զ > ի բնէ

⁴ Զ ցանկութեանն

զԱստուծոյ, զի եւ այժմ թէ եւ ճգնիցիս ինչ, սակայն պարզեւք եւ պսակք պահինք քեզ:

Բայց մեզ ասելի է ըստ կարի, թէ ուստի՛ են այսօրիկ. քանզի որք բնութեանն հետեւին, ասեն, թէ ի ժամանակի արեան արձակման կնոջ, զոր կանանց օրէնս անուանեն զիրք, յորմէ զգուշացոյց Օրէնքն ի մերձաւորութենէ զայնքան աւուրս¹, քանզի յորդութիւն արեանն բղիսման գերփէ՛ ամենեւին զտերմն եւ քանցէ, որպէս որք ի հեղեղատս սերմանեն: Այլ ոչ հանդուրժեալ առն մօտ ի սրբութիւն² արեանն, մինչչեւ է տակաւին սրբեալ արգանդն, հպի առ կինն, եւ սերմն անկեալ ի խինձս արգանդին, ոչ կատարեալ սաղմն առնիցի, այլեւ ոչ հեղեղիցի, սակայն շնչական ոյժն ի մնացուածոյ արեանն քաղիցի, եւ այլն բեղմնաւորի թերասառոյց իմն եւ անկատար: Որպէս որք ի տղմային եւ ի ճախճախուտ վայրս զտերմն սերմանեն, բուսանի, սակայն ոսին եւ անսերմն լինիցի, զի թէ էզ շնչաբերի, ամուլ եւ անձննդական լինի, եւ թէ արու՝ չէզոք եւ ներքինի, ըստ մտաց ունելով զգանկութիւնն, այլ ըստ ներգործութեանն նուազեալ գտանի: Իսկ ոմանք գերիկամն ասեն պատճառ, զի ի ցրտութենէ տեղոյն եւ կամ կերակրոյն պաղեալ երիկամն ոչ կարէ ուժգնացուցանել զտերմն եփելով եւ պնդելով: Այլ անօտրագոյն անցեալ յարգանդ կնոջ եւ սերմամբ կնոջ մակարդեալ թուլագոյն լինի սաղմն, ըստ օրինակի կաթին, յորժամ ոչ իցէ եփեալ, ոչ պնդագոյն լինի, թեպէտ մակարդի, որպէս ասէ Յորք թէ՛ «Իբրեւ զկաթն կթեցեր զիս եւ իբրեւ զպանիր...» (հմմտ. Յորք Ժ 10): Իսկ որք ի մարդկանէ եղեն, ի հռոմայեցոց կայսերացն ասեն գտեալ զայս չարիք՝ մալելով զգեղեցիկ մանկունս եւ նուիրելով կռոցն ի պատիւ Դիոնիսեայ օճրագործութեանն³, կամ ի պահեստ կանանց, որպէս այժմ տեսանենք:

Արդ՝ երկրքին այսօրիկ ակամայ են եւ զսկիզբն արտաբուստ ունին. եթէ ի զղջումն եկեսցեն եւ կամօք հաճոյական⁴ վարս Աստուծոյ ցուցանիցեն, ոչ զրկիցին ըստ արժանեացն ի վարձուց՝ ըստ մարգարէին թէ՛ «Մի՛ ասասցէ ներքինին թէ՛ ես եմ փայտ չոր, զի թէ զօրէնս Իմ պահեսցէ, տաց նոցա տեղի անուանի» (Ես. ԾԶ 3): Իսկ եթէ զակամայ վնասն յօժարութեամբ առնիցեն եւ ոչ զօրի-

¹ Ղևտ. ԺԵ 24, ԺԸ 19, Ի 18

² Ս սրբութեան

³ Ս յօճրագործութեանն

⁴ Տ հաճոյական

նացն փոյթ տանիցեն, աստ ի ցանկութիւնս իւրեանց մաշեցին առանց գրգանաց, եւ անդ ի փառացն գրկեսցին՝ ըստ այնմ թէ՛ «Մալեայն եւ կրճատեայն մի՛ մտցէ յեկեղեցի Աստուծոյ» (հմմտ. Ղեւտ. ԻԲ 22): Բայց երրորդ կարգն որք ոչ յայլմէ, այլ կամաւ զանձինս իւրեանց արարին ներքինիս եւ զմարմինս անդամոցն հատին, զի որք այսմ հետեւին, դատապարտեալք են եւ ի կարգս սպանողաց անկեալ, զԱստուծոյ արարչութիւնն խոտելով եւ գդիաց գործ գործելով՝ ի կրկին մեղս անկանին՝ զայրութեան կերպարանն խափանելով եւ զկամացն ցանկութիւնս ի բարեացն արգելլով: Չի այնպիսիքն ո՛չ զցանկութիւնն մեղմացուցանեն, այլ կարի իմն սաստիկ վառեն, զի աղբիւր սերմանն այլուստ է եւ ո՛չ անտի. զի ոմանք յուղոյն ասեն, եւ այլք՝ ի միջոյն, բայց ես ի լկտի մտաց ասեմ եւ ի ծոյլ խորհրդոց. եւ զայս ո՛չ հատանեն այնպիսիքն, որով ցածնու ցանկութիւնն, վասն որոյ անիծեալք են:

Իսկ որ զերկրաւոր անդամս սպանանեն եւ զտրփումն մտացն խափանեն յօժարութեամբ, յիրաւի զարքայութիւնն ժառանգեն, զի ո՛չ վասն այլ իրի, այլ վասն վերին փառացն յայն խոկան: Վասն որոյ ի վերայ բերէ թէ՛ «Որ կարողն է տանել՝ տարցի»: Իբր հրաման իմն տայ, սակայն կարգաւ եւ հոգեւոր վարդապետութեամբ յանձնիշխանութիւն կամացն սպաստան առնէ, զի ի հարկէ եղեալքն ոչ միայն դիւրաւ ոչ խամրին, այլեւ ի վարձուց գրկին, զի վասն ախտի են. «Ամէն ասեմ ձեզ, ա՛յն իսկ են վարձք նոցա» (Մատթ. 23 2): Իսկ կամաւորն ոչ միայն յարամնական է, այլեւ զվերին փառսն նօթձէ, որով արժանի լինիմք տեսանել զՀայրն երկնաւոր:

«Են ներքինիք, որ յորովայնէ մօր իւրեանց ծնան այնպէս¹, եւ են ներքինիք, որ ի մարդկանէ եղեն ներքինիք², եւ են ներքինիք, որ զանձինս իւրեանց ար[արին]...»³: Դարձեալ երից ներքինեաց զանազանութիւն պատմէ, որ թուի ինձ նշանակել զբնական առաքինիսն, եւ զվարդապետականսն, եւ զվարժականսն. զի ոմանք բնական գոլով առաքինիք, զոր ոմանք ծառայական եւ անբան սասցին: Նախ՝ զի ի հարկէ իբր զժառայս եւ զանբանս խառնուածոյ մարմնոյ հետեւին եւ լինին ողջախոհք եւ կամ արիք՝ ոչ զխտելով զպատճառն: Իսկ երկրորդ՝ զի եւ յանբանս գոյ զսոսա տեսանել, որպէս զտատրակ ողջախոհ եւ զառիւծ արի, եւ զուղտ խոհեմ, եւ

¹ Գ > մօր իւրեանց ծնան այնպէս

² Գ > եղեն ներքինիք

³ Գ > ար[արին]...

գարագիլ արդար, որք ի կենցաղս միայն գովի այսպիսի առաքի-
նությունս եւ ո՛չ ի յերկնայինսն տրամադրի, ըստ անասնոցն օրինի:
Իսկ որք ի մարդկանէ եղեն ներքինի՝ զվարդապետականսն նշա-
նակէ. քանզի ոմանք ի ձեռն պատուելոյ վարդապետաց՝ բարոյա-
կան ստացան առաքինություն ուղղելով զբարս, սակայն եւ սոքա
անկատար գոլով՝ ոչ հետեւին միմեանց, քանզի գոյ հնար յաւան-
դելոյ վարդապետաց՝ լինել ոմանց ողջախոհ, այլ ո՛չ իմաստուն:
Իսկ «որք զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայու-
թեան երկնից»¹, այս կատարելոցն ասէ, որք վարժիք եւ պէսպէս
ճգամբք ներքին մարդոյն հետեւեցան, որ հաճի ընդ օրէնս Աստու-
ծոյ ըստ առաքելոյ՝՝ արտաքնոյն առնելով ապականություն եւ ըն-
տանի բնութեանն նորոգութիւն, որ է հոգւոյն, զոր ոմանք մակս-
տացական ասացին առաքինություն, որ հետեւին միմեանց՝ զիտե-
լով զպատճառն՝ վասն որոյ առնեն, զի յանառակութենէ ժխտու-
թիւնք եւ անիրաւութիւնք ծնանին, վասն որոյ ողջախոհանայ այն-
պիսին եւ արի լինի, զի զախտսն ստորադասէ: Նա իսկ է եւ խո-
հեմ, զի զիտէ զպատճառն, այլեւ արդար գոյ, զի ի մարմնականաց
հեշտախտութեանց լինին անիրաւութիւնք: Չսա՛ ասէ վասն ար-
քայութեանն լինել ներքինիս՝ սպանանելով զանդամս երկրաւորս,
որ է ճշգրիտ կուսութիւն, ո՛չ բնութեամբ եւ ի հարկէ՝ իբր զծառայս
եւ զվարճաւորս, այլ ի կատարեալ սիրոյն աստիճան թեւակոխէ,
որ յորդիական հանէ փառս՝ ըստ այնմ թէ՛ «Սէր կատարեալ ի բաց
մերժէ զերկիւղն» (Ա Յովհ. 7-18), վասն այսորիկ ասաց թէ՛ «Չանձինս
իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեան երկնից»³: Քան-
զի անտի բղխեն⁴ աղբերք⁵ չարութեան ի մարմինս, որոյ զսպումն
համեստացուցանէ եւ զմարմինն, եւ կատարեալ գոլով՝ ոչ միայն
բնութեան օրինացն եւ զբարոյականին, այլեւ անտարանական
վարդապետութեամբս պայծառացեալ՝ լինի կատարեալ փառացն
ժառանգաւոր ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք եւ պա-
տիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն⁶:

¹ Գ > երկնից

² Հրոմ. է 22

³ Գ > երկնից

⁴ Գ բաշխեն

⁵ Տ աղբիւրք

⁶ Գ “] եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն

Յայնժամ մատուցան առ Նա մանկտի, զի ձեռն դիցէ ի վերայ նոցա եւ ա-
նոթս արասցէ, եւ աշակերտքն Նորա սաստե՛ին նոցա (ԺԹ 13):

*Ո՛չ պատահմամբ, այլ ըստ խորհրդոյ. զի յորժամ վասն արքա-
յութեանն ճառէր, մատուցան մանկտին, որք եւ նորա անմեղք էին
ըստ օրինի այնոցիկ, որք զանձինս իւրեանց ներքինիս արարին
վասն արքայութեանն: Չի յոմանս ոչ գործեցան մեղք, եւ յոմանց՝
գործեալն մաքրեցան, որք օրինակ իմն հաւասարք են եւ վերին
կենացն ժառանգք՝ հանգչելով ի ծոցն Հօր: Սոքա բերեալ լինէին
առ Նա՝ ստիպեալ ի գթոյ ծնողացն, իբր առ այր մի սուրբ եւ ար-
ժանատր Աստուծոյ, որպէս զի ձեռն դիցէ եւ աղօթեցէ սուրբ մնալ
ի չարէ: Իսկ աշակերտաց սաստն ո՛չ վասն այլ իրիք էր, քան ի
պատուոյ սակս, զորս ուսուցանէ զխոնարհութիւն ստանալ եւ
զաշխարհական հպարտութիւն առ ոտն կոխել:*

Ասէ Յիսուս. «Թ՛ո՛յլ սուր մանկտոյդ եւ մի՛ արգելուք զդոսա զալ առ Իս, զի
այդպիսեացդ է արքայութիւն երկնից» (ԺԹ 14):

*Քրիստոս յաղագս այսորիկ յաշխարհ եկն եւ հինաւորցն Աս-
տուած՝ մանկացաւ, զի զհնացեալ բնութիւնս վերստին նորոգեցէ՝
ըստ երգոյն թէ՛ «Նորոգեցի որպէս արծուոյ մանկութիւն քո»
(Մատթ. ԾԲ 5), զորոյ զօրինակն ի մանկուսն կամէր ցուցանել, եւ զմա-
տակարարութիւնս զայս ոչ զհտէին յայնժամ աշակերտքն: Իսկ
Նա զի՞նչ առնէր. զտգիտութիւն նոցա վարժէր եւ զմանկուսն յա-
ռաջ կոչէր եւ ի գիրկս առնոյր եւ օրհնէր՝ ասելով, թէ «այդպի-
սեացդ է արքայութիւնն երկնից»։ Եւ այսու ոչ միայն զնոսա, այ-
լեւ զմեզ խրատէ, որպէս յառաջագոյն ասէր. «Թէ ո՛չ դարձցիք եւ
լինիցիք իբրեւ զմանուկ, ո՛չ մտանիցէք յարքայութիւնն Աստուծոյ»
(Մատթ. ԺԸ 3): Չաշակերտսն զի հանդերձեալ էին բարձրանալ յամե-
նայն տիեզերաց, յառաջագոյն գրաւէ զմիտս եւ չտայ թոյլ մարդ-
կօրէն ինչ ախտանալ, որպէս թէ պատիւս պահանջել ի բազմաց
կամ վարձատրս առաջի շրջեցուցանել:*

*Նաեւ հանդերձեալ էին բազում ցաւս եւ տանջանս կրել. խրա-
տէ՞ անոխակալ լինել, ոչ ընդ մեծարանս հպարտանալ ի բարե-
պաշտիցն եւ ոչ ընդ անարգանս տրտմել յանօրինացն: Իսկ զմեզ
զի կամօք՝ այնպէս լինիցիմք, որպէս մանկտին բնութեամբ են, այ-*

¹ Դան. է 9, 13

² Գ խրատէ եւ

³ Գ կամք

սինքն խոնարհ լինել եւ հեզ եւ անոխակալ, զի մանուկն թէպէտ թշնամանիցի, թէպէտ մեծարիցի, ոչ ընդ այն տրտմի եւ ոչ ընդ այս հպարտանայ, եւ թէպէտ բազում գանս ընկալցէ ի մօրէն, քան գամենեսեան զնա լաւ համարի, զի թէ եւ թագուհի ցուցանիցես նմա պճնեալ հանդերձիւ, ոչ կարծէ ազնուագոյն քան զմայրն իւր, որ զցնցոտին արկեալ է¹ զանձամբ, եւ ի մօրէն ոչ այլ ինչ խնդրէ, բայց միայն կաթամբ յագիլ: Այսպէս եւ մեք ոչ աղքատութեամբ եւ փարթամութեամբ որոշեսցուք զմերն եւ զօտարն, այլ իմաստութեամբ եւ կարեւոր պիտոյիք ճանաչել, եւ միայն զպէտսն ընչից առնուցուք եւ ոչ առաւել վնասիցիսք, որով անարգել առ Աստուած մատչիցիսք եւ երկնից արքայութեանն ժառանգք լինիցիսք:

Եւ եղեալ ձեռս ի վերայ ւոցա՝ զնաց անտի (ԺԹ 15):

Շնորհս իմն քահանայութեան եւ մարգարէութեան ետ ւոցա ձեռնադրութեամբն, որով յԻւրն կոչեաց աշակերտութիւն, զի որպէս Եղիա եղ զմաշկեակն ի վերայ Եղիսէի, եւ նորա թողեալ գամենայն զնաց զհետ նորա², այսպէս եւ ի Տեառն ձեռաց զօրացեալ մանկունքս այսոքիկ եւ ի տիս կատարելութեան հասեալք՝ քարոզք եղեն աւետարանին եւ առաքեալք Փրկչին, որք եւ նահատակեցան իսկ վասն Նորա, յորոց մի էր եւ Աստուածագգեացն Իզնատիոս, որ իբր զցորեան աստուածային զազանաց մանրեալ ժանիք՝ հաց սուրբ գտաւ Աստուծոյ՝: Բայց նշանակաւ՝ օրինակ արքայութեանն երկնից է յայսմ աշխարհի Եկեղեցի սուրբ, որ կոչէ զամենեսեան յիւրն փրկութիւն քարոզութեամբ աւետարանին ըստ այնմ. «Որ գայ առ Իս, ոչ հանից արտաքս» (Յովն. 2 37): Արդ՝ որք զան յուսով ի սա՝ շնորհս եւ օրհնութիւնս ընդունել, ոչ է պարտ արտաքս հանել, այլ ոմանց տալ զհոգեւոր կնիքն, որով յարքայութիւնն զրին, եւ ոմանց զձեռնադրութեանն իշխանութիւն, միայն թէ մանկունք իցեն Եկեղեցոյ, անմեղ մնալ եւ հեզ եւ հանդարտ, եւ մայր գտորք զԵկեղեցի տեսանել, եւ սորա կաթամբն՝ աստուածաբուղիս վարդապետութեամբն, այլեւ մարմնոյ եւ արեան Տեառն անընդհատ բղիսմամբ սնանիլ, զի արժանի լինին միջնորդութեամբ

¹ Գ > է

² Գ Թագ. ԺԹ 19-20

³ Այս մասին տես Իզնատիոս Աստվածագոյացի՝ Յռոմ քաղաքին ուղղված թղթում, զլ. Բ (ըստ հայկ. տարբերակի) և հատված 4 ըստ այլալեզու հրատարակությունների:

քահանայապետից եւ քահանայից օրհնութիւն ընդունել ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ: Քանզի նոցին ձեռնադրութեամբն Հոգւոյն ընդունակ լիցին, զի «ձեռն» զՀոգւոյն շնորհս կոչէ՝ ըստ մարգարէին թէ՛ «Եղև ի վերայ իմ ձեռն Տեառն» (Եզեկ. Ա 3), եւ առաքելաբն ձեռն դնէին, եւ առեալ լինէին Հոգի Սուրբ, եւ Քրիստոս «մատն» անուանէր զՀոգին¹: Եւ թէ ընդէ՞ր ձեռն. զի որպէս ձեռն գործոյ է սպասաւոր, այսպէս գորս Հոգին կոչէ յառաջ, ի գործառնութիւն Եկեղեցւոյ կոչէ, եթէ ի քրիստոնէութիւն, եթէ ի սարկաւազութիւն եւ եթէ՛ ի քահանայութիւն: Չի սուրբ կարգ[ք]ս այսոքիկ գործ են կատարեալ եւ ամենայն գործոց արժանաւոր, որք եթէ ըստ անմեղ մանկանց օրինի ընթանան, զկնի Եկեղեցւոյ զարքայութեանն շնորհ ժառանգեն՝ զօրավիզն եւ պաշտպան ունելով զՀոգին: Ապա թէ ծուլացեալք ըստ հեղզ ծառային, որ զարծաթն թագոյց ի վարչամակին՝ տրտմեցուցանելով զՀոգին, որով կնքեցան յաւորն փրկութեան², հրամայէ կտրել ընդ մէջ, այս է՝ զԻւր տուեալ շնորհս ի հոգւոյն առնուլ եւ զմնացեալն անպիտան ի հուրն առաքել՝ ըստ այնմ թէ՛ «Որ ունիցի՝ տացի եւ յաւելցի, եւ որ ոչն ունիցի» գործս բարիս, «եւ գոր ունիցի» շնորհս՝ «բարձցի ի նմանէ» (Մատթ. ԻԵ 29):

Եւ ահա մատուցեալ ոմն առ Նա՛ սաէ. «Վարդապետ բարի, զի՞նչ բարի⁵ գործեցից, զի ընդունիցիմ զկեանսն յախտենականս» (ԺԹ 16):

Ոմանք փորձութեամբ ասեն մատչել զայրս զայս հարցանել զՏէր՝ հայելով ի բանն Դուկայ թէ՛ «Յարեաւ օրինական ոմն փորձել զՆա» (հմմտ. Դուկ. Ժ 25), սակայն այլ է այս, եւ այլ է այն: Բայց ինձ թուի խառնակ իմն զոլ զմիտս սորա. յայտ ի բանիցն է, զի զանցանել⁶ զհրէական կարծեօքն եւ զփարիսեցւոցն եւ զդպրացն զիտութեամբ եւ հոգ տանել յախտենական կենացն եւ «բարի» զՎարդապետն կոչել՝ ըստ այնմ ի ճշմարտութեանն կարգի երեւի, իսկ ոչ անսալ Վարդապետին զզնայն տրտմեալ՝ հեռի ի ճշմարտութենէ ցուցանի: Ապա ընդէ՞ր ի հարցումն եկն ասասցէ որ. քանզի մեծացաւ այրն յօրհնութենէ Օրինացն, եկն հարցանել զՏէր վասն Օրինացն, որպէս զի գովեսցի[ն] գործք նորա, յորժամ կատարեալ

¹ Դուկ. ԺԱ 20

² Զ թէ] եւ եթէ

³ Մատթ. ԻԵ 18

⁴ Եփես. Դ 30

⁵ Զ > բարի

⁶ Զ զանց առնել

կարծեսցի յՕրինացն պահպանութիւն: Եւ ա՛յլ ազգ. յորժամ ետես մանկանց զարքայութիւնն խոստացեալ, շարժեցաւ ի խնդիրս յայս՝ կարծելով՝ թէ տխեղծ մանկունքն այնպիսի փառաց հասին, քանի՞ առաւել նոքա, որ իբր զիս օրինապահք իցեն:

«Վարդապետ բարի». վարդապետ խոստովանի եւ յաշակերտութենէն փախչի, քանզի արծաթատր եւ փառատր բարս ունէր, որ ամենայն չարեաց արմատ է¹, որք թէպէտ զամենայն բարիս ունել կարծիցեն, ընչասիրութիւնն միայն բաւական է զնոսա² կործանել. որպէս մեքենայն, զոր «փիլիկկոնն» կոչեն, զյոյժ ամբոցս խախտեալ խարխալէ, այսպէս եւ արծաթսիրութիւնն զհոգւոյն որդեակն յատակէ: «Բարի». զայս յանօթ³ տայ Տեառն բարի կոչել, որպէս զի անդրադարձութեամբ եւ ինքն ի Փրկչէն այսպէս անուանեսցի, թէ զի՛ է աշակերտ բարի. բայց զայս ոչ եզիտ, զի ոչ է ակնառութիւն առ դատաւորութեան Նորա, թէպէտ քաղցր լեզուաւ շողորթեաց զՆա: «Չի՞նչ բարի⁴ գործեցից, զի ընդունիցիմ⁵ զկեանսն յախտենականս»⁶. այսինքն յաղագս անցաւոր կենացս ժառանգութեան զիտեն նպաստ զօրէնսն Մոսիսի, իսկ Դու արքայութիւն երկնից ւետարանես, այնմ զի՞նչ է պատճառ ժառանգութեան, նոյն օրէ՞նքն Մոսիսի, եթէ ա՛յլ ինչ:

Եւ Նա ասէ ցնա. «Չի՞ հարցանես զԻս զբարոյ. մի է բարի. եթէ կամիս ի կեանսն յախտենականս մտանել, պահեա զպատուիրանսն» (ԺԹ 17):

Երկուս եղ առաջի այնր, կրկին ընկալաւ զպատասխանին. առաջնոյն զի ասաց «Վարդապետ բարի», ասէ. «Չիք որ բարի», ըստ Մարկոսի, «բայց միայն Աստուած» (Մարկ. Ժ 18), կամ՝ զի նա իբր առ մարդ մատեալ եւ կամ առ մի որ ի վարդապետաց հրէից, վասն այնորիկ եւ Քրիստոս իբրեւ զմարդ խօսի ընդ նմա, թէ չիք որ բարի: Կամ թէ զթիւր կարծիս նորա ուղղէ. զի զՏէր սոսկ մարդ կարծեսց, ասէ՛ չեն իբր զմարդ բարի, որ զանգեալ են ընդ չարի, այլ իբրեւ զԱստուած բարի, որ անխառն է ի չարէ. եւ զի այս այսպէս է, յայտ ի բանէս է, զի ոչ ասաց թէ՛ չեն այնպէս, այլ թէ՛ զի այնպէս բարի կարծեցեր զԻս:

¹ Ա Տիմ. 2 10

² Տ > զնոսա

³ Զ յանօթ

⁴ Զ > բարի

⁵ Զ > զի ընդունիցիմ

⁶ Զ յախտենականս ժառ»

Եւ դարձեալ՝ զի պաշտէին յայնժամ զաստուածս բազումս յերկրի, ասէ՝ չիք որ ի նոցանէ բարի¹, բայց մի Աստուած Հայր որ յերկինս է, ուստի յայտ է, թէ եւ որ ի Նմանէն է Որդի՝ բարի է: Որպէս այլոր ասաց թէ՝ «Ծանիցեն զՔեզ միայն ճշմարիտ Աստուած եւ զոր առաքեցեր՝ զՅիսուս Քրիստոս» (Յովհ. ԺԷ 3), զի զոր օրինակ յեսս դու վասն բարի ծառոյ, նոյնժամայն ձգեալ լինի բարոյն վկայութիւն եւ ի վերայ պտղոյ նորա: Բայց ասելովն, թէ չիք որ բարի, ոչ եթէ զմարդիկ զրկէ ի բարութեանն անուանէ, այլ խտրոց արկանէ Աստուծոյ եւ մարդկան բարերարութեանն: Իսկ երկրորդին զի ասաց. «Չի՞նչ գործեցից», ասէ. «Եթէ՞ կամիս ի կեանսն յաւիտենականս՝ մտանել, պահեա զպատուի[րանսն]»: Քանզի դուռն եւ մուտ ի կեանսն է օրինացն պահպանութիւն ըստ այնն. «Թէ արասցես զայս, կեցցես սոքօք» (հմմտ. Գաղ. Գ 12), եւ Դաւիթ թէ՛ «Ծառայ Քո պահեսցէ զայս, եւ ի պահել նորա՝ զհատուցումն բազում» (Սաղմ. ԺԸ 12):

Ասէ ցՆա՝ զո՞րս (ԺԹ 18):

Ո՛չ առ ի փորձել, որպէս ասացի, եհարց, քանզի յերկուց իրաց յայտ է. մի՞ զի ոչ իբրեւ զփորձօղ յանդիմանեաց Տէրն, եւ երկրորդ՝ զի եւ ոչ Ինքն ըստ օրինակի փորձողացն զայրացաւ, այլ տրտմեցաւ միայն. ասպ ուրեմն կարծէր, թէ այլ ինչ պատուիրանք են արեւի քան զՕրինացն, որ լինի առիթ յաւիտենական կենացն, որում կարի իսկ ցանկացեալ էր: Իսկ Տէրն զնոյն զՕրէնս դնէ առաջի:

Ասէ ցնա Յիսուս. «Ձ-«մի սպանաներ»-ն, եւ «մի շնար», եւ «մի գողանար», եւ «մի սուտ վկայեր», «պատուեա զհայր քո եւ զմայր», եւ «սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո՝» (ԺԹ 19):

Յերկրորդ տախտակէն սկսեալ յառաջինն հանէ ո՛չ վայրապար, զի Մոսիսի զկարգ բնութեան օրինացն յայտնեաց, զի նախ աստուածսիրութիւնն է եւ ընկերսիրութիւնն եւ ասպ այլն ըստ կարգի, իսկ աստ փոխելով զկարգն Տէրն՝ զօգտակարութիւն ծանոյց: Չի նախ միմեանց ոչ վնասեն մարդիկ եւ ասպ զճնօղսն պատուեն, յետ որոյ եւ յընկերին սէրն զան, զի որ զընկերն ոչ սի-

¹ Զ > բարի

² Զ թէ

³ Զ ~ յաւիտենականս կեանսն

⁴ Զ > քո

րէ՛ եւ ոչ գօտարն ամենեւին, իսկ որ զծնօղն՝ նաեւ զընկերն, եւ յայնմանէ յաստուածսիրութիւնն ելանէ:

Իսկ թէ ընդէ՞ր զՕրէնսն ի մէջ բերէ. որպէս զի առ սակաւ սակաւ ընդէլացուցանէ Ինքեան Օրինացն եւ ցուցանէ համարան գոլ զհինն աշխմու, զոր հանդերձեալ էր դնել: Քանզի սպանանելն կարի անօրէնութիւն է, քակել զայն, զոր ոչ կարասցէ որ շինել, յորում լսի եւ այն՝ ոչ հարկանել, ոչ նախանձել, ոչ ատել, ոչ բարկանալ, ոչ մախալ, եւ այլ սոյնսպիսիք: Այլեւ շնութիւնն կրկնակի է. ոչ կռապաշտութեամբ՝ յԱստուծոյ եւ ոչ անօրէն տարփմամբ զընկերին յափշտակել, զանձինս իգացուցանել եւ զմարմինս ջախջախել, այլեւ աղքատութիւն եւ կործանումն երից տանց գործել. է եւ առ այս հրաժարել ի պէսպէս օճրագործութեանց՝ ի գիշութենէ՛, ի զագրաբանութենէ եւ յայրոց: Նոյնպէս եւ գողութիւնն հասարակաց թշնամութիւն է, զի թէպէտ մի է եւ միոյ առնէ զվնաս,² սակայն կարծիքն ի բազումս ձգի, եւ նա զբազմաց խորշի շոպել, թէպէտ ոչ զօրէ: Յարի յայս եւ ոչ ուրանալ զաւանդս եւ ոչ աւագակել, ոչ վաշխել եւ ոչ զգտեալ իրս թագուցանել կամ ի վաճառս զրկութիւն եւ խաբէութիւն գործել: Այսպէս եւ սուտ վկայութիւնն մեծագոյն վնաս է, նախ զի զճշմարտութիւնն կորուսանէ, ապա եւ զյանցատորն ի նմին մեղս հաստատէ եւ զանձն կցորդս օտարաց մեղացն առնէ, ընդ որով լսի՝ ոչ ստել, ոչ զրպարտել, ոչ բամբասել, եւ այլն:

Իսկ պատուել զհայրն եւ զմայրն՝ հրամայական է, զի երկրորդ պատճառք են յետ առաջին պատճառին, այլեւ խնամիչք հոգւոյ եւ մարմնոյ, մարմնոյ ի սնունդս, եւ հոգւոյ ի բարեպաշտ կրօնս, եւ երախտագործացն ապերախտ լինել վերջինն չարեաց է: Առ որով արժան է պատիւ դնել ծերոց, վարդապետաց, առաջնորդաց, տերանց եւ այլոց երիցագունից ի կրսերաց: Դարձեալ՝ Հայր՝ Աստուած, եւ մայր՝ Օրէնքն, զոր պատուել հարկաւոր է, որում ոչ պատուողացն մեղադրէր մարգարէիւն. «Եթէ Հայր եմ, ո՞ր է պատիւն Իմ» (Իմմն. Մատ. Ա 6), եւ «Յանցանել ըստ օրէնսն զԱստուած անարգես» (Հոմմ. Բ 23):

«Եւ սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո՞»: Ի ծայրագոյն զագաթն կատարելութեան հանէ այսու, զի որ զայս ունի՛ յամենայն մեղաց հրաժարեալ է եւ բարութեամբ լցեալ, զի որ անձին

¹ Զ գիճութենէ

² Զ վնաս

³ Զ > քո

չափ սիրել զընկերն, ո՛չ վնասել ումեք եւ որպէս անձին խոկայ առնել բարիս՝ հոգետոր կամ մարմնաւոր, զնոյն եւ ընկերին խորհի, ո՛չ միոյ, այլ բազմաց, զի ամենեքեան եղբարք եւ ընկերք մեր են ըստ արարչութեանն եւ ըստ նիւթոյն, այլեւ օրինացն համակրօնութեան: Դարձեալ իբր զհոգի ասէ սիրել եւ ո՛չ իբր զմարմին, զի ընկերսիրութիւնն հոգետոր է, այլեւ ըստ հոգոյ խրատէ սիրել զընկերն եւ ո՛չ ըստ մարմնոյ, մանաւանդ ըստ առ ի Քրիստոս վերստին նորոգմանն:

Ասէ ցնա պատանին. «Ձայդ ամենայն պահեցի ի մանկութենէ իմմէ, արդ ի՞նչ իւրք պակաս իցեն» (ԺԹ՝ 20):

Ինձ թուի ստել յայսմ վայրի. զի եթէ զօրէնսն պահեալ էր, որպէս ասաց, ուստի՞ ունէր զընչիցն յաւելուած, քանզի ոչ ունի ընչիցն բնութիւն ի բազումս ծախել եւ անձին չափ հաւասար այլոց բաշխել, եթէ աննուագ մնայցէ, ապա եթէ լեզուաւ միայն սիրեցեալ զընկերն եւ պատուեալ զծնօղն, եւ կամօք եւ ո՛չ արդեամբք, նա ւանհիկ յանգոյս մարտնչէր, զի օրինացն պահպանութիւնն ո՛չ կերպարանօք է, այլ իրօք, ապա թէ ոչ՝ եւ զինքն իսկ պարտ էր կամօք սիրել եւ ո՛չ զպէտսն լցուցանել: «Ձայդ ամենայն պահեցի ի մանկութենէ իմմէ՝». գոր բնաւին չէր պահեալ, քանզի ոչ միայն Օրէնքն քարոզէր զայլոյն չյափշտակել, այլեւ զհորն այլոց մատակարարել, գոր ոչ երեւի արարեալ: «Արդ ի՞նչ իւրք պակաս իցեն»: Որպէս ասացաք յառաջագոյն, թէ խառնակ է բարք առնս այսորիկ, զի գոր նախ ստեաց, այժմ կամի գուղիղն ուսանել, որ չէ ինչ սակաւ ուղղութիւն իմանալ զանձին թերութիւն, վասն որոյ ասէ Մարկոս թէ՝ «Հայեցեալ ի նա՝ յոյժ սիրեաց զնա» (Իմմտ. Մարկ. Ժ՝ 21), զի ի ձեռն սիրոյն յօժարեցի յօրէնս Նորա, զի թէ յանկատարութեանն գոլով սիրեցաւ, ո՞րչափ յորժամ ի կատարելութիւնն ելցէ: Եւ զի՞նչ Քրիստոս:

Ասէ ցնա Յիսուս. «Եթէ կամիս կատարեալ լինել, երբ վաճառեա՛ զինչս քո եւ տուր աղբատաց, եւ ունիցիս զանձս յերկինս, եւ ե՛կ զկնի Իմ» (ԺԹ՝ 21):

Յուցանէ, զի թէ զՕրէնսն կատարեալ էր, տակաւին յանկատարութեան մնայր, զի մարմնոյ էր սրբութիւն Օրէնքն եւ ո՛չ մտաց եւ դաստիարակ ի Քրիստոս Յիսուս, իսկ եթէ յՕրէնսն գոյր անկա-

¹ Զ > իմմէ

տար, զի՞նչ մնաց առ նա կատարելություն: Վասն այնորիկ ասաց. «եթե¹ կամիս կատարեալ լինել»: Այսու ո՛չ հարկի բռնադատե, այլ յանձնիշխան կամսն ապաստան առնէ եւ նախ քան զճգունսն զպարգեսն դնէ առաջի, այսինքն զկատարելութիւնն. է՞ր վասն. զի յապահովասցի եւ յօժարութեամբ ի հանդէսն մատիցէ: «Երթ,- ասէ,- վաճառեա զինչս քո եւ տուր աղքատաց». այս է կատարելութիւն, քանզի Օրինացն մարմնական է, ասէ, եւ երկրաւոր, զի փոխանակ այնմ պահպանութեան փարթամացար, իսկ վաճառելն եւ տայն աղքատաց երկնային է եւ հոգեւոր, վասն զի աստ սերմանելն յերկինս տայ հնձել: Եւ զի գոր սիրէր այրն յայնմանէ հրաժարել հրամայէր, զի մի՛ կարծիցէ, թէ յընդունայնս վատնիցէ զինչսն, ասէ. «Եւ ունիցիս գանձս յերկինս»: Չի որքան յերկրի է, անդ է եւ սիրտ նորա, բայց յորժամ յաղքատս ծախես, սիրտ քո յերկինս լինիցի՝ զվերինն խոկալով, ուր² մեր առաքիւնութիւնն: Ուստի յայտ է, թէ ոչ կորնչին իրքն, այլ տոհմականօք աճեն, եւ «գանձ» ասելն զառատագոյն հատուցումն յայտնէ եւ զանկապուտն:

«Եւ եկ զկնի Ի՛մ»: Քանզի առաջինն ոչ է բաւական ի կատարելութիւն, այլեւ զկնի Նորա ընթանալ, այսինքն զհրամայեալսն առնել եւ խաչակից Նմին լինել՝ ըստ առաքելոյ թէ՛ «Հայեցարոք ի Չորագլուխն հաւատոյ, որ յանձն էառ³ զխաչ, արհամարհեաց զամօք» (հմմտ. Եբր. ԺԲ 2), եւ փոխանակ մեղու եւ կաթին տղայոց, որոց Օրէնքն ջամբէր մարմնական յոփութիւն, խաչ եւ բեւեռք կատարելոց, որով պարգեւի երկնային բարութիւնն՝ աստ հաղորդ լինել չարչարանացն եւ անդ՝ փառացն, զի քան զինչսն թօթափել՝ ա՛յս իսկ է զարիւնս իւր վասն Նորա հեղուլ:

Բայց քննելի է, թէ ընդէ՞ր ոչ ասաց թէ՛ բաշխեա զինչս քո աղքատաց, այլ թէ՛ «վաճառեա՛ զինչս քո⁴ եւ տուր աղքատաց»: Նախ՝ զայն կամի տէրունականս հրաման, զի ի կամաց եւ ո՛չ ի հարկէ լինիցի, որպէս յառաջ ասաց. «եթէ կամիս կատարեալ լինել», քանզի Հօրն տայն զՈրդի հաճութեամբ էր եւ ո՛չ բռնադատութեամբ: Եւ երկրորդ՝ զի մի՛ երկուց եւ երից միայն բովանդակեսցի ողորմածացն ողորմութիւն, այլ յամենեսին մասնաւորեալ

¹ Զ թէ

² Զ որ

³ Զ առ

⁴ Զ > զինչս քո

բաժանեսցի: Եւ երրորդ՝ վաճառելովն դիրաշարժ առնէ զմարդիկ յողորմութեանն տուրս, քան թէ բաշխելովն, քանզի ո՞րք զինչ եւ զստացուածս, որ ըստ իւր բաղձանաց ստացեալ իցէ, առանց մահուն պատճառի յաղքատս ցրուիցէ¹, որք բազումք գտանին, զի մեռանին եւս եւ ոչ ի բաց հանիցեն, բայց զզինս վաճառելոցն առ սակաւ սակաւ դիրաւ² բաշխիցէ աղքատաց: Եւ չորրորդ՝ խնամ տարեալ աղքատացն կարեկից լինի, որպէս ի ժամանակս առաքելոցն, զի վաճառէին զինչս եւ զստացուածս եւ բերէին զզինս եւ դնէին առ ոտս առաքելոցն՝ տալ ում պիտոյ իցէ եւ լնուլ զպէտս կարեաց իւրաքանչիւր ցանկութեան: Եւ հինգերորդ՝ տալ զաստիս եւ առնուլ զհանդերձեալն, զի այս է վաճառելն:

Իբրեւ լուաւ պատանին զբանն, զնաց տրտմեալ, զի ունէր ստացուածս բազումս (ԺԹ 22):

Երկիր էր նա պարարտ եւ գէր, սակայն փշովք հեղձուցեալ էր, քանզի որպէս աւետարանիչս ասէ, թէ «վասն այնորիկ տրտմեցաւ, զի ունէր ինչս բազումս», վասն զի ոչ այնպէս ընթռնեալ են որք սակաւ ունիցին, իբր զայնոսիկ, որ բազմութեամբ ընչից թաղեալք են, որպէս այրս այս, որ այնքան յօժարութեամբ մատեաւ, բայց յորժամ լուաւ զինչս ի բաց ընկենուլ, այնքան փղձկեցաւ, զի եւ պատասխանի անգամ ոչ կարաց տալ, այլ տրտմեալ երթայր եւ պապանձեալ:

Ասէ Յիսուս ցաշակերտսն. «Ամէ՛ն ասեմ ձեզ, զի դժուարաւ մտցէ մեծատունն յարքայութիւն երկնից (ԺԹ 23):

Ո՛չ ասաց թէ ոչ մտանէ, այլ թէ՛ դժուարա՛ւ մտցէ, քանզի մածեալ³ եւ բեւեռեալ⁴ իցեն միտք ընչասիրացն առ ընչիցն բազմութիւն եւ իբր անդամ ինչ միացուցեալ յանձինս, վասն որոյ դժուարին ասաց զքակելն, քանզի ոչ եթէ զինչսն խոտէ, այլ զանպատշաճ սէրն որ առ ինչսն, ձաղէ: Եւ արդ՝ եթէ որք զիրսն ունիցին, դժուարաւ մտցեն, ասպա զի՞նչ առնիցեն՝ որք զայլոցն⁵ ազահիցեն: Բայց ո՛չ վայրապար առ աշակերտսն առնէ զբանն, զի նոքա

¹ Զ ցրուեսցէ

² Զ դիրաւ դիրաւ

³ Զ մածեալք

⁴ Զ բեւեռեալք

⁵ Զ զայլոյն

այն ինչ յաշխարհէ հրաժարեալ են, զի մի՛ դարձեալ զնովիմբ զայցեն, այլ եւ զգուշացուցանէ օտար դիմօք ոչ պատկառել յաղքատութենէ, յորժամ իրքն այնպէս իցեն: Իսկ Մարկոս ասէ թէ՛ «Հայեցաւ յայսկոյս յայնկոյս» (Մարկ. Ժ 23), զի ո՛չ մեծատանցն, այլ եւ աշակերտացն ի զգուշութիւն ասացաւ, որպէս ցուցաւ. կամ թէ յերկոսին կողմանսն մեծատունք էին, հայեցաւ եւ ոչ զոք եգիտ արժանի, վասն որոյ առ աշակերտսն արար զբանն:

Դարձեալ ասեմ ձեզ. դիւրին է մալխոյ մտանել¹ ընդ ծակ ասղան, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել» (ԺԹ 24):

Նախ յորդորէ, թէ որք զայսպիսի դժուարին գործս կատարեն, այսինքն՝ զմեծութիւնն յօգուտ այլոց մատակարարեն, ո՛չ սակաւ վարձուց, այլ մեծագոյն փառաց հասանեն: Բայց պարտին զանձինս մաշել՝ ըստ օրինակի թալխայի, որպէս զի ի ծակ ասղան անցանէ, նոյնպէս նեղ դրամքք յարքայութիւնն մտանել: Եւ երկրորդ՝ զոր օրինակ գոյ դուռն կուսանաց, գոյ եւ աշխարհականաց, որք կարեն մտանել յարքայութիւնն երկնից, բայց ի դուռն կուսանաց դժուարին է նոցա մտանել, նոյնպէս մեծատունք թեպէտ մտանեն, սակայն ի դուռն կատարելոցն խաչիւ անհնարին է մտանել՝ ըստ ասացեալ² ասպացուցիդ: Եւ երրորդ՝ ցուցանէ, թէ բնութիւն իրաց ոչ ընդդիմանայ հրամանի Աստուծոյ, իսկ անձնիշխան կամք յոյժ հակառակի, եւ ոչ բռնադատէ Աստուած, վասն³ այսորիկ ասէ թէ՛՝ «Դիւրին է մալխոյ մտաւնել⁴ ...»: Եւ չորրորդ՝ զի գուղտն «մալուխ» կոչէ արաբացին, եւ այլք զնաւատորմիլ նաւու ասեն «մալուխ», որ նշանակէ զթիրս եւ զկորուսեալս գործովք վատթարօք, եւ կամ հեղձեալ ի ծով աշխարհիս ալեկոծ կենօք. արդ՝ այսպիսեացս, ասէ, դիւրագոյն է ասպաշխարութեամբ մտանել յարքայութիւնն, քան մեծատանց⁶ մեծութեամբն իրեանց:

Իբրեւ լուան աշակերտքն, զարմացան յոյժ եւ ասեն. «Իսկ ո՞ կարիցէ ապրել» (ԺԹ 25):

¹ Զ ~ մտանել մալխոյ

² Զ ~ ասացեալ ըստ

³ Տ վասն որոյ

⁴ Զ > թէ

⁵ Տ > մտաւնել

⁶ Զ մեծատան

Չարմանալ աշակերտացն զխնամս բազմաց ցուցանէ, զի վարդապետք էին աշխարհի, կարի իսկ գթային ի նոսա եւ դողային վասն ամենայն տիեզերաց, որպէս թէ ասել՝ ամենայն աշխարհ ե՞րբ կարիցէ զինչս իւր ի բաց դնել, որով փրկութեանն հասանիցէ, եւ զայս ասելով՝ կամեցան զելս իրացն ուսանել:

Հայեցաւ ի նոսա Յիսուս եւ ասէ. «Առ ի մարդկանէ այդ անկար¹ է, այլ առ յԱստուծոյ ամենայն ինչ զօրաւոր» (ԺԹ 26):

Առ ի հաստատել զամբոյսեալ միտս նոցա՝ հայեցաւ ի նոսա մեղմախառն եւ քաղցրատես ակամբք²: Եւ կամ՝ հայելն գտարակուսանաց նոցա լուծումն նշանակէ, զի ոչ անփոյթ արար զհարցուածս նոցա, այլ մեկնէ, թէ ի մարդկանէ այդ անկար է, բայց առ յԱստուծոյ զօրաւոր: Կամ թէ ասէ, թէ Աստուծոյ զօրութեանն գործ զայն առնել՝ զուղտ ի ծակ աստան անցուցանել, զի կամ զուղտ զսպէ եւ կամ զծակ աստան լայնէ. այսպէս վերին շնորհաց պէտք են, որ զայն ուղղել կարիցէ, այսինքն է՝ զինչսն յաղբատս ծախել՝ ըստ այնմ. «Առանց Իմ ոչինչ կարիցէք առնել» (Յովհ. ԺԵ 5): Կամ թէ այսպէս. զի յորժամ ըստ մարդկան վարիմք՝ յուսալով ի մեծութիւնս, անհնար է այսու զարքայութիւնն ժառանգել: Իսկ եթէ յոյս մեր ի Տէր հաստատուն իցէ եւ հաւատովն որ ի Նա յաղթեմք աշխարհի՝ ըստ Յովհաննու թէ՛ «Այս է յաղթութիւն աշխարհի՝ հաւատքն մեր» (հմմտ. Ա Յովհ. Ե 4), եւ քաղցր լծոյ Նորա հնազանդիմք վասն հանդերձեալ փառացն՝ գիտելով թէ «առ ժամայն թեթեւ նեղութիւնս զառաւելութիւն փառացն գործէ ի մեզ» (հմմտ. Բ Կոր. Դ 17), եւ «չեն արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն, որ յայտնելոց է» (Հռոմ. Ը 18), յայնժամ զօրաւոր ենք յամենայնի՝ ըստ առաքելոյ. «Այսու ամենայնի յաղթեմ³ Նովաւ, որ զօրացոյցն զիս» (հմմտ. Փիլպ. Դ 13), եւ՝ «Յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ» (Բ Կոր. ԺԲ 11): Չայս ըստ կարի՝ այսպէս դատեցաք, իսկ թէ տացէ ումեք Աստուած զօրութիւն բանի, այլ ե՛ւս գեղեցիկս իմասցի, քանզի յոյժ խրթին է զօրութիւն բանիս:

Յայնժամ պատասխանի ետ Պետրոս եւ ասէ ցՆա. «Ահաասիկ մեք քոնաք զամենայն եւ եկաք զկնի Քո. արդ զի՞նչ լինիցի մեզ» (ԺԹ 27):

¹ Զ կար

² Զ ակամբք

³ ԶՏ յաղթեմք

Ո՛չ վայրապար գհարցուածս զայս առաջի եղ Պետրոս, այլ զի լուաւ ի Տեառնէ. «Թէ կամիս կատարեալ լինել, երբ վաճառեա՛ զինչս քո եւ տուր աղքատաց, եւ ունիցիս զանձս յերկինս, եւ եկ զկնի Իմ», կամի ուսանել թէ՛ մեք ոչինչ ունէաք, եւ զոր ունէաք՝ թողաք եւ ոչ վաճառեցաք, եւ զկնի Քո եկաք, արդ՛ զո՞յ մեզ հատուցումն ինչ: Առ որս ասելի է, թէ զո՞ թողեր, երանելիդ Պետրե, զեղէ՞զն, զգործի՞ն, զնաւա՞կն, զարուե՞ստն, «զամենայն ինչ» զա՞յն ասիցես: Այո՛, ասէ, զի ըստ առնն՝ եւ զօրութիւն իւր, եւ ըստ արգասեացն՝ եւ մեծութիւնն, զորս թողաք եւ եկաք զկնի Քո, քանզի թողուլն՝ զհետ երթալոյն եղեւ, կամ թէ՛ հետ երթալն ի թողլոյն դիւրաւ կազմեցաւ:

Դարձեալ՝ զամենայն թողուլ զկամքն ասէ, որ կարօղ է բոլոր աշխարհի ցանկալ, որպէս թէ ասէ՛ որչափ կամք մեր ունի ցանկութիւն յամենայն իրս փութալ, զայն թողաք եւ եկաք զկնի: Յիրաւի՛, զի բազումք յարտաքնոցն զամենայն կամաց ցանկութիւն արհամարհեալ զնացին զհետ Նորա. ո՛չ ունին մասն ի Նորայոցն, որպէս որք զնան եւ ոչ թողուն, իսկ սոքա զերկոսին արարին: Դարձեալ՝ եւ զգունդս աղքատաց մխիթարէ, զի մի՛ ասիցեն, թէ չունիցինք ինչս՝ չկարիցենք կատարեալ լինել, հարցանէ Պետրոս, զի քո ուսեալ ի Պետրոսէ՛ չլինիցիս երկմիտ: Քանզի բազում անգամ զայլոյ իրս ի մեր դէմս խօսինք, նոյնպէս եւ առաքեալն փոխանակ ամենայն տիեզերաց հարցանէր, զի՛ զիւրն քաջ գիտէր, որ եւ զերկնից փականսն աստէն ընկալաւ²: Այլ որպէս ասացի, վասն բազմաց խնդրէր, ուստի եւ ընկալաւ զխնդիրն:

Ասէ ցնա Յիսուս. «Ամէ՛ն ասեմ ձեզ, զի դուք, որ եկիք զկնի Իմ, ի միսանգամ զալստեան, յորժամ նստցի Որդի մարդոյ յաթոռ փառաց Իւրոց, նստցիք եւ դուք յերկոտասան աթոռ՝ դասել զերկոտասան ազգ Իսրայէլի (ԺԹ 28):

Յոյժ զգուշաբար ասաց թէ՛ «դուք որ եկիք զկնի Իմ», որպէս զի զՅուդա զատուցէ, քանզի ոչ էր սրտիւ զկնի Նորա, վասն այսորիկ ոչ ասաց թէ՛ «դուք որ գայք զկնի Իմ», այլ թէ՛ «որ եկիք»՝ ի կատարումն նոցա հայելով: Իսկ Յուդաս թէպէտ յայնժամ զկնի էր, այլ ախտիւն հետեալ կայր ի Նմանէ, քանզի չարար զանձն արժանի, որպէս եւ ոչ նախաստեղծն, որում ասացաւ թէ՛ «Ահ ձեր

¹ Զ վասն զի

² Մատթ. ԺԶ 19

եղիցի ի վերայ ամենայն զազանաց» (Ծննդ. Թ 2), բայց յորժամ զազանացան եւ նորա, զրկեցաւ յայնց իշխանութեանց. այսպէս եւ Յուդա՝ օգտեալն ի թուոյ երկոտասանիցն: «Ի միսանգամ զալստեանն», - ասէ: Ոչ աստ առնէ զկատարեալ հատուցումն. նախ՝ զի մի՛ ծուլասցին առեալ պարզեւօքն: Եւ երկրորդ՝ զի յապաղմամբն յերկարեսցի փափագ նոցա ի մշտնջենաւոր վայելումն՝ անդր ունելով զյոյս եւ մի՛ յանցաւորս, զի երեւելիքս առ ժամանակ մի են, իսկ աներեւոյթքն յաւիտենական, մանաւանդ զի այս հանդիսի է տեղի, եւ այն՝ պսակի: Եւ երրորդ՝ զերկրորդ զալուստն հաստատէ այսու, յորում յայտնելոց են փառք արդարոցն, որպէս եւ յայլում տեղոջ ասէ թէ՛ «Ի միսանգամ զալստեանն հատուցից քեզ» (Դուկ. Ժ 35), զրէ եւ Պօղոս թէ՛ «Յորժամ միսանգամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ» (Եբր. Ա 6), ասէ եւ մարգարէ ոմն թէ՛ «Միսանգամ շարժեցից ոչ միայն զերկիր¹, այլեւ զերկիւն²» (Եբր. ԺԲ 26, հմմտ. Անգլ. Բ 6):

«Յորժամ նստցի Ռոդի մարդոյ յաթոռ փառաց...»: Յուցանէ, թէ ընդ Նմին թագաւորելոց են եւ Նորին փառացն հաղորդ լինելոց, եւ ոչ եթէ այժմ ոչ է յաթոռ փառաց, որում ասի թէ՛ «Աթոռ Բո, Աստուած, յաւիտեանս յաւիտենից» (Սաղմ. ԽԳ 7), այլ զի ի բազմաց ծածկեալ է փառաց Նորա ծանօթութիւնն, այսինքն՝ աստուածութեանն երեսումն, իսկ յայնժամ ամենեցուն ծանուցանի թարց պատճառանաց, որք երկրպագեն Նմին՝ փառաւորելով զանուն Նորին յաւիտեան: Այլեւ աթոռովն յայտ առնէ, թէ դատաստանի եւ հատուցման է ժամանակ, քանզի այս զալուստ՝ փրկութեան եւ ողորմութեան, իսկ այն՝ իրաւանց եւ արդարութեան՝ ըստ երգոյն թէ՛ «Նստար յաթոռ դատաւոր արդարութեան» (Սաղմ. Թ 5)՝ յայնմ մեծագոյն հրապարակին:

«Նստջիք եւ դուք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգ Իսրայէլի»: Չայս ոչ վասն նիւթեղէն աթոռոց ասէ, այլ որպէս յայլում տեղոջ սեղանակցութեամբն զփափկութիւնն եւ զհանգիստն նոցա նշանակեաց, նոյնպէս աստ աթոռովն զառաւել ճոխութիւնն եւ զպատուակցութիւնն զուշակէ, քանզի երկոտասան ազգաց քարոզեցին, որպէս զրէ Յակոբոս³. «Երկոտասան ազգաց որ ի սփիւռսդ⁴ էք՝ ողջոյն» (Յակոբ. Ա 1), եւ յերկոտասան մասունս աշ-

¹ Զ զերկիր

² Զ զերկիր

³ ՏՁ Յուդա Թաղէս

⁴ Տ սփիւռդ

խարհի ընթացան ճգնաժամը, եւ զայնչափ անդամս մարմնոց իւրեանց դաստիարակեցին մաքրութեամբ, վասն որոյ հանգոյն հանդիսիցն եւ պսակն նոցա առթեցաւ: Բայց դատելն գերկոտասան ոչ եթէ դատաւորք նստիցին, զի դատաստանն Որդոյ է, որպէս ասաց ուրեմն¹, այլ որպէս զհարաւային տիկնոջէն ասէ եւ զնինուեացոցն, թէ դատապարտեսցեն զազգս զայս², նոյնպէս եւ նոքա: Վասն այտորիկ ոչ ասաց թէ՛ «զամենայն հեթանոսս», այլ թէ՛ զազգն Իսրայէլի, քանզի ի նոյն օրէնս եւ ի կարգս սնեալ էին հրէայքն եւ առաքեալքն. եւ սոքա հաւատացին, եւ նոքա յետս կացին, եւ զի մի՛ ասիցեն, թէ վասն այտորիկ ոչ հաւատացաք, զի օրէնս³ ունէաք, եւ կամ այլք թէ՛ բարիս ոչ գործեցաք, զի մարմնական էաք, սոքօք զնոսա յանդիմանէ եւ դատելոյ պարտական առնէ:

Եւ ամենայն որ ոք եթող գտուն, կամ զեղբարս, կամ զքորս, կամ զհայր, կամ զմայր, կամ զկին, կամ զորդիս, կամ զազարակս՝ վասն անուան Իմոյ, հարիւրապատիկ առցէ եւ զկեանսն յախտենականս ժառանգեսցէ (ԺԹ 29):

Որպէս ասացաք յառաջագոյն, զի հարցուածն Պետրոսի ոչ վասն իւր միայն էր, այլ եւ վասն բազմաց, վասն որոյ եւ Տէր մեր յետ զնոցայն ասելոյ պատիւ՝ ցուցանէ այժմ եւ զհասարակաց հատուցումն: Եւ յայս անորոշաբար վարի ընդհանրական անուամբ թէ՛ «ամենայն որ ոք եթող գտուն» կամ զընտանիս, զորս թուէ, ոչ վասն այլ ինչ պատճառի, այլ վասն անուան Իմոյ, այսինքն յԻս հաւատալոյ⁴, «հարիւրապատիկ առցէ եւ զկեանսն յախտենականս ժառանգեսցէ⁵», կամ թէ միոյն փոխանակ, որ եթող տունս եւ եղբարս, եւ հայր եւ մայր, եւ քորս, հարիւրս առցէ ի հանդերձեալ կեանսն՝ զղրախտին ժառանգութիւն եւ զհրեշտակացն խորանակցութիւն, եւ զՀօրն մերձատրութիւն, եւ առ վերին Եկեղեցին զազգակցութիւն, եւ զարդարոցն խմբակցութիւն, զորս բաղդատեալ առ այժմուս՝ հարիւրապատիկ գտանեն նոքա վասն յի եւ կատարեալ գոյոյն՝ ըստ ոչխարին առակի⁶: Արդ՝ ժողովեալ բանս այսպէս իմանի, թէ միոյն հարիւրապատիկ ի յախտենական կեանսն

¹ Յովի. Ե 22, 27, 30

² Մատթ. ԺԲ 41

³ Տ (ոչ)

⁴ Տ հաւատացելոց, Չ հաւատացելոյ

⁵ Չ “] ժառանգեսցէ

⁶ Մատթ. ԺԸ 12

ընդունիցի, քանզի թաղեալս այժմ սերմ լինիցի հարիւրաւորաց ունանց աճեցելոց տոհմականօք: Կամ թէ՛ հարիւրապատիկ զայժմու փառացս վայելչութիւն ասէ՛ զհոգեւորս կամ զմարմնաւորս, որպէս զի ի մօտաւորացս զհանդերձեալն հաւատարիմ առնէ, քանզի թողեալ զեղէզն եւ զգործին իշխանութիւն ստացան ի վերայ բազմաց եւ պատիւս ի տանց եւ յաշխարհաց առին, այլեւ տօնք եւ գովութիւն ընկալան, զի սուրբքն աստ պատուին¹ եւ անդ պսակելոց են յաւիտենական փառօքն, որպէս եւ հակառակքն սոցին, զի աստ տանջին, եւ անդ տանջելոց են:

Դարձեալ Մարկոս ասէ թէ՛ «Ոչ որ է որ եթող զտուն կամ զերբայր, եթէ ոչ՝ հարիւրապատիկ առցէ յայսմ աշխարհի տունս եւ ազարակս եւ հայր եւ մայր, եւ զյաւիտենական կեանսն ի հանդերձեալն ժառանգեսցէ» (հմմտ. Մարկ. Ժ 29-30): Եւ յիրաւի՛ որ եթող զտուն կամ զայլն, միոյն փոխան² գտանէ աստ հարիւր եղբայր եւ հայր եւ քոյր, եւ ի վերայ այսոցիկ զյաւիտենական կեանսն ժառանգեսցէ, սակայն հալածանօք: Բայց ոչ՝ վայրապար թողուլ հրամայէ զազգայինսն, Այն, որ օրէնս եդ պատուել զհայր եւ զմայր եւ սիրել զեղբարս, այլ կամի, զի քան զամենայն նախամեծար զաստուածպաշտութիւնն համարիցիմք եւ ի բոլոր սրտէ զՆա սիրիցենք, որպէս յայլում տեղոջ յայտնապէս ասաց թէ՛ «Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զԻս, չէ՛ Ինձ արժանի» (Մատթ. Ժ 37): Կամ թէ՛ զհալածանաց ժամանակն ակնարկէ այսուիկ, զի բազում հարք եւ մարք իսպիանիչք լինին աստուածպաշտութեան եւ առաքիւնութեան: Արդ՝ յորժամ այսպէս լինիցին, մի՛ կին ի կանայս եւ մի՛ հարք ի հարս եւ մի՛ ամենայն ազգ յազգատոհմս համարեսցի վասն սիրոյն որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր:

Բազումք եղիցին առաջինք յետինք, եւ յետինք՝ առաջինք (ԺԹ 30):

Չայս կամ վասն հրէիցն ասէ եւ մանաւանդ վասն դպրացն եւ փարիսեցոցն, որպէս ոմանք կարծեն, քանզի նոքա առաջինք էին վասն նախածանօթութեանն Աստուծոյ եւ կոչման մարգարէիցն եւ յետինք եղեն ի գալ շնորհացն Աստուծոյ, որով տարագիր եղեն յուխտէն աւետեաց, իսկ յետինք՝ հեթանոսք վասն զոյժ յետին եւ զանարգ նիւթս պաշտելոյ³, զքարս¹ ասեն եւ զփայտս,² որք հաւա-

¹ Զ պսակին

² Զ փոխանակ

³ Զ պաշտեցին

տովն ի Քրիստոս արդարացան եւ եղեն անդամք Քրիստոսի, որպէս այլոր ասաց թէ «Պռռնիկք յառաջեցեն քան զձեզ յարքայութեանն Աստուծոյ» (Մատթ. ԻԱ 31), եւ դարձեալ՝ «Եկեցեն ի չորից կողմանց եւ բազմեցին ընդ արդարոցն, եւ զձեզ հանցեն ի խաւարն արտաքին» (հմմտ. Մատթ. Ը 11-12), կամ թէ՛ վասն աղքատաց եւ մեծատանց ասէ: Չի մեծատունք առաջինք են պատուով ի կեանս յայս, իսկ աղքատք՝ յետինք, եւ զի մեծատանցն դժուարաւ ասաց մտանել յարքայութիւնն³ եւ յետնել վասն ընչասիրութեանն, իսկ աղքատք եւ տղէտք, որ իբրեւ զՊետրոս էին, եւ թողին զամենայն եւ զկնի Նորա չոգան, յառաջեցին ի վերին կեանսն ըստ այնն. «Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւնն երկնից⁴» (Մատթ. Ե 3): Չի որք վասն Նորա աղքատանան, ճշմարտապէս ճոխք են ի հանդերձեալն, եւ զի մի՛ զամենայն մեծատուն յետին կարծիցես անդ եւ զամենայն աղքատ՝ առաջին, վասն այսորիկ ոչ ասաց, թէ ամենայն առաջինք յետինք, այլ թէ՛ բազմաց պատահի այս, ուստի իմանամք, թէ յոլովք առաջինք աստ եւ անդ, նոյնպէս բազումք յետինք աստ եւ անդ: Լսի եւ այսպէս. քանզի բազումք արդարք, որք⁵ նախ ազահ են յաշխարհի բարի գործովք իւրեանց եւ ի փառս մարդկան զայն արարեալ՝ հպարտացան, որպէս փարիսեցին այն⁶, եւ եղիցին յետինք: Իսկ յոլովք ի մեղաւորաց, որք յետինք էին, վասն խոնարհութեան սրտի միով ձայնիւ առաջինք գտան իբր մաքսաւորն եւ պռռնիկն եւ աւազակն ի խաչին⁷:

¹ Զ զքար

² Զ զփայտ

³ Զ յարքայութիւն

⁴ Զ “] երկնից

⁵ Զ որ

⁶ Ղուկ. ԺԸ 10-14

⁷ Ղուկ. ԺԸ 10-14, Է 37-50, ԻԳ 39-43

ԳԼՈՒԽ Ի

Քանզի նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն, որ էլ ընդ առաւօտս ի վարձու ունել մշակս յայգի իւր (Ի 1):

Դէմք առակի ոչ տան ամենայն իրօք գտեսութեանն¹ լրումն, այլ միայն առաջնորդ մտացն լինիցին, զոր եւ մեք արասցուք՝ հետամուտ լինելով բանիցս, թերեւս ըստ կարի լուծանել մարթասցուք: Արդ՝ «տուն» անուանէ զաշխարհս եւ «տէր տանս» զԱրարիչն սորին՝ ըստ առաքելոյ. «Մովսէս հաւատարիմ ի վերայ տան նորա» (Խմնտ. Երբ. 9 5), իսկ Որդին տէր է տան աշխարհիս, քանզի որպէս յայլում տեղոջ «մեծատուն» զԻնքն անուանեաց եւ զընդ ձեռամբ անկեալսն «տնտես» կոչեաց², աստ «տանուտէր» եւ «մշակ» յորջորջէ: «Ել ընդ առաւօտս ի՞ վարձու ունել մշակս յայգի իւր»: «Առաւօտ» կամ զսկիզբն արարչութեանն ասէ, յորում ստեղծու լոյս եւ փարատեցաւ խաւար, եւ վարձեցաւ Ադամ օրինօք ի դրախտին, կամ յԱդամայ մինչեւ ի Նոյ, զի սկիզբն էր աշխարհի, եւ կամ զառաջին զալուստն, որ առաւօտ ծագեցաւ մեզ յետ նսեմութեան գիշերոյ Օրինացն եւ մեղացն, ուստի էլ յարեւելից ի Հօրէ փեսայօրէն ձեռով, այսինքն մարմնական զեղով, եւ երեւելով լուսատրեաց զմեզ, կամ զլինելութիւն իւրաքանչիւր մարդոյ ծննդեամբ յաշխարհս: Իսկ «այգի» զհրամանս Օրինացն կամ զժողովուրդն, ըստ մարգարէին թէ՛ «Այգի եղել» (Ես. Ե 1), այլեւ զսուրբ Եկեղեցի, յորմէ բոլիս զգինի զմայլեցուցիչ երկհամ բաւական գոլ յուրախութիւն երկնաւորաց եւ երկրաւորաց:

Եւ «մշակ» զարդարսն, որ եղեն առաջնորդ ժողովրդեանն, կամ զսոսին իսկ զմարդիկ՝ զկոչեցեալս յօրէնս ի սկզբանէ մինչ ի կատարած աշխարհի, եւ զայս ոչ առանց վարձու, այլ նախ եւ առաջին վարձ՝ նոյն ինքն հանդէսն, զի որ արասցէ զայս, կեցցէ սոքօք: Եւ երկրորդ՝ հարիւրապատիկն, զորս ընդունին կատարիչք օրինացն, որպէս հինն Իսրայէլ՝ զպարգեւական երկրին ժառանգութիւնն, եւ սուրբք ամենայն՝ զբարգաւաճիլն ի մարդկանէ: Եւ երրորդ՝ զմշտնջենաւոր կենացն վայելչութիւն ըստ այնն.

¹ Գ գտեսութիւն

² Ղուկ. ԺԶ 1-8

³ Գ > ի

«Վարձք ձեր բազում են յերկինս» (Մատթ. Ե 12): Եւ չորրորդ՝ զճշմարիտն ասել զբանական հոգւոյն պայծառութիւն, զոր «դահեկան» ասէ, զի ամենայն օրէնք յաղագս այնորիկ եղան, զի զաղտեղեալ պատկեր հոգւոյն վերստին ձուլեսցեն եւ կատարեալս ցուցեն զմարդն ըստ Աստուծոյ: Եւ հինգերորդ՝ իւրաքանչիւր առաջնորդի կամ մարդոյ կամք եւ դիտաւորութիւն զոր ինչ խնդրեաց հոգեւոր կամ մարմնատր՝ բարի:

Եւ արկ վարձս մշակացն աւուրն դահեկան եւ առաքեաց զնոսս յայգի իւր (Ի 2):

«Օր» զբովանդակ կենցաղս մարդկան ասէ, որ ի ծննդենէ մինչեւ ի մահ¹ ընթանամք: Եւ ոչ վայրապար «օր» ասէ, այլ քանզի օրինօքն Աստուծոյ լուսատրեալ է իբր արեգակամք ճանապարհս մեր բնականաւն եւ գրաւորականաւն եւ աւետարանականաւն: Քանզի օրն լոյս ասի ըստ այնմ. «Պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան աչաց» (Մաղմ. ԺԸ 9), եւ «Ճրագ են բանք Քո ոտից իմոց» (Մաղմ. ԾԺԸ 105), եւ «լոյս եւ ճանապարհ կենաց» (Առակ. 2 23), եւ թէ «Լոյս են հրամանք Քո ի վերայ երկրի» (Ես. ԻԶ 9): Բայց դու տես զմարդասիրութիւնն, զի նախ զվարձս մշակացն դնէ եւ ասպա յայգի Օրինացն առաքէ եւ կամ ի վերակացութիւն ժողովրդեանն, որպէս զի վարձուցն ակնկալութեամք թեթեւագոյն զճգունսն բերիցեն, եւ տքնեալ վասն ոգւոց: Եւ վարձս, որպէս ասացաք, է հոգւոյն մաքրութիւն, որ եւ երանութիւն է ըստ Դաւթայ թէ «Երանեալ է այր, որ ոչ զնաց ի խորհուրդս ամբարշտաց..., այլ յօրէնս Տեառն են կամք նորա..., եղիցի նա որպէս ծառ, որ տնկեալ է ի զնացս ջուրոց» (Մաղմ. Ա 1, 2, 3), կամ բաղձանք մտաց, զոր խնդրեաց որ յԱստուծոյ:

Եւ ելեալ զերրորդ ժամու՝ ետես այլս, զի կային դատարկք ի հրապարակս (Ի 3):

Ասէ եւ ցնոսս. «Երթայք եւ դո՛ք յայգի իմ, եւ որ ինչ արժան իցէ, տաց ձեզ» (Ի 4):

Գնացին եւ նոքա (Ի 5):

Պէտպէս ժամուքս, զոր առադրէ, կամ զազգի ազգի հասակս ասէ, կամ զպէտպէս կերպարանս կոչեցելոցն, կամ զայլեւայլ ժամանակս, յորում կոչեցան եւ ստոյգ ի Նոյէ մինչեւ ցԱբրահամ իմս,

¹ Զ > ի մահ

գորս քննելի է, թէ ընդէ՞ր ոչ զամենեսեան միահաղոյն կալաւ ի վարձու: Գիտելի է, զի յորում ժամանակի եւ յեղանակի եւ ի հասակի հաւանելոց էին, յայնժամ կոչեաց զնոսա, որպէս զՊօղոս, քանզի տանուտերն յառաջին հասակէն եւ ի ժամանակէն կամէր յինքն ձգել զամենեսեան, յայտ է յառաւօտումն ելանելոյն, սակայն եկեալքն այնպէս գային: Այլեւ զայն ասելի է, զի ոչ ամենեքին միանգամայն ծնանին յաշխարհի, այլ ըստ կարգի. այսպէս եւ կոչումն լինի: Բայց զի՞նչ է այն՝ «զի կային,- ասէ,- դատարկք ի հրապարակս»: Թուի զնոսա ասել, որ ոչ չարեաց ընդունակք էին, այլեւ ոչ օրէնս ունէին, բայց միայն ի հրապարակս¹ աշխարհիս դեզերեալք կային, հայելով ի լուսաւորս եւ յաստեղս եւ յայլ տարերս՝ զգանկութիւն Աստուծոյ ունէին եւ ոչ գտանէին, որպէս Աբրահամն այն, վասն որոյ յորժամ կոչեցաւ, յօժարութեամբ եկն, եւ ըստ արժանաւորութեան հաւատոյն ընկալաւ զարդարութիւն հանդերձ իւրայնովքն²: Կամ զուխտ թլփատութեանն ասէ:

Եւ դարձեալ ելեալ զվեց ժամու եւ զինն ժամու՝ արար այնպէս:

Այսու զկոչումն, որ մինչ ի Մոսէս եւ ի Դաւիթ եղեւ, նշանակէ եւ ի Դաւթ հանդերձ մարգարէիւքն մինչ ի ծնունդ Բանին, վասն այնորիկ ոչ բաժանէ զժամսն, այլ առ ընթեր միմեանց կարգէ, զի Օրէնք եւ մարգարէք ոչ են զատուցեալք ի միմեանց: Քանզի յԱբրահամ եւ ի Մոսիս սկսեալ մինչ ի Յովհաննէս Սկրտիչ՝ ոչ պակասեաց աստուածպաշտութիւնն կոչմամբ մարգարէիցն ըստ այնմ. «Օրէնք եւ մարգարէք մինչեւ ցՅովհաննէս» (Մատթ. ԺԱ 13):

Եւ զմտասաներորդ ժամու ելեալ՝ եզիտ այլս, զի կային դատարկք³: Ասէ ցնոսա. «Ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ դատարկք⁴» (Ի 6):

Ասեմ ցնա. «Ձի⁵ ոչ որ կալաւ զմեզ ի վարձու»: Ասէ ցնոսա. «Երբայք եւ դուք յայգին, եւ որ ինչ արժան է⁶, առնուցուք» (Ի 7):

Թէպէտ ժամուցս բաժանմամբ զհասակն ասիցէ որ յարմարագոյնս լինել, իբր թէ ոմանք ի տղայութեան կոչեցան իբր Տիմո-

¹ Ձ հրապարակ

² Ձ իւրայնօքն

³ Ձ դատարկ

⁴ Ձ դատարկ

⁵ Ձ քանզի

⁶ Ձ իցէ

թէնս¹, առ որ գրեաց Պօղոս թէ՛ «Ի մանկութենէ գիտես զԳիրս Սուրբս» (Բ Տիմ. Գ 15), եւ այլք ի պատանեկութեան, եւ կէսք յերիտասարդութեան, եւ ոմանք ի կատարելութեան, եւ ի մետասան ժամուս որ ասացաւ ի ծերութեան, որպէս աւագակն ի խաչելութեան Նորա: Բայց ինձ զժամանակն հաճելի² է, որպէս ասացի, քանզի մետասան ժամաւ³ յայտնապէս զգալուստն Իւր ցուցանէ, որ ի լրման ժամանակի կենցաղոյս, ըստ առաքելոյ, յայտնեցաւ մարմնով՝ ելեալ ի Հօրէ եւ եկեալ յաշխարհս, որ մետասան ժամ անուանի մինչ ի կատարած աշխարհի: Վասն որոյ ասէ՛ «Եգիտ այլս». այսինքն օտարացեալս յՕրինացն, որք են հեթանոսք, զորս եգիտ՝ ըստ այնմ. «Եղբայրս քո մեռեալ էր եւ եկ[ե]լաց, կորուսեալ էր եւ գտաւ» (Դմկ. ԺԵ 32): Եւ «զի կային դատարկք⁵», որպէս Կոռնելիոսն այն⁶, եւ կամ այլք իբրեւ զնա, որք թէ յետոյ կոչեցան, բայց զի զանցեալ ժամանակն ոչ ի չարիս պարսպեցան, այլ դատարկք ի մեղաց մնացին, զորս կոչեաց՝ ասելով թէ՛ «Ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ դատարկք»: Կամ թէ՛ զգործոյ ժամանակս դատարկ անցուցիք⁷, կամ թէ՛ անցեալ է կենցաղս՝ ուսուցանէ. «Այժմ մինչ զլոյս ընդ ձեզ ունիք, զնացէք ի լոյս» (Խմմտ. Յովն. ԺԲ 35) հաւատոյ եւ օրինաց:

«Ասեն ցնա. «Չի ոչ որ կալաւ զմեզ ի վարձու»»: Չի մի՛ պատուհասեսցին, յայտ արարին զկամս իւրեանց, զի թէ ուրուք ի վարձու կալեալ էր, վաստակեալ էին եւ նոքա, բայց վասն պակասութեան ուսուցացն⁸ ոչ եկին ի կատարելութիւն, քանզի «զիա՞րդ հաւատասցեն,- ասէ,- եթէ ոչ լուիցեն» (Խմմտ. Հռմ. Ժ 14), ուստի յայտ է, թէ ունէին զյօժարութիւնն եւ կոչողի սպասէին: Որոց ասէ. «Երթայք եւ դուք յայգին, եւ որ ինչ արժան է⁹՝ առնուցուք»: Որպէս զի մի՛ որ ասիցէ թէ՛ ոչ կոչեցայ ես մինչ տղայն էի, այժմ ոչ եմ ընդունելի, յայտ առնէ այսու, թէ յորում ժամու եւ դառնայ որ, ընդունելի է Աստուծոյ, քանզի արդար դատաւոր է Աստուած՝ հատուցանել իւրաքանչիւր ըստ արժանեաց իւրեանց: Չի յորժամ ընծայենք

¹ ՏՁ Տիմօթէոս

² Ձ այցելի

³ Ձ ժամուս

⁴ Գաղ. Դ 4

⁵ Ձ դատարկ

⁶ Գործք Ժ 1

⁷ Ձ դատարկս ասուցիք] դատարկ անցուցիք

⁸ Տ ուսուցչացս

⁹ Ձ արժանն ձեր] որ ինչ արժան է

մեք Աստուածութեանն որ ինչ խոնարհագոյն է քան զՆա, տայ Նա մեզ որ ինչ վերագոյն է քան զմեզ, եւ վարձեալ եղաք ի գործ վաստակոյ ըստ զօրութեան մերում, այլեւ¹ հրաւիրեցաք ի հատուցումն վարձուց աւելի քան զզօրութիւն մեր:

Եւ իբրեւ երեկոյ եղև, ասէ տէր այգոյն ցգաւառապետ իւր. «Կոչեա՛ զմշակսն² եւ տո՛ւր նոցա վարձս՝ սկսեալ ի յետնոցն մինչեւ ցառաջինսն» (Ի 8):

Երեկոյ ոմանք զօրհասական մահն իւրաքանչիւր ումեք ասեն, յորում ոչ է այլ ժամանակ գործոյ, եւ զի ի վախճանին զհատուցումն իւր տեսանէ ամենայն ոք: Բայց ինձ թուի, թէ լրումն յաւիտենի կենցաղոյս ասէ, յորում իւրաքանչիւր ումեք արժանիքն հատուցանին՝ ըստ առաքելոյ. «Աստուծոյ լաւագոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատարեսցին» (Եբր. ԺԱ 40): Իսկ «գաւառապետ» կամ զհրեշտակս ասէ, որոց միջնորդութեամբն զՕրէնսն ընկալաք՝ ըստ այնմ. «Առէք զՕրէնս ի հրամանս հրեշտակաց եւ ոչ պահեցեք»³, կամ զառաքեալս եւ զմարգարէս, որք պատգամաւորք եւ վերակացուք կտակարանացն եղեն: «Կոչեա,- ասէ,- զմշակսն⁴», այսինքն ի մարմնոյ կամ ի հողոյ, քանզի «Ինքնին Տէր հրամանաւ հրեշտակապետի ի ձայն փողոյ իջանէ, եւ մեռեալք ի Բրիստոս յարիցեն յառաջագոյն» (հմմտ. Ա Թես. Դ 15), եւ թէ՛ «Առաքեսցէ զհրեշտակս Իւր, եւ ժողովեսցեն⁵ զընտրեալս Նորա ի ծագաց երկնից մինչեւ ի ծագս նորա» (հմմտ. Մատթ. ԻԳ 31):

«Տուր նոցա,- ասէ,- վարձս՝ սկսեալ ի⁶ յետնոցն մինչեւ ցառաջինսն»: Աստի ուսանիմք, թէ ամենայն տուրք բարիք թէպէտ յԱստուծոյ իջանէ⁷ ի մարմնի եւ զկնի, սակայն ըստ կարգի ի ձեռն հրեշտակաց ի մարդիկ իջանէ, քանզի եւ նորա են, որ զորոմունս խրճունս կապեն եւ ի հուր արկանեն⁸: Բայց ընդէ՞ր ի յետնոցն սկսեալ. զի առաջինքն յուսացեալ էին վարձուց իրեանց, արդ զի մի՛ թուեսցի վերջնոցն, թէ պակաս ինչ առնուցուն, նախ զնոցայն ետ: Եւ այլ ազգ. ցուցանէ զպատիւս վերջնոցն, որք ի Բրիստոս

¹ Զ այլ

² Զ զմշակս

³ Գործք է 53

⁴ Զ զմշակս

⁵ ՏԶ ժողովեսցէ

⁶ Զ > ի

⁷ Յակ. Ա 17

⁸ Մատթ. ԺԳ 30

հաւատացին, քանզի մարմին եւ անդամք Նորա եղեն՝ ըստ այնմ թէ՛ «Փոքրիկն մեծ է յարքայութեանն» (հմմտ. Մատթ. ԺԱ 11): Քանզի առաջինքն խորհրդով միայն միացան ի Տէր մեր եւ օրինակաւ, իսկ վերջինքն՝ Եկեղեցի հեթանոսաց՝ խորհրդով եւ քանիւ եւ գործով եւ ճշմարտութեամբ, այլեւ արեամբ եւ վկայական նահատակութեամբ, որպէս եւ գրեալ է. «Բազում դասերք ստացան մեծութիւն..., բայց դու առաւել եղեր եւ անցուցեր զամենեքումքք¹» (Առաք. 1.2 29): Ետես եւ Յովհաննէս, զի կային առաջի աթոռոյն եւ Գառինն՝ արկեալ զինքեամբ արկանելի² սպիտակ³, նաեւ Պօղոս ընդարձակս իմաստասիրէ վասն գերազանցութեան հեթանոսաց⁴: Դարձեալ սկսանելն ի յետնոցն զողորմութիւնն Աստուծոյ յուշ առնէ, զի հեթանոսք վասն ողորմութեան փառաւոր առնեն զԱստուած, քանզի ի գործ այգոյն որպէս ստուգութիւնն ոչ եպերեցաւ՝ տալով առաջնոցն որպէս ուխտեաց, այսպէս ողորմութիւն Նորա ոչ պատուհասեցաւ զթալով ի⁵ յետինսն նախ, որպէս կամեցաւ, քանզի «ողորմութիւնք եւ ճշմարտութիւնք զնան առաջի երեսաց Նորա» (հմմտ. Սաղմ. 2Ը 15):

Իբրեւ եկին որք⁶ զմետասաներորդ ժամուն, առին⁷ մէն մի դահեկան (Ի 9):

Նախ՝ զի մի՛ առաջինքն մեծամտիցեն նախատելով զվերջինսն, եւ մի՛ սոքա վիատիցին, այլ զի ուսցին, թէ զոյ կարողութիւն վերջին մտելոցն յայգի Օրինացն եւ հաւատոյն ըստ ժամանակի կամ ըստ հասակի ի սակաւ ժամանակս զքովանդակ մաքրութիւն հոգոյ ստանալ իւրաքանչիւր ոք առանձին, զոր «դահեկան»-ն նշանակէ, որով ի տեսութիւնն Աստուծոյ ձգի մաքուր սրտիւ: Եւ երկրորդ՝ զի որ⁸ առաջինքն Օրինօքն սրբեցան, նա աւանիկ յետինքն ի մետասան ժամու մկրտութեամբն պայծառացան: Եւ երրորդ՝ ուսուցանէ, թէ ի հանդերձեալն նախ արդարքն զփառս իրենանց ժառանգեն եւ ապա մեղաւորք՝ զտանջանս՝ ըստ առաքելոյ, զի ասէ. «Փառք եւ պատիւ ի վերայ ամենայնի, որ գործէ զբա-

¹ Զ զամենեքումք

² Զ արկանելիս

³ Յայտ. է 9

⁴ Հռոմ. 9 29, Թ 24-30, Ժ 12, ԺԵ

⁵ Զ > ի

⁶ Զ որ

⁷ Տ եւ առին

⁸ Զ զոր

րի, եւ նեղութիւն եւ անձկութիւն, որ գործէ զչար» (հմմտ. Հոմմ. Բ 7-9), որպէս զի կրկին լիցի յանցաւորացն պատիժ. մի ի տեսլենէ արդարոցն փառաց, թէ յոյսպիսի իրաց զրկեցան, եւ ապա՝ զկորուստ անձանցն, զոր պատրաստեցին յօժարութեամբ:

Եկեալ¹ եւ առաջինքն՝ համարէին, թէ աւելի առնուցուն, եւ առին մէն մի դահեկան եւ նոքա (Ի 10):

Որք յՕրէնս եկին կամ ի հաւատս նախ քան զայլս ժամանակաւ եւ կամ հասակաւ, ընկալան բարիս ըստ Օրինացն խոստման, սակայն նախանձու ախտի ախտացան, որպէս զբազումս է տեսանել, մանաւանդ զկուսանս եւ զճգնաւորս, որք այսպիսի ախտի յղիանան՝ հայելով յընկերացն յառաջատումն եւ ի շնորհս՝ ի հոգեւորս կամ ի մարմնաւորս, եւ բորբոքին մախողական յաչաղմամբ եւ կարծեն զինքեանս մեծագոյն փառաց հասանել վասն սրբութեան կուսութեանն եւ կամ այլ առաքինութեանն, ժառանգել աստ զփառս ի մարդկանէ եւ անդ զպսակն առ ի Հօրէ: Իսկ արդար դատողութիւնն Աստուծոյ ըստ չափոյ սրբութեանն զմարմնական հանգիստս եւ զփառս պատրաստէ նոցա ըստ իրեանց ախորժակացն որպէս կամին, բայց վասն նախանձուն առ այլս՝ յանտի փառացն տարագիր առնէ որպէս զյիմար կուսանսն: Եւ զի այսպէս է յաջորդս ցուցանէ: Կամ՝ առաջին դարուն մարդիկն, որ յոլովս ապրեցան, կարծէին աւելի առնուլ զփառս, բայց ի² մետասան ժամու, որ սակաւ ապրին յետ Քրիստոսի, առաւելուն փառօք քան զնոսա, զի նոքա կենօք, իսկ տքա՝ շնորհօք:

Իբրեւ առին³, տրտնջէին զաւանուտեառնէն եւ ասէին (Ի 11)

թէ՝ «Դոքա յետինքդ մի ժամ գործեցին, եւ հասարակո՞րդս մեզ արարեր զդոսս, որ զծանրութիւն ատուրն բարձաք եւ զտօք» (Ի 12):

Թէպէտ ոմանք ասեն առակ միայն զոլ զիրս եւ ոչ ճշմարտութեամբ այնպէս լինել, քանզի այն գաւառ ազատ է ի բամբասանաց եւ ի մախանաց, զի թէ աստ սուրբքն զանձինս վասն մեղաւորաց բաշխեն, անդ զիա՞րդ ընդ այլոց շնորհս մախան, այլ զի յորդորագոյնս առնիցէ զվերինս, այնպէս յորդորեաց⁴ զբանն դառ-

¹ Զ եկին

² Զ > ի

³ Զ > իբրեւ առին

⁴ Զ յարդարեաց

նալ ի ծերութեանն եւ պիտանի լինել այնքան, մինչ զի զբազումս ի նախանձ շարժեցէ, որպէս մուտն անառակին՝ զերեց որդին¹։ Իսկ մեզ ասելի է, թէ ստուգապէս զչարտին եւ խանդային ընդ այլոց բարիս, յորմէ ինքեանք ոչ նուագ էին, բայց ոչ անդ ի հանդերձեալն, այլ յայս կենցաղի։ Չի որ ինչ անդր հատուցանի, աստէն զործոց է հատուցումն, վասն որոյ զբանն եւ զգործն ձեւացուցանէ, որպէս զի յիրաւի եւ արդար դատաստանն Աստուծոյ կարծեցեալ լինի, վասն զի ախտ տրտնջման եւ նախանձու ոչ ի մարդիկ միայն ձգի, այլեւ յԱստուած, թէ ընդէ՞ր զայս այսպէս արարեր, կամ նորա զայս իշխանութիւն ընձեռեցեր, եւ կամ զսա յայնպիսի փառաց գրկեցեր, որպէս տեսանենք այժմ եւ լսենք զայսպիսի բարբառնջանս ի բազմաց, որպէս եւ ասէ. «Տրտնջէին զտանուտեառնէն եւ ասէին² թէ՛ «Դոքա յետինքդ մի ժամ զործեցին, եւ հասարակո՞րդս մեզ արարեր զդոսա»։ Քանզի բազմաց պատահէ, որք ազգաւ կամ հասակաւ յետինք են, սակայն շնորհօքն Աստուծոյ յառաջեն յաստիճանս կամ ի մարմնական փարթամութիւնս, կամ ի մեծագոյն իշխանութիւնս եւ ի պատիւ, որպէս Դաւթի յառաջանալն, որ յետին էր ազգաւ եւ հասակաւ, եւ Սաուլի նուագիլն, ընդ որս մախայր միշտ եւ սպանանել ձեռնարկէր³, սոյնգունակ եւ այլոց յոլովից լինիցի այս։

«Որ զժանրութիւն ատուրն բարձաք եւ գտօթ»։ «Օր» զբոլոր կենցաղս իւր անուանէ, իսկ «ժանրութիւն» զառ ի սա եղեալ փորձութիւնքն, պէսպէս խաղաղութիւն եւ պատերազմ, աղքատութիւն եւ փարթամութիւն, առողջութիւն եւ հիւանդութիւն, ազատութիւն եւ ծառայութիւն։ Եւ «տօթ» զդիւական տապն⁴ ասէ, յորում վշտանան հոգիք մարդկան յայլանդակ խորհրդոցն ձանձրութենէ, ի բարկութենէն ասեն եւ ի ցանկութենէն, ի տրտմութենէն եւ յերկիւղէն⁵ եւ յայլ համազգի ախտիցն։ Այսմ ամենայնի համբերեցաք, ասեն, եւ զտոսա հաւասար մե՞զ պսակես։ Դարձեալ տրտնջելն այնոցիկ է, որ ի մարմնատր իրս վաստակին, զի մարմնատրն առանց աշխատանաց եւ տրտնջման ոչ լինի, որպէս Մարթա տրտնջեաց ի մարմնատր զործն զբաղեալ, իսկ զբարին որք բառ-

¹ Դուկ. ԺԵ 11-32

² Զտանուտեառնէն տրտնջէին] Տրտնջէին զտանուտեառնէն եւ ասէին

³ ԱԹագ. ԺԶ-ԻԷ

⁴ Զ տազնապն

⁵ Զ յերկեղէն

նան կամօք՝ թեթև է՝ ըստ Տեառն. «Լուծ Իմ քաղցր է, եւ բեռն Իմ փոքրո[զի]» (Մատթ. ԺԱ 30), վասն այնր տրտունջ ոչ լինի: Իսկ սոքա տրտնջեցին վասն մարմնոյ աշխատութեանցն որ ի տուէ, եւ հոգւոյ զբաղմանցն որ ի գիշերի, քանզի այս է օրն տիւ եւ գիշեր:

Նա պատասխանի ետ միում ի նոցանէ եւ ասէ. «Ընկեր, չգրկեմ զքեզ, ո՞չ դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս» (Ի 13):

Ան զքոյդ եւ երթ (Ի 14):

Ով արդար դատաւորութեանն, քանզի ոչ գոյ այլ աւելի իրաւունք, յորժամ ինքն իսկ տանուտէրն վասն նոցա իրաւունս դնէ դատաստանաւ եւ ո՛չ սաստիւ: Եւ ասէ «միում ի նոցանէ». զի՞նչ է «միումն». իբր թէ ամենեքեան զմի բարք ունէին նախանձոտքն: «Ընկեր», այսինքն հակառակ Ինձ եւ ընդդիմացօղ օրինաց Իմոց, քանզի հաւասար Ինձ դատաւոր եղեր եւ զԻմսն ընդ քննութեամբ արկանէիր, թէ ընդէ՞ր այս անուն պատուեցաւ յետին գոլով, կամ այն անուն նուագեցաւ առաջին լինելով: «Չգրկեմ զքեզ»: Չնոսա քեզ հասարակորդս առնելով՝ չէ՛ ինչ գրկութիւն, այլ արդարութիւն, զի զյետնոցն յօժարութիւնն ի բարին՝ զոր ունէին, յառաջագոյն եւ զցանկութիւնն կշռելով ընդ քո առաքինութիւնն հաւասարեալ, ուստի եւ զվարձն համեմատեցի, մանաւանդ զի ոչ ի քոյոցն ետու, այլ զքոյն քեզ շնորհեցի եւ յԻմոցն անծախապէս նմա պարզեցի: «Ո՞չ դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս», այսինքն՝ մարմնական փառաց, որում ըղձացար, եւ երկրաւոր հանգստեան. ո՞չ զայդ աւասիկ հատուցի անպակաս, զի դիտաւորութիւն քո այն էր, եւ Ես լցի, քանզի ո՛չ զայդ օրէնքն, այլ հոգւոյ մաքրութիւնն ուսուցանէր, իսկ դու զայն թողեալ՝ մարմնական բարութեան հաշիւ պահանջէիր յԻնէն, զոր ետու իսկ: «Ան զքոյդ,- ասէ,- եւ երթ». այն իսկ թէ ի դասս տրտնջողացն ընկալար¹ զբարեաց քոց փոխարէն ի կեանս քո, այժմ երթ ի տանջանս ի դասս վասն նախանձուն որ առ բազումս, զի թէ զայս ախտ ոչ էիր ախտացեալ, հանդերձեալ էի պարզել զկնի հարիւրապատկին եւ զյաւիտենական կենացն ժառանգութիւն, բայց զի յաչաղկոտ եղեր, ըստ չափոյ բարեացն, զոր ունէիր, առեր զմարմնական բարիսն եւ փոխանակ նախանձուն՝ երթ ժառանգեա զգեհենին պատիժս, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա, քանզի որ նախանձի ընդ եղ-

¹ Զ ~ ընկալար տրտնջողացն

բօրն՝ վատթարագոյն է քան զվատսն¹, որ բնաւին բարիս ոչ արարին, զի Գիրք սովորութիւն ունի ընդ սպանման կարգել զնախանձն²:

Եթէ կամիմ յետնոցս տալ որպէս եւ քեզ, եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմսս առնել զինչ եւ կամիմ (Ի 15):

Յառաջագոյն զյետնոցն յօժարութիւնն առաջնոց գործոցն բաղդատեաց եւ եցոյց, թէ չէ գրկութիւն, այլ յիրաւի հաւասարեցան, իսկ այժմ այլազգ յանդիմանէ՝ զողորմութիւնն³ յուշ առնելով եւ զառատութիւնն⁴, քանզի «ողորմեցայց որում ողորմեցայց եւ զթացայց յորս զթացայց» (Երբ Լ.Գ. 19), «քեզ զի՞ փոյթ է, միթէ ասէ՞ կաւ ցբրուտն...» (հմմտ. Հոմմ. Թ 20-21),- ասէ առաքեալ: Բայց թուի թէ զի յետինքս առանց տրտնջման մնացին, տաց զհարիւրապատիկն, որպէս նոցա, տայ եւ զյաւիտենական փառսն, որպէս զի ուսցուք ոչ յոք նախանձել, թէպէտեւ առանց վաստակոյ ի շնորհս վայելիցէ: Յիրաւի՛ ապա այսպիսիքս առնուն վարձս ըստ գործոց, առնուն եւ պսակս շնորհաց ըստ կամաց ողորմութեանն Աստուծոյ:

Կամ թէ ակն քո չա՞ր է, զի Ես առատս եմ»:

Այս կարի յանդիմանութիւն է եւ նախատինք նախանձոտացն, զի զրեթէ ասէ՛ յիւրոց բարեաց թէ ոք ոչ մատակարարէ այլոց, ունի տեղի նախանձու, զի զիւրն այլոց ոչ կամի, իսկ զայլոց բարիս այլոց յաչաղելն⁵ մեծագոյն չարութիւն է եւ անհրաժեշտ բարկութեան առիթ: Բայց «ակն» զմիտսն ասէ, յորս բազմացեալ ախտ նախանձուն վասն բունանալոյն⁶ ի նմա չարին՝ գայ եւ ի տեսանելիս եւ ըստ ոչ կամեցողութեան բանսարկուին գործի առեալ զաչս մարդկան չարակնէ զբազումս, ուստի եւ վնասէ իսկ, որպէս ասեն ոմանք: Դարձեալ «ակն քո չար է», այսինքն թէ մտօք քո զայն խնդրեցեր, որ քեզ չար եղեւ, ինձ զի՞նչ փոյթ է, «զի Ես առատս եմ» եւ ի տալն զխնդիրն ես բարի եմ: Կամ թէ՛ «Ես առատս եմ», այ-

¹ Զ զվատն

² Յոր է 2, Հոմմ. Ա 29, Գաղ. Ե 20-21

³ Տ զողորմութիւն

⁴ Զ զառատութիւն

⁵ Տ յաչաղել, Զ յաչախելն

⁶ Զ բունանալոյ

սինքն՝ զի որ յԻնէն զբարին խնդրեաց, Ես նմա¹ զայն պարզեցի, զբարին գործել եւ վասն Իմ աշխատել, որ եւ զգործողսն պահեաց առանց աշխատութեան², որ ոչ ձանձրացան եւ տրտնջեցին իբրեւ զբեզ:

Այնպէս եղիցին յետինք առաջինք, եւ առաջինք՝ յետինք, զի բազումք են կոչեցեալք, եւ սակաւք են ընտրեալք» (Ի 16):

Նախ, որպէս ասացաք, վասն հրէից յառաջ կոչեցելոց ասէ եւ ոչ հաւատացելոց, եւ հաւատացելոց յառաջելոց քան զնոսա, եւ ասպա վասն ամենեցուն կանխաւ ծագելոցն առաքիւնութեամբ, եւ յետոյ հեղգացելոց եւ յետս ընկղմելոց, եւ որք ի չարեացն զղջացան եւ զբազմօր զերագանցեցին՝ է փոփոխմունս: Լսի եւ այսպէս, թէ ամենեքեան են ստեղծուածք Աստուծոյ, բայց որք Աստուծոյ են սակաւք են ընտիրքն, որք իմաստութեամբ ի մարմնոյս ի բաց որոշեցան եւ առ ճշմարիտ եւ ականակիտ լոյսն հայեցան: Իսկ բազումքն, որք զկնի կաւոյն ցնդեցան ոչ կարացեալք ի վեր յառել, [յ]Աստուծոյ են, բայց ոչ Աստուծոյ:

Բայց զի՞նչ այն թէ՛ «բազումք են կոչեցեալք, եւ սակաւք են ընտրեալք»: Եթէ այդպէս իցէ, ասպա ընդէ՞ր եւ կոչեցան իսկ. կոչեցան՝ զմարդասիրութիւնն ցուցանէ, իսկ յընտրութիւնն ոչ ժամանեալք՝ զնոցա հեղգութիւնն, որպէս ասաց այլոր, թէ սակաւք են, որ ապրելոց իցեն³, ուռկանն զամենայն ազգս ժողովեաց, բայց զբարի բարին միայն յամանս հաւաքեաց⁴, եւ ի հարսանեացն զաղտեղեալն հանդերձիւ արտաքս հանին⁵, եւ Յուդաս կոչեցաւ ընդ նոցին, բայց յետոյ սատանայ եղել: Գրէ եւ Պօղոս, թէ զորս յառաջագոյն ճանաչէր կերպարանակից լինել պատկերի Որդոյ Իւրոյ, զնոսին եւ կոչեաց եւ արդարացոյց եւ փառաւորս արար⁶, ուստի յայտ է, թէ միայն կոչումն չէ բաւական ի փրկութիւն, եթէ ոչ արժանի զնացս կոչմանն ցուցանիցենք՝ ըստ առաքելոյ թէ՛ «Յոր կոչումն կոչեցաւ, ի նմին մնացէ» (Ա Կոր. Է 20), զի մի՛ յընտրութենէն վրիպիցիմք՝ յետինք լինելով, եւ ի փառացն անկանիցիմք: Ոչ վայրասպար եւ զայն եւս ասէ թէ՛ «եղիցին յետինք առա[ջինք]...», զի

¹ Զ նոցա

² Զ աշխատութեանց

³ Մատթ. Է 14, Ի 16, Ղուկ. ԺԳ 23-30

⁴ Մատթ. ԺԳ 48

⁵ Մատթ. ԻԲ 11-13

⁶ Հռոմ. Ը 29-30

*նախ ասաց, թե բազումք եղիցին առաջինք յետինք, եւ աստ՝ զընդ-
դէմն, զի ցուցցէ, թե նախ առաջինքն արտաքս ելին եւ յետինք ե-
ղեն, եւ ասպա յետինքն մտեալ՝ առաջինք եղեն:*

**Իբրեւ ելանէր Յիսուս յԵրուսաղէմ, առ զերկոտասանսն առանձինն եւ ի
ճանապարհին ասէ ցնոսա (Ի 17).**

**«Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ, եւ Որդի մարդոյ մատնեսցի քահանա-
յապետիցն եւ դպրաց, եւ դատապարտեսցեն զՆա ի մահ (Ի 18):**

**Եւ մատնեսցեն զՆա հեթանոսաց՝ այսպանել եւ հարկանել եւ ի խաչ հանել,
եւ յերիբ ատուր յարիցէ» (Ի 19):**

*Ո՛չ յանկարծակի ելանէ, այլ նախ սքանչելիս գործէ եւ զփա-
րիսեցիսն ըմբերանէ, եւ ընդ աշակերտսն վասն անընչութեան խօ-
սի, նաեւ վասն կուսութեան, եւ աստ փոխարինացս եւ անդ հա-
տուցմանցն, եւ ասպա ելանէ յԵրուսաղէմ եւ ի ճանապարհին ասէ
վասն չարչարանացն առանձինն կրթելով զմիտս նոցա միշտ յի-
շատակաւն, համանգամայն եւ գտրտմութիւնս փարատեսցէ եւ զի
ցուցցէ, թե կամաւորաբար կրէ: Եւ դու տես՝ զստուգութիւն իրացն,
զի ի սկզբանէ զմահն միայն ասէր, եւ յորժամ այնու վարժեցան,
յաւելու եւ զայլսն՝ զմատնիլն՝ քահանայապետիցն Աննայի եւ
Կայիափայ, եւ զնոցա անիրաւութեամբ դատապարտելն ի մահ,
որ ոչ էր անկ իշխանի, այլեւ զմատնելն Պիղատոսի, թե թագաւոր
զանձն անուանէ եւ հակառակ է հռոմայեցոց տէրութեանն, եւ
զզինուորացն հարկանելն եւ զայսպանելն եւ զխաչելն եւս, եւ ասպա
ասէ թէ՝ «եւ յերիբ ատուր յարիցէ», զի յորժամ տեսանիցեն զայս ա-
մենայն եղեալ յառաջագոյն ի Նմանէ ասացեալ, տրտմականացն
հաւատասցեն, եւ յարութեանն իսկ, որ ատենաց զկնի, քանզի մե-
ռանելոց էր՝ զիտէին, թէպէտեւ տեսչութեան խորհրդոցն չէին տե-
ղեակ, սակայն զյարութիւնն՝ ոչ բնաւ իմանային, յարդարէ եւ
զայն եւս:*

**Յայնժամ մատեաւ առ Նա մայր որդոցն Չեբեղեայ՝ որդուլք իւրուլք հան-
դերձ, երկիրպագանէր եւ խնդրէր ինչ ի Նմանէ (Ի 20):**

*Մարկոս ասէ թէ՝ «Երթային առ Նովաւ Յակոբոս եւ Յովհան-
նէս որդիքն Չեբեղեայ եւ ասեն ցՆա. «Վարդապետ, կամիմք, զի*

¹ Տ զայլն

² Չ զմատնելն

³ Չ զյարութիւն

գոր ինչ խնդրեսցուք ի Զէն՝ արասցես մեզ» (Մարկ. Ժ 35), եւ աստ թէ մայրն մատեաւ: Այս ոչինչ ընդդիմութիւն ունի, այլ կարծի, թէ երկոքին եղեն, կամ թէ՛ ասացին նոքա, ասաց եւ մայրն. կամ թէ՛ ինքեանք ի մտի եղին խնդրել, բայց ամաչէին ի վերքերել, վասն այնորիկ զմայրն դրդեալ զկնի առեալ պատասպարան խնդրուածոցն, որպէս զի նովաւ առաւել կարծէին ի հաւանութիւն ածել զՓրկիչն վասն ընտանութեանն, զի մանկաբարձ ասեն զնա Զրիստոսի: Եւ զայս՝ առանձինն, զի կամ պատկառէին ի մարդկային ախտ ըմբռնեալ, կամ թէ մի՛ այլոց յայտնի լիցի այսպիսի խնդիր: Բայց է սա դուստր Աննայի՝ մօր Աստուածածնին՝ յայլ առնէ ծնեալ, եւ անուն Սաղօմէ՛, որ զուգեալ ընդ Չեբեդէոսի՝ ծնաւ զՈրդիսն որոտման, բայց այլք ասեն զսա դուստր Յովսեփայ, որ Աստուածահայրն անուանեցաւ²: Արդ՝ եթէ այսպէս եւ եթէ այնպէս³, սակայն ընտանի էր, վասն այն համարձակեցաւ որդուքն՝ գոր սիրէր, քանզի համահասակք էին Տեառն մերոյ: Եւ թէպէտ այս՝ սակայն զպատշաճ պատիւն ընծայեցին՝ զերկրպագութիւնն, որք թէպէտ կատարելագոյնս ոչ իմանային զՆմանէ, այլ իբր զմի ոք ի սրբոցն վասն վարդապետութեանն, միանգամայն եւ սքանչելեացն կարծէին:

Եւ Նա ասէ ցնա. «Ձի՞նչ կամիս» (Ի 21):

Ո՛չ եթէ ոչ գիտէր, որ զխորհուրդս նոցա բազում անգամ յայտնէր, այլ զի նոցին տացէ՛ յայտնել զախտ մտացն, եւ ապա զդեղն դիցէ, որպէս եւ որոց տալ կամէր կորիցն, ասէր թէ՛ «Ձի՞նչ կամիք, թէ արարից ձեզ» (Մատթ. Ի 32), նոյնպէս եւ աստ թէպէտ ոչ տայր, սակայն հարցանէ զխնդիրն, զի տակաւին ոչ էր ժամանակ ամենեցուն եւ ամենայն ուրեք զանձն յայտնել, միանգամայն եւ զանձնագովութիւնն արհամարհէ:

Ասէ ցՆա. «Ասա՛, զի նստցին սոքա երկու որդիքս իմ մի ընդ աջմէ Բունմէ, եւ մի ընդ ահեկէ՛՝ յարքայութեան Զում»:

Քննել արժան է, թէ զի՞նչ է գոր խնդրեցին եւ կամ յո՞րպիսի մտաց եկին յայս: Ակն ունէին, թէ արքայութիւն Նորա աստէն իսկ

¹ Տ Սաղօմէ Զ Մարիամ

² Տ (*Բայց է սա դուստր... որ աստուածահայրն անուանեցաւ): Էջատակին ծանոթագրված է. (*այս՝ ըստ կարծեաց հեղինակիս):

³ Զ այն

⁴ Զ տայցէ

⁵ Զ յահեկէ] ընդ ահեկէ

յայտնելոց է, եւ առ դուրս հասեալ է թագաւորութիւն Նորա¹, որ-
պէս ասէ միս աւետարանիչն, խնդրեցին, զի վայելեացեն յայն ա-
ռանց վշտաց՝ փառաւորս գոյով քան զամենեսեան: Իսկ պատ-
ճառն զալ ի խնդրուածս յայս՝ զի տեսանէին զանձինս պատուա-
կանագոյնս քան զայլս, վարձկան եւ այնմ խնդրէ յարժանիս գոյ:
Եւ դարձեալ զի տեսին զՄոսէս եւ զԵղիա փառօք երեսեալ ի Թա-
բոր, ցանկացան այնմ եւ մատեան ասել՝ տո՛ւր մեզ ըստ նմանու-
թեան նոցա նստիլ² մի յաջմէ եւ մի յահեկէ Քումմէ ի փառսն Քում:
Եւ դարձեալ զի լուան թէ՝ «յերկոտասան աթոռ նստջիք» (Մատթ. ԺԹ
28) զգահագլուխն աթոռոցն կամէին ունել, եւ զի քան զայլսն աւելի
ունէին պատիւ՝ զայն զիտէին, բայց ի Պետրոսէ ինն կասկածէին:

Իսկ նշանակաւ՝ կինն այն է ամենայն սուրբ մերձաւոր Քրիս-
տոսի՝ յաղագս ի նմա մատչելոյ անձախելի պատարագին, իսկ
երկու որդիք՝ հրէայք եւ հեթանոսք, հոգի եւ մարմին, արդար եւ մե-
ղաւոր, զորս ծնանի Եկեղեցի սուրբ³, կամ եկեղեցական եւ աշ-
խարհական, զորս ըղձայ փառաց հասանել յարքայութիւնն երկ-
նից:

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. «Ո՛չ զիտէք զինչ խնդրէք (Ի 22):

Տես, զի ո՛չ ասաց՝ ոչ զիտես զինչ խնդրես, այլ թէ՝ «ոչ զիտէք»,
զի ցուցցէ զկամս որդոցն ընդ մօրն լինել: Բայց «ոչ զիտէք զինչ
խնդրէք» երկակի լսի. կամ թէ յոյժ անպատկան է խնդիրն⁴ ձեր, զի
մարմնաւոր է եւ ոչ հոգեւոր, կամ թէ փառքն զոր խնդրէք՝ ոչ զիտէք
զինչ է վասն սքանչելեացն եւ մեծ եւ զերագանց գոյոյն քան զվե-
րին զօրութիւնն, զի «զոր ակն ոչ ետես եւ ունկն ոչ լուաւ եւ ի սիրտ
մարդոյ ոչ անկաւ՝ պատրաստեաց Աստուած սիրելեաց Իւրոց» (Ա
Կոր. Բ 9). արդ զոր ոչ զիտէք՝ զիա՞րդ խնդրէք: Եւ զերկրորդն՝ Ինքն
յաւելու.

**Կարէ՞ք ընպէլ զբաժակն, զոր Ես ընպելոցն եմ, կամ զմկրտութիւնն, զոր
Ես մկրտելոցն եմ, մկրտել»:**

Նախ՝ զհպարտութիւն նոցա շիջուցանէ. դուք, ասէ, պատիս
եւ պսակս խնդրէք, այլ Ես զպատերագմունս եւ զքրտունս եղից ա-

¹ Մարկ. Ա 15
² Զ նստել
³ Զ ամենայնի] եկեղեցի սուրբ
⁴ Զ խնդիրք
⁵ Տ զերկրորդն Զ զերկրորդ

ռաջի, քանզի չէ պսակի ժամանակ, եւ ոչ արդէն իսկ յայտնելոց եւն փառքն Իմ, այլ նախ շարչարանք եւ մահք աստ եւ ասպ անդ փառաց յայտնութիւն: Եւ երկրորդ՝ ո՛չ սոսկ ասաց ըմպել զբաժակն, այլ զայն, «գոր Ես ըմպելոց եմ», որպէս զի կամաւ եւ յօժարութեամբ լիցի եւ ուրախութեամբ եւ ո՛չ ի հարկէ, վասն որոյ եւ «բաժակ» կոչէ: Եւ ո՛չ ասաց՝ «կարո՞ղ էք զենանիլ» կամ «զարիւնս ձեր հեղուլ», որպէս զի յորդորագոյնս առնիցէ՝ հաղորդս լինել Ինքեան մահուն «բաժակ» ասելովն ըստ այնմ. «Զբաժակ փրկութեան ընկալայց» (Սաղմ. 68Ե 13): Իսկ «մկրտութիւն» զհանգամանս մահուն ասէ, զի ո՛չ որպէս հասարակաց մահ, այլ արեամբ լուացումն. նաեւ «մկրտութիւն» ասելովն ցուցանէ, թէ որչափ առաւել սրբութիւն լինելոց է ի շարչարանաց Նորա, նոյնպէս եւ դուք սրբութեամբ մատչիք ի փառսն յայն, որ ի շարչարանացն յառաջանայ, զի որպէս մկրտութիւնն մաքրէ ի մեղաց, նոյնպէս եւ շարչարանք լուծիչ է յանցանաց, վասն այսորիկ եւ անուանն հաւասարէ:

Ասեմ ցՆա. «Կարօ՞ղ եմք»:

Կամ առ փառացն ցանկութիւնս վաղվադակի յանձն առին, կամ առ սէր Վարդապետին ի շարչարանս յօժարեցան:

Ասէ ցնոսա Յիսուս. «Զբաժակն Իմ ըմպիցէք եւ զմկրտութիւնն, գոր Ես մկրտելոց եմ, մկրտիցիք, բայց նստուցանել ընդ աջմ եւ ընդ ահեկէ Իմմ՝ ո՛չ է Իմ տալ, այլ որոց տուեալ է ի Հօրէ Իմմ» (Ի 23):

Կամ ասէ՝ թեպէտ ըմպիցէք եւ մկրտիցիք, սակայն տալն ոչ է Իմ, այլ որոց տուեալ է ի Հօրէն, կամ թէ մարգարեացաւ նոցա մեծ բարութիւնս թէ՛ մարտիրոսութեան արժանի լինելոց էք եւ զնոյնս կրէք, գոր Ես կրելոց եմ, բայց նստուցանելն ոչ է Իմ, այլ որոց տուեալ է: Չի՞նչ է այս, թէ Նորա ոչ էր տալն, այլ Հօրն. ասպ ընդէ՞ր Պետրոսի ետ ոչ միայն զաթոռոցն, այլեւ զփականսն¹, եւ Պօղոս ասէ. «Կայ եւ մնայ ինձ արդարութեան պսակն, գոր հատուցէ ինձ Տէր» (Բ Տիմ. 4 8), եւ ի սոցանէ արգելու: Նախ՝ զի Պետրոս ո՛չ առանձինն, այլ ամենեցուն խնդրեաց. յայտ է, զի ասաց. «Չի՞նչ լինիցի մեզ» (Մատթ. ԺԹ 27), եւ ոչ եթէ՛ ինձ, եւ ի խնդրուածս նորա ոչ ոք տրտմեցաւ, այլ ամենեքեան ուրախացան. վասն զի հասարակաց էր, ո՛չ արգել զայն, իսկ սոքա զի ինքեանց միայն խնդրեցին, ո՛չ ետ, քանզի յաղօթսն այսպէս ուսոյց թէ՛ ասասջիք «Հայր մեր»

¹ Մատթ. ԺԶ 19

եւ ոչ թէ «Հայր իմ»: Եւ երկրորդ՝ զի լուան, թէ ելանենք յԵրուսաղէմ եւ Որդի մարդոյ մատնի եւ խաչի, եւ նոքա թողին զսէրն, զոր ունէին առ Նա, զի ընդ Նմա անարգեսցին եւ մեռցին, եւ սկսան ցուցանել զսէրն, զոր ունէին առ անձինս իւրեանց: Եւ երրորդ՝ զի յանձնապաստան եղեն թէ՛ կարօղ ենք, վասն այնորիկ արգել:

Եւ չորրորդ՝ զի ընտրութեամբ առանց գործոց կամեցան ժառանգել զՆա, մերժեաց զնոսա Տէր մեր յԻնքենէ, բայց զի մի՛ տրտմեցուցէ զնոսա, եցոյց, թէ ոչ ունի իշխանութիւն, իբր զի վասն՝ ժամուն ասէ. «Ոչ որ զիտէ՛ ոչ հրեշտակք եւ ոչ Որդի, բայց միայն Հայր» (Մատթ. ԻԴ 36): Քանզի ուսոյց, թէ զնոց զնի Նա եւ գործովք լինի ստացեալ, իբր այն, զի ասէ թէ՛ «Վասն այնորիկ Աստուած վերացոյց եւ բարձրացոյց զՆա, եւ շնորհեաց Նմա անուն, որ ի վեր է քան զամենայն անուն» (Փիլիպ. Բ 9), զի թէպէտ աշակերտք Իմ եղերոք, ոչ վասն այնորիկ ի զխաւոր պատիւն վայելիցէք, զի թերեւս առաւելագոյն որ քան զձեզ գտանիցի՝ որք ընթացան կամ ընթանայցեն եւ առաքիւնութեամբ կատարեալք, լինիցին գերագոյն քան զձեզ, եւ ի միտս Հօրն նկարեալ է այն, նոցա է պատրաստեալ այն: Չայս ասելով՝ ի նոյն յորդորէ եւ գոսսա, որպէս թէ՛ զխնդիրս նոցա եղ իբր զպսակ ի միջի, թէ որք առաքինանան, Նովաւ պսակին: Եւ հինգերորդ՝ յայտ առնէ, թէ չիք որք, որ յայն տեղի նստիցի, քանզի անկողի է յամենեցունց աթոռն այն, վասն զի յաջմէ՛ Նորին Հայր է եւ Հոգին, եւ որոց տուեալ է ի Հօրէ՛ Որդոյ եւ Հոգոյ, եւ ոչ թէ իցեն ոմանք, որ նստիցին, այլ ըստ կարծեաց հարցմանցն զպատասխանին այնպէս ձեւացոյց՝ զիջուցանելով ըստ նոցին մտացն, քանզի նոքա ոչ զիտէին զբարձրագոյն պատիւն զայն, այլ միայն զնստիլն խնդրէին:

Եւ վեցերորդ՝ լսի եւ այսպէս, թէ ոչ է Իմ տալն այլ ազգ, քան թէ որոց Հայրն շնորհէ, բայց ոչ ետ առ այն ժամ, զի մի՛ զայրասցին այլքն, թէպէտ բարկացան, որպէս ասէ: Եւ եօթներորդ՝ զի խնդիրս այս ոչ նոցա միայն էր, այլեւ ի դէմս ամենեցուն, որք մինչ ի կատարած աշխարհի յայս միտս գան, վասն որոյ ասէ թէ՛ «Չբաժակն Իմ ըմպիցէք, զմկրտութիւնն, զոր Ես մկրտելոց եմ՝, մկրտիցիք», սակայն ոչ տամ փառս, այսինքն՝ թէ պատահի բազմաց մարտիրոսանալ, սակայն փառս ոչ ժառանգեն, զորոց եւ Պօղոս

¹ Գ ~ վասն զի

² Գ զի

³ Գ > զոր Ես մկրտելոց եմ

գրե՛ք՝ «Մասնեն՝ զմարմինս իմ յայրուսն հրոյն, սակայն ոչինչ օգտիմ» (հմմտ. Ա Կոր. ԺԳ 3), զի ո՛չ ի սիրոյ, այլ վասն փառաց մարդկան յօժարին յայս, որպէս վասն ողորմածացն ասէր, թէ առնեն ի ցոյցս. «Ամէն ասէմ ձեզ, ա՛յն իսկ են վարձք նոցա» (Մատթ. 2 2):

Եւ լուեալ տասանցն՝ բարկացան ի վերայ երկուցն եղբարց (Ի 24):

Կամ թէ՛ յորժամ խնդրէին զգահերիցութիւնն¹ եւ նախամեծար լինել քան զայլսն կամէին, զայն լուեալ՝ բարկացան, քանզի տակաւին թերակատարք էին յայնժամ, կամ թէ՛ զսաստ Յիսուսի լուան, զի նախ թէպէտ մտօք վտանգէին տասուներն, սակայն Վարդապետին վճիռ տալոյ անսային, իսկ յորժամ տեսին զհրաժեշտ խնդրոյն, բարկացան եւ նոքա:

Յիսուս կոչեաց զնոսա առ Ինքն եւ ասէ. «Գիտէք, զի իշխանք ազգաց տիրեն նոցա, եւ մեծամեծք իշխեն նոցա (Ի 25):

ո՛չ այնպէս իցէ եւ ի ձերում միջի (Ի 26):

Թէպէտ կոչմամբն նախ² քանիք հանդարտեցուցանէ եւ մօտ ածելովն ցածուցանէ, սակայն կոչելն առ Ինքն անձամբն գործովն տարացոյց լինելն է, իբր ասել թէ՛ յԻ՛ս հայեցէք, որպէս յորժամ վասն հեզութեանն եւ խոնարհութեանն վարդապետէր, երբեմն թէ՛ «Ուսարուք յԻնէն, զի հեզ եմ» (Մատթ. ԺԱ 29), եւ երբեմն թէ՛ «Օրինակ մի ետու ձեզ, զի որպէս Ես արարի, եւ դո՛ւք առնիջիք» (Յովհ. ԺԳ 15): Նոյնպէս եւ աստ. քանզի ճեղքեցան երկուքն ի տասանցն, յԻնքն ձգելով միացուցանէ եւ նախ զնոցա ախտն ձաղէ, զի զտոսա մխիթարեացէ, եւ ասպա օրինական զբարկութիւնն եւս շիջուցանէ: «Գիտէք,- ասէ,- զի իշխանք ազգաց տիրեն նոցա». ցուցանէ, թէ հեթանոսական է գահերիցութիւնն³ խնդրել եւ կամ ի նախանձ հպարտութեան շարժել, քանզի այդպիսի ախտ զմեծամեծս կարօղ է յաճախ լլկել, զի ոմանք գոռոզանան, եւ կէսք ընդ նոսա նախանձին, եւ զայս ասելով կսկծեցուցանէ զնոսա, որպէս զի զգաստացին: Արդ՝ «ոչ այնպէս իցէ եւ ի ձերում միջի», քանզի ոչ եկի զհեթանոսական օրէնս հաստատել զթիրս, այլ յուղղութիւն ածել, զի նոցա որ իշխանն է՝ տիրէ, իսկ առ Իս՝ որ կրսերն է՝ երիցազոյն իցէ՝ ըստ Յակոբայ եւ Եսաւայ իրացն, քանզի անդ ասա-

¹ Գ գահերիցութիւնն

² Գ նախ քան

³ Գ գահերիցութիւնն

ցաւ թէ՛ «Երէցն կրսերոյն ծառայեացէ» (Ծննդ. ԻԵ 23), եւ կրսերն պատուաւոր գտաւ՝ ըստ այնմ. «ԶՅակոբ սիրեցի եւ զԵսաւ¹ ատեցի» (Մաղ. Ա 2):

Այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինել, եղիցի ձեր պաշտօնեայ (Ի 26):

Եւ որ կամիցի ի ձէնջ առաջին լինել, եղիցի ձեր ծառայ (Ի 27):

Յարտաքննոցն գոռոզութենէ հրաժարեցուցանէ, սակայն այլ իմն օրինակաւ զնոյն ընծեռէ. թէ կամիցիք, ասէ, մեծութեան հասանել, պարտ է զսպասաւորութենէ բուռն հարկանել եւ ի նախագահութիւնն ծառայութեամբ ժամանել, ոչ միայն փոփոխմամբ ի հատուցմանն, այլ քանզի եւ ինքն ծառայութիւնն մեծութիւն է, ոչ միայն ըստ այնմ՝ «Որ ծառայն է ի Տէր՝ ազատ է» (հմմտ. Ա Կոր. Է 22) յամենայնէ, որպէս ընդդէմ այսր՝ «Որ առնէ զմեղս, ծառայ է մեղացն» (Յովհ. Ը 34), թէպէտեւ ազատ է, եւ «բարձրն պիղծ է առաջի Աստուծոյ» (հմմտ. Ղուկ. ԺԶ 15), այլ զի եւ մեծն օգնէ տկարին, եւ զայս ի ծառայն տեսանենք եղեալ, զի տեսուն օգնականութիւն մատուցանէ, որ է յոյժ մեծութեան նշանակ:

Որպէս Որդի մարդոյ ո՛չ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել եւ տալ զանձն Իւր փրկանս փոխանակ բազմաց» (Ի 28):

Զի մի՛ ապիցեն, թէ դժուարին է իրդ, զանձն օրինակ դնէ, զի Ես, ասէ, եւս մեծամեծս արարի, որ թագաւորս եմ վերին զօրացն. յանձն առի մարդ լինել եւ արհամարհիլ եւ թշնամանիլ, եւ ո՛չ այս միայն, այլեւ ի մահ եւս եկի եւ զանձն փրկանս ետու բազմաց, եւ այն ո՛չ սիրելեաց, այլ թշնամեաց եւ ատելեաց: Դու եթէ խոնարհիս, վասն քո՛ խոնարհիցիս, իսկ Ես ո՛չ վասն Իմ, այլ վասն քո, ապա ուրեմն մի՛ կասկածիցես, զի ո՛չ այնչափ ինչ կարիցես զիջանել, որչափ Տէրն քո: Մակայն իջանելն Նորա ելանել ամենեցուն եղեւ, որպէս յաջորդդ ցուցանէ, եւ փառաց Նորա առաւել յայտնութիւն, զի մինչչեւ էր մարդ լեալ, ի հրեշտակաց եւեթ ճանաչիւր, իսկ յորժամ մարդ եղեւ եւ խաչեցաւ, ոչ միայն յայնց փառաց ոչ նուազեաց, այլեւ զմիւս եւս ի վերայ նորին էառ՝ առ ի յաշխարհաց ճանաչելոյ: Նոյնպէս եւ քո խոնարհութիւնն փառաց յաւելուած լինելոց է, թէ կամիցիս:

¹ Զ զԵսաւ

Եւ յեւանելն նոցա յԵրիքովէ՝ գնացին զհետ Նորա ժողովուրդք բազումք (Ի 29):

Քննել արժան է, թէ ուստի՞ եկն յԵրիքով, որպէս ասէ Մարկոս թէ՛ «Գան յԵրիքով» (Մարկ. Ժ 46), եւ կամ վասն է՞ր եկն: Ի հրէիցն խոյս տուեալ՝ առ զալիլեացուլքն շրջէր եւ ի գնալն անդ ոչ ընդ Երիքով անցանէր, այլ ընդ Սամարիա, որպէս զի զսամարուիին աշակերտեսցէ առ ջրհորովն՝ յօրինակ Եկեղեցոյ մկրտութեամբ աւագանին: Իսկ յորժամ մերձեցաւ ժամանակ չարչարանացն եւ յԵրուսաղէմ ելանէր, նախ յԵրիքով գալ, զի զանկեալն ի ձեռս աւագակաց ողջացուցէ², ուստի բազումս կոչէ ի ձեռն Չակքէի³ իրացն⁴, եւ զանհաւատսն խոշտանկէ⁵, որք ոչ կամէին զթագաւորելն⁶ Նորա⁷, եւ ապա ելանէ անտի բազում հաւատացեալ ժողովրդովք:

Բայց զիտել արժան է եւ զայն, թէ յումմէ՛ շինեալ եղև Երիքով, յորում մուտ եւ ել արար Տէր մեր: Արդ՝ յաղագս նորա այսպիսի ասի բան, թէ մի յորդոցն Քամայ Քուակ անուն ծնաւ երիս որդիս՝ զԳայի, զԳաղա եւ զԵրիքոյ⁸, որոց շինեալ զքաղաքս՝ եւ յիւրեանց անուն անուանեցին Գայի եւ Գաղա, իսկ Երիքոյ յետոյ շինէ զԵրիքով ամրագոյն մեքենայիք, եօթնպարսպեան, եւ անգծելի երկաթոյ վիմօք, դիւրամուտ եւ դժուարելանելի, եւ անուանեաց զնա յիւր անուն Երիքով՝ ամենայն չարութեամբ լցեալ զնա՝ չար արքանեկօք եւ գործակցօք չարեաց: Եւ նշանակաբար՝ Երիքով է օրինակ դժոխսց, զոր քակեաց Յեսու եւ անէժ զվերստին շինօղն նորա, եւ արհամարհեալ զայս օրէնս Ազան Բեթելացի Արիոնաւ անդրանկաւ եղ զհիմունս նորա, եւ զերծելով կրսերաւ կանգնեաց զդրունս նորա⁹, որպէս եւ սատանայ երկու ծննդովք¹⁰ իւրովք չարօք՝ հպարտութեամբ եւ պոռնկութեամբ, շինեաց զդժոխս, զի զհպարտութիւնն հիմն եղ դժոխսցն եւ զպոռնկութիւնն՝ դուռն մտին նորա: Եւ որպէս ի զոչմանէ փողոյ քահանայիցն առ հասարակ

¹ Յովհ. Դ 4-30

² Ղուկ. Ժ 30-37

³ Տ Չաքէի

⁴ Ղուկ. ԺԹ 1-10

⁵ Տ խոշտանկէ

⁶ Զ զթագաւորել

⁷ Ղուկ. ԺԹ 14

⁸ Զ զԵրիքով

⁹ Յեսու 2 26

¹⁰ Զ ծննդօք

կործանեցան պարիսպն Երիքովի¹, այսպես ի Փրկչին ձայնէ՝ որ ի վերայ խաչին, խախտեցան յատակք դժոխոց եւ փշրեցան դրունք նորա՝ խոնարհութեամբն եւ կուսութեամբն: Որ եւ իջանելովն անդ բանական հոգւովն՝ զբանդեալ հոգիսն առ Ինքն ձգեաց եւ եռօրեայ ելեալ անտի բազում ժողովրդովք՝ վերածեաց զնոսա ի կեանս՝ զոմանս մարմնով յարուցեալ զկնի Իւր՝ ըստ այնմ. «Բազումք մարմինք ննջեցելոց սրբոց յարեան» (Մատթ. ԻԷ 52), եւ զկէսս ազատելով ի ծառայութենէ բանսարկուին: Այս է ասելն թէ՛ «յելանելն նոցա յԵրիքովէ՝ զնացին զհետ Նորա ժողովուրդք բազումք»:

Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճանապարհան (Ի 30):

Մարկոս մի միայն ասէ թէ՛ «Որդի Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր յանցս ճանապարհի» (Մարկ. Ժ 46): Արդ՝ որպէս ոմանք ասեն երկու էին, եւ մին առաւելագոյն ունէր զկուրութիւն քան զընկերն, որ եւ աղաղակէր իսկ, զոր Մարկոս յիշէ²: Իսկ Մատթէոս զերկուսեան ասէ, իսկ ոմանք այլ ասեն զայս եւ այլ զայն, եւ զոմն³ ի մուտն ասեն յԵրիքով բժշկել եւ զոմն ի յելն ի նշանակ⁴ հրեշտակաց եւ մարդկան, եւ Երիքով աշխարհի, եւ Երուսաղէմ երկնի, զորս բժշկեաց Քրիստոս. զմարդիկ, որ երկու են՝ հոգի եւ մարմին, յորժամ յաշխարհ էջ, լուսաւորեաց, իսկ զհրեշտակսն, յորժամ համբարձաւ, զիտութեամբ խորհրդոյն զնոսա պայծառացոյց: Բայց մեք գտաք յատրի բարբառ, զի «Տիմէ»-ն կոյր լսի, իսկ «Բարտիմէ»-ն որդի կուրի, զի «բար»-ն որդի ասէ, որ է այսպէս թէ՛ «նստէր յանցս ճանապարհին կոյր կուրի որդի», զոր Մատթէոս կրկին ասէ զկոյրն, քանզի կոյր էր՝ ի ծնէ կուրէ ծնեալ: Իսկ առ ճանապարհի նստելն՝ թերեւս վասն ողորմութեան, որպէս սովորութիւն է այսպիսեացս ի դրունս քաղաքաց նստել, որ օրինակէ զԱդամ հանդերձ ծննդովք⁵ իւրովք, զի ի մարդոյ մարդ ծնաք եւ յախտաւորէն ախտաւոր եղաք՝ ըստ առաքելոյ թէ՛ «Որպէս հողեղենն, նոյնպէս հողեղենքս» (Ա Կոր. ԺԵ 47), որ նստէր ի վերայ դրանց մահու: Քանզի այս է ճանապարհն, յոր ամենեքեան ընթանամք, առ որով եկեալ Տէրն՝ լուսաւորեաց զհոգին ի մեղաց եւ զմարմինն

¹ Յեսու Ձ

² Մարկ. Ժ 47

³ Չ զոմանս

⁴ Չ յելն: Նշանակ] յելն՝ ի նշանակ

⁵ Չ ծննդովք

ի մահուանը կեցոյց զԱդամայ եւ զԺննդոց նորա. այս՝ ըստ Մարկոսի: Իսկ կոյրք երկու՝ ըստ Մատթէոսի, զհրէայս եւ զհեթանոսս ասէ, որք ի բնականն եւ ի գրատրականն անտեսք էին, այլեւ հոգւով եւ մարմնով ախտացեալ եւ յիմարեալ՝ ի խաւար¹ իբր ի² լոյս շրջէին ըստ այնմ թէ՛ «Զխաւարն լոյս կարծէին» (հմմտ. Եւ. Ե 20), զոր Իմաստունն ասէ թէ՛ «Ի խաւար շրջի անզգամն» (հմմտ. Ժող. Բ 14): Վասն որոյ ասէ, թէ «նստէին առ ճանապարհաւն», այսինքն՝ ի կենցաղոյս ընթացս՝ յօրացեալք հեշտութեամբ:

Իբրեւ լուան, թէ Յիսուս անցանէ, աղաղակէին եւ ասեն. «Ողորմեաց մեզ, Յիսուս, Որդի՛ Դաւթի»:

Յայտ է թէ՛ յամբոխէն, որպէս ասէ Դուկաս. «Լուան զանցանել ժողովրդեանն եւ հարցին, թէ զի՞նչ է այն, եւ պատմեցին նոցա, թէ Յիսուս Նազորացի³ անցանէ. աղաղակեցին եւ ասեն. «Ողորմեաց մեզ, Յիսուս, Որդի՛ Դաւթի» (հմմտ. Դուկ. ԺԸ 36-38): Մի՛ն դիր կուրիցն բարբառոյ, որ կարի լուսատրագոյն քան զաչեայսն էին, զի ոչ առաջնորդ ունէին եւ ոչ տեսանել զՆա կարէին, սակայն գուն գործեալ՝ ջանային մերձենալ առ Նա, ուստի եւ մեծածայն աղաղակէին թէ՛ «Ողորմեաց մեզ»: Բարութ իմացան, թէ Նա է Որդի Դաւթի, այն, որ արար զողորմութիւն ի վերայ կուրաց յեբուսացւոց⁴. զայն յիշելով ի գութ ամէն զՓրկիչն՝ զնոյն ողորմութիւն առնել եւ նոցա ըստ նմանութեան Հօրն:

Իսկ մտաւոր տեսութեամբ՝ լուան, թէ Յիսուս անցանէ, կամ հոգիքն ի դժոխս, կամ հրէայք եւ հեթանոսք: Ուստի՞ լուան. յայտ է՝ ի մարգարտիցն նորա զայն ձայն թէ՛ «Հուր բորբոքեալ է ի բարկութենէ, այրիցէ եւ իջցէ մինչ ի դժոխս ներքինս» (հմմտ. Բ Օր. ԼԲ 22), եւ թէ՛ «Փրկեցեր զանձն իմ ի դժոխսց ներքնոց» (Սաղմ. 2Ե 13). իսկ հրէայք թէ՛ «Բնիսեցէ զաւազան յԵսսեայ» (հմմտ. Եւ. ԺԱ 1), եւ՝ «Դո՛ւ, Բեթլեհեմն, երկիր Յուդայ, ոչինչ կրսեր ես յիշխանս Յուդայ» (Մատթ. Բ 6, հմմտ. Միք. Ե 2), եւ՝ «Յաթոռն Դաւթի նստցի, եւ զարքայութիւն նորա յաջողեցէ» (Եւ. Թ 7). եւ հրեշտակն թէ՛ «Նա փրկեցէ զժողո-

¹ Գ > ի խաւար

² Գ եւ

³ ՏԳ Նազորացի (այսպէս է և այլուր)

⁴ Բ Թագ. Ե 6-9: Բերված օրինակը, երևում է, Բ Թագ. Ե 8 համարի գրաբարյան բնագրի սխալ ընթերցման կամ աստվածաշնչային ոչ ճշգրիտ բնագրից օգտվելու արդյունք է. Դավիթը ոչ թե գթաց հեբուսացի կուրերին ու կաղերին, այլ հակառակը սպանեց:

վորդ Իւր ի մեղաց իւրեանց» (Մատթ. Ա 21), եւ հեթանոսք թէ՛ «Ի նա յուսասցին հեթանոսք» (Եւ. ԺԱ 10), եւ «Նա է ակնկալութիւն հեթանոսաց» (Ծննդ. ԽԹ 10), եւ՝ «Տաց քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն...» (Մաղմ. Բ 8), եւ՝ «Ետու զքեզ յուխտ ազգի եւ ի լոյս հեթանոսաց» (Եւ. ԽԹ 6):

Չայտսիկ լուան ի մարգարէիցն, թէ անցանէ Յիսուս, որ թարգմանի «փրկիչ», մարդկաբար ընդ կենցաղս՝ ըստ այնմ թէ՛ «Յերկրի երեւեսցի եւ ընդ մարդկան շրջեսցի» (Խնմտ. Բարութ Գ 38): Անդակեցին առ հասարակ հրէայք եւ հեթանոսք արդարոցն բերանով թէ՛ «Ողորմեաց մեզ, Յիսուս, Որդի՛ Դաւթի»: Ոչ վարձս խնդրեցին փոխադարձ բարեգործութեան, քանզի ոչ ունին, այլ ողորմութիւն ձրի եւ տուրք շնորհաց՝ ըստ այնմ. «Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան Թում» (Մաղմ. Ծ 3), եւ թէ՛ «Ողորմեա՛ ինձ, Աստուած՝, զի կոխեսաց զիս մարդ» (Մաղմ. ԾԵ 2), քանզի Որդի Դաւթի Թո լինելոյ ըստ երդմանն ոչ այլ ինչ է, քան թէ ողորմութիւն մեզ ընձեռել:

Եւ ամբոյն սաստեաց նոցա, զի լռեսցեն, եւ նոքա եւս առաւել աղաղակէին եւ ասէին. «Տէ՛ր, ողորմեաց մեզ, Որդի՛ Դաւթի» (Ի 31):

Կամ վասն նախանձու սաստէին, զի մի՛ բժշկեսցէ զնոսա՛ գոր բարեհամբաւէին, կամ պատիւ դնելոյ սակս դադարեցուցանէին, որպէս երբեմն զմանկտիւն², բայց նոքա յեւս առաւել աղաղակելոյ ոչ կացին ի բաց, քանզի այնպիսիք են ժուժկալացն ոզիք. որչափ եւս խափանեսցէ որ, եւս քան³ զեւս յորդորին: Եւ Բրիստոս թոյլ տայր զնոսա ըմբերանել, զի առաւել նոցա յօժարութիւնն երեւեսցի, եւ ուսանիցիս, թէ արժանի էին վայելելոյ յերախտիսն, վասն որոյ եւ ոչ հաւատս պահանջեաց ի նոցանէ, որպէս ի բազմաց, զի աղաղակելն եւ դիմելն ի վերայ՝ բաւական էր ցուցանել զհաւատս նոցա եւ զյօժարութիւնն: Չի ոչ աղքատութիւնն եւ ոչ կուրութիւնն եւ ոչ չլինելն լսել եւ ոչ բազմութիւնն որ սաստեր կամ վարուցն անհամարձակութիւն կարաց արգելուլ զնոսա, որպէս զի լցցի բանն թէ՛ «Եկն Լոյս յաշխարհ, զի կուրաց տեսանել տայցէ⁴» (Խնմտ. Յովհ. Գ 19, Եւ. ԽԲ 7): Ուստի ուսանիմք, զի թէպէտ կարի արհամարհք եւ խո-

¹ Տ > Աստուած

² Մատթ. ԺԹ 13-15

³ Զ եւ սոքա] եւս քան

⁴ Զ տացցէ

տանք ինչ իցենք, եթե հաւատով մատչիցիմք առ Աստուած, անձամբ իսկ կարող ենք վճարել զինչ եւ խնդրիցենք, եւ թէ յամիցէ Աստուած զպարգեւն, եւ կամ թէ որ ի բաց մերժիցէ, մի՛ դադարեցուք ի խնդրուածոց, զի այնպէս եւս առաւել հաւանեցուցանենք զԱստուած, որպէս սոքա, զի «աղաղակէին եւ ասէին. «Տէ՛ր, ողորմեա՛ց մեզ»:

Ոչ միայն զաղաղակն ձայնիւ բարձրացուցին, այլեւ բանիւ պանծացուցին. «Տէ՛ր,- ասէին,- ողորմեա՛ց մեզ», զի զոր նախ որդի Դաւթի ասացաք, նոյն ինքն եւ Տէր նորին, որ յաւետ Արարչիդ վայել է ողորմութիւնն: Քանզի «Տէր» զմշտնջենաւոր աստուածութիւնն խոստովանէին, իսկ «Որդի Դաւթի»՝ զմարդեղութիւնն, վասն զի Յիսուս ոչ սոսկ մարդ է եւ ոչ յատուկ Աստուած, այլ Աստուած միացեալ ի մարմնի անձառապէս, եւ զի որպէս էրն, այնպէս դաւանեցին, վասն այսորիկ առին՝ զոր հայցեցին: Իսկ ըստ երկրորդ կարգին՝ ամբոյս իմա ինձ զբազմութիւն դիւացն, որք փորձութիւնս յարուցանէին ի վերայ սրբոցն, կամ զխուժանն հրէից, զի թերեւս ի նեղութենէն լռեալ դադարեցեն ի պաղատանացն կամ հաւատալոյ ի Քրիստոս: Իսկ նոքա եւս առաւել աղաղակէին թէ՛ «Տէ՛ր, ի նեղութեան յիշեցաք» (Եւ. ԻՁ 16), եւ թէ՛ «Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի» (Մատթ. ԺԷ 7), եւ՝ «Աղաղակեցին առ Տէր ի նեղութեան իւրեանց¹, եւ ի վշտաց նոցա փրկեաց զնոսա» (Մատթ. ԾՁ 6) եւ «առաքեաց զբան Իւր եւ բժշկեաց զնոսա» (Մատթ. ԾՁ 20), որ եկն եւ եղև Որդի Դաւթի ըստ խնդրոյ նոցա:

Չտեղի առ Յիսուս, կոչեաց զնոսա եւ ասէ. «Չի՞նչ կամիք, զի արարից ձեզ» (Ի 32):

Ասեն ցՆա. «Տէ՛ր, զի բացցի՛ն աչք մեր» (Ի 33):

Յորժամ ետես զթախանձանս նոցա, յօժարութեամբ սրտիւ զտեղի էառ եւ կոչեալ հարցանէ թէ՛ «Չի՞նչ կամիք»՝ առ ի խրատ մեզ, զի մի՛ ի խնդրողացն խոյս տայցենք, այլ զիղձս նոցա կատարիցենք: Բայց է՞ր վասն հարցանէր. զի մի՛ որ կարծիցէ, թէ նոքա այլ իմն խնդրէին, եւ Նա այլ ինչ տայցէ, քանզի եւ սովոր իսկ է ամենայն ուրեք նախ զառաքիներս թժշկելոցն յայտ առնել եւ ապա զբժշկութիւն շնորհել, զի զայլս ի նախանձ ածիցէ, որպէս քանանացի կնոջն արար եւ հարիւրապետի՞ն², եւ միւս եւս զի ցուցէ,

¹ Գ > իւրեանց

² Մատթ. ԺԷ 22-28, Ը 5-13

թէ արժանի է պարգեւացն, զի «որ խնդրէ որ՝ առնու», որպէս ասացն (Մատթ. Է 8), միանգամայն եւ ոչ զանձն յառաջեցուցանէ ի հրաշս, զի մի՛ վասն պարժանաց վարկանիցին կատարել զսքանչելիսն: Ասեն ցՆա. «Տէ՛ր, զի բացցին աչք մեր»։ զի թէպէտ բազում իրաց կարօտ էին, բայց ընդ աղօտ յայլսն վայելէին, իսկ լուսոյ՝ եւ ոչ բնաւ. վասն այսորիկ զառաջին պարգեւն խնդրեցին՝ զգեղեցկութիւն էիցս, զլոյսն ասեմ պանծալի, որպէս կենդանի հրճուի ընդ գալուստ նորա՝ ոչ թէ լոյս ընծեռել, քանզի գոյր այն, այլ գործիք, որով ի լոյսն վայելեսցեն: Բայց ուստի՞ զհտէին զՆա լուսաւորիչ աչաց. կամ թէ ի համբաւոյ լուեալ՝ էին, թէ զբազում կոյրս լուսաւորէ, որպէս զայն, որ ի Սելովամ առաքեաց՞, կամ թէ ի հաւատոցն դաւանութենէ ազդումն ինն շնորհաց եղեւ ի նոսա, թէ Սա, որ եկն զհոգիս մարդկան պայծառացուցանել, կարօղ է եւ մարմնոյ աչաց լուսաւորութիւն շնորհել:

Իսկ առ ի միտս՝ զտեղի առնուլն Յիսուսի՝ կամ անդորրութիւն շնորհելն է փորձանաց արդարոցն, որով զփափագն աճեցուցանէր, կամ ի լրումն ժամանակի զալն եւ առնուլն մարմին, քանզի տեղի ոչ այլ ինչ է, քան թէ մարմնոյ պատահումն, եւ առանց մարմնոյ ոչինչ է տեղի: Ապա ուրեմն տեղի առնուլ զմարմին զգենուլն նշանակէ, որով կոչեաց զամենեսեան ի փրկութիւն ըստ Յիսուսին ձայնի, կամ թէ յորժամ էջ յերկնից, զամս երեսուն լռեաց եւ ապա կոչեաց զհրէայս եւ զհեթանոսս, զորս եւ հարցանէ թէ՛ «Չի՞նչ կամիրք», եւ նոքա ասեն. «Չի բացցին աչք մեր»: Այսմ ըղձից եւ Դաւիթ ըղձայ թէ՛ «Չարթո՛ գաչս իմ, եւ նայեցայց ի սքանչելիս օրինաց Բոց» (Սաղմ. ԾԺԷ 18), քանզի մարմնական տրօք փարթամացեալ էր բնութիւնս եւ միայն աստուածգիտութեանն ցանկայր, որպէս զի բացցին առազաստ մտացն եւ քակեսցին ի սնտի կենացս, եւ դարձցին ի ճշմարիտ լուսոյն հայեցողութիւն:

Եւ գրացեալ Յիսուս՝ մերձեցաւ յաչս նոցա, եւ վաղվաղակի տեսին եւ գնացին զհետ Նորա (Ի 34):

Գթութիւնն եղեւ պատճառ բժշկութեանն, վասն որոյ եւ յաշխարհ իսկ եկեալ էր, այլ թէպէտ գթած է՝ զրեալ է՞, սակայն եւ արդար է՝ զարժանիսն խնդրէ, եւ զի արժանի էր՝ յայտ է յասացելոցն: Իսկ զի՞նչ այն թէ՛ «վաղվաղակի տեսին»: Յուցանէ, թէ Ինքն է ա-

¹ Զ լսեալ

² Յովհ. Թ

³ Ա Սն. Լ 9, Սաղմ. ԴԷ 38, ՁԵ 15, ԾԺԱ 4, Դուկ. 2 36 ևն

րարիչ բնութեանս, որ առանց աշխատանաց բանի զերկինս երկու լուսաւորօրն պայծառացոյց եւ զմարդն տեսող նոցին գործեաց, Նա դարձեալ զխանգարեալ աչս նոցին բանի միայն եւ հպմամբ յաչս՝ լուսաւորեաց, որք տեսին ոչ միայն զէքս, այլեւ զՆա «եւ զնացին զհետ Նորա»։ Չի ոչ եղեն որպէս զբազումս ապերախտ, մանաւանդ որպէս զհրէայսն, այլ սոքա որպէս յառաջ քան զպարզեւսն ժուժկալեալք էին, նոյնպէս եւ յետ պարզեւացն մտադիրք եղեն, վասն որոյ զկնի չոգան, զի բարեբանեացեն. այլեւ զհետ Նորա ընթանալն զաշակերտելն ցուցանէ։

Այլ հոգեւոր տեսութեամբ այսպիսի է. քանզի ոչ այլ ինչ էր պատճառ մարդեղութեան Յիսուսի, եթէ ոչ՝ զուրթն արարչական, որ ստիպեաց մերձենալ եւ խառնիլ ի բնութիւնս մարդկան եւ բնակիլ ի մեզ՝ ըստ առաքելոյ թէ՛ «Բնակեալ Բրիստոսի ի ներքին մարդս ձեր՝ բանալ եւ լուսաւորել զաչս սրտից անձեռագործ թլփատութեամբ» (հմմտ. Եփես. Գ 16-17, Ա 18, Կոր. Բ 11), որք արագ հաւատացին ի Նա եւ ի Հայր Նորա՝ բեւեռմամբ սիրոյ, ընթանալով զհետ հոտոյ իւրոց Նորա¹ ի մահ եւ ի չարչարանս եւ յերկինս՝ հրէայք եւ հեթանոսք, որք ի վաղնջուց հետէ հետեալ կային ի Նմանէ, որպէս զի աստ իմասցիս զՀահ մարմնառութեան Բանին, որով արարածս զԱրարիչն ծանեաւ։

¹ Երգ Ա 2-3

ԳԼՈՒԽ ԻԱ

Իբրև մօտ եղևն յԵրուսաղէմ եւ եկին ի Բեթփազէ¹, մերձ ի լեառն Զիթե-
նեաց (ԻԱ 1):

Առ ճառդ ոչ ունի պէտս քննութեան, քանզի յորժամ մերձեցան
յԵրուսաղէմ, յասացեալ նշանաւոր տեղիսդ առաքեաց զաշա-
կերտսն: Բայց խորհուրդն այսպիսի է. քանզի Երուսաղէմ «խա-
ղաղութիւն» թարգմանի, զի անդ խաղաղանայր գրաւորական ժո-
ղովորդն առ միմեանս եւ առ Աստուած ի ձեռն քահանայիցն եւ
պատարագացն զենմանց, որ էր նշանակ Եկեղեցոյ՝ ըստ Պօղոսի
թէ՛ «Առակաւ երկնատրացն պաշտէր» (Իմմտ. Եբր. Ը 5), որոյ մօտ եւ
մերձաւոր եկն ճշմարիտ խաղաղութիւնն Քրիստոս եւ մահուամբն
Իւրով զբազմաստուածութեանն խռովութիւն խաղաղացոյց՝ ըստ
առաքելոյ²: Եկին, ասէ, ի Բեթփազէ եւ ի Բեթանիա³: Բեթփազէ
թարգմանի տուն ծնօտի, եւ ծնօտ սպասաւոր է բանի, զի ծնօտն
Ադամայ լուծանէր զինքն ի բանաւոր⁴ բնութենէն անհնազանդու-
թեամբ պատուիրանացն Աստուծոյ եւ յանդուգն պատասխա-
նատրութեամբ անասնեղէն եղև ըստ Դաւթայ⁵, վասն որոյ Յի-
սուս լինի մարդկեղէն տուն եւ ծնօտ յաղագս մարդկան ծնօտի
զաստուածայինսն վարդապետելով: Եւ դարձեալ որպէս միա-
մօրն եւ ուժեղն Սամսոն⁶ կոտորեաց զայլազգիսն ծնօտի իշոյն,
յորմէ եւ բղիսեաց աղբիւր ջրոյ կենդանոյ⁷, նոյնպէս Յիսուս ի խա-
չին ի ձեռն ծնօտի բանին, որ բարբառեցաւ զ«էլի էլի»-ն⁸, իսպառ
կորոյս զբանակս դիւաց եւ արտաքս հոսեաց աղբիւր⁹ կենաց, զոր
արբեալ զուարճացան տիեզերք ի պարարտութենէ ուղիսից տան
Նորա¹⁰:

¹ Զ Բեթփազէ (այսպէս է և այլուր)

² Դոմ. Ե 10, Եփես. Բ 15

³ Զ Բեթանիա

⁴ Զ բանաւ

⁵ Սաղմ. ԽԸ 13

⁶ Տ Սամսոն

⁷ Դատ. ԺԵ 15-19

⁸ Մատթ. ԻԷ 46

⁹ Զ աղբեր

¹⁰ Սաղմ. ԼԵ 9

Իսկ Բեթանիա ասի տուն սգոյ, քանզի տուն ուրախութեան էր մարդն վասն աստուածային փշմանն եւ յետ յանցանացն դարձաւ առ Փշօղն եւ եղև տուն անհնազանդութեան եւ սգոյ, վասն որոյ նորին Ստեղծօղն լինի տուն հնազանդութեան Հօր եւ բառնայ զանհնազանդութիւն մարդոյն Իւրով հնազանդութեամբն, եւ տուն չարչարանաց եւ սգոյ եղև, որպէս եւ արտասուեաց իսկ ի վերայ Ղազարու ի Բեթանիա՝ ազատել ի սգոյ զԱդամ նշանակաւ Ղազարու եւ մխիթարել զքորսն՝ յօրինակ նահապետաց եւ մարգարէից, այլև զամենայն մարդկային բնութիւնս՝ բառնալով զամենայն արտօսք յամենայն երեսաց՝:

Իսկ զի՞նչ այն թէ՛ «մերձ ի լեառն Զիթենեաց»։ Քանզի ձէք զիշերոյ է լուծիչ, եւ Բանն Աստուած ի յերկնից լեռնէ ի Հօրէ լուսոյ առ մեզ եկեալ՝ մերձեցաւ խառնմամբ ի մարդկային բնութիւնս՝ միանալով ի մարմնի, արեգակնապէս լոյս ծագեաց մեզ եւ ելոյժ զգիշեր մարդկան հոգոց՝ հուպ տանելով զմեզ ի Զիթենեաց լեռինս՝ ի հրեշտակս լուսաւորս։ Այլև ձէք ողորմութեան է նշանակ, զոր բազմացոյց տարածեաց յերկրի իբր զլեռինս, քանզի ի շնորհս Նորա ողորմութեամբ մերձեցաք՝ ըստ երգոյն. «Մեծ եղև ողորմութիւն Քո մինչեւ յերկինս» (Սաղմ. 67: 5): Այլև Հոգւովն³, զոր ձէթն նշանակէ, կարէ որ աստուածաբանել զՅիսուս եւ զճշմարիտ խաղաղութիւնն՝ հաւատով մերձենալ՝ ըստ առաքելոյ. «Ոչ որ ասէ Տէր զՅիսուս, եթէ ոչ Հոգւովն Սրբով» (Ա Կոր. ԺԲ 3):

Յայնժամ Յիսուս արձակեաց երկուս յաշակերտացն⁴ Իւրոց եւ ասէ ցնուսա. «Երթաք ի գեողո, որ առաջի ձեր է, եւ անդէն գտանիցէք էշ կապեալ եւ յաւանակ ընդ նմին, լուծէք եւ⁵ անէք Ինձ (ԻԱ 2):

Ի բանիցս կարգէ իմանամք, զի ոչ այնքան յաղագս պիտոյից, որչափ վասն խորհրդոյ կատարման եկն յայս։ Բայց քննելի է, թէ ընդէ՞ր բազում անգամ ել յԵրուսաղէմ եւ ոչ երբէք այնպիսի սպասուք, որպէս այժմ։ Կարծեմ, թէ տակաւին սկիզբն էր տնտեսութեանն, եւ չէր ամենայն ուրեք զանձն յայտնեալ, նաեւ ոչ ժամանակ չարչարանացն մերձ էր, վասն այնորիկ խառնիխումն խառնէր

¹ Յովհ. ԺԱ 35

² Եւ. ԻԵ 8

³ ՏԶ Հոգւոյն

⁴ Զ յաշակերտաց

⁵ Տ > ԵԼ

ընդ նոսա եւ ծածկէր զանձն, զի մի՛ այնպիսի զարմանալի երեւմամբ ի բարկութիւն դրդէ զնոսա: Իսկ յորժամ զգօրութեանն զբազում հանդէս եցոյց, եւ խաչն եւս եկեալ հասեալ էր ի դուրս, ապա այնուհետեւ առաւել ցուցանէ զպայծառութիւն եւ նախ իբր զբազաւոր սպասաւորս առաքէ զաշակերտսն զՊետրոս եւ զՅովհաննէս: «Երթալք,- աւտ,- ի գեօղ¹, որ առաջի ձեր է», այսինքն ի Բեթփազէ² եւ կամ ի Բեթանիա³, քանզի մերձ էին անդ, որպէս ասացն, բայց Բեթանիայս, որպէս ոմանք ասեն, ոչ է այն, յորում Ղազարն ննջեաց⁴, այլ ա՛յլ իմն տեղի արտաքոյ քաղաքին, յորում երբեմն ելեալ ազանէր անդ⁵: Իսկ Յովհաննէս թոյ թէ զայս աւտ, զի «վեց ամօրքք⁶ յառաջ քան զՉատիկն եկն ի Բեթանիա» (Յովհ. ԺԲ 1), ուր զՂազար յարոյց, եւ անտի եմուտ յԵրուսաղէմ:

«Եւ անդէն գտանիցէք էշ կապեալ եւ յաւանակ ընդ նմին⁷, լուծ[էք]...»: Կամ թէ այլոյ ուրոք էր էշն եւ յաւանակն կորուսեալ կամ գողացեալ, եւ նոքա ըստ հրամանի Օրինացն գտեալ արտաքոյ կապէին⁸, որպէս զի եկեալ տէրն իւր առցէ, կամ թէ նոր ստեղծ չքնաղ իմն կազմելով, որպէս յետ յարութեանն զհացն եւ զձուկն եւ զմեղու խորիսխն⁹, կամ թէ ինքեանց իսկ էր արանցն, որ անդն կային, կամ թէ որպէս ասեն, անդրանիկ էր՝ Աստուծոյ անուանեալ ի պէտս Տաճարին:

Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ, ասասջիք, եթէ տեսնն իւրեանց պիտոյ են, եւ վաղվադակի առաքէ զնոսա» (ԻԱ 3):

Չաստուածական զօրութիւնն յայտ առնէ, միանգամայն եւ մարգարէանայ գոր ինչ ասելոց էին, քանզի հաւանեցուցանէ զմիտս նոցա՝ տալ յանխնայ զիւրեանց անասնիկն, եւ այն զի աղքատք եւ հողագործք էին, բայց չասացին ինչ, եւ կամ թէ հարցին. «Չի՞ լուծանէք», որպէս ասէ Ղուկաս (Ղուկ. ԺԹ 33): Այլ յորժամ լուան, թէ տեսնն իւրեանց պիտոյ են, այսինքն թէ տէր իշոցն խնդրէ,

¹ Զ գեղդ

² Զ Բեթզազէ

³ Զ Բեթանիա

⁴ Յովհ. ԺԱ 1

⁵ Մատթ. ԻԱ 17

⁶ Զ ամօրքք

⁷ Զ > ընդ նմին

⁸ Բ Օր. ԻԲ 1-4

⁹ Ղուկ. ԻԴ 42

կամ Տեառն իրեանց եւ Վարդապետին պիտոյ են¹, իսկոյն լուս կացին եւ ոչ իշխեցին անգամ ճիգ հանել, քանզի սիրտ մարդկան ի ձեռս Աստուծոյ է: Եւ այն զի ոչ զՆա, այլ զաշակերտսն տեսին եւ հաւանութեամբ յանձն առին, որպէս յորժամ ի պատրաստութիւն Պասեքին առաքեաց, գտոյն ասաց. «Գտանիցէք այր մի բարձեալ սափոր ջրոյ յուս իւր, ասացէք ցնա. «Վարդապետ ասէ՛ ո՞ր են վանքն, ուր ուտիցեմ զգատիկն, եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ, ա՛նդ պատրաստեսջիք» (հմմտ. Ղուկ. ԻԲ 10-11): Նոյնպէս եւ աստ առնէ, որով խրատէ զնոսա, թէ եւ զհրէայսն կարէր արգելոյ եւ պապանձեցուցանել, զի մի՛ կարացեն մտաբերել ի Նա, այլ ոչ կամեցաւ: Հանդերձ այսու եւ ա՛յլ իմն ուսուցանէ աշակերտացն, թէ զոր ինչ եւ խնդրեսցէ որ՝ տայցեն եւ ոչինչ դիմադարձ լինիցին, զի թէ որք ոչ գիտէին, այնպէս թոյլ ետուն, որչափ եւս առաւել՝ յորժամ ամենայն տիեզերաց ծանօթ լինիցին:

Իսկ նշանակաբար՝ արձակել երկուս յաշակերտացն նախ զարարչական եւ զարքունական զօրութիւնն ասէ, որք սպասաւորք են կամացն Աստուծոյ ի բարութիւն եւ ի բարկութիւն, որով զգաստանան մարդիկ: Եւ երկրորդ՝ զնախախնամօղ հոգիսն զհրեշտակական բազմութիւնսն, եւ զարս սուրբս՝ աստիճանաւորս եւ դպիրս օրինացն Աստուծոյ կոչէ: Եւ երրորդ՝ զերկու Եկեղեցիս. մի՛ զհինն Սիոն, որ ի նախնեացն սկսաւ եւ ի Վերնատանն կատարեցաւ, եւ երկրորդ՝ զկաթողիկէ սուրբ Եկեղեցի, որ պաշտէ մինչեւ ի գալուստն Քրիստոսի, եւ եւս ի հանդերձեալն: Եւ չորրորդ՝ զՀին եւ զՆոր Կտակարանս: Եւ հինգերորդ՝ զմարգարէս գուշակօղս Բանին եւ զառաքեալս հազարապետս մարդեղութեան Նորին³: Վեցերորդ՝ իսկապէս օրինակէ զողորմութիւն եւ զարդարութիւն, որք միշտ առաջի երեսացն Աստուծոյ ընթանան, եւ աթոռ Նորին այսու հաստատի⁴: Եւ ընդէ՞ր երկու առաքէ. զի լաւ է քան զմին, ասէ Սողոմոն, զի թէ միովն զթեսցի, միւսովն կանգնեսցի⁵:

«Երթայք,- ասէ,- ի գեօղդ, որ առաջի ձեր է»: «Գիւղ⁶» զբովանդակ տիեզերս կոչէ՝ վասն գեղեցկադիր կարգաց աշխարհիս, կամ առ Արարչին մեծութիւն իբրեւ զգիւղ մի համարեալ է աշխարհս,

¹ Զ է

² Զ սուրբ

³ Ա Կոր. 7 1

⁴ Սաղմ. 2Ը 15

⁵ Ժող. 7 9

⁶ Զ գեղ (այսպէս է և այլուր):

կամ գտորք Եկեղեցի, որ գեղեցկացաւ ի հին տգեղութենէն՝ ըստ երգոյն. «Մեաւ եմ եւ գեղեցիկ, դստերք Երուսաղէմի» (Երգ. Ա 4): Բայց կամիմ զգանազանութիւն ատարարանչացն ձայնից քննել, քանզի Մատթէոս ասէ թէ՝ «ի գեօղոյ, որ առաջի ձեր է», իսկ Մարկոս՝ «ի գեօղոյ, որ ընդդէմ ձեր կայ» (Մարկ. ԺԱ 2), եւ Դուկաս թէ՝ «ի գեօղոյ, որ հանդէպ ձեր կայ» (Դուկ. ԺԹ 30): Արդ՝ «առաջի ձեր» ասելն զհնազանդութիւն արարածոցս ցուցանէ առաջի առաքելոցն վարդապետութեան եւ մարգարէիցն գուշակութեան, որք են յոյժ բարիքն, եւ «ձեր» ասելն ցուցանէ, թէ առաջի կայ նոցա այնուիտեւ ուսանելն: Իսկ «ընդդէմ»-ն զհակառակութիւնն ասէ, զոր կրեցին յանարժանիցն՝ առաքեալքն եւ մարգարէքն եւ այլքն, որ ասացան, որք են կարի չարքն՝ նախ Երուսաղէմ եւ ապա այլքն: Եւ «հանդէպ»-ն կրկին է. կամ զմիջակացն ասէ, որք թէպէտ ոչ պատուեն գտորքսն, այլ եւ ոչ չարչարեն եւս, այլ հաւասար յերկոսին լինին, կամ զօտարութիւն սրբոցն ասէ ի կենցաղոյս իրաց, քանզի դիպուած վարկան զինքեանց զալն յաշխարհս եւ ոչ սեփհական տեղի, որպէս Պօղոս մեռեալ ասէր զանձն աշխարհի², եւ Դաւիթ զպանդխտութեանն երկարութիւն ողբայր եւ պահպանոց զսա անուանէր³:

«Եւ գտանիցէք էշ կապեալ եւ յաւանակ ընդ նմին⁴»: «Էշ» եւ «յաւանակ» կամ զարդարս եւ զմեղաւորս ասէ, որք անասնոց հաւասարեցան յետ յանցանացն: Կամ ի մարմին կապեցան, որ յէշ առակեալ է, եւ նովաւ ի մահուն վտանգ մատնեցան ծերք եւ տղայք: Կամ զհոգին ասէ, զի հաճի յօրէնս ըստ ներքին մարդոյն⁵, եւ «յաւանակ»՝ զմարմին վասն հետտօղ գոյոյն եւ ընդ հակառակս օրինացն ելանելոյն, կամ զհրէայս եւ զհեթանոսս: «Էշ» անմարտր եւ բեռնակիր զհրէայսն կարծեն վասն վարժ գոյոյ Օրինացն բեռանց՝ թլփատութեանն եւ շարաթուն եւ այլոց խտրութեանն, եւ անմարտր, զի ի կռապաշտութիւն անկանէին եւ լուսաւորաց երկնից խունկս արկանէին: Իսկ «կապեալ» մեղացն շղթայիւք՝ ըստ այնմ թէ՝ «Ի գործս ձեռաց իւրեանց կապեցցին մեղաւորք⁶» (Մաղմ. Թ 17), եւ թէ՝ «Այս դուստր Աբրահամու է, զոր կապեաց սատանայ»

¹ Զ յանարժանեացն

² Գաղ. 2 14

³ Սաղմ. ԵՃԹ 5

⁴ Զ > ընդ նմին

⁵ Դոմմ. է 22

⁶ Զ նմա

(Ղուկ. ԺԳ 16) պէսպէս մեղօք եւ բազմաստուած մոլորութեամբն, որով եւ կարկամեցաւ իսկ: Եւ «յաւանակ» յաղագս տրմուղ¹ եւ անկիրթ գոլոյն զհեթանոսս առակէ, զի գնացին ըստ կամս անձանց՝ ոչ երբէք մտեալ ի ներքոյ օրինաց եւ վարդապետութեան, այլեւ ի լերինս եւ ի խորափիտս վազելով պէսպէս զոհագործութեամբքն եւ անմաքոր աղտեղութեամբքն, զոր միս ւտտարանիչն «արտաքոյ ի փողոցս» (Մատթ. ԺԱ 4) ասէ, այս է՝ արտաքոյ բնութեան օրինացն ըստ առաքելոյ²: Իբր զանմիտ անասունս զբնածին բարս իւրեանց եղծին ի փողոցս³ աշխարհիս կոխան եղեն դիւաց եւ ախտից, զոր, ասէ, «լուծէք ածէք Ինձ», այսինքն ի մարմնոյ կապից՝ ըստ այնմ. «Արձակեա զժառայս Բո» (Ղուկ. Բ 29):

Քանզի յորժամ ելանենք ի մարմնոյ, մտանենք առ Աստուած՝ ըստ առաքելոյ⁴, կամ ի տղայական ալփաբետաց⁵ գրոյն ի կատարեալ Հոգոյն վարդապետութիւն, եւ ի հրեական Օրինացն ի հնոյն եւ ի յստուերէն՝ յառաքելոցն հնազանդութիւն՝ ի նորն եւ ի լոյսն ածելով, նաեւ ի հեթանոսական մոլորութեանցն ի ճշմարիտ աստուածգիտութիւնն, այլեւ յաղցաւոր կապից երկրաւոր իրաց յերկնային կենացն ժառանգութիւն: Եւ դարձեալ ոչ միայն ասէ լուծէք ի չարէն, այլեւ կատարեալ մաքրութեամբ ածէք Ինձ ի հարսնութիւն պատրաստեալ կազմ առազաստի երկնաւոր գահոյիցն, զորոյ զօրինակ մաքրութեանն յառաջ տարեալ ասէ. «Եւ եթէ որ ասիցէ ինչ ձեզ, ասասօրք, եթէ⁶ տեսուն իւրեանց պիտոյ են⁷, եւ վաղվաղակի առաքէ զնոսա»: Այս յայտնապէս զդպրացն հակառակութիւն եւ զբանասարկուիւն մարտն ցուցանէ. դպիրքն «Ո՞ր ետ Բեզ զիշխանութիւնդ զայդ» ասէին (Մատթ. ԻԱ 23), իսկ բանասարկուն «Չի՞ կայ մեր եւ Բո, Յիսուս, Որդի՛ Աստուծոյ» (Մատթ. Ը 29), որպէս տեսարք իշոցն ասէին. «Չի՞ լուծանէք», զորս բանի հրամայէ պապանձեցուցանել թէ՛ «Տեսուն իւրեանց պիտոյ են», այսինքն թէ՛ Հովին քաջ եկն ի խնդիր մոլորեալ ոչխարի Իւրոյ⁸, զոր ստեղծ ձեռօք եւ պատկերեաց բանի:

¹ Զ կրմուղ

² Գրոմ. Բ 12

³ Զ փողոց

⁴ Բ Կոր. Ե 8

⁵ ՏԶ ալփափետաց

⁶ Զ թէ

⁷ Զ է

⁸ Յովհ. Ժ 11, Եւ. Խ 11, ԾԳ 6, Եզեկ. ԼԴ 6

Արդ՝ արարածքս Արարչին է պիտոյ եւ ո՛չ գող եւ ասպատամբ ծառայիդ, գոր ժողովեցեր գոչ քոյն ըստ խեռ հաւուն ձայնի: Այժմ՝ յայց ելեալ Տէր իւր՝ առ Ինքն կոչէ, զի Աստուծոյ ծառայեցեն եւ ո՛չ ախտի, որք լուեալ զԻմ անունս՝ ափ ի բերան լինին եւ վաղվադակի ի բաց չքոտին, եւ ոչխարքն զկնի Հովուին ձայնի արշաւեն: Չայս ասելով՝ ցուցանէ աշակերտացն, թէ դիւրին է կոչումն հեթանոսաց, զի ոչինչ կարէ արգելով զնոսա՝ յորոց յառաջագոյն ունէին: Բայց ո՛չ վայրապար ասէ՝ «եթէ տեսնն իրեանց պիտոյ են»: Չի «տեսնն» ասելովն՝ զմիաստուածութիւնն ցուցանէ, իսկ զ«իրեանց»-ն դնելով՝ զերիս Անձնաւորութիւնն գուշակէ, քանզի Աստուածութիւնն ի մի բնութիւն եւ յերիս դէմս խոստովանեալ է: Այլեւ վաղվադակի առաքելն՝ զհաւատոյն բան նշանակէ, որ դիւրին է ըստ առաքելոյ՝ սրտիս հաւատալ եւ բերանով խոստովանիլ ի փրկութիւն՝ եւ այսու արագ առ Աստուած մերձենալ, եւ զի զայս առաքեալքն ուսուցին, յայտ է, զի ասէ թէ՛ դուք «ասասցիք»:

Բայց այս ամենայն եղև, զի 199ի բան մարգարէին, որ ասէ (ԻԱ 4).

«Ասացէք դստեր Սիովնի. ահա թագաւոր քո գայ քեզ՝ հեզ եւ հեծեալ յէշ եւ ի յաւանակ² իշոյ» (ԻԱ 5):

Հիանայ աւետարանիչս ընդ ելս իրացն, քանզի զառաջինն ոչ գիտէին, որպէս ասէ Յովհաննէս. «Իսկ յորժամ փառաւորեցաւ Յիսուս, յայնժամ ի միտ առին աշակերտքն, թէ գոր ինչ գրեալն էր վասն Նորա, զայն արարին Նմա» (հմմտ. Յովհ. ԺԲ 16), եւ զի յետ Հոգւոյն ընդունելութեան գրեաց Մատթէոս, վասն այնորիկ սքանչանայ, որպէս ի ծննդեանն թէ՛ «Այս ամենայն եղև, զի 199ի որ ասացան ի Տեսննէ ի ձեռն Եսայեայ մարգարէի» (Մատթ. Ա 22): Նոյնպէս եւ աստ թէ՛ «այս ամենայն եղև», այսինքն՝ գոր ասացի եւ գոր ասելոցս են, որպէս զի ցուցցէ, թէ ի Հօրէ այս յառաջագոյն աւետարանեցաւ մարգարէիքն, եւ այժմ ի կատարումն եկն մարգարէութիւնն, որ ասէ. «Ասացէք դստեր Սիովնի³. ահա թագաւոր քո գայ քեզ՝ հեզ եւ հեծեալ յէշ...» (հմմտ. Չար. Թ 9): «Սիովն» զլեառնն է իմանալ, գոր էառ Դաւիթ եւ շինեաց զամբոցն իւր անդ, իսկ «դուստր Սիովնի»՝ զքաղաքն Երուսաղէմ, զի ընդ լերամբն կայ, վասն զի առ հինն Իսրայէլ խօսի մարգարէս, զի նախ նոցա տուաւ փրկութիւնն

¹ Դրոմ. Ժ 10

² Տ յաւանակի

³ Չ Սիովնի

եւ ապա՝ հեթանոսաց, որպէս Ինքն ասէ. «Ո՛չ ուրեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի» (Մատթ. ԺԵ 24):

«Ասացէք,- ասէ,- դստեր Սիովնի»։ Ընդէ՞ր ինքն ոչ ասէ մարգարէն, այլ այլոց հրամայէ. քահանայիցն ասէ, զի նոքա էին մխիթարիչ ժողովրդեանն՝ ըստ Եսայեայ. «Մխիթարեցէք զժողովուրդ Իս,- ասէ Աստուած,- քահանայքդ» (Ես. Խ 1): Նոյնպէս եւ աստ. «Ասացէք դստեր Սիովնի», այսինքն՝ արեւոյս տուրք, թէ ահա եհաս Թագաւորն քո փրկել զքեզ, քանզի «ահա» ճայնդ՝ առ այնոսիկ պատշաճի, որք ակն ունին եւ սպասեն տեսանել զոք, որպէս ի մկրտութեանն Տեառն վասն վկայութեանն Հօր եւ Հոգւոյն ոմանք ցանկային տեսանել զՔրիստոս, որոց երեւեալ արեւտարանէր Յովհաննէս. «Ահա Գառն Աստուծոյ» (Յովհ. Ա 29):

«Ահա,- ասէ,- թագաւոր քո գայ»։ Քանզի այլ մարգարէքն, որք ժամանակաւ ի հեռուստ էին, յարմարապէս Նմին խօսեցան. ոմն «մարգարէ» կոչեաց զՆա¹, այլ ոմն «աստղ»², Դաւիթ՝ «անձրեւ»³, Եսայի՝ «Էմանուէլ»⁴, Միքիա՝ «Իշխան»⁵, Ովսէէ՝ «օծեալ»⁶, Երեմիա՝ «հոգի երեսաց»⁷, Եզեկիէլ՝ «եղջիր տանն Իսրայէլի»⁸, Դանիէլ՝ «վէմ հատեալ»⁹, իսկ Չաքարիա, մերձ գոլով ի լրումն ժամանակին, «թագաւոր» անուանէ¹⁰: Ահա, ասէ, զոր ինչ մարգարէքն ազդեցին, Թագաւորն քո գայ, քանզի ընդ գալստեանն եւ «թագաւոր» զՆա յորջորջեցին, որպէս նահապետն Յակոբ թէ՛ «Մի՛ պակասեցէ իշխան Յուդայ, մինչեւ եկեացէ նա, որ իւրն է» (հմմտ. Ծննդ. ԽԹ 10), եւ այլ ոմն թէ՛ «Յաթոռն Դաւթի նստցի» (Ես. Թ 7), եւ թէ՛ «ՉԴաւիթ արքայ յարուցից նոցա» (հմմտ. Երեմ. Լ 9), եւ թէ՛ «Յարուցէ Աստուած երկնից թագաւորութիւն» (Դան. Բ 44): Չայցանէ ասէ Չաքարիա թէ՛ «Թագաւոր քո գայ»։ Ընդէ՞ր զբողոքից Թագաւորն Իսրայէլի միայն ասէ. կամ թէ՛ յայնժամ նոքա՛ միայն ճանաչէին զՆա, այլեւ գայս ասելով ի սէր Նորին յորդորէ, եւ դարձեալ զի

¹ Բ Օր. ԺԸ 15

² Թիւք ԻԴ 17

³ Սաղմ. ԳԱ 6

⁴ Ես. Է 14

⁵ Միք. Ե 2

⁶ Օվսեեի մարգարեության մեջ այս մասին վկայություն չգտանք։ Օվսեեի փոխարենն պետք է լինեն հավանաբար Ամովսը (Ամովս Դ 13):

⁷ Ողբ Դ 20

⁸ Եզեկ. ԻԹ 21

⁹ Դան. Բ 34-35

¹⁰ Չաք. Թ 9

ըստ մարմնոյ ի նոցանէ յայտնեցաւ յազգէ Յուդայի եւ Դաւթի, որոց թագաւորութիւնն էր խոստացեալ՝ ըստ այնմ թէ՛ «Մարմին իմ ի նոցանէ է» (Ուվաէ Թ 12), եւ սամարացին թէ՛ «Փրկութիւն ի հրէից է» (Յովհ. Դ 22), գրէ եւ Պօղոս. «Յորոց Քրիստոս ըստ մարմնոյ» (Հռմ. Թ 5):

«Թագաւոր քո,- ասէ,- գայ առ¹ քեզ»: Է՞ր վասն առ նոսա նախ գայ. զի ընտրեալք էին ի նախնումն, որք մի՛ պատճառեցեն թէ վասն այնորիկ ոչ հաւատացաք, զի նախ ոչ առ մեզ եկն, նախ առ նոսա եկն, զի նոքօք նախանձ արկցէ բազմաց: Եւ դարձեալ զի բազում պարզեւս քեզ ետ, եւ դու ի հնումն եւ ի նորումս դիմադարձ գտար եւ ոչ կամեցար հնազանդութեամբ Օրինաց կամ հաւատով առ Նա ընթանալ, Նա հարկեալ ի գթութենէ Իւրմէ՛ Ինքնին գայ առ քեզ:

«Հեզ եւ հեծեալ յէշ եւ ի յաւանակ² իշոյ». ո՛չ իբրեւ գայնս, որք ի Դաւթայ եւ այսր թագաւորեցին ի վերայ քո բռնութեամբ եւ գրկանօք, սպանութեամբ եւ հպարտութեամբ, յօրանալով ի ձիս եւ ի ջորիս՝ ի կառս եւ յերիվարս, այլ հեզութեամբ գայ այնքան, մինչ զի յիշոյ վերայ նստեալ մտանէ առ քեզ՝ առ ի լնուլ զկանխասաց մարգարէութիւնն բանիւ եւ արդեամբք. բանիւ՝ զի նստաւ ի վերայ նոցա, իսկ արդեամբք՝ կոչման հրէից եւ հեթանոսաց, որպէս ասացաւ, ըստ նահապետին Յակոբայ թէ՛ «Կապեցէ գորթոյ գլաւանակ իւր եւ զգնդակէ որթոյ՝ գլաւանակ իշոյ» (Ծննդ. ԽԹ 11), քանզի Ինքեամբ զհրէայս կոչեաց, իսկ առաքելովքն զհեթանոսս հրաւիրեաց:

«Ասացէք դստեր Սիոնի. ահա թագաւոր քո գայ քեզ՝ հեզ եւ հեծեալ յէշ եւ ի յաւանակ իշոյ»: Դարձեալ՝ «Սիոն» անուանի վերինն Երուսաղէմ ազատն, որ է մայր մեր ամենեցուն, իսկ «դուստր Սիոնի»՝ նորս Եկեղեցի, քանզի վերնոյն ծնունդ է սա՝ ըստ մարգարէին. «Սիոնի ասի մայր, եւ մարդն» Յիսուս Քրիստոս «ի նմա ծնաւ» (Մատթ. 22 5), կամ թէ ըստ նմանութեան Դաւթի՝ զամբոթիւն հոգւոց մարդկան զԻւր չարչարանս անդ կատարեաց եւ ի Սիոն եղ զօրէնս հոգեկեցոյց, ուր եւ զաշակերտսն հոգիացոյց: Կամ զմեզ ի վերինն Սիոն ծնաւ, զոր մարգարէս «դուստր» ասէ յաղագս աճեցական զօրութեան Եկեղեցոյ ի ձեռն քարոզութեան եւ վերստին ծննդեան աւազանին: Արդ՝ սմա տայ աւետիս հեթանոսաց Եկե-

¹ S > առ

² S յաւանակի

դեցոյ թէ՛ «Ահա թագաւոր քո գայ քեզ»։ զի որ առաջի կողմն ի ճենճերսն դեգերէիր եւ մեղաց ի ծառայութեան կայիր¹, եւ յանգիտութեան խաւար եւ ի ստուերս մահու նստէիր², ահա արդարութեան Արեգակն³ ծագէ քեզ լոյս, զարթիր, նորդ Երուսաղէմ, եւ զգեցիր զգործութիւն քեզի քո⁴, լոյծ զկապ պարանոցի քո ի կուռս կապեալ եւ թօթափեա զփոշի մեղաց ի քէն⁵, եւ տես զեկեալ փրկութիւնն քո, խոնարհեցո զունկն քո պատգամաց Նորա եւ մոռա զժողովորդ եւ զտուն Հօր քո, զի ցանկացաւ Թագաւորն գեղոյ քո⁶, քանզի գայ եւ մտանէ ի քոյդ առագաստ՝ զարդարելով զքեզ ի հանդերձս պայծառս, քանզի քո է ճշմարիտ թագաւոր եւ տէր, որ ստեղծ եւ դատէ իրաւամբք, եւ հատուցանէ ըստ գործոց:

Բայց զի մի՛ կարծեսցեն, թէ ի դատաստան գայ այժմ, ասէ «հեզ եւ հեծեալ յէշ եւ ի յաւանակ իշոյ⁷», զի «ոչ եկի, թէ դատեցայց զաշխարհ, այլ զի փրկեցից զաշխարհ» (Յովհ. ԺԲ 47), զի առաջինն հեզութեամբ է, իսկ երկրորդն՝ սաստկութեամբ: Դարձեալ զի մի՛ հրեայքն ի Չորաբաբել⁸ հանցեն, քանզի նա եկեալ իսկ էր, այլ զսմանէ ասէ թէ՛ գայ, եւ զի մի՛ զերկրորդն կարծիցեն, ասէ թէ՛ հեզ է եւ հեծեալ⁹ յէշ եւ ի¹⁰ յաւանակի իշոյ¹¹: Թէպէտ աւետարանիչս զմարգարէութիւնն համառօտ յիշէ, բայց մեք ի մէջ ածելով քննեցուք, քանզի ասէ թէ՛ «Ահա թագաւոր քո գայ առ քեզ¹², արդար եւ փրկիչ», նոյն «հեզ եւ հեծեալ ի վերայ իշոյ¹³ եւ յաւանակի նորոյ¹⁴»: «Արդար» ասի, զի նախախնամութիւն զոյգ շնորհէ ամենեցուն եւ ի մարդեղութիւնն ըստ հաւատոց հաւասար քաշխեսաց զշնորհսն, միանգամայն եւ արդարացի դատմամբ. զքշնամին մեր ընկէց եւ զմեզ բարձրացոյց յուսով Ինքեան: Այլեւ աղբիւր¹⁵

¹ Զ կէրո

² Սաղմ. 62 10

³ Սաղ. 72

⁴ Ես. ԾԱ 9

⁵ Ես. ԾԲ 2

⁶ Սաղմ. ԽԴ 11-12

⁷ Զ > իշոյ

⁸ ՏԶ Չորաբաբել

⁹ Զ նստեալ

¹⁰ Զ > եւ ի

¹¹ Զ > իշոյ

¹² Զ > առ քեզ

¹³ Զ յէշ] ի վերայ իշոյ

¹⁴ Զ իշոյ

¹⁵ Զ աղբեր

գոյով ամենայն առաքիլութեան «արդար» ասի ըստ Ամբակու-
մայ թէ՛ «Ծածկեցին զերկինս առաքիլութիւնք նորա» (հմմտ. Ամբ. Գ 3),
կամ թէ՛ յԱստուծոյ Հօրէ եղև մեզ արդարութիւն ըստ առաքելոյ՝¹:

«Արդար» յորջորջեմք զՆա, զի որպէս բան տալով Բան կար-
դամք եւ լոյս շնորհելով Լոյս, եւ կեանս ընձեռելով Կեանս կո-
չեմք, նոյնպէս եւ արդարութիւն պարգեւելով «արդար» Նմին ա-
սեմք: Իսկ «փրկիչ»՝ հնոյն Իսրայէլի ի գերողացն եւ ամենայն աշ-
խարհի՝ ի մեղաց եւ ի սատանայէ, զի եղև յԱստուծոյ մեզ փրկու-
թիւն ըստ այնմ թէ՛ «Առաքեսցէ այր մի, որ փրկեսցէ զմեզ» (հմմտ. Ես.
ԺԹ 20), եւ թէ՛ «Եկեսցէ ի Սիոնէ փրկիչ» (Ես. ԾԹ 20): Նոյն՝ «հեզ». նախ՝
զի ոչ անձամբ, այլ ի Հօրէ եւ ի Հոգւոյն եկն յառաջ ի նշանս եւ ի
վարդապետութիւն՝ ըստ Հոգւոյն հեզութեան, որ հանգեաւ ի վերայ
Նորա, եւ երկրորդ՝ զի լռեաց առաջի Պիղատոսի ըստ այնմ. «Ոչ
աղաղակեսցէ եւ ոչ վիճեսցէ, այլ իբրեւ զոչխար ի սպանդ վարի»
(հմմտ. Ես. ԽԲ 2, ԾԳ 7), եւ երրորդ՝ զի օրէնս անտաղտուկ եղ. «Ուսարոյք
յԻնէն, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ» (Մատթ. ԺԱ 29), զի ոչ իբր ի Սի-
ոնա զարհուրմամբ խօսի Թագաւորն², այլ ի Սիոն քաղցր վարդա-
պետութեամբ:

«Հեծեալ,- ասէ,- յէշ եւ ի յաւանակի իշոյ». այս թէպէտ զխո-
նարհութիւնն յայտնէ, սակայն յօրինակ վարդապետութեան մեզ
է, զի որպէս ամենայն ուրեք գործովք զմեզ խրատեաց չափաւորս
լինել, նոյնպէս եւ աստ, որպէս զի կանոնս եւ սահմանս դիցէ՛ կար-
եւորօքն շատանալ, քանզի ի ծնունդն ո՛չ ապարանս զեղեցիկս
խնդրեաց եւ ո՛չ մայր երեւելի, այլ ի դոյզն աղջկանէ ի խղի միոջ
ծնաւ, եւ աշակերտ ո՛չ ճարտարս եւ բանիբունս կամ փարթամս եւ
ազնուականս, այլ տգետս եւ աղքատս ընտրէր, եւ սեղան ո՛չ ճո-
խաբար, այլ ի գարեղէն նկանակաց³ կազմէր, եւ բազմոցս ո՛չ ա-
թոռս եւ բարձս, այլ ի վերայ խոտոյ նստէր կամ ի գետնի, որպէս ի
լերինն եւ առ աղբերն, եւ սգոյ չափ զարտաստուսն կարգէր: Նոյն-
պէս եւ այժմ ո՛չ ի ձիս եւ ի ջորիս, այլ յիշկան եւեթ նստի, որպէս զի
թէ ումեք վասն տկարութեան եւ կամ վասն երկար ճանապարհի
պիտանացու լինիցի, այսո՛ւ լցցուք զկարիս մեր եւ ո՛չ աւելի սի-

¹ Ա Կոր. Ա 30

² Ելք ԺԹ 16-25

³ Զ նկանակից

զանս¹ խնդրեսցուք, որպէս բազումք՝ հեծեալ յէշ եւ ի յաւանակի իշշոյ:

Գնացին աշակերտքն եւ արարին որպէս հրամայեացն նոցա Յիսուս (ԻԱ 6):

Մեծ գովութիւն է աշակերտացն՝ նախ՝ զի գնացին, եւ երկրորդ՝ զի ըստ հրամանաց Նորա զգործն վճարեցին. որպէս զօրինակն այնպէս զճշմարտութիւնն, զի գնացին մկրտեցին² զամենայն հեթանոսս յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, որպէս ասացն³: Եւ դարձեալ՝ զառ ի մարգարէիցն սերմանեալսն ժողովեցին յշտեմարանս արքայութեանն ըստ այնմ. «Այլք վաստակեցին, եւ դուք ի վաստակս նոցա մտէք» (Յովհ. Գ 38):

Եւ ածին զէշն եւ զյաւանակն եւ արկին⁴ զնոքօք ձորձս, եւ նստաւ ի վերայ նոցա (ԻԱ 7):

Պետրոս եւ Յովհաննէս, որ ամենայն ուրեք երթային զկնի, որպէս ի Թաբոր եւ ի պատրաստութիւն Պասեքին եւ ի զիշերին յաղօթսն մերձ կային, նոքա չոզան եւ ածին, եւ վասն դիրութեան արկին ձորձս եւ հեծուցին զՅիսուս: Բայց զիա՞րդ յերկուցն վերայ նստաւ՝ քննելի է. քանզի ոչ եթէ կառք էր կազմեալ կամ լծեալ, զի ոչ չորք էին, այլ երկուք միայն: Արդ՝ զի՞նչ ասեմք առ այս. ոմանք ասեն, թէ ի վերայ իշոյն նստաւ, եւ մտրուկն զկնի ընթանայր եւ շփեր ընդ ոտս Փրկչին, եւ զի այս այսպէս է, յայտ է, զի Մարկոս եւ Ղուկաս մի յաւանակ միայն ասեն կապեալ⁵: Բայց ինձ թոյի, թէ երկուք էին ըստ կորիցն, որպէս ասէ Մատթէոս⁶, եւ զառաջինն նստաւ ի վերայ իշոյն մինչ ի դուռն Երուսաղէմի, եւ ասպա յիշոյ անտի իջեալ՝ նստաւ ի վերայ յաւանակին: Եւ դու մի՛ զարմանար, թէ զիա՞րդ ի նոր յաւանակին, յորոյ վերայ, ասէ, թէ ոչ ոք ի մարդկանէ նստաւ, Նա ելեալ բազմեցաւ: Կամ թէ, ըստ մարգարէին, ամենայն ինչ հնազանդ էր մարդոյն⁷, որքան ինքն Աստուծոյ եղել, իսկ յորժամ ասպատամբեաց, ասպատամբեցին եւ կենդանիքն, ուստի եւ իսայթեն ոմանք եւ զիշատեալ սպանանեն: Այլ զի Տէրն երկ-

¹ ՏՁ աւելիս ի գանս] աւելի սիզանս

² Ձ մկրտել

³ Մատթ. ԻԸ 19

⁴ Ձ ածին

⁵ Մարկ. ԺԱ 2, Ղուկ. ԺԹ 30

⁶ Մատթ. Ի 30

⁷ Սաղմ. Ը 7

րորդ Ադամ եղև եւ զպատուիրանն Հօր պահեաց մարմնովն Ադամայ, վասն այտորիկ եւ ամենայն բնութիւնք կենդանեաց հնազանդեցան՝ Նմա, կամ թէ՛ ամենակարօղ զօրութեամբն Իւրով՝, որ զսիրտս տերանցն կակղացոյց, զգօնացոյց եւ զանասնիկն մեղմաբար սպասատրել Նմա, որպէս եւ զհեթանոսս հնազանդեցոյց, որպէս եւ աղօթէ Յովհաննէս. «Ո՛ր զանմիտ եւ զվայրենի հոգին զգօն եւ հանդարտ արարեր»³ :

Բայց որպէս յառաջագոյն ասացաք, թէ երկու աշակերտքն ապացոյց են առաքելոց եւ մարգարեից, քանզի Պետրոս վասն ծերութեանն զմարգարեիցն բերեր զգումարութիւնս, զի երիցագոյն էին մարգարեքն, ըստ Տեառն թէ՛ «նախ քան զձեզ էին» (Մատթ. Ե 12), իսկ Յովհաննէս վասն երիտասարդութեանն եւ մաքրութեանն եւ սիրելութեանն զառաքելոցն ունէր զնմանութիւն, որք «ածին զէջն եւ զյաւանակն»՝ զիրէայս եւ զհեթանոսս, իբր վարժապետ ի հաւանութիւնն Աստուծոյ: Եւ արկանել ձորձիցն զապաշխարութիւնն գուշակէ, որ մարգարեիւքն քարոզեցաւ ըստ այնմ. «Պատասեցէք զսիրտս ձեր եւ մի՛ զհանդերձս» (Յովէլ Բ 13), եւ առաքելովքն՝ զմկրտութեանն շնորհ, իբր այն թէ՛ «Չձեզ զամենեսեան իբրեւ զհանդերձ զգեցայց» (հմմտ. Ես. ԽԹ 18), եւ Պօղոս թէ՛ «Որք ի Բրիստոս մկրտեցայք՝ զԲրիստոս զգեցայք» (հմմտ. Գաղ. Գ 27), քանզի առանց ապաշխարութեան եւ մկրտութեան ոչ յոք հանգչի Աստուած: Իսկ յորժամ ի ձեռն մկրտութեանն զպատառատուն պատմութեան տերեւոյն մերկացուցին, զմեղացն ասեմ կարկատանս՝ ըստ այնմ. «Մերկացայ զպատմութեանս, զիա՞րդ զգեցայց զնա» (Երգ Ե 3), եւ զանապական զգեստն ի ձեռն արդարութեանն զգեցուցին, այնուհետեւ նստաւ գթութեամբ ի հոգիս նոցա իշխանաբար Արքայն երկնաւոր՝ ըստ այնմ. «Չիոյն իմոյ ի կառսն փարաւոնի նմանեցուցից զքեզ, մերձաւոր իմ» (Երգ Ա 8): Այլ նախ ի յէջն առ ժամանակ մի ի հրէայսն, եւ ապա ի յաւանակն ի հեթանոսս, որպէս զի «անմիտ ազգաւ զկծեցուցանէ զնոսս» (հմմտ. Հռոմ. Ժ 19) եւ նախանձ արկցէ նոցա՝ սոցա լրութեամբն, զի «յորժամ լրումն հեթանոսաց մտցէ, ապա ամենայն Իսրայէլ կեցցէ» (հմմտ. Հռոմ. ԺԱ 25-26):

Իսկ ըստ այլաբանական տեսակի՝ էջ եւ յաւանակ է հոգի եւ մարմին, ոմն կիրթ՝ հոգին՝ վասն բանականութեանն, եւ ոմն

¹ Գ հնազանդեցին

² Տ > իւրով

³ Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ եւ աւետարանչի, Է

*մտրուկ՝ մարմինն՝ վասն անկրթութեանն, յորս նստաւ Բանն՝ միա-
տրելով ի նոսա Իւրով անճնատրութեամբն, եւ ածողք՝ Օրէնքն եւ
մարգարէք, որ նախ գուշակեցին բանիւ եւ իրօք զմարմնանալ
Բանին:*

Եւ բազում ժողովուրդք տարածանէին զհանդերձս իւրեանց (ԻԱ 8):

*Զպատճառս ընդ առաջ ելանելոյ ժողովրդեանն Յովհաննէս
ասէ, թէ զՂազար կոչեաց ի գերեզմանէն եւ յարոյց, վասն այնո-
րիկ ընդ առաջ եղև Նմա ժողովուրդն¹, որք շարժեալք² ի Հոգւոյն
եւ ի նշանացն, որպէս ասացի, ընդ առաջ եղեն ծերքն եւ տղայքն
մեծի Արքային: Ծերքն զհանդերձս տարածանէին ի վերայ ճանա-
պարհին՝ առ ի պատիւ Վարդապետին եւ ի նշանակ յինքեանս
հանգստեան, զի ի վերայ հանդերձից նոցա ընթասցի ոտք յաւա-
նակին եւ մի՛ ընդ յատակս³ երկրին, որպէս սովոր են առնել ի
դրունս քաղաքաց ի մուտս ինքնակալաց՝ ժողովուրդք աշխար-
հաց: Իսկ առ ի միտս՝ բոլոր ծագք տիեզերաց, որք հաւատացին ի
Քրիստոս, հնազանդեցան աւետարանին եւ սփռեցին առաջի Նո-
րա զսիրտս իւրեանց՝ մերկանալով զզգեստ անօրէնութեան ի բո-
վանդակ ճանապարհ կենցաղոյս: Եւ կամ թէ՛ Արկօղն զլոյս իբրեւ
զօթոց⁴ զգեցաւ զհողեղէն բնութիւնս եւ եղև մեռեալ իբրեւ զճորձ, ի
սոյն խորհուրդ տարածեցին զճորձս՝ զտարածումն թաղմանն
Տեառն ի նոր գերեզմանի օրինակելով: Եւ ա՛յլ ազգ. զի վասն սի-
րոյ Նորա բազումք ի սրբոցն զմարմինս իւրեանց, որ ի ձորձն
նշանակեալ է, արեամբ մարտիրոսութեամբ տարեալ ածին առ
Տէր՝ խառնելով ի ճանապարհ մահուն Քրիստոսի զանձինս, որով
ճանապարհ արարին նովալ յերկինս:*

Եւ այլք հատանէին ոսոս ի ծառոց եւ տարածանէին ի ճանապարհին:

*Ըստ բնութեան տիոցն եւ զգործսն հետեւեցուցին, զի ծերքն
զհանդերձս, իսկ մանկունքն ըստ առուզացեալ⁵ հասակին ոս-
տովք⁶ զՆա պանծացուցին, քանզի գարնանային էր յեղանակն՝
նշանակելով զգարունն հոգետր եւ զյաղթութիւն թագաւորին ի վե-*

¹ Յովհ. ԺԲ 17-18

² Զ շարժեալ

³ Տ առակս

⁴ Սաղմ. 69 2

⁵ Տ առուզացեալ

⁶ Զ ոստոք

րայ մահու եւ դժոխաց: Եւ դարձեալ ցուցանէին, թէ Նա է որ ի սկզբանն ասաց. «Բոլիսեսցէ երկիր ծաղիկ եւ ծառ պտղաբեր» (Խմբ. ԾճճԳ. Ա 11), զի որպէս ի ծննդեանն զխորհրդականն բերին ընծայ մոգուց թագաւորք՝ զմեռանիլն¹ զուշակելով, նոյնպէս եւ աստ ուտովքն զարարչութիւնն յայտնելով, զի որ զգեղեցիկ ծաղիկս ծառոց ի փուշ դարձոյց, այժմ դարձեալ յառաջին աստուածատեսակն գեղ տերեւագգեստ ծաղկազարդէ՝ քառնալով զանէ՛ծս երկրի փշաբերութեանն: Եւ դարձեալ յետ մեղացն ի մոռացոնս եկեալ Արարչին զտունկս սաղարթաւորս ի պաշտօն կրոցն դիւաց ձօնէին, իսկ այժմ ծանուցեալ «զեկեալ Թագաւորն»՝ զբարձօղն կռապաշտութեան ըստ տեսեանն Դանիէլի²՝ ճշմարիտ Տեառն ընծայեցին, որպէս զհուրն, յորժամ ընծայեցաւ ի Տաճարին:

Եւ դարձեալ զի ոստքն արմատենի եւ ձիթենի էին, որ են աստուածային եւ թագաւորական սպասաւորութիւնք, զի արմատենին բարձր է հասակաւ եւ քաղցր, բարձրութեամբն՝ զի բարձանց գալուստն Նորա նշանակելով՝ ըստ Յովհաննոս՝ «Որ ի վերոյ գայ ի վերոյ է քան զամենայն» (Յովհ. Գ 31), իսկ քաղցրութեամբն՝ զհամեղ վարդապետութիւն Նորա՝ ըստ այնմ թէ՛ «Քաղցր են ի քիմս իմ բանք Քո» (Սաղմ. ԾԺԸ 103), իսկ ձիթենեան՝ զողորմութեանն իւղ³, այլեւ զօծումն մկրտութեան շնորհին՝ ըստ տերեւոյ ձիթենւոյն, որ յաւուրս Նոյի եբեր աղանիւն⁴, որ պարգեւաց Եկեղեցւոյ նշանակ էին:

Դարձեալ զի ի տունկս դրախտին ընթանալով ընկալաք զպատուիրանագանցութեան պտուղն, որով մերկացաք եւ տերեւոյ ծածկութեան կարօտացաք, վասն այնորիկ նոյն ոստոցն տարածմամբ ի ճանապարհին եւ զնալովն ի վերայ ոստոցն⁵՝ Յիսուսի՝ ընդ ոտիւքն էարկ զհակառակամարտին մերոյ զօրութիւն վերստին զանապական զգեստ զգեցուցանելով զմեզ: Եւ դարձեալ զի Երուսաղէմ աշխարհս է, եւ գալուստս այս՝ երկրորդ զալստեանն ասպացոյց, յորում ժամանակի ընդ առաջ ելեալ ծերքն առաքինութեամբ, եւ մանկունքն արիութեամբ, եւ զգործս իրեանց մատուցանելով Փրկչին՝ «յափշտակեալ ամպօք ընդ ա-

¹ Տ զմեռանիլ

² Դան. է 13-14

³ Զ եղ (այսպէս է և այլուր):

⁴ ԾճճԳ. Ը 11

⁵ Զ ոտիցն

նաջ Տեառն, եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինին» (հմմտ. Ա Թեա. Դ 16), ըստ մարգարտին թէ՛ «Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեացին, եւ որպէս ձիթենի պտղալից ի տան Տեառն տնկեալք եղիցին, եւ ի ծերութիւն պարարտութեան գէրք եւ փափուկք լիցին» (հմմտ. Սաղմ. ԴԱ 13-15):

Իսկ առ ի միտս՝ զառաքելոց քարոզութիւնն ասէ, որով հատան ոստք ի ծառոց, այսինքն՝ որդիք ի հարց՝ ըստ Տեառն թէ՛ «Եկի քակել զորդի ի հօրէ եւ զդուստր ի մօրէ» (հմմտ. Մատթ. Ժ 35), եւ մուծեալ ածաք ի ճանապարհ Փրկչին՝ քրիստոնեայք անուանելով: Այլեւ իւրաքանչիւր որ ի սովորութեանց իրեանց հատան, յորում միացեալ էին իբր անդամ ի մարմնի, կամ ոստ ի ծառի, զի սովորութիւն հնացեալ բնութիւն է ասացեալ, յորմէ հատան եւ նոր կրօնիցս աշակերտեցան:

Եւ ժողովուրդն, որ առաջին եւ զկնի երթային, աղաղակէին եւ ասէին. «Օրհնութիւն Որդոյ Դաւթի, օրհնեալ Որ զայ յանուն Տեառն, օրհնութիւն ի բարձունս» (ԻԱ 9):

Չեկեալն յաւանակաւ յԵրուսաղէմ՝ իբր զճշմարիտ թագաւոր պաշտէին առաջի եւ զկնի ընթանալով, եւ զխորհրդական օրհնութիւնն զոր ծայրք իմանալեացն վերին՝ դասք սերտբէիցն եւ քերտբէիցն երգեն թէ՛ «Օրհնեալ են փառք Տեառն ի տեղուջէ իւրմէ» (Եզեկ. Գ 12), ի ստորինս եւ մանկունքն համաձայնեցին թէ՛ «Օրհնութիւն Որդոյ Դաւթի», վստահ եւ համարձակ ձայնիւ, որ նշանակէ զայս, թէ ի Նմանէ ասացեալն՝ ի պտղոյ որովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա¹, յայտնապէս սա է: Քանզի «օրհնել»-ն յայտնել լսի, որ եղև Որդի Դաւթի ըստ մարմնոյ հարազատ եւ հանգոյն նորա արդար թագաւորութեանն, համայն եւ հեզութեանն մտանէ փառօք: Եւ ոչ յայս եւեթ կացին, այլ եւս բարձրացուցին թէ՛ «Օրհնեալ Որ զայ յանուն Տեառն»: Քանզի ծանեան զՆա Աստուած մշտնջենաւոր ի հրեշտակաց օրհնաբանեալ, խոստովանէին համազոյ Հօր՝ ըստ աստուածութեանն, եւ Որդի Դաւթի անորիչ՝ ըստ մարդկութեանն, վասն զի ի Հոգոյն կարգեցան մանկունքն աստուածաբանք, զոր իբր մատամբ ցուցանէին, թէ դա, որ այժմ զայ անուամբն Հօր՝ յանուն Նորին սքանչելիս առնելով եւ զմարդիկ ազատելով, զայ դարձեալ ի դատաստան ըստ այնմ. «Գայ. եւ զայ

¹ Սաղմ. ԵԼԱ 11

Նա ի դատել գերկիր» (Մաղմ. ԳԵ 13), քանզի գերկու գեկաւորութիւնն բացափայլապէս ցուցին յանուն Տեառն լինել: Եւ այլ ազգ. Մա, ա-սեն, ի վեր յերկինս աստուածութեամբն սերտրէից երեւի իմանալի տեսութեամբ՝ ըստ նոցայն կարողութեան, այժմ գայ մարմնեղէն զգեցեալ բնութիւն՝ ներմիութեամբ Աստուածն Բանի՝ առ ի յօրհնել զմեզ անուամբն Հօր:

«Օրհնութիւն ի բարձունս». նախ ցուցանէ, թէ Հօր կամօք է այս, որ ի փրկել եկն զմեզ եւ յօրհնել, վասն որոյ եւ «Օրհնութիւն առաքողին Հօր ի բարձունս», այսինքն շնորհակալութիւն եւ գո-հութիւն: Այլեւ վայելուչ է ի բարձանց ընդունել Սմա օրհնութիւն, իսկ Մա մարդասիրեալ՝ եւ ի մէնջ ընդունի: Եւ դարձեալ զի ի ծննդեանն հրեշտակք երգեցին թէ՛ «յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն» (Գմկ. Բ 14), քանզի յիջանելն արար խաղաղու-թիւն մարդկան, իսկ այժմ զի մերձ էր վերանալ յերկինս, երկրա-ւորքս փոխադարձեն երկնայնոցն՝ զօրհնութիւն եւ զխաղաղութիւն առաքելով, զի մերով մարմնովս վերացաւ յերկինս՝ մեզ թողեալ զխաղաղութիւնն՝ յասելն. «Ձխաղաղութիւն զԻմ տամ ձեզ» (Յովհ. ԺԴ 27), եւ «երկնայնոցն եւս արար խաղաղութիւն յերկինս եւ յերկ-րի»՝ ըստ առաքելոյ (հմմտ. Կող. Ա 20). քանզի զայս նշանակէ ասելն Մարկոսի թէ՛ «Խաղաղութիւն յերկինս եւ փառք ի բարձունս» (Մարկ. ԺԱ 10): Եւ այսու նշանակէ, թէ Տէրն նոցա եւ մեր գերկոսին ի մի ած թագաւորութիւն եւ հաշտեցոյց զՀայր ընդ արարածս, եւ արար խաղաղութիւն հրեշտակաց եւ մարդկան:

Իսկ նշանակաւ՝ «որ առաջին եւ զկնի երթային», առաջինն Օրէնքն եւ մարգարէքն, քահանայութիւն եւ թագաւորութիւն, եւ գոհք եւ նուէրք, այլեւ որք մահակիցք եւ գերեզմանակիցք եղեն Նորա եւ նախ քան զգալուստ Նորա կան եւ պահին յուսով յարու-թեան Նորա, որպէս նախահարքն առաջինք մինչ ի Յովհաննէս, որ կատարած եղեւ առաջնոցն եւ սկիզբն վերջնոցս, այլեւ քաղցր վարդապետութիւնն Քրիստոսի եւ սքանչելագործութիւնն, եւ որք հաւատացին ի Նա: Իսկ զկնի՝ առաքեալքն եւ վկայքն, սուրբ հայ-րապետք եւ վարդապետք, այլեւ խորհուրդ մարմնոյն Քրիստոսի եւ օծումն Հոգւոյն շնորհի, եւ օծեալ բովանդակ ծնունդք Աւագա-նին՝ գնացին ի մահ եւ ի չարչարանս եւ ի հաւատս եւ յերկինս՝ ըստ Յորայ. «Չհետ նորա ամենայն մարդ գնացէ» (Յոր ԻԱ 33), եւ յառաջ քան զՆա անթիք, որք աղաղակէին ըստ Մարկոսի թէ՛ «Ովսան-նայ Բարձրելոյն» (Մարկ. ԺԱ 9), այսինքն՝ «փրկութիւն ի բարձանց»

կամ «կեցո եւ ապրեցո»: Նորա ձեւացուցանէին զայս վասն Ղազարու յարութեանն փրկիչ եւ ապրեցուցիչ ի բարձանց ասացեալ, իսկ սոքա ըստ խորհրդոյ հետեւեալ՝ ստուգաբանութեամբ բառիցն եղանակեն զայն մինչեւ ցայսօր:

Քանզի «ովսաննայ»-ն ստուգի՝ «Ո՞վ սա» հարցանեն, որոց պատասխանեն հաւատացեալք. «Նա» է սա, որ զերկինս երկնայնովքն¹ կազմեաց եւ զերկիր ի վերայ ոչնչի հաստատեաց, զբոյսս բոյսեցոյց եւ զլուսատրսն կառոյց, զկենդանիս ստեղծ եւ զմարդն ի պատկեր Իւր յօրինեաց: Դարձեալ՝ ասեն. «Ո՞վ սա». «Նա» ասեն, որ ի Քորէբ հրով փայլատակեցաւ եւ զՄոսէս յօրինակ Իւր փրկիչ յԵզրիպտոս առաքեաց² եւ զփարաւոն տանջեաց, եւ զծովն պատառեաց³, եւ զժողովորդն յանապատն մանանայի կերակրեաց⁴, եւ ի վիմէն վտակս բոյսեցոյց ի խորհուրդ կողի վտակիմ⁵, եւ զյորձանսն Յորդանանու սանձեաց⁶, եւ զպարիսպն Երիքովի հալեաց⁷, յորոց լուեալ գոհանան լսողքն, եւ ոչ այլ ինչ ունելով տրիտուր փոխարինի՝ օրհնութիւն ընծայեն: Եւ դարձեալ ի համբառնայն յերկինս ասացին վերինքն⁸. «Ո՞վ է սա մտեալ յերկինս արիւնաներկ պատմութեանս յԵդովմէ» (Եւ. 49 1), իսկ ներքինքն⁹ պատասխանեալ. «Սա¹⁰ է թագաւորն¹¹ փառաց, որ վասն մարդկան փրկութեան խոնարհեցաւ, եւ զանկեալ խորանն Դաւթի կանգնեաց եւ բարձրացոյց զերագոյն քան¹² զմեզ», որք լուեալ առաջակէին թէ՛ «Օրհնեալ եկեալ յանուն Տեառն», այս է ասելն թէ՛ «Օրհնութիւն ի բարձունս», զի եւ նոքա ընդ մեզ օրհնեցին ի լրումն տնօրէնութեան Փրկչին: Չի որպէս ի մուտն Երուսաղէմի մանկունքն օրհնեցին, այսպէս ի մուտս երկնի հրեշտակք յԵկեղեցոյ ուսեալք¹³ զբազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ:

¹ Գ երկնայնօքն

² Ելք 4

³ Ելք ԺԴ 21

⁴ Ելք ԺԶ

⁵ Ելք ԺԷ 6-7, Յովհ. ԺԹ 34

⁶ Յեսու 4

⁷ Յեսու 2

⁸ Գ ներքինքն

⁹ Գ վերինքն

¹⁰ Գ նա

¹¹ Գ թագաւոր

¹² Գ > քան

¹³ Գ ուսեալ

Եւ ի մտանելն Նորա յԵրուսաղէմ՝ դղողեցաւ քաղաքն ամենայն եւ ասէ՝¹.
«Ո՞վ իցէ սա» (ԻԱ 10):

Եւ ժողովուրդքն ասեն. «Մա է մարգարէն Յիսուս, որ ի Նազարեթ գալիլեացոց» (ԻԱ 11):

Տես, թէ որպէս ինքեանք լուծին գովասանայն ի մանկանցն ասացեալ, քանզի ասպերախտքն եւ մոռացողքն նշանաց Նորին հարցին. «Ո՞վ իցէ սա», իսկ պարզամիտ եւ հաւատացեալ ժողովուրդքն, որք ականատեսք եղեն հրաշիցն, պատասխանեցին, թէ Յիսուս է՝ փրկիչն, որ ի Նազարեթ գալիլեացոց: Չայս ասելով գորինակն յուշ ածէին, որ եւ ի նոյն սահմանս Յեսու բնակեաց բազում նշանօք, քանզի ժողովուրդս այս սամարացի թուին գոյ, որք երբեմն ասացին առ կինն. «Գիտենք, թէ դա է ճշմարտի փրկիչ աշխարհաց» (Յովհ. Գ 42): Եւ դարձեալ՝ Նազարեթ «կարդամ գորդի իմ» թարգմանի կամ «մաքուր», իսկ Գալիլեայն «ժողով» կամ «բնակութիւն»: Արդ՝ Յիսուս Որդին Աստուծոյ անդ յայտնեցաւ մաքուր բնութեամբ՝ ժողովեալ յերկուց ի միութիւն իսկութեամբ, յորմէ զարհուրեալ իշխանն աշխարհի՝ ի փորձանս եկն, որք սակաւ ինչ ծանուցեալ ասէին. «Գիտենք գժեզ ով ես, սո՛ւրբդ Աստուծոյ» (Մարկ. Ա 24): Իսկ դրողիլ քաղաքին զամբոխն նոցա ասէ, որպէս երբեմն ի ծննդեանն խռովեցան վասն գալստեան մոզուցն, եւ այժմ ի մտանելն իշով վրդովեցան վասն մանկանցն օրինաբանութեան, որ նշանակէ զշփոթ աղմկի նոցա ի տօնի Պասեքին, այլեւ զաւերիլն քաղաքի նոցա նշանակէ դրողիլն եւ զլինիլն ամենայն հեթանոսաց քաղաք Աստուծոյ: Իսկ օրինակաւ՝ զերկրորդ գալուստն գուշակէ, յորոյ ի մտանելն միսսանգամ յաշխարհ, ըստ առաքելոյ՝ շարժի երկինք եւ երկիր միանգամայն², եւ դրողին կարգք քաղաքաց, եւ լուծանին սահմանք ազգաց, եւ Նմա միայն երկիրպագանեն ամենայն արարածք՝ փառաւորելով զանուն Նորա յաւիտեան:

Եւ եմուտ Յիսուս ի Տաճարն եւ եհան արտաքս զամենեսին, որ վաճառէին³ եւ գնէին ի տաճարի անդ, եւ զսեղանս հատավաճառացն կործանեաց եւ զաթոռս աղանելվաճառացն⁴ (ԻԱ 12):

¹ Զ ասէին

² Եբր. ԺԲ 26

³ Զ վաճառէին

⁴ Զ աղանելվաճառացն

Չայս եւ Յովհաննէս ասէ¹, այլ նա² ի սկզբանն, եւ սա՝ մօտ ի կատարածն: Ուստի իմանամք, թէ այլ է այն, եւ այլ է այս, քանզի միանգամ եւ երկիցս գնոյն արար: Եւ նոքին ի հակառակութեան կային. որոց³ պարտ էր միաբան Հօր կարծել վասն տանն վրէժխնդրութեան եւ զինքեանս՝ օրինազանցս, իսկ նոքա զընդդէմն իմանային: Դարձեալ արար զայս ի խրատ մեզ, զի յորժամ «սամարացի» կոչէին⁴, ո՛չ վասն անձին վրէժխնդիր լինէր, եւ աստ զայրացեալ արտաքս հանէր, զի ուսցուք զանձին նախատինս համբերութեամբ տանել, իսկ վասն տան Աստուծոյ եւ օրինաց Նորա նախանձախնդիր լինել: Բայց ընդէ՞ր զայս առնէին. վասն ազահութեանն եւ վաճառացն՝ շահուց, զի յաճախագոյն լինէր, զի օտարացն եկելոց առ ձեռն գտցի մատուցումն պատարագացն, զոր ժողովէին քահանայքն: Չչորքոտանիս եւ զթռչունս, զորս պարտ էր զոհել եւ զարիւնս նոցա ի սեղանն հանել, նոքա զայն առ ի շահ անձանց կրկին անգամ վաճառէին: Իսկ սեղան հատավաճառացն, կամ որք զունդս վաճառէին վասն պահոցն կամ խարշեալ⁶ կուլիբայս, զոր սովորութիւն է ի քաղաքս առնել պատրաստագոյն կերակուր, այլեւ զլուծափոխսն է իմանալ, որ հատեալ զդահեկան կամ զդրամ յերիս եւ ի չորս մասունս բաժանեն վասն պիտոյից վաճառողաց: Իսկ «աթոռ» կամ զտեղիս աղաւնեացն ասէ, որ կազմեալ էին նման աթոռոյ, յորոց առեալ վաճառէին, կամ զիշխանութիւնն, որով գործէին զիրն:

Դարձեալ հանելն զնոսա արտաքս գուշակէր զխափանումն պատարագաց նոցա եւ զկործանումն ազգին, եւ զդատարկութիւնն տանն, որով յայտնապէս կոչումն հեթանոսաց նշանակի: Դարձեալ յորժամ իջանէ յերկիրն որ Եկեղեցեան, եւ զերկոսեան առնէ մի Եկեղեցի, յայնժամ արտաքս հանէ զայժմու արտաքսեալսն եւ յարքայութենէն, որք են զնօղք եւ վաճառօղք: Եւ ո՞չք են այնոքիկ. որք զհատն երկնային ցորենոյն, որ մեռանելով բազում արդիւնս առնէն⁷, վաճառեն սեղանով, եւ զշնորհս Հոգւոյն, որ է կնիք մկրտութեանն ի ձեռնադրութեանն պարզեւ, զոր աղաւնին նշանա-

¹ Յովհ. Բ 15

² Զ նախ

³ Զ որոյ

⁴ Յովհ. Ը 48

⁵ Զ վաճառոցն

⁶ Զ խաշեալ

⁷ Յովհ. ԺԲ 24

կէ, յանարժանսն ծախեն արծաթով, խոտանք լինիցին յաւորն յայնմիկ տուողքն եւ առնողքն, քանզի այս է վաճառելն ըստ մարգարէին եւ ըստ ոռկանին առակի¹, վասն զի այժմ ոչ ընդունի զայնպիսիսն եւ յայնժամ ի հուրն առաքէ² ի կորուստ, ըստ առաքելոյ թէ՛ «Արծաթ քո ընդ քեզ լիցի ի կորուստ, զի զպարգետսն Աստուծոյ ընչիւք կամեցար ստանալ» (հմմտ. Գործք Ը 20):

Եւ ասէ ցնոսա. «Գրեալ է. «Տուն Իմ տուն աղօթից կոչեսցի», եւ դուք արարեք զդա այրս առազակաց» (ԻԱ 13):

Չի մի՛ կարծեսցեն Իրոպի զայն արարեալ, մարգարէիւն ամբաստանէ³ զանտեղի գործս նոցա, թէ զոր ինչ առազակք եւ զողք ի լերինս առնեն յայրս եւ ի ծերպս երկրի բնակելով, զայն դուք ի Տաճարիս գործէք եւ ոչ ամաչէք, քանզի վաճառոց տեղի ո՛չ ընդհատ է ի զողոց բնակութենէ, զոր օրինակ իմն հնարիւք եւ խաբէութեամբ զընկերացն յինքեանս շուպեն⁴: Այսու ամաչեցուցանէ զայնոսիկ, որ ի մատրունս զայսպիսիսս գործեն, քանզի վասն աղօթից ընթանան եւ յառազակութիւն անկանին, որ աւելի քան զմեղսն լրբութիւնն է աններելի, զի եւ ոչ ի տեղոյն անգամ խորշին: Իսկ զի՞նչ այն թէ՛ «Տուն Իմ՝ տուն աղօթից կոչեսցի» (Ես. ԾՁ 7). այսինքն թէ յարտաքին տեղիս եղեալ անիրատութիւն, աստ զալովն եւ խնդրելովն յԱստուծոյ թողութիւն գտանեն, իսկ ի տեղի աղօթիցս զրկութիւն առնելով՝ զայն յորո՞ւմ տեղոջ մաքրել կարասցեն, որպէս սոքա, զի ի վաճառելն առաւել էին, քան յաղօթելն:

Եւ մատենան առ Նա կոյրք եւ կաղք ի Տաճարին, եւ բժշկեաց ցնոսա (ԻԱ 14):

Առ ի հաւատ մարգարէութեանն լրման եւ տանն վրէժխնդրութեան ի նշանս զայ: Եւ դարձեալ զիշխանութիւնն եւ զգորութիւնն ցուցանէ՛ առ ի մխիթարութիւն աշակերտացն, որք տրտմեալ էին վասն մահու Նորա, որով յայտ առնէ, թէ կամօք կրէ եւ ոչ թէ ի ցոյցս եւ ի մեծարանս անձին Իրոյ գործիցէ զայն, քանզի բանի միայն զբազումս բժշկեաց: Եւ դարձեալ ստուգէ, թէ ճշմարիտ

¹ Մատթ. ԺԳ 47-50

² Տ առաքին

³ Ես. ԾՁ 7, երեսն. է 11

⁴ Զ շուղեն

⁵ Զ > տուն իմ

ըստ մարմնոյ որդի Դաւթի է՝ ըստ օրհնութեան մանկանցն, վասն այսորիկ գթայ ի կաղս եւ ի կոյրս, որպէս եւ նա¹ :

Իբրեւ տեսին քահանայապետքն եւ դպիրք զսքանչելիսն, զոր արար, եւ զմանկտին, որ աղաղակէին ի Տաճարին եւ ասէին. «Օրհնութիւն Որդոյ Դաւթի», բարկացան (ԻԱ 15)

եւ ասեն ցՆա. «Լսե՞ս զինչ ասեն դոքա» (ԻԱ 16):

Քանզի կարի իմն դառն է ախտ նախանձուն, զի ոչ միայն զայլոց օգուտ, այլեւ զանձին սխալանս² ոչ տայ տեսանել, որպէս տքա. զի յորժամ տեսին զմարգարէութիւնսն կատարեալ, զՉաքարիային ասեն եւ զԴաւթայն³, այլեւ զսքանչելիսն, որ առ կոյրս եւ կաղս եղել, ի բարկութիւն շարժեցան եւ հեղձամղձուկ լինէին, որոց պարտ էր զոնեայ յայսմանէ միայն զՆա ճանաչել: Իսկ նոքա ըմբոստանալով ընդ հակառակս ելանէին թէ՛ «Լսե՞ս զինչ ասեն դոքա⁴», կամ թէ՛ ընդէ՞ր ներես զօրհնութիւն, որ Աստուծոյ վայել է, ի Քեզ ձգել, կամ թէ՛ դու զանձնդ Աստուած եւ Որդի Աստուծոյ ասես, իսկ դոքա, որ զօրութեամբն Աստուծոյ խօսեցան, այժմ որդի մարդոյ համբաւեն, վասն զի Դաւթ մարդ էր: Վասն որոյ եւ Տէր իմացեալ զմիտս նոցա, զի չարախօսել զմանկունսն հանդերձեալ էին, ի Դաւթայ մարգարէութեանցն յարգէ զքանս մանկանցն: Բայց մանկտիս, որ աղաղակէին ի Տաճարին, թոյի քառասնօրեայ անդրանիկքն գոլ, որ ըստ Օրհնացն եկեալ էին ի Տաճարն՝ յանդիման լինել Տեառն⁵, որք յորժամ տեսին զՅիսուս մտեալ ի Տաճարն, ծանեան զՆա Տէր Տաճարին եւ սկսան աղաղակել թէ՛ «Օրհնութիւն Որդոյ Դաւթի»: Իսկ Ղուկաս ասէ թէ՛ «Սաստեա աշակերտացն Քոց, զի լռեսցեն», առ որս ասաց. «Թէ՛ դոքա լռեսցեն, քարինքդ աղաղակեսցեն» (Ղուկ. ԺԹ 39, 40), որ եւ եղել իսկ, զի ի լռել աշակերտացն մանկունքն, որք⁶ անբան էին իբրեւ զքար, սկսան երգել ընդ հրեղէն զօրացն օրհնութիւն: Եւ դարձեալ կատարեցաւ ի յարութեան, զի ի փախչել աշակերտացն եւ ի լռել պատառեցան վէմք, եւ շարժեցաւ երկիր, եւ բացաւ ինքնին կնքեալ գերեզմանն, եւ աղաղակեցին մեծաձայն հնչմամբ՝ Աստուած քարոզելով զիս-

¹ Բ. Թագ. Թ և Ե 6-9 (տես Ի 30-ի երկրորդ նախադասութեան (Իբրեւ լուան...) մեկնութեան 5-րդ ծնթ.-ը):

² Գ սղալանս

³ Չաք. Թ 9, Սաղմ. Ը 3, ԾԺ 26

⁴ Գ սոքա

⁵ Ելք ԺԳ 2, 12, 15, Ղևտ. ԺԲ 2-6

⁶ Գ որ

չեալն եւ գյարուցեալն: Նաեւ զհեթանոսս զուշակէր, որպէս ասացաւ թէ՛ «Ի քարանցս յայցանէ կարօղ է Աստուած յարուցանել որդիս Աբրահամու» (Մատթ. 9 9). որք կարկամեալ էին իբրեւ զքար անհաւատութեամբ՝ կակղացան ոռոզմամբ Աւագանին եւ եղեն փառաբանիչք Աստուծոյ:

Ասէ ցնոսա Յիսուս. «Այո՛: Չիցէ՞ ընթերցեալ ձեր եթէ՛, «Ի բերանոյ տղայոց եւ ստնդիեցաց կատարեցեր զօրհնութիւն»:

Յայտնի եւս իրացն հակառակ կային, վասն այսորիկ սաստիկ բարբառի զուղղութիւն՝ զտգիտութիւն նոցա յանդիմանելով թէ՛ «Չիցէ՞ ընթերցեալ ձեր»: Բայց բարոք ասաց թէ՛ «ի բերանոյ». քանզի ոչ թէ՛ ի մտաց նոցա ինչ էին բանքն, այլ Նորա զօրութեանն պարզեւ, որ պարզէր զտհաս՝ եւ զխակ լեզու նոցին յօրհնարանութիւն: Այլեւ ուսուցանէ, թէ բնութեանս Ինքն է արարիչ, որ երաց զբերանս մանկանցն՝ նշանակ առնելով հեթանոսաց, որք երբեմն տգէտք էին եւ տխմարք, եւ յանկարծակի հնչեցին զմեծամեծսն կատարեալ մտօք: Նաեւ առաքելոցն ի մխիթարութիւն տուաւ այս, քանզի կարծէին թէ՛ զհա՞րոյ մեք տգէտքս կարիցեմք պատմել զքարոզութիւնն, կանխէին մանկտին՝ հանէին զամենայն կասկածանս ի մտաց, թէ տալոց է եւ նոցա բան ի բերան, որպէս եւ զնոցայն յօրհնութիւն շարժեաց: Տես դարձեալ եւ զմիւս եւս սքանչելիս, զի առ ծնունդ եւ առ մահ Նորա անմեղ տղայք՝ ընդելուզեալք էին առ միմեանս. զի Յովհաննէս ցնծաց յորովայնի մօրն ընդ առաջ Նորա՞, եւ կոտորեցան մանկտին ի ծննդեան Նորա՞, եւ եղեն ողկոյզք հարսանեաց Նորա, եւ աղաղակեն տղայք ստնդիայք յօրհնութիւնս Նորա ի ժամանակի անդ չարչարանաց Նորա, որք յայտնապէս ցուցանեն, թէ Աստուած է եւ Որդի Աստուծոյ, որ զօրհնութիւնս ընդունի՝ որպէս ի վերնոցն, այսպէս եւ ի ներքնոցս՝ մինչեւ ցրուն վերջինսն, որով կատարի օրհնութիւնն լրմամբ բոլոր եղականացս:

¹ Զ թէ

² Զ եթէ

³ Զ զհաս

⁴ Զ ~ տղայք անմեղ

⁵ Ղուկ. Ա 41

⁶ Մատթ. Բ 16-18

⁷ Զ ներքնոցն

Եւ թողեալ զնոսա՝ ել արտաքոյ քաղաքին¹ ի Բեթանիա եւ անդ ագաւ (ԻԱ 17):

Յորժամ ետես, թէ տխեղծ մանկունքն օրհնեն, եւ կատարեալքն հասակաւ ցասնուն եւ զայրանան, խոյս տայ առ սակաւ մի, զի ոգի առնուցուն յախտէն, եւ ոչ առնէ սկիզբն վարդապետութեան, զի մի՛ բորբոքեալ նախանձուն՝ եւս առաւել ընդ բանսն զայրանայցեն: Եւ կամ թէ՛ ընդ երեկս էր, դառնայ ի Բեթանիա ի տուն հանգստեան Իրոյ, յորում ելոյժ զմահ եւ թագաւորեցոյց զկեանս աստուածաբար, եւ անդ ազանի երկոտասանիւքն հանդերձ՝ անարժանս զնոսա վարկանելով Իրոյ ասպնջականութեանն: Իսկ նշանակաւ՝ թողուլն ի խնամոց Իրոց արտաքսել զնոսա ցուցանէ՛ ըստ այնմ. «Բարձի թողի զնոսա» (Մաղմ. 2 13), եւ թէ՛ «Թողեալ լիցիև ձեզ տունդ ձեր աւերակ» (Մատթ. ԻԳ 38), եւ Ինքն ազանի ի տուն սգոյ, որք են հեթանոսք՝ հանգչելով ի նոսա: Այլեւ թողեալ զնոսա յանհաւատութիւն՝ ելանէ ի խաչ արտաքոյ քաղաքի՛, եւ զմահն հանգիստ Իւր վարկանի, թեպէտ սգային աշակերտքն զերիս արուրս, ուստի յարուցեալ ել յերկինս, նստաւ ընդ աջմէ՛ Հօր՝ արտաքսելով զաշակերտսն ի սգոյն եւ ի տրտմութենէն, զոր «Բեթանիա»-յն նշանակէ:

Եւ այգուցն իբրեւ դարձաւ անդրէն ի քաղաքն, քաղցեալ (ԻԱ 18):

Ոչ է կատարեալ արանց կամ վարդապետաց, այլ տղայոց եւ կամ անարգ անդէորդաց՝ տարաժամ ճաշակել, այլ աստ կոչեաց յանստվոր ժամանակի, զի պատճառս տացէ աստուածագործ նշանացն կատարել: Եւ այլ ազգ. զի յորժամ կամէր, թոյլ տայր մարմնոյն զգալ իւրում կարեացն, որպէս առ փորձութեանն, զի մի՛ առաջօք, այլ ստուգապէս մարդ լեալ ծանիցի. կամ թէ՛ ոչ կերակրոյ պէտք էին, այլ հաւատոց եւ գործոց բարեաց միշտ քաղցնոյր: Եւ դարձեալ՝ «այգ» կամ զյարութիւնն ասէ, յորում քաղցեալ եւ եկեր ընդ աշակերտսն, որպէս զի զյարութիւնն ճշգրտեսցէ, եւ կամ զմիսանգամ գալուստն, յորժամ դառնայ միսանգամ յաշխարհ, յորում կարօտ լինի փրկութեանն հրէից:

Եւ տեսեալ թզենի մի ի վերայ ճանապարհին՝ եւ եկն ի նա եւ ոչինչ եզիտ ի նմա, բայց միայն տերեւ (ԻԱ 19):

¹ Զ արտաքս] արտաքոյ քաղաքին

² Զ քաղաքոյ

Մարկոս ասէ, թէ չէր ժամանակ պտղոյ¹, քանզի ի մարտի ամսեան ծառոյ պտուղ ոչ գտանի, մանաւանդ թզենոյ, այլ ի հոկտեմբերի: Ապա ընդէ՞ր եկն: Ոչ անգիտութեամբ Ամենատեսն չոգաւ առ ծառն, այլ որպէս Ադամայ ասացաւ. «Ո՞ր ես» (Ծննդ. Գ 9), եւ Կայենի թէ «Ո՞ր է եղբայր քո» (հմմտ. Ծննդ. Դ 9), եւ քերցն Ղազարոս թէ «Ո՞ր եղիք զնա» (Յովհ. ԺԱ 34), նոյնպէս եւ աստ՝ զի ցուցցէ ճշմարիտ զԱդամայն առեալ անգիտութիւն, միանգամայն եւ ճանապարհ նշանացն արասցէ: Այլ օրինակաւ ոմանք զթզենին նշանակ հրէիցն ասեն, որ ի վերայ ճանապարհի Օրինացն տնկեալք էին, յորս եկն Քրիստոս խնդրելով պտուղ՝ ըստ Օրինացն գործս, եւ ոչ եգիտ, «բայց միայն տերեւ», այսինքն կեղծաւորութիւն համայն եւ բարեճեւ աւանդութիւն զժերոցն, խտրութիւն կերակրոց եւ լուսցումն մարմնոց, եւ պահեստ շաքաթուց, այլեւ զԱրքահամու որդիութիւնն եւ զԻսրայէլ անունն, յորմէ ոչինչ օգտեցան, քանզի երբար ի նոցանէ եւ տարագիր արար զնոսա:

Եւ դարձեալ է թզենի մարդ տնկեալ ի ճանապարհի կենցաղոյս, որպէս զի տացէ Աստուծոյ հաւատս ուղիղս եւ գործս մաքուրս: Իսկ եթէ ոք ոչ տացէ պտուղս գործոց Տնկողին իւրոյ, յորժամ զայցէ յերկնից եւ ոչինչ յասացելոցս գտանէ ի նմա, միայն տերեւ սնոտի յուսոյ, զի կարծէ, թէ Աստուած ողորմած է եւ ոչ տանջէ, եւ զի ժամանակն չէ պտղոյ, որպէս ասաց Մարկոս², զի բանք եւ գործք լռեն յայնժամ ըստ Գրոց, եւ փակի դուռն ողորմութեան որպէս յիմար կուսիցն³, եւ տերեւ յուսոյն ոչ զերծուցանէ զնոսա ի պատժոց, այլ լսեն զահագին անէծս թէ՛ «Երթայք յԻնէն, անիծեալք, ոչ զհտեն զձեզ» (հմմտ. Մատթ. ԻԵ 41), որպէս ասէ յաջորդս:

Եւ ասէ ցնա. «Մի՛ այտուեալս ի քէն պտուղ եղիցի յախտեան», եւ առ ժամայն չորացաւ թզենին:

Է՞ր վասն անէծ զթզենին՝ քննելի է: Թուի թէ վասն աշակերտացն, զի քաջալերեցին եւ հաստատեցին ի բան Նորա, եւ օտարքն զարմասցին ընդ զօրութիւն Նորա: Քանզի զամենայն ինչ բարութք գործեաց եւ ոչ զոք պատժեաց, պարտ էր եւ զպատժական զօրութեանն Իւրոյ ցուցանել զհանդէս, մանաւանդ մերձ առ խաչին, զի մի՛ ասիցեն, որպէս եւ կարծեցան իսկ, թէ ոչ գոյր ի Նմա

¹ Մարկ. ԺԱ 13

² Մարկ. ԺԱ 13

³ Մատթ. ԻԵ 1-13

զօրութիւն, վասն այնորիկ ըմբռնեցաւ: Կանխաւ ծանոյց զզօրութիւնն ո՛չ յայլ ինչ տունկ, այլ ի թզենին, որ առաւել ունէր զկանաչութիւնն, որպէս զի ցուցցէ, թէ կարօղ է եւ զխաչահանունսն սատակել քանի, եթէ կամեսցի, վասն որոյ եւ ասէ թէ՝ «Իբրեւ տեսին աշակերտքն զարմացան»: Եւ երկրորդ՝ եկն նա առնուլ զտոյժս ծածուկս ի մարդկութենէ անտի. յերիս տեղիս յայտնիս արկ ի վերայ նորա՝ զզերեզմանս քակեաց եւ փշրեաց¹, եւ զխոզսն ի ծովու անդ հեղձոյց², եւ զթզենին յարմատոյ ցամաքեցոյց, զի ի քակել զերեզմանացն պատառեսցին սիրտք անհաւատիցն, եւ ի հեղձնուլ երանակացն հեղձցի մոլորութիւն ապստամբողացն, եւ ի ցամաքել թզենոյն առանց յանցանաց՝ աւերեսցի Երուսաղէմ վասն յանցանաց իւրոց, որպէս եղեն ի Տիտոսէ եւ ի Վեսպիանոսէ³ բնաջինջ աւերակ ամայի ի շինուածոց իւրոց:

Եւ երրորդ՝ վասն այնորիկ անէծ, զի գրեալ էր յՕրէնսն թէ՝ «Յորժամ հնձեսցես զհունձս, թող զափնիս աղքատաց, եւ յորժամ կթեսցես զայգիս քո եւ զթզենիս քո, նո՛յնպէս արասցես» (հմմտ. Ղեւտ. ԺԹ 9-10), իսկ տէր թզենոյն ոչ եղեւ ունկնդիր Օրինացն, այլ արհամարհեաց, եկն Տէր Օրինացն եւ անէծ զնա, զի մի՛ կերիցէ ի նմանէ տէր նորա, զի եւ նա ոչ եթող որբոց եւ այրեաց: Եւ չորրորդ՝ զոր օրինակ զերզեսացիքն եղին ի մտի, զի մի՛ էլցեն առ Նա, հեղձոյց զխոզս նոցա, զի զուարթացուցէ զմիտս նոցա ելանել առ Նա յակամայ կամս, այնպէս եւ տէր թզենոյն եղ ի մտի, զի մի՛ էլցէ առ Նա, ցամաքեցոյց զթզենին Նորա, զի էլցէ առ Նա ակամայ, վասն զի պատճառ կենաց մարդկութեանս ամենայն ուրեք կամէր Նա: Հինգերորդ՝ քանզի ի ժամուն յորժամ մեղաւ Ադամ՝ մերկացաւ ի փառացն զոր ունէր եւ ի տերեւոյ թգոյ արար իւր սփածանելիս, եկն մարմնով Տէր մեր յերկիր, անէծ զթզենին յօրինակ մեղացն Ադամայ եւ բուեռմամբն ի խաչին, որպէս զի յայտ արասցէ, թէ ոչ այնուիեստեւ պիտոյ է տերեւ թզենոյ ի հանդերձս Ադամայ, քանզի զզեցաւ նա դարձեալ զփառս իւր առաջինս:

Վեցերորդ⁴՝ եկն յերկնից Փրկիչն զկեանս մարդկան գտանել, զոր քաղցն յայտնէ, եւ եզիտ զլայն եւ զընդարձակ ճանապարհն յայտնեալ, եւ չոգաւ առ նա եւ ետես զնա սաղարթօք վարսաւո-

¹ Մատթ. ԻԷ 51-52

² Մատթ. Ը 30-32

³ Չ Վիսպիանոսէ

⁴ Տ > առաջինս: Վեցերորդ

րեալ, այսինքն աղանդօք մեղաց ծաղկեալ, եւ ոչ ունէր պտուղ, զի ոչ էր ժամանակ: Քանզի զիա՞րդ կարէր մահն պտղաբերել ի գալն Քրիստոսի, զի թագաւորեաց յԱդամայ մինչ ի Մոսէս, այս է՝ յՕրէնսն, որոյ ասաց թէ՝ «Մի՛ եւս եղիցի ի քէն պտուղ յափտեան», այսինքն նախ քան զԻմ գալուստն պտղաբերեցեր զմահն, ահա Ես եկի՝ Յարութիւնս, արդ ի գալս Իմում մի՛ եւս եղիցի ի քէն պտուղ յափտեան. եւ վաղվաղակի զօսացաւ թզենին, եւ լցաւ զիրն թէ՝ «Ընկլաւ, մահ, յաղթութիւն քո» (հմմտ. Ա Կոր. ԺԵ 54, Ես. ԻԵ 8):

Իբրեւ տեսին աշակերտքն, զարմացան եւ ասեն թէ՝ «Ձիա՞րդ վաղվաղակի ցամաքեցաւ թզենին» (ԻԱ 20):

Որպէս ասացաք, թէ վասն սոցա արար, զի թէպէտ բազում նշանք տեսեալ էին, սակայն այս նոր իմն էր, վասն այտորիկ սքանչացան ոչ միայն ի չորանալն, այլեւ յարագ զօսանալն, եւ այն բանի: Այսպէս եւ յետ սակաւ ժամանակի, մինչ զի աշակերտքն տակաւին կենդանի էին, տեսին աւերեալ զԵրուսաղէմ, եւ բարձեալ զքահանայութիւնն, եւ խափանեալ զգոհն եւ զմարգարէութիւնն, եւ ցամաք յաստուածխօսութեանն օրինաց մնացին վտարեալք ի ծառայութիւն, զոր տեսեալ աշակերտացն¹ զբանն Տեառն համայն եւ զառակն, զբանն թէ՝ «Ոչ մնացէ այդր քար ի քարի վերայ, որ ոչ քակտեսցի» (Մատթ. ԻԳ 2), իսկ զառակն՝ զթզենւոյն իրաց, եւ ծանեան, թէ ի գլուխ ել ասացեալ եւ զործեալ ի Տեառնէ աւերման նոցա հանգամանքն, ընդ որս եւ զարմացան իսկ: Եւ դարձեալ յորժամ տեսին զՅիսուս յարուցեալ ի մեռելոց, զարմացան եւ ասեն, թէ զիա՞րդ վաղվաղակի բարձաւ զօրութիւն մահու ի մարմնոյ Նորա՝ ըստ այնմ թէ՝ «Գնաց ընդ միտս զարմացեալ, թէ զինչ եղել» (Դով. ԻԳ 12), առ ի լրումն մարգարէութեանն Յորայ թէ՝ «Չարմանք կալան զճշմարիտս ի վերայ այսոցիկ» (Յոր ԺԵ 8):

Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնոսա. «Ամէ՛ն ասեմ ձեզ. եթէ ունիցիք հաւատս եւ ո՛չ երկմտիցէք, ոչ միայն զթզենւոյ առնիցէք, այլ թէպէտեւ լերինդ ասիցէք՝ բարձիր եւ անկիր ի ծով, եղիցի (ԻԱ 21):

Եւ զամենայն ինչ, զոր եւ՝² խնդրիցէք յաղօթս հաւատովք¹, առնուցուք» (ԻԱ 22):

¹ Զ տեսին աշակերտքն] տեսեալ աշակերտացն

² Զ զոր ինչ] ինչ զոր եւ

Տեսանե՞ս՝ զհա՛րդ վասն նոցա եղև այն, զի մի՛ զանգիտիցեն² եւ երկնչիցին ի նենգութեանց, եւ ոչ միայն այս, այլ թէւ կատարեալ հաւատով յաղօթս խիզախեսցին, հանգոյն նմին եւ այլ եւս մեծամեծս գործեսցեն, այսինքն ոչ միայն զմեղս թողցեն մարդկան, զոր թզենին առակէ, այլեւ զառաջնորդ մեղացն զլեառն հպարտ եւ զմեծ՝ յանդունդ ընկղմեսցեն, որպէս Տէրն: Եւ զի կրկնէ թէ՛ «Զոր ինչ եւ խնդրէք՝ առնուցուք», առ ի հաստատել զասացեալն միանգամայն եւ յաղօթս յորդորէ հաւատով, որք նպաստ լինին գործելեացն: Բայց հաւատս աներկմիտս յո՞ւսասց ունել՝ հայցելի³ է: Կամ թէ ի խնդրելն ոչ տարաբերել մտօք, թէ կատարե՞ս Աստուած զխնդրելին, թէ ոչ, կամ եթէ յԻնքն իբր յԱստուած եւ յՈրդի Աստուծոյ, թէպէտ ի չարչարանս խաչի եւ մահու տեսանիցէք զԻս եկեալ, մի՛ երկմտիցիք, ասէ, ի հաւատալն: Եւ զի հաւատն միայն չէ⁴ բաւական ի ներգործութիւն հրաշիցն, յարէ եւ զաղօթսն, որ կատարումն է ամենայն գործոց բարեաց, զի հաւատք ուղիղ եւ գործք մաքուր՝ ամենայն ուրեք եւ յամենայն իրս կատարեն զխնդրելին:

Եւ իբրեւ եկն ի Տաճարն, մատեան առ Նա, մինչդեռ ուսուցանէր, քահանայապետքն եւ ծերք ժողովրդեանն եւ ասեն. «Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ, եւ ո՞վ ետ Քեզ զիշխանութիւնդ զայդ» (ԻՍ 23):

Յիրաւի ասացաւ յառաջագոյն, թէ կարի ժանդագործ իմն է նախանձ, զի որքան սակաւ է՝ իբր հուր ի ներքոյ յարդի ծխի, եւ յորժամ բազմանայ եւ սակաւ ինչ սիք⁵ հողմոյ առնու՝ այնուիւտեւ բոց բորբոքի եւ յերեսս զայ, ըստ Տեառն թէ՛ «Յաւելուածոյ սրտի խօսի բերանն» (Մատթ. ԺԲ 34), որպէս սոցա պատահեսց, զի զյաշաղանսն ունէին ի մտի, եւ ոչ կարացեալ ժուժալ՝ արտաքս ժայթքեցին, եւ զի զնշանսն ոչ կարէին պախարակել զվաճառականացն մերժելն ի Տաճարէն ի մէջ ածելն: Եւ զայս ոչ յայնժամ, յորժամ բազմութիւն ժողովրդեանն զկնի էր, քանզի երկնչէին ի նոցանէ, այլ այժմ⁶, յորժամ յապահովս ի Տաճարն եմուտ ուսուցանել, մա-

¹ Զ հաւատով

² ՏԶ զանգիտիցին

³ Զ այցելի

⁴ Զ ~ չէ միայն

⁵ Տ սիգ

⁶ Զ > յորժամ բազմութիւն ժողովրդեանն.... այլ այժմ

տեան եւ ասեն. «Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ¹, եւ ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ³»: Այսինքն միթէ զվարդապետութեան աթո՞ռն առեր կամ զքահանայութեան ինչ պատի՞ն ունիցիս, զի այդչափ իշխանութիւն ցուցեր, կամ թէ Աստուա՞ծ կոչեաց յառաջ հանգոյն Ահարոնի⁴, զի զպատարագս Տաճարին խափանեցեր եւ զգնօղսն արտաքս հաներ, եւ նոր վարդապետութիւն ուսուցանես: Որպէս զի թէ ասիցէ յանձնէ լինել զվարդապետութիւնն եւ զխափանումն պատարագացն, ասիցեն՞ ցժողովորդն. «Տեսանէ՞ք՝ ո՞րպէս հակառակ է Օրինացն, զոր ի ձեռն Մոսիսի ետ մեզ Աստուած»: Եւ թէ ասիցէ. «Աստուած ետ զիշխանութիւնս զայս», ասիցեն թէ՛ «Ընդէ՞ր զոր Աստուած հրամայեաց մատուցանել զպատարագն՝ ոչ ի ձեռն քահանայի գործէ զխափանումն, այլ ի ձեռն Քո, որ նազորացիդ⁶ ես եւ ոչ ունիս զքահանայական համենատուրութիւն»: Եւ այսպէս երկակի դիմօք կամեցան ըմբռնել զՆա. իսկ առ այս զի՞նչ Իմաստութիւնն վերին:

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. «Հարցից եւ Ե՛ս զձեզ բան մի, զոր թէ ասիցէք Ինձ, եւ Ե՛ս ձեզ ասեմ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս (ԻԱ 24):

Սկրտութիւնն Յովհաննու ուստի՞ էր՝ յերկնի՞ց, թէ ի մարդկանէ» (ԻԱ 25):

Ոմանք ըստ իմաստասիրացն սովորութեան վարեալ ասեն անյարմար գոյ զհարցուածս Տեառն, քանզի տրամաբանական սահման է նախ զայլոյ հարցուածս լուծանել եւ ապա յանձնէ հարցուածս յառաջ բերել, իսկ սա ընդդէմ հարցմանն հարցումն եղ, որ է անպատկան: Բայց ես ասեմ, թէպէտ առաջիկայս զձեւ հարցման⁷ ունի, այլ պատասխանի է հարցուածոյ նոցա: Քանզի նոքա հարցին թէ՛ «Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ», ոչ ասէ թէ՛ Հօր, զի մի՛ ասիցեն, թէ վասն անձին Իւրոյ⁸ վկայութիւն տայ, այլ՞ զՅովհաննու վկայութիւնն ի մէջ բերէ, զոր նոքա քաջ գիտէին, թէպէտ ոչ հաւատացին վասն Յովհաննու ասիցն. զի թէ կամէին հաւատալ, կարօղ էին գիտել զիշխանութիւն Նորա: Եւ զի ոչ կա-

¹ Գ իշխան՝] որո՞վ իշխանութեամբ առնես զայդ

² Գ ո՞

³ Գ > զայդ

⁴ ՏԳ Ահարոնի

⁵ Տ ասեն

⁶ ՏԳ նազորացիդ

⁷ Տ հարցմանն

⁸ Գ > իւրոյ

⁹ Գ տալ,] տայ, այլ

մէին, զայս ընդդէմ եղ եւ ասէ. «Սկրտութիւնն Յովհաննու ուստի՞ էր՝ յերկնի՞ց, թէ ի մարդկանէ», այսինքն քանզի յորժամ մկրտէր, ասաց վասն Իմ թէ՛ «Չեմ բաւական լուծանել զկօշիկս Նորա» (հմմտ. Մարկ. Ա 7), եւ «Ահա Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի» (Յովհ. Ա 29), եւ թէ՛ «Որ ի վերուստ¹ գայ, ի վերոյ է քան զամենայն» (Յովհ. Գ 31), արդ՝ նա յԱստուծո՞յ խօսեցաւ, թէ զմարդկան բարբառեցաւ:

Եւ նոքա խորհէին ընդ միմեանս² եւ ասէին. «Եթէ ասեմք՝ յերկնից, աստ ցնեզ. «Իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք մմա». եւ եթէ ասեմք՝ ի մարդկանէ, երկնչիմք ի ժողովրդեանէն». զի ամենեքին³ զՅովհաննէս իբրեւ զմարգարէ ունէին (ԻԱ 26):

Պատասխանի ետուն Յիսուսի եւ ասեն. «Ո՛չ զիտեմք» (ԻԱ 27):

Տես՝ զխորամանկութիւն խորհրդոց նոցա, միանգամայն եւ զանհաւատութիւն, քանզի զիտէին, թէ ի վերուստ ունի զիշխանութիւնն ըստ Յովհաննու վկայութեանն, սակայն կամէին եւ զայն եւս ուրանալ, որ վկայեաց ի վերայ նորա թէ՛ «Որոյ հեծանոցն ի ձեռին Իւրում է՝ սրբել զկալ Իւր եւ ժողովել զցորեանն յըշտեմարանս արքայութեանն եւ զյարդն այրել անշէջ հրով» (հմմտ. Մատթ. Գ 12), որ յատուկ Աստուծոյ էր, վասն այնորիկ ասացին. «Թէ ասեմք, թէ յերկնից է, ասիցէ, թէ ընդէ՞ր ոչ հաւատացէք⁴, իսկ թէ ասեմք թէ ի մարդկանէ, երկնչիմք ի ժողովրդեանէն»: Տեսե՞ր զկամակոր չարութիւնն, հայեաց եւ ընդ անհաւատութիւնն. զի ամենայն ուրեք առ աչս մարդկան գործէին զինչ եւ գործէին, եւ զԱստուծոյսն առ ոտն հարկանէին, որպէս եւ աստ ի մարդկանէ դողային եւ ոչ յԱստուծոյ երկնչէին, որ եւ զվկայութիւն նորա ծածկել փութային, վասն որոյ մեղմեխանօք ասացին՝ չզիտեմք:

Ասէ ցնոսա եւ Նա. «Եւ ոչ Ես ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս:

Վասն զի նոքա սուտ խօսեցան չզիտել, զի յայտնապէս զիտէին, ոչ հանգոյն նոցա եւ Տէրն զանգիտութիւն պատճառէ, որ ճշմարտութիւնն է, այլ թէ՛ «Ո՛չ ասեմ ձեզ», զի թէ չզիտէին, պարտ էր ուսանել ի Նմանէ, իսկ որովհետեւ կամաւ ուրացան չզիտել, ոչ յայտնեաց եւ Տէրն զիշխանութիւն Իւր՝ անարժանս վարկանելով

¹ Զ վերոյ

² Զ միտս

³ Զ ամենեքեան

⁴ Զ հաւատայք

զնոսա պատասխանող, որք ոչ զուսանելն ախորժէին: Թէպէտեւ քաջ գիտէր զմկրտութիւնն Յովհաննու համայն եւ զիշխանութիւնն Իւր, այլ առակ իմն ի մէջ ածէ եւ կսկծեցուցանէ զնոսա յոյժ:

Բայց զիս²րդ թուի ձեզ. առն միոջ էին երկու որդիք, եւ մատուցեալ առ առաջինն՝ ասէ. «Որդեակ, երբ այսօր գործեա՛ յայգւոջ» (ԻԱ 28):

Նա պատասխանի ետ եւ ասէ. «Երթա՛մ, տէր», եւ ոչ չոգաւ (ԻԱ 29):

Մատեալ եւ առ միսն եւ ասէ նոյնպէս: Նա պատասխանի ետ եւ ասէ. «Ոչ կամիմ», բայց յետոյ զղջացաւ եւ չոգաւ յայգին (ԻԱ 30):

Արդ՝ ո՞ յերկոցունց արար զկամս հօրն»: Ասեն՝ յետինն (ԻԱ 31):

Երկու որդի՝ զիրէայս եւ զհեթանոսս առակէ, որով զուռուցեալ միտս նոցա զնստուցանէ, որք յՕրէնսն յեցեալ էին եւ յԱրրահամ պանծային. ցուցանէ, թէ եւ հեթանոսք ստեղծուածք են Աստուծոյ եւ ծնունդք բանի Նորա: Իսկ «այր»՝ զԱստուած վասն ներգործական եւ կատարուն զօրութեանն, կամ վասն մարմնագրեցութեանն, որ եղև մարդ ի զանգուածէն Ադամայ: Իսկ «մատչել»-ն զմարդասիրութիւնն Աստուծոյ քարոզէ, որ խոնարհեցաւ առ Արրահամ եւ էջ ի Քորէր եւ ի Սինա, եւ ետ զՕրէնսն եւ ասաց զգուանօր. «Որդեակ, երբ այսօր գործեա՛ յայգւոջ»: «Այգի» զՕրէնսն ասէ, զի ցուցէ, թէ քաղցր է պտուղ Օրինացն եւ կցորդի գործոցն, այլեւ կատարելագործ է եւ իմաստնագործ եւ լուսատրիչ, զոր «օր»-ն նշանակէ՝ ըստ Դաւթի. «Յայտնութիւն բանից Քոց լուսատրէ եւ իմաստուն առնէ զտղայս» (Սաղմ. ԾԺԸ 130): Կամ թէ «օր» զբովանդակ կենցաղս ասէ՝ կալ յՕրէնսն որչափ կենդանի է, զի կեանք մարդկան իբր զմի օր է: Իսկ նա վասն սաստիկ տեսլեան ծնողին պատասխանի ետ թէ՛ «Երթամ, տէր», այս է՝ զի ասացին. «Չամենայն զոր ինչ ասացէ Տէր Աստուած մեր՝ լուիցուք եւ արասցուք» (Խմմտ. Ելք ԺԹ 8), եւ յետոյ արդեամբք իսկ յետս կացին ըստ այնմ. «Գիրացաւ եւ կիցս ընկէց, եւ յետս եկաց յԱստուծոյ Փրկչէն իւրմէ:» (Խմմտ. ԲՕր. ԼԲ 15):

Դարձեալ՝ եւ յերկրորդ տնտեսութիւնս զնոյն արար, զի նախ առ նոսա մատեալ վասն սիրոյ հարց, եւ մարմին ի նոցանէ էառ ըստ այնմ. «Ոչ ուրեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի» (Մատթ. ԺԵ 24), եւ կոչեաց զնոսա ի հնազանդութիւն Եկեղեցոյ այգւոյ եւ Ինքեան, որ որք եղև ճշմարիտ¹, վարդապետութեամբ աւետարանին գործել մի՛ զկորստական կերակուրն,

¹ Յովհ. ԺԵ 1

այլ զայն, որ տանի ի կեանսն¹, եւ նոքա վասն սքանչելեացն, զոր զկոյրս լուսաւորէր եւ զանդամալոյծս առողջացուցանէր, զդիւահարս բժշկէր, զմեռեալս յարուցանէր եւ սակաւ հացի զբազումս յազեցուցանէր, յանձն առին հաւատալ ի Նա, բայց ոչ չոգան գործով, քանզի ոչ ի սրտէ, այլ վասն հրաշիցն յայն զային՝ ըստ այնմ թէ՛ «Բազումք հաւատացին ի Նա, բայց Ինքն Յիսուս ոչ հաւատայր զանձն նոցա, զի գիտէր զինչ կրէր ի մարդն» (հմմտ. Յովհ. Բ 23-25), եւ թէ՛ «Խնդրէք՝ զԻս, իբր ոչ եթէ նշանս ինչ տեսէք, այլ զի կերայք ի հացէ անտի եւ յազեցարուք» (Յովհ. 2 26): Այս է ասելն «Երթա՛մ, տէր», եւ ոչ չոգաւ: Եւ զի նախ նոցա ասաց, յայտ առնէ եւ զԻնքեանն մարդասիրութիւնն, միանգամայն եւ զպատճառն հատանէ, զի ճշմարիտ լիցի եւ յաղթող ի դատելն², եւ զայս ոչ միայն անձամբ, այլեւ առաքելովքն³, որպէս ասէր Պօղոս. «Ձեզ բանս այս փրկութիւն առաքեցաւ... որովհետեւ ոչ ընդունիք, դառնամք ի հեթանոսս» (հմմտ. Գործք ԺԳ 26, 46). վասն այսորիկ ասէ թէ՛ «Մատեաւ եւ առ միսն», իբր ի հարկէ:

Բայց ե՞րբ մատեաւ՝ քննելի է: Կամ բնականն օրինօք, որ է մտացն խիղճ, զոր եղ Աստուած ի նոսա, կամ այն, զի գրեաց ի վերայ բռեայ սեղանոյն զՕրէնսն յանցսն Յորդանանու, կամ մարգարէիքն, եւ նոքա հրաւիրեցան. յայտ ի բանից նոցա է, որպէս Յոնան անձամբ իսկ չոգաւ ի Նինուէ՛: Բայց ճշմարտապէս այսպիսի է. զի առաքելովքն⁴ կոչեաց ըստ այնմ. «Երթայք աշակերտեցէք զամենայն հեթանոսս» (Մատթ. ԻԸ 19): Եւ նա յառաջագոյն ընպահկեալ ըստ անատակին իրաց, ասպա յետոյ եկեալ ի միտս զղջացաւ եւ եմուտ յԵկեղեցի⁵ եւ ծառայեաց Որդոյն երկնաւորի, որպէս տեսանենք այժմ:

«Արդ՝ ո՞ր յերկոցունց արար⁸ զկամս հօրն», - հարցանէ: Աստի ուսանիմք զաւանդութիւն իմն գեղեցիկ, զի թէպէտ եւ բանն է ընդ պատժօք եւ ընդ պսակօք, սակայն ոչ այնքան որպէս եւ գործն: Է՞ր վասն. զի մարդ յերկուց է ի հոգւոյ եւ ի մարմնոյ, եւ ծնօղ բա-

¹ Յովհ. 2 27

² Գ խնդրիցէք

³ Սաղմ. Ծ 6

⁴ Գ առաքելօքն

⁵ Յովն. Գ 3

⁶ Գ առաքելօք

⁷ Ղուկ. ԺԵ 11-32

⁸ Գ ~ արար յերկոցունց

նին հոգին է, եւ ի լրութիւն ածող մարմինն: Արդ՝ յորժամ խոկայ միտքն եւ կամ խօսի լեզուն զսխալն, թէպէտ յանցաւոր է, սակայն ոչ կատարելապէս, զի առանց մարմնոյ է, իսկ յորժամ մարմինն եւս օժանդակէ գործով, կատարելապէս կշտամբի կամ փառաւորի՝ ըստ առաքելոյ թէ՛ «Իւրով մարմնովն ժառանգէ զբարի կամ զչար» (հմմտ. Բ Կոր. Ե 10): Վասն այսորիկ ոչինչ գրեաց զհնչումն ճայնին, այլ զարդիւնս. ասաց. «Ո՞ արար զկամս Հօրն», այսինքն գործեաց զփրկութիւն անձինն: «Ասեն՝ յետինն». զի մի՛ կարծիցեն, թէ Օրէնքն ինչ օգնիցեն նոցա, ցուցանէ, թէ նա՛ է դատախազ նոցա, յորժամ ոչ գործեն զնոսա՝ ըստ այնմ. «Գոյ որ դատի զձեզ, Մոսէ՛ս, յոր դուքն յուսացեալ էք» (հմմտ. Յովհ. Ե 45), այսինքն Օրէնքն, եւ թէ՛ «Բանն զոր խօսեցայ նա՛ դատի զնոսա» (հմմտ. Յովհ. ԺԲ 48): Վասն այսորիկ ի նոսա ձգեաց, եւ նոքա անձամբ զանձինս դատապարտեցին ի վերայ ինքեանց ձգելով զվճիռն, եւ զանձինս օտար ի կամացն Աստուծոյ ցուցին:

Ասէ ցնոսա Յիսուս¹. «Ամեն ամէն² ասեմ ձեզ, զի մաքսաւորք եւ պոռնիկք յառաջեցեն քան զձեզ յարքայութիւնն Աստուծոյ:

Տեսանե՞ս թէ՛ որպէս յայտնեաց, զոր թէ նախ էր ասացեալ, ծանր թուէր³ նոցա բանն եւ տաղտկալի, բայց յորժամ զվճիռն ետտուն անձանց, ապա ի մէջ բերէ զայս, թէ ճշմարիտ այդպէս է, որպէս ասացիք, «զի մաքսաւորք եւ պոռնիկք յառաջեցեն քան զձեզ յարքայութիւնն Աստուծոյ»: Ո՛չ յայտնապէս ասաց «հեթանոսք», զի մի՛ ամենեւին վիատիցին, այլ թէ՛ «մաքսաւորք եւ պոռնիկք»: Այսու ցուցանէ նախ՝ թէ ի հրէից բազումք հաւատացին եւ հաւատալոց էին, որպէս Մատթէոս մաքսաւոր եւ Ղեւի Ալփեայ եւ Պօղոս, եւ ի պոռնկաց եւս, որպէս կինն այն, որ արտասուօքն գոտս Նորա լուանայր եւ հերովն մաքրէր եւ իւրովն օժանէր⁴: Եւ երկրորդ՝ զհեթանոսս յայս առակէ «մաքսաւորք» զառ ի միմեանց յանցանսն ասէ, իսկ «պոռնիկք» զհեռանալն յԱստուծոյ եւ զշնայն ընդ քարի եւ ընդ փայտի⁵. տքա թարց Օրինաց միայն ի հաւատոցն արդարութենէ յառաջեցին յարքայութիւնն Աստուծոյ: Եւ

¹ Գ > Յիսուս

² Գ > ամէն

³ Գ ծանր էր թուեալ] ծանր թուէր

⁴ Ղուկ. է 37-38

⁵ Երեմ. Գ 9

դարձեալ՝ «յառաջելն» ասել՝ ոչ թէ սոքա երթիցեն եւ նոքա՝ զկնի, այլ զի նախանձ արկցէ նոցա, թէ կամեսցին հաւատալ, զի ոչինչ այնպէս յորդորական առնէ զթանձրամիտն, որպէս նախանձն, վասն այսորիկ հանապազ ասէր թէ՝ «Եղիցին առաջինք յետինք, եւ յետինք՝ առաջինք» (Մատթ. ԺԹ 30, Ի 16): Հանդերձ այսու եւ այլ իմն ուսուցանէ, թէ մուտ յարքայութիւնն է Օրինաց պահպանութիւնն, զի որք զղջանանն ի մեղաց եւ մտանեն զործեն յայգի նորա՝ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ քաւել զյանցանսն, թէպէտեւ յոյժ ծանրագոյն իցեն մեղօք, վերին կենացն լիցին ժառանգք՝ ըստ այնմ. «Թէ անօրէնն դարձցի յանօրէնութենէ իւրմէ, կելով կեցցէ» (հմմտ. Եզեկ. ԺԸ 21), որպէս եւ ընդդէմ այսր. «Արդարն եթէ դարձցի յարդարութենէ իւրմէ, մի՛ յիշեսցի արդարութիւն նորա, զոր արար, այլ ի մեղս իւր մեռցի» (հմմտ. Եզեկ. ԺԸ 24), ապա ուրեմն ամաչեսցեն յոյժ որք զապաշխարութիւնն խոտեն:

Չի եկն Յովհաննէս ճանապարհաւ արդարութեան, եւ ո՛չ հաւատացէր նմա, եւ մաքսաւորք եւ պոռնիկք հաւատացին նմա, եւ դուք տեսէք եւ ո՛չ զղջացարոյք յետոյ հաւատալ նմա (ԻՍ 32):

Դարձեալ՝ այսու զառաջինն հաստատէ. զի որպէս Տէրն առ ձեզ մատեալ նախ, այսպէս եւ ծառայն, զի առ ձեզ եկն Յովհաննէս եւ ո՛չ առ նոսա ընթացաւ, եւ ո՛չ այսչափ միայն, այլեւ «արդարութեան ճանապարհաւ», քանզի ոչ կարէք մեղ դնել նմա, թէ ծոյլ ոք էր կամ ոչ առնէր փոյթ զումեքէ, եւ կամ արտաքոյ Օրինացն ընթանայր, այլ զի վարս անարատս ունէր՝ եւ խնամս կարի յաճախագոյնս: Նա՛ զի եւ ոչ յափշտակեաց զպատիւ Տեառն իւրոյ, այլ իբրեւ կարծէին վասն նորա, թէ նա իցէ Քրիստոսն, ասաց թէ՝ «Եւ ոչ զխրացս կօշկաց Նորա արժանի եմ բառնալ» (հմմտ. Մատթ. Գ 11), որ եւ մեծ արդարութիւն է, սակայն ո՛չ անսացիք¹ նմա, որ է յոյժ կշտամբանք անձանց ձերոց, զի այնպիսում առն ոչ հաւատացէք: Եւ այս եւս կրկին տանջանք. զի մաքսաւորքն անսացին եւ մկրտեցան, եւ դուք ո՛չ ընդ նոսա եւ ո՛չ յետ նոցա, որ ամենեւին անարգանք են ձեզ եւ նոցա՝ պարծանք, զի առ ձեզ եկն, եւ չհամարեցայր ինչ, եւ առ նոսա ոչ չոգաւ, եւ ընկալան, եւ դուք ոչ նախանձեալ ընդ նոսա եւ անձանց ձերոց վարդապետ ստացեալ փարթայր² յետին լինել նոցա, թէ եւ ոչ առաջին: Վասն այսորիկ վրի-

¹ Զ անսացէք

² Զ փարթան

պեալ էք ի ներելոյ եւ ի թողութենէ դուք, եւ նորա ոչ միայն ըստ շնորհաց մտին, այլեւ ըստ արդարութեան, զի ո՛չ նոյնպէս պոռնիկ կացին եւ մտին, այլ լուան եւ հաւատացին եւ սրբեցան եւ փոխեցան, եւ ապա՛ մտին՝ ըստ երգոյն թէ՛ «Բախար պոռնիկն եւ բարելոնացին եւ հնդիկն եւ այլազգիքն անդ էին» (հմմտ. Մաղմ. 22 4):

Այլ առակ լուարուք (ԻԱ 33):

Ընդէ՞ր միշտ առակ կարգէ. զի զարտաքինսն յոյժ հաւանեցուցանեն առակաւոր խօսք եւ վարդապետութիւնք, այլեւ զմարգարէութիւնն լնու: Բայց զի՞նչ է թէ՛ «Այլ առակ լուարուք»: Կամ թէ՛ ի վերայ առաջնոյն կրկին յանդիմանութիւն, կամ այն՝ յաղագս արտաքսելոյն, եւ այս՝ յաղագս նորա երախտեացն եւ նոցա անշնորհութեանն եւ չար փոխանակ բարոյն հատուցանելոյ:

Այր մի էր տանուտէր, որ¹ տնկեաց այգի եւ ցանկով² պատեաց զնա, եւ փորեաց ի նմա հնձան, եւ շինեաց աշտարակ, եւ ետ զնա ցմշակս եւ զնաց ի տար աշխարհ:

Մարդասիրի Աստուած ի բազում զիրս աստուածայինս «տանուտէր» կոչիլ. կամ³ վասն դատողական իշխանութեան տան աշխարհիս եւ ինքնատէրութեանն, կամ վասն զգեւորոյ Որդոյն Աստուծոյ զպատկեր մարդկան, ըստ առաքելոյ՝ «Մոսէս հաւատարիմ է ի վերայ տան նորա, այլ Քրիստոս Տէր է տան Իւրոյ, որոյ տունն մեք իսկ ենք» (հմմտ. Եբր. 4 5-6): Արդ՝ Մա տնկեաց «այգի» կամ զդրախտն ձեռօք Իւրովք եւ լուսով իբր ցանկով, պատեաց եւ զատոյց յայսմ աշխարհէ, եւ փորեաց ի նմա հնձան՝ յամենայն ծառոց ուտելն, այլեւ մտացն խորութեամբ ճնլել զիմաստս Հօրն, յորմէ ուրախութեան զինին արտաքս հոսէր⁴: Եւ «աշտարակ» ի Գիտութեան փայտէն հրաժարեցուցանելն, եւ ետ զնա ի մարդն՝ գործել եւ պահել ըստ օրինի մշակաց՝ կրկին տաժմամբ: Իսկ «զնալն» զաներելոյթ լինելն Աստուծոյ նշանակէ, քանզի ընդ մարմին եւ ընդ անմարմին կարի իմն յոյժ է միջոցն:

Եւ կամ «այգի» զոր ի ձեռն Մոսիսի տնկեաց՝ խլելով զքանանացիս եւ տնկելով զհարայելացիս՝ ըստ Դաւթայ. «[Այգի] յԵզիպ-

¹ Զ > որ

² Տ ցանգով

³ ՏԶ եւ կամ

⁴ Զ հոսեալ

տոսէ փոխեցեր, հաներ զհեթանոսս եւ զնոսս տնկեցեր» (Մատթ. 23-9), եւ Եսայի թէ՛ «Այգի զօրութեանց Տունն Իսրայէլի» (հմմտ. Ես. Ե 7), իսկ «ցանկ» զխնամսն ասէ յԵզրիպտոսէ եւ այսր, կամ զՕրփնացն զգուշութիւն, որով որոշեալ ի հեթանոսական պաշտամանցն: Եւ «հնձան» զտեղի զենմանցն ասէ եւ «աշտարակ» զսեղանն քառութեան, յորում ոչ որ իշխէր մտանել, բայց միայն քահանայապետն, եւ զայն միանգամ ի տարուջն¹, որ ըստ բարձրագոյն խորհրդոցն, որ ի սեղանն կատարէր, զխաչին ասեմ հնձան, «աշտարակ» կոչեաց. կամ վասն Տաճարին ասաց զայս: Իսկ «մշակ» զառաջնորդս եւ զդպիրս ժողովրդեանն ասէ, յորս ետ գործել զայգին, այսինքն վարդապետել եւ դաստիարակել առ ի հաւատս ըստ Օրփնացն, որք գուշակք էին աւետարանին աւետեաց:

«Եւ զնաց,- ասէ,- ի տար աշխարհ»: Կամ՝ զի երկայնամիտ եղև եւ ոչ անդէն էած զպատիժն, յորժամ յանցեան, կամ՝ այլ ոչ եւս երեւեցաւ նոցա հրեղէն ամպով, որպէս ի Սինէական լերինն²: Բայց դու տես ինձ աստ զՆորա կարեւոր խնամսն, զի զմշակացն զճանրագոյն գործն Ինքն գործեաց՝ զտնկելն, զպատելն, զշինելն, եւ նոցա դարմանել եւեթ յանձն արար եւ պահել, եւ չէր ինչ պակաս, այլ ամենայն ինչ կազմ էր, սակայն եւ ոչ այնպէս օգտեցան:

Իբրեւ մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զճառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա (ԻԱ 34):

Ո՛չ իսկոյն մինչդեռ նորատունկք էին, զի մի՛ դժուարեցին, այլ յորժամ ժամանակ պտղոյն մերձեցաւ, այսինքն զի կերակրեաց յանապատին մանանայիւն եւ սնոյց վիմաբուղիս³ ջրովն⁴ եւ շնորհեաց զպարզեական երկիրն՝ հանգչելով ի նոսա, եւ զարգացոյց պէսպէս տրօք, եւ զաւելորդ բողբոջս ուռոց նոցա խանգարիչս յապաւիչս՝ զամադեկացիսն եւ զքանանացիս, զեօթն ազգս զօրաւորս քան զնոսս քանցեաց⁵ եւ ասպա առաքեաց զճառայս Իւր առ մշակսն, զմարգարէսն առ քահանայսն եւ առ իշխանսն խնդրել հաւատս եւ գործս բարիս ի ժողովրդենէն եւ կամ զհնազանդութիւն Աստուծոյ: Եւ թէ ընդէ՞ր զմարգարէսն «ճառայս», իսկ զքահանայս «մշակ» կոչէ. զի մարգարէքն զկամս Աստուծոյ միայն պաշ-

¹ Ելք L 10

² Ելք ԺԹ

³ Զ վիմաբուղիս

⁴ Ելք ԺԶ, ԺԷ

⁵ > քանցեաց

տէին առանց վարձու, իսկ քահանայքն վասն վարձուց տասանորդին մշակ էին ժողովրդեան:

Եւ կալեալ մշակացն զծառայս նորա՝ զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին (ԻԱ 35):

Տես զչարութիւն նոցա, ոչ միայն զպտուղն չետուն որք յայնչափ խնամս վայելեցին, այլեւ դժկամակ լինէին ընդ ծառայսն եւ արեանք զձեռսն լնուին, ինքեանք վրիժապարտք էին եւ յայլոց վրէժս խնդրէին: «Չոմն տանջեցին», - ասէ: Գանեցաւ Միքիա յԱքաաբէ¹ եւ ապտակեցաւ ի Սեղեկիայէ², սպանաւ Չաքարիա ի մէջ Տաճարին եւ սեղանոյն³, եւ սողցեցաւ Եսայիաս, քարկոծեցին զԵրեսիա եւ զմիւս Չաքարիա՝ որդի Ամովթայ⁴:

Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազում քան զառաջինսն⁵, եւ արարին նոցա նոյնպէս (ԻԱ 36):

Այսու զմարդասիրութիւնն Իւր ցուցանէ եւ զնոցա հետտութիւնն, բայց «բազում ծառայս» ասելով կարի զպատիժս նոցա ծանրացուցանէ, զի ոչ ի ծառայիցն Աստուծոյ ակն ածեցին եւ ոչ ի բազմացն աչառեցան, այլ սպանին եւ զնոսա եւ չարչարեցին եւ նախատեցին, որպէս զԵղիա եւ զԵղիսէնս եւ զերկոտասան մարգարէսն եւ զայլս բազումս:

Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր եւ ասէ. «Թերեսս ամաչեսցեն յորդոյ աստի իմմէ» (ԻԱ 37):

Է՞ր վասն յառաջագոյն ոչ առաքեաց զՈրդին. զի յիրացն, որ անցուցանէին ընդ ծառայսն, ըստգտանիցեն զանձինս եւ ցածնուցուն ի ցասմանէն, եւ ապա յայնմանէ, որ եկն, զանգիտեսցեն եւ ամաչեսցեն: Եւ դարձեալ յետոյ առաքեալ զՈրդին, ոչ եթէ վերջին էր Նա, այլ յետոյ՝ երեսեցաւ մարմնով, որ ըստ աստուածութեանն նախ էր քան զյաւիտեանս՝ ըստ Յովհաննու թէ՛ «Որ զայլոցն է զկնի իմ՝ նախ քան զիս է» (հմմտ. Յովհ. Ա 15): «Առաքեաց, - ասէ, - առ նոսա՞ զորդի իւր»՝ զհամագոյակիցն Իւր⁷ եւ զհարազատ սիրե-

¹ Տ յԱքաաբէ (այսպէս է և այլուր) Չ յԱքաաբու

² Գ Թագ. ԻԲ

³ Մատթ. ԻԳ 35

⁴ Չ Ամովթայ

⁵ Չ զառաջինն

⁶ Չ > առ նոսա

⁷ Տ > իւր

լին, որպէս վկայեաց ի Թարոր եւ ի Յորդանան¹: Եւ «առաքեաց» ասելն զմարդկութիւնն նշանակէ, կամ իբրեւ զԱստուած՝ զի զհաճութիւն Հօրն ցուցցէ առ որս զԻւրն զամենայն զբանս եւ զգործս վերաբերէր:

«Թերեւս,- ասէ,- ամաչեցեն յորդոյ աստի իմմէ»: Ոչ թէ երկրայութեամբ զ«թերեւս»-ն դնէ, օ՛ն անդր ի բաց տար. որ զիտէ զամենայն նախ քան զիինելն իւրեանց, զիտէ՛ր, թէ սպանանելոց են եւ² զՆա. այլ ցուցանէ, թէ կարի մեծ չարիք գործեն, եւ պատասխանի տալոյ չիք հայթհայթանս, զի զիտացին, թէ Որդի է, նախ ի մարգարէիցն եւ ի բերանոյ Նորա լուան եւ ի գործոցն ճանաչեցին, զի ոչ հանգոյն ծառայիցն, այլ տիրաբար հրաման տալոյ տարերց, եւ հնազանդէին, եւ զմեղս թողոյր եւ ազատէր, յորոց ծանեան, թէ Տէր է եւ Որդի Աստուծոյ, բայց յանդգնեալ սպանին, որոց ակն ածելն էր անկ եւ ամաչելն: Իսկ եթէ որ ընդդէմ դնիցէ, թէ որովհետեւ զիտէր թէ սպանանելոց են, ընդէ՞ր իսկ առաքեաց, եւ թէ առաքեաց, ասէ որ, վասն բարութեանն³, եւ նորա սպանին եւ զգիտութիւնն Աստուծոյ կատարեցին, զի մի՛ անգէտ կարծիցի, է՞ր վասն մեղադրէ նոցա եւ տանջէ: Առ այս նախ զՊօղոսին ասացուք թէ՛ «Դու ո՞վ ես, մարդ, որ պատասխանի տաս Աստուծոյ» (Հոմ. Թ 20): Եւ երկրորդ՝ զի զիտէր Աստուած, թէ սպանանելոց են զՈրդին յայտ է ահա, բայց նորա, որ սպանին, ոչ յաղագս այնորիկ սպանին, զի զկամս Հօրն արասցեն եւ զգիտութիւն Նորա լցցեն, այլ առ նախանձու մատնեցին եւ սպանին, որպէս վկայէ ատարանիչն⁴, վասն այտորիկ տանջեցին, զի զիտութեամբն յառաջադրութիւնն Աստուծոյ հաստատեցի, եւ սպանումն տոյժք նոցին եղիցի, որպէս Ինքն ասաց թէ՛ «Որդի մարդոյ ըստ սահմանելոյն ի կամս Հօր երթայ, որպէս եւ զրեալ է, բայց վա՛յ յոր ձեռն մատնեցի» (հմմտ. Դուկ. ԻԲ 22):

Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին, ասեն ընդ միտս. «Մա՛ է ժառանգն, եկայք սպանցուք զաա եւ կայցուք զժառանգութիւն սորա» (ԻԱ 38):

Եւ առեալ հանին զնա⁵ արտաքոյ քան զայգին եւ սպանին (ԻԱ 39):

¹ Մատթ. ԺԳ 5, Գ 17

² Զ ~ եւ սպանանելոց են

³ Զ բարութեան

⁴ Մատթ. ԻԷ 18

⁵ Զ > զնա

Յայտ առնէ այսու զնոցա լրբութիւնն, միանգամայն եւ զԻնքեան աստուածական զօրութիւնն, որ ծանեալ զխորհուրդ մտաց նոցա, քանզի իբրեւ տեսին, ասէ, այսինքն՝ զանմարմին Բանն Հօր՝ զանտեսն աչաց, մարմնով երեսեալ յերկրի՝ ըստ մարգարէին¹, եւ ծնեալ Որդի ի կուսէն ըստ Դաւթի, ասացին ի միտս. «Սա է ժառանգն», ասպա ուրեմն ո՛չ յանգէտս սպանին: Տես եւ զմիւս եւս չարութիւն, զոր պարտ էր ընդ առաջ երթալ եւ ներումն հայցել վասն առաջին յանդգնութեանն, նոքա գուն եղեալ եւ զայս յառաջին պղծութիւնն յաւելուին. «Սա է ժառանգն, եկայք սպանցուք»: Է՞ր աղագաւ եւ կամ վասն որո՞յ իրաց. թերես յանցա՞նք ինչ իցեն մեծ կամ փոքր, թերես պատուեա՞ց զձեզ կամ վասն ձեր մա՞րդ եղեւ եւ բազում սքանչելի՞ս ի ձեզ ներգործեաց: Ո՛չ, ասեն, այլ զի «կայցուք զժառանգութիւն սորա»: Այս կարի անմտութիւն է զկնի լրբութեանն եւ ամբարշտութեանն. որպէս նախ Հերովդէս խորհեցաւ կոտորել զմանկունսն կամելով կորուսանել զՆա², եւ ոչ կարաց, նոյնպէս եւ նոքա խորհեցան որում ոչ հանդիպեցան, զի որք ուտէին զԻսրայէլ բերանալիք բերանով մինչեւ ի սպանումն Նորա, յետ սպանման Նորա բարձաւ ժառանգութիւն նոցա եւ տուաւ հեթանոսաց՝ ըստ Դաւթի. «Տաց զհեթանոսս ի ժառանգութիւն եւ զամենայն ծագս» (մմտ. Մատթ. Բ 8): Քանզի յիրաւի ասացեալ է, թէ ոգիք ըմբռնեալ ի մեղս՝ ի մտաց եւս անկանին, զի ընդունայն եղեւ խորհուրդ նոցա, եւ ըմբռնեցան ի զիտութեանն իւրեանց, որպէս ասացին մարգարէքն³: «Եկայք սպանցուք զսա⁴, - ասեն, - եւ կայցուք զժառանգութիւն սորա⁵»: Որպէս ասացաք, յայտնի եղեւ այսու, թէ վասն ազահութեան եւ նախանձու ի սպանումն եկին ժառանգին Հօր եւ ո՛չ ի կամացն Աստուծոյ լրումն փութացան:

«Հանին զնա⁶, - ասէ, - արտաքոյ (քաղաքին) քան զայգին եւ սպանին»: Յառաջագոյն մարգարէանայ վասն մահուն, միանգամայն եւ զտեղին յայտնապէս ցուցանէ, զոր յետ բազում նշանացն հանեալ արտաքոյ քաղաքին, զոր առակաւ «այգի» ասէ, խաչեցին՝ ըստ առաքելոյ թէ՛ «Արտաքոյ դրանն չարչարեցաւ» (Եբր. ԺԳ 12): Այլեւ արտաքոյ Օրինացն սպանին, զի հրամայէր ոչ մխել

¹ Բարուք Գ 38

² Մատթ. Բ 16-18

³ Մատթ. Ե 11, Ես. Ը 10, ԽԴ 25, Երեմ. ԽԹ 7, Աբդիու 6 ևն

⁴ Զ > զսա

⁵ Զ > սորա

⁶ Զ > զնա

զձեռն յարիւն անպարտ¹, եւ նորա «որսացան զանձն արդարոյ»
(Մատթ. 24: 21): *Նաեւ այսու զկամատորն նշանակէ մահ:*

Արդ՝ յորժամ եկեսցէ տէր այգւոյն, զի՞նչ արասցէ մշակացն այնոցիկ (ԻԱ 40):

Որպէս երբեմն ասէր մարգարէիւն. «Չի՞նչ ինչ առնելոյ էր այգւոյ Իմում, եւ Ես ոչ արարի» (Ես. Ե 4). *նոյնպէս եւ աստ գրատաստանն առ նոսա ձգէ թէ՛ ի՞նչ իմիք արժանի են մշակքն: Բայց զի՞նչ է թէ՛ «Յորժամ եկեսցէ տէր այգւոյն՞»:* *Կամ յերկայնմտութենէն զարթի եւ վրէժխնդիր լինի արեանն Որդոյ, կամ յորժամ փառօքն Հօր յերկնից եկեսցէ հատուցումն առնել իւրաքանչիւր գործոց, զի՞նչ արասցէ նոցա, այսինքն՝ թէ՛ որք անձամբ տուկ սխալեցան², ո՛չ կարիցեն ասքել ի բարկութենէն, իսկ որք յարիւն Որդւոյն Աստուծոյ ձեռնամուխ եղեն, զի՞նչ արասցեն:*

Ասեն ցնա. «Չչարսն չարաւ կորուսցէ եւ զայգին տացէ այլոց մշակաց, որք տայցեն նմա զպտուղս ի ժամու իրեանց» (ԻԱ 41):

Յակամայ կամս հատին ի վերայ անձանց զվճիռն, թէ՛ դատապարտելոց են, որ եղել իսկ ստուգութեամբ, զի թշնամեացն վկայութիւնն լի է ճշմարտութեամբ: «Չչարսն,- ասեն,- չարաւ կորուսցէ»: *Երկակի⁴ լսի այս: Կամ թէ՛ զոր ինչ արարին նորա ընդ ծառայսն Աստուծոյ չարութիւն, եկեսցէ հռոմայեցիւն եւ արասցէ ընդ նոսա կորուստ եւ սպանութիւն, որ հանգոյն նոցա եւ չարք են նոքա: Եւ կամ թէ՛ զչարութեամբ զչարացեալսն կորստեան մատնէ, այլեւ զչարագործսն հանդերձ չարութեամբն իրեանց կորուսանէ, որպէս զտղոմայեցիսն, զի ոչ զնոսա միայն տանջէ, այլեւ զտեղիս նոցա բնաջինջ աւերէ⁵:*

«Եւ զայգին տացէ⁶ այլոց մշակաց, որք տայցեն նմա զպտուղս ի ժամու իրեանց»: *Այս զհեթանոսաց մուտն յայտնապէս նկարէ, զի «այլ»-ն զի՞նչ յայտնէ, քան թէ զազգս օտարս հեթանոսաց, որոց տնկեցաւ փոխանակ հին այգւոյն նոր ժողովորդ*

¹ Բ Օր. ժԹ 10, ԻԱ 8

² Գ > տէր այգւոյն

³ Գ սղալեցան

⁴ ՏԳ եռակի

⁵ Ծննդ. ժԹ

⁶ Գ տայցէ

հաւատացելոց ի Քրիստոս եւ ցանկեցաւ առաքելով¹ եւ մարգարեիք, այլեւ բարեպաշտ թագաւորօք: Եւ փորեցաւ հնճան խաչին, յորմէ վտակք կրկնակի աղբեր կայակնացեալ հրաշիք բոլիւ եւ յաներեւոյթս զբանաւոր անդաստանս ռոռգէ, կանգնելով աշտարակ զմարմինն տէրունական՝ շինեալ ի հոգւոյ եւ ի մարմնոյ եւ ի մտաց, միացեալ լրմամբ աստուածութեանն եւ բարձրացեալ ի խաչին, որոյ մշակ չայրն է երկնաւոր, եւ կամաց Նորին հետեւօղբ՝ աստուածային որեարք, որք տան զպտուղն Կենաց ծառոյն, «որ տնկեալ է ի գնացս ջորոց» (Մատթ. Ա 3), ի ժամու մաքրութեան սրբազան ժողովրդոց զմարմին եւ զարիւն Որդոյն Աստուծոյ, այլեւ դաւանութիւնս ուղիղս ի չայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ, նաեւ ի² տնօրէնութիւն Բանին, եւ գործս մտաւորս եւ կատարեալ բանական պաշտօնս ի ժամու կենցաղոյս, որ ժամանակ է ընդունելի եւ օր փրկութեան՝ ըստ Պօղոսի,³ նաեւ խոստովանութիւն յետ յանցանացն եւ «պտուղ արժանի ապաշխարութեան» (Մատթ. Գ 8) ծաղկեաց բարեաց գործովք ի ժամու զղջմանն եւ ըստգտանաց սրտին ի փառս Աստուծոյ Հօր եւ Որդոյ Նորա եւ Հոգւոյ Սրբոյ այժմ եւ յաիտենից յաիտեանս: Ամէն:

Ասէ ցնոսա Յիսուս. «Չիցէ՞ երբէք ընթերցեալ ձեր ի Գիրս. «Զվէմն, զոր անարգեցին շինօղբն, նա եղև զլուխ անկեան: Ի Տառնէ եղև այս, եւ է սքանչելի յաչս մեր» (ԻԱ 42):

Չի՞նչ գայս ասէ առ կարգ բանին տգէտս լինել առ մարգարեութիւնն Դաւթի⁴: Թուի ինձ յայսմ տեղոյց համառօտ անցանել աւետարանչիս, քանզի ասէ Ղուկաս, թէ յորժամ վճիռ եհատ վասն չար մշակացն, թէ զնոսա կորուսցէ եւ զայգին այլոց տացէ⁵, որպէս եւ ինքեանք իրաւ համարեցան ըստ Մատթէոսի, ապա իմացեալ, թէ վասն անձանց է այն, ասացին քա՛ւ լիցի գայդ առնել, եւ Նա հայեցեալ ի նոսա ասաց, այսինքն ակնարկեաց թէ լինելոց է, ապա թէ ոչ՝ զհա՞րդ արդարանայ գրեալն թէ՛ «Զվէմն, զոր անարգեցին շինօղբ, նա եղև զլուխ անկեան»: «Վէմ» զԲնքն ասէ՝ ըստ Եսայեայ թէ՛ «Դնեն ի հիմունս Սիոնի վէմ ընտիր» (Ես. ԻԸ 16), զլուխ

¹ Գ առաքելօք

² Գ > ի

³ Բ Կոր. 2 2

⁴ Մատթ. Եժէ 22-23

⁵ Ղուկ. Ի 16

անկեան աղամանդեայ, որպէս ասաց Ամովս¹: Նախ՝ վասն անմալելի եւ անխորտակելի գոլոյ: Եւ երկրորդ՝ վասն կուսածնութեանն, որպէս եւ ետես Դանիէլ՝ «վէմ հատեալ առանց ձեռին» (Դան. Բ 34): Եւ երրորդ՝ վասն անշարժութեանն: Եւ չորրորդ՝ վասն մշտնջենատրութեանն, զի յաւիտենական ունի գէութիւնն: Եւ հինգերորդ՝ վասն բոխելոյ զաստուածահրաշ վարդապետութիւնն համաքատակ վիմին՝ որ յանապատին², որպէս գրեաց եւ Պօղոս թէ՛ «Վէմն էր Ինքն Քրիստոս» (Ա Կոր. Ժ 4), որ արքուցանէր կանխաւ զջորն՝ օրինակ տալով ժողովրդեանն: Եւ վեցերորդ՝ վասն միացուցանելոյ զհին եւ զնոր Օրէնս, որոց եղև գլուխ անկեան ըստ վիմի Օրինի, որպէս ասէ Ինքն Տէրն, զոր անարգեցին ի ժամանակի հաւատոցն, թէ՛ չէ՛ դա յԱստուծոյ, այլ մոլորեցուցանէ զժողովորդն³: «Շինօղ»՝ վարդապետքն եւ քահանայքն հրէից՝ ըստ Եզեկիէլի թէ՛ «Շինէին որմ եւ ծեփէին առանց խճելոյ» (հսմտ. Եզեկ. ԺԳ 10-11), զի որք կարգեցան զժողովորդս առ Աստուած ածել, նոքա պատրաստեցան ի բաց կացուցանել:

«Նա եղև գլուխ անկեան»: Օրինակաւ ասէ, թէ որպէս վէմ, յանհմտութենէ շինողաց յետս ձգեալ, յետոյ անկիւնաքար լինի եւ զերկոսին որմունս ի միասին կցեսցէ, այսպէս եւ Նա զերկոսին ազգս՝ զհրէայս եւ զհեթանոսս, զմարդիկ եւ զհրեշտակս, զհոգի եւ զմարմին, ի միասին պատկանեաց, որք⁴ յոյժ հեռագոյնք եւ հակառակք էին միմեանց՝ հաւատովք եւ գործովք եւ ցանկութեամբ: «Ի Տեառնէ եղև այս, եւ⁵ է սքանչելի յաչս մեր⁶»: ցուցանէ, թէ նոքա վասն թերահաւատութեան ելանելոց են, եւ հեթանոսք հաւատով մտանելոց, որպէս քանանացուվն եւ իշովն եւ հարիւրապետիւն յայտ արար⁷, եւ զի յԱստուծոյ է այս՝ ելն հրէից եւ մուտն հեթանոսաց, սքանչացաւ Դաւիթ ի տեսութիւնս իւր⁸, ոչ ընդ փոխումն այգոյն, զի ըստ արժանեացն էր այն, այլ ընդ կանխատեսութիւնն Աստուծոյ:

¹ Ամովս է 7-8

² Ելք ԺԷ 6

³ Յովհ. է 12, Թ 16

⁴ Գ որ

⁵ Գ > եւ

⁶ Գ > յաչս մեր

⁷ Մատթ. ԺԵ 22-28, ԻԱ 1-7, Ը 5-13

⁸ Սաղմ. ԳԹ 9

Վասն այսորիկ ասեմ ձեզ, զի բարձցի ի ձեզ արքայութիւն Աստուծոյ եւ տացի ազգի, որ առնիցէ զպտուղս նորա (ԻԱ 43):

«Վասն այսորիկ» վասն մարգարեական կանխութեանն եւ ի վերուստ վճռին: Բայց զի՞նչ է այն, զի նախ «այգի» ասաց եւ այժմ «արքայութիւն» անուանէ: Կամ թէ դուռն արքայութեանն Օրէնքն է, զոր «այգի» ասաց, իսկ յորժամ որ զՕրէնսն ոչ գործիցէ, եւ ոչ յարքայութիւնն մտանել կարէ, կամ թէ ա՛յլ ազգ. զի որչափ որ զօրէնս թագաւորի արասցէ, հնազանդ է թագաւորին այնմիկ եւ ասի, իսկ յորժամ օրինացն ապստամբէ, եւ ի թագաւորութենէ նորա արտաքս ելանէ, զի ոչ ասի նա նոցա թագաւոր, վասն զի ոչ առնեն զհրամանս¹ նորա: Չա՛յս նշանակէ ասելն թէ «Բարձցի ի ձեզ արքայութիւն Աստուծոյ եւ տացի ազգի», այսինքն հեթանոսաց, որք գործեն զգործս Նորա:

Եւ որ անկցի ի վերայ վիմիս այսորիկ, փշրեացի, եւ յոյր վերայ անկցի, հոսեցէ զնա» (ԻԱ 44):

Եւ զի «վէմ» ասաց զԻնքն, այժմ զկարծիս նոցա լուծանէ, որ խորհեցան սպանանել զՆա, զի թեպէտ մարտեան ընդ Նմա իշխանք ժողովրդեանն, այս է անկանելն ընդ վիմին, եւ կամեցան շիջուցանել զՆա ի ձեռն խաչին, ինքեանք իսկ խորտակեցան յահաւոր զօրութենէն եւ ի նշանացն եղելոց, եւ բարձաւ թագաւորութիւն նոցա, եւ եղձաւ կարգ պատարագացն, եւ ցրուեցան ընդ ուրբոս երկրի, զոր օրինակ աման խեցի, յորժամ հարկանիցի ի վիմի, քանզի դժուարին ասացաւ ընդդէմ խթանի արացել² եւ կամ ընդ վիմի նետածիգ լինել, զի զանձի՛նս հարկանիցեն այնպիսիքն: «Եւ յոյր վերայ անկցի, հոսեցէ զնա». այս զԻնքեան վրէժխնդրութիւնն ասէ, զոր էառ ի նոցանէ պաշարմամբ քաղաքին՝ բնաջինջ առնելով զնոսա, ըստ Դաւթի թէ՛ «Փշրեցէ զնոսա զաւազանաւ երկաթեաւ» (հմմտ. Սաղմ. Բ 9), եւ՝ «Իբր զփռոշի, զի հողմ³ հոսէ ի վերայ երեսաց երկրի» (հմմտ. Սաղմ. Ա 4): Եւ դարձեալ փշրեաց վէմն այն զդեւս եւ հոսեաց զկռապաշտութիւնն ի մտաց մարդկան: Եւ դարձեալ զՅովհաննոս հաստատէ⁴, զոր ի յերկրորդն գալուստ սրբէ զկալ աշխարհիս եւ հոսէ ընտրութեամբ դատաստանին զթեթեւա-

¹ Զ զկամս

² Գործք ԻԶ 14

³ Զ ~ հողմ զփռոշի զի

⁴ Սատթ. Գ 12

միտ յարդսն՝ զհրէայս անհաւատս եւ զհերձուածողս, որք են ձախակողմենանքն¹, ի հուրն անշէջ, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա:

Իբրեւ լուան քահանայապետքն եւ դպիրք եւ փարիսեցիք զառակս Նորա, զիտացին, թէ վասն նոցա ասաց (ԻԱ 45),

եւ խնդրէին զՆա ունել, բայց երկեան ի ժողովրդոցն, զի իբրեւ զմարգարէ ունէին զՆա (ԻԱ 46):

Իբրեւ լուան զայս ամենայն, պարտ էր երկիրպագանել եւ յերկիրդ պատժոցն, զոր լուան, ակն ածել եւ ցածնուլ: Նորա զընդդէմն արարին, զի յորժամ զիտացին, թէ վասն նոցա ասաց, կամեցան ընթռնել եւ սպանանել, բայց երկեան ոչ յԱստուծոյ կամ ի բանիցն ասացելոց, կամ ի մարգարէիցն վկայութենէն, այլ ի բազմամբոյս խուժանէն, զի մարդահաճոյք էին, վասն այնորիկ «ցրուեցան ոսկերք նոցա մերձ ի դժոխս» (հմմտ. Մատթ. ԾԽ 7): Դարձեալ տես եւ զայն, զի ժողովորդքն թէպէտ ոչ կատարելապէս զՆա ծանեան, բայց ի բանիցն եւ ի գործոցն հրաշից զէթ իբր զմարգարէ ունէին, իսկ նորա, որ զՕրէնսն ընթեռնուին, իբր զմահապարտ դատապարտէին: Է՞ր վասն. զի զճօտաւորս եւեթ խնդրէին, զի չիք այլ ինչ, որ գահաւիժ առնէ եւ դարահոս գործիցէ, որպէս ընդ ժամանակեայս բեւեռելն, եւ չիք ինչ, որ յայսմ ամենայնէ զերծուցանէ եւ զմերձակայս եւս վայելել տացէ, որպէս այն, զի զանտիսն նախամեծար առնիցէ՝ ըստ այնմ. «Խնդրեցէք զարքայութիւն Նորա, եւ այդ ամենայն² յաւելցի ձեզ» (հմմտ. Մատթ. 2 33), զորս նորա ոչ ունէին, եւ ոչ աշակերտել կամէին, որոց յաւելու միւս եւս առակ:

¹ Տ ձախակողմանքն

² Զ > ամենայն

ԳԼՈՒԽ ԻԲ

Դարձեալ պատասխանի ետ Յիսուս¹ եւ ասէ ցնոսա առակօք² (ԻԲ 1).

«Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն թագաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւրում (ԻԲ 2)

եւ առաքեաց զժառայս իւր կոչել զհրաւիրեալսն ի հարսանիս, եւ ոչ կամեցան զալ³ (ԻԲ 3):

Յառաջնումն առակին «տանուտէր» ասաց եւ աստ՝ «թագաւոր», քանզի ոչ իսկոյն վրէժխնդիր լինելոց էր, այլ յետոյ. յորժամ հրաժարէին ի հարսանեացն, հանդերձեալ էր զօրականս⁴ առաքել: Վասն այտորիկ «թագաւորի» նմանեցաւ, «որ արար,- ասէ,- հարսանիս որդւոյ իւրում». թէպէտ յետոյ՝ եղև հարսանիքն Որդւոյ, սակայն նախ քան զյախտեանս սահմանեալ էր՝ ըստ առաքելոյ⁵: Իսկ «հարսանիք» է, նախ առաջին, խառնումն Բանին ընդ բնութիւնս մարմնոյ միութեամբ, եւ ասպա՝ եկեղեցական հոգւոց՝ ըստ Յովհաննու թէ՛ «Որ ունի հարսն, նա է փեսայ» (Յովհ. Գ 29), եւ Պօղոս թէ՛ «Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Բրիստոս եւ Եկեղեցի» (Եփես. Ե 32), եւ դարձեալ թէ՛ «Չձեզ զամենեսեան խօսեցայ իբր զկոյս մի սուրբ յանդիման կացուցանել Բրիստոսի» (հմմտ. Բ Կոր. ԺԱ 2), յորոյ հաղորդութենէն զանապականութիւն ընկալաւ. մարմինն Տեառն՝ արդեամբք եւ Եկեղեցի սուրբ՝ յուսով աւետեաց: Եւ վասն է՞ր «հարսանիս» անուանէ. զի ուսանիցիս զիրացն պայծառութիւնն, թէ չիք տրտմական ինչ, այլ ամենայնն լի է հոգեւոր ուրախութեամբ: Եւ է՞ր աղագաւ Հօր ոչ խօսի հարսն, այլ Որդւոյ. զի յառաջին զմահուանէ Որդւոյ ճառեաց, աստ ցուցանէ, թէ յետ մահու լինելոց է հարսանիքն, եւ յայնժամ լինելոց է փեսայ, յորժամ ի մեռելոց յարիցէ, զի զամենեսեան առ Ինքն ձգէ⁶:

«Առաքեաց,- ասէ,- զժառայս իւր». այսու զանչափ խնամսն, զոր առնելոց էր հրէիցն, յայտ առնէ, զի յառաջնումն առակին այսպիսի երեւի, թէ յառաջ քան զխաչն կոչեաց զնոսա, իսկ աստ՝

¹ Գ > Յիսուս

² Գ > առակօք

³ Գ > զալ

⁴ Գ զկեանս

⁵ Ա Կոր. Բ 7

⁶ Յովհ. ԺԲ 32

յետ սպանանելոյն փութայ ձգել առ Ինքն, զի յորժամ զանհնարին պատիժս օրէն էր նոցա կրել, ի հարսանիս կոչէ եւ առաւել պատուով պատուէ: Եւ արդ ո՞ք այնքան ապախտաւոր իցէ եւ թշուառական, զի ի հարսանիս կոչիցի յարքայորդոյ եւ յարքայէ եւ փախչիցի ի նմանէ: «Առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն ի հարսանիսն, եւ ոչ կամեցան զալ¹»: «Ծառայս» զՄոսէս ասէ եւ զմարգարէսն կամ զՅովհաննէս զհրաւիրեալն ի մարգարէիցն: Կոչեաց ի վայելս, եւ ոչ կամեցան՝ ասէ, զոր չիք այլ ինչ անհնարին աղէտ քան զայս, զի այս երեքկիւն² ամբաստանութիւն է. նախ՝ զի զմարգարէս կոտորեցին, եւ ապա՝ զՈրդին իսկ սպանին, եւ երրորդ՝ ի հարսանիսն Որդոյ, որ սպանաւ, կոչեցան եւ ոչ կամեցան:

Դարձեալ առաքեաց այլ ծառայս եւ ասէ. «Ասացէք հրաւիրելոցն. «Ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի, զուարակք իմ եւ պարարակք զենեալ են, եւ ամենայն ինչ պատրաստ է, եկա՛յք ի հարսանիսս» (ԻԲ 4):

Կարի ամեցուցանէ զամբաստանութիւնն, զի երբեմն կոչեցան մարգարէիքն, հրաւիրեաց եւ Յովհաննէս թէ՛ «Նմա պարտ է ամեղ եւ ինձ մեղմանալ» (Յովհ. Գ 30), կոչեաց եւ Ինքն թէ՛ «Եկա՛յք առ Իս, ամենայն աշխատեալք, եւ Ես հանգուցից զձեզ» (հմմտ. Մատթ. ԺԱ 28), եւ նոքա ընթրատացան: Ապա եւ առաքելովքն միսանգամ կոչէ, այլեւ հայրապետօքն եւս, ոչ յապաշխարութիւն եւ ի քրտունս, այլ յուրախութիւն եւ ի վայելս, սակայն եւ ոչ այն պատկառեցոյց զնոսա, զի որչափ երկայնամիտ լինէր, այնքան ախտանային: «Ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի»՝ սեղան լի իմաստութեամբ եւ զիտութեամբ աստուածայնոյ զմարմինն տէրունական եւ զարիւնն Իւր սուրբ՝ քաղցր ճաշակողացն եւ ախորժ քան զմեղր եւ զխորիսխ: Եւ ոչ վայրապար սա «ճաշ» եւ Ղուկաս «ընթրիս» ասէ³, այլ նշանակէ «ընթրիս»-ն, զի ի լրման կենցաղոյս եւ երեկոյացեալ դարուս բաշխեաց զմարմին եւ զարիւն աշակերտացն ի վերնատանն, իսկ «ճաշ»՝ զի ժամ էր երրորդ, յորժամ բեւեռեցաւ ի խաչին տալոյ քաղցելոց մտաց զկերակուրն անմահացուցիչ եւ զգիտութիւնն Իւր, ըստ Դաւթի թէ՛ «Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան» (Սաղմ. ԻԲ 5), որպէս եւ զՀոգին Սուրբ՝ ի սոյն

¹ Գ > զալ

² Տ երեքին

³ Ղուկ. ԺԴ 16

ժամու: Այլև գաստուածային գիտութեան իմաստն ի ձեռն բանից վարդապետութեան, որ քաղցր է ի կոկորդս քննողացն՝ ըստ այնմ թէ՛ «Քաղցր են ի քիմս իմ բանք քո՝ քան զմեղր բերանոյ իմոյ» (Սաղմ. ԾԺԸ 103), գոր «ճաշն» ասաց, նաեւ զսեղան Հօր, յորս բազմեցուցէ եւ անցեալ պաշտեսցէ¹, որ է Նորա վարդապետելն եւ մեր ուսանելն: Չոր «պատրաստեցի» ասէ, քանզի յառաջագոյն կազմեալ է զարդարոցն փառս, որպէս զերկիրն պարգեւական, որ բղխէր զկաթն եւ զմեղր հին ժողովարանին՝ ասելով. «Տարայց զքեզ յերկիրն, գոր պատրաստեցի քեզ» (հմմտ. Ելք ԻԳ 20), գոր վասն սննդագործ զօրութեանն եւ կատարելագործ իմաստութեանն «կաթն եւ մեղր» անուանեաց եւ աստ «ճաշ» կոչէ, որում ըղձացաւ տարփօղ հոգին թէ՛ «Երանի որ կերիցէ ճաշ յարքայութեանն Աստուծոյ» (Ղուկ. ԺԴ 15):

«Չուարակք իմ եւ պարարակք զենեալ են», - ասէ: Հանգոյն այսմ եւ Ղուկաս ասէ թէ՛ «Չենէք զեզն պարարակ» (հմմտ. Ղուկ. ԺԵ 23), որով զխրախոսքին բարեկենդանութեանն նշանակէ, զի զալուստ Տեառն տարեկան ընդունելի քարոզեցաւ ի մարգարէիցն²: Բայց «զուարակ» զմարմինն Իւր կոչէ՝ զհեզն միանգամայն եւ զերկրավաստակ, որով զբանակն երկիրս մեր գործեաց՝ պտղաբերս առնելով Աստուծոյ օրինակաւ մարմնոյ Իւրոյ: Իսկ «պարարակ» զզէրն ասէ եւ զ«տողայից»-ն ըստ մարգարէի³, պարարտացեալ աստուածութեանն օծմամբ, գորոյ ասէ թէ՛ «զենեալ են»: Չայս զխաչէն ասէ կանխաւ յառաջաձայնեալ, որպէս զի ցուցցէ, թէ նախ սահմանեալ էր մահն Որդոյ ի փրկութիւն եւ յորախոսքին բանականաց՝ ըստ այնմ. «Չոր եղ յառաջագոյն ի տնտեսութիւն լրման ժամանակաց» (Եփես. Ա 9), միանգամայն եւ զկամատրն նշանակէ:

Եւ դարձեալ զի բազմատրական ասէ՝ կամ թէ՛ ոչ միայն մարմնով, այլեւ հոգով եւ մտօք պատարագեցաւ, գոր «իմ» ասէ, քանզի արդարեւ Բանին էր մարմինն՝ ըստ առաքելոյ թէ՛ «Երեւեցաւ մարմնով, արդարացաւ Հոգով» (Ա Տիմ. Գ 16), եւ համարձակիմ ասել, թէ աստուածութեամբն եւս վասն առ մարմին ներմիութեան տնօրինաբար, կամ թէ՛ ոչ միայն Փեսայն զենաւ, այլեւ բարեկամք Փեսային եւ հարսն եւ որդիքն խողխողեցան առաքեալք

¹ Ղուկ. ԺԲ 37

² Ես. ԿԱ 2

³ Սաղմ. ԿԵ 15

եւ մարգարէք, պարարակք հոգելիցք վասն մարդկան, որպէս եւ Տէրն, զանձինս իրեանց պատարագեցին: Եւ դարձեալ զուարակք մեծամեծք եւ պարարակք զենեալք՝ աստուածաբանութիւնք ուրախարարք եւ քաղցր վարդապետութիւնք Նորա, որ պարարեն զհոգիս՝ ուսուցանելով զզենումն Ռդդոյ, միանգամայն եւ ի նոյն յորդորեն: Իսկ ասելն՝ «եւ ամենայն ինչ պատրաստ է», զհոգետր ուրախութիւնն ասէ յԵկեղեցի եւ զմեղաց թողութիւնն, եւ զորդեգրութեան շնորհն, եւ զարքայութեանն յոյս, եւ զայլ սոյնպիսիս:

Եւ նոքա յուլացեալ՝ զնացին ոմն յագարակ իւր, եւ ոմն՝ ի վաճառ իւր (ԻԲ 5),

եւ այլք կալան զժառայս¹ նորա, թշնամանեցին եւ սպանին (ԻԲ 6):

Պատճառս յօդէին, որպէս Ղուկաս ասէ, զհարկիս եզանց եւ զագարակս եւ զկանայս², զի թէպէտ ի դէպ ինչ պատճառքն կարծիցին. այլ մեք անտի ուսանիմք՝ թէպէտեւ կարի ինչ կարետր պէտք ի վերայ կայցեն, քան զամենայն ինչ նախամեծար զհոգետրն պարտ է համարել: Իսկ «յուլացան» ասելն զպղերգիցն եւ զծովիցն նշանակէ, եւ «ագարակ»-աւն՝ զերկրասիրացն եւ զագահացն, իսկ «եզամբք»-ն՝ զզգայութեանցն պատրանս, եւ «վաճառ»-աւն՝ զվաճառականացն եւ զխաբերայիցն, որք զրկութեամբ յափշտակեն զայոց արարս՝ յայնժամ հրէայքն, որք ոչ հետեւեցան աւետարանին քարոզութեամբն, եւ այժմ սպիրատրն եւ անհաւատքն, որք ի նոյն ախտս վարակեալք են: Իսկ կարի չարքն որք զժառայսն՝ զառաքեալս Նորա, թշնամանեցին եւ զանեալ սպանին, զի ոչ միայն ոչ կամեցան զալ ի հարսանիսն, այլեւ մոլեկան օճիրս գործեցին, զի զհրաւիրակսն խողխողեցին, որոց եւ Պօղոս մեղադրէ թէ՝ «զՏէրն սպանին եւ զմարգարէսն եւ զմեզ հալածեցին» (Ա ԹԵՍ. Բ 15): Տեսանե՞ս զզանազանութիւն ախտիցն, թէ ո՞րպէս հաւասար վերջացուցանէ հարսանեացն, զի ոմանք ծուլութեամբ, եւ ոմանք մարմնասիրութեամբ, եւ այլք հակառակութեամբ ի բաց հետտին ի հոգետր ուրախութենէն:

Իսկ քազաւորն իբրեւ լուս, բարկացաւ եւ առաքեաց զգօրս իւր եւ աստակեաց զսպանօղսն զայնոսիկ եւ զբաղաքն նոցա այրեաց (ԻԲ 7):

¹ Զ զժառայսն

² Ղուկ. ԺԴ 18-20

Յիրաւի բարկացաւ, զի բազում ժամանակս ներեաց՝ թերես ի զղջումն զայցեն, իսկ նոքա ի չարութիւն վերջին թեակոխեցին եւ զերկայնմտութիւն Նորա պատճառ խստութեան անձանց արարին եւ բարկութեան անօթ զանձինս պատրաստեցին, որպէս փարաւոն, կամ թէ չհաւատալովն յՈրդի՝ զՀայր բարկացուցին, վասն որոյ ի հարուածս զայ, որպէս ասէ թէ՝ «Առաքեաց զգօրս իւր»։ Չայս զՏիտոսէ եւ զՎեսպիանոսէ ասէ, եւ թէ «իւր» ասէ, մի՛ զարմանար, քանզի եւ զՆաբոքորոնոսոյ բաժակ ոսկի ի ձեռին Իւր կոչեաց¹ եւ զմարախ գոր Իւր ասէ², վասն զի զկամս Նորա պատենն։ Նոյնպէս եւ զոսսա, զի զվրէժ Որդոյ Իւրոյ առին, թէպէտ ոչ անդէն վաղվադակի, յորժամ սպանին, այլ յետ քառասուն ամի, յորժամ եւ զհրաւիրակսն զոմն զլիսատեցին, որպէս զՅակոբոս, զոմն քարկոծեցին, որպէս զՍտեփանոս, եւ զայլսն թշնամանեցին, որպէս զի ներելովն զերկայնմտութիւնն ցուցցէ եւ վրէժխնդրութեամբն՝ զգօրութիւնն։ Քանզի տակաւին Յովհաննէս կենդանի էր, եւ այլք բազումք, որք ընդ Քրիստոսի էին, տեսին զաւերն Երուսաղէմի, որպէս լուսն ի Տեառնէ, զի եկեալ հռոմայեցուցն՝ բարձին զիշխանութիւն նոցա, զորս սպանին եւ զմանկունս եւ զկանայս զերի վարեցին եւ զքաղաքս նոցա հրով այրեցին, որպէս պատմէ Յովսէպոս³։

Յայնժամ ասէ ցճառայս իւր. «Հարսանիքս պատրաստ են, եւ հրաւիրեալքն չէին արժանի (ԻԲ 8)։

Արդ երթայք ի յանցս ճանապարհաց եւ զորս միանգամ գտանիցէք՝ կոչեցէք ի հարսանիսս» (ԻԲ 9)։

Նախ առ նոսա առաքեաց, եւ Ինքն առ նոսա եկն, զի մի՛ կարծիս ինչ յամառութեան թողուցու, որպէս ասէ թէ՝ «հրաւիրեալքն չէին արժանի», այսինքն թէ եւ անգամ հրաւիրելոյ չէին արժանի, թող թէ կոչելոյ, բայց զի մի՛ բարուրս դիցեն, այլ զի նոքա ըմբերանեցին, եւ մեք խրատեսցուք, եւ սպա ի հեթանոսս առաքէ։ Բայց եթէ զլինելոցս իբր զեղեալ ճառէ, մի՛ ինչ սքանչանար, զի այս Նորա սովորութիւն էր, զի «յորժամ լինիցի,- ասէր,- հաւատասցիք, ե-

¹ Երեմ. ԾԱ 7

² Յովէլ Բ 25

³ Տ Յովսէփոս

Յրեա պատմիչ Յովսէպոս Փլավիոսն այս դեպքերը նկարագրում է «Յրեական պատերազմ» երկուն։

թե՛ *Ես եմ*» (Յովհ. ԺԳ 19): Իսկ «ծառայս» դարձեալ զառաքեալսն ասէ, որք հրեշտակք կարգեցան ի կոչումն հեթանոսաց. «Երթայք աշակերտեցէք զամենայն հեթանոսս» (հմմտ. Մատթ. ԻԸ 19), եւ Պօղոս ասէր հրէիցն թէ՛ «Նախ ձե՛զ պարտ է պատմել զբանն Աստուծոյ, բայց զի անարժան զձեզ արարէք, երթամք ի հեթանոսս» (հմմտ. Գործք ԺԳ 46):

«Հարսանիքս պատրաստ են». կազմ է առազաստս ընդունել զեկեալսն, եւ հրէայքն մարգարէիք հրաւիրեալք՝ կամաւ անարժանք եղեն երկնաւոր խնջոյիցս: «Երթայք,- ասէ,- ի յանցս ճանապարհաց». կամ զանարգս եւ զարհամարհեալս, որք ի վերայ ճանապարհին նստին, զխեղս եւ զկոյրս, որպէս Ղուկաս ասէ², որք են հեթանոսք խեղք հոգով եւ կոյրք ի գիտութենէ տեսեան ևնցա կռապաշտութեամբ, կամ որք անց են եւ ճանապարհ կոխանք լեալք դիւսց ճիւղաց, կամ որք յանցաւորք եղեն ի շաւիղս ճանապարհի օրինացն Աստուծոյ: «Եւ գորս միանգամ³ գտանիցէք, կոչեցէք ի հարսանիսս». զի հասարակաց եղել շնորհ մարդասիրութեանն Քրիստոսի՝ հրէից եւ հեթանոսաց եւ բարբարոսաց, որով կարի ինն կսկծեցուցանէր զհրէայսն, զի քան ընդ քաղաքին կործանումն ընդ մուտն հեթանոսաց մորմոքէին, իսկ «կոչել»-ն զհաւատովն ձգելն ի Նա նշանակէ:

Եւ ելեալ ծառայքն ի ճանապարհս՝ եւ ժողովեցին զամենեսեան զոր եւ գտին՝ զչարս եւ զբարիս, եւ լցան հարսանիքն բազմականօք (ԻԲ 10):

Չսփռել աշակերտացն ասէ, որք ճանապարհորդեցին ընդ ուրրոս տիեզերաց եւ ժողովեցին ի փարախս հաւատոյ զբնաւ ազգս մարդկան, զորս գտին, այսինքն՝ որք հաւատացին յանուն Նորա եւ ի կորստական գործոցն ի գիտն ժամանեցին: Իսկ զի՞նչ այն թէ՛ «զչարս եւ զբարիս»: Չարք՝ որ կարի կռամոլքն էին եւ կախարդասարքն եւ այլ եւս օճրագործքն, որպէս զի զչարութիւնն մոռացին եւ հանդերձ հարսանեաց զզեցցին, եւ կերակուրս աստուածայինս⁴ ունիցին: Իսկ բարի՝ որք մեղմագոյնք էին ի չարիս կամ որք բնութեամբ զօրինացն գործէին: «Եւ լցան հարսանիքն⁵

¹ Զ թէ

² Ղուկ. ԺԴ 21

³ Զ > միանգամ

⁴ Տ աստուածային

⁵ Զ ~ հարսանիքն լցան

բազմականօք»։ Ղուկաս «տունն» ասե՛¹, որ զաշխարհս նշանակե լցեալ հաւատացելովք՝ ըստ այնմ. «Քարոզեսցի աւետարանս ընդ ամենայն երկիր» (հմմտ. Մատթ. ԻԴ 14), կամ թէ զայն թէ՛ «Ի տան Հօր Իմոյ օթեվանք բազումք են» (Յովհ. ԺԴ 2)։ Իսկ Մատթէոս, զի զհարսանիսն ասէ լնուլ, զի հարսանիք ուսաք զԲանին խառնումն առ մարմնոյն միութիւն, որ եղև գլուխ Եկեղեցոյ, եւ Եկեղեցի սուրբ յօղմամբ հաւատոյ միացաւ ի Գլուխն իւր, որով լրացաւ մարմին Նորա բազում անդամօք, յորմէ եւ ի Գլխոյ անտի աճէ զաճումն իւր սուրբ՝ լցեալ շնորհօք Նորա։ Այլեւ զտեղի անկելոյն լցին զհարսնարանն վերին բազմականքն ի սեղանն Հօր, որպէս ասաց։

Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականօքն՝ ետես անդ այր մի, որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց (ԻԲ 11)։

Թէպէտ զայս վասն առակին յօդացուցանէ, սակայն հաւատամբ ճշմարտապէս ընդ մեզ լինել՝ ըստ Իւր իսկ ասիցն թէ՛ «Ընդ ձեզ եմ զամենայն ատուրս կենաց» (հմմտ. Մատթ. ԻԸ 20), եւ թէ՛ «Ուր երկու եւ երեք ժողովեալ են յանուն Իմ, անդ եմ Ես ի մէջ նոցա» (Մատթ. ԺԸ 20)։ Արդ՝ նախ քան զուրախութեանն վայելս՝ մտանէ դիտել՝ ո՛վ արժանաւոր իցէ ուրախութեանն եւ ո՛վ ոչ։ «Ետես անդ այր մի,- ասէ,- որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց»։ Չայս կամ [վասն] հերձուածողացն ասէ, որք թէպէտ եկին ի հաւատս, սակայն չար աղանդոցն որոմամբ ներկեցին զանձինս, վասն զի զհանդերձ հարսանեաց Փեսային, այսինքն զմարմին Բանին, զոր զինուորքն ոչ պատառեցին, սքա պատառեալ յանձնէ ի բաց ձգեցին պէսպէս հերձուածովք, զի ոմն երկու որդիս ասաց, եւ ոմն ի յերկնից բերեալ զմարմինն, եւ այլք ի Մարիամայ զսկիզբն մուծին, եւ կէսք շփոթումն բնութեանցն տուին, եւ այսպէս մերկք եւ խայտառակք մնացին, եւ զի թէպէտ հակառակք աղանդօք վարեցան, բայց յամբարշտութիւնն հաւասարք գտան, վասն այսորիկ իբրեւ զմի այր ասաց։ Կամ վասն զործոց ասէ զայս, զի բազումք հաւատացին, բայց վարս անարժանս հաւատոյն ցուցին, քանզի այնպիսեացն եւ հաւատն իսկ առանց զործոց մեռեալ է։ Արդ՝ զի մի՛ ի հաւատս միայն ասպաստան լիցին, զիրս դատաս-

¹ Ղուկ. ԺԴ 24

տանին ի մէջ բերէ, որ վասն չար գործոցն լինելոց է, զի ո՛չ ասաց, թէ չունէր հանդերձ, այլ թէ՛ հարսանեաց ոչ ունէր:

Քանզի հանդերձ երկու գիտեմք հոգւոյ. մի՛ գառաքինութեանն ծածկոյթ, որ պանծալի զգգեցողն ցուցանէ, որպէս Ինքն զգեցաւ Բանն հանդերձ մարմնովն, զարդարութիւն ասեմ եւ զայլ առաքինութիւնն, եւ միւս՝ զչարութեանն թօռոպ, որ նախատելի ցուցանէ որպէս զՅուդաս, որ փոխանակ օրհնութեանն հանդերձի, զոր մաքրութիւնն շնորհէ, զանէծս զգեցաւ իբրեւ¹ զհանդերձ, զոր չարութիւնքն ընծենեցին եւ տարագիր ի հարսանեաց Փեսային արարին եւ ի բազմականացն աթոռակցութենէ մերժեցին: Իսկ թէ որ ասիցէ՝ է՞ր վասն այսպիսի ճշդի զհանդերձս պահանջէ, ասասցուք, թէ կոչել եւ սրբել, եւ այն՝ զոչ արժանատրս, ըստ շնորհացն է, եւ շնորհ միանգամ է, իսկ սուրբ եւ մաքուր պահել զհանդերձս այն կոչնականացն է եւ երախտեացն եւ երախտիս հատուցանողացն, քանզի ոչ է պարտ այնչափ չարիս ցուցանել յետ այնպիսի պատուոյ: Չի որպէս նոքա ոչ գոլովն թշնամանեցին, նոյնպէս եւ դու, յորժամ աղտեղի հանդերձիք եւ անսրբական վարուք աստի անդր երթիցես, մանաւանդ զի նա ոչ գիտէր զաղտեղի պատմուճանն անարժանս գոլ հարսանեաց, իսկ դու ուսար եւ վարդապետեցար:

Բայց են ոմանք, որ «հանդերձ հարսանեաց» զմկրտութիւնն ասեն՝ ըստ առաքելոյ թէ՛ «Որք ի Քրիստոս մկրտեցայք², զՔրիստոս զգեցեալ էք» (Գաղ. Գ 27): Արդ ասէ՛ թէպէտ բազում ազգք ի պէսպէս պատճառս ճանաչեցին զԱստուած, բայց որք զգգեստ անապականութեան կնքոյն եւ զծածկոյթ ամօթոյ մերկութեանն ոչ առին, ո՛չ են ժառանգելոց զարքայութիւնն Աստուծոյ ըստ Տեառն, թէպէտեւ բազում գործս բարութեան յանձինս³ ցուցանեն, զի այնպիսիք կուրացեալք անձամբ՝ ո՛չ ի փառս Աստուծոյ, այլ ի փառս անձին առնիցեն զայն, ի դէպ ելցէ նոցա բանն թէ՛ «Այն իսկ են վարձք նոցա» (Մատթ. Զ 2):

Եւ ասէ ցնա. «Ընկէ՛ր, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց». եւ նա պապանձեցաւ (ԻԲ 12):

¹ Զ իբր

² Զ մկրտեցարուք

³ Տ յանձին

Այսինքն հակառակ կրօնից եւ օրինաց Իմոց՝ զիա՞րդ իշխեցեր մտանել. ո՛չ զչարութիւն եւ զամբարշտութիւնն մերկացեալ, այլ տակաւին զգեցեալ ունիս, այսինքն նենգութեամբ եւ խորամանկութեամբ եւ անաստուածութեամբ մտեր՝ ոչինչ զգենլով ի պատուիրանացն, որ զառաքինութիւնն բազմատեսակս անկանէ, զի թէ անլուայ ոտիք եւ առանց լոգարանաց ոչ մտանէին ի բակս մեհենիցն, քանի՛ աւելի ի տէրունեանն ընթրիս: Լուիցեն զայս՝ որք ի խորհրդական Սեղանն մատչին աղտեղի հանդերձիք, քանզի նոյն բան ահաւոր է անարժանիցն, վասն որոյ պարտ է ակնածել ի Մարդասիրէն, որ կոչեացն, եւ այն՝ ի «ճանապարհացն անցից», եւ զպատմութեանս հոգւոյն լուանալ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ, եւ զարդարել զանձինս առաքինութեամբ, եւ ապա՛ ի Սեղանն մատչել, ուր հրեշտակք են բազմեալ պայծառ հանդերձիք, որպէս ի խաչին եւ ի գերեզման Փրկչին յայտնապէս տեսին, քանզի ճշմարտապէս խաչին է խորհուրդ, եւ գերեզմանին նշանակ:

«Եւ նա պապանձեցաւ», - ասէ. որպէս Չաքարիաս, ոչ հաւատացեալ բանից հրեշտակին, եղեւ համբ եւ կայր պապանձեալ¹, նոյնպէս եւ այրս այս, անհաւատ եղեալ պատուիրանաց Փրկչին, եւ անմաքուր վարուք սպասաւորէ երկնաւոր հացին, պապանձի, զի ոչ ունի պատասխանի: Իսկ նորա այն նշանի վասն, իսկ սորա՛ յաղագս պատժոց, վասն որոյ նորայն լուծաւ, իսկ սորայն ե՛ւս պնդեցաւ, քանզի ո՛չ գոյ այլ ինչ, որ կարկեցուցանէ զբերան եւ կապէ զձեռս եւ զոտս, որպէս մեղացն շղթայք՝ ըստ այնմ. «Ի գործս ձեռաց իրեանց կապեսցին մեղաւորք»² (Մաղմ. Թ՝ 17), որպէս ցուցանէ:

Յայնժամ ասէ թագաւորն ցապասաւորսն. «Կապեցէ՞ք զորոս զոտս եւ զձեռս³ եւ հանէք զդա՛⁴ ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց» (ԻԲ 13):

Տեսանե՞ս, զի ո՛չ յառաջագոյն տանջէ, մինչեւ ինքն, որ մեղաւն, զվճիռն իւր հատանիցէ: Քանզի յորժամ պապանձեցաւ, ապա՛ «ասէ թագաւորն ցապասաւորսն»: Յորժամ զբարիսն շնորհէր,

¹ Ղուկ. Ա 20

² > մեղաւորք

³ ~ զձեռս եւ զոտս

⁴ > զդա

Ինքն առանց միջնորդի զխրախոսությունն կազմեաց եւ այժմ ի տանջանս սպասատրոք վարի՝ հրեշտակօք, որպէս զի իմաստութիւն, թէ ի կամացն կեանք են ըստ մարգարէին¹, իսկ ի տանջելն ի մէջ բռնադատի: «Կապեցէք զդորա զոտս եւ զձեռս²»: «ոտք»՝ զզնացս, իսկ «ձեռս»՝ զագողողական զօրութիւնն, զի յորժամ տանջէ Աստուած, այլ ոչ է ժամանակ զործելոյ կամ խորհելոյ աստ, նմանապէս եւ անդ ըստ այնմ. «Գործել ոչ կարենմ, մուրանալ ամաչենմ» (Ղուկ. ԺԶ 3):

Եւ այլ ազգ. կապել ձեռացն եւ ոտիցն զշնորհաց³ առնումն նշանակէ եւ զպատկերին պարգեւն, զոր ետ առաջին եւ վերջին փչմամբն՝ ըստ այնմ թէ՛ «Կտրեցէք զդա ի մէջ» (հմմտ. Մատթ. ԻԳ 51), զի որպէս ի մէջ կտրեալն անշարժ է, այսպէս եւ կապեալն, զի շնորհօք Նորա ենք, զինչ եւ իցենք, զոր ի բաց առեալ զայն զմարդն հանդերձ չարութեամբն խաւարին մատնէ, որպէս ասէ. «Եւ⁴ հանէք զդա ի խաւարն արտաքին, ուր լալ աչացն է, եւ կրճել ատամանց»: Յաղագս սոցա ասացեալ է յառաջագոյն, այլ աստ այնչափ, զի որպէս յաւուրս Նոյի ոչ միայն երարձ զհոգին ի մարդկանէ վասն լինելոյ նոցա մարմին⁵, այլեւ ջրով հեղեղեաց, այսպէս եւ յերկրորդն զալուստ ոչ միայն զԻւրն առնու շնորհս, այլեւ ի խաւարն առաքէ եւ անբուժելի ցաւոցն լալ աչացն եւ կրճել ատամանցն մատնէ: Են ոմանք, որ «խաւար» եւ «ծուխ» եւ «ցուրտ» զբանասարկուն ասեն եւ զդեւսն, վասն զի խաւար է բանասարկուն, որ հալածեցաւ ի լուսոյն եւ ծուխ եղեւ կուրացուցիչ՝ մտաց մերոց, այս է աչացն լալ, եւ ցուրտ՝ կրճել ատամանցն, այսինքն պոռնկութեամբ եւ պէսպէս հայհոյութեամբ ցրտացուցին զմարմինս մեր. նոցա տանջանացն կցորդս առնէ, զորոց զկամսն կատարեցին:

Ձի բազումք են կոչեցեալք, եւ սակաւք են ընտրեալք» (ԻԲ 14):

Հանգոյն (ինձ թուի) ուռկանին առակի ասացեալս, զի որպէս անդ հասարակ ի ծովէն ուռկանեցին եւ յետոյ հանեալ ի ցամաք՝ զբարի բարին յամանս ժողովեցին եւ զխոտանն ի բաց հանին,

¹ Սաղմ. ԻԹ 6

² Զ ~ զձեռս եւ զոտս

³ Զ զշնորհացն

⁴ Զ > եւ

⁵ Ծննդ. Զ 3

այսպէս եւ աստ: Չի թէպէտ ամենեքեան կոչեցան, բայց որք ի վերայ բարի կոչմանն հիման հաւատոյն զբարի գործս շինեցին ոսկի ընտիր եւ ակունս պատուականս¹, յըշտեմարանս երկնից հաւաքեցան եւ առագաստի հարսանեացն արժանաւորք գտան, սակաւքն, որք նեղ ճանապարհաւն ընթացան. իսկ յոլովքն, որք ի լայնն փութացան, արտաքս ի բաց ընկեցան: Յորմէ փրկեսցէ զհաւատացեալսն անուան Իւրոյ Քրիստոսն մեր եւ Աստուած եւ արժանաւորս² արասցէ երկնաւոր առագաստին մաքուր պատմութանաւ մտանել ի հոգեւոր հարսանիսն ընդ բազմելոց անդ արդար հոգւոցն: Որում փառք եւ պատիւ ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից: Ամէն³:

Յայնժամ գնացեալ փարիսեցիքն՝ առին խորհուրդ զՆմանէ, թէ ո՞րպէս դնիցեն Նմա որոգայթ բանիք (ԻԲ 15):

Ո՛չ վայրապար զ«յայնժամ»-ն դնէ աւետարանիչս, այլ զի ցուցցէ, թէ յորժամ ստրջանալ արժան էր ընդ մարդասիրութիւնն եւ երկնչել պարտ էր ի հանդերձելոցն, քանզի եւ ի բանիցն իսկ արդիւնքն հետեւէին, զի մաքսաւորք եւ պռռնիկք հաւատացին, եւ մարգարէք կոտորեցան, յորոց ցածնուլ պարտ էր եւ ոչ հակառակել, նոքա ի չարեացն ոչ յափրանային, այլ եւ եւս⁴ զչարութիւնն երկնէին եւ ընդ այլ ճանապարհ նենգութեամբ գնային՝ ըստ այնմ թէ՛ «Դարանին յափշտակել որ վասն մեր աղքատացաւ, եւ յորոգայթ իւրեանց խոնարհեցուցանել» (հմմտ. Սաղմ. Թ՝ 30): Վասն զի ունել ի ժողովրդենէն երկնչէին, խորհեցան յարքունի իրս վնասակար ցուցանել եւ հռոմայեցւոց իշխանութեանն մատնել:

Եւ առաքեն առ Նա զաշակերտսն իւրեանց հերովդիանուօքն հանդերձ եւ ասեն (ԻԲ 16):

Քանզի հարկատուք էին յայնժամ հռոմայեցւոցն, եւ ընդ նոցա իշխանութեամբն ամենայն իրք նոցա հնազանդեալ էր, եւ զի տեսին, թէ յառաջ քան զայն ժամանակ վասն այսպիսի իրաց մեռան թելաստեանքն եւ յուրայեանքն⁵, որպէս թէ ապստամբութիւն ցու-

¹ Ա Կոր. Գ 12

² Զ զարժանաւոր

³ Զ > յաիտեանս յաիտենից. ամէն

⁴ Զ > եւս

⁵ Գործք Ե 36-37

ցանել կամէին, եւ զնա եւս այնպիսի բանիւք խորհեցան ածել ի նոյն կարծիս: Վասն այնորիկ զհորեանց աշակերտսն եւ զՀերովդէի զօրականսն առաքեցին եւ կրկին կամէին փորել խորխորատ, զի թէ ի Հերովդի կողմն խօսեսցի, նոքա ամբաստան լիցին, եւ թէ ի նոցա կոյս՝ հերովդիանոսքն ոսոխ մտանիցեն, եւ երկոքումքք ջանային զՆա պարտաւորս ցուցանել: Բայց առաւել զայն կամէին, թէ հերովդիանոսացն ընդդէմ լինիցի, վասն զի ի Հերովդէէ՝ էր որք ասէին, թէ չէ պարտ պատերազմել ընդ կայսեր, վասն որոյ եւ զաշակերտսն յեցին, զի յայն կարծիս զՆա գրգռիցեն, որպէս զի մատնեսցեն դատաւորին իբրեւ այր մի ապստամբ յարքունական օրինացն: Չսոյն եւ Ղուկաս ասէ, թէ «առաջի ժողովրդեանն» հարցանէին², զի բազում վկայս կուտեսցեն զՆովա, եւ զայն ոչ գիտէին, թէ ի բազում վկայիցն միջի անմտութիւն նոցա յանդիմանի:

«Վարդապետ, զիտեմք, զի ճշմարիտ ես եւ զճանապարհն Աստուծոյ ճշմարտութեամբ ուսուցանես:»

Եւ զիա՞րդ երբեմն խաբեբայ եւ մոլորեցուցիչ ասէին³ եւ թէ «Չէ՛ դա յԱստուծոյ» (հմմտ. Յովհ. Թ՝ 16), եւ այժմ՝ «ճշմարիտ վարդապետ»: Կամ նենգութեամբ զովէին եւ հանրիւք, զի յօժարեցուցեն ասել, թէ ոչ է պարտ հարկատու լինել կայսեր, որպէս զի մատնեսցեն իշխանութեանն, որպէս ասացաք, կամ ակամայ, որպէս եւ էրն իսկ, վկայէին: Քանզի ասելն թէ՝ «ճշմարիտ ես եւ զճանապարհն Աստուծոյ ճշմարտութեամբ ուսուցանես», նշանակէ, թէ առնես եւ ուսուցանես ի թշնամեացն վկայեալ. իսկ «ճանապարհ» զՕրէնսն ասէին:

Եւ ոչ է Քեզ փոյք զումեքէ:

Եւ այս աստուածութեանն վկայութիւն ըստ այնմ. «Ոչ է ակնառութիւն առաջի Աստուծոյ» (հմմտ. Գործք Ժ 34):

Եւ ոչ հայիս յերեսս մարդոյ:

Դարձեալ եւ այս զնոյն ունի դիտաւորութիւն ըստ այնմ. «Մարդ յերեսս հայի, եւ Աստուած՝ ի սիրտս» (Ա Թագ. ԺԶ 7): Բայց նոքա ի դէմս Հերովդի եւ կայսեր ասացին, զի ոչ ակն առնես

¹ Զ Հերովդէ

² Ղուկ. Ի՝ 26

³ Մատթ. ԻԷ 63

վասն թագաւորական յօնիցն եւ ոչ երկնչիս վասն տկար բնութեանն, քանզի մարդիկ են:

Արդ ասա՛ մեզ, զհա՞րդ թուի Քեզ, պա՞րտ է մեզ հարկս տալ կայսեր, թէ ոչ» (ԻԲ 17):

Յիրաւի՛ ասաց Քրիստոս, թէ «ի յաւերտածոյ սրտի խօսի բերանն» (Մատթ. ԺԲ 34), եւ զի չարութեամբ փղծկեալք էին բերանն յայտնեաց, զի ո՛չ ասացին «հրամայեա մեզ», այլ թէ «ասա՛ մեզ», եւ ո՛չ զայն թէ՛ ո՞ր է լաւ կամ շահաւոր կամ օրինաւոր, այլ թէ՛ «զհա՞րդ թուի քեզ»: Քանզի կարծէին վասն Նորա, թէ յափշտակել կամի զարքայութիւնն Իսրայէլի, զի Որդի Դաւթի կարդային զՆա, ասէին զայս թէ՛ քեզ ո՞րպէս թուի, քանզի շահն քո՛ առաւել քան մեր, որպէս զի մատնել կարասցեն, թէ պատերազմ ընդ իշխանին ունիցի: «Պա՞րտ է մեզ հարկս տալ կայսեր, թէ ոչ». որպէս ասացաք, յերկոցունց ըմբռնել կամեցան, զի թէ ասիցէ՛ ոչ, ըստ օրինացն մատնեցեն զնա Պիղատոսի եւ Հերովդէի՛ սպանանել, զի ո՛չ զոչ տալն կամէին, այլ զմահն Նորա խնդրէին, իսկ թէ ասիցէ՛ պարտ իցէ հարկել, ասիցեն ցժողովորդն տեսանէ՞ք՝ ո՞րպէս քակէ զկրօնս հայրենիս եւ հրամայէ հարկս տալ հեթանոսաց, եւ այնու զժողովորդն ի վերայ Նորա շարժեցեն:

Գիտաց Յիսուս զխորամանկութիւնն նոցա եւ ասէ. «Ձի՞ փորձէք զԻս, կեղծաւորք (ԻԲ 18):

Յարմար անուն եղ նոցա՛ «կեղծաւորս» կոչելով, զի չարք էին եւ բարիք ձեւանային, մատնիչք Նմին եւ զովիչք երեւէին, վասն այսորիկ զայրագին ցասմամբ առանց ակնառութեան յանդիմանէ, որպէս զի զասացեալն ի նոցանէ, թէ «ոչ հայիս յերեսս մարդոյ» ստուգեցէ, միանգամայն եւ զնոսա յայնց բարուց շիջուցանէ, զի մի՛ զբազումս ասպականեցեն: Իսկ ասելն թէ՛ «Ձի՞ փորձէք զԻս», եւ զիտելն զխորամանկութիւնն եցոյց թէ Աստուած է, քանզի գրեալ է յՕրէնսն թէ՛ «Մի՛ փորձեցես զՏէր Աստուած քո» (Բ Օր. 2 16):

Յուցէ՛ք Ինձ զդահեկան հարկին»: Եւ նոքա մատուցին Նմա դահեկան մի (ԻԲ 19):

Եւ ասէ ցնոսա. «Ո՞րն է պատկերս այս կամ զիր» (ԻԲ 20):

Ասեն՝ կայսեր (21):

Ո՛չ իբրև զանգեղանա խնդրէր զդահեկանն եւ կամ հարցանէր, այլ կամի իրեանց պատասխանեօքն¹ զնոսա ըմբռնել, որպէս միշտ առնէր, զի լցցի թէ՛ «Որ ըմբռնէ զիմաստունս ի խորամանկութեան իրեանց» (հմմտ. Ա Կոր. Գ 19, Յոր Ե 13), վասն այսորիկ ասէ՝ բերէք զդահեկանն, եւ նոքա բերին: «Ասէ ցնոսա. «Ո՞յր է պատկերս այս կամ զիր»»: Յայնժամ սովորութիւն էր թագաւորացն զիրեանց պատկեր դրոշմել եւ զանունն գրել ի դահեկանսն, վասն զի յՕգոստոսէ սկսեալ հարկս տային ըստ զլիտոյ, որ գրեաց զնոսա յաշխարհագիրն², զոր տեսեալ ասաց. «Ո՞յր է պատկերս այս կամ զիր». նոքա ասեն կայսեր»: Արդ՝ եթէ կայսեր է, ասպա ուրեմն ընդ հեթանոսաց ձեռօքն նուաճեալ էք վասն արհամարհելոյն զճշմարտութիւնն:

Յայնժամ ասէ ցնոսա. «Երթայք տուք զկայսեր՝ կայսեր եւ զԱստուծոյն[ն]՝ Աստուծոյ»:

Որպէս վկայեցէք, ասէ, կայսեր զոյ զարծաթն, երթայք հատուցէք, քանզի չէ՛ ինչ զայն տալ, այլ հատուցանել, ի պատկերէն իսկ յայտ է եւ ի շուրջանակի գրոյն: Արդ՝ մարթ է եւ զմարդկանն հատուցանել ըստ այնմ. «Հատուցէք ամենայնի, որում զպարտս՝ զպարտս, որում զերկիւղ՝ զերկիւղ» (հմմտ. Հռոմ. ԺԳ 7), քանզի տիրելովն կայսեր ի վերայ ձեր՝ զանձնից, այլ ո՛չ խորհրդոց եւ հաւատոց, նոքա հայցուածքն ի ձէնց: Եւ զի մի՛ ասիցեն թէ՛ մարդկան վտարանդիս ետուր զմեզ, յարէ ի նոյն թէ՛ «զԱստուծոյն Աստուծոյ», այսինքն դուք պատկեր Աստուծոյ էք, որպէս արծաթն կայսեր. արդ՝ հանգոյն արծաթոյն, ասէ, զոր կայսերն ձեռօք, զպատկերդ Աստուծոյ՝ զհաւատս եւ զգործս, որ հոգւոյ եւ մտաց է ծնունդ, սկզբնատպին Աստուծոյ՝ ընծայեցէք: Եւ դարձեալ զի կարծէին, թէ պատասխանէ մեզ մի՛ ինչ տալ կայսեր, իսկ Փրկիչն ո՛չ միայն կարծեաց նոցա ընդդէմ վարդապետեաց, զի ցուցցէ, թէ ուսումն Նորա ճշմարիտ է եւ զկեանս մարդկան կամի, այլեւ զեղեցիկ իմն իմաստս աւանդեաց, թէ մարդ յերկուց է՝ ի հոգւոյ եւ ի մարմնոյ, եւ ըստ այնմ՝ երկուց տերանց ի ծառայութիւն կայ՝ Աստուծոյ եւ թագաւորաց իշխանութեանց, որք ի Նմանէ բռնացան՝ ըստ Պօղոսի եւ ըստ Սողոմոնի³: Արդ՝ ըստ մարմնոյ թագաւորաց՝ ծառայեցէք,

¹ Զ պատասխանօքն

² Ղուկ. Բ 1

³ Հռոմ. ԺԳ 1-7, Առակ. ԻԴ 21

որք յերկիւղ չարեաց են եւ ո՛չ բարեաց կարգեալք յԱստուծոյ¹, իսկ ըստ հոգւոյ աստուածայաշտութեամբ՝ Աստուծոյ: Ապա ուրեմն յայտ եղեւ, թէ սատանայ ոչինչ է, եւ ո՛չ պարտիմք նմա ծառայութիւն:

Իբրեւ լուան, զարմացան եւ թողին զՆա եւ զնացին (ԻԲ 22):

Չո՞ր՞ լուան. յայտ է, թէ զվարդապետութիւնն, քանզի զաստուածութեանն Իրոյ զհանդէսն եցոյց՝ զծածուկս սրտից նոցա յայտնելով, վասն այսորիկ զարմացան իբրեւ ընդ նորագոյն եւ ընդ չքնաղ գիտութիւն, բայց հաւատացին եւ ո՛չ երբէք, այլ «թողին զՆա եւ զնացին»: Քանզի վասն այնորիկ եկին, զի բանս գտանելով ի Նա՝ ընթրնեսցեն, եւ զի ոչ գտին զպատճառն, ըստ որում յուսային, ակնակորեալ ի բաց զնացին, որ յոյժ պարտութեան նշանակ է:

Յայնմ աւոր մատեան առ Նա սաղմուկեցիքն, որ ասէին, թէ չիք յարութիւն (ԻԲ 23):

Սաղմուկեցիքն ազգ էին աղանդաւորք՝ հերձուածուլք ճեղքեալ ի մէջ հրէիցն ի Սաղովկայ սկսեալ, որպէս եւ սամարացիքն, որք ոչ խոստովանէին հրեշտակս զոլ եւ ոչ հաւատային յարութեան եւ ոչ հոգւոց անմահութեան: Իսկ այլք ասեն, թէ սաղմուկեցիքն արդարք եւ առանձնականք ասին, որպէս փարիսեցիքն եւ նազորեցիքն, որք ասէին թէ՛ «Ո՛չ վարձիւք պաշտենք զԱստուած»: Արդ՝ այժմ սոքա մատեան պատրողական բանիւք ի փորձութիւն, քանզի կարի անամօք եւ լիւրք է յանդգնութիւն, այլեւ անմիտ, զի յորժամ զնոսա պապանձեալս տեսին եւ զչարագործութիւնս նոցա յանդիմանեալս, որոց պարտ էր կաղ ի կաղս մատչել, նոքա յառաջ վազեցին, ընդ որս զարմանայ աւետարանիչս թէ՛ «յայնմ աւոր»: Եւ զի կարի թանձրամիտք էին եւ միայն զմարմնականօքս եւեթ գային սերմանեալք ի վիմէ եւ ի կաղնոյ, նման շնականացն, որք զամենայն մարմին ենթառնէին, նոյնպէս եւ սոքա ոչ յարութիւն եւ ոչ հոգի դաւանէին, որպէս զի անխտիր ի մեղս բերէին: Ասէին զայս:

¹ Զոռն. ԺԳ 3

² Տ զո՞

Հարցին ցՆա եւ ասեն. «Վարդապետ, Մովսէս ասաց՝ եթէ ոք մեռցի¹ անորդի, արասցէ զկին նորա եղբայր իւր եւ յարուցէ զաւակ եղբոր իւրում (ԻԲ 24):

Յոյժ խորամանկք երեւին, զի ոչ յայտնի հարցին զյարութենէն, այլ զՄոսէս ի մէջ բերեն, թէ նա՛ ասաց, եթէ ուրուք եղբայր անորդի մեռանիցի, արասցէ զկին նորա եղբայր իւր եւ յարուցէ զաւակ եղբոր իւրում²: Իբր թէ ի նմանէ է յարութեանն քան խտտան, եւ ի կենցաղս ա՛յս խոստովանի զյարութիւնն, զի որդի փոխանակ հօր յառնէ՝ յայտ է: Արդ եթէ ոք անորդի մեռանի, առցէ զկին նորա եղբայր իւր եւ ի կնոջէ եղբոր իւրոյ յարուցէ զաւակ յանուն նորա, զի մի՛ անյիշատակ մնասցէ եղբայրն իւր:

Էին առ մեզ եղբարք եօթն. առաջինն արար կին եւ մեռաւ, եւ զի ոչ ունէր զաւակ, եթող զկինն իւր՝ եղբոր իւրում (ԻԲ 25):

Նոյնպէս եւ երկրորդն եւ երրորդն, մինչեւ ցեօթներորդն (ԻԲ 26):

Յետ ամենեցուն մեռաւ եւ կինն (ԻԲ 27):

Արդ՝ ի յարութեանն ո՞ր յեօթանցն³ եղիցի նա կին, զի ամենեքին կալան զնա կին» (ԻԲ 28):

Յորժամ զՄոսիսին⁴ ասացին, ապա եւ զհորեանցն մեղմով յառաջ բերին, եւ զայս ոչ ճշմարիտս գոյ, որպէս ասէ սուրբ հայրն Յովհան Ոսկեբերան, այլ իրս յօդուածոյս եւ քանս կարկատունս, որ բնաւ ոչ էր լեալ, ասէին, որպէս զի զՆա ի տարակոյս արկանիցեն եւ զյարութիւնն խոտան ցուցցեն: Եօթն եղբարք էին եւ ամենեքեան զմի կինն առին, որ ինձ յոյժ սուտ թուի, զի թպէտ օրէնք էր ի Մոսիսէ կարգեալ՝ առնուլ զկին եղբոր իւրոյ, քայց ոչ եօթներին⁵, որպէս ասացին: Չի յորժամ զերկուս փեսայս մեռեալ տեսանէին⁶, յերրորդն ոչ մտաբերէին, եւ ոչ ի չորրորդն կամ ի հինգերորդն բնաւ, քանզի վատատոհմի⁷ եւ վատաշնորհ զկինն համարելով ոչ երբէք մերձենային: Չի այնպիսի էր ազգն հրէից, որպէս յայտ է ի Հռութայ իրացն եւ ի Թամարայ. քանզի յորժամ մեռա-

¹ Զ մեռանիցի

² Բ Օր. ԻԵ 5-10

³ Զ յեօթանցն

⁴ Զ զՄօսեսին (այսպէս է և այլուր):

⁵ Զ եւթներին

⁶ Տ տեսեալն էին

⁷ Զ վատն միի

նէր¹ եւ Օնան, Մելլովմ ի բաց եկաց ի նմանէ, մինչ զի ի սկեսրայրէն հնարեցաւ գողանալ զսերմն², եւ Հռութ առ հեռաւոր ազգականան թաւալեցաւ³. զի թէ այժմ խոտեն, քանի՛ առաւել յայնժամ: Ապա ընդէ՞ր ոչ յօդեցին երիս միայն, այլ եօթն կցեցին: Չի այնու աւելի՛ իմն կամէին զյարութիւնն այպանել եւ երկու կողմամբք զՆա ըմբռնել՝ ասելովն, թէ ամենեքին անցին ընդ կիսն, զի թէ հարկիցի եւ ասիցէ ոչ զոլ յարութիւն, յանդիմանեցեն զՆա՝ ասելով՝ ապա ընդէ՞ր իսկ Դու քարոզես զոչ զոյն, իսկ թէ ասիցէ յարութիւն լինել, ասիցեն զհա՞րդ մի կիսն հասարակաց լիցի ի յարութեանն, որ եւ ոչ աշխարհիս այս վայելուչ է օրէնք, թող թէ այնմ աշխարհի. եւ այսպէս անլուծանելի կացցէ հարցուածն, որպէս զի դադարեցուցեն զճառս յարութեանն, զոր վարդապետէր: Բայց մեք գտաք ի գիրս Տուրիթն կոչեցեալ, թէ ասաց ճանապարհորդ հրեշտակի իւրոյ, որ խօսէր զդուստր Հռաքուելի զՄատա Տուրիթ⁴ որդոյ Տուրիթայ ի կնութիւն, թէ «Լուեալ է իմ, եղբայր Ազարիա, թէ եօթն այր առեալ է աղջիկն, երկնչիմ՝ զուցէ եւ ես մեռանիցիմ» (հմմտ. Տուր. Չ 14-15). թուի թէ՛ զայս զհտելով սաղմուկեցիքն ի մէջ ամէն:

Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. «Մոլորեալք, ո՛չ գիտէք զԳիրս եւ ոչ զգորութիւնն Աստուծոյ (ԻԲ 29):

Այնմ ոչ ընդդիմանայ, թէ եօթնեքին զհարդ կալան զնա կիսն, զի կամ յայտնապէս սուտ էր, որպէս ցուցաւ, կամ պատահմամբ էր եղեալն: Իսկ յարութեան բանին, զի ասեն թէ ոչ է, եւ թէ է՝ ըստ մարմնոյ օրինակի է, երկոցուն կարծեացս պատասխան առնէ եւ ցուցանէ, թէ է յարութիւն, եւ ո՛չ այնպէս, որպէս դուք կարծէք: Վասն այսորիկ ասէ. «Մոլորեալք, ո՛չ գիտէք զԳիրս եւ ոչ զգորութիւնն Աստուծոյ», այսինքն՝ ի Գրոց անտի խօսիք՝ փորձելով զԻս, եւ բնաւ ոչ էք տեղեակ նմին, նա եւ ոչ զօրութեանն Աստուծոյ, զորոյ այնչափ զփորձ առէք. ապա ուրեմն չեն ինչ զարմանք, եթէ փորձէք զԻս, որ ոչ ճանաչիմս ի ձեզ: Բայց զի՞նչ քարոզեն Գիրք, զորս ոչ գիտէին. այն իսկ է, զոր ասէ ըստ կարգի թէ՛ «Ես եմ Աստուած Աբրահամու եւ Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակոբ»

¹ ՏՁ մեռան, էր

² Օննդ. ԼԸ

³ Գողութ Գ

⁴ Չ Տուրիլ

բայ» (հմմտ. Ելք Գ 6): Արդ թե զհտեին զայս, սպա անմահ զհոգիս նոցա եւ զյարութիւնն խոստովանէին, իսկ զօրութիւն Աստուծոյ կամ մեկնութիւնն, որ ի Գիրս կայր, յորս նոքա ի բանս միայն, այլ ոչ ի զօրութիւնն հայէին, որպէս զայն զի ասէ թէ «Ես սպանանեմ եւ Ես կեցուցանեմ» (Բ Օր. ԼԲ 39), որ յայտնապէս զյարութիւնն քարոզէ, զի ոչ ասաց թէ «Ես կեցուցանեմ եւ Ես սպանանեմ», այլ նախ՝ սպանանեմ, եւ սպա՝ կեցուցանեմ: Կամ՝ Այն, զի զոչ զոյն զոյացուցանել կարող էր, զզոյն կենդանացուցանել ընդէ՞ր անկարանայ: Եւ կամ այս է զօրութիւնն, որ ասէ զկնի, որում ոչ էին զհտակը:

Ձի ի յարութեանն ոչ կանայս առնեն եւ ոչ արանց լինին, այլ են իբրեւ զհրեշտակս յերկինս¹ (ԻԲ 30):

Այս այն է, զի ցուցանէ, թէ ի յարութեանն ոչ լինին որպէս այժմ են, եւ զայս պատկանաւոր յօրինուածով, քանզի որովհետեւ մահկանացու ենք, յիրաւի կանայս առնեն եւ արանց լինին ըստ Մոսիսի² օրինադրութեանն, զի մի՛ ոչ ծնանելովն մահն որ տիրեալ է ի վերայ բառնայցէ զմարդկային բնութեանս սահման, եւ չարին մախանքն յառաջ զայցեն, ըստ որում պատրեաց զնախաստեղծն. վասն այսորիկ պէտք են որդեծնութեան: Իսկ ի յարութեան մեռելոց ոչ կանայս առնեն արք, եւ ոչ արանց լինին կանայք, այլ են իբրեւ զհրեշտակս յերկինս, զորոց Ղուկաս ասէ, թէ իբրեւ «որդիք Աստուծոյ, զի յարութեան որդիք են» (Ղուկ. Ի 36), զի զախտս եւ զցանկութիւնս ի գերեզմանս թողուն եւ հաւասարք հրեշտակաց՝ անմահք յառնեն եւ փառաւորին իբրեւ զնոսա յերկինս: Արդ՝ եթէ ոչ ամուսնանան, սպա ընդ վայր է հարցուածդ ձեր, քանզի իբրեւ զհրեշտակս են, եւ ոչ զի չամուսնանան, վասն այնորիկ հրեշտակք են, այլ քանզի իբրեւ զհրեշտակս են, յայն սակս չամուսնանան, վասն զի եւ ոչ նոքա:

Դարձեալ լսի այսպէս, թէ «են իբրեւ զհրեշտակս յերկինս». ոչ միայն անամուսնութեամբն իբրեւ զհրեշտակս լինին, այլեւ ոչ յայլ չարիս խոտորիլ կարեն, քանզի զհրեշտակս թէպէտ ոմանք դժուարաշարժս ի չարիս ասացին, բայց ես ամենեւին անշարժս ասեմ, քանզի չար ոչ այլ ինչ է, քան թէ հեռանալ յԱստուծոյ: Իսկ նոքա

¹ Զ ի յերկինս

² Զ Մոսէսի

վասն այն ոչ կարեն գործել զչար, զի միշտ հային յերեսս Աստուծոյ, որպէս եւ Տէրն ասաց թէ՛ «Հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս» (Մատթ. ԺԸ 10), եւ ի հանապազ հայելն՝ զբարւոյն Աստուծոյ զտիպ յանձինս բերեն, եւ ի բարւոյն Աստուծոյ լրմանէ՛ եռան ի սէրն Աստուծոյ եւ անյազ մնալով ի նոյն ոչ երբէք ի չարիս միտեն, որպէս երբեմն Ադամ, որքան հայէր յԱստուած: Արդ՝ զայս խոստանայ եւ այժմ ի յարութեանն լինել, որպէս զի ոչ միայն չառնեն կանայս, այլ զի եւ անկարելի լիցի նոցա երբէք յաղտելի ցանկութիւնս շարժել՝ զմայլեալք ի տեսութենէն Աստուծոյ:

Բայց վասն յարութեան մեռելոց չիցէ՞ ընթերցեալ զասացեալն ձեզ յԱստուծոյ (ԻԲ 31).

«Ես եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ եւ¹ Աստուած Յակոբայ, եւ չէ՛ Աստուած՝ Աստուած մեռելոց, այլ կենդանեաց» (ԻԲ 32):

Այս միւս պատասխանն, թէ ստուգապէս յառնեն ի նոյն Մովսիսիւ² ըմբերանելով զնոսա՝ զոր նոքա ի մէջ բերէին³, եւ զի ասէ թէ՛ «չէ Աստուած Աստուած մեռելոց, այլ կենդանեաց», այսինքն ոչ եթէ չէիցն իցէ Աստուած, որ ապականեալ են եւ չիցեն յառնելոց, այլ արդարեւ էիցն, որ կենդանիք են Աստուծոյ: Վասն այսորիկ ոչ ասաց թէ՛ «էի Աստուած Աբրահամու», այլ թէ՛ եմ, քանզի կենդանիք են Նմա, թէպէտեւ մեռեալ իցեն: Որպէս Ադամ յետ պտղոյն յանցանաց ի մեռելոց համարի էր, թէպէտեւ կենդանի էր վասն վճռին, նոյնպէս եւ նոքա կենդանիք են ւաւտեօք յարութեանն, որպէս յաշխարհի՝ արդարութեամբն, թէպէտ մեռեալք են մարմնով, որպէս յերկրի՝ մեղացն: Հանգոյն այսմ եւ Պօղոս գրէ թէ՛ «Մեռաւ եւ եկ[ե]լաց Քրիստոս, զի մեռելոց եւ կենդանեաց առ հասարակ տիրեսցէ» (Հռոմ. ԺԴ 9), որ հաւասար կենդանեացն Նմա կենդանիք մեռեալքն համարեալ են: Դարձեալ՝ եռակի զԱստուած անունն յիշելով՝ զերիս անձնատրութիւնն Հօր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյն ծանուցանէ: Իսկ ասելովն թէ՛ «չէ Աստուած Աստուած մեռելոց, այլ կենդանեաց», ի շաստուածոցն զմի բնութիւնն որոշէ, որք մեռելոցն հոգւով «աստուած» կոչեցան, այլ Նա միաստուա-

¹ Զ > եւ

² Զ Մոսէս

³ Եւր Գ 6

ծութիւն յերիս դէմս բաժանեալ կենդանեաց է Աստուած, արդար հոգւոց ստեղծիչ եւ նախախնամիչ:

Իբրեւ լուան ժողովուրդքն, զարմանային ընդ վարդապետութիւն Նորա (ԻԲ 33):

Ժողովուրդքն, ասէ, զարմացան եւ ոչ սաղուկեցիքն, զի նոքա գնացին պապանձեալ եւ օգուտ ինչ ոչ տանէին, զի այնպիսի է հերձուածոցն ախտ եւ ոչ տայ թոյլ զխոնարհութեամբն զալ եւ հաւանիլ ճշմարտութեանն, այլ անհաւանութեամբն զանձն ուղիղ կարծէ եւ ընդ մոլարն ընթանայ՝ կամ տգիտութեամբ, կամ հպարտութեամբ: Իսկ հաւանօղ հոգիքն, որք խոնարհամիտք էին եւ իմացան զճշմարտութիւնն, զարմացան ընդ վարդապետութիւնն եւ մեծամեծս շահեցան, զի այնպիսի ազոյղ է յարութիւնն, մանաւանդ զօրութիւնն Քրիստոսի, որ զնոյն աւետարանէր, որում փառք յախտեանս յախտենից: Ամէն:

Իսկ փարիսեցիքն իբրեւ լուան, եթէ պապանձեցոյց զսաղուկեցիսն, ժողովեցան ի միասին (ԻԲ 34):

Չփարիսեցիքս ոմանք ի Փարեսայ ասեն Յուդայեան, եւ եկեալ մտեալ ընդ կրօնիք Օրինացն սպասաւորէին ի Տաճարին՝ անմեկնելի գոյով միշտ, վասն որոյ յանձինս պանծային. մի՛ վասն մեծատոհմութեանն, եւ երկրորդ՝ վասն պայծառ վարուցն: Իսկ այլք թէ՛ փարիսեցիսն առանձնական ասի, քանզի յամենայն ցեղէ զային եւ առանձին կեանս ստանային, զատուցեալք ի բազմաց՝ վարուցն պարկեշտութեամբ եւ զգեստուցն խոշորութեամբ, որպէս այժմու կուսանքս, վասն որոյ առաւել յանդգնագոյնք էին քան զայլս յՕրինացն խտրութիւնս, որպէս Պօղոս երբեմն, զի փարիսեցի ուսմամբն մոմէր եւ նախանձայոյց լինելով կրօնիցն ընդդէմ ճշմարտութեանն կազէր. այսպէս եւ սոքա էին: Բայց դու տես զյանդգնութեանն առաւելութիւն, զի մի անգամ առաքեցին զաշակերտսն հերովդիանոսօքն հանդերձ, եւ նոքա պարտեալք դարձան, եւ զկնի սաղուկեցիքն մաքառեցան եւ ի ճշմարտութենէն պապանձեցան, որոց արժան էր ցածնուլ եւ լռել: Իսկ նոքա յաւելին պատերազմ ի վերայ առաջնոյն ժողովելով ի միասին, որպէս զի մի՛ ընդ Նա հակառակեցին. որպէս զի յորժամ յաղթին, առաւել՝ պարտութիւնն ցուցանի:

Եւ եհարց մի ոմն ի նոցանէ զՆա փորձելով եւ ասէ (ԻԲ 35).

«Վարդապետ, ո՞ր պատուիրան մեծ է յՕրէնս» (ԻԲ 36):

Չայրս զայս զրգռեցին յառաջել՝ իբր զնոմիկոս ոմն, այսինքն Օրինաց դպիր, որ եւ մատեալ ի հարցումն՝ տեղեկագոյն գոյով քան զնոսա: «Վարդապետ,- ասէ,- ո՞ր պատուիրան մեծ է յՕրէնս»: Յորժամ յարքունական իրս ոչ կարացին ըմբռնել, յՕրինաց քննութիւնն զան, որպէս զի թէ ոչ տայցէ ըստ հարցման զլուծումն, տգէտս զՆա հրատարակեսցեն ի մէջ ժողովրդեանն: Եւ դարձեալ ոչ ուսանելոյ աղազաւ եհարց, այլ փորձութեամբ, որպէս ասէ ատետարանիչն, որպէս զի այսու պատճառս տալ անձանց, թէ ուղղելոց իցեն զպատուիրանն վասն զԻւր անձն Աստուած ցուցանելոյ:

Եւ Յիսուս ասէ ցՆա. «Միքեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումն եւ յամենայն անձնէ քումն եւ յամենայն մտաց քոց» (ԻԲ 37).

այս է մեծն եւ առաջին պատուիրան (ԻԲ 38):

Յուցանէ երկակի իմն իմաստ՝ քանիս. նախ թէ որպէս Աստուած մեծ է քան զամենայն եւ առաջին է ի բոլոր էքս, այլեւ սկիզբն էիցս եւ պատճառ, նոյնպէս սիրելն զՆա ի բոլոր կամաց առանց քննութեան եւ ոչ բաժանել զանձն յաստուածսիրութիւն եւ յաշխարհասիրութիւն՝ մեծ է եւ առաջին է յՕրէնսն, իբր հիմն եւ արմատ ամենայն բարեաց: Եւ երկրորդն թէ՛ առանց ուսման է այս, իբր լուսոյ խնդալն եւ կենաց բաղձալն, քանզի ի բնութեան կազմածիդ քանդակեալ է կերպարան Սկզբնատպին, վասն զի որպէս դու ունիս սիրտ մարմնական եւ անձն շնչական եւ միտք բանական, եւ նոյնդ ի մի մարդ հանգ առեալ, նոյնպէս եւ է Նա՝ Հայր եւ Որդի եւ Հոգին Սուրբ՝ ի մի բնութիւն կատարեալ, յորմէ իբր ի պատկերէ ի քոյդ կազմածէ բարձրացիս ի Նորայն իմացումն, սիրելով զբաղձալին էից համայն եւ զպէսպէս շնորհացն պարգեւիչ, որով եւ դու լիցիս մեծ, միանգամայն եւ առաջին յօրինատրացն գումարս:

Եւ երկրորդն՝ նման սմին. «Միքեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո» (ԻԲ 39):

Չայս ի յանդիմանութիւն նոցին ասաց, թէ ուստի՛ եկին ի փորձութեան հարցուածս. ո՛չ ի սիրոյ, այլ ի նախանձու մաշեալ: Բայց տեսցուք, թէ զհա՞րդ է երկրորդս նման առաջնոյն: Նախ՝ զի այնմ

ճանապարհ գործէ՝ ըստ Յովհաննու. «Եթէ զեղբայրն, որ տեսանես, ոչ սիրես, զԱստուած, զոր ոչ կարես տեսանել, զի ա՞րդ սիրես» (հմմտ. Ա Յովհ. Դ 20): Եւ երկրորդ՝ զի սէր մարդոյ ոչ տայ մեզ մեղանշել նմա, զի ո՞վ է մարդ, որ յանցանիցէ այնմիկ, զոր սիրիցէ, եւ այս են պատուիրանք սիրոյ Նորա՝ ըստ այնմ. «Եթէ սիրէք զԻս, զպատուիրանս Իմ պահեսցիք» (Յովհ. ԺԴ 15), եւ «Այս են պատուիրանք Իմ՝ զի սիրեսցիք զմիմեանս» (հմմտ. Յովհ. ԺԵ 17): Եւ երրորդ՝ զի մարդ ճշմարիտ պատկեր Աստուծոյ է՝ ըստ գրեցելումն¹, եւ նմանութիւն եւ ոչ նոյնութիւն, այսպէս եւ ընկերին, որ կերպարան Աստուծոյ է, նմանութիւն է առ Աստուած սիրոյն եւ ոչ նոյնութիւն²: Իսկ ասելն՝ «Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո», դիւրին օրէնք եւ ախորժելի ամենայն ումեք, զի անձինդ սեր չասի է, ասէ, ընկերին սիրոյ, նոյնպէս եւ նորայն քոյդ անձին, եւ առնելն կարելի, զի եթէ սիրելի՝ պարտիս զփոխարէնն շնորհել, եւ եթէ թշնամի՝ իբր առ բարեգործ մատչել, ոչ միայն վասն օրինացն, այլեւ իբր զպատճառ վերին կենացն քեզ լինել՝ ըստ այնմ. «Յորժամ ասիցեն զամենայն չար զձեցջ սուտ վասն Իմ, ցնծացէք, զի վարձք ձեր բազում են յերկինս» (հմմտ. Մատթ. Ե 11-12):

Յայս երկուս պատուիրանս ամենայն Օրէնք եւ Մարգարէք կախեալ կան (ԻԲ 40):

Չայս ճշմարիտ ասէ, զի Օրէնք եւ Մարգարէք, որք գրեցան, վասն երկու իրաց գրեցան. մի՝ զի զճշմարիտն Աստուած ծանիցեն հաւատովք, եւ երկրորդ՝ զի ի չարեաց ի բաց կացցեն, զոր Յակոբոս հաւատ եւ գործ ասէ, եւ մինն առանց միւսոյն դատարկ եւ մեռեալ³, եւ Պօղոս «հաւատ սիրով զօրացեալ» գրէ (հմմտ. Գաղ. Ե 6): Եւ այլքն գրեթէ⁴ մասունք են սոցա եւ իբր յարմատոյ ստեղն եւ շառաւիղն արձակեալ եւ զԱստուծոյ է կախեալ, զոր Տէր բառական համարեցաւ զերկուսս զայս միայն դնել իբր զկատարեալս եւ կատարելութեան պատճառ, որպէս երկու թելօք լնուլ զՕրինացն եւ զՄարգարէիցն բան եւ վերաթելել առ Աստուած, աստուածսիրութեամբ ասեմ եւ մարդասիրութեամբ: Եւ զի այս ճշմարիտ է ի հակառակէն ուցիս, որպէս ասէ. «Որ զչարն գործէ,

¹ Ծննդ. Ա 26

² Զ > այսպէս եւ ընկերին... եւ ոչ նոյնութիւն

³ Յակ. Բ 14-20

⁴ ՏԶ գրեթէ (այսպէս է և այլուր):

աստեայ զլոյսն եւ ոչ գայ առ լոյսն» (Յովհ. Գ 20): Եւ դարձեալ Դաւիթ երգէ. «Ասաց անգգամն ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Աստուած, ապականեցան եւ պղծեցան յանօրէնութեան իւրեանց¹» (Մատթ. ԺԳ 1), եւ Պօղոս, թէ «[Չի] ոչ ընտրեցին զԱստուած ունել ի գիտութեան, մատնեաց զնոսա Աստուած ի միտս անարժանս գործել զլցեալսն անիրաւութեամբ» (հմմտ. Հռոմ. Ա 28), եւ այլ սոյնպիսիք, ուստի յայտ է, թէ սոքա են Օրէնք եւ Մարգարէք:

Բայց գոյ ի տեղիս տարակուսանս. զի ուսաք զայրս զայս փորձութեամբ մատչել, իսկ Մարկոս ասէ. «Յորժամ գիտաց Յիսուս, թէ մտացի է, ասէ չես հեռի յարքայութենէն Աստուծոյ» (հմմտ. Մարկ. ԺԲ 34): Արդ՝ չեն սոքա միմեանց հակառակ. քանզի զառաջինն փորձելով եհարց եւ ի պատասխանոյն² օգտեալ գովեցաւ, բայց ոչ նախ, այլ յորժամ ասաց թէ «Ուղիղ ետուր զպատասխանիդ», եւ թէ «Միրել զընկերն առաւել է քան զողակէզս», զոր Բրիստոս նման ասաց առաջնոյն: Չի ողջակէզն Աստուծոյ մատչէր, յայնժամ ասաց ցնա. «Չես հեռի յարքայութենէն», զի զխոնարհագունիքն³ զանց արար եւ ի զլուխ առաքինութեանն եհաս: Բայց ոչ եւ այնպէս կատարեալ եղ զգովութիւնն, այլ թերագոյն ինն, իբր թէ տակաւին ի բացեայ ես, իսկ եթէ եւ յԻս սիրով կապիս, որ ընկեր քեզ եղէ, հուպ եւ արքայութեանն լինիս:

Իսկ ասելն. «Լո՛ւր, Իսրայէլ, Տէր Աստուած քո Տէր մի է» (հմմտ. Բ Օր. Չ 4), առ որ⁴ ասաց թէ «Բարուք ասացեր, թէ մի է Աստուած» (հմմտ. Մարկ. ԺԲ 32), ոչ եթէ զանձն օտարացոյց, թէ չէ Աստուած, քա՛ւ լիցի, այլ զի չէր ժամանակ զանձն յայտնել, վասն այտորիկ օրինակաւ ծանոյց, թէ երեք է եւ մի, քանզի ճշմարիտ այս այսպէս է. մի ըստ աստուածութեանն, եւ երեք՝ ըստ անձնատրութեանն, զոր ըստ հին սովորութեանն զմիութիւնն, որ բնութիւնն էր, ծանոյց, եւ զանձնատրութիւնն առ վայր մի արգել, մինչ արդեամբք ուսանիցին, «յորժամ զերկին եւ զերկիր շարժէ» ըստ մարգարէին (հմմտ. Անգլ. Բ 6), եւ եռօրեայ յարուցեալ առ Հայր վերաչուէ, զոր յաջորդիս նշանակէ:

Եւ ի ժողովել փարիսեացոցն՝ եհարց ցնոսա Յիսուս եւ ասէ (ԻԲ 41).

¹ Զ > իւրեանց

² Զ պատասխան

³ Զ զխոնարհագունօքն

⁴ Զ որս

«Ձիա՞րդ թուի ձեզ վասն Քրիստոսի, ո՞ր որդի է»: Ասեն ցՆա՝ Դաւթի (ԻԲ 42):

Յորժամ ամենեքեան ի մի վայր գումարեցան եւ ի հարցանելն ըմբերանեցան գեղեցկապէս լուծմամբն, ապա եւ Ինքն հարցանէ, քանզի այս իսկ է տրամաբանական արուեստ եւ վարդապետական յեղանակ՝ զայլոյ հարցուածս լուծանել եւ զինքեան տարակոյսս առաջի դնել: Եւ զայս ո՛չ յառաջագոյն, այլ զկնի բազում նշանաց եւ սքանչելեաց եւ Օրինացն համաձայնութեան, զի մի՛ ասիցեն՝ թէպէտ սքանչելիս առնէ, բայց Օրինացն հակառակ է եւ Աստուծոյ թշնամի: Վասն այսորիկ յետ այսչափ իրաց ի հարցումնս յայս զայ, որպէս զի մեղմով ի դաւանութիւն աստուածութեան Իւրոյ ածիցէ, քանզի մերձ էր ի չարչարանս: Եւ թէ ընդէ՞ր զայս հարցանէ. վասն զի նոքա գՔրիստոս ո՛չ ըստ մարգարէութեանն ի Բեթլեհեմէ համարէին, որպէս յառաջագոյն մոզուցն ասացին, եւ Հերովդէի զմանկունսն կոտորեալ՝ կարծեցին եւ զՆա՛ մեռեալ ընդ այլսն: Այլ Նազորացի կոչէին, այսինքն ուխտաւոր, թէպէտեւ այս մարգարէութիւն էր, իբր արհամարհելով զՆա, որպէս թէ՛ օտար ես ի մարգարէութենէն, որ ասէ ըստ մարմնոյ ի Դաւթայ, վասն այնորիկ ասացին թէ՛ «Քրիստոսն որդի Դաւթի է»:

Ասէ ցնոսա Յիսուս. «Իսկ զիա՞րդ Դաւիթ Հոգովն կոչէ զՆա Տէր եւ ասէ (ԻԲ 43).

«Ասաց Տէր ցՏէր իմ. «Նիստ ընդ աջմէ Իմմէ, մինչեւ եղից զթշնամիս Քո պատուանդան ոտից Քոց» (ԻԲ 44):

Իսկ եթէ Դաւիթ զՆա Տէր կոչէ, զիա՞րդ որդի նորա իցէ» (ԻԲ 45):

Այնմ ոչ ընդդիմանայ թէ՛ «Որդի եմ Դաւթի», թէպէտ ի նմանէ բաժանել զբանն կամէին, քանզի այն՝ յայտնապէս ի կուրիցն եւ ի մանկանցն դաւանեցաւ: Իսկ զի ոչ ետուն ստոյգ զվկայութիւնն վասն Նորա, զի մարդ լոկ համարէին զՆա, շրջէ զմոլորեալ կարծիս նոցա ի մէջ ածելով զԴաւիթ, որ յայտնապէս քարոզ եղեւ տէրութեան Նորա՝ ցուցանելով, թէ արդարեւ Որդի Աստուծոյ եւ հանգիտապատիւ Հօր եւ Սուրբ Հոգոյն: Եւ զայս ասելով ոչ եթէ հենացուցանէ ի Դաւթայ, այլ ասէ, թէ ոչ այնպէս որդի է Դաւթի ըստ մարմնոյ միայն, որպէս դուք կարծէք, այլեւ Տէ՛ր նորին: Եւ դու

¹ Մատթ. Բ 1-9, 16-18

² Զ յայն

տես, թե որպես մեղմով ընծայեցոյց զփառացն իրս ի դիպօղ ժամանակի, զի յորժամ ասաց թէ «Մի է Տէր», ասպա եցոյց, թէ եւ Ինքն Տէր է՝ ի մարգարէութենէն կնքելով եւ ո՛չ ի գործոցն միայն, զի գոր դուք Նազորացի անուանէք, մարգարէն Տէր իւր վերակոչէ:

Իսկ ասելն թէ «Հոգւովն կոչէ զնա Տէր», զի մի՛ ասիցեն, թէ ատելի սպասա առնելոյ վասն կոչեաց զնա այնպէս, եւ մարդկօրէն ինչ վճիռն իցէ, ասէ, թէ Հոգւովն կոչեաց, որ զճշմարտութիւնն ցուցանէ, քանզի «ոչ որ ասէ Տէր զՅիսուս, եթէ ոչ Հոգւովն Սրբով» (Ա Կոր. ԺԲ 3), քանզի զէրն կոչեաց եւ ո՛չ գոչ էրն զգուեաց: Վասն որոյ եւ զբանն եւս ի մէջ ածէ թէ «Ասաց Տէր ցՏէր իմ. «Նիստ ընդ աջմէ իմմէ, մինչեւ եղից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց»։ Այսու ցուցանէ, թէ որ Նմին հակառակ է, եւ Հօր է յայտնապէս, եւ Հայր այնմ վրէժխնդիր լինելոց է, որպէս զի զէթ ահիւս այսու ցածցին եւ զգաստասցին: Եւ դարձեալ՝ զհամակամութիւն եւ զպատիւ ընդ Ծնողին ցուցանէ, որ զլուիս եւ ծայր է ամենայն պատուոյ՝ ըստ առաքելոյ թէ «Սրբութիւն մեղաց մերոց արարեալ նստաւ ընդ աջմէ Մեծութեանն ի բարձունս» (Եբր. Ա 3):

«Մինչեւ եղից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց¹»: Չայս կամ զհռոմայեցոցն իմանամք զաւերն, որք մարմնոյ Որդւոյն Աստուծոյ արեան, զոր «ոտք» անուանէ, վրէժխնդիրք եղեն՝ ըստ այնմ թէ «Լեզուք շանց քոց յարենէ թշնամեաց քոց²» (Սաղմ. ԿԷ 24), կամ մերձ առ կատարած կենցաղոյս թշնամիքն Քրիստոսի եւ Հօր Նորա՝ ոտից մարդեղութեան Նորա երկրպագուք լինիցին, զորոյ զօրինակն ետես Յովհաննէս՝ հարիւր եւ քառասուն եւ չորս հազար կնքեալս³, եւ ասպա յառնէ ի դատաստան անհաւատից:

Եւ ո՛չ որ կարէր տալ Նմա պատասխանի բան մի, եւ ոչ իշխէր որ յայնմ օրէ հարցանել զնա եւ ո՛չ ինչ (ԻԲ 46):

Յորժամ Իմաստութիւնն վերին խօսէր, կարկէին, եւ յորժամ ինքեանք հարցանէին, ճշմարտապէս զլուծումն առնուին. այնուհետեւ ասի ի բերանք եղեն, եւ այս ոչ սակաւ օգուտ գործէր ժողովրդեանն: Վասն որոյ առ նոսա շրջէ զբանն մեկուսի արարեալ

¹ Գ > ոտից քոց

² Գ > քոց

³ Յայտ. է 4

ի գայլոցն, զի չօգտէին ինչ, վասն զի սնապարծք էին, ասէ առ ժողովորդն¹ :

ԳԼՈՒԽ ԻԳ

Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ ժողովորդսն եւ ընդ աշակերտսն Իր եւ ասէ (ԻԳ 1).

«Յաթոռն Մովսիսի նստան դպիրքն եւ փարիսեցիք (ԻԳ 2):

Ե՞րբ. յորժամ զայս ամենայն ասաց եւ ընթերանեաց զնոսա, եւ նոքա ոչ կամէին զգօնանալ, ապա սկսանի եւ յանդիմանութիւնս նոցա, թերեւս այսու զնոսա շահեսցի: Ասէ. «Յաթոռն Մովսիսի² նստան դպիրքն...». քանզի չգտանէր զնոսա ի վարուցն հաւասարեցուցանել, յաթոռոց համեմատէ, իբր թէ ոչ գայլ³ ինչ ի Մովսիսէ յաջողեցին, քան թէ զգահերիցութեանն⁴ պատիւ:

Չամենայն ինչ, որ ասիցեն ձեզ, արարէ՞ք եւ պահեցէ՞ք, բայց ըստ գործոցն նոցա մի՛ առնէք, զի ասեն եւ ոչ առնեն (ԻԳ 3):

Է՞ր վասն զայս ասէ. նախ՝ զի Տէր եւ զՏեառնէ յուշ արար, յՕրէնսն ընթանայ, զի թէպէտ Օրէնքն զայս ոչ ասէ, այլ թէ «Տէր Աստուած քո Տէր մի է» (հմմտ. Բ Օր. 2 4), քանզի Դաւթի էր բանն, բայց Գիրք զհինն զամենայն Օրէնք ասեն. արդ ասէ, թէ գոր ինչ յՕրինացն քարոզեն, լուիջիք, քանզի Օրէնքն իսկ զԻս Տէր քարոզեն: Եւ երկրորդ՝ զմիաբանութիւն ընդ Ծնողին ցուցանէ, զի թէ հակառակ նք էր Նմա, որպէս կարծէին, թերեւս հակառակ եւ⁵ Օրինացն խօսէր, իսկ Նա աւանդիկ այնչափ փոյթ եւ ակնածութիւն առ Օրէնսն տայ ունել, մինչ զի յեղծեալ բերանոց⁶ վարդապետացն եթէ լսել հասանիցէ, հրամայէ անսալ: Եւ երրորդ՝ զմիտս լսողացն ուղղել կամի, քանզի ոչ այլ ինչ նպաստէ ի փրկութիւն, իբր զվարդապետացն չարհամարհութիւնն եւ ոչ յառնել⁷ ի վերայ քահանայիցն, զի թէպէտ ապականեալք էին, կարեւոր համարի զայն եւ

¹ Գ ժողովուրդքն

² Գ Մոսեսի

³ Գ այլ

⁴ Գ գահիրիցութեանն

⁵ Գ > եւ

⁶ Գ բերանոյ

⁷ Գ յառնելն

չընկենու ի պատուոյն վասն այլոցն օգտի, քանզի ոչ զիրեանց ինչ ասեն, այլ զԱստուծոյն, զոր Մոսիսի¹ պատուիրեաց, որով զմիաբանութիւնն ընդ հնոյն ցուցանէ: «Չամենայն ինչ, զոր² ասիցեն ձեզ», - ասէ: Չամենայն ոչ եթէ զկերակրոցն եւ զգոհիցն ասիցէ, այլ զայն որ զբարին ուղղիցէ եւ զկարգս ազնուագոյնս գործիցէ: «Արարէք եւ պահեցէք»: քանզի յՕրինացն ոմանք հրամայական էին եւ ոմանք՝ հրաժարական, արդ՝ զհրամայականն կատարեցէք, ասէ, իսկ հրաժարականացն³ զգուշասջիք: Եւ այլ ազգ. զի են ոմանք, որ առնեն զօրէնս առ վայր մի եւ ոչ ի պահել զնոյն սովորութիւն յերկարին, ասէ արարէք եւ զնոյն առնելն միշտ պահեցէք ի ձեզ. կամ առնելն զգործն ասէ, իսկ պահելն՝ զհաւատն:

«Բայց ըստ գործոցն նոցա մի՛ առնէք, զի ասեն եւ ոչ առնեն»: Ձի մի՛ համարիցին, թէ վասն զի պարտ է նոցա ունկն դնել եւ նմանօղ լինել ասէ, արկանէ ի կիր զայս ուղղութիւն, եւ որ պատիւ նոցա թուի, զնոյն ամբաստանութիւն գործէ թէ՛ «ըստ գործոցն նոցա մի՛ առնէք», որ քան զայս այլ ոչ գտանի վարդապետի հիգութիւն, յորժամ զաշակերտս նոցա չհայել ի վարս նոցա քարոզէ: Է՞ր վասն. «զի ասեն եւ ոչ առնեն». ամենայն ոք, որ ոչ առնէ զօրէնսն, ընդ մեղադրանօք է, բայց առաւել՝ որ զվարդապետութեանն իշխանութիւն ունիցի, կրկին չարիք են: Մի՛ զի որով զայս պարտ էր ածել յուղղութիւն, ինքն ի նմին կաղայ, եւ երկրորդ՝ մեծ պատժոց արժանի է վասն պատուոյն, զի յայնպիսի աստիճան զանօրէնութիւն գործէ, որ առանց ներելոյ եւ աւելի դատաստան պահանջին, քան զայնոսիկ որոց իշխեցին՝ ըստ այնմ. «Որում շատ տուաւ, շատ եւս խնդրեսցի» (Լուկ. ԺԲ 48), եւ այլոր թէ՛ «Հօրք հօրագոյն դատեսցին» (հմմտ. Իմաստ. Զ 7):

Կապեն բեռնս ծանունս եւ դժուարակիրս եւ դնեն ի վերայ ուսոց մարդկան, եւ մատամբ իրեանց ո՛չ կամին շարժել զնոսա (ԻԳ 4):

Կրկին տուժից է այս առիթ՝ զայլոց լուծ հարկաւ ծանրացուցանել եւ ինքեանք ի թեթեւն մատչել, որոց պարտ էր⁴ զհակառակն առնել՝ զայլոց թեթեւս գործել եւ զանձանցն ծանրացուցանել՝ ըստ առաքելոյ թէ՛ «Կարօղք, բարձէք զտկարութիւն տկա-

¹ Ձ Մօսէսի

² Ձ ~ զոր ինչ

³ Տ հրաժարականն

⁴ Ձ > որոց պարտ էր

րացն» (հմմտ. Հռոմ. ԺԵ 1), եւ թէ «Նորա տքնին վասն ոգոց ձերոց» (Եբր. ԺԳ 17): Եւ թէ այս ոչ գոնեա զհաւասարն պարտ էր առնել՝ որպէս զթեթեւն անձանց, այսպէս եւ այլոց քարոզել, եւ թէ զծանր այլոց, արժան էր եւ ինքեանց ստանձնել, իսկ թէ ոչ ապա ուրեմն առանց ներելոյ են, զի բանիւք ճարտար են եւ ի գործսն հեղձ եւ տարտամք են, վասն որոյ աճեցուցանէ զամբաստանութիւնն թէ «մատամբ իւրեանց¹ ոչ կամին շարժել զնոսա²», զի ոչ ասաց թէ ոչ կարեն, այլ թէ ոչ կամին, եւ չասաց թէ բառնալ³, այլ թէ մատամբ շարժել: Այսինքն թէ եւ ոչ անգամ մօտ երթան եւ կամ հուպ լինին, մասամբ կատարել կամ այլոց օգնական լինել, իսկ «բեռինս ծանունս» կամ զՕրինացն ասէ, զոր ճշդիւ յայլոց պահանջէին, կամ զսխալանացն⁴ յանցանս, որոց բնաւ ոչ ներէին:

Եւ զամենայն զգործս իւրեանց առնեն ի ցոյցս մարդկան (ԻԳ 5):

Նախ ծոյս բամբասեաց յօրինացն գործս եւ այժմ՝ սնապարծս եւ փառաստէրս, որ երկոքին իսկ կորստեան⁵ պատճառք են եւ օտարանալոյ յԱստուծոյ, զի կամ ոչ առնեն, եւ կամ առնեն ի փառս մարդկան, ոչ զՕրէնսն, այլ զձեռոցն աւանդութիւնն, որպէս ասէ.

Լայնեն զգրապանակս իւրեանց եւ երկայնեն զբղանցս հանդերձից իւրեանց:

Եւ այս սնափառութեան տարացոյց, զի յաչս մարդկան օրինականք կարծիցին, եւ ի յաչս Աստուծոյ օրինազանցք էին: Բայց զգրապանակս յայն սակս առնէին, զի ստէպ մոռանային զերախտիսն Աստուծոյ, հրաման ետ ի գիրս փոքունս գրել զսքանչելիսն եւ կախել զբազկացն կամ ի վերայ լանջացն, վասն որոյ եւ ասէր թէ «Եղիցի անշարժ առաջի աչաց քոց» (հմմտ. Ելք ԺԳ 16), զոր «պահպանականք» կոչէին, որպէս եւ այժմ բազում կանայք աւետարանակ կախեն զպարանոցաց մանկանցն. զայս նորա ընդարձակս առնէին եւ մեծս ի կրել միայն եւ ոչ ի գործել: Իսկ «քղանց հանդերձից» դարձեալ վասն նոյն պատճառի, քանզի

¹ Գ > իւրեանց

² Գ > զնոսա

³ Գ բառնան

⁴ ՏԳ զսխալանացն

⁵ Տ կորստեանն

իբր մանկտոյ հրամայեաց առնել ի նիւթոյ կապուտակէ շուրջ գօծիւքն, եւ առ ստորտոտվն եւ զասղանիս նկարել, զի յայն հայեցեալ յիշեսցեն զպատուիրանս Նորա, զոր «քղանց» կոչէին, այսինքն ծովիք¹, կամ քող² ներկեալ անցուցանէին ընդ առջսն, որպէս եւ այժմ մոռացկոտաց առնեն՝ կտաւով կամ³ թելով զմատն կապեն, զի յայն հայեցեալ յիշեսցէ զյորմէ չոգաւն, զոր նորա անելի երկայնագոյնս առնէին վասն սնապարծութեան: Այլ քննելի է, թէ ընդէ՞ր վասն միոյ պատճառի մոռացման կրկին նշանակս առնէին: Կամ վասն յոյժ հեղգութեանն եւ տարտամութեանն, որպէս եւ էին իսկ, կամ զբապանակաւն մտացն ախտի զգուշացի՝ նենգութեան, եւ բարկութեան եւ ցանկութեան: Եւ քղանցիս հանդերձին մարմնոյն պարկեշտութեամբ սքափ լինիցին, յորոց սոքա եւ ոչ զմին⁴ ունէին, այլ զհակառակն, որպէս ասէ յաջորդս:

Սիրեն զյառաջագահս յընթիս եւ զնախաթոռս ի ժողովորդս եւ զողջոյնս ի հրապարակս (ԻԳ 6)

եւ կոչել ի մարդկանէ՝ Ռաբբի, Ռաբբի (ԻԳ 7):

Յայլում տեղոջ հրաժարեցոյց Տէր յայսմ ախտէ, թէ յորժամ յընթիս կոչիցիս, մի՛ յառաջին բարձին բազմիցիս, զոր սոքա անխտիր ունէին եւ բարձակոյի լինէին, որ կրկին ախտի էր գուշակ՝ հպարտութեան, միանգամայն եւ որկրամոլութեան, եւ ոչ պատահմամբ յայն գային, այլ ախտրժէին եւ սիրէին: Արդ՝ եթէ սիրելն եւ ի ստուերն այնքան վնաս է, ապա ո՞րչափ առնելն եւ ի ճշմարտութիւնս, որ թէպէտ փոքր թուի, այլ մեծաց չար[ե]յաց պատճառ է: Եւ ինձ արտասուք զան, յորժամ զայս յիշեմ, եթէ ո՞րչափ չարիք ծնան անտի Եկեղեցեաց Աստուծոյ եւ քաղաքաց, զորոց կամաւ զանց առնեմ: «Եւ զնախաթոռս ի ժողովորդս եւ զողջոյնս ի հրապարակս եւ կոչել ի մարդկանէ՝ Ռաբբի, [Ռաբբի]»: Ոչ միայն զայն ասէ, որք ի գլուխս ժողովրդոց բազմին յաթոռս, այլ զխնդրելն եւ զստանալն եւ կաշառօք զսոյն որսալն նշանակէ, որպէս զի իբր առաջնորդ բազմաց՝ յամենեցունց⁶ ի հնազանդելոցն ծունր եւ երկրպագութիւն առցէ եւ վարդապետ կոչես-

¹ Զ ծովիք

² Զ քող

³ Զ կամ թէ

⁴ Զ զմի ոք

⁵ Զ > ի մարդկանէ

⁶ Զ յամենեցուն

ցի, այսինքն՝ գլուխ ուսման կամ առաջնորդ կրօնից, կամ հայր ճանապարհի: Իսկ երկիցս անգամ ասելն՝ վասն նագելի երեւելոյ եւ կամ ստոյգ զվարդապետութիւնն ցուցանելոյ, քանզի պարտ էր գործովք եւ պարկեշտ վարուք եւ գնացիւք յամենայնէ որոշիլ՝ իբր մարդ կերպարանօք յանասնոց յայտնապէս բաժանիլ, իսկ նոքա վարուք քան զայլսն գեղիս էին եւ կոչմամբ զգանազանութիւն խնդրէին:

Բայց դուք մի՛ գոք կոչէք¹ վարդապետ, զի մի է ձեր Ուսուցիչ, եւ ամենեքին դուք եղբարք էք (ԻԳ 8):

Այս է գթած վարդապետի եւ ճշմարիտ բժշկի գործ, զի թախանձանօք զաշակերտսն ի հաւանութիւն ածիցէ, միանգամայն եւ առաւելութիւն ասացելովքս ի նոցանէ պահանջէ, քանզի թէ գործոցն, ապա եւ մեղադրանացն յիցին բաժանակից: Վասն այտորիկ ասէ թէ՛ «Մի՛ գոք կոչէք «ռաբբի», զի մի է ձեր Ուսուցիչ»՝ Քրիստոս, «եւ ամենեքին դուք եղբարք էք», այսինքն՝ հաւասար ընկերք, եւ ոչ քան զոք ատելի ինչ ունի, թէպէտեւ գերագոյն իցէ քան զբազումս: Է՞ր վասն. զի ոչ յանձնէ ինչ գիտէ՝ գոր գիտէ, ըստ առաքելոյ թէ՛ «Ո՞վ է Պօղոս, կամ ո՞վ Ապողոս², կամ ո՞վ է Կեփաս. պաշտօնեայք Աստուծոյ» (հմմտ. Ա Կոր. Գ 4-5), եւ ոչ ասաց թէ՛ «վարդապետք»: Մանաւանդ՝ զի ոչ ի պէտս անձանց, այլ վասն բազմաց ստացան, ուստի յայտ է, թէ հաւասարք են ամենեքեան՝ ի շնորհաց Նորին փարթամացեայք: Բայց ինձ թուի, թէ առ առաջինն ասացեալս ընդդիմութիւն ունի, զի անդ ոչ որք կոչէին՝ մեղադրէին, այլ որք զկոչելն խնդրէին, իսկ աստ ասէ. «Դուք մի՛ գոք կոչէք վարդապետ», կամ թէ՛ «մի՛ գոք կոչիցէք», այսինքն՝ յօժարեցուցանէք «վարդապետ» զձեզ յորջորջել, որպէս նոքայն, զի մի՛ զփոխարէնն ի նոցանէ պահանջէք: Կամ թէ՛ որպէս ի կէս օրինակս գտի թէ՛ «Դուք մի՛ կոչիցէք վարդապետ», եւ զպատճառն ասէ թէ՛ վարդապետ ձեր Քրիստոս է:

Եւ հայր մի՛ կոչէք ձեզ յերկրի, զի ձեր մի՛ է Հայր՝ որ յերկինսն է (ԻԳ 9):

Չայս ըստ երկուս դէմս իմանամք. նախ՝ ոչ վասն կոչելոյն, որ օրէնս եղ³ պատուել զհայր եւ զմայր¹, այլ զի զիտասցեն, թէ զՆա

¹ Զ կոչիցէք

² ՏՏ Ապողոս

³ Զ է

պարտ է կոչել հաստատութեամբ Հայր, զի որպէս վարդապետն ո՛չ նախահամար վարդապետ, սոյնպէս եւ ոչ Հայրն, քանզի մի է ամենեցուն Հայրն վարդապետաց եւ հարանց: Եւ երկրորդ՝ կամի զնոսա երկնայինս առնել, զի որք ըստ մարմնոյ հարք են, յերկրէ են եւ յերկիր լուծանին՝ պատճառ միայն լինելով ըստ մարմնոյ ծննդեան, իսկ Նա վասն զի ծնաւ զմեզ ի յոյսն կենդանի², որ յերկինս է, յանմահութիւն փառաց եւ յորդեգրութիւն Ինքեան ի ձեռն Հոգւոյն եւ ի ժառանգակցութիւն Քրիստոսի, վասն այնորիկ ասէ, թէ ձեր մի է Հայր՝ ոչ փոփոխեալ եւ ոչ շարժեալ, որ եւ կամի հանգոյն Ինքեան եւ զձեզ առնել:

Եւ մի՛ կոչիցիք ուսուցիչ³, զի Ուսուցիչ ձեր Քրիստոս է (ԻԳ 10):

Ո՞ւմ ուսուցիչ. յայտ է թէ՛ Հօր, զի ո՛չ յայլ ումեքէ, այլ ի ձեռն Որդոյ ծանեաք զՀայր, որպէս ասէր թէ՛ «Յայտնեցի զանուն Քո մարդկան» (Յովհ. ԺԷ 6), այլեւ ամենայն ուսմանց եւ գիտութեանց աստուածային խորհրդոց, փառաց եւ արքայութեան, դժոխոց եւ տանջանաց, նաեւ Հոգւոյն պարգեւաց, որ զամենայն ուսոյց եւ յիշեցոյց⁴, Նովա՛ւ եղաք ներընդունակք: Բայց դու տես՝ զխոնարհութիւնն, զի ո՛չ ասաց թէ՛ Ես եմ, այլ թէ՛ Քրիստոս է, որպէս վերագոյնն. զի ոչ ասաց. «Չիա՞րդ թուի ձեզ վասն Իմ», այլ թէ՛ «վասն Քրիստոսի» (Մատթ. ԻԲ 42). նոյնպէս եւ աստ, որպէս զի զնոսա յօժարութեամբ առ Ինքն ձգիցէ, միանգամայն եւ զխոնարհութիւնն ուսուցանէ, որպէս ասէ.

Եւ մեծն ի ձեռնք եղիցի ձեր սպասատր (ԻԳ 11):

Չի վասն անբարտաւանութեանն զնոսա ձաղեաց, խրատէ զնոսա փախչել ի նոցա հպարտութենէն, որք ի բազմաց զսպասատրութիւնս եւ զողջոյնս ի հրապարակս պահանջէին, զի այս բանսարկուին էր ախտ: Իսկ Նա ընդդէմ նորա զխոնարհութիւնն եղ, որպէս ամենայն ուրեք. յայտ է՝ ի լերինն եւ զմանկտին ի մէջ ածելով⁵, նոյնպէս եւ աստ, զի արմատաքի զհպարտութիւնն խլեացէ եւ խոնարհութեամբն յերկինս բարձրացուցէ, քանզի չիք ինչ հաւա-

¹ Ելք Ի 12

² Ա Պետ. Ա 3

³ Չ ուսուցիչք

⁴ Յովհ. ԺԴ 26

⁵ Մատթ. Ե 3, ԺԸ 1-5

սար խոնարհութեանն առաքինութեան, զոր արար Ինքն զործով եւ ուսուցանէ բանիւ:

Որ բարձրացուցանէ զանձն, խոնարհեսցի, եւ որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրացի (ԻԳ 12):

Կրկնէ զայս դարձեալ վասն ասացեալ պատճառին, որպէս զի ոչ միայն ի գահերիցութեանն¹ ցանկութենէ արզելուցու, այլեւ զվերջին աստիճանն ունել հրամայէ, զի այնու հասանիցէ ցանկութեանն, այսինքն է բարձրութեանն, որպէս եւ ընդդէմ՝ որ փքանայ բարձրութեամբ՝ ընկճեսցի ի խոնարհ, իբր գոռոզն այն, որ դնէր զաթոռն յամպս, անկաւ ի ներքին յալս, որպէս փայլակն²: Բայց ոչ վայրասպար զանձն ասէ խոնարհեցուցանել, որ ներքին մարդոյն է, յորմէ եւ արտաքինն զնոյն ձեւ համեստութեան զգենու, որպիսիք են ճգնաւորքն սուրբք եւ որ յանապատս բնակեալ են, ցածուն եւ զծուծ ունին զանձինս ի հանդերձից եւ ի տանց, եւ այն յընչաւետացն եւ ի պատուաւորացն զոյով, որք իբր նշանագրաւ գՔրիստոսի խոնարհութիւնն յանձինս գրեն: Քանզի են ոմանք, որք կեդժաւորեալք մակերելութիւնն³ խոնարհ երելին, իսկ մտօք ամբարհաւածք եւ բիրտք, զորս անգոսնէ՝ զմտացն զովելով զնուաստութիւն, որպէս է ի կարգիս ուսանել: Դարձեալ զոր օրինակ ծառ, ասէ, որքան ի խոնարհ զմացառսն արձակէ, այնքան եւ ամրագոյն եւ⁴ բարձրագոյն լինի, իսկ եթէ զբարձրութիւնն միայն ունի եւ ի խոնարհ արմատս՝ ոչ, ոչ կարէ ի բարձրութիւնն մնալ: Կամ այլ ազգ. զի մարդ ոչ է ինքնաբաւ, այլ ի Տեառնէ խոնարհի եւ բարձրանայ. արդ եթէ խոնարհի, առնու⁵ շնորհս բարձրութեան՝ ըստ Սողոմոնի⁶, իսկ եթէ անձամբ կամիցի բարձրանալ, ծածկէ Աստուած զնախախնամութիւն Իւր, եւ յանդիմանեալ մարդկան տկարութիւնն՝ անկանի ի փառաց:

¹ Զ գահերիցութեանն

² Եւ. ԺՂ 12-15, Ղուկ. Ժ 18

³ Զ մակերելութիւն

⁴ ՏԶ ի

⁵ Զ եւ առնու

⁶ Առակ. Գ 34

Վա՛յ ձեզ դպրաց եւ փարիսեցոց կեղծաւորաց, զի փակէք զարքայութիւնն երկնից առաջի մարդկան, որք ոչ մտանէք եւ որոց¹ մտանենն՝ չտայք թոյլ մտանել (ԻԳ 13):

Նախ քան զայս Մարկոս ասէ թէ՛ «Որ ուտէք զտունս այրեաց, պատճառելով զաղօթս» (հմմտ. Մարկ. ԺԲ 40), քանզի որկրամոլք էին² եւ զայն ոչ ի մեծատանց, այլ յաղքատաց պարարտին եւ եւս քան զեւս զայրիսն նեղէին, որոց օժանդակել արժան էր: Եւ այլ եւս չար՝ զի ի պատճառս երկարութեան աղօթիցն ուտէին, քանզի որ զչարն գործէ, արժանի է պատժոց, իսկ որ զերկիրաւորութիւնն առնու պատճառ չարի եւ նովիմք ի յանցանս զայցէ, եւս դժնդակագոյն պարտական³ է, զի զբարին նիւթ արար չարի: Բայց աստ, զի ասէ. «Վա՛յ ձեզ...., զի փակէք զարքայութիւնն....», թեպէտ «վայ» բառդ եղկական լսի՝ ըստ իմաստնոյն թէ՛ «Ո՛հ որոց թողեալ իցէ զուսումն մանկութեան եւ մոռացեալ զուխտն աստուածեղէն⁴» (Առակ. Բ 13, 17), այլ աստ անհրաժեշտ տանջանաց մատնէ՛ վասն անզեղջ ի չարն մնալոյ ըստ այնմ. «Վա՛յ որ յարեն տուն առ տուն» (Ես. Ե 8), զի ծանրագոյն դատաստանս ընդունիցին. նոյնպէս եւ աստ ասէ. «Վա՛յ ձեզ դպրաց...., զի փակէք զար[քայութիւնն]....»: Կրկին եւ երեքկին չարիս ցուցանէ. նախ զի ինքեանք ոչ մտանել կամէին, եւ երկրորդ՝ զի եւ բանիւ անգամ այլոց ոչ ուսուցանէին, եւ երրորդ՝ զի վնասէին եւս՝ արգելլով զբազումս, ասպա ուրեմն առանց ներելոյ ունէին զպատիժս:

Բայց ասելն «զի փակէք», կամ զՕրէնսն ծանրացուցանելով, զի ճնշեալք ոչ կարէին գործել, որով զարքայութիւնն ժառանգէին, որպէս յառաջն ասաց, թէ կապեն բեռինս ծանունս եւ ինքեանք չմտանէին ի ներքոյ, այլ ի թեթեւն մատչէին, որպէս ասէ թէ՛ «Դուք ոչ մտանէք եւ որոց⁵ մտանենն» վասն ծանրութեանն «չտայք թոյլ» թեթեւութեամբ «մտանել»: Կամ դուք ոչ մտանէք վասն զեղիս կենաց ձերոց եւ փակէք ի դէմ այլոց՝ զայթազդեցուցանելով զբազումս, որք հայելով ի վարս ձեր՝ ասպականին եւ նոքա ի չարիս, որ ժանդի գործ է եւ ոչ վարդապետի՝ կորուսանել զապրացուն չար օրինակաւ, որոց գիտն էր պատկանաւոր: Կամ դարձեալ՝ արքա-

¹ Գ որք

² Տ էիք

³ Գ պարտապան

⁴ Գ > զուխտն աստուածեղէն

⁵ Գ որք

յութիւն զԻ՛նքն ասաց, որք փակէին զբազումս հաւատալ ի Նա, զի «ուխտ եղեալ էր նոցա, թէ ոք խոստովանեսցի զՆա Քրիստոս, ի բաց կացցէ ի ժողովրդեանն» (Յովհ. Թ 22), քանզի ինքեանք չհաւատային եւ այլոց խոչ գայթազողութեան լինէին. ապա յիրաւի է վայ նոցա, զի որք ոչ հաւատան յՈրդի, բարկութիւն Աստուծոյ զայ ի վերայ նոցա¹ :

(Վա՛յ ձեզ դպրաց եւ փարիսեցոց կեղծաւորաց, զի ունէք զտունս այրեաց, պատճառաւորք երկարէք զաղօթս, վասն զի ատելի դատաստան ընդունիցիք (ԻԳ 14)²):

Վա՛յ ձեզ դպրաց եւ փարիսեցոց կեղծաւորաց, զի յածիք ընդ ծով եւ ընդ ցամաք՝ առնել եկամուտ մի, եւ յորժամ լինիցի, առնէք զնա որդի գեհեճի՝ կրկին եւս քան զձեզ (ԻԳ 15):

Երկակի դիմօք³ ձաղէ զնոսա. մի՛ զի անպիտանք էին առ ի բազմացն փրկութիւն եւ բազմաց քրտանց կարօտ, մինչ զի եւ ոչ զմի ոք դիրաւ որսալ, եւ երկրորդ՝ զի եւ ծոյլք էին առ պահպանութիւն ստացելոցն, քանզի եւ ոչ հազիւ արկանելն ընդ ոռկանաւ յորդորէր խնայել ի նա, եւ ոչ այս միայն, այլեւ մատնիչք եւս լինէին զնացիցն չարութեամբ սպականել զնա: Իսկ զի՞նչ՝ «ընդ ծով եւ ընդ ցամաք»։ այս է՝ խորհրդով եւ մարմնով տաժանիք⁴ եւ մի միայն հազիւ աշակերտէք, որպէս ասէ թէ՛ «յորժամ լինիցի, առնէք զնա որդի գեհեճի՝ կրկին եւս [քան զձեզ]»։ զի յորժամ զայնպիսի վարդապետն տեսանէ աշակերտն, եւս չարագոյն ի յոռութիւնն լինի եւ ոչ մնայ ի չարիս վարդապետին, իսկ յորժամ առաքինի իցէ

¹ Յովհ. Գ 36

² Տ ծնթ. (Ի մեր երեք գրչագիր գաղափարսն այս համար պակաս էր, որպէս եւ մեկնութիւն նորա. եւ յայլուստ ստուգեցաք՝ զի այս չորեքտասաներորդ համար ի յետնոց ոմանց մտեալ է յԱստուածաշունչ մեր՝ ըստ լատինական օրինակաց. վասն զի յամենայն հնագոյն գրչագիրսն մեր ոչ գտանի այս համար՝ ըստ հնագոյն եւ հաւատարմագոյն յունական օրինակաց: Ուստի եւ մեք զանց արարեալ՝ զայս համառօտ ծանօթութիւն եղաք աստանօր, առ ի լուծանել զտարակոյս

ընթերցողաց:)

³ Զ իրօք

⁴ Զ չտաժանիք

վարդապետն, հազիւ նմանօղ եւեթ լինի աշակերտն, վասն այստրիկ ասէ թէ՛ կրկնապատիկ չարութեամբն առնէք զնա ժառանգ գեհենի, այսինքն՝ զոր յառաջն ունէր եւ զոր ի ձէնջ ուսաւ: Կամ թէ՛ որպէս դուք որդիք գեհենի, նոյնպէս եւ զնա առնէք. զի նոքա երկիցեն եւ սոքա զարհուրեցին՝ ասաց զայս:

Վա՛յ ձեզ, առաջնորդք կոյրք, զի ասէք՝ որ երդնու ի Տաճարն, չէ ինչ, բայց որ երդնու յոսկին, որ ի Տաճարին է, արժան է (ԻԳ 16):

Մորոսք եւ կոյրք, զի՞նչ մեծ է՝ ոսկի՞ն, եթէ Տաճարն, որ սրբէ զոսկին (ԻԳ 17):

Բազում մեղաց առիթ զնոսա ցուցանէ եւ առ բազմօքն եւ այսմ եւս պարտաւոր, զի ստերդունք էին, յորմէ՛ Օրէնքն հրաժարեցուցանէր¹, վասն որոյ ձաղէ թէ՛ կոյրք էք, զի թէ՛ առաջնորդքն կոյրք լինիցին, զի՞նչ ասես զհետետողացն, որք ոչ զանձանց եւեթ վրէժս տայցեն, այլեւ զորս մոլորեցուցանէին: Եւ էր մոլորութիւնն այսպիսի. քանզի ի կռապաշտիցն առեալ զայս աղանդ, որք պատրէին զբազումս երդնով, ոչ ի կուռս ոսկեղէն, այլ ի մեհեանն, յորում պատկերքն էին, եւ զայն ոչինչ գրէին, այսպէս եւ սոքա վասն հաւանեցուցանելոյ զբազումս՝ երդնուին ի Տաճարն եւ զայն անվնաս կարծէին եւ ունայն բան, իսկ յորժամ յոսկին որ ի Տաճարին էր երդնուին, մեծազոյն համարէին, կամ որք երդնուին, կամ որք զերդումն պահանջէին, եւ այս լինէր յանցանք նոցա: Չորս յանդիմանէ թէ՛ «Մորոսք եւ կոյրք², զի՞նչ մեծ է՝ ոսկի՞ն, եթէ³ Տաճարն, որ սրբէ զոսկին»: «Ոսկի» կամ զսպաս սրբութեանցն ասէ, կամ զզանձս Տաճարին. արդ ասէ, թէ Տաճարն է մեծ, քանզի սրբէ զոսկին. զիա՞րդ, զի Տաճարն՝ Աստուծոյ, իսկ ոսկին Տաճարին կոչի, եւ անունն Աստուծոյ զՏաճարն սրբէ, իսկ խորհուրդ Տաճարին զոսկին մարբէ: Կամ թէ՛ զՏաճարն Աստուած խնդրեաց, իսկ զոսկին՝ Տաճարն, զի ո՛չ Տաճար եւ ոսկի Տաճարին⁴, քանզի վասն Տաճարին զոսկին ընծայեն Տաճարին. ա՛յս է սրբելն:

Եւ որ երդնու ի սեղանն՝ չէ ինչ, բայց որ երդնու ի պատարագն, որ ի վերայ նորա է՝ արժան է (ԻԳ 18):

¹ Ելք Ի 16

² Չ մորոս եւ կոյր] մորոսք եւ կոյրք

³ Չ թէ

⁴ Չ ի տաճարին

Յիմա՛րք եւ կոյրք, զի՞նչ մեծ է՝ պատարա՞զն, եթէ սեղանն, որ սրբէ զպատարազն (ԻԳ 19):

Ըստ առաջին յարացուցին եւ զա՛յս իմա. քանզի երդնուին ի սեղանն ողջակիզացն կամ քաւութեանն եւ զայն չգրէին ինչ, իսկ ի պատարազն, զոր ողջակիզէին, կամ յարիւնն, որ ի յեղջեր¹ սեղանոյն տրամադրէին, զայն արժանատր կարծէին երդմնեցուցիչքն կամ որք երդնուին, որոց ասէ. «Յիմա՛րք եւ կոյրք» յաստուածաշինսն, «զի՞նչ մեծ է՝ պատարա՞զն, եթէ սեղանն, որ սրբէ զպատարազն»: Զի սեղանն Աստուծոյ բանիւն, իսկ պատարազն սեղանովն սրբի, քանզի թէ ոչ սեղանն եւ ոչ պատարազ իսկ մատչի, որում միջնորդ եղեալ սեղանն ընծայէ Աստուծոյ, ապա թէ ոչ ընդէ՞ր ոչ զնոյն պատարազն յայլում տեղուջ իշխէին մատուցանել արտաքոյ սեղանոյն Աստուծոյ. ուստի յայտ էր, թէ սեղանոյն մաքրութիւնն սրբէր եւ զպատարազն եւս:

Բայց են ոմանք, որ զասացեալս ի Տէր մեր Յիսուս Բրիստոս վերաբերեն եւ «տաճար» անուանեն զմարմինն, որպէս Ինքն ասաց թէ «Քակեցէք զտաճարս» (Յովհ. Բ 19), իսկ «ոսկի» զԲանն յաղագս անապականութեանն: Արդ՝ ոմանք ի մարդեղութիւն Բանին զԲանն մեծ համարին քան զմարմինն, զորոց յանդիմանէ զանմտութիւնն, քանզի յետ միութեանն եւ հաճութեամբ առնլոյ զմարմինն ոչ է գերազանցութիւն եւ նուաստութիւն, զի թէպէտ է իսկ երկնային եւ երկրային, արարիչ եւ արարած, սակայն նոյնն որ երկնային, նա եւ երկրային՝ ըստ Իւր ասիցն թէ՛ «Ոչ ոք էլ յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից՝ Որդին Մարդոյ, որ էն յերկինս» (Յովհ. Գ 13): Վասն զայս կարծիս խափանել կամելով՝ առաւելութեամբ վարի. զի՞նչ մեծ է, ոսկի՞ն, եթէ² Տաճարն, որ սրբէ զոսկին. ոչ եթէ զմարմինն վեհագոյն ասէ քան զԲանն, քա՛ւ լիցի, բայց զի պատճառ Բանին պատարազի՝ մարմինն եղէ: Քանզի առանց մարմնոյ տաճարին անհնարին էր մեռանիլ Աստուծոյ եւ կամ զմեզ փրկել, թէպէտ յամենայնի էր կարող, բայց զայս վստահանամ անկարելի ասել: Վասն որոյ մարմինն էառ, որով հնարն գոյր մեռանել, եւ մեռեալ Իւր մարմնովն փրկեաց զմեզ, որպէս ասէ, թէ մարմինն է, որ ետ զԱստուած ի մահ վասն մեր՝ բնութեամբ եւ տնօրինաբար, զի Աստուած անմահ է եւ եղէ մեռեալ³:

¹ Զ յեղջեր

² Զ թէ

³ Զ ասի] եղէ մեռեալ

Դարձեալ եւ երկրորդ բանին միւս կարծեաց ընդդիմանայ, որք յայսմանէ պատճառ առեալ ասեն, թէ որովհետեւ մարմինն եղև պատճառ Բանին տնօրէնութեան, ապա ուրեմն մարմինն մեծագոյն է քան զԲանն, քանզի ասեն. «Որ երդնու ի սեղանն չէ՛ ինչ», այսինքն յԱստուած, կամ ի խաչն, յորոյ վերայ պատարագեցաւ, իսկ «որ երդնու ի պատարագն», որ ի վերայ խաչին հանդերձ մարմնովն մեռաւ, «արժան է»: Որոց իբր անմտաց սաստէ «զի՞նչ մեծ է» ասելով «պատարա՞գ» մարմնոյն, եթէ «սեղան» Բանին կամ խաչն, որ ետ զմարմին Իւր պատարագ վասն մեր՝ ըստ այնմ. «Չոր Հայր սրբեաց եւ առաքեաց յաշխարհ» (Յովհ. Ժ 36), այսինքն Հօր կամաւ Բանն Աստուծոյ սրբեաց զառաքեալ մարդն պատարագ Հօր եւ հոտ անուշից, եւ թէ՛ «Իշխանութիւն ունին դնել զսա՛» (Յովհ. Ժ 18): Արդ զայս ասելով ոչ եթէ զանագանութիւն ինչ մուծանէ յԱստուած կամ ի մարմինն, այլ որպէս ասացաք, թէ հակառակ կարծեացն պատասխանի առնէ: Յայտ է յաջորդէս, զի հաւասար ցուցանէ զառեալն եւ զառօղն ըստ բնութեանն եւ ըստ տնօրէնութեանն:

Իսկ արդ՝ որ երդուաւ ի սեղանն, երդնու ի նա եւ յամենայն որ ի վերայ նորա է (ԻԳ 20):

Եւ որ երդուաւ ի Տաճարն, երդուաւ ի նա եւ ի Բնակիչն նորա (ԻԳ 21):

Եւ որ երդուաւ յերկինս, երդնու յաթոռն Աստուծոյ եւ յԱյն, որ նստին ի վերայ նորա (ԻԳ 22):

Տեսանէ՞ս, թէ որպէս պարզեաց զասացեալն. զի յետ անճառ միութեանն ոչ այլ գտանի զանագանութիւն, քայց ըստ առաջին կարգին զհրէայսն յանդիմանէ, մանաւանդ զվարդապետսն նոցին, որ զայս ուսուցանէին, եւ ցուցանէ, թէ մի է սեղանն եւ պատարագն, եւ Տաճարն եւ ոսկին, եւ երկինքն եւ Բազմեալն ի նմա, եւ ոչ է բաժանեալ պատարագն ի սեղանոյն, զի թէպէտ միսն այրի, սակայն պատարագն մնայ անձախելի: Այսպէս եւ երկինք ոչ երբէք թափուր է յԱստուծոյ, եւ կամ Տաճարն ի Նմանէ, քանզի զոր անդ «ոսկի» ասաց, աստ «բնակիչ» անուանէ՝ զսրբութիւն սրբութեանցն կոչելով, յորում էին քերովբէք ոսկի եւ շուրթն ոսկի, յորոց միջի աստուածխօսութիւնք:

¹ Զ զնա

Վա՛յ ձեզ դայրաց եւ փարիսեցոց կեղծաւորաց, զի տասանորդէք զանանոյս եւ զամիթ եւ զչաման, եւ թողէք զծանր ծանր Օրինացն՝ զդատաստան եւ զողորմութիւն եւ զհաւատս. զայս արժան էր առնել եւ զայն չթողուլ (ԻԳ 23):

Տես եւ այլ ախտ ի նոսա, զի զմանունսն հաւաստիս պահանջէին եւ զմեծամեծօրն քամահանս առնէին: Քանզի զի՞նչ մեծ քան զդատաստանն, որ Աստուծոյ է, զոր զգուշացուցանէր առանց կաշառոց եւ ակնառութեան առնել եւ ոչ թիրել զիրաւունս աղքատի¹: Իսկ «ողորմութիւն» առ ընկերս, մանաւանդ առ աղքատս, զորս առաւել կամի [քան] զպատարագ՝ ըստ մարգարէին թէ՛ «Չողորմութիւն կամիմ եւ ոչ զգոհ²» (Ովսէէ 2 6): Եւ «հաւատ» կամ զնոյն ինքն զողորմութիւնն՝ յորժամ արասցէ, հաւատայ, թէ փոյս ետ Աստուծոյ, եւ ոչ ի փառս մարդկան հայեացի, այլ ի փառս Այնմ, որ զօրէնս ողորմութեանն ետ, կամ զառ ի յԱստուած դաւանութիւնն «հաւատ» ասէ՛ ըստ այնմ. «Ես եմ Աստուած, եւ չիք այլ ոք բաց յԻնէն» (հմմտ. Բ Օր. ԼԲ 39), եւ կամ զաղօթս «հաւատ» կոչէ: Արդ՝ զայսպիսի մեծամեծս արժան էր առնել, որոց զործելն շահուց, իսկ արհամարհելն տուժից է առիթ, մանաւանդ զի տասանորդէլն ոչ խափանէր զողորմութիւն առնելն, զորս ոչ իբրեւ զօրէնս պարտ էր պահել եւ զոսսա խափանել:

Առաջնորդք կոյրք, որ զմծղուկս քամէք եւ զուղտս կլանէք (ԻԳ 24):

Ի նոյն յառաջ ասացեալն հայի եւ այս, որ զչաման տասանորդէին ճշդիւ եւ զմեծագոյն օրէնս քամահէին, զոր «ուղտս» ասէ, եւ ոչ միայն այս, այլեւ այն անվնաս էր, թէպէտ ծածկէին, եւ այս մեծագոյն վնաս զործէր, յորժամ կլանէին: Իսկ ասելն «առաջնորդք կոյրք» այսպիսի իմն ցուցանէ. զի որ կոյր է համարեալ, եթէ ոչ առաջնորդի կարօտի, անհնարին վիշտ եւ թշուառութիւն է նմա, իսկ մտաբերելն եւ այլոց եւս³ առաջնորդել՝ ո՛րչափ եւս հիգութիւն է: Դարձեալ՝ են ոմանք, որ զմարմնաւոր սրբութիւնն ասեն «մծղուկ», վասն զի փոքունք են եւ ոչ պիտանացուք, իսկ զհոգւոյն «ուղտս», զի անհնարինք են եւ մեծամեծք, որպէս եւ զսոյն յաջորդաւս կրկնէ:

¹ Ելք ԻԳ 6-7, Բ Օր. ԺԶ 19-20

² Զ զոհ

³ Տ > եւս

Վա՛յ ձեզ դպրաց եւ փարիսեցոց կեղծաւորաց, զի սրբէք զարտաքին զբաժակին եւ զսկաւառակին, եւ ի ներքոյ լի են յափշտակութեամբ եւ անխառնութեամբ (ԻԳ 25):

Յուցանէ, թէ ոչ¹ մի ինչ վնաս լինի [յ]արհամարհելոյ զմարմնաւոր սրբութիւն, եւ մեծամեծ պատիժք են որ ոչ զգան զհոգւոյն սրբութիւն, որ է առաքիւնութիւն, քանզի առ մեծամեծ չարեօքն եւ մոլեալք փառասիրութեամբ՝ մարմնոյ սրբութեան պատկառ կային, եւ զարդար առաքիւնութենէ անփոյթ առնէին: Եւ ո՛չ վայրապար «բաժակ» եւ «սկաւառակ» կոչէ, այլ վասն դիրաբեկ գոլոյն եւ զօրէն փխրանի լուծանելոյն. կամ թէ՛ աման է հոգւոյն, զոր եւ ոմն «պարկ» անուանեաց. արդ՝ ամանին սրբութիւն ոչինչ է, յորժամ ի ներքս զփարթամութիւնն ոչ ունիցի:

Իսկ զի՞նչ է այն թէ՛ «ի ներքոյ լի են յափշտակութեամբ եւ անխառնութեամբ»: «Ներքին» զհոգին ասէ եւ զմիտս. նախ զի ծածուկ է եւ անտես, եւ երկրորդ՝ զի նուրբ է եւ թափանցիկ, մինչ զի ի ներքին յախ մտանել զօրէ: Չսա ասէ թէ յափշտակութեամբ պղծեալ է, որ է զրկութիւն ընկերի կամ պատուոյ կամ ընչից եւ առ հաւասարն զերազանցութիւն, քանզի ոչ այլ ինչ է յափշտակութիւն, քան թէ ի մասն իւր առաւելուլ, որ է մեծ անիրաւութիւն: Իսկ «անխառնութիւն» կամ զայն ասէ, որ յայլոց առնու զրկութեամբ եւ ինքն բնաւին ումեք ոչ հաղորդի, որ է կրկին չար, կամ թէ «անխառն» պարկեշտ անուամբ զխառնակն եւ զպիղծն ասէ, զի ոչ որ խառնի ի նա վասն աղտեղութեանն:

Փարիսեցի՛ կոյր, սրբեա նախ զներքին բաժակին եւ զսկաւառակին, զի լինիցի եւ արտաքինն նոցա սուրբ (ԻԳ 26):

Սկաւառակի արտաքին մարմնոյն ներքին հոգին է, որպէս ասացաք. արդ ցուցանէ, թէ սորա սրբութիւնն հարկաւոր է, յորում կերակրի Սատուած, եւ արտաքինն զհետ երթայ սրբութեան սորա: Չիա՞րդ. աղբիւր սրբութեան եւ պղծութեան մարմնոյն միտքն է, որպէս յայլում տեղոց ասաց Տէր թէ՛ «Ի սրտէ ելանեն չարութիւնք» (հմմտ. Մատթ. ԺԵ 18-19), եւ այն պղծէ զմարդ, զի որում հոգի սուրբ է, նորա եւ մարմինն՝ անարատ: Հանդերձ այսու ցուցանէ եւ զայն, թէ մի են հոգի եւ մարմին, զուգահասակք եւ հանգի-

¹ Զ եւ ոչ

տապատիրք, վասն այսորիկ ի մի¹ անօթ բաղդատեաց, որ ունի ներքին եւ արտաքին երես՝ հայելի միմեանց: Իսկ ի դէմս փարիսեցոց ասելն, թուի թէ ի սնափառութեան ախտս առաւելագոյնք էին սորա, քան զայլսն:

Վա՛յ ձեզ դպրաց եւ փարիսեցոց կեղծաւորաց, զի նման էք գերեզմանաց բռեւոց, որ արտաքոյ երեւին զեղեցիկք եւ ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց եւ ամենայն պղծութեամբ (ԻԳ 27):

Նոյնպէս եւ դուք արտաքոյ երեւիք մարդկան արդարք եւ ի ներքոյ լի էք կեղծաւորութեամբ եւ անօրէնութեամբ (ԻԳ 28):

Տակաւին զսնափառութեանն ախտ բամբասէ, գորս «կեղծաւորս» կոչէ, որ բազում չարեաց եւ կորստեան պատճառ է, վասն որոյ ոչ միայն «գերեզմանս բռեալս» կոչեաց, այլեւ «պղծութեամբ լի», այսինքն ժահահոտ ոսկերօք եւ նեխեալ անդամօք²՝ զագիր խորհրդովք եւ մեռելոտի գործովք, որք մարմնոյ սրբութեամբ՝ արդարք բազմաց երեւիք եւ հոգւով զանճառելիս բարբառիք, որ բազում ողբոց արժանի է եւ յետին թշուառութեան: Որ եւ պատճառ իսկ եղև ոչ հաւատալոյ ի Քրիստոս, որպէս եւ են այժմ բազումք կեղծաւորեալք արտաքին մարդովն եւ պատարուն եղեալ չար ցանկութեանն խորհրդով, որք եւ քան զորդունս պիղծ են, ուր ոչ Քրիստոս բնակէ, եւ ոչ Հոգին Սուրբ ազդէ զօրութիւնս: Չի այժմ կենդանի՝ մարմնով եւ մեռեալք են հոգւով, եւ ի վախճանել մարմնոյն կորնչին հոգւով եւ մարմնով, քանզի յառաջ զչարեացն ախտ բամբասեաց, իսկ այժմ թէ՛ եւ մեռեալք եւս են՝ առանց խղճմտանաց ի նոյնս բերելով՝ ըստ այնմ թէ՛ «Են մեղք, որ մահուչափ են» (Ա Յովհ. Ե 17). վասն այսորիկ գերեզմանաց բաղդատէ:

Վա՛յ ձեզ դպրաց եւ փարիսեցոց կեղծաւորաց, զի շինէք զշիրինս մարգարէից եւ զարդարէք զգերեզմանս արդարոց (ԻԳ 29)

եւ ասէք. «Եթէ³ էաք յաւուրս հարցն մերոց, ոչ հաղորդէաք արեան մարգարէիցն» (ԻԳ 30):

Ապա ուրեմն վկայէք զանճանց, եթէ որդիք էք այնոցիկ, որ կոտորեցին զմարգարէսն (ԻԳ 31):

Եւ դուք լցէ՛ք զչափ հարցն ձերոց (ԻԳ 32):

¹ Տ մի

² Գ որդեամբք

³ Գ թէ

Այս է կատարումն ամենայն չարեաց՝ արեանհեղութիւնն, վասն որոյ եւ եօթներորդ վայիս ցուցանէ, թէ Կայենի ախտին ախտացեալ էին եւ նորին եօթն վրիժուքն առլցեալ¹ վասն եօթն զգայութեամբքն ի չարիս միտելոյ լրմամբ եօթն աւուրքք շաբաթուն, որով զրկեալ լինէին յեօթնարփեան շնորհաց Հոգւոյն, որոց յիրաւի՝ վայ տայ նոցա: Բայց ոչ միայն զի շինէին եւ մեղադիր լինէին հարցն վայ տայ նոցա, այլեւ այնու, որով զհարսն պատճառէին, յանդիմանեալ ինքեանք՝ եւս առաւել չարիս հանդերձեալ էին զործել, թէպէտ ասէին. «Թէ էաք յաւուրս հարցն մերոց, ոչ հաղորդէաք արեխան մարգարտիցն»²: Քանզի պատճառք են այս, ասէ, թէ շինելովդ՝ զնոյն կամիք՝ ըստ Ղուկայ³, զի ոչ վասն պատուելոյ զսպանեալսն շինէին, այլ ձաղէին զնոսա սպանութեամբն եւ կասկածէին, թէ զուրեք ժամանակաւ յապականեալ գերեզմանաց յիշատակ հարցն խափանեացի, վասն որոյ գեղեցիկ եւ զարդարուն առնելով զգերեզմանս, զոր շինէին՝ նշան յաղթութեանն հարցն կանգնէին:

«Ապա ուրեմն,- ասէ,- վկայէք զանձանց, եթէ որդիք էք այնոցիկ]....»: Յայտնապէս ցուցանէ, թէ ազգակից լինելովդ՝ եւ գործոցն լինելոց էք կցորդ, ոչ ըստ այնմ, զի որդիք էք նոցա, քանզի ոչ մեղադրութիւն է որդի սպանողի կոչիլ, այլ ըստ այնմ, զի զնոյն գործելոց էք՝ ոչ զժառայսն, այլ զՈրդին սպանանելով, որպէս ասէին. «Սա է ժառանգն, եկայք սպանցուր...., եւ հանեալ արտաքոյ այգւոյն՝ սպանին» (հմմտ. Մատթ. ԻԱ 38-39): Արդ եթէ ի Տէրն չխնայեցին, ի ծառայիցն արեանց զհա՞րդ ի բաց կային, թէպէտ բաղբաղէին, վասն այտորիկ ասէ թէ՝ «Դուք լցէք զչափ հարցն ձերոց»: Չլինելոցն յառնելեացն զուշակէ եւ ոչ եթէ հրամայէ առնել, այսինքն՝ զԻրոյ անձինն սպանութիւն, զի նոքա՝ զժառայսն, եւ դուք՝ զՏէրն, որով լցաւ չափ մեղաց նոցա, եւ ի զլուխ ել սպանութիւն կամաց նոցա: Կամ՝ որպէս նոքա սպանողք, այսպէս եւ դուք, զի նոքա կամօք ձեզ կցորդ վասն սպանութեան մարգարտիցն, եւ դուք գործովք նոցա հաղորդ վասն առ Իս յանդգնելոյ, քանզի սպանութեամբ վերջնոցս խոստովան եղեւ ժողովուրդն, թէ հաղորդին առաջնոցն խոստովանութեամբ յիրեանց բերանս⁴: Բայց թէ

¹ Ծննդ. Դ 1-5

² Զ > արե...

³ Ղուկ. ԺԱ 48

⁴ Զ ~ բերանս յիրեանց

ընդէ՞ր զայս դնէ, ինձ թուի՝ յապաշխարութիւն կոչէ վասն Իւր սպանութեանն զնոսա, որում չէր հնար ապաշխարութիւն վասն մարգարէիցն արեանհեղութեանն, զի «Որ սպանանէ, մեռցի» (հմմտ. Թիւք ԼԵ 21),- ասացաւ յՕրէնսն, եւ ո՛չ ասաց՝ թէ դարձցի թողցի նմա, որով զԻւր մարդասիրութիւնն ցուցանէ եւ զգալստեանն Իւրոյ փրկութիւն:

Օճք, ծնունդք իժից, զիա՞րդ փախնուցոք ի դատաստանէ գեհեմին (ԻԳ 33):

Ետես կանխազէտ զօրութեամբն, թէ ոչ են զղջանալոյ եւ ի բաց կալ ի չարեացն գործոյ, որպէս զօճն առաջին, ծանրացատուն եղեւ՝ ասելով թէ՝ «Օճք, ծնունդք իժից»: Այսինքն չարք՝ չարաց որդիք եւ քան զծնօղն անչափ միտեալք ի չարիս, կամ սպանօղք՝ սպանողաց ծնունդք, զի նոքա զծառայսն կոտորեցին, եւ դուք՝ զՈրդին եւ զնոսա, որ ի հարսանիսն կոչեցին: Եւ դարձեալ զայս ասելով՝ զՅովհաննու ամբաստանութիւնն յուշ առնէ նոցա, միանգամայն եւ ցուցանէ, թէ Նա՛ [է], վասն որոյ Յովհաննէս վկայեաց¹: «Ձիա՞րդ փախնուցոք ի դատաստանէ գեհեմին». անհնարին է, ասէ, զերծանել ի տանջանացոյ վասն մեծի յանդգնութեանդ, զոր յանդգնեցայք: Եւ ա՛յլ ազգ. սպեղանիս մեղաց ապաշխարութիւնն է. արդ դուք, ասէ, ոչ միայն ոչ զղջացայք² ի վերայ հարցն չարեաց, այլեւ զնոցայն գործէք եւ ի նոյն եւս յամառիք առանց զղջման, ասպա զիա՞րդ զերծանիք ի սպանողացն վրիժուց, որոց գեհեանն է պատրաստեալ ըստ այնմ. «Երթայք ի հուրն, որ պատրաստեալ է սատանայի» (հմմտ. Մատթ. ԻԵ 41), «որ ի սկզբանէ մարդասպանն էր» (Յովհ. Ը 44):

Վասն այդորիկ ահաասիկ Ես առաքեմ առ ձեզ մարգարէս եւ իմաստունս եւ դպիրս, եւ ի նոցանէ սպանանիցէք եւ ի խաչ հանիցէք եւ ի նոցանէ տանջիցէք ի ժողովորդս ձեր, եւ հալածիցէք ի քաղաքէ ի քաղաք (ԻԳ 34):

«Վասն այդորիկ³»՝ յայտ է թէ՛ վասն այնորիկ, զի ասացէք. «Թէ էաք յաւորս մարգարէիցն, ոչ հաղորդէաք արեան մարգարէիցն», եւ թէպէտ զՏէրն ընդ խաբ խաչեցաք, այլ ի ծառայսն ոչ ժխտէաք: Ահա, ասէ, առաքեմ առ ձեզ ծառայս, որ եւ նոքա մար-

¹ Մատթ. Գ 7, 11-12

² Զ զղջանայք

³ Զ որոյ

գարեք իցեն եւ իմաստունք եւ դպիրք, եւ ի նոցանէ զոմն սպանանիցեք, որպէս զՅակոբոս եւ զՏեառնեղբայրն, եւ զոմանս տանջեցին, որպէս զառաքեալսն ի¹ յատենին, եւ զաշակերտսն հայածեցին, եւ զՆա իսկ գլխովին խաչեցին, որով յայտ եղեւ, թէ չէ ինչ օտարոտի սպանանել զՅիսուս՝ որդոց նոցա, քանզի եւ նոքա սպանօղբ եւ տիրադրուժք էին:

Որպէս զի եկեսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ յերկրի՝ յարենէն Աբելի արդարոյ մինչեւ ցարիւնն Չաքարիայ որդոյ Բարաքեայ, զոր սպանէք ընդ մէջ Տաճարին եւ սեղանոյ (ԻԳ 35):

Ամէն ասեմ ձեզ, եկեսցէ՛ այն ամենայն ի վերայ ազգիս այսորիկ (ԻԳ 36):

Ընդէ՞ր զսոսա առաւել տանջէ, մինչ զի զառաջնոցն յանցանս ի սոցանէ պահանջէ: Կամ՝ զի ի մեծագոյնս յանդգնեցան եւ չար քան զամենեսեան եղեն եւ ոչ իւրք ի գործելոց զգաստացան, զի որպէս արդարքն սպանեալք օրինակք եղեն ճշմարիտ Արդարոյն մահուան, նոյնպէս եւ սպանօղբ նոցա նախատիպք գտան այժմու սպանողացս յանցաւորութեան, որ կատարեցին զբաղձանս նոցա՝ սպանանել զՎրէժխնդիրն սպանողաց, որ խնդրելոց էր զվրէժ ծառայից Իւրոց²: Չի այն, որ զդատաւոր սպանանէ, բարեկամ է նա սպանողաց՝ ընդարձակելով ճանապարհ նոցա, վասն այսորիկ զնոցայն ի սոցանէ խնդրէ: Եւ կամ թէ՛ սոքա առաջնոցն վրէժխնդրութեամբ ոչ զգօնացան, քանզի ոչ եթէ լռեաց Աստուած ընդ գործս կամ ոչ պահանջեաց ի նոցանէ պատիժս, կամ թէ սոքա ոչ զհտացին զինչ անցք ընդ Կային անցաւ, վասն այսորիկ եւ զսոսա առաւել տանջէ, որպէս զՂամէք: Չի թէ ի Կայինէ եօթն վրէժս, իսկ ի Ղամէքայ՝ եօթանասնեկին եօթն³, զի առաջնովն ոչ խրատեցաւ, նոյնպէս եւ հաւասար բոլորիցն սոքա պատժեսցին: Որպէս ասէ, թէ «եկեսցէ այն ամենայն ի վերայ ազգիս այսորիկ», ոչ ի հրէիցն, այլ ի սպանողացն, որ ազգ են առաջնոց արիւնահեղիցն եւ ոչ խրատեցան նոցա պատուհասիւն, որպէս Հերովդէս, որ կամէր ընդ մանկունսն սպանանել⁴, եւ նազարեթացիքն զահալէժ առնել⁵: Սոքա ամենեքեան հաղորդ են պատուհասից նոցա, զի թէ-

¹ Գ > ի

² Սաղմ. ԳԸ 10

³ Ծննդ. Դ 15, 24

⁴ Սատք. Բ 16-18

⁵ Ղուկ. Դ 29

պէտ ոչ սպանին, այլ յօժարեցին, զի չէր մարթ արտաքոյ Երուսաղէմի մեռանել¹, որպէս եւ զպատարագսն անդ կատարէին վասն փրկութեան իւրեանց՝ ըստ Մոսիսի օրինացն, բայց յորժամ երուսաղէմացիքն սպանին, եւ նորա՝ հաղորդ եղեն սպանութեան նոցա, որպէս ասէ: Իսկ զի զԱբէլ յիշէ՝ ո՛չ վայրապար, այլ զի յայտ առնէ, թէ առ նախանձու եւ այս սպանութիւն գործի:

«Մինչեւ ցարիւնն Չաքարիայ որդոյ Բարաքեայ, զոր սպանէք ընդ մէջ Տաճարին եւ սեղանոյ»: Ոմանք զայս զհայրն Յովհաննու ասեն, քանզի սպանին զնա հրէայքն ընդ մէջ Տաճարին եւ սեղանոյն վասն կարգելոյ զՄարիամ ի կարգ կուսանացն, յորժամ ընծայեաց զմանուկն Յիսուս, որպէս վկայէ Բասիլիոս եպիսկոպոսապետն Կեսարու Կապադովկացոց ի գիրս պահոցն: Իսկ այլք՝ զմարգարէն՝ որ յետ դարձին, եւ ոմանք՝ զայլ ոք երկանուն քահանայ, զոր Յովիդայ կոչեն զիրք, զսա, ասեն, եսպան Յովաս թագաւորն ընդ մէջ Տաճարին եւ սեղանոյն: Որ եւ կրկին ժպրհութիւն էր նոցա, զի ոչ միայն զստորքսն կոտորէին, այլեւ ի սուրբ տեղոջ, եւ ոչ ամաչէին ի Քաւութենէ անտի եւ յերեսացն մեծարանացն: Որ եւ զյակամայ սպանօղսն զերծուցանէր տեղին այն², նորա զանմեղսն անդ սպանանէին: Եւ այսու ո՛չ զնոսա միայն երկեցուցանէ, այլեւ զաշակերտսն մխիթարէ, թէ եւ արդարք նախ քան զնոսա զնոյն կրեցին: Եւ թէ զԻւրն ընդէ՞ր ոչ յիշէ զսպանութիւն եւ կամ զվրէժխնդրութիւն՝ ո՛չ յիշէ, զի առաջնոցն յիշատակաւ՝ վերջնոցն զգուշացին, եւ վրէժ ոչ պահանջէ, զի ոչ էին սպանեալ զՆա, այլ տակաւին հանդերձեալ էր լինել:

Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ կոտորէր զմարգարես եւ քարկոծ առնէր զառաքեալսն առ նա (ԻԳ 37):

Այս ձայն է ողբական, է եւ սպառնական. ողբական՝ որպէս բժիշկ, որ բազում անգամ զգուշացուցանէ զհիւանդն ի վնասակար կերակրոց, որ մահուց է առիթ, եւ նա ոչ զգուշանայ, սկսանի այնուհետեւ ողբալ զհիւանդն, իբր թէ ինքն իսկ զանձն սպանանէ: Նոյնպէս եւ Տէր յետ բազում զգուշութեանն ասէ «Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ», որ կերպարանք են սիրոյ եւ ցաւակցութեան: Իսկ սպառնական՝ իբր թէ՛ Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, զայս ինչ եւ զայս

¹ Ղուկ. ԺԳ 33

² Թիւք ԼԵ 11-15, Բ Օր. ԺԹ 4-10

արարեր, այսուհետև վրիժուց է ժամանակ: Եւ երկիցս կրկնելն կամ զստուգութիւն¹ իրացն ասէ, որ հասանելոց էր, կամ զի զերկուսին կոչէ Երուսաղէմ՝ զքաղաքն եւ զքնակիչսն, քանզի քաղաքն տապալելոց էր, եւ բնակիչքն ի գերութիւն վտարելոց:

«Որ կոտորէր զմարգարէս եւ քարկոծ առնէր զառաքեալսն» իրաւունս դնէ առաջի, զի թէպէտ կրես պատիժ, ասէ, ո՛չ է առանց յանցանաց, այլ զի սպանօղ եղեր սպիիրատ՝ արդար արանց, քանզի սպանին զբազումս ի մարգարէիցն, որպէս զԵսայի, որպէս զԶաքարիա, եւ քարկոծեցին զԵրեմիա եւ յետոյ զՍտեփանոս, որք ոչ չարիս հասուցանէին նոցա, այլ զհանդերձեալն պատմէին, որպէս մարգարէքն, եւ աւետիս տալին փրկութեան նոցա, որպէս առաքեալքն: Քանզի զայս իրաւունս եւ առ մարգարէքն առնէր. «Դարձ², - ասէ, - առ Իս, եւ ոչ դարձաւ» (Երեմ. Գ 7), վասն որոյ եւ պատժէր: Նոյնպէս եւ աստ կոչէ յանուանէ եւ զանիրաւ սպանութիւնն ցուցանէ եւ սպա զվճիռն տայ: Իսկ ասելն «կոտորէր զմարգարէս», զառատ եւ զանխնայ սպանումն նոցա նշանակէ, որ իբր զխոտ ի դաշտի խոդխոդէր զմարգարէսն:

Քանի՛ցս անգամ կամեցայ ժողովել³ զմանկունս քո, զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւովք, եւ ոչ կամեցարուք:

Այսու վասն անձին իրաւունս տայ, թէ եւ ոչ այդպիսի իրօք դարձար, զի «քանիցս» ասելն զանչափ եւ զանթիւ խնամսն նշանակէ, որպէս ուսաք յառակ թզենոյն թէ՛ «Այս երեք ամբ են զամ խնդրել պտուղ եւ ոչ զտանեն» (հմմտ. Ղուկ. ԺԳ 7): Եւ զխնամսն հաւու առակէ, քանզի ջերմն է թռչունն այն առ որդիս իւր, եւ յօրհնութիւնսն զնոյն ասաց թէ՛ «Տարածեաց զթեւս Իւր» (հմմտ. Եզեկ. ԺԶ 8) եւ ընկալաւ պէսպէս տեսչութեամբ՝ մարգարէիքն եւ թագաւորօքն եւ պարգեւօքն, մանաւանդ զալստեամբն Իւրով հովանի առնելով նոցա զմարմինն, այլեւ զհաչն, եւ ոչ կամեցան փրկութեանն հասանել եւ ի խնամս Նորա վայելել, վասն այսորիկ ասէ.

Ահա թողեալ լիցի⁴ ձեզ տունդ ձեր անբակ (ԻԳ 38):

¹ Զ զստուգութիւն

² Զ դարձեալ

³ Զ > ժողովել

⁴ Զ լիցին

Այսինքն՝ մերկ յԻմնէ՛ խնամոցս եւ ամայի յօգնականութենէ շնորհաց, որով յառաջագոյն յանձանձէի ձեզ, քանզի եւ այս սիրոյ ցոյցք էր՝ ընդ ձեղուամբ գերանաց ձերոց բնակել. այսուհետեւ տունդ ձեր, գոր շինեցիր Ինձ, ձեզ եղիցի, եւ ո՛չ Ես: Եւ այլ ազգ. աւերման տանդ ձերոյ ո՛չ Ես, այլ դո՛ւք եղէք [պատճառ], զի գործք ձեր աւերեաց զտունդ ձեր: Եւ դարձեալ յանկարծ գերի գնալով ձեր՝ թողեալ լիցին տունք ձեր, եւ նոքա առանց խնամողի մնացեալ աւերին, որով ցուցանէ, թէ յամելոց են ի գերութեանն: Իսկ առ ի միտս՝ տուն է մարմինն, եւ բնակիչ՝ հոգին, եւ շէն են¹ սոքա, յորժամ աստուածպաշտութեամբ զարգացեալք են. այլ նոքա զի ոչ ունէին զճշմարտութիւնն Որդոյ, որով եւ զՀայր իսկ ճանաչեալ էին, ամայի եւ աւերակ մնային յուղիղ հաւատոյ եւ բարութ գործոյ:

Բայց ասեմ ձեզ, թէ ո՛չ ես² տեսանիցէք զԻս յայսմհետեւ, մինչեւ ասիցէք. «Օրհնեա՛լ եկեալ յանուն Տեառն» (ԻԳ 39):

Կամ թէ՛ յետ ասելոյ զբանս զայս այլ ոչ տեսին զՆա մինչեւ յօր Ողորմենին, որ եմուտ յԵրուսաղէմ յաւանակաւ, որում մանկունքն զովսաննայն եւ զօրհնութիւն յանուն Տեառն երզէին: Եւ է՞ր վասն զայս ասէ. կամի զնոսա զԻրեաւ ձգել ի ձեռն սիրոյ, քանզի նոքա ցանկ այնմ մեղադիր լինէին, թէ Աստուած ոք հակառակ Աստուծոյ իցէ: Նովին յորդորէ զնոսա սիրել զՆա, որով միաբան ցուցանէ զանձն ընդ Հօր՝ ի մանկանցն եւ ի ժողովորդեանն վկայութենէ, կամ թէ զյարութենէն ակնարկէ եւ գերկրորդ գալստենէն: Եւ թէ «յայսմհետեւ» ասաց, մի՛ ինչ զարմանար, զի զհաշին ժամանակն նշանակեաց, որպէս թէ ասել այլ ոչ կամիմ ուսուցանել զձեզ եւ կամ վարդապետութեամբ խօսակից լինել մինչ ի միսանգամ գալուստն, յորժամ գայցեմ փառօք Հօր, եւ ամենեքեան, որք այժմ յանհաւատութեան էք, յերկիր պազանիցէք՝ փառաւորելով զանուն Իմ յաիտեան ընդ Հօր, յորմէ ոչինչ օգտիք, այլ մանաւանդ դատապարտիք, զի ոչ է փրկութեան ժամանակն, այլ դատաստանի եւ հատուցման: Մանաւանդ զի ոչ յօժարութեամբ, այլ ակամայ ի փառացն³ բռնադատեալ «ամենայն լեզու խոստովանի Տէր զՅիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր» (Փիլ. Բ 11) եկեալ

¹ Գ շինեն] շէն են

² Գ > եւս

³ Տ փառաց

յաշխարհ միասնագամ, որ եւ փրկեցէ զխոստովանօղս անուան Իւրոյ եւ արժանատրս արասցէ «կերպարանակից առնել զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց Իւրոց» (Փիլ. Գ 21), առ ի լինել «Աստուած ամենայն յամենայնի» (Ա Կոր. ԺԵ 28) շնորհօքն Հօր եւ գթութեամբ Հոգւոյն Սրբոյ, որում փառք եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից: Ամէն:

ԳԼՈՒԽ ԻԳ

Եւ ելեալ արտաքս Յիսուս ի Տաճարէն՝ գնայր, եւ մատեան աշակերտքն ցուցանել Նմա զշինուածս Տաճարին (ԻԳ 1):

Քանզի ոչ լուան Նմա բնակիչք Տաճարին, թողու զնոսա եւ զնայ, որպէս եւ յայնժամ, զի թողեալ զնոսա ել արտաքոյ քաղաքին ի Բեթանիա եւ անդ ագաւ¹: Արդ՝ որպէս անդ «արտաքոյ քաղաքի»-ն զհեթանոսս նշանակէր, որ հեռացեալ ի հրէիցն հանգեալ ի հեթանոսս, նոյնպէս եւ աստ ելանելն ի Տաճարէն զշնորհաց մերկանայն ի նոցանէ ցուցանէ, զի այլ ոչ փրկութիւն գտանէր, որպէս յերէկն եւ յեռանդն, զի «Յիսուս»-ն փրկիչ լսի, եւ զգնայն յԵկեղեցիս հեթանոսաց օրինակէ: Իսկ մատչել աշակերտացն՝ «ցուցանել Նմա զշինուածս Տաճարին»՝ զի լուան ի Նմանէ թէ՛ «Թողեալ լիցի ձեզ տունդ ձեր ւաւերակ», եւ թէ զայգին տացէ այլոց, իբր զարմանալով իմն, մատուցեալ ցուցանէին Նմա զգեղեցկութիւն Տաճարին եւ զամբողջութիւն, թէ զիա՞րդ այնչափ գեղեցկութիւնն ապականիցի, եւ ազգի ազգի նիւթք եւ հնարք արուեստիցն, հաստահեղոյս վիմօք ամրացեալ եւ աշտարակօք զարդարեալ, տապալիցի: Այլեւ զյարմարութիւն պատարագացն եւ ժառանգաւորացն ասէին «շինուած Տաճարին», թէ որպիսի կարգաւոր էր՝ ցուցանէին, որպէս զի թերեւս ի գութ շարժիցի եւ զվճիռ ւաւերմանն փոխել յօժարիցի:

Եւ Նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. «Տեսանէ՞ք զայդ ամենայն. ամէն ասեմ ձեզ, ո՛չ մնացէ այդր քար ի քարի վերայ, որ ոչ քակտեսցի» (ԻԳ 2):

Անհրաժեշտ տայ զվճիռն, զի զայսպիսի չքնաղ շինուած եւ ամրագոյն, զոր տեսանէք բազում խանդիւ շինեալ ի Սողոմոնէ եւ

¹ Մատթ. ԻԱ 17

ի Ջորաբաբելէ, «ոչ մնասցէ այդր քար ի քարի վերայ¹, որ ոչ քակտեսցի»: Է՞ր վասն ասացէ որ. «քանզի ոչ եթէ Բարձրեայն ի ձեռագործ տաճարս բնակէ» (Գործք Է 48), այլ զայս՝ իբր² նիւթ եւ առաջնորդ, թոյլ տայ երկրորդ կամօք վասն կազմութեան առաքինութեանն շինուածոց, որպէս զի բնական եւ կենդանի տաճար զանձինս յօրինիցեն Աստուծոյ ի բնակութիւն: Իսկ յորժամ յայսմանէ մարդիկք աւերակք իցեն, այնուհետեւ զնիւթականն եւ զանշունչն տապալէ, զի մի՛ Աստուած նիւթ կարծեցեալ գուցէ եւ կամ ի նիւթեղէնս բնակեալ: Եւ զի սոքա այնպիսիք էին, ասէ եւ վասն տանն թէ՛ «Ոչ մնասցէ այդր քար ի քար վերայ»: այսինքն ոչ թէ միայն աւերի, այլեւ ամենեւին արահետ լինի, ոչ միայն շինուածք սորա, այլեւ բնակիչք դորա, զի եւ դոքա անբանապէս մուտ եւ ելս արասցեն ի դա՛ իբր զքար կարծրացեալ սրտիւ: Իսկ թէ ասիցէ որ, թէ այն զի՞նչ իցէ, զի կայ մինչեւ ցայժմ, ասասցուք, թէ կամ զաւերն ասաց բնաւին, թէ այլ ոչ շինի վերստին, որպէս եւ եղեւ իսկ, կամ թէ զայնմ տեղոյ, յորում մօտն կայր, նշանակեաց, քանզի այն կողմն Տաճարին մինչեւ ցհիմունս յատակեցաւ: Վասն որոյ հակառակորդացն պարտ է հաւանել եղելոցն եւ հանդերձելոցն իբրեւ ամենեւին սպառելոց:

Իսկ առ ի միտս արտաքս ելանելն ի Տաճարէն զկամատոր մահն նշանակէ, յոր զնայր յօժարութեամբ՝ քակելով զտաճար մարմնոյ Իւրոյ մահուամբ, որում աշակերտքն հակառակէին, որպէս եւ Պետրոս երբեմն, որոց ասէ, թէ անհնարին է ոչ լինել իրացոյ, թէպէտ զարմանալի եւ զեղեցիկ թոյի ձեզ մարմնով թագաւորութիւնս Իմ: Այլ ոչ մնայ այդր քար ի քարի [վերայ], այսինքն հոգի Իմ ի մարմինս Իմ, քանզի ստուգապէս մեռանելոց եմ: Չի զոր օրինակ երկու վեմք կառուցանին ի շինուած տաճարի, նոյնպէս հոգի եւ մարմին ի կազմութիւն մարդկութեան Նորա եղեւ, զոր քակեաց մահուամբ՝ հոգին միութեամբ աստուածութեանն ի դժոխս զնալով եւ մարմինն խառնմամբ Բանին ի գերեզման դնելով. այս է ասելն «ոչ մնասցէ»:

Եւ դարձեալ՝ թէ ըստ առաջին կարգին, որ ասաց թէ՛ «Ոչ տեսանէք, մինչեւ ասիցէք՝ օրհնեալ եկեալ յանուն Տեառն³» (հմմտ. Մատթ. ԻԳ 39), իմասցիս եւ զայս, թէ «Ելեալ Յիսուս ի Տաճարէն

¹ Գ > ի քարի վերայ

² Գ > իբր

³ Գ յանունն՝] եկեալ յանուն Տեառն

զնայր» զժամանակ երկրորդ գալստեանն ասէ, յորում ելեալ յերկնից տաճարէն եւ գայցէ ի դատաստան: Իսկ քարոզք բանին նախքան զեյանելն ցուցանեն զշինուած վերին տաճարին զհաւատացելոցն բազմութիւն ըստ այնմ. «Ահա ես եւ մանկունք իմ, գոր ետ ինձ Աստուած» (Ես. Ը 18): Առ որս պատասխանէ, թէ որովհետեւ շինեցաւ վերինս, «ոչ մնացէ այդր» ի զգալիդ «քար ի քարի վերայ, որ ոչ¹ քակտեսցի»: զյեղանակ տարերցս բաժանման ասէ, որք որակութեամբ ծայրիցն իբր շաղկապաւ յօղեալ ունին զմիմեանս, քակտին տքա ի միմեանց՝ ըստ այնմ թէ՛ «Ամենեքեան իբրեւ զձորձս մաշեսցին եւ փոխեսցին» (հմմտ. Սաղմ. ԾԱ 27):

Եւ մինչդեռ նստեր ի լերինն Չիթենեաց, մատեան առ Նա աշակերտքն առանձինն եւ ասեն. «Ասա՛ մեզ, ե՞րբ լինիցի² այդ, եւ կամ զի՞նչ նշան իցէ Քոյոյ գալստեանն եւ վախճանի աշխարհիս» (ԻԴ 3):

Միշտ ի լերինն Չիթենեաց առանձնացեալ բազմեր կամ վասն վարդապետութեան, զի անդ յապահովացեալ ուսուցանէր զժողովորդն, կամ սակս աղօթից ելանէր՝ նշանակելով զլուսապայծառ աստուածութեանն բարձրութիւն, որ բնակեալ է ի լոյս անմատոյց, անդր բարձրանալովն, միանգամայն եւ խրատելով զմեզ բարձրանալ յերկրաւոր հովտացս յանձնակ լոյս երկնային խորոցն Աստուծոյ: Առ որս մատեան աշակերտքն առանձինն հարցանել կրկին եւ երեքկին հարցուածս. առանձին վասն այտորիկ, զի զիտէին իսկ, թէ զայսպիսի ծածուկ խորհուրդս ոչ առաջի ամենեցուն յայտնէ, քանզի միշտ առ ժողովուրդս առակօք խօսէր եւ ի հարցանել աշակերտացն առանձինն մեկներ: «Ասա՛ մեզ, ե՞րբ լինիցի այդ», այսինքն ւերն Երուսաղէմի եւ զերութիւնն հրէից, քանզի յոյժ ցաւէին ի վերայ ժողովրդեանն եւ ւերման Տաճարին: Մեզ, ասեն, ասա, որ հաւատացեալ ենք Քեզ եւ աշակերտեալ Քում աստուածային վարդապետութեանդ, թէ երբ լինիցի այդ, որպէս զի զգուշացուցուք զնոսա. թերես ի բաց կացցեն ի չարեացն եւ վրիպեսցին ի տանջանացն:

«Եւ կամ զի՞նչ նշան իցէ Քոյոյ գալստեանն եւ վախճանի աշխարհիս». քանզի երկնէին եւ այսմ՝ զիտել զօր գալստեանն Նո-

¹ Գ > ոչ

² Գ լիցի

րա, վասն որոյ ցանկային զՆա յայնպիսի փառսն տեսանել, որ բազում բարութեանց էր պատճառ, այլեւ աշխարհիս վախճանին ըղձային, յորում եւ ընդունելոց է իւրաքանչիւր զհատուցումն իւր, մանաւանդ արդարքն զերծեալ ի վշտաշատ կենցաղոյս իրաց՝ եւ յանճառ հանգիստն ժամանեն:

Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. «Ձգո՛յ՛ լերուք, գուցէ ոք զձեզ խաբեցէ (Ի՛-Գ 4):

Չի բազումք գայցեն յանուն Իսկ եւ ասիցեն թէ՛ «Ես եմ Քրիստոսն», եւ զբազումս մոլորեցուցանիցեն (Ի՛-Գ 5):

Քանզի նոքա օտար իմն զպատերազմունս համարէին, որ գայոց էր ի վերայ Երուսաղէմի, եւ զանձինս արտաքոյ ի խռովութեանցն կարծէին լինել եւ բարութեանց սպասել ակն ունէին, զի վաղվաղակի դիպեցին, որպէս եւ յետ յարութեանն ասէին թէ՛ «Ի ժամանակի աստ յայսմի՞նչ հասուցանելոց իցես զարքայութիւնն Իսրայէլի» (Գործք Ա 6), որպէս Դաւիթ թագաւորելով եւ Եզեկիա եւ Ովսէէ, եւ ոչ կրել չարչարանս, այլ թագակից լինել Քրիստոսի: Վասն այսորիկ զդժուարինսն յառաջագոյն գուշակէ նոցա եւ հրամայէ արթունս լինել, քանզի կրկին պատերազմ է լինելոց ի մոլորեցուցչացն՝ ներքին եւ արտաքին: Ներքին՝ որք «գայցեն յանուն Իսկ՝ եւ ասիցեն թէ՛ ես եմ Քրիստոսն», որպիսիք էին Յուդասն եւ Թեոդասն, որ զնոյն ախտացան, որպէս պատմի ի «Գործս առաքելոցն»²՝ մոլորեցուցիչք բազմաց, այլեւ Սիմոն եւ Մարկիոն, եւ կամ նոյն ինքն դերաքրիստոսն, իսկ զարտաքին՝ այժմ ասէ:

Լսելոց էք պատերազմունս եւ զհամբաւս պատերազմաց. զգո՛յ՛ լերուք, մի՛ խռովեսցիք, զի պարտ է լինել այնմ ամենայնի, այլ չեւ է կատարած (Ի՛-Գ 6):

Այսու զՏիտոսին եւ զՎեսպիանոսին միայն յայտնէ պատերազմ, որ վասն աւերման Երուսաղէմի յառնէին, եւ ոչ զարտաքնոցն եւ զամենայն տիեզերաց, քանզի լինելոց է եւ այն, որպէս յետոյ ասէ: Իսկ թէ այս այսպէս է, ընդէ՞ր ոչ ասէ թէ՛ «տեսանելոց էք», այլ թէ՛ «լսելոց էք»³. քանզի յայնմ ժամանակի ոչ յԵրուսաղէմ լինելոց էին առաքեալքն, այլ ոմանք վերափոխեալք, եւ կէսք յիւրաքանչիւր վիճակս ի քարոզութիւն աւետարանին ընթացեալք: Եւ

¹ Գ ~ յանուն իմ գայցեն

² Գործք Ե 36-37

³ Տ > էք

զի մի՛ լսելով զձիւնաբեր չարեացն՝ կարծիցեն, թէ խափանելոց ի-
ցէ քարոզութիւնն, ածէ զնովիսք թէ՛ մի՛ խռովիցիք, զի պարտ է
այսմ ամենայնի լինել, զոր Ես յառաջագոյն ասացի, եւ փորձու-
թեանցն հասանել ի վերայ, սակայն ոչինչ խափան լինիցի Իմոց
բանիցոյ: Եւ զի յետ այնր պատերազմի համարէին զգալուստ Նո-
րա եւ զվախճան աշխարհիս, ասէ, թէ տակաւին «չեւ է կատա-
րած», քանզի ւաւերն Երուսաղէմի՝ աշխարհի վախճանիս իցէ ա-
պացոյց, եւ նախ ւաւերն Երուսաղէմի, զորոյ զօրինակն ազդեաց,
վասն որոյ հարցին, եւ ասպա կատարած յաւիտենիս, զորոյ զնշա-
նակն այժմ տայ:

**Յարիցէ ազգ յազգի վերայ, եւ թագաւորութիւն ի թագաւորութեան, եւ եղի-
ցին սովք եւ սրածութիւնք, սասանութիւնք ի տեղիս տեղիս (ԻԳ 7):**

Սակայն եւ այն ամենայն սկիզբն է երկանց (ԻԳ 8):

Կամ դարձեալ զհրէիցն ասէ թշուառութիւն, որ յարեաւ ազգն
հռոմայեցոց ի վերայ ազգին երբայեցոց, եւ սովով եւ սրով եւ սա-
սանութեամբ մաշեցին զԵրուսաղէմ, վասն որոյ ասէ թէ՛ «Այն ամ-
ենայն սկիզբն է երկանց», այսինքն՝ հանդերձեալ դատաստա-
նին յաւիտենական պատժոցն, որ պատահելոց է տիրասպան ազ-
գին: Եւ կամ զընդհանուր պատերազմունս ասէ, որ ի բռնաւորաց
պատահէ աշխարհիս՝ զոմանս սովով տանջել, կամ ի նոցա պա-
շարմանէն, կամ ի վերուստ բարկութենէն, զկէսս սրով խողխողել
եւ զայլս ահիս սասանեցուցանել՝ ի թոյլ տալոյն Աստուծոյ, որպէս
զի առ սակաւ սակաւ մաշեցի եւ նուազեցի երկիր՝ սկիզբն լինե-
լով երկանց դառնութեան ժամանակի նեռինն, որ յաւելու ցաւս ի
վերայ ցաւոց, որպէս տեսանենք այժմ փորձիս զպէսպէս նեղու-
թիւնս եւ զհարկապահանջութիւնս, զոր կրեն ազգ մարդկան, եւ ա-
պա մերձ ի ծնունդն ժամանելով՝ երկնէ զվշտային յաւուրս նեռինն
եւ կարասպետաց նորա, առ որով եւ լինի ծնունդ նորոզման աշ-
խարհիս փոփոխման, քանզի թէ ոչ յղանայ եւ ոչ երկնէ իսկ, եւ թէ
ոչ երկնէ զցաւս՝ եւ ոչ ծնանի բոլորովին՝ ըստ առաքելոյ թէ՛ «Հեծէ
եւ երկնէ, զի նորոզութեան հասցէ» (հմմտ. Հռոմ. Ը 22-23):

**Յայնժամ մատնեսցեն զձեզ ի նեղութիւնս եւ սպանանիցեն զձեզ, եւ եղի-
ջիք ատեցեալք յամենայն ազգաց վասն անուան Իմոյ (ԻԳ 9):**

Նախ ասաց թէ՛ «մի՛ խռովեսջիք», զի մի՛ կարծիցեն, թէ ի
վրդովման կենցաղոյս ալեկոծութեան նոքա յապահովս մնասցեն,

վասն այնորիկ եղ ի դէպ ժամանակի, խառնէ եւ զնոցա կարիսն ունելով մխիթարութիւն ինչ ի հասարակաչարիսն, որ անցանիցէ ընդ հրէայսն: Եւ յառաջագոյն զայս ասելով զգուշութիւն է նոցա, զի յորժամ լինիցի, մի՛ խռովեսցին, որպէս ասէր: Իսկ այն կրկին մխիթարութիւն, զի ո՛չ վասն այլ ինչ իրաց կրէք զայն ի բազմաց, այլ վասն յԻս հաւատալոյ:

Եւ յայնժամ զայթազդեսցեն բազումք եւ զմիմեանս մատնեսցեն եւ ատեսցեն զմիմեանս (ԻԳ 10):

Ասէ զպատճառ փորձութեանն, զի որպէս զոսկի հրով զտին հոգիք մարդկան ի ժամանակի նեղութեան, զի ընտիրքն երեւեսցին, եւ վատբարքն զայթազդեսցին, վասն այնորիկ ասաց, թէ բազումք, այլ ո՛չ ամենեքեան. բայց կարի մեծ չարութիւն է, յորժամ ազգականն եւ բնաբար սիրելին ի յատելութիւն եւ ի պատերազմ յարիցէ:

Եւ բազում սուտ մարգարէք յարիցեն եւ զբազումս մոլորեցուցեն¹ (ԻԳ 11):

Տես՛ զերեքկին պատերազմն որ ի մոլորեցուցչաց մարգարէիցն լինի, եւ որ ի պատերազմողաց, եւ որ ի սուտ եղբարց, որպէս Պօղոս գրէր թէ՛ «Վիշտս ի սուտ եղբարց» (Բ Կոր. ԺԱ 26), որք են հերձուածօղքն, քանզի զանուն քրիստոնէի ունէին եւ զուսումն սատանայի, որպէս արիանոսքն եւ նեստորեանքն եւ ապոդիանարիտքն² եւ նաուատիանոսքն եւ այլք բազումք: Քանզի որպէս ի հնումն ճշմարիտ մարգարէիցն սուտ մարգարէքն յառնէին՝ Մեդեկիաս³ եւ այլք բազումք, նոյնպէս եւ ի նորս՝ յաւուրս առաքելոցն եւ հայրապետացն, սուտքն արձանացան, որպէս յիշեն Պօղոս եւ Յովհաննէս եւ Պետրոս ի թողթս իրեանց⁴: Է՞ր վասն. մի՛ զի ճշմարտութիւնն ի մէջ ստոցն առաւել պայծառագոյն երեւեսցի՝ ըստ ոսկոյ օրինի՝ մերձ գոլով խրթներանգ⁵ կապուտակի, երկրորդ՝ վասն ընտրելոցն, որպէս ասացաք, զի երեւեսցին:

¹ Զ մոլորեցուցանիցեն

² ՏԶ ապօղիմարիտքն

³ Գ Թագ. ԻԲ 11-25

⁴ Բ Պետ. Բ 1, Ա Յովհ. Դ 1, Ա Տիմ. Դ 1-2, Ա Կոր. ԺԱ 13

⁵ Տ խրթներանք

Եւ վասն բազմամալոյ անօրէնութեանն՝ ցամաքեացի սէր բազմաց (ԻԳ 12):

Այս յոյժ դժուարագոյն է, յորժամ եւ գործովք եւս աղտեղանայցեն եւ զսիրոյն մխիթարութիւն ոչ ունիցին, զի որպէս ի¹ յորդել հեղեղաց՝ աղբիւրք սպառեսցին, նոյնպէս եւ ի յաճախել անօրէնութեանն²՝ սէր նուազեացի: Բայց բազմաց եւ ոչ ամենեցուն, զի որք զնեղ եւ զանձուկ ծանապարհն զնան, այնպիսեսացն ոչ ցամաքեացի, քանզի սիրոյն նուազութիւն ոչ այլուստ է, քան թէ յագահութենէ եւ յռիշտ կենաց, քանզի ատելով զբազումս յափշտակեն եւ յղփանան, եւ ոչ տալով այլոց՝ վասն փափկութեան անձանց ոչտանան, որով լինի սիրոյն պակասութիւն: Իսկ որք յաշխարհէ հրաժարեալք են, զրնդդէմն գործեն՝ ցաւակից լինելով բազմաց եւ սիրելով զամենեսեան հասարակաց: Լսի եւ այսպէս, թէ ի յաճախելոյ վշտաց՝ որ յանօրինաց, բազումք տկարանան ի սիրոյ վասն աղբատութեան. այս են գայթաղեալքն:

Բայց որ համբերեացէ³ իսպառ, նա կեցցէ (ԻԳ 13):

Այսու ցուցանէ, թէ զառաքինիսն եւ զժուժկալսն ոչ խախտիցէ, այն թէ իբր զվէն անշարժ ընդդէմ ալեսցն փորձութեանց համբերութեամբն անբանայցեն, որպէս եւ ոչ զնահատակն Յոբ՝ տարակարծ եւ անընդհատ եկեալ փորձութիւնքն: Իսկ ասելն թէ՝ «Որ համբերէ իսպառ⁴, նա կեցցէ»՝ զի են ոմանք, որ առ վայր մի ժուժեն նեղութեանց եւ յետոյ մատնին ի վտանգս, որք ոչ են զովելի, այլ որք մինչ ի մահ գուն եղեալ՝ վշտացն համբերեն, նոքա կեան աստ հարուստ սիրոյն օրինօք եւ անդ յանսպառ կեանսն թագաւորեացեն:

Եւ քարոզեացի աւետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս՝ ի վկայութիւն ամենայն⁵ հեթանոսաց, եւ ապա եկեսցէ կատարած (ԻԳ 14):

Ասիցէ որք ուստի⁶ յայտ է, թէ յառաջ քան զառնուլ քաղաքին քարոզեցաւ աւետարանն. լուր զինչ ասէ Պօղոս թէ՝ «Ընդ ամենայն երկիր ել քարքառ նոցա» (Սաղմ. ԺԸ 5, Հռոմ. Ժ 18), եւ թէ պտղաբեր եւ աճեցուն է աւետարանն ընդ ամենայն արարածս՝ որ

¹ Գ > ի

² Գ տար անօրէնութեան

³ Գ համբերեացն

⁴ Գ ~ իսպառ համբերէ

⁵ Գ > ամենայն

ի ներքոյ երկնից, զի թէ յԵրուսաղէմէ ի Սպանիա եհաս, զմտաւ ած, թէ այլքն ո՛րչափ ինչ գործեցին, քանզի ընդ բնաւս տարածեցաւ աւետարանն, թէպէտ ոչ հաւատացաւ ընդհանուր: «Ի վկայութիւն,- ասէ,- ամենայն¹ հեթանոսաց», այսինքն յանդիմանութիւն եւ յամբաստանութիւն անհաւատիցն, զի որք հաւատացին դատապարտեսցեն զանհաւատսն: Եւ այպա եկեսցէ աւերն Երուսաղէմի, զի մի՛ եւ ստուեր անգամ պատասխանատրութեան ունիցին ասպիստաւորքն, որք տեսանիցեն զգորութիւն Նորա ամենայն ուրեք լուսաւորեալ: Եւ դարձեալ՝ հանգոյն, ինձ թուի, ասացուածոյն Պօղոսի թէ՛ «Յորժամ լրումն հեթանոսաց մտցէ, ասպա ամենայն Իսրայէլ կեցցէ» (Հռոմ. ԺԱ 25-26), զի ամենայն ուրեք բանն հնչէ, մինչ զի հեթանոսք եւս վկայք լիցին աստուածութեան Նորա, այլեւ հրէայք եւս, եւ այպա եկեսցէ լրումն աշխարհի: Վասն որոյ ոմանք ասեն, թէ որչափ պակասիցեն ազգք, որոց ոչ քարոզեցաւ աւետարանն, նոյնչափ ժամանակ է մինչ ի կատարած:

Արդ՝ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածոյն, որ ասացեալն է ի ձեռն Դանիէլի մարգարէի, զի կայցէ ի տեղոջն սրբութեան (որ ընթեռնուն՝ ի միտ առցէ) (ԻԴ 15):

Որպէս ասացաք, յառաջագոյն անյայտաբար զաւերն աշխարհիս ընդ աւերն Երուսաղէմի խառնէ եւ մասնաւորին ստուգութեամբ զհանրականն կնքէ: Արդ՝ «պղծութիւն աւերածոյն Երուսաղէմի» կամ զպատկերն ասէ, որ եմոյծ գորավարն ի Տաճարն, յորժամ էառ զքաղաքն, զի թէպէտ բազում անգամ աւերեցաւ նա, դարձեալ շինեցաւ, իսկ յայսմ նուագի ոչ եւս, քանզի ընդ աւերմանն եղեւ ասպականութիւն նորա եւ պղծութիւն սրբութեան նորա, կամ զի կանգնեցին դրօշս ի ներքս ի Տաճարի անդ հռոմսք, որ նկարեալ էր ի նոսա արծուի: Իսկ այլք ասեն նշան աւերածոյն² նորա՝ զլուխ խոզի ետուն բերել ի հռոմոնոց եւ դնել ի ներքս ի Տաճարին ի ձեռն Պիղատոսի: Եւ ոմանք զմանկակեր կինն ասեն «պղծութիւն աւերածին», որպէս ասաց Դանիէլ մարգարէ³:

¹ Գ > ամենայն

² Տ աւերածի

³ Տ մարգարէն
Դան. Թ 27

«Զի կայցէ¹» պիղծն անապատի «ի տեղոջն սրբութեան», ուր չիցէ արժան. «Որ ընթեռնուն ի միտ առցէ»: Այսինքն զմարգարէութիւնն ուսուցանէ, թէ եւ ոմանք կենդանի իսկ կայցեն ի նոցանէ մինչեւ յայն ժամանակ. կամ զգօրսն ասէ «պղծութիւն աւերածի»: Եւ դարձեալ «պղծութիւն աւերածի» զնեռնն ասէ, որ անապատացուցանէ² ի բարեաց զաշխարհս եւ նստի ի տաճարն եւ ցուցանէ զանձն, թէ աստուած իցէ, եւ սկսանի հայհոյութիւն ձգել առ Բարձրեալն մինչ ի ժամանակ եւ ժամանակս եւ կէս ժամանակաց, որպէս ասաց Դանիէլ³: Կամ թէ՛ զի յաւեր անապատէն հարաւոյ յառնէ եւ զկոռս պաշտէ եւ հպարտ ոք է, «պիղծ աւերածի» ասաց: Արդ՝ որ ընթեռնու զմարգարէութիւն նորա, ի միտ առնու զգալուստ նորա յասացեալ նշանացս, յետ որոյ լինիցի կատարած աշխարհիս: Եւ ընդէ՞ր զայս դնէ. զի ասաց նախ, թէ աւետարանն քարոզեսցի ի վկայութիւն հեթանոսաց, որք ոչ հաւատան, յայնժամ զայ «մարդն անօրէնութեան»⁴, «որոյ գալուստն ըստ ազդեցութեան սատանայի է» (Բ ԹԵՍ. Բ 3, 9), եւ հաւատան ի նա, որ յիւր անունն եկն⁵, որք ոչ հաւատացին ի Զրիստոս, որ յանուն Հօր Իւրոյ գործէր եւ խօսէր:

Յայնժամ որ ի Հրեաստանի իցեն՝ փախիցեն ի լերինս (ԻԳ 16),

եւ որ ի տանիս կայցէ, մի՛ իջցէ առնուլ ինչ ի տանէ իւրմէ (ԻԳ 17),

եւ որ յանդի իցէ, մի՛ դարձցի յետս առնուլ զձորձս իւր (ԻԳ 18):

Իբրեւ ասաց զչարեացն, որ հասանելոց էր քաղաքին, եւ զփորձութիւն առաքելոցն, դարձեալ ճառէ զհրեական վշտացն՝ յայտ արարեալ, թէ յորժամ տիեզերք պայծառանան լուսաւոր գիտութեամբ, յայնժամ նորա խաւարին եւ անկանին ի նեղութիւն: Ե՞րբ, յորժամ այսպէս լինիցի եւ ծանրանան ի վերայ նոցա վիշտք պատերազմացն, փախիցեն ի լերինս, զի ոչ եւ⁶ մի ինչ յոյս փրկութեան կայցէ. քանզի բազում անգամ եղեւ դիրքութիւն ի սաստիկ պատերազմացն, որպէս առ Սենեքերիմաւն եւ Անտիոքաւն, որք վերստին ժողովեցան եւ նորոգեցին զկարգս: Յայնմանէ անյոյս առնէ զնոսա, քանզի լաւ համարեցին մերկանդամ եւ մազապոր

¹ Զ կացցէ

² Զ անապատ ցուցանէ

³ Դան. ԺԲ 7

⁴ Բ ԹԵՍ. Բ 3

⁵ Յովհ. Ե 43

⁶ Զ > եւ

ապրիլ. նմին իրի ասէ թէ՛ «Որ ի տանիս կայցէ, մի՛ իջցէ առնուլ ինչ ի տանէ իւրմէ», քանզի անեզր է նեղութիւնն, եւ ոչ ուրեք փոյթ կամ հոգաբարձութիւն¹, այլ որ ի ձեռն անկանիցի՝ հարկ է կորնչել: Վասն այտորիկ եւ ի վերայ բերէ թէ՛ «Որ յագարակին իցէ մի՛ դարձցի յետս առնուլ [զձորձս իւր]», զի թէ որ ի ներքս իցեն փախչիցին, ո՞րչափ եւս առաւել որ արտաքոյն իցեն չպարտին անդր ապաստան լինել:

Եւ դարձեալ պիղծն անապատի ի Հրէաստան թագաւորէ, վասն այտորիկ եւ նոքա ի լերինս փախիցեն, այսինքն խոստովանօղ հոգիք, որ ստութեան նեղինն տեղեակք լինիցին, թողուն գստուերագրութիւն Օրինացն եւ փախիցեն ի վեհագոյն միտս Օրինացն եւ մարգարտիցն, որ է նոր վարդապետութիւն առաքելոցն Քրիստոսի, զոր «լեառն» անուանէ, այսինքն Եկեղեցի՝ օծեալ Հոգւոյն պարարտութեամբ, զերծեալք ի նմանէ եւ կամ կատարեալք: «Եւ որ ի տանիս» առաքիւնութեան իցէ՝ պսակեալ շինուածով աստուածպաշտութեան, «մի՛ իջցէ առնուլ ինչ ի տանէ» մարմնական ցանկութեանս: «Եւ որ յանդի իցէ», այսինքն զերծեալ ի սողոմական չարութենէ աշխարհական մեղաց, եւ ճեմի յանդաստան աստուածային Գրոց վարդապետութեան, մի՛ դարձցի դարձեալ յաշխարհ եւ ի ստորին վաւաշ ցանկութիւնս, զի մի՛ մածիցի² արձան աղի³:

Բայց վայ՛ իցէ յդեաց եւ ստնտուաց յաուրսն յայնոսիկ (ԻԳ 19):

Յղիքն՝ զի ոչ կարիցեն փախչել դիրաւ ի ծանրութենէ յղութեանն, եւ ստնտուքն՝ վասն կապանաց գթոյ որդւոցն, զի ոչ կարեն ընդ իրեանս զմանկունսն ապրեցուցանել, զի զինչսն արհամարհել դիրին է, իսկ զբնական գութն քամահել՝ դժուարին: Դարձեալ եղուկ է ի ժամանակին, յոր յղացան չարութեամբ բանսարկուին զգաւս եւ զանօրէնութիւն, եւ որ դիեն զկաթն աղտեղի անառակ ցանկութեան, զի անհրաժեշտ է տանջանք նոցա:

Յաղօթս կացէք, զի մի՛ լինիցի փախուստն ձեր ձմերայնի⁴ եւ մի՛ ի շարաթու (ԻԳ 20):

¹ Զ հոգաբարձութիւն է

² Զ մածցի

³ Ծննդ. ժԹ 17, 26

⁴ Զ ի ձմերայնի

Չայս ոմանք վասն առաքելոցն միայն ասեն ասացեալ՝ ըստ այնմ թէ՛ «Յաղօթս կացէք, զի մի՛ մտանիցէք ի փորձութիւն» (Մարկ. ԺԴ 38), քանզի յորքաթու անդ ի խաւարել արեգականն քաջալերեալ էին նորա, իսկ ի շաքաթուն մեծաբանեցին հրէայքն: Եւ ձմեռն զի ցուրտ էր, յայտ ի խարուկէն էր, զի արկեալ ջեռնութիւն, ըստ մարգարէին թէ՛ «Յուրտ եղիցի օրն այն» (հմմտ. Չաք. ԺԴ 6): Բայց ինձ թուի, թէ առ հրէայսն են այս բանք եւ ո՛չ ընդ աշակերտսն, քանզի ոչ թէ առաքեալքն շաքաթս պահելոց էին եւ կամ անդր պատահելոց, յորժամ Վեսպիանոս զայն գործեաց: Քանզի յորժամ յայտնեաց զբարկութիւն Իւր, թէ գալոց է ի վերայ ձեր արդարութեամբ, դարձաւ եւ փութացոյց ի վերայ նոցա զողորմութիւն Իւր, զի յիրաւունս հաստատեալ է աթոռ Նորա¹: Եւ ուսուցանէ, զի յաղօթս կայցեն ո՛չ անցուցանել զսահման պատժոցն, այլ փոխել զժամանակս եւ զաւուրս չարին մեծի, որ գալոց էր ի վերայ նոցա, ողորմութեամբ Իւրով, զի զալ նեղութեանն ճշմարիտ է, եւ փախնուցոյր դուք, յայտ է, բայց «յաղօթս կացէք, զի մի՛ լինիցի փախուստն ձեր² ձմերայնի եւ մի՛ ի՞³ շաքաթու»:

Չմեռն՝ վասն ցրտոյն վարանաց, զի ո՛չ դիրագոյն լիցի փախուստն, եւ շաքաթն՝ վասն Օրինացն իշխանութեան, զի մի՛ լուծցին օրէնքն Մոսիսի, թէպէտ ունէին սովորութիւն երիս ասպարէզս ճանապարհորդել ի շաքաթու, որպէս գրեալ է ի «Գործս առաքելոցն» թէ՛ «Ըստ շաքաթուն ճանապարհի» (Գործք Ա 12): Բայց այն զի՞նչ էր բաւական կամ կռուելոյ, կամ փախչելոյ. գուցէ յորժամ գտանիցեն զձեզ միամիտք ի պահել զշաքաթսն յաւուրս պատերազմին, սատակեացեն իբրեւ զայնոսիկ որ յայրի անդ: Ինձ թուի՛ զայս ասելով՝ էին ոմանք, որ զերծանելոյ արժանատրք էին, որպէս հաւատացեալքն, որոց հրամայէ աղօթել եւ փրկիլ, որպէս եւ եղեւ իսկ:

Դարձեալ՝ ձմեռն առանց պտղոց է, եւ շաքաթ՝ առանց գործոց, այսպէս մի՛ վայելիցէք դուք, զի յորժամ ոչ պտուղ ունիցիք եւ ոչ գործք ի ձմեռն եւ ի շաքաթուն, որ մին բռնութեան⁴ է, եւ միւսն կամաց, ձմեռն՝ բռնութեան, եւ շաքաթն՝ կամաց, արդ՛ ո՛չ բռնութիւն այլոց եւ ո՛չ կամք ձեր շարժեացեն զձեզ ի գործոց անտի

¹ Սաղմ. ԴԶ 2

² Զ ի] լինիցի փախուստն ձեր

³ Զ յաւուր] ի

⁴ Զ բռնութեանն

Տեառն Աստուծոյ ձերոյ: Եւ դարձեալ՝ զի ձմեռն հանգիստ է ամենայն աշխատութեան ամարայնոյ, եւ շաբաթ կատարած է գործոյ, իբր այն «Յարդ եւս կայ շաբաթն Աստուծոյ» (հմմտ. Եբր. Դ 9), որ վասն հատուցման հանգստեան ասացեալ է «շաբաթ»: Արդ՝ յայտ առնէ ասացելովքն, թէ շտապ տազնապի հասանելի վերայ ամենեցուն, որք ոչ լինին կատարեալ հաւատով եւ բարի գործով, քանզի անհաւատութեամբ եւ դատարկ ի բարի գործոց անդր հասանելի փախչելով հոգոյ ի մարմնոյ, փախուստն այն առաջի կայ, գոր ստելոց է ծուլացելոցն եւ անհաւատիցն թէ՛ «Երթայք յԻնէն ի հուրն յաւիտենական¹» (հմմտ. Մատթ. ԻԵ 41):

Ձի եղիցի յայնժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղև ի սկզբանէ արարածոց աշխարհի մինչև ցայժմ եւ ոչ այլ լիցի (ԻԴ 21):

Մի՛ ոք զասացեալս ւաւերոդ համարիցի, քանզի դժուարին նեղութիւն եկն ի վերայ նոցա, որպէս պատմէ Յովսէպոս ազգական նոցին, զի ոմանք զորդիսն ի սովոյ ուտէին, եւ կիսոց ընտերքն պատառէին եւ աղիքն հեղուին, եւ այլ սոյնգունակ աղէտք զանազան, զորս թուել ոչ է հարկ: Եւ այս է՞ր վասն. զի ոչ ոք ի մարդկանէ յանդգնեցաւ յայնպիսի յանդգնութիւն, եւ ոչ առ յապայ յանդգնեցի ոք, վասն այսորիկ եւ նեղութիւնն անհնարին է, որ ոչ եղև երբէք եւ ոչ այլ լինելոց է: Նմանապէս եւ ի ժամանակս նեղինն լինիցի վիշտ անհանդուրժելի վասն նորին չարութեանն, զի մարդ է նա՛ բողբոլիկն զգեցեալ զսատանայ, եւ պատերազմի կրկին պատերազմօք. ըստ մարմնոյ կեղեքէ ի հարկապահանջութիւն եւ ըստ հոգոյ՝ յայլափառութիւն եւ յօտար կրօնս պէսպէս տանջանօք արկանէ: Այլ խառնակին տարերք, եւ խաւարի արեգակն, որպէս ետես Յովհաննէս զօրինակ հարուածոցն², վասն այսորիկ ասէ, թէ ոչ է եղեալ ի սկզբանէ. զի կամ ոչ է եղեալ, եւ թէ եղեալ է՛ մասնաւոր եւ ի տեղիս տեղիս, իսկ այն ծանրագոյն է եւ ամենայն ուրեք: Իսկ ասելն թէ՛ «մի՛ այլ լիցի», զի ի սատակելն նորա՛ հոգով բերանոյ Յիսուսի³ եւ այրմամբ շրթանց նորա, բառնին խոռվութիւնք եւ դադարեն կենցաղոյս ամբոխմունք՝ առ ի թագաւորել ճշմարտութեանն, առ որով եւ խաղաղութիւնն յաւերժանայ ի մշտնջենաւոր կեանսն:

¹ Գ > յաւիտենական

² Յայտ. ԺԶ

³ Բ Թես. Բ 8

Եւ եթէ ոչ կարճէին ատորքն այնոքիկ, ոչ ապրէր ամենայն մարմին, բայց վասն ընտրելոցն կարճեսցին ատորքն այնոքիկ (ԻԳ- 22):

Այսու յայտ առնէ, թէ ե՛ւս չարաչար պատժոց արժանի են քան զմնացեալսն: «Եթէ ոչ կարճէին ատորքն այնոքիկ». ատորս, գոր ասէ, զպատերազմին եւ զպաշարմանն կոչէ, զի եթէ բազում ժամանակս պատերազմ հոռոմոց կայեալ էր զքաղաքս, ամենայն իսկ հրէայք սատակեալ էին, որ զմարմնականն ունէին սրբութիւն, որ¹ արտաքոյ եւ որ ի ներքս էին, զի ամենայն ուրեք ցրուեալ ձօնիս առնէին զնոսա վասն բնական ատելութեանն: «Բայց վասն ընտրելոցն կարճեսցին [ատորքն այնոքիկ]». «ընտրեալս» զհաւատացեալսն ասէ, որ ի միջի նոցա մնացեալ էին, զի մի՛ ընդ անհաւատսն կորնչիցին եւ մի՛ աւիցեն, թէ վասն Քրիստոսի հաւատոյն եկին չարիքս ի վերայ մեր: Յուցանէ, թէ ոչ միայն հաւատացեալքն չեղեն պատճառք կորստեան, այլ թէ եւ ի բացեայ էին, բնաջինջ սատակէին ամենեքեան, յաղազս որոյ փարատեաց զկոթիւն եւ զրաւ արար պատերազմին:

Բայց դու մի՛տ դիր Հոգւոյն տեսչութեան, զի Յովհաննէս յայսպիսեացս ոչինչ գրեաց, զի մի՛ որ կարծիցէ յիրացն գործելոյ գրել զպատմութիւնն, քանզի յետ զքաղաքն առնլոյ եկաց նա ժամանակս բազումս, այլ որք յառաջ քան զառնուլ² քաղաքին փոխեցան եւ ոչ տեսին ինչ անդ՝ նոքա գրեցին՝ պայծառ առնելով յամենայն կողմանց զգորութիւնն կանխասացութեանն: Այսպէս վասն ընտրելոց աղօթիցն, թէպէտ մեռեալք լինիցին, կարճէ Աստուած զատորս նեռինն երեք ամ եւ կէս, զի մի՛ ամենեքեան յայն ժամու մարմնասէրքն առցեն զգիր զազանին ի վերայ ճակատու իւրեանց եւ ոչ կարիցեն ապրել ի բարկութենէն, որ յայտնելոց է յերկնից ի վերայ որդոցն անհաւանութեան³. կամ վասն ընտրելոցն Ենովքայ եւ Եդիայի կարճեսցին:

Յայնժամ թէ որ աւիցէ ձեզ՝ ահաւասիկ աստ է Քրիստոսն կամ անդ, մի՛ հաւատայցեք (ԻԳ- 23):

Զ«յայնժամ»-ն ոչ ըստ կարգի յառաջ ասացելոցն բանից դնէ աստ, այլ զայն ժամանակն նշանակէ, յորում այսմ պարտ է լինել:

¹ Զ որք

² Զ զառնուլն

³ Եփես. Ե 6

Բայց ո՞նք ասիցէ զայս. յայտ է՝ կարապետք ներինն եւ պատգամաւորք սատանայի, որք զձեւ Յովհաննու առնուն նախընթաց լինելով, եւ պատրեն զբազումս՝ ածելով առ դերաքրիստոսն: Իսկ ասելն թէ՛ «աստ է Քրիստոսն¹ կամ անդ», խաբէութիւն է՝ առ ի հաւանեցուցանել տեղեալն. կամ զամենայն որ ինչ Աստուած է՝ այսու քանիս ցուցանէ, զի ոչ տեղեալ պարագրի, այլ ամենայն ուրեք է՝ ըստ մարգարէին թէ՛ «Ես Աստուած մերձաւոր եմ եւ ոչ հեռաւոր» (Երեմ. ԻԳ. 23), որով ցուցանէ զԻնքն Աստուած զոյ: Կամ՝ «աստ» ասելովն աղքատօրէն ձեռով շրջելն է, իսկ «անդ» զթագաւորական կերպիւն նշանակէ. արդ՝ եթէ այսպէս եւ եթէ այնպէս ասասցեն, մի՛ հաւատայցէք, ասէ, քանզի վասն այսորիկ յառաջագոյն ասացի:

Ձի յարիցեն սուտ քրիստոսք եւ սուտ մարգարէք եւ տայցեն նշանս մեծամեծս եւ արուեստս, մինչ մոլորեցուցանել, թէ² հնար ինչ իցէ, եւ զընտրեալսն (ԻԴ. 24):

Ահա յառաջագոյն ասացի ձեզ (ԻԴ. 25):

Իբրեւ ասաց զԵրուսաղէմին, այսուհետեւ յԻւր գալուստն փոխի եւ ասէ զնորին նշանսն, որք ոչ նոցա միայն օգտէին, այլեւ մեզ եւ որք յետ մեր լինելոց են: Բանզի որպէս զառաքելոց ներութիւնն նշան աւերման Երուսաղէմի կարգեաց եւ զներութիւն հաւատացելոցն՝ սկիզբն երկանց աւերման արարածոց, այսպէս եւ զսուտ քրիստոսին մոլորութիւնն՝ որ նախ քան զերկրորդ գալուստն³ Նորա, նշան ասէ փառաւորեալ գալստեան Նորա: Ձի որպէս նախ քան զառաջին գալուստն յուղայեանքն եւ թելասեանքն⁴ ասացին զանձնէ քրիստոս լինել եւ զբազումս մոլորեցուցին, այսպէս յառաջագոյն քան զերկրորդն գալուստ՝ նեռն յայտնեսցի հանդերձ սուտ մարգարէիք իւրովք: Եւ «սուտ քրիստոս» յայտնապէս զնեռն ասէ, զոր Պօղոս «մարդ մեղաց» եւ «որդի կորստեանն» անուանէ⁵: Եւ «նշանս մեծամեծս» առնէ, որպէս եւ Ղուկաս ասէ թէ՛ «Եղիցի նշանս յարեզակն եւ ի լուսին եւ յաստեղս» (Ղուկ. ԻԱ 25), ոչ՝ ճշմարտութեամբ, այլ առաջօք, առ ի հաւատարմացուցանել

¹ Գ > Քրիստոսն

² Գ եթէ

³ Տ գալուստ

⁴ Գործք Ե 36-37

⁵ Բ Թես. Բ 3

զինքն զոլ Քրիստոս: Եւ չեն զարմանք այս. քանզի ի թոյլ տալոյն Աստուծոյ առնէ մեծամեծ նշանս, որպէս եւ երբեմն առ Յորայ հուր արկին ի վերայ հօտիցն¹: Այսպէս առնէ եւ յայնժամ միջնորդութեամբ դերաքրիստոսին եւ զայն հնարիցէ² ոչ վասն անհաւատիցն, որ իւրքն են, այլ վասն ընտրելոցն թերեւս, թէպէտեւ ոչ կարիցէ վասն յառաջագոյն զգուշացուցանելոյն Յիսուսի, որպէս ասէ թէ՛ «Ահա յառաջագոյն³ ասացի ձեզ»: Գրէ եւ Յովհաննէս թէ՛ «Աստ է տեսանել զհաւատս սրբոցն», «որք ունին զվկայութիւնս Յիսուսի» (հմմտ. Յայտ. ԺԳ 10, ԺԹ 10)՝ կամ զբանս զգուշութեանս, կամ զհաւատս Նորա, եւ ոչ մոլորին:

Ապա թէ ասիցեն ձեզ. «Ահաւանիկ յանապատի է», մի՛ ելանիցէք, եւ թէ՛ «Ահա յշտեմարանս⁴ է», մի՛ հաւատայցէք (ԻԴ 26):

Ոչ ասաց թէ՛ երթայք եւ մի՛ հաւատայք, այլ թէ՛ մի՛ ելանէք եւ մի՛ մտանէք, քանզի բազում խաբէութիւն լինի ի ժամանակին վասն նշանացն խաբէութեան. քանզի որ եղեւն այլ ոչ եւս լինի՝ ըստ առաքելոյ թէ՛ «Այսուհետեւ զՔրիստոս ոչ զիտենք մարմնով» (հմմտ. Բ Կոր. Ե 16), թէպէտեւ է իսկ մարմնով, բայց ոչ նոյնպէս: Իսկ «անապատ» եւ «շտեմարան»⁵՝ զհաստամբեր եւ զփափկակեաց կեանս նշանակէ, որպէս թէ ասացեն, թէ՛ «ահաւանիկ յանապատի», այսինքն իբր զՅովհաննէս ճգնի եւ թէ իբր կերօղ եւ արբեցօղ յշտեմարանս թագաւորաց փափկանայ, «մի՛ հաւատայցէք», զի զոր ինչ յառաջագոյն ասացեալ էր վասն Յովհաննու թէ՛ «Ոչ ուտէ եւ ոչ ըմպէ», եւ վասն Ինքեան թէ՛ «Եկն եւ ուտէ եւ ըմպէ»⁷, զայս մարգարէքն ի խաբէութիւն բազմաց ձեւացուցանեն: Ուստի ուսանիմք, թէ յոյժ տգէտ են առաջիկայիցն, այլ յանցելոցն զխաբէութիւնս իրեանց կերպարանեն:

Ձի որպէս փայլակն, որ ելանէ յարեւելից եւ երեւի մինչեւ յարեւմուտս, այնպէս եղիցի զալուստն Որդոյ մարդոյ (ԻԴ 27):

¹ Յոր Ա 16

² Ձ հնարիցի

³ Ձ > յառաջագոյն

⁴ ՏՁ յշտեմարանս

⁵ ՏՁ ըշտեմարան

⁶ Ձ > թէ

⁷ Մատթ. ԺԱ 18-19

Այսինքն՝ ոչ ի ծածուկ գայ, որպէս առաջինն՝ ի միում տեղոց երեւելով, այլ յայտնի՝ ըստ Դաւթայ. «Աստուած մեր յայտնապէս եկեացէ եւ Աստուած մեր մի՛ դադարեացէ¹» (Մաղմ. ԽԹ 3), իբր զարեգականդ ծագումնդ, որ ոչ քարոզի եւ պատմողի կարօտի, այլեւ այնոցիկ, որք ի տունս եւ ի սենեակս իցեն, եւ յանապատս եւ յշտեմարանս նստիցին, ի միում վայրկենի յանկարծակի ամենեցուն երեւի զալուստն Նորա. զի նախ լռելեայն իբր ի վերայ գեղման², իսկ յերկրորդն՝ ահագին՝ ըստ Մաղաքիայ թէ՛ «Ո՞ ժուժկալիցէ մտի նորա» (հմմտ. Մաղ. Գ 2): Եւ դարձեալ ցուցանէ յարեւելից գոլ զգալուստն Նորա լի փառօքն Հօր եւ ծագմամբն լուսոյ աստուածութեան Իւրոյ, այլեւ ի ժամանակի ծագման արեգականն ի միաշարաթոջ առաւօտու ատրն, յորում եւ ի գերեզմանաց ծագեցաւ մարմնով, նովին մարմնովն յարեւելից Հօրէ յաշխարհ մտանէ, որ է արեւմուտք՝ ամենեցուն ակներեւ լուսաւորելով զհաւատացեալս Իւր:

Եւ դարձեալ՝ արեգական բաղդատեալ զգալուստ Իւր՝ ցուցանէ, թէ Նա նոյն ինքն է՝ որոյ վասն առաջին զալստեանն մարգարեացան մարգարէքն ըստ այնմ. «Ծագեցից երկիւղածաց Իմոց արեգակն արդարութեան, եւ բժշկութիւն ի թեւս նորա» (հմմտ. Մաղ. Զ 12), եւ՝ «Ահա այր, եւ «Ծագումն» անուն նորա» (Չաք. Զ 12). արդ՝ Նա, որ յառաջն եկն ի փրկել, գայ եւ յերկրորդումն ի դատել: Դարձեալ Դաւիթ ասէ. «Ի ծագել արեւու ժողովին եւ ի մօրիս իւրեանց դադարին³. Ելանէ մարդ ի գործս իւր⁴ եւ ի վաստակս ձեռաց իւրոց⁵» (Մաղմ. ԵԳ 22-23), այսպէս ի զալստեանն Տեառն, որ իբր զարեգակն ծագէ, գողք եւ գրկօղք եւ նենգաւորք եւ այլ զազանաբարոյք ժողովին ի կայս իւրեանց՝ ըստ արժանեացն, եւ մարդ պատկեր Աստուծոյ, որ գործեաց եւ վաստակեցաւ յայգի Եկեղեցոյ մինչեւ ցերեկոյ լրման աշխարհի, ելանէ ի պատիւ փառաց իւրոց: Կամ թէ՛ որպէս արեգակն զգիշերն փախուցանէ, այսպէս Տէր՝ զմեղս զալստեամբ Իւրով ըստ այնմ. «Պակասեցին մեղաւորք, եւ ամբարիշտք մի՛ եւս գտցին» (Մաղմ. ԵԳ 35):

¹ Գ > դադարեացէ

² Մաղմ. ԶԱ 6

³ Գ > դադարին

⁴ Գ > ի գործս իւր

⁵ Գ > ձեռաց իւրոց

Ձի ուր գէշն իցէ, անդր ժողովեցին արծուիք (ԻԴ 28):

Չայս ոմանք ի վերայ Երուսաղէմի առնուն, որք մեռելոտի գործով արիւնաներկք եղեն սպանմամբ մարգարէիցն, եւ անշնչացաւ Տաճարն ի հեռանալ շնորհացն Աստուծոյ, յորոց վերայ թշնամիքն սլացան իբրեւ զարծուիս՝ ըստ այնմ. «Երագունք երկվարք նոցա իբրեւ զարծուիս» (հմմտ. Երեմ. Դ 13), եւ թէ՛ «Արկին գմարմինս նոցա գազանաց եւ գէշ թռչնոց երկնից» (հմմտ. Սաղմ. ՀԸ 2), եւ Մոսէս եւս թէ՛ «Ի սովոյ մաշեալք, եւ գէշք անկեալք ամենայն թռչնոց երկնից» (հմմտ. Բ Օր. ԼԲ 24): Եւ ոմանք այսպէս ասեն, թէ ի փոխումն երջանիկ Կուսին համագումար խումբք առաքելոցն սլացան իբրեւ զարծուիս Հոգւոյն թեւօք եւ հասին յԵրուսաղէմ՝ պատուելով զՏիրամայրն սուրբ, յորում եղել է¹ գալուստ Տեառն արեգական նման փայլմամբ՝ հանդերձ հրեշտակօք բազմօք հանգուցանելով զնա ի տեղի հրաշից: Իսկ այլք ի վերայ հասարակաց մարմնոց ասեն, զի նախ քան զերեսումն Տեառն ի ձայն փողոյ հրեշտակապետի մեռեալք յառնեն, եւ իւրաքանչիւր հոգի իբրեւ զարծուի սլացեալ ի վերուստ՝ դիմէ ի վերայ գիշի² մարմնոյ իւրոյ: Եւ կէսք զհրեշտակաց սլացումն ասեն, որք զարեամբ նահատակեալ մարտիրոսս եւ զվկայս յափշտակեն ի փառս, որպէս յառաջ տանելով ասէ թէ՛ «Ժողովեցեն զընտրեալս Նորա» (Մատթ. ԻԴ 31):

Բայց ինձ թուի՝ ըստ կարգի բանիս՝ զմարմին Իւր անուանէ «գէշ» եւ «անկած», որ չարչարեցաւ եւ մեռաւ վասն մեր՝ ըստ այնմ թէ՛ «Տեսաք մեք զնա, եւ ոչ գոյր նորա տեսիլ» (Ես. ԾԳ 2): Եւ արդ՝ վասն զի նովին վիրաւորեալ մարմնովն գայ, զի հայեցին խոցօղքն³, ի գէշ առակեաց, իսկ արծուի՝ զսրբոցն գումարս: Ձի որպէս արծուիքն ընդ օդս թռուցեալ՝ նկատեն զտեղիսն, ուր կերակորն է, եւ անդ ախորժելով հասանեն, այսպէս եւ արդարքն, ըստ Պօղոսի ձայնին, յափշտակեալ յօդս ի վերայ ամպոց⁴, վաղվաղակի ժամանեն անդ, ուր Թագաւորն մարմնով բազմի ի վերայ երկրի՝ առնել զդատաստան որդոց մարդկան: Յորում ժամանակի թագաւորեն սուրբքն իբրեւ զհաւս զայս, որ թագաւոր է ամենայն թռչնոց, եւ կերակրին ի Նմանէ՝ ոչ իբր զագռաւս եւ զանգեղս, որք

¹ Տ > եւ

² Զ գէշ

³ Ձաք. ԺԲ 10

⁴ Ա Թես. Դ 16

զմեռելոտիս ճաշակեն, այլ իբր զարծուի, որ կենդանիս որսայ՝ զյախտենական կենացն ժառանգութիւն, յաղագս որոյ վաստակեցան ջանիս ի մարմնական կենցաղս: Քանզի «ժողովելն» զհանգիստն նոցա նշանակէ՝ ըստ մարգարտութեան թէ՛ «Ձգառինս ի ծոց իւր ժողովեսցէ» (հմմտ. Ես. Խ 11), կամ իբր զգորեան յշտեմարանս արքայութեանն¹:

Վաղվաղակի յետ նեղութեան ատուրցն այնոցիկ (ԻԳ-29):

Գրեթէ միանգամայն իսկ լինիցի, զի մինչդեռ սուտ մարգարեքն եւ սուտ քրիստոսքն եկեալ տազնապիցեն, փութանակի եւ Ինքն եկեսցէ, զի թէ հրէականն ոչ յերկարեցաւ պատերազմ վասն ընտրելոցն, ո՞րչափ եւս առաւել այն պատերազմ²: Իսկ «նեղութեան ատուրք»՝ զնեռինն ասէ եւ զսուտ մարգարեիցն, զի ոչ սակաւ ամբոխս յայնժամ լինելոց է ընդ տիեզերս, այլ կարի՛ մեծ³ նեղութիւն, որպէս ասէ Ղուկաս⁴, վասն զի անչափ խաբերայք յառնիցեն յաւուրսն յայնոսիկ:

Արեգակն խաւարեսցի, եւ լուսին ոչ տացէ⁵ զլոյս իւր, եւ աստեղք անկցին յերկնից, եւ գորութիւնք երկնից շարժեսցին:

Կամ այս լինի նախքան զգալուստն ի հարուածս անզգայիցն՝ ըստ Յովհաննու, թէ երրորդ մասն լուսաւորացն խաւարեցան⁶, եւ թէ՛ «Եհեղ ի վերայ արեգական, եւ տուաւ խորշակահար առնել զմարդիկ եւ տապացուցանել» (հմմտ. Յայտ. ԺՁ 8-9): Կամ ի գալստեան Նորա լինին խաւարել եւ անցանել լուսաւորացն, ոչ յանէութիւն, այլ յեւս պայծառութիւն ըստ այնմ. «Եղիցի լոյս լուսնի իբրեւ զարեգական, եւ լոյս արեգականն՝ եօթնպատիկ յոյժ» (Ես. Լ 26): Քանզի յընթացիցն միայն խափանին, զոր այժմ խոնարհին եւ բարձրանան, աճեն եւ պակասին՝ ծնանելով զամառն եւ զձմեռն եւ զժամանակս եւս, իսկ յայնժամ նորոզին: Նմանապէս եւ թռիչք բազմանան, զոր սովորաբար աստեղաց ցոլմունս ասեն ի նշան գործոց եւ կրից մարդկան, եւ կամ թօթափին աստեղք

¹ Մատթ. ԺԳ 24-30

² Զ > վասն ընտրելոցն, ո՞րչափ եւս այն պատերազմ

³ Զ կարծեն] կարի մեծ

⁴ Ղուկ. ԻԿ 23

⁵ Զ տայցէ

⁶ Յայտ. Ը 12

յերկնից՝ իբր տերեւ յորթոյ ի ձմերային¹ ժամանակն, եւ դարձեալ զարդարին ի զարնանային ժամանակն, նոյնպէս եւ նոքա յայլ իմն ազնուականութիւն փոխեսցին ըստ արարածոցս, որպէս ասէ Պօղոս², քանզի այլ ոչ եւս զհշեր լինելոց իցէ: Կամ թէ ի ջահաբորբոք զալստենէ Նորա, որ յարեւելից փայլատակէ, յաղթի եւ ընկղմի լոյս լուսաւորացոյ, որպէս ի ծագել արեգականո՞ ծածկին ամենայն կարծեցեալ ճանանչք եւ աղօտ փայլմունք:

Իսկ առ ի միտս՝ արեգակն իմանանք զաստանայ, որ կերպարանի ի հրեշտակ լուսոյ, խորշակն տապացուցիչ բուսոց մարդկային բնութեանս՝ նեռն, որ աստուած զանձն ցուցանէ, իսկ լուսին եկեղեցիք հերձուածողաց եւ հրէական զհշերային փայլմունք: Եւ աստեղք՝ ուսմունք նոցա, որպէս գրէ Յուդա Թադէոս թէ՛ «աստեղք մոլարք» (Յուդա 13), որոց խաւար աղջամղջին պահեալ կայ, որք անկանին ի բարձրութենէ փառաց երկնից իբր զփայլակն ի դժոխս ներքինս, անկումն, որ քան զամենայն անկումն անկանգնելի, կամ որք այժմ աստեղք կարծին ի բազմաց վասն կեղծաւոր վարուցն, ի նեռնէն յանդիմանեալ անկանին:

«Զօրութիւնք», ասէ, յերկինս «շարժեսցին»: Կամ զլուսաւորսդ ասէ զօրութիւնք երկնից ըստ մարգարէին, որպէս ցուցաք, կամ զտարրն երկնից ասէ, որ յաղթօղ զօրութեամբ Իւրով տապալի շարժի³ եւ դադարի, քանզի զկայ առնու եւ այլ ոչ երբէք հոլովի՝ ըստ այնմ թէ՛ «Գալարին երկինք իբր զմագադաթ» (Ես. ԼԴ 4), եւ նորանայ ի նորոգութիւն՝ լինելով երկին նոր եւ երկիր նոր⁴, քանզի ոչ ունէին պէտք բուծանելոյ զերկրայինս շարժմամբ եւ կայիւք իւրեանց: Կամ՝ շարժել երկնից զհրաբուն զօրացն ասէ, եւ այս՝ երկակի: Չի կամ շարժին ի հիացումն, յորժամ տեսանիցեն զայս ամենայն փոփոխմունս, զի թէ յորժամ եղեն աստեղք, այնչափ հիացեալ զարմացան, զի՞նչ ասիցեն, յորժամ զամենայն ինչ նորոգեալ տեսանիցեն, զտուրքսն թագաւորեալս եւ զոմանս ի տանջանս առաքեալս, եւ զամենայն աղամածինս ժողովեալս առաջի Նորա ի դատաստան տալ համարս ընդ որոց գործեցին, զիա՞րդ ոչ զարհուրեալ շարժին: Եւ կամ ի տեղոջէ իւրեանց շարժին՝ ըստ իմաստնոյն թէ՛ «Շարժեսցին պահապանք տանս» (Ժող. ԺԲ 3),

¹ Զ ձմեռնային

² Դռոմ. Ը 21

³ Զ շարժի այն

⁴ Ես. ԿԵ 17, Բ Պետ. Գ 13, Յայտ. ԻԱ 1

այս է՝ զօրութիւնք երկնից: Քանզի ի¹ սպասատրութիւն զան զկնի թագաւորին իւրեանց՝ իբր զօրք Նորին, զի թէ ի խոնարհութեամբ գալուստն պաշտպանք եղեն Նմա, որչափ եւս առաւել, յորժամ հրաշափառ եւ սուկայի պայծառութեամբ տեսանիցեն զՆա յաշխարհ եկեալ, շարժին խնդրութեամբ եւ դողութեամբ զհետ Նորա բոլոր էութիւնք երկնի հանդերձ զնդիւք իւրեանց ի սպասատրութիւն, միանգամայն եւ ի վկայութիւն գործոց մարդկան, որոց վերակացոյք եղեն պէսպէս տեսչութեամբ:

Եւ ապա երեւեսցի նշան Որդոյ մարդոյ յերկինս, եւ յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի (ԻԳ 30):

«Նշան Որդոյ մարդոյ» զմարմնն ասէ, քանզի պատառին երկինք, եւ երեւի Քրիստոս մարմնով Բարով, զի թէ ի վկայելն Ստեփանոսի բացաւ երկինք, եւ ետես զՈրդի մարդոյ², քանի՞օն յԲար գալուստ, յամօթ այնոցիկ, որք ոչ խոստովանին զՆա մարմնով նստեալ ընդ աջմէ Աստուծոյ, զոր նշան մարդկութեանն ասէ: Կամ նշան զխաչն իմանամք, որ առաւել քան զճառագայթս արեգականն պայծառագոյն փայլէ, զի թէ ոչ զլէ զփայլումն սորա, զիա՞րդ Ինքն երեւեսցի: Եւ «յերկինս» զի ամենայն ուրեք տեսանիցի: Եւ է՞ր վասն նշան գալստեան Նորա նախ խաչն երեւի. զի առաւել պապանձեսցի յանդգնութիւն հրէիցն եւ ուրացողացն, որք հայիոյեն զնշան Նորա: Նաեւ իրաւունս իսկ մեծ զխաչն ունիցի ի ձեռնն Բարում, յորժամ յատեան մտանէ, զի ոչ միայն զվէրսն, այլեւ զմահ նախատանացն ցուցանէ, որպէս թէ որ քարիւ կառափնատեալ բերեալ զքարն ցուցանէ, եւ կամ զհանդերձս արեամբ թաթաւեալ, որով նախ քան զդատաստանն ահիւ տեսլեանն կշտամբէ, որպէս ասէ թէ՛ «Յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի»: Ոչ են պէտք, ասէ, ամբաստանութեան, զի իւրովի իսկ յորժամ զխաչն տեսանիցեն, կոծեսցին, զի որում արժան էր երկիր պագանել ի խաչ հանին եւ ի մահուանէն եւս չօգտեցան ինչ, վասն որոյ յայնժամ տեսանելով զվէրս ի ձեռնն Նորա, զոր վիրաւորեցաւ ի տան սիրելոյ Բարոյ³, ոչ կարացեն յորաստ լինել, այլ կոծին՝ զանձինս մաշելով:

¹ Գ > ի

² Գործք է 55

³ Զաք. ԺԳ 6

Եւ դարձեալ ոմանք «նշան» զհմաստութիւն եւ զճնարտութիւն Նորա երկնաւոր ասեն՝ ըստ սաղմոսին¹ թէ՛ «Ճնարտութիւն յերկրէ բուսաւ, եւ արդարութիւն յերկնից երեւեցաւ» (Սաղմ. 27-12), յորում կոծին երկրասէրք ամենայն, որք ոչ երկնային իմաստութեանն հետեւեցան՝ տարածելով իբր զկապար ի ջուրս սաստիկս՝ պէսպէս պլեկոծութեամբ չարչարեալք: Կամ թէ՛ «ամենայն ազգք երկրի» ասելովն ոչ միայն զմեղաւորսն, այլեւ զարդարսն աստ, քանզի մեղաւորքն կոծին, զի ոչ հաւատացին ի լոյսն, որով լուսաւորեալք էին ի փառաց Նորա, իսկ արդարքն զի ոչ յոլով ճգնութիւնս ցուցին, որով ի մեծութիւն փառացն ժամանեալք էին. եւ զայս վասն ամենայնին ասացաք: Բայց լուծանէ զայս երկրի կոչումն, զի սուրբքն թէպէտ յերկրի են, երկնաւորք են՝ ըստ առաքելոյ. «Մեր առաքիւնութիւնն յերկինս է» (Փիլպ. Գ 20):

Եւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ եւ փառօք բազմօք:

Քանզի զհասչէն լուար, զի մի՛ կարծեսցես, թէ ի վերայ նորին բեւեռեալ գայ, ասէ թէ՛ «ի վերայ ամպոց երկնից», որպէս համբարձաւ: Այլեւ զմարգարէին յիշէ թէ՛ «Իբրեւ Որդի մարդոյ գայ ընդ ամպս երկնից» (Դան. Է 13), զոր եւ Ինքն կրկնեաց առ քահանայապետսն. «Բայց ասեմ ձեզ, թէ յայսմհետէ տեսանիցէք զՈրդի մարդոյ եկեալ ընդ ամպս երկնից» (հմմտ. Մատթ. ԻԶ 64): Եւ զի զայս լուան եւ ի միտ ոչ առին, յայնժամ տեսցեն, ասէ, աչօք եւ ողբասցեն եւ անձամբ զանձինս դատապարտեսցեն, եւ աղէտքն այն ոչինչ վճարեսցեն: Կամ «ամպ» զմարմինն ասէ, կամ զխիտ եւ զկոտ զօրս բանական եւ անձրեւածին՝ զհրեշտակս երկնից, կոչէ «ամպ», զի նոքօք գայ ըստ այնմ. «Չայն եղեւ յամպոյն» (Դուկ. Թ 35), այլեւ զանճառ զալուստն ամպոյ բաղդատէ: «Ջօրութեամբ եւ փառօք բազմօք²», այսինքն աստուածական ամենակալ զօրութեամբ եւ փառօք պայծառութեան Նորա, զոր Պօղոս «անմատչելի» ասէ «լոյս»³: Եւ դարձեալ զի «[Ի] բազում զօրս փառք թագաւորի», - ասէ իմաստունն (Առակ. ԺԴ 28): Եւ դարձեալ «Տէրն փառաց»՝ ըստ Պօղոսի (Ա Կոր. Բ 8), բազմապատիկ փառօք արդարոցն գայ եւ կարօղ իսկ է ըստ զանազան գործոց արդարոց՝ զա-

¹ Զ սաղմոսին

² Զ > բազմօք

³ Ա Տիմ. Զ 16

նազան փառս հատուցանել սրբոց. ա՛յս է «քազմօք»-ն, գորս ընդ Իւրեաւ բերէ, եւ թուէ առաքեալ՝ արեգական եւ լուսնի եւ աստեղաց բաղդատելով՝:

Եւ առաքեսցէ զհրեշտակս Իւր փողով մեծաւ, եւ ժողովեսցեն զընտրեալս Նորա ի չորից հողմոց՝ ի ծագաց երկնից մինչեւ ի ծագս նոցա (ԻԳ 31):

Իբրեւ զճշմարիտ թագաւոր՝ կարապետ առաքէ զհրեշտակս Իւր մեծածայն հրամանաւ, գոր «փող» անուանէ, զի «ժողովեսցեն զընտրեալս Նորա»: Եւ է՞ր վասն հրեշտակօք կոչէ զնոսա, յորժամ այնպէս յայտնապէս գայցէ. այնու պատիւ առնիցէ նոցա, քանզի զնախապարուցեալ սուրբսն, որ ընտրեցան յուրկանն², հրեշտակք յափշտակեսցեն ամպօք ընդառաջ Տեառն՝ ըստ առաքելոյ³: Եւ ընդէ՞ր փողով. ի յորդորումն եւ յուրախութիւն կոչեցելոցն եւ յահ եւ յերկիւղ մնացելոցն, որք ոչ կամին զգալուստ Նորա, որպէս ի Սինէական լերինն: Եւ այս՝ «յական թօթափել ի փող յետին»⁴ այսր մտանէ՝ կոչելով հրեշտակօք զամենեսին «ի չորից հողմոց ի ծագաց երկնից մինչեւ ի ծագս նոցա»: Ի միոյ հրամանէ հրեշտակապետին, որ յերկիր գոչէ, ամենայն երկիր սարսափէ եւ զառեալ աւանդն արտաքս բաշխէ: Իսկ «չորս հողմն» կամ զչորս կողմն ասէ՝ զարեւելս եւ զարեւմուտս, զհիւսիս եւ զհարաւ, յորմէ հողմունք հնչեն յաշխարհս, կամ զչորս տարերս, յորում լուծեալ են մարմինք մարդկան, իսկոյն վերադառնան:

Ի թզենո՛յ անտի ուսարոք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին, եւ տերեւն ցցուիցի, զիտէք, թէ մերձ է ամառն (ԻԳ 32):

Նոյնպէս եւ դուք, յորժամ տեսանիցէք զայս ամենայն, զիտասջիք, թէ մերձ է ի դուրս (ԻԳ 33):

Զթզենիդ կրկին իրաց օրինակ դնէ, որպէս Իւր սովորութիւն էր: Նախ՝ զի ասաց թէ՝ «յետ նեղութեան աուրցն այնոցիկ». նոքա խնդրէին զժամանակն, եւ զօրն եւս ճշգրիտ ցանկային լսել, որ եւ զիտացեալ զկարծիսն առնու զթզենիդ, թէ ո՛չ յետ բազում ժամանակաց լինի, քանզի յորժամ նորա ոստքն պտկին եւ տերեւն երեւի, զիտէք թէ ամառն մերձեալ է, նոյնպէս յետ ասացեալ նեղու-

¹ Ա Կոր. ԺԵ 41

² Մատթ. ԺԳ 47-50

³ Ա Թես. Դ 16

⁴ Ա Կոր. ԺԵ 52

թեանցս հասեալ է անդորրութիւնն եւ դիրութիւնն¹, զի որպէս այնն, հարկ է եւ այսն լինել առանց խափանաճուի: Եւ երկրորդ՝ ոչ զայլ ծառ, այլ զթզենիդ յիշէ վասն այս պատճառի, զի ի լուծանել նախաստեղծին զպատուիրանն թզենոյ սաղարթիւք ծածկէր զմերկութիւնն, իսկ Բրիստոս գալստեամբն Իւրով ցամաքեցոյց զնա՝ ասելով. «Մի՛ եղիցի ի քէն պտուղ յախտեան» (հմմտ. Մատթ. ԻԱ 19), այսինքն ըստ առաջին յանցանացն մեղք, որով մահացաւ բնութիւնս, քանզի երարձ խաչիւն զմեղս մարդկան եւ դարձոյց զԱդամն վերստին ի դրախտն առաջին:

Արդ՝ յորժամ տեսանիցէք, ասէ, զնոյն թզենի սաղարթաւորեալ՝ զմեղս վերստին ընծիւղեալ ի ժամանակս նեռին եւ դարձեալ ի նոյն կռապաշտութիւն պատրելով զմարդիկ, մերկացուցանելով յաստուածային զիտութենէն եւ ի կամացն նշանացն խաբէութեամբ եւ արուեստիցն մոլորութեամբ, զիտասջիք, թէ մերձեալ է զալուստն Իմ: Այս է ամառն, յորում հոգեւոր եւ ջերին զարունն լինելոց է արդարոցն ի յաստի ձմերայնոյս, եւ դուռն կենաց բացեալ է, արքայութիւնն արժանատրացն, եւ մեղատրացն՝ նմին հակառակն ձմեռն յամարայնին, եւ պատրաստ դուռն դժոխաց, ուր լալ աչացն է եւ կրճել ատամանցն: Իսկ ոմանք «ձմեռն» ասեն զկենցաղոյս ալեկոծութիւն, իսկ թզենի կակդացեալ ոստովք եւ պտկեալ տերեւովք՝ զմարդ, որ ունի սիրտ մարմնեղէն եւ ոչ քարեղէն եւ քաղցրացեալ ի գործս առաքինութեան եւ ծաղկեալ տերեւով, այսինքն յուսով, զի ոչ է հասեալ աւետեաց պսակին, այլ իբր հայելի տեսանէ զխոստացեալ բարին, իսկ ի գալստեան արդար Դատաւորին յայտնապէս մերձի ի պտուղն, այսինքն ժառանգէ արդեամբք զվիառս, զոր այժմ յուսով է:

Ամէն ասեմ ձեզ, եթէ² ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եղիցի (ԻԴ 34):

Որպէս Երուսաղէմի վիշտքն սովոյն սասանութեանն եւ սուտ քրիստոսացն, ընդ բնաւս տարածիլ աւետարանին: «Ոչ անցցէ ազգս այս». ոմանք զմարդկանէ կարծեն կամ զհրէիցն, թէ ոչ անցանեն, մինչեւ զայս ամենայն կրեն: Բայց ինձ թուի զհաւատացելոցն ասել, քանզի զիտէ՛ ոչ միայն որք ի ժամանակին են դրոշ-

¹ Զ գիտութիւնն

² Զ թէ

մեալ ազգ, այլև ի կրօնիցն եւ յառաքինութենէն կոչեալ ըստ այնմ. «Այս ազգ է, որ խնդրէ զՏէր» (Սաղմ. ԻԳ 6): Բայց հաւասար ինձ թուի այնմ ասացուածի թէ՛ «Են ոմանք ի սոցանէ, որ աստ կան, որք մի՛ ճաշակեցեն զմահ, մինչեւ տեսնեն զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ Իւրով» (Մատթ. ԺԶ 28), իբր թէ՛ մի անցցէ ազգս այս, մինչեւ եկեսցէ աւետիսն խոստացեալ, որ ինչ յԱւետարանս գրեալ է:

Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք Իմ մի՛¹ անցցեն (ԻԳ 35):

Առ ի հաստատութիւն ասացելոցդ դնէ զայս, թէ դիւրին է եղծանել անշարժիցդ եւ մշտնջենաւորացն եւ ո՛չ յԻմոց բանիցդ ի գետին անկանել: Միանգամայն եւ զարարածս անցաւոր ցուցանէ, զոր Բանն զոյացոյց՝ ըստ Դաւթի՛², ի սկզբանն իւր անեղծ եւ անապական՝ ըստ աստուածային մշտնջենաւորութեանն, զի ո՛չ ըստ նիւթականացս զոյացաւ եւ ո՛չ ընդ սոսա փոփոխի: Եւ ա՛յլ ազգ. զի վասն կատարածի խօսեցաւ, որում բազումք ոչ հաւատային, ցուցանէ, թէ ոչ միայն մասնաւորքս եւ շարժականքս, այլև երկինք եւ երկիր կերպարանափոխ լինելոց են, որով անբաւ զօրութիւնն, միանգամայն եւ իշխանութիւնն ծանուցանի, թէ Տէր է ամենայնի:

Բայց վասն աւուրն այնորիկ եւ ժամու ո՛չ ոք գիտէ՝ ոչ հրեշտակք երկնից եւ ո՛չ Որդի, բայց միայն Հայր (ԻԳ 36):

Կարծենք, թէ կամէին եւ զայս հարցանել, վասն այնորիկ յիշէ: Բայց զի՞նչ է այս, զի որ ինչ լինելոց էր յետոյ՝ աւերն Երուսաղէմի եւ նեղութիւն աշխարհի, եւ նշան զալստեան Նորա, յառաջագոյն կանխեալ ասաց, իսկ վասն աւուրն, թէ յեօթանցն յորում աւուր պատահիցէ զալ եւ կամ ի ժամու քսան եւ չորիցն յորում դիպիցի ժամու, որում միշտ ըղձային գիտել, յայսմանէ հրաժարէ, որպէս յայլում տեղոց ասաց. «Ո՛չ գիտիցէք, թէ յորում ժամու գայցէ յերեկորեայ՝³, թէ ի մէջ գիշերի, թէ ի՞⁴ հաւախօսի, թէ ընդ առաւօտս» (Մարկ. ԺԳ 35): Չսոյն եւ յետ յարութեանն հարցին թէ՛ «Ի ժամանակի՞ աստ յայսմիկ հասուցանելոց իցես զարքայութիւնն Իսրայէլի». ասէ ցնոսա. «Ո՛չ է ձեզ գիտել զժամս եւ զժամանակս, զոր

¹ Զ ոչ

² Սաղմ. ԼԲ 6

³ ՏԶ յերեկօրեայ

⁴ Զ > ի

Հայր եղ յԻւրում իշխանութեան» (Գործք Ա 6-7): Աստ զեղանակն հարցին՝ զգարնանայինն կամ զաշնանայինն, սակայն ոչ զօրն յայտնեաց եւ ոչ զժամանակն եւ ոչ զեղանակն, որպէս եւ աստ վասն աւուրն, թէ ոչ ոք գիտէ զօրն:

Արդ՝ բազում են պատճառք, եւ նախ եւ առաջին ոչ եթէ ոչ գիտէ, այլ զոր օրինակ մեղաւորացն ասաց թէ՛ «Ոչ գիտեմ զձեզ» (Մատթ. ԻԵ 12)՝ ըստ զործոցն, որ քաջ տեղեակն էր, նոյնպէս եւ զայս, որպէս զի արգելցէ զնոսա ի հարցմանէն: Եւ երկրորդ՝ քանզի յոյժ պատուէր զնոսա եւ ոչինչ թաքուցանէր ի նոցանէ, եթէ ասացեալ էր եթէ՛ «Ոչ ասեմ ձեզ», ի տրտմութիւն էին մատնեալ, վասն այսորիկ ասաց թէ՛ «Ոչ ոք գիտէ՝ ոչ հրեշտակք երկնից՝ եւ ոչ Որդի», զի մի՛ տրտմեացին: Եւ երրորդ՝ ծածկեաց, զի արթունք լինիցիմք զայստեան Նորա, քանզի ասաց, թէ զայ, եւ թէ երբ զայ ասացեալ էր, անհամ լինէր զայլուստ Նորա, իսկ յորժամ ոչ եղ սահման զայստեան Իւրոյ, որպէս ամենայն ազգ ցանկան Նմա, եւ իւրաքանչիւր ոք կարծէ յիւրում ժամանակի զգալուստ Նորա, քանզի մարգարէքն առաջին եւ այժմու ծնեալքս եւ որք լինելոցն են նմանապէս կարծեն զգալուստ Նորա եւ հաւատացեալ ծարաւին Նմա: Եւ չորրորդ՝ ճանաչէ իբրեւ զԱստուած եւ անգիտանայ իբրեւ զմարդ, քանզի երկու գլխով վարի միշտ Գիրք, իբր այն թէ՛ «Ո՞ր եղիք զնա» (Յովհ. ԺԱ 34), եւ՝ «Ադամ, ո՞ր ես» (հմմտ. Ծննդ. Գ 9), եւ՝ «Չի՞նչ է այդ ի ձեռին քո» (հմմտ. Ելք Դ 2), զի ցուցցէ, թէ այն մարդկութեանն է, եւ այս՝ աստուածութեանն, ապա թէ ոչ՝ զհա՞րդ որ ինչ նախ քան զժամանակն է՝ հաւաստեալ գիտէ, եւ զնոյն ինքն անգիտանայ զժամն: Առակի նման են իբքն, որպէս թէ ոք, որ նախ զպարիսպն ինչ իցեն՝ գիտիցէ եւ զպարիսպն ասի անգիտանալ, կամ զաւուրն կատարած քաջ գիտիցէ եւ զսկիզբն զհշերոյն ոչ իմանայցէ, որ եւ միոյն գիտութիւնն ի հարկէ ի ներքս ածիցէ եւ զմիւսոյն:

Եւ հինգերորդ՝ զի մի՛ հակառակ Հօր կարծիցի, այլ որպէս զամենայն զԻւրն առ Հայր վերաբերէր զբանս եւ զգործ, այսպէս եւ զգիտութիւն ժամուն, զի հնազանդ Հօր ծանիցի՝ ըստ առաքելոյ՝¹: Եւ վեցերորդ՝ զի Բրիստոս գլուխ է Եկեղեցւոյ, եւ մեք՝ մարմին Նորա՝², զմեր անգիտութիւնս Իւր համարի Գլուխն մեր, որպէս եւ

¹ Զ > երկնից

² Ա Կոր. ԺԵ 28, Փիլ. Բ 8

³ Կող. Ա 18

զանհնազանդություն, ըստ Պողոսի թե՛ «Յայնժամ եւ Ինքն Որդի հնազանդեսցի» (Ա Կոր. ԺԵ 28). եւ որպէս «որ ոչ գիտէր զմեղս՝ վասն մեր մեղս արար» (Բ Կոր. Ե 21) եւ անէծք կոչեցաւ՝՝ գրեալ է, ոչ թէ Ինքն, քա՛ւ լիցի, այլ մե՛րն Իւր ասացեալ է. արդ որպէս ամենայն, նոյնպէս եւ անգիտութիւնն: Եւ եօթներորդ՝ որպէս ի հրեշտակացն, այսպէս եւ ի շնորհաց որդոցն հեռացոյց զգիտութիւն, քանզի հոմանուն է որդոյ անուն ըստ այնմ. «Ելանեմ Ես առ Հայր Իմ եւ առ Հայր ձեր» (Յովհ. Ի 17), եւ «Որդիք Բարձրելոյ ամենեքեան» (Սաղմ. ՉԱ 6), գրեալ է. արդ՝ ասէ, թէ ոչ հրեշտակք գիտեն եւ ոչ մարդիկ, որ են շնորհօք որդիք Աստուծոյ, բայց Հայր միայն եւ Ես: Եւ ութերորդ՝ զճշմարիտն ասելի է, քանզի ի բազում օրինակս այսպէս գտանի. թէպէտեւ ի մերս այլայլեալ է շարարութիւն բառիցն, թէ ոչ ոք գիտէ ի մարդկանէ, եւ ոչ հրեշտակք յերկինս, եւ ոչ որդի այլազգ գիտէ, բայց որպէս զՀայր, քանզի հաւասար է այնմ թէ՛ «Ո՛չ Իմ կամք, այլ Քոյդ է իսկ»:

Այլ որպէս ասուրքն Նոյի, նոյնպէս եղիցի զայուստն Որդոյ մարդոյ (ԻԳ 37):

Չի որպէս էին յաւուրսն որ յառաջ քան զջրհեղեղն, ուտին եւ ըմպէին, կանայս առնէին եւ արանց լինէին, մինչեւ յօրն, յորում եմուտ Նոյ ի տապանն (ԻԳ 38),

եւ ոչ գիտացին, մինչեւ եկն ջրհեղեղն եւ եքարձ զամենեսին, այնպէս եղիցի եւ զայուստն Որդոյ մարդոյ (ԻԳ 39):

Տեսանե՞ս, թէ զհա՛րդ ստոյգ գիտէ, մինչ զի եւ զնշանսն տայ, թէ որպէս ասուրքն Նոյի, նոյնպէս եւ զայուստն Իմ լինիցի: Կամ թէ յանկարծակի գայ, որում ոչ ոք ակն ունիցի, եղ զայս ասացոյց, որպէս ի ժամանակս Նոյի, կամ վասն անհաւատութեանն ասէ եւ փափկակեցութեանն: Չի ոչ եթէ ոչ գիտէին զգալ ջրոյն, որ զհարիւր ամ փողէր Նոյ տապանին կազմութեամբ, սակայն ոչ հաւատային, այլ ուտէին եւ ըմպէին, մինչեւ եկն ջուրն եւ կորոյս զամենեսեան, եւ Նոյ միայն փրկեցաւ, այսպէս եւ զգալուստն ասէ՝ ոչ թէ ոչ գիտիցեն, զոր միշտ քարոզեն Գիրք աստուածայինք ի կազմութիւն Եկեղեցոյ տապանի, բայց ոչ հաւատան եւ ոչ ակն ունին զալստեան Նորա, որ ստոյգ լինելոց է, որպէս եւ ջուրն, այլ փափկութեան կենօք յօրանան, եւ ցանկութեամբ արք ի կանայս եւ կա-

¹ Գաղ. Գ 13

նայք յարս անկանին, այլև զանզգամութիւնս բարբառին թէ՛ «Ոչ սասանեցայց ի բարեկենդանութեան իմում» (Սաղմ. ԻԹ 7): Յայնժամ հասցէ նոցա կորուստն՝ ըստ առաքելոյ թէ՛ «Յորժամ ասիցեն խաղաղութիւն եւ շինութիւն իցէ, հասցէ նոցա սատակումն» (Ա Թես. Ե 3): Իսկ թէ ոք ասիցէ, թէ խաղաղութիւն իցէ, ապա ընդէ՞ր նեղութիւն ասաց: Ո՛չ ասաց, թէ խաղաղութիւն իցէ, այլ թէ՛ «ասիցեն», այսինքն՝ անզգայքն, որ ի մէջ չարեացն փափկանաւին, իսկ արդարոցն նեղութիւն է եւ տրտմութիւն, քանզի ի ժամանակս նեռինն անպատեհ ցանկութիւնք յորդեն յանօրէնս, եւ վտանգ¹ հալածանաց տիրէ արդարոցն. ա՛յս է ասելն թէ՛ «Որպէս ատուրքն Նոյի, նոյնպէս² եղիցի գալուստն Որդոյ մարդոյ»:

Իսկ զի՞նչ այն թէ՛ «մինչեւ³ յօրն, յորում եմուտ Նոյ ի տապանն, եւ ոչ գիտացին, մինչեւ⁴ եկն ջրհեղեղն եւ երարձ զամենեսին⁵»: Կրկին իրս յայտ առնէ. մի՞ թէ սակաւք են ապրեալքն, եւ բազումք՝ ապականեալքն՝ ըստ այնմ թէ՛ «Իբրեւ ոգիք ութ ապրեցան» (Ա Պետ. Գ 20) տապանաւն, որք ոչ միայն եօթանց կենցաղոյս էին բաժանօղք, այլև ութիցն եւ ընդ նեղն ընթացեալք, որ սակաւուց է մտանելի, եւ ոչ ընդ բազմացն ի լայն, որոյ կորուստն է առաջի: Եւ միւս եւս, թէ նախ արդարքն փրկին, որ է ստորինս Եկեղեցիս, որ մտանէ ի վերին Եկեղեցին, յորժամ յերկնից իջանէ, որոյ մուտ տապանին է ապացոյց, եւ ապա գետ հրոյն, որ կորուսանէ զամենեսեան, որպէս զի կրկին տանջեսցին տեսութեամբ փառացն արդարոց, որով փրկեցան, եւ անվախճան հրոյն այրմամբ, որով ըմբռնեցան, որպէս ասացեալ է:

Յայնժամ թէ իցեն երկու յագարակի, մին առնուցու, եւ միւսն թողուցու (ԻԳ 40):

Դարձեալ եւ ա՛յլ իմն նշան տայ, թէ չէ՛ անտեղեակ ատուրն, զի այսք ամենեքեան գիտելոյն օրինակք են. «Յայնժամ,- ասէ,- թէ իցեն երկու յագարակի»: Դուկաս ասէ թէ՛ «յայնմ գիշերի» (Դուկ. ԺԷ 34). կամ ի գիշերի լինիցի գալուստ Նորա, կամ թէ՛ գիշեր բազմաց լինելոց է օրն այն: Իսկ «երկու յագարակի» ասելն այսպիսի

¹ Տ վտանկք Ձ վտանք

² Ձ այնպէս

³ Ձ մինչ

⁴ Ձ եւ

⁵ Ձ կոր՝] երարձ զամենեսին

է. «ազարակ»-ն աշխարհս է՝ ըստ Տեառն ձայնին¹, եւ երկու յազարակի աշխարհի միտք մարդկան: Արդ՝ որ ըստ Աստուծոյ հաճոյիցն գործէ զանդաստան աշխարհիս ի պէտս աղքատաց եւ ոչ հոգովք աշխարհականօք, որպէս Նոյ եւ Աբրահամ, այնպիսին ամպովք ընկալցի յարքայութիւնն, իսկ որ մարմնական ցանկութեամբ որպէս Կայինն գործօնեայ լինիցի, ի բաց ընկեսցի ի վերին կենացն, որպէս խոտանն ի յուռկանէն: Եւ դարձեալ՝ ազարակ է Եկեղեցի եւ սիրտ հաւատացեալ ժողովրդեանն, իսկ երկու յԵկեղեցի դասք քարոզացն: Արդ՝ որք ոչ ծուլութեամբ եւ ոչ ազահութեամբ մշակեն զհաւատացեալ հօտս եւ տան նոցա պտղաբերել ի Տէր, առնուցուն պտուղ զհարիւրաւորն, որպէս Իսահակ եզիտ զգարիւն², եւ որք ծուլանան եւ կամ քարոզեն վասն ազահութեան, թողցին ի դժոխս:

Դարձեալ՝ եթէ իցեն երկու փարթամք յաշխարհի եւ մեծատունք, ոչ հաւասար կորնչին, այլ ոմն, եթէ ըստ կամացն Աստուծոյ մատակարարիցէ զինչսն, որպէս Յոբն, եւ «առնէ բարեկամս ի մամռնայէ անիրաւութեան» (Ղուկ. ԺԶ 9), առցի նա ի յարկս յաւիտենից, իսկ միւսն, որ լինիցի իբրեւ զմեծատունն զայն եւ կամ զընչեղն, որ ուտէին եւ ուրախ լինէին առատապէս, թողցին ի կեանս բարիք նոցա ըստ այնմ. «Ընկալար զբարիս քո ի կեանսն, երթ ի տանջանս» (հմմտ. Ղուկ. ԺԶ 25): Եւ դարձեալ՝ վասն յանկարծ զայստեանն ասէ զայս, եթէ պատահիցեն երկու ի մին ազարակի ի սերմանել կամ յոռոզել, մինն յանկարծ փոփոխումն առնու, մինչ զի ընկեր նորա ոչ զիտիցէ վասն արագութեանն, թէպէտ փոփոխի եւ ինքն առժամայն, կամ թէ ոչ անյայտեալ ծածկի վասն հաւասարութեան վարուցն:

Եւ եթէ³ երկու աղայցեն ի մի երկանս, մին առնուցու, եւ միւսն թողուցու (ԻԴ 41):

Այս աղքատաց ապացոյց, որ զպարենաւորն աշխատութեամբ գտանեն, զի որպէս ոչ ամենայն մեծատունն ի դժոխս կամ յարքայութիւնն երթան, այսպէս եւ ոչ ամենայն աղքատ, զի համբերողքն եւ ժուժկալքն առնուին, որպէս Ղազար, իսկ տրտնջողքն եւ անհամբերքն եւ վատքն թողանին ի դժոխս, իբր քնածն այն, որ

¹ Մատթ. ԺԳ 38

² Ծննդ. ԻԶ 12

³ Զ թէ

զպատառատունն էր զգեցեալ՝ ըստ Սողոմոնի¹: Կամ եւ զայս վասն արագ փոփոխմանն ասէ. քանզի յագարակին պատահէր ի միմեանց հեռագոյնս լինել, աստ ասէ՝ թէ ի մի երկանի աղան, մինչ զի ձեռք ի միմեանս հասանեն, սակայն այնքան արագ լինի յափշտակիլն, մինչ զի միմեանց ոչ ազդ արասցեն: Եւ այլ ազգ. զի շրջելով աշխարհս երկանի նման է, որ աղայ զմարդիկ եւ ի միջոյ իւրմէ մերժէ: Արդ՝ երկու են, որ² յաղօրիս գան փորձանօք կենցաղոյս ճնշեալք՝ թեփ եւ ալիւր, յորոց մին առեալ լինի ալիւրն ի կերակուր Աստուծոյ եւ հրեշտակաց Նորա, իսկ միսն թողեալ լինի թեփն յանարգանս եւ յարհամարհանս՝ ըստ այնմ թէ՛ «Զցորեանն ժողովէ եւ զյարդն այրեսցէ» (հմմտ. Մատթ. Գ 12): Զի թէպէտ փորձանքն հաւասար, սակայն փառքն եւ տանջանքն ոչ հաւասար, զի ոմն վասն Աստուծոյ, իսկ ոմն վասն փառաց մարդկան թեթեամտութեամբ փորձանացն ժուժկալ լինի: Եւ դարձեալ «աղօրիս երկանի» ասէ զկազմած բերանոյն՝ ըստ Ժողովողին «Ի տկարութենէ ձայնի աղօրոյն» (Ժող. ԺԲ 4). արդ՝ աղօրիքս այս կրկին իրս աղան օրհնութիւն Աստուծոյ եւ անէծս մարդկան, յորոց մինն ընդունի, եւ միսն՝ ոչ ըստ այնմ. «Ի բանից քոց արդարասցիս եւ ի բանից քոց պարտաւորեսցիս» (Մատթ. ԺԲ 37):

Եւ եթէ իցեն երկու ի մի մահիճս, մին առնուցու, եւ միսն թողուցու:

Նախ յանդի ասաց եւ սպա յերկանի, իսկ այժմ ամենեւին մերձեցոյց³ ի մի մահիճս, սակայն ոչ ազդ լինի ընկերին վասն արագ վերտառութեանն, որպէս զի զամենեւին անմասն բուսէին եւ զնրբութիւն ժամանակին ցուցանեն ասացեալքս. վասն այտորիկ ոչ ասաց զօրն եւ ոչ զժամն, զի ոչ յաւոր է եւ ոչ ի ժամու, այլ արագ քան զական թօթափումն: Եւ դարձեալ մահճօքն զհեշտացելոցն ասէ եւ անհոգութեամբ յաշխարհիս իրս յօրացելոցն, որ են թագաւորք եւ իշխանք: Արդ՝ պատահէ զի ոմն ի սոցանէ արժանի լինիցի վերին կոչմանն, որպէս Աբգարիոս, Տրդատէս, Կոստանդիանոս, Թէոդոս եւ այլք բազումք, իսկ ոմանք խտտին, որպէս բազումք ի կոռպարիշտ ինքնակալացն եւ իշխանացն:

¹ Առակ. ԻԳ 21

² Զ որք

³ Զ մերձեաց

Եւ այլ ազգ. ի ձեռն մահճացն թուի ինձ զկարգաւորսն ասել, որպէս մահիճն Եղիայի եւ Եղիսէի¹, քանզի ոչ այլ ինչ է կարգի առնումն, եթէ ոչ ի մահ իջումն: Արդ՝ ի նոյն կարգի, ասի, երկու գտանին դասք: Չի որք Աստուծոյ ծառայեն ըստ երից իրաց, որպէս պահելով զկուսութիւնն, գոր ուխտեցին, եւ զհնազանդութիւնն մահուչափ ուրանալով զկամս, եւ աղքատք եւ անինչք կամօք յաշխարհի շրջիցին, սքա առեալք լինին ի կեանս, որպէս Անտոնն եւ այլ հարքն սուրբք: Իսկ որ ձեռով եւ անուամբ միայն ի կարգս մտանեն եւ մարմնոյ եւ կամաց եւ ընչից ծառայեն, նոքա են, որ թողեալ լինին արտաքոյ առազաստին՝ ասելով թէ՛ «Ոչ գիտեմ զձեզ» (Մատթ. ԻԵ 12): Բայց քննելի է այն, թէ ընդէ՞ր յերիս տրոհեաց եւ զհրաքանչիւր դարձեալ բաժանեաց: Գիտելի է, զի երեք են վարք յաշխարհի՝ կամ քարոզք եւ ուսուցիչք, կամ աշխարհական ժողովուրդք, կամ կարգաւորք, որպէս ասացաք: Արդ՝ երեքինս սքա յերկուս բաժանին յօր դատաստանին ի ձեռն սրոյ հրամանացն Աստուծոյ, որպէս յառաջ տանելով զբովանդակն յերկուս հաստանէ՝ յօղիս եւ յայծիս, եւ զոմն յաջմէ եւ զոմն ի ձախմէ կացուցանէ, քանզի աստ վարուցն զանազանութիւն արար եւ հանդերձեալ է յերիցն զոմանս առնուլ իբրեւ զօղիս եւ զոմանս թողուլ իբր զայծիս²:

Արթուն կացեք, զի ոչ գիտեք՝ յորում ժամու Տէրն ձեր գայ (ԻԳ 42):

Չայս կամ վասն կատարածի աշխարհիս³ ասաց, կամ վասն իրաքանչիւր ուրուք վախճանի: Եւ արթուն ոչ ի քնոյ հրամայէ լինել, զի այս անհնար է՝ որք ընդ մարմնոյ կապեալ են եւ հաղորդեալ կերակրոյ, այլ բարի գործովք պատրաստ լինել, ասէ, եւ սպասել միշտ զայստեան Նորա, «զի ոչ գիտեք՝ յորում ժամու Տէրն ձեր գայ⁴»: Ոչ ասաց թէ՛ ոչ գիտեմ, այլ թէ՛ ոչ գիտեք, որպէս զի ցուցցէ, թէ վասն այսորիկ ոչ ասեմ զօրն, զի արթուն լինիջիք: Եւ արթնութիւնն կրկին է, որպէս եւ քունն. ի զարթման գոլով եւ ոչ գործել, զի են ի քունն որ յաստիս միայն հային, եւ են որ⁵ ի հանդերձեալն հային, սակայն ծուլացեալ զհանդերձելոյն ոչ գործեն:

¹ Գ Թագ. ԺԷ 19, Դ Թագ. Դ 10

² Մատթ. ԻԵ 32-33

³ Գ աշխարհի

⁴ Գ > Տէրն ձեր գայ

⁵ Գ որք

Արդ՝ պարտ է ըստ երկուցս արթուն լինել. գանտիսն նկատել եւ ի ճգունս անխոնջ¹ վաստակել եւ այսպիսի գոլով կացէք կասկած ցանկ, որպէս գրէ Պօղոս. «Մարան աթայ» (Ա Կոր. ԺԶ 22), այսինքն՝ Տէր գալոց է, զգոյճ կացէք:

Չայն գիտասօջիք, եթէ գիտէր տանուտէրն՝ յորում պահու գող գայ, հսկէր՝ եւ ոչ տայր քոյլ ական հատանել զտանն իւրոյ (ԻԴ 43):

Այսինքն՝ յաշխարհական իրաց առէք սպացոյց, այս է՝ «զայն գիտասօջիք», ըստ առաքելոյ թէ՛ «Չայն խորհեսցի» (Բ Կոր. Ժ 7, 11): Չ«պահ»-ն կրկին իմա. կամ վասն հասարակաց, կամ մասնաւոր կատարածի. եւ «գող» վասն յանկարծութեանն ասէ եւ ծածուկ ի մարդկանէ լինելոյն՝ ըստ այնմ թէ՛ «Օր Տեառն իբրեւ զգող եկեալ է» (հմմտ. Բ Պետ. Գ 10, Ա Թես. Ե 2): Բանգի թէ գիտէին բազումք զօրհաս մահու իւրեանց, ընդ այն ժամանակս եւեթ պնդէին, իսկ այժմ՝ զի անյայտ մնաց, արթուն լինիցին, որպէս տանուտէրն, ասէ, թէ զժամանակ գալոյ գողոյն գիտիցէր, յայն ժամանակին միայն հսկէր եւ ոչ տայր վնասել տան իւրոյ, իսկ որովհետեւ զայն ժամանակ ոչ գիտիցէ, պարտի զգիշերն ողջոյն արթուն լինել, զի մի՛ գողանայցեն զինչս նորա: Ահա եցոյց զշահն, թէ էր վասն ոչ յայտնեաց զօրն:

Դարձեալ՝ եւ զծոյլսն պատկառեցուցանէ այսու, թէ նոքա որչափ վասն ընչիցն հոգան եւ կասկածեն ի գողոց, եւ այն վասն երկբայ իրացն, քանզի բազում անգամ պատահէ ոչ գալ գողոց, իսկ դուք գիտէք, զի գալոց է, եւ ոչ կայք արթունք: Եւ վասն ական հատանելոյն ասացեալ է յառաջագոյն: Դարձեալ՝ գող է սատանայ, որ միշտ գողանայ զմեզ ի Տեառնէ, քանզի սպրդելով մտանէ ի միտս մեր՝ զայսօրն իւր հայցելով եւ զվաղիւն Աստուծոյ նուիրելով, այլեւ զչարն բարի գունելովն գողանայ ի մէնջ, զոր պարտ է տանուտեառն, մտացն ասեմ վերակացուի, գիտել եւ հսկօղս լինել ի ձեռն Գրոց վարդապետութեան եւ միշտ ընդդէմ դնել խորհրդոց նորա, զի մի՛ հատցէ ի ձեռն խորհրդոց զտունս մեր յաւարի, այսինքն՝ զմարմինս ի պէսպէս ախտիցն լրմունս:

Վասն այսորիկ եւ դո՛ւք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ ակն ունիցիք, գայ Որդի մարդոյ (ԻԴ 44):

¹ Զ անխոնջ

Վասն որոջ իրաց եղերուք պատրաստք: Վասն ժամուն ասե, զի ոչ գիտիցէք. քանզի յեղակարծում ժամանակի հասցե ի վերայ, զի մի՛ խռովիցիք, ըստ մարգարտին, առանց պատրաստութեան լինել¹, որպէս քնած էիցն հասանէ² սատակումն³, վասն զի առանց պատրաստութեան են ըստ յիմար կուսանացն⁴. քայց պատրաստութիւն զգործոցն ասե, զի մարտը եւ կազմ լինիցին վարուք: Նմանապէս եւ մահուանն պարտ է սպասել, զի ոչ որ զիտէ զժամանակ մահուան՝ իրոյ, որ է նշանակ ընդհանրական փոփոխմանն:

Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ եւ իմաստուն, զոր կացոյց տէր իւր ի վերայ ծառայից իւրոց՝ տալ նոցա կերակուր ի ժամու (ԻԳ 45):

Նախ զնեղութեանցն յուշ արար, եւ սպա զայն փութանակի զալստեանքն մխիթարեաց: Չի մի՛ կարծիցեն, թէ զալուստ Նորա ամենեցուն է փրկութիւն, այսուհետեւ վասն հաւատոցն եւ գործոցն վարդապետէ: Կամ՝ զի ասաց՝ երկու յանդի եւ յերկանի եւ ի մահիծս, եւ մին ի սոցանէ առեալ, եւ միսն՝ թողեալ, ասէ այժմ, թէ ո՛չք են առեալքն, եւ ո՛չք թողեալքն: «Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ եւ իմաստուն» «իսկ»-ն ստուգութեան է տարացոյց, եւ «ո՞վ»-ն ո՛չ հարցման, այլ հիացման օրինակ ըստ այնմ. «Ո՞վ է, որ դիմեալ զայ յԵղովմայ՞» (Ես. ԿԳ 1), եւ թէ «Ո՞վ է սա, որ ելանէ յանապատէ» (հմմտ. Երգ Գ 6), որպէս թէ ասել՝ որ ճշմարիտ հաւատարիմ եւ իմաստուն ծառայ է, զարմանալի է քազմաց: Եւ է այս նախ առ վարդապետսն եւ որ ունին բանի զօրութիւն, եւ առ իշխանսն հոգեւորս եւ մարմնաւորս, միանգամայն եւ առ ընչեղս, եւ սպա իւրաքանչիւր ումեք, որ ունիցի առանձին շնորհս, յայտ արար: Արդ՝ ի սոցանէ՝ որ որ զտանի հաւատարիմ եւ իմաստուն, քանզի ծառայք ամենեքեան ըստ արարչութեանն, որպէս ասէ Դաւիթ⁷, միանգամայն ըստ տնտեսութեանն՝ ըստ առաքելոյ թէ՛ «Ո՛չ էք անձանց տեարք, քանզի զնոց զնեցայք» (Ա Կոր. 2 19-20): Բայց աստ ծառայ զի զկամս տեառն իւրոյ առնիցէ՝ լինելով հա-

¹ Ես. ԺԳ 6-9, ԻԴ 19

² Տ հասանէր

³ Զ ի սատակումն

⁴ Մատթ. ԻԵ 1-13

⁵ Տ մահուանն

⁶ Տ յերկու Զ Եդ՞

⁷ Սաղմ. 6ԺԸ 91

ւատարիմ եւ իմաստուն. հաւատարիմ՝ զի ոչ խորէ եւ գողանայ կամ ընդվայր գտերունիսն ծախէ, իսկ իմաստուն՝ զի յօգուտ այլոց գիտիցէ մատակարարել եւ ոչ ի վնաս ծառայակցաց¹: Քանզի լինին բազումք եւ ոչ իմաստունք, որպէս այն, որ զմի քանքարն էառ եւ ոչ յայլս իմաստութեամբ աճեցոյց, եւ եւն, որք յայլս տնօրինեն եւ զանձանց անփոյթ առնեն: Վասն այսորիկ ասաց «հաւատարիմ ծառայ եւ իմաստուն²»:

Կամ՝ զ«հաւատարիմ»-ն վասն հաւատոյն իմա, իսկ «իմաստուն»-ս՝ սակս գործոյն, քանզի որ հաւատայ եւ գործէ, կատարեալ է, ապա թէ ոչ՝ երկոքեան մեռեալ եւ դատարկք են՝ ըստ առաքելոյ³: Կամ՝ հաւատք, որ է պարզամտութիւն՝ ըստ այնմ թէ՛ «Պարզամիտն հաւատայ ամենայն բանի» (հմմտ. Առակ. ԺԳ-15), իսկ իմաստութիւն՝ առանց խորամանկութեան եւ նենգութեան խառնեալ ընդ միմեանս է գեղեցիկ առաքինութիւն, որպէս այլոր ասաց. «Եղերուք խորագէտք իբրեւ զօձս եւ միամիտք իբրեւ զաղաւնիս» (Մատթ. Ժ 16), որպիսի որ էին Պետրոս եւ Պօղոս եւ այլք նմանօրք նոցին. քանզի վասն աղաւնի գոլոյն վշտացն համբերէին եւ ի վարդապետութենէն ոչ կային⁴ ի բաց եւ վասն իմաստութեանն, ըստ ժամանակի եւ տեղոյ եւ երեսաց, զհոգեւոր կերակուրն ջամբէին: «Չոր կացոյց,- ասէ,- տէր իւր ի վերայ ծառայից իւրոց». Ղուկաս «զերդաստանաց» ասէ⁵, որ է ընչից եւ ստացուածոց, եւ զայս յայտ առնեն զանազան ասացեալքս, թէ ոչ տեսրք ծառայիցն են եւ ոչ ընչիցն, զոր սեփհականեն, այլ հազարապետք եւ վերակացուք նորայոցն, յորոց խնդիր լինելոց է՝ ըստ Պօղոսի. «Խնդիր է ի մէջ հազարապետաց, եթէ որ հաւատարիմ գտցի» (Ա Կոր. Դ 2):

Երանի՛ իցէ⁶ ծառային այնմիկ, զոր եկեալ տէրն գտանիցէ արարեալ այնպէս (ԻԳ 46):

Ամէ՛ն ասեմ ձեզ, զի ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուցէ զնա (ԻԳ 47):

Չի՞նչ այսմ պատուոյ հանգոյն կացցէ, կամ ո՞ր բան զմեծարանս զայս յանդիման կացուցանել կարէ, զոր ամենեցունց Տէրն ի

¹ Զ ծառայակցացն

² Զ հաւատա՞ եւ իմաստ՞] հաւատարիմ ծառայ եւ իմաստուն

³ Յակոբ. Բ 14-26

⁴ Տ կացին

⁵ Ղուկ. ԺԲ 42

⁶ Զ է

գալստեանն Իւրում յերանութիւնսն զրէ, քանզի այս է առեալն յանդէն եւ յերկանէն: Բայց ո՛չ սոսկ առնիցէ զհրամայեալսն, այլ այնպէս, որպէս ասացի, քանզի բազումք ոչ առնեն, եւ այլք թէպէտ առնեն, այլ կամ ի փառս մարդկան, կամ ի հպարտութիւն անձանց: Արդ՝ զի առնեն լինիցի, եւ ի փառս Աստուծոյ առնեն, եւ յորժամ զամենայնն առնիցեն, ասիցեն թէ՝ «Ծառայք անպիտանք ենք» (Ղուկ. ԺԷ 10). այս է «այնպէս»-ն: Յայնժամ «ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուցէ»: Տես, զի սակաւ զգաստութիւնն աստ յորպիսի թագաւորութիւնս հանէ, իբր այն. «Թէ ի սակաւուն¹ հաւատարիմ է, եւ ի բազմին հաւատարիմ է» (հմմտ. Ղուկ. ԺԶ 10): Կամ աստ որպէս զՄոսէս, որ ընչից Աստուծոյ, այս է՝ ի վերայ ստացուածոց Նորա հրամանատու կարգեցաւ՝ որպէս զԱստուած, եւ կամ անդ՝ զոր ինչ ունի Աստուած, ժառանգէ եւ նա՝ թագաւորութիւն, անմահութիւն, պայծառութիւն, վայելչութիւն, մշտնջենաւոր ցնծութիւն, անվախճան հանգիստ եւ այլ սոյնպիսիս:

Ապա թէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւրում. «Տէր իմ յամէ զգալ» (ԻԳ 48):

Այս նորա են, որ թողան, եւ զի մի՛ ակնառութեամբ կարծիցի թողուլն, խայտառակէ զչարիսն: Եւ «չար» վասն այն կոչէ, զի անհաւատ է եւ յիմար, եւ յիմարութիւն ըստ այնմ, զի ոչ խորհի ոչ գալ, այլ թէ՝ «յամէ զգալ», յորմէ ուսանիմք, թէ ըստ կարծեաց նորա՛ յամէ, իսկ ըստ ճշմարտութեանն եւ ո՛չ յամէ իսկ: Իսկ թէ ասիցէ որ, թէ այսպիսի խորհուրդք վասն ոչ զհտելոյ զօրն մտին խորհի, ասացուրք, թէ ո՛չ ատուրն անյայտութիւն, այլ ծառային չարութիւնն եղև պատճառ, ասպա թէ ոչ յիմաստունն եւ ի հաւատարիմն ընդէ՞ր ոչ մտին այսպիսի խորհուրդք, այլ ի չարն թէ՝ «տէր իմ յամէ զգալ»: Իսկ զի՞նչ այն թէ՝ «ի սրտի իւրում». ցուցանէ, թէ բազումք երեւին յաչս մարդկան առաքիւնիք, այլ մտօք հայհոյիչք են, զոր եւ Աստուած զհտէ, որ զերիկամունսն քննէ², եւ յաղագս այնորիկ դատէ:

Եւ սկսանիցի³ հարկանել զծառայակիցս իւր (ԻԳ 49):

Տես, թէ խորհուրդք սրտին յորպիսի ասպիւրատութիւնս ձգեաց, յորմէ ուսանիմք, թէ աղբիւր չարութեան գործոյն սիրտն է՝ ըստ

¹ Տ սակաւին

² Սաղմ. Է 10, Երեմ. ԺԱ 20

³ Զ սկսանի

Տեառն քանին¹, որպէս ասէ եւ Դաւիթ, թէ յորժամ անզգամեցաւ² ի սրտի իւրում, ապականեցաւ գործով³: Իսկ հարկանել ծառայակցացն կրկին չարութիւն ցուցանէ եւ երեքկին. նախ՝ զի հարկանէ, եւ այն՝ զծառայակիցսն, եւ զորս կերակրել հրաման էառ՝ զնոսին գանէ, որ է յոյժ չարութիւն, եւ «հարկանել» զթշնամանելն ասէ եւ զազահելն:

Ուտիցէ եւ ընպիցէ ընդ արբեցոյս:

Դարձեալ եւ այն երկպատիկ չարութիւն, զի գոմանց յափշտակէ եւ զայն ընդ շռայլս վատնէ, որ նշանակէ զբարեկեցիկսն եւ զորկորածէտսն, որք մեծամեծ տանջանօք տանջին, որպէս մեծատունն՝ ոչ ըստ այնմ, յոր վայելեաց, այլ զի եւ ոչ յողորմութիւնն ծախեաց, թէպէտ յարդար վաստակոց եւ կամ թէ⁴ ի հայրենական ժառանգութենէ ունէր զմեծութիւնն. ապա զի՞նչ արասցեն որք այլոց⁵ արարովք շուայտին:

Այլ դու եկ ինձ իմա զկարգս հոգւոյն մասանց, թէ որպէս աս հասարակ չարացան ի ծառայն չար, որ մարմնոյ ծառայեաց. քանզի նախ զբանականն ախտացոյց՝ թիւր խորհելով ի սրտին, եւ զկնի այնմ զցասմնականն, որով ի հարուածս ծառայակցացն եկն, յետ որոյ եւ ցանկութեամբն վատնեցաւ՝ ուտելով եւ ընպելով ընդ արբեցոյս, որոյ լծակից զիտեմ զվաւաշոտս եւ զպէսպէս օճրագործութիւնս: Եւ այսպէս զբնական ուղղութիւնն ի միում վայրկենի կործանեաց անմտութեամբն տնտեսի⁶ յօժարամտութիւնն, եւ զովի, զի դարմանէ զծառայսն տեսառն ի ձեռն հակառակացն մեռելութեան, քանզի նոցա ապականութիւն կերակուր եւ բարեկարգութիւն լաւացն է: Եւ չարախօսի չար ծառայն, որ յաղագս ընդ արբեցոյսն լինելոյ վիրօք տանջէր զԱստուծոյ ծառայսն, վասն զի վերք են ճշմարտապէս ընդդէմ առաքինութեանն չարութիւնն, որպէս եւ Դաւիթ ի քաղաքի Տեառն սպանանէր զմեղատորս⁷, այսինքն ի քաղաք հոգւոյն զխորհուրդ չարութեանն, որ գործօնեայք են անօրէնութեանն, սատակէ, ուստի կեանք լինի վե-

¹ Մատթ. ԺԵ 19

² Զ անզգայացաւ

³ Սաղմ. ԺԳ 1

⁴ Զ > թէ

⁵ Տ այլովք

⁶ Զ տնտես

⁷ Սաղմ. 6 8

հազունիցն ըստ այնմ. «Ես սպանանեմ եւ Ես կեցուցանեմ» (Բ Օր. ԼԲ 39):

Գայցէ տէր ծառային այնորիկ յատուր, յորում ոչ ակն ունիցի, եւ ի ժամու, յորում ոչ գիտիցէ (ԻԴ 50),

եւ կտրեսցէ զնա ընդ մէջ եւ զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց (ԻԴ 51):

Թէպէտ բազում անգամ վրէժխնդիր լինի Աստուած արքունական դատողութեամբ ի մարմնական կենցաղս այնպիսեացն, գոր «գալուստ» ասէ, որպէս բազմաց պատահեաց՝ չար եւ վատ ծառայից, բայց մեք ըստ կարգի բանիս ի հանդերձեայն իմանամք զասացեալս, որ ոչ միոյ, այլ հասարակաց չարաց ծառայից լինելոց է: «Գայցէ,- ասէ,- տէր ծառային այնորիկ». եզակի դնէ՝ կամ թէ ամենեքեան միապէս չարք գտան ի տէրունիսն, թէպէտ յիրաքանչիւր վարս՝ ի հոգեկանս կամ ի մարմնականս չարացան, կամ թէ՛ զի մի՛ որ կարծիցէ՝ որպէս աստ, նոյնպէս եւ անդ սարդեալ դողիցի, յատուկ իւրաքանչիւր ումեք դատաստան լինելոց է: «Յատուր, յորում ոչ ակն ունիցի, եւ ի ժամու, յորում ոչ գիտիցէ»: Յեղակարծում ժամու, ասէ, հասանէ, մինչդեռ ի մանկութեան գոլով ատուր կամ ի փարթամութեան լինելով ժամու՝ ոչ ակն ունէր վրէժխնդրութեան եւ տանջանաց, այլեւ ոչ էր պատրաստեալ զանձն բարի գործովք՝ զալստեան Նորա, եւ կամ մտածութեամբ միայն: Տես եւ զայն, զի զանգիտութիւնն մեզ միշտ դնէ, զի արթունք լինիցիմք:

«Եւ կտրեսցէ զնա ընդ մէջ եւ զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ». առանց հարցաքննութեան, քանզի գործք նորա դատեն զնա յայնպիսի ցասումն արկանել: Իսկ զի՞նչ ընդ մէջ հատանելն իցէ. կամ թէ զիւր ինքեան զշնորհսն առնուցու՝ զուսմանց, կամ զարուեստից, կամ զիշխանութեանց՝ հոգեւորաց եւ մարմնաւորաց, զի որպէս թագաւորք յորժամ զառ ի յինքեանց պատուեալն ըստ ապերախտութեանն դատեն, նախ մերկանան զպարզեւսն եւ ապա տանջեն, այլեւ զպատկերին պատիւն առնու եւ իբր զանբանս տանջէ, զի ոչ ի բարին զխորհուրդն, այլ ի չարն ծախեաց, որպէս որ ումեք սուր տայցէ վասն պիտոյից, եւ նա արիւն հեղու, իսկ նա ոչ միայն գտորն առնու, այլեւ զնա սպանանէ: Կամ թէ՛ հոգին եւ մարմինն տանջի՝ ըստ առաքելոյ. «Իւրաքանչիւր մարմնով ծառանգէ՝ եթէ բարի եւ եթէ չար» (հմմտ. Բ Կոր. Ե 10), քանզի հաւա-

սարք էին ի չարքն, գոյգ եղիցին եւ անդ, ուր լալ աչացն է եւ կրճել ատամանցն. ա՛յս է «մէջ»-ն. քանզի երկու բաժինն տանջի, եւ դատաստանն որպէս մարմնոյն, այսպէս եւ հոգւոյն հատանի: Իսկ «կեղծաւոր» կամ զնոյն ինքն զբանսարկուն ասէ, որ խաւար է եւ լոյս կերպարանի, կամ զայլս ի մարդկանէ, որպիսիք էին դպիրքն եւ փարիսեցիքն: Նոցա տանջանացն բաժանակից առնէ, ասէ, ո՛չ վայրապար, այլ քանզի եւ ինքն կեղծաւոր էր, զի քարոզէր այլոց զգալուստն եւ կամ զմահն եւ ինքն ի սրտին խորհէր յամել զգալն եւ զմահն:

ԳԼՈՒԽ ԻԵ

Յայնժամ նմանեցի արքայութիւն¹ երկնից տասն կուսանաց, որոց ամեալ զլապտերս իրեանց՝ ելին ընդ առաջ փեսային եւ հարսին (ԻԵ 1):

Յառաջ ասացելոցն օրինակ կարգէ, զի որպէս Իւրոյ զայստեանն զթգենին, այսպէս իմաստուն եւ չար ծառայիցն զկուսանսն: Եւ թէ ընդէ՞ր ի կուսանս առակէ ի տասն: Նախ՝ զի մեծագոյն են² իրք կուսութեանն. յայտ յայնմանէ է, զի ասաց. «Են ներքինիք, որ զանձինս իրեանց արարին ներքինիս վասն արքայութեանն Աստուծոյ, եւ որ կարողն է³ տանել տարցի» (Մատթ. ԺԹ 12), եւ Պօղոս թէ «Վասն կուսութեան հրաման ի Տեառնէ ոչ ունիմ» (հմմտ. Ա Կոր. Է 25), եւ ի նախնումն ոչ պահանջեցաւ այս ուղղութիւն: Եւ արդ՝ զի մեծ են եւ առանց հարկի եղաւ, զի մի՛ որ զայն ուղղիցէ, զամենայն կատարեալ կարծիցէ եւ զայլոցն անփոյթ արասցէ, ցուցանէ աստ՝ թէպէտ զայլն ամենայն ունիցի կուսութիւն եւ զողորմութեանն իւղ ոչ ունիցի, ընդ պռռնիկսն եւ ընդ տմարդիսն արտաքս անկանիցի: Եւ երկրորդ՝ զի ո՛չ զամենայն հոգւոց ասէ, այլ զհաւատացեալ ուղղափառաց, եւ «կոյս» զի պարկեշտութեամբ վարեցան ի կենցաղս, որպէս օրէն է քրիստոնէից, զի որպէս կոյս ասի որ անփորձ է ամուսնութեան, նոյնպէս եւ զգայութիւն սոցա ոչ փորձեաց սատանայ զտասունսն:

Իսկ տասն ասէ զկուսանսն կամ վասն տասն զգայութեանց հոգւոյ եւ մարմնոյ, զորս սուրբս պահեցին, քանզի տասն սուրբ է,

¹ Գ արքայութիւնն

² Տ էին

³ Գ > է

կամ գտասն բան Օրինացն, եւ զհաւատոյ, եւ զաղօթիցն: Այլ եւ աշխարհս տասն է, որով նոքա վարեցան: Կամ զերկու կողմանց՝ զինաստնոցն եւ զյինարացն զգայութիւնսն ասէ, քանզի ամենայն հոգի ի մարմին է, եւ զգայութիւն հինգ են հոգւոյն, որով ներգործէ ի մարմինն, զորս խառնեալ յիրեարս՝ տասն ասաց զկուսանսն եւ ասպա յետոյ յերկու հինգ բաժանէ: Դարձեալ տասն զբովանդակ բնութիւնս մարդկան կոչէ, քանզի յետ ինունցն տասն սոքա են՝ ըստ դրամին եւ ոչխարին¹: Կամ՝ տասն կատարեալ թիւ է, զկատարեալ բնութիւնս Ադամայ նշանակէ, իսկ զսոսա յերկու հինգ բաժանէ, զի իւրաքանչիւր ոք ի մարդկանէ հինգ զգայութեամբ վարի, եւ հինգ զգայութիւնս տասն է, զի իւրաքանչիւր զգայութիւն երկու է, որպէս երկու աչք եւ զոյգ լսելիք եւ հոտոտելիք, եւ ճաշակելիք եւ շօշափելիք, վասն այսորիկ «տասն» ասէ եւ ի հինգ բաժանէ: Եւ կոյս դնէ, զի սոքա նախ անփորձ էին ի մեղաց, կամ զի զգայութիւնք առանց յիրելոյ ի զգալիսն անվնաս է եւ անարատ: Իսկ «ինաստուն» եւ «յինար» զի ոմանք ուղիղ վարին զգայութեամբն, եւ ոմանք՝ թիւր:

«Որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսային եւ հարսին»: Նախ զհաւասարութիւնն ասէ կուսանացն եւ ասպա զգանազանութիւնն, քանզի կոյս լինել եւ զլապտերս ունել եւ ընդ առաջ ելանել՝ հասարակք հաւասարք էին, այսինքն սուրբք էին եւ հաւատացեալք ամենեքեան, որպէս ասացաք, կամ թէ՛ կուսանք իսկ էին: Իսկ լապտերօքն կամ զշնորհս կուսութեանն յայտ առնէ, որպէս ոմանք ասեն, կամ զբարի գործն, զի ամենեքեան ունէին ըստ այնմ. «Լուսաւորեցէ լոյս ձեր առաջի մարդկան», եւ «Ոչ լուցանեն ձրագ եւ դնեն ընդ գրուանաւ», եւ «Տեսցեն զգործս ձեր բարիս» (Մատթ. Ե 15, 16). քանզի տեսանել աչացն է, եւ սա ի լոյսն հայի: Կամ զլուսաւորութիւն վարդապետութեան առաքելոցն եւ վարդապետացն «լապտերք» կոչէ, քանզի եւ յայս հասարակաց վայելեցին: Եւ ելիքն եւս հաւասարք են, քանզի ամենեքեան յանդիման լինելոց են Քրիստոսի ըստ առաքելոյ՞, եւ թէ՛ «Չձեզ զամենեսեան իբրեւ զկոյս մի խօսեցայ յանդիման առնել Քրիստոսի» (հմմտ. Բ Կոր. ԺԱ 2): Կամ՝ «ելին ընդ առաջ» ասելն զայն ցուցանէ, զի նախ քան զգալուստ Փեսային բարձրացան առաքի-

¹ Ղուկ. ԺԵ 8-9, Մատթ. ԺԸ 12-13

² Բ Կոր. Ե 10

նութեամբ՝ պատրաստելով զինքեանս զալստեանն Նորա: Եւ ա՛յլ ազգ. զի բազումք յառաջ ելին ի կենցաղոյս նախ քան զգալուստ Բանին:

Իսկ զի ասէ «փեսային եւ հարսին», կամ զընտանութիւնն Բրիստոսի՝ որ առ կուսանսն, յայս համեմատէ, կամ «փեսայ» զԲանն ասէ եւ «հարսն»՝ զմարմինն, քանզի յոր միացան նովին միութեամբ եւ յերկնից գայ, որպէս եւ երթն: Կամ «փեսայ» զԲրիստոս, եւ «հարսն» զնախայարուցեալ սուրբսն եւ զյապիշտակեալսն, զոր «Եկեղեցի անդրանկաց» ասէ Պօղոս¹, այլեւ զհրեշտակսն իմա, քանզի եւ նոքա մերձաւորք են Բրիստոսի:

Հինգն ի նոցանէ յիմարք էին, եւ հինգն՝ իմաստունք (ԻԵ 2):

Բաժին մի, ասէ, ի բոլորիցն, որ զհինգ զգայութիւնս ունէին, յիմարք էին, եւ մասն մի նովիմբք զգայութեամբքս՝ դարձեալ իմաստունք, քանզի եւ այսու հասարակք էին: Եւ «յիմարս» ասէ զհինգն՝ կամ թէ՛ ի մեծամեծսն վաստակեցին եւ ի փոքունս յոռացան եւ մատնիչք եղեն, քանզի զի՞նչ քան զայս յիմարութիւն կայցէ՝ յինչս յաւելուլ եւ անոր մերկ ընթանալ, ուր բազում մարդասիրութեան պէտք են եւ իողոյ: Կամ թէ՛ մարմնեղէն զգայութեամբ միայն վարեցան յաստիս, որպէս զանասունս, զորս եւ «յիմարս» կոչէ: Այլեւ բարեգործք էին եւ կոյսք, սակայն փառս ի մարդկանէ պահանջէին, զորս յիրաւի «յիմարս» ասաց: Իսկ «հինգն՝ իմաստունք»՝ իմաստութիւն ո՛չ զկուսութիւնն ասէ, որպէս ոմանք կարծեն, քանզի ամենեքեան կուսանք էին եւ ոչինչ օգտեցան, որպէս Եւա ի կուսութեան իւրում ամբարշտեցաւ եւ ի դրախտին փառացն զրկեցաւ: Այլ կամ զբովանդակ սրբութիւնն ասէ, որպէս հրեշտակք ունէին, մինչ զի ի տրտմութենէ եւ ի բարկութենէ սուրբս յինել եւ ի նախանձուէ եւ ո՛չ միայն ի պոռնկութենէ, կամ թէ՛ բարեգործ եւ ողորմած, եւ զայն ի փառս Աստուծոյ, եւ ի վերին կենացն հայեցումն իմացող եւ տեսող, կամ թէ՛ զգաստ գոլով զմարմնոյն զգայութիւնն ծառայեցուցանեն զգայութեան հոգւոյն «իմաստուն» անուանեցան:

Յիմարքն առին զլապտերսն եւ ձէք ընդ իւրեանս² ոչ բարձին (ԻԵ 3):

Իսկ իմաստունքն առին ձէք³ ամանօք ընդ լապտերս իւրեանց (ԻԵ 4):

¹ Եբր. ԺԲ 23
² Զ ինքեանս
³ Տ եւ ձէք

Աստ ընդ հասարակութեանն դնէ եւ զգանազանութիւնն, քանզի ձէք, ասէ, ոչ բարձին յիմարքն իբրեւ¹ զիմաստունսն, իսկ իմաստունքն առին,- ասէ,- եւ ձէք ամանօք: Իսկ յիմարքն առին զլապտերս իւրեանց, այսինքն զկուսութիւն առանց ողորմութեան կամ զհաւատս առանց գործոց, կամ զբարի գործոց փոխարէնս զփառս ի մարդկանէ, զոր ժողովեցին ի միտս իւրեանց: Իսկ ձէք՝ զանտի կենացն պայծառութիւնն եւ զոյս փառաց անմատչելի լուսոյն ոչ ունէին յինքեանս: «Իսկ իմաստունքն առին,- ասէ², - եւ ձէք ամանօք ընդ լապտերս իւրեանց»: Չփառացն գեղեցկութիւն ժողովեցին իբր յաման ի միտս իւրեանց՝ խառնելով ընդ վարս կենաց իւրեանց, որ պայծառ էր իբրեւ զոյս, զոր «լապտեր» ասէ, կամ ընդ հաւատոցն եւ զգործն լծեցին: Այլեւ ընդ կուսութեանն զողորմութիւնն եւ զմարդասիրութիւնն զգեցան՝ վարժեալք ի լուսատր բանից առաքելական եւ մարգարեական վարդապետութեանց, զոր ի ձէք առակէ, եւ զի հեղին գոսսա ի յաղթատս, զոր «աման» կոչէ, զի յորժամ պակասիցէ այս, ընկալցին զնոսա:

Բննելի է եւ այն, թէ ընդէ՞ր նախ յիմարքն առին զլապտերս առանց իւրոյ եւ սպա՛ իմաստունքն: Կամ թէ՛ մարմնական ախտ, զորս յիմարութիւն ասէ, ի ծննդենն նախ ի զգայութիւնս ընդելանայ, եւ սպա յետոյ անձնիշխանականն պայծառանայ ի ձեռն տեսութեանն, կամ թէ՛ յիմարացն նախ քարոզեցաւ բան հաւատոյն, որպէս հրէից երբեմն եւ սպա հեթանոսաց, եւ թէ՛ «Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն» (Ղուկ. Ե 32): Յորս հայեցեալ ոմանք՝ զառակս³ կուսանացս վասն հրէից եւ հեթանոսաց ասեն ասացեալ, յիմար՝ զհրէայսն, որպէս Մոսէս ասաց թէ՛ «Ազգ մի խորհրդակորոյս են նոքա եւ ժողովուրդ յիմար եւ ոչ իմաստուն» (հմմտ. Բ Օր. ԼԲ 28), եւ իմաստուն զհեթանոսս, որ Հոգւովն իմաստնացան, եւ «լապտեր» զՕրէնսն, զոր բարձին առանց շնորհաց, եւ հեթանոսք ընկալան զգիրն հանդերձ Հոգւովն, քանզի «ոչ եկի լուծանել, այլ լնուլ» (Մատթ. Ե 17), յայտ է իւրով: Արդ՝ թէպէտ այս յարմար թուի, բայց ճշմարիտ առաջինն է, քանզի ի հինն ոչ եղև կուսութիւն, որպէս ասացաք:

Եւ ի յամել փեսային՝ նիրհեցին ամենեքեան եւ ի քուն մտին (ԻԵ 5):

¹ Զ իբր

² Զ ~ ասէ, առին

³ Տ զառակ

«Յամել» կամ վրեժխնդրության ներումն ասէ յանցաւորացն, առ որով ոչ միայն ծուլանան յիմարքն, այլեւ իմաստունքն, զի գոյ եւ քուն իմաստնոյն ըստ գրեցելումն, այսինքն կարծիք զայթազողութեան, որպէս ասէ Դաւիթ թէ՛ «Նախանձեցայ ես ընդ անօրէնս» (Սաղմ. ՀԲ 3), եւ «Փոքր միւս եւս՝ սասանեալ էին զնացք» (հմմտ. Սաղմ. ՀԲ 2), զայթազեցան եւ աշակերտքն, էանց սոր եւ ընդ Կուսին անձն. այս է ամենեցուն ի քուն մտանելն: Կամ «յամել» զգալստեանն ասէ ժամանակ, յորում հարսնացեալ հոգիքն սպասեն անմահ Փեսային: «Եւ նիրհեցին ամենեքեան եւ ի քուն մտին» ընտրեալքն եւ մեղաւորքն: «Նիրհել» վասն հիւանդութեանն, եւ «քուն» վասն մահուանն ասէ: Կամ զնիրհելն արդարոցն իմա, զի մահ նոցա ոչ է քուն, այլ նիրհումն, զոր Պօղոս «ննջել» ասէ¹, իսկ մեղաւորացն քուն՝ վասն խոր թմբրութեանն եւ յիմարութեանն: Եւ դարձեալ յամելն ցուցանէ, թէ ոչ բազում ժամանակք անցանեն ընդ մէջ, այլ սակաւ ինչ յամումն է եւ յապաղումն, որով մերժէ զաշակերտսն առ ի չունելոյ ակն արքայութեան Նորա:

Բայց գոյ ի տեղիս տարակուսանս, թէ ընդէ՞ր աստ յամել ասէ փեսային, եւ Պօղոս գրէ թէ՛ «Տէր մերձ է» (Փիլպ. Դ 5), եւ այլոր թէ՛ «Ոչ յամեցուցէ Տէր զաւետիս Իւր» (Բ Պետ. Գ 9), իսկ Յակոբոս թէ՛ «Դատաստանն առ դուրս կայ» (հմմտ. Յակոբ. Ե 9): Այս իսկ է լուծումն. զի որ ի յաիտենականն հայի, Տէր մերձ է եւ առ դուրս, իսկ որ ի կենցաղս՝ յամել թուի վասն հեշտութեանն: Եւ այլ ազգ. զի «մերձ եւ առ դուրս» ասելն զբազում անգամ այցելութիւն առնելն նշանակէ՛ ըստ այնմ. «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ 20), իսկ յամելն վասն հանդերձեալ զալստեանն ասէ:

Տեսցոյք եւ զայն, թէ է՞ր վասն ի քուն մտին: Եւ ասեմք. նախ՝ վասն բնութեանն, զոր եւ Ինքն կրեաց վասն Ադամայ վճռին թէ՛ «Հող էիր եւ ի հող դարձցիս» (Ծննդ. Գ 19), զի դեռ յաշխարհիս եմ ամենեքեան, եւ երկրորդ՝ զի ըստ չորս պատճառաց ննջէ մարդ, եւ զամենեսեան տքա կրեցին: Մի՞ յորժամ որ նստեալ ի ճանապարհի եւ սպասէ ընկերին զալստեան եւ ի յամել նորին ննջէ. մնացին եւ տքա եւ ի յամելն ննջեցին, որպէս ասաց: Եւ երկրորդ՝ վասն աշխատութեանն, որպէս գրեալ է Յուդիթն թէ՛ «Ի ճանապարհին

¹ Ա Կոր. ԺԵ 6, 18

աշխատեցայ եւ մտեալ ի տուն ննջեցի» (հմմտ. Յուդիթ ԺԲ 4). վաստակեցան եւ սոքա՝ յայտ է ահա: Եւ երրորդ՝ ի տրտմութենէ, որպէս աշակերտքն տրտմեալ վասն մահուն Յիսուսի՝ ննջէին, որոց ասաց Տէր թէ՝ «Ո՞չ կարացէք ժամ մի արթուն կալ» (Մատթ. ԻԶ 40). կրեցին եւ կուսանքն տրտմութիւն, որպէս Դաւիթ եւ Պօղոս՝ «Զօրհանապագ տրտում գնայի» (Սաղմ. ԼԷ 7), եւ թէ՛ «Տրտմութիւն կալաւ զիս ի վերայ մեղաւորաց» (Սաղմ. ԾԺԸ 53), եւ թէ՛ «Տրտմութիւն է ինձ եւ անպակաս ցաւք սրտի իմոյ» (հմմտ. Հռոմ. Թ 2): Եւ չորրորդ՝ ի չարչարանաց, որպէս Պետրոս ննջէր ի մէջ երկուց զինուորաց¹, եւ Եղիա ի ներքոյ ցրդեւոյն վասն չարչարելոյն յԱքաաբէ²: Չորս յոլովս կրեցին յանձինս չարչարանք յիմարքն, համանգամայն եւ իմաստունքն, վասն այսոցիկ պատճառաց ննջեցին եւ ի քուն մտին:

Եւ ի մէջ զիշերի եղև բարբառ. «Ահա փեսայ գայ, արի՛ք ընդ առաջ նորա» (ԻԵ 6):

Ըստ առակին պատշաճի գայս դնէ թէ՛ «ի զիշերի». կամ ցուցանէ, թէ ի զիշերի լինելոց է յարութիւնն, որպէս ազատութիւնն Իսրայէլի ի զիշերի, եւ մահ անդրանկացն, եւ որպէս ծնունդն եւ յարութիւնն Քրիստոսի: Իսկ «ի մէջ զիշերի» զի անգիտելի է, քանզի որպէս ի մէջ զիշերի ոչ ոք գիտէ զինչ գործէ ընկեր նորա, նոյնպէս եւ գալուստ Նորա: Եւ դարձեալ զիշեր վասն կռապաշտութեանն եւ մեղացն եւ կախարդութեանն ասէ՝ ըստ մարգարէին թէ՛ «Գիշեր լիցի ձեզ ի տեսլենէ, եւ երեկոյացի յղճութենէ» (հմմտ. Միք. Գ 6). արդ յորժամ այսոցիկ դարձեալ զօրանան, լինի գալուստ Նորա: «Եղև բարբառ,- ասէ,- «Ահա փեսայ գայ, արի՛ք ընդ առաջ նորա»»: Չայս եւ Պօղոս ասէ, թէ հրամանաւ ի ձայն հրեշտակապետի եւ ի փող յետին իջանէ յերկնից³, քանզի «փող» զբարբառն ասէ, թէ «Ահա փեսայ գայ»: Վասն է՞ր յառաջագոյն ասաց թէ՛ «ընդ առաջ ելին փեսային եւ հարսին», եւ այժմ թէ՛ «փեսայ գայ»: Կամ զլիսովն եւ զանդամն նշանակէ, կամ նախ Փեսայ գայ ի բարբառն առաջին, եւ սուրբքն ելանեն ընդ առաջ յօդս, եւ ասպա կրկին բարբառ, յորում ամենեքեան, որ ի հող մահու

¹ Գործք ԺԲ 6

² Գ Թագ. ԺԹ 3-5

³ Ա Թես. Դ 15

ննջեցեալք են, յառնեն հաւասար ի մեծաձայնութենէ հրեշտակագոչ փողոյն, որպէս ասէ.

Յայնժամ¹ յարեան ամենայն կուսանքն եւ կազմեցին զլապտերս իրեանց (ԻԵ 7):

Ի մահահանգիստ քնոյն միահամուռ յառնեն արդարքն եւ մեղատրքն՝ ի ձայնէ բարբառոյն զօրացեալք, քանզի ձայն Տեառն ձայն զօրութեան է ըստ մարգարտիւն², իսկ կազմելն զլապտերսն գործոց իրեանց համար եւ հաշիւ առնելն է եւ զհատուցումն պատրաստեալ ընդունել:

Ասեն յիմարքն ցիմաստունսն. «Տո՛ւք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր» (ԻԵ 8):

Այս իսկ կարի յիմարութիւն էր, թող զառաջինն, զի յանժամ ժամանակի խնդրէին եւ ակն ունէին առնուլ, եւ թէպէտ մարդասէրք էին կուսանքն, ոչ ետուն, եւ այն զի ոչ զամենայնն, այլ մասնատր խնդրեցին ըստ այնմ. «Էարբ Նոյ ի գինոյն» (Ծննդ. Թ 21) ոչ զամենայն, որպէս եւ ոչ Աբրահամն կաթիւ ջրոյ զովացոյց զպապակ մեծատանն³: «Տուք մեզ,- ասեն,- յիւղոյդ ձերմէ», այսինքն օգնեցէք մեզ բարի գործովք եւ աղօթիւք ձերովք: «Ահա շիջանին լապտերքս մեր». քանզի որպէս ասացաք, զբարի գործսն «լապտեր» ասէ, եւ այն դատարկ էր, զի յոյս նոցա յանցատր աշխարհիս էր, եւ ի փառս մարդկան արարին, իսկ մարդկան զովութիւն շիջաւ յետ մահուանն, քանզի անցատր էր, զի թէ ի մարմնատրս, մինչդեռ կենդանի է, պակասի զովութիւնն, զի՞նչ ասես յետ մահու: Եւ զհա՞րդ պակասէ ասացէ որք. քանզի մարդ առաւել խնդրէ զզովութիւնն, եւ որքան ի գործն է զովեն, եւ նա ի զովութիւնն յեցեալ օր ըստ օրէ պղերգանայ, եւ ի թուլանալ գործոյն դադարէ եւ զովութիւնն. ապա ուրեմն յիրաւի ասացին թէ՛ «Շիջանին լապտերքս մեր»: Կամ թէ՛ կազմութիւն լապտերացն կուսութեան շնորհն է, եւ որք ոչ ունին զողորմութեանն իւղ, շիջաւ փառք կուսութեանն, քանզի ոչինչ օգտեցան յայնմանէ, թէպէտ ողորմութիւն խնդրէին, քանզի ողորմածացն ողորմութիւնն ասացեալ⁴:

¹ Զ Յայն

² Սաղմ. ԻԸ 4

³ Ղուկ. ԺԶ 24-26

⁴ Մատթ. Ե 7

Պատասխանի ետուն իմաստունքն եւ ասեն. «Գուցէ ոչ իցէ մեզ եւ ձեզ բաւական, այլ երթայք ի վաճառականս եւ գնեսջի՞ք ձեզ» (ԻԵ 9):

Թէ կուսանք էին եւ զլսպտեր գործոցն ունէին եւ ոչ առին, ապա զի՞նչ գործեսցեն որ ոչ են կոյսք՝ ոչ հոգւով եւ ոչ մարմնով եւ ոչ զգայութեամբք, եւ ոչ ունին լսպտերս գործոց բարեաց: Ինձ թուի, թէ այնպիսիքն ոչ յառնեն ի դատաստան, այլ ի կորուստ եւ յապականութիւն եւ ի մահուանէ ի մահ փութացեալք, քանզի ասացին թէ «գուցէ ոչ իցէ մեզ եւ ձեզ բաւական»: Ոչ ասացին ոչ տալ, որ տմարդութեան նշանակ էր, այլ թէ «ոչ է մեզ եւ ձեզ բաւական», զի ոչ նոցա մարդասիրութիւնն եւ ոչ սոցա ժտութիւնն եւ ոչ հարկաւոր պիտոյիցն կարիք արժանացոյց զնոսա խնդրոյն: Է՞ր վասն. վասն անբաւականութեանն, յորմէ ուսանիմք, թէ ոչ որ է անդ ձեռնհաս ումեք, ոչ զի ոչ կամիցի, այլ զի ոչ կարիցէ, որպէս ասէր Աբրահամ թէ «Վիհ մեծ է» (Դուկ. ԺԶ 26), եւ այլ ոմն «Թէ իցեն անդ Յոր եւ Նոյ եւ Դանիէլ, զանձինս իրեանց միայն ապրեցուցանեն» (հմմտ. Եզեկ. ԺԴ 14), եւ թէ «Արդարն հազիւ կեցցէ» (Ա Պետ. Դ 18):

Եւ այլ ազգ. յորժամ ժամանակ էր ուսանելոյ, ոչ ուսայք, արդ ժամանակ վարդապետութեան անցեալ է, ոչ ումեք ուսուցանել կարենք, եւ ոչ դուք՝ ուսանել: Եւ դարձեալ ցուցանէ, թէ անյազ է մարդկային հոգին¹ աստուածային փառացն, վասն այսորիկ ասէ՞ր Դաւիթ թէ «Յազեցայց յերեւիլ³ երեսաց փառաց Քոց» (Սաղմ. ԺԶ 15)՝ զիտելով, թէ հոգի ոչ երբէք լրանայ յանտի փառացն տեսութենէ: «Երթայք,- ասէ,- ի վաճառականս եւ գնեսջի՞ք». այսինքն երթայք ողորմութիւն արարէք եւ գնեցէք ի բանաւոր աղքատացն եւ ի հոգեւոր ծիծռանցն, որք զհոգեւոր զարունն մեզ մարգարէանան՝ ի դրունս եկեղեցոյ նստելով. անդր պարտ է ժողովել, զի աստ պիտանացու լինիցի: Կամ՝ երթայք ի վաճառականս ի մարդիկ, որոց զկուսութիւնն եւ զայլ բարեգործութիւնն վաճառեցէք եւ զգովութիւնն ատէք, քանզի «այն իսկ են վարձք նոցա» (Մատթ. Զ 2):

¹ Զ > հոգին

² Զ ասէր

³ Զ յերեւել

Իբրև նոքա գնացին գնել, եւ¹ եկն փեսայն, եւ պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն, եւ փակեցաւ դուռնն (ԻԵ 10):

Ոչ եթէ յետս² դարձան յաշխարհ գնել, քանզի այն անհնար էր՝ ըստ այնմ թէ՛ «Հոգի, որ ելանէ, այլ ո՛չ եւս դառնայ» (Սաղմ. ՀԷ 39), այլ ա՛յս իսկ է. զի գնացին ի միտս իւրեանց, որպէս Պետրոս երբեմն, իմանալ զփառս գործոցն, զոր ի մարդկանէ ըմբռշխնեցին, եւ զի այն շիջեալ էր, եւ մինչ յայս տարակոյսս կային, թէ զինչ առնիցեն, եկն Փեսայն Եկեղեցոյ փառօքն Հօր, եւ ժողովեցան առ Նա հարսունքն, որք պատրաստեալ էին զանձինս Նմա՝ ի փառս Աստուծոյ առնելով զգործս իւրեանց, եւ մտին յերկնատր առագաստն միանալով ընդ Բանին ի հոգետր եւ յանճառ խրախորթիւնն: «Եւ փակեցաւ դուռնն». այսինքն ողորմութեանն դուռն, որ բաց³ է աստանօր, եւ մարդասիրութեանն զութ, կամ գործոյ ժամանակն, որպէս տնտեսն ասէր թէ՛ «Գործել ոչ կարեմ, մտրանալ ամաչեմ» (Ղուկ. ԺԶ 3), քանզի յոյժ ամօթ է խնդրելն եւ ոչ առնուլն, որպէս սորա: Տես եւ զա՛յն, զի որպէս նախ քան զննջելն ունէին երիս հասարակութիւնս եւ մի զանազանութիւնս, այսպէս եւ յետ քնոյ մահուն գտաւ ի նոսա երիս հասարակութիւնս եւ մի զանազանութիւնս, քանզի ննջելն եւ յառնելն եւ կազմելն զլապտերսն հասարակաց էր, իսկ մտիլն⁴ ընդ փեսային եւ նոցա արտաքոյ մնալ՝ որիչ եւ զանազան, որ նշանակէ, թէ հոգով եւ մարմնով եւ մտօք հաւասարք էին, այլեւ զօրէնսն զքնականն եւ զգրատրականն եւ զաւետարանականն, հանգոյն ընկալան, բայց ի պաշտօնն Աստուծոյ բաժանեցան, զի ոմն ի փառս Աստուծոյ, իսկ ոմն ի փառս մարդկան, վասն այտրիկ եւ անդ որոշեցան: Եւ աստ դարձեալ ցուցանէ, թէ նախ արդարքն մտանեն ի փառս, եւ ապա մեղատրքն արտաքսին ի տանջանս, որպէս ասէ.

Յետոյ զան եւ այլ կուսանքն եւ ասեն. «Տէ՛ր, Տէ՛ր, բա՛ց մեզ» (ԻԵ 11):

Նա⁵ պատասխանի ետ եւ ասէ. «Ամէ՛ն ասեմ ձեզ, եթէ ո՛չ զիտեմ զձեզ» (ԻԵ 12):

¹ Զ > եւ

² Զ յետ

³ Զ ի բաց

⁴ Զ մտելն

⁵ Զ > Նա

Դէմք է այս առակիս, զի այսպէս կարգէ, կամ թէ՛ այնպէս պատահէ լինել, որպէս այնոքիկ, որք ասէին. «Ո՛չ յանուն Քո զօրութիւնս արարաք եւ դեւս հանաք, եւ ի հրապարակս մեր ուսուցեր», առ որս ասաց թէ՛ «Ոչ գիտեմ զձեզ» (հմմտ. Մատթ. Է 22, 23): Ինձ թուի, թէ որ ինչ աստ կատարի, անդ պատկեր եւ ձեւ առնու, զի սոքա առանց ողորմութեան էին: Եւ կամ, որպէս ասացաք, զգործս իւրեանց եւ զվաստակս ի գովեստ մարդկան ծախեցին, եւ բազում անգամ յողորմութիւն յորդորէր Գիրք, եւ թէ՛ «Տէր ցրուէ զոսկերս մարդահաճոյից» (Մատթ. ԾԲ 6), եւ թէ՛ «Մի՛ առնէք ի ցոյցս մարդկան» (հմմտ. Մատթ. Զ 1) քարոզէին միշտ, եւ նոքա զայս լուեալ յետս ձգէին եւ ոչ անսային, այլ կախեալ գողորմութենէն Աստուծոյ կային եւ ի գործս իւրեանց վստահանային, զոր Գիրք ոչ գիտէր զօրէնս զայսոսիկ, վասն այսորիկ յորժամ անդր ընթացան, զնոյն տեսին զոր աստ գործեցին:

Եւ կամ այլ ազգ ցուցանէ ասելն թէ՛ «յետոյ գան». զի թէպէտ մարդասէր լինի որ յետ անդր զնալոյն, ոչինչ շահի եւ կամ ի պատժոցն զերծանի, քանզի աստ ոչ չոգաւ: Բայց կարի աղէտ ինձ թուի եւ դառնագոյն տանջանք, զի յետ այնքան պատերազմացն յաղթութեան եւ գործոցն երկասիրութեան ի բաց վարեցան, որք շիջեալ լապտերօք եւ ամօթալից եւ գլխարկեալ կորանօք յետս չոգան՝ ոչինչ օգուտ գտեալ ի կուսութենէն, որ առանց իւղոյ էր, եւ ոչ ի գործոցն, որ ի փառս աշխարհի ներգործեալ կատարէր՝ զահագինն զայն լսելով բարբառ թէ՛ «Ո՛չ գիտեմ զձեզ», այսինքն ի փառս Իմ ճգնեալ եւ կամ օրինաց Իմոց հետեւօղ եղեալ: Որ ինձ յոյժ չար եւ անհնարին տանջանք եւ դժնդակագոյն քան զգեհեանն թուի հեռանալ ի վայելչութենէ փառացն, որոյ գեղեցկութեանն ոչ գոյ չափ, եւ մերձաւորս լինել դիւսց, որոց կորուստն է պատրաստեալ: Յորոց փրկեցէ զմեզ Քրիստոսն մեր եւ Աստուած, որում փառք եւ պատիւ վայել է միշտ ընդ Հօր եւ Հոգւոյն Իւրոյ, այժմ եւ յանբաւ յաիտեանս յաիտենից: Ամէն¹:

Արթուն կացեք, զի ո՛չ գիտէք զօրն եւ ոչ զժամն (ԻԵ 13):

Աստանօր յայտնապէս դնէ զշահ անգիտութեան ամուրն, զի բազում օգուտս գործէ՝ արթունս առնելով զմեզ եւ զգաստս՝ պատ-

¹ Զ > յաիտենից: Ամէն

րաստել աներեկ ատորն բարի գործովք, զի մի՛ մնացուք արտաքս ըստ շիջման հինգ կուսանացն:

Որպէս այր մի, գնացեալ ի տար աշխարհ, կոչեաց զծառայս իւր եւ ետ նոցա զինչս իւր (ԻԵ 14):

Կուսանաց առական յընչիցն ողորմութիւն առնելոյ վասն ասացեալ եղև, եւ կամ որք զգործս ի փառս մարդկան արարին՝ կարգեցաւ այն, իսկ այս՝ որ ոչ ընչիւք եւ ոչ բանիւք եւ ոչ վերակացութեամբ եւ ոչ այլ ինչ իւրիք կամին օգուտ առնել ընկերացն, այլեւ ոչ իսկ բարեգործք լինիցին, այլ զամենայն թագուցանիցեն¹: «Որպէս այր մի,- ասէ,- գնացեալ² ի տար աշխարհ». «այր» ոչ միայն յաղագս կատարեալ աստուածութեանն, այլեւ յաղագս այրացելոյ Յիսուսի աստուածաստեղծութեանն, որ յաստուածութենէն եւ ի մարդկութենէն մի եղև՝ Որդի Աստուծոյ եւ մարդոյ: ՉՍա՛ ասէ «գնացեալ ի տար աշխարհ». «գնաց»՝ զմահուն ասէ եւ զչարչարանացն, որ յոյժ միջոց է ընդ կենդանիս եւ ընդ մեռեալս, կամ զդժոխս, որ հեռի եւ անծանօթ է ի մերմէ բնութենէս, այլեւ զյառնելն ի մեռելոց եւ զնստիլն ընդ աջմէ Հօր, որով եւ երկայնմտութեամբ ներէ իսկ: Գնալ անուանէ ի տար աշխարհ, քանզի ոտից մարդկան անկոխելի է եւ մտաց եւս անհասանելի, զոր Պօղոս «ներքին կողմն վարագորին» կոչէ³: «Կոչեաց զծառայս իւր եւ ետ նոցա զինչս իւր». ոչ է այս ըստ մշակացն յայգին, այլ ամենեքեան գործաւորք են, քանզի ոչ եթէ առ իշխանսն միայն եւ կամ ընդ հրեայսն եւեթ, այլ ընդ ամենեսեան խօսի՝ կոչելով ի ձեռն առաքելոցն՝ աւետարանին վարդապետութեամբ ի հաւատս եւ ի գործս, քանզի այս է ինչք Նորա: Այլեւ զշնորհս ասէ զպէսպէս՝ զհոգեկանս եւ զմարմնականս, զի ամենեքեան Աստուծոյ են, զոր Պօղոս թուէ⁴, եւ այլուր՝ «Թէ առեր, զի՞ պարծիս իբրեւ չառեալ» (Ա Կոր. Գ 7): Նաեւ զխոստումն անճառ բարեացն ինչս Իւր անուանէ:

Ումեմն ետ հինգ քանքար եւ ումեմն՝ երկուս, եւ ումեմն՝ մի, իւրաքանչիւր ըստ իւրում կարի, եւ գնաց (ԻԵ 15):

¹ Զ թարուցանիցեն

² Զ ~ գնացեալ, ասէ

³ Եբր. Զ 19

⁴ Ա Կոր. ԺԲ 8-11

«Հինգ» որ զքնական իմաստութիւնն միայն գիտէ ի ձեռն հինգ զգայութեան առանց մտաց Գրոց: Եւ որ զերկուն էաւ՝ նոքա են, որ զքնականն ունին եւ զմիտս Գրոց: Իսկ որ զմին էաւ՝ նոքա որ զմիտս Գրոց միայն գիտեն: Եւ ի սմանէ առնուլ զմին եւ տալ այնն, որ զհինգն ունի, այն իսկ է, զի էաւ ի նոցանէ զծանօթութիւն մտաց Գրոց եւ ետ քնականացն, որպէս ետ զմեկնութիւն Գրոց Դիոնէ-սիոսի եւ այլոց՝ ի բաց բառնալով ի հրէից վարդապետաց եւ տալով հեթանոսաց իմաստասիրաց: Նախ արժան է գիտել, եթէ այս առակ եւ որ ի Ղուկասն կայ ասացեալ վասն տաղանդացն՝ մի՞ են, եթէ զանազան: Արդ՝ ոմանք ասեն, թէ ա՛յլ այս, եւ ա՛յլ է՞ այն, բայց ինձ թուի, թէ մի են: Իսկ թէ ասիցէ որ՝ ընդէ՞ր ասպա տասն են անդ մնասն, զոր ետ, եւ աստ ութ ի հաշիւ արկանէ, ասացուք, թէ տասն են ըստ Ղուկայ, սակայն զերկունսն ոչ պահանջէ, որպէս աստ ցուցանէ, զհաւատն ասեմ եւ զմկրտութեանն շնորհ, քանզի ձրի ետ, իսկ այլք զքնական օրէնսն, ասեն, եւ զգրատրականն յաշակերտաց աւետարանիս ոչ խնդրէ, քանզի նա զտալն ասէ, եւ սա՝ զխնդրելն:

«Ումենն ետ,- ասէ,- հինգ քանքար»։ տաղանդն «քանքար» ասի ըստ եբրայեցոցն, որ է ինն հազար դահեկան, եւ ոմանք տասն ասեն, եւ է այս հինգ շնորհ, զորս թուէ առաքեալ. «Եթէ որ ի ձեռն սաղմոս ունիցի, վարդապետութիւն՝ ունիցի, յայտնութիւն ունիցի⁴, լեզուս ունիցի⁵, եւ եթէ թարգմանութիւն ունիցի⁶» (Ա Կոր. ԺԳ 26): Եւ «քանքար» վասն զտեալ եւ փորձեալ աստուածային շնորհին, կամ որ զհինգն առ՝ զիտաց ճշմարտապէս զվեհագոյն միտս աստուածային գործոց ըստ Սողոմոնի, եօթն աստուածային զգայութեամբք կրթեալ ըստ Պօղոսի՝ յընտրութիւն բարոյ եւ չարի, զոր «կատարեալս» կոչէ առաքեալ⁷:

Իսկ «ումենն՝ երկուս»: Չայս Պետրոս ասէ. «Եթէ որ վարդապետէ իբրեւ զԱստուծոյ պատգամ, զոր շնորհեաց նմա Աստուած, եւ եթէ որ մատակարարէ իբրեւ ի զօրութենէ Աստուծոյ, զոր տուեալ է նմա» (հմմտ. Ա Պետ. Դ 11), եւ կամ «Տեսանելի արա-

¹ Ղուկ. ԺԹ 12-28

² Տ > է

³ Գ մարգարտութիւն

⁴ Գ > ունիցի

⁵ Գ լեզուի] լեզուս ունիցի

⁶ Գ > ունիցի

⁷ Յակ. Ա 17

րածովքս իմացեալ զաներեւոյթ զօրութիւնն Աստուծոյ» (հմմտ. Հոռն. Ա 20) եւ զայս ուսուցին աստուածային վարդապետութեամբ, կամ զհոգեկան եւ զմարմնական առաքինութեան սերմանս ընկալան: Եւ դարձեալ եթէ հոգեւոր իշխան իցէ, ունի առ ընթեր եւ զմարմնաւոր հոգաբարձութեան պայծառութիւն, կամ զՀին եւ զՆոր Կտակարանս, այլեւ աստուածսիրութեան եւ մարդասիրութեան զօրութիւն, կամ զհաւատոց եւ զգործոց, կամ զտեսական եւ զգործնական: «Եւ ումենն՝ մի, իւրաքանչիւր [ըստ իւրում կարի]»: այսինքն՝ մի շնորհ՝ հոգեւոր կամ մարմնաւոր, հոգեւոր՝ որպէս սարկաւազութիւն, եւ մարմնաւոր՝ որպէս հիւսնութիւն կամ դարբնութիւն, քանզի զայս վասն այնորիկ եղ, զի ցուցանէ, թէ որ յոյժ պակասն է՝ ի միոջ նուազ է, որպէս ասէ, թէ իւրաքանչիւր ըստ իւրում կարի յԱստուծոյ ընկալան եւ ի վերուստ ունին զնպաստաւորութիւն շնորհացն, որով պանծան:

Չոգաւ վաղվաղակի՝ որ առ զհինգն, գործեաց նոքօք եւ շահեցաւ այլ եւս հինգ (ԻԵ 16):

Թէ ասիցէ որ, թէ ընդէ՞ր ոչ առանց նորայոց ինքեանք գործեցին, այլ նորին տրօքն շահեցան, ասացուք՝ զի մի՛ ի պահանջելն դժուարիցին իբրեւ ոչ տուեալ, եւ մի՛ ի գործելն հպարտասցին իբրեւ նոր իմն գործ գործեալ, վասն այտորիկ առեալ զնորայն՝ աճեցուցին, զի մի՛ պակասիցէ առողին բարին քան գտուողին սերմանս: «Չոգաւ,- ասէ,- վաղվաղակի՛ որ առ զհինգն¹, գործեաց նոքօք² եւ շահեցաւ այլ եւս հինգ»։ կամ զզօրութիւնն, գոր ստացան, զայն արդեամբք կատարեցին, կամ թէ՛ զառեալ շնորհս ի պէտս այլոց մատակարարեցին: Իսկ «վաղվաղակի» ասելն զի փութով եւ յօժարութեամբ եւ ոչ ի հարկէ եւ բռնադատութեամբ:

Նոյնպէս եւ որ գերկուսն՝ շահեցաւ այլ եւս երկուս (ԻԵ 17):

Ըստ առաջնոյդ տեսլեան եւ զայս իմա. բայց ասելն, զի այլ է սերմն, եւ այլ է պտուղն, կամ այլ են գործքն, եւ այլ են փառքն՝ զի ոմն՝ ի մարդոյ, իսկ փառքն՝ յԱստուծոյ:

¹ Գ > զհինգն

² Գ > նոքօք

Եւ որ զմին առ՝ զնաց փորեաց զերկիր եւ թագոյց զարծաթ տեսուն իւրոյ (ԻԵ 18):

Այսոքիկ նոքա են, որք հաւատացին եւ բնաւին գործոյ փոյթ ոչ արարին, զի կամ ընդ առնուլն մեռան եւ յերկիր թաղեցան, որպէս նոքա ի ժամ մահուն զմկրտութիւնն կամ զհաղորդութիւնն խնդրեն, եւ կամ առեալ երկրասէրք եղեն եւ գարշապարօք իւրեանց յերկիր խրեցան, եւ զարծաթ շնորհացն ոչ մաքուր գործովք արծարծեցին, այլ չարութեամբ անփոփեցին եւ զոյս Հոգոյն շիջուցին՝ ոչ վարժեալք յառաքելոյ թէ՛ «Մի՛ շիջուցանէք զՀոգին» (ԱԹԵՍ. Ե 19), որով կնքեցարուք յաւորն փրկութեան: Եւ դարձեալ նոքա են, որ զշնորհս ոչ ի բազմաց օգուտս¹ մատակարարեցին, այլ ի պէտս անձանց իւրեանց խորեցին, նաեւ այնոքիկ, որք ի գիրն հային եւ ո՛չ ի Հոգին, որպէս հրէայք եւ թանձրամիտք, որք թագուցին զմիտս գրոյն ի խորութին սրտից իւրեանց՝ զլուսաւոր բան օրինացն Աստուծոյ:

Յետ բազում ժամանակի զայ տէր ծառայիցն այնոցիկ եւ առնէ համարս ի մէջ նոցա (ԻԵ 19):

Յուցանէ, թէ առաջինս շնորհաց էր ժամանակ, իսկ միւսանգամ զայուստն դատաստանի եւ համարս պահանջելոյ: Բայց «յետ բազում ժամանակաց» ասելն ըստ կարծեաց հեշտասիրացն դնէ, ապա թէ ոչ «հազար ամ յաչս Տեսուն իբրեւ օր երեկի է, զի անց» (Սաղմ. 2Թ 4), իսկ «ի մէջ նոցա առնել զհամարն» զիրատունս դատաստանին ասէ, զի նոցուն վկայութեամբ կնքի վճիռն գեղեցկացն եւ կամ այլ ազգ ունողացն՝ ըստ այնմ թէ՛ «Բերանօք իւրեանց հաճեցին» (Սաղմ. ԽԼ 14):

Եւ մատուցեալ որ զհինգ քանքարն առ, մատոյց այլ եւս հինգ քանքար եւ ասէ. «Տէ՛ր, հինգ քանքար ետուր ցիս, արդ՝² ահաասիկ հինգ այլ եւս քանքար ի վերայ շահեցայ» (ԻԵ 20):

Չհպատակութիւն³ աշակերտին ցուցանէ, թէ առ ի նմանէ ունի զպատճառ շահաւորութեանն, եւ կարի իսկ շնորհ նմին ունի եւ զամենայն նմա համարի՝ ըստ առաքելոյ թէ՛ «Ո՛չ ես, այլ շնորհն Աստուծոյ որ ընդ իս» (Ա Կոր. ԺԵ 10), զորս «ընդունայն ոչ վաս-

¹ Գ օգուտ

² Գ > արդ

³ Գ Չհպարտութիւն

տակեցի» (Փիլյ. Բ 16): Նաեւ այսու այլ իմն նշանակէ, եթէ ոչ միահաղոյն դատաստան, այլ ուրոյն ուրոյն առանձինն հարցաքննութիւն լինելոց է: Դարձեալ՝ այսոքիկ նոքա են, որ զբազումս առին եւ զբողոքն յօգուտ այլոց մատակարարեցին, այլեւ յամենայն սրտէ եւ ի գօրութենէ զԱստուած սիրեցին եւ զհրամանս Նորա առանց թերութեան լցեալ կատարեցին, որպիսի որ էր Պօղոս, զի ասէր. «Զբարոք պատերազմ պատերազմեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի», եւ իբր վստահութեամբ ասէ՝ «Այսուիկտեւ կայ եւ մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուցէ Տէր» (Բ Տիմ. Դ 7). եւ է ա՛յս, զոր ասէ:

Ասէ ցնա տէրն իւր. «Ազնիւ, ծառայ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ¹ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մո՛ւտ յուրախութիւն տեսոն քոյ» (ԻՅ 21):

«Ազնիւ» ասելովն ինքեան նմանեցուցանէ, զի որպէս այրն «ազնիւ» ասացաւ, որ զբանքարն ետ, նոյնպէս եւ ծառայն, որ զնոյն աճեցոյց, որ քան զայս զի՞նչ երանութիւն կայցէ եւ կամ զարմացումն, յորժամ ծառայն տեսոն հաւասարիցի: Քանզի ամենայն առաքինութեան զլուխ ա՛յս է եւ կատարած՝ առ Աստուած նմանութիւն, ընդ որս հիացեալ ասէ Սողոմոն. «Ծառայ յորժամ թագաւորեսցէ» (Առակ. Լ 22), եւ Պօղոս թէ՛ «Եղիցի Աստուած ի մէջ աստուածացելոց», զի ըստ արարածոյն որում անկ է ծառայ կոչիլ, միայն է զանազանութիւն եւ ոչ այլ իւրիք: «Բարի եւ հաւատարիմ», այսինքն՝ իբր զիս բարեգործ առ ամենեսեան, որ զընկերին կարիսն տեսանելով զթացար: «Եւ հաւատարիմ», զի ոչ խորեցեր յանձին պէտս եւ կամ յանօգուտս վատնեցեր, այլեւ հաւատացեր բազմապատիկ փոխարինին:

«Որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես², ի վերայ բազմաց կացուցից». այսինքն՝ որովհետեւ ի յանցաւոր եւ ի սակաւակեաց կեանսդ հաւատարիմ գտար, եկ ծառանգեա զմշտնջենաւորն եւ զանվախճանն, քանզի սակաւ եւ բազում ոչ միայն ըստ փոքրկութեան եւ ըստ մեծութեան զիտէ դնել Գիրք, այլեւ ըստ նուազութեան եւ առաւելութեան, որով ցուցանէ, թէ առաւելագոյն շնորհօք փառաւորին սուրբքն քան զաստի կենացս պայծառութիւնն, զի³

¹ Զ որով

² Զ եղեր

³ Զ քանզի

ստքա իբր սակաւ սերմանք են առ բազմապատիկ փոխարինին արդիւնսն: «Մո՛ւտ,- ասէ,- յուրախութիւն տեսառն քո»: զբովանդակ խրախութիւնսն միով բանիւ «ուրախութիւն» անուանէ. զոր տէր ունի՝ եւ քե՛զ շնորհէ, «մո՛ւտ», այսինքն յուսով արդեամբք վայելեա՛լնա՛:

Մատուցեալ եւ որոյ զերկուս քանքարսն առեալ էր եւ ասէ. «Տէ՛ր, երկուս քանքարս ետուր ցիս, ահաասիկ երկուս եւս այլ քանքարս, զոր ի վերայ շահեցայ» (ԻԵ 22):

Աստուած ոչ եթէ ի բազմութիւն գործոցն եւ կամ ի մեծութիւն ընչիցն¹, այլ ի՞ յօժարութիւն կամացն եւ ի ջերմութիւն բաղձանացն հայիցի՝ ըստ առաքելոյ թէ՛ «Յորժամ կամքն առաջի կայցէ՛ ըստ զոյին ընդունելի» (հմմտ. Բ Կոր. Ը 12), եւ՝ «Հայեցաւ Աստուած ի պատարագն Աբելի» (հմմտ. Ծննդ. Դ 4), եւ ընկալաւ զերկուս լումայս այրի հոգւոյն²: Նոյնպէս եւ հոգիս այս, որ ըստ իւրում կարութեանն, զոր ընկալաւ շնորհս՝ բեղմնատրեաց եւ աճեցուցեալ շահեցաւ, մատչի պարծելով ի գորութիւն Նորա թէ՛ ոչ միայն զոր ետուր՝ ոչ կորուսի, այլեւ կրկնապատիկս արարի յարգմամբ գործոյն առ ի շնորհացն առաւելութիւն:

Ասէ ցնա տէրն իւր. «Ազնի՛ւ, ծառայ՛ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մո՛ւտ յուրախութիւն տեսառն քո» (ԻԵ 23):

Այս ո՛չ կրկնարանութիւն է, այլ մեծ իմաստութեան իմն աւանդութիւն, քանզի զոր օրինակ այլ փառք է արեգական, եւ այլ՝ լուսնի⁴, այսպէս եւ պատիւ եւ պսակք արդարոցն՝ ըստ արդար լծոցն Աստուծոյ կշռեալ եւ ըստ արժանատրութեան բաժանեալ, որպէս զի յատուկ պսակելով գտորքսն՝ նախ գովութեամբ եւ սպա փառացն վայելչութեամբ, կրկին կսկիծ լինիցի ծուլիցն եւ հեղացելոցն, զի որպէս հանդէսն՝ զանազան, նոյնպէս դրուատն եւ փառքն՝ զանազան: Բայց թէ ասիցէ՛ որք, թէ զի՞նչ զանազանի այս յառաջնոյն, զի որպէս զնորայն սակաւ կոչեաց, եւ գտորայն, եւ որով բանի զնա պսակեաց, եւ զսա, ասասցուք՝ թէպէտ գործքն առաւել եւ

¹ Զ ընծայիցն

² Զ > ի

³ Ղուկ. ԻԱ 2-3

⁴ Ա Կոր. ԺԵ 41

պակաս, առ որով եւ փառքն, սակայն շնորհ՝ մի, զի հաւասար աճեցուցին, զոր զնա ըստ իւր չափոյն, իսկ զսա ըստ իւր արժանեացն պատուեաց: Իսկ զի զերկոսեան «սակաւ» կոչեաց զաստիս, ընդ հանդերձելոյն շնորհն եւ ի փառսն համեմատեաց:

Մատուցեալ եւ որոյ զմի քանքարն առեալ էր եւ ասէ. «Տէ՛ր, գիտէի, զի այր մի խիստ ես, հնձես՝ զոր ոչ սերմանեցեր, եւ ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր (ԻԵ 24):

Երկեայ, զնացի եւ թագուցի զքանքարս քո յերկրի. արդ աւասիկ քոյդ ցքեզ» (ԻԵ 25):

Յայսմ վայրի ամաչեսցեն պարսաւասէրքն, որք ասեն, թէ ընդէ՞ր ոչ ամենեցուն զոյգ զշնորհս պարգեւէ՝ զհոգեւորս կամ զմարմնատրս, զի թէ զմի էառ տարտամս այս հոգի եւ զայն ոչ գործեաց, զի՞նչ ասես, թէ բազմաց շնորհաց ընկալուչ եղեալ էր: Նաեւ տուողն իսկ կարի քաջ գիտէր, թէ չէ բնաւին գործելոց, այլ ետ, զի մի՛ պատճառեսցեն այնոքիկ, որ զպատճառսն կամիցին: «Գիտէի,- ասէ,- զի այր մի խիստ ես». յոյժ կատաղի է յանդգնութիւնն, եւ այնքան, մինչ զի ընդ անձին մարտնչի եւ հակառակ ինքեան խօսի, որպէս Ադամն առաջին, զի ոչ զանձին մեղկութիւն, այլ զԱստուած, որ ստեղծ զկիւնն, ասաց պատճառ զոյ չարին: Նոյնպէս եւ այրս այս ոչ զվատութիւն ինքեան, այլ զնորին խստութիւնն: «Գիտէի,- ասէ,- զի այր մի խիստ ես», այսինքն բռուն եւ անհաւան: «Հնձես՝ զոր ոչ սերմանեցեր, եւ ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր». «հնձես», այս է՝ շնորհ ոչ ետուր եւ մահուամբ ի դժոխն ամբարեցեր, եւ «ժողովես», այս է՝ յարքայութիւնն ժողովեցեր, որք ոչ շնորհք առին եւ ոչ բարեգործք ցուցան: Առաջնոյն օրինակ՝ փարաւոն եւ Եսաւ¹, եւ երկրորդին աւագակն եւ մաքսատորն². արդ՝ այսպիսի է անզգամ, զի զԱստուծոյն դատէ, որ եւ լուաւ թէ՛ «Ողորմեցայց՝ որում ողորմեցայցն, եւ զքացայց՝ որում եւ զքացայց³» (Երբ Լ Գ 19), իսկ պատասխանի, զի նորա ոչ արարին զանձինս պատրաստ շնորհացն Աստուծոյ, որպէս փարաւոն, եւ տրաւ տեղի ետուն ողորմութեանն Աստուծոյ, որպէս աւագակն

¹ Զ Իսաւ

Երբ Ա-ԺԴ, Ծննդ. ԻԵ 21-26, ԻԷ, Մաղ. Ա 2-3

² Ղուկ. ԻԳ 39-43, ԺԸ 10-14

³ Զ > որում եւ զքացայց

եւ այլք, ապա ուրեմն ոչինչ անհրաւորութիւն է, որպէս ասաց թէ՛ «Հնձեւ՝ գոր ոչ սերմանեցեր¹, եւ ժողովեւ՝ ուստի² ոչ սփռեցեր»:

Դարձեալ՝ առ յանդգնութեամբն տես եւ զստութիւնն, զի այսպէս ամենայն անհրաւ ի պատասխանին է պատրաստ: Արդ՝ եթէ ոչ սերմանեաց եւ ոչ սփռեաց, որպէս ասեսդ, ուստի³ ունիս՝ գոր հատուցանեսդ, թէ՛ «ան՝ զքոյդ»։ ապա ուրեմն որով ստեցեր կուտեցեր զչարիս քո՛ ի զլուխ քո: «Երկեայ,- ասէ,- գնացի եւ թագուցի զքանքարս⁴ քո»։ հազիւ ուրեմն զճշմարիտն յայտնեաց թէ՛ զերկչոտութեան զախտն ախտանայի, վասն այտորիկ ծածկեցի զշնորհս քո ի տղմի: Առ որս ասելի է, թէ ո՛վ ապիրատ, ընդէ՞ր երկեսար, միթէ՞ ի բազմաց օգտութենէ կասկածա՞նս կրեցեր, թէ վարդապետիդ պատուոյ հաւասար լինիցին, քանզի ոչ ունիս ասել թէ՛ «Երկեայ՝ գուցէ զշնորհսն կորուսանիցեն»», զի այն ոչ է քում անկ, այլ նորա է հարցաքննութիւն եւ պահանջումն: Ապա ուրեմն առ լրբութեանդ եւ պղերգութեանդ եւ անբան երկիւղիդ զյաշտանաց ախտն ախտանայիր, զի ոչ կամեցար զԱստուծոյսն ի յԱստուծոյսն վայելել: «Գնացի եւ թագուցի զքանքարս⁵ քո յերկրի»։ զքովանդակ կեանքս, ասէ, յորում ընթացայ ծուլութեամբ, վախճանեցի եւ ի ներձ հեշտութեան զշնորհս Բո ծրարեցի՝ դանդաղկոտ գոլով եւ երկրասէր, մինչ ի գերեզման մտի. արդ՝ «առ,- ասէ,- զքոյդ ցքեզ⁷»: Եթէ ոչ համարէր պահանջեալ եւ ոչ յօր մահուն⁸ հասեալ, եւ ոչ զՆորայն կամէր Նմին աւանդել, այլ ստիպեալ ի մահուն վճռէ եւ ի հաշուոյն այցելութենէ բռնադատեալ՝ ուր ուրեմն ասէ. «Ան՝ զքոյդ»:

Պատասխանի ետ տէրն եւ ասէ ցնա. «Ծառայ չա՛ր եւ վատ, զիտէիր, թէ հնձեւ՝ ուստի ոչ սերմանեցի, եւ ժողովեմ՝ գոր⁹ ոչ սփռեցի (ԻԵ 26).

Պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ ի սեղանաւորս, եւ եկեալ ես՝ տոկոսեօք պահանջէի զիմն (ԻԵ 27):

¹ Գ ոչ՝] ոչ սերմանեցեր

² Գ > ուստի

³ Գ > քո

⁴ Գ զարծաթն

⁵ Գ զարծաթն

⁶ Գ ներքոյ

⁷ Գ քեզ

⁸ Գ յօրհասն] յօր մահուն

⁹ Գ ուստի

Տես, թե որպիսի մեծ վնաս է վատությունն, զի ընդ չարութեանն լծի, քանզի «չարություն» զերկու մասին հոգւոյն անզգամութիւնն ասէ, զոր ունէր այրս այս. զնախանձն, որ քանին է, եւ զյանդգնութիւնն եւ զերկիւղն անսուրբ, որ ցասմնատեսակին է չարութիւն, զի ոմն ըստ առաւելութեան, եւ ոմն ըստ նուազութեան, որոց կցորդէ եւ զվատութիւնն, որ է ընդդէմ արիութեանն: «Ծառայ չար եւ վատ,- ասէ,- գիտէիր, թէ հնձեմ ուստի ոչ սերմանեցի, եւ ժողովեմ զոր¹ ոչ սփռեցի»: Ղուկաս ասէ. «Ի բերանոյ քումս՝ դատեցայց զքեզ» (Ղուկ. ԺԹ 22). զի եթէ ոչ գիտէիր զիս² այսպէս, ունէիր իմն ներումն, իսկ որովհետեւ այսպէս գիտես, ընդէ՞ր ոչ արկեր զարծաթն իմ ի սեղանաւորս. ասպա թէ ոչ այսպէս, այլ հեզ, որպէս եւ եմս իսկ, է՞ր վասն յանդգնութեամբ բարբառեցար: Արդ՝ եթէ այսպէս եւ եթէ այնպէս³, «պարտ էր քեզ արկանել զարծաթն⁴ իմ ի սեղանաւորս»:

Իսկ զի՞նչ սեղանաւորն. կամ արկանելն է ի տրապիզիտս մտաց, որոց ի խոկմանէ խորհրդոյն հետեւի եւ գործն՝, որով աճեալ զարգանայ շնորհն Աստուծոյ զաճումն սուրբ Տերամբ, կամ ըստ մարմնական սովորութեան, եւ զայս յօդէ յառակս, քանզի զոն յաշխարհի ըստ քաղաքի քաղաքի սովորութիւն տալ զարծաթն ի սեղանաւորս շահի: Չայս օրինակ, ասէ⁵, եւ քեզ պարտ էր առնել զինչ եւ իցէ շնորհս, ի փոխ տալ այնոցիկ, որ պէտս ունէին, եւ խրատել եւ թելադիր լինել կամ զառաքելոյն առնել՝ աւանդել զշնորհն⁷ հաւատարիմ մարդոց, որ կարօղ էին եւ զայս ուսուցանել ի վարդապետս հմուտս⁸: Չանսային ասէ, եւ քեզ զի՞նչ վնաս էր յայնմանէ, զի տալն միայն էր քեզ եւ ոչ պահանջելն, որպէս ասէ. «Եւ եկեալ ես՝ տոկոսեօք պահանջէի զիմն»: Տեսանէ՞ս, զի ոչ ասաց նախ թէ՛ «չեմ խիստ», այլ կամեցաւ գործով զհեզութիւնն յանդիման կացուցանել, եւ զի՞նչ քան զայս այլ հեզութիւն, զի ի մարդիկ ոչ առնին այսպիսի իրք, այլ փոխատուն առնու զպարտսն, իսկ աստ ասէ թէ՛ քեզ պարտ էր ասել եւ զպահանջելն

¹ Տ ուստի

² Զ զի

³ Զ այն

⁴ Զ զարծաթ

⁵ Տ գործ

⁶ Զ ասի

⁷ Զ > զշնորհն

⁸ Բ Տիմ. Բ 2

յԻս ապաստան առնել, դու գրիւրիսն գործել եւ գոծուարիսն Ինձ ներել, եկեալ, ասէ, Ես վաշխիւք խնդրէի զԻմն, այսինքն՝ զունկնդրութիւն քանին եւ զգործոցն հանդէս, եւ զԻմն, զոր ետու, զշնորհս եւ ոչ զօտար ինչ պահանջէի: Միա յայտ արար, թէ վասն է՞ր տայ զշնորհս. ցուցանէ եւ զայն, թէ մանրամասն քննութիւն ի գալստեան Նորա լինելոց է, թէպէտ ոմանց ներէ այժմ:

Արդ՝ առէք ի դմանէ զքանքարդ եւ տուք այնմ, որ ունիցի զտասն քանքարն (ԻԵ 28):

Հայեաց եւ ի միտ առ, թէ որպէս մարդասէր է, զի ի բարեացն տուրս առանց միջնորդի վարեցաւ, իսկ զվրէժխնդրութիւնն այլոց հրամայէ՝ սպասատրակ զօրութեանց, որպէս ի հինն, զի զհաց երկնից Ինքն ետ նոցա ուտել, իսկ յորժամ տրտնջեցին, «առաքեաց ի նոսա տանջանս ի ձեռն հրեշտակի չարի» (Մադմ. ՀԷ 49): Բայց զի՞նչ է առնուլն զքանքարն. այս ինձ թուի, զի որ զշնորհս քանի եւ կամ այլ ինչ իրաց ունիցի եւ չարկանէ ի կիր ինքեան գործով եւ կամ յօգուտ բազմաց, զնոյն ինքն եւ զշնորհս կորուսանէ, որպէս Յուդային եղել: «Տուք,- ասէ,- այնմ, որ ունիցի զտասն քանքարն». աստանօր յայտ առնէ, թէ վասն անճառ բարերարութեանն ամենեցուն փառս պատրաստեալ է ի սկզբանէ, իսկ յորժամ ոմանք անձնիշխան զիտութեամբ անարժան լինին այնմ գովեստի եւ փառաց, յայնժամ զնոցուն պատիւն արժանատրացն շնորհէ եւ կատարելոցն, որպէս ել Յուդա, եւ եմուտ Մատաթիա: Եւ չեն այս զարմանք, զի թէ անարժանն առ վայր մի ժառանգեաց զպատիւն, թէպէտ ոչ ծանեաւ զնորին մեծութիւնն, քանի՞օն յարմարագոյն է սրբոցն ժառանգութիւն, որպէս ասէ.

Ձի ամենայնի, որ ունիցի, տացի եւ յաւելցի, եւ որ ոչն ունիցի, եւ զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ (ԻԵ 29):

Կամ թէ՛ որ փոյթ ունիցի յանձին մատակարարել զշնորհս, եւս առաւել ամփոփէ՛ յինքն զպարգետն, որպէս Տիմոթէոս եւ այլք բազումք, ապա թէ ոչ մատակարարէ, եւ զայն եւս կորուսանէ, որպէս ասացաք: Կամ թէ՛ որ ունիցի զործս բարիս, տացի փոխարէնս ըստ վաստակոցն եւ յաւելցի փառս, եւ պսակս անպատումս ձիր

¹ Զ անփորձ է

շնորհի, իսկ որ չունիցի¹ գործս բարեաց, եւ գոր ունիցին շնորհս՝ զաւագանին եւ կամ զայլ իմն պարգեսս, մերկացայց ի նմանէ եւ ապա ի տանջանս առաքեցից, զի զիտասցէ, թէ որ արհամարիէ զիւիք, արհամարիեսցի ի նոցանէ, եւ զի ոչ միայն զրկի ի փառաց, այլեւ ժառանգ լինի տանջանաց ըստ յաջորդիդ: Կամ ա՛յլ ազգ. զի ասէ ի տեսիլն Յովհաննու թէ՛ «Կա՛յ գոր ունիս» (Յայտ. Գ 11), նոյնպէս եւ աստ իմա թէ՛ «Որ ունիցի՝ տացի», այսինքն՝ թէ որ ըմբռնէ զառեալն, ունի եւ վայելէ, իսկ որ ոչ ունի զտուեալն, զերծցի ի նմանէ այն ասէ, եւ է այս՝ կամ ըստ մարմնաւոր տրոց, կամ ըստ հոգեւոր շնորհաց վարդապետութեան, կամ քահանայութեան:

Եւ զծառայդ անպիտան հանէք ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց (ԻԵ 30):

Յիրաւի՛ անպիտան. զի ո՛չ ինքեան² եւ ո՛չ այլոց օգուտ արար. «Հանէք,- ասէ,- ի խաւարն արտաքին»: Ոմանք ասեն, թէ ո՛չ վասն ոչ ուսուցանելոյ այլոց զբանն այնպէս պատուհասի. ասացո՞ւք՝ լո՛ւր Պօղոսի, որ ասէ. «Վա՛յ է ինձ, եթէ ոչ աւետարանեմ» (Ա Կոր. Թ 16): Արդ տես, զի որք յայս բարի չգործեցին, յարտաքին խաւարն առաքեցան, ապա ո՞ր երթալոց են յափշտակօղբն եւ ազահքն եւ չարանախանձ յաչաղկոտքն եւ տրտնջօղբն: Իսկ «խաւար արտաքին» կամ զբանսարկուն ասէ, որ արտաքսեաց զինքն ի լուսոյ եւ խաւարեալ է իւրովքն, դառն տրտմութեամբ անդր առաքէ, յորում ոչ առնէ այցելութիւն Տէր լուսով Իւրով, կամ խաւարն սկզբնաձիւն, որ ի լուսոյն հատաւ եւ այժմ հատանի եւ հատանէ ի հաստատեալ³ լուսատրացդ՝ նորոգութեամբ: Շրջապատեալ խաւարն զբոլոր աշխարհիւս՝ յեզր ելանէ արտաքս քան զերկիրս, յորում է եւ ջուր հրացեալ եւ սառնամանիք⁴ անհանդուրժելի: Անդր տանջին մեղաւորքն, զի ոչ միայն յերկնից եւ ի դրախտէն արտաքսին, այլեւ ի բոլոր երկրիս վայելչութենէ, քանզի եւ սա՛ յայնժամ դրախտացեալ զերեսն սուրբ պաշտէ:

¹ Զ ոչ ունիցի

² Տ ինքեանն

³ Զ հաստատել

⁴ Զ սառնամանիք

Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառօք Իւրովք, եւ ամենայն հրեշտակք ընդ Նմա (ԻԵ 31):

Քանզի այժմ նախատանօք եկն եւ անարգանօք, իսկ յայնժամ սեփհական փառօքն, որ ունէր նախքան զլինելն աշխարհի: «Եւ ամենայն հրեշտակք ընդ Նմա». ցուցանէ զերկինս թափուր մնացեալ, որով ահագին երեւի զալուստն: Միանգամայն եւ վկայք լիցին ստորնայնոցս, թէ որչափ սպասատրութիւն հարին, յորժամ առաքէին ի Տեառնէ ի փրկութիւն մարդկան, այլեւ գործոց, որոց հմուտք եւ տեղեակք են՝ լինելովն ընդ նոսա եւ ընդ Նմա իբր սպասատր եւ ոչ յառաջ քան զՆա:

Յայնժամ նստցի յաթոռ փառաց Իւրոց:

Ստեյլ զփառացն յիշեցուցանէ ոչ վայրապար, այլ զի մօտ էր խաչին իբր, զոր նախատինս կարծէին: Իսկ աթոռովն զատեանն յիշեցուցանէ, որ դատաստան լինելոց է, քանզի նախ զփառաց¹ եւ զտանջանաց բազում անգամ ճառեաց, տարակուսէին, թէ ե՞րբ այն լինելոց է, ասէ՛ յորժամ նստցի յաթոռ փառաց: Ոչ թէ այժմ ոչ է յաթոռ, այլ զի ոչ դատէ, իսկ «յայնժամ» վասն դատելոյն ասէ: Կամ «աթոռ» զխաչն կոչէ, յորում բազմի աստուածունակ փառօքն պայծառացեալ՝ իբրեւ զճշմարիտ նշան եւ զէն լուսոյ կրելով ընդ Ինքեան, որպէս ետես Դանիէլ. զրէ եւ Դաւիթ թէ՛ «Նստար յաթոռ դատաւոր արդարութեան» (Մաղմ. Թ 5):

Եւ ժողովեսցին առաջի Նորա ամենայն ազգք (ԻԵ 32):

Ի հրեշտակացն պահպանութենէ ամենայն տիեզերք շուրջ կանգնին Նովաւ, եւ ամենայն բնութիւնք մարդկան անդ հաւաքին հաւատացելոց եւ անհաւատից, զոր քան զայս չիք այլ մեծագոյն եւ ահագին ատեան: Բայց յի՞նչ պէտս ժողովին. յայտ է ի դատաստան, քանզի որպէս թագաւոր, որ յամիցէ բազում ժամանակս մտանել յերկիր իւր, եւ յաղագս յապաղելոյն՝ բազում տարօրէնութիւնս գործեալ լինիցի յաշխարհին յայնմիկ, վասն որոյ յորժամ զայ թագաւորն, ամենեքեան անդր հասեալ բողոք բառնայցեն եւ դատս պահանջեսցեն, նոյնպէս եւ անդանօր առաջի տեսութեանն աստուածային հաւաքին բնաւքն²: Իսկ «ամենայն

¹ Տ զփառացն

² Զ բնակքն

ազգք» ժողովին՝ ոչ¹ միայն զայն ասէ՝ յորում ամենայն լեզու, որք բաժանեցան, ի մի ժողովին, որոյ օրինակն ի վերնատունն ցուցաւ², այլեւ արդարք եւ մեղատորք՝ ծերք եւ տղայք, արք եւ կանայք. ա՛յս է ազգն:

Եւ մեկնեացէ զնոսա ի միմեանց, որպէս հովիւ մի, զի մեկնեացէ զօղիս յայծեաց: Եւ կացուցէ զօղիսն ընդ աջմէ Իւրմէ եւ զայծիսն ի ձախմէ (ԻԵ 33):

Յայսմ տեղոջ զարուեստ դատաւորութեան ուսուցանէ, թէ պարտ է զդատախազսն որոշել ի միմեանց, որպէս Դանիէլ արար³, որ դատաստան լսի Աստուծոյ, եւ ապա քննել: Եւ դարձեալ «մեկնել»-ն, յայտ է սրով հրամանի Իւրոյ, որ սուր է եւ հատու բանն Աստուծոյ քան զամենայն սուր երկասարի: Քանզի այժմ ոչ է մեկնեալ, այլ խառն ամենեքեան շրջին, եւ բազում օղիք՝ այծիք, եւ այծիք օղիք կարծիցին, իսկ յայնժամ որոշումն լինի հաւաստեալ, քանզի ի ժողովելոյն լինի մեկնութիւն, եւ տակաւին այժմ չենք ժողովեալ, վասն այսորիկ եւ ոչ ենք բաժանեալ: «Որպէս հովիւ մի», - ասէ. պէսպէս ներգործութեամբն պէսպէս կոչումն ընդունի, քանզի «փեսայ» վասն առ կուսանսն միութեան, եւ «թագաւոր» վասն դատաստանին իշխանութեան, եւ այժմ «հովիւ» վասն նախախնամութեամբ արածելոյն եւ վասն ընտրութեան հօտին, միանգամայն եւ վասն դիրութեանն, զի առանց աշխատանաց ծանիցի իւրաքանչիւրն առ ի բաժանել: Իսկ «մի» ասելն՝ նախ ընդդէմ նետորականացն, որք յերկուս որդիս բաժանեցին, եւ ապա՝ մի եւ նոյն հովիւն է, որ յառաջ էած ի գաւիթն վերին եւ այժմ որոշեալ հարցանէ:

«Եւ կացուցէ զօղիսն ընդ⁴ աջմէ Իւրմէ եւ զայծիսն ի ձախմէ»: Ի տեղոյն եւ զվճիռն ուսուցանէ, քանզի օղիքն յաջմէ վասն բազում պիտոյիցն իւրեանց կարգեցան, քանզի ետուն ասր եւ կաթն եւ ծնունդ, այլեւ հեզք եւ անմեղք էին, այսր աղագաւ ոչ միայն յաջմէ, այլեւ Իւր իսկ, իսկ այծիքն վասն սեւութեան եւ անպտղութեան, միանգամայն եւ վասն վայրայաժութեան ոչ միայն ի ձախմէ, այլեւ հեռագոյն իսկ ի Նմանէ, զի ոչ ասաց թէ՛ «ի ձախմէ Իւրմէ»: Կամ ա՛յլ ազգ. զի նոքա Նովին զօրութեամբ աջակողմեան

¹ Զ ոչ որպէս

² Գործք Բ 1-13

³ Դան. ԺԳ 50-59

⁴ Զ > ընդ

դասուն արժանացան, որ եւ զամենեսեան կամէր, իսկ սոքա անձնիշխանութեամբ ի ձախն խոտորեցան:

Յայնժամ ասացէ Թագաւորն ցայնոսիկ, որ ընդ աջմէն իցեն. «Եկա՛յք, օրհնեա՛լք Հօր Իմոյ, ժառանգեցէ՛ք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի (ԻԵ 34):

Դարձեալ «թագաւոր» վասն վճռին անուանէ, միանգամայն եւ ծանուցանէ թէ՛ անասնոց բաղդատեցի, մի՛ կարծիցէք, թէ բնութեամբ է անպտղութիւնն ի նոսա, որպէս յանասունսն, յայտ ի յագատական կոչմանէս է. զի որպէս Ինքն իշխան, այսպէս եւ դուք, վասն այտորիկ դուք պսակիք, եւ նոքա պատժիցին: «Եկայք,- ասէ,- օրհնեալք Հօր Իմոյ», այսինքն ի վշտաց մեծաց եւ յանիրարութեանց, ի գրկանաց եւ ի հայիտիչ շրթանց, այլեւ ի խստամբեր աշխատութեանց եւ ի հոգեւոր եւ ի մարմնաւոր պատերազմողաց վտանգից գերծեալք, իբր նա ի պէսպէս այլեաց եկայք հանգերո՛ւք յանրոյթ եւ ի խաղաղ նաւահանգիստս: «Օրհնեալք Հօր Իմոյ», - ասէ. այս երկակի լսի. կամ Հօր յայտնութեամբ յայս շնորհս վայելիցէք, քանզի «օրհնեալ»-ն յայտնեալ ասի, կամ զօրհնութիւնն Հօր ժառանգեցէք, որ հաստատէ զտունս որդւոց, որոյ չիք ինչ բարութիւն հանգիտապատիւ այսմ մեծութեան շնորհաց, քանզի բոլորովին բարութիւն է եւ անճառ երանութիւն: «Ժառանգեցէ՛ք». ոչ թէ «առէք» ասէ, այլ «ժառանգեցէ՛ք»՝ իբր զսեփական հայրենիս ձեր. զո՞. «զպատրաստեալն ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի»: Մինչչեւ ձեր լեալ էր, ասէ, գիտէր, զի այդպէս լինելոց էիք, վասն այտորիկ հանգիստս ձեր յառաջագոյն պատրաստեալ էր առ ի Հօրէ, եւ ոչ միայն քան զլինելութիւն ձեր նախկին է փառքն Աստուծոյ, այլեւ քան զստեղծումն աշխարհի՝ ըստ առաքելոյ թէ՛ «Ընտրեաց զմեզ յառաջ քան զլինելն աշխարհի» (հմմտ. Եփես. Ա 4), երզէ եւ Դաւիթ թէ՛ «Մինչչեւ լերինք ստեղծեալ էին, ապաւէն մեր Դու ես» (հմմտ. Սաղմ. 2Թ 2), որ եւ «զկեանս մեր ի լոյս երեսաց Քոց եդեր» (Սաղմ. 2Թ 8): Իսկ թէ ասիցէ որ. «Փոխանակ որո՞յ վաստակոց», ասէ.

Ձի քաղցեայ, եւ ետուք Ինձ ուտել, ծարաւեցի, եւ արբուցիք Ինձ¹, օտար էի, եւ ժողովեցիք զԻս (ԻԵ 35),

¹ Ձ արբուցէք զիս] արբուցիք ինձ

մերկ, եւ զգեցուցիք զԻս, հիւանդ էի, եւ տեսիք¹ զԻս, ի բանդի էի, եւ եկիք առ Իս» (ԻԵ 36):

Տե՛ս աստ զմարդասիրութիւնն, թէ ընդ դոյզն աշխատանաց՝ զո՛րպիսի բարութիւնս փոխարինէ՝ ընդ լոկ հացի եւ ընդ ցուրտ ջրոյ, վասն յարկի եւ սակաւ ինչ ծածկութի: Եւ զի մի՛ ոք ասիցէ թէ՛ «Չայս ոչ ունէի», դնէ զյոյժ դիրքինն, որ ամենեցուն է կարելի՝ տեսանել զհիւանդս եւ ի բանդի զնալ առ կապեալս, զի առ այս թէպէտեւ առողջացուցանելն եւ կամ արձակելն ոչ է քո, սակայն բանի սփոփել եւ ժուժկալութեամբ ի փառս Աստուծոյ համբերել նեղութեանց՝ այդ քո է բողոքովին, քանզի է եւ այս մի կարիս կարօտելոյն՝: «Քաղցեալ,- ասէ,- եւ ետուք Ինձ ուտել». կամ զաղքատին Իր համարի, որ վասն մեր աղքատացաւ, կամ որպէս նա՝ հացի, Ես քում անձինդ փրկութեան եմ կարօտ. արդ յորժամ զնորա քաղցն հացի լցեր, եւ զԻ՛ս քո փրկութեամբդ յագեցուցեր: Այսպէս եւ զայլսն իմասցիս. քանզի որպէս քաղցեալ ի փորձութեանն, այսպէս եւ ծարաւեցաւ վասն քո, որ եւ ի սամարացոյն խնդրէր ըմպել եւ զկենացն ջուր նմին շնորհեաց⁴, նաեւ առ խաչին եւս⁵: Եւ յԻր ստեղծեալ աշխարհս օտարաբար եկ[ե]լաց, զի զօտարացեալքս ի նմանէ առ Ինքն ժողովէր, եւ մերկացաւ ի զինուորաց, զի զխայտառակութիւնն մեր ծածկեացէ, այլեւ ի գուրս ներքինս էջ, զի զընկղմեալքս ի խորս չարին ի վեր կորզեացէ, եւ թէպէտ ոչ հիւանդացաւ Անախտանալին, սակայն առ հիւանդս բազումս եմուտ, զի զտկարութիւնս մեր բարձցէ: Արդ՝ զայսոցիկ փոխարէ՛նն ի քէն պահանջէ եւ զեղեալս առ տսա բարիս յԻնքն ձգէ, որպէս ասէ.

Յայնժամ պատասխանի տացեն Նմա արդարքն եւ ասացեն. «Տէ՛ր, ե՞րբ տեսաք զՔեզ քաղցեալ եւ կերակրեցաք, կամ ծարաի՛ եւ արքուցաք (ԻԵ 37):

Ե՞րբ տեսաք զՔեզ օտար եւ ժողովեցաք, կամ մերկ՝ եւ զգեցուցաք (ԻԵ 38):

Ե՞րբ տեսաք զՔեզ հիւանդ կամ ի բանդի եւ եկաք առ Քեզ» (ԻԵ 39):

Չայս ըստ երկուս եղանակս իմանամք ասացեալ. կամ թէ՛ ասաց նախ թէ՛ քաղցեալ, եւ ետուք Ինձ ուտել, պատասխանի տան

¹ Զ տեսէք
² Զ աշխատանացն
³ Զ կարօտեալն
⁴ Յովհ. Դ 5-14
⁵ Յովհ. ԺԹ 28

այժմ արդարքն՝ հրաժարելով յասացելոցն թէ՛ «Ե՞րբ տեսաք զՔեզ քաղցեալ», զի Դու անկարօտ ես բնութեամբ եւ լցուցիչ կարօտելոց՝ ի ժամու զհրաքանչիւրս կերակրելով¹, եւ զհա՞րդ ծարաւիս՝ որ աղբիւրդ ես իմաստութեան եւ ամենայն գիտութեան, եւ զհա՞րդ օտար՝ որ ընտանիդ ես արարածոց վասն պէսպէս տեսչութեանն, մինչ զի եւ անասնոց անգամ քարոզեցար: Կամ ո՞րպէս մերկ՝ որ զլոյս իբր զհանդերձ ես զգեցեալ²՝ բնակելով միշտ ի նոյն անմատչելի գոյով բնաւից³, այլեւ զգեստ լուսաւորելոցն մկրտութեամբ եղեր⁴: Եւ զհա՞րդ հիւանդ կամ ի բանդի՝ որ լուծիչ ես ախտից եւ արձակիչ ամենայն կապելոց, եւ այն զորդիս մահապարտաց եւ կամ կարկանդութեամբ պարապնդեալս, թողում ասել գտորբսն, զի ոմն ի բանդէ խնդրէր ազատիլ եւ ոմն ի կապանաց արձակիլ, զԴաւիթ ասեմ եւ զԹերունին Սիմէոն⁵: Արդ՝ Դու արարիչ գոյով այսպիսեացս՝ զհա՞րդ կարօտացար ի մէնջ յայտսիկ:

Եւ կամ՝ ցուցանեն մեզ սրբոցն պատասխանիքն, թէ բազում իրաց անգէտ ենք այժմ եւ թէպէտ խնդրենք ուսանել, ոչ կարենք՝ կամ վասն մեր տկարութեանն եւ կամ վասն նորին իրաց անհաստութեանն: Եւ թէպէտ ուսանիմք եւս, սակայն մասնաւոր, այլ ոչ բոլոր. իսկ յորժամ դպրութիւնք բանին, ընդ բազմաց եւ յորունց իմաստիցն եւ այսմ տեղեակ լինիցիմք, այսինքն՝ օրինացն գործոց, որ թէպէտ ի մէնջ կատարի եւ ի փառս Աստուծոյ ասենք եղեալ, բայց թէ յո՞ր սակս, զայն ոչ գիտենք: Այլ թէեւ մեք սակաւ մի նշմարենք, իսկ բազումք բնաւին ոչ գիտեն, զի ոմն փոխարինի սակս կարծէ, եւ կէսք փառաց վասն իմանան զեղեալն, բայց անդանօր բացերեւակի յայտնելոց է⁶, որպէս ասէ.

Պատասխանի տացէ Թագաւորն եւ ասացէ ցնոսա. «Ամէն ասեմ ձեզ. ուրովհետեւ արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց, Ինձ արարէք» (ԻԵ 40):

Հայի՞ս, թէ ո՞րպէս զաղքատացն Իւր համարի, եւ Անկարօտն ի ձեռն նոցա ի մէնջ կերակրի: «Որովհետեւ արարէք,- ասէ,- միում յեղբարցս». ոչ զբազմացն ասեմ, այլեւ ոչ զմիումն եմ մոռացեալ

¹ Սաղմ. 6ԽԴ 15

² Սաղմ. 6Գ 2

³ Ա Տիմ. 2 16

⁴ Գաղ. Գ 27

⁵ Սաղմ. 6ԽԱ 8, Ղուկ. Բ 29

⁶ Ա Կոր. ԺԳ 12

կամ մի մի¹ ի յասացելոցդ եղեալ ի փոքուն յեղբարս: Այսու զաղ-
քատսն Իւր հաւասարէ, քանզի եւ Ինքն «փոքր» կոչեցաւ, միան-
գամայն եւ զնոսա զովէ՝ թէ սոցա արարէք, որ ի բազմաց անծա-
նօքք էին եւ Ինձ միայն ծանուցեալ, որք այլոց արհամարհ եւ ոչ
Ինձ թուէին, բայց յաչս ձեր վասն սիրոյս Իմոյ պատուաւորք փայ-
լեցին, եւ յիրաւի՛ այս, քանզի եղբարք են ձեր ըստ բանին, միան-
գամայն եւ ըստ կրօնից շնորհին ըստ այնմ. «Դուք ամենեքեան
եղբարք էք» (հմմտ. Գործք Զ 26), արդ՛ զոր ինչ սոցա արարէք,
Ինձ արարէք, վասն զի եւ Ես եղէ ըստ մարմնոյ եղբայր ձեր:

**Յայնժամ ասացէ եւ ցայնուսիկ, որ ընդ ահեկէն իցեն. «Երթայք յԻնէն, ա-
նիծեալք, ի հուրն յախտենական, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտա-
կաց նորա (ԻԵ 41):**

*Յորժամ զարդարսն պսակեաց եւ զհանդէս գործոց նոցա
հրատարակեաց, ապա եւ զյահեկեայսն մերժէ. «Երթայք,- ասէ,-
յԻնէն, անիծեալք». ոչ ի Հօրէ, քանզի ոչ եթէ Նա զնոսա անէժ, այլ
գործք իրեանց: Եւ այլ ազգ. զի անդ «Հօր» ասաց, աստ զհամա-
պատուութիւնն ընդ Հօր ցուցանէ, զի մի՛ նուաստ կարծիցի: Եւ
դարձեալ՝ զի եղբայր Ինքն է մեր, եւ սոքա զՆա ոչ կերակրեցին,
յիրաւի յեղբարցն կայանից զնոսա տարագրէ «ի հուրն յախտե-
նական, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա»²:
Տես՛, զի զարքայութիւնն ասաց ի Հօրէ պատրաստեալ ձեզ, իսկ
զհուրն ոչ ձեզ, այլ սատանայի է պատրաստեալ եւ սպասաւորաց
նորա, բայց դուք անձամբ զանձինս արկէք ի կրակ, անձանց մեղ
դիջիք:*

**Չի քաղցեայ, եւ ոչ ետուք Ինձ ուտել, ծարաւեցի, եւ ոչ արբուցիք³ զԻս (ԻԵ
42),**

**օտար էի, եւ ոչ ժողովեցիք զԻս, մերկ էի, եւ ոչ զզեցուցիք զԻս, հիւանդ եւ ի
բանդի, եւ ոչ տեսիք⁴ զԻս» (ԻԵ 43):**

*Կարի զանգթութիւնս նոցա պախարակէ, զի եթէ ոք տեսանէ
զշուն քաղցեալ, համայն ողորմի, եւ զբշնամի մուրացեալ, սակայն
թող զողորմածն, թէւ անագորոյն եւս իցէ, ի զուրբ ողորմութեան*

¹ Զ մի] մի մի

² Զ > նորա

³ Զ արբուցէք

⁴ Զ տեսէք

կարիքն շարժիցէ քաղցոյն եւ կամ ցրտոյն եւ կամ այլոցն եւս, իսկ դուք Արարչիս ձերոյ եւ Տեառն եւ սիրելոյ զայս ո՛չ ախորժեցիք առնել, ապա յիրաւի՝ ուրեմն պատժիք:

Յայնժամ պատասխանի տացն եւ նոքա եւ ասացն. «Տէ՛ր, ե՞րբ տեսաք զՔեզ քաղցեալ կամ ծարաւի, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ, կամ ի բանդի, եւ ոչ պաշտեցաք զՔեզ» (ԻԵ 44):

Ինձ թուի՝ տազնապեալ ի քարշողացն, որք փութացուցանէին ի հուրն՝ ոչ կարացին կատարելապէս զխօսն վճարել, այլ թերի իմն եւ կիսակատար յաւարտն ճեպեցին թէ՛ ե՞րբ տեսաք զՔեզ այսպէս եւ կամ այն եւ ոչ պաշտեցաք զՔեզ, եւ այն, զի բողոքէր միշտ քարոզն, թէ՛ «Որ ողորմի աղքատին փոխ տայ Աստուծոյ» (Առակ. ԺԹ 17), եւ՝ «Երանի ողորմածաց» (Մատթ. Ե 7), եւ թէ՛ «Բարձր ի գլուխ պարծի ողորմութիւն առ դատաստանաւ» (Յակոբ. Բ 13): Վասն որոյ բարութք իմն են ասացեալքս, թէ ոչ պաշտելոյն զՔեզ՝ ոչ տեսանելն է պատճառ: Առ ստութեամբս եւ թանձրամիտք էին, զի գրեթէ տեսեալ էին հացի կամ ջրով կամ մէկն Նմա սպասաւորել, զի Աբրահամ թելտո նկանի եւ որթով ել ընդ առաջ, սակայն ո՛չ իբրեւ զԱստուած, այլ իբրեւ զարս ուղեւորս ընկալաւ, ապա ուրեմն ինքեանք ախտաւորք գոլով՝ վասն այնորիկ զախտաւորս բարբառեցան:

Յայնժամ պատասխանի տացէ նոցա եւ ասացէ. «Ամէ՛ն ասեմ ձեզ, որովհետեւ ոչ արարէք միում ի փոքրկանցս յայսցանէ, եւ ոչ Ի՛նձ արարէք» (ԻԵ 45):

Ունիք, ասէ, զԻս ընդ ձեզ ի ձեռն աղքատացն, բայց որովհետեւ ոչ միում եւ ոչ մի՛ յասացելոցդ արարէք եղբարցդ ձերոց փոքրկանց, եւ ոչ Ի՛նձ արարէք: Փոքունք եւ եղբարք ոչ միայն զվանականս, որ անպաճոյճ ձեռով շրջին, այլեւ զհաւատացեալ ժողովորդս, որք յաշխարհասիրացն արհամարհին եւ այժմ մերձ առ Իս կան, քանզի «յայսցանէ» ասելն զմօտաւորութիւնն ցուցանէ: Կամ՝ «փոքրկանց» զնիւթոյն ասէ՝ ըստ այնմ թէ՛ «Ի փոքրոյ չեղեր հաւատարիմ, զմեծն ո՞ տացէ ձեզ» (հմմտ. Դուկ. ԺԶ 10-11): Վասն որոյ յայսցանէ ի դիւրափխրիցդ եւ յանարգացդ, որ այժմ իբրեւ զոչինչ քամահեալ է յաչս ձեր եւ ոչինչ օգտէ ինչ ձեզ, եւ զայն ո՛չ Ի՛նձ, մանաւանդ քան ձեզ առնէիք, զոր ի վերայ բերէ թէ՛ «եւ ոչ Ի՛նձ արարէք»:

Եւ երթիցեն նոքա ի տանջանսն յախտենականս, եւ արդարքն՝ ի կեանսն յախտենականս» (ԻԵ 46):

Հրաման Նորա իբրեւ հողմ գփոշի վերացուցանէ՝ ի հուրն հոսելով: Իսկ զարդարոցն ոչ ասացաւ թէ՛ երթան, քանզի առ Նմա գյախտենական կեանսն ժառանգեն: «Երթիցեն,- ասէ,- նոքա ի տանջանսն յախտե[նականս]՝»: Թէ՛ որք յիւրեանց ընչից այլոց ոչ օգուտ արարին, ի մշտնջենատրն մատնեցան տանջանս, ապա որք զայլոցն յափշտակեն ազահոութեամբ եւ զրկութեամբ, որո՞ց տանջանաց ոչ լիցին բաժանորդ: Բայց ամաչեսցեն յայսմ վայրի այնորիկ, որք վախճանականս ասեն զտանջանսն. զի թէ տանջանքն՝ եզրական, ապա եւ կեանքն՝ սահմանական: Եւ դարձեալ այս աշխարհ եւ կրկին հրէութիւն եւ վերստին նորոգումն, եւ այս անհունս, զոր մի՛ լիցի մեզ ի հեթանոսական առասպելս անկանել, որք յովմ անգամ շրջագայութիւնս ասեն՝ աշխարհի եւ դարձեալ լինելութիւն:

Իսկ եթէ ընդդէմ բերցէ որ զտէրունական բանն թէ՛ «Որ գիտիցէ զկամս Տեառն եւ արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ զան բազում, եւ միսն՝ սակաւ» (հմմտ. Դուկ. ԺԲ 47-48), այս ոչ եթէ վախճան ցուցանէ տանջանացն, այլ առաւելութիւն եւ պակասութիւն: Ձի որպէս փառքն զանագան՝ ըստ առաքելոյ թէ՛ «Այլ փառք արեգական եւ այլ լուսնի եւ այլ աստեղաց» (Ա Կոր. ԺԵ 41), հրամայէ եւ Փրկիչն թէ՛ «Ի տան Հօր Իմոյ օթեվանք բազում են» (Յովհ. ԺԴ 2): Այսպէս ոմանք անշէջ հրով տանջին, եւ կէսք՝ արտաքին խաւարան, եւ այլք թէպէտ նոյն տանջանօք, սակայն սակաւ ինչ մեղմագոյն, ըստ օրինակի մարմնական ցառոց աչաց կամ ատամանց, զի թէպէտ մի է ցաւն, սակայն աւելի եւ նուազ, որպէս զիտէ անճառ ընտրութիւն արդար դատաստանին Աստուծոյ, եւ այս մշտնջենատր եւ յախտենական, որպէս ասաց:

Դարձեալ թէ՛ որք հակաճառիցէ, եթէ մեղքն վախճանական է, տանջանքն ընդէ՞ր է յախտենական, ասասցուք՝ նախ՝ ըստ այնմ օրինակի եւ արդարութիւնն է վախճանական, զի յորժամ մեռանի մարդ եւ գործն խափանի, ապա ուրեմն եւ ոչ փառքն լիցի անվախճան: Եւ երկրորդ՝ ասեն ըստ երիս յեղանակս՝ նախ՝ ի Գրոց,

¹ Զ > յախտե[նականս]

² Զ առնեն

³ Զ նախ թէ

եւ ապա՝ ի մտաց, եւ երբորդ՝ ի բնական իրաց: Ի Գրոց Եսայի¹ ասէ. «Որդն նորա ոչ մեռանի, եւ հուրն ոչ շիջանի» (հմմտ. Ես. ԿԶ 24), եւ Դաւիթ թէ՛ «Գնասցեն յազգ հարց իրեանց եւ մինչեւ յաիտեան զոյս մի՛ տեսցեն» (հմմտ. Սաղմ. ԽԸ 20), եւ Յովհաննէս թէ՛ «Ելանէր ծուխ նորա՞ յաիտեանս յաիտենից» (հմմտ. Յայտ. ԺԹ 3): Իսկ մտածութեամբ՝ զի թէ Աստուած յաիտենական է, եւ մեղքն առ Աստուած է, ապա ուրեմն եւ մեղքն յաիտենական: Եւ դարձեալ՝ զի յորժամ չդառնայ որ ի մեղաց մինչ ի մահ, օրինակ իմն եւ մեղքն զկնի մահուանն անմահ մնայ՝ ըստ առաքելոյ թէ՛ «Թագաւորեաց մահ յԱդամայ...» (Հռոմ. Ե 14), եւ թեպէտ «պակասին» ըստ Դաւթայ, սակայն ո՛չ մեղքն, այլ «մեղաւորքն»³: Եւ դարձեալ զի թէ դատաստանն Աստուծոյ արդար է, ապա եւ⁴ յաիտենական, որպէս ի մարմնի դատաւորաց յորժամ արդարութեամբ դատեն տանջելով զոր կամ պսակելով, յաիտենական է եւ անվախճան վասն արդարութեանն, քանի՞ առաւել Աստուծոյն: Իսկ ի բնական իրաց ծանուցից օրինակաւ, զի վաճառել զինչս ժամանակաւոր է, իսկ որ ստացաւ՝ յաիտենական ստացաւ: Դարձեալ հարուած վիրի ժամանակաւոր է, իսկ սպին՝ յաիտենական: Դարձեալ՝ անկանել ի վիհ ի միում ժամանակի լինի, իսկ մնալ անոր յաիտենական է: Դարձեալ՝ փորել զաչս ի միում նուագի լինի, բայց կորութիւնն յաիտենական է: Դարձեալ՝ ըմպել⁵ զթոյնս ըստ պահու է, այլ մահ յաիտենական գործէ: Վասն այտորիկ ասէ Տէր թէ՛ «երթիցեն նոքա՞ ի տանջանսն յաիտենականս, եւ արդարքն՝ ի կեանսն յաիտենականս»:

ԳԼՈՒԽ ԻԶ

Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս⁷ զամենայն զբանս զայստիկ, ասէ ցաշակերտսն Իւր (ԻԶ 1).

¹ Տ է սա, զի

² ՏԶ նոցա

³ Սաղմ. ԵԳ 3 5

⁴ Զ > եւ

⁵ Զ ըմբել

⁶ Զ երթան մեղ՝] երթիցեն նոքա

⁷ Զ > Յիսուս

«Գիտէք, զի յետ երկուց ատուրց Չատիկ լինի, եւ Որդի մարդոյ մատնի ի խաչ ելանել» (ԻՉ 2):

Յորժամ զամենայն կատարելապէս ծանոյց՝ սկսեալ յաւերմանէ անտի Երուսաղէմի մինչ ի լրումն աշխարհի՝ ճառելով զնեղութեանցն եւ զվշտացն որ ի ժամանակս նեռինն, այլեւ զհաւատոց եւ զգործոց եւ զշնորհաց, համայն եւ զգալուստն Իւր փառօք եւ զորոշումն դատաստանին, եւ զվճիռն յաւիտենական՝ արդարոց եւ մեղաւորաց, ապա դառնայ առ աշակերտսն եւ ասէ. «Գիտէք, զի յետ երկուց ատուրց Չատիկ լինի, եւ Որդի մարդոյ մատ[նի]¹»: Չայս ասելով կամեցաւ ի մօտաւոր կանխագիտութենէս եւ զհեռաւորն հաւատարիմ առնել: Այլեւ ցուցանէ, թէ զիտէ իսկ ստոյգ զժամանակս չարչարանաց եւ խաչին, զոր ի Չատիկի տօնին առնելոց էին, որով յայտնի կամաւորն մահ. նաեւ ի զգուշութիւն մատնչին նախաճառէ զայս: Եւ դարձեալ զի ոչ ասաց, թէ՛ «Գիտէք, զի յետ երկուց ատուրց խաչիմ», այլ թէ՛ «Չատիկ լինի, եւ Որդի մարդոյ խաչի», զի յայտ արասցէ, թէ նոր իմն խորհուրդ եւ տօն եւ ամենաժողով բարեկենդանութիւն մահն Իմ լինելոց է հաւատացելոց, մանաւանդ թէ՛ արդարոցն, որք ի յաւիտենական կեանսն արշաւեցին, սկիզբն եւ արմատ ի փրկութենէ չարչարանաց Իմոց, զոր Չատիկն նշանակէ, առնելոց է, քանզի այս իսկ է հազարամեայ արքայութիւնն ըստ տեսութեանն Յովհաննոս աւետարանչի², որով խրախանան արդարքն ի կեանս գիտութեամբ խորհրդոյն եւ հաղորդութեամբ չարչարանաց Մարդացելոյն յուշ առնելով նոցա զփրկութիւն երախտեաց հնոյ Չատիկին, որ յԵզիպտոս գործեցան, որում փառք յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Յայնժամ ժողովեցան քահանայապետքն եւ դպիրք եւ ծերք ժողովրդեանն ի սրահ քահանայապետին, որում անուն էր Կայիափա (ԻՉ 3):

Չկնի բանիցն եւ արդիւնքն հետեւեցան, զի ասաց թէ՛ «մատնի Որդի մարդոյ», եւ նոքա իսկոյն յայն ժողովեցան խորհուրդ: «Քահանայապետքն,- ասէ,- եւ դպիրք եւ ծերք ժողովրդեանն». բազմութիւն քահանայապետից զբալկումն հրէական կարգացն ցուցանէ, թէ սկիզբն էառ լուծանելոյ, քանզի Մոսէս հրամայեաց մի քահանայապետ լինել եւ յետ վախճանի նորա այլ ոմն ի տեղի նորա

¹ S > մատ[նի]

² Յայտ. Ի 1-6

կարգել¹, իսկ աստ յորովս ցուցանէ: «Քահանայապետքն», - ասէ. այսինքն ելեալքն ի քահանայապետութենէ տակաւին կենդանի գոլով, եւ այլ ոմն կաշառօք զտեղի նորա յափշտակելով, որպէս վասն Չաքարիայ ասէ, թէ էր ի դասակարգէ Աբիա՛յ: «Եւ դպիրք եւ ծերք ժողովրդեանն». տես զիրացն անչափ ապականութիւն, թէ ո՛րպէս զյխաւորքն ժողովեալ յանօրէն գործս մտաբերէին, որպէս ասէ, թէ «ի սրահ քահանայապետին, որում անուն էր³ Կայիափա», որ քահանայապետ էր տարւոյն այնորիկ, ժողովեցան, զի անտի առնուցուն իշխանութիւն, ուստի պարտ էր խափանումն գործել՝ ըստ Օրինացն թէ՛ «Մի՛ եփեցես զգառն ի կաթն մօր իւրոյ» (Ելք ԻԳ 19), եւ «զհաւ ի վերայ բունոյ իւրոյ մի՛ ըմբռնեսցես» (հմմտ. Բ Օր. ԻԲ 6): Դարձեալ ի սրահ ժողովելն զարտաքսելն նոցա նշանակէ յիշխանութենէ քահանայապետութեանն եւ ի ճոխ պատուոյն:

Եւ արարին խորհուրդ, զի նենգութեամբ կայցեն զՅիսուս եւ սպանցեն (ԻԶ 4):

Չպատճառ ժողովելոյն ասէ, թէ ի խորհուրդ ժողովեցան, իսկ խորհուրդն՝ ո՛չ զի հաւատասցեն եւ կամ զՕրէնսն քննեսցեն եւ զՆա արդար ցուցցեն, այլ զի գաղտ ըմբռնեսցեն եւ սպանանիցեն, քանզի վասն երկուց իրացս այսոցիկ ի քնին⁴ մտանէին:

Բայց ասէին, թէ մի՛ ի տօնի աստ, զի մի՛ խռովութիւն լինիցի ի ժողովրդեանն (ԻԶ 5):

Ամենայն ուրեք զմարդկան երկիրդն գերագոյն Աստուծոյ պատժոցն դնէին, ոչ ասէին զի մի՛ պղծիցիմք ի տօնիս, այլ՝ զի մի՛ ամբոխիցի ժողովուրդն, քանզի զիտէին զպարզամիտ ժողովուրդս վասն նշանացն հաւատացեալ ի Նա, թէպէտ ինքեանք այրէին ցասմամբն՝ որ ընդ Նմա: Կամ վասն ազահութեան, զի ասացին՝ զի մի՛ ժողովուրդն լուեալ զայս ցրուիցի, եւ շահ տօնին պակասիցի. բայց որպէս ասէ Սողոմոն թէ՛ «Խորհուրդ ամբարշտի վաղվադոտ եւ դիրիմք են» (հմմտ. Առակ. ԺԲ 26), ո՛չ յայնս կացին մնա-

¹ Թիւք Ի 22-28

² Ղուկ. Ա 5

³ Զ > որում անուն էր

⁴ ՏԶ քննիցն

ցին¹, գոր խորհեցան նախ, այլ շրջեցին զքանս իւրեանց: Քանզի յորժամ զմատնիչն տեսին, ոչ անսացին ժամանակին, այլ անդէն ի տօնին սպանին: Իսկ թէ այնպէս ծարաւիք էին արեանն Նորա, եւ ծանր թուէր տես Նորա նոցա, ընդէ՞ր մինչ ցայն ժամ ներեցին եւ յայնժամ ըմբռնել խորհէին: Նորա յամենայն ժամ սպանանել խորհէին, բայց Նա խոյս տայր ի միջոյ նոցա, զի ինքնիշխանութեամբ զայր ի չարչարանս եւ որպէս ճնճողով մատներ զԻնքն ի ձեռս որսորդաց, թէպէտ նորա ոչ իմանային, այլ շլացութեամբ մտաց զամենայն պատահումն կարծէին եւ յիմարութեամբ գործէին: Այլ Ինքն Յիսուս զչարութիւն նոցա ի պէտս տեսչութեան Իւրոյ ի կիր արկանէր:

Իբրեւ եկն Յիսուս ի Բեթանիա՝ ի տուն Սիմոնի բորոտի (ԻՉ 6),

մատեաւ առ Նա կին մի, որ ունէր շիշ իւղոյ ծանրագնի, եւ թափեաց ի գլուխ Նորա ի բազմականին (ԻՉ 7):

Ոչ վայրապար յիշէ զանուն քաղաքին Բեթանիայ, այլ զի ուսանիցիս, թէ կամա՛ւ զայ ի չարչարանս, զի որ յառաջ քան զայն ժամանակն փախչէր ի նոցանէ, յորժամ առաւել բորբոքեցաւ նախանձ նոցա, յայնժամ հուպ զայր իբրեւ հինգ վտաւանաւ: «Ի տուն Սիմոնի բորոտի». ընդէ՞ր յիշէ զբորոտութիւն առն. զի ցուցցէ, թէ ուստի՞ համարձակեցաւ առ Նա կինն. քանզի բորոտութիւնն կարի ինն գարշելի եւ պիղծ ախտ թուէր, ետես, զի զնա բժշկեաց Յիսուս, քանզի ոչ յանձն առնոյր համարձակիլ², եթէ ոչ էր ի վերայ հասեալ, եթէ Նա, որ առ բորոտին բազմեցաւ եւ զհոգոյ եւ զմարմնոյ Նորա պղծութիւն սրբեաց, սրբեսցէ եւ զիմս: Վասն այսորիկ ասէ. «Մատեաւ առ Նա կին մի, որ ունէր շիշ իւղոյ ծանրագնի». ուստի՞ էր այնպիսի ծանրագին իւղ կնոջս այսորիկ: Գիտելի է, ինձ թուի, թէ ի թագաւորական տոհմէ էր, որպէս ոմանք ասեն դայենակ գոլ զսա Հերովդէի առաջնոյ, կամ թէ մեծագոյն որ էր՝ տէր գոլով Բեթանիայ եւ Մագդաղեայ: Արդ՝ մատեաւ, ասեն, կինն վտահանալով յիրն, որպէս ասացի, ահիւ եւ դողութեամբ վասն մտացն խղճի, «եւ թափեաց ի գլուխ Նորա ի բազմականին»: Եւ թէ զիա՞րդ իշխեսաց, թուի թէ՛ բազում երկիւղածութիւն ունէր եւ բազում փոյթ, վասն այնորիկ ի գլուխն թոյլ ետ թափել զիւղն. զի թէ

¹ Տ եւ մնացին

² Զ համարձակել

մարդ լինել և ընդ յղութեամբ մտանել ոչ խորշեցաւ, չեն ինչ գարմանք, թէ եւ գայս ընդունեցաւ: Եւ կնոջն մերձենալ առ Ինքն անսայր օրինակի վասն, որպէս երբեմն Հայրն ճենճերից ծխոցն ներէր:

Եւ յիշեն զսա չորեքին¹ աւետարանիչքն. զոր եւ քննեալ սրբոցն ոմանք ասեն, թէ Յովհաննոն առանձին է վասն պարկեշտութեանն, զի քոյր էր Ղազարո՞ւ². եւ այլք զՂուկասուն զատեն, զի այլքն ի Բեթանիա եղեն, իսկ այն ի Նային քաղաքի³. իսկ կէսք մի եւ նոյն գոյ զՄատթէոսին եւ զՄարկոսին ասեն⁴, իսկ որիշ՝ զՂուկասուն, եւ այլ՝ զՅովհաննոն: Բայց եւ ասեմ ստուգեալ յաւետարանչացն եւ ի յոգունց մեկնչաց այսպէս, թէ մի եւ նոյն է կինս այս, զոր չորեքին աւետարանիչքն պատմեն, եւ անուն սորա Մարիամ, զոր Մագդաղենացի անուանեն: Սա էօժ զՏէրն երեք անգամ. մին յորժամ ի պռոնկութենէ դարձաւ, զոր Ղուկաս ասէ, եւ մին յորժամ զեղբայրն յարոյց, զոր Մատթէոս եւ Մարկոս եւ Յովհաննէս պատմեն, եւ մի՝ ի գերեզմանն, զի պատրաստեցին խունկս եւ իւղս, զի երթիցեն եւ օձցեն զՆա⁵, թէպէտ ոչ օձին, զի յարուցեալ էր, այլ ի սոցա կամքն օձեալ եղի:

Եւ զի սա այն է, որ յառաջ պռոնկի էր ըստ Ղուկայ, յորմէ եօթն դէն ելեալ էր⁶, զոր ոմանք դիւ ասեն, եւ այլք՝ թէ եօթն ոգի մեռեալ էր վասն նորա ի սիդէիացն, եւ կէսք զխորհրդոց ասեն, որ եւ էօժ եւ հերովն ջնջէր, Յովհաննէս վկայէ թէ՝ «Այս այն Մարիամն է, որ էօժ զՏէրն իւղով եւ ջնջեաց զոտս Նորա հերովն իւրով» (Յովհ. ԺԱ 2). այս առաջին օծումն է: Եւ յառաջ տանի եւ զերկրորդն ինքն ասէ, թէ եկն Յիսուս ի Բեթանիա, եւ Մարթայ ի սպասու կայր, եւ Ղազար մի էր ի բազմելոցն⁷, եւ առեալ Մարիամ լիտր մի իւղոյ նարդեան ազնուի՝ էօժ զգլուխն Յիսուսի, զոր Մատթէոս եւ Մարկոս ասեն մերձ առ խաչին: Եւ երեքին օծումն խորհուրդ ունին կարեւոր. առաջինն յորժամ յը մեղաւոր իցէ եւ դառնայ եւ ողորմութիւն առնէ, ըստ Դանիէլի՝ «Չմեղս քո ողորմութեամբ քաւես[ցես]» (Դան. Դ 24), այս ոտիցն է օծումն, վասն որոյ եւ հերն

¹ Գ չորեքին

² Յովհ. ԺԲ 1-8

³ Ղուկ. է 36-50

⁴ Մարկ. ԺԴ 3-9

⁵ Մարկ. ԺԶ 1

⁶ Ղուկ. Ը 2

⁷ Յովհ. ԺԲ 1-2

նշանակե, որով սրբեր, զի հերն անզգայ է եւ ատելորդ, որպէս եւ ինչքն, զորս աղքատն ստանայ, է ոտքն Տեառն, որ ի կեանս յայս վերջին եւ փոքր թուին, եւ այնու մաքրին ի մեղաց: Եւ երկրորդն՝ որ զգլուխն էօժ՝ յայս խորհուրդ հայի, զի մարդ յորժամ դառնայ ի մեղացն, բարի գործէ եւ իւր գործովքն զՔրիստոսի գլուխն օժանէ, զի «գլուխ Քրիստոսի Աստուած է» (Ա Կոր. ԺԱ 3) ըստ այնն. «Տեսցեն զգործս ձեր բարիս եւ փառաւորեսցեն...» (Մատթ. Ե 16): Իսկ եթէ ոք ընդդէմ բերցէ զաստուան Դաւթի, թէ գրեալ է «Իւր մեղատրի մի՛ օժցէ զգլուխ իմ» (Սաղմ. ԾԽ 5), ասացուք, թէ որչափ ի մեղսն է, ոչ է ընդունելի: Եւ երրորդ՝ օժ զբոլոր մարմինն՝ այնորիկ է նշանակ, զի ի վերայ բարի գործոց զինքն ի մահ տայ, որպէս Մարիամ, զի ոչ ի զինուորացն երկեալ եւ ոչ ի հրէիցն, այլ զնաց զմարմինն Տեառն օժանել: Այսպէս [որ] վասն սիրոյն Աստուծոյ զմարդկան երկիւղ արհամարհէ եւ մեռանի կամ չարչարի վասն ճշմարտութեանն, նա է, որ զբոլոր մարմինն օժանէ զՔրիստոսի՝ զմահն Նորա յանձն կրելով:

Իբրեւ տեսին աշակերտքն, բարկացան եւ ասեն. «Ընդէ՞ր է կորուստ այդ իւրոյդ (ԻՉ 8).

զի մարթ էր վաճառել զդա մեծագնի եւ տալ աղքատաց» (ԻՉ 9):

Ուստի՞ ունէին զայս միտս աշակերտքն. յայտ է, թէ ի Վարդապետէն լուեալ էին «Չորորմութիւն կամիմ եւ ոչ զպատարագ» (Ովստէ Զ 6, Մատթ. Թ 13), եւ հրէիցն մեղադրէր, եթէ թողին «զձանր ծանր Օրինացն՝ զդատաստանս, զորորմութիւն եւ զհաւատ» (Մատթ. ԻԳ 23), եւ ի լերինս զսոյն վարդապետեաց՝ Արդ՝ նոքա յայս խորհուրդ բարկացան, բայց Նա ի միտս կնոջն հայեցեալ թոյլ տայր, իսկ աշակերտքն զմիտս Տեառն ոչ զհտէին, վայրապար մեղադրէին, թէ մարթ էր վաճառել զդա մեծագնի եւ տալ աղքատաց: Չայս ասելով՝ զկնոջն առատութիւն յայտ արարին, թէ որչափ ինչ յիւղն ծախեսաց եւ որպիսի լրջմտութեամբ կալալ յանձին օժանել զՏէրն: Բայց ինձ թուի, թէ ոչ այնչափ ինչ արժէր իւղն, այլ ի գլուխն Տեառն մերձենալովն աստուածութեանն հոտ բուրեաց ընդ իւրոյն, ընդ որս զարմացեալ գովեցին: Իսկ առ ի միտս՝ իւղն ընչից ասացոյց է. եթէ ոք զարդիւնս իւր ի փարթամս

¹ Մատթ. Ե 42, 44, Զ 1-4

ծախէ՛ ի կորուստ է, զի գոյ հնար ի յաղքատս տալ, որով զմեծագինն ստանայ՝ զերկնից բարիս. ա՛յս է վաճառելն:

Գիտաց Յիսուս եւ ասէ ցնոսա. «Զի՞ աշխատ առնէք զկինդ, զի գործ մի բարի գործեաց դա յԻս (ԻԶ 10):

Նորա ի ծածուկ քրթմնջեցին, իսկ Տէրն մեր յայտնեաց, որպէս զի զաշակերտսն հաւանեցուցէ, միանգամայն եւ զկինն մխիթարեցէ: «Զի՞ աշխատ առնէք,- ասէ,- զկինդ»: Չայս թէպէտ ի դէմս կնոջն եհան, այլ ամենեցուն օրէնս դնէ, թէ մի՛ անդէն ի սկզբանն ծանրագոյն ինչ ի տկարացն պահանջել, մանաւանդ յորժամ բարին գործեալ լինիցի. թէպէտ եւ չիցէ յոյժ պիտանի, պարտ է ընդունել եւ յառաելութիւն ածել, որպէս ասէ թէ՛ «Գործ մի բարի գործեաց դա յԻս», այսինքն՝ զի բազում են բարեաց գործոց մասունք, մի է եւ այդ ի բազմացն: Եւ թէ զի՞նչ է, յառաջ տարեալ ասէ.

Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, բայց զԻս ո՛չ հանապազ ընդ ձեզ ունիք (ԻԶ 11):

Այսու գեղեցիկ իմն աւանդութիւնս հաստատէ, թէ ոչ է պարտ օրինօք գօրէնս լուծանել, զի մի՛ ինքն ինքեան հակառակ կարծիցի, քանզի թէպէտ օրէնք է ողորմութիւնն, սակայն յորժամ տեսանիցես գոք, թէ սպաս ինչ կազմիցէ կամ այլ ինչ զարդս յորմս եւ կամ ի՛ յատակս եկեղեցոյ առնիցէ, դու մի՛ կասեցուցաներ զյօժարութիւն նորա՝ հրաման տալ վաճառել կամ եղծանել. ապա թէ յառաջագոյն հաւանեցուցանես տալ աղքատաց, բարոք է այն: Բայց զի՞նչ է ասելն՝ «Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք» եւ զԻս՝ ոչ. ո՞չ իսկ ասաց թէ՛ «Ընդ ձեզ եմ զամենայն աւուրս» (Մատթ. ԻԸ 20): Այսպէ՛ս իմա, զի երկու են կատարեալ առաքիւնութիւնք՝ իբր գրոհք եւ ամոքք՝ աստուածսիրութիւն եւ մարդասիրութիւն. թէպէտեւ նոյն ինքն մարդասիրութիւնն աստուածսիրութիւն ասացեալ է, բայց այլ է աստուածսիրութիւնն², եւ այլ է մարդասիրութիւն, ապա թէ ոչ՝ եւ ոչ իսկ³ յերկուս բաժանեալ էր: Եւ արդ՝ զի այս այսպէս է, եւ յաճախագոյն է երեւելեացս տեսութիւն քան զաներեւութիւն, որչափ ի մարմնի եմք ընդելեալք ի ձեռն զգայութեանց եւ հազիւ զամբ յընտրութիւն աներեւութիւն, զայս գիտա-

¹ Զ > ի

² Զ աստուածսիրութիւն

³ Զ > իսկ

ցեալ Տէրն ասաց, թէ միշտ աղքատաց տեսող էք եւ ի տեսանելն զնոսա¹ կարօտ՝ կարեկից եւս լինիք, իսկ Ինձ՝ ոչ բնաւ եւ կամ ուր ուրեք, որպէս ասացի, ապա ուրեմն ոչ է պարտ զառաջադրութիւնս զայս խափանել: Քանզի ոչ ասեմ զայն, թէ ստուգապէս մեռանելոց էր, եւ այլ ոչ տեսանէին զՆա մարմնով յերկրի, թէպէտեւ աստուածութեամբն միշտ ընդ նոսա էր, վասն այնորիկ ասէր զայն, որպէս ցուցանէ յաջորդաւ²:

Արկանել դորա զիող ի մարմին Իմ՝ առ ի թաղելոյ զԻս նշանակեաց (ԻՉ 12):

Չմարգարէութիւնն Ովսէի, ասէ, արդեամբք առ Իս մերձեցոյց, թէ իողով ընտրանաւ զգլխատրս օժանէին³. եւ ի ձեռն օծման իողող զաստուածութեանն օծումն մարմնոյս ծանոյց, այլեւ զմահն Իմ աւետարանեաց, յորոց օժելոցս եմ կրկին ի կանանց զգաստից, որոց եւ սա նախընթաց եղեւ, ոչ միայն իողովդ, այլեւ զշիշն եւս բեկանելով, որ զմարմնոյ Իմոյ յայտնապէս գուշակեաց զմահ, քանզի իողն աստուածութեանն, որով⁴ յօրինակ տանն ամենայն երկիրս լցաւ, իսկ շիշն՝ մարմնոյն օրինակեցաւ, յորմէ եւ մեր ուսանիմք, թէ պարտ է օժանել զննջեցեալն:

Բայց ամէն ասեմ ձեզ, զի ուր եւ⁵ քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ, խօսեսցի եւ զոր արար դա՝ ի յիշատակ⁶ դորա» (ԻՉ 13):

Ոչ զկնոջ ուղղութիւնն եպերեաց, զի մի՛ յուսահատեսցի, այլ զհաւատովն իողելն⁷ ի նմանէ՝ մարգարէութիւն ասաց, եւ ոչ աշակերտացն սաստեաց, քանզի ոչ եւ նոքա վասն չարակնութեան, այլ⁸ ի պատճառս ողորմութեան կազեցան: Իսկ թէ Յովհաննէս ասէ, թէ Յուդա ասաց⁹, կամ որպէս ասացին այլ է այն, եւ կամ այլ՝ աշակերտքն, որք բարկացան, եւ յորժամ լուան զՏեառն հրամանն, հնազանդեցան եւ զովեցին միանգամայն, իսկ նա ոչ դա-

¹ ՏԶ զնա

² Զ յաջորդիւդ

³ Ովսէ Ը 10

⁴ Զ որ

⁵ Զ > եւ

⁶ Տ յիշատակի

⁷ Զ եղեալն

⁸ Զ այլեւ

⁹ Յովհ. ԺԲ 4

դարեր ի քրթմնջելոյ, քանզի գող էր, որպէս ասաց¹: Ապա թէ ասի-
ցէ որ, թէ Յուդայի ընդէ՞ր ոչ սաստեաց, ասասցուք, զի չէր իսկ ժա-
մանակն, վասն զի առ ընթեր էր խաչն, եւ նա հանդերձեալ էր
մատնիչ լինիլ, զի մի՛ որ ասացէ, թէ սաստն այն եղև պատճառ
մատնութեան նորա:

«Ուր եւ քարոզեսցի ատետարանս այս ընդ ամենայն աշ-
խարհ»: Նախ՝ աշակերտացն ի մխիթարութիւն է այս, քանզի
զմահն ստուգեաց ի ձեռն իւղոյն, ասէ այժմ, թէ յետ խաչին այն-
չափ է ծագելոց գորութիւն Նորա, մինչ զի ընդ ամենայն երկիր
տարածելոց է քարոզութիւն ատետարանին եւ ի հեթանոսս հասա-
նելոց: Եւ երկրորդ՝ ի գովութիւն կնոջն եւ յարձանագրութիւն յիշա-
տակի նորա² ասաց զայս, եւ յիրաւի եղև, եւ ոչ որ կարէ ուրանալ
զճշմարտութիւնն, քանզի ամենայն ուրեք ուր եւ երթիցես ընդ
տիեզերս, տեսանիցես զկնոջէն պատմեալ, քանզի թէպէտ ոչ երե-
ւելի որ էր եւ ոչ վկայս բազում ունէր եւ ոչ ի թատերս կամ ի հրա-
պարակի ուրեք եղև, այլ ի տան միոջ բորոտի, սակայն հնչեաց
գորութիւն այնորիկ, որ ասացն, ընդ ամենայն աշխարհ ի վկայու-
թիւն³: Քանզի բազում թագաւորաց եւ քաջաց յիշատակ լռեցին,
որք բազում գորութիւնս արարին եւ քաղաքս պարսպաւորս եւ
դղեակս անառիկս շինեցին, եւ յոլով ազգս ընդ ծառայութեամբ
արկին, եւ կնոջ միոյ գործ՝ այնչափ ժամանակս առանց եղծման
յիշատակի ի մէջ պարսից եւ հնդկաց եւ թրակացոց եւ այլոց ազ-
գաց եւ կղզեաց եւս, յորմէ ուսանիմք զմարդասիրութիւն Նորա:

«Չոր արար դա՛ ի յիշատակի դորա»: Կամ՝ զի օծեաց իւղով,
որպէս ասացաւ, կամ թէ մահուն իրքն պատմի, զոր արար դա օրի-
նակաւ՝ յիշեսցի միշտ առաջի ազգաց՝ ըստ այնմ. «Չայս արարէք
առ Իմոյ յիշատակի» (Դուկ. ԻԲ 19): Գրէ եւ Պօղոս թէ՛ «Քանիցս
անգամ ուտիցէք զհացս զայս՝ զմահն Տեառն պատմեսցիք»
(հմմտ. Ա Կոր. ԺԱ 26), որպէս եւ յիշատակի իսկ: Իսկ թէ որ ասի-
ցէ, թէ ընդէ՞ր հոգեւոր ինչ ոչ ասաց կնոջն, այլ ցանկ զյիշատակն
պատմել, ասասցուք, թէ այսու եւ այն եւս համարձակութիւն գոր-
ծեաց, զի թէ գործն բարի է, յայտ է թէ՛ եւ վարձուց արժանի:

¹ Յովհ. ԺԲ 6

² Գ > նորա

³ Գ > վկայութիւն

Յայնժամ գնաց մի յերկոտասանիցն՝ անուանեալն Յուդա Սկարիովտացի, առ քահանայապետսն եւ ասէ (ԻՉ 14).

«Ձի՞նչ կամիք տալ ինձ, եւ ես մատնեցից զՆա ձեզ» (ԻՉ 15):

Ե՞րբ. յորժամ զայս ամենայն ասաց եւ զթաղելոյն ճառեաց, եւ զաւետարանն ընդ ամենայն տիեզերս քարոզել հրատարակեաց, յորոց ստրջանալ եւ երկնչել պարտ էր, միանգամայն եւ ակն ածել, գոր եւ կանայք իսկ պատուէին, նա զգործ սատանայի գործէր եւ առ մատնութիւնն արշաւէր: «Գնաց,- ասէ,- մի յերկոտասանիցն».

ընդ ճշմարտութիւնն աւետարանչիս զարմանալ պարտ է, որ ոչ թագուցանէ զիրս, որ նախատանաց թուիցի, որ եւ հնար գոյր ասել խառնիխտուն թէ՛ «ոմն յաշակերտաց Նորա», քանզի էին եւ այլք՝ թող զերկոտասանսն, իսկ սա աւանիկ ասէ, թէ յառաջին գնդէն յագնուականացն եւ յընտրելոցն, ի Պետրոսեանցն եւ Յովհաննիսեանցն. եւ զայս ոչ միայն սա, այլեւ այլքն եւս ուշ եղեալ հոգ տանին զճշմարիտն քարբառել: «Անուանեալն Յուդա Սկարիովտացի».

ընդէ՞ր զնա յայտնապէս նշաւակէ, քանզի էր եւ այլ Յուդա, որ Թադէոսն կոչեցաւ, յորմէ՛ զմատնիչն բաժանէ՛ քաղաքին անուամբ Սկարիովտացի կոչելով: Բայց դու տես, զի ո՛չ ասէ «Յուդա Սկարիովտացի», այլ թէ՛ «անուանեալն Յուդա», քանզի Յուդայն խոստովանող լսի, եւ սա զայս պիտակ անուամբ ունէր, իսկ արդեամբ ուրացող գտաւ:

«Առ քահանայապետսն եւ ասէ. «Ձի՞նչ կամիք տալ ինձ, եւ ես մատնեցից զՆա ձեզ»: Տես, թէ ո՞րչափ չարիք է՛ Յուդայի, յորժամ ինքն երթայցէ եւ արծաթոյ վասն, եւ այնպիսի՛ արծաթոյ: Իսկ Ղուկաս ասէ, թէ չոգաւ քանս եղ ընդ իշխանսն², եւ քանզի ընդ միմեանս մարտնչէին հրէայքն առ ի զգուշութիւն ստահակութեան նոցա, կացուցին ի վերայ նոցա զհնուորս հոռոմք, քանզի անկեալ եւս էր այնուիւնտեւ իշխանութիւն նոցա՝ ըստ մարգարէութեանն, առ նոսա չոգաւ թէ՛ «Ձի՞նչ կամիք տալ»: Այսու զջերմութիւն նորա ի չարիսն ցուցանէ, զի ո՛չ ասէ՛ զայս ինչ եւ զայս տուք ինձ, այլ թէ՛ զինչ եւ կամիք տալ՝ ի նոցա վճիռն ձգելով զկաշառն:

«Եւ նոքա կշռեցին նմա երեսուն արծաթի»: Ընդէ՞ր ետուն նմա արծաթ. ինձ թուի, թէ վասն ժողովրդեանն, զի յորժամ յաշակերտէն մատնեցի, ասացեն. «Թէ ոչ էր մահապարտ, ո՛չ մատնէր

¹ Զ էին

² Ղուկ. ԻԲ 4

աշակերտն ի մահ, ապա ուրեմն պարտ է ձեզ հաւանիլ եւ ոչ առաւել քան զաշակերտն զՆա սիրել»։ Եւ դարձեալ զմարգարէութիւնն լցին, զոր ի դիմաց Տեառն ասաց Չաքարիաւ «քանանացի» կոչելով զհրէայս¹, այսինքն առ զնօղ մահու Նորա. «Թէ բարտք թուի [յաչս ձեր], տո՛ւք զվարձս իմ, ապա թէ ոչ՝ զրո՛յց արարէք»։ Եւ կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթի» (Չաք. ԺԱ 12), քանզի ոչ համարձակեցաւ մարգարէն զրել յայտնապէս զգինս վաճառոյ Տեառն իւրոյ, զոր իբր զժառայ մի վաճառեցին, որպէս զՅովսէփ՝ եղբարքն նորա², որպէս զրէ Ամովս թէ՛ «Վաճառեցին զարդարն ընդ արծաթոյ» (Ամովս Բ 6), որ էր Նա Ինքն Փրկիչն Յիսուս, եւ տնանկին՝ զինս կօշկաց արարին՝ զՅովհաննէս, որ վաճառեցաւ ի սպանումն վասն դստերն Հերովդիայ։ Այլ փոխեաց զգինն եւ «վարձս» անուանեաց ոչ վայրապար, այլ զի յայտ արասցէ, թէ աշխատեցաւ վասն նոցա Տէր մեր, եւ ոչ արարին Նմա պատիւ։

«Կշռեցին,- ասէ,- նմա երեսուն արծաթի»։ Երեսուն երեք³ տասն. երեք՝ վասն երից⁴ ամացն ախտահալած բժշկութեանց, զոր արար Տէր, կամ երեսուն ամին յառաջ, զոր պարտին Փրկիչն մերոյ, զի լցոյց զքաղցեալս նոցա եւ կեցոյց զմեռեալս նոցա։ Արդ՝ «երեսուն արծաթի» ասէ՝ կամ թէ՛ արծաթի էր դահեկան ժամանակին, կամ պատկեր էր երեսուն արծաթի, որպէս ոմանք ասեն, զոր բերին մոզք Տեառն մերոյ, եւ Մարիամ ետ ընծայս Տաճարին, յորժամ ընծայեցոյց զՆա, զոր տեսեալ Յուդայի՝ ցանկացաւ եւ խնդրեաց եւ փոխանակ զՎարդապետն մատնեաց, որպէս ասէ։ Իսկ առ ի միտս՝ վաճառեցաւ դիւրագին երեսուն արծաթոյ, որպէս զի զնեսցէ զաշխարհս մեծագին արեամբն Իւրով յանիծից Օրինացն ըստ առաքելոյ⁵։

Եւ յայնմեռտ խնդրէր պարապ, զի մատնեսցէ զՆա նոցա (ԻԶ 16):

Այսինքն անբոյթ եւ ապահով ի յամբոխէն, յորոց եւ կասկածէր իսկ, որպէս եւ հրէայքն, որ եւ կարի իսկ անմիտ երեւի, զի ոչ ածէր զնտաւ՝ շլացեալ յարծաթսիրութենէն, որ բազում անգամ

¹ Չաք. ԺԱ 11

² Ծննդ. Լէ 28

³ Զ > երեսուն՝ երեք

⁴ Զ > վասն երից

⁵ Գաղ. Գ 13

կամեցան ըմբռնել, եւ Նա ընդ մէջ նոցա անցեալ զնայր եւ ոչ անկանէր ի բուռն, եւ յորով անգամ զաստուածութեանն հանդէս տեսեալ իսկ էր. զՆա՛ կարծէր ունել եւ ի ձեռն¹ հրէից մատնել: Չորոյ զչարութիւնն ցածուցանել կամէր Քրիստոս մեղմագոյն բանի եւ յընթրիսն անգամ ոչ դադարէր ի խնամակալութենէ եւ մինչեւ յօրն վերջին ի խօսելոյ ընդ նմա, թէպէտեւ նա ոչինչ օգտեցաւ, վասն որոյ ասացեալ է թէ՛ «Չի՞նչ պիտոյ է գանձք անզգամին» (հմմտ. Առակ. Ժ 2), զի ընդունել զիմաստութիւն ոչ կարէ: Չոր եւ մեզ պարտ է առնել. զյանցաւորն եւ զծոյլն խրատելով եւ թելադիր լինելով՝ մխիթարենք, թէպէտեւ չառնիցենք ինչ օգուտ:

Եւ յառաջնում ատր Բաղարջակերացն մատեան աշակերտքն առ Յիսուս եւ ասեն (ԻԶ 17):

Ղուկաս ասէ. «Մերձեցաւ տօն Բաղարջակերացն» (Ղուկ. ԻԲ 1), եւ թէ՛ «Եկն օր Բաղարջակերացն» (Ղուկ. ԻԲ 7), եւ սա թէ՛ «յառաջնում ատր»։ զհինգզարաթիմ² ասէ, որ յառաջ էր քան զօր Բաղարջակերացն. քանզի սովոր էին եբրայեցիքն յերեկոյէն³ թուել զօրն, վասն այսորիկ «յառաջնում ատր» ասէ. զի հանդերձեալ էին ի հինգզարաթուօջ երեկոյին զՊասեքն զենուլ եւ սկիզբն բաղարջաց առնել, որպէս ասեն Ղուկաս եւ Մարկոս թէ՛ «յորում զՊասեքն զենուին»⁴: Եւ դարձեալ՝ ոչ վայրապար այնմ ատր պատահեցոյց, այլ զի զհինն յիշեցուցանէ՝ զեգիպտական տօնին զենումն, որք հաղորդեալ գառինն եւ արեամբ զսեամսն դրոշմելով ի սատակչէ անտի ապրեցան տոհմն իսրայելական՝ յառաջնումն ամսեանն, յորում ամենայն արարածք ստեղծան: Այսպէս Գառն, որ բառնայ զմեղս աշխարհի, ի նմին ատր զենանի, որոյ պատկառելի արեամբն նշանակին սեամք մտաց մերոց, եւ հաղորդիմք անսերմն եւ անապական կուսածին մարմնոյն, որով զերծանիմք ի բանասարկուին ծառայութենէ եւ փրկիմք ի տղմութ եւ ի լարծուտ մեղաց մարմնոյս աղտեղութենէ՝ նոր Ադամ լինելով եւ նորոզելով ի հնութենէ ի դիպօղ ժամանակի զարնանայինս եղանակի: Յայս

¹ Զ ձեռն

² Զ զհինգզարաթն

³ Զ յերեկոյէն

⁴ Ղուկ. ԻԲ 7, Մարկ. ԺԴ 12

⁵ Ելք ԺԲ 21-23

խորհուրդ ասէ արեւտարանիչս թէ՛ «Յառաջնում արուր Բաղարջակերացն մատեան աշակերտքն առ Յիսուս եւ ասեն.

«Ո՞ր կամիս, զի պատրաստեսցուք Քեզ ուտել զՉատիկն»:

Չի սովորութիւն էր նախ պատրաստել զգառն ըստ Օրինացն հինգ արուրք¹ յառաջագոյն եւ թէ ոչ զոնէ մի արուրք, որպէս զի ցուցցեն, թէ յօժարութեամբ մատուցեն զպատարագն, վասն այսորիկ մատեան հարցանել թէ՛ «Ո՞ր պատրաստեսցուք»: Եւ դարձեալ՝ ցուցանէ, թէ ոչ զոյր նոցա տուն կամ տեղի իջաւանի, նաեւ ոչ ինքեանց, ապա թէ ոչ՝ եւ անդ իսկ աղաչէին զՆա երթալ: Քանզի հրաժարեալ էին յամենայնէ եւ նշանացն եւ վարդապետութեանն պարապեալ, այլեւ քաղաքն իսկ վասն տօնին լցեալ էր ժողովրդովք, եւ ոչ էր հնար այլ ուրեք արտաքոյ քաղաքին զՉատիկն կատարել: Նաեւ զհնազանդութիւն աշակերտացն յայտ առնէ հարցանելն, զի ոչ բնաւին արտաքոյ կամաց Նորա գործէին ինչ: Իսկ առ ի միտս՝ յորժամ պատրաստենք զմեզ մաքուր գործով մարմնոյ եւ արեանն Տեառն առ ի ճաշակել, Ինքն ուտէ զմեզ, իբր հոր՝ զփայտ, ծախելով զյանցանս մեր. այս է ասելն թէ՛ «Պատրաստեսցուք Քեզ ուտել զՉատիկն²»:

Եւ Նա ասէ ցնոսա. «Երթայք ի քաղաքն առ այս անուն եւ ասացէք ցնա. «Վարդապետ³ ասէ՝ ժամանակ Իմ մերձեալ է, առ քեզ առնեմ զՉատիկ⁴ աշակերտօքս հանդերձ» (ԻՉ 18):

Վասն է՞ր զչարչարանացն կատարէ. զի յայտ արասցէ, թէ մինչեւ ցվերջին օրն չէ հակառակ Օրինացն, որպէս կարծէին: «Երթայք ի քաղաքն առ այս անուն»: Ղուկաս եւ յանուանէ իսկ ասէ թէ՛ «Առաքեաց զՊետրոս եւ զՅովհաննէս» (Ղուկ. ԻԲ 8), որպէս ի պատրաստութիւն իշոյն եւ յաւանակին, այսպէս եւ Չատիկն, զի յուշ եկեցցեն, թէ որպէս անդ⁵ զտեսարս անասնոցն կակղացոյց, այսպէս եւ աստ զտանն տէր⁶ մեղմացուցանէ: Իսկ նշանակաբար՝ Պետրոսի զհին ժողովուրդն նշանակեաց վասն ծերութեանն, իսկ

¹ Զ արուրք

² Զ զատիկն

³ Զ վարդապետն

⁴ Զ զատիկ

⁵ Զ անտ

⁶ Զ տէրն

ի ձեռն Յովհաննու՝ զնորս եւ զառժամայս՝ վասն երիտասարդութեանն, որք հաղորդեցան փրկութեան շարչարանացն Յիսուսի՝ հրէայք եւ հեթանոսք: «Երթայք ի քաղաքդ առ այս անուն»։ Ընդէ՞ր առ անձանօք այրն առաքէ. նախ՝ զի ցուցցէ, թէ կարօղ է ոչ շարչարիլ¹, զի որ զմիտս առն հաւանեցուցանէ բանիւք, զիա՞րդ ոչ եւ զիսաչահանունսն կակղացուցէ, թէ կամեսցի ոչ շարչարիլ: Եւ երկրորդ՝ վասն այտորիկ զանունն ոչ յիշէ զառնն, յորոյ վերնատանն զՉատիկն առնելոց էր, զի մի՛ յայտնի լիցի մատուցին անդ առանձնանալ հանդերձ յատուկ աշակերտօքն, եւ փութասցի ի մատուութիւնն՝ մեկուսի յամբոխէն² զՆա տեսեալ, այլ մինչեւ կատարեսցի բարձրագոյն խորհուրդ վերնատանն, զոր ցանկ վարդապետէր նոցա ի հաւատալ վասն մարմնոյ եւ արեանն Իւրոյ:

«Ժամանակ Իմ մերձեալ է, առ քեզ առնեն զՉատիկ աշակերտօքս հանդերձ³»: Չհանդէս զօրութեան Իւրոյ դարձեալ ցուցանէ, զի մի՛ համարիցին, թէ ի ծածուկ գայցէ, այլ աշակերտքն իսկ, որ ստէպ կանխասացութեամբն կրթեալք էին, զմտաւ ածիցեն զիրս խաչին, միանգամայն եւ ասպնջականն եւ ամենայն իսկ հրէայք զհտասցեն, թէ ոչ՝ ակամայ գայ ի շարչարանս, եւ կազորեսցի այրն յերկիւղէն, որ ակն ունէր այնչափ թշուառութիւնս կրել եւ անհաշտ պատերազմ ի հրէիցն, եւ արհամարհեցէ զիրն. վասն այտորիկ ասաց թէ՛ «առ քեզ առնեն զՉատիկ⁴», իսկ յաւելոյն թէ՛ «աշակերտօքս⁵», զպատրաստութիւն բաւականին ազդեցուցանէ:

Եւ արարին աշակերտքն որպէս հրամայեաց նոցա Յիսուս եւ պատրաստեցին զՉատիկն (ԻԶ 19):

Ղուկաս ասէ թէ՛ «Իբրեւ մտանիցէք ի քաղաքդ, պատահեսցէ ձեզ այր մի, որ ունիցի սափոր ջրոյ յուս իւր, զնասջիք զհետ նորա եւ ասասջիք ցտանուտէր տանն» (հմմտ. Ղուկ. ԻԲ 10-11). քանզի ոչ զհտէին զայրն, ետ նոցա նշան, որպէս մարգարէն Սաւուդայ⁶, եւ նորա գնացեալ ըստ հրամանի Փրկչին՝ եւ գտին այնպէս, որպէս ասացն, «եւ պատրաստեցին»: Արդ՝ ո՞րք էր, եթէ ոչ⁷՝ Յովսէփ Ա-

¹ Չ շարչարել

² Տ ի յամբոխէն

³ Չ > հանդերձ

⁴ Չ զատիկս

⁵ Չ աշակերտօքն

⁶ Ա Թագ. Ժ

⁷ Չ > ոչ

րենաթացին, որ սպասատրելոց էր առ գերեզմանան տէրունական մարմնոյն, եւ զկնի աշակերտեցաւ եւ կարգեցաւ ի թիւ եօթանասուն առաքելոցն՝ զարդարեալ ամենայն գործովք բարութեան: Բայց նշանակարար՝ էր այրն օրինակ քահանայիցն, եւ ջուրն բարձեալ՝ Աւագանին խորհրդոյ, յոր մկրտեալ հրէայք եւ հեթանոսք՝ զորդեգրութիւն ազատութեանն առնուն ի ծառայական կարգաց, կամ ապաշխարողքն՝ գնալով ի տուն Աստուծոյ զարտասուս հեղոյ: Իսկ վերնատունն զՀոգւոյն ունի տիպ, քանզի որք մկրտին եւ բարձրանան յաշխարհէ, ընդունին զՀոգին, յորում եւ Հայր եւ Որդի առ նմին օթեվանս առնեն, այլեւ զխորհուրդ Եկեղեցւոյ գուշակէր վերնատունն՝ բարձրագոյն զսա լինել եւ երկնային, յորում բաշխեաց եւ բաշխէ կենսաբեր ձեռօք զմարմին եւ զարիւն Իր սուրբ ի փրկութիւն աշխարհի, զարդարեալ Հոգւով եւ պարկեշտ աւանդութեան ձեռով, որ մինչեւ ցայսօր աշակերտք աւետարանի Նորա պատրաստեն զնոյն խորհուրդ փրկաւէտ Գառինն ի փառս միշտ Հօր եւ Հոգւոյն Իրոյ. ամէն¹:

Եւ իբրեւ երեկոյ եղև, կայր բազմեալ ընդ երկոտասան աշակերտսն (ԻԶ 20):

Քանզի յայնժամ ուտէին զՉատիկն, նմին իրի յերեկոյին բազմեցաւ, որպէս ասէ Ղուկաս թէ՝ «Իբրեւ ժամ եղև, բազմեցաւ» (Ղուկ. ԻԲ 14)՝ զմուտ արեգականն նշանակելով: Իսկ ընդ երկոտասանսն միայն եւ ոչ ընդ եօթանասունսն եւ կամ ընդ այլ հետեւեալսն՝ զայն ցուցանէ, թէ դեռես ոչ էին այնոքիկ բաւական բարձրագոյն խորհրդոյն, մարմնոյն ասեմ եւ արեանն, վասն որոյ թողու զնոսա առ անգամ մի՝ վարդապետելով ի կատարելագոյնսն՝ որք կարողք էին իմանալ զդիտատրութիւն իրացն: Յուցանէ եւ զՅուդա գոլ ընդ նոսա, ընդ որոյ անմտութիւնն պարտ է զարմանալ, միանգամայն եւ ընդ խնամսն Յիսուսի, թէ ո՞րպէս գթայր ի նա, մինչ զի եւ սեղանակից եւս առնէր, որ թէ եւ զազան ոք էր, սակայն զգօնանալ պարտ էր, քանզի խորհրդոյն հաղորդ եղև² եւ անդստին առ սեղանն յանդիմանեցաւ եւ ոչ զղջացաւ: Եւ դարձեալ զի յերեկոյացեալ դարուն հաւասարեաց Քրիստոս խորհրդոյ աշակերտացն՝ ի վերնատունն բազմեալ իբրեւ³ զքահանայ եւ զթագաւոր՝

¹ Զ յաւի՞] ամէն

² Զ հաղորդեալ] հաղորդ եղև

³ Զ իբր

ըստ մարգարտին թէ՛ «Եղիցի քահանայ ի վերայ աթոռոյ իւրոյ» (Չաք. 2 13)՝ ոչ ըստ կարգին Ահարոնի, այլ ըստ կարգին Սեփիսեղեկի, զի ընդ քահանայութեանն զթագաւորութիւնն ունէր յաւիտենական ըստ Դաւթի¹, որպէս եւ ասէ թէ՛ «կայր բազմեալ», կամ իբրեւ զարեգակն թագաւոր երկոտասան ժամուց՝ կենազործօղ առաքիւնութեան հեզօրէն խառնմամբ՝ ըստ այլնմ. «Ո՞չ ապաքէն երկոտասան ժամ է ատուր. որ գնայ ի տունջեան ոչ զայթազդի» (Յովհ. ԺԱ 9):

Եւ մինչդեռ ուտէին նոքա, ասէ. «Ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զԻս» (ԻՉ 21):

Կամ զգառն, որպէս ոմանք ասեն, կամ թէ յետ գառինն ա՛յլ ինչ ուտէին: Քանզի ոչ էր պարտ զգառն բազմիլ² եւ ուտել³, ապա ուրեմն յայտ է, թէ նախ զգառն կերան ըստ Օրինացն սահմանի, եւ ապա բազմեցան բաղարջին հաղորդիլ, զի ուսանիցիս ամենայն ուստեք, թէ հնոյն եւ նորոյս Ինքն է օրէնսդիր, եւ ամենայն ինչ, որ ի նմա կայր, վասն այսորիկ դրոշմեալ էր. յայն սակս ուր օրինակն էր, անդէն եւ զճշմարտութիւնն դնէ: «Ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զԻս». զճշմարտութիւն իրացն նշանակելով դնէ զբառս զայս. իսկ զի ասէ թէ՛ «Մի ոմն ի ձէնջ մատնելոց է զԻս», նախ զնորա պատառումն ցուցանէ, որ զատեալ էր ի մետասանիցն եւ ընդ մատնութիւնն միացեալ, եւ ապա ժամանակաւն եւ սեղանովն զչարութիւն մատնչին կամի ցածուցանել: Չի ոչ ասաց թէ՛ այս անուն մատնելոց է զԻս, այլ թէ՛ «մի ոմն», որպէս զի տայցէ նմա իշխանութիւն ապաշխարութեան առ ի մոռանալ զչար արուեստն: Եւ վասն զնա ապրեցուցանելոյ երկեցուցանէ զամենեսեան, ի ձէնջ, ասէ, յերկոտասանիցդ, որք յամենայն ժամ ընդ Իս էք, որոց զոտսդ լուացի, որոց զաթոռակցութիւնն եւ զայլ բարութիւնս խոստացայ. եւ զի զայս հանդերձեալ էր ասել թէ՛ «ի ձէնջ» է, յառաջեաց թէ՛ «մի ոմն» է, զի մի՛ ամենեքեան ամբոխեսցին ամենեւին:

¹ Սաղմ. 60 4

² Զ բազմել

³ Ելք ԺԲ 11

Եւ տրտմեցան յոյժ եւ սկսան ասել ցՆա իւրաքանչիւր ոք ի նոցանէ¹. «Մի-թէ ե՞ս իցեմ, Տէ՛ր» (ԻՉ 22):

*Անհնարին սուգ մածեալ գտուրք զնրան. մի՛ վասն դաւաճա-
նութեան Վարդապետին, եւ երկրորդ՝ վասն անձանցն մատնու-
թեան, որք կային հիացեալ ի տարակուսի, որպէս ասէ Յովհան-
նէս², եւ հարցանէին իւրաքանչիւր ոք, թէպէտ չարութեան կասկած
ի խղճի մտի ումեք ոչ գոյր, բաց ի միոյն, այլ նոքա զվճիռն Յիսու-
սի ճշմարիտ համարէին՝ քան զմտացն գիտակցութիւն՝ ըստ առա-
քելոյ. «Թէպէտ ոչինչ գիտեմ խիղճ զանձնէ իմմէ, բայց ոչ եթէ այ-
սու արդարանամ, զի որ քննէն զիս՝ Տէր է» (հմմտ. Ա Կոր. Դ 4):*

Նա պատասխանի ետ եւ ասէ. «Որ մխեաց ընդ Իս զձեռն իւր ի սկաւա-
ռակն³, նա՛ մատնելոց է զԻս» (ԻՉ 23):

*Քանզի մեռան իսկ յահէն, պատմէ զնմանէ, որպէս զի զայլսն
ապրեցուցանէ ի խռովութենէ, զի նոքա թէպէտ ոչ տեսին զմխել
ձեռաց նորա ի սկաւառակ Վարդապետին, սակայն զայն ստոյգ
գիտէին, զի ինքեանք ոչ թացին: Եւ որ մխեացն՝ յայտնի եղեւ
նմին, թէւ այլ անգամ խառնիխտուն լսէր եւ ոչ տրտմէր, այժմ
բարձաւ պատրուակն, եւ յայտնեցաւ իրն, որպէս զի գէթ այնու
ուղղեսցի, որպէս ասէ թէ՛ «Որ մխեաց ընդ Իս⁴ զձեռն իւր ի սկա-
ւառակն»: Ոմանք ասեն, թէ այնչափ յանդուգն էր, զի զՎարդա-
պետն ոչ պատուեաց, այլ ընդ Նմին եթաց զպատառն, բայց ինձ
թուի, թէ եւ զայն արար Քրիստոս, զի առաւել պատկառեցուցէ եւ
ի գութ ածիցէ:*

*Բայց զի՞նչ է այն, զի Յովհաննէս ասէ թէ՛ «Որում Ես թացից
զպատառն եւ տաց» (Յովհ. ԺԳ 26), եւ Մատթէոս թէ՛ «Որ մխեաց
ընդ Իս⁵ զձեռն իւր ի սկաւառակն⁶»: Ինձ թուի, թէ երկոքին եղեն,
կամ թէ՛ ի սկաւառակն ինքն մխեաց, իսկ պատառն մարմինն իւր
է, զոր լուաց ի ջուր եւ ետ նմա իբրեւ անարժանոյ ումեմն, որպէս
ոմանք ասեն, կամ թէ՛ ի գինին թացեալ ետ, քանզի յառաջ տա-
րեալ ասէ աւետարանիչս, թէ օրհնեաց զհացն առանձինն եւ ետ,
այսպէս եւ զբաժակն: Իսկ զնորայն թացեալ զի նշանակէր զգողն*

¹ Զ > ոք ի նոցանէ

² Յովհ. ԺԳ 22

³ Զ սկաւառակս

⁴ Զ > ընդ իս

⁵ Զ > ընդ իս

⁶ Զ սկաւառակս

մատնիչ. յայս խորհուրդ ոմանք ի քրիստոնէից ոչ մկրտեն զնշխարն ի բաժակն, այլ առանձին առանձին ճաշակեն, եւ ոչ որ գիտաց զայս յաշակերտաց Նորա բաց ի Յովհաննէ, որ զլանջօքն անկաւ եւ ուսաւ զիրն¹, ապա թէ ոչ՝ բնաւին ոչ էին խնայեալ ի նա, զի թէ զծառային զունկն եհատ Պետրոս², զի՞նչ ասես զմատնչին, թէ էին տեղեակ լեալ նորա չարութեանն:

Որդի մարդոյ երթայ, որպէս եւ գրեալ է վասն Նորա, բայց վա՛յ մարդոյն այնմիկ, յոյր ձեռն³ Որդին մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա, թէ չէր ծնեալ մարդն այն» (ԻԶ 24):

Այսու զաշակերտսն կազդուրեցուսցէ, զի մի՛ տկարութիւն զիրն վարկանիցին, միանգամայն եւ զմատնիչն յուղորթին ածիցէ, եւ թէ ոչ կամիցի, անվրէպ տանջելոց է: Բայց զի՞նչ է թէ՛ «Որդի մարդոյ երթայ, որպէս եւ գրեալ է». այսինքն ի մահ, որպէս եւ գրեցին մարգարէքն Հօր կամաւ վասն Նորա չարչարիլ ըստ այնմ. «Տեսանիցէք զԿեանս ձեր կախեալ առաջի աչաց ձերոց» (հմմտ. Բ Օր. ԻԸ 66), եւ ծակել զձեռս եւ զոտս եւ բաժանել զհանդերձս ի Դաւթ գրեցաւ⁴, եւ «Արկանել փայտ ի հաց նորա» (հմմտ. Երեմ. ԺԱ 19), եւ՝ «Իբրեւ զոչխար ի սպանդ վարեցաւ» (Ես. ԾԳ 7), եւ թէ՛ «Ելեր դու ի կառս քո, եւ հեծելութիւնդ քո փրկութիւն եղես» (հմմտ. Ամբ. Գ 8), եւ թէ՛ «Ել ի բարձունս եւ գերեաց զգերութիւն» (Սաղմ. ԿԷ 19), եւ այլ տոյնպիսիք: Արդ՝ ըստ այնմ սահմանի մենանի, ասէ, Որդի մարդոյ:

«Բայց վա՛յ մարդոյն այնմիկ, յոյր ձեռս Որդին մարդոյ մատնեսցի»: Չի՞նչ է այս. զի գրեալ էր վասն Նորա խաչն, եւ Յուդա զգրեալսն արար, նաեւ հրէայքն եւս, ապա ընդէ՞ր պատժեցան: Չա՛յս ասասցուք. ոչ զի գրեցաւ, արարին, այլ զի առնելոց էին, յայն սակս գրեցաւ: Եւ այլ ազգ. ոչ յայն միտս արարին, թէ զգրեալսն կատարեցեն, այլ առ չարութեան սրտից իւրեանց. Յուդա՝ վասն ազահութեանն, եւ հրէայքն՝ վասն նախանձուն եւ ոխակալութեանն, վասն այտորիկ դատապարտեցան: Բանզի թէ ոչ զկամսն քննեսցես, ապա եւ զսատանայ ի պատժոց ազատ առնիցես, որ չէ իսկ այնպէս, այլ բիրապատիկ պատժոց արժանի իցեն

¹ Յովհ. ԺԳ 25-26

² Յովհ. ԺԸ 10

³ Տ ձեռս

⁴ Սաղմ. ԻԱ 18

սա եւ նոքա վասն ասացեալ պատճառին: Եւ թէպէտ տիեզերք փրկեցան, այն ո՛չ Յուդայի մատնութեամբն եւ հրէիցն սպանութեամբն, այլ Քրիստոսի իմաստուն եւ հնարաւոր ճարտարութեամբն եղեւ շահն, որ զայլոց չարիս առ ի մեր օգուտ ի կիր էարկ, որպէս երբեմն ի չարչարանս եգիպտացոցն ազատութեան¹ պատճառ առնէր իսրայէլացոցն: Իսկ թէ որ ասիցէ, թէ Յուդա չէր մատնեալ, այլ որ ոչ մատնէր, ասացուք, թէ ի խաչ ելանել պարտ էր Քրիստոսի յոյր ձեռն մարթ եւ էր, եւ թէ ամենեքեան գտեալ էին բարիք, միթէ խափանէ՞ր տնտեսութիւնն, քա՛ւ լիցի, քանզի Ինքն գիտէր որպէս պարտ էր զմեր փրկութիւնն վճարել, եւ մահ Նորա պատճառ կորստեան ումեք ոչ էր լինել:

Վայ,- ասէ,- մարդոյն այնմիկ, յոյր ձեռն՝ Որդին մարդոյ մատնեսցի»: Դարձեալ վասն այնորիկ ասէ, զի մի՛ որ կարծեսցէ, թէ տնօրէնութեանն սպասաւոր ինչ եղեւ, եղուկ կոչէ զմարդն եւ ողբայ զանօրէն ասպականիչն: «Լաւ էր նմա, թէ չէր ծնեալ մարդն այն». զայս եւ ժողովողն ասէ թէ՛ «Լաւ է վիժածն քան զնա» (Ժող. 2 3), ոչ եթէ լաւ ինչ է նա, զի ի խաւարէ եկն եւ ի խաւար չոգաւ, այլ քան զնա ասէ, որ թէպէտ երկարակեաց եղեւ եւ զբարի ինչ ոչ գործեաց, այլ մանաւանդ զհակառակն, եւ յետոյ կորեաւ եւ ի խաւարի ծածկեցաւ, լաւ էր եթէ վիժած էր եւ ոչ ծնեալ եւ ոչ զչար ինչ գործեալ եւ կորստեան արժանաւոր եղեալ: Իսկ թէ ասիցէ որ՝ եթէ լաւ էր չծնանելն, ընդէ՞ր թոյլ ետ նմա զալ ի մէջ եւ կամ այլոց չարաց, ասացուք նախ՝ եթէ բարի է եւ զբարութիւնն Իւր արգելուլ ոչ կամի, որ է լինելութիւնն: Եւ երկրորդ՝ ո՛չ հարկաւ կամի զառաքիւնութիւնն լինել, այլ յօժարութեամբ եւ ազատաբար, որում մանաւանդ ըղձայ: Եւ երրորդ՝ նոքա՛ մեղադրելիք եւ ո՛չ Աստուած. յայտ ի լաւացն է, զի պիտանիք եղեն եւ ի չարեացն չվնասեցան ինչ, որք եւ կրկին պսակօք պսակեցան. նոյնպէս եւ յոռիքն ունէին իշխանութիւն լաւս լինել եւ ոչ եղեն, այլ չարացան, յիրաւի՛ ապա կրկին պատժուլք պատժեսցին: Եւ դարձեալ ծանրացուցանելով զպատիժն մատնչին կամաւոր ցուցանէ զչարչարանսն եւ թէպէտ կամաւորաբար կատարին տնօրինականքն սակս փրկութեան աշխարհի, սակայն մատնիչն եւ խաչահանունքն տայցեն զհատու-

¹ Գ բազմութեան

² Տ ձեռս

ցումն, զի ոչ յայն սակս, այլ վասն ախտի յայն եկին, որպէս ասացի յառաջագոյն:

Պատասխանի ետ Յուդա, որ մատնելոցն էր զՆա, եւ ասէ. «Միթէ ե՞ս իցեմ, Վարդապետ»: Ասէ ցնա. «Դո՛ւ ասացեր» (ԻՉ 25):

Ընդէ՞ր ի սկզբանն ոչ եհարց, որպէս այլքն. կարծէր, եթէ քաբչել կարիցէ վասն ասելոյն թէ՛ «Մի ոմն ի ձէնջ մատնելոց է զԻս», եւ յորժամ յայտ իսկ էած զնա ի ձեռն պատառին, ասպա հարցանէ՝ ի հեզութիւն Վարդապետին լինելով ասպատան, որպէս զի¹ ոչ յանդիմանեսցէ զնա: «Միթէ ե՞ս իցեմ», Տէր. տես զնորա անհանճարութիւնն, թէ ընդէ՞ր հարցանէ՛ որ զիտէր զմտացն խիղճ, ընդ որոյ յանդգնութիւնն զարմացեալ աւետարանիչն ասաց զայս, միանգամայն եւ ընդ անհաւատութիւնն, քանզի ոչ հաւատալոր զնա սրտի զիտոյ, որ բազում անգամ զհրէից ծածուկն յայտներ, իսկ առ այս՝ զի՞նչ Հեզն: «Դո՛ւ ասացեր». թէպէտ ի դէպ էր ասել թէ՛ «Ո՛վ պիղծ եւ ամենապիղծ, որ զայնչափ ժամանակս երկնէիր զչարիսդ եւ զխորհուրդս աստանայականս եւ արծաթ եւս յանձն առեր, եւ յորժամ Ես ասացի, տակաւին ժխտիս հարցանել», բայց չասաց ինչ յայսպիսեացս, այլ թէ՛ «Դո՛ւ ասացեր», զի եւ մեզ կանոնս հաստատեսցէ անոխակալութեան: Եւ այլ ազգ. զի թէ ասացեալ էր՝ «Այո՛, դո՛ւ ես», ունէր տեղի լրբութեան՝ ասելով թէ՛ «Ես ոչ կամէի մատնել, իսկ որովհետեւ կարկատես ի վերայ իմ, եղէց այսուհետեւ մատնիչ Քեզ», վասն այսորիկ ասաց թէ՛ «Ո՛չ Ես ասեմ, թէպէտ զիտեմ քաջ զխորհուրդս քո, այլ դո՛ւ ասացեր», այսինքն բերան քո մատնիչ եղեւ մտաց քոց, եւ զյաւելուածս սրտիդ արտաքս ժայթքեաց լեզու քո:

Եւ մինչդեռ ուտինն նորա, առ Յիսուս հաց, օրհնեաց եւ երեկ, եւ ետ աշակերտացն եւ ասէ. «Առէ՛ք, կերայ՛ք, այս է մարմին Իմ» (ԻՉ 26):

Ընդէ՞ր նախքան զհրէական Չատիկն ոչ աւանդեաց զխորհուրդն թէ՛ «Առէ՛ք, կերայ՛ք», այլ յետոյ յորժամ զգառն կերան եւ այլ ինչ ուտինն: Չի դադարելոց էր այնուհետեւ օրինականքն, վասն այսորիկ զգլխաւորս տօնից նոցա լուծանէ եւ այլ իմն ահագին սեղան փոխէ, որպէս ասէ թէ՛ «Առ Յիսուս² հաց, օրհնեաց»:

¹ Գ > զի

² Գ > Յիսուս

Որպես ասացաք յառաջագոյն, յետ գառինն զայլ ինչ բազմեցան ուտել, այսինքն՝ զբաղարջ ըստ Օրինացն եւ զեղէզն, զեօթն օր նշանակ խոնարհ կենաց եւ դառն ծառայութեանն¹, որ յԵզիպտոս, յորմէ էառ ի ձեռն Յիսուս զհացն բաղարջ՝ յօրինակ անսերմն եւ անապական կուսածին մարմնոյն, զոր եւ օրհնեալ ասաց ի վերնատունն². «Այս է մարմին Իմ», որ եղեւ իսկ ճշմարտապէս. որպէս երկինք եւ երկիր, այսպէս եւ հացն՝ մարմին Նմին: Եւ թէ ընդէ՞ր ետ. զի եւ նորա՝ Նմին մարմին լինիցին՝ ըստ այնմ թէ՛ «Որ ուտէ զմարմին Իմ, նա յԻս բնակեցի³, եւ Ես՝ ի նմա» (հմմտ. Յովհ. 2 57):

Բայց զի՞նչ է թէ՛ «Առ Յիսուս հաց, օրհնեաց եւ երեկ»: Ըստ կարգի իրացն եւ զբանն հետեւեցուցանէ, քանզի նախ էառ Բանն մարմին ի կուտն եւ կոչեցաւ «Յիսուս» ի հրեշտակէն, որ է փրկիչ, քանզի նովին մարմնովն փրկելոց էր զժողովուրդ Իսր ի մեղաց իրեանց. որպէս եւ յայնժամ, նոյնպէս եւ այժմ նորին խորհրդով: Իսկ յառնուլն զմարմինն՝ «օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ յերկնաւորս Քրիստոս» ըստ առաքելոյ (Եփես. Ա 3), քանզի օրհնութիւնն ոչ այլ ինչ է, քան թէ զԲանն օրհնեալ⁴ յամենայն մտաց եւ լեզուաց, որ միացաւ ի մարմինն, որով եւ մեք օրհնեցաք: Կամ թէ յառնուլն զմարմինն յայտնեցաւ նոյն մարմինն Որդի Օրհնելոյն, այս է Աստուծոյ, քանզի «օրհնեալ»-ն յայտնեալ⁵ ասի, եւ ասպա զայն երեկ կամաւոր մահուամբն ի վերայ խաչին եւ ետ աշակերտացն ի յուտել, այսինքն՝ խաչիւ եւ չարչարանօք Նմին հետեւիլ⁶, որպէս ասէր թէ՛ «Որ ոչ առնու զխաչ իւր եւ զայ զհետ Իմ, ոչ կարէ Իմ աշակերտ լինել» (Ղուկ. Ժ 38): Վասն որոյ ի վերայ բերէ թէ՛ «Այս է մարմին Իմ»: Մեծ իմն իմաստս այսու աւանդէ, զի որք չարչարակից Քրիստոսի լինին, ճշմարտապէս մարմին Նորա անուանին, որպէս թէ ասէ՛ որ մեռանի մարմնով վասն Իմ, այն է մարմին Իմ, վասն զի եւ Ես Իմով մարմնով զնոյն կրեցի: Չայս զիտելով Պօղոսի՝ ասէր թէ՛ «Չպակասութիւն չարչարանաց Տեառն ի մարմնի իմում կրեմ» (հմմտ. Կոր. Ա 24), եւ դարձեալ թէ՛ «Հասցուք ամենեքեան յայր կատարեալ ի չափ հասակի

¹ Տ ծառայութեան

² Զ վերայ

³ Զ բնակեցի

⁴ Տ օրհնել

⁵ Զ օրհնելն յայտնել] օրհնեալն յայտնեալ

⁶ Զ հետեւել

մարմնոյն Քրիստոսի» (Եփես. Դ 13): Եւ արդ լո՛ւր, թէ մարմին ենք Նորա, այսինքն չարչարանօքս, գոր կրենք, յորմէ ուսանիմք, թէ որք մարմնոյ եւ արեան Տեառն հաղորդին, պարտին մահակից լինել Նմին:

Տեսցուք այժմ զբանս սրբոցն, քանզի ասէ թէ «Առ Յիսուս հաց, օրհնեաց եւ երեկ եւ ետ աշակերտացն»: Ոմանք ասեն, թէ ի ժամանակէ աստի յայսմանէ, յորժամ զխորհուրդ մահու Իրոյ բաշխեաց աշակերտացն, լինի թիւ երից ատուրց, քանզի թաղեցաւ խորհրդաբար ի սիրտ առաքելոցն եւ ընդ մեռեալս համարեցաւ, զի որպէս Ադամ յորմեհետէ եկեր ի պտղոյ անտի, թէպէտ եկաց ամս բազումս, սակայն ի մեռելոց համարի էր, նոյնպէս եւ Տէր մեր: Ուստի յարուցեալ ըստ մարգարէութեանն յաւուրն երրորդի՝ ողջացոյց զմեզ, քանզի դարձ գերոյն ո՛չ միանգամ, այլ երկիցս եղել կատարելապէս, զի ոմանք յաւուրս Կիւրոսի, եւ կէսք յաւուրս Արտաշէսի, եւ այլք յաւուրս Դարեհի դարձան, յորում շինեցաւ Տաճարն, եւ նորոգեցան կարգք ամենայն: Նոյնպէս որք հաւատացին ի Տէր եռօրեայ յարուցեալ, բժշկեցան յառաջին ախտիցն եւ ի գերութենէ մահուն, յորում կային վտարանդիք ի ծառայութիւն, ի ձեռն տաճարի մարմնոյ Նորա, որով նորոգեցաք եւ մեք ի հնութենէ՝ լինել տաճար հոգեւոր արքայութեանն՝ յուսով:

Եւ դարձեալ՝ զոհացաւ եւ օրհնեաց՝ ուսուցանէ զմեզ, թէ զհարդ պարտ է զխորհուրդն կատարել եւ կամ քանի՛ իրօք: Յայտ առնէ, թէ չորս իրս պիտոյ է, եւ այս ո՛չ առանց խորհրդոյ, զի չորսմ² գոյացութիւն է տասինն, որ սուրբ է: Նախ՝ սեղան, զի Տէրն ի սեղանոյն էառ, եւ ո՛չ սոսկ սեղան, այլ խաչ օրհնեալ: Եւ ասա՛՛ հաց՝ ի ցորենոյ կազմեալ բաղարջ, եւ զինի: Եւ երրորդ՝ զի քահանայից է, որպէս Ինքն կոչեցաւ ի մարգարէէն³: Եւ չորրորդ՝ կամք սրտի, յորոյ սիրալիր բաղձանաց բղխէ օրհնութեանն բան, որով լինի հացն եւ զինին մարմին եւ արիւն Որդոյն Աստուծոյ: Չի թէ մի ի սոցանէ պակաս իցէ, ոչ իցէ պատարագ, որպէս ասէ թէ «էառ ի սեղանոյն», եւ «հաց» էառ, եւ Ինքն էառ, եւ օրհնեաց ի սրտէ, եւ եղել մարմին, եւ ասպա այսպիսի գոհութեամբ ճաշակեալ՝ եւ այլոց բաշխեալ: Այլեւ նշանակէ օրհնելովն եւ զոհանալովն, թէ ո՛չ ակամայ, այլ կամատր ըղծիք գայ ի չարչարանս՝ ըստ այնմ թէ «Յան-

¹ Գ յարութեանն

² Գ > չորսն

³ Սաղմ. 6Թ 4, 2աք. 2 13

կանալով ցանկացայ ուտել ընդ ձեզ զայս Պասեք, մինչչեւ չարչարեալ իցեմ» (Ղուկ. ԻԲ 15): Նաեւ խրատէ զմեզ, թէ զոր ինչ չարչարանս՝ զոր կրիցեմք, զոհութեամբ պարտիմք տանել եւ ի փառս Նորա ընծայել:

Քննելի է եւ այն, թէ ընդէ՞ր ոչ խռովեցան աշակերտքն, յորժամ լուան թէ «Այս է մարմին Իմ»: Ասացուք, թէ կամ համարձակելի եղև նոցա, զի առեալ ի ձեռն ըստ Իւր սովորութեանն՝ օրհնեաց եւ երեկ խաչանիչ ի խորհուրդ խաչին, եկեր եւ Ինքն, ապա ետ եւ նոցա, յոր վստահացեալ ճաշակեցին եւ նոքա առանց ամբոխման: Եւ կամ թէ՛ բազում ինչ եւ մեծամեծս խօսեցեալ էր առ հրէայսն վասն նորին իրաց, եւ այնու վարդապետեալ էին եւ աշակերտքն եւ բաւականութեամբ օգտեալ ըստ այնմ. «Եթէ ոչ ուտիջիք զմարմին Որդոյ Նորա եւ արքջիք զարիւն Նորա, ոչ ունիք կեանս յանձինս ձեր» (Յովհ. 2 54), եւ թէ՛ «Ես եմ հացն կենաց» (Յովհ. 2 35), եւ թէ՛ «Մարմին Իմ ճշմարիտ կերակուր է, եւ արիւն Իմ ճշմարիտ ըմպելի» (Յովհ. 2 56), եւ այլ այսպիսիք, վասն այսորիկ առեալ հաց՝ մարմին Իւր ասաց, եւ զբաժակն արիւն, եւ նոքա ոչինչ խռովեցան:

Բայց եկ դու ինձ զարմացիր ընդ կուրութիւն մատնչին, զի խորհրդոյն կցորդեցաւ եւ ի սեղանոյն վայելեաց եւ ի յապառում մտացն ոչ փոխեցաւ. եւ զայս Յովհաննէս յայտ առնէ թէ՛ «Յետ պատառոյն ապա եմուտ ի նա սատանայ» (Յովհ. ԺԳ 27)՝ ոչ զմարմինն արհամարհելով, այլ զանամօթութիւն մատնչին ծաղր առնելով, քանզի յերկոցունց կողմանց մեղքն յաճախէին, զի այնպիսի խորհրդով ի սեղանն մերձեցաւ եւ մերձեցեալ չզայր յուղութիւն՝ ոչ յերկիւղէ եւ ոչ յերախտեացն եւ ի պատուոյն: Բայց եւ Քրիստոս ոչ արգել զնա, զի ուսանիցիս, թէ չարար ինչ պակաս ի պատշաճիցն, որ յուղութիւն ածիցէ, վասն որոյ ի մերկանալ շնորհացն զսատանայ զգեցաւ, ոչ իշխանութեամբ քանսարկուին, օճ անդր ի բաց տար, զի թէ կարօղ էր, առաւել ի Պետրոս եւ ի Յովհաննէս ախորժէր մտանել, որք սիրեցեալք էին ի Տեառնէ, այլ յորժամ պատրաստեաց զինքն Յուդա բնակութիւն նմին գոլ, որպէս երբեմն Սաուդ եւ օճն առաջին, լինել կատարիչ խորհրդոց նորա, առկայացաւ ի նա:

Եւ առեալ բաժակ՝ զոհացաւ, ետ նոցա եւ ասէ. «Արքէ՛ք ի դմանէ ամենեքին (ԻԶ 27).

զի այդ է արին Իմ նորոյ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղու ի թողութիւն մեղաց (ԻՉ 28):

Ո՛չ հաց միայն էառ¹, այլեւ բաժակ, զի ոչ միայն մարմնով, այլեւ արեամբ կենդանականաւ եկն ըստ Յովհաննոս², որպէս զի յայտ լիցի, թէ ո՛չ մարդ միայն է, այլեւ Աստուած ճշմարիտ Յիսուսն մեր: Դարձեալ այսու զԱպողինար³ ամաչեցուցանէ, որ ասաց մարմին միայն առնով Բանին առանց հոգւոյ եւ մտաց, աստ ցուցանէ, թէ ոչ միայն հաց էառ⁴, որ զմարմին նշանակէ, այլեւ գինի, որ զարինն⁵ ցուցանէ: Իսկ թէ արին յայտ է, թէ եւ շունչ, քանզի ո՛չ վարի արինն առանց շնչոյ, եւ թէ շունչ մարդոյ յայտ է, թէ եւ հոգի եւ միտք, զի միտք ակն է հոգւոյ, եւ շունչ՝ կապ նորա, զի շնչով կապի հոգի ի մարմին: Եւ դարձեալ զառաւել խրախճանութիւնն բաժակաւն նշանակէ, որ եղև մահուամբ Նորա ամենայն աշխարհի: Նաեւ զմահն ըղձալի այսու ցուցանէ, զի որպէս բաժակ ծարաւեաց ախորժելի է, այսպէս եւ մահ կամաւոր խաչի Նորա՝ տենչալի, առ որս եւ մեք ձգիմք բաղձանօք՝ ոչ միայն քաղցնով անմահն հացի, այլեւ յերկարութեամբ փափագանօք հոգեւորն բաժակի՝ ըմպելով ի պարարտութենէ ուղիսից տան Նորա⁶՝ փափկանամք՝ ըստ մարգարէին Նաուումայ. «Արա՛ զբարեկենդանութիւնս քո, Յուդա՛, եւ կատարեա՛ զուխտս քո» (հմմտ. Նաւ. Ա 15):

«Առեալ բաժակ՝ զոհացաւ եւ ետ նոցա եւ ասէ. «Արբէ՛ք ի դմանէ»» ցուցանէ, թէ ո՛չ յԻր պէտս, այլ ի մեր փրկութիւն զայս մատակարարէ, եւ ո՛չ միոյ, այլ բազմաց վասն նօթձէ: «Չի այդ է արին Իմ նորոյ ուխտի»: «Նոր» ասելովն հնացուցանէ զառաջինն, եւ «ամենայն որ հնանայ մերձ է յապականութիւն եւ ի վախճան»՝ ըստ առաքելոյ (հմմտ. Եբր. Ը 13): Եւ այլ ազգ. «նոր» ասելովն ցուցանէ, զի հինն ի ձեռն անասնական պատարագաց լինէր ուխտ դաշնաւորութեանց, իսկ աստ ո՛չ արեամբ ոչխարի, այլ սուրբ մարմնով եւ արեամբ Իրով լինի: Դարձեալ ուխտ խոստման աւետեաց նորոյ օրինացս, զի որպէս հինն ուխտ արեամբ նորոգեցաւ, այսպէս եւ նորս՝ Իմով արեամբ:

¹ Զ առ

² Յովհ. Զ

³ ՏՉ Ապողինար

⁴ Զ առ

⁵ Զ արին

⁶ Սաղմ. ԼԵ 9

Բայց զի՞նչ ուխտն է տեսցուք: Ուխտ է խոստացելոց իրաց անվրէպ վճարումն: Արդ՝ որպէս անդ ուխտեաց նոցա՝ տալով զերկիրն պարզեական, եւ զայն արեամբ անբանիցն կնքեաց՝ ըստ այնմ. «Այս է արիւն կտակին, զոր խօսեցաւ Տէր յականջս ձեր» (հմմտ. Ելք ԻԴ 8, Եբր. Թ 20), նոյնպէս եւ աստ ուխտէ մեզ զարքայութիւնն եւ այսմ ուխտի առհաւատչեայ տայ մեզ զարիւնն Իւր սուրբ՝ իբր այն. «Որպէս Հայր Իմ ուխտեաց Ինձ, եւ Ես ուխտեմ ձեզ զարքայութիւնն» (Ղուկ. ԻԲ 29). վկայէ եւ Չաքարիաս. «Եւ դու արեամբ ուխտի քո արձակեցեր զկապեալս յանջորդի գրոյ» (Չաք. Թ 11): Տես, զի ոչ ասէ «արեամբ գառիւնն», այլ «քո արեամբ ուխտիդ». զի որպէս գառիւնն արեամբ յԵգիպտոսէ զԻսրայէլ ազատեցեր, այսպէս եւ Քո արեամբ զկապեալս յանջորդի գրոյ կռապաշտութեանն, զոր Երեմիաս «ծակոտկէն» ասաց¹, արձակեցեր զհեթանոսս յերկինս, որպէս եւ այլ ոմն մարգարէ ասէ թէ՛ «Տաց ձեզ ուխտ նոր՝ ոչ ըստ առաջին ուխտին» (հմմտ. Երեմ. ԼԱ 31-32), եւ դարձեալ Ովսէէ. «Եղից ընդ նոսա ուխտ եւ տաց նոցա կտակս նորս» (հմմտ. Ովսէէ Բ 18): Այս է ասելն թէ՛ «Այդ է արիւն Իմ նորոյ ուխտի», առ որս յաւելու Ղուկաս թէ՛ «Չայդ արարէք առ Իմոյ յիշատակի» (Ղուկ. ԻԲ 19), այսինքն՝ յամենայն տարուջ ի նմին ժամանակի, այլեւ յամենայն աւուր. ըստ առաքելոյ՝ «Քանիցս անգամ ուտիցէք զհացս եւ զբաժակս, զմահն Տեառն պատմեսջիք, մինչեւ եկեսցէ Նա» (հմմտ. Ա Կոր. ԺԱ 26): Չի որպէս անդ յիշատակ փրկութեան անդրանկացն եւ արուեստիցն, որ յԵգիպտոս գործեցան, զենուն զՊասքայն, նոյնպէս եւ դուք յԻմ յիշատակ մահու եւ չարչարանաց, եւ փրկութեան ձերոյ, որով պատկառի հրեշտակն ի խաչադրոշմ նշանէ արեան Իմոյ, կատարեսջիք զխորհուրդ մահու Իմոյ արեամբ եւ մարմնով: Դարձեալ զաշակերտսն մխիթարէ այսու, զի որպէս Մոսէս զայն իւր յիշատակ արձանի եթող, նոյնպէս եւ այս յիշատակ Իմոյ կամաւոր մահուս եղիցի:

«Որ ի վերայ բազմաց հեղու ի թողութիւն մեղաց». զպատճառս մահուն ասէ այժմ, թէ փոխանակ բազմաց հեղու՝ ըստ այնմ թէ՛ «Ետ զանձն փրկանս փոխանակ բազմաց» (հմմտ. Մատթ. Ի 28): Եւ հեղու ոչ վայրապար, այլ զի սրբէ զյանցանս՝ ըստ Յովհաննո թէ՛ «Արիւնն Յիսուսի սրբէ զմեզ յամենայն մեղաց» (Ա Յովհ. Ա 7):

¹ Երեմ. Բ 13

Եւ «ի վերայ բազմաց,- ասէ,- հեղու» եւ ո՛չ ամենեցուն, զի Նա ամենեցուն կամէր, որպէս ասաց թէ՛ «Արբէք ի դմանէ ամենեքին», իսկ նոքա ոչ կամեցան, այլ եղբօրորդիքն միաձնունդք խոստովանութեան արբին եւ արբեցան, վասն այսորիկ «բազմաց» ասէ, որ զհաւատացելոցն նշանակէ: Ջի որպէս անդ յօձին ցցումն ո՛չ ամենեքեան, այլ որք հաւատացին զերծանէին ի խաժմանէ թունաւոր օձիցն¹, նոյնպէս եւ աստ ի բարձրանալն Որդոյ մարդոյ, որք հաւատասցեն ի Նա անմեղ մարմնով վասն մեր պատարագեալ, տայցէ նոցա զկեանսն յաւիտենականս: Եւ «հեղու» ասէ եւ ոչ եթէ «հեղաւ» կամ «հեղեալ լիցի», որպէս զի զմշտնջենաւորն ցուցցէ եւ զանձախելի մատուցումն. զի որքան ի մարմնի ենք անդամք Նորա՝ ըստ դիրագայթ մարմնոյս ակամայ կամօք անկանիմք ի յանցանս, Գլուխն մեր ըստ իս իջեալ՝ պատարագելով զենանի միշտ յԵկեղեցի՝ քաւելով զիս:

Եւ կամ՝ «հեղու» ասելն եւ ոչ թէ «հեղուն»՝ զկամաւորն եւ զառատն ցուցանէ շնորհ: Եւ դարձեալ՝ զի յորժամ ետ, ի ծածուկ էր արիւնն ի բաժակին, իբր ծրարեալ ի վարչամակի, վասն այսորիկ ասաց թէ՛ «հեղու», այսինքն յորժամ ի խաչին հեղու, տեսէք գորպիսութիւնն. եւ տեսաք, եւ էր արիւն եւ ջուր, որպէս վկայեաց ւետարանիչն²: Բայց գոյ ի տեղիս տարակուսանս, թէ զի՞նչ է, զի ւետարանիչքս նախ զհացն յառաջ դնեն քան զբաժակն, իսկ Պօղոս առ կորնթացիսն ասէ թէ՛ «Բաժակն, զոր օրհնենք, ո՛չ ապաքէն հաղորդութիւն է արեանն Քրիստոսի, եւ հացն, զոր բեկանենք, ո՛չ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի» (Ա Կոր. Ժ 16): Աստ ո՛չ է ընդդիմութիւն, այլ միայն զայս կամին յայտնել ւետարանիչքն, որք զհացն նախ եղին վասն թանձրութեանն նշանակ մարմնոյն, զի մարմնովն զաստուածութիւնն ծանեաք, զոր զինին նշանակէ վասն անօտրութեանն: Իսկ Պօղոս զգինին նախ դասէ, զի նախ էր Բանն քան զառնուլն մարմին:

Բայց ասեմ ձեզ, ո՛չ ես արբից յայսմեակ ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն ցայն, յորժամ³ արբից զդա ընդ ձեզ նոր յարքայութեան Հօր Իմոյ» (ԻՉ 29):

¹ Թիւք ԻԱ 6-9

² Զ երեք

³ Յովհ. ԺԹ 34

⁴ Զ մինչեւ

Յուցանէ այսու, թէ եւ Ինքն արբ օրինակաւ ի զինոյն, որ եւ ճշմարտապէս ընպելոց էր զբաժակ մահուն, զի մի՛ յորժամ լսիցեն, ասիցեն՝ զիա՞րդ զարիւնն¹ ընպիցենք եւ զմարմինն ուտիցենք, եւ զայթագղիցին, որպէս եւ երբեմն ի բանէն²: Նախ Ինքն էարբ³ բանիւ զբաժակն եւ զործով զմահն, զի առանց խռովութեան ածիցէ զնոսա ի հաղորդութիւնն խորհրդոյն, միանգամայն եւ ի հաւանութիւն չարչարանաց վասն մեր մեռանելոյն: Եւ դարձեալ քանզի վասն չարչարանաց եւ խաչի խօսեցաւ ընդ նոսա, ապա եւ զյարութեանն բան ի մէջ բերէ, զոր եւ «արքայութիւն» կոչէ, քանզի եւ զյարութիւն Իր այնպէս անուանէ: Եւ յիրաւի ասէ թէ՛ «ոչ եւս արբից», զի որ մեռաւն մեղացն մեռաւ միանգամ, եւ որ կենդանին է՝ «կենդանի է Աստուծոյ, զի այսուիտեւ ոչ մեռանի, եւ մահ նորա ոչ եւս տիրէ», ասէ աստուածայինն առաքեալ (հմմտ. Հռոմ. Զ 9-10): Եւ է՞ր յորժամ յարեաւ, արբ. զի մի՛ թանձրամիտքն առաջօր ինչ զյարութիւնն համարեացին, քանզի յարութեանն զայն նշանս տային, թէ՛ կերաք եւ արբաք ընդ Նմա:

Իսկ զի՞նչ «նոր»-ն նշանակէ. որ չնաշխարհիկն է՝ զոր ոչ մարմին չարչարելի ունէր այնուիտեւ, այլ անեղծ եւ անապական եւ անկարօտ կերակրոց, զի ոչ վասն պիտոյից եկեր եւ էարբ յետ յարութեանն, այլ վասն յարութեանն հաստատութեան: Եւ «ընդ ձեզ» ասէ, այսինքն՝ եւ դուք վկայիցէք, քանզի ձեզէն իսկ տեսանիցէք զԻս յարուցեալ եւ վկայք լինիցիք զործոցն իրօք եւ երեսօք: Եւ ընդէ՞ր ոչ ջուր արբ, յորժամ յարեաւն, այլ զինի. նախ՝ զի ցուցցէ, թէ նովիմք մարմնով, որով զբաժակ մահուն էարբ եւ չարչարեցաւ, նոյն մարմնով եւ յարեաւ: Եւ երկրորդ՝ զի զմիւս հերձուածն արտաքս խլեցէ, զի են ոմանք, որ ի սուրբ խորհուրդն ջուր ի կիր արկանեն, այսինքն՝ որք փոխանակ զինոյ՝ ջրով պատարագեն, որք են որբանոսք, քանզի ասէին զՅիսուս մարդ սոսկ, որ հացին ցուցանէին, եւ ջուր դնելով մեռեալ զուշակէին եւ ոչ զինի մերձեցուցանէին, որ զանապականութիւն Բանին ցուցանէ եւ ի մահուն զկենդանութիւն: Աստ ցուցանէ, թէ յորժամ զխորհուրդն աւանդեաց, զինով աւանդեաց յամօք նոցին, եւ յորժամ յարեաւն, ա-

¹ Տ զարիւն

² Յովի. Զ 39-66

³ Զ արբ

ռանց խորհրդոյ ի սեղանն լոկ զգինին էարբ¹, քանզի ասէ թէ՛ «ի բերոյ որթոյ», եւ որթն գինի եւ ոչ ջուր ծնանի:

Եւ դարձեալ «արքայութիւն Հօր» զհանդերձեալ յարութիւնն ասէ, յորում սուրբքն ի սեղանն Հօր բազմեալ փափկանան՝ ըստ այնմ թէ՛ «Ի սեղան Հօր Իմոյ բազմեցուցից զձեզ եւ անցեալ պաշտեցից» (հմմտ. Դուկ. ԺԲ 37): Եւ արդ՝ թէ յարքայութիւնն Աստուծոյ ոչ իմանի կերակուր եւ ըմպելի զոյ՝ ըստ առաքելոյ², որպէս եւ սաղոկեցոցն ասէր թէ՛ «Ի յարութեանն ոչ կանայք արանց լինին եւ ոչ արք՝ կանանց, այլ են իբրեւ զհրեշտակս յերկինս» (Մատթ. ԻԲ 30), եւ զի զիտենք, թէ անկարօտ կերակրոյ են անմարմին զուարթունքն. ասպա ընդէ՞ր ասաց թէ՛ «Ոչ արբից ի բերոյ որթոյ, մինչեւ արբից զսա նոր ընդ ձեզ յարքայութեան Հօր»: Կամ թէ՛ զառաւել պատիւն նոցա ծանօթական իրօք յայտ արար, եւ զի ոչինչ քան զայն վերագոյն պատիւ նոցա լինիցի, յորժամ ի Նորա սեղանն ուտիցեն եւ ըմպիցեն, կամ զմահուն խորհուրդ յայս առակեաց, զոր այժմ ոչ կարացաք զբովանդակն իմանալ, անդանօր³ յայտնելոց է, զոր «արբից,- ասէ,- ընդ ձեզ»: Որ է Նորա զմայլեցուցանելն եւ մեր զմայլին կատարեալ եւ նոր դպրութեամբն, քանզի նոր է միշտ այժմ «փոքր ի շատէ ծանուցեալն» առակաւ եւ «հայելեալ»՝ ըստ առաքելոյ⁴: Վասն զի, համարձակիմ ասել, զի այժմուս թէպէտ ճշմարտութիւն է հնոյն աղօտին եւ ստուերականին, սակայն օրինակ է հանդերձելոյն միշտ նորոյն եւ յաւիտենականին: Իսկ «մինչ»-ն անկէտ եւ անվախճան, քանզի Նա միշտ ուսուցանէ, եւ մեր միշտ ուսանիմք եւ «նորոգիմք փառաց ի փառս՝ իբրեւ ի Տեառն Հոգւոյ» (Բ Կոր. Գ 18): Իսկ ասելն թէ՛ «ընդ ձեզ արբից»՝ քանզի օրինակ իմն կերակուր է վարդապետութեանն Կերակրողին, զի եւ Ինքն ցնծայ եւ զմայլի ընդ մեր նորոգութիւնն զուարճանալ:

Եւ օրհնեցին եւ ելին ի լեառն Չիթենեաց (ԻԶ 30):

Նախ յանդիմանէ զայնոսիկ, որ իբր զխոզս վայրապար ուտեն եւ առ ոտն հարկանեն զսեղանն երեւելի, եւ յառնեն արբեցութեամբ հանդերձ, որոց պարտ էր զոհանալ եւ օրհնութեամբ զրաւ

¹ Զ արբ

² Դռոմ. ԺԴ 17

³ Տ անտանօր

⁴ Ա Կոր. ԺԳ 12

առնել ի փառս Աստուծոյ՝ ըստ առաքելոյ¹: Եւ երկրորդ՝ ամաչեցուցանէ զնոսա, որք վախճանի աղօթից սուրբ Խորհրդոյն ոչ անսան, քանզի այն այսր օրինակ էր, զի գոհացաւ նախքան զաւանդել զխորհուրդն, զի եւ մեք գոհանայցեմք. գոհացաւ եւ օրհնեաց եւ յետ յառնելոյն, զի եւ մեք զնոյն առնիցեմք: Իսկ ելանելն ի լեառն Չիթենեաց՝ յայտնի առնէ զանձն յառաջ քան զունելն. զի մի՛ կարծիցի թաքչել, փութացաւ զալ ի տեղին, զոր Յուդա ճարտար գիտէր, որպէս ասէ Յովհաննէս, զրէ եւ Չաքարիաս թէ՛ «Կացցեն ոտք նորա ի վերայ լերինն Չիթենեաց յաւուր յայնմիկ յանդիման Երուսաղէմի, եւ պատառեսցի լեառն Չիթենեաց ընդ չորս մասունս» (Չաք. ԺԴ 4), զի արգելոց էր քահանայութիւնն Իսրայէլի ի ձեռն առաքելոցն ընդ արեւելս եւ ընդ արեւմուտս, ընդ հիւսիս եւ ընդ հարաւ:

Իսկ մտաւոր տեսութեամբ՝ «օրհնեցին,- ասէ,- եւ ելին ի լեառն Չիթենեաց»՝ ուսուցանէ, թէ զգոհութիւն աստուածային խորհրդոյն պարտիմք ըստ մարմնոյ միայն ի ձեռն նշանացն կատարել, այլ եւ ելանել բարձրութեամբ մտաց ի մէջ լուսաւոր լերանցն յաւիտենականաց եւ անդ ընդ նոսա անմարմնարար մտաւոր պաշտմամբ եւ իմանալի նշանօք զՅիսուսն մեր պատարագել, որոյ եւ նշանակքս այս՝ ասպացոյց կարգեցան: Որոց լիցի եւ մեզ համաձայնիլ² երկնային քահանայապետութեանցն կատարմանց եւ ընդ նոսին միշտ պաշտել զԱստուած կենդանի՝ բարձրութեամբ խորհրդով եւ լուսաւոր գործով ըստ Չիթենեաց առակի, ի փառս գթութեանցն Հօր եւ ի շնորհս միածնի Որդոյն եւ ի սէր ամենասուրբ Հոգոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն³:

Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. «Ամենեքին⁴ դուք գայթազելոց էք յԻնէն⁵ յայսմ գիշերի (ԻՉ 31):

Յորժամ զմահուն խորհուրդն աւանդեաց, այսուհետեւ սկիզբն առնէ իրացն պատմութեան, թէ՛ «Ամենեքին⁶ դուք գայթազելոց էք յԻնէն յայսմ գիշերի»: «Գայթազելիլ» զմտօք սողոսկելն ասէ եւ

¹ Եփես. Ե 19-20

² Գ համաձայնեալ

³ Գ > եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն

⁴ Գ ամենեքեան

⁵ Գ > յԻնէն

⁶ Գ ամենեքեան

զմարմնով քայքայիլն¹, եւ չեն ինչ զարմանք այս. զի թէ ի ժամանակին, յորժամ պատեալ էին զՆովաւ փառք եւ պատիւ յամենեցունց, վասն բանի միոյ փոքու, զոր ուսոյց Նա, բազումք յաշակերտացն թողին զՆա եւ զնացին², որչափ եւս առաւել ի ժամանակի չարչարանացն, յորժամ ընթրնեցաւ եւ կապեցաւ ի խաչ ելանել, երկնստէին ի Նմանէ եւ ի բաց հետտէին, իսկ իբրեւ եհաս Նմա անարգանք, այսպն առնէր եւ ձաղէր, նոյնպէս եւ սոքա, զի տակաւին չէին կատարեալ: Իսկ «ցայսմ զհշերի» ասելն զմերձաւորութիւն չարչարանացն ցուցանէ, կամ «զհշեր» զփորձութիւն կրիցն ասէ, զոր տեսեալ յԻս հեռանայք յԻնէն, ոչ մի կամ երկու միայն, այլ ամենեքեան իսկ:

Չի գրեալ է թէ՝ «Հարից զհովին, եւ ցրուեսցին ոչխարք հօտին»:

Չմարգարտութիւնն Չաքարիայ³ ի մէջ ամէ, զի ցուցեց, թէ տնտեսութիւն է գործն, վասն որոյ մարգարէքն յառաջագոյն կարապետեցին: Միանգամայն հաւանեցուցանէ զնոսա գրելոցն ցանկ միտ դնել, այլեւ ցուցանէ, թէ ըստ Աստուծոյ կամացն ելանէ ի խաչ, նաեւ զայն յայտ առնէ, թէ չէ օտար ի հնոյն, եւ ոչ յԱստուծոյ որ ի Նմա պատմէր: Դարձեալ ի մխիթարութիւն նոցին ամ ի մէջ զբան մարգարէին, թէ որպէս հովուին հարուածն ասացաւ, այսպէս եւ ցրումն ոչխարացոյ նախ ցուցաւ, եթէ պատճառ ցրուելոյ ձեր, այս է՝ զայթագորութեան, հարուած հովուին է՝ ըստ մարգարէութեանն:

Եւ յետ յառնելոյն Իմոյ յառաջեցից քան զձեզ ի Գալիլեա» (ԻՉ 32):

Արագ առնութիւն ցրմանն⁴ եւ զժողովն մարգարէացաւ, որպէս զի թէ տրտմեսցին մահուամբն, մխիթարեսցին յարութեամբն, իսկ ասելն թէ՝ «ի Գալիլեա յառաջեցից», զի անդ յապահով եղեալ հաւատացեն բանին: Եւ դարձեալ՝ զի յետ յարութեանն ոչ յերկնից երեւի եւ ոչ հեռի ուրեք յաշխարհ տանի, այլ ի նմին ազգի եւ գրեթէ ի նոյն տեղի, զի հաւատարիմ արասցէ նոցա, թէ նա, որ խաչեցաւ, նա եւ յարեաւ: Եւ դարձեալ այլ իմն ուսուցանէ, զի թէպէտ ըստ աստուածութեանն ամենայն ուրեք արագապէս հասա-

¹ Զ քայքայելն

² Յովի. Զ 67

³ Չաք. ԺԳ 7

⁴ Զ առ ընթերցմանն] առընթեր ցրմանն

նէր հանդերձ մարմնովն, յորժամ կամէր, այլ աստ յայտնէ, թէ թեթեւագոյնք են յարուցեալքն՝ քան որք տակաւին մարմնով եւ ախտիւք յաշխարհի շրջին. յայտ է եւ յամբառնալոյն եւ ի վեր¹ ամպօք ընդ առաջ Տեսուն յափշտակելոյն, վասն այտորիկ ասէ թէ «Յառաջեցից քան զձեզ ի Գալիլեա»:

Պատասխանի եւ Պետրոս եւ ասէ ցՆա. «Թէպէտ եւ ամենքեան զայթազդեցին² ի Քէն, սակայն եւ ոչ զայթազդեցայց» (ԻՉ 33):

Չի՞նչ խօսիս, Պետրէ՛, մարգարէն ասէ, թէ ցրուեցին ոչ-խարքն, եւ Քրիստոս հաստատեաց զբանն, եւ դու ասես թէ՛ ոչ. չիցե՞ն շատ առաջինքն, յորժամ ասէիր թէ՛ քա՛ւ յիցի, եւ ըմբերանեցար³, այլեւ կրկին այժմ խիզախելով ասես՝ յանձնապատան եղեալ՝ թէպէտ ամենքեան այսպիսի ինչ կրիցեն, այլ եւ ոչ կրեցից: Արդ՝ վասն այտորիկ թոյլ ետ նմա զլորիլ, զի խրատեսցէ զնա անսալ Քրիստոսի ամենայնիւ եւ քան իւր մտացն յօժարութեան հաւատարմագոյն զՆորա՛ վճիռն համարիլ⁴: Քանզի պարտ էր աղաչել եւ ասել՝ օգնեա՛ մեզ, զի մի՛ ճեղքեսցուք ի Քէն, իսկ նա զայս թողեալ՝ մեղանչէր կրկին, մանաւանդ թէ երեքկին իսկ. նախ զի դիմադարձ լինէր, եւ ասպա՛ զի քան զայլսն զանձն յառաջ մատուցանէր եւ զի զամենայն իւր համարէր, զորս բժշկել կամելով զայսպիսի ախտ եւ յոխորտ բարուցն ցածուցանել՝ թոյլ տայ ուրանալ, զի որ բանիւն⁵ ոչ հաւանեցաւ, նա եւ ոչ մարգարէին, խրատեսցի արդեամբք, վասն որոյ թողեալ զայլսն՝ ի նա ձգէ զբանն:

Ասէ ցնա Յիսուս. «Ամէն ասեմ քեզ, զի յայսմ գիշերի, մինչչեւ հաւու խօսեալ իցէ, երիցս ուրացիս զԻս» (ԻՉ 34):

Պետրոս ի զայթազդելոյն հրաժարէր, իսկ Քրիստոս պնդէ թէ՛ եւ⁶ ուրացիս՝ եւս, ոչ միանգամ, այլ երիցս, եւ զստուգութիւնն ժամանակաւն հաստատէ: Կամ թէ՛ զոր նախ զայթազդիլ ասաց, այժմ ուրանալ դնէ, քանզի ոչ այլ ինչ է զայթազդիլն, քան թէ հենանալ ի Նմանէ՛ եթէ մարմնով եւ եթէ ուրանալով: Բայց Ղուկաս ասէ թէ՛ «Միմո՛ն, Միմո՛ն, սատանայ խնդրեաց մաղել զքեզ իբրեւ

¹ Տ մեր

² Գ զայթազդելոց են

³ Մատթ. ԺԶ 22-23

⁴ Գ համարել

⁵ Գ բանիւ

⁶ Գ > եւ

զգորեան», այսինքն խոռվել, ամբոխել, փորձել, «այլ Ես աղաչեցի վասն քո, զի մի՛ պակասեսցին՝ հաւատք քո» (Ղուկ. ԻԲ 32): Ան ի մորմոքեցուցանել զնա՝ ասաց զայս, զի ցուցցէ, թէ սաստկագոյնք էին նորա յանցանքն քան զընկերացն եւ բազում օգնականութեան կարօտ: Իսկ վասն է՞ր ոչ ասաց թէ՛ ոչ ետու թոյլ, այլ թէ՛ աղաչեցի. զի ի չարչարանս երթալոց էր, զմարդկօրէնն ցուցանէր, այլեւ զհամակամութիւն ընդ Հօր յայտնէր, եւ ոչ ասաց թէ՛ ոչ ուրասցիս, այլ թէ՛ մի՛ պակասեսցին հաւատքն քո, զի մի՛ բնաւին կորնչիցի: Եւ դարձեալ՝ ասելն թէ՛՝ «Սատանայ խնդրեաց զքեզ խարբալել», ծածկաբար յարիութիւն կրթէ զՊետրոս, քանզի նա խնդրէ զքեզ ի մարտ, միանգամայն եւ ամենեցուն կորստեան ըղձայ, արիացիր, ասէ, եւ դո՛ւ ընդդէմ նորա: Չայս ասելով՝ ուսուցանէ ի վերուստ օգնականութիւն խնդրել, իսկ նա ոչ իմացեալ զայս, այլ յիրն պնդեալ կայր:

Ասէ ցնա Պետրոս. «Թէ եւ մեռանել հասանիցէ ընդ Քեզ, զՔեզ ոչ ուրացայց»: Նոյնպէս եւ ամենայն աշակերտքն ասէին (ԻԶ 35):

Ղուկաս յայտնապէս նշանակէ, թէ որչափ Քրիստոս զվճիռն տայր, նոյնչափ Պետրոս ընդդէմ դառնայր՝ կամ առ անբաւ սիրոյն բաղձանաց, զոր ունէր առ Նա, որ թէպէտ ոչ յայնժամ, այլ յետոյ մեռաւ իսկ վասն Նորա, եւ կամ թէ՛ զի զերծաւ ի կասկածանաց մատնութեանն եւ ետես զմատնիչն յանդիմանեալ, այնուհետեւ խիզախելով եւ քան զայսն ճոխանալով ասէր. «Թէ եւ մեռանել [եւս] հասանիցէ՞ ընդ Քեզ, զՔեզ ոչ ուրացայց»: Վասն այսորիկ արգել զնա. ոչ թէ Ինքն իսկ մղեաց ընկէց յուրացութիւնն, քա՛ւ լիցի, այլ լոկ եթող յԻրմէ՛ օգնականութենէն, զոր ոչ խնդրեաց, յանդիմանելով զմարդկային բնութեանս տկարութիւն, ուստի ուսանիմք մեծամեծ կրօնս իմաստից, թէ չէ՛ բաւական յօժարութիւն մարդոյն միայն ի բարոք գործոյ լրումն, թէ ոչ Աստուած եւս ձեռն տայցէ: Դարձեալ՝ եթէ վայելիցենք ի վերին օգնականութիւնն եւ մեր ոչ իցէ յօժարութիւն, կորնչիմք եւս, եւ զերկոսին զայս Յուդա եւ Պետրոս ցուցանեն, զի Յուդա վայելեաց ի խնամսն եւ չօգտեցաւ ինչ, քանզի ոչ կամեցաւ զիր փրկութիւնն եւ ոչ ի յանձնէ ինչ նպաստ եղել, եւ Պետրոս թէպէտ յօժարեցաւ եւ ոչ ի միում օգնա-

¹ Զ պակասին

² Ղուկ. ԻԲ 32-34

³ Զ հասանէ

կանութիւնն վայելեաց, գորեցաւ եւ սա՛. քանզի յերկոցո՛ւնց իսկ յայսցանէ նիւթի եւ անկանի առաքիւնութիւնն:

Յայնժամ գայ Յիսուս ընդ նոսա ի գեղ մի, որում անուն էր Գեթսեմանի՝¹ (ԻԶ 36):

Թէպէտ ի մերոյ բառիս ստուգութիւնն Գեթսեմանին «մագմանոց» լսի, սակայն եբրայեցի է բառս, որ թարգմանի «ձոր պատրաստութեան» կամ «ջահից», յոր ի գիշերի Դաւիթ ջահիւք փախչէր յԱբիտղոմայ եւ տրտմեալ վասն յանդգնութեան նորա՛: Արդ՝ անոր գայ կամ վասն յապահովութեանն, կամ զի զօրինակն ճշգրտեսցէ, զի անոր եկեալ ջահիւք ըմբռնել զԱնըմբռնելին, այլեւ անոր պայծառ ջահ պատրաստեաց զաշակերտսն ի ձեռն վարդապետութեանն:

Եւ ասէ ցնոսա. «Նստարո՛ք այդր, մինչեւ երթայց կացից յաղօթս»:

Վասն զի անքակ էին ի Նմանէ եւ ոչ կամէին բնաւին հեռանալ, հրամայեաց նստիլ՝³ անոր, զի ըստ Իւրում սովորութեանն առանձինն աղօթէր, մանաւանդ ի ժամանակի փորձութեանն, որպէս զի զնեզ ուսուցէ հանդարտութիւն ունել յաղօթս եւ կազնել անձանց բազում պատրաստութիւն, նաեւ յաղօթելն ի բացեայ լինիլ՝⁴ միշտ ի մարմնական խորհրդոց, եւս առաւել՝ յորժամ վտանգ ինչ հուպ կայցէ:

Եւ առեալ ընդ Իւր զՊետրոս եւ զերկուս որդիսն Չերեղեայ՝ սկսաւ տրտմել եւ հոգալ (ԻԶ 37):

Ընդէ՞ր զամենեսեան չառնուցու ընդ Իւր. զի մի՛ վիատիցին. այլ զնոսա միայն, որ փառացն Նորա հաղորդ եղեն ի լերինն Թաբոր. բայց սակայն եւ զնոսա թողու: «Սկսաւ,- ասէ,- տրտմել եւ հոգալ». այսու սերմանէ ի միտս աշակերտաց Իւրոց մխիթարութիւն, միանգամայն եւ ուսուցանէ զնոսա, մանաւանդ զՊետրոս, թէ ո՛չ է պարտ յառաջ քան զմահն ի վերայ մահու ումեք խորհստալ, զի թէ Նա, որ ոչն երկնչի, երկեաւ, զի՞նչ ասես զայլոց: Այլեւ ցուցանէ, թէ

¹ Տ Գեթսեմանի Զ Գեթսեմանի (այսպէս է և այլուր)

² Բ Թագ. ԺԵ 14, 30

³ Զ նստել

⁴ Զ լինել

Ճշմարտապէս զմարմին Ադամայ զգեցաւ եւ բանական հոգի ընկալաւ եւ եղև մարդ, որում անկ է տրտմութիւնն եւ հոգն:

Յայնժամ ասէ ցնոսա. «Տրտում է ոգի Իմ մինչև ի մահ, կացէ՞ք աստ եւ սկեցէ՞ք ընդ Իս» (ԻՉ 38):

Աստուածն Բան յորժամ մարդ եղև եւ զկիրս մարդոյն ընկալաւ, զի յորժամ կամէր՝ ոչ ի հարկէ, այլ թոյլ տայր կամաւորաբար կրել մարմնոյն զհիւր կիրսն, որպէս զքաղցնուլն եւ զվաստակիլն եւ զարտասուելն եւ զայլ ամենայն անպարսաւելի կիրս, նոյնպէս զերկիւղ եւ զտրտմութիւն, որպէս զի զարտօսր եւ զվաստակ եւ զերկիւղ եւ զտրտմութիւն բարձգէ յայնցանէ, որ մահուն երկիւղի վտարանդի կային ի ծառայութիւն: Եւ թէպէտ բովանդակեցաւ Անբովանդակելին եւ կրէր զկիրս ըստ մարմնոյն, սակայն յԻրն անախտութիւն անփոփոխ մնայր եւ առանց կարծեսց եւ սքանչելագործէր աստուածախառն մարմնով, որպէս ասացի, ապա թէ ոչ զի ի մահուանէն երկնչէր, ընդէ՞ր զաշակերտսն քաջալերէր թէ «Մի՛ երկնչիք յայնցանէ, որ զմարմին սպանանեն» (Մատթ. Ժ 28), եւ թէ «Յաղթեցի աշխարհի» (Յովհ. ԺՉ 33), եւ թէ «Իշխանութիւն ունիմ դնել [զանձն Իմ] եւ իշխանութիւն ունիմ դարձեալ առնուլ» (հմմտ. Յովհ. Ժ 18), որով կամաւորն յայտնի: Իսկ ասելն թէ «Տրտում է ոգի Իմ մինչև ի մահ», այսպիսի է. կամ թէ մահուչափ տրտմեալ եմ, ոչ միայն վասն Իր, զի ստուգապէս մեռանելոց էր, այլեւ վասն կորուսելոցն մահուամբ Նորա, կամ թէ մինչ ի մահ է տրտմութիւն Իմ, զի յորժամ մարմին մեռանի, այնուիետես ոչ եւս ունի տրտմութիւն, այլ ուրախանայ եւս, զի ի կապանաց ազատեցաւ: Նաեւ այն, զի յետ մահու տրտմութիւն գործէ ձեզ, հասանելոց է ուրախութիւնն ի ձեռն յարութեան Իմոյ, զոր վասն սիրոյն որ առ նոսա, հոգի Իր անուանէ: Եւ ասէ¹. «Սկեցէք ընդ Իս»՝ կամ վասն Իմ աղօթեցէք, կամ թէ՛ զգաստ եւ արթո՛ւն կացէք մինչ ի յարութիւն Իմ:

Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝ անկաւ ի վերայ երեսաց Իւրոց, կաց յաղօթս եւ ասէ (ԻՉ 39):

Ղուկաս ասէ. «Իբրեւ քարրնկէց մի մեկնեցաւ, եղ ծունր եւ կայր յաղօթս» (Ղուկ. ԻԲ 41). կամ յաշակերտացն, կամ քան

¹ Զ ասէ թէ

գորտնութիւնն յառաջ էանց, զի, որպէս ասացի, յորժամ կամէր, կոչէր, եւ յորժամ կամէր, հերքէր: Իսկ անկանելն ի վերայ երեսաց՝ զի զանկեալ բնութիւնս վերստին կանգնեացէ, իբր հայր գորովագութ խոնարհեալ ի յանկեալ՝ եւ վերածեռնել¹ սկսցի, նոյնպէս Տէր մեր անկաւ, զի յարուցէ, եւ մեռաւ, զի կենդանացուցէ: Եւ դարձեալ ուսուցանէ մեզ զձեւ աղօթից, թէ պարտ է առ երկիր հպիլ² երեսօք, որպէս զի զբնութիւնն ծանկիցէ ի հողոյ գոլ, միանգամայն եւ զԱրարիչն իւր ի միտ առնուցու, որ ընդ կառոյն զանապական պատկերին Իւր լծեաց զպայծառութիւն: «Կաց,- ասէ,- յաղօթս». քանզի ի ժամ փորձութեան մերոյ ցնդին միտք մեր, եւ թարթափին խորհուրդք մեր, «կաց յաղօթս», զի ուսուցէ մեզ, թէ փոխանակ մեքենայից եւ հնարից՝ աղօթք պիտոյ են, զի ժողովեցեն զխորհուրդս քայքայեալս եւ ցրուեցեն զփորձութիւնն եկեալ հասեալ, վասն զի ամենայն գործք Նորա յօրինակ մեզ գործեցան, զի եւ մեք Նորին օրինակաւն վարեցուր:

«Հայր Իմ, եթէ հնար է, անցցէ բաժակս այս յԻնձ»:

Ոչ թէ անգիտանայր զանցանել եւ կամ զըմպել բաժակին, որ յառաջագոյն ասէր թէ՛ «Սկրտութիւն մի ունիմ մկրտիլ» (Ղուկ. ԺԲ 50), եւ՛ «Զբաժակն Իմ ըմպիցէք³» (Մատթ. Ի 23), եւ՛ «Վասն այտորիկ եկի ի ժամս» (հմմտ. Յովհ. ԺԲ 27), զի արքից զսա, այսինքն զի հատուցից զպարտս ամենեցուն, զոր մարգարէքն եւ արդարքն հատուցանել ոչ կարացին, եւ նախ քան զելանելն յԵրուսաղէմ՝ զչարչարանաց խաչին եւ զթաղմանն ճառէր, որով եւ զՅոնան ի մէջ ածէր, եւ թէ՛ «Մատնի ի ձեռս մարդոց մեղաւորաց ի խաչ ելանել եւ յերիւր ւաւոր յարիցէ» (հմմտ. Մատթ. ԺԷ 21-22): Արդ՝ զիա՞րդ հնար է անցանել բաժակին եւ սուտ լինել բանիցն. այլ զի զայս աղօթէ, քանզի զիտէր եւ տեղեակ իսկ էր, զի աշակերտքն զայթազդին, եւ Շմաւոն ուրանայ, եւ Յուդա խեղդի, եւ Երուսաղէմ աւերի, եւ Իսրայէլ ցրուի, եւ Տաճարն քակի, եւ քաղաքն այրի, եւ բիրք բիրուց սատակին ի սովոյ եւ ի սրոյ: Արդ՝ աղօթէ առ Հայր, թէ հնար է, ասէ, բաժակ մահու Իմոյ մի՛ լիցի պատճառ կորստեան եւ յանցուցէ զբազումս, այլ բաժակս, որ յԻնձն կա-

¹ Զ վերածեռնեալ

² Զ հպել

³ Զ ըմպիցէք

⁴ Տ > արդ

տարի, անցցէ ի նոցանէ առանց վնասու, որպէս ի խաչին ասէր.
«Թող սոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն» (Ղուկ. ԻԳ 34):

Եւ դարձեալ զի եթէ զգեցաւ մարմին, ոչ ստութեամբ, այլ ճշմարտութեամբ, ապա ուրեմն եւ փոքրկացաւ վասն մարմնոյն, եւ չէ՛ մարթ մարմնոյն փոքրկութեան չերկնչել ի մահուանէ: Չի որպէս աշխատեցաւ եւ վաստակեցաւ եւ տքնեալ տկարացաւ, նոյնպէս իբրեւ եկն եհաս ժամ մահու Նորա, պարտ էր իրացն, որ մարմնոյն էին, եւ յայն վայր եւս կատարել, զի յայտ լիցի բնութիւն Նորա, թէ ծնունդ է նա Ադամայ: Եւ դարձեալ կարթ էարկ գերկիւղ մահուն, զի խաբեցէ զմահ, որով համարձակեցի կլանել զնա եւ փութասցի թքանել զնա, քանզի վասն նորա խափանելոյ՝ եղև այս ամենայն:

Բայց ոչ որպէս Ես կամիմ, այլ որպէս Դու:

Նախ աստանօր տեսանենք լցեալ զառաքելոյ՝ ասելն թէ «Հնազանդ եղև Հօր մահուչափ եւ մահու խաչի» (հմմտ. Փիլյա. Բ 8)՝ առ ի խրատ մեզ համայն եւ ոչ Որդոյ միայն. այլև Հօր լիցին շնորհակալ առ հասարակ ամենեքեան, որք փրկելոց են մահուամբ Միածնին: Եւ երկրորդ՝ որպէս ասացաք, ի ժամ մահուն մարմնոյն ետ ասել զայս, զի զամենայն չարչարանս վասն մարմնոյն կրեաց, որով երեւեցի, թէ մարմին զգեցաւ Նա: Չի թէ այս ամենայն եղև, եւ տակաւին չհաւատան բազումք, ո՛րչափ եւս առաւել, թէ չէր լեալ, քանզի բազում իրօք ցուցանէ զոնտեսութիւնն ճարտար, որով խօսի եւ որով չարչարի: Եւ երրորդ՝ զի ծանրասցի ի վերայ աշխարհի մահ Որդոյ, զի մի՛ ափցեն, թէ առանց չարչարանաց եւ վաստակոց հատուցան պարտիքն մեր: Եւ չորրորդ՝ ուսուցանէ աշակերտաց Իրոց յանձն առնուլ զմահ եւ զչարչարանս իրեանց վասն՝ Աստուծոյ, զի թէ Նա, որ գիտուն էր, զՀայր գիտուն աղաչեաց, ո՛րչափ եւս առաւել տգէտքն տայցեն զկամս իրեանց Գիտնոյն ամենայնի եւ ոչ ամենեւին կամօք իրեանց ի բանս կամ ի գործս ձեռնամուխ լինիցին: Եւ հինգերորդ՝ ընդդէմ այնորիկ, որ խափանեաց Ադամ զկամս Արարչին եւ կացոյց զկամս սատանայի եւ մատնեցաւ ի բերան սպանողին՝ իւրոյ, խա-

¹ ՏԶ խաբանելոյ

² Զ զառաքելոյն

³ Զ > վասն

⁴ Տ սպանողի

փանեաց Տէր մեր զկամս մարմնոյ, զի կացուցէ զկամս Արարչին մարմնոյ: Եւ վեցերորդ՝ զի զմեզ խրատեսցէ ի ժամանակի փորձութեանն յորժամ աղօթենք՝ ո՛չ ի կամաց մերոց լրումն, այլ զՆորայն, որ առաւել զիտէ զօգուտն եւ¹ ըստ այնմ տնօրինէ: Եւ եօթներորդ՝ ոչ եթէ զկամս Իւր բաժանէ ի կամացն Հօր, այլ համակամ եւ մի ցուցանէ՝ ասելով թէ՝ ո՛չ Իմ կամք այլ քան զԶոյդ, այլ որպէս Դու կամիս զփրկութիւն մարդկան մահուամբ Իմով, նոյնպէս եւ Ես իսկ:

Գայ առ աշակերտսն եւ գտանէ զնոսա ի քուն եւ ասէ ցՊետրոս. «Այդպէս ո՞չ կարացէք ժամ մի արթուն կալ ընդ Իս (ԻԶ 40):

Ասացաւ մեզ յառաջագոյն, թէ պատահէ երբեմն քուն եւ վասն տրտմութեան, որպէս եւ սոքա տրտմութեամբ զգածեալք ննջէին ըստ Ղուկայ², առ որս եկն Տէր մեր ընդոստուցանել, թէ զտրտմութիւն ո՛չ քուն, այլ աղօթք փարատել զիտեն: Եւ առ Պետրոս առնէ զբանն ո՛չ վայրասպար. կամ իբր զլուխ առ նա խօսի մեղադրելով եւ նովալ՝ ընդ այլսն, որպէս եւ ոմն իմաստուն զմանուկ ստամբակ տեսեալ՝ զմանկածուն ջնեաց, եւ կամ առաւել կսկծեցուցանէ զնա, թէպէտ ամենեքեան ննջէին, որպէս թէ ասել՝ ա՞յդպէս դնես զանձն քո ի վերայ Իմ, որ ոչ կարացեր ժամ մի հսկել ընդ Իս:

Արթուն կացէք եւ աղօթս արարէք, զի մի՛ անկանիցիք ի փորձութիւն (ԻԶ 41):

Տեսանե՞ս՝ զհարդ խրատէ զնոսա ոչ յանդգնել, այլ զմիտսն հարկանել եւ խոնարհել եւ Աստուծոյ համարել զամենայնն, վասն որոյ մերթ ի Պետրոս ձգէ զբանն եւ մերթ առ ամենեսեան, որպէս զի զյանդգնութիւն նոցա կարճէ եւ յերկիւղածութիւն ածիցէ: Քանզի եւ այլքն զնոյն ասէին եւ մեռանել ընդ Նմա խոստանային, որք եւ ոչ տրտմակից արթնութեամբն լինել կարացին. «Արթուն,- ասէ,- կացէք»: Եւ զի չէ՛ բաւական ի փրկութիւն արթուն լինելն միայն, այլեւ աղօթիք ստէպ զԱստուած յօգնականութիւն կոչել, զի կամ ոչ տայցէ ի փորձութիւն եւ կամ ընդ փորձութեանն եւ զելսն արասցէ, քանզի բազումք անզգուշաբար կելովն մատնին ի փորձու-

¹ Գ > եւ

² Ղուկ. ԻԲ 45

թիւնս դիւաց, համայն եւ արանց չարաց, եւ կամ յայլոց ախտից վտանգեալս:

Հոգիս յօժար է, բայց մարմինս՝ տկար»:

Այսու ճշմարտապէս գՔրիստոս յանեղանելի եւ յեղական բնութենէն զոլ խոստովանիմք, բայց ոչ իշխեսնք որոշել զկնի միատորութեան, զի մի՛ երկուց որդոց եւ դիւաց կարծիս ի ներքս բերիցեմք, թէպէտեւ զէութիւնսն յատուկ անշփոթ պահեսնք, զի մի՛ խառնակեացի էութիւն եւ մի՛ բաժանեացի միութիւնն, որպէս ասէ թէ՛ «Հոգիս յօժար է», այսինքն «ելանել ի մարմնոյ եւ մտանել առ Հայր»՝ ըստ առաքելոյ (հմմտ. Բ Կոր. Ե 8), եւ թէ՛ «Հաճեալ եմ յօրէնս Աստուծոյ ըստ ներքին մարդոյն» (Հռոմ. Է 22): Իսկ «մարմինս՝ տկար», զի ի վայր հակէ մարմնաւոր խորհուրդք, եւ ոչ որ կարէ արհամարհել զնա, թէպէտեւ կամեացի, մինչեւ Աստուած ձեռն տայցէ: Որպէս եւ մեք յորժամ երկնչիմք, ոչ եթէ հոգին է, որ երկնչի, այլ տկարութիւն մարմնոյն, ապա զիա՞րդ ի մահուանէ երկնչէր, եթէ ոչ՝ զերկիւղ մահուն ի ձեռն մարմնոյն տկարութեան կամէր յայտնել նա: Իսկ այլք ոմանք «հոգի» զմարգարէսն ասեն, որք ի Թաբոր երեւեալ յօժարեցուցանէին ի մահն խաչի, եւ «մարմին» զառաքեալսն, որք տկարանային ի ժամ մահուն, որպէս երբեմն Պետրոս, զի «չեւ էր Հոգի, քանզի Յիսուս չեւ էր փառաւորեալ» (Յովհ. Է 39): Եւ կէսք «հոգի» զԲանն ասեն ըստ այնմ. «Հոգի է Աստուած» (Յովհ. Դ 24), եւ «մարմին» զմարդկութիւնն, քանզի ըստ աստուածութեանն յօժար էր ի մահն, որ փրկութիւն էր աշխարհի, իսկ ըստ մարդկութեանն հրաժարէր, զի մի՛ առաջօր թուեցի լինելն մարդ:

Դարձեալ երկրորդ անգամ չոգաւ եկաց յաղօթս Յիսուս եւ ասէ. «Հայր Իմ, եթէ հնար իցէ անցանել յԻնէն բաժակիս այսմիկ, ապա թէ ոչ՝ արքից զսա. եղիցին կամք քո» (ԻՉ 42):

Յայտ առնէ, թէ կարի միաբան է կամացն Աստուծոյ, զի ամենայն իրօք զհետ այնր պարտ է երթալ եւ զնոյն խնդրել: Բայց զիտել պարտ է, զի ոչ միայն աղօթէր, այլեւ ուժգին մտադիւրութեամբ, մինչ զի «քրտունք ի Նմանէ հոսէին իբր զկայլակս արեանն ոլոռն ոլոռն հեղեալ յերկիր» (Ղուկ. ԻԲ 44): Վկայէ եւ Պօղոս թէ՛ «Յաւորս մարմնոյ Իրոյ պաղատանս մատուցանէր առ Հայր եւ առ լաւութեանն լսելի լինէր» (հմմտ. Եբր. Ե 7), եւ հրեշ-

տակը զօրացուցանելին ասէ Ղուկաս¹: Նախ՝ զի մի՛ կարծիք ինչ իրքն թուիցին քրտունք վիժէին, այլեւ ընդդէմ հերձուածողաց, զի մի՛ պատճառիցեն զերկիւղն պիտակարար ունել, եւ կամ մտաց ինչ բանք են նկարագրեալ շիթք արեան ոլոռնացեալ ելանէին ի մարմնոյն: Ձիա՞րդ կամ ընդէ՞ր. քանզի սովոր է մարմինս մեր ի խիստ ճգնութենէ քրտունս արձակել, վասն զի ջերմացեալ սիրտն ի սիրոյ աշխատանացն շոգիք² իմն ի ներքուստ ի մակերեսոյ մարմին արտահանէ, եւ մանաւանդ՝ որքան անսովոր իցէ չարչարանաց կրից եւ ճգանց: Եւ արդ՝ զի Տէր մեր Յիսուս Քրիստոս ոչ միայն ըստ աստուածութեանն անընդունակ էր չարչարանաց, այլեւ ըստ մարդկութեանն, քանզի փափուկ գրգանօք սնուցեալ էր զՆա սուրբ կոյսն Մարիամ, եւ ի կատարելութիւն տիոցն ոչ այլ ինչ իրաց պարապեալ էր, քան թէ քարոզութեան եւ վարդապետութեան, վասն որոյ առաւել եւս քրտունս իջանէր:

Իսկ զի ասէ, թէ իբրեւ զկայլակս արեանն վիժէին՝ քանզի արիւնն Քրիստոսի ոչ իբր զմերս էր թանձր եւ ախտաւոր, այլ անօսր եւ անապական իբրեւ զոսկի, վասն որոյ ընդ քիրտն, որ ի թուլացեալ մորթոյն վասն ջերմութեանն հոսէր, եւ արիւն անօսր ելեալ եւ խառնեալ ընդ քիրտն արտաշիկագոյնս գործէր: Կամ՝ զի քրտունքն իջանէին նման արեան ոլոռնացեալ: Եւ դարձեալ քրտնեցաւ, զի ողջացուցէ զԱդամ հիւանդոտ, միանգամայն եւ զքիրտն երեսաց նորա բարձցէ, որով զհաց ուտել հրամայեաց³, այլեւ զմարդեղութիւնն ճշգրտեսցէ: Իսկ զօրացուցանելն հրեշտակաց ոչ թէ Այնմ պէտք էին, որ «արար զհրեշտակս Իւր հոգիս» (Մադմ. ԾԳ 4), եւ «ամենայն ծունր Նմա կրկնի՝ երկնաւորաց եւ երկրաւորաց» (հմմտ. Փիլսոյ. Բ 10), այլ կամ զի զմարգարէութիւնն լցցէ թէ՛ «Զօրացուցեն զնա ամենայն հրեշտակք Աստուծոյ» (Բ Օր. ԼԲ 43), ոչ զԲանն, որ անկարօտ էր եւ զմարմինն զօրացուցանէր, այլ զմարմինն⁴, զի եւ մեք ուսուցիք, թէ եւ զմեզ զօրացուցանեն ի ժամանակի փորձութեանն: Կամ՝ ըստ սովորութեանն իրեանց՝ փառաւորութիւն մատուցանելին Տեսնն, քանզի նոցա է սրբաբանելով ասել թէ՛ «Քո են փառք եւ իշխանութիւն, եւ Քո է զօրութիւն եւ լուսաւորութիւն եւ պատիւ. թէպէտ վասն մարդկան փրկութեան

¹ Ղուկ. ԻԲ 43

² Զ գոլոշիք

³ Ծմնդ. Գ 19

⁴ Զ > այլ զմարմինն

զտկար մարմինս¹ զգեցար, սակայն զօրաւոր եւ յամենայնի եւ աննուազ փառաւոր»: Այս է զօրացուցանելն:

Եւ եկեալ միսանգամ եգիտ զնոսա ի քուն, զի էին աչք իրեանց ծանրացեալք (ԻՉ 43):

Յերկիւղէն եւ ի տրտմութենէն, միանգամայն եւ ի գիշերոյն տարածամութենէն ծանրացեալ էին աչօք եւ թմբրեալք² քնով, այլեւ մարմնականս իմանային եւ մտօք խորհրդոյ ոչ հայէին յիրացն լրումն:

Եթող զնոսա եւ զնաց կաց յաղօթս երրորդ անգամ եւ դարձեալ զնոյն բան ասաց (ԻՉ 44):

Առ ի հաստատել, թէ մարդ եղեւ, զի երկիցն եւ երիցն կարի իմն ճշմարտութեան գուշակք են ըստ Օրինացն, թէ յերկուց եւ յերից վկայից հաստատուն է ամենայն բան³, եւ Յովսէփ ասէր թէ «Երկիցս քեզ ճշմարտութիւն երագոցն յայտնեցաւ» (հմմտ. Ծննդ. ԽԱ 32): Նոյնպէս եւ աստ երեք անգամ զկատարեալ մարդկութիւնն նշանակէ, զոր էառ ստուգապէս՝ զհոգի եւ զմիտս եւ զմարմին: Այլեւ զԵրրորդութեանն⁴ խորհուրդ ծանոյց երիցս անգամ աղօթելովն, որ իբր զմարդ աղօթէր եւ իբր զԱստուած ընդ Հօր եւ Հոգւոյն ընդունէր՝ համարնութիւն զոլով նոցին, վասն այտորիկ զնոյն բան ասէր թէ՝ «Հայր Իմ»:

Յայնժամ գայ առ աշակերտսն եւ ասէ ցնոսա. «Ննջեցէք այսուհետեւ եւ հանգերո՞ւք (ԻՉ 45):

Երիցս անգամ առ նոսա գալն վասն յանդիմանութեան էր, զի այնպէս ընկղմեցան ի տրտմութենէն, մինչ զի զգալուստ Նորա ոչ իմանային, եւ Նա վասն առաւել տկարութեան նոցա ոչինչ ասաց, այլ եթող եւ զնաց: Իսկ ասելն թէ՝ «ննջեցէք այսուհետեւ», ցուցանէ թերեւս, թէ պարտ էր այնուհետեւ արթուն լինիլ, իսկ նոքա եւ ոչ զերեսս վշտացն ժուժային տեսանել, այլ փախչելոց էին եւ ի բաց մեկնելոց յերկիւղէն ասաց զայս: Նաեւ զայն յայտ առնէ, թէ չէ՛

¹ Զ մարմին

² Զ թմբրեալք

³ Բ Օր. Ժ 6, ԺԹ 15

⁴ Տ զերեքութեանն

ինչ պէտք անցա օգնականութիւնն, զի կամաւոր գայր ի չարչարանս եւ ո՛չ ի հարկէ Ազատն յամենայնի:

Ձի ահա հասեալ է ժամ, եւ Ռդի մարդոյ մատնի ի ձեռս մեղաւորաց:

Դարձեալ ճշգրտէ ստուգութեամբ, թէ տնտեսութիւն է գործն եւ ո՛չ ակամայ, զի որ զժամն իսկ հաւաստեաւ զհտէր, ընդէ՞ր ոչ խոյս տայր, եթէ ակամայ էր չարչարանքն: Իսկ ասելովն թէ՛ «մատնի ի ձեռս մեղաւորաց», քրքրէ զմիտս անցա յայպանելն, թէ անցա չարութեանն է գործ, եւ ո՛չ Նա պատժապարտ է յանցանաց:

Արիք երթիցո՞ւք աստի, զի ահաւասիկ եհաս որ մատնելոց է զԻս» (ԻՉ 46):

Չայս եւ Յովհաննէս ասէ թէ՛ «Արիք գնացուք աստի» (Յովհ. ԺԳ 31). քանզի անճառելի իմն վարդապետութիւն վարդապետէր անցա, եւ [զի] անքա վասն ահին ոչ կարէին ի միտ առնուլ, յայլ իմն անքոյթ տեղի հրաւիրէ զնոսա, քանզի գայս տեղի զհտէր եւ Յուդաս, որ մատնելոց էր զՆա: Եւ դարձեալ՝ ամենայնիս խրատէ զնոսա, թէ ո՛չ են ի հարկէ իրքն եւ ո՛չ տկարութիւն, այլ տնտեսութիւն, քանզի յառաջագոյն զհտէր, թէ զալոց են, եւ ոչ փախեաւ, այլ զտեղի կալաւ: Եւ դարձեալ՝ յերկրէ յերկինս հանէ զնոսա՝ ըստ մարգարէին թէ՛ «Եկայք ելցուք ի լեառն Տեառն» (Ես. Բ 3), ուր ոչ զոն մատնիչք փորձութեան, եւ մերժեալ են ցաւք եւ տրտմութիւնք, քանզի աստ իբր մրուր յատակի ժողովեալ են պէսպէս տեսակք փորձութեանց եւ դիւաց մատնութիւնք, որք յանկարծ՝ ի վերայ հասանեն եւ տապացուցանեն զանձինս:

Եւ մինչդեռ Նա գայն խօսէր, ահա Յուդա՝ մի յերկոտասանիցն, եկն, եւ ընդ մնա ամբոխ բազում՝ սրովք եւ բոօք՝ ի քահանայապետիցն եւ ի ծերոց ժողովրդեանն (ԻՉ 47):

Առ ի հաւատարմութիւն քանիցն ժամանեաց իրքն, որպէս զի վարժեալք յայնմանէ՛ բոլոր վարդապետութեանն Նորա հաւատասցեն, թէ ամենայն կատարելոց է: «Ահա Յուդա,- ասէ,- մի յերկոտասանիցն», քանզի նա առաջնորդ լինելով բազմացն յառաջագոյն գայր՝ ըստ այնմ թէ՛ «Եղէւ առաջնորդ ունելեացն Յիսուսի» (Գործք Ա 16): «Յերկոտասանիցն» ասէ եւ ոչ համարի ամօթ՝ վասն ճշմարտութեանն հետեւողութեան, այլեւ ի յանդիմանութիւն

¹ Զ յանկարծակի

նմին, զի յաշակերտացն գոյով կարգի՝ դաւաճանօղ եղև Վարդապետին իւրոյ: «Եւ ընդ նմա ամբոխս բազում սրովք եւ բրօք»: նորա չարութեանն կցորդեալ եւ ամբոխսն, ոչ սուրբ սպասուք, այլ սրովք եւ բրօք եւ ջահիւք գային ի վերայ յեղակարծում ժամու, որ ոչ յանարժանի վերայ, թող թէ յարժանաւորի ժամանակ էր ելանել. բայց զի խաւարեալք էին մտօք քահանայապետքն եւ ծերքն, ի խաւարին ժամանակի զխաւարային գործն գործէին, եւ բազումք գային, զի մի՛ գերծցի: Իսկ «սուր» վասն պատերազմի, թէ հանդիպեսցի, եւ «ջահ» վասն մթութեան ժամանակին:

Եւ որ մատնելոցն էր զՆա, ետ նոցա նշան եւ ասէ. «Ընդ որում ես համբուրեցից՝ նա՛ է, զնա՛ ունիցիք» (ԻՉ 48):

Ընդէ՞ր գայս նշան տուեալ էր. ինձ թուի, թէ սովորութիւն էր արտաքուստ եկեալ աշակերտացն եւ ռամկացն՝ համբուրէին զաջ վարդապետին եւ զթագաւորին, արդ՝ կարծեաց Յուդա, թէ զուցէ այլակերպիցէ զինքն եւ կամ ծածկիցէ ի նոցանէ, որպէս բազում անգամն, գայս նշան ետ, զի թէ յայլոցն, սակայն ոչ ի նմանէ՞ թաքչիցի, եւ յորժամ նշանաւ մատնիցէ ի ձեռս նոցա, եթէ գերծցի, ինքեանք զհտասցեն: Բայց դու տես զլրբութիւն մատնչին, թէ ո՞րքան չարութեամբ լցան միտք նորա, կամ որո՞վ աչօք հայէր ընդ Վարդապետն եւ կամ բերանով համբուրէր զՆա եւ ոչ ամաչէր:

Եւ վաղվաղակի մատուցեալ առ Յիսուս՝ ասէ. «Ո՞նջ եր՞, Վարդապետ», եւ համբուրեաց ընդ Նմա (ԻՉ 49):

Ի հեզութիւն Վարդապետին վստահացեալ, որ քան զամենայն ինչ բաւական էր պատկառեցուցանել զնա եւ մերժել յամենայն ներողութենէ, զի զայնպիսի հեզն մատնէր համբուրի, կամ վասն պատճառին, որպէս ասացի, քանզի բազում անգամ ըմբռնեցաւ ի նոցանէ եւ ել զնաց, մանաւանդ յայնժամ, թէ Իւր չէր կամեցեալ, կամ թէ՛ զի զբարկութիւնն հեղցէ ի վերայ ինքեան նորոգելով զհամբոյրն նենգութեամբ՝ ըստ մարգարէին թէ՛ «Համբուրեցէք զՈրդի, զի մի՛ բարկացի Հայր» (Սաղմ. Բ 12³):

Եւ Յիսուս ասէ ցնա. «Ընկեր, վասն որո՞յ եկիիրք» (ԻՉ 50):

¹ S ~ ի նմանէ ոչ

² S լեր

³ Այս մեջբերումը համապատասխանում է եբրայերեն բնագրի նշված համարին:

Ո՛չ ասաց «բարեկամ Իմ» կամ «սիրելի», այլ «ընկեր», եւ ո՛չ ասաց «Իմ», որպէս զի ասէ, թէ յերկոտասանիցոյ դասէ հրաժարեցեր եւ ընկեր եղեր չարաց եւ անհրաւաց, եւ Ես ըստ այդմ կոչեմ զքեզ, ապա թէ ո՛չ ընդէ՞ր զկնի դոցա եկիր: Եւ ա՛յլ ազգ. «ընկեր», այսինքն հակառակ Ինձ եկիր, եւ թէպէտ ծածկել ջանաս համբուրիոյ, բայց ինձ յայտնի է վասն որոյ իրաց եկիրոյ, զի ո՛չ ի պատուել, այլ ի մահ մատնել. կամ թէ՛ ոչ կացեր ի կարգ աշակերտի հնազանդութեամբ, այլ իբր զհաւասարապատիւ զքո՛ ի դատատան մահու ձգես զԻս անպատուութեամբ. բայց ո՛չ արգել զնա, այլ յանձն առ համբուրիլ:

Յայնժամ մատուցեալ արկին ձեռս ի Յիսուս եւ կալան զՆա:

Յորժամ յայտնեաց զանձն եւ ետ ի ձեռս նոցա, ապա՛ կալան, քանզի Ինքն կամեցաւ անկանիլ¹ իբրեւ զճնճողուկ ի ձեռս որսողաց յայնմ զհշերի, յորում զՉատիկն կապեալ ուտէին: Այնպիսի զայրազնեալք էին մոլորեամբ, բայց ո՛չ էին ձեռնհաս, եթէ ոչ էր թոյլ տուեալ. եւ այս ոչ ազատէ զՅուդա, այլ կարի դատապարտէ, զի զՆորա անչափ զօրութեանն զհանդէս տեսեալ, համայն եւ զհեզութեանն՝ եւ քան զգազան դժնդակագոյն եղել:

Եւ ահա մի ոմն յայնցանէ, որ էին ընդ Յիսուսի, ձգեաց զձեռն² եւ եհան զսուր իւր եւ եհար զծառայ քահանայապետին եւ ի բաց եհան զունկն նորա (ԻԶ 51):

Յովհաննէս ասէ, թէ Պետրոս էր³, քանզի նորա ջերմութեանն էին իրքն: Բայց խնդրելի է, թէ ուստի⁴ էին սուրքն, եւ վասն է՞ր կրէին ընդ ինքեանս: Չսուրն ի սեղանոյ անտի առին, քանզի դանակք էին անդ վասն գառինն, եւ այն ինչ յընթրեաց անտի ելեալ էին եւ յուան, թէ ոմանք գան ի վերայ, առին զսուրն յօգնականութիւն ինքեանց: Իսկ թէ ընդէ՞ր բառնային. վասն Տեառն հրամանի, քանզի ասէ Ղուկաս թէ՛ «Այժմ որ ունիցի քսակ՝ բարձցէ, նոյնպէս եւ մախաղ, իսկ որ ոչ ունիցի՝ վաճառեցէ զձորձս իւր եւ զնեցէ իւր սուսեր» (Ղուկ. ԻԲ 36): Կամ մարգարէացաւ, թէ առնելոց են, կամ հրաման ետ, զի արասցեն, քանզի յորժամ առաքեաց զնոսա աւետարանել զարքայութիւնն եւ առնել նշանս, ոչինչ հրամայեաց

¹ Զ անկանել

² Զ ձեռն իւր

³ Յովհ. ԺԸ 10

բառնալ, զի քարոզութեանն միայն պարապեցին, ոչ կօշիկս եւ ոչ մախաղս: Իսկ աստ հրամայէ սուսեր զնել. նախ՝ զի զմարգարէութիւնն լցցէ թէ՛ «Ընդ անօրէնս համարեցաւ» (Ես. ԾԳ 12), եւ երկրորդ՝ զժամանակին փոփոխումն եւ զնեղութիւնն հաւատարմացուցէ, թէ մատնելոց է, ոչ զի վառեցին ի մարտ, օ՛ն անդր, այլ զի զմատնութիւնն գուշակեցէ, որպէս ասացի: Եւ է՞ր վասն զպայուսակն յիշեաց. քանզի խրատէ զնոսա արթունս լինել եւ զիրեանց փոյթն ի կիր արկանել, վասն զի զառաջինն իբրեւ զախմարս արծարծէր եւ յանձանձէր Իւրով զօրութեամբ, իսկ այժմ իբրեւ զճագս նորափետորս հրաման տայ իւրեանց թելովքն թռչել:

Իսկ զի զքահանայապետին զժառայն եհար եւ ոչ զայլ ոք, եւ զունկն եւ ոչ զայլ մասն անդամոց՝ նախ՝ զի նա էր առաջնորդ մոլորութեանն, թէպէտ գոյին հռոմայեցիք՝ զինուորք Պիղատոսի, եւ այլք ի հրէից անտի, բայց զի նա ձեռնամուխ եղեւ ի Տէր մեր, եւ զունկն եհատ, վասն զի ոչ լուաւ Տեառն իւրոյ թէ՛ «Ահաւասիկ ողջացար, այլ մի՛ եւս մեղանչեր» (Յովհ. Ե 14): Եւ դարձեալ՝ վասն խորհրդոյ եղեւ՝ այսու, զի բանքն Մոսիսի լցեալ կատարեցին, քանզի ահաւոր նշանօք ստացաւ զԻսրայէլ իւր ի ծառայս՝ ի բաց հանելով ի ծառայութենէ եգիպտացոցն եւ դիւաց¹, եւ օրէնս կարգեաց, թէ ոք կամեցի զժառայս իւր ազատել, եւ նա ոչ կամեցի, առաջի ձերոց ժողովրդեանն ծակեցէ հերեամբ զաջոյ ականջն նորա, զի եղիցի նմա նշանակ անլրութեան օրինացն, թէ սորեցոյց զբանս նորա կալ ի ծառայութիւն մինչեւ ցօր մահուան իւրոյ²: Այսպէս ի ձեռն զալստեան Ռրդոյն Աստուծոյ կամեցաւ խաչիւն ազատել զնոսա ի ծառայական կարգաց՝ ըստ այնմ թէ՛ «Ճշմարտութիւնն ազատեցուցէ զձեզ» (Յովհ. Լ 32), եւ Պօղոս զրէ թէ՛ «Ոչ առիք³ զհոգին ծառայութեան...., այլ զհոգի[ն] որդեգրութեան» (Հռոմ. Լ 15), որում դիմադարձ եղեն հրեայքն եւ ոչ կամեցան զազատութիւն, վասն այսորիկ եհատ Պետրոս զունկն աջոյ ծառայի քահանայապետին՝ նշանակելով, թէ ի ծառայութիւն Օրինաց եւ մեղաց կալոց էք մինչ ի վախճան ժամանակաց ձերովք իշխանական կամօրդ՝ արհամարհելով զազատութեանն պարգեւ, զոր եկն ընձեռել ձեզ Տոհչն Օրինաց:

¹ Գ դիւացն

² Ելք ԻԱ 2-6

³ Գ առէք

Յայնժամ ասէ ցնա Յիսուս. «Դարձո զսուր քո ի տեղի իւր, զի ամենեքեան, որ սուր առնուցուն, սրով անկանիցին (ԻՉ 52):

Մասստէ Պետրոսի, որ զայն ի կիր էարկ, կարի յոյժ սպառնալեօք, թէպէտ վրեժ էառ ջերմաջերմն ո՛չ վասն անձին, այլ վասն Վարդապետին. բայց ի սաստելն հաւանեցաւ, զի զայն արար վասն գթոյն եւ սիրոյն, եւ զայս՝ վասն հլու եւ հպատակ գոլոյն, քանզի յորժամ լուաւ թէ՛ «Դարձո զսուր քո ի տեղի իւր», վաղվադակի անսաց: Իսկ զի՞նչ այն թէ՛ «Որ սուր առնուցուն, սրով անկանիցին»: Հանգոյն բարբառի այնմ՝ թէ որ հեղու զարիւն մարդոյ փոխանակ արեանն նորա՝ հեղեալ լիցի¹. նոյնպէս եւ սոքա, ասէ, որ սրով զան ի վերայ Իմ, սրով հռոմայեցոցն անկանելոց են, որ ի բանէն Աստուծոյ, որ սուր է քան զամենայն սուր երկսայրի, հրաւիրեսցին: Բայց զի Ղուկաս ասէ. «Թոյլ տուք մինչեւ ցայդ վայր» (Ղուկ. ԻԲ 51), այսինքն՝ զի խորհուրդ ծառային լցաւ, որ ի Մոսիստ ասացաւ:

Եւ դարձեալ՝ ասէ թէ՛ «Մատուցեալ յունկն ծառային բժշկեաց» (Ղուկ. ԻԲ 51). զհեզութիւնն եւ զանոխակայութիւնն ցուցանէ, այլեւ առ ընթեր խաչին զօրութիւնն Իւր, թէ կամատրաբար զայ ի չարչարանս եւ ո՛չ ի հարկէ, քանզի Տէր մեր սահման էր արդարութեան Օրինացն եւ սկիզբն ողորմութեան Նորոյ կտակին: Արդ՝ ամփոփեաց արդարութեամբ զսուրն ի տեղի իւր եւ հաղորդեցաւ ողորմութեամբ՝ բժշկելով զունկն ի տեղոջ իւրում՝ ի նշանակութիւն առնելով եւ զայս, զի որպէս հատմամբն զծառայութիւնն եցոյց, նոյնպէս եւ բժշկութեամբն զառողջութիւնն նոցա զուշակեաց, որ յաւուրս վերջինս ի ձեռն Ենովքայ եւ Եղիայի հաւատալոց են՝ ըստ առաքելոյ թէ՛ «Յորժամ լրումն հեթանոսաց մտցէ, ապա ամենայն Իսրայէլ կեցցէ» (Հռոմ. ԺԱ 25-26):

Թէ համարիցիս, թէ ո՞չ կարեմ աղաչել զՀայր Իմ, եւ հասուցանիցէ Ինձ այժմ այսր աւելի քան զերկոտասան զունդս հրեշտակաց (ԻՉ 53):

Ընդէ՞ր ոչ ասաց, թէ կարօղ եմ սատակել զնոսա. յայնմ ժամանակի առաւել այս բան հաւանեցուցանէր զնոսա, քանզի չեւ եւս պատշաճ կարծիս ունէին զՆմանէ, վասն այսորիկ խոնարհութեամբ սպառնացաւ թէ՛ «Ածցէ Ինձ յօգնականութիւն այժմ ի տեղիս յայս աւելի քան զերկոտասան զունդս հրեշտակաց»: Զի՞նչ

¹ Ղեւտ. ԻԴ 17

զայս ասէ. զի թէ մի հրեշտակ հարիւր եւ ութսուն եւ հինգ հազար վառեալ այր կոտորեաց¹, զի՞նչ պէտք էին երկոտասան գնդից առ մի հազար այր: Թուի, թէ ըստ երկիւղի եւ տկարութեան նոցա կերպարանէ զբանն, քանզի պակուցեալ էին յահէն, վասն որոյ ըստ թուոյ նոցա զայս կարգեաց, զի ինքեամբ երկոտասան էին, յորմէ ոմանք առեալ ասացին երկոտասան դասք զոլ հրեշտակաց յերկինս:

Այլ զհա՞րդ լնուցուն զիրք, եթէ այսպէս պարտ է լինել» (ԻՉ 54):

Գէթ այնու երկեցուցանիցէ զնոսա, զի թէ նոցա այն կամք են, ասպա ուրեմն դուք դիմադարձեալ մարտնչիք, եւ առ աշակերտսն այսչափ ասաց եւ դարձուցանէ այժմ զբանն առ եկեալսն:

Յայնժամ ասաց Յիսուս ցամբոյսն. «Իբրեւ ի վերայ աւագակի՞ ելէք սուսերոք եւ բրօք՝ ունել զԻս. հանապազ առ ձեզ ի Տաճարին նստէի եւ ուսուցանէի, եւ ո՛չ կալայք զԻս (ԻՉ 55):

Տես՝ որչափ ինչ գործս գործէ, որ կարօղ էին ընդոստուցանել զնոսա. յետս տարեալ՝ զարկոյց զգետնի, սպանումն սպառնացաւ՝ «Որ սուր առնուցու՝ [սրով անկանիցի]», զունկն ծառային բժշկեաց եւ ամենայն ուստեք ի մօտաւորացն եւ ի հանդերձելոցն եցոյց զԻւր զօրութիւնն՝ յայտ արարեալ, թէ ո՛չ նոցա ինչ զօրութեանն գործ եղել ունելն: Եւ զի ոչ զգաստացան այսու, սկսանի յանդիմանել մեղմ բանիւ թէ՛ «Իբրեւ ի վերայ աւագակի՞ ելէք սուսերոք եւ բրօք՝ ունել զԻս», ո՞չ միշտ ընդ ձեզ «ի Տաճարին նստէի եւ ուսուցանէի». յայտ առնէ, թէ ըստ Իւրում թոյլ տալոյն եղել ըմբռնելն, վասն որոյ զսքանչելիսն թողեալ՝ զվարդապետութենէն յուշ առնէ, զի մի՛ համարիցիս պարծել ինչ: Յորժամ ուսուցանէի, ասէ, ո՛չ կալայք զԻս, եւ երբ լռեցի, ի վերայ եկիք, ի Տաճարին էի, եւ չեհար ոք բուռն, եւ այժմ ի տարածամու եւ ի հասարակ զիշերի եկեալ կայք ի վերայ Իմ սրովք եւ բրօք, քանզի զի՞նչ պէտք էին զինուցող, որ միշտ ընդ ձեզ իսկ էի:

Արդ՝ ընդէ՞ր ի Տաճարին ոչ կալան զՆա. վասն զի չիշխէին ի ժողովրդոցն, նմին իրի ել արտաքս, զի ի տեղոյն եւ ի ժամէն տացէ նոցա համարձակութիւն, որով յայտ լիցի, թէ Ինքն կամեցաւ.

¹ Ա Մակ. Է 41

բայց ոչ այս ազատ առնել գնոսա ի պատժէ, վասն զի ոչ զկամս Նորա, այլ զչարութիւնս իրեանց լցին:

Այլ այս ամենայն եղև, զի 199ին զիրք մարգարէիցն» (ԻԶ 56):

Կամ աւետարանիչս ասէ զայս, կամ թէ Ինքն Տէրն զտարակուսանսն լուծանէ, թէ վասն էր արդեօք կամեցաւ զայն. զի կատարեցին¹ տեսութիւնք մարգարէիցն: Նաեւ այսու գնոսա յուղղութիւն ածցէ² եւ բժշկեցէ, որք Հօր հակառակ³ ասէին, եւ մինչեւ գլխտին ժամն բառնայ ի նոցանէ զպատասխանատուութիւնն. զի թէ վասն մարգարէիցն հաւանելոյ զանձն ի մահ մատնեաց, զհա՞րդ հակառակ Հօր լինէր եւ կամ ուսուցանէր, այլ յոյժ միաբան, որպէս եւ էրն իսկ, այլեւ յայտ արարեալ, թէ կամաւ եւ ոչ ակամայ չարչարի:

Յայնժամ աշակերտքն ամենեքին⁴ թողին զՆա եւ փախեան:

Մինչ կալան զՆա, կացին առ Նմա, եւ յորժամ զայս ամենայն խօսեցաւ ընդ ամբոյսն, փախեան, քանզի տեսին այնուիտեւ, թէ չէ հնար գերծանելոյ, զի կամօք մատնեաց զանձն, եւ ասաց թէ ըստ Գրոց կատարի ամենայն, զի 199ի բանն Տեառն թէ՛ «Գայթազդելոց էք յԻնէն» (Մատթ. ԻԶ 31), եւ թէ՛ «Հարից զհովիւն, եւ ցրուեսցին ոչխարք հօտին» (Չաք. ԺԳ 7, Մատթ. ԻԶ 31):

Իսկ նոցա կալեալ զՅիսուս՝ ամին առ Կայիափայ քահանայապետ, ուր դպիրքն եւ ծերք ժողովեալ էին (ԻԶ 57):

Վասն զի անտի առաքեցան, անդր կալեալ մուծին: Եւ դարձեալ անդր տարան, ուր ժողովեալ էին, զի ըստ խրատու քահանայապետին առնիցեն զամենայն, քանզի նա էր քահանայապետ, եւ ամենեքեան նմա անսային, որ եւ մարգարեացաւ իսկ, թէ «լաւ է միոյ առն մեռանիլ⁵ ի վերայ ամենայն ժողովրդեանս եւ մի՛ ամենայն ազգս կորիցէ» (հմմտ. Յովհ. ԺԱ 50): Բայց դու տես, թէ զհա՞րդ արթունք եւ զհշերապահք լինէին վասն իրացն. քանզի եւ կերան իսկ ոչ զՉատիկն մինչեւ ցայնժամ՝ ըստ Յովհաննոյ, զի ա-

¹ Տ կատարին

² ՏԶ անիցէ

³ Զ ~ հակառակ Դօր

⁴ Զ ամենեքեան

⁵ Զ մեռանել

սէ, թէ այդ էր, եւ ոչ մտին յապարանս դատաւորին, զի մի՛ պղծիցին, այլ զի նախ ուտիցեն զՉատիկն¹, եւ լուծին զօրէնսն, որ ասէր. «Անիծեալ որ ոչ ուտիցէ զՉատիկն յերեկոյին» (հմմտ. Ելք ԼԴ 25, Ա Թագ. ԺԴ 24)՝ վասն ցանկութեան սպանմանն Յիսուսի: Ապա ուրեմն ոչ Քրիստոս անց ընդ ժամանակ Չատիկն, այլ նոքա:

Եւ Պետրոս զհետ Նորա երթալոյ բացագոյն մինչեւ ի սրահ քահանայապետին եւ մտեալ ի ներքս՝ նստէր ընդ սպասարան՝ տեսանել զկատարածն (ԻՉ 58):

Կամ վասն ջերմութեանն զկնի չոգաւ, յորժամ ետես, թէ այլքն փախեան, եւ եմուտ ի ներքս եւ եկաց առ Նմին տեսանել զվճիռ իրացն, քանզի Յովհաննէս ծանօթ էր քահանայապետին եմոյծ զՊետրոս ի ներքս², կամ թէ՛ ընթացաւ անդր, զի հարցցեն վասն աշակերտութեանն, եւ նա ուրասցի, եւ բանն Տեառն ճշմարտեացի: Իսկ բացագոյն գնալն Պետրոսի՝ զի մի՛ կարծեացի, թէ ի նոցանէ իցէ, եւ ըմբռնեացի:

Իսկ քահանայապետքն եւ ամենայն ատեանն խնդրէին սուտ վկայութիւն զՅիսուսէ, զի սպանանիցեն զՆա (ԻՉ 59):

Եւ ոչ գտանէին ի բազմաց սուտ վկայիցն մատուցելոց (ԻՉ 60):

Կեղծաւորութեամբ զատեանն ձեւացուցեալ ըստ Օրինացն ոչ կամէին առանց վկայի դատել, եւ զի ոչ գոյր վկայ, խորհուրդ արարեալ նախ ընդ միմեանս, թէ զինչ պատճառ նենգութեամբ դնիցեն առաջի դատաւորին, եւ ոչ գտանէին ի բազմացն վասն յոյժ անյարմարութեամբ վկայելոյն, որում ոչ որ հաւանէր: Չի այնպիսի իմն էր ատեան նոցա՝ յի ամենայն խոռվութեամբ եւ ամբոխիւ, քանզի թէ սուտ վկայէին, պարտ էր ըստ Օրինացն եւ զնոսա սպանանել, բայց զի համախոհք էին միմեանց, ոչ զոր դատել կամէին, այլ զմինն միայն՝ ըստ Ովսէի մարգարտութեանն թէ՛ «Միաբանեցան քահանայքն ի ճանապարհին եւ սպանին զՄիւքէմ» (հմմտ. Ովսէէ Զ 9), որ նա ինքն է Քրիստոս: Այլ ընդէ՞ր զշարաթն ոչ յիշէին. զի բազում անգամ վասն այնորիկ ըմբերանեալ էր զնոսա, այլեւ կամէին յայն³ ժամու բանիցն ըմբռնել զՆա: Եւ ըն-

¹ Յովհ. ժԸ 28

² Յովհ. ժԸ 16

³ Տ յայնմ

դէ՞ր իսկ գաղտ ոչ սպանին, այլ վկայութիւն խնդրէին. քանզի կամէին զկարծիս Նորա խոտել, զի բազումք հաւատացեալ էին Նմա եւ զարմանային ընդ գործս Նորա, վասն այտորիկ հրապարակաւ կամէին սպանանել, այլեւ ոչ ունէին իշխանութիւն գոք սպանանել վասն հռոմայեցոց տէրութեանն:

Յետոյ մատուցեալ երկու սուտ վկայք՝ ասէին թէ՝ «Սա ասէր՝ կարող եմ քակել զՏաճարն Աստուծոյ եւ զերիս ատուրս շինել» (ԻՉ 61):

Տես, թէ որպէս թիրեցին զասացեալն ի Տեառնէ. քանզի Նա ոչ ասաց թէ քակեցից, այլ թէ քակեցէք, եւ ոչ զՏաճարէն, այլ զԻւրոյ մարմնոյն, բայց նոքա յայլ իմն հանին զբանն: Առ որս ասելի է, թէ գրեթէ այնպէս ասաց, որպէս դուք կարծէք, զի՞նչ վնաս բերէ այդ եւ կամ նուաստութեան կարծիք, այլ մանաւանդ աստուածային իմն հրաշից գործութիւն, որ զբառասուն եւ զվեց ամաց շինեալն ի Չորաբարելէ՝ յերիս ատուրս կանգնէր: Իսկ երկու վկայք թուի ինձ լինել զդպիրսն եւ զփարիսեցիսն, որք քակեցին զմարմինն մահուամբ՝ որոշմամբ հոգւոյն, քանզի այս է մահ, եւ զի ի Քրիստոս երեք միութիւն է. մի՝ աստուածութեանն ընդ հոգւոյն, եւ միւս՝ աստուածութեանն ընդ հոգւոյն եւ ընդ մարմնոյն, եւ երրորդ՝ հոգւոյն ընդ մարմնոյն: Արդ՝ երկոքին միութիւնքն անբակ մնացին նախ քան զմահն եւ յետ մահուն, իսկ երրորդն քակտեցաւ¹, այսինքն բանական հոգին ի մարմնոյն զերիս ատուրս միայն, նոր դարձեալ շինեաց Նա եռօրեայ յարութեամբն, զի ցուցցէ, թէ նոքա քակտման էին գործօնեայք, իսկ Տէր մեր՝ շինութեան եւ կանգնման:

Եւ յարուցեալ քահանայապետն՝ ասէ ցնա². «Չտա՞ս ինչ պատասխանի, զի՞նչ դոքա ամբաստանեն զՔէն» (ԻՉ 62):

«Յարուցեալ» կամ մարմնով, որպէս զի ահագինս ցուցցէ զատեանն եւ նմա երկեղուկս արկանիցէ, կամ սրտին զայրացմամբ ուռուցեալ ասաց. «Չտա՞ս ինչ պատասխանի», այսինքն ամբաստանութեանս: Ընդէ՞ր զայս ասաց. զի կամէր ածել զՆա ի պատասխանատրութիւն. թերեւս անդստին ի Նորա բանիցն զՆա ըմբռնեցէ, զի ամենեւին օտար էին վկայութիւնքն:

¹ Գ բայց միայն երիս միութիւն բաժանեցաւ ի մահուն] իսկ երրորդն քակտեցաւ

² Գ > ցնա

Եւ Յիսուս լուռ կայր (ԻՉ 63):

Կամ թէ չէր ինչ օգուտ պատասխանատրութիւնքն, զի չէր ոք, որ լսէր, զի ձեռով ատեան թուէր, եւ ճշմարտութեամբ՝ աւագակաց հրապարակ երեւէր, կամ թէ՛ զստութիւն ամբաստանութեանցն ե-ցոյց լռելովն, թէ եւ չեն անգամ արժանի պատասխանոյ վասն յոյժ ստութեանն: Այլեւ զմարգարէութիւնն ելից, թէ՛ «Եղէ ես որպէս մարդ, որ ոչ խօսի եւ ի հրապարակին ոչ բանայ զբերան իւր» (հմմտ. Մաղմ. ԼԷ 14-15), նաեւ այն, զի թէ վերին Իմաստութիւնն խօսէր, լռեալ պապանձէին ամենայն կարծեցեալ ստորին իմաստութիւնքն, եւ խափանեալ լինէր մահն, որով փրկութիւն լինելոց էր ամենայն աշխարհի:

Պատասխանի ետ քահանայապետն եւ ասէ ցՆա. «Երդմնեցուցանեմ զՔեզ յԱստուած կենդանի, զի ասացես մեզ, թէ Դո՞ւ եւ Քրիստոսն Որդի Աստուծոյ»:

Ընդէ՞ր յԱստուած կենդանի զերդումն տայ. կամ ի մեռելոտի կռոցն որոշէ, կամ թէ յայտ առնէ, թէ Դու չես կենդանի մնալոց, որ զանձնդ Աստուած եւ Որդի Աստուծոյ քարոզես, քանզի թէպէտ բազումք ասէին զՆմանէ, թէ Քրիստոսն է, սակայն ի բերանոյ Նորա ոչ էին լուեալ, զի Նա զայն միշտ պատուիրէր աշակերտացն մի՛ ումեք ասել վասն Նորա, թէ Քրիստոսն իցէ: Արդ՝ կամի քահանայապետն, զի վասն անձինն վկայեսցէ, եւ նոքա ի դերեւս հանցեն զայն, որպէս երբեմն ասէին թէ՛ «Դու վասն անձինդ վկայես, եւ վկայութիւն Քո չէ ճշմարիտ» (Յովհ. Ը 13), եւ առ այն զայրացուցանիցեն զիշխանս եւ զդատաւորս եւ սպանանիցեն զՆա:

Ասէ ցնա Յիսուս. «Դո՞ւ ասացեր» (ԻՉ 64):

Թէպէտ խօսեցաւ, զի հարցին երդմամբ, բայց ոչ ասաց թէ՛ Ես եմ, այլ թէ՛ «Դո՞ւ ասացեր». ապա ուրեմն զիտէին, թէ Քրիստոսն Որդի Աստուծոյ է ի մարգարէիցն ուսեալ ըստ այնմ. «Յուցանէ ի մէջ մարդկան զօծեալ իւր» (հմմտ. Ամովս Դ 13), եւ թէ՛ «Հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս» (Ողբ Դ 20), այսինքն օծեալ: Եւ այլ ազգ. զի զոր ինչ յԻնէն խնդրես երդմամբ ասել, զայն դո՞ւ ասացեր: Արդ՝ թէ ոչ ես ի կարծիս վասն Իմ, ընդէ՞ր այնպէս տազնապիս. բայց զի մի՛ կարծեսցեն, թէ ոչ իցէ Նա, հրաժարելովն վասն խո-

նարիությունն թե՛ «որս ասացեր» եւ ոչ «Ես»՝ բերե՛լ ի վերայ, որով ճշմարտեսցէ զասացեալն:

Բայց Ես ասեմ ձեզ. յայսմեանտ տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեանն եւ եկեալ ընդ ամպս երկնից:

ԶԴանիելի մարգարէութիւնն յիշեցուցանէ, որ ասաց թէ՛ «Տեսանէի, եւ ահա աթոռք անկանէիմ, եւ Հինաւորցն նստէր» (Դան. Է 9), եւ «իբրեւ Որդի մարդոյ գայր ընդ ամպս երկնից» (Դան. Է 13), որպէս զի ցուցցէ ոչ միայն, թէ Քրիստոսն է, այլեւ զոր¹ դուք հակառակ կարծէք, նա յոյժ միաբան է Հօր, այնքան, մինչ զի ընդ աջմէ Նորա նստի եւ կրկին անգամ գայ ի դատել զտիեզերս:

Իսկ «յայսմեանտ» ասելն ոչ ըստ աստուածութեանն, որ միշտ ընդ աջմէ Հօր է անբաժանելի, այլ ըստ մարմնոյն, զոր էառ, որպէս ասաց թէ՛ «զՈրդի մարդոյ», որում ի ձեռն մահուանն զնիստն շնորհեաց՝ ըստ առաքելոյ թէ՛ «Սրբութիւն մեղաց մերոց արարեալ նստաւ ընդ աջմէ Մեծութեանն ի բարձունս» (Եբր. Ա 3): Եւ թէ՛ «Ելն զի՞նչ է, եթէ ոչ՝ զի էջ նախ ի ստորին կողմն երկրի», եւ «որ ելն ի վերոյ քան զամենայն, զի լցցէ զամենայն» (Եփես. Դ 9-10): Գրէ եւ Դաւիթ Հոգւովն թէ՛ «Նիստ ընդ աջմէ Իմմէ, մինչեւ եղից զքշնամիս Քո պատուանդան ոտից Քոց» (Սաղմ. ԾԹ 1), քանզի ասելովն թէ՛ «նիստ ընդ աջմէ», ցուցանէ², թէ Տէր է Դաւթի Քրիստոսն նորա: Նաեւ գալոց է ընդ ամպս երկնից, զի որպէս վերացաւ, նոյնպէս եկեսցէ ըստ հրեշտակաց ասիցն³, զի ծանիցեն, թէ Նա է: Կամ «ամպ» զմարմինն ասէ կամ զհրեշտակս, այլեւ նշանակէ ամպովն ի վերուստ գալ յերկրորդ երեսմանն եւ ոչ ի կնոջէ կամ յերկրի երեսել, որպէս յառաջինն:

Իսկ զի՞նչ է «ընդ աջմէ զօրութեանն» ասելն. կամ թէ՛ Հօր, որպէս ասացաւ, կամ թէ՛ աջ է Հօր եւ զօրութիւն միաձին Որդին ըստ այնմ. «Աջ Քո եւ բազուկ Քո» (Սաղմ. ԽԳ 4), եւ թէ՛ «Աջ Տեառն արար ինձ զօրութիւն» (Սաղմ. ԾԺԷ 16): Բայց քննելի է, թէ ընդէ՞ր գայս ետ պատասխանի. զի զամենայն պատասխանատուութիւնս բառնայցէ ի նոցանէ մինչեւ ցյետին օրն՝ ուսուցանելով, թէ Նա է Քրիստոսն, որ նստի ընդ աջմէ Հօր, զի մի՛ ասիցեն թէ՛ յանգէսս սպանաք, քանզի ոչ երբէք լուաք ի Նմանէ:

¹ Զ > զոր

² Զ > իմմէ, մինչեւ եղից.... ցուցանէ

³ Գործք Ա 11

Յայնժամ քահանայապետն պատառեաց զհանդերձս իւր եւ ասէ. «Հայհոյեալսն (ԻՉ 65):

Տեսանէ՞ս, թէ որպէս յայտ եղեւ հարցուածն Նորա. զի յորժամ Ինքն վկայեացէ, նորա ի մահ դատապարտեացեն: Բայց թէ ընդէ՞ր պատառեաց զհանդերձն. որպէս թէ ըստ Օրինացն առնիցէ. քանզի այնպիսի բանք ասացեալ՝ հայհոյութիւն կարծէին եւ զհանդերձս պատառէին: Որպէս Յեսու եւ Եզեկիաս եւ Եզրաս¹ եւ այլք բազումք, նոյնպէս եւ սա արար, որով զամբաստանութիւնն սաստիկս գործեացէ, միանգամայն եւ ահ լսողացն արասցէ եւ մեծ զբանս իրացն ցուցցէ², եւ զամենեսին ի վրէժխնդրութիւն շարժեացէ, որպէս առ Ստեփանոսի արարին, զի «խցին զականջս եւ դիմեցին առ հասարակ ի վերայ» (Գործք Է 56). զայն եւ աստ առնել հնարեցաւ: Եւ դարձեալ «պատառեաց զհանդերձս իւր», քանզի նեղացաւ նա ի զօրութենէ Նորա եւ որպէս տիկ հին եւ պատառատուն ոչ հանդուրժեաց նոր զինոյ վարդապետութեան Նորա: Այլ ասասցուք եւ զայս, թէ զայն ինչ, զոր հանդերձեալ էր Աստուած ցուցանել ի ձեռն Միածնին Իւրոյ, յառաջագոյն նկատեաց զնա ի բնութիւն երկրի եւ դրոշմեաց յարդարս, քանզի յարեզ ամսեան պատառեն ծաղիկք զծոց երկրի եւ ելանեն, ի նոյն ժամանակի պատառեաց քահանայապետն զհանդերձս իւր, յորմէ ել քահանայութիւնն եւ եկն սփռեցաւ ի վերայ Փրկչին մերոյ:

Ձի՞ր եւս պիտոյ են մեզ վկայք. ահա արդ լուայք զհայհոյութիւն Գորա: Ձի՞նչ հաճոյ է ձեզ» (ԻՉ 66):

Ի կեղակարծ իրս, ասէ, վկայութիւնն պիտոյ է, իսկ Սորայն աւասիկ յայտնի եղեւ ի ձեռն քանից Իւրոց, զոր եւ լուայքդ իսկ: Չայս ասելով՝ զրաւէ զլսողսն եւ զրեթէ բռնադատէ զնոսա եւ ստիպէ տալ զվճիռն. «Ձի՞նչ հաճոյ է ձեզ», - ասէ: Քանզի յանձնէ չկամի տալ զվճիռն, այլ նորօք հաստատէ՝ իբրեւ ընդ յայտնի ինչ զմեղաց, միանգամայն եւ զանձն տարագրէ յիշխանութենէն, այլեւ ակնառու գոլով ըստ կամաց ժողովրդեանն դատէ:

Նորա պատասխանի ետուն եւ³ ասեն. «Մահապարտ է»:

¹ Յեսու է 6, Դ Թագ. ԺԹ 1, Ա Եզր. Ը 72

² Ձ ~ եւ մեծ զբանս իրացն ցուցցէ, միանգամայն եւ ահ լսողացն արասցէ

³ Ձ տունեալ] ետուն եւ

Է՞ր վասն զայս ասացին. զի իբր մահու արժանատր դատեալ առ Պիղատոս ածիցեն, քանզի խորհրդակից քահանայապետին ամենեքեան էին: Բայց դու տես զանհրատութիւն ատենին. զի ինքեանք դատախազք եւ ինքեանք դատաւորք եւ զոր կամէին առնէին, վասն այսորիկ պղծեցան ճանապարհք նոցա, զի ոչ էր Աստուած առաջի աչաց նոցա, եւ բարձեալ էին իրաւունք յերեսաց նոցա¹:

Յայնժամ քքին ընդ երեսս Նորա եւ կոփեցին զՆա, եւ ոմանք սպտակեցին զՆա եւ ասեն (ԻՉ 67).

«Մարգարեաց մեզ, Քրիստոսն, ո՞վ է, որ եհարն գժեզ» (ԻՉ 68):

Տես զճշմարտութիւն ատեարանչիս, թէ որպէս եւ զնախատինսն անգամ ոչ թագուցանէ եւ ոչ ամօթ համարի, այլ իբր զմեծ ինչ փառս հաշուեալ պատմէ, որպէս եւ է իսկ, որով եւ զհաւատութիւնն յայտնէ. «Թքին,- ասէ,- ընդ երեսս Նորա»: Արդ՝ եթէ սպանանելոց էին, որպէս եւ դատեցան իսկ, զի՞նչ պէտք ձաղանաց էին. զի ուսանիցիս զանառակ բարս նոցա, որ իբր որս ինչ գտեալ՝ ցուցանէին զթշնամութիւն իրեանց եւ զայն իբրեւ տօն իմն համարէին: Այլ եւ զյանդգնութիւն նոցա եւ զանեզրական չարութիւնն նշանակէր նախատինքն, քանզի յերեսս Նորա քքանէին, որ ըզ՛ի ծնէ կոյրն լուսաւորեաց քքովն եւ զծովն պատառեաց, եւ արեգակն ի խաչին տեսանելով զերեսս Նորա՝ զճառագայթ իր ամփոփեաց: Նաեւ զՏեառն մերոյ հեզութիւնն ցուցանէ, որ կարող էր միով բանիւ անդնդատոյզ զնոսս առնել, բայց հանդարտութեամբ զթշնամանս արհամարհանաց նոցա կրէր, որով զթուք ամօթոյն բարձցէ յերեսաց մերոց եւ զկռուփ մեղացն ի մէնջ թեթեւացուցէ եւ զսպտակ վիրին առողջացուցէ:

Սպտակեցին զՆա եւ ասեն. «Մարգարեաց մեզ, Քրիստոսն², ո՞վ է, որ եհարն գժեզ»:

Մարկոս ասէ, թէ եղեգամբք հարկանէին³, եւ Ղուկաս թէ «Հանդերձիք զերեսս Նորա ծածկէին եւ սպտակէին» (հմմտ. Ղուկ. ԻԲ 64), եւ ոչ միայն գործով, այլեւ բանս ձաղանաց խօսէին եւ «մարգարէ» կոչէին, որպէս բազումք, զի զամենայն մոլորու-

¹ Սաղմ. Թ(Ժ) 4-5

² Քրիստոս

³ Մարկ. ԺԵ 19

թիւնս իւրեանց յագեցուցեն, եւ իբրեւ զայր մի արհամարհեալ եւ զերերդանգեան¹ քամահեալ եւ լրբութեամբ ի մէջ արկեալ կատակէին: Այլ եւ այսու զմարգարտիցն լնոյր զմարգարտութիւն. զԵսայեայ «Չթիկունս իմ ետու ի հարուածս եւ զծնօտս՝ յայտակս, եւ ոչ դարձուցի զերեսս իմ ի քրանելոյ» (Ես. Ծ 6), եւ զՉաքարիայն² թէ՛ «Չեմ մարգարտ» (Չաք. ԺԳ 5), իբրու զի մարգարտ էր Նա եւ իբր մշակ «հողագործ»³ վաստակեցաւ ի նոսա⁴ ի ձեռն բժշկութեանն, եւ մարդն Իսրայէլ նախանձեցաւ ընդ Նա ի մանկութենէ իւրեանց, որք ի ծննդենէ մինչեւ ի մահ եպերանօք եպերեցիմ զՆա:

Իսկ Պետրոս նստէր արտաքոյ ի գաւթին: Մատեաւ առ նա աղախին մի եւ ասէ. «Եւ դու ընդ Յիսուսի Գալիլեացոյ էիր» (ԻՉ 69):

Նա ուրացաւ առաջի ամենեցուն եւ ասէ թէ՛ «Ո՛չ գիտեմ զինչ խօսիսդ» (ԻՉ 70):

Ըստ Տեառն բանի՝ եկն եհաս սկիզբն փորձութեան առ Վէմն շարժել զնա ի ձեռն աղջկան միոյ, որ եւ նոր եւ սքանչելի իրք ինձ թոյի: Քանզի մինչ միայն կալեալ ետես զՎարդապետն, այնպէս եռայր, մինչեւ սուր մերկացեալ եւ զունկն հատեալ զծառային, իսկ յորժամ զայրանալ պարտ էր եւ վառիլ եւ բորբոքիլ, զի զայնչափ բամբասանս լսէր, յայնժամ ամենեւին ուրացաւ եւ յահէն պախեալ գտաւ:

Եւ իբրեւ ել նա արտաքս քան գրոռնն, ետես զնա այլ կին մի եւ ասէ ցայնուսիկ, որ անդն կային. «Եւ սա՛ ընդ Յիսուսի Նագովրեցոյ էր» (ԻՉ 71):

Եւ դարձեալ ուրացաւ երդմամբ թէ՛ «Ո՛չ գիտեմ զայրն» (ԻՉ 72):

Պետրոս խոյս ետ ի տեղոջէն, զի մի՛ այլ ոք կշտամբեսցէ՝ ի նշանակ մեզ, զի ի սկիզբն փորձութեանն խոյս տալ արժան է ի տեղոջէն ըստ մարգարտիմ⁵, բայց զի վճիռ Տեառն էր, եւ հանդերձեալ էր լինել ի զգաստութիւն նմա, զի մի՛ անձնապարծ լիցի նա եւ մի՛ այլ ոք: Վասն այսորիկ յելանելն արտաքս՝ այլ ոմն ասաց թէ՛ «Եւ դու ընդ Յիսուսի էիր», իսկ նա դարձեալ ոչ միայն ուրա-

¹ Զ գերրորդանգեան

² ՏԶ գլմբակումայն

³ Չաք. ԺԳ 5

⁴ Զ > ի նոսա

⁵ Ա Թագ. ԺԸ 11

ցաւ, այլեւ երդմամբ եւս, եւ այն ոչ առաջի դատաւորաց եւ ոչ սպառնալեօք, այլ առ դրանն, իբրեւ խղճիս իմն ասելով թէ՛ «Եւ սա՛ ընդ նմա էր», եւ նա ուրանայր եւ յաղջկանէ միոջէ տառապելոյ եւ վատթարէ զարհուրեալ դողայր թէ՛ «Ոչ գիտեմ զայրն»:

Եւ յետ սակաւ միոյ մատուցեալ որք կայինն անդ՝ եւ ասեմ ցՊետրոս. «Արդարեւ եւ դու ի նոցանէ ես, քանզի եւ խօսք քո յայտ առնեն զքեզ» (ԻՉ 73):

Յայնժամ սկսաւ նզովել եւ երդնուլ թէ՛ «Ոչ գիտեմ զայրն» (ԻՉ 74):

Ի սակաւ ժամանակի երիցս ուրացաւ՝ առաւելութեամբ երդմամբ եւ նզովիւք թէ՛¹ ոչ գիտեմ զՆա. զի որքան դրդէին թէ՛ ընդ նմա էիր, եւ խօսքդ յայտ առնեն իբր շինական գոյով, եւ զայիլեացի՝ բարբառդ, նա եւս քան զեւս երդնոյր եւ հեռանայր ի Նմանէ նզովիւք. որպէս զի ուսցուք, թէ առանց Նորա ոչինչ կարացդ որ առնե՞ր², թէպէտեւ յոյժ խրոխտագոյն որ իցէ:

Եւ իսկոյն հաւ խօսեցաւ: Եւ յիշեաց Պետրոս զբանն Յիսուսի, զոր ասաց թէ՛ «Մինչչեւ հաւու խօսեալ իցէ, երիցս ուրացիս զԻս» (ԻՉ 75):

Յառաջ քան զմիանգամ կատարել հաւուն զխօսան՝ երիցս ուրացաւ ըստ Մատթէոսի ասելոյն. «Մինչչեւ հաւու խօսեալ իցէ, երիցս ուրացիս զԻս»: Իսկ թէ Մարկոս ասէ, թէ յորժամ միանգամ ուրացաւ, յայնժամ հաւ խօսեցաւ, եւ յորժամ երկիցս եւ երիցս կրկնեաց եւ հաւն³, այս ոչ եթէ ընդդիմութիւն ինչ ունի, այլ կարի միաբանութիւն, քանզի ի միում ժամու⁴ երկիցս եւ երիցս եւ բազում անգամ սովոր է խօսիլ հաւ: Արդ՝ Մարկոս զայն յայտ առնէ, թէ եւ ոչ հաւուն ձայն կասեցոյց զնա եւ ած ի յիշատակ, քանզի իւրովի ոչ եկն ի միտս, նաեւ ոչ ի հաւուն ձայնէ ընդոստեաւ, մինչեւ հայեցաւ ի նա Յիսուս՝ ըստ Ղուկայ⁵, եւ այն եղև փոխանակ բարբառոյ: Զանզի այնպէս յապուշ կրթեալ էր մտացն եւ ապա զօրացաւ ի հայելոյն Տեառն Պետրոս եւ յիշեաց զբանն Յիսուսի թէ՛ «Մինչչեւ հաւու խօսեալ իցէ, երիցս ուրացիս զԻս»: Եւ կամ զբանն դնելի է այսպէս. թէ մինչչեւ հաւու խօսեալ իցէ երիցս, ուրացիս

¹ S > թէ

² Յովհ. ԺԵ 5

³ Մարկ. ԺԴ 68, 72

⁴ Զ ժամի

⁵ Ղուկ. ԻԲ 61

զիս, այսինքն՝ թէ՛ յորժամ ւաւարտի հատուն խօսելն, ւաւարտի եւ քո ուրանալն, որով Մատթէոս եւ Մարկոս ճշմարիտ գտանին:

Եւ ելեալ արտաքս՝ ելաց դառնապէս:

Քանզի չիշխէր յայտնի լալ, թէպէտեւ Տէրն յուշ արար նմա զյանցանսն, զի յամբաստանութիւն զալոց էր վասն արտասուացն, այլ արտաքս ելեալ՝ ելաց դառնապէս, այսինքն՝ հեծեծանօք եւ յոգոց հանելով: Քանզի ի փղծկել¹ սրտին վասն տրտմութեան բնատրեալ է մաղձ կաթել ի բերան քաղորթին եւ դառնացուցանել զստամորսն եւ զքիմսն: Եւ կամ, որպէս ոմանք ասեն, ելաց, մինչեւ արտաստոքն յարիւն փոխարկեցաւ, որպէս քիրտն Յիսուսի. եւ չեն ինչ զարմանք, զի որպէս ի քրքրելն հեշտութեամբ՝ ախտ վաւաշ ցանկութեանն յորժամ յաճախէ, եւ պակասի հիւք սերմանն, արիւն ընկենուն, որպէս ասեն, նոյնպէս եւ յընդդէմն. յորժամ ճնշէ զմարմինն ոք անչափ տրտմութեամբ ի թորեցուցանել զարտաստու, եւ պակասի ջուրն, արիւն լինի կաթուածն: Եւ այսմ ունինք օրինակ ի բնական իրաց, զի յորժամ պարզեալ զինի ի տկէ կամ ի կարասէ իջանէ, եւ պակասի յտակն, այնուհետեւ պղտորն քոյսէ:

Դարձեալ՝ զլուխն առաքելոցն չարչարեցաւ եւ փորձեցաւ, զի զչափ անձինն գիտասցէ եւ զի այլոց ողորմեցի եւ լիցի նա բժիշկ վիրաւորաց: Եւ եթէ գուցէ ամաչեցեն յանցաւորք ապաշխարել, ի ձեռն Շմաւոնի յանցաւորի յորդորեցին զալ առ Այն, որ վերագոյն է քան զյանցանս. քանզի ի գիշերի ուրացաւ եւ ի տուէ խոստովանեցաւ: Ուրացաւ՝ երկիր վկայէ, եւ յորժամ խոստովանեցաւ՝ ծով եւ ցամաք. զի ուրացաւ լեզու նորա եւ խոստովանեաց դարձեալ, մոյժ զանձն իւր ի լուծ եւ հար զուս իւր ի խաչ անդ եւ սրբեցաւ, եւ երեք հարցմամբ սիրոյն զերիս ուրացութիւնն բժշկեաց:

ԳԼՈՒԽ ԻԵ

Իբրեւ այգ եղև, խորհուրդ արարին ամենայն քահանայապետքն եւ ծերք ժողովրդեանն վասն Յիսուսի՝ սպանանել զՆա (ԻԵ 1):

¹ Զ փղծկալ

Կապեցին զՆա եւ առին զնացին, եւ ետուն ի ձեռս Պոնտացոյ Պիղատոսի դատաւորի (ԻԷ 2):

Խորհեցան սպանանել զՆա, բայց ինքեանք ոչ կարացին վասն տօնին կամ ոչ իշխեցին, վասն այնորիկ իբրեւ զմահու արժանաւոր կապեցին եւ ի ձեռս դատաւորին մատնեցին, զի լցցի զիրն թէ՛ «Կապեցուք զարդարն, զի դժպիհ եղև մեզ» (Ես. Գ 10): Բայց դու միտ դիր, թէ զհարդ ի տօնին դիպեցան իրքն. քանզի ի սկզբանէ այնպէս նկարեալ էր գառամբն, զենաւ եւ Տէր մեր Չատիկ բարձօղ մեղաց աշխարհի՛ ըստ Յովհաննու ձայնին¹, վասն որոյ եւ ինքեանք ոչ կերան զՉատիկն՝ նշանակելով, զի անհարորք եղեն ճշմարիտ գառինն Աստուծոյ պղծեալք յաիտեանս եւ առ յապայ:

Յայնժամ տեսեալ Յուդայի, որ մատնեացն զՆա, թէ պարտաւորեցաւ, զղջացաւ եւ դարձոյց զարծաթն առ քահանայապետսն եւ ծերս ժողովրդեանն (ԻԷ 3)

եւ ասէ. «Մեղայ, զի մատնեցի զարիւն արդար» (ԻԷ 4):

Չի՞նչ է թէ՛ «պարտաւորեցաւ». կամ թէ կարծեաց, թէ ոչ ըմբռնի ի նոցանէ, որպէս յերէկն եւ յեռանդն, իսկ յորժամ ետես, թէ ըմբռնեցաւ եւ պարտաւորեցաւ, ապա զղջացաւ, կամ թէ՛ զինքն միտք իւր արեան անմեղի պարտաւորս ցուցին, եւ ի ներքին մարդոյն դատեալ կշտամբիւր վասն Վարդապետին մատնութեանն եւ վասն արդարութեան եւս՝ ըստ երգոյն թէ՛ «Ի դատաստանէ իւրմէ ելցէ դատապարտեալ» (Մաղմ. ԾԸ 7): «Չղջացաւ² եւ դարձոյց զարծաթն առ քահանայապետսն». զղջումնս այս ի նորա եւ ի նոցա, ամբաստանութիւնն էր. ի նորա՝ ոչ զի զղջացաւ, այլ զի յամբ եւ անագան եւ կեղծաւոր ձեւով, ուստի անձամբ պարտաւորեցաւ, զի մատնեաց եւ խոստովան եղև. եւ ի նոցա՝ զի իշխանութիւն ունէին զղջանալ եւ ոչ զղջացան ըստ այնմ. «Յրուեցան եւ ոչ զղջացան» (Մաղմ. ԼԳ 15):

Բայց դու միտ դիր, թէ երբ զղջացաւ. յորժամ ի գլուխ ելին իրքն, եւ յանցանքն կատարեցան, ապա եմուտ ի նա ապաշխարութիւն. նաեւ ոչ յայնժամ պիտանութեամբ եւ գործով, այլ սոսկ բանի միայն թէ՛ մեղայ: Եւ այս սատանայի է գործ, զի ոչ տայ

¹ Յովհ. Ա 29

² Չ Չղջացաւ, ասէ

տեսանել այնոցիկ, որ չիցեն արթուն, յառաջագոյն զշարիսն, զի մի՛ ապաշխարեսցեն: Այլ ոմանք ասեն, թէ վասն այնորիկ ոչ եղև թողութիւն, զի ոչ ասաց թէ՛ մեղայ, զի մատնեցի զՈրդին Աստուծոյ, այլ թէ՛ «զարիւն արդար», որ ոչ թուի ինձ ուղիղ. ոչ ըստ այնմ միայն, զի ոչ որ զիտէր զՆա ճշմարիտ Որդի Աստուծոյ յառաքելոցն, այլ կարծեօք իմն եւ կաղ ի կաղ մինչեւ ցայն վայր, թեպէտ երբեմն ի վերուստ յայտնութեամբ դաւանեաց Պետրոս, այլև ըստ այնմ, զի ո՞ր որ էր արդար բաց ի Քրիստոստ, որ եղև մեզ յԱստուծոյ արդարութիւն¹: Իսկ որպէս ինձ թուի, զի ոչ ընկալաւ թողութիւն, կամ որպէս ասացի, զի զոսկ բանէ միայն բուռն եհար եւ ոչ զգործոյն, որպէս Պետրոս, կամ որպէս ասելոց է, զի ի վերայ արեանն Տեառն եւ զանձն եւս եսպան խեղդելով:

Եւ նորա ասեն. «Մեզ չէ՛ փոյթ, որ՛ի զիտես»:

Յուդայի մեղքն, որ էր մատնութիւնն, կատարեցաւ, վասն այնորիկ չտանէր խղճի մտացն, որ տանջէին զնա, իսկ նոցայն չեւ եւս, յորժամ նորա զիրեանցն վճարեցին եւ բեւեռեցին ընդ խաչին, ապա եւ ինքեանք ամբոխեցան, քանզի մերթ ասէին թէ՛ «Մի՛ գրեր թագաւոր հրէից, այլ թէ՛ Նա՛ ասաց «թագաւոր եմ հրէից» (Յովհ. ԺԹ 21), եւ մերթ պահապանս կացուցանէին: Այլ տես, զի զիտէին, թէ անիրաւութեան իրք էին. յայտ անտի է, զի ասէին. «Դո՛ր զիտես, մեզ չէ՛ փոյթ». ապա ուրեմն ոչ այսու արդարանալ կարէին, թեպէտ զխիղճն ի Յուդա հանէին եւ ինքեանք իսկ պարտական անօրէնութեան էին, որք առ այն ժամ յախտէն ըմբռնեալ էին եւ ոչ կարէին մեկնիլ ի սատանայական ժպրհութենէն:

Եւ ընկէց զարծաթն ի Տաճարին եւ գնաց, եւ չոգաւ խեղդեցաւ (ԻԷ 5):

Չղջանալն եւ ընկենուլն զարծաթն եւ ոչ զանգիտել ի հրէական ամբոխէն ընդունելի էր, բայց խեղդելն եւ անձին չար առնելն դիւի գործ է եւ ոչ մարդոյ: Այլ խեղդեցաւ, զի եղիցի քարոզ մոլորութեանն, զի համարեցաւ, թէ ապրեցաւ յամօթոյ եւ թափեցաւ յակնկորութենէ, եւ ոչինչ երթայ ընդ նմա յետ փոխելոյ նորա աստի: Եւ դարձեալ զի մի՛ պղծեսցի ողորմութիւնն պատժովք նորա, ոչ զուաւ նմա սպանօղ յորդոցն խաղաղութեան եւ ճշմարտութեան, այլ ինքն հեղձոյց զանձն իւր, զի ցուցցէ, թէ յաւուրն յետնուս նոյն-

¹ Բ Կոր. Ե 21

պէս մոլորութիւն նորա հանդերձեալ է կորուսանել զնա: Եւ դարձեալ որպէս մատնելն ի սատանայէ, այսպէս եւ խեղդիլն. քանզի ամենայն, որ ձգէ նետ թշնամոյ իւրոյ, եւ դառնայ նետն հարկանէ զայն, որ ձգեացն զնա, զնետն փշրէ եւ զաղեղն խորտակեալ՝ նիւթ հրոյ առնէ, նոյնպէս եւ սատանայ իբրեւ ետես, թէ մահն Որդոյ յաղթութիւն է աշխարհի, եւ խաչ Նորա ազատիչ է արարածոց, եւ մուտ ի Յուդա յանօթն իւր՝ ըստ այնմ՝. «Սատանայ կացցէ ընդ աջմէ նորա» (Սաղմ. ԾԸ 6), եւ չոգաւ խեղդեցաւ: Այլեւ հերձաւ ըստ Աքիտոփելայ² ապերախտի³, զի «եղիցի բնակութիւն նորա աւերակ, եւ ի յարկս նորա մի՛ որ իցէ, որ բնակիցէ» (հմմտ. Սաղմ. ԿԸ 26), եւ «զտեղի նորա առցէ այլ որ» (հմմտ. Սաղմ. ԾԸ 8):

Իսկ այն, զի ասէ Պետրոս, թէ հեղաւ փոր նորա⁴, կամ ի վերայ այնորիկ, յորոյ վերայ կաց, եւ արկ խեղդ անձին իւրոյ, անցեալ եւ դու փոր նորա, կամ հատաւ չուան խեղդանի նորա, եւ հերձաւ ընդ մէջ, եւ վայթեցան աղիք նորա: Կամ, որպէս այլք ասեն, թէ գորուն փակեաց, մինչեւ նեխեցաւ եւ մասն մասն տրորեալ յերկիր անկաւ, եւ ի հոտոյն իմացան զեղեալն: Բայց դու ի միտ առ, թէ զինչ գործէ արծաթսիրութիւնն, որ արմատ է ամենայն չարեաց⁵, որպէս գրէ մարգարէ ոմն թէ՛ «Մեծացայ եւ գտի ինձ ցաւս» (հմմտ. Ովսէէ ԺԲ 8), քանզի զհոգին կորոյս եւ զմեղսն շահեցաւ, ի կեանս չվայելեաց եւ ի հանդերձելոյն զրկեցաւ:

Իսկ քահանայապետիցն առեալ զարծաթն՝ ասեն. «Ո՛չ է արժան ընդունել զայդ ի կորբանն, քանզի զինք արեան են» (ԻԷ 6):

Տեսանե՞ս դատապարտեալս եւ զնոսա ի խղճէ մտացն. քանզի զիտէին, թէ զնեցին զսպանութիւնն, ոչ արկին զարծաթն ի կորբանն, այսինքն՝ յրնձայս Տաճարին, քանզի վարձանք անօրէնութեան ի տուն զանձի տան Տեառն ոչ մտանէր:

Խորհուրդ առեալ՝ զնեցին այնու զազարակն բրտի ի գերեզման օտարաց (ԻԷ 7):

¹ Զ այնմ թէ

² ՏՁ Աքիտոփելայ

³ Բ Թագ. ԺԷ 23

⁴ Գործք Ա 18

⁵ Ա Տիմ. Զ 10

Վասն այնորիկ կոչեցաւ ազարակն այն «ազարակ արեան» մինչեւ ցայսօր (ԻԷ 8):

Քանզի երկեան յընթերցուածոյ անտի եւ կամեցան ծածկել զիրն, նա աւանիկ եղեւ այն ի վկայութիւն նոցա եւ յամբաստանութիւն, զի անուն ազարակին քան զփող¹ սաստիկ հնչէր եւ քարոզէր զպղծայից սատակումն նոցա, զի մի՛ ոք անարատ ի յանդգնութենէն գտանիցի: Չի թէ ի կորբան էր արկեալ, ո՛չ այնպէս իրքն յայտապատում լինէին, իսկ յորժամ զգետղմ² գնեցին, այնու ազգաց յազգս զամենայն յայտ արարին: Այլ ի գերեզման³ օտարաց զազարակն գնել թոյի թէ զարիւնն այնու քաւել կամեցան, որ ոչ եղեւ, բայց պատահեցաւ այլ իմն լինել, զի արծաթովն, որով զարիւնն գնեցին եւ օտարացան ի Նմանէ նոքա, եղեւ Նա հանգիստ հեթանոսաց օտարաց, որ նշանակէր զխորհուրդ Եկեղեցւոյ, որ զին է արեան Նորա մինչեւ ցայսօր:

Յայնժամ լցաւ՝ որ ասացան ի ձեռն Երեմիայի⁴ մարգարէի. «Եւ առին զերեսուն արծաթին՝ զգինս վաճառելոյն, զոր արկին յորդոցն Իսրայէլի (ԻԷ 9),

եւ ետուն զնա յազարակն բրտի, որպէս հրամայեաց ինձ Տէր»⁵ (ԻԷ 10):

Հանգոյն այսմ եւ Չաքարիաս ասէ թէ՛ «Տոք զվարձս իմ..., եւ կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթի. եւ ասէ ցիս Տէր. «Արկ զայդ ի տուն Տեառն ի բովս» (հմնտ. Չաք. ԺԱ 12-13): Քանզի ի ժամանակէ անտի իբրեւ անկաւ արծաթն ի տաճարն, սրբեցաւ նա, վասն այնորիկ ետուն յազարակն բրտի, քանզի եւ բովք բրտաց են: Բայց դու եկ ինձ հիացի՛ր ընդ մարգարէիցն կանխատեսութիւն, մանաւանդ ընդ Հոգւոյն, որով խօսէին, թէ զհա՛րդ զլինելոցն իբրեւ զեղեալ բացերեւակի ճառեցին եւ զչարչարանս Փրկչին անդուստ ի վերուստ գուշակեցին, եւ որպէս զամենայնն, այսպէս եւ վասն արծաթոյն, որպէս ասէ թէ՛ «Առին զերեսուն արծաթին՝ զգինս վաճառելոյն»: Արդարեւ զինք էին Արդարոյն եւ Հեզոյն, որ ոչ միաբանեցաւ ընդ նոսա, եւ նոքա վաճառեցին զՆա արծաթոյ, որպէս եւ եղբարքն Յովսէփայ՝ զՅովսէփի ծառայութիւն⁶, այսպէս եւ սոքա զՏէր մեր՝ ի մահու նուաստութիւն, վասն որոյ ասէ թէ՛

¹ Զ զփողս

² Զ զգետղն

³ Զ գերեզմանս

⁴ Զ Երեմիայ

⁵ Երեմ. ԼԲ 9

⁶ Ծննդ. ԼԷ 28

«գոր արկին¹ յորդոցն Իսրայելի»: Ձի ո՛չ մի ազգ կամ երկու, այլ ամենեքին իսկ կամակից էին մահու Նորա, գոր ետուն յազարակն բրտի² ըստ հրամանի Տեառն՝ առ ի խայտառակել զանօրէն գործս նոցա:

Եւ Յիսուս եկաց առաջի դատաւորին: Եհարց ցՆա դատաւորն եւ ասէ. «Դո՞ւ ես թագաւորն հրէից»: Եւ Յիսուս ասէ. «Դո՞ւ ասացեր» (ԻԷ 11):

Չամենայն ինչ յեղյեղէին եւ յաժէին, եթէ զհա՞րդ կարիցեն առնել զՆա մահապարտ: Բանզի իմացան, թէ Պիղատոս չառնէ ինչ փոյթ զՕրինացն, յարքունի վնասս ածեն զամբաստանութիւնն, թէ թագաւոր կոչէ զանձն: Վասն այտորիկ եւ դատաւորն նախ զայս հարցանէր թէ՛ որպէս ասեն, Դո՞ւ ես թագաւորն հրէից՝ ծնեալ ըստ մարգարէիցն, եւ Յիսուս ասէ. «Դո՞ւ ասացեր»: Այսինքն ո՛չ յԻնէն լուար, այլ դո՞ւ ասացեր, թէ թագաւոր եմ, բայց ո՛չ երկրաւոր, այլ երկնաւոր թագաւոր, որպէս այլոր ասաց Պիղատոսի թէ՛ «Իմ թագաւորութիւնն չէ յայսմ աշխարհէ՞» (Յովհ. ԺԸ 36), եւ թէ՛ «Ես ի դոյն ծնեալ եմ եւ եկեալ յաշխարհ» (Յովհ. ԺԸ 37): Չայս ասաց, զի մի՛ նոքա եւ մի՛ նա ունիցին պատասխանատրութիւն, որ զայնպիսի ամբաստանութիւնն մատուցանէին: Եւ զհա՞րդ ասեն ո՛չ ասաց զայս ամենայն, թէ զհարկն ետու եւ այլոց հրամայեցի տալ, եւ յորժամ կամեցան առնել զԻս թագաւոր, փախեայ: Այլ քանզի կամօք կուրացեալ էին եւ ի չարիս մտաբերէին, վասն այտորիկ սակաւ ինչ պատասխանի տայ թէ՛ «Դո՞ւ ասացեր», եւ լռէ:

Եւ ի չարախօսելն Նորա ի քահանայապետիցն եւ ի ծերոց՝ ոչինչ ետ պատասխանի (ԻԷ 12):

Ձի՞նչ չարախօսէին. այսինքն, թէ թագաւոր զանձն անուանէ եւ հակառակ է կայսեր, աշակերտս ժողովէ եւ զՕրէնս մեր խափանէ, եւ այլ սոյնպիսիս: Բայց Նա բնատին նոցա ոչինչ ետ պատասխանի, այլ սակաւ ինչ դատաւորին, որպէս ասացի, զի մի՛ բնաւ ի լռութենէն ստութեան կարծիս առնուցու. եւ նոցա՝ ո՛չ, քանզի չէին զայոց ի հաւանութիւն՝ ըստ այնմ թէ՛ «Առ խոնարհութեան նորա՝ դատաստան նորա բարձաւ» (Ես. ԾԳ 8):

¹ Զ արարին

² Երեմ. ԼԲ 6-9, 25

³ ՏԶ աշխարհի

Յայնժամ ասէ ցՆա Պիղատոս. «Ո՞չ լսես՝ որչափ դոքա հակառակ Քո վկայեն» (ԻԷ 13):

Եւ ոչ ետ նմա պատասխանի եւ ոչ բան մի, մինչեւ զարմանալ դատաւորին յոյժ¹ (ԻԷ 14):

Կամէր Պիղատոս, զի իրաւամբք պատասխանի տայցէ եւ ապրեցցէ, վասն որոյ եւ զայս իսկ ասաց, բայց Նա լռեաց, զի առաւել եւս աղաղակեցեն. զի թէ էր խօսեցեալ, լռեցուցանէր ճշմարտութեամբ Իրոով զսուտն, որք դատապարտեցին զՆա, այլ ո՛չ եղև նմա փոյթ հաւանեցուցանել զնոսա, զի մեռանել կամէր Նա: Եւ դարձեալ՝ զոր ինչ այք դատաստանօք առնուն զյաղթութիւն, Տէր մեր լռութեամբն էառ, ընդ որս կարի զարմացաւ դատաւորն, զի ի լռութենէն ճանաչեաց ճշմարիտ գոլ զՆա: Եւ դարձեալ Սողոմոնն ասէ. «Ժամանակ է խօսելոյ, եւ ժամանակ է լռելոյ» (Ժող. Գ 7), զոր եզիտ Տէր մեր զերկոցունց դիպօղ ժամանակն, քանզի առ վարդապետութիւնն խօսէր եւ առ դատաստանին լռէր՝ առ ի յուսումն մեզ, զի ո՛չ լռեաց յայնցանէ, որ զմեզ մեծացուցանէին, եւ ո՛չ մարտեաւ ընդ նոսա, որ զՆա դառնացուցանէին, քանզի լաւ համարեցաւ մեռանել, քան թէ ընդ անարժան եւ ընդ անլուր հոգիս խօսիլ²:

Բայց ըստ տօնի սովոր էր դատաւորն արձակել ժողովրդեանն կապեալ մի, զոր կամէին (ԻԷ 15):

Թուի թէ այս յելից անտի սահմանեցաւ, զի որպէս զգառն նշանակ ազատութեանն առնէին եւ զբաղարջն ընդ եղեգի վասն դառն ծառայութեանն ուտէին³, նոյնպէս եւ ի սոյն տօնի կապեալ մի արձակէին՝ զմտաւ ածեալ զկապանս իւրեանց, որք յԵզիպտոս «կապեալ էին յաղքատութեան որպէս յերկաթս» (Սաղմ. ԾՁ 10) եւ ազատեցան, քանզի որքան ինքեանց էր իշխանութիւնն, անվրէպ զայս առնէին, եւ յորժամ հռոմայեցոցն եղև, կաշառօք զդատաւորն հաւանեցուցանէին նուիրել տօնի նոցա կապեալ մի, զոր կամէին:

Ունէին յայնժամ կապեալ մի նշանաւոր, որում անուն էր Յեսու Բարաբբայ (ԻԷ 16):

¹ Զ > յոյժ

² Զ խօսել

³ Ելք ԺԲ 8

Ո՛չ պարզաբար ասաց «աւագակ», այլ թէ՛ «նշանատր», որպէս զի եւ ոչ նշմարանս անգամ պատասխանատրութեան թողոցու, զի զԱրարիչն սպանանել կամէին եւ զաւագակն արձակել խնդրէին, եւ այն զնշանատր ոմն, քանզի յամենեցունց դաւանեալ էր, եթէ բազում չարիս գործեաց եւ մահս, զոր եւ անունն իսկ յայտնէ, զոր կոչէին Յեսու Բարաբբայ: Չի կամ երկանուն էր եւ կամ «Յեսուայ որդի Բարաբբայ», որ լսի «որդի հօր», քանզի ազգաւ գողք էին եւ աւագակք, զոր պարտ էր զյայտնի չարագործն սպանանել եւ զանմեղն արձակել, իսկ նոքա զընդդէմն արարին, զի զաւագակն լաւ համարեցան, քան զՆա:

Իբրեւ ժողովեցան, ասէ ցնոսա Պիղատոս. «Չո՞ կամիք յերկուց աստի, զի արձակեցից ձեզ՝ զՅեսու Բարաբբա՞յ, եթէ զՅիսուս զանուանեալն Քրիստոս» (ԻԷ 17).

քանզի զհտէր, թէ առ նախանձու մատնեցին զՆա (ԻԷ 18):

Այլ իմն հնարս հնարի Պիղատոս, զի այնու ապրեցուցէ զՆա. ասէ. «Չո՞ կամիք յերկուց աստի, զի արձակեցից ձեզ», այսինքն՝ իբրեւ զարդար չկամիք արձակել, զէթ իբր զմահապարտ շնորհեցէք տօնիդ: Եւ զայս վասն այնորիկ առնէր, զի զհտէր ստոյգ, թէ ո՛չ վասն չարութեան, այլ վասն նախանձու ախտին, զոր ունէին, մատնեցին զՆա դատատրին:

Եւ մինչդեռ մատէր յատենին, առաքեաց առ նա կինն իւր եւ ասէ. «Չկա՛յ ինչ քո եւ Արդարոյն այնորիկ, զի բազում անցք անցին ընդ իս այսօր յանուրջս՝ վասն Նորա» (ԻԷ 19):

Դատատրն յայտնապէս զհտէր, թէ առ նախանձու էր մահ Նորա, եւ կինն տեսիլ տեսանէր, որ բաւական էր զամենեսին յողորմութիւն ածել, եւ նոքա ոչ զգաստանայիմ², որպէս զի անպատասխանիք լինիցին: Բայց թէ ընդէ՞ր կինն, այլ ո՛չ այրն տեսանէր. քանզի կինն արժանատր ոք էր քան զայրն, կամ թէ այրն տեսեալ էր, թերեւս չիւնէր այնպէս հաւատալի, կամ թէ ի վեր իսկ չհանէր, վասն այնորիկ կին տեսանէր: Եւ ո՛չ վայրասպար, այլ բազում կտտանօք կտտեալ լինէր, զի այրն վշտակից կնոջն լինիցի եւ դանդաղի ի սպանումն, նաեւ ժամանակն եւս նպաստ լինէր, քան-

¹ Զ > յանուրջս

² Զ սգաստանայիմ

զի ի նմին զիշերի զերազն տեսանէր: Արդ են ոմանք, որ զտեսիլս զայս ի դիւաց ասեն, քանզի ետես, թէ մահ Նորա փրկութիւն լինելոց է աշխարհի, խափանել ջանայր, իսկ այլք՝ ի հրեշտակաց, որպէս զի զանմեղութիւնն Յիսուսի ուսցին, եւ առանց պատճառի առիթք մահու Նորա դատապարտեսցին: Բայց նշանակ կարծեն եւ զկինն պարզամիտ ժողովոյն հրէից, որք ոչ յօժարէին ի մահ Նորա, եւ անուրջ՝ զկենցաղս, զի իբրեւ զերազ անցանէ, իսկ կտուտ տանջանաց՝ զանցս հռոմայեցոցն, զորս անցուցին ընդ հրէայսն վասն արեան Որդոյն Աստուծոյ:

Իսկ քահանայապետքն¹ եւ ծերք հաւանեցուցին զժողովուրդն², զի խնդրեսցեն զԲարաբբայն եւ զՅիսուս կորուսցեն (ԻԷ 20):

Կոյրք էին եւ չարագործք. իբրեւ տեսին, եթէ եզիտ հնարս արձակման զօրէնս տօնին, ապա զայս մեքենայս խառնեցին, քանզի ոչ միայն ինքեանք մոլորեալք էին, այլեւ զամբոխն ապականեցին, զի խնդրեսցեն զԲարաբբայն³ եւ զՅիսուս սպանցեն, որպէս զի եւ ընդ նոցա խարէութեանն անհնարին վրէժս տայցեն: Եւ զիա՞րդ հաւանեցուցին ասացէ որ. կամ թէ՛ զօրէնսն առաջի արկանէին, թէ լուծանէ, եւ այնու աղերսեցին, կամ զահ հռոմայեցոց տէրութեանն թէ՛ «Չանձն քագաւոր ասէ, եւ զայցեն հռոմք եւ ջնջեսցեն զազգս մեր»⁴:

Պատասխանի ետ դատաւորն եւ ասէ ցնոսա. «Չո՞ կամիք զի արձակեցից ձեզ յերկուց այտի» (ԻԷ 21):

Տես, թէ ո՞րպիսի եղծեալ էր կարզն, զի խնդրելն ռամկին էր սովորութիւն, եւ շնորհելն իշխանին, նա աւանիկ նմին հակառակ անուղղայ իմն զործեցաւ. իշխանն խնդրէր, եւ նոքա ոչ կամէին, զի Պիղատոս կամէր զՆա եւ զնոսա ի պատժոցն ապրեցուցանել, իսկ նոքա ջանային զանձինս ընդ պատժովք արկանել:

Եւ նոքա ասեն՝ զԲարաբբա:

¹ Ձ քահանայապետք

² Տ զժողովուրդսն

³ Ձ ~ զԲարաբբայն խնդրեսցեն

⁴ Յովհ. ԺԱ 48

Ոչ ի ժամանակէն ակնածէին, զի սուրբ էր, եւ ոչ ի մարդասիրութենէ՝ Օրինացն, այլ միանգամայն ամենեքեան կուրացեալ¹ նախանձու՝ մահ Յիսուսի խոկային եւ զաւագակն արձակել խնդրէին, քանզի եւ ինքեանք իսկ այնպիսիք էին:

Ասէ ցնոսա Պիղատոս. «Իսկ զի՞ արարից զՅիսուս զանուանեալն Քրիստոս» (ԻԷ 22):

Ասեն ամենեքեան՝ խաչեացի՝ (ԻԷ 23):

Այսու կամեցաւ պատկառեցուցանել զնոսա, զի խնդրոյ տեարս զնոսա արար, գոնեայ եւ առ ամօթոյ զՆա եւս խնդրեսցեն, եւ յիւրեանց պարծանս ամենայն եղիցի, իսկ նոքա ոչ առ այն ուղղեցան, այլ ասեն խաչի մեռցի, որպէս զի այնու զկորանս յիւրեանց ծածկեսցեն՝ իբրեւ զմահապարտ ոք² խաչել զՅիսուս:

Եւ նա ասէ. «Ձի՞նչ չար արար»: Եւ նոքա առաւել եւս աղաղակէին եւ ասէին՝ խաչեացի՝

Նա զգործոցն հարցանէր, եւ նոքա վասն մահուն բողոք բառնային, որպէս զի լոցի մարգարտութիւնն Երեսնիայ թէ՛ «Եղև ժառանգութիւն իմ ինձ որպէս առիւծ յանտառէ, եւ ետ ի վերայ իմ զբարբառ իւր» (Երեմ. ԺԲ 8), վասն այնորիկ «լքի գտուն իմ եւ բողի զժառանգութիւն իմ» (Երեմ. ԺԲ 7):

Եւ տեսեալ Պիղատոսի, թէ ոչինչ օգնէ, այլ առաւել խռովութիւն լինի՝ առեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժողովրդեանն եւ ասէ. «Քառեալ եմ եւ յարենէ Արդարոյդ այդորիկ, դո՛ւք զիտասջիք» (ԻԷ 24):

Ընդէ՞ր ոչ յափշտակէր ի նոցանէ, որպէս զՊօղոս՝ հազարապետն³, քանզի եւ նմա մարթ էր շնորհել հրէիցն, եւ աղմուկ եւ ամբոխ եւս չար լինէր վասն նորա, բայց ընդդէմ եկաց ամենեցուն. եւ սա ոչ նմանապէս: Այլ չէր ձեռնհաս Պիղատոս՝ ասեն, քանզի ասացին, եթէ թագաւոր առնէ զանձն, եւ նա կամէր հնարիւք թափել: Արդ՝ եթէ այդպէս էր, պարտ էր յանդիմանութիւնս խնդրել եւ նշանակ ամբաստանութեանն պահանջել, որպիսի ինչ, եթէ զօրս գումարեաց, եթէ ինչս ժողովեաց, եթէ զէնս կազմեաց, եւ եթէ այլ ինչ նոյնպիսի, եւ այնպիսի իրաւամբք եւ վկայիւք սպանանել զՆա, ա-

¹ Զ կուրացեալ

² Զ ոք

³ Գործք ԻԳ

պա թէ ոչ ընդէ՞ր իսկ չէր ձեռնհաս: Այլ թուի, զի վատասիրտ ոք եւ թուլամորթ էր եւ կաշառասէր, վասն այտորիկ եւ ոչ զնա ազատ արար Քրիստոս ի պատժոց՝ ասելովն թէ՝ «Որ մատնեացն զԻս քեզ, նմա մեծ վնաս են» (հմմտ. Յովհ. ԺԹ 11):

Պատասխանի ետ ամենայն ժողովուրդն եւ ասէ. «Արիւն Գորա ի վերայ մեր եւ ի վերայ որդւոց մերոց» (ԻԷ 25):

Յորժամ տեսին գրատաւորն, թէ զձեռն լուաց¹ եւ անպարտ զանձն արար, առ հասարակ զաղաղակ բարձին թէ՝ «Արիւն դորա ի վերայ մեր եւ ի [վերայ որդւոց մերոց]»²: Առ բազում յիմարութեանն զայս ասացին, քանզի այնպիսի ինչ է յանդգնութիւնն եւ չար ցանկութիւնն, զի ոչ տայ տեսանել զլաւագոյնն, զի գրեսջիք, թէ դուք առիք³ զանձնս ձեր, ընդէ՞ր ձգէք եւ յորդիս ձեր. այլ առ ջերմութեան նախանձուն ասացին զայս: Իսկ Մարդասէրն, թէպէտ այնքան հակառակ անձանց ետուն վճիռ, ոչ միայն յորդիսն, այլեւ ոչ ի նոսա կամեցաւ հաստատել զայն, քանզի ընկալաւ ի նոցանէ եւ յորդւոց նոցա՝ որք զոջացան եւ հաւատացին ըստ Պետրոսի վարդապետութեանն թէ՝ «Ապաշաւեցէք եւ մկրտեցէք» (հմմտ. Գործք Բ 38), որք մկրտեալ բազում բարութիւնս գտին: Իսկ անհաւատքն ետուն անձամբք⁴ եւ որդուվք զվճիռն, զոր ընկալան ի ձեռն սրոյն հռոմայեցոց եւ տակաւին մինչեւ ցայսօր եպերանս կրեն յամենայն ազգաց վասն արեան Արդարոյն:

Յայնժամ արձակեաց նոցա զԲարաբբայն եւ զՅիսուս զան հարեալ ետ ի ձեռս, զի խաչեցի (ԻԷ 26):

Ոչ ըստ իւր յօժարութեանն, այլ ըստ նոցա ժտութեանն արձակեաց զԲարաբբայն, իսկ «զՅիսուս զան հարեալ», ասէ, գրեթէ մատնեաց կամաց նոցա: Ընդէ՞ր իսկ զանեաց. կամ իբրեւ զմահապարտ, կամ կերպարանս ինչ առնել կամեցաւ ամբոխին կամ շնորհուկս, զի լցցի ասացեալն ի մարգարէէն թէ՝ «Չարթիցէ սուր ի վերայ հովուի եւ ի վերայ առն սիրելոյ իմոյ» (հմմտ. Չաք. ԺԳ 7): «Սուր» զվճիռ հրամանին ասէ Պիղատոսի, որ մատնեաց կամացն

¹ Զ էլուաց

² Զ > եւ ի...

³ Զ առէք

⁴ Զ անձամբ

հրէից՝ ի խաչ հանել զՆա, եւ «հովիւ» քաջ՝ զԻնքն, որ ետ զանձն ի վերայ ոչխարաց, զՍիրելին Հօր, որ ետ զամենայն ինչ ի ձեռս Նորա¹, ըստ որում Աբրահամ ակնարկեաց աղօթիք. «Քա՛ւ լիցի Քեզ, որ դատիս զամենայն» (հմմտ. Ծննդ. ԺԸ 25):

Յայնժամ զինուորք դատաւորին առին զՅիսուս յապարանս եւ ժողովեցին ի վերայ Նորա զամենայն զգունդն (ԻԷ 27):

Որպէս ի միոջէ միաբանութենէ յամենեսեան կաքաւեաց սատանայ, քանզի գրեթէ հրէայքն առ նախանձու եւ խեռիւ ծնգեալք, զինուորքն ընդէ՞ր եւ վասն որո՞յ իրաց. ո՞չ յայտ իսկ է, թէ սատանայ մոլէր յամենեսին: Վասն որոյ ամենայն գունդն ժողովեալ իբրեւ զուարճութիւն անձանց զքշնամանսն համարէին՝ ըստ երգոյն թէ՛ «Շուրջ եղեն շունք բազումք, եւ ժողովք չարեաց զիս պաշարեցին» (Սաղմ. ԻԱ 17), որք էին զինուորք Պիղատոսի եւ Հերովդէի, որք վասն շնորհուկս առնելոյ հրէիցն կատակէին, եւ կամ վասն իրեանց չարաբարութեանն զամենայն անօրէնութիւն գործէին:

Մերկացուցին զՆա եւ արկին զՆովաւ քղամիդ կարմիր (ԻԷ 28):

Մերկութեամբն զմերկութիւնն Ադամայ ծածկեաց: Եւ դարձեալ մերկացուցին զպատմութեանն անկար եւ զնափորտն, որպէս ասէ Յովհաննէս², զի ցուցցէ զմահն ընդ նոսին բառնալ: Իսկ քղամիդն, զոր արկին զՆովաւ, կարմիր, Յովհաննէս ասէ. «Ձգեցուցին Նմա հանդերձ ծիրանի» (Յովհ. ԺԹ 2), որ էր ներկեալ արեամբ խխնջիւնաց զգեստ թագաւորական, կամ թէ՛ զերկոսին զգեցուցին, կամ ի կրկին գունոյ էր անկեալ պատմութեան, կամ զգոյնն ալլելալլ ասացին վասն խորհրդոյ: Չի կարմրովն, զոր Մատթէոս ասէ, զայն յայտ առնէին, թէպէտ ոչ զիտէին, թէ զարիւն մարդկան էառ վասն փրկութեան աշխարհի, իսկ ծիրանեաւն՝ թէ ոչ միայն մարդ է, այլեւ թագաւոր եւ արքայ երկնի: Եւ ա՛յլ ազգ. զի եբարձ Նա զթագաւորութիւն Իսրայէլի եւ ետ զայն հեթանոսաց հաւատացելոց զարքայութիւնն վերին: Եւ դարձեալ՝ որպէս զրպարտեցին զՆա հարկօքն, թէ արգելու զմեզ հարկս տալ կայսեր, տյնպէս եւ ծիրանեաւն կամեցան սպանանել զՆա, թէ ահաւասիկ զանձն

¹ Յովհ. Ժ 11, ԺԳ 3

² Յովհ. ԺԹ 23

Իր ի թագաւորութիւն մատուցանէ, որ սկամայ մարգարէութիւն է, որպէս Կայիափայն¹ :

Եւ բողոքեալ պսակ ի փշոց՝ եղին ի գլուխ Նորա (ԻԷ 29):

Իբր զթագ կազմեալ զփուշս ըստ թագաւորութեանն, զի կատակեսցեն զՆա, բայց շրջեցաւ այն, եւ եղեւ բարութիւն զըլացութիւն նոցա, որպէս զի նովաւ խոցոտիցի թշնամին, այլեւ բարձցի պսակաւ զխոյ Նորին անէծքն Եւայի եւ փուշ մեղացն Ադամայ: Եւ դարձեալ նշանակէր պսակն այն փշեայ զվանումն հեղձուցիչ հոգւոց աշխարհի, որք լինին պատրանք աստուածեղէն բանի, զոր երարձ յաշակերտաց Իւրոց, եւ փոխանակ այնմ պսակ լուսափայլ աննիւթ եւ աստուածային ձեռօք Իւրովք եղ ի գլուխս մարտիրոսաց եւ արդարոց:

Եւ եղեզն յաջոյ ձեռին Նորա:

Արք ժանդք եւ պղծալիցք ոչ թողին մարմին, զոր ոչ թշնամանեցին, եւ ոչ մասն անդամոց, զոր ոչ պսակեցին, քանզի մերթ զգլուխն կոփէին եւ մերթ փշով պսակէին, եւ անձին կարմիր զգեցուցին, այլեւ զանեցին եւ յերեսս թքանէին եւ ապտակէին: Իսկ ի ձեռն եղեզն եղին, որպէս ասէ, փոխանակ գաւազանի թագաւորութեան: Եւ այլ ազգ. զի զոր օրինակ եղեզամբ հաստատեն դատարոք զդատաստանս, նոյնպէս եւ Տէր մեր եղեզամբն², զոր եղին ի ձեռս Նորա, զրեաց զոմանս ի կեանս եւ զոմանս ի մահ: Եւ դարձեալ առնով ի ձեռն զեղեզն՝ օրինակէ զտկարութեանս մերոյ բարձումն ըստ այնմ. «Ձեղեզն ջախջախեալ մի՛ փշրեսցէ» (Ես. ԽԲ 3, Մատթ. ԺԲ 20), որով պարգեւեաց մեզ ցուպ եւ գաւազան արքայութեան Իւրոյ՝ զթագաւորութիւն եւ զքահանայութիւն, քանզի տկար մարմնովս յաջակողմն դասեցաք: Եւ դարձեալ եղեւ ցուպ աշխարհի, զի ծերացաւ եւ ի վերայ նորա յեցաւ:

Ի ծունր իջեալ առաջի Նորա՝ կատակէին եւ ասէին. «Ո՞րք եր³, թագաւոր հրէից»:

Չամենայն քամահանս կատականաց կուտեցին ի վերայ Նորա, որով փրկեսցուք ի խաղալիկ առնելոյ զմեզ դիւաց կատակո-

¹ Յովի. ԺԸ 14

² Տ եղեզամբ

³ Տ լեր

դաց, քանզի սովորութիւն է Աստուծոյ ի հակառակացն զհակառակն հաստատել, որպէս ծառայութեամբ՝ թագաւորութիւն, յայտ ի Յովսէփայ իրացն է¹, եւ տկարութեամբ՝ զօրութիւն, [զոր] Պօղոս քարոզէ², եւ այլ տյնպիսիք: Իսկ «ողջ եր³» ասելովն՝ իբր թէ՛ թերի եւ պիտակ անուամբ միայն ունիս զթագաւորութիւնդ եւ ոչ իրօք, որով եւ մեք յանուանեալ թագաւորութենէն ի ճշմարտութիւնն ելաք՝ տիրելով ի վերայ ախտից եւ մահու: Եւ դարձեալ յիրաւի ասացին «թագաւոր⁴ հրէից», քանզի խոստովանողաց եղեւ Նա թագաւոր եւ փրկիչ՝ ըստ այնմ. «Յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի...., եւ ամենայն լեզու խոստովան լիցի, եթէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր» (Փիլպ. Բ 10-11):

Եւ քրեալ ի Նա՝ առնուին զեղէգնն եւ ծեծէին զգլուխ Նորա (ԻԷ 30):

Որ փչեաց ի նոսա Հոգի Սուրբ՝ ըստ այնմ թէ՛ «Ել փչօղն յերեսս քո» (Նաւում Բ 1), եւ թէ՛ «Հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս» (Ողբ Դ 20): Իսկ եղեգամբ ծեծեալ զգլուխն Նորա՝ թպէտ ըստ տեղոյն տկարքն յաղթել կարծեցին Չօրաւորին, սակայն զհերձուածողաց բանս նշանակէ, որք աղանդ մերձեցուցանեն ի գլուխ Նորա, այսինքն յաստուածութիւնն, որպէս Սաբել եւ Արիոս, զի ոմն զդէմսն շփոթեաց, եւ ոմն զբնութիւնն օտարացոյց, որով փշրեցան ինքեանք՝ ըստ մարգարտին թէ՛ «Եղիցին իբրեւ զծեծած վշոյ» (հմմտ. Ես. Ա 31), եւ Ինքն իսկ ասաց. «Թէ որ անկցի ընդ վիմիս ընդ այսմիկ, փշրեսցի» (Մատթ. ԻԱ 44). եթէ հրէայք եւ եթէ հերձուածողք՝ փշրեցան գաւազանաւն երկաթեալ:

Եւ յորժամ ձաղեցին զՆա, մերկացուցին ի Նմանէ զքղամիդն կարմիր⁵ եւ ագուցին Նմա զԻւր հանդերձն եւ տարան զՆա ի խաչ հանել (ԻԷ 31):

Ըստ կարգի նշանակութեանն յորժամ սկիզբն եղեւ հերձուածողացն ձաղանաց, ապա եւ այլք զմարմինն ուրացան, զոր քղամիդն յայտնէ, քանզի զԲանն միայն ասացին երեւել առաջօք. ա՛յս է՝ «Իւր հանդերձն»: Իսկ հրէայքն խաղ արարին եւ այսպանեցին եւ յորժամ նովին յագեցան, ապա մահու սկիզբն արարին. մերկա-

¹ Ծննդ. ԼԷ-ԽԱ

² Ա Կոր. Ա 25

³ Տ լեր

⁴ Զ թէ

⁵ Զ > կարմիր

ցուցին զթագաւորական հանդերձն, զի մի՛ կարծեսցի ի բազմաց զթագաւորն իւրեանց խաչել, այլ իբրեւ զոմն օտար մահապարտ դատապարտեսցեն եւ խաչեսցեն, որպէս զի փայտիւ գյանցանս փայտին առողջացուցէ:

Եւ ելեալ արտաքս՝ գտին այր մի կիւրեմացի՝ անուն Սիմոն¹, զնա կալան պահակ, զի բարձցէ զխաչն Նորա (ԻԷ 32):

Ելանելն արտաքս նշանակէ զմերժիլն նոցա ի խաչին շնորհէ եւ ընկենուլ զնա ի վերայ հեթանոսաց, զոր բարձեալ հետեւեցան Փրկչին: Բայց ընդէ՞ր ասէ Յովհաննէս թէ՛ «Բարձեալ էր Ինքնին զխաչափայտն» (Յովհ. ԺԹ՝ 17), եւ աստ թէ՛ զՍիմովն «կալան պահակ, զի բարձցէ զխաչն Նորա»: Երկոքին եղեն. զի զառաջինն Սիմոն երարձ, եւ ասպա Ինքն, քանզի եւ օրինակն այնպէս եղել. զի զշերտ փայտից ողջակիզին նախ ի վերայ իշոյն եւ ասպա յուս իւր երարձ Իսահակ², այլեւ իշխանք զգէնս իւրեանց՝ սպասաւորաց տան բառնալ մինչ ի տեղի պատերազմին եւ ասպա ինքեանք կրեալ մարմնով մարտնչին. նոյնպէս եւ Տէր մեր արար: Նաեւ իրն ո՛չ ի դիպուած եղել, այլ Աստուած կամեցաւ, զի սպասաւորեսցեն խաչին Քրիստոսի, վասն այսորիկ գտին զՍիմոն յանդէ եկեալ՝ զհայրն Աղեքսանդրի եւ Ռուփայ, զի երարձ, եւ յետոյ Ինքն առեալ, որ նշանակէ զայս ինչ. զի որք բառնան զխաչ մարմնոյ զնալ զհետ Նորա, ի կատարածի յԻնքն ընկալեալ թեթեւացուցանէ եւ հանգուցանէ ի վշտաց:

Եւ եկեալ ի տեղին անուանեալ Գողգոթա, որ է տեղի կառափելոյ (ԻԷ 33):

Անդ, ուր զկառափն մարդկան հատանէին զմահապարտաց, զի մի ի նոցանէ եւ Նա՛ կարծիցի: Այլեւ տնօրէնութեամբ անդ յաջողեցաւ, ուր էր շիրիմ առաջին մարդոյն՝ յառաջնոցն ասացեալ, որպէս զի զԱդամ կառափնատ առողջացուցէ. զի որպէս ծննդեամբն զանէծս Եւայի երարձ ի Բեթլեհեմ քաղաքի, նոյնպէս եւ զԱդամայն ի Գողգոթա տեղի: Եւ դարձեալ զբարձրութիւն խաչին նշանակէ «ի գլուխս լերանց»՝ ըստ Միքիայ մարգարէութեանն (Միք. Դ՝ 1), զոր «կառափ»-ն նշանակէ, որ բարձրացաւ քան զամենայն երկրպագութիւնս կռոց՝ տուն Աստուծոյ Յակոբայ

¹ Տ Սիմովն

² Ծննդ. ԻԲ 3-6

լինելով ըստ մարգարեին¹, յորում էարկ Իսրայել զիւղն ի վերայ վիմին ի տեսիլ սանդղոցն², ուստի բղիսեցին լերինք զքաղցրութիւն, եւ բլուրք կաթամբ ոռոգեցցին³, այսինքն մարգարէք եւ առաքեալք՝ զաստուածարուղիս վարդապետութիւնս խաչին՝ կաթն եւ մեղր ի ներքոյ լեզուի իւրեանց ունելով եւ հաստատուն կերակուր եւ կաթն աշակերտացն ջամբելով:

Ետուն Նմա ըմպել զինի ընդ լեղի խառնեալ, եւ իբրեւ ճաշակեաց, ոչ կամեր ըմպել (ԻԷ 34):

Առնէին զայս այնոցիկ, զորս ի խաչ հանէին, որպէս զի թմբեսցի եւ մի՛ զգասցի⁴ զցաւս աւելի, քայց նոքա քացախ եւ լեղի խառնեալ յաւելուած թշնամանաց առնէին: «Եւ իբրեւ ճաշակեաց,- աւտ,- ոչ կամեր ըմպել»: Միւս աւետարանիչն ասէ. «Իբրեւ ճաշակեաց, ասէ՝ ամենայն ինչ կատարեալ է» (հմմտ. Յովհ. ԺԹ 30), այսինքն մարգարէութիւնն թէ՛ «Ետուն ի կերակուր ինձ լեղի եւ ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ» (Սաղմ. ԿԸ 22): Այլեւ Նա չցուցանէ, թէ արք՝ ըստ Մարկոսի թէ՛ «ո՛չ առ» (Մարկ. ԺԵ 23), քանզի չէ ինչ հեռի դոյզն մի ճաշակելն ի չըմպելոյն, որք զմի եւ զնոյն ցուցանեն աւետարանիչքն, քանզի այնքան թանձրացուցին զքացախն լեղեան զմոտեալ, մինչ զի ոչ ըմպեաց, որպէս ասացն: Այլեւ զչարութիւն դառնութեան նոցա նշանակէ լեղին՝ ըստ այնմ թէ՛ «Թոյնք իժից ի ներքոյ շրթանց նոցա» (Սաղմ. ԾԼԹ 4), եւ՝ «Ազգ չար եւ դառնացող» (Սաղմ. ՀԷ 8), եւ «տուն դառնացողաց» կոչեաց Եզեկիէլ (Եզեկ. Բ 5, Գ 9, 26 եւն): Քանզի որոց զվտակն յանապատին քաղցրացոյց եւ զդառնութիւն Մեռային յանուշահամ որակս փոխեաց⁵, նոքա լեղի Այնմ ընծայեցին: Դարձեալ զդառնութիւն ճաշակաց պտղոյն քաղցրացոյց յուսով օրինացն ի ձեռն լեղոյն ճաշակման, որ բոլորովին քաղցրութիւն է եւ ամենեւին փափագումն:

¹ Միք. Դ 2

² Ծմնդ. ԻԸ 18

³ S ոռոգեցին

⁴ Զ զգասցի

⁵ Ելք ԺԵ 22-25

Եւ հանեալ զՆա ի խաչ՝ բաժանեցին զհանդերձսն Նորա վիճակաւ, զի լցցի բանն, որ ասացաւ ի մարգարէէն. «Բաժանեցին զհանդերձս իմ յիրեանս, եւ ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին» (ԻԷ 35),

եւ նստեալ՝ պահէին զՆա (ԻԷ 36):

Յառաջ քան զխաչն ետուն, ըստ Մատթէի եւ Մարկոսի, զինի ընդ լեղի խառնեալ, որպէս ասացի՝ վասն թմրութեան, եւ յետոյ ի խաչին, յորժամ ասաց՝ ծարաւի եմ, մատուցին քացախ սպնզով ի բերան Նորա՝ ըստ Յովհաննոս¹: «Եւ հանեալ զՆա ի խաչ՝ բաժանեցին,- ասէ,- զհանդերձսն». զայս կարի վատթարաց եւ քամահեղոց մահապարտացն առնէին, որոց ոչ գոյր որ ուրեք տէր: Այնպէս յանհոգս զհանդերձս բաժանէին, քանզի յայնժամ ծածուկ զօրութիւնն Քրիստոսի ներեալ՝ ոչինչ ազդէր, որ երբեմն առաջի ևոցա պէսպէս սքանչելիս ներգործէր, որպէս զի կամաւոր ցուցցի խաչն, միանգամայն եւ մարգարէութիւնն լցցի թէ՛ «Բաժանեցին զհանդերձս իմ յիրեանս» (Մաթմ. ԻԱ 19). քանզի նախ ինքեանք բաժանեցան ի միմեանց եւ ապա չորս մասն արարին զհանդերձս Նորա: Իսկ զպատմուճանն, զի էր «առանց կարանի ի վերուստ փորանկեալ» ըստ Յովհաննոս (Յովհ. ԺԹ 23), գոր Արգարուն ասեն առաքեալ, ոչ բաժանեցին, այլ վիճակեցին ում եւ ելցէ, ի խորհուրդ աստուածութեանն, զի ոչ որ կարէ բաժանել զաստուածութիւնն ի մարմնոյ Նորա, ապա թէ ոչ՝ չարագոյն քան զզինուորսն գտանիցի: Այլեւ մարմինն Նորա անապական ոչ մասն մասն բաժանեալ լինի հաւատացելոց, այլ իբր վիճակաւ զբոլորն բոլորք ճաշակեն, որք հաւատով մերձեանս ի Նա եւ լուսաւորին: «Եւ նստեալ՝ պահէին զՆա», զի զվարձս պահպանութեանն առին զհանդերձսն եւ զպատմուճանն, այլեւ սովորութիւն էր այս՝ զխաչեալսն պահել զհնուորացն, թէ երբ հանիցէ զոգին, զի մի՛ որ առանց հրամանի առնուցու զմարմինն Նորա:

Եւ եղին ի վերայ զլիսոյ Նորա գրեալ զվնաս Նորա, թէ՛ «Այս է Յիսուս թագաւորն հրէից» (ԻԷ 37):

Հրէայքն ոչ այսորժէին զայս, որպէս ասէին թէ՛ «Չիք մեր թագաւոր բաց ի կայսերէ» (Յովհ. ԺԹ 15), որք եւ ասէին Պիղատոսի. «Մի՛ գրեր «թագաւոր հրէից»», քանզի եպերանս կարծէին ազգին զթագաւորս իւրեանց խաչել: Իսկ Պիղատոս վճռեաց թէ՛ «Չոր ինչ

¹ Մարկ. ԺԵ 23, Յովհ. ԺԹ 29

գրեցի՝ գրեցի» (Յովհ. ԺԹ 22), քանզի երկնչէր ի կայսերէ՝ զայր մի առանց վնասու սպանանել: Վասն այսորիկ զամբաստանութիւն նոցա պատճառ առեալ՝ գրեաց տախտակ մի եւ եղ ի վերայ խաչին թէ՛ «Այս է Յիսուս թագաւորն հրէից»՝ եքրայեցերէն եւ դադմատերէն եւ յունարէն գրով՝ առ ի յամօթ եւ ի նախատիւնս հրէից անհաւատից:

Յայնժամ հանին ընդ Նմա ի խաչ երկուս աւագակս. մի՝ յաջմէ՝ Նորա, եւ մի՝ յահեկէ՝³ (ԻԷ 38):

Թէպէտ նորա ընդ աւագակս խաչեցին, այլ Նա գրուուն դրախտին երաց խաչակցին: Դարձեալ՝ էր եւ այս մարգարէութիւն թէ՛ «Ի մէջ երկուց կենդանեացն ծանիցիս դու» (հմմտ. Ամբ. Գ 2), եւ թէ՛ «Ընդ անօրէնս համարեցաւ» (Ես. ԾԳ 12), որ ոչ էր անօրէն: Քանզի ի մէջ չարագործացն խաչեցին, զի կարծեաց նոցա հաղորդ արասցեն տեսողքն եւ զիտասցեն, թէ խաբերայ ոմն է, որոց անուանքն են այսորիկ. Դեմաս, որ ընդ աջմէ՛ Նորա՝ խորհուրդ աջակողմեան⁴ դասուն, որ հաւատայն, իսկ Կեստաս, որ յահեկէն՝ օրինակ ձախակողմեանն⁵, որք ի հուրն առաքեցան, քանզի թէպէտ բազումք խաչակցին Քրիստոսի մկրտութեամբ եւ կամ վարուց ճգնութեամբ, սակայն յերկուս որոշին, որպէս որք յանդին եւ յերկանին⁶:

Եւ որ անցանէինն՝ հայեցէին զՆա, շարժէին զգլուխս իւրեանց (ԻԷ 39)

եւ ասէին. «Վահ որ քակէիր զՏաճարն եւ զերիս ատուրս շինէիր զնա. ասպրեցո՛ գՔեզ, թէ Որդի ես Աստուծոյ, է՞ջ ի խաչէդ» (ԻԷ 40):

Ասաց եւ զայս Դաւիթ. «Ամենեքեան, որք տեսանէին զիս, արհամարհէին զինեւ, խօսէին շրթամբք եւ շարժէին զգլուխս իւրեանց⁷» (Մատթ. ԻԱ 8): Քանզի թանձրամիտք ոմանք էին եւ խենարարոյք, հեզնէին ըստ մարգարէութեանն թէ՛ «Վահ որ քակէիր զՏաճարն եւ զերիս ատուրս շինէիր», զոր ոչ վասն Տաճարին, թէպէտ առնէր եւ զայն եւս, այլ վասն մարմնոյ Իւրոյ, զոր արդիւնա-

¹ Յովհ. ԺԹ 20

² Ձ ընդ յաջմէ

³ Ձ ընդ յահեկէ

⁴ Տ աջակողման

⁵ Տ ձախակողմանն, Ձ ձախու կողմանն

⁶ Մատթ. ԻԴ 40-41

⁷ Ձ > իւրեանց

ցուցանէր զասացեալն մահուամբն եւ յարութեամբն: Առ որով եւ զկամատրն վկայէին մահ թէ՛ «քակէիր եւ շինէիր»՝ ըստ Իւր ինքեան ասելոյն թէ՛ «Ես անձամբ Իմով դնեմ զանձն եւ իշխանութեամբ Իմով առնում զնա» (հմմտ. Յովհ. Ժ 18): «Ապրեցո՛ր զԲեզ, թէ Որդի ես Աստուծոյ, է՞ջ ի խաչէդ»: զայս եւ ա՛յլ երբեմն ասէին. «Բժիշկ, բժշկեա՛ զանձն քո» (Դուկ. Դ 23), եւ զայն ոչ գիտէին, թէ ոչ միայն զԻնքն ասպրեցուցանէ, այլեւ զբազումս՝ խաչին:

Նոյնպէս եւ քահանայապետքն ձաղէին հանդերձ դպրօքն¹ եւ ծերուկք եւ ասէին (ԻԷ 41).

«Չայս ասպրեցոյց, զԻնքն ոչ կարէ ասպրեցուցանել (ԻԷ 42):

Տես զնոցա չարութիւնն, զի այսու ջանային եւ զառաջին նշանսն եղծանել՝ ասելով, թէ ճշմարիտ Որդի Աստուծոյ է եւ զբազումս կեցոյց ի հիւանդութենէ եւ ի մահուանէ, զԻնքն ընդէ՞ր ոչ ասպրեցուցանէ. ասպա ուրեմն առաջօք էր այն եւ ոչ ճշմարտութեամբ: Եւ դարձեալ՝ նովին այսպանելովն՝ բարձրացուցին զՆա, զի թէպէտ այնուիկ, որ ոչն իջոյց ի խաչէն, թուեցաւ, թէ տկար է Նա, սակս այնր, զի զայս ասպրեցոյց, վկայ եղեն նորա, թէ կենդանի է Նա: Բանզի եւ Եղիսէ ի մահու անդ իւրում կեցոյց եւ յարոյց զմեռեալն², զի նկարեսցէ զխորհուրդ այնորիկ, որ մահուամբն Իւրով երաց զգերեզմանս եւ եհան զմեռեալս, զի դարովեսցեն զմեռուցիչս Նորա:

Եթէ թագաւոր է Իսրայէլի, իջցէ այժմ ի խաչէդ, եւ հաւատասցուք Դմա:

Եւ զայս եւս ստել հնարէին, թէ ոչ է թագաւոր. քանզի ասացին Պիղատոսի սպանանել, նա³ զայն իսկ գրեաց պատճառ թէ՛ սա է թագաւորն հրէից, եւ նոքա ասացին ոչ, այլ թէ՛ «Նա՛ ասաց՝ թագաւոր եմ հրէից»: Սակայն ոչ վճարեաց ինչ, քանզի վիճէր եւ ասէր թէ՛ «Չոր ինչ գրեցի՛ գրեցի», այնուհետեւ ստիպել ջանան, թէ չէ՛ թագաւոր, վասն այտորիկ ասեն. «Եթէ⁴ թագաւոր է Իսրայէլի», որպէս ասաց, եւ գրեցեր, «իջցէ այժմ ի խաչէդ, եւ հաւատասցուք Դմա»: Այս բարութք եւ պատճառք են թերահաւատութեան, զի քան զիջանելն ի խաչէն՝ մեծ այն իսկ էր, զի գրեւս հալածեաց,

¹ Զ ~ դպրօքն հանդերձ

² Դ Թագ. ԺԳ 21

³ Զ նա եւ

⁴ Զ թէ

զբորոտու սրբեաց, ի հինգ նկանակէն զհինգ հազարսն կերակրեաց, զմեռեալս նոցա յարոյց եւ զՂազար չորեքօրեայ կոչեաց, եւ ոչ հաւատացին: Նոյնպէս եւ այժմ ոչ կամէին հաւատալ, թէպէտ իջանէր ի խաչէն, զի թէ էր ծանուցեալ զբանս նոցա ուղիղ որ քննէր զսիրոս Աստուած, եւ զայն եւս առնէր, քանզի ոչ եկն զի դատէր, այլ զի փրկէր զաշխարհ¹:

Եւ թէ յուսացաւ յԱստուած, փրկեսցէ այժմ զԴա, եթէ կամի զԴա. քանզի ասաց եթէ՝ Աստուծոյ Որդի եմ» (ԻԷ 43):

Ո՛վ պիղծք եւ ամենապիղծք, միթէ մարգարտքն չէի՞ն մարգարտք, եւ ո՞չ արդարքն՝ արդարք, զի ոչ ապրեցոյց զնոսա ի վշտաց. նաեւ աւանիկ էին յուսացեալ յԱստուած եւ զայնքան՝ չարչարանս կրէին: Եւ արդ՝ զի՞նչ զոյգ ձերում անօրէնութեանդ կացցէ. զի թէ զնոցա փառսն չկարաց եղծանել ժանտութիւնդ ձեր, եւ ոչ վիշտքն, որ ի վերայ եկին, ո՞րչափ եւս առաւել ի Սա չպարտիք զայթազողի, որ բանիւ եւ արդեամբք միշտ զայնպիսի կարծիս ձեր կամէր ածել յուղղութիւն:

Զնոյն եւ աւագակքն, որ խաչեալ էին ընդ Նմա, նախատէին զՆա (ԻԷ 44):

Զիա՞րդ Ղուկաս ասէ, թէ մինն միւսոյն սաստէր³. Երկոքին ճշմարիտք են, զի նախ երկոքեանն նախատէին շնորհուկս առնելով հրէիցն, թերեւս զինքեանս իջուսցեն: Եւ այլ ազգ. զի մի՛ կարծեսցես ի միոջէ ինչ միաբանութենէ իրացն լինել, կամ թէ՛ զաւագակն չհամարել աւագակ, ի թշնամանացն ցուցանէ. զի ի վերայ խաչին կային եւ թշնամանէին, եւ մինն յանկարծակի դարձաւ, որ յանհնարին չարիս նստեալ էր, եւ ի սպանութեան եւ յորմափորութեան զամենայն ժամանակս կենաց իւրոց ծախեալ, բայց յորժամ զայն ամենայն տեսանէր եւ լսէր, զհարկաւոր մահն պատուասիրութիւն արար եւ մահու զկեանս զնեաց՝ խոստովանելով զՆա թէ՛ «Յիշեա՛ զիս, Տէ՛ր, յորժամ զաս արքայութեամբդ Քո» (Ղուկ. ԻԳ 42): Թէպէտ ամբոյն ամենայն աշխարէր զՆա, սակայն ճշմարտութիւնն հակառակօքն զօրանայր եւ բանիւ զդրախտն բանայր՝ ասելով. «Այսօր ընդ Իս իցես ի դրախտին» (Ղուկ. ԻԳ 43): Կամ թէ՛ աստուածութեամբն ամենայն ուրեք էր՝ ի խաչին եւ ի դրախտ-

¹ Յովհ. Գ 17

² Զ զայն

³ Ղուկ. ԻԳ 40

տին. կամ թէ՛ ընդ Իս այսօր ի խաչիս, լիցիս եւ փառակից ի դրախտին: Կամ թէ՛ որպէս յայլում թարգմանութեան գտաք, թէ՛ «Այսօր ընդ Իս իցես յարքայութեանն», քանզի զայս խնդրեաց թէ՛ «Յիշեա՛ զիս, Տէ՛ր, յորժամ գաս արքայութեամբդ Քո», եւ արքայութիւնն ոչ այլ ինչ է, քան թէ տեսութիւն փառացն Աստուծոյ, որպէս Գիրք վկայեն: Արդ՝ յորժամ էր ընդ նմա հոգի նորա՝ եթէ յերկինս եւ եթէ ի դժոխս, ի տեսս Աստուծոյ վայելէր, որ ճշմարիտ արքայութիւն է եւ դրախտ:

Եւ ի վեց ժամէ աւուրն խաւար եղև ի վերայ ամենայն երկրի մինչև ցինն ժամն (ԻԷ 45):

Այս է նշանն, զոր վերագոյն խնդրէին, եւ խոստացաւ տալ նոցա. «Ազգ չար,- ասէ,- եւ շնացօղ՝ նշան խնդրէ, եւ նշան մի՛ տացի նմա, բայց նշանն Յոնանու» (Մատթ. ԺԲ 39): Չխաչէն եւ զմահուանէն եւ զյարութենէն զուշակեաց, եւ այժմ ի յերկնից եղև, զոր հայցէին, եւ ընդ ամենայն տիեզերս, որ ոչ երբէք եղև այնպիսի, բայց միայն յԵգիպտոս, յորժամ զաւետիսն կամէր կատարել, քանզի այն օրինակ էր¹ :

Եւ միտ դիր, թէ երբ եղև խաւարն. ի հասարակ աւուր՝ ասէ, զի ամենայն բնակիչք երկրի իմանայցեն եւ երկիցեն եւ հաւատասցեն, թէ բարկացաւ ընդ յանդգնութիւն յանդգնեցելոցն, վասն այտորիկ եղև խաւար: Եւ զի չէր ինչ ըստ սովորութեան նուագութիւն արեգականն, այլ բարկութիւն եւ ցասումն աստուածային, յայտ ի ժամանակէն էր, զի զերիս ժամս յամեաց, իսկ նուագութիւնն ի միում վայրկենի լինի եւ անցանէ: Քանզի լուսինն իսկ խաւարեցուցանէ, որպէս ասեն բնախօսքն, եւ արագութեամբն լուսինն անցանէ զարեգակամբն եւ մաքրէ զխաւարն: Իսկ անդանօր² չորեքտասանօրեայ էր լուսինն եւ ի ներքոյ երկրի, զի յորժամ մտանէր արեգակն, ելանէր յարեւելս լուսինն, բայց արշաւեաց եւ եհաս արեգականն եւ խաւարեցոյց զարեգակն, եւ զկնի չոգաւ երեք ժամս, եւ դարձեալ ընդ կրունկ ի մուտս արեգականն ծագեաց յարեւելս, որպէս զի ի ձեռն այսպիսեաց հրաշից՝ հրէայքն, միանգամայն եւ հեթանոսք, տեսեալ հաւանեսցին եւ ի չարեաց իրեանց ի բաց կացցեն: Բայց զի յայնժամ բազում ծուլութեամբ եւ չարեօք ըմբռ-

¹ Ելք Ժ 21-22, ԺԴ 20

² Տ անտանօր

նեալ էին¹ եւ բազում ամբարշտութեամբ եւ կանխակալ սովորութեամբ կապեալ, կարծէին, թէ ըստ նուագութեան ինչ է եւ կամ այլ ինչ բնական դէպք դիպեալ, եւ տակաւին ի նոյն անհաւանութիւն եւ ի թշնամանս մնացին: Որ քան զ'ի խաչէն իջանելն այն մեծագոյն սքանչելիք էր՝ ի խաչին կալ եւ այնպիսի գործել. զի թէ ի Նմանէ լինել զիրն հաւատային, պարտ էր հաւատալ, եւ թէ ի Հօրէ, եւ այնպէս արժան էր գոջանալ, բայց նոքա ի չարիսն անգեղջ մնացին, որպէս զի անպատասխանիք դատեսցին:

Եւ դարձեալ ոչ միայն խաւար եղեւ, այլեւ ի հասարակ ժամու, յորում ժամանակի անծմակ լոյս ընդ բնաւ ոլորտս ծագէ, նոցին լոյսն խաւարեցաւ՝ ըստ մարգարէիցն պիտառութեանց՝ ըստ այնմ թէ՛ «Մինչդեռ մնային լուսոյ, եղեւ նոցա խաւար» (Ես. ԾԹ 9), եւ թէ՛ «Լոյս քո քեզ խաւարեցաւ» (հմմտ. Յոք ԻԲ 11), եւ այլ ոմն. «Տաց ձեզ նշանս յերկինս ի վեր եւ յերկիր ի խոնարհ... արեգակն խաւարեսցի, եւ լուսին յարիւն դարձցի» (Յովէլ Բ 30-31), եւ այլ մարգարէ. «Յաւուր յայնմիկ ոչ եղիցի լոյս մինչեւ ցերեկոյ» (հմմտ. Չաք. ԺԴ 6-7), եւ թէ՛ «Ոչ տիւ իցէ եւ ոչ զիշեր» (Չաք. ԺԴ 7), եւ դարձեալ թէ՛ «Չի՞ կայ ձեզ եւ Աւուրն Տեսուն, զի օրն այն խաւար է եւ ոչ լոյս» (Ամովս Ե 18): Եւ այլ սոյնպիսիք, որք ամենեւին զիրէից կորութիւնն ցուցանեն եւ զխաւարին արժանաւորութիւն, ոչ միայն ըստ մարմնոյ, զի զկնի խաչին քաղաքն կորեաւ, եւ կարգն նոցին դադարեաց՝ ըստ այնմ թէ՛ «Յորժամ բարձրացուցանէք զՈրդի մարդոյ, յայնժամ ծանիջիք, թէ Ես եմ» (Յովհ. Ը 28), այսինքն ի գորութենէ հրաշից Իմոց, այլեւ ըստ հոգւոյ, իբր այն թէ՛ «Հանցեն զձեզ ի խաւարն արտաքին» (հմմտ. Մատթ. ԻԲ 13):

Տեսցուք այժմ եւ զգանազանութիւն անետարանչացն. քանզի զխաւարն ի վեց ժամէ եղեալ՝ Մատթէոս եւ Մարկոս եւ Դուկաս համաձայնք գտանին², իսկ ի խաչ հանելն զանազանին: Քանզի Մարկոս ասէ թէ՛ «Էր ժամ երրորդ, եւ հանին զՆա ի խաչ» (Մարկ. ԺԵ 25), իսկ Յովհաննէս թէ՛ «Էր ուրբաթ Չատկին, եւ էր ժամ վեցերորդ» (Յովհ. ԺԹ 14), եւ տակաւին վիճէր Պիղատոս ընդ հրեայսն եւ ասպա ետ ի ձեռս, զի խաչեսցի: Արդ՝ ոմանք ոչ զուգեն զՄարկոս ընդ Յովհաննոս, այլ ընդ Մատթէոս եւ ընդ Դուկաս եւ ասեն, թէ Մարկոս զժամն ասաց երրորդ, յորում ի խաչ էլ, եւ զխա-

¹ ՏԶ էր

² Մարկ. ժԵ 33, Դուկ. ԻԳ 44

ւարն՝ ի վեցերորդ ժամն, որպէս եւ այլքն, բայց զի Մարկոս եւ Յովհաննէս ընդդէմ երեսին, քննելի է: Արդ՝ Մարկոսի երեք ժամ ասելն կամ զվճռին ասէ, եւ Յովհաննէս՝ վեցերորդ՝ զժամանակն, յորում խաչեցաւ եւ խաւարն եղեւ, եւ կամ երեք ժամ՝ զաւուրն ասէ Մարկոս, իսկ վեցերորդ՝ Յովհաննէս զերիս ժամս զիշերոյն խառնէ, յորմէ ի ձաղել եւ յայպանել սկսան, եւ այնպէս միաբանք երեսին:

«Ի վեց ժամէ աւուրն խաւար եղեւ ի վերայ ամենայն երկրի մինչեւ ցինն ժամն»՝ առ ի նշանակել, թէ արարչական լոյսն խաւարեցոյց զեղական լոյսն, զի մի՛ աստուած կարծիցի յարեգակնապաշտիցն, այլեւ զստուերն մերկութեանն քօղ արկեալ՝ զի մի՛ անարժան ակն հրէից տեսցէ զԱրարիչն մերկացեալ: Որպէս երբեմն օրինակն տպաւորեցաւ ի սկիզբն երկրորդ մարդկութեանս ի հայրապետն Նոյ, որ արբեալ ի զինոյն մերկացաւ ի տան իւրում, զոր տեսեալ Քամ հայր Քանանու պատմեաց արտաքոյ երկուց եղբարցն՝ Սեմայ եւ Յաբեթի, որք եղին հանդերձ ի վերայ ուսոց իւրեանց եւ յետս յետս գնալով՝ ծածկեցին զմերկութիւն հօր իւրեանց¹: Այսպէս եւ գլուխն երկրորդ արարչութեանս՝ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, ի սիրոյ մարդկան արբեալ, որ եւ «բաժակ» զխաչն կոչեաց² եւ մերկացաւ ի վերայ նորին ի տան աշխարհի եւ կամ մերձ Տաճարին ի մէջ հրէիցն, զորս տուն Նորա անուանեն Գիրք³: Չոր տեսեալ զաւակքն Քանանու՝ ըստ մարգարտիւն⁴՝ ծիծաղէին քամահելով, իսկ արեգակն եւ լուսին ծածկեցին զմերկութիւն Արարիչն իւրեանց: Եւ ամենայն որք, որ պարկեշտացուցանէ եւ նազելի առնէ զխորհուրդ խաչին եւ ոչ ամօթ համարի զգօրութիւնն Աստուծոյ, ի ծածկողաց մասին է եւ նա, որք են հրէայք եւ հեթանոսք հաւատացեալք՝ ըստ նմանութեան արեգական եւ լուսնի պայծառացեալք՝ Հոգուով, օրհնին եւ ընդարձակին ընդ Սեմայ եւ ընդ Յաբեթայ⁵:

Իսկ ի յիններորդ ժամու լուսաւորիլն ցուցանէ զբարձումն ի լրման ժամանակի մեղաց եւ մահու ստուերի: Այլեւ Ադամայ յերրորդ ժամու ստեղծեալ ի վեցերորդ աւուրն հանդերձ կնանն եւ ի նոյն ժամու մեղուցեալ, զոր խաւարն նշանակէ, եւ յիններորդ ժա-

¹ Ծննդ. Թ 23

² Սատթ. Ի 22-23, ԻԶ 39, 42

³ Գ Թագ. Ե 5, Ը 10, Դ Թագ. ԻԲ 8, Սաղմ. ԳԻ 1, Սատթ. ԺԲ 4 ևն

⁴ Ծննդ. ԺԵ 8 (?)

⁵ Ծննդ. Ժ

մու արտաքս ի դրախտէն ելեալ: Ի սոյն ատուր ուրբաթու երկրորդն Ադամ ի խաչին բեւեռեալ եւ զմեղս հինն Ադամայ սպանեալ եւ ի վեցերորդ ժամու արեգակն խաւարեալ, ըստ որում Տէր մեր ի վեցերորդ դարուն զմարմին մեղաց զգեցեալ եւ յիններորդ ժամու զխաւար մեղաց լուծեալ եւ զԱդամ վերստին ի դրախտն մուծեալ, բարձր եւ աստուածատեսակագոյն քան զառաջինն պարգեւեալ, զի անդ պատկերիւ միայն պատուեալ եւ աստ բոլորովին աստուածացուցեալ: Եւ ա՛յլ ազգ. զի յերրորդ ժամու արեգակն խաւարեցաւ եւ յետ այնորիկ լուսաւորեցաւ, զուշակումն է այս երեքօրեայ թաղման Արեգականն արդարութեան՝ եւ յետ այնորիկ յարութեան: Կամ թէ՛ արարածք զոլով չարչարակիցք եղեն Արարչին:

Եւ զինն ժաման զոչեաց Յիսուս ի ձայն մեծ եւ ասէ. «Էլի՛, Էլի՛, լա՞մա սաբաթթանի», այսինքն է՝ Աստուած Իմ, Աստուած Իմ, ընդէ՞ր թողեր զԻս (ԻԷ 46):

Ո՛չ ի ծածուկ ինչ եւ կամ թաքուն ասաց, այլ յայտնի եւ բարձր ձայնի, եւ ո՛չ յԻնքենէ բարբառեցաւ, այլ զմարգարէականն ի մէջ էառ՝, որպէս զի մինչեւ ցվերջին շունչն ծանիցեն, թէ չէ հակառակ Հօր եւ կամ հնոյ Օրինացն, որպէս կարծէին, եւ երբայեցի բարբառովն բարբառեցաւ, զի եւ նոցա իսկ յայտնի եւ երեւելի լինիցի, եւ ամենայն ուրեք միաբան ընդ Ծնողին ցուցանիցի: Իսկ ասելն «Աստուած Իմ, Աստուած Իմ, ընդէ՞ր թողեր զԻս»՝ ոչ թէ Ինքն թողաւ ի Հօրէ կամ յԻրմէ աստուածութենէն, որպէս թուեցաւ ոմանց, իբրեւ զարհուրեալ ի չարչարանաց եւ վասն այտորիկ ամփոփեալ, այլ զոլով անբաժանելի՛ եւ զբնութիւնս մեր յԻնքեան տպաւորէ, քանզի մեք էաք թողեալք վասն բանից յանցանացն Ադամայ եւ փրկեցաք ի չարչարանաց՝ չարչարանօքն Նորա: Եւ ա՛յլ ազգ. ոչ եթէ թողաւ, որպէս ասացի, Այն, որ երբէք ոչ մեկուսանայ ըստ անշփոթ միութեանն, այլ կամեցաւ զձանրութիւն չարչարանացն յայտնել թէ՛ ընդէ՞ր ետուր զայնպիսի՞ կիրս կրել մարմնոյս Քո, մինչ զի մարդիկ կարծեսցեն թողեալ զԻս: Քանզի ոչ եթէ թողեալ էր, այլ զկարծիս մարդկան յայտնել կամեցաւ. եւ զայս՝ մարդկութեանն իմա առ աստուածութիւնն Իւր բարբառեալ, որպէս եւ էր իսկ մարդ

¹ Մաղ. Դ 2

² Սաղմ. ԻԱ 1

³ Զ այնպիսի

ճշմարտապէս, եւ ոչ միատրութեանն առ Հայր ի դէմս մեր բարբառեալ, որպէս յառաջն ասացի:

Ոմանք յայնցանէ, որ անդր կային, իբրեւ լուան, ասէին¹. «Ձեղիա² կարդայ Դա»³ (ԻԷ 47):

Տէն գժանդիցն⁴ անկարգութիւն, զի հեզնելով ասէին թէ՛ գեղիա աղաչէ, եւ ոչ առ Աստուած Հայր բողոքէ: Այլեւ որպէս յառաջն ասաց թէ՛ էլի, էլի⁵, կարծեցին, թէ առ Աստուած աղօթէ, որպէս ցուցանէ յաջորդը թէ՛ թող տեսցուք, թէ զա՞յ Հայր յօգնակալութիւն եւ փրկէ զԴա:

Եւ վաղվաղակի ընթացաւ մի ոմն ի նոցանէ, առ սպունգ լի քացախով, հարեալ յեղեգան՝ ետ ըմպել Նմա (ԻԷ 48):

Կամ թէ՛ ասաց «Ծարաւի եմ»՝ ըստ Յովհաննու (Յովհ. ԺԹ 29), ետուն Նմա քացախ փոխանակ զինոյն անուշահոտութեան, զոր քաղցրացոյց նոցա ի Կանա գալիլեացոց զջրոյն ի զինի փոխարկումն, կամ զի աղաղակէր⁶, քացախսան լռեցուցանել կամեցան: Քանզի զիտէին, թէ Հայր լսէ եւ հրաշս գործէ, որպէս ամենայն ուրեք, ետուն զքացախն, զի արագ մեռցի, զի բնաւորեալ է՝ խոցեալ մարմին, յորժամ քացախ ըմպէ, մեռանի⁷: Արդ՝ զի մի՛ յայնմանէ կարծիցի, ասեն այլ աւետարանիչքն թէ՛ «ոչ առ» (Մարկ. ԺԵ 24), եւ թէպէտ մեռաւ, իշխանաբար՛ մեռաւ, որպէս ասէ յաջորդը թէ՛ «աղաղակեաց»: Կամ թէ՛ ըստ բնութեան էր եւ այն, զորս ոչ անգոսնեաց, որպէս զամենայնն, զոր վասն բարձրութեան խաչին եղեգամբ եւ սպնգով քամեաց ի բերանս նոցա. բայց նախ փոխանակ քացախին, զոր ըմպեաց եղեգամբ, զքացախուտ չարութիւնս հեթանոսաց քաղցրացուցեալ Հոգւովն իբր սպնգաւ՝ զրեաց յերկինս:

Եւ կէսքն ասէին. «Թող տեսցուք, եթէ զա՞յ Եղիա փրկել զԴա» (ԻԷ 49):

¹ Զ ասեն

² Զ գեղիա

³ Զ > դա

⁴ Զ գժանտացն

⁵ Զ էլի, էլի] էլի, էլի

⁶ Զ աղաղակէին

⁷ Զ մեռանիլ

Բանիւ եւ գործով ի թշնամանաց ոչ պարասպէին, զի ոմն զքացախն ջամբէր, եւ այլք հեզնելով ձաղէին որդիքն կորստեան եւ թշնամիքն արդարութեան:

Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ եւ արձակեաց զոգին (ԻԷ 50):

Մեռաւ, զի զկեանս շնորհէ եւ մահուամբն զմահու իշխանութիւնն խափանէ: Եւ դարձեալ քանզի այսպն արարին նորա զձայնն առաջին, զի ոչ իջոյց զԵղիա՝ փրկել զՆա, աղաղակեաց ի՛ ձայն երկրորդ, զի ցուցցէ, թէ քան զմեռեալսն մեռելագոյնք են, զի նորա լուսն եւ պատասխանի ետուն, իսկ սոքա յիմարեայք պապանձեցան: Եւ դարձեալ յայտ առնէ աղաղակն, թէ ընդ Նորա իշխանութեամբ էին իրքն եւ ոչ ի հարկէ՝ ըստ այնմ, զոր ասաց թէ՝ «Իշխանութիւն ունիմ դնել զանձն Իմ եւ իշխանութիւն ունիմ միսանգամ առնուլ զնա» (Յովհ. Ժ 18): Եւ թէ՝ «Ես անձամբ Իմով դնեմ զանձն» (Յովհ. Ժ 18), ընդ որս եւ Պիղատոս զարմացաւ, թէ այնչափ վաղ մեռաւ, եւ հարիւրապետն հաւատաց, զի իշխանութեամբ մեռաւ՝ ըստ Յովհաննու թէ՝ «Խոնարհեցուցեալ զգլուխն աւանդեաց զոգին» (Յովհ. ԺԹ 30): «Իսկ հրէայքն վասն շաքաթուն կամեցան խորտակել զբարձս նոցա, զի մի՛ ի խաչին ազանիցին մարմինքն, եւ յորժամ զերկուցն խորտակեցին, եւ տեսին զՆա, զի այն ինչ մեռեալ էր, ոչ խորտակեցին զբարձս Նորա², զի լցցի զիրն, եթէ³ ոսկր նորա մի՛ բեկցի⁴: Այլ մի ոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս Նորա, եւ վաղվաղակի՛ ել արիւն եւ ջուր» (հմմտ. Յովհ. ԺԹ 31-36)՝ անօրէնութեան նոցա նշանակ, որ այնքան տարածեցին զմոլորութիւնն, մինչ զի եւ զմեռեալ մարմինն թշնամանեցին: Այլեւ խոցմամբ կողին եւ չարչարանացն զվէրս կողին եւ զգաւս նախկին բժշկեալ առողջացուցէ, նաեւ ի լրումն մարգարէութեանն, որով յանդիմանին յերկրորդն զայրուստ՝ հայելով ի խոցուածս Նորա⁶:

Բայց դու միտ դիր, թէ զհարդ զանօրէնութիւնս նոցա չարութեանն արկանէ ի կիր մերոյ փրկութեանս, զի յետ խոցելոյն աղ-

¹ Զ > ի

² Զ > զբարձս նորա

³ Զ թէ

⁴ Սաղմ. ԼԳ 21

⁵ Զ > վաղվաղակի

⁶ Չաք. ԺԲ 10

բիրք փրկութեան բոխեցին մեզ անտի, որով պատուեաց զբարեկամս եւ թշնամանեաց զթշնամանիչս Իւր: Քանզի որպէս ի կողիցն Ադամայ շինեցաւ կին ի հոգւոյ եւ ի մարմնոյ, այսպէս եւ ի կողիցն երկրորդն Ադամայ շինեցաւ Եկեղեցի, որ ջրովն մարրի եւ զարիւնն ըմպէ՝ ըստ այնմ. «Աղբիւր ի տանէ Տեառն ելցէ եւ արքուսցէ զձորն վիճակաց» (Յովէլ Գ 19), եւ թէ՛ «Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ» (Մաղմ. ԽԵ 5), որ է Եկեղեցի սուրբ: Դարձեալ մեռելութեան եւ կենդանութեան Նորա նշանակ. զի ջուրն զմահն նշանակեաց, եւ արիւնն զկենդանութիւնն ըստ այնմ. «Ես ննջեմ, եւ սիրտ իմ արթուն է» (Երգ Ե 2):¹ Եւ դարձեալ ջուր բոխեաց ի կողէն եւ շիջոյց զհուր մեղաց ցանկութեան, որ վառեցաւ յԵայէ, եւ արիւնն ի² խորհուրդ կենդանութեան, որ եղև ուղորմութեամբն Իւրով արդարութիւն կենդանութեան ամենայն հաւատացելոց: Եւ դարձեալ պատառմամբ կողին խրամատեցաւ ցանկ³ դրախտին, զոր սերովքէքն փակեցին⁴, եւ արեամբ Փրկչին ընկալաք ներկուած զթագաւորութիւնն երկնային, եւ ջրովն ոռոգեցաք՝ Հոգւովն, զոր նախ կորուսաք ի լինելն մարմին, քանզի որչափ ի չարչարելն յաճախեին, զանձքն, որ էին ծածկեալ ի Նմա, յայտնէին:

Եւ ահա⁵ վարագոյր Տաճարին ցելաւ յերկուս ի վերուստ մինչեւ ի վայր (ԻԷ 51):

Նախ զՅովհաննու ասացեալն եւ զմեր արդի տեսեալն Մատթեոս մեկնէ. «Պատառեցաւ,- ասէ,- վարագոյրն». զի պատառեցին զկողս վարագորի⁶ մարմնոյ Նորա, զի լցցի բանն Յիսուսի թէ՛ «Քակեցէք զՏաճարս, եւ զերիս ատուրս շինեցից զդա» (Յովհ. Բ 19): Արդ՝ սկսան խոցմամբ գեղարդեանն քակել զՆա, պատառեցաւ եւ վարագոյր Տաճարին յօրինակ նորին յերկուս վտակս՝ ա-

¹ Տ Տողատակի ծանոթագրութիւն: Յերից գաղափարաց երկուքն ունէին եւ զայս ինչ: (Ապա ուրեմն խորհուրդ պատարագին կատարեն զորս Պօղոս հրամայէ յուտել զհացն՝ եւ յըմպել զբաժակն, եւ զվկայութիւնն Յօհաննու զճճարիտն՝ զոր տեսն թէ՛ ել արիւն եւ ջուր): Բայց այս բան վասն պակասեալ գոլոյ մէջ ընդ մէջ, եւ կցկտուր եւ արտաքոյ հեղինակի շարադրութեան, ի բաց թողաք:
Մեր գործածած ձեռագիրը նույնպէս այս խոսքերը չունի:

² Տ > ի

³ Զ ցանգ

⁴ Ծննդ. Գ 24

⁵ Զ > ահա

⁶ Զ վարագորին

ռատ բղխամամբ ի վերուստ մինչ ի վայր պատուանդան խաչին, զոր ոմանք մածեալ ասեն եւ այլք՝ յետս դարձեալ: Երկրորդ՝ զի ցուցցէ, թէ պատառեաց ի նոցանէ զարքայութիւնն եւ ետ զնա ժողովրդեանն, որ տայ զպտուղ¹: Երրորդ՝ նմանութիւն նկարեաց վարագորին պատառմամբ, թէ Տաճարն կործանելոց է, զի շունչ նորա զնաց: Չորրորդ՝ զի քահանայապետն պատառեաց զպատմութեանն իւր անօրէնութեամբ եւ մերկացաւ ի քահանայութենէ անտի, պատառեաց եւ Հոգին զվարագոյրն, զի քարոզեսցէ զժպրհութիւն նոցա ընդ ամենայն արարածս, այլեւ հանէ ընդ Իւր զամենայն շնորհս ի նոցանէ: Հինգերորդ՝ զի տեսին խորհուրդք Հնոյն զԳառն խորհրդոյ Նորոյ, պատառեցին զօրինակն եւ ելին ընդ առաջ ճշմարտութեան նորա:

Վեցերորդ՝ զոր օրինակ կին նորահարսն հարեալ ի սէր ամուսնոյ իւրոյ, յորժամ լսէ զգոյժ մահու նորա, պատառէ զքօղ զարդու երեսաց իւրոց եւ արտաքս ելանէ, այսպէս եւ Տաճարն, յորժամ ետես զլրբութիւն ժողովրդեան իւրոյ, զի զերկնաւոր Փեսայն իւր դատապարտեալ ի վերայ փայտի սպանին, պատառեաց զքօղ իւր եւ ել արտաքս: Եօթներորդ՝ զի որպէս վարագոյր՝ զմարմին, այսպէս ամօթ զերեսս պարուրեալ ծածկէ, զոր որդիքն կրճատելոց պատառեցին յանձանց զգեղեցիկ պատկառանացն ծածկոյթ² եւ լրբենի դիմօթ ի Տէր մեր յանդգնեցան եւ Աստուծոյ թշնամիք եւ ամենայն մարդկան ատելիք եղեն, եւ յԱստուծոյ խնամոցն զրկեցան վասն անամօթութեան, վասն այտորիկ պատառեցաւ եւ վարագոյրն: Ութերորդ՝ վարագոյրն ծածկոյթ է մարմնոյ, որ նշանակէ զքօղն, որ կայր ի վերայ Հին կտակարանացն եւ ի վերայ սրտից նորին սպասատրացն, որ այժմ պատառեցաւ ի ձեռն խաչին Կուսորդոյն Յիսուսի, քանզի բացան զիրք մարգարէիցն ի վերուստ մինչեւ ի վայր, այսինքն յԱդամայ մինչ³ ի գալուստն Քրիստոսի, յորում դառնալոց են եւ նոքա առ Տէր ըստ հեթանոսացն լրման եւ Իսրայէլի փրկութեան⁴:

Իններորդ՝ զրէ Սողոմոն թէ «Ժամանակ է պատառելոյ» (Ժող. Գ 7), եւ այլ ոմն թէ «Պատառեցան ջուրք ծովուն» (հմմտ. Ելք ԺԳ 21), որ եւ ի պատշաճ եւ ի դիպօղ ժամու յերկուս ցելեալ

¹ Մատթ. ԻԱ 41

² Զ ծաղիկ

³ Զ մինչեւ

⁴ Դոմ. ԺԱ 25-26

վարագոյր Տաճարին նշանակէր զպատառումն սրտից հեթանոսաց քարացելոց՝ ըստ այնմ. «Պատառեցէք զսիրտս ձեր եւ մի՛ գհանդերձս» (Յովէլ Բ 13), որք թողին զմոլութիւն կռոցն ի վերուստ մինչ ի խոնարհ, այսինքն ի բարձրագունիցն պատուոյ լուսաւորացոյ եւ տարերաց մինչեւ ի ստորին գոյիցն խաբէութիւն, եւ ծանեան զԱրարիչն եւ երկիրպագին Նմին փառաւորելով զանուն Նորին յաւիտեան: Տասներորդ՝ ի վերուստ ի վայր պատառելն եցոյց, թէ Խաչեալն երկնային է եւ ի վերուստ ի ստորինս իջեալ վասն պատառելոյ զգիր դատապարտութեան Ադամայ նախաստեղծին:

Եւ երկիր շարժեցաւ, եւ վեճ պատառեցան:

Նախ՝ զի ուսանիցիս, թէ կարօղ էր զնոսա շիջուցանել եւ ընդ մէջն հերձանել՝ որ զվէմս պատառեաց եւ զերկիր շարժեաց եւ զտիեզերս խաւարեցոյց, եթէ կամեցեալ էր, բայց ոչ ախորժեաց, այլ յարարածս առաքեաց զբարկութիւնն, որպէս զնզովս Ադամայ, զի զնոսա հեզութեամբ կամեցաւ ասպրեցուցանել: Եւ երկրորդ՝ զի դատապարտեաց զՆա բերան մարդկան, աղաղակեաց եւ արդարացոյց զՆա բերան արարածոց՝ ըստ Տեառն բանին. «Թէ դոքա լռեսցեն, քարինքդ աղաղակեսցեն» (Դուկ. ԺԹ 40): Եւ երրորդ՝ շարժմամբ երկրին զծանրացեալ սիրտս մարդկան շարժեաց ի բարին, եւ պատառմամբ վիմացն ի Վիմէն զքարացեալ բնութիւնս հեթանոսաց կակղացուցեալ դարձոյց առ Աստուած՝ ըստ երգոյն. «Արար զասպառաժն յաղբերակունս» (հմմտ. Սաղմ. ԾԺԳ 8):

Եւ գերեզմանք բացան, եւ բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան (ԻԷ 52):

Ի նշանակ հաստատուն յարութեան Իւրոյ եւ ի հաւատ հանդերձելոյ հասարակաց նորոգութեանն ըստ այնմ. «Բացից զգերեզմանս ձեր եւ հանից զձեզ ի գերեզմանաց ձերոց, ժողովորդ Իմ» (Եզեկ. ԼԷ 12): Բայց ոչ ամենեքեան, այլ միայն մարմինք սրբոցն, որք նախ քան զգալուստ Նորա խորհրդով նորին մաքրեալ արդարացան, որոց բաղձանքն յԱւետարանն պատմի թէ «Բազում արդարք ցանկացան տեսանել» (Մատթ. ԺԳ 17): Եւ տեսին զՆա ի դժոխս եւ հաւատացին, եւ ընդ Նմա վերածեցան հանդերձ մարմնով ի կեանս եւ տակաւին կան յանմահութիւն նորոգեալք: Թէպէտ ոմանք ասեն դարձեալ մեռանիլ նոցա, որք յոյժ

ստեն, զի զորս նախ քան զխաչն յարոյց Քրիստոս, որպէս զորստր քահանայապետին եւ զորդի այրոյն եւ զՂազարոս չորեքօրեայ, նոքա դարձեալ մեռան, յայտ է ահա, զի ըստ մարմնական կենաց խնդրեցին զկենդանանայն նոցա մերձաւորք իրեանց, որպէս եւ աղջկանն ետ ուտել, որ նշանակ է ըստ մարմնոյ կենդանութեան, իսկ զորս զկնի Իւր յարոյց, ի հոգեւոր կենացն անմահութիւն փոխարկեաց, որք այնուհետեւ մեռանել ոչ եւս կարեն: Յորոց սրբոց մի էր եւ Դաւիթ արքայ՝ յարուցեալ ընդ Յիսուսի, որ ըստ մարմնոյ որդի եղել նմին, որպէս վկայէ Պետրոս առաքեալ թէ՛ «Գերեզմանն կայ ի միջի ձերում մինչեւ ցայսօր» (հմմտ. Գործք Բ 29), եւ ո՛չ ասաց թէ՛ մարմինն, քանզի մարմինն յարեաւ, որպէս ասացի, զգեցնով զանապականութիւն հոգւոյն:

Եւ ելեալ ի գերեզմանաց՝ յետ յարութեանն Նորա մտին ի քաղաքն սուրբ եւ երեւեցան բազմաց (ԻԷ 53):

Վասն է՞ր արդեօք յետ յարութեան Նորա մտին յԵրուսաղէմ եւ ո՛չ առժամայն. քանզի պարտ էր նախ Անդրանկին ի մեռելոց՝ բազմաց երեւիլ¹ եւ ապա՝ այլոցն, որ եղեն կերպարանակից մահու եւ յարութեան Նորա²: Ոմանք «քաղաք սուրբ» զվերինն Երուսաղէմ ասեն՝ ըստ Յովհաննու տեսլեանն³, բայց ինձ թուի՝ զստորինս ասէ, յոր այժմ մտին եւ ապա յետոյ վերացան յերկինս: Քանզի մտեալ ի քաղաքն սուրբ՝ երեւեցան բազմաց՝ արժանաւորաց եւ անարժանից, եւ «քաղաք սուրբ» ասէ, զի մի էր եւ Երուսաղէմ ի քառասուն եւ ութ քաղաքացն՝ սրբեալ Աստուծոյ⁴: Կամ վասն Տաճարին ասէ սուրբ, յոր տեսեալ իւրաքանչիւր զազգակից իւր եւ զեղբայր իւր եւ զորդի իւր՝ յառաջ քան զերեսուն ամաց վախճանեալս, եւ ճանաչեցին զմիմեանս՝ հարցանելով զյարուցեալսն, թէ՛ «Դու այս անո՞նն ես, որ մեռար յառաջ քան զայսչափ ժամանակս եւ յայս նիշ գերեզմանի եղար». եւ նա ասէ. «Այո՛, ե՛ս եմ»: Եւ նոքա ասեն. «Ձի՞նչ եղեն, զիա՞րդ յարեար». եւ յարուցեալքն անդրէն հարցանեն. «Ձի՞նչ եղեն աստ նախ քան զերիս աւուրս, յորժամ երկիր շարժեցաւ, եւ վէճք պատառեցան, եւ կամ զի՞նչ գործեցիք⁵

¹ Զ երեւեալ

² Փիլ. Գ 10

³ Յայտ. ԻԱ 2, 10

⁴ Թիւք ԼԵ 2-7

⁵ Զ գործիցեք

ի քաղաքի աստ»։ Ետուն պատասխանի թէ՛ «Չունն մոլար Յիսուս անուն կախեալ խաչեցաք»։ ասեն յարուցեալքն թէ՛ «Վա՛յ է՛ ձեզ, զի Նա եկեալ ունայնացոյց զդժոխսն եւ ելոյժ զմեզ քաջութեամբ Իւրով եւ եհան ի գերեզմանաց»։

Իսկ հարիւրապետն եւ որ ընդ նմա պահէին զՅիսուս, իբրեւ տեսին զշարժումն եւ զեղեալսն, երկեան յոյժ եւ ասեն. «Արդարե՛ւ Աստուծոյ Որդի էր Սա» (ԻԷ 54):

Նախ՝ յորժամ ետես հարիւրապետն, զի իշխանութեամբ մենաւ՝ ըստ Մարկոսի, թէ իբրեւ ետես հարիւրապետն, թէ աղաղակեաց եւ եհան զոգին, հաւատաց եւ փառաւորեաց զԱստուած¹, եւ երկրորդ՝ ի նշանացն, որպէս ասաց աւետարանիչս, եւ երրորդ՝ զի ժողովուրդն զկուրծսն կոծելով քաղիսէին, որպէս ասէ Ղուկաս², ասելով. «Վա՛յ մեզ, հասեալ է աւերն Երուսաղէմի»։ Չոր տեսեալ հաւատաց, քանզի այնպիսի էր զօրութիւն խաչին, մինչ զի յետ այնչափ ձաղանաց եւ այսպն առնելոյ եւ բամբասանաց՝ հարիւրապետին եւ ռամկին զղջանալ ետ, որ ի հեթանոսաց գոլով օրինակ եղեւ բոլոր ազանց հաւատացելոց, որք յերանութիւնն զրեցան։ Քանզի նա տեսեալ զհրաշսն հաւատաց, իսկ տքա ի լրոյ հաւատացին խոստովանելով զՅիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ։

Էին անդ կանայք բազումք. կային ի հեռաստանէ եւ հայէին, որք եկին զկնի Յիսուսի ի Գալիլէ պաշտել զՆա (ԻԷ 55):

Կային անդ եւ տեսանէին զհրսն, որ զործեցան, քանզի յոյժ հպատակք էին Յիսուսի, որք եկեալ էին զկնի Նորա՝ պաշտել զՆա, եւ ո՛չ երբէք թափէին ի Նմանէ։ Մանաւանդ յայնմ ժամու, յորում աշակերտքն փախեան, նոքա առ ընթեր կային, որք զամենայն ինչ տեսին՝ զաղաղակելն եւ զհանել զոգին, զպատառումն վիմաց եւ զշարժումն երկրի, եւ զխաւարումն լուսաւորացն եւ զայլսն եւս, վասն որոյ եւ զյարութիւնն եւս յառաջագոյն տեսին եւ փողեցին աշակերտացն աւետիս, եւ բարձին զգոյժ մահու, որ ի ձեռն Եւայի յաշխարհ հնչեցաւ։ Իսկ «ի հեռաստանէ» կայն վասն զինուորացն ահի, քանզի յոյժ կսկծեալ տազնապէին եւ մորմո-

¹ Մարկ. ԺԵ 39

² Ղուկ. ԻԳ 48

քէին սրտիք եւ արտասուէին. բայց թէպէտ այս այսպէս էր, սակայն ուշ եղեալ հայէին եւ զամենայն իրսն ի միտ առնուին:

Յորս էր Մարիամ Մագդաղենացի եւ Մարիամ՝ Յակովբայ եւ Յովսեայ մայրն¹, եւ մայր որդւոցն Չեբեղեայ (ԻԷ 56):

Բազում էին կանայք ի ծանօթիցն, սակայն զսոսա յանուանէ թուէ աւետարանիչս, քանզի ասէ Յովհաննէս, թէ կային առ խաչին Մայրն Նորա, զոր յանձնեաց աւետարանչին, եւ քոյր Սօր Նորա Մարիամ Կղէովպայ եւ Մարիամ Մագդաղենացի²: Իսկ Մարկոս թէ՛ «Մարիամ Մագդաղենացի եւ Մարիամ Յակոբոս փոքրկան եւ Յովսեայ մայրն եւ Սողոմնէ» (Մարկ. ԺԵ 40): Արդ՝ Մարիամ Յակոբայ եւ Յովսեայ մայրս, որպէս ասէ Մատթէոս, է դուստր Կղէովպայ քոյր Սօրն Յիսուսի, որպէս ասէ Յովհաննէս, կին գոլով՝ Ալփեայ, յորմէ ծնաւ Յակոբ փոքրիկ, որ ի թիւ երկուտասանիցն Յակոբ Ալփեայ անուանի, զոր Եղբայր Տեառն եւ Արդար կոչեն զիրք: Եւ Յովսէ եւ Սիմոն եւ Յուդա Թաղէոս՝ եղբարք սորա, որպէս Յուդա Թաղէոս ի թուղթն իւր «եղբայր Յակոբայ» զրէ զինքն, եւ Ղուկաս՝ Յուդա Յակոբեան³, եւ Մարկոս Յակոբոս փոքրկան եւ Յովսեայ մայր անուանէ, որպէս Մատթէոս: Արդ՝ ըստ ճշմարտութեանն, որպէս տեսանես յաւետարանչացն, այսպէս դատեալ եղև, քանզի չորեքին եղբարք սքա մօրքուեր որդիք են Յիսուսի, զորս «եղբարս Տեառն» կոչենք: Ապա թէ կամիցիս զսոսա որդիս Յովսեպայ ասել եւ զՄարիամ մայր սոցա՝ կին Յովսեպայ, որպէս է ուրեք գտանել ի հին պատմութիւնս, այսմ ոչ օժանդակեն աւետարանիչքն: Քանզի թէպէտ «եղբարք Քրիստոսի» ասեն զսոսա, բայց որդիք Յովսեպայ ո՛չ բնաւ, եւ ոչ զմայր սոցա՝ կին նորա, զոր պարտ էր ի գլխոյն առաւել, քան յորդւոցն կոչել, քանզի ի բազում տեղիս գտանենք ի Գրոց սովորութեանց զհօրեղբօր որդիս եւ զմօրքուեր որդիս «եղբարս» կոչել: Իսկ մայր որդւոցն Չեբեղեայ Յովհաննէս աւետարանչի եւ Յակոբայ մեծի է մայր, զորոյ անունն Սողոմնէ⁴ կոչէ Մարկոս⁵: Եւ վասն Մագդաղենացոյ չունիմք պէտս քննութեան, քանզի ասէ Ղուկաս, թէ սա այն է, յորմէ եհան

¹ Տ մայր

² Յովհ. ԺԹ 25

³ Տ գոլ

⁴ Ղուկ. 2 16

⁵ ՏՁ Սողոմնէ

⁶ Ձ ~ Մարկոս Սողոմնէ կոչէ

Քրիստոս եօթն դեւս¹, որ եւ զկնի շրջեալ՝ պաշտէ զՅիսուս, եւ մեր ասացեալ է յառաջագոյն:

Եւ իբրեւ երեկոյ եղև, եկն այր մի մեծատուն յԱրեմաթեայ, որում անուն էր Յովսէփ, որ եւ աշակերտեցաւ իսկ Յիսուսի (ԻԷ 57):

Այս Յովսէփ զառաջինն իսկ ի ծածուկ էր, բայց այժմ մեծ համարձակութեամբ համարձակեցաւ յետ մահուն Քրիստոսի, եւ ոչ եթէ աննշան որ էր կամ յանձանօթից եւ օտար, այլ ի մեծատանց եւ ի նշանաւորաց յԱրեմաթեայ քաղաքէ, ուստի Սամուէլն էր²: Որ եւ եկեալ յԵրուսաղէմ բնակէր, որպէս զի խորհրդոյն սպասաւոր լիցի, քանզի եւ «ինքն իսկ ակն ունէր արքայութեանն Աստուծոյ» (Մարկ. ԺԵ 43), վասն որոյ ոչ բնաւին միաբանեցաւ խորհրդոյ եւ գործոյ դպրաց եւ փարիսեցոցն եւ քահանայիցն, որպէս ասեն ատարանիչքն: Չի որպէս քաղաքաւն հեռի էր, վասն զի արեմաթացի էր, նոյնպէս բանիւ եւ գործով՝ ի խորհրդոց եւ ի զնացից նոցա, ապա ուրեմն մերձաւոր էր Քրիստոսի՝ հաւատովն, վասն այսորիկ ասէ թէ՝

Սա մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի (ԻԷ 58):

Չարմանալ պարտ է ընդ քաջութիւն համարձակութեան նորա, թէ զիարդ զանձն իսկ ի մահ մատնեաց եւ յամենեցունց թշնամանաց ոչ զանգիտեաց, այլ յանձն էառ զնախատինս վասն սիրոյն Քրիստոսի, եւ ժտեցաւ խնդրել զմարմին Նորա: Եւ այն յոյժ ծախիւք եւ ընչիւք հաւանեցուցանելով զկաշառասէր դատաւորն՝ նշանակ զոլ հոգեւոր պետաց. զի որք վերստին խաչեն զՈրդին Աստուծոյ եւ խառնակ համարին զարիւն Նորոյ ուխտին եւ զՀոգին շնորհաց թշնամանեն, արգելուն եւ զերծուցանեն զՔրիստոս յանարժան սպասաւորաց եւ ի բերանոյ հայիոյցաց պէսպէս բանից եւ գործոցն փարթամութեամբ:

Յայնժամ Պիղատոս հրամայեաց տալ զմարմինն:

Քանզի բազում անգամ հնարեցաւ արձակել զՆա վասն անմեղութեանն՝ ընդոտուցեալ եւ ի կնոջն տեպենէ, բայց զի ամբոխն բազմացաւ, թոյլ ետ խաչել զՆա: Իսկ յետ խաչին յորժամ զհրաշն

¹ Ղուկ. Ը 2

² Ա թագ. Ա 1, Ը 4

եւս ետես, առանց բարրանաց շնորհեաց զմարմինն, կամ, որպէս ասացի, ի կաշառոցն ակն ածեաց, զի որպէս զմահն վաճառեաց, այսպէս եւ զթաղումն, նմանապէս եւ գյարութիւնն:

Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ կտաուվք (ԻԷ 59)

եւ եղ ի նոր գերեզմանի, զոր փորեաց ի վիմի (ԻԷ 60):

Կարի յոյժ մեծարանօք եւ պատուով պատեաց եւ թաղեաց ե-գիպտացի պաստառակալաւ եւ խնկօք¹ անուշիւ[ք] եւ զմշտով հանդերձ, որպէս օրէն էր հրէիցն առնել, եւ եղ ի նոր գերեզմանի, զոր փորեաց կռանով ի վիմի, յորում ոչ ոք երբէք էր եղեալ, քանզի անձին իւրոյ էր պատրաստեալ² եւ զայն եւս ընդ այլ մեծարանացն Յիսուսի շնորհեաց՝ ըստ գրեցելումն թէ՛ «Քաղցրացան նմա խիճք հեղեղատի» (Յոր ԻԱ 33): Քանզի հանդերձապետին Եզեկիայ էր այս գերեզման, յորմէ տարագրեաց զնա Եսայի մարգարէ՝ ասելով. «Չի՞ է, զի փորեցեր քեզ յարկ ի վիմի. հանցէ Տէր Աստուած քո զհանդերձապետութիւն քո ի քէն, եւ յօտար երկիր վախճանեցիս» (հմմտ. Ես. ԻԲ 16-18), որ եւ եղեւ իսկ: Իսկ գերեզմանս այս մնացեալ անխնամ յաւորս գերութեանն, եւ ծածկեցին զնա հեղեղք ուղիսից, զոր ստացեալ զտեղիս զայս Յովսէփ մեծատուն ի հայրենիս իր, քանզի եւ պարտէզ իսկ էր՝ եւ սրբեաց զտեղին եւ եզիտ զգերեզմանն, յորում ոչ ոք երբէք էր թաղեալ. անդ վասն ուրբաթուն հրէից, զի մօտ էր գերեզմանն, եղին զՅիսուս: Իսկ նշանակաւ՝ նոքա սպասաւոր են մարմնոյն³ Տեառն, որք զառաքինութեան թելսն անկանեն՝ սրբութեամբ մարմնոյ եւ մեռանելով ախտից, նորանան հոգով արդարութեան ի ձեռն հաւատոյն վիմի:

Եւ թաւալեցուցեալ կափարիչ դրան⁴ գերեզմանին վէմ մի մեծ՝ զնաց⁵:

Կափարիչս այս, ասեն, է վէմն այն, զոր եղ Յակոբ ընդ սնարս իր, եւ օծեաց եւ կանգնեաց արձան, յորում ետես զտեսիլն եւ անուանեաց զտեղին «գրուն երկնից» եւ «տուն Աստուծոյ»՝ ասելով. «Տէր է ի տեղոջս յայսմիկ» (Ծննդ. ԻԸ 16): Արդ՝ զայն վէմն եղ ի

¹ Գ խնկովք

² Գ > վիմի, յորում ոչ ոք երբէք էր եղեալ. քանզի անձին իւրոյ էր պատրաստեալ

³ Գ ժամոյն

⁴ Գ դրանն

⁵ Տ եւ զնաց

դուռն գերեզմանին, որպէս զի պահեսցէ վէմն «զՎէմն, զոր անարգեցին շինողքն» (Սաղմ. ճԺԷ 22), եւ «հատաւ առանց ձեռին» ի լեռնէն եւ ելից զտիեզերս¹ լինելով «զլուխ անկեան» ըստ մարգարէութեան (Ես. ԻԸ 16), այլեւ «վէմ գլորման եւ քար զայթազորութեան» (Հոռմ. Թ 33, Ես. ԻԸ 16) անհաւատիցն եւ դուռն երկնից հաւատացելոց Իւրոց: Իսկ ասելն «զնաց»՝ կամ թէ՛ զոր ինչ արժան էր առնելոյ, արար կատարեաց, այս է «զնաց»-ն, կամ թէ՛ ըստ Պետրոսի՝ «զնաց ընդ միտս զարմացեալ ընդ եղեալսն» (հմմտ. Ղուկ. ԻԳ 12), նաեւ նովին մտօք զնաց ընդ նմա խաչիւ եւ արշաւեաց յերկինս:

Անդ էր Մարիամ Մագդաղենացի, եւ միս Մարիամն. նստէին հանդէպ գերեզմանին (ԻԷ 61):

Տես զառաքինութիւն կանանցն եւ զգութն, զի մինչեւ ցմահուն ժամն եւ թաղմանն ոչ թափէին ի Նմանէ, քանզի հաւաստեաւ ամենայն ուրեք առ ընթեր էին եւ զամենայն տեսանէին: Բայց ընդէ՞ր նստէին հանդէպ գերեզմանին. զի ոչ մեծամեծ եւ բարձրագոյնս իմանային զՆմանէ. վասն այսորիկ իոյս պատրաստեցին, որպէս զի՞ յորժամ ցածնուցու մոլորութիւն հրէիցն, երթիցեն արկանիցեն ի վերայ Նորա: Քանզի սա էր, որ երբեմն զոտսն եւ զզլուխն էօծ, այժմ կամի եւ զքոյր մարմինն օծանել, որպէս զի ի ձեռն երից օծութեանցն սրբեսցի հոգւով եւ մարմնով եւ մտօք: Իսկ միս Մարիամն, զոր ասէ, ոմանք զԿոյս ասեն, բայց չէ իսկ ճշմարիտ. քանզի թէպէտ առ խաչին էր միջաբեկեալ աղէտի, սակայն ի գերեզմանն բնաւին ոչ ընթացաւ վասն տրտմութեանն², միանգամայն եւ վասն հրէիցն մոլորեան: Նաեւ այն՝ զի թէ զՄագդաղենացին յայտնի ասէ, ընդէ՞ր եւ զանուն Կուսին չասէ, թէ մայրն Յիսուսի էր. այլ զի չէր նա, վասն այնորիկ զկնի Մագդաղենացոյն յիշեաց, ուստի իմանամք, թէ միս Մարիամ՝ զքոյր Մօր Նորա ասէ, որ էր դուստր Կղեովպայ³՝ մայր Յակոբայ եւ Յովսեայ կին Ալփեայ, որպէս յառաջն ասացաք: Իսկ առ ի միտս՝ հանդիսակից լինին նախասացեալ սպասատրացն Մարիամանք ոմանք, որք

¹ Ղան. Բ 34-35

² Տ քանզի

³ Ձ միաբանութեանն յ միջաբեկեալ աղէտի, սակայն ի գերեզմանն բնաւին ոչ ընթացաւ վասն տրտմութեանն

⁴ Ձ Կղեովպայ

լուսատրեայք են զգայութեամբ¹ հոգւոյ եւ մարմնոյ եւ ահիւ կալով պաշտեն զՆա, եւ կամ ըստ այլոց՝ դառնացեալ ծով, յորոց ոչ ըմպէ սատանայ՝ ծարաւին մեղաց:

Եւ ի վաղիւ անդր, որ է յետ ուրբաթուն, ժողովեցան քահանայապետքն եւ փարիսեցիքն առ Պիղատոս (ԻԷ 62)

եւ ասեն. «Տէ՛ր, յիշեցաք, զի մոլորեցուցիչն այն ասէր, մինչ կենդանին էր, թէ յետ երից ատուրց յառնեմ (ԻԷ 63):

ՉՁատիկն լուծին ոչ ուտելով եւ զշաբաթն պղծեցին առ դատաւորն ընթանալով քահանայապետքն եւ փարիսեցիքն, եւ ասեն. «Տէ՛ր, յիշեցաք, զի մոլորեցուցիչն այն ասէր»: Տեսանե՞ս, զի ամենայն ուրեք մոլորութիւն ընդ անձին իւր կրուի, եւ ակամայ յինի ջատագով ճշմարտութեանն, քանզի պարտ էր հաւատարիմ յինել, թէ մեռաւ եւ թաղեցաւ եւ յարեաւ, եւ այս ամենայն ի թշնամեացն հաստատէր, զի վկայութիւն թշնամեացն զօրաւորագոյն է, եւ տես, թէ ո՞րպէս վկայեն: «Յիշեցաք², զի մոլորեցուցիչն այն ասէր». ասելի է, թէ ո՞վ յիմարք, թէ մոլորեցուցիչ է եւ սուտ կարծէք, որպէս ասէքդ, զի՞ կասկածէք, է՞ր վասն ի շուրջ գայք եւ ազգի ազգի հնարս խնդրէք: «Մինչ կենդանին էր». ցուցանեն, թէ ճշմարտապէս վախճանեցաւ: «Թէ յետ երից ատուրց յառնեմ». քննել արժան է, թէ ո՞ր ասաց գայս. կամ զՅոնանուն ի մտի ունէին թէ «Որպէս եղեւ Յոնան ի փոր կիտին զերիս տիւս եւ զերիս զիշերս, նոյնպէս եւ Որդի մարդոյ յինիցի ի սիրտ երկրի զերիս տիւս եւ զերիս զիշերս» (Մատթ. ԺԲ 40), կամ այն իսկ է, զի ի Գալիլեա ասաց թէ՛ «Որդի մարդոյ մատնելոց է ի ձեռս մարդոց մեղաւորաց՝ եւ ի խաչ ելանել³, եւ յերիւր ատուր յարիցէ» (հմմտ. Մատթ. ԺԷ 21): Ապա ուրեմն զիտէին զբարիսն եւ կամաւ զործէին զշարիսն:

Արդ հրամայեա զգուշանալ զերեզմանին մինչեւ ցերիս ատուրս (ԻԷ 64):

Այսու նշանակեն, թէ եւ թաղեցաւ եւս: Իսկ «մինչեւ ցերիս ատուրս» ասելն ցուցանէ, թէ մինչեւ ցայն ժամ պահել հանդերձեալ էին, վասն այտորիկ Տէր մեր կանխագոյն յարեաւ, զի մի՛ աւիցեն, թէ ստեաց, կամ զողացաւ ոք, զի թէ չէր յայնժամ յարուցեալ, յոր-

¹ Գ սգայութեամբ

² Գ Տես

³ Գ > եւ ի խաչ ելանել

Ժամ նոքա մօտ նստեալ պահէին, այլ յետ մեկնելոյ նոցա, թէպէտ յերկիր աւուր յառնէր, լինէր մուտ բանից հակառակութեան:

Գուցէ եկեալ աշակերտքն զիշերի՝ գողանայցեն զՆա եւ ասիցեն ժողովրդեանն, թէ յարեալ ի մեռելոց, եւ լինիցի¹ յետին մոլորութիւնն չար քան զառաջինն»:

Յոյժ խորամանկ է չարութիւնն առ վայր մի, մինչեւ խայտառակեալ քակտի, քանզի գոր ինչ յետոյ էին ասելոց, յառաջագոյն ասեն, թէ գուցէ աշակերտքն գողանայցեն: Բայց ընդ հակառակս եղև բան նոցա անձանց իւրեանց, քանզի թէ ոչ էին կնքեալ զվեմն եւ զգուշացեալ զօրականօքն, ունէին զստութիւն իւրեանց իբրև զքաղցկեղ ճարակեալ, իսկ որովհետև զգուշացան եւ դռնմեցին, այնուհետև ի դերեւս ել խորհուրդ նոցա, եւ ընդունայն եղև մտածութիւն նոցա: Քանզի գերեզմանն կնքեցաւ, եւ առանց ժխտելոյ ճշմարտապէս յարեաւ, եւ գոր ինչ նոքա մոլորութիւն կարծէին՝ զառաջին բանիցն վարդապետութիւն, վերջին յարութեամբն հաստատեաց: Քանզի ինքեանք էին մոլորեալք ի ճշմարտութենէն եւ զՆա «մոլորեցուցիչ» ասէին, որպէս արբեալ կամ մտախար զերկիր շարժեալ կարծէ: Եւ կամ յիրաւի զայս անուն Նմա եղին, զի Նա էր, որ զմոլորութիւն նոցա եցոյց եւ զյիմարութիւն նոցա խայտառակեաց հռոմայեցուկքն: Եւ առ այն զի՞նչ ասէ:

Ասէ ցնոսա Պիղատոս. «Ունիք զօրականն², երբայք զգուշացարուք, որպէս եւ զիտք» (ԻԷ 65):

Ոչ ետ թոյլ զինուորացն կնքել, քանզի ի վերայ եհաս ամենայն անիրաւութեան նոցա, այլ վասն զերծանելոյ ի նոցանէ՝ եւ զայն եւս յանձն առնու: «Երբայք զգուշացարուք, որպէս եւ զիտք»,- ասէ, զի մի՛ այլոց մեղադիր լինիցիք, զի եթէ զինուորացն միայն կնքեալ եւ զգուշացեալ էր, կարէին ասել ինչ, թէպէտև չէին հաւատալի, քանզի որպէս յայլսն անամօք էին, եւ յայսմ գոյր բանից նոցա տեղի, բայց յորժամ ինքեանք կնքեցին եւ զգուշացեալ պահէին, եւ յարեաւ, ոչ բնաւ ամենեւին խօսել իշխտին:

¹ Զ լինի

² Զ օրականն

Եւ նոքա երթեալ՝ զգուշացան զերեզմանին եւ կնքեցին զվէմն հանդերձ զօրականօքն (ԻԷ 66):

Ինքեանք երթեալ զգուշացան, զի մի՛ կարիցեն բան ինչ խօսել յետոյ, քանզի ինքեանք մատեան, ինքեանք խնդրեցին, ինքեանք կնքեցին հանդերձ զհնուորացն դասու, որպէս զի անձանց ամբաստան եւ յանդիմանիչք լինիցին եւ ակամայ ճշմարտութեանն վկայ, վասն այտորիկ ասաց աւետարանիչս թէ՛ «Նոքա երթեալ զգուշացան»: Եւ թէ որո՞վ զգուշացան՝ ասէ՛ կրկին իրօք՝ կնքելովն եւ զօրականօքն, զի յայտնի գողոցն՝ կնիքն, իսկ ի ծածուկ առողացն զօրականքն պահեսցեն: Եւ կնքեցին մատանեաւ քահանայապետին, որ ունէր զանփակ զիրն զԷ՛ անուն Աստուծոյ քանդակուած¹ յակն մատանոյն, զոր ասեն յառաջին տախտակացն զոլ զքարն զայն, զոր խորտակեաց Մովսէս²: Այնո՛ւ կնքեցին զվէմն Քրիստոս, այս է՝ վկայեցին, թէ սա նա է, որ երեսեցաւ ի լեառն Քորէր եւ ասաց. «Ես եմ որ էնն» (Ելք Գ 14):

Իսկ զկնիքն ոմանք կապարով ասեն, եւ այլք՝ թղթով, որով անկորուստ պահէ զարարածս՝ նորոգելով զմեզ ի հնութենէ մեղաց՝ զառաջինն կնիք շնորհելով ի ձեռն վերստին ծննդեանն: Որ եւ յարուցեալ Տէր մեր վիմովն կնքելով եղև վկայ կնքոյ որովայնի Կուսին, որ կրեացն զՆա, զի որպէս կնքեալ էին կուսութիւնք Կուսին, եւ Որդին կենդանոյն ի միջոյ նորա ել, այսպէս իբրեւ կնքեալ էին արձանութիւնք վիմին, ել Նա ի զերեզմանէ անտի, որպէս զի լիցի Նա անդրանիկ յամենայն տեղիս: Որով եւ զմեզ կորզեաց ի դժոխային կործանմանէն, յորում էաք ամբացեալ մեղացն կնքով, եւ վերածեաց ի փառս Իւր՝ նստուցանելով ընդ աջմէ Աստուծոյ, որում փառք եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն³:

ԳԼՈՒԽ ԻԸ

Եւ յերեկոյի շաբաթուն, յորում լուսանայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի եւ միս Մարիամն՝ տեսանել զգերեզմանն (ԻԸ 1):

Նախքան ի քննութիւն մտանել զգաստից իղաբերից կանանցն քանից, զկարծեցեալ անմիաբանութիւնն, որ վասն աւետարանչացն թուին ասացուածք, մանաւանդ վասն Մարիա-

¹ Զ քանդուած

² Ելք ԼԲ 19

³ Զ > յաւիտենից. ամէն

մանցն, ստուգեսցուք, քանզի որք ո՛չ ճշգրիտ քննութեամբ ի վերայ հասանեն շաղփաղփութիւնք՝ որ վասն նոցա բանք են, երեւին: Եւ յառաջագոյն ասենք վասն Մարիամանցն, քանզի են ոմանք, որ հինգ Մարիամ ասեն. առաջինն՝ զամէնօրհնեալ տիրուհի Կոյսն զմայրն Տեառն, եւ երկրորդն՝ զՄագդաղենացին, երրորդն՝ զՅակոբայ եւ զՅովսեայ մայրն, չորրորդն՝ որ Կղեովպայն¹ ասի, հինգերորդն՝ զքոյրն Ղազարու: Յայտսիկ յաւելու Մարկոս զՍողովմէ, եւ Ղուկաս՝ զՅոհաննա. յանուանէ այսոքիկ յիշին, բայց էին եւ այլք բազումք, որպէս ասէ Ղուկաս թէ՛ «Եւ այլք ընդ նոսա, որք պատմեցին զայս առաքելոցն» (Ղուկ. ԻԴ 10), քանզի բազում կանայք եկեալ էին ընդ Նմա ի Գալիլէէ պաշտել զՆա յընչից իւրեանց:

Արդ՝ Մագդաղենացին այն է, յորմէ եօթն դեւն ել, գորոյ խորհուրդն ասացաք նախ: Իսկ զՅակոբայ եւ Յովսեայ մայրն ասեն զոյ՞ կին Յովսեփայ, որ Աստուածահայր անուանեցաւ, յորմէ ծնաւ զՅակոբ³, եւ զՅովսէս⁴ եւ զՍիմոն⁵ եւ զՅուդա⁶ Թադէոս, եւ զՍողովմէ⁷ քոյր նոցին, որ եղև կին Չերեդեայ եւ մայր Որդոցն Ռրոտման, որ վասն ընտանութեանն խնդրեաց զգահերիցութիւն⁸ որդոց իւրոց⁹: Իսկ զԿղեովպայն¹⁰, դուստր էր, ասեն, նորա, եւ զնա՝ եղբայր Յովսեփայ, զոր վասն այսչափ ընտանութեանս «քոյր մօր նորա» ասէ Յովհաննէս¹¹: Եւ Ղազարուն յայտնի է, եւ Մայրն Տեառն: Իսկ Յոհաննա¹² կին էր Քուզայ հազարապետին Հերովդէի, որպէս ասէ Ղուկաս¹³:

Արդ՝ կանայք այսոքիկ են, որք յիշին, եւ ի սոցանէ, որք ի գերեզմանն եկին, է Մարիամ Մագդաղենացի, եւ Մարիամ Յակոբայ եւ Յովսեայ, զոր «միւս Մարիամ» ասէ Մատթէոս: Իսկ Մարկոս եւ

¹ Գ Կղեովպայն

² Գ գսա

³ Տ Յակոբ

⁴ Տ Յովսէս

⁵ Տ Սիմոն

⁶ Տ Յուդա

⁷ Տ Սողովմէ

⁸ Գ զգահերիցութիւն

⁹ Մատթ. Ի 21

¹⁰ Գ զԿղեովպայն

¹¹ Յովհ. ԺԹ 25

¹² Տ Յոհաննա

¹³ Ղուկ. Ը 3

Ղուկաս գոտա յիշեն, եւ յաւելու ոմն զՍողոմն¹, եւ ոմն՝ զՅոհաննա², իսկ Յովհաննէս զՄագդաղենացին միայն ասէ³: Իսկ զքոյրն Ղազարու եւ զԿղէովպայն եւ զՄայրն Տեառն ոչ յիշեն եկեալ ի գերեզմանն Տեառն յանուանէ, բայց թէ որ ընդ այնոսիկ համարիցի, որ ասէ թէ՛ «եւ այլ կանայք ընդ նոսա»: Իսկ թէ են ոմանք, որք զԱստուածածինն ասեն եկեալ ի գերեզմանն, որպէս ի մեկնութիւնս եւ յեղանակաւոր երգս ասի, զայս հաստատեալ⁴ ոչ ունիմք. զի թէ նա եկեալ էր ի գերեզմանն, զիա՞րդ աւետարանիչքն զայս յանուանէ որդոցն եւ զկէսս ի տեղեացն յիշատակեն, եւ զսա, որ ամենայն բարեաց յիշատակաց արժանի է, ոչ յիշեն. այս՝ ըստ այլոց:

Բայց մեր ստուգութեամբ քննեալ զայս յաւետարանչացն, միանգամայն եւ յայլոց բազմաց իմաստուն արանց՝ երիս Մարիամս ասենք. մի՛ գմայրն Տեառն, եւ երկրորդ՝ զքոյրն նորա, որ է դուստր Կղէովպայ կին Ալիեայ եւ մայր Յակոբայ⁵ եւ Յովսեայ եւ այլոցն, որպէս յառաջն ասացաք, եւ երրորդ՝ զՄարիամ Մագդաղենացին, որ էօժ զՏէրն իւրով եւ ջնջեաց գոտս Նորա հերով իւրով, մինչ մեղաւորն էր, եւ ասպա յետոյ՝ զգլուխն ի բազմականին ի Բեթանիա՝ ի տուն եղբօր իւրոյ Ղազարու: Եւ այժմ երիցս անգամ եկն օժանել զբոլոր մարմինն ի գերեզմանին, որպէս ասէ. «Եւ յերեկոյի շաբաթուն, յորում լուսանայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի»:

Արդ՝ որ վասն կանանցն էր զանազանութիւն ասացաք, ասացուք եւ վասն աւետարանչացն եւս: Քանզի Մատթէոս ասէ թէ՛ «յերեկոյի շաբաթուն⁶», իսկ Մարկոս թէ՛ «ընդ առաւօտս միաշաբաթուն ընդ արեւագալն» (հմմտ. Մարկ. ԺԶ 2), իսկ Ղուկաս թէ՛ «ի միաշաբաթուն վաղքաջ ընդ առաւօտն» (Ղուկ. ԻԴ 1), իսկ Յովհաննէս թէ՛ «Ընդ արշալոյսն գայ Մարիամ Մագդաղենացի ի գերեզմանն» (հմմտ. Յովհ. Ի 1): Խնդրելի է արդեօք, թէ վասն է՞ր զանազանեցին: Արդ՝ ոմանք ասեն, թէ նախախնամութեամբ Տեառն պատրաստեցաւ այս առ ծառայս Իւր, զի թէ ամենեւիմբ հաւասարեալ էին, զոյր տեղի հերձուածողացն ասել եւ հեթանո-

¹ Ձ զՍողոմն

² Տ զՅոհաննա

³ Յովհ. ԺԹ 25, Մարկ. ԺԵ 40, Ղուկ. ԻԴ 10

⁴ Ձ հաստատել

⁵ Տ Յակոբայ

⁶ Ձ շաբաթուն յորում

սաց, թէ ամենեքին միաբանեցան եւ համափառս գրեցին, վասն այսորիկ սակաւ ինչ վասն ժամանակին զանազանեցին առ ի հաստատութիւն իրացն:

Բայց ես երկու կարծեմ պատճառս այսմ իրի. կամ թէ չորս անգամ եղև զալուստ կանանցն՝ ի խոր զիշերոյն, զոր Մատթէոս ասէ, մինչեւ յարեւուն զայն, զոր Մարկոս գրէ, եւ յամենայնն Մագդաղենացին զկնի՝ վասն առաւելութեան սիրոյն եւ շուտափոյթ եւ արի հոգւոյն, վասն այսորիկ աւետարանիչքն զհորաքանչիւր գալուստ եւ զժամանակ առանձին նշանակեցին: Կամ զանազան ժամանակօքն զմի եւ զնոյն գալուստ ցուցանեն, քանզի եւ ինքեանք իսկ ժամանակքն զօրութեամբ մի են. զի յերեկոյին ասելն՝ զիշերոյ եւ նսենութեան է անուն ըստ այնմ. «Երեկոյացի ձեզ ի տեսլենէ» (հմմտ. Միք. Գ 6), եւ թէ՛ «Եղև երեկոյ» (Ծննդ. Ա 5), այսինքն զիշեր, քանզի խոր¹ երեկոյն եւ առաւօտն եւ վաղիւն մի եւ նոյն ժամանակ է՝ վասն մթութեանն² յաւետարանչացն անուանեալ, քանզի զիս³ իշխեալն ի ցերեկի զալ վասն զինուորացն³:

¹ Զ խոր էր

² Զ մթութեանն

³ Զ + Որպէս եւ այժմ ոմանք բարբաջեն, թէ ի շաբաթու յարեալ, որք եւ կրկին իրօք յանդիմանին. նախ՝ աւուրբն. զի թէ ի շաբաթու յարեալ, ապա ընդէ՞ր ամենայն եկեղեցիք զտարին բաւանդակ կոչի շաբաթու, այլ ի կիրակի տօնեն [զ]յարութիւնն, որ եւ անունն իսկ տէրունի լսի, իսկ «շաբաթ»-ն հանգիստ թարգմանի, յորում հանգեալ Տէր մեր թողմամբ ի գերեզմանի: Եւ դարձեալ՝ թէ ոչ որ հաւատասցէ այսմ, այլ հակառակի, թէ ի շաբաթու երեկոյին յարուցեալ էր, զի յորժամ ընթացաւ Մարիամ Մագդաղենացին, յարուցեալ ետես, ի նմին իսկ յԱւետարանէն յանդիմանի այնպիսին: Քանզի թէ ի վաղիւն [յ]ետ ուրբաթուն, որ էր շաբաթն, գնացին առ Պիղատոս քահանայապետքն եւ խնդրեցին զօրականս պահապանս եւ կնքեցին զվէմն, միթէ զունայն գերեզմանն ամրացուցին: Եւ այլ ազգ. թէ ի ցերեկի յարեալ, ընդէ՞ր խրատին [զ]զօրականսն՝ ասելով, թէ եկեալ զիշերի զողացան աշակերտքն, մինչ մեք ի քուն էաք. արդ, յորում զիշերի զողացան՝ յուրբաթի՞, որ ի շաբաթ լուսանայր, թէ՞ ի շաբաթու, որ ի կիրակէ մտանէր: Ապա ուրեմն անժուժկալիցն է այս հակառակութիւն, որ զշաբաթ երեկունն լուծանեն եւ զախտ որկրամոլութեանն յարութեանն բանի հաստատեն, որոց չէր պարտ լուծանել: Եւ թէ լուծանեն եւս, ոչ վասն յարութեան լուծանել արժան է, այլ իբր զնախատօնակ եւ զաւետատու զալստեան Թագաւորի, սակաւ ինչ կերակրօք խրախանալ ի փառս Աստուծոյ, եւ ոչ վասն հակառակութեան, զի մի՞ դատապարտիցին: Քանզի եւ ոչ ընթերցուածն զայս ցուցանէ եւ կամ կերակուր եւ կամ պատարագ երեկոյին յայտնէ, որպէս տեսանես ի խրատ ընթերցուածին, քանզի պահելով մեզ զօրն, յորում մատնեցաւ, ի չորեքտասաներորդ լուսնին յառաջնուն անսեանն, եւ մնամք յարութեան Նորա, այսինքն է կիրակէին, վասն այսորիկ լուծանենք յերեկոյի շաբաթին զպահսն եւ տօնենք վաղիւն ի կիրակէին, քանզի վաղիւն առաւօտուն յարուցեալ է Քրիստոս, որպէս սուրբ հարքն վկայեցին: Որք եւ զպահսն ասացին Մեծի շաբաթուն մինչեւ ի տասան ժամն լինել, բայց գիտելի է, զի այլ է պահք, եւ այլ է ուտելն, եւ այլ՝ զատիկն:

Պահք է բնաւին կերակրոյ ոչ հաղորդել՝ ըստ այնմ թէ՛ «Պահեաց Յիսուս զքառասուն տիւ եւ քառասուն զիշեր, ապա քաղցեալ» (Մատթ. Դ 2), իսկ ուտիք է կերակուր ուտել, եւ զատիկ է պարարտ կերակրով ուրախանալ, զորոյ օրինակ ասացելոցս երեքին աւուրբս այսոքիկ ուսուցանեն: Քանզի յուրբաթու պահել

«Եւ յերեկոյի շաբաթուն,- ասէ,- յորում լուսանայր միաշաբաթին»։ «Շաբաթ»-ն ըստ եբրայեցոցն հանգիստ թարգմանի, եւ է օր եօթներորդ, յորում շաբաթանայր ժողովուրդն եւ հանգուցանէր զծառայս եւ զաղախնայս եւ զեզն եւ զէջ՝ ըստ Օրինացն կանոնի՝ Մովսիսի կարգեալ¹։ Քանզի եւ Աստուած իսկ յառաջին արարչութեանն յաւորն եօթներորդի հանգեաւ յամենայն գործոց Իւրոց, զոր սկսաւ առնել, Այն, որ ամենայն աշխատելոց է հանգիստ եւ կամօք Իւրովք միայն բաւական է զգործս առնել, ուստի եւ մեզ ետ հաստատուն յոյս, թէ որք զգործս Աստուծոյ աստէն գործեն, անդէն ընդ Աստուծոյ հանգչելոց են իբր մանկունք յանկողինս հարց իւրեանց²։ Որ եւ այս օրինակ իսկ էր երկրորդի արարչութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ յետ կատարման տնօրէնութեան խորհրդոյն ի նոյն օր հանգստեան շաբաթու մարմնով ի գերեզման էջ, որպէս զի ընդ Ինքեան ի վեր բերիցէ զկապեալ հոգիսն եւ զանանց հանգիստն պատրաստեցէ նոցա։ Իսկ այսօր ի լուսանալ միաշաբաթու աւուրս՝ ծագեաց մեզ Արեգակն ի գրոյ խաւարէ. որպէս յառաջին միաշաբաթին զոյսն ստեղծ եղական եւ նովաւ զխաւարն փարատեաց զսկզբնական, նոյնպէս եւ յայսմ աւուր յարուցեալ զխաւար մեղաց եւ անգիտութեան հալածեաց յաշխարհէ՝ ըստ այնմ. «Ի ծագել արեւու ժողովին եւ ի մայրիս իւրեանց դադարեն³» (Մատթ. ԾԳ 22)։ Այսինքն զազանք չարք, որք են մեղք եւ անօրէնութիւնք, հեռացեալք ի հաւատացելոց, ժողովեցան յորջս իւրեանց՝ ի մայրն չարութեան ի բանսարկուն առաջին, եւ նովին անտառովն անշէջ գեհենին պատրաստին։ Ուստի մարդիկ, զօրացեալք ծագմամբ յարութեանն Տեառն, ելանեն ի ստուերէ մահու՝ ի մեղաց խաւարէ ի գործս բարեաց իւրեանց, որպէս ի սկզբանէն մինչեւ ցերեկոյ լրման յաիտենից կենցաղոյս, յորում լինելոց է երկրորդն զալուստ ի սոյն միաշաբաթու աւուր

պարտ է վասն խաչելութեանն Տեառն, վասնզի ոչ ինքն ճաշակեաց եւ ոչ աշակերտքն, իսկ շաբաթու ուտել ըստ սրբոցն ի տասան ժամու, ոչ պարարտ կերակուր, այլ հաց եւ ջուր միայն, որպէս սուրբն Եւագրիոս, որ զբանս ասաց*, իսկ ի կիրակեի Ջատիկ առնել եւ հաղորդել հոգեւոր Գառինն, համայն եւ մարմնաւորին, թէ որ կամիցի։

* Գնմտ. Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացոյ վարք եւ մատենագրութիւնք, Վենետիկ, 1907, էջ 31, 223, 228 ևն։

¹ Եւք Ի 10

² Այս նախադասութիւնն ամբողջութեամբ վերաշարադրանքն է ս. Ներսէս Շնորհալու «Երգ վասն եօթներորդի աւուր արարչութեան» ստեղծագործութեան առաջին տան (տես ժամագիրք ստենի, Առաւօտեան ժամ, Երուսաղէմ, 1915, էջ 319)։

³ Տ դադարին

կիրակէի, որպէս ասէ. «Եւ յերեկոյի շաբաթուն, յորում լուսանայր միաշաբաթին»:

«Միաշաբաթ»-ը անուն թէպէտ ցուցանէ զմի օր հանդերձելոյ մշտնջենաւոր ժամանակին, յորում հանգչին արդարքն յերկարածգեալ ընդ Աստուծոյ յալիտեանս անվախճան, զորս ոչ փոխանակէ երբէք այլ օր՝ ըստ առաքելոյ թէ՛ «Մի է շաբաթն Աստուծոյ»:¹ Բայց ի կենցաղս յայս ի հաշիւ եւ ի թիւ անկեալ շաբաթու ատուրն ասի «միաշաբաթ», այսինքն՝ յետ շաբաթուն մի օր, որպէս եւ այլքդ ըստ կարգի՝ երկուշաբաթի, երեքշաբաթի: Քանզի անուն ատուր ոչ գոյ, բաց ի միոյն, յոր եւ հանգեաւ Աստուած, որ ըստ գործոյն «շաբաթ» անուանեցաւ, իսկ այլքդ՝ անուամբ նորին թուին, որպէս ասացի, ըստ կարգի: Եւ դարձեալ թէ ի լուսանալ միաշաբաթուն յարեաւ, որպէս ասացի, ընդէ՞ր զերեկոյն շաբաթուն դնէ եւ ո՛չ միաշաբաթուն. ինձ թուի, թէ զսահմանն հրեական փոխէ ատետարանիչս, որ զգիշերն ասէին սկիզբն ատուրն, եւ ուսուցանէ, թէ ի լուսոյ են սկսեալ արարածքս եւ ո՛չ ի խաւարէ: Վասն այսորիկ զգիշերն, յորում լուսանայր միաշաբաթն, շաբաթուն ասէ երեկոյ եւ զառաւօտն՝ սկիզբն միաշաբաթուն, զոր «կիրակէ՛»² անուանեցին հարքն սուրբք, որ լսի՝ օր տէրունի, քանզի ճշմարտապէս օր է սա, յորում ցնծամք՝ ըստ մարգարէին³, քանզի գործք Աստուծոյ ի սմա գործեցան:

«Եկն Մարիամ Մագդաղենացի եւ միւս Մարիամն՝ տեսանել զգերեզմանն».⁴ քանզի իւղ պատրաստեցին օծանել զմարմինն տէրունական եւ ի շաբաթուն հանդարտեցին վասն պատուիրանին: Իսկ յորժամ անց շաբաթն, ի լուսանալ միաշաբաթուն⁵ եկին տեսանել, թէ ա՞նդ իցեն զինուորքն, եթէ ոչ, ի քո՞ւն իցեն արդեօք, եթէ արթուն գոլով՝ զգուշանայցեն, որպէս զի ըստ պատշաճի ողբացեն զկենդանին՝ ընդ մեռեալս համարելով, քանզի տակաւին չէին կատարեալք, այլեւ զմարմինն օծցեն, եւ թէ այնմ ոչ հանդիպեցին վասն կնքելոյ վիմին, զգերեզմանն խնկեցցեն, որպէս է սովորութիւն: Իսկ «միւս Մարիամ» զմայրն Յակոբայ եւ Յովսեայ⁶ ասէ, որ է դուստր⁵ Կղեովպայ⁶:

¹ Գ կիրակէ

² Սաղմ. ԵժՏ 24

³ Գ միաշաբաթին

⁴ Գ զՅովսեայ

⁵ Տ կին

⁶ Գ Կղեովպայ ծնեալ ի յԱննայէ քոյր մօրն Յիսուսի

Եւ ահա շարժումն մեծ եղև, զի հրեշտակ Տեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ ի բաց թաւալեցոյց զվեմն ի դրաց անտի եւ նստէր ի վերայ նորա (ԻԸ 2):

Ի խաչելութեանն եւս գրեցաւ, թէ շարժումն եղև, բայց ոչ մեծ ասացաւ, իսկ այժմ ասէ աւետարանիչս թէ՛ «Ահա շարժումն մեծ եղև»։ քանզի յանկարծակի ի մերձենալ կանանցն ի վայրս գերեզմանին շարժեցաւ երկիր ահագին։ Է՞ր վասն. զի ամենեքին ընդոստնուն եւ իմասցին զեղեալն։ Քանզի եւ ի յարութեանն եղև շարժումն, թէպէտ ոչ ասէ Մատթէոս, ի խորագոյն զիշերին, զոր ոչ ոք իմացաւ, բաց ի զինուորացն, որք նստեալ պահէին, զի մի ասիցեն թէ, յորժամ զնացին պահապանքն յայնժամ յարեաւ, իսկ ի գալ կանանցն եւս մեծագոյն, զի եւ կանայքն, միանգամայն եւ այլքն հաւատասցեն, եւ քրքրիցին եւ սթափեսցին միտք նոցա։ Այլև ի նշանակել, թէ մեծ է յարութիւնն քան զխաչելութիւնն եւ սքանչելագոյն, զի նովաւ փառաւորի խաչելութիւնն։

Եւ դարձեալ՝ գրէ Սողոմոն թէ՛ «Երիւք շարժի երկիր եւ չորրորդին ոչ կարէ հանդարտել» (Առակ. Լ 21) վասն մեծութեանն. քանզի զի՞նչ այլ մեծագոյն շարժումն, քան զյարութիւն Տեառն, յորում ամենայն աշխարհ գրոհ տուեալ շարժեցաւ ի կրօնից իրեանց եւ ի սովորութեանց, ի միոյ բանէ առաքելական քարոզութեանցն հաւատացին ի Քրիստոս եւ ի յարութիւն Նորա, զոր զհտելով Տէրն ասէր. «Մի՛ ումեք ասիցէք զտեսիլն, մինչեւ Որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ» (Մատթ. ԺԷ 9)։ Որ նշանակ էր համօրէն յարութեանն, յորում մեծ շարժումն լինելոց է՝ ըստ մարգարէութեանն թէ՛ «Դարձեալ միսանգամ շարժեցից զերկին եւ զերկիր» (Անգէ Բ 6)։

«Չի հրեշտակ Տեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ ի բաց թաւալեցոյց զվեմն»։ Ընդէ՞ր յետ յարութեանն հրեշտակն երարձ զվեմն եւ ոչ նախ քան զյարութիւնն։ Նախ՝ ոչ երարձ, զի գիտասցեն, թէ վիմովն կնքելով յարեաւ, այլեւ զայն, թէ ոչ ունէր պէտս հրեշտակի օգնականութեան, որպէս եւ ոչ ի փորձութեանն։ Իսկ յետոյ՝ վասն կանանցն, քանզի նոքա իսկ տեսին զՆա յայնժամ ի գերեզմանին, զի հաւատասցեն, թէ յարեաւ. նմին իրի եւ շարժումն եղև, զի իմասցին, թէ ի հրեշտակէն եղև թաւալումն վիմին։ Իսկ յերկնից իջանելն նշանակէ, թէ Յարուցեալն երկնային է եւ յերկինս իսկ ըստ աստուածութեանն, եւ Հօր կամաւ եղև տնօրէնու-

թիւնն, վասն այտորիկ¹ հրեշտակն սպասատր եղեւ՝ որպէս ի ծննդեանն եւ ի խաչին, այսպէս եւ ի յարութիւնն:

Իսկ զի՞նչ այն թէ՛ «նստէր ի վերայ նորա»: Չյաղթութիւն Տեառն ի վերայ մահու նշանակէր, որ գերազանցեաց բնութեամբս մերով մահու եւ չարչարանաց՝ կոխան եւ առաքուր զնա առնելով, որ խորխտայր ծանրացեալ իբր զկափարիչ ի վերայ մարդկան: Այլեւ թեթեւ են հրեշտակաց բնութիւնքն, եւ անմարմինքն ի վերայ քառակին կան, որպէս² ասաց ոմն: Եւ դարձեալ ուսուցանէ զհրեշտակս զոլ քարոզս համօրէն յարութեանն, զի ի ձայն հրեշտակապետի ի փող յետին ամենայն մեռեալք ի Քրիստոս յարիցեն արտաքս եկեալ ի գերեզմանացն, ոչինչ խափան եղեալ հոռոյ եւ կամ կափարիչ վիմաց:

Եւ էր տեսիլ նորա իբրեւ զփայլակն, եւ հանդերձ նորա՝ սպիտակ իբրեւ զձիւն (ԻԸ 3):

Ոչ վայրապար այսպիսի դիմօք եւ ձեռով երեւէր, այլ զի պայծառագոյն տեսեամբն իբր զործով զուրախութիւն աւետարանէր եւ իբր ճշմարիտ յարութեան աւետատր խրախացեալ փայլէր, որպէս թէ ասել՝ թէ էր ինձ կարծիք տրտմութեան, եւ ես հանգոյն ձեզ տխրեալ լինէի, բայց զի ճշմարտապէս յարուցեալ է, ի տեսլենէս ծանիջիք: Եւ դարձեալ ցուցանէր, թէ բնութեամբ եւ ստացմամբ մաքուրք են հրաբուն զուարթունքն, զի տեսիլն բնութեանն սպացոյց, եւ հանդերձն՝ ստացական առաքինութեան, որք յարմարեն ըստ էութեանն եւ զգործն, եւ այնպէս լուսատեսիլք եւ ձիւնափայլեալք երեւին: Դարձեալ զաստուածատեսակութիւն նոցա նշանակէ երեսացն փայլումն եւ հանդերձին սպիտակութիւն, քանզի եւ Տէր մեր այնպէս արտափայլեաց ի Թաբորական լերինն. «Եղեն երեսք Նորա,- ասէ,- իբր զարեզակն, եւ հանդերձ Նորա՝ սպիտակ իբրեւ զձիւն» (Մատթ. ԺԷ 2):

Եւ յահէ անտի նորա խոովեցան պահապանքն եւ եղեն իբրեւ զմեռեալս³ (ԻԸ 4):

Յառաջագոյն ասացաք զկանանցն եւ զժամանակին զանազանութիւն, ասացուր այժմ եւ զհրեշտակացն: Քանզի Մատթէոս

¹ Զ որոյ

² Զ որ

³ Զ զմեռեալ

մի ասէ հրեշտակ իջեալ յերկնից, եւ յահէ նորա խռովեալ պահապանացն, որք եւ բազումք մեռան իսկ, իսկ Մարկոս թէպէտ մի ասէ՝ հանգոյն Մատթէոսի, բայց ո՛չ իջեալ յերկնից եւ ո՛չ թաւալեցուցեալ զվէմն, այլ այն ինչ տեսին կանայքն, զի թաւալեցուցեալ էր վէմն, եւ մտին ի ներքս ի գերեզմանն, տեսին երիտասարդ մի նստեալ ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատմուծան սպիտակ, եւ զարհուրեցան¹ : Իսկ Ղուկաս «Արք երկու հասին առ նոսա ի հանդերձս լուսաորս» (Ղուկ. ԻԴ 4), իսկ Յովհաննէս թէ՛ «Մինչդեռ Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին եւ լայր, խոնարհեցաւ ի գերեզմանն եւ տեսանէ երկուս հրեշտակս ի սպիտակս, զի նստէին մի ի սնարից եւ մի՝ յանոտից, ուր կայր մարմինն Յիսուսի» (հմմտ. Յովհ. Ի 11-12)՝ սպասատրելով իբր աստուածային գահոյից:

Արդ՝ յայցսցանէ ուսանիմք, թէ ո՛չ միանգամ եղեւ զալուստ կանանցն եւ ո՛չ չորս անգամ, որպէս ասեն ոմանք, այլ երեք անգամ: Քանզի Ղուկասուն եւ Յովհաննուն հաւասարք են, ոչ միայն տեսիլ հրեշտակացն, զի երկու ասեն, այլեւ ժամանակքն. զի ոմն «վաղ քաջ» եւ ոմն «ընդ արշալոյսն» ասէ, որ զմի եւ զնոյն նշանակեն, որ է միջին գալ կանանցն: Իսկ Մարկոսին վերջին, վասն զի գերիտասարդն ի ներքս ի գերեզմանն, ասէ, տեսին ի գալ արեւուն: Իսկ Մատթէոսին առաջին, քանզի ի խոր գիշերին եկին, յորում տեսին զհրեշտակն, զի իջեալ յերկնից՝ զվէմն թաւալեցոյց եւ զտեղին շարժեաց, յորմէ պահապանքն զարհուրեցան եւ փախստեայ առ քահանայապետսն գնացին, քանզի ոչ էին անդ, յորժամ կրկին եւ երեքկին կանայքն ժամանեցին: Բայց թէպէտ այս այսպէս է, որպէս ասացի, եւ մի եւ նոյն կանայք էին, որ եկին, սակայն Մագդաղենացին առ ամենեսեան լինէր, եւ պատճառն զի կամ յառաջէր քան զայլսն, եւ կամ վերջացեալ գտանէր եւ այսպէս տեսլեանն, որպէս այլքն, ոչ պատահէր, վասն այտորիկ ողբայր, մինչեւ ետես զԲաղձային:

Պատասխանի ետ հրեշտակն եւ ասէ ցկանայսն. «Մի՛ երկնչիք դուք (ԻԸ 5):

Նախ՝ զերկիւղն նոցա փարատէ, զի մի՛ յապուշ կրթեալ միտք նոցա՝ ի մոռացոնս եկեսցեն հրաշալի տեսլեանցն: Իսկ «դուք»-ն

¹ Մարկ. ԺԶ 3-5

ասել բազում պատուոյ նշանակ է նոցա, եթէ անհնարին անցք ընդ յանդգնեալսն անցանելոց են, եթէ ոչ ասպաշխարեսցեն, զի ոչ է ձեր երկնչելն, այլ խաչահանուացն է եւ զինուորացն:

Գիտեն, զի զՅիսուս զխաչելեալն խնդրէք. չէ՛ աստ, քանզի յարեաւ, որպէս ասացն (ԻԸ 6):

Ուստի՞ զիտէր հրեշտակն զմիտս կանանցն, եթէ զԽաչեալն խնդրէին: Երկու յեղանակաւ կարծեմ զիտել անմարմնոցն զմարմնատրաց իրս. կամ յաստուածային յայտնութենէն, քանզի ոչ որ զիտէ զսիրտս մարդկան, բայց միայն Աստուած, եւ որոց Նա յայտնէ, քանզի զամենայն ինչ յԱստուծոյ ուսանին վերինքն, եւ ներքինքն՝ ի վերնոցն, որպէս է կարգ նոցին, եւ կամ ի տեսանելոյ զգործս մեր եւ ի լսելոյ զիսոսս զիտեն զմերս: Արդ՝ կամ Աստուած յայտնեաց, եւ կամ տեսին զպատրաստութիւն իւրոյն եւ լուսն զիսոսսն որ վասն խնդրոյ Խաչելոյն, ասաց. «Գիտեն, զի զՅիսուս զխաչելեալն խնդրէք»: Դարձեալ ասելովն, թէ զիտեն զկարծիս ձեր՝ ուսուցանէ հաւան լինել բանիցն. «Գիտեն,- ասէ,- զի զՅիսուս զխաչելեալն խնդրէք»: Ոչ ամօք համարի «խաչեալ» զՆա կոչել, քանզի այն իսկ է գլուխ յարութեան, զոր եւ փառս Իւր անուանեաց Քրիստոս¹, եւ պարծանք կոչէ Պօղոս²: «Չէ՛ աստ, քանզի³ յարեաւ, որպէս ասացն»⁴. յորժամ յապահովս արար զնոսա յերկիւղէն բանի եւ արդեամբ եւ զիտութեամբ, բանի՛ ասելով «մի՛ երկնչիք», իսկ արդեամբ՝ պայծառութեամբ հանդերձին, իսկ զիտութեամբն զի զիդս նոցա յայտնեաց, թէ զիտեն, զի զխաչելեալն խնդրէք, ապա զյարութեան տայ աւետիս թէ՛ չէ աստ ի գերեզմանս ըստ ձեր կարծեացդ, այլ յարեաւ ըստ Իւր անսուտ վարդապետութեանն թէ՛ «Յետ երից ատուրց յառնեն», զի թէ ինձ ոչ հաւատայք, զբանս Նորա յիշեցէք:

Եկայք եւ տեսէք զտեղին, ուր կայր:

Դարձեալ եւ այս նշանակ հաստատութեան է, թէ յարուցեալ է. քանզի վասն այսորիկ ի բաց առի զվէմն, որպէս զի տեսանիցէք զտեղին ունայն գոլով ի մարմնոյն, յորում եղեալ էր, եւ հաստատի

¹ Յովհ. ժ 5

² Գաղ. 2 14

³ Զ այլ

⁴ Զ > որպէս ասացն

մտածութիւնն ձեր: Եւ դարձեալ եցոյց զտեղին, զի երկոցունց վկայք լինիցին յարութեան եւ գերեզմանին: Եւ դարձեալ յորդորական է բանս այս, թէ եկայք՝ ոչ ի սոսկ տեսութիւն տեղոյն կոչեցեալ, այլ յընդունելութիւն, քանզի գիտեն Գիրք զտեսանելն փոխանակ ստանալոյ դնել՝ ըստ այնմ. «Տեսցես դու զբարութիւն յԵրուսաղէմ» (Սաղմ. ԾԻԷ 5), այսինքն ընդունել եւ ժառանգել: Նոյնպէս բան հրեշտակին յայս յորդորէ՝ տեսանել զտեղին Յիսուսի, որ էր նախ չարչարանքն եւ սպա փառքն՝ ըստ առաքելոյ¹, յորում կայր միշտ անբաժանելի, որպէս զի որք հետեւօրք լինիցին Նմին՝ ընդունելով յանձինս զպակասութիւն չարչարանացն Տեսուն, եւ փառացն Յիսուսի հաղորդ լիցին՝ ըստ անսուտ բանին թէ՛ «Սորա ընդ Իս լիցին» չարչարանօք «եւ տեսցեն զփառսն Ին, յորում էի» (հմմտ. Յովհ. ԺԷ 24), որպէս անդրանիկն ի վկայս Ստեփանոս, զի ետես զերկինս բացեալ եւ զՌոդի մարդոյ, զի կայր ընդ աջմէ Աստուծոյ²: Այս է տեղի Նորին ի հրեշտակէն ասացեալ, թէ եկայք զկնի եւ տեսէք զտեղին Յիսուսի:

Եւ վաղվաղակի երթայք ասացէք աշակերտացն Նորա, թէ յարեալ եւ ահա յառաջանայ քան զձեզ ի Գալիլեա. անդ տեսանիցէք զՆա. ահա ասացի ձեզ» (ԻԸ 7):

Առ ի հաւատս հաստատելոյ եւ զճշմարտութիւն իրացն ստուգելոյ՝ այլոց եւս քարոզս եւ ւստաւորս առաքէ, թէ յարեալ, միանգամայն եւ ի ձեռն կանանցն զյարութիւն փողելոյ՝ զմահաբեր երկունսն, որ ի ձեռն կնոջն Եւայի յաշխարհ հնչեցաւ, բժշկէ: Իսկ ասելն թէ՛ «յառաջանայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զՆա»՝ ոչ միայն զբանսն Յիսուսի ազդեցուցանէ, թէ «Յետ յարութեան Իմոյ յառաջեցից քան զձեզ ի Գալիլեա» (Մատթ. ԻԶ 32), այլ վասն յապահով լինելոյ տեղոյն յիրաց եւ ի տազնապէ՛ անդր առաքէ: «Ահա ասացի ձեզ». այսու, ինձ թուի, օրէնս իմն աւանդէ, թէ ես աւասիկ զգործս դիտի գործեցի, այսուհետեւ թէ ծուլանայք, անձանց մեղ դիջիք, յորժամ խոշտանկիջիք. քանզի «ահա» ասելն սպառնական իմն է բարբառ, որպէս հրեշտակքն Ղովտայ եւ կնոջ նորա ասացին թէ՛ «Ահա արարաք մեծարանս երեսաց քոց, փութա ասրել» (հմմտ. Ծննդ. ԺԹ 21-22): Իսկ եթէ Մարկոս ասէ

¹ Եբր. Բ 9-10, Դռոմ. Ը 17

² Գործք Է 55

թէ «Անդ տեսանիցէք զՆա, որպէս ասացն ձեզ» (Մարկ. ԺԶ 8), ոչ եթէ ընդդիմութիւն ինչ է, քանզի ասաց Յիսուս թէ «Յառաջեցից քան զձեզ ի Գալիլեա» (Մատթ. ԻԶ 32), արդ այժմ հրեշտակն ասէ, թէ որպէս Նա ասաց՝ ըստ Մարկոսի, «ահա ասացի ձեզ»՝ ըստ Մատթէոսի: Դարձեալ՝ Մարկոս ասէ թէ «Երթայք ասացէք աշակերտացն նորա եւ ցՊետրոս» (Մարկ. ԺԶ 7). կամ իբրեւ զծերագոյն զոլով քան զայլսն եւ զյիսաւոր՝ նմա ասասցիք, զի թէ այլքն ոչ հաւանեցցին, զէք նա հաւանեցցի եւ հաւանեցուցէ՝ զփորձ առեալ բազում անգամ ճշմարտութեան նորա, կամ զի մի՛ վասն ուրացութեանն կադ գտանիցի քան զայլսն, վասն այսորիկ եւ զնա յանուանէ դնէ:

Եւ ելեալ վաղվադակի ի գերեզմանէ անտի ահիւ եւ խնդութեամբ բազմա՝ ընթանային պատմել աշակերտացն (ԻԸ 8):

Առ ահին եւ խնդութեան ճեպընթացս լինէին եւ փութային առազութեամբ պատմել աշակերտացն զաւետիս յարութեան: Բայց զի՞նչ է խառնումն ներհակացն ընդ միմեանս. քանզի ասէ «ահիւ եւ խնդութեամբ բազմա՝ ընթանային»: «Ահ» զերկիւղն ասէ՝ ոչ ի զինուորացն, զորս տեսին իբրեւ զմեռեալս անկեալ եւ զկէսս մեռեալ եւ զայլս փախստական եղեալ, այլ զարմացումն, որ ի տեսութենէն եղեւ, որ է մի մասն երկիւղին ահիւ պակնուլ եւ սքանչանալ ընդ նորագոյն եւ ընդ անսովոր իրաց տեսութիւն: Որպէս Պետրոս զնաց ընդ միտս զարմացեալ, նոյնպէս եւ կանայքն զարմանային ընդ գործն, որպէս եւ Կղէովպաս ասաց թէ «Եւ կանայք ոմանք ի մէնջ զարմացուցին զմեզ» (Գուկ. ԻԴ 22): Զի լոկ մնաց գերեզմանն ի մարմնոյն, զոր տեսեալ՝ խորհեցան ընդ միտս՝ ոչ գողացեալ. մի՛ վասն պահապանացն զգուշութեան, երկրորդ՝ վասն հանդերձիցն պատրաստութեան՝ ըստ Յովհաննու թէ «Վարչամակն... ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ ի մի կողմն» (Յովհ. Ի 7): Իսկ խնդային վասն յարութեանն աւետեաց, զոր հրեշտակն փողեաց, եւ այսպէս պատարուն եղեալ «ահիւ եւ խնդութեամբ բազմա» առաւելուլ խնդութեամբն քան երկիւղին ընթանային պատմել՝ լնլով զսպասաւորութիւն մարգարէական երգոյն թէ «Ծառայեցէք Տեսոն երկիւղիւ եւ ցնծացէք առաջի Նորա դրդութեամբ» (Մաղմ. Բ 11):

¹ Զ > բազմաւ

Եւ ահա պատահեաց նոցա Յիսուս եւ ասէ. «Ո՞րք էք», եւ նոքա մատուցեալ կալան գոտս Նորա եւ երկիր պագին Նմա (ԻԸ 9):

Բազմապատիկ աշխատանացն եւ անոր յամելոյն առին զհատուցումն, զի արժանաւորք եղեն տեսութեան հրեշտակին եւ լրոյ աւետեաց նորին, այլեւ գերեզմանին, իսկ այժմ բոլորովին Փրկչին, որոց պատահեալ՝ ասէ. «Ո՞րք էք»՝ ըստ Իւրում սովորութեան: Իսկ այլք զողջ լինելոյ «ուրախ լերուք» ասեն, զի յարութեամբս Իմ բարձաւ տրտմութիւն ձեր: «Եւ նոքա մատուցեալ կալան գոտս Նորա եւ երկիր պագին Նմա». ոչ միայն պատուոյ աղագաւ զայս արարին, այլեւ ի հաւաստութիւն յարութեան, եւ շօշափեցին եւս, եւ չեն զարմանք, զի թէ Թովմաս կրեաց զայս, զի՞նչ ասես զկանանցն: Բայց ինձ թուի՝ Մագդաղենացոյն ոչ լինել զկնի սոցա, այլ յորժամ լուաւ ի հրեշտակէն, արագութեամբ քան զայլսն արշաւեաց առ աշակերտսն¹ եւ տեսութեանս այս ոչ պատահեաց: Ապա թէ ոչ զիս՞որ սոքա կալան գոտս Նորա եւ երկիր պագին, իսկ նմա ասաց թէ՛ «Մի՛ մերձենար յԻս» (Յովհ. Ի 17), քանզի լուաւ յայլոց կանանց, թէ յարեաւ, եւ ոչ հաւատաց, որպէս Թովմաս²: Կամ թէ՛ պտուղ էր մարմինն այն ի դժոխսոցն, եւ Տէր մեր՝ իբր զքահանայ մարմնոյ Իւրոյ, յամենայն ձեռաց պահէր զնա զգուշութեամբ, զի մատուցէ զնա Հօր, որ կարօղ էր ընդունել զայնպիսի պատարագ եւ տալ հատուցումն պատարագին: Եւ կամ՝ զի ցուցէ, թէ պատուեցաւ եւ մեծացաւ մարմինն, զի մինչ ծառայն եղել նա, իշխանութիւն ունէր³ ամենայն մարդ ի վերայ նորա, զի մաքսաւորք եւ մեղաւորք զային եւ մերձենային առ նա, այլ իբրեւ եցոյց զտէրութիւն, ահ եւ երկիւղ Նորա, որպէս վայել է Աստուծոյ, ոչ ետ մերձենալ ի նա: Կամ վասն անկատարութեան ոչ հրամայեաց մերձենալ, որպէս մայր նորա Եւա ի ծառն զհտութեան եւ հնազանդեաց զմարդիկ ի ներքոյ մահու: Կամ զի մի՛ զամենայն հարցանիցէ, որպէս է կնոջ սովորութիւն, զմահուանէն ասեն եւ զյարութենէն, եւ զի չէր այնմ ժամանակ, այլ Հոգին հանդերձեալ էր ուսուցանել յետոյ, վասն այսորիկ ասաց թէ՛ «Մի՛ մերձենար յԻս»: Կամ՝ այնու հրաժարեցուցանէ զկանայս սպասաւոր լինել տէրունական մարմնոյ եւ շօշափել ձեռամբ: Քանզի յառա-

¹ Յովհ. Ի 18

² Յովհ. Ի 24-25

³ Զ էր

ջագոյն գնաց յաշակերտսն, որպէս ասացի, եւ պատմեաց զտեսիլ հրեշտակին եւ զթաւալումն վիմին եւ զունայն զոյ գերեզմանին ի Տեառն մարմնոյն, իսկ այլքն եկեալ զկնի՝ ասացին զտեսութիւնն Յիսուսի, ուստի շաղփաղփի երեսեցան բանքն, եւ ոչ հաւատացին աշակերտքն: Վասն այսորիկ յարուցեալ Պետրոս իբրեւ զծերագոյն եւ հաւանական՝ եւ գնաց ի գերեզմանն, եւ զկնի Յովհաննէս, եւ տեսին եւ հաւատացին եւ դարձան առ միմեանս¹, եւ Մագդաղենացին անդ դեգերեալ ողբայր, մինչեւ ետես եւ նա եւս:

Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. «Մի՛ երկնչիք, երթայք ասացէք եղբարցն Իմոց, զի երթիցեն ի Գալիլեա եւ անդ տեսցեն զԻս» (ԻԸ 10):

Նմանապէս հրեշտակին եւ Տէրն մերժէ գերկիւղն. նախ զի հաւատոյն ճանապարհի հորդիցէ, միանգամայն եւ ճշմարիտ գյարտութիւն Իւր ուսուցանէ, զի մի՛ կարծիցեն առաջօք ինչ երեսումն երեսեալ, որպէս աշակերտքն կարծեցին, յորժամ դրօքն փակելովք եմուտ առ նոսա: Ասէ. «Մի՛ երկնչիք», եթէ ոզի եմ առանց մարմնոյ, այլ ստուգապէս յարուցեալ եմ. վասն որոյ ի հաւաստութիւն ասացելոցս՝ «Երթայք ասացէք եղբարցն Իմոց, զի երթիցեն ի Գալիլեա եւ անդ տեսցեն զԻս». որպէս յառաջ քան զմահն ասացի, եւ հրեշտակն զնոյն աւետարանեաց: Եւ ոչ վայրասպար «եղբարս Իւր» զաշակերտսն անուանէ, այլ զի համարնութիւն եղիւ նոցա ըստ մարդկութեան՝ ըստ առաքելոյ թէ՛ «Ոչ ամօթ համարի եղբարս կոչել» (Եբր. Բ 11). այլեւ այսու կոչմամբ սփոփէ զնոսա, զի մի՛ կարծիք ինչ յաղագս ցրուելոյն յաշակերտսն մնայցէ: Իսկ զի եւ Տէր մեր զկանայս աւետարտորս առաքէ, բազում անգամ ասացի, թէ զանարգ եւ զխոտան ազգ կանանց ի պատիւ ածէ եւ ի յոյս յարութեան կոչէ, որով ուսուցանէ, թէ ի յարութեանն ոչ զոն արու եւ էզ, այլ ամենեքեան մի եւ ի Զրիստոս²:

Իբրեւ նոքա գնացին, ահա ոմանք ի զօրականացն եկին ի քաղաքն³ եւ պատմեցին քահանայապետիցն զամենայն որ ինչ եղին (ԻԸ 11):

Չի՞նչ է՝ «իբրեւ նոքա գնացին»: Յուցանէ, թէ կանայքն ոչ երկիւղս կրեցին ի զհնուորացն, այլ ըստ Տեառն եւ ըստ հրեշտակի բանին կազդուրեալ՝ լուսն ի հրեշտակէն զաւետիսն եւ տեսին

¹ Յովհ. Ի 3-10

² Մատթ. ԻԲ 30, Գաղ. Գ 28

³ Զ > ի քաղաքն

զվէմն թաւայեալ եւ զգերեզմանն հանդերձիւն միայն պճնեալ եւ զՏէրն եւս յարուցեալ, եւ այնպէս անհոգութեամբ գնացին, զի երկիւղ նոցա զգինուորոքն անկան: Չի մի՛ կարծիցեն, թէ զինուորքն անդ ոչ էին, ասէ թէ՛ «նոքա գնացին, ահա¹ ոմանք ի զօրականացն եկին ի քաղաքն»:

Բայց յայսմ վայրի ո՛չ սակաւ տարակուսանք երեւին, թէ ըստ պարզ տեսութեան իմանանք զասացեալս: Չի թէ յետ հրեշտակին իջանելոյ եւ զվէմն ի բաց թաւայեցուցանելոյ՝ ըստ կարգի պատմութեանս, ապա եկին² զօրականքն եւ պատմեցին քահանայապետիցն զամենայն եղեալսն, ընդէ՞ր նոքա զկարասին իւրեանց յանպէտս ծախէին, քանզի առ ձեռն պատրաստ ունէին բան եւ իրաւացի պատճառս զանձինս արդարացուցանել եւ զպահապանսն պատուհասել վասն կնքման վիմին լուծելոյ: Չի եւ նոքա յայն սակս մատեան առ դատաւորն եւ խնդրեցին զվէմն կնքել եւ պահապանս կացուցանել, զի մի՛ այնպիսի ինչ իրք լինիցին, յորմէ կասկածէին, այսինքն՝ գողանալ աշակերտացն զմարմինն: Իսկ եթէ այս եղեւ, զի կնիքն լուծեալ էր, եւ մարմինն չէր ի գերեզմանին, զի՞նչ այլ իրաւացի պատճառ՝ զզօրականսն ի մահ մատնել առ դատաւորն, կամ թէ՛ զի ոչ զգուշացան պահպանութեանն, կամ կաշառս առեալ՝ ետուն ի ձեռս աշակերտացն զմարմինն: Եւ առ այս ոչ ոք էր, որ ընդդիմանայր նոցա, այլ ամենեքեան իրաւունս դատէին: Ընդէ՞ր ապա ինքեանք մատն եղեն արծաթոյն իւրեանց, որ եւ ոչ ի մոլելոց ոք առնիցէ զայս: Նաեւ ո՛չ այսպէս պարտ է իմանալ, եթէ բարեբարոյ եւ մարդասէր ոմանք էին եւ ի պատճառս ապրեցուցանելոյ զպահապանսն զարծաթն ծախէին. զի թէ ի բիրապատիկ Բարեգործօղն ոչ խնայեցին, այլ առ նախանձու ի մահ մատնեցին, զիա՞րդ ապա յարժանատրսն մահու խնայելով զինչսն վատնէին: Վասն որոյ պարտ է հանճարով բուռն հարկանել զառաջիկայէս, զի մի՛ այլ ընդ այլոյ համարելով՝ ճշմարտութիւնն եպերեսցի:

Եւ նախ զայս ասենք, եթէ այլ ոք յաւետարանչացն վասն պահապանացն ինչ ոչ գրեաց. ո՛չ թէ կացուցին պահապանս, եւ ո՛չ թէ կաշառօք զյարութիւնն գողացան, բայց միայն Մատթէոս ասէ զխնդրելն զպահապանսն եւ կնքել զվէմն, գրէ եւ զայս, թէ գնացին

¹ Զ ապա

² Զ եկեալ

գորականքն ի քաղաքն եւ պատմեցին քահանայապետիցն: Ուստի իմանամք, թէ ոչ միանգամ եկին¹ գորականքն առ քահանայապետսն եւ² պատմեցին զսքանչելիսն, զոր տեսին, այլ երկիցս: Չառաջինն յորժամ յարեաւ Տէրն. զի թէպէտ զՅարուցեալն ոչ տեսին, այլ երեսմունս հրեշտակականս եւ փայլատակմունս եւ հրացանութիւնս եւ շարժմունս տեսին եւ իմացան, թէ յարեաւ որ ի գերեզմանին էր: Եւ յայնմանէ զարհուրեալ՝ եղեն ի կերպարանս մեռելոյ եւ եկեալ առ դուռն գերեզմանին լուցեալ ջահիւ, եւ քանզի ոչ էր կափարիչն արուեստիւ քարակոփաց մածեալ ի վերայ գերեզմանին, նայեցեալ ընդ ծերպսն տեսին, զի ոչ էր անդ մարմինն, եւ կնիք մատանւոյն էր անլուծանելի: Եւ փութանակի երթեալ առ քահանայապետսն պատմեցին ստուգութեամբ եւ առ պահպանութեան զգուշութիւն զանձինս արդարացուցանէին, թէ ահա կնիքն անխախտելի ի վերայ վիմին, եւ մարմինն ի ներքս անդ ոչ երեւի: Իսկ նոքա եկեալ տեսին, որպէս պահապանքն ասացին, եւ զիտացին, զի յարուցեալ էր, եւ յահի մեծի եղեալ, զի յորմէ կասկածէին, ի նոյն ըմբռնեցան: Վասն որոյ աւետարանիչս ոչ զառաջին զալուստն գորականացն, այլ զերկրորդն ճառէ, քանզի եւ այլքն ոչ բնաւ զպահապանսն յիշեցին, իսկ սա միով կարգաւ զկրկին գալն բաւական համարի պատմել: Չի չէին հեռի երկորքին ժամանակքն ի միմեանց, այլ յետ յարութեան, եւ հրեշտակն իջեալ թաւալեցոյց զվեմն, զոր տեսեալ գորականացն եւ զայն հրաշ, որք առ վայր մի ի քահանայապետիցն խրատու ի տեղուցն մնացին՝ կարծելով, թէ ոչ իմանան զյարութիւն Նորա, եւ ծածկեսցեն զիրն, չոզան փութանակի եւ զերկրորդն պատմել քահանայապետիցն զեղեալ սքանչելիսն:

Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերովքն՝ խորհուրդ առեալ³, արժաք յոյժ ետուն գորականացն (ԻԸ 12)

եւ ասեն. «Ասասջիք, եթէ աշակերտքն Նորա եկեալ զիշերի՝ գողացան զՆա, մինչ մեք ի քուն եաք (ԻԸ 13):

Յորժամ գորականքն վկայեցին ճշմարտութեանն, վասն որոյ շարժումն եղել եւ արհաւիրքն, քանզի նշանացն կէսն հասարակաց եղել, որպէս խաւարն, եւ կէսն՝ առանձինն, որպէս շարժումն

¹ Զ եկեալ

² Զ > եւ

³ Տ ի խորհուրդ, Զ ի խորհուրդ առեալ] խորհուրդ առեալ

վասն զհնուորացն, զոր տեսեալ հաւաստի՝ պատմեցին, նորա այնուհետեւ յայլ իմն հնարս մտին խորամանկել ծերովքն հանդերձ: Անխնայ յարծաթ Տաճարին ձեռնարկեցին կուրացուցանել զպահապանսն կաշառօք՝ ի գողութիւն աշակերտացն հանելով զբանն: Քանզի մինչ կենդանին էր, զարիւնն գնեցին եւ արկին զանձամբք եւ ի մահուն՝ զգերեզմանն, եւ այժմ զյարութեան ճառ կամեցան ընչիւք գողանալ: «Արծաթ յոյժ,- ասէ,- ետուն զօրականացն եւ ասեն. «Ասասջիք, եթէ¹ աշակերտքն Նորա եկեալ գիշերի՝ գողացան»»: Զիա՞րդ գողացան, ո՛ր անմիտք քան զամենեսեան, արք տառապեալք եւ տգէտք եւ յերկիւղէ ձերմէ ոչ իշխեին զանձինս արտաքս ձգել. աղէ ասա՛, միթէ ո՞չ գոյր կնիք ի վերայ, միթէ ո՞չ նստէին շուրջ պահապանքն պակուցեալ, կամ բազում ձեռաց կարօտեալ զվէմն թաւալեցուցանել: Կամ զմոռեալ մարմինն զիա՞րդ մերկանային, որ կռուեալ եւ կարեալ էր ընդ հանդերձս, եւ չէր հնար դիրաւ մերկանալ, այլ բազում ժամանակս՝ յամել՝ որ զայն առնէին, որ եւ անհաւատայի բան է եւ գողութեան անհնարին իրք: Բազմութիւն արծաթոյդ ձերոյ զուշակէ, որ ոչ միայն զհնուորացն տայք, այլեւ դատաւորին խոստանայք:

Ասացուք եւ զայն, թէ ընդէ՞ր իսկ գողանային, միթէ զկրօնս յարութեա՞ն կարկատեսցեն: Եւ ուստի՞ զայր ի նոսա այնպիսի ինչ կցկցել, որք ըղձանային գէթ ուրեք զերծանել եւ ապրել: Կամ յառաջնումն զհիշերին ընդէ՞ր ոչ գողացան, մինչ ոչ էր կասկած ի պահապանացն, քանզի ի շաքաթուն խնդրեցին զպահապանսն եւ կնքեցին զգերեզմանն: Այլ զի յարեաւ, եւ էլ դուռն ի Կենաց անտի մահու, զի լիցի դուռն արդարոց մտանել ընդ նա՞, զի իբրեւ արգելաւ Նա, արձակեաց զարգելեալսն, եւ մահուամբ Նորա մեռեալքն կեցին, եւ ելանելովն ի գերեզմանէ անտի՝ տարաւ եմոյժ զհեթանոսս յԵկեղեցի դրոշմի չորոյն Սրբոյ ի ձեռն մկրտութեան աւագանին, որք մահակից լինին Քրիստոսի: Եւ զի եթող զհանդերձս ի գերեզմանն՝ զի մտցէ Ադամ ի դրախտն առանց հանդերձի, որպէս եւ էրն յառաջ՝ մինչչեւ մեղուցեալ էր, փոխանակ զի մերկացաւ յելանելն անդ, մերկասցի ի մտանելն իրում զմեղս եւ զապականութիւն: Կամ վասն այսորիկ եթող անդ զհանդերձս Իւր, զի նկարեցցէ զխորհուրդ յարութեան մեռելոց, զի զոր օրինակ Ինքն փառօք

¹ Զ թէ

² Զ ժամս

³ Սաղմ. Եժէ 20

Իրրովք յարեալ եւ ոչ հանդերձի, նոյնպէս եւ մեք գործովք մերրովք եւ ոչ ծածկութիւ:

Եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեք հաճեսցուք զնա եւ զձեզ անհոգս արասցուք» (ԻԸ 14):

Յիրաւի ասացին յառաջագոյն թէ՛ «Լիւնիցի յետին մոլորութիւնն չար քան զառաջինն» (Մատթ. ԻԷ 64). քանզի զանձանց ետուն վճիռ, զի որոց յետ այնչափ մոլորութեանն պարտ էր զղանալ, նոքա եւս քան զեւս ջանային ի ծիծաղելի գործս յաւելոյ զհայթայթանս: «Եթէ լսիցէ զայդ,- ասէին,- դատաւորն», քանզի հրապարակաւ կամէին զրոյց առնել, եւ նոքա զուր ոգորէին ընդ ճշմարտութեանն, զի որովք ծածկել ջանային, նոքիմքք ակամայ զնոյն յանդիմանէին: «Մեք հաճեսցուք զնա եւ զձեզ անհոգս արասցուք». յայտ է թէ՛ կաշառօք. առ որս ասելի է՝ ո՛վ յիմարք եւ եղկելիք¹ եղծեալ մտօք, գրեսջիք, թէ զՊիղատոս հաճեսջիք, զգինուորսն եւ զռամիկսն ո՞ հաճեսցէ:

Եւ նոցա առեալ զարծաթն՝ արարին որպէս ուսանն, եւ ել համբաւս այս ի հրէից մինչեւ ցայսօր (ԻԸ 15):

Չեն ինչ զարմանք, եթէ զինուորքն ծածկեցին զիրն, քանզի կարասին յաղթեաց նոցա. զի թէ առ աշակերտսն այնչափ զօրութիւն արար, եւ Յուդաս ախտացաւ արծաթսիրութեամբն, ո՞րչափ եւս առաւել զինուորքն, քանզի առեալ զարծաթն արարին զանուպայ ուսումն հրէիցն: Եւ տարածեցաւ, ասէ, համբաւս այս անջնջելի յազգս հրէից, թէ ոչ է յարուցեալ, այլ գողացեալ: Բայց դու տես՝ զճշմարտասէր բարս աւետարանչիս, թէ զիարդ ոչ ամօթ համարեցաւ ասել թէ՛ «Ել համբաւս այս ի հրէից մինչեւ ցայսօր», այսինքն անսպառ, յորմէ իմանամք, թէ միշտ հաւաստութեան են պատմօղք եւ ոչ ստութեան եւ կարծեաց արձանացուցիչք: Այլ քննելի է, թէ ընդէ՞ր զայս արարին հրեայքն. ինձ թուի՝ վասն երկուց իրաց՝ ի սատանայէ ըմբռնեալք. կամ թէ՛ զի մի՛ նախատիցին ի բազմաց, թէ զթագաւորն իւրեանց խաչեցին, որ եւ յարեալ իսկ, կամ զի մի՛ ժողովուրդն ընթասցին զկնի հրաշիցն եւ ի բաց օցտեսցին ի նոցանէ: Որոց հակառակն դիպեցաւ. զի ամենեքեան

¹ Զ > եղկելիք

առ Նա փութացան հաւատով, եւ ինքեանք ի նոյն եպերանս մնացին հիանալով ընդ իրսն այժմ եւ առ յապայ:

Իսկ մետասան աշակերտքն գնացին ի Գալիլեա՝ ի լեառն, ուր ժամադիր եղև նոցա Յիսուս (ԻԸ 16):

Գալիլեա աստանօր ո՛չ եթէ զգաւառէն ասէ, յորում Նազարեթ էր. այլ եւ էր տեղի ինչ ի լերինն Չիթենեաց, մերձ ի տեղին, ուր վերացաւ յերկինս, որ այս անուամբ կոչէր: Իսկ ժամադիր ասել զլեառնն այն իսկ է, որ յերեկոյի հինգշաբաթին ասաց առ աշակերտսն Տէրն թէ՝ «Յետ յարութեան Իմոյ յառաջեցից քան զձեզ ի Գալիլեա» (Մատթ. ԻԶ 32), ուր եւ հրեշտակքն խնկաբերացն պատգամաւորութեամբ առաքելոցն ասէին անդ երեւել եւ տեսանել զՏէրն ի Գալիլեա, որ թարգմանի ժողով կամ յայտնութիւն, քանզի անդր ժողովեալ առաքելոցն յայտնեցաւ նոցին Տէրն յարուցեալ մարմնով: Բայց զիտելի է, զի ոմանք ասեն զայս վերջին երեսունն զոլ աշակերտացն, զորս առաքեաց ի մկրտութիւն՝ ըստ Ղուկայ թէ՛՝ «Բարոզել յանուն Նորա ապաշխարութիւն եւ թողութիւն մեղաց յամենայն ազգս՝ սկսեալ յԵրուսաղէմէ» (Ղուկ. ԻԳ 47): Եւ զայս ասացեալ՝ օրհնեաց զնոսա եւ մեկնեալ ի նոցանէ՝ վերանայր յերկինս: Արդ՝ եթէ այսպէս է, ճշմարիտ է, եւ ես հաւանիմ, եւ թէ երկիցս եղև, եւ այն եւս յարմարագոյն, քանզի ըստ աւետեաց կանանցն գնացին աշակերտքն ի Գալիլեա եւ տեսին զՆա՞ եւ լուան ի Նմանէ՝ զոր ասէր:

Իբրև տեսին զՆա, երկիր պագին Նմա, եւ ոմանք յերկուացան (ԻԸ 17):

Նորա, որք ի Թաբորական լերինն զփառս աստուածութեանն արտափայլեալ տեսին³, առանց երկրայութեան երկրպագութիւն մատուցին: Իսկ որք ոչ էին զկնի, ի կեղակարծութիւնս⁴ անկան, որպէս ասէ թէ՝ «ոմանք յերկուացան», որք եւ դարձեալ տեսլեամբն հաստատեցան: Եւ կամ վասն այնոցիկ ասէ յերկուանալ, որք ոչ գնացին ի Գալիլեա, որպէս Թովմաս, որ ոչ էր ընդ նոսա, ոչ հաւատաց⁵, մինչեւ ետես: Բայց դու տես եւ զարմացի՛ր աստանօր

¹ Զ զի ասէ թէ

² Զ > զՆա

³ Մատթ. ԺԷ 1-8

⁴ Տ կեղծաւորութիւնս

⁵ Զ հաւատայր

ընդ ճշմարտությունն, թե՛ գիտարդ միևնչեւ ի վերջին օրն ոչ թագուցանեն զթերութիւնն իւրեանց:

Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ. «Տուաւ Ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի (ԻԸ 18):

Մարդկօրէն իմն խօսի ընդ նոսա, որպէս եւ էր իսկ մարդ ճշմարտապէս, քանզի չեւ եւս էին զՀոգին առեալ, որ կարօղ էր բարձրագոյնս առնել զնոսա եւ զմեծամեծս իմացուցանել: Կամ այլ ազգ. ոչ եթէ էառ¹՝ գոր ոչ ունէր իշխանութիւն, այլ զի յայտնի եղեւ ամենեցուն, զայն ասէ տալ, զի հրեշտակք, որ Բան միայն Հօր զիտէին առանց մարմնոյ, հանդերձ մարմնովն եւ Որդի Բարձրելոյն զՆա խոստովանեցին՝ երկրպագեալ ի սերովրէից՝ ըստ առաքելոյ²: Իսկ մարդիկ, զի եւ ոչ Բան անգամ ի ձեռն մարմնոյն ծանուցեալ, միաձին Հօր եւ իշխան բոլորից զՆա հաւատացին. այս է ասելն. «Տուաւ Ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի»:

Որպէս առաքեաց զԻս Հայր, եւ Ես առաքեմ զձեզ:

Կամ զիշխանութիւնն ընդ Հօր այսու ցուցանէ, թէ հանգոյն Հօր. որպէս Նա՝ զԻս, եւ Ես զձեզ առաքեմ: Իսկ առաքումն ոչ ըստ աստուածութեանն, թէպէտեւ ոչ վնասի, քանզի զի³նչ վնաս իցէ ասել՝ Աստուած յԱստուծոյ առաքեալ, որ զմիաւորութիւնն եւ զհամակամութիւնն նշանակէ եւ ոչ զընդդիմութիւնն, բայց զի աստուածութիւնն ամենայն ուրեք է, եւ ոչ գոյ տեղի թափուր, յոր³ ասի առաքեալ, թողում ասել զայն, զի աստուածութիւնն անշարժելի եւ անփոփոխելի ունի զբնութիւն⁴, այլ ըստ մարդկութեանն⁵ յոյժ վայելչապէս է այս: Չի առ մեր բնութիւնս երեւեալ եւ ի մեր նուաստութիւնս զիջեալ Բանին՝ առաքումն ասի, կամ թէ՛ զչարչարանսն յիշեցուցանէ: Չի որպէս Հայր սիրեաց զաշխարհ եւ զմիաձին Որդին Իւր ետ⁶, զի⁷ զԻս առաքեաց ի փրկութիւն չարչարանօք եւ մա-

¹ Զ առ

² Եբր. Ա 6

³ Զ յորում

⁴ Զ բնութիւն

⁵ Զ մարդկութեանն

⁶ Յովհ. 4 16

⁷ Զ > ետ, զի

հուամբ, նոյնպէս եւ Ես զձեզ առաքեմ ի փրկութիւն մարդկան՝ տքնել եւ չարչարել վասն մոլորեալ¹ հօտին բանական:

Գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զամենայն հեթանոսս (ԻԸ 19):

Ես², ասէ, առ հրէայսն³ առաքեցայ, զի մի՛ պատճառեցեն զպատճառս մեղաց, եւ նորա ոչ ընկալան. այսուհետեւ դուք առ հեթանոսս զնացէք քարոզել, զի լցցի բանն, որ ասէ. «Թէ զԻս հալածեցին, ապա եւ զձեզ հալածեցեն» (Յովհ. ԺԵ 20): Քանզի գիտէր, թէ չեն ընդունելոց զնոսա, որպէս յետոյ Պօղոս ասէր թէ «Ձեզ բանս նախ⁴ ի փրկութիւն առաքեցաւ, իսկ որովհետեւ ոչ ընդունիք՝ դառնամք ի հեթանոսս» (հմմտ. Գործք ԺԳ 46)՝ ըստ մարգարէիցն պիտառութեան թէ «Ետու զքեզ յուխտ ազգիմ՝ եւ ի յոյս հեթանոսաց» (Ես. ԽԲ 6), եւ «Յանուն նորա հեթանոսք յուսացին» (Ես. ԽԲ 4), եւ թէ «Նա է ակնկալութիւն հեթանոսաց» (Ծննդ. ԽԹ 10), եւ «դոյս ի յայտնութիւն հեթանոսաց» (Ղուկ. Բ 32): «Գնացէք այսուհետեւ⁵, - ասէ, - աշակերտեցէք զամենայն հեթանոսս». ոչինչ յիշէ զհրէից ապիրատութիւնն⁷ եւ զգործսն⁸, զոր գործեցին, կամ զՊետրոսի ուրացութիւնն, կամ զաշակերտաց փախչելն, այլ միայն յառաջիկայ փոյթն յորդորէ՝ առ ի խրատ եւ ի վարդապետութիւն նոցա, անոխակալս լինել առ ամենեսեան⁹ եւ այնու որսալ զնոսա յունկանս աւետարանին:

Դարձեալ ասելովն թէ «զնացէք», ուսուցանէ ոչ ի միում տեղուոջ դադարել, այլ շրջել եւ քարոզել, զի թէ զամենայն հեթանոսս աշակերտել պարտ է, ապա առ ամենայն ոք եւ յամենայն տեղիս ընթանալ արժան է, որպէս Ինքն շրջէր եւ ուսուցանէր: Դարձեալ «զնացէք»-ն ոչ միայն զճանապարհի երթալն¹⁰ հրամայէ, այլ եւ զվարս վարդապետի ցուցանել, որպէս եւ Ես, օրինակ տալ զանձն բանի եւ գործոյ, որպէս եւ Պօղոս պատուիրէ¹¹, որով ձգիցէք զա-

¹ Տ > մոլորեալ

² Տ Եւ

³ Ձ ~ առ հրէայսն, ասէ

⁴ Ձ այս

⁵ Ձ > ազգին

⁶ Ձ > այսուհետեւ

⁷ Ձ ապերախտութիւնն

⁸ Տ զգործն

⁹ Ձ ամենեսին

¹⁰ Ձ ճանապարհի գերթալն] զճանապարհի երթալն

¹¹ Ա Կոր. Դ 16, ԺԱ 1, Փիլպ. Գ 17 եւն

մենայն հեթանոսս յաշակերտութիւն. ա՛յս է գնայն, զորոյ¹ զհետ
զան ամենայն² օրհորդացն բազմութիւնք³ :

Սկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Չայս վասն կրօնից ասէ, զի որք հաւատան ի Հայր եւ յՈրդի եւ
ի Սուրբ Հոգին յերիս անձնատրութիւն եւ ի մի աստուածութիւն
համառօտ խոստովանութեամբ⁴, մաքրեցէք զնոսա ի մեղաց նա-
խահօրն Ադամայ, սոսկայի եւ եռահիւսակ⁵ սրբասացութեամբ
զհոգի, զմիտս եւ զմարմին լուսցմամբ ջրոյ աւազանին, քանզի
անունն Աստուծոյ է սրբիչ ամենայն մեղաց, որպէս եւ հրէայքն
վկայեցին թէ՛ «Ոչ որ թողու զմեղս, բայց միայն Աստուած» (հմմտ.
Մարկ. Բ 7):

Ուսուցէք նոցա պահել զամենայն, զոր ինչ պատուիրեցի ձեզ (ԻԸ 20):

Չայս վասն զործոյ ասէ, զոր ի վերայ վիմին⁶ հաւատոյ շինե-
ցին⁷՝ ըստ առաքելոյ⁸, զի մի՛ ի հաւատ մկրտութեանն միայն
վստահացեալ՝ ի զործոյն⁹ ծուլասցին, որպէս բազումք, քանզի հա-
ւատ առանց զործոց մեռեալ են եւ դատարկ, որպէս ասէ¹⁰ առա-
քեալն¹¹: Վասն այսորիկ ասէ ոչ միայն զամենայն ուսուցանել
զպատուիրեալսն, այլեւ պահել, յորմէ վարժեալ եւ Պօղոս ասէ.
«Յամենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր իբրեւ զպաշտօնեայս
Աստուծոյ» (Բ Կոր. Զ 4). գրէ եւ Յակոբոս. «Եթէ միով իւիք գթե-
ցեր, եղեր ամենայն օրինացն պարտապան» (հմմտ. Յակոբ. Բ
10): Բանզի թէ ոչ էր ամենայն օրէնքն կեցուցիչ հոգւոց ի փրկու-
թիւն մեզ, թերեւս ոչ զամենայն գրեալ էին: Չի թէ վասն «մորոս»
ասելոյն զգեհեանն եղ առաջի¹², զի՞նչ ասես զբազմաց յանցա-
նելն, քանզի զի՞նչ օգուտ է ի բազմաց¹³ ծառայութենէ փախչել եւ

¹ Զ որոյ

² Զ > ամենայն

³ Երգ Ա 2-3

⁴ Զ խոստովանութիւն

⁵ Տ եռահիւսեակ

⁶ Զ հիման

⁷ Զ շինիցեն

⁸ Ա Կոր. Գ 10-15

⁹ Զ զործոցն

¹⁰ Զ ասաց

¹¹ Յակ. Բ 17, 20

¹² Մատթ. Ե 22

¹³ Զ բազմացն

միոյն ծառայել, զի «որ զմեղս առնէ, ծառայ է մեղաց, եւ ծառայն ոչ յաւիտեան կայ ի տան» (Յովհ. Ը 34-35): Ապա ուրեմն որ միով իւր սխալին¹, տարագիր են յարքայութենէն, զի որք ի բազում ցաւոց զերծեալք են եւ միով ընթրնեալք, մահու են վիճակեալք: Յաղագս այսորիկ ասէ. «Չամենայն ուսուցէք պահել», գոր իբր բարեկամաց պատուիրեցի ձեզ յաւետարանի աստ, զի մի՛ դուք յոչ ուսուցանելն դատապարտիք, եւ նոքա՝ յոչ պահելն: Բայց դու տես՝ զկարգ իրացդ. զի նախ հաւատ եւ ապա՛ գործ, իբր հիմն եւ արմատ եւ սկիզբն ամենայն բարեաց: Ապա ուրեմն գուր աշխատին՝ որք միայն զլոկ գործոյ բուռն հարկանեն, զի թէ հիմն առանց շինուածոյ խախտու է, զի՞նչ ասես զշինուածսն առանց հիման. ոչ բնաւին հաստատութիւն ունել կամ երեւել:

Եւ ահաւասիկ Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի»:

Քանզի մեծամեծ հրամանս ետ նոցա, այսու յորդորէ եւ քաջալերէ զմիտս նոցա, գոր իբր իշխանաբար խօսի ընդ նոսա թէ «Ես ընդ ձեզ եմ», որով յայտ եղեւ, թէ առաջինքն վասն զիջանելոյ² ասացան ընդ նոսա: Բայց զիտելի է, թէ ոչ ընդ նոսա միայն, այլեւ ընդ ամենեսեան, որք ընդ նոսա հաւատացին, քանզի ոչ եթէ մինչ ի վախճան³ կալոց էին առաքեալքն, այլ իբրեւ ընդ միոյ մարմնոյ խօսի ընդ ամենայն հաւատացեալսն, որպէս այլոր ասէր թէ՛ «Ոչ միայն վասն սոցա աղաչեմ, այլեւ⁴ վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա՝ յԻս» (Յովհ. ԺԷ 20): Նոյնպէս եւ աստ ասէ. «Ահաւասիկ Ես⁵ ընդ ձեզ եմ», այսինքն արագ ամենայն ուրեք հասանեմ եւ զդժուարինս ի դիւրինս դարձուցանեմ ըստ այնմ. «Ուր երկու եւ երեք ժողովեալ են յանուն Իմ, անդ եմ Ես ի մէջ նոցա» (Մատթ. ԺԸ 20), եւ ի Հինն մարգարէիցն ասէր՝ Երեմիայի եւ Մովսիսի, թէ՛ «Ընդ ձեզ եմ ի փրկել զձեզ» (Երեմ. ԽԲ 11), եւ թէ՛ «Ոչ թողից զքեզ⁷ եւ ոչ ընդ վայր հարից» (հմմտ. Բ Օր. Դ 31):

¹ Գ սղալին

² Գ ~ զիջանելոյ վասն

³ Գ մինչեւ ցվախճան] մինչ ի վախճան

⁴ Գ այլ

⁵ Գ սոցա

⁶ Գ > Ես

⁷ Տ զձեզ

«Չամենայն ատուրս,- ասէ,- մինչեւ ի կատարած աշխարհի»: Այսու մխիթարէ, թէ ո՛չ ի¹ ժամանակս ժամանակս, այլ յամենայն ատուրս եւ ի ժամո՛ւ մինչ ի կատարած յաւիտենիս: Միանգամայն եւ զվախճանէն² յիշեցուցանէ, զի եւ յոլովագոյնս յԻնքն ձգեսցէ, զի մի՛ զանցաւորս իբրեւ զմնացականս համարիցեն, այլ ի հանդերձելոցն անսպառ բարութիւնքն հայեսցին, վասն զի տրտմականքս, զորս կրէ որ³ ի յանցաւոր աշխարհիս, լուծանիցին որպէս զաշխարհս, եւ բարութիւնքն, զոր վայելելոց էք, անմահ մնացեն ի մեծի Աւորն աներեկի, որ արդարոցն ցանկալի է եւ մեղաւորացն՝ սոսկալի:

Այլ քննելի է, թէ զհարոյ է ընդ նոսա: Գիտելի է, զի ո՛չ մարմնով, քանզի «այսուիւտեւ ոչ գիտեսք զՔրիստոս մարմնով» (հմմտ. Բ Կոր. Ե 16), թէպէտ ունի անբաժանելի զմարմինն, այլ ըստ աստուածային նախախնամութեանն, որով ամենայն ուրեք հասանէ՝ մերձաւոր զոլով եւ ո՛չ հեռաւոր⁴, ընդ նոսա զոլով եւ պաշտպանելով ի հաճոյս Իւր մինչ ի վախճան աշխարհի, եւ եւս յաւետ ի հանդերձեալ յաւիտենիս: Եւ ո՛չ, որպէս ոմանք ասեն, զ«մինչ»-ն հատուած լինելոյ ընդ աշակերտսն կարծել, որ է անհնար. քանզի զհա՞րոյ մինչ ի կատարած աշխարհիս ընդ մեզ իցէ եւ յայնժամ ոչ լինիցի. ոչ գիտելով, թէ «մինչ»-դ խոստումն է յարակային եւ ո՛չ ի բաց հատումն հանդերձելոյն: Քանզի յորժամ ոչ ժամանէ ի կէտն, դնէ զ«մինչ»-ն եւ զառաւելն ոչ հատանէ: Եւ կամ, զճշմարիտն ասելի է, օժանդակութեամբ⁵՝ որչափ կենցաղոյս փորձութիւնքն բազմացեալ⁶ են, իսկ ի գալ Խաղաղութեանն յապաւիտականամբ յամենայն կողմանց, եւ Աստուած ընդ աստուածս միաւորեալք՝ խաղաղանամք միշտ: Եւ դարձեալ է ընդ մեզ Յիսուս ճշմարտապէս ի ձեռն փրկական մարմնոյ եւ արեան Իւրոյ խորհրդոյն, զոր աւանդեաց ի յիշատակ մահու Իւրոյ կատարել, որպէս եւ Պօղոս գրէ թէ՛ «Զանիցս անգամ ուտիցէք զհացս զայս եւ ըմպիցէք զբաժակս զայս, զմահ Տեառն պատմեցէք, մինչեւ եկեսցէ Նա» (Ա Կոր. ԺԱ 26), որով լինի ընդ մեզ որպէս յԻւրն մարմին՝ ըստ աս-

¹ Զ ընդ

² Տ ի վախճանէն

³ Զ կրէք] կրէ որ

⁴ Երեմ. ԻԳ 23

⁵ Զ օժանդակութեան

⁶ Զ բազմացեալք

սիցն՝ «Այս է մարմին Իմ. որ ուտե՛ գաս, նա յԻս բնակեցե՛, եւ Ես ի նա» (հմմտ. Յովհ. 2 57):

Կամ լինելն ընդ մեզ այս է՝ մեռանիլ¹ խորհրդով, որպէս եւ մեք՝ մարմնով, «մինչեւ յետին թշնամին խափանեցի՞²՝ մահն» (Ա Կոր. ԺԵ 26), եւ հնազանդութիւնն ընծայե՛ Հօր, յորում աւարտեալ կատարի պատարագն Քրիստոսի, որ այժմ, ըստ իս, անկատար ասի: Վասն որոյ անմահաբար գեճանի՝ սրբելով զմեզ յամենայն մեղաց եւ բժշկելով յամենայն հիւանդութեանց: Միայն թէ արժանի զանձինս պատրաստեցուք ի փրկութիւն անձանց եւ մի՛ ի դատապարտութիւն ճաշակեցուք, յորմէ օտարացուք հեռութեամբ իբր անդամք նեխեալք եւ տիկ պատառատուն՝ հնացեալ չարութեանն գործովք, զանձինս³ գեհեճին պատրաստեցուք: Այլ միշտ նորոգեալք հոգւով՝ եւ մեռանել մեղացն, որպէս եւ Նա՝ մարմնով՝ արժանի լիցուք փրկագործ կրիցն երկրորդն Ադամայ եւ սրբութեամբ միացուք ի զլուխն մեր եւ ի Տէրն Յիսուս Քրիստոս կատարեալ անդամօք՝ սնեալք մաքրութեամբ, հոգեւոր ճաշակմամբ երկնաւոր Գառինն, եւ աճեալ հասցուք բարիոք գործոցն ընտրութեամբ՝ կիրթ ճաշակելեօք՝ «յայր կատարեալ ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի» (Եփես. Դ 13): Որովք արժանի լիցուք ժառանգել զպատրաստեալն ի սկզբանէ զարքայութիւնն երկնից՝ զթութեամբ Հօր ամենակալին եւ տնօրէնութեամբ Յիսուսի Քրիստոսի՝ միաձնի Որդոյ Նորին, եւ շնորհօք առատահեղ պարգեւողին՝ ամենասուրբ Հոգւոյն: Որում վայել է փառք եւ պատիւ եւ երկրպագութիւն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

¹ Ձ մեռանել

² Տ խափանի

³ Ձ > զանձինս բարից մինչև վերջ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն բարեւոյ

